

ՈՒՒԼՅԱՄ ՄԱԿԴՈՆԱԼԴ



ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ

**ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ
ՀԱՄԱՐ**

**Ավետարանների
մեկնութուն
հավատացյալների
համար**

Ռիչյան Մակդոնալդ

Երևան 2022

Թարգմանվել է ռուսերեն հրատարակությունից (Уильям Макдональд, БИБЛЕЙСКИЕ КОММЕНТАРИИ ДЛЯ ХРИСТИАН НОВЫЙ ЗАВЕТ):

THE BELIEVER'S BIBLE COMMENTARY

by William MacDonald

Copyright © CMIAID Publications 2022

Original English edition copyright © William MacDonald

Published with permission by:

CMIAID Publications

P.O. Box 546

South Hurstville NSW 2221,

Australia

Email: office@cmiaid.org



Distributed by:

Armenian Christian Mission

P.O. Box 1593

Chatswood NSW 2057

Australia

Email: info@acmaust.org

ISBN: 978-0-9806082-9-8

Հեղինակային իրավունքով պաշտպանված այս գրքի որևէ մասի վերահրատարակումը, ֆայլի վերարտադրությունը, կայքով կամ էլեկտրոնային փոստի միջոցով տարածումը առանց Armenian Christian Mission-ի հստակ ու գրավոր համաձայնության խստորեն արգելվում է:

Աստվածաշնչյան մեջբերումները քաղված են Trinitarian Bible Society, Armenian New Testament and Psalms թարգմանությունից:

Գիրքը վաճառքի ենթակա չէ:

Բովանդակություն

Խմբագրի կողմից.....	7
Աստվածաշնչյան գրքերի համառոտագրություն.....	9
Նոր Կտակարանի ներածություն.....	11
Ավետարանների ներածություն	15
Ավետարան ըստ Մատթեոսի	21
Ավետարան ըստ Մարկոսի	175
Ավետարան ըստ Դուկասի.....	243
Ավետարան ըստ Հովհաննեսի.....	371

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

«Մի՛ արհամարհեք մեկնաբանությունները»։ 50-ական թվականների վերջում այսպես խրատեց իր լսարանին Էմմաուսի աստվածաշնչյան դպրոցի (այժմ՝ քոլեջ) Աստվածաշնչի ուսուցիչը։ Առնվազն մեկ ուսանող հիշում էր այդ խոսքերը երեք տասնամյակ շարունակ։ Ուսուցիչը Ուիլյամ Մակդոնալդն էր՝ «*Աստվածաշնչյան մեկնաբանություններ քրիստոնյաների համար*» գրքի հեղինակը։ Ուսանողը խմբագիրն էր՝ Արթուր Ֆարստադը՝ այն ժամանակ դեռևս անփորձ առաջին կուրսեցի։ Այդ ժամանակ նա հասցրել էր կարդալ մեկնաբանական միայն մեկ գիրք՝ Հարի Այրնսայդի «*Երկնային տեղեղում*»-ը (Եփեսացիներին ուղղված թղթի հիման վրա)։

Դեռահաս Արթուր Ֆարստադը մի ամառ ամեն երեկո կարդում էր այդ գիրքը և հասկացավ, թե ինչ է մեկնաբանությունը։

Ի՞նչ է մեկնաբանությունը

Իսկապես, ի՞նչ է մեկնաբանությունը, և ինչո՞ւ չպետք է արհամարհել այն։ Վերջերս քրիստոնեական հայտնի մի հրատարակիչ կազմեց աստվածաշնչյան հրատարակումների տիպաբանություն, որն ընդգրկում էր *տասնհինգ* տեսակի գիրք։ Չարմանալի չէ, որ ոմանք չգիտեն, թե խորացված ուսումնասիրության համար ինչով են տարբերվում մեկնաբանություններն Աստվածաշնչից կամ նույնիսկ համաբարբառից, քարտեզագրքից կամ աստվածաշնչյան բառարանից։

Մեկնողները մեկնաբանում են կամ նըշումներ են կատարում՝ օգնելով տեքստը հասկանալ համար առ համար կամ պարբերություն առ պարբերություն։ Որոշ քրիստոնյաներ ծաղրում են մեկնաբանությունները և ասում. «Ես ուզում եմ միայն բանավոր բացատրություններ լսել և միայն Աստվածաշունչ կարդալ»։ Բարեպաշտական է հնչում, բայց իրականում այդպես չէ։ Մեկնաբանությունները գրավոր տեքստ

ներկայացնում են աստվածաշնչյան տեքստի ամենալավ, նաև ամենադժվար բացատրությունները՝ համար առ համար ուսումնասիրելով և Աստծո Խոսքը քարոզելով։ Որոշ մեկնաբանություններ, օրինակ՝ Այրնսայդի մեկնաբանությունը, իր քարոզների գրեթե բառացի շարադրանքն է։ Բացի այդ, բոլոր ժամանակների և ազգերի համար Աստվածաշնչի ամենատարածված բացատրությունները հասանելի են անգլերենով։ Ցավոք, դրանցից շատերն այնքան ծավալուն են, հնացած և դժվարհասկանալի, որ եթե չեն հուսահատեցնում հասարակ քրիստոնյային, ապա հիասթափեցնում են։ Ահա թե ինչու ծնվեց «*Աստվածաշնչյան մեկնաբանություններ քրիստոնյաների համար*» (ԱՄԲՀ) գիրքը։

Մեկնաբանությունների տեսակները

Աստվածաշնչով հետաքրքրվող յուրաքանչյուր անձ կարող է տեսականորեն մեկնաբանություն գրել։ Այդ պատճառով դրանք տատանվում են չափազանց ազատականներից մինչև ծայրահեղ պահպանողականները, և նրանց մեջ եղած բոլոր երանգները։ ԱՄԲՀ-ն շատ պահպանողական է, և Աստվածաշունչը համարում է Աստծո Հոգով ներշնչված ու անսխալական Աստծո Խոսք, որը լիովին բավարար է հավատալու և կյանքում կիրառելու համար։

Մեկնաբանությունները կարող են գիտական խոր աշխատանքներից ձևավորվել (գննելով եբրայերենի և հունարենի շարահյուսության մանրամասնությունները) մինչև համառոտ նշումների։ ԱՄԲՀ-ն միջին դիրք է գրավում այդ շարքում։ Բոլոր անհրաժեշտ մանրամասները մեծ մասամբ քննարկվում են ծանոթագրության մեջ, բայց տեքստի մանրամասների յուրջ ուսումնասիրությունը, դժվարհասկանալի կամ համոզիչ խորհուրդների կիրառությունը տրվում է առանց բացթողումների։ Մակդոնալդի գիրքը հարուստ է իմաստա-

լից բացատրություններով: Դրա նպատակը տարբեր մեկնությունները մեկ տեղ հավաքելն ու հասարակ քրիստոնյաներ դաստիարակելը չէ, այլ՝ «աշակերտներ» պատրաստելը:

Բացի այդ՝ մեկնաբանությունները հավատարիմ են մնում աստվածաբանական տարբեր դիրքորոշումների՝ պահպանողական կամ ազատական, բողոքական կամ հռոմա-կաթոլիկական, նախահագարամյակային կամ հետհագարամյակային: *ԱՄԶՀ-ի* մեկնաբանությունները հիմնապաշտ, բողոքական և նախահագարամյակային աստվածաբանություն են:

Ինչպե՞ս օգտվել այս գրքից

ԱՄԶՀ-ից օգտվելու մի քանի տարբերակ կա: Մենք առաջարկում ենք հետևյալ հերթականությունը.

Ընդհանուր հայացք. եթե ձեզ դուր է գալիս Աստվածաշունչ կարդալը և սիրում եք այն, ապա հաճույք կստանաք՝ թերթելով այս գրքի էջերը: Կարդալով առանձին հատվածներ՝ կզգաք այս գրքի առանձնահատկությունը:

Որոշակի պարբերություն. ձեզ մոտ կարող է հարց ծագել համարի կամ հատվածի վերաբերյալ, որը հասկանալու համար օգնության կարիք կունենաք: Գտե՛ք այն համատեքստի ճիշտ տեղում և անպայման կգտնեք լավ նյութ:

Վարդապետություն. եթե ուսումնասիրում եք արարչագործությունը, շաբաթ օրը, ուխտերը, նախասահմանությունը կամ փրկությունը, դիմե՛ք այն բաժիններին, որոնք քննարկում են այդ թեմաները: Բովանդակության ցանկում կա վերոհիշյալ թեմաների մի քանի էսսե:¹ Օգտվե՛ք համաբարբառից՝ բանալի բառերը գտնելու համար, որպեսզի կարողանաք գտնել այդ թեմայի գլխավոր հատվածներն ու լրացուցիչ համարները, որոնց մասին տեքստում չի խոսվում:

Աստվածաշնչից մի գիրք. գուցե կիրակնօրյա դպրոցը կամ ձեր համայնքը ուսումնասիրում է Նոր Կտակարանի գրքերից

մեկը: Դուք բավականին կհարստացնեք ձեր գիտելիքները (ձեռք կբերեք նյութ, որի մասին կարող եք բաժնեկցել քննարկման ժամանակ), եթե մեկ շաբաթ առաջ Աստվածաշնչից կարդաք այդ ուսումնասիրվող թեմային համապատասխանող հատվածները: Իհարկե, եթե խմբի առաջնորդը նույնպես գործածում է *ԱՄԶՀ-ն* որպես օժանդակ նյութ, ապա հավանաբար դուք կուզենաք օգտվել երկու տարբեր մեկնաբանություններից:

Ամբողջ գիրքը. ժամանակի ընթացքում յուրաքանչյուր քրիստոնյա պետք է Աստվածաշունչը կարդա ամբողջությամբ: Այն ունի դժվարհասկանալի հատվածներ, սակայն *ԱՄԶՀ-ն*, որը համարվում է պահպանողական գիրք, զգալիորեն կխորացնի ձեր գիտելիքները:

Աստվածաշնչի ուսումնասիրությունը կարող է սկսվել ձեռք բերված գիտելիքի մակարդակից. «Կորնելի շիլան օգտակար է, բայց համեղ չէ». ժամանակի ընթացքում այն կվերածվի «շոկոլադե տորթի»:

Երեսուն տարի առաջ պարոն Մակդոնալդն ինձ խորհուրդ տվեց. «Մի՛ արհամարհեք մեկնաբանությունները»: Ուստի ուշադրությամբ ուսումնասիրելով նրա՝ Հին և Նոր Կտակարանների մեկնաբանությունները և խմբագրելով դրանք օգտագործելով «Զինգ Ջեյմս» Աստվածաշունչը՝ ես համարձակ կարող եմ անել իմ հաջորդ քայլը. ես կտամ իմ խրատը. «Վայելե՛ք այս գիրքը»:

ՆՇՈՒՄ

¹Ընդհանրապես մեկնողական գրականության մեջ թեմայից շեղվելն ու այն լուսաբանելու համար այլ թեմաներին անդրադառնալը կոչվում է *էքսկուրս* (գլխավոր նյութից շեղվելը՝ նրա հետ որոշ կապ ունեցող կողմնակի հարցեր լուսաբանելու համար):

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ծնն.	- Ծննդոց
Ել.	- Ելից
Ղև.	- Ղևտացիների
Թվ.	- Թվոց
2 Օր.	- Երկրորդ Օրինաց
Հես.	- Հեսու
Դատ.	- Դատավորների
Հռութ.	- Հռութ
1 Թագ.	- 1 Թագավորաց
2 Թագ.	- 2 Թագավորաց
3 Թագ.	- 3 Թագավորաց
4 Թագ.	- 4 Թագավորաց
1 Մն.	- 1 Մնացորդաց
2 Մն.	- 2 Մնացորդաց
Եզր.	- Եզրաս
Նեմ.	- Նեմիա
Եսթ.	- Եսթեր
Հոբ.	- Հոբ
Սղմ.	- Սաղմոսներ
Առ.	- Առակաց
Ժող.	- Ժողովող
Երգ.	- Երգ երգոց
Ես.	- Եսայի
Եր.	- Երեմիա
Ողբ.	- Երեմիայի ողբերը
Եզ.	- Եզեկիել
Դան.	- Դանիել
Ովս.	- Ովսե
Հովլ.	- Հովել
Ամ.	- Ամովս
Արդ.	- Արդիա
Հովն.	- Հովնան
Միք.	- Միքիա
Նավ.	- Նավում
Ամբ.	- Ամբակում
Սոփ.	- Սոփոնիա
Անգ.	- Անգե
Չաք.	- Չաքարիա
Մադ.	- Մադաքիա

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Մատթ.	- Մատթեոսի
Մարկ.	- Մարկոսի
Ղուկ.	- Ղուկասի
Հովհ.	- Հովհաննեսի
Գործք.	- Գործք Առաքելոց
Հռ.	- Հռոմեացիներին
1 Կոր.	- 1 Կորնթացիներին
2 Կոր.	- 2 Կորնթացիներին
Գաղ.	- Գաղատացիներին
Եփ.	- Եփեսացիներին
Փիլ.	- Փիլիպպեցիներին
Կող.	- Կողոսացիներին
1 Թես.	- 1 Թեսաղոնիկեցիներին
2 Թես.	- 2 Թեսաղոնիկեցիներին
1 Տիմ.	- 1 Տիմոթեոսին
2 Տիմ.	- 2 Տիմոթեոսին
Տիտ.	- Տիտոսին
Փլմ.	- Փիլիմոնին
Եբր.	- Եբրայեցիներին
Հակ.	- Հակոբոսի
1 Պետ.	- 1 Պետրոսի
2 Պետ.	- 2 Պետրոսի
1 Հովհ.	- 1 Հովհաննեսի
2 Հովհ.	- 2 Հովհաննեսի
3 Հովհ.	- 3 Հովհաննեսի
Հուդա.	- Հուդայի
Հայտ.	- Հայտնություն

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Այս գրվածքների պատմական ու հոգևոր արժեքը գերազանց է իր ազդեցության անչափելի մասշտաբներով կյանքում և պատմության մեջ: Այն նկարագրում է միջօրեն, որի արշալույսն սկսվեց Եդեսիայում: Հին Կտակարանի մարգարեությունների Քրիստոսը դառնում է Ավետարանների պատմական Անձնավորությունը, Նոր Կտակարանի թղթերի հոգևոր փորձառությունը, իսկ Հայտնության գրքում՝ փառավորված Քրիստոսը»:

Վ. Գրեհեմ Սկրոգի

I. «Նոր Կտակարան» անվանումը

Մինչ Նոր Կտակարանի (ՆԿ) ուսումնասիրության ծովում խորանալը կամ նույնիսկ մի որոշակի գրքի համեմատաբար փոքր ուսումնասիրությանն անցնելը, օգտակար կլինեն համառոտակի ընդգծել մի քանի հիմնական փաստեր սուրբգրության մասին, որը կոչում ենք «Նոր Կտակարան»:

«Կտակարան» և «ուխտ» բառերի թարգմանությունը հունարեն (*diathēkē*) նույն բառն է: Եբրայեցիներին ուղղված նամակի մեկ կամ երկու հատվածներում վիճարկելի է, թե թարգմանություններից որ տարբերակն է ավելի լավը: Քրիստոնյաների սուրբգրության վերնագրի նախընտրելի բառը ակնհայտորեն «ուխտ»-ն է, քանի որ Գիրքը հռչակում է Աստծո դաշինքը, միությունը կամ *ուխտը* Նրա ժողովրդի հետ:

Այն կոչվում է Նոր Կտակարան (կամ ուխտ)՝ ի տարբերություն Հնի (կամ ավելի հնի):

Երկու Կտակարաններն էլ ներշնչված են Աստծո կողմից, ուստի օգտակար են բոլոր քրիստոնյաների համար: Բայց բնական է, որ Քրիստոսին հավատացող մարդն ավելի հաճախ անդրադառնում է Աստվածաշնչի այն մասերին, որոնք առանձնահատուկ ձեվով են խոսում Տիրոջ, Նրա եկեղեցու և այն մասին, թե ինչպիսի կյանք է Նա ակընկալում Իր աշակերտներից:

Օգոստինոսը հիանալի ձևով է արտահայտել Հին և Նոր Կտակարանների փոխկապակցությունը.

«Նոր Կտակարանը պահված է Հնում, Հինը բացահայտվում է Նորում»:

II. Նոր Կտակարանի կանոնը

«Կանոն» (հուն. *kanōn*) բառը նշանակում է «կանոնակարգ», ըստ որի ինչ-որ բան չափվում կամ գնահատվում է: ՆԿ-ի կանոնը կազմված է ներշնչված գրքերից: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ *միայն* այս գրքերը պետք է ներառվեն կանոնի մեջ, կամ որ ՆԿ-ի քսանյոթ գրքից յուրաքանչյուրը պետք է այնտեղ լինի: Քանի որ վաղ ժամանակներում էլ գոյություն ունեին քրիստոնեական թղթեր և գրքեր (նաև հերետիկոսական), ապա ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ հենց քսանյոթն են ճշմարիտը:

Հաճախ հիշատակվում է այն փաստը, որ եկեղեցական խորհուրդն է կազմել կանոնական ցանկը մ.թ. 300-ական թվականներին: Իրականում գրքերը *կանոնական* են եղել դրանց գրվելու պահից: Աստվածավախ և զանազանող աշակերտները հենց սկզբից ներշնչված սուրբգրությունն ընդունեցին. օրինակ՝ Պետրոսը՝ Պողոսի գրությունները (2 Պետ. 3:15-16): Այնուամենայնիվ, որոշ եկեղեցիներում որոշ ժամանակ վիճաբանում էին առանձին գրքերի, օրինակ՝ Հու-

դայի թղթի, Հովհաննեսի 2-րդ և 3-րդ թղթերի շուրջ:

Սովորաբար եթե գիրքը գրված էր առաքյալի, ինչպես օրինակ՝ Մատթեոսի, Պետրոսի, Հովհաննեսի, Պողոսի, կամ առաքյալների շրջանակից որևէ մեկի՝ Մարկոսի, Ղուկասի կողմից, ապա դրա կանոնականության վերաբերյալ կասկածներ չէին առաջանում:

Եկեղեցական խորհուրդը, պաշտոնապես ճանաչելով կանոնը, իրականում միայն *hաստատոց* այն, ինչն ընդունված էր շատ տարիներ առաջ: Խորհուրդը ոչ թե *գրքերի ներշնչված* ցանկ կազմեց, այլ՝ *ներշնչված գրքերի* ցանկ:

III. Հիդինակը

ՆԿ-ի սրբազան Հեղինակը Սուրբ Հոգին է: Նա ներշնչեց Մատթեոսին, Մարկոսին, Ղուկասին, Հովհաննեսին, Պողոսին, Հակոբոսին, Պետրոսին, Հուդային և Եբրայեցիների թղթի անանուն հեղինակին (տե՛ս Եբրայեցիներին ուղղված թղթի «Ներածություն» բաժինը)՝ գրելու համար: Որպեսզի ճիշտ ըմբռնենք ՆԿ-ի գրքերը գրելու կերպը, նախ պետք է ըմբռնենք, որ դրանք ունեն «երկու» հեղինակ: ՆԿ-ը մասամբ մարդկային և մասամբ աստվածային չէ. այն միաժամանակ ամբողջությամբ մարդկային է և ամբողջությամբ աստվածային: Աստվածային տարրը պահպանել է մարդկային տարրին ամեն մի սխալից և անճշտությունից: Արդյունքն անսխալական բնագիր ձեռագրերն են:

Գրված Խոսքի էությունն ավելի հեշտ է հասկանալ, երբ դիտարկում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի՝ Կենդանի Խոսքի երկու բնությունները: Նա մասամբ Մարդ և մասամբ Աստված չէ, ինչպես հունական առասպելների հերոսները, այլ միաժամանակ կատարյալ Մարդ է և կատարյալ Աստված: Աստվածային բնությունն անհնարին դարձրեց, որ մարդը սխալ թույլ տա կամ որևէ կերպով մեղք գործի:

IV. Տարեթվերը

Ի տարբերություն Հին Կտակարանի (ՀԿ), որը գրվել է գրեթե մեկ հազարամյակի ընթացքում (մոտավորապես մ.թ.ա. 1400-400 թթ.), ՆԿ-ը գրվել է ընդամենը կես դարում (մոտավորապես մ.թ. 50-100 թթ.):

ՆԿ-ի գրքերի ներկայիս կարգը եկեղեցու համար ամենահարմարն է: Այն սկսվում է Հիսուս Քրիստոսի կյանքի նկարագրությամբ, հետո պատմում է եկեղեցու մասին և ի վերջո բացահայտում եկեղեցու և աշխարհի ապագան: Այնուամենայնիվ, գրքերը դասավորված չեն այն հերթականությամբ, որով գրվել են: Դրանք գրվել են ըստ առաջացած կարիքի:

Առաջին գրքերը եղել են «նամակներ երիտասարդ եկեղեցիներին»՝ ինչպես դրանց անվանել է Ջ. Բ. Ֆիլիպսը: Հավանաբար քրիստոնեության առաջին դարի կեսերին գրվել են Հակոբոսի, Գաղատացիներին և Թեսաղոնիկեցիներին ուղղված թղթերը:

Ըստ ժամանակագրության՝ հաջորդ գրվածքները Ավետարաններն են. սկզբում Մատթեոսի Ավետարանը կամ Մարկոսինը, այնուհետև Ղուկասինը և վերջապես՝ Հովհաննեսինը: Հայտնության գիրքը գրվել է վերջում, թերևս, մ.թ. 1-ին դարի ավարտին:

V. Բովանդակությունը

ՆԿ-ի բովանդակությունը կարելի է հակիրճ խմբավորել հետևյալ կերպով.

Պատմական գրքեր.

Ավետարաններ

Գործք Առաքելոց

Նամակներ.

Պողոսի թղթեր

Ընդհանրական թղթեր

Ապոկալիպտիկ գիրք.

Հայտնություն

Այս գրքերը լավ յուրացրած քրիստոնյան «ամեն մի բարի գործի համար պատրաստված» կլինի:

Մեր աղոթքն է, որ «Աստվածաշնչյան մեկնաբանություններ քրիստոնյաների համար»

գիրքը շատ քրիստոնյաների էապես օգնի այս հարցում:

VI. Լեզուն

ՆԿ-ը գրված է *խոսակցական լեզվով*, որը կոչվում էր *koinē*, կամ «պարզ հունարեն»: 1-ին դարում, հավատի ասպարեզում, այն գրեթե համաշխարհային լեզու էր (շատերի երկրորդ լեզուն)՝ նույնքան հայտնի և լայն տարածված, որքան մեր օրերում անգլերենը:

Որքան երբայերենի ջերմ և գեղեցիկ ոճը կատարելապես համապատասխանում է ՀԿ-ի մարգարեություններին, պոեզիային և պատմություններին, նույնքան հունարենը աստվածային նախախնամությամբ նախատեսված էր որպես հրաշալի միջոց ՆԿ-ը գրելու համար: Հունարենը մեծ տարածում գտավ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների շնորհիվ: Նրա զինվորներն այդ լեզուն պարզեցրին և տարածեցին ժողովրդի մեջ:

Հունարենի բայերի ժամանակաձևերի ճշգրտությունը, հոլովները, բառապաշարը և մյուս տվյալները կատարյալ են դարձնում թղթերում պարունակվող կարևոր վարդապետական ճշմարտությունները հաղորդելը, հատկապես մի այնպիսի գրքում, ինչպիսին Հռոմեացիներինն է:

Հունական **koinē-ն** թեև չի համարվում էլիտար գրական լեզու, միաժամանակ «փողոցային» կամ աղքատ լեզու չէ: ՆԿ-ի որոշ հատվածներ՝ Եբրայեցիներին, Հակոբոսի, 2 Պետրոս թղթերը, մոտ են գրական բարձր նմուշներին: Ղուկասի Ավետարանի որոշ հատվածներ հասնում են գրեթե դասականին, և նույնիսկ Պողոսը երբեմն հրաշալի ոճով է գրում, օրինակ՝ 1 Կոր. 13-րդ և 15-րդ գլուխները:

VII. Թարգմանությունը

Անգլերենն օրինված է մեծաթիվ թարգմանությունների առկայությամբ, թերևս չափազանց մեծ: Սրանք բաժանվում են չորս հիմնական տեսակների.

1. Շատ բառացի

Ջ. Ն. Դարբիի (1871թ.) «Նոր» թարգմանությունը՝ «Անգլիական վերանայված հրատարակություն»-ը (ERV, 1881թ.) և դրա ամերիկյան տարբերակը՝ «Ամերիկյան ստանդարտ տարբերակ»-ը (ASV, 1901թ.) համարվում են չափազանց բառացի: Սա դրանք դարձնում է ուսումնասիրության համար օգտակար, բայց քարոզների պատրաստման, եկեղեցական ընթերցման և մտապահելու համար՝ թույլ: Շատ քրիստոնյաներ հանուն այլ թարգմանությունների երբեք չեն հրաժարվի «Քինգ Չեյմս» տարբերակի գեղեցկությունից և շքեղությունից (KJV):

2. Ամբողջովին համարժեք

Թարգմանություններ, որոնք բավականին բառացի և սերտորեն հետևում են եբրայական կամ հունական բնագրերին, երբ անգլերեն լեզուն տալիս է այդ հնարավորությունը, սակայն ավելի ազատ է թարգմանված այնտեղ, որտեղ պահանջվում է ոճական ձևի և դարձվածքների պահպանումը: Սրանց շարքին են «Քինգ Չեյմս տարբերակ»-ը (KJV), «Վերանայված ստանդարտ տարբերակ»-ը (RSV), «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշունչ»-ը (NASB) և «Քինգ Չեյմսի նոր տարբերակ»-ը (NKJV): Ցավոք, թեև Նոր Կտակարանի (RSV) թարգմանությունն ընդհանուր առմամբ հուսալի է, Հին Կտակարանի թարգմանության մեջ մեսիական շատ մարգարեություններ աղավաղված են: Մեր օրերում այդ վտանգավոր գիծը նկատվում է նույնիսկ ամենահայտնի աստվածաշնչագետների մոտ: *ԱՄՔՀ-ն* առավելապես օգտագործում է «Քինգ Չեյմսի նոր տարբերակ»-ը (NKJV)՝ որպես ամենահարմարը՝ պահպանելով «Քինգ Չեյմս տարբերակ»-ի (KJV) գեղեցկությունը, բայց չօգտագործելով քերականական հնացած ձևերը: Այս տարբերակը պահպանում է շատ համարներ և բառեր, որոնք դուրս են մնացել Աստվածաշնչի ժամանակակից բազմաթիվ թարգմանություններից:

3. Գրեթե համարժեք

Թարգմանության այս տեսակն ավելի ազատ է, քան ամբողջովին համարժեք թարգմանությունը: Երբեմն այնտեղ օգտագործվում է վերապատում՝ մեթոդ, որը հիմնավորված է այնքան ժամանակ, մինչև ընթերցողն սկսում է հասկանալ այն: Այս խմբին են պատկանում «Մոֆատի թարգմանություն»-ը, «Նոր անգլիական Աստվածաշունչ»-ը (NEB), «Նոր միջազգային տարբերակ»-ը (NIV) և «Երուսաղեմի Աստվածաշունչ»-ը: Փորձ է արվել ամբողջ միտքը կառույցներով արտահայտել, որը Հովհաննեսն ու Պետրոսը գուցե օգտագործեին, եթե մեր օրերում անգլերենով գրած լինեին: Այդ մեթոդը կարող էր օգտակար լինել, եթե դրանից օգտվեին պահպանողականորեն:

4. Վերապատում

Վերապատումը փոխանցում է տեքստի իմաստը այլ մտքի միջոցով, թեև հաճախ

մեծ ազատություն է վերցնում նյութի *ալտերացումներով*: Քանի որ բառերի ընտրության մեջ այն հեռու է բնագրից, *միշտ մեկնաբանության վերածելու վտանգ կա*: Օրինակ՝ «Կենդանի Աստվածաշունչ»-ը, թեև ավետարանչական, բայց շատ մեկնաբանություններ է տալիս, որոնք *լավագույն դեպքում* վիճելի են:

Ջ. Բ. Ֆիլիպսի վերապատումը (նա այն անվանում է թարգմանություն) գրական տեսանկյունից շատ լավ է կատարված: Նա *իր* բառերով փոխանցում է այն, ինչը, իր կարծիքով, նկատի ունեին Պետրոսն ու Պողոսն *իրենց* լեզվով:

Համեմատելու համար լավ կլիներ ունենալ առնվազն երեք տեսակի Աստվածաշունչ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ Աստվածաշնչի ամբողջովին համարժեք թարգմանությունն ամենաանվտանգն է մանրամասն ուսումնասիրության համար, ինչպիսին ներկայացված է *ԱՄԸՀ-ում*:

ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ավետարանների բոլոր գրությունների երախայրիքն են»:

Օրիգենես

I. Մեր փառավոր Ավետարանները

Յուրաքանչյուր անձ, ով գրականություն է ուսումնասիրել, ծանոթ է այնպիսի ժանրերի, ինչպիսիք են պատմվածքը, վեպը, երկը, կենսագրությունը և գրական այլ ձևերը: Բայց երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսն աշխարհ եկավ, անհրաժեշտ էր բոլորովին նոր գրական կատեգորիա՝ *Ավետարան*: Ավետարանները կենսագրություններ չեն, թեև պարունակում են բազմաթիվ կենսագրական նյութեր: Դրանք պատմվածքներ չեն, թեև այնտեղ գետնդրված են առակներ, օրինակ՝ անառակ որդու և բարի սամարացու առակները, որոնք նույնքան հետաքրքիր են, որքան որևէ գրական պատմվածք: Որոշ առակների բովանդակությունը հիմք է ծառայել վեպերի և կարճ պատմվածքների համար: Ավետարանները վավերագրական գեկույցներ չեն, թեև պարունակում են մեր Տիրոջ գրույցների և քարոզների ճշգրիտ և համառոտակի նկարագրությունը:

Ավետարանը ոչ միայն բացառիկ գրական ձև է. երբ չորս ավետարանիչները գրեցին Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի և Հովհաննեսի Ավետարանները, խախտվեց հրատակ սահմանված շարադրանքի ձևը: Չորս Ավետարանները (և միայն այս չորսը) երկու հազար տարի է, ինչ ճշմարիտ, ուղղափառ քրիստոնյաները ճանաչեցին և ընդունեցին: Տարբեր հերետիկոսներ գրեցին և դրանք Ավետարաններ *անվանեցին*: Մակայն այդպես կոչված գրքերը ընդամենը որոշ հերետիկոսական մտքեր հռչակելու խղճուկ փորձեր էին, օրինակ՝ գնոստիցիզմը:

Իսկ ինչո՞ւ չորս Ավետարան: Ինչո՞ւ ոչ հինգը, որ համապատասխաներ Մովսեսի Հնգամատյանին և ձևավորեր քրիստոնեական հնգամատյանը: Կամ ինչո՞ւ ոչ մեկ ծավալուն Ավետարան՝ բացառելով բոլոր կրկնությունները և ավելի շատ տեղ թողնելով հրաշքների և առակների նկարագրությանը: Իրականում չորս Ավետարանները «ներդաշնակեցնելու» կամ համատեղելու փորձերն սկիզբ են առել մ.թ. 2-րդ դարում Տացիանի «Դիատեսարոն» գրքից, որը հունարենից թարգմանաբար նշանակում է «չորսի միջով»:

Իրենիսոսն առաջ քաշեց այն տեսությունը, որ Ավետարանների թիվը համապատասխանում է երկրի չորս ծագերին, քամու չորս ուղղություններին («չորս»՝ ունիվերսալության թիվ):

II. Չորս խորհրդապատկերները

Շատերին, հատկապես արվեստագետներին, դուր է գալիս գուգահեռներ անցկացնել չորս Ավետարանների և Եզեկիելի չորս խորհրդապատկերների ու Հայտնության գրքի՝ առյուծի, ցլի, մարդու և արծիվի միջև: Այնուհանդերձ տարբեր քրիստոնյաներ տարբեր կերպով են դրանք հարաբերակցել Ավետարանների հետ: Եթե այդ բնորոշ *առանձնահատկությունները* (ինչպես անվանում են դրանց արվեստում) հիմնավորված են, ապա առյուծն ավելի համապատասխանում է Մատթեոսի Ավետարանին՝ թագավորական Ավետարանին՝ Հուդայի ցեղի Առյուծին: Յուլը՝ որպես լուծ քաշելու համար նախատեսված կենդանի, ավելի հա-

մապատասխանում է Մարկոսի Ավետարանին՝ Ծառայի Ավետարանին: Մարդը միանշանակ առանցքային կերպարն է Ղուկասի Ավետարանում՝ Մարդու Որդու Ավետարանում: Եվ նույնիսկ «*Հոմանիշների, հսկանիշների և նախդիրների*» բառարանը մատնանշում է, որ արժիվը Հովհաննեսի Ավետարանին բնորոշ *առանձնահատկությունն է՝ որպես հոգևոր վսեմ տեսիլքի խորհրդասպատկեր:*¹

III. Չորս տեսակի ընթերցողներ

Չորս Ավետարանների գոյության փաստի ամենալավ բացատրությունը հավանաբար այն է, որ Սուրբ Հոգին ձգտում է հասնել չորս տարբեր խմբերի մարդկանց՝ դեռ վաղ ժամանակներում գոյություն ունեցող չորս տեսակի մարդկանց, ովքեր բացահայտ նմանակներ ունեն նաև մեր օրերում:

Յուրաքանչյուրը կհամաձայնի, որ Մատթեոսի Ավետարանն առավել հրեական ուղղվածություն ունեցող Ավետարան է: Նույնիսկ սկսնակ ընթերցողը նկատում է այնտեղ ՀԿ-ից մեջբերումներ, մանրամասն դատողություններ, մեր Տիրոջ ազգաբանությունը և ընդհանուր սեմիտական հնչեքանգ:

Մարկոսը, ով հավանաբար կայսրության մայրաքաղաքում է գրի առել իր Ավետարանը, այն նախատեսում էր հռոմեացիների և նման միլիոնավոր մարդկանց համար, որոնց գրավում են ավելի գործողությունները, քան խորհրդածությունները: Այս պատճառով նրա Ավետարանում ավելի շատ նկարագրված են հրաշքները, քան առակները: Այստեղ չպետք է լինեին ազգաբանության տվյալներ, քանի որ հռոմեացիներին չէր հետաքրքրում մի Հրեայի ծագումը, ով իր կյանքում Ծառա էր դարձել:

Ղուկասի Ավետարանը հույների և այն հռոմեացիների համար է, ովքեր սիրում ու սովորում են հունական գրականությունն ու արվեստը: Այդպիսի մարդիկ սիրում են գեղեցկությունը, հումանիտար գիտությունները, մշակույթն ու գրական կատարելությունը: Բժիշկ Ղուկասը բավարարում

է նրանց հետաքրքրությունները: Ժամանակակից հույների կողքին ֆրանսիացիները համարվում են այս մարդկանց առավել ակրնհայտ հետևողները: Չարմանալի չէ, որ այս բառերը պատկանում են հենց *Ֆրանսիացուն*. «Ղուկասի Ավետարանն աշխարհի ամենահիանալի գիրքն է» (տե՛ս Ղուկասի Ավետարանի «Նախաբանը»):

Ո՛ւմ համար է գրել Հովհաննեսը: Սա համաշխարհային Ավետարան է, որը պարունակում է այն, ինչ հարմար է յուրաքանչյուրի համար: Այն ավետարանչական է (20:30-31), բայց միևնույն ժամանակ բարձր է գնահատվում քրիստոնյա լուրջ աստվածաշնչագետների կողմից: Պատասխանը, հավանաբար հետևյալն է. Հովհաննեսի Ավետարանը նախատեսված է «երրորդ ռասայի» համար, մի տիտղոս, որ տրված էր քրիստոնյաներին հեթանոսների կողմից, քանի որ նրանք ո՛չ հրեաներ էին, ո՛չ էլ հեթանոսներ:

IV. Չորրորդության այլ գաղափարներ

ՀԿ-ում գոյություն ունեն չորրորդության այլ գաղափարներ, որոնք հիանալի կերպով համապատասխանում են Ավետարաններում առկա չորս թեմաներին:

Մեր Տիրոջը բնութագրող «Ծառավիղ» բառը հանդիպում է հետևյալ համատեքստերում.

«... Դավիթի համար... Ծառավիղ... Թագավոր» (Եր. 23:5-6),

«... Իմ ծառային՝ ԾԱՌԱՎԻԴԻՆ» (Չաք. 3:8),

«... Մարդը... ԾԱՌԱՎԻԴ է» (Չաք. 6:12),

«... ՏԻՐՈՋ Ծառավիղը...» (Ես. 4:2):

ՀԿ-ում չորս անգամ հանդիպում է նաև «ահա» բառը, որը ճշգրտորեն համընկնում է Ավետարանների չորս գլխավոր թեմաների հետ.

«... Ահա՛ քո Թագավորը...» (Չաք. 9:9),

«Ահա՛ Իմ ծառան...» (Ես. 42:1),

«... Ահա՛ այն մարդը...» (Չաք. 6:12),

«... Ահա՛ ձեր Աստվածը» (Ես. 40:9):

Վերջին գուգահեռն ավելի քիչ է ակնառու, բայց շատերի համար եղել է մեծ օրհնություն: Նյութերի չորս գույները, որոնք օգտագործել են խորանի շինության ժամանակ, և դրանց սիմվոլիկ նշանակությունը նույնպես համապատասխանում է ավետարանիչների չորրորդության գաղափարին, և նկարագրում է մեր Տիրոջը բնորոշ առանձնահատկությունները:

Ծիրանի. ակնհայտ է՝ լավագույն ընտրությունն է *Մատթեոսի*՝ Թագավորի Ավետարանը: Դատ. 8:26-ը ցույց է տալիս այս գույնի թագավորական բնությունը:

Հնում *որդան կարմիր* գույնը ստանում էին կարմիր որդին ճզմելով: *Մարկոսի Ավետարանն* անվանում են Ծառայի Ավետարան: Տե՛ս Մաղմուս 22:6-ը. «Որդ եմ, ոչ թե մարդ»:

Մայրուսկ գույնը խոսում է սրբերի արդարության մասին (Հայտ. 19:8): *Դուկասի ավետարանն* ընդգծում է Քրիստոսի մարդկային էության կատարելությունը:

Երկնագույնը խորհրդանշում է շափյուղաներով կամարը, որը մենք անվանում ենք երկինք (Ել. 24:10)՝ Քրիստոսի աստվածության գրավիչ պատկերը, որ *Հովհաննեսի Ավետարանի* առանցքային նյութն է:

V. Հաջորդականությունը և հիմնական շեշտը

Ավետարաններում իրադարձությունները միշտ չէ, որ արձանագրված են այն հերթականությամբ, որով տեղի են ունեցել: Նախ պետք է իմանալ, որ Սուրբ Հոգին հաճախ իրադարձությունները խմբավորում է ըստ դրանց բարոյական ուսուցման: Քելին ասում է.

«Առաջ ընթանալով՝ մենք կապացուցենք այն փաստը, որ Դուկասի Ավետարանը բնութագրվում է իմաստային հաջորդականությամբ, և որ Դուկասը խմբավորում է փաստերը, երկխոսությունները, հարցերը, պատասխանները և մեր Տիրոջ քննարկումները՝ ըստ դրանց ներքին կայի, և ոչ թե իրադարձությունների սովորական հաջորդականության, որն իրականում համարվում է շարադրանքի ա-

մենակոպիտ և անկատար ձև: Բայց իրադարձությունները իմաստային հաջորդականությամբ խմբավորելը՝ հաշվի առնելով դրանց պատճառներն ու հետևանքները, շատ բարդ խնդիր է պատմագրի համար, ով տարբերվում է սովորական ժամանակագրից: Աստված կարող էր օգտագործել Դուկասին, որ դա կատարյալ անի»:²

Այս տարբեր շեշտերն ու մոտեցումները օգնում են՝ բացատրելու Ավետարանների բազմազանությունը: Մինչ առաջին երեք Ավետարանները, այսպես կոչված «սինոպտիկ» (նշանակում է ընդհանուր տեսանկյունով) Ավետարանները Քրիստոսի կյանքի նկարագրության նմանատիպ մոտեցում ունեն, Հովհաննեսի Ավետարանը տարբերվում է դրանցից: Նա գրել է ավելի ուշ և չի ցանկացել կրկնել այն, ինչի մասին արդեն ասված էր: Նրա Ավետարանում մեր Տիրոջ կյանքը և խոսքերն ավելի շատ ներկայացված են մտածողի և աստվածաբանի տեսանկյունից:

VI. Սինոպտիկական հարցը

Ինչո՞ւ ենք առաջին երեք Ավետարաններում այդքան շատ *նմանություններ* գտնում, նույնիսկ բառերի գրեթե ամբողջական կրկնություն համեմատաբար երկար հատվածներում և միևնույն ժամանակ շատ *տարբերություններ*: Ահա թե ինչում է «սինոպտիկական հարցը»: Ավելի շատ, դա խնդիր է նրանց համար, ովքեր մերժում են Աստվածաշնչի ներշնչվածությունը, այլ ոչ թե հիմնապաշտ քրիստոնյաների համար: Շատ բարդ տեսություններ են առաջադրվել՝ վկայակոչելով կորած փաստաթղթեր, որոնց հետքերը գոյություն չունեն գրավոր տեսքով: Այս գաղափարներից մի քանիսը համապատասխանում են Դուկ. 1:1-ին և կարող են *համաձայնել* ուղղափառ մոտեցման հետ: Սակայն այս տեսություններից մի քանիսն այնպիսի կետի են հասել, որ պնդում են, թե 1-ին դարի եկեղեցին հորինել է Հիսուս Քրիստոսի մասին բազմաթիվ «առասպելներ»: Բացի քրիստոնեական

սուրբգրության և եկեղեցու պատմության հանդեպ ցուցաբերված անհավատության, որը բնորոշ է այս տեսություններին, պետք է նշել, որ դրանց համար ոչ մի փաստաթղթային ապացույց չկա: Նույնպես չկա *երկու աստվածաշնչագետ, ովքեր իրար հետ կհամաձայնեն* սինոպտիկ Ավետարանները դասակարգելու ու բաժանելու հարցում:

Այս հարցի ամենալավ լուծումը գտնում ենք Տիրոջ խոսքերում՝ «Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, Ում Հայրն ուղարկելու է Իմ անունով, Նա պիտի ամեն բան ձեզ սովորեցնի և ձեր միտքը բերի այն ամենը, ինչ Ես ձեզ ասացի» (Հովհ. 14:26):

Սա բացատրում է Մատթեոս և Հովհաննես ականատեսների հիշողությունները՝ ներառելով ամենայն հավանականությամբ նաև Մարկոսին, եթե ենթադրենք, որ նա գրի է առել Պետրոսի հիշողությունները, ինչպես նշում է եկեղեցու պատմությունը: Սրան ավելացնենք Սուրբ Հոգու անմիջական օգնությունը, գրավոր փաստաթղթերը, որոնք հիշատակվում են Ղուկ. 1:1-ում, սեմական ժողովրդի *բանավոր ավանդույթների* բացառիկ ճշտությունը, և սինոպտիկական հարցը կպատասխանվի: Բոլոր անհրաժեշտ ճշմարտությունները, մանրամասները կամ մեկնաբանությունները, որոնք գտնվում են այս աղբյուրներից դուրս, կարող են հայտնաբերվել Սուրբ Հոգու կողմից սովորեցրած խոսքերում (1 Կոր. 2:13):

Այսպիսով, երբ մանրամասնությունների մեջ տեսնում ենք *ակնհայտ* հակասություն և տարբերություն, ճիշտ կվարվենք, եթե հարց տանք. ինչո՞ւ է Ավետարանն *այս մասը* բաց թողնում, ընդգրկում կամ ընդգծում *այս* իրողությունը կամ խոսքը: Օրինակ՝ Մատթեոսը երկու անգամ է գրում երկու բժշկված մարդկանց՝ կույրի և դիվահարի մասին, երբ Մարկոսն ու Ղուկասը հիշատակում են միայն մեկը: Ոմանք հակասություն են տեսնում այստեղ: Հիշե՛ք, որ Մատթեոսի Ավետարանը հրեական Ավետարան է և հիշատակում է երկու մարդկանց, քանի որ Օրենքը պահանջում էր «երկու կամ երեք վկա», իսկ մյուս ավետարանիչները տալիս

են միայն գլխավոր դերակատարի՝ օրինակ՝ *կույր Բարտիմեոսի* անունը:

Հաջորդ պարբերությունները լուսաբանում են այն փաստը, որ Ավետարաններում որոշ ենթադրյալ կրկնողություններ իրականում ուշադրությունը բևեռում են կարևոր տարբերություններին:

Ղուկ. 6:20-23-ը առաջին հայացքից կրկնօրինակում է Լեռան քարոզը, բայց այստեղ ասվում է, որ Խոսքը քարոզվում էր հարթավայրում (Ղուկ. 6:17): Երանությունները նկարագրում են Թագավորության կատարյալ քաղաքացու բնությունը, մինչ Ղուկասը խոսում է նրանց ապրելակերպի մասին, ովքեր Քրիստոսի աշակերտներն են հանդիսանում: Ղուկ. 6:40-ը և Մատթ. 10:24-ը թվում է, թե նույնն է: Բայց Մատթեոսի Ավետարանում Հիսուսը հանդես է գալիս Ուսուցչի դերում, իսկ մենք՝ Նրա աշակերտների: Ղուկասի Ավետարանում ուսուցիչը հավատացյալ մարդն է, իսկ նրան, ում նա սովորեցնում է՝ աշակերտ: Մատթ. 7:22-ը մեր ուշադրությունն ուղղում է Թագավորին ծառայելու վրա, մինչ Ղուկ. 13:25-27-ը նկարագրում է փոխհարաբերությունը Տանտիրոջ հետ:

Եթե Ղուկ. 15:4-7-ը պարունակում է փարիսեցիների կտրուկ մեղադրանքները, ապա Մատթ. 18:12-13-ը խոսում է երեխաների և նրանց հանդեպ Աստծո սիրո մասին:

Երբ ներկաները միայն հավատացյալներ էին, Հովհաննես Մկրտիչն ասաց. «... Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով» (Մարկ. 1:8, Հովհ. 1:33): Երբ ներկա էին տարբեր մարդիկ, և նրանց հետ փարիսեցիներ էլ կային, նա ասաց. «... Նա ձեզ պիտի մկրտի Սուրբ Հոգով և կրակով (դատաստանով մկրտություն)» (Մատթ. 3:11, Ղուկ. 3:16):

«Ինչ դատաստանով որ դատում եք» արտահայտությունը վերաբերում է *ուրիշների հանդեպ մեր քննադատական վերաբերմունքին* (Մատթ. 7:2), *Աստծո Խոսքի յուրացմանը* (Մարկ. 4:24) և *մեր առատաձեռնությանը* (Ղուկ. 6:38):

Ուստի, այս տարբերությունները հակա-

սություններ չեն, այլ նպատակադրված, օգտակար հոգևոր կերակուր հավատացյալների խորհրդածության համար:

VII. Գրքերի Հեղինակը

Ավետարանների (նաև Աստվածաշնչի բոլոր գրքերի) հեղինակների հարցը քննարկելիս սովորական երևույթ է վկայությունները *արտաքին* և *ներքին* ապացույցների բաժանելը: Մենք առաջարկում ենք դա անել Նոր Կտակարանի բոլոր քսանյոթ գրքերի հետ: *Արտաքին* ապացույց ասելով նկատի ունենք հեղինակներին, որոնք ապրել են դրանց ստեղծման ժամանակներում՝ սովորաբար 2-րդ և 3-րդ դարի եկեղեցական հայրերին և մի քանի հերետիկոս կամ կեղծ ուսուցիչներին: Այս մարդիկ մեջբերում, հիշատակում, իսկ երբեմն էլ հատուկ պատմում են մեզ հետաքրքրող գրքերի և հեղինակների մասին: Օրինակ՝ եթե Կղեմես Հռոմեացին մեջբերում է 1 Կորնթացիներին մոտավորապես 1-ին դարի վերջում, ապա այդ թուղթը չի կարող Պողոսի անվամբ կեղծում լինել՝ գրված 2-րդ դարում: *Ներքին* ապացույցներին են վերաբերում գրքի ոճը, բառապաշարը, պատմությունը և բովանդակությունը, որոնք քննելով տեսնում

ենք համապատասխանություն կամ հակասություն այն բանին, որ հայտարարում են մյուս հեղինակները և փաստաթղթերը: Օրինակ՝ Ղուկասի Ավետարանի և Գործք Առաքելոց գրքի ոճն ամրապնդում է այն տեսակետը, որ դրանց հեղինակը եղել է կրթված, հեթանոսական ծագում ունեցող բժիշկ:

Շատ գրքերում հերետիկոս Մարքիոնի (2-րդ դար) «կանոնը» կամ ընդունված գրքերի ցանկն է մեջբերված: Այնտեղ Ղուկասի Ավետարանի խիստ կրճատված տարբերակն ու Պողոսի տասը թղթերն են ներառված: Համենայն դեպս, ցանկը հաստատում է, որ այդ գրքերն ընդունված էին այդ ժամանակ: Փաստաթուղթը հայտնաբերող իտալացի կարդինալ Մուրատորիի անունը կրող Մուրատորյան կանոնը թեև երբեմն մասնատված, սակայն քրիստոնեական կանոնական գրքերի ուղղափառ ցանկ է:

ՆՇՈՒՄՆԵՐ

¹James C. Fernald, ed., “Emblem”, Funk & Wagnalls Standard Handbook of Synonyms, Antonyms and Prepositions, էջ 175:

²William Kelly, An Exposition of the Gospel of Luke, էջ 16:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ

Նախարան

«Մտահղացման վեհությանը և այն գործությանը, որով նյութերի մի մեծ քանակ ստորադրված է մեծ գաղափարներին, պատմական թեմային վերաբերող ոչ մի գրվածք՝ լինի Հին թե Նոր Կտակարաններում, չի կարող համեմատվել Մատթեոսի Ավետարանի հետ»:

Թեոդոր Զահն

I. Հատուկ տեղը կանոնում

Մատթեոսի Ավետարանը շատ լավ կամուրջ է Հին և Նոր Կտակարանների միջև: Առաջին իսկ բառերից մենք վերադառնում ենք հինկտակարանյան Աստծո ժողովրդին, Աբրահամ նահապետին և Իսրայելի առաջին մեծ թագավոր Դավթին: Իր շեշտադրությամբ, հրեական ուժեղ կոյորիտով, հրեական սուրբգրություններից բազմաթիվ մեջբերումներով և ՆԿ-ի բոլոր գրքերին գլխավորաձև դիրքով Մատթեոսի Ավետարանն այն տրամաբանական հենակետն է, որից հռչակվում է քրիստոնեական լուրը ողջ աշխարհին:

Ամենավաղ ժամանակներից Մատթեոսի Ավետարանը գրավել է առաջին տեղը Ավետարաններում, և մինչև վերջին ժամանակները բոլորի կողմից ընդունված էր, որ այն չորսից առաջինն է գրվել: Ինչպես նաև դյուրընկալելի պարզ ոճն այս Ավետարանը դարձնում է սիրելի գիրք եկեղեցիներում հանրային ընթերցանության համար: Հանրաճանաչությամբ այն կարող է մրցել միայն Հովհաննեսի Ավետարանի հետ:

Պահպանողական հավատացյալ մնալու համար, ամենևին էլ անհրաժեշտ չէ հավատալ, որ Մատթեոսի Ավետարանը առաջինն է գրվել: Այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք, որ գրեթե բոլոր առաջին քրիստոնյաները հրեական ծագում ունեին, տրամաբանական է ենթադրել, որ հազարավոր հավատացյալների հոգևոր կարիքները բավա-

րարելու համար, Մատթեոսը մյուսներից առաջ է գրել իր Ավետարանը:

II. Հեղինակը

Արտաքին ապացույցի հին և համընդհանուր կարծիքն այն է, որ Ղևի կոչված Մատթեոս մաքսավորն է գրել առաջին Ավետարանը: Քանի որ նա չի եղել առաքելական խմբի երևելի անդամ, տարօրինակ կլիներ, եթե նրան վերագրելին առաջին Ավետարանը, եթե նա իրոք ոչ մի առնչություն չունենար դրա հետ:

Բացի «Դիդակխե» («Տասներկու առաքյալների ուսմունքը») անվամբ ճանաչված հնագույն փաստաթղթից՝ Հուստինիոս Մարտիրոսը, Դիոնետոս Կորնթացին, Թեոֆիլ Անտիոքացին և Աթենագոր Աթենացին ավետարանը համարում են արժանահավատ: Եկեղեցական պատմիչ Եվսեբոսը մեջբերում է Պապիայից, ով պնդում էր, որ «Մատթեոսը գրել է եբրայերենով «*լոգիա*», և ամեն ոք այնպես է մեկնաբանում, ինչպես կարողանում է»: Իրենիոսը, Պանտեին և Օրիգենը հիմնականում համաձայն են սրա հետ: Քանի որ այդ բառը հանդիպում է ՆԿ-ում, լայն տարածում է գտել այն կարծիքը, թե եբրայերենը արամերենի բարբառներից է, որն օգտագործել են հրեաները մեր Տիրոջ ժամանակաշրջանում: Բայց ի՞նչ է *լոգիա-ն*: Հունարենում այն սովորաբար նշանակում է «պատգամներ»: օրինակ՝ ՀԿ-ը պարունակում է Աստծո *պատգամներ*-

որ: Պապիայի արտահայտության մեջ այն չի կարող այդպիսի իմաստ ունենալ: Նրա այս արտահայտության մասին երեք հիմնական կարծիք կա. 1. այն վերաբերում է Մատթեոսի *Ավետարանին*՝ որպես այդպիսին: Այսինքն՝ Մատթեոսը գրել է իր Ավետարանն արամերեն տարբերակով՝ հատուկ նպատակով, որպեսզի հրեաներին շահի Քրիստոսի համար և քաջալերի քրիստոնյա հրեաներին: Ավելի ուշ հայտնվեց հունական տարբերակը, 2. այն վերաբերում է միայն Հիսուսի *խոսքերին*, որոնք հետագայում ներառվեցին նրա Ավետարանի մեջ, 3. այն վերաբերում է *վկայություններին*, այսինքն՝ հինկտակարանյան գրվածքների մեջբերումներին, որպեսզի ցույց տա, որ Հիսուսը Մեսիան է: Առաջին և երկրորդ կարծիքներն ավելի հավանական են:

Մատթեոսի հունարենը չի կարդացվում որպես գուտ թարգմանություն, բայց այդպիսի լայն տարածված ավանդությունը, առանց վաղ շրջանի տարածայնությունների, պետք է փաստացի հիմնավորում ունենա: Ավանդությունն ասում է, որ Մատթեոսը 15 տարի քարոզել է Պաղեստինում, իսկ հետո ուղևորվել է՝ քարոզելու օտար երկրներում: Հնարավոր է, որ գրեթե մ.թ. 45թ.-ին նա Հիսուսին՝ որպես իրենց Մեսիա ընդունած հրեաներին է թողել իր Ավետարանի առաջին ուրվագիծը (կամ պարզապես Քրիստոսի *գրույցները*) արամերենով, իսկ ավելի ուշ պատրաստել է վերջնական հունարեն տարբերակը *համընդհանուր* օգտագործման համար: Նույն կերպով վարվեց Հովսեփոսը՝ Մատթեոսի ժամանակակիցը: Այդ հրեա պատմիչն իր «*Հրեական պատերազմ*» գրքի առաջին ուրվագիծը կազմել է արամերենով, իսկ հետո վերջնական ձևը՝ հունարենով:

Առաջին Ավետարանի *ներքին սպացույցը* շատ հարմար էր աստվածավախ հրեային, ով սիրում էր ՀԿ-ը և տաղանդավոր գրող ու խմբագիր էր: Որպես Հռոմի քաղաքացիական ծառայող՝ Մատթեոսը պետք է լավ իմանար երկու լեզուները՝ իր ժողովրդի (արամերեն) և տիրող իշխանությունների: Արևելքում հռոմեացիները գործածում էին

հունարենը, ոչ թե լատիներենը: Թվերին վերաբերող մանրամասները, առակները, որտեղ խոսքը փողի մասին է, ֆինանսական եզրույթները, նաև արտահայտիչ ճիշտ ոճը լավագույն ձևով գուգակցվում էին նրա հարկահավաքի մասնագիտության հետ:

Չնայած այսպիսի ընդհանրական արտաքին և ներքին սպացույցներին, ոչ պահպանողական աստվածաշնչագետների մեծ մասը *մերժում է* ավանդական տեսակետը, որ այս գիրքը գրել է մաքսավոր Մատթեոսը: Նրանք հիմնավորում են սա երկու պատճառով.

Առաջին՝ եթե *համարենք*, որ Մարկոսի Ավետարանը եղել է առաջին գրավոր ավետարանը, որի մասին այսօր շատ շրջանակներում խոսում են որպես «ավետարանական ճշմարտության» մասին, ապա ինչո՞ւ է առաքյալը և ականատեսը Մարկոսից այդքան շատ նյութ օգտագործել (մյուս Ավետարաններում ևս կա Մարկոսի Ավետարանից 93%): Ի պատասխան այս հարցի՝ նախ ասենք. *սպացուցված չէ*, որ Մարկոսի Ավետարանն առաջինն է գրվել: Հնագույն վկայություններն ասում են, որ առաջինը Մատթեոսի Ավետարանն է, և քանի որ առաջին քրիստոնյաները գրեթե բոլորը հրեա էին, ապա դա տրամաբանական է թվում: Բայց եթե նույնիսկ համաձայնենք այսպես կոչված «մարկոսական մեծամասնության հետ» (և շատ պահպանողականներ անում են սա), ապա Մատթեոսը կարող էր իմանալ, որ Մարկոսի աշխատությունը մեծամասամբ ստեղծվել էր Մատթեոսին առաքելակից եռանդուն Սիմոն Պետրոսի ազդեցությամբ, ինչպես հաստատում են վաղ եկեղեցական ավանդությունները (տե՛ս Մարկոսի Ավետարանի «Նախաբանը»):

Երկրորդ՝ փաստարկը ի դեմ Մատթեոսի հեղինակության կամ մեկ այլ ականատեսի, վառ մանրամասների բացակայությունն է: Մարկոսի մոտ, ում ոչ ոք չի համարում Քրիստոսի ծառայության վկա, կան գունեղ մանրամասներ, որից կարող ենք ենթադրել, որ նա մասնակցել է այդ ամենին: Ինչպե՞ս կարող է ականատեսն այդքան սառնությամբ գրել: Մաքսավորի բնավորության ա-

ռանձնահատկություններն ինքնին հավանաբար շատ լավ են սա բացատրում: Որպեսզի ավելի շատ տեղ հատկացնենք մեր Տիրոջ գրույցներին, Ղևին պետք է ավելի քիչ տեղ հատկացնենք անհարկի մանրամասներին: Մարկոսն էլ նույն ձևով կվարվեր, եթե առաջինն ինքը գրեր, իսկ Մատթեոսը կաշխատեր, որ Պետրոսի հիշողությունները լավ ներկայացվեին:

III. Գրելու տարեթիվը

Եթե լայն տարածում գտած այն տեսակետը ճիշտ է համարվում, որ Մատթեոսը նախ Ավետարանի արամերեն տարբերակն է գրել կամ առնվազն Հիսուսի խոսքերը, ապա գրվածքի տարեթիվը մ.թ. 45թ.-ն է համբարձումից տասնհինգ տարի անց, որը լիովին համընկնում է հնագույն ավանդությունների հետ: Իր ավելի ամբողջական, կանոնական Ավետարանը հունարենով նա հավանաբար ավարտել է մ.թ. 50-55թ.-ին կամ նույնիսկ ավելի ուշ:

Այն կարծիքը, որ Ավետարանը *պետք է* գրված լիներ Երուսաղեմի կործանումից հետո (մ.թ. 70թ.) հիմնականում Քրիստոսի սպազա իրադարձությունները մանրամասնորեն կանխատեսելու կարողությանը չհավատալու վրա է հիմնված, ինչպես նաև Աստծո Հոգով ներշնչված լինելը մերժող այլ տեսությունների:

IV. Ենթահողը և թեման

Մատթեոսը երիտասարդ էր, երբ Հիսուսը կանչեց նրան: Ծագումով հրեա և մասնագիտությամբ մաքսավոր. նա թողել էր ամեն բան, որպեսզի Հիսուսին հետևի: Նրա համար բազմաթիվ պարզևատրումներից մեկն այն էր, որ նա դասվեց տասներկու առաքյալների շարքում: Մյուսը ընտրվելն էր՝ դառնալու մի գրքի հեղինակ, որը, ինչպես գիտենք, առաջին Ավետարանն է: Մովորաբար համարում են, որ Մատթեոսը և Ղևին նույն անձն է (Մարկ. 2:14, Ղուկ. 5:27):

Իր Ավետարանում Մատթեոսը ձեռնամուխ է՝ ցույց տալու, որ Հիսուսը Իսրայելի երկար սպասված Մեսիան է՝ Դավթի գահի միակ օրինական հավակնորդը:

Գիրքը չի հավակնում Քրիստոսի կյանքի լիարժեք պատմությունը լինելուն: Այն սկսվում է Նրա ազգաբանությամբ և մանկությամբ, հետո ներկայացնում է Նրա հասարակական ծառայությունը՝ սկսած մոտավորապես երեսուն տարեկանից: Մուրբ Հոգու առաջնորդությամբ Մատթեոսն ընտրում է Փրկչի կյանքից և ծառայությունից այնպիսի ասպեկտներ, որոնք Նրա մասին վկայում են որպես Աստծո *Օծյալի*, որը և «Մեսիա» կամ «Քրիստոս» բառերի նշանակությունն է: Գիրքը մեզ առաջնորդում է իրադարձությունների գազաթնակետին՝ Տեր Հիսուսի չարչարանքներին, մահվանը, թաղմանը, հարությանը և համբարձմանը: Եվ այդ գազաթնակետում անշուշտ դրված է մարդու փրկության հիմքը: Ուստի գիրքը «Ավետարան» է կոչվում ոչ այնքան այն պատճառով, որ մեղավորներին փրկություն ստանալու ճանապարհ է հարթում, այլ քանի որ նկարագրում է Քրիստոսի գոհաբերական ծառայությունը, որի շնորհիվ այդ փրկությունը դարձավ իրականանալի: «*Աստվածաշնչյան մեկնաբանություններ հավատասցյալների համար*» գրքի նպատակը ոչ թե ավարտուն կամ տեխնիկապես կատարյալ լինելն է, այլ Խոսքի վրա անձնապես խորհրդածելու և այն ուսումնասիրելու ցանկություն առաջացնելը: Եվ առավելապես դրանք նպատակամղված են, որպեսզի ընթերցողի սրտում գորավոր փափագ առաջանա Թագավորի վերադարձի համար:

Եվ նույնիսկ ես վառվող սրտով,
Եվ նույնիսկ ես քաղցր հույսերով
Վերադարձիդ այդ պահին, ո՛վ Հիսուս,
Անձկանոք եմ սպասում:

(Մուրբ Պողոսից, Ֆ. Վ. Հ. Մայեր)

Ուրվագիծ

- I. ՄԵՍԻԱ-ԹԱԳԱՎՈՐԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ու ԾՆՈՒՆԴԸ (1-ին գլ.)
- II. ՄԵՍԻԱ-ԹԱԳԱՎՈՐԻ ՎԱՂ ՏԱՐԻՆԵՐԸ (2-րդ գլ.)
- III. ՄԵՍԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ (3-4-րդ գլ.)
- IV. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (5-7-րդ գլ.)
- V. ՄԵՍԻԱՅԻ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԾՆՈՐՀԸ ԵՎ ԿԱՏԱՐԱԾ ՉՈՐԱՎՈՐ ՀՐԱՇՔՆԵՐԸ Ու ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՐԲԵՐ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ (8:1-9:34)
- VI. ՄԵՍԻԱ-ԹԱԳԱՎՈՐԻ ԱՌԱՔՅԱԼՆԵՐՆ ՈւՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԻՍՐԱՅԵԼ (9:35-10:42)
- VII. ԱՃՈՂ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՐԺՈՒՄ (11-12-րդ գլ.)
- VIII. ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՐԺՎԱԾ ԹԱԳԱՎՈՐԸ ՀՈՉԱԿՈՒՄ Է ՆՈՐ, ՄԻՋԱՆԿՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ (13-րդ գլ.)
- IX. ՄԵՍԻԱՅԻ ԱՆԽՈՆՋ ԾՆՈՐՀԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԱՎԵԼԱՑՈՂ ԹՇՆԱՄՈՒԹՅԱՆ (14:1-16:12)
- X. ԹԱԳԱՎՈՐԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ (16:13-17:27)
- XI. ԹԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՀԱՆԳՆԵՐՆ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ (18-20-րդ գլ.)
- XII. ԹԱԳԱՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ ԵՎ ՄԵՐԺՎԵԼԸ (21-23-րդ գլ.)
- XIII. ԹԱԳԱՎՈՐԻ ԽՈՍՔԸ ՁԻԹԵՆՅԱՑ ԼԵՌԱՆ ՎՐԱ (24-25-րդ գլ.)
- XIV. ԹԱԳԱՎՈՐԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ ԵՎ ՄԱՀԸ (26-27-րդ գլ.)
- XV. ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ (28-րդ գլ.)

Մեկնաբանություն

I. ՄԵՍԻԱ-ԹԱԳԱՎՈՐԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ու ԾՆՈՒՆԴԸ (1-ին գլ.)

Ա. Հիսուս Քրիստոսի ազգաբանությունը (1:1-17)

ՆԿ-ի մակերեսային ընթերցանությունը կարող է զարմանք առաջացնել, թե ինչո՞ւ է այն սկսվում այսքան ձանձրալի թեմայից, ինչպիսին տոհմաձառն է: Ինչ-որ մեկը կարող է եզրակացնել, որ ոչ մի բան չի լինի, եթե անտեսենք անունների այս ցանկը և շրջանցելով այն՝ փոխադրվենք իրադարձությունների սկզբնակետին:

Սակայն ազգաբանությունը չափազանց

կարևոր է: Այն ամեն ինչի հիմքն է, որը քննարկվելու է հետագայում: Եթե ցույց չտրվի, թե Հիսուսը Դավթի օրինական ժառանգն է թագավորական գծով, ապա անկարելի կլինի ապացուցել, որ Նա Իսրայելի Մեսիա-Թագավորն է: Մատթեոսն սկսում է իր պատմությունը մասնավորապես այն բանից, ինչից և պետք է սկսեր՝ այն վավերագրական ապացույցներից, որ Հիսուսը ժառանգել էր Դավթի գահի օրինական իրավունքը Հովսեփից՝ Իր խորթ հորից:

Այս ազգաբանությամբ ցույց է տրվում Հիսուսի օրինական ծագումը որպես Իսրայելի Թագավոր: Ղուկասի Ավետարանում ազգաբանության մեջ ցույց է տրված Նրա

Ժառանգական ծագումը որպես Դավթի Որդի: Մատթեոսի Ավետարանում ներկայացված է ազգաբանության թագավորական գիծը՝ Դավթից իր որդի Սողոմոնի միջոցով, իսկ Ղուկասի մոտ ներկայացված է ազգաբանության արյունակցական կապը մյուս որդու՝ Նաթանի միջոցով: Այս ազգաբանությունը ներառել է Հովսեփին, որի համար Հիսուսը *որդեգրված* որդի էր: Ղուկասի Ավետարանի 3-րդ գլխի ազգաբանությունը հետևում է հավանաբար Մարիամի նախնիներին, որի համար Հիսուսը *իսկական* որդի էր:

Գրանից հազար տարի առաջ Աստված ուխտել էր Դավթին՝ խոստանալով նրան թագավորություն և անխափան թագավորական գիծ, որը վերջ չի ունենալու (Մով. 89:4, 36, 37): Այդ ուխտն այժմ իրականացել է Քրիստոսում. Նա Դավթի օրինական ժառանգորդն է Հովսեփի միջոցով և Դավթի իրական սերմը՝ Մարիամի միջոցով: Քանի որ Նա հավիտենական է, Նրա թագավորությունը լինելու է հավիտենական, և Նա թագավորելու է հավիտյան որպես Դավթի մեծ Որդի: Հիսուսն Իր Անձնավորության մեջ միավորեց երկու պարտադիր անհրաժեշտ պայման, որպեսզի հավակնություն ունենա (իրավական և ժառանգական) Իսրայելի գահին նստելու: Քանի որ Նա հիմա ողջ է, ապա այլ հավակնորդներ չեն կարող լինել:

1:1-15. «Հիսուս Քրիստոսի ազգաբանությունը, Դավթի Որդի, Աբրահամի Որդի» ձևակերպումը նման է Ծնն. 5:1-ի արտահայտությանը. «Սա է Ադամի ծննդոց գիրքը...»: Ծննդոց գիրքը ներկայացնում է մեզ առաջին Ադամին, Մատթեոսը՝ վերջին Ադամին: Առաջին Ադամը եղել է առաջին կամ ֆիզիկական արարչագործության գլուխը: Քրիստոսը՝ որպես վերջին Ադամ, համարվում է նոր կամ հոգևոր արարչագործության Գլուխը:

Ավետարանի թեման **Հիսուս Քրիստոսն է: Հիսուս** անունը Նրան ներկայացնում է որպես Եհովա Փրկչի,¹ «**Քրիստոս**» («Օծյալ») տիտղոսը՝ որպես Իսրայելի երկար սպասված Մեսիայի: «**Դավթի Որդի**» տիտ-

ղոսը գուցորդվում է ՀԿ-ի Մեսիայի և Թագավորի դերի հետ, «**Աբրահամի Որդի**» տիտղոսը ներկայացնում է մեր Տիրոջը՝ որպես Մեկի, Ով համարվում է հրեա ժողովրդի նախահորը տրված խոստումների վերջնական իրականացումը:

Ազգաբանությունը բաժանված է պատմական երեք հատվածների. Աբրահամից մինչև Հեսսեն, Դավթից մինչև Հովսեփ և Հեռոնիայից մինչև Հովսեփը: Առաջին հատվածն ուղղորդում է դեպի Դավիթը, երկրորդն ընդգրկում է թագավորական ժամանակաշրջանը, երրորդը ներառում է գերության տարված թագավորական ծագումով անձանց ցանկը (մ.թ.ա. 586թ. և դրանից հետո):

Այս ցանկում կան շատ հետաքրքիր մանրամասներ: Օրինակ՝ այստեղ հիշատակված են չորս կանայք՝ **Թամար, Ռախաբ, Հռուբ և Բերսաբե, որ Ուրիայի կինն էր:** Քանի որ կանայք հազվադեպ են հիշատակվում արևելյան ազգաբանական գրանցումների մեջ, այս կանանց ներառումն առավել զարմանալի է. նրանցից երկուսը՝ Թամարը և Ռախաբը պռոնիկ են եղել, մեկը՝ Բերսաբեն, շնություն էր արել, և երկուսը՝ Ռախաբը և Հռուբը հեթանոս են եղել: Այն, որ նրանք ընդգրկվել են Մատթեոսի Ավետարանի ներածական մասում, կարող է այն փաստի նուրբ հիշեցումը լինել, որ Քրիստոսի գալուստը մեղավորներին փրկություն է բերելու, շնորհ՝ հեթանոսներին, և որ Նրանում քանդվելու են բոլոր ռասայական և սեռական պատմեղները:

Հետաքրքիր է նաև **Հեռոնիա** անունով թագավորի հիշատակումը: Եր. 22:30-ում Աստված անիծեց այս մարդուն.

«Տերն այսպես է ասում. անգավակ գրեցեք այս մարդուն, մի մարդ, որ չի բարգավաճելու իր օրում, որովհետև նրա սերընդից ոչ մեկին չի հաջողվելու նստել Դավթի աթոռին և իշխել Հուդայի վրա»:

Եթե Հիսուսը Հովսեփի *իսկական* որդին լիներ, Նա կընկներ այդ անեծքի տակ: Բայց և այնպես իրավականորեն Նա պետք է լիներ Հովսեփի որդին, որպեսզի ժառանգեր

Դավթի գահի իրավունքը: Այդ խնդիրը լուծվեց կուսական ծնունդի հրաշքով. Հիսուսը գահի *իրավական* ժառանգորդ դարձավ Հովսեփի միջոցով: Նա Դավթի *իրական* որդին էր Մարիամի միջոցով: Հեքոնիայի անեծքը չտարածվեց Մարիամի և նրա երեխաների վրա, քանի որ նրա սերունդը Հեքոնիայից չէր:

1:16. Անգլերենով «**որից**» բառը վերաբերում է երկուսին՝ Հովսեփին և Մարիամին: Սակայն հունարեն բնագրում այս բառը գործածվում է եզակի թվով և իզական սեռի համար՝ մատնանշելով, որ Հիսուսը ծնվել է **Մարիամից**, ոչ թե **Հովսեփից**: Բայց, լրացնելով ազգաբանության այս հետաքրքիր մանրամասները՝ պետք է նշել նաև այնտեղ եղող տարբերությունները:

1:17. Մատթեոսը հատուկ ուշադրություն է դարձրել երեք խմբերին, որոնցից յուրաքանչյուրում կա **տասնչորս սերունդ**: Սակայն ՀԿ-ից գիտենք, որ այդ ցանկում բացակայում են որոշ անուններ: Օրինակ՝ Հովրամի և Ոգիայի միջև (հ. 8) թագավորել են Ոքոզիան, Հովսար և Ամասիան (տե՛ս 4 Թագ. 8-14, 2 Մն. 21-25):

Ե՛վ Մատթեոսը, և՛ Ղուկասը հիշատակում են միևնույն անունները՝ Մադայթիել և Չորաբարել (Մատթ. 1:12, 13, Ղուկ. 3:27): Սակայն տարօրինակ է, որ Հովսեփի և Մարիամի ազգաբանություններն այս երկու անձերի հետ ունեն ընդհանրություն, իսկ հետո միմյանցից կրկին հեռանում են: Ավելի դժվարանում է հասկանալը, երբ նկատում ենք, որ երկու Ավետարանները անդրադառնում են Եզր. 3:2-ին՝ Չորաբարելին դասելով որպես Մադայթիելի որդի, մինչդեռ 1 Մն. 3:19-ում նա արձանագրված է որպես Փաղայիայի որդի:

Երրորդ դժվարությունն այն է, որ Մատթեոսը մատնանշում է քսանյոթ սերունդ Դավթից մինչև Հիսուսը, մինչդեռ Ղուկասը նշում է քառասուներկուսը: Թեպետ ավետարանիչները ներկայացնում են տարբեր տոհմաձառեր, ամեն դեպքում սերունդների այսպիսի քանակական տարբերությունը տարօրինակ է թվում:

Ինչպիսի՞ դիրքորոշում պետք է ընդունի Աստվածաշունչ ուսումնասիրողն այս դրժվարությունների և թվացյալ հակասությունների նկատմամբ: Նախևառաջ մեր հիմնական նախապայմանն այն է, որ Աստվածաշունչը Աստծո ներշնչված Խոսքն է, ուստի սխալներ չեն կարող լինել այնտեղ: Երկրորդը՝ այն անիմանալի է, որովհետև արտացոլում է Աստծո անսահմանությունը: Մենք կարող ենք հասկանալ Խոսքի հիմնական ճշմարտությունները, բայց ամբողջը երբեք չենք ըմբռնի:

Ուստի բախվելով այս դժվարություններին՝ եզրակացնում ենք, որ ամբողջ խընդիրն ավելի շատ մեր գիտելիքների պակասն է, այլ ոչ թե աստվածաշնչյան վրիպումները: Դժվար հասկանալի հատվածները մեզ պետք է մղեն Աստվածաշունչը սերտելու և պատասխաններ փնտրելու. «Բանը ծածկելն Աստծո փառքն է, բայց թագավորի պատիվը բանը քննելն է» (Առ. 25:2):

Պատմաբանների մանրակրկիտ հետազոտությունները և հնէաբանների պեղումները չկարողացան ապացուցել, որ աստվածաշնչյան պնդումները սխալ են: Այն ամենը, որ մեզ թվում է դժվար և հակասական, խելամիտ բացատրություն ունի, և այդ բացատրությունը լի է հոգևոր իմաստով և օգտակարությամբ:

Բ. Հիսուս Քրիստոսը ծնվել է Մարիամից (1:18-25)

1:18. **Հիսուս Քրիստոսի ծնունդը** տարբերվում է ազգաբանության մեջ հիշատակված մյուս մարդկանց ծնունդներից: Այնտեղ գտնում ենք մի կրկնվող արտահայտություն. «Ա»-ն ծնեց «Բ»-ին: Իսկ հիմա մենք ունենք ծննդյան արձանագրություն առանց երկրավոր հոր: Այս հրաշալի բեղմնավորմանը վերաբերող փաստերը ներկայացված են պարզորեն և արժանապատվությամբ: **Մարիամը** նշանված էր **Հովսեփի** հետ, բայց հարսանիքը դեռ տեղի չէր ունեցել: Նորկտակարանյան ժամանակաշրջանում նշանադրությունը նման էր նշանախոսության, բայց ավելի մեծ պատաս-

խանատվություն էր կրում, քան այսօր, և այն կարող էր չեղարկվել միայն ամուսնալուծությամբ: Թեև նշանված զույգը մինչև հարսանեկան արարողությունը միասին չէր ապրում, բայց անհավատարմությունը նշանվածների կողմից դիտարկվում էր որպես շնություն և պատժվում էր մահով:

Նշանված լինելով՝ *կույս Մարիամը Սուրբ Հոգուց* հրաշքով հղացավ: Հրեշտակը նախապես հայտնեց Մարիամին այս խորհրդավոր իրադարձության մասին. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը քեզ վրա հովանի կլինի...» (Ղուկ. 1:35): Կասկածանքի և խայտառակության ամպեր էին սպառնում Մարիամին: Ողջ մարդկության պատմության ընթացքում չէր եղել, որ կույսը ծննդաբերի: Երբ մարդիկ տեսնում էին չամուսնացած հղի կնոջ, մեկ բացատրություն էին տալիս:

1:19. Նույնիսկ **Հովսեփը** դեռ չգիտեր Մարիամի վիճակի ճշմարիտ բացատրությունը: Նա կարող էր երկու նկատառումով զայրանալ իր հարսնացուի վրա. առաջինը՝ իր նկատմամբ նրա բացահայտ անհավատարմության համար, և երկրորդ՝ հանցակցության մեջ անպայման մեղադրվելու պատճառով, թեև այստեղ նա մեղք չուներ: Նրա սերը Մարիամի նկատմամբ և ճիշտ վարվելու փափագը մղեցին նրան չեղարկելու նշանադրությունը գաղտնի ամուսնալուծությամբ: Նա ուզում էր խուսափել հանրային ամոթից, որը սովորաբար անխուսափելի էր այսպիսի դեպքում:

1:20. Մինչ այս ազնիվ և խորագետ մարդը ծրագրում էր, թե ինչպես պաշտպանի Մարիամին, **Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան:** «**Հովսեփ, Դավթի որդի**» ողջունը անշուշտ կանխատեսված էր, որպեսզի նրան հիշեցներ թագավորական տոհմից իր սերունդը և նախապատրաստեր Իսրայելի Մեսիա-Թագավորի անսովոր գալլստին: **Մարիամի** հետ ամուսնանալու մասին նա չպետք է որևէ տարակուսանք ունենար: Նրա մաքրությանը վերաբերող կասկածներն անհիմն էին: Նրա հղիությունը **Սուրբ Հոգու** կատարած հրաշքն էր:

1:21. Այնուհետև հրեշտակը նրան հայտ-

նեց դեռ չծնված երեխայի սեռը, անունը և առաքելությունը: Մարիամը **որդի** կունենա, Նրա անունը պետք է լինի **ՀԻՍՈՒՄ**, որ նշանակում է Եհովան փրկություն է կամ Եհովա՝ Փրկիչ: Իր անվան համաձայն՝ **Նա պիտի փրկի մարդկանց իրենց մեղքերից:** Այս Մանուկը հենց Ինքը Եհովան էր, Ով երկիր եկավ՝ մարդկանց փրկելու մեղքի պատժից, մեղքի իշխանությունից և ի վերջո՝ մեղքի ներկայությունից:

1:22. Այս իրադարձությունները նկարագրելիս Մատթեոսը գիտակցում էր, որ նոր դարաշրջան է սկսվել Աստծո և մարդկային ցեղի փոխհարաբերության պատմության մեջ: Մեսիական մարգարեական խոսքերը, որ երկար ժամանակ տեսություն էին, այժմ կյանք ստացան: Եսայու խորհրդավոր մարգարեությունն այժմ իրականացավ Մարիամի Մանկան մեջ. **«Եվ այս ամենը եղավ, որպեսզի կատարվի Տիրոջ խոսքը, որ ասել էր մարգարեի միջոցով...»:** Մատթեոսը հաստատում է, որ Եսայու խոսքերն ի վերուստ ներշնչված էին Քրիստոսի ծննդից առնվազն 700 տարի առաջ:

1:23. Ես. 7:14 մարգարեության մեջ կանխատեսված էր այդ յուրահատուկ ծնունդը («Ահա կույսը կհղիանա»), սեռը («և մի որդի կծնի») և Մանկան անունը («և Նրա անունը կկոչի Էմմանուել»): Մատթեոսը բացատրում է, որ **Էմմանուել** նշանակում է **«Աստված մեզ հետ»:** Ոչ մի տեղ արձանագրված չէ, որ Քրիստոսի երկրավոր կյանքի օրոք Նրան երբևէ «Էմմանուել» կոչեին: Նրան միշտ Հիսուս են կոչել: Սակայն Հիսուս անվան էությունը (տե՛ս հ. 21) նշանակում է **Աստծո** ներկայությունը **մեզ հետ:** Հնարավոր է՝ Էմմանուելը Քրիստոսի տիտղոսն է, որ կօգտագործվի հիմնականում Նրա երկրորդ գալստյան ժամանակ:

1:24. Հրեշտակի միջամտության շնորհիվ **Հովսեփը** հրաժարվեց Մարիամից բաժանվելու մտքից: Նա ճանաչեց իրենց նշանադրությունը մինչև Հիսուսի ծնունդը, որից հետո ամուսնացավ Մարիամի հետ:

1:25. Այն ուսուցումը, որ Մարիամն իր ողջ կյանքում կույս մնաց, հեքքվում է այս համարում հիշատակված ամուսնությամբ:

Մյուս հղումները, որ վկայում են, թե Մարիամը երեխաներ ուներ Հովսեփից, գրտնում ենք Մատթ. 12:46, 13:55-56, Մարկ. 6:3, Հովհ. 7:3, 5, Գործք 1:14, 1 Կոր. 9:5 և Գաղ. 1:19-ում:

Ամուսնանալով Մարիամի հետ՝ Հովսեփն ընդունեց նաև նրա Մանկանը՝ որպես որդեգրված որդու: Այսպես Հիսուսը դարձավ Դավթի գահի իրավական ժառանգորդը: Հնագանդվելով հրեշտակային այցելուին՝ **Հովսեփը Հիսուս դրեց Մանկան անունը:**

Այսպես ծնվեց Մեսիա-Թագավորը. Հավիտենականը ժամանակի մեջ մտավ, Ամենագորը դարձավ մի քնքուշ Նորածին, Փառաց Տերը ծածկեց այդ փառքը մարդկային մարմնով, և «Նրա մեջ է բնակվում աստվածության ամբողջ լիությունը մարմնապես» (Կող. 2:9):

II. ՄԵՍԻԱ-ԹԱԳԱՎՈՐԻ ՎԱԿՆԱԿԱՆ ՏԱՐԻՆՆԵՐԸ (2-րդ գլ.)

Ա. Իմաստուն մադրիկ գալիս են Թագավորին երկրպագելու (2:1-12)

2:1-2. Հեշտ է խճճվել Քրիստոսի ծննդյանն առնչվող դեպքերի ժամանակագրության մեջ: 1-ին համարից կարող է թվալ, որ Հերովդեսը փորձում էր սպանել Հիսուսին, երբ Մարիամն ու Հովսեփը դեռ Բեթլեհեմի գոմում էին: Իրադարձությունների կապը մատնանշում է մեկից երկու տարի ժամանակահատված: Մատթ. 2:11-ում ասվում է, որ մոզերը Հիսուսին տեսան տանը: Մինչև երկու տարեկան արական սեռի երեխաներին (հ. 16) սպանելու Հերովդեսի հրամանը նույնպես ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածը թագավորական ծնունդից ի վեր անորոշ է:

Հերովդես Մեծը Եսափի սերնդից էր, հետևաբար հրեաների ավանդական թշնամին: Քաղաքական դրդապատճառներից ելնելով՝ նա հուդայականություն էր ընդունել: **Արևելքից մոզերը եկել էին՝** փնտրելու **հրեաների Թագավորին** նրա գահակալության վերջին տարիներին: Այդ մարդիկ հավանաբար քրմեր էին, որոնց ծեսերը կենտրոնանում էին բնության տարրերի վրա:

Քանի որ նրանք շատ բան գիտեին և կարողանում էին կանխագուշակել, թագավորները հաճախ նրանց ընտրում էին որպես խորհրդականների: Մենք չգիտենք, թե նրանք Արևելքում կոնկրետ որտեղ են ապրել, քանի հոգի էին և որքան տևեց նրանց ճամփորդությունը:

Արևելքում աստղը ինչ-որ ձևով նրանց հուշել էր **Թագավորի ծննդյան մասին, Ում եկել էին երկրպագելու:** Միգուցե նրանք ծանոթ էին Մեսիայի գալստյան հինկտակարանյան մարգարեություններին, կամ գուցե գիտեին Բաղասամի այն մարգարեությունը, որ Հակոբից մի աստղ է ծագելու (Թվ. 24:17), և այն համապատասխանեցնելով յոթանասուն յոթնյակների մարգարեությանը՝ կանխատեսել էին Քրիստոսի առաջին գալստյան ժամանակը (Գան. 9:24-25): Սակայն ավելի հավանական է, որ այդ գիտելիքը նրանց տրվել էր գերբնական ճանապարհով:

Աստղի երևալու մասին գիտական տարբեր բացատրություններ են տրվել: Օրինակ՝ ոմանք պնդում են, թե մոլորակային հավասարեցում էր տեղի ունեցել, բայց այդ աստղի ընթացքը վերին աստիճանի անկայուն էր. այն գնում էր մոզերի առջևից՝ առաջնորդելով նրանց Երուսաղեմից դեպի այն տունը, որտեղ Հիսուսն էր գտնվում (հ. 9): Այնուհետև այն կանգ էր առել: Իրականում դա այնքան արտասովոր է, որ կարելի է հրաշք համարել:

2:3. Երբ Հերովդես թագավորը լսեց, որ Մանուկ է ծնվել, ով պիտի դառնա հրեաների թագավոր, խռովեց: Այդպիսի Մանուկը կարող էր սպառնալիք դառնալ նրա՝ առանց այն էլ անկայուն իշխանությանը: **Ամբողջ Երուսաղեմը խռովեց իր հետ:** Քաղաքը, որ պետք է ուրախությամբ ընդուներ այդ լուրը, անհանգստացավ այն ամենից, ինչ կարող էր խախտել նրա ստատուս-քվոն կամ առաջացնել աստեղի հռոմեական իշխանությունների դժգոհությունը:

2:4-6. Հերովդեսը հավաքեց կրոնական բոլոր առաջնորդներին, որպեսզի պարզեր, թե **որտեղ է ծնվելու Քրիստոսը: Գլխավոր քահանաները** քահանայապետն ու

նրա որդիներն էին և հավանաբար նրա ընտանիքի մյուս անդամները: **Ժողովրդի դպիրները** Մովսեսի օրենքի աշխարհիկ գիտակներն էին: Նրանք պահում էին Օրենքը, սովորեցնում այն և դատավորի պարտականություններն էին կատարում սինեդրիոնում: Այս քահանաներն ու դպիրները իսկույն մեջբերեցին Միք. 5:2-ը, որտեղ նշված էր Թագավորի ծննդավայրը՝ **Հրեաստանի Բեթղեհեմը**: Միքիայի մարգարեության տեքստը այդ քաղաքը կոչում է Բեթղեհեմ Եփրայթա, քանի որ այն Պաղեստինում Բեթղեհեմ անվամբ միակ քաղաքը չէր. այդ անվանումը մատնանշում է, որ տվյալ քաղաքը գտնվում էր Եփրայթայի շրջանում Հուդայի ցեղի սահմաններում:

2:7-8. Հերովդես թագավորը գաղտնի կանչեց մոզերին, որպեսզի ստույգ տեղեկանա **աստղի հայտնվելու ժամանակի** մասին: Գաղտնի կանչելը մատնում է նրա դաժան մտադրությունը. այս տեղեկությունը նրան պետք էր այն դեպքում, եթե փնտրվող Մանկան տեղը չհաջողվեր գրտնել: Իր իրական մտադրությունները քողարկելով՝ նա ուղարկեց մոզերին՝ առաջարկելով գտնել Նրան և իրեն լուր տալ այդ մասին:

2:9. Երբ մոզերը ճանապարհ ընկան, աստղը, **որ տեսել էին արևելքում**, կրկին հայտնվեց: Սա խոսում է այն մասին, որ արևելքից շարժվելուց աստղը չէր ուղեկցում նրանց ամբողջ ճանապարհին: Բայց այժմ այն առաջնորդում էր նրանց այն տունը, **որտեղ Մանուկն էր գտնվում**:

2:10. Հատուկ հիշատակվում է մոզերի **խիստ մեծ ուրախության** մասին, **երբ տեսան** աստղը: Այս հեթանոսները ջանասիրաբար փնտրում էին Քրիստոսին, Հերովդեսը ծրագրում էր սպանել Նրան, քահանաներն ու դպիրներն անտարբեր էին, ժողովուրդը և Երուսաղեմը՝ խռոված: Այս վերաբերմունքը նախանշան էր այն բանի, թե ինչպես էր ընդունվելու Մեսիան:

2:11. Տունը մտնելով մոզերը **տեսան Մանկանն իր մոր՝ Մարիամի հետ**: Նրանք **ընկան ու երկրպագեցին Նրան**՝ թանկագին ընծաներ՝ **ոսկի, կնդրուկ և զմուռս**

մատուցելով: Նկատե՛ք, որ տեսան Հիսուսին Իր մոր հետ: Սովորաբար սկզբում հիշատակվում է մայրը, իսկ հետո նրա երեխան, բայց այս Մանուկն առանձնահատուկ էր, և Նրան է տրված առաջին տեղը (տե՛ս նաև 13, 14, 20, 21 համարները): Իմաստունները երկրպագեցին Հիսուսին, **ոչ թե** Մարիամին կամ Հովսեփին: Այս հատվածում Հովսեփի մասին չի հիշատակվում, շուտով նրա անունն ընդհանրապես կվերանա ավետարանական արձանագրություններից: Հիսուսն է մեր գովասանքին և երկրպագությանն արժանի, ոչ թե Մարիամը կամ Հովսեփը:

Մոզերի բերած ընծաները խոսում են բազում բաների մասին.

Ոսկին աստվածության և փառքի խորհրդանիշն է: Այն խոսում է Նրա աստվածային Անձնավորության փայլող կատարելության մասին: **Կնդրուկը** անուշաբույր յուղ է կամ օծանելիք. այն մատնանշում է մաքուր կյանքի կատարելության բույրը: **Զմուռսը** դառը խոտ է. այն կանխագուշակում է տառապանքները, որոնք Նա պիտի կրեր՝ վերցնելով աշխարհի մեղքը:

Հեթանոսների նվերների ընծայումը հիշեցնում է Ես. 60:6-ի խոսքերը: Եսային կանխագուշակել էր, որ հեթանոսները Մեսիայի մոտ կգան ընծաներով, բայց հիշատակել էր միայն ոսկին և կնդրուկը. «... Նրանք... ոսկի և կնդրուկ են բերելու, և Տիրոջ փառաբանություններն են ավետելու»: Ինչո՞ւ է զմուռսը բաց թողնված: Քանի որ Եսային խոսում էր Տիրոջ երկրորդ գալստյան մասին՝ փառքով ու գործությամբ: Այն ժամանակ զմուռս չի լինի, որովհետև Նա այլևս չի տառապելու: Բայց Մատթեոսը հիշատակել է զմուռսը՝ նկատի ունենալով Նրա առաջին գալուստը: Մատթեոսի մոտ տեսնում ենք Քրիստոսի տառապանքները, իսկ Եսայու գրքի այս հատվածում՝ գալիք փառքը:

2:12. Իմաստունները **երագի մեջ գզուշացվեցին, որ չվերադառնան Հերովդեսի մոտ**: Ավածին հնազանդվելով՝ նրանք ուրիշ ճանապարհով վերադարձան իրենց տները: Նա, ով անկեղծ սրտով հանդիպել

է Քրիստոսին, երբեք չի վերադառնա միևնույն ճանապարհով. ճշմարիտ հանդիպումը Նրա հետ փոխում է մեր ամբողջ կյանքը:

Բ. Հովսեփը, Մարիամը և Հիսուսը փախչում են Եգիպտոս (2:13-15)

2:13-14. Դեռ վաղ մանկությունից մահը սպառնում էր մեր Տիրոջը: Հստակ էր, որ Նա մեռնելու էր եկել, բայց որոշված ժամանակին: Աստծո կամքով ամեն մի մարդ անմահ է, մինչև ավարտին հասցնի իր գործը: **Տիրոջ հրեշտակը երազի մեջ** պատվիրեց **Հովսեփին** ամբողջ ընտանիքով **փախչել Եգիպտոս**: Հերովդեսը պատրաստ էր գործի անցնելու՝ «գտնել ու ոչնչացնել», ուստի ընտանիքը Հերովդեսի բարկության պատճառով փախստական դարձավ: Մենք չգիտենք, թե որքան ժամանակ նրանք Եգիպտոսում ապրեցին, բայց Հերովդեսի մահից հետո տունդարձի ճանապարհն ազատ էր նրանց առջև:

2:15. Հինկտակարանյան մարգարեությունը այսպիսով նոր իմաստ ստացավ: Աստված ասել էր Ովսե մարգարեի միջոցով. «... **Եգիպտոսից կանչեցի Իմ որդուն**» (Ովս. 11:1): Ի սկզբանե այս խոսքը վերաբերում էր Եգիպտոսի գերությունից Իսրայելի ազատագրմանը Ելիցի ժամանակ: Բայց այս արտահայտությունը կարող է ունենալ երկակի իմաստ. Մեսիայի պատմությունը միշտ համանման է լինելու Իսրայելի պատմությանը: Այս մարգարեությունը կատարվեց Քրիստոսի կյանքում, երբ Եգիպտոսից վերադարձավ Իսրայել:

Երբ Տերը վերադառնա երկիր, որպեսզի արդարությամբ թագավորի, Եգիպտոսը լինելու է Հազարամյա Թագավորության մեջ օրհնության բաժին ունեցող պետություններից մեկը (Ես. 19:21-25, Մով. 3:9-10, Մղմ. 68:31): Ինչո՞ւ այդ ազգը՝ Իսրայելի ավանդական թշնամին, այդպիսի բարեհաճության պետք է արժանանա: Գուցե դա Աստծո գնահատականն է Տեր Հիսուսին ապաստան տալու համար:

Գ. Հերովդեսը կոտորում է Բեթղեհեմի մանուկներին (2:16-18)

2:16. Երբ իմաստունները չվերադարձան, **Հերովդեսը** հասկացավ, որ մանուկ Թագավորի գտնվելու վայրը հայտնաբերելու իր մտադրության մեջ **խաբված է**: Մաստիկ գայրացած՝ նա հրամայեց **կոտորել Բեթղեհեմում և նրա շրջակայքում գտնվող մինչև երկու տարեկան բոլոր արու երեխաներին**: Սպանվածների թվաքանակի մասին տվյալները տարբեր են: Մի գրող ենթադրում է, որ քսանվեց հոգի էին: Քիչ հավանական է, որ սպանվել են հարյուրավոր երեխաներ:

2:17-18. **Լացը**, որ հետևեց երեխաների սպանությանը, **Երեմիա մարգարեի** խոսքերի իրականացումն էր.

«Այսպես է ասում Տերը. Ռամայում մի ձայն լսվեց, դառնագին ողբ ու լաց. Ռաբբին իր մանուկների համար է լալիս, իր մանուկների պատճառով չի ուզում մխիթարվել, քանի որ չկան» (Եր. 31:15):

Այս մարգարեության մեջ **Ռաբբը** ներկայացնում է Իսրայել ժողովրդին: Ժողովրդի վիշտը վերագրվում է Ռաբբելին, ով թողվել էր **Ռամայում**՝ Բեթղեհեմի շրջակայքում, որտեղ տեղի ունեցավ մանուկների կոտորածը: Երբ երեխաներից գրկված մայրերն անցնում էին նրա գերեզմանի մոտով, նրանց թվում էր, որ նա **լալիս** է իրենց հետ: Փոքրիկ մրցակցից ձերբազատվելու փորձում Հերովդեսը ոչնչի չհասավ՝ բացի հիշատակի գրքում ամոթալի խայտառակությունից:

Դ. Հովսեփը, Մարիամը և Հիսուսը քնակվում են Նազարեթում (2:19-23)

Հերովդեսի մահից հետո **Տիրոջ հրեշտակը** վստահեցրեց **Հովսեփին**, որ այժմ առանց երկյուղի կարող են վերադառնալ: Մակայն գալով **Իսրայելի երկիր**՝ նա լսեց, որ Հերովդեսի որդի **Արքեղայոսն** է թագավորում **Հրեաստանում** իր հոր փոխարեն: Վերադառնալով այնտեղ՝ Հովսեփը ռիսկի չդիմեց, և քանի որ **երազի մեջ** նրա վախերը հաստատվել էին **Աստծո հայտնությամբ**, նա գնաց դեպի հյուսիս՝ **Գալի-**

վայի կողմերը, և բնակվեց Նազարեթում:

Այս գլխում արդեն չորրորդ անգամն է Մատթեոսը հիշեցնում մեզ մարգարեության իրականացման մասին: Նա չի նշում **մարգարեներից** որևէ մեկի անունը, բայց ասում է, որ ըստ մարգարեությունների՝ Մեսիան **Նազովրեցի պիտի կոչվի:** ՀԿ-ի որևէ համար բացահայտորեն չի ասում այդ մասին: Շատ աստվածաշնչագետներ ենթադրում են, որ Մատթեոսն անդրադառնում է Ես. 11:1-ին. «Եվ Հեսեկի բնից մի գավազան պիտի դուրս գա, մի Ճյուղ պիտի ընձյուղվի նրա արմատներից...»: Երբայերեն բառը, որը թարգմանվում է գավազան, «*netzer*» բառն է, սակայն կապը բավարար նկատելի չէ: Ավելի հավանական է այս բացատրությունը. «նազովրեցի» բառը օգտագործում էին, որպեսզի ներկայացնեն ընդհանուրի կողմից արհամարհված Նազարեթ քաղաքում ապրող մարդուն: Այս վերաբերմունքը Նաթանայելն արտահայտում է հարցով, որն ասացվածք է դարձել. «Մի՞թե հնարավոր է, որ Նազարեթից մի լավ բան դուրս գա» (Հովի. 1:46): Այն արհամարհանքը, որով վերաբերվում էին այդ աննշան քաղաքին, տարածվում էր նաև նրա բնակիչների վրա: Ուստի երբ 23-րդ համարում ասվում է, թե **Նա Նազովրեցի պիտի կոչվի**, նշանակում է, որ Նրան նույնպես արհամարհանքով պիտի վերաբերվեն: Թեև մենք չենք գտնում գեթ մեկ մարգարեություն, որ Հիսուսը Նազովրեցի կկոչվի, սակայն գտնում ենք մի խոսք, որը մեզ ասում է, որ «մարդկանցից Նա անարգված ու մերժված» կլինի (Ես. 53:3): Մյուս մարգարեությունը հիշատակում է, որ Նա «որդ» է, ոչ թե մարդ՝ մարդկանց կողմից արհամարհված ու ժողովրդի կողմից անարգված (Մդմ. 22:6): Այսպիսով, թեև մարգարեները ճշգրիտ բառերը չօգտագործեցին, այդուհանդերձ կասկած չկա, որ այդպիսին էր զանազան մարգարեությունների հոգին:

Չարմանալի է, որ երբ ամենակարող Աստված եկավ երկիր, Նրան տրվեց այդ արհամարհական մականունը: Նրան հետևողներն առանձնաշնորհում ունեն Նրա կրած

արհամարհանքը կիսելու (Եբր. 13:13):

III. ՄԵՍԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՏՈՒԻ ՀԱՆԳԻՍԱՎՈՐ ՍՏԱՆՁՆՈՒՄԸ (3-4-րդ գլ.)

Ա. Հովհաննես Մկրտիչը պատրաստում է ճանապարհը (3:1-12)

2-3-րդ գլուխների միջև ընդմիջումը 27 կամ 29 տարի է, որոնց մասին Մատթեոսը չի հիշատակում: Այս ժամանակահատվածում Հիսուսը Նազարեթում էր ապրում՝ առաջիկա ծառայությանը պատրաստվելով: Այս տարիներին Նա հրաշքներ չարեց և Աստծո կատարյալ հաճությունը վայելեց (Մատթ. 3:17): Այս գլխում մոտենում ենք Նրա հրապարակային ծառայության շեմին:


3:1-2. Հովհաննես Մկրտիչը վեց ամսով մեծ էր իր զարմիկ Հիսուսից (տե՛ս Դուկ. 1:26, 36): Նա պատմության մեջ ասպարեզ եկավ որպես Իսրայելի Թագավորի նախակարապետ: Նրա քարոզչության արտասովոր վայրը **Հուդայի անապատն** էր՝ մի անպտուղ տարածք, որ տարածվում էր Երուսաղեմից մինչև Հորդանան: Հովհաննեսը քարոզում էր. «**Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնային թագավորությունը մոտեցել է:**» Շուտով կհայտնվի Թագավորը, բայց Նա չի կարող և չի թագավորելու այն մարդկանց վրա, որոնք չեն հրաժարվում իրենց մեղքերից: Նրանք պետք է փոխեն իրենց ընթացքը, խոստովանեն իրենց մեղքերը և հրաժարվեն դրանցից: Աստված նրանց խավարի թագավորությունից դեպի **Երկնային Թագավորություն էր կանչում:**

ԵՐԿՆՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԸ

Առաջին անգամ «**Երկնքի Թագավորություն**» արտահայտությանը հանդիպում ենք 2-րդ համարում, որն այս Ավետարանում հիշատակվում է երեսուներկու անգամ: Բանի որ առանց այս արտահայտությունը հասկանալու անկարելի է Մատթեոսի Ավետարանը հասկանալ, նախ փորձենք դրա սահմանումը տալ:

Երկնքի Թագավորությունը մի միջավայր է, որտեղ ընդունված է Աստծո կառավարումը: «Երկինք» բառն օգտագործվում է, որպեսզի Աստծուն մատնանշի: Սա երևում է Դան. 4:25-ից, որտեղ Դանիելն ասում է, որ «Բարձրյալ»-ն է տիրում մարդկանց թագավորության վրա: Հաջորդ համարում նա ասում է, որ «երկինքը» իշխանություն ունի: Որտեղ մարդիկ ենթարկվում են Աստծո տիրակալությանը, այնտեղ Երկնային Թագավորություն է:

Այս Թագավորությունն ունի երկու հայեցակարգ: Լայն իմաստով՝ այն ներառում է բոլոր նրանց, ովքեր **դավանում են** Աստծուն՝ որպես Բարձրյալ Տիրակալի, իսկ նեղ իմաստով՝ այն կազմված է նրանցից, ովքեր անկեղծորեն **դարձի են եկել**: Մենք կարող ենք սա ցուցադրել երկու համակենտրոն շրջանների օգնությամբ:



Մեծ շրջանը դավանության տիրույթն է. այն ներառում է բոլոր նրանց, ովքեր համարվում են Թագավորի անկեղծ հպատակները, նաև նրանց, ովքեր պարզապես ընդունում են, որ արտաքնապես հավատարիմ են Նրան: Սա երևում է սերմնացանի (Մատթ. 13:3-9), մանանեխի (Մատթ. 13:31-32) և թթխմորի (Մատթ. 13:33) առակներից: Փոքր շրջանը ներառում է միայն նրանց, ովքեր, հավատալով Տեր Հիսուս Քրիստոսին, վերստին ծնվել են: Երկնքի Թագավորություն՝ ներքին հայեցակարգ, կարող են մտնել միայն նրանք, ովքեր վերստին ծնունդ ունեն (Մատթ. 18:3):

Երկնքի Թագավորության մասին Աստվածաշնչում առկա բոլոր հղումները հավաքելով՝ մենք կարող ենք հետևել դրա պատմական զարգացմանը հինգ հստակ փուլերով:

Առաջին՝ այդ Թագավորությունը *մարգարեսցված էր* ՀԿ-ում: Դանիելը կանխատեսել էր, որ Աստված մի Թագավորություն է բարձրացնելու, որ հավիտյանս չի ավերվի և ուրիշ ժողովրդի չի տրվի (Դան. 2:44): Նա նաև կանխատեսել էր Քրիստոսի գալուստը աշխարհի վրա հավիտենական թագավորություն հաստատելու համար (Դան. 7:13-14, տե՛ս նաև Եր. 23:5-6):

Երկրորդ՝ այդ Թագավորությունը նկարագրվում է Հովհաննես Մկրտչի, Հիսուսի և տասներկու աշակերտների կողմից որպես «*մոտ*» կամ «*առկա*» թագավորություն (Մատթ. 3:2, 4:17, 10:7): Մատթ. 12:28-ում Հիսուսն ասաց. «Եթե Ես Աստծո Հոգով եմ հանում դևերին, ուրեմն Աստծո թագավորությունը եկել է ձեր վրա»: Ղուկ. 17:21-ում Նա ասաց. «Որովհետև Աստծո թագավորությունը ձեր ներսում է», այսինքն՝ ձեր մեջ: Այդ Թագավորությունն առկա էր ի դեմս Թագավորի: Ստորև կներկայացնենք, որ «Աստծո Թագավորություն» և «Երկրնքի Թագավորություն» եզրույթները փոխկապակցված են:

Երրորդ՝ այդ Թագավորությունը նկարագրված է իր *միջանկյալ* ձևի մեջ: Մերժվելով հրեա ժողովրդի կողմից՝ Թագավորը վերադարձավ Երկինք: Եվ չնայած Թագավորը բացակայում է, այդ Թագավորությունն այսօր նույնպես առկա է բոլոր նրանց սրտերում, ովքեր ընդունում են Նրա թագավորական իշխանությունը. իսկ Թագավորության բարոյական սկզբունքները, ներառյալ Լեռան քարոզը, այսօր էլ կիրառելի են մեզ համար: Թագավորության այս միջանկյալ փուլը նկարագրված է Մատթեոսի Ավետարանի 13-րդ գլխի առակներում:

Այդ Թագավորության չորրորդ փուլը կարելի է անվանել նրա *տեսանելի ներկայությունը*: Այն Քրիստոսի Հազարամյա թագավորությունն է երկրի վրա, որն արտահայտվեց Քրիստոսի այլակերպությամբ, երբ Նրան տեսան գալիք թագավորության փառքով (Մատթ. 17:1-8): Հիսուսն այս փուլն էր ակնարկում Մատթ. 8:11-ում, երբ ասաց. «... Շատերը պիտի գան և պիտի

նստեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ երկնքի թագավորության մեջ»:

Հինգերորդ վերջնական ձևը պետք է լինի *հավիտենական* Թագավորությունը: Այն նկարագրված է 2 Պետ. 1:11-ում որպես «մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավիտենական թագավորություն»:

«Երկնքի Թագավորություն» արտահայտությունը տեսնում ենք միայն Մատթեոսի Ավետարանում, իսկ «Աստծո Թագավորություն»-ը՝ բոլոր չորս Ավետարաններում: Գործնականում դրանք ոչ մի տարբերություն չունեն. Երկուսի մասին նույնն է ասվում: Օրինակ՝ Մատթ. 19:23-ում Հիսուսն ասում է, որ հարուստը դժվարությամբ կմտնի Երկնքի թագավորություն: Թե՛ Մարկոսը (10:23) և թե՛ Ղուկասը (18:24) գրառել են, որ Հիսուսն այդ ասել է *Աստծո* Թագավորության մասին (տե՛ս նաև Մատթ. 19:24-ը, որտեղ օգտագործված է միևնույն խոսքը):

Վերը նշեցինք, որ Երկնքի Թագավորությունն ունի արտաքին և ներքին հայեցակարգեր: Այն, որ Աստծո Թագավորության մասին կարելի է նույնն ասել, մեկ անգամ ևս հաստատում է, որ այս երկու եզրույթները մատնանշում են միևնույնը: Աստծո Թագավորությունը նույնպես ներառում է թե՛ իրականը, թե՛ կեղծը: Դա տեսնում ենք սերմնացանի (Ղուկ. 8:4-10), մանանեխի (13:18-19) և թթխմորի մասին (Ղուկ. 13:20-21) առակներում: Ինչ վերաբերում է ներքին, ճշմարիտ պարունակությանը, ապա Աստծո Թագավորություն կարող են մտնել միայն վերստին ծնվածները (Հովհ. 3:3, 5):

Եվ վերջինը՝ Աստծո Թագավորությունը նույնը չէ, ինչ եկեղեցին: Այդ Թագավորությունն սկսվեց, երբ Քրիստոսն սկսեց Իր քարոզական ծառայությունը, իսկ Եկեղեցին հիմնադրվեց Պենտեկոստի օրը (Գործք 2): Այդ Թագավորությունը երկրի վրա կմնա մինչև երկրի ոչնչացումը, իսկ Եկեղեցին երկրի վրա կլինի մինչև հափըշտակվելը (վերցվելը, կամ տարաբնակեցումը, երբ Քրիստոսը կիջնի Երկնքից և երկրից Իր հետ կտանի բոլոր հավատացյալ-

ներին՝ 1 Թեա. 4:13-18): Եկեղեցին Քրիստոսի հետ կվերադառնա Նրա երկրորդ գալլատյան ժամանակ, որպեսզի Նրա հետ թագավորի որպես Նրա հարս: Ներկայումս այն մարդիկ, ովքեր ճշմարտապես պատկանում են այդ Թագավորությանը, իրականում նաև Եկեղեցու մեջ են:

3:3. Վերադառնալով Մատթեոսի Ավետարանի 3-րդ գլխի մեկնությանը, նկատե՛ք, որ Հովհաննեսի նախապատրաստական ծառայությունը մարգարեացված էր **Եսայի** մարգարեի միջոցով ավելի քան 700 տարի առաջ.

«Անապատում կանչողի ձայնը. պատրաստեցե՛ք Տիրոջ ճանապարհը, և լայնուղին հարթեցե՛ք մեր Աստծո համար» (40:3):

Հովհաննեսը **ձայնն** էր: Իսրայել ժողովուրդը հոգևոր իմաստով **անապատն էր՝** չոր և անպտուղ: Հովհաննեսը կոչ արեց մարդկանց **պատրաստել ՏԻՐՈՋ ճանապարհը՝** ապաշխարելով, թողնելով մեղքերը, և **լայնուղին հարթել Նրա համար**, այսինքն՝ կյանքից հեռացնել այն ամենը, ինչը կարող է խանգարել Նրա բացարձակ տիրակալությանը:

3:4. Մկրտչի հագուստը **ուղտի մազից** էր, ոչ թե ուղտի մազից փափուկ ու ժամանակակից շքեղ հագուստ, այլ կոպիտ, նախատեսված այն մարդու համար, ով մշտապես ապրում է դրսում: Նա կրում էր նաև **կաշվե գոտի**: Նրա հանդերձանքը նման էր Եդիայի հանդերձանքին (4 Թագ. 1:8). հնարավոր է՝ դա նպաստում էր, որ հավատացյալ հրեաները ուշադրություն դարձնեին, որ Հովհաննեսի առաքելությունը նման էր Եդիայի առաքելությանը (Մադ. 4:5, Ղուկ. 1:17, Մատթ. 11:14, 17:10-12): Հովհաննեսն ուտում էր **մարախ և վայրի մեղր՝** իր առաքելությամբ կլանված մարդու չափաքաժին, որ անտեսում է կյանքի սովորական հարմարություններն ու հաճույքները:

Հովհաննեսին հանդիպելը մարդկանց մեջ պետք է որ մեղքի ուժեղ զգացում առաջացներ, քանի որ նրա համար խորթ էր այն ամենը, ինչի համար սովորաբար մարդիկ

ապրում են: Նրա նվիրումը հոգևոր բաներին ստիպում էր մյուսներին գիտակցել իրենց աղքատությունը: Նրա անձնուրացությունը խիստ հանդիմանություն էր իր հայրենակիցների համար, որ այդքան կապված էին աշխարհիկին:

3:5-6. Երուսաղեմից, ամբողջ Հրեաստանից և Հորդանանի բոլոր կողմերից մարդիկ գալիս էին, որպեսզի լսեն Հովհաննեսին: Ոմանք արձագանքում էին նրա կոչին ու **մկրտվում էին նրանից Հորդանանի մեջ**՝ հաստատելով, որ պատրաստ են հավատարմորեն և հնազանդությամբ ծառայելու եկող Թագավորին:

3:7. Այլ էր **փարիսեցիների և սադուկեցիների** մոտեցումը: Տեսնելով, թե ինչպես են նրանք գալիս իրեն լսելու, Հովհաննեսը գիտեր, որ նրանք անկեղծ չէին: Նա տեսնում էր նրանց իրական էությունը. **փարիսեցիներն** ասում էին, որ նախանձավորությամբ են կատարում Օրենքը, բայց իրականում ապականված էին, կեղծավոր և ինքնագոհ: **Սադուկեցիները** սոցիալական կարգավիճակով ազնվականներ էին. նրանք եղել են կրոնական կասկածամիտներ՝ մերժելով այնպիսի հիմնական վարդապետություններ, ինչպիսիք են մարմնի հարությունը, հրեշտակների գոյությունը, հոգու անմահությունը և հավիտենական պատիժը: Ուստի Հովհաննեսը երկու աղանդներն էլ դատապարտեց՝ նրանց անվանելով **իծերի ծնունդներ**: Նրանք ձևացնում էին, թե ուզում են փախչել **գալիք բարկությունից**, բայց ճշմարիտ ապաշխարության որևէ նշան չէին ցուցաբերում:

3:8. Նա կոչ արեց նրանց ապացուցել իրենց անկեղծությունը՝ բերելով **ապաշխարության արժանի պտուղներ**: Ճշմարիտ ապաշխարությունը, ինչպես գրում էր Ջ. Ռ. Միլերը, «ոչինչ կարժենա, եթե դա մի քանի արցունք է բերում, մի քիչ գոջում ու մի քիչ վախ: Մենք պետք է թողնենք այն մեղքերը, որոնց համար ապաշխարում ենք և քայլենք սրբության նոր ու մաքուր ճանապարհով»:

3:9. Հրեաները պետք է դադարեցնեն չարաշահել իրենց սերումը Աբրահամից՝ որ-

պես Երկինք գնալու անցաթուղթ: Փրկության շնորհը չի փոխանցվում բնական ծնունդով: Աստված կարող է շատ ավելի հեշտությամբ **Հորդանանի քարերը Աբրահամի որդիների վերածել**, քան փարիսեցիներին ու սադուկեցիներին դարձի բերել:

3:10. Նշելով, **որ կացինը դրված է ծառերի արմատին**, Հովհաննեսը նկատի ուներ, որ Աստծո դատաստանը մոտ է: Քրիստոսի գալուստը և Նրա ներկայությունը փորձելու է բոլոր մարդկանց: Ով անպտուղ գրտնրվի, պիտի կործանվի, ինչպես անպտուղ ծառը, որը **կտրում են և կրակի մեջ են նետում**:

3:11-12. Հովհաննեսը 7-10-րդ համարներում դիմում էր փարիսեցիներին և սադուկեցիներին (տե՛ս հ. 7), իսկ այժմ նա, ըստ երևույթին, դիմում է բոլոր ներկաներին, որոնց մեջ կային թե՛ ճշմարտախոսներ և թե՛ խաբեբաներ: Նա բացատրում էր, որ իր և Մեսիայի ծառայության միջև (Ով շուտով հայտնվելու էր) էական տարբերություն կա: Հովհաննեսը մկրտում էր **ջրով՝ ապաշխարության համար**. **Ջուրը** արարողության համար էր և մաքրող գործություն չուներ. **ապաշխարությունը**, թեև իրական, մարդուն լիարժեք փրկություն չէր տալիս: Հովհաննեսն իր առաքելությունը դիտարկում էր որպես նախապատրաստական և մասնակի: Մեսիան լիովին սովորում կթողնի Հովհաննեսին: Նա **ավելի գորավոր է, ավելի արժանավոր է**, Նրա գործն ավելի հեռուն կգնա, որովհետև **Նա պիտի մկրտի Սուրբ Հոգով և կրակով**:

Սուրբ Հոգով մկրտությունը տարբերվում է **կրակով** մկրտությունից: Առաջինը օրհնության մկրտություն է, երկրորդը՝ դատաստանի: Առաջին մկրտությունը կատարվեց Պենտեկոստի օրը, իսկ վերջինը ապագայի գործ է: Առաջինը վայելում են Տեր Հիսուսում եղող բոլոր ճշմարիտ հավատացյալները, այն ճակատագրական կլինի բոլոր անհավատների համար: Առաջինը նախատեսվում էր այն իսրայելացիների համար, որոնց համար մկրտությունը ներքին ապաշխարության արտաքին դրսևո-

րում էր. այն վերաբերում է փարիսեցիներին, սադուկեցիներին և բոլոր նրանց, ովքեր ճշմարիտ ապաշխարության նշան չեն ցուցաբերել:

Ոմանք սովորեցնում են, թե Սուրբ Հոգով մկրտությունն ու կրակով մկրտությունը միևնույն իրադարձությունն է, այսինքն՝ կրակով մկրտությունը չի՞ կարող հարաբերակցվել կրակե լեզուների հետ, որոնք հայտնվեցին Պենտեկոստեի օրը, երբ Սուրբ Հոգին իջավ: 12-րդ համարի լույսի ներքո, որտեղ կրակը հավասարեցվում է դատաստանի հետ, հավանաբար չի կարող:

Կրակով մկրտության մասին հիշատակելուց անմիջապես հետո Հովհաննեսը խոսում է դատաստանի մասին: Տերը պատկերված է **քամհարը** ձեռքին, քամհարելով ծեծած ցորենը: **Ցորենը** (ճշմարիտ հավատացյալները) ընկնում է գետնին, ապա տարվում **շտեմարան**: Քամին տանում է **հարդը** (անհավատներին) մի փոքր հեռու, իսկ հետո այն հավաքում ու **այրում են անձարելի կրակով**: Կրակը 12-րդ համարում նշանակում է դատաստան, և քանի որ այս համարի ամուր հենարանը 11-րդ համարն է, ապա խելամիտ կյիներ եզրակացնել, որ կրակով մկրտությունը դատաստանի մկրտությունն է:

Բ. Հովհաննեսը մկրտում է Հիսուսին (3:13-17)

3:13. Հիսուսը **Գալիլիայից** դեպի ստորին **Հորդանան** մոտավորապես 96 կմ քայլեց, որպեսզի **Հովհաննեսից մկրտվի**: Սա վկայում է այն մասին, որ Հիսուսը կարևորում էր այս արարողությունը, որ ինքնին ապացույց է, թե այսօր էլ մկրտությունը կարելի է Իր հետևորդների համար:

3:14-15. Գիտակցելով, որ Հիսուսը ապաշխարելու պատճառ չունեք, **Հովհաննեսը** հրաժարվում է Նրան մկրտելուց: Բնագործ հուշեց նրան առաջարկել, որ ավելի ճիշտ կյիներ՝ ինքը մկրտվի Հիսուսից: Տեր Հիսուսը չժխտեց այդ: Նա պարզապես կրկնեց մկրտվելու Իր խնդրանքը, որովհետև **վաշել է ամբողջ արդարությունը կատարել**: Նա գիտեր, որ այդպես ճիշտ է, քանի որ

մկրտությամբ Իրեն նույնացնում էր ապաշխարությամբ մկրտվելու եկող աստվածավախ հրեաների հետ:

Բայց մի ավելի խորը իմաստ էլ կար: Հիսուսի համար մկրտությունն արարողություն էր, որը խորհրդանշում էր այն կերպը, որով Նա կատարելու էր այն բոլոր արդարացի պահանջները, որոնք Աստված ուներ մարդկային մեղքի հանդեպ: Ջրի մեջ Նրա ընկղմումը Գողգոթայի վրա Աստծո դատապարտության ավագանում մկրտվելու նախապատկերն էր: Ելքը ջրից խորհրդանշում էր Նրա հարությունը: Իր մահով, թաղումով ու հարությամբ Նա կբավարարեր Աստծո արդարացի պահանջները և կապահովեր արդարության հիմքը, որի միջոցով մեղավորները կարդարանային:

3:16-17. **Հիսուսն անմիջապես ջրից դուրս գալով տեսավ Աստծո Սուրբ Հոգին**, որը աղավառու տեսքով **իջնում էր և գալիս Իր վրա**: Ինչպես ՀԿ-ում մարդիկ և առարկաները սուրբ նպատակների համար սրբազործվում էին «սուրբ օծման յուղով» (Ել. 30:25-30), Նա Սուրբ Հոգու կողմից օծված Մեսիան էր:

Այդ սուրբ պահին հայտնվեցին Երրորդության բոլոր երեք Անձերը: Այնտեղ էր **սիրելի Որդին**, այնտեղ էր **Սուրբ Հոգին՝ աղավառու** տեսքով: **Երկնքից** լսվեց Հոր ձայնը, որ արտաբերում էր օրհնություն Հիսուսի մասին: Սա հիշարժան իրադարձություն էր, քանի որ երկնքից հնչում էր Աստծո ձայնը՝ կրկնելով սուրբգրությունը. «**Դու Իմ Որդին ես** (Մղմ. 2:7), **ուն հավանել է Իմ հոգին**» (Ես. 42:1): Սա այն երեք իրադարձություններից մեկն է, երբ Հայրը խոսեց Երկնքից՝ հանդիսավորությամբ ճանաչելով Իր միածին Որդուն (մյուս հատվածները՝ Մատթ. 17:5 և Հովհ. 12:28):

Գ. Հիսուսը փորձվում է սատանայից (4:1-11)

4:1. Կարող է տարօրինակ թվալ, որ **Հոգին** պետք է Հիսուսին **տաներ** փորձվելու: Ինչո՞ւ Սուրբ Հոգին Նրան այդպիսի առճակատման պիտի տաներ: Պատասխանը սա է. այս փորձությունն անհրաժեշտ էր, որ

ցուցադրվի Հիսուսի բարոյական պիտանիությունն այն գործն անելու, որի համար Նա աշխարհ էր եկել: Առաջին Ադամն իշխանության համար իր անհամապատասխան լինելն ապացուցեց, երբ Եդեմի պարտեզում հանդիպեց իր հակառակորդի հետ: Այստեղ վերջին Ադամը դիմակայում է սատանայի առճակատումը և մնում անխոցելի:

Հունարեն բառը, որը թարգմանվում է «գայթակղել» և «փորձել», ունի երկու նշանակություն. 1. փորձել կամ փորձարկել (Հովհ. 6:6, 2 Կոր. 13:5, Եբր. 11:17) և 2. հրահրել չարի: Մուրբ Հոգին փորձարկում, կամ ստուգում էր Քրիստոսին: Սատանան ձգտում էր գայթակղել Նրան, որ մեղք գործի:

Մեծ խորհուրդ կա մեր Տիրոջ փորձության մեջ: Անխուսափելիորեն հարց է առաջանում. մի՞թե Նա կարող էր մեղք գործել: Եթե պատասխանենք «ո՛չ», մի այլ հարցի առաջ կկանգնենք. «Արդյոք կարելի՞ է այս փորձությունն իրական համարել, եթե Նա չէր կարող տրվել դրան»: «Այո» պատասխանի դեպքում մի ուրիշ դժվարություն է առաջանում. ինչպե՞ս կարող էր մարդեղացած Աստված մեղք գործել:

Շատ կարևոր է հիշել, որ Հիսուս Քրիստոսն Աստված է, և Աստված չի կարող մեղանչել: Ճիշտ է, որ Նա նաև Մարդ էր, սակայն պնդել, որ Նա կարող էր մեղանչել որպես մարդ, բայց ոչ որպես Աստված, նշանակում է փաստերը կառուցել առանց սուրբգրային հիմքի: ՆԿ-ի հեղինակները բազմիցս շեշտել են Քրիստոսի մեղք չունենալը: Պողոսը գրում էր՝ Նա, «Ով չգիտեր մեղքը» (2 Կոր. 5:21). Պետրոսն ասում է, որ Նա «ոչ մի մեղք չգործեց» (1 Պետ. 2:22). Հովհաննեսը հաստատում է, որ «Նրա մեջ մեղք չկա» (1 Հովհ. 3:5):

Հիսուսը մեզ նման կարող էր դրսից փորձվել. սատանան մոտեցավ Նրան մի առաջարկով, որը հակասում էր Աստծո կամքին: Բայց, ի տարբերություն մեզ, Նա չէր կարող փորձվել ներսից, Նրա մեջ չէր կարող առաջանալ որևէ մեղսալի ցանկություն կամ կիրք: Ավելին, Նրա մեջ ոչինչ

չկար, որ արձագանքեր սատանայական գայթակղություններին (Հովհ. 14:30):

Թեև Հիսուսը չէր կարող մեղք գործել, փորձությունը իրական էր: Նա կարող էր հանդիպել մեղքի գայթակղությանը, բայց մեղք գործելը բարոյապես հնարավոր չէր Նրա համար: Նա կարող էր անել միայն այն, ինչ տեսել էր Հորն անելիս (Հովհ. 5:19), և անհնար է, որ Նա տեսներ Հորը երբևէ մեղանչելիս: Նա Ինքն Իրենից ոչինչ չէր կարող անել (Հովհ. 5:30), և Հայրը երբեք չէր տվել Նրան փորձությանը զիջելու իրավունք:

Փորձվելու նպատակն այն չէր, որ տեսնեինք՝ արդյոք Նա կմեղանչե՞ր, թե՞ ոչ, այլ ապացուցելն էր, որ նույնիսկ սարսափելի ճնշման տակ Նա ոչինչ չէր անի՝ բացի Աստծո Խոսքին հնազանդվելուց:

Եթե Հիսուսը՝ որպես մարդ կարողանար մեղք գործել, ապա մենք կկանգնեինք այն փաստի առջև, որ երկնքում Նա տակավին Մարդ է: Կարո՞ղ էր Նա մեղք գործել: Բնականաբար ո՛չ:

4:2-3. Քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելուց հետո Հիսուսը քաղց զգաց: Աստվածաշնչում **քառասուն** թիվը հաճախ օգտագործվում է փորձելու կամ ստուգելու համատեքստում: Այս բնական ցանկությունն ապահովում էր **փորձի** առավելությունը, որը նա հաջողությամբ էր կիրառել շատ մարդկանց նկատմամբ: Նա առաջարկեց Հիսուսին անապատի **քարերը հաց** դարձնելու Իր հրաշագործ գորությունը գործածել: «**Եթե Դու Աստծո Որդի ես**» արտահայտության մեջ որևէ կասկած չկա: Դրանք իրականում նշանակում են «քանի որ Դու Աստծո Որդին ես»: Սատանան ակնարկում է այն քառերը, որոնք Հայրն ասել էր Հիսուսին մկրտության ժամանակ. «Սա է Իմ սիրելի Որդին»: Նա գործածում է հունական կառուցվածքը,² որը ենթադրում է հայտարարության ճշմարտացիությունը և այսպիսով Հիսուսին կոչ է անում ցուցադրել Իր գորությունը, որպեսզի բավարարի քաղցը:

Ի պատասխան սատանայի առաջարկին՝ աստվածային ուժի օգնությամբ բնական

ցանկության բավարարումն ուղղակի անհնազանդություն կլիներ առ Աստված: Սատանայի ասածի մեջ թաքնված միտքը Ծնն. 3:6-ի արձագանքն է՝ «լավն էր որպես ուտելիք»: Հովհաննեսն այս փորձությունը որակում է որպես մարմնական ցանկություն (1 Հովհ. 2:16): Մենք նույնպես հանդիպում ենք նման փորձության. ապրել բնական ցանկությունները բավարարելու համար, ընտրել հարմարավետ ուղի Աստծո Թագավորությունն ու Նրա արդարությունը փնտրելու փոխարեն: Սատանան մեզ ասում է. «Չէ՞ որ դու պետք է ապրես»:

4:4. Հիսուսը փորձությանը պատասխանեց՝ մեջբերելով Աստծո Խոսքը: Մեր Տիրոջ օրինակը մեզ սովորեցնում է, որ մենք **չպետք է «ապրենք», այլ պետք է Աստծուն հնազանդվենք:** Հաց հայթայթելն ամենակարևորը չէ կյանքում: Առավել կարևոր է հնազանդվել **Աստծո ամեն մի խոսքին:** Քանի որ Հիսուսը Հորից քարը հաց դարձնելու հրահանգ չէր ստացել, թեև սաստիկ քաղցած էր, Նա ինքնակամորեն չվարվեց, որպեսզի այդ կերպով սատանային հնազանդվեր:

4:5-6. Երկրորդ փորձությունը տեղի ունեցավ Երուսաղեմում՝ **տաճարի աշտարակի վրա:** Սատանան հորդորեց Հիսուսին ցած գցվել՝ Իր՝ իսկապես Աստծո Որդի լինելն ապացուցելու համար: Կրկին կասկած արտահայտող «եթե» ներածական բառը, ինչպես երևում է սատանայի մեջբերումից, ակնարկում է Մդմ. 91:11, 12-ում Աստծո կողմից խոստացված պաշտպանությունը Մեսիային:

Այս փորձությունով սատանան առաջարկում էր Հիսուսին Իրեն՝ որպես Մեսիա հայտնել՝ սենսացիոն բան անելով: Նա կարող էր փառքի հասնել առանց տառապանքների, կարող էր խաչը շրջանցել և գահին նստել: Բայց այդպիսի գործողությունը հակառակ էր Աստծո կամքին: Հովհաննեսը սատանայի այս մոտեցումն անվանում է «կյանքի հպարտություն» (1 Հովհ. 2:16): Այն հիշեցնում է Եդեմի պարտեզում ասված «ծառը ցանկալի է իմաստուն դարձնելու համար» արտահայտությունը (Ծնն. 3:6),

քանի որ այս երկուսն էլ Աստծո կամքն անտեսելով անձնական փառքի հասնելու միջոցներ են: Այս փորձությունը զավիս է մեզ կրոնական աշխարհում երևելի դիրքի հասնելու ցանկության հետ՝ առանց Նրա տառապանքներին հաղորդակից լինելու: Մենք մեծ բաների ենք ձգտում, իսկ հետո փախչում ենք ու թաքնվում, երբ ճանապարհին դժվարություններ են հայտնվում: Անտեսելով Աստծո կամքը և մեզ բարձրացնելով՝ մենք Աստծուն ենք փորձում:

4:7. Դարձյալ **Հիսուսը** դիմակայում է հարձակմանը՝ մեջբերելով Աստծո Խոսքը. «Գրված է նաև, թե՛ «**Քո Տեր Աստծուն չպիտի փորձես**»» (տե՛ս 2 Օր. 6:16-ը): Աստված խոստացել էր Մեսիային պահպանել, բայց այդ երաշխիքը ենթադրում էր հնազանդություն Աստծո կամքին: Պահանջել խոստումը անհնազանդ լինելով նշանակում է Աստծուն փորձել: Կգա այն ժամանակը, երբ Հիսուսը կհայտնվի որպես Մեսիա, բայց նախևառաջ խաչը պետք է լինի: Չոհասեղանը պետք է նախորդի գահին: Փշե պսակը պետք է նախորդի փառքի պրսակին: Հիսուսը պետք է սպասեր Աստծո սահմանած ժամանակին և կատարեր Աստծո կամքը:

4:8-9. Երրորդ անգամ Հիսուսին փորձելով՝ **սատանան Նրան հանեց մի խիստ բարձր լեռան գագաթը և Նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու նրանց փառքը:** Այդ բոլորը նա առաջարկեց Հիսուսին իրեն **երկրպագելու** դիմաց: Թեև այս փորձությունը կապված էր **երկրպագության** հետ, որը հոգևոր դրսևորում էր, սատանան այստեղ փորձում էր ստիպել մեր Տիրոջը գրավել համաշխարհային փառահեղ տիրապետություն՝ իրեն երկրպագելով: Առաջարկվող պարզևատրումը՝ **բոլոր թագավորություններն ու նրանց փառքը**, վերաբերում է աչքերի ցանկությանը (1 Հովհ. 2:16):

Որոշ իմաստով՝ աշխարհի թագավորությունները ներկայումս **պատկանում են** սատանային: Նա կոչվում է «այս դարի աստված» (2 Կոր. 4:4), իսկ Հովհաննեսն ասում է մեզ, որ «ամբողջ աշխարհը Չարի մեջ է»

(1 Հովհ. 5:19): Երբ Հիսուսը երկրորդ անգամ հայտնվի որպես թագավորների Թագավոր (Հայտ. 19:16), այն ժամանակ «այս աշխարհի թագավորությունները» կդառնան մեր Տիրոջ սեփականությունը (Հայտ. 11:15): Հիսուսը չէր խախտելու աստվածային ժամանակացույցը և, անկասկած, երբեք չէր երկրպագի սատանային:

Մեզ համար այս փորձությունն ունի երկակի իմաստ. փոխանակել մեր հոգևոր անդրանիկությունն այս աշխարհի անցողիկ փառքի հետ և երկրպագել ու ծառայել արարածին Արարչի փոխարեն:

4:10. Երրորդ անգամ Հիսուսը փորձությանը դիմակայեց՝ օգտագործելով ՀԿ-ը. «**Քո Տեր Աստծուն միայն պիտի պաշտես և միայն Նրան ծառայես**»: Երկրպագությունն ու ծառայությունը միայն Աստծուն են ուղղված: Սատանային երկրպագել նշանակում է նրան ընդունել որպես աստված:

Փորձությունների հաջորդականությունը, որ արձանագրված է Մատթեոսի կողմից, տարբերվում է Ղուկասի արձանագրությունից (Ղուկ. 4:1-13): Ունանք ասում են, թե Մատթեոսի շարադրանքի հաջորդականությունը գուցահեռվում է Իսրայելի՝ առաջատում հանդիպած փորձություններին (Ել. 16:17, 32): Արձագանքելով դժվարություններին՝ Հիսուսն Իրեն կատարյալ դրսևևորեց՝ ի տարբերություն Իսրայելի:

4:11. Երբ Հիսուսը հաջողությամբ ետ մղեց փորձությունը, **սատանան Նրանից հեռացավ**: Փորձությունները գալիս են ալիքների նման, ոչ թե մշտական հոսքի պես: «Եթե թշնամին հեղեղի պես գա, Տիրոջ Հոգին դրոշ պիտի բարձրացնի նրա դեմ» (Ես. 59:19): Ինչ քաջալերություն Աստծո՞ւ փորձվող սրբերի համար:

Մեզ ասվում է, որ **հրեշտակները եկան և ծառայում էին Նրան**, բայց այս գերբնական օգնության բացատրությունը չի տրվում: Գուցե, նրանք ֆիզիկական կերակուր բերեցին Հիսուսին, որից Նա հրաժարվել էր, երբ սատանան էր այն առաջարկել:

Հիսուսի փորձությունից սովորում ենք, որ սատանան կարող է հարձակվել նրանց վրա, ում Մուրբ Հոգին է կառավարում, բայց նա անգոր է նրանց դեմ, ովքեր հակառակվում են նրան Աստծո հոսքով:

Դ. Հիսուսը սկսում է Իր ծառայությունը Գալիլիայում (4:12-17)

Մատթեոսը չի նկարագրում Հիսուսի ծառայությունը Հուդայում, որը տևեց գրեթե մեկ տարի: Այդ մեկամյա ժամանակահատվածը ծածկված է Հովհաննեսի Ավետարանի 1-4-րդ գլուխներում և համապատասխանում է Մատթ. 4:11 և 4:12 ժամանակահատվածին: Մատթեոսը փորձությունից մեզ ուղիղ տանում է դեպի ծառայությունը Գալիլիայում:

4:12. Արդ, երբ Հիսուսը լսեց, թե Հովհաննեսը բանտարկվել է, հասկացավ, որ դա նաև Իր մերժման ազդանշանն է: Մերժելով Թագավորի նախակարապետին՝ մարդիկ փաստորեն մերժում էին նաև Թագավորին: Բայց Հիսուսին վախը չտարավ հյուսիս՝ **Գալիլիա**: Իրականում Նա գնաց Հերովդեսի՝ Հովհաննեսին բանտարկող թագավորի թագավորության ուղիղ կենտրոնը: Անցնելով հեթանոսների Գալիլիայով՝ Նա ցույց տվեց, որ հրեաների կողմից Իրեն մերժելը դուռ է բացում հեթանոսներին ավետարանելու համար:

4:13. Հիսուսը **Նազարեթում** մնաց այնքան ժամանակ, մինչև այդ քաղաքի բնակիչները փորձեցին Նրան սպանել, քանի որ Նա հայտարարեց հեթանոսների փրկության մասին (Ղուկ. 4:16-30): Այնուհետև Նա եկավ **Կափառնայում**՝ Գալիլիա ծովի մոտ, մի տարածք, որը ի սկզբանե բնակեցված էր **Չարուղոնի և Նեփթաղիմի** սերունդներով: Այդ ժամանակից Կափառնայումը դարձավ Նրա ծառայության կենտրոնը:

4:14-16. Հիսուսի՝ Գալիլիա գնալը Եսայու մարգարեության իրականացումն էր (Ես. 9:1-2): **Գալիլիայում** ապրող սնահավատ, անտեղյակ **հեթանոսները մեծ լույս տեսան**, այսինքն՝ Քրիստոսին՝ աշխարհի Լուսին:

4:17. Այդ ժամանակից Հիսուսը սկսեց քարոզել նույնը, ինչ քարոզում էր Հովհաննեսը. «Ապաշխարեցե՛ք, որովհետև երկրնքի թագավորությունը մոտեցել է»: Մա քարոյական նորոգության լրացուցիչ կոչ էր՝ մարդկանց նախապատրաստելու Իր թագավորության համար: Թագավորությունը մոտեցել է այն իմաստով, որ Թագավորը արդեն եկել էր:

Ե. Հիսուսը կանչում է չորս ձկնորսներին (4:18-22)

4:18-19. Փաստորեն Պետրոսին և Անդրեասին Հիսուսը երկրորդ անգամ կանչեց: Հովհ. 1:35-42-ում նրանք կանչվել էին փրկության համար, իսկ այստեղ՝ ծառայության համար: Առաջին կանչը տեղի ունեցավ Հրեաստանում, երկրորդը՝ Գալիլիայում: Պետրոսը և Անդրեասը **ձկնորսներ էին**, բայց Հիսուսը նրանց կանչեց՝ **մարդկանց որսորդներ** դարձնելու: Նրանց պարտականությունը Քրիստոսին **հետևվելն** էր: Նրա պարտականությունը՝ նրանց մարդկանց հաջողակ ձկնորս **դարձնելն** էր: Քրիստոսին հետևելն ընդգրկում է ավելին, քան ֆիզիկապես մոտիկ լինելը: Այն Քրիստոսի բնութագիրը նմանակել է: Նրանց ծառայությունը բնութագրի ծառայություն պետք է լիներ: Նրանց ինչպիսի լինելը ավելի կարևոր էր, քան ասելիքները կամ անելիքները: Ինչպես Պետրոսը և Անդրեասը, մենք նույնպես պետք է խուսափենք ճշմարիտ հոգևորությունը ճարտասանությամբ, մեր անհատականությամբ կամ խելացի քննարկումներով փոխարինելու փորձությունից: Քրիստոսին հետևելով՝ աշակերտը սովորում է գնալ այնտեղ, որտեղ ձկներն են լողում, հարմար խայծ օգտագործել, դժվարություններն ու անհարմարությունը կրել, համբերատար լինել և մնալ աննկատ:

4:20. Պետրոսն ու Անդրեասը լսեցին կոչը և **անմիջապես** արձագանքեցին: Ճշմարիտ հավատով նրանք **նետեցին** իրենց **ուռկանները**: Ճշմարիտ նվիրումով և հանձնվելով նրանք **հետևեցին** Հիսուսին:

4:21-22. Այնուհետև կոչը հնչեց նաև Հա-

կորոսի և Հովհաննեսի համար: Նրանք միանգամից դարձան Նրա աշակերտները: Թողնելով ոչ միայն ապրուստի միջոցները, այլև **իրենց հորը**, նրանք բոլոր երկրային կապերից վեր ընդունեցին Քրիստոսի հեղինակությունը:

Արձագանքելով Քրիստոսի կանչին՝ այս ձկնորսները դարձան առանցքային գործիչներ համաշխարհային ավետարանչության մեջ: Եթե չնետեին իրենց ուռկանները, մենք երբեք չէինք լսի նրանց մասին: Քրիստոսի իշխանության ճանաչումը փոխում է ամեն բան այս աշխարհում:

2. Հիսուսը բժշկում է մարդկանց մեծ բազմություն (4:23-25)

Տեր Հիսուսի ծառայությունը բաղկացած էր երեք մասից. Նա սովորեցնում էր Աստծո Խոսքը **ժողովարանների մեջ**, **քարոզում էր Թագավորության Ավետարանը** և բժշկում էր հիվանդներին: Նրա հրաշալի բժշկությունների նպատակներից մեկը Իր Անձի և ծառայության հաստատումն էր (Եբր. 2:3-4): 5-7-րդ գլուխները Նրա վարդապետական ծառայության օրինակն են, իսկ 8-9-րդ գլուխները նկարագրում են Նրա հրաշքները:

4:23. Առաջին անգամ Նոր Կտակարանում 23-րդ համարում հիշատակվում է «**Ավետարան**» բառը, որը նշանակում է «փրկության բարի լուր»: Մարդկային պատմության յուրաքանչյուր փուլում եղել է միայն մեկ Ավետարան, փրկության միայն մեկ ուղի:

ԱՎԵՏԱՐԱՆ

Ավետարանը սկիզբ է առել Աստծո շնորհից (Եփ. 2:8): Մա նշանակում է, որ Աստված ձրիաբար է տալիս հավիտենական կյանքը մեղավոր մարդկանց, ովքեր արժանի չեն դրան:

Ավետարանի հիմքում ընկած է Քրիստոսի խաչի վրա կատարած քաղցարար գործը (1 Կոր. 15:1-4): Մեր Քրիստոսը կատարեց աստվածային արդարության բոլոր պահանջները՝ Աստծուն հնարավորություն տալով արդարացնել հավատացյալ մեղա-

վորներին: Հին Կտակարանի հավատացյալները նույնպես փրկվում էին Քրիստոսի կատարած գործի շնորհիվ, թեև նրանց համար այն դեռևս գալիք էր: Ամենայն հավանականությամբ, նրանք շատ բան չգիտեին Մեսիայի մասին, բայց Նրա մասին Աստված գիտեր, և Նա Քրիստոսի կատարած գործի գինը դրեց նրանց հաշվին: Կարելի է ասել՝ նրանք փրկվում էին «վարկով»: Մենք նույնպես փրկվում ենք Քրիստոսի կատարած գործի շնորհիվ, բայց մեզ համար այն արդեն ավարտվել է:

Ավետարանը միայն հավատով են ընդունում (Եփ. 2:8): ՀԿ-ում մարդիկ փրկվում էին՝ հավատալով այն ամենին, ինչ Աստված էր ասում: Մեր օրերում մարդիկ փրկվում են՝ հավատալով Աստծո տված վկայությանը Իր Որդու՝ որպես փրկության միակ ուղու մասին (1 Հովհ. 5:11-12): Ավետարանի վերջնական նպատակը Երկինքն է: Մենք ունենք հավիտենական հույս Երկնքում (2 Կոր. 5:6-10) ճիշտ այնպես, ինչպես ՀԿ-ի սրբերն այն ունեին (Եբր. 11:10, 14-16):

Թեև միայն մեկ Ավետարան կա, սակայն տարբեր ժամանակաշրջաններում այն ունեցել է տարբեր առանձնահատկություններ: Օրինակ՝ Թագավորության Ավետարանի և Աստծո շնորհի Ավետարանի միջև շեշտը տարբեր է: Թագավորության Ավետարանն ասում է. «Ապաշխարեցե՛ք և ընդունե՛ք Մեսիային, այն ժամանակ դուք կմտնեք Նրա Թագավորությունը, երբ այն հաստատվի երկրի վրա»: Շնորհի Ավետարանն ասում է. «Ապաշխարեցե՛ք և ընդունե՛ք Քրիստոսին, այն ժամանակ դուք կվերցվեք Նրան դիմավորելու համար և Նրա հետ կլինեք հավիտյան»: Ըստ էության դրանք միևնույն Ավետարանն են՝ շնորհով տրված փրկության հավատի միջոցով, բայց ցույց են տալիս, որ ունեն տարբեր ուղղություններ, որոնք կախված են Աստծո մտադրությունների իրականացումից:

Երբ Հիսուս քարոզում էր Թագավորության Ավետարանը, Նա հայտարարում էր այն մասին, որ եկել է որպես հրեաների Թագավոր, և բացատրում էր Իր Թագավորությունը մտնելու պայմանները: Նրա հը-

րաշքները ցույց էին տալիս այդ Թագավորության բարերար բնույթը:³

4:24-25. Նրա **համբավը** տարածվեց **ողջ Սիրիայում**՝ Իսրայելի հյուսիսային և հյուսիս-արևելյան տարածաշրջանում: **Քուրդ հիվանդները, դիվահարները** և անդամալույծները զգացին Նրա բժշկարար հպումը: Մարդիկ Նրա մոտ էին գալիս **Գալիլիայից, Գեկապոլիսից**՝ Պաղեստինի հյուսիս-արևելյան մասում գտնվող դաշնության տասը հեթանոսական քաղաքներից, **Երուսաղեմից, Հրեաստանից և Հորդանան** գետի արևելյան տարածաշրջանից: Այսպես էր գրում Բ. Բ. Ուարֆիլդը. «Կարճ ժամանակահատվածում հիվանդությունը և մահը, գրեթե, լիովին վերացել էր... այդ տարածաշրջանից»: Չարմանալի չէ, որ ժողովուրդը խիստ զարմանում էր, երբ Գալիլիայից եկող լուրերն էր լսում:

IV. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ (5-7-րդ գլ.)

Պատահական չէ, որ Լեռան քարոզը գետնոված է ՆԿ-ի սկզբում: Նրա դիրքը մատնանշում է նրա կարևորության աստիճանը: Թագավորը նրա մեջ ամփոփել է Իր հպատակներից պահանջվող հատկություններն ու վարքագիծը:

Այս քարոզը փրկության ծրագրի նկարագրությունը չէ, և ոչ էլ չփրկվածների համար նախատեսված ուսուցում: Այն հասցեագրված է աշակերտներին (5:1-2) և պետք է լիներ սահմանադրություն կամ օրենքների ու սկզբունքների մի համակարգ, որը կդեկավարեր Թագավորի հպատակներին Նրա թագավորության ընթացքում: Այն նախատեսված էր բոլորի՝ անցյալում, ներկայում և ապագայում ապրողների համար, ովքեր ընդունում են Քրիստոսին՝ որպես Թագավորի: Երբ Քրիստոսը երկրի վրա էր, դա անվերապահորեն վերաբերում էր Նրա աշակերտներին: Այժմ, երբ մեր Տեքրը թագավորում է Երկնքում, այն վերաբերում է բոլորին, ովքեր իրենց սրտերում Նրան Թագավոր են թագադրել: Եվ վերջապես, այն կլինի Քրիստոսի հետևորդների

բարոյական օրենսգիրքը մեծ նեղության և երկրի վրա Նրա թագավորության ժամանակ:

Լեռան քարոզն ունի հրեական հատուկ համ ու հոտ, որը երևում է սենեդրիոնին (5:22), գոհասեղանին (5:23-24) և Երուսաղեմին (5:35) ուղղված հղումներից: Սակայն սխալ կյիներ ասել, որ այդ ուսուցումը հասցեագրված է բացառապես անցյալի կամ ներկայի հավատացյալ խրայելացիներին. այն բոլոր դարերում բոլոր նրանց համար է, ովքեր ընդունում են Տեր Հիսուս Քրիստոսին՝ որպես իրենց Թագավորի:

Ա. Երանությունները (5:1-12)

5:1-2. Քարոզն սկսվում է երանություններով կամ օրհնություններով: Դրանք խոսում են Քրիստոսի Թագավորության իդեալական քաղաքացիների մասին: Հատկությունները, որոնք նկարագրված են այստեղ և խրախուսվում են, հակառակ են աշխարհի արժեքներին: Ա. Ու. Թոգերը այսպես է դրանք նկարագրում. «Մարդկային ցեղի մասին բավականին ճշգրիտ սահմանում կարելի է տալ անձանոթ մեկին, եթե երանությունները շրջենք հակառակ կողմը և ասենք. «Ահա ձեր մարդկային ցեղը»»:

5:3. Առաջին երանությունը նախատեսված է **հոգով աղքատների** համար: Մա չի վերաբերում բնական իրավիճակին, այլ գիտակցված ընտրությանը և կարգապահությանը: **Հոգով աղքատները** նրանք են, ովքեր ընդունում են իրենց սեփական անգորությունը և Աստծո ամենակարողությանն են ապավինում: Նրանք գիտակցում են իրենց հոգևոր կարիքը և դրա լրացումը գտնում են Տիրոջ մեջ: **Աստծո Թագավորությունը** պատկանում է այսպիսի մարդկանց, քանի որ այնտեղ ինքնաբավությունը չի համարվում առաքինություն, իսկ ինքնամեծարումը համարվում է արատ:

5:4. Երանի նրանց, որ ողբում են. մի օր նրանք կմխիթարվեն: Այս ողբը կյանքում տեղի ունեցած պատահարների պատճառով չէ: Մա այն տառապանքն է, որը մարդը ճաշակում է Տեր Հիսուսի հետ հաղորդակցություն ունենալու պատճառով: Այն ի

հայտ է գալիս այն ժամանակ, երբ մարդն իր աշխարհիկ հուսախաբություններով և մեղքով գալիս է Հիսուսի մոտ: Այդ տառապանքը ներառում է ոչ միայն անձի սեփական մեղավորությունը, այլև աշխարհի սարսափելի վիճակը, որ մերժում է Փրկչին. Նրա ողորմությունը մերժողները դատապարտված են կորստյան: Այդ ողբացողները **պիտի մխիթարվեն** գալիք օրը, երբ «Աստված նրանց աչքերից սրբի բոլոր արցունքները» (Հայտ. 21:4): Հավատացյալները միայն այս կյանքում են ողբալու: Անհավատների համար այսօրվա վիշտը միայն հավիտենական տառապանքի կանխաճաշակումն է:

5:5. Երրորդ օրհնությունը վերաբերում է **հեզերին. նրանք երկիրը պիտի ժառանգեն**: Իրենց էությանը այս մարդիկ կարող են լինել անկայուն, անհավասարակշիռ և կուպիտ: Բայց երբ նրանք ընդունում են Քրիստոսի Հոգին, դառնում են **հեզ** ու խոնարհ (հմմտ. Մատթ. 11:29): **Հեզ** լինել նշանակում է ընդունել սեփական համեստ դիրքը: Հեզ մարդը համեստ է և զսպված, երբ խոսքն իրեն է վերաբերում, թեև Աստծո գործը կամ ուրիշ մարդկանց պաշտպանելիս նա կարող է առյուծ դառնալ:

Հեզերը երկիրը կժառանգեն ոչ *հիմա*. ներկայումս, ավելի շատ նրանք ժառանգում են արհամարհանք և ընչազրկություն: Բայց նրանք անպայման **երկիրը պիտի ժառանգեն**, երբ Քրիստոս Թագավորը երկիրը կառավարի հազար տարի խաղաղության և բարգավաճման մեջ:

5:6. Այնուհետև հայտարարվում է նրանց երանությունը, **որ արդարության քաղցն ու ծարավն ունեն**. նրանց խոստացված է հագեցում: Այդ մարդիկ ծարավ են արդարության իրենց անձնական կյանքում, նրանք փափագում են հասարակությունը տեսնել ազնիվ, շիտակ և արդար, նրանք փնտրում են գործնական սրբություն եկեղեցում: Նրման մարդիկ, որոնց մասին գրել է Գամաղիել Բրեդֆորդը, «ուսեն ծարավ, որը չի կարող հագեցնել երկրավոր ոչ մի աղբյուր, և քաղց, որը միայն Քրիստոսը կարող է կշտացնել, այսպես նրանք կմեռնեն»: Այս մարդիկ առատապես կբավարարվեն Քրիս-

տոսի գալիք Թագավորության մեջ: Նրանք **պիտի հագնենան**, որովհետև արդարությունն է թագավորելու, իսկ այլասերվածությունն իր տեղը կգիջի բարոյական ամենաբարձր չափանիշներին:

5:7. Մեր Տիրոջ Թագավորության մեջ **երանելի են ողորմածները, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն:** Լինել **ողորմած** նշանակում է գործնական կարեկցանք ունենալ: Մի կողմից՝ սա նշանակում է չարությամբ չհատուցել ճնշողներին, ովքեր արժանի են դրան. ավելի լայն իմաստով՝ սա նշանակում է օգնել այն կարիքավորներին, ովքեր ի վիճակի չեն իրենք իրենց հոգալ: Աստված Իր ողորմությունը ցուցաբերեց մեր նկատմամբ՝ ինչպես լավ մեզ արժանի մեղքի պատժից և հայտնեց Իր բարությունը Քրիստոսի փրկարար գործի միջոցով: Մենք նմանվում ենք Քրիստոսին, երբ կարեկցում ենք:

Ողորմածները **ողորմություն պիտի գտնեն:** Այստեղ Հիսուսը նկատի չունի փրկարար ողորմությունը, որ Աստված տալիս է հավատացող մեղավորին: *Այդ* ողորմությունը կախված չէ ավյալ մարդու ողորմած լինելուց. այն ձրի և անպայմանական նվեր է: Տերն այստեղ խոսում է ամենօրյա ողորմության մասին, որի կարիքն ունեն երկրի վրա ապրող քրիստոնյաները, նաև այն գալիք օրվա **ողորմության** մասին, երբ անձի գործը բացահայտվի (1 Կոր. 3:12-15): Նա, ով ողորմած չի եղել, **ողորմություն** չի ստանա, այսինքն՝ կկորցնի իր վարձատրությունը:

5:8. **Սրտով մաքուրներին** վստահեցվում է, որ **նրանք պիտի տեսնեն Աստծուն:** Սրտով մաքուր է այն մարդը, ում շարժառիթները պարզ են, մտքերը՝ սուրբ, իսկ խիղճը՝ մաքուր: «**Նրանք պիտի տեսնեն Աստծուն**» արտահայտությունը կարելի է տարբեր ձևով հասկանալ: Առաջին **սրտով մաքուրները տեսնում են Աստծուն** հիմա՝ հաղորդակցվելով Նրա հետ Խոսքի և Հոգու միջոցով: Երկրորդ՝ երբեմն նրանք կարող են տեսնել գերբնական տեսիլքներ կամ երազներ Տիրոջ կողմից: Երրորդ՝ **նրանք**

պիտի տեսնեն Աստծուն՝ ի դեմս Հիսուսի, երբ Նա նորից գա: Չորրորդ՝ **նրանք պիտի տեսնեն Աստծուն** հավիտենականության մեջ:

5:9. **Խաղաղարարների** համար խոստացված օրհնություն կա. **նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն:** Ուշադրություն դարձրեք, Աստված չի խոսում նրանց մասին, ովքեր խաղաղասեր են բնավորությամբ կամ սիրում են խաղաղությունը: Նա նկատի ունի մարդկանց, ովքեր ջանադրաբար ձգտում են խաղաղություն ստեղծել: Այս համարի սովորական բացատրությունն այս է՝ փորձել, որ վեճը շրջանակից դուրս չգա: Ըստ աստվածային մոտեցման՝ այդ խաղաղությունն ստեղծելու համար քրիստոնյան պետք է գործնական քայլեր ձեռնարկի, նույնիսկ նախատիքի ու հայտնաբերի ենթարկվելու դեպքում:

Խաղաղարարները **Աստծո որդիներ պիտի կոչվեն:** Սա չի նշանակում, որ նրանք այդպես *կդառնան* Աստծո *որդիներ*, քանի որ դա միայն Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկչի ընդունելով է լինում (Հովհ. 1:12): Խաղաղություն անելով՝ հավատացյալները *ցույց են տալիս*, որ նրանք **Աստծո որդիներ են**, և մի օր Աստված կճանաչի նրանց՝ որպես Իր ընտանիքի անդամների:

5:10. Հաջորդ երանությունը վերաբերում է **հալածվողներին**, որոնք հալածվում են ոչ թե իրենց սեփական զանցանքների, այլ **արդարության համար: Երկնային Թագավորությունը** խոստացված է այն հավատացյալներին, ովքեր չարչարվում են արդարություն անելու համար: Նրանց ազնվությունը հանդիմանում է անաստված աշխարհին և թշնամություն առաջացնում: Մարդիկ ատում են արդարությամբ ապրողներին, որովհետև նրանք երևան են հանում նրանց անձնական անիրավությունը:

5:11. Կարող է թվալ, որ վերջին երանությունը նախորդի կրկնությունն է: Սակայն այստեղ մի տարբերություն կա: Նախորդ համարի թեման արդարության համար հալածվելն էր, իսկ այստեղ խոսվում է Քրիստոսին **հետևելու** պատճառով հալածանք

կրելու մասին: Տերը գիտեր, որ Իր աշակերտներին չարչարելու են, քանի որ նրանք հետևել են Իրեն ու հավատարիմ են մնացել: Պատմությունը հաստատում է սա. ի սկզբանե աշխարհը հալածել, բանտարկել և սպանել է Հիսուսի հետևորդներին:

5:12. Հանուն Հիսուսի տառապելն առանձնաշնորհում է, որը պետք է մեծ ուրախություն առաջացնի: **Մեծ վարձատրություն է սպասվում նրանց, ովքեր մարգարեների վիճակակիցներ դարձան տառապանքների մեջ:** Հին կտակարանում Աստծո ազդարարները, չնայած հալածանքներին, ամուր կանգնեցին: Բոլոր նրանք, ովքեր ընդօրինակում են նրանց քաջարի հավատարմությունը, կկիսեն նրանց ներկա և գալիք ուրախությունը:

Երանությունները ներկայացնում են Քրիստոսի թագավորության քաղաքացու իդեալական դիմանկարը: Ուշադրություն դարձրեք, որ շեշտադրված են *արդարություն* (հ. 6), *խաղաղություն* (հ. 9) և *ուրախություն* (հ. 12) բառերը: Պողոսը նկատի ուներ հավանաբար հենց այս հատվածը, երբ գրում էր. «Որովհետև Աստծո արքայությունը ուտելիք և խմելիք չէ, այլ՝ արդարություն, խաղաղություն և խնդություն Սուրբ Հոգով» (Հռ. 14:17):

Բ. Հավատացյալները աղ և լույս են (5:13-16)

5:13. Հիսուսն Իր աշակերտներին անվանեց երկրի աղ: Նրանք աշխարհի համար այն են, ինչ աղը՝ ամենօրյա կյանքում: Աղը համեմուն է կերակուրը, պահպանում է փչանալուց, ծարավ է առաջացնում, համ է տալիս: Այսպես և Նրա աշակերտները համեմուն են մարդկային հասարակությունը, հանդիսանում են փչացումը կանխող միջոց և ստիպում են ուրիշներին արդարություն անել, որի մասին գրված է նախորդ համարներում:

Եթե աղն իր համը կորցնի, ինչպե՞ս կարելի է այն վերականգնել: Վերականգնել իսկական, բնական համը հնարավոր չէ: Եթե աղն իր համը կորցնի, այն այլևս **ոչ մի բանի պիտանի չի լինի:** Այն նետում են

դուրս՝ մարդկանց ոտքի տակ կոխկրտվելու: Այբերտ Բարնսի մեկնաբանությունը լուսարանում է այս հատվածը.

«Այս երկրում օգտագործվող աղը քիմիական միացություն է և եթե այն կորցնի իր աղիությունը կամ համը, ապա դրանից ոչինչ չի մնա: Արևելյան երկրներում օգտագործվող աղը կեղտոտ է, խառնված հողի և բուսական մասնիկների հետ, ուստի կարող է կորցնել իր համը, բայց դրա զգալի մասը՝ (անհամ աղը) մնում էր: Այլևս ոչ մի բանի պիտանի չի կարող լինել. միայն՝ դուրս թափվելու և մարդկանց ոտքի տակ կոխկրտվելու, ինչպես համարն ասում է»:⁴

Կատարելով աշակերտության պայմանները, որոնք թվարկված են Երանությունների և ամբողջ Լեռան քարոզի մեջ, աշակերտի մեծ նպատակը **երկրի աղ լինելն է:** Եթե նա չկարողանա հոգևոր իրականությունը ցուցադրել, նրա վկայությունը ոտքի կոխանի կվերածվի: Աշխարհն արհամարհում է անհավատարիմ հավատացյալներին:

5:14. Հիսուսը քրիստոնյաներին նաև անվանում է **աշխարհի լույս:** Նա Իր մասին խոսեց որպես աշխարհի լույսի (Հովհ. 8:12, 12:35, 36, 46): Այս երկու արտահայտությունների միջև եղած հարաբերակցությունը հետևյալն է. Հիսուսը հանդիսանում է լույսի աղբյուր, քրիստոնյաները՝ Նրա լույսն անդրադարձնողները: Նրանց դերն է լուսարձակել Նրա լույսը, ինչպես լուսինը անդրադարձնում է արևի փառքը:

Քրիստոնյան նման է **բլրի վրա շինված քաղաքի.** այն բարձր է իր շրջապատից և փայլում է մթության մեջ: Նա, ում կյանքը ներկայացնում է Քրիստոսի ուսմունքին բնորոշ հատկանիշներ, **չի կարող թաքնվել:**

5:15-16. Մարդիկ, **ճրագը վառելով, կաթսայի տակ չեն դնում:** Ընդհակառակը, այն դնում են **աշտանակի վրա, որ լույս տա բոլոր նրանց, ովքեր տան մեջ են:** Քրիստոսը նկատի չունեք, որ մենք Իր ուսմունքի լույսը կուտակենք մեզ համար, այլ այն բաժնեկցենք ուրիշների հետ: Մենք պետք է թույլ տանք, որ մեր **լույսն** այնպես **փայ-**

լի, որ մարդիկ **տեսնեն** մեր **բարի գործերը, փառավորեն** մեր **Հորը, որ երկնքում է**: Շեշտադրված է քրիստոնեական ծառայության բնութագիրը: Այն կյանքը, որտեղ Քրիստոսն է երևում, ավելի գրավիչ ու ազդեցիկ է, քան համոզիչ խոսքերը:

Գ. Քրիստոսը կատարում է Օրենքը (5:17-20)

5:17-18. Հեղափոխական առաջնորդների մեծամասնությունը խզում է անցյալի բոլոր կապերը և հրաժարվում է գոյություն ունեցող ավանդական կարգերից: Մեր Տեր Հիսուսն այդպես չվարվեց: Նա հաստատեց Մովսեսի օրենքը և պնդում էր, որ այն պետք է կատարվի: Հիսուսը չեկավ **Օրենքը** կամ **մարգարեներն** ավերելու, այլ կատարելու դրանք: Նա հստակորեն պնդում էր, որ **Օրենքից մեկ կետ կամ մեկ նշանագիր չի անցնի**, մինչև բոլորը չկատարվի: Կետը երբայական այբուբենի ամենափոքր տառն է, **նշանագիրը** փոքրիկ նշան է կամ դուրս ցցված գծիկ, որն օգնում է զանազանելու մի տառը մյուսից: Օրինակ՝ «Ու» մեծատառի փոքրիկ մասնիկը տարբերակում է այն «Ո» մեծատառից: Հիսուսը հավատում էր, որ Աստվածաշունչը բառացի ներշնչված է, նույնիսկ երբ գրվածն ընդամենը աննշան մանրուք է թվում: Ոչ մի բան Աստվածաշնչում, նույնիսկ ամենափոքր գծիկը, անիմաստ չէ:

Կարևոր է նշել, որ Հիսուսը չասաց, որ Օրենքը **երբեք** չի անցնի: Նա ասաց, որ Օրենքը չի անցնի, մինչև **բոլորը չկատարվի**: Այս տարբերությունը կարևոր է նաև այսօրվա հավատացյալների համար, և քանի որ հավատացյալի վերաբերմունքն Օրենքի նկատմամբ բավական բարդ է, մենք պատրաստվում ենք ժամանակ հատկացնելու, որպեսզի ամփոփենք աստվածաշնչյան ուսուցումը այս նյութի մասին:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆ ՕՐԵՆՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ

Օրենքը սահմանադրական համակարգ է, որն Աստծո կողմից տրվեց Իսրայել ժողովրդին Մովսեսի միջոցով: Ամբողջ Օրենքը

գտնվում է Ելից 20-31, Ղևտացիների և 2 Օրինաց գրքերում, թեև նրա էությունն ամփոփված է Տասը պատվիրանների մեջ:

Օրենքը տրված չէր որպես փրկության միջոց (Գործք 13:39, Հռ. 3:20ա, Գաղ. 2:16, 21, 3:11). այն նախատեսված էր, որպեսզի մարդկանց ցույց տա իրենց մեղավորությունը (Հռ. 3:20բ, 5:20, 7:7, 1 Կոր. 15:56, Գաղ. 3:19), ապա նրանց առաջնորդի դեպի Աստծո շնորհով փրկությանը: Թեև այն տրված էր Իսրայելի ժողովրդին, այնուամենայնիվ, այն պարունակում էր բարոյական սկզբունքներ, որոնք ուժի մեջ են բոլոր դարերի մարդկանց համար (Հռ. 2:14-15): Աստված Իսրայելին փորձում էր Օրենքով՝ որպես նմուշ մարդկային ցեղի համար, և Իսրայելի մեղքը ապացուցեց, որ ամբողջ աշխարհն է մեղավոր Աստծո առաջ (Հռ. 3:19):

Օրենքը հաստատում էր մահվան պատիժը (Գաղ. 3:10), և խախտելով մեկ պատվիրանը՝ մեղավոր էր համարվում մնացած բոլորի խախտման մեջ (Հակ. 2:10): Քանի որ մարդիկ խախտեցին Օրենքը, նրանք ընկան մահվան անեծքի տակ: Աստծո սրբությունն ու արդարությունը պահանջում է, որ պատիժն իրականացվի: Ճիշտ այս պատճառով Հիսուսն աշխարհ եկավ, որպեսզի Իր մահվամբ վճարի մարդկության մեղքի պարտքը: Նա մահացավ Օրենքը խախտողների փոխարեն՝ որպես նրանց Փոխարինողը, թեև Ինքն առանց մեղքի էր: Նա չմերժեց Օրենքը, այլ ընդունեց բոլոր պահանջները՝ ճշտությամբ կատարելով դրա բոլոր խիստ հրահանգներն Իր կյանքով և մահով: Այսպիսով, Ավետարանը չի մերժում Օրենքը, նա հաստատում է այն և ցույց տալիս, որ Քրիստոսի քավարար գոհաբերությունը լիովին բավարարել է Օրենքի պահանջները:

Հետևաբար Հիսուսին հավատացողն այլևս չի գտնվում Օրենքի տակ. նա գտնվում է շնորհի տակ (Հռ. 6:14): Քրիստոսի գոհաբերության շնորհիվ նա մեռել է Օրենքին: Օրենքի վարձը պետք է վճարվեր միայն մեկ անգամ: Եվ քանի որ Քրիստոսը վճարել է այն, ապա հավատացյալն այդ անելու կա-

րիքը չունի: Այս առումով քրիստոնյայի համար Օրենքն արդեն գոյություն չունի (2 Կոր. 3:7-11): Օրենքը դաստիարակ եղավ մինչև Քրիստոսի գալը. բայց երբ փրկությունը եկավ, Օրենքի կարիքը վերացավ (Գաղ. 3:24-25):

Այնուհանդերձ, չնայած որ քրիստոնյան այլևս մեղքի դատապարտության տակ չէ, սա չի նշանակում, որ Օրենքը նրա համար գոյություն չունի: Նա ավելի ամուր կապերով է կապված Օրենքին, որովհետև Քրիստոսի օրենքի տակ է գտնվում (1 Կոր. 9:21): Նրա վարքագիծը ոչ թե պատժի վախով է պայմանավորված, այլ իր Փրկչին գոհացնելու անկեղծ ցանկությամբ: Քրիստոսը դարձել է նրա կյանքի օրենքը (Հովհ. 13:15, 15:12, Եփ. 5:1-2, 1 Հովհ. 2:6, 3:16):

Հաճախ հարցնում են Օրենքի հանդեպ հավատացյալի վերաբերմունքի մասին. «Պե՞տք է պահենք Տասը պատվիրանները»: Պատասխանը հետևյալն է. որոշակի սկզբունքներ, որոնք գտնվում են Օրենքում, միշտ տեղին են համարվում:

Գողանալը, նախանձելը, սպանելը միշտ էլ սխալ են: Տասից ինը պատվիրանները կրկնվում են ՆԿ-ում էական տարբերություններով: Դրանք՝ որպես օրենք (պատժով ամրակցված) չեն տրվել Աստծո ժողովրդին, այլ՝ արդարությամբ խրատելու համար (2 Տիմ. 3:16բ): Միակ պատվիրանը, որը չի կրկնվում, շաբաթի, այսինքն՝ շաբաթվա 7-րդ օրվա մասին օրենքն է:

Օրենքի գործադրումը չփրկվածների համար դեռևս չի ավարտվել. «Բայց գիտենք, որ Օրենքը բարի է, եթե մեկն այն օրինավորապես գործածի» (1 Տիմ. 1:8): Նրա օրինավոր գործադրումը պետք է հանգեցնի մեղքի գիտակցությանը և այդ կերպ՝ ապաշխարությանը: Բայց Օրենքը նրանց համար չէ, ովքեր արդեն փրկված են. «... Օրենքն արդարների համար չէ...» (1 Տիմ. 1:9):

Օրենքի պահանջած արդարությունը կատարվեց նրանց մեջ, ովքեր «մարմնականին չեն հետևում, այլ՝ Հոգուն» (Հռ. 8:4): Փաստորեն մեր Տիրոջ ուսուցումը Լեռան քա-

րոզի մեջ հաստատեց ավելի բարձր չափանիշ, քան այն, որ հաստատված էր Օրենքով: Օրինակ՝ Օրենքն ասում է. «Մի՛ սպանիր»: Հիսուսը պատվիրեց. «Նույնիսկ մի՛ ստիր»: Այսպիսով, Լեռան քարոզը ոչ միայն պաշտպանում է Օրենքն ու Մարգարեներին, այլև նրանց ուժ է հաղորդում և ընդլայնում նրանց նշանակությունը:

5:19. Վերադառնալով Լեռան քարոզին՝ նկատում ենք, որ Հիսուսը կանխեց Աստծո պատվիրանները թուլացնելու բնական միտումը: Քանի որ դրանք գերբնական բնույթ ունեն, մարդիկ հակված են դրանք իմաստագրել, ռացիոնալացնել դրանց նշանակությունը: Բայց **ով** օրենքի կետերից **մեկը խախտի և սովորեցնի** մարդկանց այդպես անել, **նա փոքրագույն պիտի կոչվի երկրների արքայության մեջ**: Չարմանալի է, որ այդպիսի մարդկանց ընդհանրապես թույլ է տրվում մտնել այդ Թագավորությունը. իրականում Թագավորության *մուտքը* Քրիստոսին հավատալով է: Մարդու դիրքը Թագավորության մեջ որոշվում է երկրի վրա դրսևորած նրա հնազանդությամբ և հավատարմությամբ: Թագավորության օրենքին հնազանդվող մարդը **մեծ պիտի կոչվի երկրների արքայության մեջ**:

5:20. Աստծո Թագավորություն մտնելու համար մեր **արդարությունը** պետք է գերազանցի **փարիսեցիների և դպիրների արդարությանը** (ովքեր բավարարվում էին կրոնական արարողություններով, որոնք իրենց մաքրում էին արտաքնապես, ծիսականորեն, բայց երբեք չէին մաքրում սեփական սիրտը): Հիսուսն օգտագործում է հիպերբոլա (չափազանցություն), որպեսզի մեզ համոզի, որ արտաքին արդարությունն առանց ներքին իրականության Երկնային Թագավորության մուտք չի երաշխավորի: Միակ արդարությունը, որ Աստված ընդունում է, կատարելությունն է, որը Նա վերագրում է բոլոր նրանց, ովքեր ընդունել են Իր Որդուն որպես Փրկչի (2 Կոր. 5:21): Անշուշտ, որտեղ ճշմարիտ հավատ կա Քրիստոսի հանդեպ, այնտեղ կլինի նաև գործնական արդարություն, որը Հիսուսը

նկարագրել է Լեռան քարոզի մնացած մասում:

Գ. Հիսուսը զգուշացնում է բարկության մասին (5:21-26)

5:21. Հիսուսի ժամանակաշրջանի հրեաները գիտեին, որ Աստված արգելել էր սպանել, ինչպես նաև գիտեին, որ մարդասպանը պետք է պատժվեր: Սա ճշմարիտ էր նույնիսկ նախքան Օրենքի տրվելը (Ծնն. 9:6). ավելի ուշ այս ճշմարտությունը ընդգրկվեց Օրենքի մեջ (Ել. 20:13, 2 Օր. 5:17): **«Բայց ես ասում եմ ձեզ»** խոսքերով Հիսուսը սպանության վերաբերյալ փոփոխություն է մտցնում Օրենքի մեջ: Այլևս ոչ ոք չէր կարող հպարտանալ, որ երբեք չի սպանել: Հիսուսն այստեղ ասում է. «Իմ Թագավորության մեջ դուք չպետք է նույնիսկ սպանության մասին մտքեր ունենաք»: Նա բացահայտում է սպանության ակտի աղբյուրը և զգուշացնում անարդար բարկության երեք տեսակների մասին:

5:22. Առաջին տեսակ՝ մարդն **առանց պատճառի բարկանում է իր եղբոր վրա:**⁵ Այս հանցանքի մեջ մեղադրվողը պետք է պատժվի, այսինքն՝ **դատաստանի ենթարկվի**, դատարան տարվի: Շատ մարդկանց թվում է, թե իրենց կարծիքն օրինական հիմք է բարկության համար, բայց բարկությունն արդարացի է միայն այն դեպքում, երբ Աստծո պատիվն է պետք պաշտպանել կամ երբ մեկին վիրավորում են: Բարկությունը չի կարող արդարանալ, եթե այն արտահայտում է անձնական վիրավորանքի փոխհատուցումը:

Առավել լուրջ մեղք է համարվում եղբորը վիրավորելը: Հիսուսի օրոք մարդիկ գործածում էին **ռաքա** բառը (արամերեն եզրույթ, որ նշանակում է «դատարկ մարդ»)՝ արտահայտելով արհամարհանք և վիրավորանք: Նա, ով գործածեր այդ մակդիրը, **առյանին ենթակա կլիներ**, այսինքն՝ կդառնար դատավարության ենթակա սինեդրիոնում՝ երկրի բարձրագույն դատարանում:

Վերջապես, ինչ-որ մեկին **«հիմար»** անվանելը անարդար բարկության երրորդ տեսակն է, որը Հիսուսը դատապարտեց: Այստեղ **«հիմար»** բառն ավելին է ենթադրում, քան պարզապես բթամիտ: Այն խոսում է բարոյական **հիմարի** մասին, որը մահվան պետք է մատնվի, և այդ ցանկությունն արտահայտվում է տվյալ բառով: Այսօր տարածված երևույթ է միմյանց անիծելը՝ ասելով. «Աստծուց նզովյալ լինես»: Այսպիսի մարդը կոչ է անում Աստծուն գոհին հանձնել դժոխք: Հիսուսն ասում է, որ ով արտաբերի այդպիսի անեծք, **զեհենի կրակին ենթակա կլինի**: Մահապատժի ենթարկված հանցագործների մարմինները սովորաբար նետում էին Երուսաղեմից դուրս մշտական վառվող աղբանոցի մեջ, որը հայտնի է որպես Հիննոմի հովիտ կամ Գեհեն: Այն դժոխքի կրակների պատկերն է, որ երբեք չեն մարում:

Փրկչի խոսքերի խստության մեջ որևէ սխալ չկա: Նա սովորեցնում է, որ բարկությունն իր մեջ սպանության սերմեր է պարունակում, որ վիրավորական խոսքի մեջ սպանության ոգի կա և որ անեծքի բառերն սպանելու ցանկության արտահայտություն են: Հանցագործության առաջադիմական անը պահանջում է պատժի երեք աստիճան՝ *դատաստան, առյան* և *զեհենի կրակ*: Հիսուսն Իր թագավորության մեջ համապատասխան խստությամբ կվերաբերվի մեղքերին:

5:23-24. Եթե մեկը բարկությամբ կամ մեկ այլ արարքով վիրավորում է մեկ ուրիշին, ապա Աստծուն ընծա մատուցելն անօգուտ է: Աստված չի կարող գոհ լինել դրանից: Վիրավորողը նախ պետք է հարաբերությունները շտկի վիրավորվածի հետ: Միայն այդ դեպքում նրա ընծան կընդունվի:

Թեև այս բառերը գրված են հրեական համատեքստում, սակայն դա չի նշանակում, որ դրանք կիրառելի չեն այսօր: Պորոն այս հայեցակարգը կիրառում է Տիրոջ Ընթրիքի դեպքում (տե՛ս 1 Կոր. 11-րդ գլուխը): Աստված չի ընդունում հավատացյալի երկրպագությունը, եթե նա գժտված է իր եղբոր հետ:

5:25-26. Հիսուսի այս զգուշացումը դատելու հոգու և մեղքը դժկամությամբ ըն-

դուներու դեմ է: Ավելի լավ է անմիջապես հարցերը կարգավորել մեղադրողի հետ, քան դատի մատնվելու վտանգին ենթարկվել: Եթե դա կատարվի, ապա մենք անկասկած կվնասվենք: Թեև աստվածաշնչագետների միջև որոշ տարածայնություններ կան այս առակի մարդու անհատականության կապակցությամբ, սակայն միտքը պարզ է. եթե սխալ ես, շտապիր այն ընդունել և կարգավորել հարցերը: Եթե չապաշխարես, քո մեղքը ժամանակի ընթացքում քո դեմ դուրս կգա և ստիպված կլինես ոչ միայն փոխհատուցել հասցված վնասները, այլև լրացուցիչ պատիժ կրել: Եվ դատի դիմելու մի՛ շտապիր: Եթե այդպես վարվես, օրենքը վրադ կհասնի, և դու ստիպված կլինես վճարել մինչև վերջին մանրադրամը:

Ե. Հիսուսը դատապարտում է շնությունը (5:27-30)

5:27-28. Մովսեսի օրենքը միանշանակորեն արգելել էր շնությունը (Ել. 20:14, 2 Օր. 5:18): Մարդը կարող է պարծենալ այդ պատվիրանը երբեք չխախտելով, սակայն միևնույն ժամանակ «շնությամբ լի աչքեր» ունենալ (2 Պետ. 2:14): Արտաքնապես նա կարող է պարկեշտ երևալ, բայց նրա միտքը կարող է թափառել անմաքրության լաբիրինթոսում: Այնուհետև Հիսուսը հիշեցնում է Իր աշակերտներին, որ լոկ ֆիզիկական մտերմության ժուժկությունը բավարար չէ, պետք է լինի ներքին մաքրություն: Օրենքն արգելեց ցանկանալը. «... **Ով մի կնոջ նայի նրան ցանկանալու համար, արդեն շնություն է արել նրա հետ իր սրտում**»:

Ե. Ստենլի Ջոունսն ըմբռնել էր այս համարի կարևորությունը, երբ գրում էր. «Երբ մտածում ես շնության մասին կամ անում ես այն, ոչ թե սեռական ցանկությունդ ես բավարարում, այլ կրակի վրա յուղ ես լըցնում, որպեսզի այն հանգցնես»: Մեղքը սկիզբ է առնում մտքում, և եթե փայփայենք այն, ի վերջո նաև կիրազործենք:

5:29-30. Չապականված մտքով ապրելու

համար խիստ ինքնակարգապահություն է պահանջվում: Այս պատճառով Հիսուսն ասաց, որ եթե մեր մարմնի անդամներից մեկը մեղք է առաջացնում, ավելի լավ է զրկվել մարմնի այդ անդամից կյանքի ընթացքում, քան հոգին կորցնել հավիտենականության մեջ: Արդյոք Հիսուսի խոսքերը բառացի՞ պիտի հասկանանք: Իրապե՞ս Նա ինքնախեղման մասին էր քարոզում: Այս խոսքերը բառացի կարելի է հասկանալ հետևյալ դեպքում. *եթե անխուսափելի ընտրության առջև կանգնենք՝* կորցնել մեկ անդամ կամ հոգին, ապա ավելի լավ կլինի, որ այդ անդամից ուրախությամբ բաժանվենք: *Ի ուրախություն, այդպիսի անհրաժեշտություն չկա*, քանի որ Սուրբ Հոգին հավատացյալին տալիս է սուրբ կյանքով ապրելու գորություն: Սակայն պետք է համագործակցություն լինի: Իր հերթին հավատացյալն էլ պետք է խստորեն հետևի կարգապահությանը:

Զ. Հիսուսը քննադատում է ամուսնալուծությունը (5:31-32)

5:31. Համաձայն ՀԿ-ի օրենքի՝ ամուսնալուծությունը թույլատրվում էր միայն 2 Օր. 24:1-4-ում գրվածի դեպքում: Այս հատվածը չի վերաբերում այն դեպքին, երբ կինը շնացող է (շնության պատիժը մահ էր, տե՛ս 2 Օր. 22:22): Նա խոսում է անսեր ամուսնության կամ անհամատեղելիության հետևանքով ամուսնալուծության մասին:

5:32. Սակայն Զրիստոսի Թագավորության մեջ **ով իր կնոջն արձակի, բացի պոռնկության դեպքից, պատճառ կդառնա նրա շնություն անելուն**: Մա չի նշանակում, որ կինը ինքնաբերաբար կդառնա շնացող, այլ զրկվելով գոյատևման միջոցներից՝ նա ստիպված կլինի ուրիշ տղամարդու հետ ապրել: Այսպիսով նա դառնում է շնացող: Ոչ միայն նախկին կինն է դառնում շնացող, այլև նա, **ով արձակվածին կնության է առնում, շնություն է անում**:

Ամուսնալուծության կամ վերամուսնության թեման Աստվածաշնչի ամենաբարդ թեմաներից մեկն է: Գործնականում ան-

հնար է պատասխանել բոլոր հարցերին, որոնք առաջանում են, բայց օգտակար կլինեն հետևել և ամփոփել այն, թե Աստվածաշունչն ինչ է սովորեցնում մեզ և ինչի ենք հավատում:

**ԱՄՈՒՆԱՅՈՒԹՅՈՒՆԻ ԹՅՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ՎԵՐԱՄՈՒՆԱԿՆԵՐԸ**

Ամուսնալուծությունը երբեք չի եղել Աստծո մտադրությունը մարդու համար: Նա ուզում էր, որ մեկ տղամարդը և մեկ կինը ամուսնացած մնային, մինչև որ մահը բաժաներ նրանց միությունը (Հռ. 7:2-3): Հիսուսը հայտնեց սա փարիսեցիներին՝ վկայակոչելով աստվածային կարգը արարչագործության սկզբից (Մատթ. 19:4-6):

Աստված ատում է ամուսնալուծությունը (Մադ. 2:16), այսինքն՝ ոչ սուրբգրային ամուսնալուծությունը: Նա բոլոր ամուսնալուծությունները չի ատում, քանի որ Իր մասին ասում է, որ Ինքը ամուսնալուծել է Իսրայելին (Եր. 3:8): Դա պատահեց, քանի որ ժողովուրդը թողեց Իրեն՝ կուռքերին ծառայելու համար: Իսրայելը հավատարիմ չմնաց:

Մատթ. 5:31-32 և 19:9-ում Տեր Հիսուսը սովորեցնում է, որ ամուսնալուծությունն արգելված է, բացառությամբ այն դեպքի, երբ ամուսիններից մեկը մեղավոր է պռոնըկության մեջ: Մարկ. 10:11-12 և Դուկ. 16:18-ում բացառությունը չի հիշատակվում:

Այս տարածայնության լավագույն բացատրությունը միգուցե այն է, որ ո՛չ Մարկոսը, ո՛չ էլ Դուկասը լիովին չեն գրառել ամբողջ արտահայտությունը: Ու թեև ամուսնալուծությունն իդեալական լուծում չէ, այն թույլատրվում է ամուսիններից մեկի անհավատարմության դեպքում: Այս դեպքում Հիսուսը թույլատրում է ամուսնալուծությունը, բայց Նա չի պատվիրում այն:

Որոշ աստվածաշնչագետներ 1 Կոր. 7:12-16-ը դիտարկում են որպես ուսուցում, ըստ որի ամուսնալուծությունն ընդունելի է, երբ հավատացյալը լքվում է անհավատի կողմից: Պողոսն ասում է, որ թողնված անձն

այս դեպքում կապանքի մեջ չէ, այսինքն՝ տղամարդը կամ կինը ազատ են ամուսնալուծվելու (լքվելու) համար: Այս գրքի հեղինակի կարծիքով՝ տվյալ դեպքը թույլատրում է միևնույն բացառությունը, որը թույլատրվում է Մատթ. 5-րդ և 19-րդ գլուխներում, այսինքն՝ անհավատ անձը հեռանում է, որպեսզի ուրիշի հետ ապրի: Հետևաբար, հավատացյալը կարող է բաժանվել սուրբգրային հիմքով միայն այն դեպքում, եթե մյուս կողմը շնություն է արել:

Հաճախ պնդում են, որ թեև ՆԿ-ում ամուսնալուծությունը թույլատրվում է, բայց վերամուսնության մասին երբեք չի խոսվում: Սակայն այդ փաստարկը հիմնավորված չէ: Վերամուսնությունը ՆԿ-ում չի դատապարտում անմեղ կողմին, այլ միայն վիրավորողին: Սուրբգրային ամուսնալուծության գլխավոր պատճառներից մեկը վերամուսնության թույլատրումն է, այլապես իրարից բաժանվելը նույնպես խնդրի լուծում կհանդիսանար:

Այս թեմայի շուրջ ցանկացած քննարկման ժամանակ հարց է ծագում. «Իսկ ինչպե՞ս վարվել նրանց հետ, ովքեր ամուսնալուծվել են մինչև փրկվելը»: Ոչ մի կասկած չի կարող լինել այն փաստի վերաբերյալ, որ անօրինական ամուսնալուծություններն ու վերամուսնությունները, որոնք կատարվել են մինչև դարձի գալը, համարվում են լիովին ներված մեղքեր (տե՛ս 1 Կոր. 6:11, որտեղ Պողոսը շնությունը ներառում է այն մեղքերի ցանկում, որոնց մեջ կորնթացի հավատացյալները նախկինում մասնակցել են): Մեղքերը, որոնք կատարվել են մինչև դարձի գալը, հավատացյալներին չեն զրրկում տեղական եկեղեցուն անդամակցելու իրավունքից:

Ավելի դժվար մի հարց էլ կա, որը վերաբերում է այն քրիստոնյաներին, ովքեր բաժանվել և վերամուսնացել են ոչ սուրբգրային հիմնավորումով: Կարելի՞ է նրանց նորից ընդունել տեղական եկեղեցու անդամության շարքերը: Այս հարցի պատասխանը պայմանավորված է հետևյալ հարցի պատասխանով. արդյո՞ք շնությունը մեկանգամյա՞ ֆիզիկական մերձեցման ակտ է,

թե՛ մշտական: Եթե այդ մարդիկ ապրում են շնության մեջ, ապա նրանք ոչ միայն պետք է խոստովանեն, այլև պետք է լքեն իրենց ներկայիս կողակցին: Սակայն Աստծո կողմից խնդրի լուծումը երբեք չի առաջացնում ավելի վատ խնդիրներ: Եթե խճճենք ամուսնական փոխհարաբերությունների կծիկը, ապա տղամարդիկ կամ կանայք կընկնեն մեղքի մեջ, կամ կանայք և երեխաները կմնան առանց կացարանի և ապրուստի, և բուժումը շատ ավելի վատ կլինի, քան հիվանդությունը:

Հեղինակի կարծիքով՝ քրիստոնյաները, ովքեր բաժանվել են ոչ սուրբգրային հիմնավորումով, իսկ հետո նորից ամուսնացել են, կարող են անկեղծորեն ապաշխարել իրենց մեղքի համար ու վերականգնվել Տիրոջ առաջ և եկեղեցական հաղորդակցության մեջ: Յուրաքանչյուր ամուսնավուծության դեպք ունի իր առանձնահատկությունները: Ուստի տեղական եկեղեցու երեցները պետք է ուսումնասիրեն յուրաքանչյուր դեպքը և դատողություն անեն՝ ըստ Աստծո Խոսքի: Եթե անգամ անհրաժեշտ լինի կիրառել կարգապահական պատժամիջոցներ, ապա սրա մեջ բոլոր ներգրավվածները պետք է ենթարկվեն երեցների որոշմանը:

Է. Հիսուսը դատապարտում է երդումները (5:33-37)

5:33-36. Մովսեսի օրենքում կան մի քանի սահմանափակումներ, որոնք վերաբերում են Տիրոջ անունով **սուտ** երդումներին (Ղև. 19:12, Թվ. 30:2, 2 Օր. 23:21): Տիրոջ անունով երդվել նշանակում է վկա կանչել Նրան, որ հաստատի քո ճշմարտախոսությունը: Տիրոջ անունով սուտ երդումից խուսափելու նպատակով հրեաները Նրա անունը փոխարինում էին **երկինք, երկիր, Երուսաղեմ, իմ գլուխը** բառերով, որոնցով և երդվում էին:

Հիսուսը դատապարտում է Օրենքի այդպիսի աղավաղումը որպես նուրբ կեղծավորություն և արգելում է երդվել սովորական խոսակցության մեջ: Տիրոջ անունով երդումից խուսափելու փորձը՝ այն պար-

զապես մեկ ուրիշ գոյականով փոխարինելով, ոչ միայն կեղծավորություն է, այլև անիմաստ է: Երդվել **երկինքով** նշանակում է երդում անել **Աստծո աթոռով**: Երդվել **երկրով** նշանակում է երդվել **Նրա ոտքերի պատվանդանով**: Երդվել **Երուսաղեմով** նշանակում է երդում անել **մեծ Թագավորի քաղաքով**: Նույնիսկ **գլխով** երդումը ներառում է Աստծուն, որովհետև Նա է ամեն բանի Արարիչը:

5:37. Քրիստոնյան կարիք չունի երդվելու: Նրա «այո»-ն պետք է «այո» լինի և «ոչ»-ը՝ «ոչ»: Ավելի ուժեղ լեզվի օգտագործումը նշանակում է խոստովանել, որ մեր կյանքը ղեկավարում է սատանան, **չարը**: Գոյություն չունեն այնպիսի հանգամանքներ, որոնք արդարացնում են քրիստոնյաների շուրթերի սուտը:

Այս հատվածը նաև արգելում է քողարկել ճշմարտությունը կամ խորամանկել: Սակայն այն չի արգելում երդում տալ դատարանում: Հիսուսն Ինքը երդման ներքո վկայեց քահանայապետի առջև (Մատթ. 26:63): Պողոսը նույնպես գործածեց երդումը՝ Աստծուն վկայակոչելով՝ փաստելու, որ այն, ինչ ինքը գրել է, ճիշտ է (2 Կոր. 1:23, Գաղ. 1:20):

Ը. Երկրորդ մղոն գնալը (5:38-42)

5:38. Օրենքն ասում է. «Աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ» (Ել. 21:24, Ղև. 24:20, 2 Օր. 19:21): Սա թե՛ պատժի հրաման է, թե՛ պատժի սահմանափակում. հաստուցումը չպետք է գերազանցի հանցագործությանը: Սակայն ՀՎ-ի համաձայն՝ պատժելու իրավասությունը ոչ թե անհատի ձեռքում էր, այլ՝ ղեկավարների:

5:39-41. Հիսուսը Օրենքից վեր գնաց, առավել բարձր արդարության՝ ամբողջովին վերացնելով վրեժխնդրությունը: Նա ցույց տվեց Իր աշակերտներին, որ ինչպես Օրենքը թույլատրում էր վրեժխնդրությունը, այնպես էլ շնորհի միջոցով հնարավոր դարձավ չհակառակվելը: Հիսուսը խրատում էր Իր աշակերտներին **չար մարդուն չհակառակվել**: Եթե մեկը ապտակեր նրանց մի **ծնոտին**, նրանք պետք է **մյուս** ծնոտն էլ

դարձնեին: Եթե մեկը նրանց դեմ դատ վարեր **շապիկի** համար (ներքնագգեստ), նրանք պետք է հրաժարվեին նաև բանկոնից (արտաքին հագուստ, որով ծածկվում էին գիշերը): Եթե պաշտոնյան ստիպում էր իր բեռը տանել **մեկ մղոն**, նրանք պետք է հոժարակամ այն տանեին **երկու մղոն**:

5:42. Տեր Հիսուսի վերջին պատվերն այս հատվածում առավել չկիրառվողն է թվում այսօր: **Քեզանից խնդրողին տո՛ւր և փոխ առնել կամեցողից երես մի՛ դարձրու:** Նյութական բարիքների և ունեցվածքի հանդեպ մեր մոլուցքը մեզ ստիպում է սարսափել այն մտքից, որ մենք պետք է տանք այն, ինչը ձեռք ենք բերել: Սակայն եթե ուզում ենք կենտրոնանալ երկնային գանձերի վրա և գոհանալ միայն անհրաժեշտ կերակուրով և հագուստով, հոժարաբար և բառացիորեն կրնդունենք այս խոսքերը: Հիսուսի հայտարարությունը ենթադրում է, որ օգնություն խնդրող մարդը իսկապես կարիք ունի: Եվ քանի որ հնարավոր չէ բոլոր դեպքերում իմանալ, արդյոք օրինակա՞ն է կարիքը, ապա ավելի լավ է (ինչպես ասել է մեկը) «օգնել երկու տասնյակ խաբերա մուրացկանների, քան համարձակվել երես թեքել մեկ իրական կարիքավորից»:

Մարդկայնորեն դատելով՝ Տիրոջ հորդորած ձևով վարվելն անհնարին է թվում: Միայն այն անձը, ում կառավարում է Սուրբ Հոգին, կարող է ապրել անձնագոհ կյանքով: Հավատացյալը կարող է սիրով փոխհատուցել հասցրած վիրավորանքը (հ. 39), անարդարությունը (հ. 40) և անհարմարությունները միայն այն դեպքում, եթե Փրկչին թույլ է տվել ապրել իր մեջ: Սա «երկրորդ մղոնի Ավետարանն է»:

Թ. Սիրեցեք ձեր թշնամիներին (5:43-48)

5:43. Մեր Տիրոջ վերջին օրինակն ավելի վեհ արդարության մասին է, որն անհրաժեշտ է Իր Թագավորության մեջ: Այն առնչվում է թշնամիների հանդեպ վերաբերմունքին: Այս թեման բնականորեն բխում է նախորդ հատվածից: Օրենքը հրեաներին սովորեցնում էր **սիրել** իրենց **դրացուն** (Ղև. 19:18): Թեև նրանց երբեք հա-

տուկ չէր պատվիրվել **ատել թշնամիներին**, ատելության հոգին զգալիորեն ներառված էր վարդապետության հիմքում: Այդ դիրքորոշումն ընդհանրացված հիսկտակարանյան տեսակետ էր նրանց հանդեպ, ովքեր հալածել էին Աստծո ժողովրդին (Մղմ. 139:21-22): Դա արդարացի թըշնամություն էր՝ ուղղված Աստծո թշնամիների դեմ:

5:44-47. Բայց այժմ Հիսուսը հայտարարում է, որ պետք է **սիրենք** մեր **թշնամիներին** և **աղոթենք** մեզ հետ **վատ վարվողների** համար: Փաստը, որ մեզ պատվիրված է **սիրել**, նշանակում է, որ հարցը կամքին է վերաբերում, ոչ թե զգացմունքներին: Այն նույնը չէ, ինչ-որ բնական կապվածությունը, որովհետև սիրել նրանց, ովքեր ատում և հալածում են մեզ, անբնական է: Այն գերբնական շնորհ է, որը կարող են ցուցաբերել միայն աստվածային կյանք ունեցողները:

Մեզ սիրողներին միայն սիրելով որևէ վարձ չենք ունենա. Հիսուսն ասաց, որ նույնիսկ **մաքսավորները**⁶ նույնն են անում: Այսպիսի սերը չունի աստվածային գորություն: Եվ առաքինություն չէ, եթե **միայն** մեր **եղբայրներին**⁷ ողջունենք, այսինքն՝ մեր ազգականներին և ընկերներին: Չփրկվածը նույնպես կարող է այդպես վարվել. այդտեղ քրիստոնեական ոչինչ չկա: Եթե մեր չափանիշներն ավելի բարձր չեն, քան աշխարհինը, անկասկած, մենք երբեք չենք կարող ազդեցություն ունենալ աշխարհում:

Հիսուսն ասաց, որ Իրեն հետևողները պետք է չարիքի փոխարեն բարին հատուցեն, որպեսզի իրենց **երկնավոր Հոր որդիները** լինեն: Նա չասաց, որ այս ճանապարհով մենք Աստծո որդիներ **կդառնանք**. այդպես **ցույց ենք տալիս**, որ մենք Աստծո զավակներ ենք: Զանի որ Աստված աչառություն չի անում թե՛ **չարերի** և թե՛ **բարիների հանդեպ (արևը և անձրևը ծառայում են երկուսի համար էլ)**, մենք նույնպես պետք է անաչառ և բարեհաճ լինենք բոլորի հանդեպ:

5:48. Հիսուսն ավարտում է այս բաժինը հորդորանքով. «**Ուրեմն դուք կատարյալ**

եղեք, ինչպես կատարյալ է ձեր Հայրը, որ երկնքում է»: «Կատարյալ» բառը պետք է համատեքստի լույսի ներքո հասկանալ: Այն չի նշանակում «անմեղ» կամ «անթերի»: Նախորդ համարները բացատրում են, որ կատարյալ լինել նշանակում է սիրել մեզ ատողներին, աղոթել մեզ հավածողների համար և բարություն ցույց տալ թե՛ բարեկամին և թե՛ թշնամուն: Այստեղ կատարելությունը հոգևոր հասունություն է, որը քրիստոնյային հնարավորություն է տալիս Աստծուն նմանվել՝ օրհնություն բաշխելով բոլորին՝ առանց կողմնապահության:

Ժ. Սրտանց տվեք (6:1-4)

6:1. Այս գլխի առաջին կետում Հիսուսը խոսում է անհատ մարդկանց կյանքում գործնական արդարության երեք հատուկ ոլորտների մասին՝ բարեգործության (հ. 1-4), աղոթքի (հ. 5-15) և ծոմի (հ. 16-18): Այս տասնութ համարներում «**Հայր**» բառը հանդիպում է տասն անգամ, և այն դրանք հասկանալու բանալին է: Արդարության գործնական քայլերը պետք է անել Նրա և ոչ թե մարդկանց հավանությանը արժանանալու համար:

Հիսուսն սկսում է Իր քարոզի այս բաժինը՝ նախագուշացնելով մեր բարեպաշտությունը ի ցույց անելու գայթակհության մասին, **ողորմությունն** այնպես անելու, որ ուրիշները մեզ **տեսնեն**: Նա ոչ թե արարքն է դատապարտում, այլ շարժառիթը: Եթե դրդապատճառը հանրության ուշադրությունը գրավելն է, ապա դա կլինի մեր միակ **վարձատրությունը**, որովհետև Աստված չի վարձատրելու կեղծավորությունը:

6:2. Անհավանական է թվում, որ **կեղծավորները** կարող են աղմուկով ուշադրություն իրենց վրա հրավիրել՝ աղքատներին ողորմություն բաժանելով **փողոցներում** կամ իրենց ընծաները մատուցելով **ժողովարաններում**: Տեր Հիսուսը դատապարտեց նրանց վարքը կարճ նկատողությամբ. «**Նրանք իրենց վարձը ստացել են**» (այսինքն՝ նրանց միակ վարձը համբավն է, որը նրանք ձեռք բերեցին հենց երկրի վրա):

6:3-4. Երբ Քրիստոսի հետևորդը **ողորմություն է անում**, նա պետք է այն ծածուկ անի: Այնքան **ծածուկ**, որ Հիսուս Իր աշակերտներին ասաց. «**Թող ձախ ձեռքդ չիմանա, թե աջն ինչ է անում**»: Հիսուսը խոսքի մեջ գործածում է այս պատկերավոր դարձվածքը, որպեսզի ցույց տա, որ պետք է ողորմություն անենք **Հոր** համար և ոչ թե հոչակ ձեռք բերելու:

Այս հատվածը չպետք է օգտագործել՝ արգելելու որևէ նվեր, որ կարող են ուրիշները տեսնել, քանի որ գրեթե անհնար է բացարձակապես անանուն անել մեր բոլոր բարեգործությունները: Այն դատապարտում է ցուցարարությանը տալը:

Ի. Անկեղծորեն աղոթեք (6:5-8)

6:5. Այնուհետև Հիսուսն Իր աշակերտներին զգուշացնում է, որպեսզի **աղոթելիս** կեղծավորություն չանեն: Նրանք չպետք է հատուկ դիրք ընդունեն մարդաշատ վայրերում, որպեսզի նրանց աղոթելիս տեսնեն և տպավորվեն նրանց բարեպաշտությամբ: Եթե աղոթքի միակ շարժառիթը համբավի հանդեպ սերն է, ապա, ինչպես հայտարարում է Հիսուսը, ձեռք բերած համբավը նրանց միակ **վարձատրությունն է**:

6:6. 5-րդ և 7-րդ համարների մեջ հունարեն դերանունը, որը թարգմանված է «**դու**», դրված է հոգնակի թվով: Բայց 6-րդ համարում դրված է եզակի թվով, որպեսզի ընդգծի Աստծո հետ անձնական հաղորդակցությունը: Աղոթքի պատասխանի բանալին կայանում է այն գաղտնի տեղում անելու մեջ (այսինքն՝ **մտի՛ր քո ներքին սենյակը և դուռը փակի՛ր**): Եթե մեր իրական մղումը Աստծո կողմից լաված լինելն է, ապա Նա կլսի և կպատասխանի:

Ոմանք այս հատվածն օգտագործում են հանրային աղոթքն արգելելու համար, սակայն պետք է հիշել, որ վաղ եկեղեցին հավաքվում էր՝ միասին աղոթելու (Գործք 2:42, 12:12, 13:3, 14:2, 20:36): Կարևորն այն չէ, թե **որտեղ** ենք աղոթում: Կարևորն այն է, թե **ինչո՞ւ** ենք աղոթում. որպեսզի մարդիկ մեզ տեսնե՞ն, թե՞ Աստված մեզ լսի:

6:7. Աղոթքը չպետք է պարունակի **ավերորդ կրկնություններ**, այսինքն՝ նախադասությունների հավաքածու կամ դատարկ արտահայտություններ: Այդպես աղոթում են չհրկվածները, բայց Աստված չի տպավորվում **շատախոսությունից**: Նա ուզում է լսել սրտից բխող անկեղծ խոսքեր:

6:8. Քանի որ մեր **Հայրը գիտի, թե մեզ ինչ է պետք**, նույնիսկ **դեռ Իրենից չխընդրած**, ապա տրամաբանական է հարցնելը. «Ընդհանրապես ինչո՞ւ պիտի աղոթեմ»: Պատճառը հետևյալն է. աղոթքով մենք ընդունում ենք մեր կարիքն ու կախվածությունը Նրանից: Այն Աստծո հետ մեր հաղորդակցության հիմքն է: Նաև ի պատասխան աղոթքի՝ Աստված անում է այն, ինչը Նա այլապես չէր անի (Հակ. 4:2):

I. Հիսուսը սովորեցնում է օրինակելի աղոթքը (6:9-15)

6:9. 9-13-րդ համարներում մենք ունենք այն, ինչ ընդունված է անվանել «Տերունական աղոթք»: Այդ անվանումը գործածելիս պետք է հիշել, որ Հիսուսն Ինքը երբեք չի աղոթել այս աղոթքը: Այն տրվել է Նրա աշակերտներին որպես նմուշ, որ կարող էր օրինակ ծառայել իրենց աղոթքներին: Այն տրված չէր հենց այդ բառերով աղոթելու նպատակով (7-րդ համարը կարծես բացառում է դա), որովհետև շատ անգիր արած բառեր կարող են վերածվել դատարկ արտահայտությունների:

«**Հայր մեր, որ երկնքում ես...**»: Աղոթքը պետք է ուղղված լինի Հայր Աստծուն՝ ընդունելով Նրա գերիշխանությունը ողջ տիեզերքի վրա:

«**Քո անունը սուրբ լինի...**»: Մեր աղոթքը պետք է սկսենք երկրպագության հոգով փառք և պատիվ վերագրելով Նրան, Ով այդքան արժանի է դրան:

6:10. «**Քո թագավորությունը գա...**»: Երկրպագությունից հետո պետք է խընդրենք, որ Աստծո գործն ընդարձակվի՝ առաջին տեղում դնելով Նրա շահերը: Հատկապես պետք է աղոթենք այն օրվա համար, երբ մեր Փրկիչ-Աստվածը՝ Տեր Հիսուս Քրիստոսը, երկրի վրա կհաստատի Իր Թա-

գավորությունը և արդարությամբ կթագավորի:

«**Քո կամքը լինի...**»: Այս խնդրանքով ընդունում ենք, որ Աստված գիտի, թե ինչն է լավագույնը մեզ համար, և որ մենք հանձնում ենք մեր կամքը Իր կամքին: Այստեղ նաև ցանկություն կա, որ Նրա կամքն ընդունեն ամբողջ աշխարհում:

«**Ինչպես երկնքում՝ այնպես էլ երկրի վրա...**»: Այս արտահայտությունը փոփոխում է նախորդ երեք խնդրանքները: Աստծուն նվիրված պաշտամունքը, գերիշխան Աստծո կառավարումը և Նրա **կամքի** կատարումն ամբողջ **երկնքում** իրականություն է: Այս աղոթքն այն մասին է, որ այդ բոլորն իրականություն դառնա նաև **երկրի վրա, ինչպես երկնքում է**:

6:11. «**Մեր ամենօրյա հացը տո՛ւր մեզ այսօր...**»: Այն բանից հետո, երբ առաջնային ենք համարում Աստծո նպատակները, մեզ թույլատրվում է ներկայացնել մեր անձնական կարիքները: Այդ խնդրանքն արտահայտում է մեր ամենօրյա կախվածությունն Աստծուց, ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր կերակուրի համար:

6:12. «**Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես մենք էլ ներում ենք մեր պարտապաններին...**»: Այստեղ չի խոսվում մեղքի հատուցման դեմ իրավական ներման մասին (այդպիսի ներումը ձեռք է բերվում Աստծո Որդուն հավատալով): Ավելի շուտ, այստեղ խոսվում է ծնողական ներման մասին, որն անհրաժեշտ է մեզ, եթե ուզում ենք պահպանել մեր փոխհարաբերությունը Երկնավոր Հոր հետ: Եթե հավատացյալները չեն ուզում ներել իրենց վիրավորողներին, ինչպե՞ս կարող են հաղորդակցություն ակնկալել Երկնային Հոր հետ, Ով ձրիաբար ներեց իրենց մեղքերը:

6:13. «**Եվ մեզ փորձության մի տանի՛ր ...**»: Կարող է թվալ, որ այս խնդրանքը հակասում է Հակ. 1:13-ին, որտեղ ասվում է, որ Աստված երբեք որևէ մեկին չի փորձում: Սակայն Աստված թույլ է տալիս, որ Իր ժողովուրդը լինի փորձված և փորձվի: Այս խնդրանքն արտահայտում է առողջ անվրստահություն՝ սեփական կարողություն-

ներով դիմակայելու փորձություններին կամ կանգուն մնալու՝ փորձությունների մեջ: Այն ամբողջովին Տիրոջից է կառչում պահպանության համար:

«**Հապա չարից մեզ ազատիր...**»: Մա բոլոր նրանց աղոթքն է, ովքեր սրտանց ուզում են, որ Աստված Իր գործությամբ մեղքից պահի իրենց: Մա մեր կյանքում մեղքի և սատանայի իշխանությունից ազատվելու սրտի ամենօրյա աղաղակն է:

«**Որովհետև Քոնն է՝ թագավորությունը, գորությունը և փառքը հավիտյանս: Ամեն**»: Աղոթքի վերջին նախադասությունը բացակայում է Հռոմի կաթոլիկ և առավել ժամանակակից բողոքական Աստվածաշունչներում, քանի որ այն բացակայում է նաև բազմաթիվ հնագույն ձեռագրերում: Մակայն այսպիսի փառաբանությունը հանդիսանում է աղոթքի կատարյալ ավարտ և գոյություն ունի գերակշռող ձեռագրերում:⁸ Ինչպես գրում է Ջոն Կավլինը, այն պետք է «ոչ միայն ջերմացնի մեր սրտերը՝ մղելով փառաբանելու Աստծուն..., այլև խոսի մեր սրտերին՝ հիշեցնելով, որ մեր բոլոր աղոթքները... ուրիշ հիմք չունեն, բացի Աստծուց»:

6:14-15. Այս համարները ծառայում են որպես 12-րդ համարի ծանոթագրություն: Մա աղոթքի մաս չի կազմում, այլ ավելացված է շեշտելու համար, որ հայրական ներումը, որի մասին խոսվում է 12-րդ համարում, պայմանական է:

Խ. Հիսուսը սովորեցնում է ծոմ պահել (6:16-18)

6:16. Կրոնական կեղծավորության երրորդ ձևը, որը Հիսուսը դատապարտեց, **ծոմ պահողի** տեսք ընդունելու կանխամտածված փորձն էր: Ծոմ պահելիս **կեղծավորները** իրենց **երեսները** աղճատում էին, որ հյուծված, տրտում և հոգնատանջ տեսք ունենան: Բայց Տեր Հիսուսն ասում է, որ սուրբ **ձևացնելու** փորձը ծիծաղելի է:

6:17-18. Ծշմարիտ հավատացյալը պետք է գաղտնի **ծոմ պահի՝** առանց ձևացնելու: «**Գլուխդ օծիր ու երեսդ լվա՛**», նշանակում է սովորականի պես ներկայանալ: Բա-

վական է, որ **Հայրը** գիտի, Նրա **վարձն** ավելի լավ կլինի, քան մարդկանց հավանությունը:

ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ծոմ պահել նշանակում է հեռու մնալ ֆիզիկական որևէ ախորժակ բավարարելուց: Ծոմը կարող է լինել կամավոր, ինչպես այս հատվածում, կամ հարկադրված, ինչպես Գործք 27:33-ում կամ 2 Կոր. 11:27-ում: ՆԿ-ում այն առնչվում է սզին (Մատթ. 9:14-15) և աղոթքին (Ղուկ. 2:37, Գործք 14:23): Այս հատվածներում ծոմն ուղեկցվում է աղոթքներով, ինչը հաստատում է ծոմ պահողի անկեղծությունը, որպեսզի գատորոշի Աստծո կամքը:

Փրկության հարցում ծոմապահությունն արժեք չունի և ոչ էլ Աստծո առջև հատուկ դիրք է տալիս քրիստոնյային: Մի անգամ մի փարիսեցի պարծանքով ասաց, որ շաբաթը երկու անգամ ծոմ է պահում, սակայն դա նրան իր ցանկացած արդարությունը չտվեց (Ղուկ. 18:12-14): Բայց երբ քրիստոնյան գաղտնի է ծոմ պահում՝ որպես հոգևոր վարժություն, Աստված տեսնում և վարձատրում է նրան: Թեև ՆԿ-ը չի պատվիրում ծոմ պահել, ամեն դեպքում այն **խրախուսվում** է վարձատրության խոստումով: Այն կարող է նպաստել մարդու հոգևոր կյանքին՝ հեռացնելով ձանձրույթն ու թմրությունը: Ծգնաժամային պահերին այն մեծ արժեք ունի, երբ անձն ուզում է գատորոշել Աստծո կամքը: Ծոմապահությունն անհատի և Աստծո միջև եղած հարց է և պետք է արվի միայն Նրան հանձնելու ցանկությամբ: Այն կորցնում է իր արժեքը, երբ պարտադրվում կամ դրսևորվում է սխալ շարժառիթով:

Ծ. Ձեր գանձերը երկնքում դիզեք (6:19- 21)

Այս հատվածը պարունակում է մեր Տիրոջ որոշ ամենահեղափոխական և միաժամանակ ամենից շատ անտեսված ուսմունքները: Գլխի մնացած բաժնի թեման է՝ «Ինչպես սպահովություն գտնել ապագայի համար»:

6:19-20. Այս համարներում Հիսուսը հապատում է ֆինանսական հուսալի ապագա ապահովելու բոլոր մարդկային խորհուրդներին: Երբ ասում է. **«Ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա»**, Նա մատնանշում է, որ նյութական արժեքներին վրատահելը ապահով չէ: **Երկրի վրա** ցանկացած նյութական հարստություն կարող է ոչնչանալ կամ բնական պայմաններում (**ցեց ու ժանգ**), կամ **գողերի** կողմից: Հիսուսն ասում է, որ միակ ներդրումը, որը ենթակա չէ կորստյան, **երկնքում դիզած գանձերն են:**

6:21. Այդպիսի արմատական ֆինանսական քաղաքականության հիմքում ընկած է **«որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի»** սկզբունքը: Եթե ձեր գումարները գտնվում են խնայողության տուփի մեջ, ապա այնտեղ են նաև ձեր սիրտն ու փափագները: Եթե ձեր գանձերը երկնքում են, ապա այնտեղ են նաև ձեր հետաքրքրությունները: Այս ուսուցումը մեզ ստիպում է հասկանալ, թե Հիսուսը հենց բառացի դա՛ է ասում, թե՛ ոչ: Եթե՛ այո, ապա մենք առերեսվում ենք այս հարցին. ի՞նչ ենք պատրաստվում անել մեր երկրավոր գանձերի հետ: Եթե՛ ոչ, ապա պետք է մեկ ուրիշ հարց տանք մեզ. ի՞նչ ենք պատրաստվում անել մեր Աստվածաշնչի հետ:

Կ. Մարմնի ճրագը (6:22-23)

Հիսուսը գիտակցում էր, որ Իր հետևորդների համար դժվար էր լինելու հասկանալը, թե ինչպես կարող էր գործել ապագայի ապահովության մասին Նրա ոչ ավանդական ուսուցումը: Ուստի Նա գործածեց համեմատություն մարդու **աչքի** օրինակով, որպեսզի դաս սովորեցնի հոգևոր տեսողության մասին: Նա ասաց, որ **մարմնի ճրագն աչքն է:** Աչքերի միջոցով մարմինը լուսավորություն է ստանում և կարողանում է տեսնել: Եթե **աչքը պարզ է**, ապա ամբողջ մարմինը լուսավորվում է: Եթե **աչքը չար է**, ապա տեսողությունը վատանում է. լույսի փոխարեն **խավար կլինի:**

Սրանից հետևում է, որ մաքուր աչքը պատկանում է այն մարդուն, ում խոր-

հուրդները մաքուր են, նրա միակ փափագը Աստծո շահն է, և նա պատրաստ է ընդունելու Քրիստոսի ուսմունքը տառացիորեն: Նրա ամբողջ կյանքը լույս է ճառագում: Նա հավատում է Հիսուսի խոսքերին, թողնում է երկրավոր գանձերը, իր համար գանձեր է դիզում երկնքում, և նա գիտի, որ այն իր ապահովության միակ իսկական երաշխիքն է: Մյուս կողմից՝ խավար աչքը պատկանում է մի մարդու, ով փորձում է ապրել երկու աշխարհների համար: Նա չի ուզում զրկվել իր երկրավոր գանձերից և դեռ ուզում է գանձեր ունենալ երկնքում: Քրիստոսի ուսմունքը նրա համար ոչ գործնական և անիրագործելի է: Նա չունի հրատակ առաջնորդություն, քանի որ խավարով է պատված:

Հիսուսն ավելացնում է. **«Եթե քեզանում եղած լույսը խավար է, այդ խավարն ինչքան մեծ է»:** Այլ խոսքերով, եթե դու գիտես, որ Քրիստոսն արգելում է վստահել երկրավոր գանձերին՝ որպես ապագայի երաշխիք, և տակավին վստահում ես, ապա ուսմունքը, որին դու չես հնազանդվել, դառնում է խավար՝ հոգևոր կուրության ամենախորը ձևը: Դու չես կարող տեսնել հարստությունը իր իսկական տեսանկյունից:

Հ. Դուք չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային (6:24)

Միաժամանակ և՛ Աստծո, և՛ դրամի համար ապրելու անկարելիությունն այստեղ սահմանված է **«տերեր»** և **«ստրուկներ»** արտահայտությամբ: **Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել:** Նրանցից մեկը անխուսափելիորեն կգերակայի՝ իրեն տրամադրված հավատարմությամբ և հնազանդությամբ: Այդպես է լինում **Աստծո և մամոնայի** հետ: Նրանք միմյանց հետ մրցակցող պահանջներ են ներկայացնում, ուստի պետք է ընտրություն կատարել: Կամ պետք է առաջին տեղում դնենք Աստծուն և հրաժարվենք նյութական իշխանությունից, կամ էլ պիտի ապրենք ժամանակավոր բաների համար և մերժենք Աստծո պահանջները մեր կյանքում:

Զ. Հոգ մի՛ արեք (6:25-34)

6:25. Այս հատվածում Հիսուսը հարված է հասցնում մեր կյանքը կերակուրի և հագուստի վրա կենտրոնացնելու հակումի վրա՝ կորցնելով նրա իրական իմաստը: Խնդիրը ոչ թե այն է, թե մենք ինչ ենք *այսօր* ուտելու կամ հագնելու, այլ թե ի՞նչ ենք ուտելու և հագնելու տասը տարի, քսան կամ երեսուն տարի անց: Ապագայի հանդեպ այսպիսի անհանգստությունը մեղք է, քանի որ այն հերքում է Աստծո սերը, իմաստությունն ու զորությունը: Այն հերքում է Աստծո սերը՝ ենթադրելով, որ Նա չի հոգում մեր մասին: Հերքում է Նրա իմաստությունը՝ ակնարկելով, որ Նա չգիտի, թե ինչ է անում: Եվ այն հերքում է Նրա զորությունը՝ ենթադրելով, որ Նա չի կարող հոգալ մեր կարիքները:

Այդ անհանգստության հետևանքով մեր ամբողջ էներգիան ծախսում ենք վստահ լինելու, թե արդյոք բավականաչափ կուտակե՞լ ենք մեր ողջ կյանքի համար: Եվ մինչ կհամոզվենք, մեր կյանքը կանցնի, և բաց կթողնենք գլխավոր նպատակը, որի համար ստեղծվեցինք: Աստված մեզ Իր պատկերով արարեց ավելի վեհ նպատակի համար, քան կերակուր սպառելը: Մենք այստեղ ենք գտնվում, որպեսզի սիրենք Աստծուն, երկրպագենք ու ծառայենք Նրան և Նրա շահերը ներկայացնենք երկրի վրա: Մեր մարմինները նախատեսված են մեր ծառաները լինելու, ոչ թե՛ տերերը:

6:26. Երկնքի թռչունները լուսաբանում են Աստծո հոգատարությունը Իր արարչագործության հանդեպ: Նրանք վկայում են, որ մենք հոգս անելու կարիք չունենք: Նրանք **ո՛չ ցանում են, ո՛չ հնձում**, բայց Աստված **կերակրում է նրանց**: Եվ քանի որ Աստծո ստորակարգության մեջ մարդը համարվում է **ավելի արժեքավոր** ստեղծագործություն, քան թռչունները, ապա կարող ենք վստահաբար ակնկալել, որ Աստված կհոգա մեր կարիքները:

Բայց սրանից չպետք է ենթադրենք, որ մեր կարիքները հոգալու համար մենք կարիք չունենք աշխատելու: Պողոսը հիշեցնում է մեզ. «... Ով չաշխատի, թող չուտի»

(2 Թեա. 3:10): Չպետք է նաև եզրակացնենք, թե սխալ է, որ հողագործը ցանում է, հնձում է և բերք է հավաքում: Այդ աշխատանքները նրա ամենօրյա կարիքներն ապահովելու անհրաժեշտ մասն են: Ինչը Հիսուսը արգելում է այստեղ, վերաբերում է շտեմարաններ ընդլայնելուն, ապագայի համար Աստծուց անկախությունն ապահովելուն (սովորություն, որը Նա դատապարտում է հարուստ մարդու մասին Իր առակում, Ղուկ. 12:16-21): «Մուրքորության միակիորում ամենօրյա նշումներ»-ը համառոտ ամփոփում են 26-րդ համարը.

«Փաստարկն այսպիսին է. եթե Աստված կերակրում է ցածր կարգի արարածներին առանց նրանց գիտակցական մասնակցության, ապա որքան ավելի կկերակրի իրենց մասնակցությամբ նրանց, ում համար աշխարհն է ստեղծել»:

6:27. Ապագայի մասին հոգս անելը ոչ միայն անպատվություն է Աստծուն, այլև անօգուտ է: Տերը սա ներկայացնում է հարցով. «**Ձեզանից ո՞վ կարող է հոգս անելով՝ մեկ կանգուն ավելացնել իր հասակի վրա**»: Կարճահասակ մարդը հոգս անելով չի կարող քառասունուրթ սանտիմետրից ավելի բարձրահասակ դառնալ: Եվ համեմատաբար ավելի հեշտ է դա անելը, քան հոգս անելով ապագայի կարիքները հոգալ փորձելը:

6:28-30. Այնուհետև Տերը խոսում է այն մասին, թե ինչ մեծ անխոհեմություն է անհանգստանալ ապագայում բավարար **հագուստ** չունենալու համար: **Դաշտի շուշանները** (հավանաբար վայրի հողմածաղիկները) ո՛չ աշխատում են և ո՛չ էլ մանում, այնուամենայնիվ, նրանց գեղեցկությունը գերազանցում է Մողոմոնի թագավորական հանդերձների գեղեցկությանը: Եթե Աստված կարող է ապահովել այդպիսի շքեղ հագուստ դաշտի շուշանների համար, որոնք շատ կարճ են ապրում, այնուհետև դրանք օգտագործում են որպես վառելանյութ **վառարանի** համար, ապա անշուշտ Նա հոգալու է Իր ժողովրդի համար, ովքեր պաշտում ու ծառայում են Իրեն:

6:31-32. Այսպիսով, մենք չպետք է վառնենք մեր կյանքը մտահոգությամբ՝ ընկնելով ապագայի ուտելիքի, խմելիքի և հագուստի հետևից: Դարձի չեկած **հեթանոսները** ապրում են նյութական բարիքների անխմաստ կուտակման համար, ասես նրանց ողջ կյանքն իմաստավորված է ուտելիքի և հագուստի մեջ: Բայց քրիստոնյաների համար, ովքեր **Երկնավոր Հայր** ունեն, Ով **գիտի** իրենց հիմնական կարիքները, այդպես չէ:

Եթե քրիստոնյաներն իրենց ապագա բոլոր կարիքների համար պաշար հավաքելու նպատակ ունենային, ապա նրանց ժամանակը և էներգիան նվիրված կլինեին ֆինանսական պաշարներ կուտակելուն: Նրանք երբեք չէին կարող վստահ լինել, թե բավարար են կուտակել, որովհետև միշտ էլ կա գների անկման վտանգը, գնաճը, աղետները, երկարատև հիվանդությունները, անդամալուծվելու դժբախտ պատահարները: Սա կնշանակեր, որ Աստված գրկված կլինեին Իր ժողովրդի ծառայությունից: Իրական նպատակը, որի համար նրանք արարվել ու դարձի են եկել, կանտեսվեր: Այդ ժամանակ Աստծո պատկերով ստեղծված տղամարդիկ և կանայք այս երկրի վրա կապրեին անորոշ ապագայի համար, մինչդեռ նրանք պետք է ապրեն ի մտք ունենալով հավիտենական արժեքները:

6:33. Ուստի Տերը Իր հետևորդների հետ ուխտ է կապում, և ասում է. «Եթե քո կյանքում Աստծո շահերն առաջին տեղում դնես, Ես երաշխավորում եմ, որ կհոգամ քո ապագա կարիքների մասին: Եթե դու **նախ փնտրես Աստծո Թագավորությունը և Նրա արդարությունը**, Ես կհոգամ, որ կենսական կարիքներդ երբեք անբավարարված չլինեն»:

6:34. Սա Աստծո «սոցիալական ապահովագրության» ծրագիրն է: Հավատացյալի պարտականությունն է ապրել Տիրոջ համար, աներեր վստահությամբ ապավինել Աստծուն, որ Նա կհոգա ապագայի մասին: Աշխատանքը պարզապես ընթացիկ կարիքները լրացնելու միջոց է. այն ամենը, ինչ սրանից առավել է, ներդրվում է Տիրոջ գոր-

ծի մեջ: Մենք կանչված ենք՝ ապրելու մեկ օրվա հաշվարկով. **վաղվա օրն ինքն իր մասին կհոգա:**

Ղ. Մի՛ դատեք (7:1-16)

Երկրավոր բարիքների մասին պրովոկացիոն ուսուցմանը անմիջապես հետևում է դատելու մասին այս հատվածը: Այս երկու թեմաների միջև եղած կապը կարևոր է: Քրիստոնյան, ով թողել է ամեն բան, հեշտորեն է քննադատում հարուստ քրիստոնյաներին: Եվ ընդհակառակը, քրիստոնյաները, ովքեր լրջորեն են ընդունում իրենց ընտանիքների ապագա կարիքներն ապահովելու իրենց պարտականությունը, հակված են բառացիորեն ինչ-որ տեղ նվազեցնել Տեր Հիսուսի խոսքերը, որոնք նշված են 6-րդ գլխում: Քանի որ ոչ ոք լիարժեք հավատով չի ապրում, նման քննադատությունը անհիմն է:

Ուրիշներին չդատելու այս պատվերն իր մեջ ներառում է հետևյալ մտքերը. մենք չպետք է դատենք ուրիշի շարժառիթները. միայն Աստված կարող է դրանք կարդալ: Մենք չպետք է դատենք ուրիշի արտաքին երևույթը (Հովի. 7:24, Հակ. 2:1-4): Մենք չպետք է դատենք նրանց, ում խղճմտանքը անհանգիստ է որոշ հարցերի շուրջ, որոնց մասին հստակ գրված չէ՝ ճիշտ են, թե՞ ոչ (Հռ. 14:1-5): Մենք չպետք է դատենք ուրիշ քրիստոնյայի ծառայությունը (1 Կոր. 4:1-5): Մենք չպետք է դատենք հավատակցին՝ բամբասելով նրա մասին (Հակ. 4:11-12):

7:1. Երբեմն մեր Տիրոջ այս խոսքերը սրբալի են մեկնաբանում, որպեսզի արգելեն դատելու բոլոր ձևերը: Անկախ իրավիճակից՝ նրանք բարեպաշտորեն ասում են. «**Մի՛ դատեք, որ չդատվեք**»: Բայց Հիսուսը մեզ չի սովորեցնում այնպիսի քրիստոնյաներ լինել, որ չունեն զանազանելու ունակություն: Նա երբեք նկատի չունեի, որ մենք պետք է հրաժարվենք քննադատելու իրավունքից կամ իրավիճակը հասկանալու ունակությունից: ՆԿ-ում կան վարքագծի մասին իրավական վճիռների, վիճակի կամ ուրիշների ուսմունքի մասին բազմաթիվ լուսաբանումներ: Բացի այդ՝ կան մի

քանի ոլորտներ, որտեղ քրիստոնյային պատվիրված է որոշումներ կայացնել, գատորոշել բարին և չարը, կամ լավը և լավագույնը: Ահա դրանցից մի քանիսը.

1. Երբ հավատացյալների միջև առաջանում են վիճելի հարցեր, դրանք պետք է ներկայացվեն եկեղեցու անդամների քննարկմանը, ովքեր կարող են լուծել դրանք (1 Կոր. 6:1-8):
2. Տեղական եկեղեցին պետք է դատի իր անդամների լուրջ մեղքերը և համապատասխան միջոցներ ձեռնարկի (1 Կոր. 5:9-13, Մատթ. 18:17):
3. Հավատացյալները պետք է դատեն ուսուցիչների և քարոզիչների վարդապետական ուսուցումը Աստծո Խոսքով (Մատթ. 7:15-20, 1 Կոր. 14:29, 1 Հովհ. 4:1):
4. Քրիստոնյաները պետք է զանազանեն հավատացյալին անհավատից, որպեսզի կատարեն 2 Կոր. 6:14-ի Պողոսի պատվերը:
5. Եկեղեցու անդամները պետք է նկատեն, թե ովքեր ունեն երեցներին և սարկավագներին անհրաժեշտ հատկանիշներ (1 Տիմ. 3:1-13):
6. Մենք պետք է զանազանենք անկարգներին, երկչոտներին, թույլերին և այլոց և նրանց հետ վարվենք այնպես, ինչպես այդ մասին գրված է Աստվածաշնչում (օր.՝ 1 Թեա. 5:14):

7:2. Հիսուս Քրիստոսը նախագուշացրեց, որ անարդար դատին արձագանքում են անարդար դատով. **«Որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք»:** Ինչ ցանես, այն կինձես. այս սկզբունքով է կառուցված ողջ կյանքը և մարդկանց փոխհարաբերությունները: Մարկոսն այս սկզբունքը գործադրում է՝ բացատրելու, թե մենք ինչպես ենք Խոսքը յուրացնում (4:24), իսկ Ղուկասի մոտ այն վերաբերում է նվիրատվության չափի մեջ մեր ազատությանը (6:38):

7:3-5. Հիսուսը բացահայտում է ուրիշների փոքր սխալները տեսնելու մեր հակու-

մը՝ միաժամանակ անտեսելով նույն սխալները մեր մեջ: Նա միտումնավոր ուռճացնում է իրավիճակը՝ գործածելով խոսքային միջոց, որը կոչվում է չափազանցություն, որպեսզի պատահածի բուն միտքը հասցնի գիտակցությանը: Իր **աչքի մեջ գերան** ունեցողը հաճախ մեղադրում է մեկ ուրիշին աչքի միջի **շուռի** համար՝ չնկատելով սեփական թերությունը: Երբ կարծում ենք, թե կարող ենք օգնել թերություն ունեցող մարդուն, երբ մեր թերություններն ավելի շատ են, ապա դա պարզապես կեղծավորություն է: Նախքան դրանք քննադատելը ուրիշների մեջ՝ մենք վերացնենք մեր սեփական սխալները:

7:6. 6-րդ համարը ապացուցում է, որ Հիսուսը չէր արգելում դատաստանի *ցանկացած* ձև: Նա Իր աշակերտներին զգուշացրեց, որ սուրբ բանը **չտան շներին և մարգարիտները խոզերի առջև չնետեն:** Մովսեսի օրենքի համաձայն՝ շները և խոզերը անմաքուր կենդանիներ են, և այս եզրույթները այստեղ օգտագործվել են ամբարիշտ մարդկանց ներկայացնելու համար: Եթե հանդիպում ենք չար մարդկանց, ովքեր սուրբ ճշմարտությունների հանդեպ բացահայտ արհամարհանք են ցուցաբերում և Քրիստոսի պահանջների մասին մեր քարոզչությանը պատասխանում են հայհոյանքով ու վիրավորելով, ապա մենք պարտավոր չենք շարունակել նրանց քարոզել: Ճնշում գործադրելը կարող է էլ ավելի մեծ դատապարտություն բերել վիրավորանք հասցնողին:

Ավելորդ է ասել, որ նման մարդկանց ճանաչելու համար պետք է հոգևոր խորաթափանցություն ունենալ: Թերևս այդ է պատճառը, որ հաջորդ համարները խոսում են աղոթքի մասին, որի միջոցով կարող ենք իմաստություն խնդրել:

Ճ. Խնդրեցե՛ք, փնտրեցե՛ք, բախեցե՛ք (7:7-8)

7:7-8. Եթե կարծում ենք, որ կարող ենք մեր ուժերով ապրել ըստ Լեռան քարոզի ուսմունքի, նշանակում է չենք հասկացել այդ կյանքի գերբնական բնույթը, որին

Փրկիչը մեզ կանչում է: Այդպիսի կյանքի համար իմաստություն ու գործություն պետք է վերևից տրվի: Ուստի Հիսուսն այստեղ հրավիրում է մեզ **խնդրել** և շարունակ խնդրել, **փնտրել** և շարունակ փնտրել, **բախել** և շարունակ բախել: Իմաստությունը և գործությունը, որոնք անհրաժեշտ են քրիստոնեական կյանքում, տրվում են բոլոր նրանց, ովքեր անկեղծորեն և ջանասիրաբար աղոթում են դրանց համար:

Եթե 7-8-րդ համարները դուրս հանենք համատեքստից, ապա հավատացյալի համար դրանք նման են չլրացված չեկի, այսինքն՝ ի պատասխան մեր ջանասիրաբար աղոթքի՝ մենք կարող ենք ստանալ ամեն բան, ինչ-որ խնդրենք: Բայց դա պարզապես անհավանական է: Այս համարները պետք է հասկանալ իրենց անմիջական համատեքստում և աղոթքի մասին աստվածաշնչյան ամբողջ ուսուցման լույսի ներքո: Ուստի թվացյալ անսահմանափակ խոստումները, որ տրված են այստեղ, իրականում սահմանափակվում են սուրբգրային այլ հատվածներով: Օրինակ՝ Մադնոս 66:18-ից իմանում ենք, որ աղոթող մարդը չպետք է չխոստովանված մեղք ունենա: Քրիստոնյան պետք է հավատով աղոթի (Հակ. 1:6-8) և Աստծո կամքի համեմատ (1 Հովհ. 5:14): Աղոթքը պետք է լինի հարատև (Ղուկ. 18:1-8) և անկեղծ (Եբր. 10:22ա):

7:9-10. Երբ աղոթքի պայմանները բավարարված են, ապա քրիստոնյան կարող է բացարձակ վստահություն ունենալ, որ Աստված կլիս ու կպատասխանի իրեն: Այդ վստահությունը հիմնավորված է մեր Հոր՝ Աստծո բնույթով: Մարդկայնորեն դատելով՝ գիտենք, որ եթե **զավակը հաց ուզի**, նրա հայրը **քար չի տա նրան**, ո՛չ էլ **օձ կտա**, եթե նա **ծուկ** ուզի: Երկրավոր հայրը ոչ միայն չի խաբի իր զավակին, այլև նրան չի տա այն, ինչը կարող է վնասել:

7:11. Տերը հիմնավորում է սկսած փոքրագույնից մինչև ավելի մեծը: Եթե երկրավոր ծնողներն իրենց զավակների խնդրանքով տալիս են այն, ինչ լավագույնն է նրանց

համար, **որքան ավելի մեր Հայրը, որ Երկրնքում է**, այդպես կանի:

7:12. 12-րդ համարի անմիջական կապը նախորդի հետ հետևյալ ձևով է ներկայացվում. քանի որ մեր Հայրը մեզ բարիքներ է տալիս, ապա մենք Նրան նմանվելով պետք է բարիք անենք ուրիշներին: Արդյոք ուրիշների համար մեր արածը օգուտ տալի՞ս է, թե՛ ոչ, կիմանանք այն դեպքում, եթե ուզենք, որ մեզ հետ էլ նույն ձևով վարվեն:

Ռաբբի Հիլելը բացասական առումով է արտահայտվել «Ոսկե կանոնի» մասին այս ժամանակից առնվազն հարյուր տարի առաջ: Այնուամենայնիվ, հաստատելով դրական եզրույթաբանության այս կանոնը՝ Հիսուսը շրջանցում է պասսիվ սահմանափակումը և գնում ակտիվ առատաձեռնության: Քրիստոնեությունը ոչ թե պարզապես ժուժկալություն է մեղքի նկատմամբ, այլ ակտիվ բարերարություն է:

Հիսուսն ասում է, **որ այս է Օրենքը և Մարգարեները**, այսինքն՝ ամփոփում է Մովսեսի **օրենքի** բարոյական ուսմունքը և Իսրայելի **մարգարեներին**: ՆԿ-ի պահանջած արդարությունն իրագործվում է դարձի եկած հավատացյալների մեջ, ովքեր քայլում են Հոգով (Հռ. 8:4): Եթե ամբողջ աշխարհն այս օրենքին ենթարկվեր, այն կփոխեր միջազգային փոխհարաբերությունները, ազգային քաղաքականությունները, եկեղեցական և ընտանեկան կյանքը:

Մ. Նեղ ճամփան (7:13-14)

Այնուհետև Տերն զգուշացնում է, որ քրիստոնեական աշակերտության **դարպասը նեղ է և ճամփան նեղվածք է**:⁹ Բայց ովքեր հավատարմորեն հետևում են Նրա ուսմունքին, **առատ կյանք** են գտնում: Մյուս կողմում **լայն դուռն** է՝ հանույքներով և ինքնաբավարարումով լի կյանքը: Այդպիսի կյանքի ավարտը **կորուստ է**: Այստեղ խոսքը հոգու կորստյան մասին չէ, այլ կյանքի նպատակն ապրելու անկարողության, կյանքը վատնելու մասին է:

Այս համարները գործածում են անհավատներին ավետարանելու ժամանակ՝

պատկերելով երկու ճանապարհի և մարդկային ցեղի երկու ճակատագիր: Լայն դուռը և ընդարձակ ճամփան դեպի կորուստ են տանում (Գործք 16:25): Նեղ դուռը և նեղվածք ճամփան դեպի կյանք են տանում: Տեր Հիսուսը դուռն է (Հովհ. 10:9) և ճամփան (Հովհ. 14:6): Թեև այս հատվածը տրամաբանորեն *կիրառելի է* այս դեպքում, բայց դրա բացատրությունը հավատացյալների համար է: Հիսուսն ասում է, որ Իր հետևորդներից պահանջվելու է հավատ, կարգապահություն և հարատևություն: Բայց այս **դժվար** կյանքը միակն է, որը արժի ապրել: Եթե ընտրես հեշտ ճամփան, շատ ընկերներ կունենաս, բայց կկորցնես Աստծո ընկերությունը, որը լավագույնն է քեզ համար:

3. Իրենց պտուղներից պիտի ճանաչեք նրանց (7:15-20)

7:15. Որքան էլ խիստ պահանջներ ներկայացվեն ճշմարիտ աշակերտներին, կան **սուտ մարգարեներ**, ովքեր գովազդում են լայն դուռը և ընդարձակ ճամփան: Նրանք այնքան են ջրիկացնում ճշմարտությունը, որ ինչպես ասում էր Չ. Հ. Սպերջենը. «Հիվանդ մորեխի համար ապուր եփելու բան էլ չի մնում»: Այդ մարդիկ ձևացնելով, թե խոսում են Աստծո մասին, ներկայանում են **ոչխարի հանդերձներով**, ճշմարիտ հավատացյալի կերպարով: Բայց **ներքուստ** նրանք **հափշտակող գայլեր են**, այսինքն՝ չարամիտ անհավատներ, որ որսում են անփորձներին, տատանվողներին և դյուրահավատներին:

7:16-18. Այս համարները սովորեցնում են ինչպես ճանաչել այդ սուտ մարգարեներին. **իրենց պտուղներից ճանաչե՛ք նրանց**: Նրանց մատնում է անբարո կյանքը և կործանարար ուսմունքը: Ծառը կամ բույսը արտադրում են իրենց համապատասխան **պտուղները**: **Փուշը խաղող չի տալիս, տատասկի վրա թուզ չի աճում: Բարի ծառը բարի պտուղ է տալիս, իսկ չար ծառը՝ չար պտուղ**: Այս սկզբունքը ճիշտ է թե՛ նյութական, թե՛ հոգևոր աշխարհում: Մարդիկ, ովքեր պնդում են, թե իրենք

Աստծո անունից են խոսում, նրանց կյանքը և ուսմունքը պետք է փորձվի Աստծո Խոսքով. «Եթե նրանք չխոսեն այս խոսքի համաձայն, պատճառն այն է, որ նրանք լույս չունեն» (Ես. 8:20):

7:19-20. Սուտ մարգարեների վերջը **կրակը նետվելն է**: Սուտ վարդապետների և մարգարեների բաժինն արագահաս կորուստն է (2 Գեո. 2:1): Նրանց կարելի է ճանաչել իրենց պտուղներից:

Ն. Ձեզ երբեք չեմ ճանաչել (7:21-23)

7:21. Այնուհետև Տեր Հիսուսը զգուշացնում է այն մարդկանց մասին, ովքեր ասում են, թե ճանաչում են Նրան՝ որպես իրենց Փրկչի, բայց նրանք երբեք էլ դարձ չեն ունեցել: **Ոչ թե ամեն ոք**, ով Հիսուսին «Տեր, Տեր» է ասում, **պիտի մտնի երկրնքի թագավորությունը**: Միայն Աստծո կամքը կատարողները կմտնեն Թագավորություն: Աստծո **կամքը** կատարելու առաջին քայլը Տեր Հիսուսին հավատալն է (Հովհ. 6:29):

7:22-23. Դատաստանի **օրը**, երբ անհավատները կանգնեն Հիսուս Քրիստոսի առջև (Հայտ. 20:11-15), **շատերը** Նրան կհիշեցնեն, որ իրենք **մարգարեացել են** կամ **ղևեր են հանել**, կամ **շատ գորավոր գործեր են կատարել**, և այդ ամենը նրանք արել են Նրա **անունով**: Բայց նրանց բողոքը ապարդյուն կանցնի: Հիսուսը **նրանց հայտնապես** պիտի ասի, որ **երբեք նրանց չի ճանաչել** կամ Իրենը չի համարել:

Այս համարներից իմանում ենք, որ ոչ բոլոր հրաշքներն ունեն աստվածային ծագում և ոչ ամենքը, ովքեր հրաշքներ են անում, լիազորված են Աստծո կողմից: Հրաշք նշանակում է, որ գործում է գերբնական ուժը: Այդ ուժը կարող է լինել աստվածային կամ սատանայական: Սատանան կարող է իր գործակիցներին գորացնել դևերին *ժամանակավորապես* հանելու համար, որպեսզի պատրանք ստեղծի, թե այդ հրաշքն աստվածային է: Այս դեպքում նա չի բաժանում իր թագավորությունը, այլ ծրագրում է դևերի ավելի վատ դավադրություն սպագայի համար:

Ծ. Կառուցել ժայռի վրա (7:24-29)

7:24-25. Հիսուսն ավարտում է Իր քարոզը մի առակով, որը շեշտում է հնազանդության կարևորությունը: Բավարար չէ միայն **լսել խոսքերը**, մենք պետք է կատարենք դրանք կյանքում: Աշակերտը, ով **լսում և կատարում է** Հիսուսի պատվիրանները, նմանվում է **մի իմաստուն մարդու, ով իր տունը շինեց ժայռի վրա**: Նրա տունը (կյանքը) ամուր հիմք ունի, և երբ **անձրևներն ու քամիները** հարվածեն նրան, այն **չի կործանվի**:

7:26-27. Նա ով **լսում է** Հիսուսի **խոսքերը** և **չի կատարում** դրանք, **նմանվում է մի անխելք մարդու, որ իր տունը շինել է ավազի վրա**: Այդպիսի մարդը չի կարող դիմակայել աղետաբեր փոթորիկներին. երբ **անձրևն իջնի**, և **քամիները փչեն**, տունը **կընկնի**, որովհետև ամուր հիմք չունի:

Երբ մեկը Լեռան քարոզի սկզբունքներով է ապրում, աշխարհը նրան անմիտի տեղ է դնում, իսկ Հիսուսն ասում է, որ նա **իմաստուն է**: Աշխարհն իմաստուն է համարում նրան, ով ապրում է իր աչքի տեսածով, ով ապրում է ներկայով և իր համար: Հիսուսն այդպիսի մարդուն անվանում է անխելք: Անխելք է իմաստուն կառուցողների օրինակը նպատակահարմար է կիրառել Ավետարանի լուսաբանման համար: Իմաստուն մարդն իր ամբողջ վստահությունը դնում է Ժայռի՝ Հիսուս Քրիստոսի, Տիրոջ և Փրկչի վրա: Անխելք մարդը հրաժարվում է ապաշխարությունից և մերժում է Հիսուսին՝ որպես իր փրկության միակ հույսին: Բայց առակի մեկնաբանությունը, ըստ էության, մեզ տանում է փրկությունից ավելի հեռու՝ գործնական իրագործմանը քրիստոնեական կյանքում:

7:28-29. Երբ մեր Տերը **վերջացրեց** Իր խոսքերը, **մարդիկ զարմանում էին**: Երբ կարդում ենք Լեռան քարոզը և չենք զարմանում դրա փոխակերպող բնույթի վրա, նշանակում է չենք հասկացել դրա իմաստը:

Մարդիկ հասկացել էին Հիսուսի և դպիրների վարդապետության տարբերությունը: Նա իշխանություն ունեցողի պես էր խո-

սում, իսկ դպիրների խոսքերը գորություն չունեին: Նա ձայնն էր, իսկ նրանք՝ արձագանքը: Չեմիսոնը, Փոսեթը և Բռաունը մեկնաբանում են.

«Օրենսդրի, Մեկնաբանողի և Դատավորի աստվածային իշխանության գիտակցությունը, այնպես էր շողարձակում Նրա ուսուցումից, որ դպիրների ուսմունքն այդպիսի լույսի ներքո կարող էր թվալ լոկ դատարկ խոսակցություն»:¹⁰

V. ՄԵՍԻԱՅԻ ԿԱՏԱՐԱԾ ՇՆՈՐՀԻ ԵՎ ՉՈՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ, ԳՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՐԲԵՐ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ (8:1 - 9:34)

8-12-րդ գլուխներում Տեր Հիսուսը Իսրայել ժողովրդին ներկայացնում է համոզիչ ապացույցներ, որ Ինքն իսկապես Մեսիան է, ում մասին գրում էին մարգարեները. օրինակ՝ Եսային մարգարեացել էր, որ Մեսիան բացելու է կույրերի աչքերը, խուլերի ականջները, բժշկելու է կաղերին, համրերին օրհներգել է տալու (35:5-6): Կատարելով այդ բոլոր մարգարեությունները՝ Հիսուսն ապացուցեց, որ Ինքը Մեսիան է: Իսրայելը, ըստ իր սուրբգրությունների, Նրան՝ որպես Քրիստոս ճանաչելու ոչ մի դժվարություն չպետք է ունենար: Ոչ ոք այնքան կույր չէ, որքան նա, ով չի ուզում տեսնել:

Այս գլուխներում գրի առնված իրադարձությունները ներկայացված են ըստ թեմատիկ սխեմայի և ոչ թե խիստ ժամանակագրական կարգի: Սա Տիրոջ ծառայության ամբողջական ցանկը չէ, այլ իրադարձությունների գրվածքը, որոնք Սուրբ Հոգու կողմից են ընտրվել, որպեսզի նկարագրեն Փրկչի կյանքի որոշակի գլխավոր ուղղությունները: Այս նկարագրությունների մեջ ներառված են հետևյալ պահերը.

1. Քրիստոսի բացարձակ իշխանությունը հիվանդությունների, դևերի, մահի և բնության ուժերի վրա:
2. Նրա բացարձակ տիրակալության պահանջը նրանց կյանքում, ովքեր հետևելու են Իրեն:

3. Հիսուսի հանդեպ աճող մերժումը հրեա ժողովրդի, հատկապես կրոնական առաջնորդների կողմից:
4. Անհատ հեթանոսների՝ Զրիստոսին ընդունելու պատրաստակամությունը:

Ա. Իշխանություն բորոտության վրա (8:1-4)

8:1. Թեև Հիսուսի ուսուցումն արմատական և արտասովոր էր, այն ուներ մի այնպիսի ձգողական ուժ, որ **մեծ բազմություններ գնացին Նրա հետևից**: Ճշմարտությունն ինքնահաստատվում է, ու թեև այն կարող է դուր չգալ մարդկանց, բայց նրանք այն երբեք չեն մոռանա:

8:2. Բորոտը երկրպագեց Հիսուսին բուժվելու հուսահատ խնդրանքով: Նա հավատում էր, որ Տերը կարող է իրեն բժշկել, իսկ ճշմարիտ հավատը երբեք չի հիասթափվում: Բորոտությունը մեղքի համապատասխան պատկերն է, քանի որ այն զգվելի, կործանարար, վարակիչ հիվանդություն է, և դրա որոշ տեսակները մարդկայնորեն անբուժելի են:¹¹

8:3. Բորոտներին չի կարելի դիպչել: Նրանց հետ ֆիզիկական շփումը կարող էր վարակվելու վտանգի առջև կանգնեցնել անձին: Հրեաների համար այդպիսի շփումը մարդուն դարձնում էր ծիսականորեն անմաքուր, այսինքն՝ անպիտան պաշտամունքի մասնակցելու ազգակից իսրայելացիների հետ: Բայց երբ Հիսուսը **դիպավ բորոտին և ասաց բժշկարար խոսքերը**, անմիջապես **նրա բորոտությունը մաքրվեց**: Մեր Փրկիչը գորություն ունի մեղքից մաքրելու և մաքրված մարդուն երկրպագելու համար պիտանի դարձնելու:

8:4. Սա Մատթեոսի Ավետարանում գրանցված առաջին դեպքն է, որտեղ ասվում է, որ Տեր Հիսուսը պատվիրեց **ոչ ոքի չասել**, թե ինչպիսի հրաշք կատարվեց կամ, թե նրանք ինչ տեսան (տե՛ս նաև 9:3, 12:16, 17:9, Մարկ. 5:43, 7:36, 8:26): Նա այդպես էր վարվում հավանաբար այն գիտակցումով, որ շատերին հետաքրքրում էր միայն հռոմեական լծից ազատագրվելը, ուստի և ուզում էին Նրան Թագավոր

դարձնել: Բայց Նա գիտեր, որ Իսրայելը դեռևս չի ապաշխարել, և ժողովուրդը մերժելու է Իր հոգևոր առաջնորդությունը, և որ Ինքը նախ պետք է խաչվի:

Ըստ Մովսեսի օրենքի՝ **քահանան** նաև որպես բժիշկ էր ծառայում: Մաքրվելուց հետո, բորոտը պարտավոր էր ընծա մատուցել և ներկայանալ քահանային, որպեսզի վերջինս նրան մաքուր հռչակեր (Ղև. 14:4-6): Անկասկած, բորոտի մաքրվելը շատ հազվադեպ իրադարձություն էր, այնքան հազվադեպ, որ այդպիսի դեպքը պետք է ահագանգեր քահանային՝ հետաքննելու, թե արդյոք վերջապես Մեսիա՞ն է հայտնվել: Բայց մենք նման արձագանքի մասին չենք կարդում: Այս դեպքում Հիսուսը պատվիրեց բորոտին Օրենքը կատարել:

Հրաշքի հոգևոր իմաստը հստակ է. գորությամբ լցված Մեսիան եկել էր՝ Իսրայել ազգին բժշկելու իր հիվանդություններից: Նա ներկայացրեց այդ հրաշքը որպես Իր հավատարմագրերից մեկը: Սակայն ժողովուրդը դեռևս պատրաստ չէր իր Ազատարարին ընդունելու:

Բ. Իշխանություն անդամալուծության վրա (8:5-13)

8:5-6. Հեթանոս **հարյուրապետի** հավատը ներկայացված է որպես հրեաների անհավատության ապշեցուցիչ հակադրություն: Եթե Իսրայելը չի ընդունում Իր Թագավորին, ապա անարգված հեթանոսներն այդ կանեն: Հարյուրապետը հռոմեական բանակի սպա էր, ում ենթակայության տակ էին գտնվում մոտավորապես հարյուր տղամարդ: Նա ապրում էր Կափառնայում ու կամ էլ նրա շրջակայքում: Նա **մոտեցավ Հիսուսին՝ իր ծառայի** համար բժշկություն փնտրելով, որ չարաչար տառապում էր անդամալուծությունից: Սա գթասրտության ոչ սովորական դրսևորում էր: Ոչ շատ պաշտոնյաներ այսպիսի կարեկցանք կցուցաբերեին իրենց ծառայի հանդեպ:

8:7-9. Երբ Տեր Հիսուսը առաջարկեց այցելել հիվանդ ծառային, **հարյուրապետը** ցույց տվեց իր հավատի ամբողջ իրականությունը և խորությունը: Նա ասաց.

«**Ես արժանի չեմ Քեզ իմ հարկի տակ ընդունելու:** Մա պարտադիր չէ, քանի որ Դու կարող ես հեշտությամբ բժշկել նրան՝ միայն **մեկ խոսք** ասելով: Ես գիտեմ, թե ինչ է **իշխանությունը:** Ես ստանում եմ հրամաններ իմ վերադասներից և հրամաններ եմ տալիս իմ ենթակայներին: Իմ հրամանները կատարում են անվերապահորեն: Որքան ավելի Քո խոսքերը իշխանություն ունեն իմ ծառայի հիվանդության վրա»:

8:10-12. Հիսուսը **զարմացավ** այս հեթանոսի հավատի վրա: Մա մեկն է այն երկու դեպքերից, երբ ասվում է, որ Հիսուսը **զարմացավ:** Երկրորդ անգամ Նա **զարմացավ** հրեաների անհավատության վրա (Մարկ. 6:6): Նա Աստծո ընտրյալ ժողովրդի՝ **Իսրայելի մեջ այսպիսի մեծ հավատ չգտավ:** Մա դրդեց Նրան՝ մատնանշելու, որ հեթանոսները կհավաքվեն երկրի բոլոր ծագերից Իր գալիք Թագավորության մեջ, որպեսզի վայելեն հրեա նահապետների ընկերակցությունը, **իսկ թագավորության որդիները պիտի նետվեն դուրս՝ դրսի խավարի մեջ, ուր կլինի լաց և առամների կրճատում:** **Թագավորության որդիները,** նրանք են, ովքեր ծնունդով հրեա են եղել, ընդունել են Աստծուն՝ որպես իրենց Թագավորի, բայց երբեք ճշմարտապես դարձի չեն եկել: Այս սկզբունքը գործում է նաև այսօր: Շատ երեխաներ, քրիստոնեական ընտանիքներում ծնվելու և դաստիարակվելու առանձնաշնորհումն ունենալով, կտանջվեն դժոխքում, քանի որ մերժում են Քրիստոսին, իսկ ջունգլիների վայրենիները կվայելեն երկնային **հավիտենական փառքը**, քանի որ հավատացին Ավետարանի լուրին:

8:13. Հիսուսը **հարյուրապետին ասաց.** «**Քո ճամփան գնա և ինչպես հավատացիր, թող այնպես լինի քեզ:**» Հավատը պարզևատրվում է ըստ մեր՝ Աստծո հատկանիշների վրա ունեցած վստահության: Նույն ժամին **ժառանգ բուժվեց**, թեև հեռավորությունը Հիսուսին բաժանում էր նրանից: Այս պատկերի մեջ մենք կարող ենք տեսնել Մեսիա Քրիստոսին. ոչ արտոնյալ հեթանոսի մեղքի անդամալուծությունից

բժշկելիս, թեև Նա Ինքը ֆիզիկապես այնտեղ ներկա չէր:

Գ. Իշխանություն տենդի վրա (8:14-15)

Պետրոսի տունը մտնելով Հիսուսը տեսավ նրա գորանչին՝ **ջերմության մեջ պառկած:** Նա **դիպավ նրա ձեռքին, և ջերմը թողեց նրան:** Սովորաբար տենդը խիստ թուլացնում է մարդուն, բայց այս բուժումն այնքան ակնթարթային և լիարժեք էր, որ կինը կարողացավ վեր կենալ անկողնուց և **ժառայություն** անել: Դա երախտագիտության պատշաճ արտահայտություն էր Փրկչի հանդեպ: Մենք պետք է ընդօրինակենք նրան, երբ բժշկվում ենք՝ ծառայելով Աստծուն նոր նվիրումով և ավյունով:

Դ. Իշխանություն դևերի և տարբեր հիվանդությունների վրա (8:16-17)

Երեկոյան, երբ շաբաթ օրը մոտեցավ իր ավարտին (տե՛ս Մարկ. 1:21-34), մարդիկ հավաքվեցին Նրա մոտ՝ բերելով **շատ** դիվահարներ: Այս խեղճ մարդկանց մեջ բնակվում էին դևեր, որոնք իրենց հսկողության տակ էին պահում նրանց: Հաճախ նրանք ցուցադրում էին գերմարդկային գիտելիքներ և ուժ, այլ դեպքերում տանջում էին նրանց: Երբեմն նրանց վարքագիծը նման էր խելագարների, բայց դրանց պատճառը դիվային էր, ոչ թե ֆիզիկական կամ հոգեկան: Հիսուսը **խոսքով հանեց չար ոգիներին:**

Նա նաև **բժշկեց բոլոր հիվանդներին՝** կատարելով Եսայու մարգարեությունը (53:4). «**Նա մեր ցավերը վերցրեց ու մեր վշտերը Իր վրա կրեց:**» Հավատով բժշկողները հաճախ գործածում են 17-րդ համարը՝ ապացուցելու, որ բժշկությունը քավչարար գործի արդյունքն է, և ուստի ֆիզիկական բժշկությունը մի բան է, որ հավատացյալը կարող է հոչակել և ունենալ: Բայց այստեղ Սուրբ Հոգին այս մարգարեությունը կիրառում է մեր Փրկչի երկրային բուժիչ ծառայության և ոչ թե խաչի վրա կատարած Նրա գործի համար:

Այսպիսով, այս գլխում մենք տեսնում ենք հետևյալ չորս հրաշքները.

1. Բորոտ հրեայի բժշկումը Քրիստոսի ներկայությամբ:
2. Հարյուրապետի ծառայի բժշկումը հեռավորության վրա:
3. Պետրոսի գոքանչի բժշկումը, երբ Հիսուսն այդ տանն էր:
4. Բոլոր դիվահարների և հիվանդների բժշկումը Հիսուսի ներկայությամբ:

Գաբելինը ենթադրում է, որ դրանք մարմնավորում են մեր Փրկչի ծառայության չորս փուլերը.

1. Քրիստոսն Իր առաջին գալստի ժամանակ ծառայում է Իր ժողովրդին՝ Իսրայելին:
2. Հեթանոսի բժշկումն առանց Հիսուսի ներկայության:
3. Նրա երկրորդ գալուստը, երբ Նա կմտնի տուն, կվերականգնի Իսրայելի հետ Իր հարաբերությունները և կբժշկի Միոնի հիվանդ դստերը:
4. Հազարամյա Թագավորությունը, երբ բոլոր դիվահարներն ու հիվանդները կբժշկվեն:¹²

Սա հետաքրքրաշարժ վերլուծություն է հրաշքների ուսուցման զարգացման մեջ, և այն պետք է մեր ուշադրությունը սևեռի Մուրբ Գրքում պահված իմաստային խորությունների վրա: Սակայն մենք պետք է խույս տանք այս մեթոդի չափից ավելի օգտագործումից, որպեսզի այն չվերագրենք այնպիսի համարների, որոնց այն բոլորովին չի համապատասխանում:

Ե. Մարդկային մերժման հրաշքը (8:18-22)

Մենք տեսանք, թե ինչպես Քրիստոսը ցուցադրեց Իր իշխանությունը հիվանդությունների և դևերի վրա: Եվ միայն տղամարդկանց և կանանց հետ շփվելիս Նա հանդիպում էր դիմադրության՝ մարդկային մերժման հրաշքին:

8:18-20. Երբ **Հիսուսը** պատրաստվեց անցնելու Գալիլիայի մյուս կողմը (Կափառնայումից դեպի արևելյան ափ), մոտեցավ ինքնավստահ **դպիրը**, խոստանալով Նրա

հետևից գնալ, «ուր էլ որ գնա»: Հիսուսի պատասխանը նրան ստիպեց հաշվել դրա գինը՝ անձնուրացության կյանք. **«Աղվեսները որջեր ունեն, և երկնքի թռչունները՝ բույներ, բայց Մարդու Արդին գլուխը դնելու տեղ չունի»:** Իր հանրային ծառայությունները կատարելիս Նա չունեի սեփական տուն, սակայն կային տներ, որտեղ Նա ցանկալի հյուր էր, և սովորաբար քնելու տեղ ուներ: Նրա խոսքերի ճշմարիտ գործությունը հոգևոր է. այս աշխարհը չկարողացավ Նրան ապահովել իրական երկարատև հանգիստ: Նա գործ ուներ, որ պետք է կատարեր, և չէր կարող հանգստանալ, մինչև այն չավարտեր: Նույնը վերաբերում է նաև Նրա հետևորդներին. այս աշխարհը նրանց համար հանգստի վայր չէ կամ առնվազն չպետք է լինի:

8:21. Նրա բանիմաց հետևորդներից մեկ ուրիշը նույնպես հայտնեց Նրա հետևից գնալու իր պատրաստակամությունը, բայց նա առաջնահերթ մի խնդիր ուներ. **«Տե՛ր, թո՛ւյլ տուր ինձ, որ նախ գնամ իմ հորը թաղեն»:** Նրա հայրը մահացել էր, թե ոչ, այս դեպքում մեծ նշանակություն չունի: Հիմնական դժվարությունն արտահայտված էր հակասական խոսքերում. **«Տե՛ր, ... նախ իմ»:** Նա իր անձնականը դրեց Քրիստոսից առաջ: Հոր պատշաճ հուղարկավորության հոգսը կարևոր է, բայց այն դառնում է սխալ, երբ այսպիսի արժանապատիվ արարքը գերակայում է Փրկչի կոչին:

8:22. Հիսուսը պատասխանեց նրան ըստ էության. **«Բո առաջին պարտականությունը՝ Ինձ հետևիր, և թող հոգևորապես մեռելները թաղեն իրենց մեռելներին:** Սա կարող է անել չփրկված մարդը: Բայց գործ կա, որը կարող էս անել միայն դու: Քո կյանքի լավագույնը տո՛ւր հավիտենական բաներին: Մի՛ վատնիր այն մանրուքների վրա»: Մեզ չի ասվում, թե ինչպես արձագանքեցին այս երկու հետևորդները: Բայց շատ մեծ կասկած կա, որ նրանք թողեցին Քրիստոսին, որպեսզի հարմար տեղավորվեն աշխարհում և մնացյալ կյանքն անցկացնեն նյութականից կառչած: Մինչ նրանց դատելը՝ մեզ վրա փորձենք աշակերտությո-

յան երկու պայմանները, որոնց մասին Հիսուսը հայտարարեց այս հատվածում:

2. Իշխանություն բնության տարրերի վրա (8:23-27)

Գալիլիայի ծովը նշանավոր է անսպասելի ուժեղ փոթորիկներով, որոնց հարվածներն այն վերածում են եռացող փրփուրի: Քամիները հյուսիսից շարժվում են Հորդանանի հովտի միջով՝ արագություն հավաքելով նեղ կիրճերում: Երբ նրանք հասնում են ծովին, նավարկությունը դառնում է չափազանց վտանգավոր:

Այս անգամ Հիսուսն անցնում էր արևմուտքից դեպի արևելք: Երբ պեկոժությունն սկսվեց, **Ինքը քնած էր** նավակում: Վախեցած աշակերտները արթնացրին Նրան՝ օգնության մեծ աղաչանքով: Գովելի է, որ նրանք ճիշտ Անձին դիմեցին: Հանդիմանելով նրանց թերահավատությունը՝ Հիսուսը **սաստեց քամիներն ու ալիքները**: Երբ **մեծ խաղաղություն եղավ** աշակերտները **զարմացան**, որ նույնիսկ բնության տարրերն են հնազանդվում իրենց խոնարհ Ուղևորին: Որքան քիչ էին նրանք հասկանում, որ Արարիչը, Ով պահում է տիեզերքը, այդ օրը նրանց հետ էր նավակում:

Վաղ թե ուշ Հիսուսի բոլոր աշակերտները հանդիպում են փոթորիկների: Ժամանակ առ ժամանակ մեզ թվում է, որ ջրերը մեզ կծածկեն: Ինչ միսիթարություն է իմանալ, որ Հիսուսը մեզ հետ նավակի մեջ է: Ջրերը չեն կարող խորտակել նավակը, որի մեջ է օվկիանոսների, երկրի և երկնքի Տերը: Ոչ ոք չի կարող այնպես հանդարտեցնել մեր կյանքի փոթորիկները, ինչպես Տեր Հիսուսը:

Է. Հիսուսը բժշկում է երկու դիվահարների (8:28-34)

8:28. Գերզեասցիների երկիրը Գալիլիայի ծովի արևելյան **կողմում** էր:¹³ Երբ Հիսուսն այնտեղ հասավ, Նա հանդիպեց դիվահարների երկու արտասովոր, սաստիկ կատաղի դեպքի: Այս դիվահարներն ապրում էին քարանձավների նմանվող **զերեզմաններում** և այնքան **կատաղած** էին, որ

այդ տարածքով ճամփորդելը շատ վտանգավոր էր:

8:29-31. Երբ Հիսուսը մոտեցավ նրանց, դևերը **աղաղակեցին**. «**Մենք քեզ հետ ի՞նչ գործ ունենք, Հիսուս, Աստծո Որդի, Ժամանակից շուտ մեզ տանջելու՞ եկար**»: Նրանք գիտեին, թե ով է Հիսուսը, և որ վերջիվերջո, Նա կործանելու է իրենց: Այդ առումով նրանց աստվածաբանությունն ավելի ճիշտ էր, քան շատ ժամանակակից ազատամիտների աստվածաբանությունը: Գիտակցելով, որ Հիսուսը պատրաստվում էր իրենց դուրս հանել այդ մարդկանց միջից, դևերը Նրանից թույլտվություն խընդրեցին՝ տեղափոխվելու մոտակայքում առածող **խոզերի մեծ բուլուկի** մեջ:

8:32. Որքան էլ տարօրինակ է, Հիսուսը բավարարեց նրանց խնդրանքը: Բայց ինչո՞ւ գերիշխան Տերը պետք է համաձայնե՞ր դևերի խնդրանքի հետ: Որպեսզի հասկանանք Նրա արարքը, պետք է հիշենք երկու հանգամանք: Նախ՝ դևերը խուսափում են ոչ աննյութական վիճակից. նրանք ուզում են բնակվել մարդկանց մեջ, կամ եթե դա հնարավոր չէ, կենդանիների կամ այլ արարածների մեջ: Երկրորդ՝ դևերի նպատակը, առանց բացառության, կործանելն է: Եթե Հիսուսը պարզապես դուրս հաներ նրանց դիվահարների միջից, դևերը սպառնալիք կդառնային այդ տարածքում սպրոդ մարդկանց համար: Նրանց թույլ տալով խոզերի մեջ մտնել, Նա կանխեց դրանց մուտքը տղամարդկանց և կանանց մեջ և ուղղորդեց դրանց կործանարար ուժը կենդանիների վրա: Դրանց վերջնական կործանման ժամանակը դեռ չի եկել Տիրոջ կողմից: Տեղափոխվելուն պես **ամբողջ բուլուկը գահավիժեց դեպի ծովը**, և խեղդվեցին:

Այս միջադեպը մեզ ցույց է տալիս, որ դևերի գլխավոր նպատակը կործանելն է, և ընդգծում է այդ քանակությամբ դևերի երկու անհատների մեջ բնակվելու սարսափելի հնարավորությունը, որոնք կարողացան կործանել երկու հազար խոզ (Մարկ. 5:13):

8:33-34. Խոզարածները փախան քաղաք, որպեսզի հայտնեն կատարվածի մասին: Արդյունքում անհանգստացած բնակիչներ

րը գնացին Հիսուսի մոտ և **աղաչեցին Նրան**, որ իրենց սահմաններից հեռանա: Այդ ժամանակից ի վեր Հիսուսին միշտ քննադատում են կենդանիների անտեղի սպանդի համար և խնդրում են հեռանալ, որովհետև Նա մարդկային կյանքն ավելի թանկ է գնահատում, քան կենդանիների: Եթե այդ գերգեսացիները հրեա լինեին, ապա խոզաբուծությունը կհամարվեր Օրենքի խախտում: Բայց անկախ այն բանից նրանք հրեա էին թե ոչ, մենք դատապարտում ենք նրանց, որովհետև խոզերի բուլուկն ավելի թանկ գնահատեցին, քան երկու դիվահարների բժշկվելը:

Ը. Մեղքերը ներելու իշխանություն (9:1-8)

9:1. Գերգեսացիներից մերժվելով՝ Փրկիչը Գալիլիայի ծովով նորից անցավ և եկավ Կափառնայում, որը **Իր քաղաքն** էր դարձել Նազարեթում Իրեն սպանելու փորձից հետո (Ղուկ. 4:29-31): Հենց այստեղ Նա կատարեց Իր ամենամեծ հրաշքներից մի քանիսը:

9:2. Չորս տղամարդ Նրա մոտ եկան՝ բերելով կոշտ անկողնու մեջ (պատգարակի վրա) պատկած **անդամալույծի**: Մարկոսը մեզ բացատրում է, որ Տեր Հիսուսին լսող մարդկանց բազմության պատճառով նրանք քանդեցին այդ տան կտուրը և Հիսուսի առջև իջեցրին մահիճը (Մարկ. 2:1-12): Երբ Հիսուսը **նրանց հավատը** տեսավ, **անդամալույծին** ասաց. «**Քաջալերվի՛ր, որդյա՛կ, քո մեղքերը ներված են քեզ**»: Ուշադրություն դարձրեք, որ Նա տեսավ *նրանց* հավատը: Հավատը հուշեց այս մարդկանց Հիսուսի մոտ բերել անդամալույծին, իսկ անդամալույծը հավատաց Հիսուսի բժշկարար գործոթյանը: Մեր Տերը նախ **այդ հավատը** պարզևատրեց՝ հայտարարելով, որ **ներված են** նրա **մեղքերը**: Մեծ Բժիշկը ախտանշանները բուժելուց առաջ հեռացրեց հիվանդության պատճառը. նախ տվեց ամենամեծ օրհնությունը: Այստեղից հարց է առաջանում. երբևէ Հիսուսը բժշկե՞լ է մեկին՝ առանց փրկություն տալու նրան:

9:3-5. Երբ **դպիրներից ոմանք** լսեցին Հիսուսի հռչակումը, թե ներում է այդ մարդու մեղքերը, **իրենց մեջ** մեղադրեցին Նրան հայիոյության համար: Վերջիվերջո, միայն Աստված կարող է մեղքերը ներել, իսկ նրանք, անշուշտ, բոլորովին չէին էլ պատրաստվում Նրան որպես Աստծո ընդունելու: Ամենագետ Հիսուսը կարդաց նրանց մտքերը, հանդիմանեց նրանց **սըրտերում չար բանի համար**, որոնք լցված էին անհավատությամբ, այնուհետև հարցրեց նրանց, թե ո՞րն է **ավելի հեշտ ասել**. «**Քո մեղքերը ներված են քեզ**», թե՞ «**Ելի՛ր և քայլի՛ր**»: Ըստ էության հեշտ է *ասել* թե՛ մեկը, թե՛ մյուսը, բայց ո՞րն է ավելի հեշտ *ասնել*: Մարդկայնորեն անհնարին է թե՛ մեկը, թե՛ մյուսը, սակայն առաջին հրամանի արդյունքները տեսանելի չեն այն դեպքում, երբ երկրորդի արդյունքներն անմիջապես ակներև են:

9:6-7. Որպեսզի դպիրներին ցույց տա, որ Նա իշխանություն ունի **երկրի վրա մեղքերի թողություն տալու** (հետևաբար Նրան պետք է պատվեն որպես Աստծո), Հիսուսն այնքան բարեհաճեց, որ տեսանելի հրաշք շնորհեց նրանց: Դիմելով **անդամալույծին**, Նա ասաց. «**Վեր՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ և տո՛ւնդ գնա**»:

9:8. Երբ բազմությունը տեսավ, թե ինչպես էր նա մահիճը ձեռքին տուն գնում, նրանց մոտ առաջացավ երկու զգացում՝ վախ և զարմանք: Նրանք վախեցան գերբնականի ակնհայտ ներկայությունից: Նրանք **փառավորեցին Աստծուն** այն բանի համար, որ Նա **մարդկանց այդպիսի իշխանություն է տվել**, բայց ամբողջովին բաց թողեցին հրաշքի նշանակությունը: Անդամալույծի *տեսանելի* բժշկումը նախատեսված էր՝ համոզելու համար, որ այդ մարդու մեղքերը ներված են. դա *անտեսանելի* հրաշք է: Դրանից նրանք պետք է հասկանային, որ նրանց տեսածն Աստծո կողմից մարդկանց տրված իշխանության ցուցադրում չէր, այլ Աստծո ներկայությունը նրանց մեջ՝ ի դեմս Տեր Հիսուս Քրիստոսի: Բայց նրանք չհասկացան դա:

Ինչ վերաբերում է դպիրներին, հետագա իրադարձություններից գիտենք, որ նրանք ավելի խստացրին իրենց սրտերը անհավատությանը և ատելությանը:

Թ. Հիսուսը կանչում է մաքսավոր Մատթեոսին (9:9-13)

9:9. Փրկչի շուրջ ստեղծված լարված մրթնորոտը ժամանակավորապես լիցքաթափվում է Մատթեոսի՝ Տիրոջ կանչի պարզ ու համեստ արձագանքով: Թե՛ հարկահավաքը կամ մաքսատան աշխատողը, թե՛ նրա աշխատակիցներն ատելի էին հրեաներին ոչ միայն այն պատճառով, որ ազնիվ չէին, ծանր հարկեր էին գանձում, այլև ավելին՝ նրանք ծառայում էին Հռոմեական իշխանության՝ Իսրայելի վրա իշխողի շահերին: Երբ **Հիսուսն անցնում էր** մաքսատան մոտով, Նա ասաց Մատթեոսին՝ **հետևի՛ր Ինձ**: Մատթեոսի արձագանքն ակնթարթային էր. նա **ելավ և գնաց** Նրա հետևից, որպեսզի դառնար Նրա իսկական աշակերտը՝ թողնելով ավանդաբար անազնիվ ճանաչված աշխատանքը: Ինչ-որ մեկն ասել է. «Նա կորցրեց շահավետ աշխատանքը, բայց գտավ իր կյանքի նպատակը: Նա կորցրեց լավ եկամուտը, բայց պատիվ գտավ: Նա կորցրեց իր անվտանգությունը, բայց մի արկածախնդրություն գտավ, որի մասին երբեք չէր երագել»: Նա դարձավ տասներկուսից մեկը և Ավետարանը գրելու պատիվն ունեցավ, որը կրում է իր անունը:

9:10. Այստեղ նկարագրված խնջույքը կազմակերպվել է ի պատիվ Տեր Հիսուսի՝ Մատթեոսի կողմից (Ղուկ. 5:29): Այսպես նա հրապարակայնորեն դավանեց Քրիստոսին և Հիսուսին ներկայացրեց իր գործընկերներին: Բնականաբար, նրա հյուրերը **մաքսավորներ** էին և այլք, որ ընդհանուր առմամբ հայտնի էին որպես **մեղավորներ**:

9:11. Այդ օրերին հաց ուտելիս ընդունված էր բազմոցներին թիկնել՝ դեմքով սեղանին: **Երբ փարիսեցիները տեսան**, թե Հիսուսն ինչպես է ընկերակցում հասարակության տականքների հետ, գնացին Նրա աշակերտների մոտ և մեղադրեցին Նրան՝

«մեղավորների հետ ընկերակցության համար»: Իհարկե, ոչ մի ճշմարիտ մարգարե չէր ուտի **մեղավորների** հետ:

9:12. Երբ դա լսեց, Հիսուսը պատասխանեց. **«Ոչ թե առողջներին է բժիշկ պետք, այլ հիվանդներին»**: Փարիսեցիներն իրենց համարում էին առողջ և չէին ուզում ընդունել, որ Փրկչի կարիքն ունեն: Իրականում նրանք հոգևորապես շատ հիվանդ էին և բժշկվելու մեծ կարիք ունեին: Մաքսավորներն ու մեղավորները, ընդհակառակը, նրանցից առավել ուզում էին իմանալ իրենց ճշմարիտ իրավիճակը և փնտրում էին Քրիստոսի փրկարար շնորհը: Ուստի մեղադրանքն արդարացի էր: Հիսուսն *խկապես* ուտում էր մեղավորների հետ: Բայց եթե փարիսեցիների հետ սեղան նստեր, այդպիսի մեղադրանքն էլ ավելի արդարացի կլիներ: Եթե Հիսուսը մեղավորների հետ չուտեր այս աշխարհում, ապա Նա պետք է ընդմիջտ միայնակ ուտեր: Սակայն կարեվոր է հիշել, որ թեև Նա ուտում էր մեղավորների հետ, բայց երբեք չէր մասնակցում նրանց չար գործերին և չէր արատավորում Իր վկայությունը: Նա առիթն օգտագործում էր մարդկանց ճշմարտության և սրբության կանչելու:

9:13. Փարիսեցիների դժվարությունն այն էր, որ, թեև մեծ ճշգրտությամբ հետևում էին հուդայական ծեսերին, բայց նրանց սրտերը խստացած, սառը և անգույթ էին: Ուստի Հիսուսն արձակեց նրանց՝ պատվիրելով գնալ և **սովորել** Եհովայի ասած բաների **նշանակությունը**. **«Ողորմություն եմ ուզում և ոչ թե զոհ»** (մեջբերումը Ովս. 6:6): Թեև Աստված էր հաստատել զոհաբերական համակարգը, սակայն Նա չէր ուզում, որ ծեսերը փոխարինեն ներքին արդարությանը: Աստված ծիսակատար չէ, և Նա չի հավանում անձնական աստվածվածությունից բաժանված ծեսերը, հենց այն, ինչ անում էին փարիսեցիները: Նրանք կատարում էին Օրենքի տառը, բայց հոգևոր օգնության կարիքն ունեցողների հանդեպ ոչ մի կարեկցանք չունեին: Նրանք շփվում էին իրենց նման ինքնարդարացված մարդկանց հետ:

Ի հակադրություն՝ Տեր Հիսուսը նրանց պարզ ասաց. **«Ես չեկա արդարների կանչելու, այլ մեղավորներին՝ ապաշխարության»:** Նա կատարելապես կատարեց Աստծո կամքը թե՛ ողորմությամբ, թե՛ գոհաբերությամբ: Մի խոսքով, արդարներ չկան այս աշխարհում, ուստի Նա եկավ բոլոր մարդկանց **ապաշխարության** կանչելու: Սակայն այստեղ ներառված է հետևյալ միտքը. Նրա կոչը արդյունավետ է միայն նրանց համար, ովքեր իրենց մեղավոր են ճանաչում: Նա չի կարող բժշկել նրանց, ովքեր փարիսեցիների նման հպարտ են, ինքնարդար և անապաշխար:

Ժ. Հիսուսին հարցնում են ծոմապահության մասին (9:14-17)

9:14. Այն ժամանակ **Հովհաննես** Մկրտիչը հավանաբար բանտում էր գտնվում: Նրա աշակերտները Հիսուսի մոտ **եկան** մի խնդրով: Նրանք **հաճախակի** էին ծոմ պահում, իսկ Հիսուսի աշակերտները **չէին պահում:** Ինչո՞ւ:

9:15. Տերը նրանց պատասխանեց՝ օրինակ բերելով: Նա **փեսան էր**, իսկ Նրա աշակերտները՝ հարսանիքի հյուրերը: **Երբ** Նա **իրենց հետ էր**, նրանք անհրաժեշտություն չունեին ծոմ պահելու՝ ի նշան սգի: Բայց երբ Նա **նրանցից** վերցվեր, **այն ժամանակ** Նրա աշակերտները **ծոմ կպահեին:** Նա նրանցից *վերցվեց* մահվան և թաղման ժամանակ, համբարձումից հետո էլ մարմնապես Իր աշակերտների հետ չէր: Հիսուսի խոսքերի համաձայն՝ թեև մեզ *պատվիրված չէ* ծոմ պահել, բայց Նա անշուշտ *հաստատում է* այն, որպես առանձնահատուկ վարժություն նրանց համար, ովքեր սպասում են Փեսայի վերադարձին:

9:16. Հովհաննեսի աշակերտների բարձրացրած հարցը Հիսուսին հուշեց՝ մատնանշելու, որ Հովհաննեսն ամփոփել է Օրենքի ավարտի ժամանակը՝ հայտարարելով շնորհի նոր դարաշրջան: Զրիստոսը ցույց տվեց, որ Օրենքի և շնորհի սկզբունքները չեն կարող խառնվել: Օրենքը շնորհի հետ խառնելու փորձը նման է նոր, **չսպիտակեցված կտորը** օգտագործելուն **հին հան-**

դերձը կարկատելու համար: Լվանալու ժամանակ կարկատանը կարճանում և պատրվում է հին հանդերձից: Արդյունքում պատրվածքն ավելի վատն է լինում, քան երբևէ: Գաբելինն արդարացիորեն է դժգոհում:

«Հուդայական քրիստոնեությունը, որը, դավանելով շնորհը և Ավետարանը, փորձում է Օրենքը պահպանել և խրախուսում է Օրենքով արդարացումը, Աստծո աչքերում ավելի զարշելի է, քան ձևացնող Իսրայելը, որն անցյալում կուռքերին էր երկրպագում»:¹⁴

9:17. Այդ խառնուրդը կարելի է նաև համեմատել **հին տիկերի մեջ պահված նոր գինու հետ:** Նոր գինու խմորումից առաջացած ճնշումը պատռում է հին կաշին, որովհետև այն արդեն կորցրել է իր առաձգականությունը: Ավետարանի կյանքը և ազատությունը ոչնչացնում են ծիսականության տիկերը:

Զրիստոնեական դարաշրջանի սկիզբը անխուսափելիորեն լարվածության էր հանգեցնում: Զրիստոսի բերած ուրախությունը հնարավոր չէ համատեղել ՀԿ-ի ձևերի և ծեսերի շրջանակներում: Պետք է լինեն գործող միանգամայն նոր կարգեր: Պետինգիլն այսպես է բացատրում:

«Թագավորն այսպես զգուշացրեց Իր աշակերտներին՝ հինը... և նորը... չխառնել: Եվ դեռ հենց սա է, որ արվեց ողջ քրիստոնեական աշխարհում: Հուդայականությունն ամենուր կարկատել և հարմարեցրել են քրիստոնեական եկեղեցիներում, և հին հանդերձի վրա փակցված է «քրիստոնեություն» պիտակը: Արդյունքը՝ մի խառնաշփոթ խառնուրդ, որը ո՛չ հուդայականություն է, ո՛չ քրիստոնեություն, այլ մեռած գործերի ծիսական փոխարինում կենդանի Աստծուն հավատալու հետ: Նոր գինին շնորհով փրկությունն է, որը լցված է օրինապահության հին տիկերի մեջ, և ի՞նչ է արդյունքը: Այսպիսին. կաշիները պայթում են և պատռվում, իսկ գինին թափվում է, և այդ թանկագին կենսատու ումպերի մեծ մասը կորչում է: Օրենքը կորցրել է իր վախազդու գորությունը, քանի որ խառնված է շնորհի հետ,

իսկ շնորհը կորցրել է իր գեղեցկությունն ու իր բնույթը որպես շնորհ, որովհետև խառնվել է Օրենքի գործերի հետ»:¹⁵

Ի. Անբուժելի հիվանդներին բժշկելու և մեռելներին հարություն տալու իշխանությունը (9:18-26)

9:18-19. Ժամանակների փոփոխության վերաբերյալ Հիսուսի խոսքերն ընդհատվում են վշտից խելագարված ժողովարանի պետի կողմից, ում **դուստրը** նոր էր **մահացել**: Նա երկրպագեց Տիրոջը՝ աղաչելով Նրան գալ և կյանքի կոչել դստերը: Նրա վարքագիծը զարմանալի էր. ժողովարանի պետն օգնություն էր փնտրում Հիսուսից, մի բան, որ հրեա առաջնորդների մեծ մասը վախենում էր անել՝ ազգակիցների ծաղրից և արհամարհանքից խուսափելու համար: **Հիսուսը** պատվեց այդ իշխանավորի հավատը՝ Իր աշակերտների հետ գնալով նրա տուն:

9:20. Եվս մեկ միջամտություն. այս մեկը **կին էր, ով տասներկու տարի** տառապել էր արյունահոսությամբ: Հիսուսին երբեք չեն բարկացրել նման միջամտությունները. Նա միշտ հավասարակշռված էր, հասանելի և ընդառաջող:

9:21-22. Բժշկությունն անգոր էր գտնվել այս կնոջն օգնելու հարցում, ավելին՝ նրա դրությունը վատթարացել էր (Մարկ. 5:26): Իր ծայրահեղ վիճակում նա հանդիպեց Հիսուսին կամ գոնե տեսավ Նրան՝ մեծ բազմությամբ շրջապատված: Հավատալով, որ Նա կարող է և կուզի իրեն բժշկել, կինը անցավ ամբոխի միջով և **դիպավ Նրա հանդերձի ծայրին**: Ճշմարիտ հավատը երբեք աննկատ չի մնում Հիսուսի կողմից: Նա շրջվեց և հայտարարեց բժշկվելու մասին: Տասներկու տարվա մեջ առաջին անգամ **կինն** զգաց, որ **բժշկվել է**:

9:23-24. Պատմությունը կրկին վերադառնում է ժողովարանի պետին, ում դուստրը **մահացել էր**: **Երբ Հիսուսը տունը** մտավ, արդեն արհեստավարժ սգավորները ողբում էին. ինչ-որ մեկն այն կոչել է «արհեստական վիշտ»։ Նա հրամայեց սենյակն ազատել ներկաներից՝ միաժամանակ հայ-

տարարելով, որ **աղջիկը մեռած չէ, այլ քնած**: Աստվածաշնչի շատ ուսումնասիրողներ կարծում են, որ Տերը «քնած» բառը գործածել է փոխաբերական իմաստով՝ նկատի ունենալով «մահ» բառը: Ոմանք էլ հավատում են, որ աղջիկը կոմայի մեջ է եղել: Այսպիսի մեկնաբանությունը չի ժխտում նրան հարություն տալու Հիսուսի կարողությունը, եթե նա մահացել էր, ընդհակառակը՝ այն ընդգծում է Հիսուսի ազնվությունը, որ Իրեն վերագրեր մեռածի հարությունը, երբ վերջինս իրականում չէր մահացել: Ռոբերտ Անդերսոնը պաշտպանում է այս տեսակետը՝ մատնանշելով, որ հայրը և մյուս ներկաներն ասացին, որ նա մահացել է, բայց **Հիսուսն** ասաց **ո՛չ**:

9:25-26. Ամեն դեպքում, Տերը **բռնեց նրա ձեռքից** և հրաշք կատարվեց. նա ոտքի կանգնեց: Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի այդ հրաշքի մասին լուրն ամբողջ շրջանում տարածվեր:

Լ. Տեսողություն տալու իշխանություն (9:27-31)

9:27-28. Երբ **Հիսուսը գնաց** ժողովարանի պետի տնից, **երկու կույր հեռուեցին Հիսուսին**՝ աղաչելով Նրանից տեսողություն: Բնական տեսողությունից զրկված այս երկուսը ունեին հոգևոր սուր խորաթափանցություն: Դիմելով Հիսուսին՝ որպես **Դավթի Որդու**, նրանք ընդունում էին Նրան՝ որպես երկար սպասված Մեսիայի և Իսրայելի օրինական թագավորի: Նրանք գիտեին, որ երբ Մեսիան գար, Նրա հավատարմագրերից մեկը պիտի լիներ կույրերին տեսողություն տալու կարողությունը (Ես. 61:1, հղումը RSV): Երբ Հիսուսը փորձեց նրանց հավատը՝ հարցնելով, թե հավատո՞ւմ են, որ Ինքը **կարող է դա անել** (տեսողություն տալ), նրանք առանց երկմըտելու պատասխանեցին՝ այո՛, Տեր:

9:29-30. Այն ժամանակ մեծ Բժիշկը **դիպավ** կույրերի **աչքերին** և նրանց վստահեցրեց, որ իրենց հավատի շնորհիվ կտեսնեն: Անմիջապես նրանց աչքերը բացվեցին:

Մարդն ասում է. «Տեսնել նշանակում է հավատալ»: Աստված ասում է. «Հավատալ նշանակում է տեսնել»: Տեր Հիսուսն ասաց Մարթային. «Մի՞թե ես քեզ չասացի, որ եթե հավատաս, Աստծո փառքը կտեսնես» (Հովհ. 11:40): Երբայեցիներին ուղղված թղթի հեղինակը գրում է. «Հավատով ենք հասկանում...» (Եբր. 11:3), Հովհաննես առաքյալը գրել է. «Այս ամենը գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ..., որպեսզի իմանաք» (1 Հովհ. 5:13): Աստված գոհ չէ այն հավատից, որը նախապես հրաշք է պահանջում: Նա ուզում է, որ մենք Նրան հավատանք պարզապես այն պատճառով, որ Ինքն Աստված է:

Ինչո՞ւ **Հիսուսը** նրանց **խստիվ** պատվիրեց ոչ ոքի չպատմել հրաշքի մասին: Մատթ. 8:4 հղումից կարելի է եզրակացնել, որ Նա հավանաբար չէր ուզում վաղաժամ շարժում բորբոքել, որպեսզի Նրան գահ բարձրացնեին որպես Թագավորի: Ժողովուրդը դեռևս դարձի չէր եկել, Նա չէր կարող նրանց վրա թագավորել, մինչև նրանք վերստին չծնվեին: Բացի այդ՝ հեղափոխական ապստամբությունը հոգուտ Հիսուսի կարող էր հռոմեական իշխանության կողմից սարսափելի վրեժխնդրություն առաջացնել հրեաների հանդեպ: Այս ամենից բացի՝ նախքան թագավորելը Տեր Հիսուսը պետք է խաչվեր: Որևէ բան, որ խոչընդոտում էր դեպի խաչ տանող Նրա ճանապարհը, հակասում էր Աստծո նախասահմանած ծրագրին:

9:31. Անչափ երախտապարտ լինելով իրենց տեսողության համար՝ այդ երկուսը **տարածեցին** իրենց հրաշալի բժշկության **լուրը**: Թեև, մենք կարող է համակրենք նրանց կամ հիանանք նրանց հորդաբուխ վկայությամբ, բայց փաստն այն է, որ նրանց անհնազանդությունն անխուսափելիորեն ավելի շատ չարիք բերեց, քան բարիք, հավանաբար մարդկանց մեջ ոչ թե Հոգով ներշնչված հետաքրքրություն առաջացնելով, այլ մակերեսային հետաքրքրափրություն: Նույնիսկ երախտագիտությունը չի կարող օրինական արդարացում տալ անհնազանդությանը:

Խ. Ծուրթերը բացելու իշխանություն (9:32-34)

9:32. Նախ Հիսուսը կյանք տվեց մեռածին, այնուհետև տեսողություն՝ կույրին, իսկ այժմ համրին՝ լեզու: Այստեղ կարծես առկա է հրաշքների հոգևոր հերթականությունը. առաջինը՝ կյանք, ապա՝ հասկացողություն, իսկ հետո՝ վկայություն:

Չար ոգին այս մարդուն դարձրել էր համր: Ինչ-որ մեկը բավականին հոգացել էր, որ դիվահարին բերի Տեր Հիսուսի մոտ: Թող Աստված օրհնի այն ազնիվ անձանորթներին, ովքեր Նրա գործիքներն են եղել՝ ուրիշներին բերելու Հիսուսի մոտ:

9:33. Երբ **դևը դուրս եկավ, համրը անմիջապես սկսեց խոսել**: Անշուշտ, մենք կարող ենք ենթադրել, որ այդ մարդն իր վերականգնված խոսելու կարողությունն օգտագործել է ծառայության համար և վկայելու Նրա մասին, ով այդքան մեծահոգաբար բժշկեց նրան: Հասարակ մարդիկ խոստովանում էին, որ Իսրայելը դարձել է աննախադեպ հրաշքների ականատեսը:

9:34. **Իսկ փարիսեցիներն** ասում էին նրանց, որ Հիսուսը **դևերի իշխանի միջոցով էր հանում դևերին**: Նրանց այդ մեղադրանքը Հիսուսն ավելի ուշ անվանեց աններելի մեղք (12:32): Մուրբ Հոգով կատարած Նրա հրաշքները սատանայի գործությանը վերագրելը հայեցողություն էր Մուրբ Հոգու դեմ: Մինչ ուրիշներն օրհնվում էին Քրիստոսի բժշկարար հպումից, փարիսեցիները մնում էին հոգևորապես մեռած, կույր ու համր:

VI. ՄԵՍԻԱ-ԹԱԳԱՎՈՐԻ ԱՌԱՔՅԱԼՆԵՐՆ ՈՂԱՐԿՎՈՄ ԵՆ ԻՍՐԱՅԵԼ (9:35-10:42)

Ա. Մշակների կարիքը (9:35-38)

9:35. Այս համարից սկսվում է այսպես կոչված Գալիլիայի երրորդ շրջապայությունը: Հիսուսը շրջում էր **գյուղերում ու քաղաքներում**՝ քարոզելով **Թագավորության** բարի լուրը, մասնավորապես որ Ինքն է Իսրայելի Թագավորը, և եթե մարդիկ ա-

պաշխարեն և ընդունեն Իրեն, Ինքը կթագավորի նրանց վրա: Այդ պահին Թագավորության անկեղծ առաջարկ էր տրվում Իսրայելին: Ի՞նչ կպատահեր, եթե Իսրայելն ընդուներ Նրան: Աստվածաշունչը չի պատասխանում այդ հարցին: Մենք գիտենք, որ Քրիստոսը միևնույնն է պետք է մահանար, որպեսզի ապահովեր արդար հիմք, որի միջոցով Աստված կարդարացներ բոլոր ժամանակների մեղավորներին:

Սովորեցնելով և քարոզելով Քրիստոսը բժշկում էր բոլոր տեսակի հիվանդություններն ու ախտերը: Ինչպես հրաշքներն իրենց խոնարհ շնորհով բնորոշում էին Մեսիայի առաջին գալուստը, այնպես էլ նրանք կնշանավորեն Նրա երկրորդ գալուստը գորության և մեծ փառքի մեջ (հմմտ. Եբր. 6:5, «գալիք աշխարհի գորությունները»):

9:36. Հալածված և անօգնական Իսրայել ժողովրդի **մեծ բազմությանը նայելիս** Հիսուսը տեսնում էր մի ժողովուրդ, որ նման է **հովիվ չունեցող ոչխարների:** Նրա մեծ, **կարեկցող** սիրտը գթաց **նրանց:** Օ՛, եթե մենք ավելի շատ բան իմանայինք կորածների և մեռնողների հոգևոր վիճակի և կարիքի մասին: Որքան անդադար պիտի ադորեինք.

Թող նայեմ ամբոխին, ինչպես իմ Տերը նայեց,
 Մինչև այքերս արցունքներից մշուշվեն.
 Կարեկցանքով նայեմ կորած ոչխարներին,
 Ու հանուն Նրա սիրո՛ նրանց սիրեն:

9:37. Հոգևոր հունձքի մեծ աշխատանք կար, որը հարկավոր էր անել, բայց **մշակները քիչ էին:** Այդ խնդիրը, թվում է, շարունակվում է մինչև օրս. կարիքը միշտ ավելի շատ է, քան աշխատուժը:

9:38. Տեր Հիսուսն աշակերտներին պատվիրեց աղաչել **հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկի Իր հնձի համար:** Ուշադրություն դարձրեք, որ կարիքը ներկայացված չէ որպես կոչ: Մշակները չպետք է *գնան*, մինչև նրանց *չուղարկեն*.

Ինձ կիսամութ երկրներ ուղարկեց
 Աստծո Որդի Քրիստոսը,

Ձեռնադրեցին այդ գործին
 Նրա խոցված ձեռքերը:

Ջեյադդ Թերասիզեն

Հիսուսը չբացահայտեց **հնձի Տիրոջ անհատականությունը:** Ոմանք կարծում են, որ այն Սուրբ Հոգին է: 10:5-ում Հիսուսն Ինքն է ուղարկում աշակերտներին, ուստի ակնհայտ է, որ հենց Իրեն պետք է ադորենք համաշխարհային ավետարանչության համար:

Բ. Տասներկու աշակերտների կանչվելը (10:1-4)

10:1. 9-րդ գլխի վերջին համարում Տերը հրահանգում է Իր աշակերտներին ադորեել, որպեսզի ավելի շատ մշակներ լինեն: Որպեսզի այս ադորքն անկեղծ լինի, նախ հավատացյալները պիտի պատրաստ լինեն գնալու: Ուստի մենք այստեղ գտնում ենք, որ Տերը կանչում է **Իր տասներկու աշակերտներին:** Նա արդեն ընտրել էր նրանց, իսկ այժմ կանչում էր հատուկ ավետարանչական ծառայության Իսրայել ժողովրդի համար: Կանչը տալիս էր պիղծ ոգիներ հանելու և ամեն ցավ բժշկելու իշխանություն: Այստեղ երևում է Հիսուսի եզակիությունը: Ուրիշներ էլ հրաշքներ էին գործում, բայց ոչ ոք երբեք չէր շնորհել այդ իշխանությունը ուրիշներին:

10:2-4. Մրանք են **տասներկու առաքյալների** անունները.

1. **Միմոնը, ով Պետրոս է կոչվում:** Պռոթեկուն, մեծահոգի և սիրասուն մարդ էր, որ ի ծնե առաջնորդ էր:
2. **Անդրեասը՝ նրա եղբայրը:** Նրան Հիսուսի հետ ծանոթացրել էր Հովհաննես Մկրտիչը (Հովհ. 1:36, 40): Այնուհետև Անդրեասը բերեց Նրա մոտ իր եղբայր Պետրոսին: Այդուհետև ուրիշներին Հիսուսի մոտ բերելը դարձավ նրա գործը:
3. **Հակոբոսը՝ Չեբեդիոսի որդին,** ում հետագայում Հերովդեսը գլխատեց (Գործք 12:2), տասներկուսից առաջինն էր, որ մեռավ որպես մարտիրոս:
4. **Հովհաննեսը՝ նրա եղբայրը,** նույնպես Չեբեդիոսի որդին էր: Նա այն ա-

շակերտն էր, ում Հիսուսը սիրում էր: Մենք պարտական ենք նրան չորրորդ Ավետարանի, երեք թղթերի և Հայտնության գրքի համար:

5. **Փիլիպպոսը** Բեթսայիդայի բնակիչ էր, ով Հիսուսի մոտ բերեց Նաթանայելին: Նրան չպետք է շփոթել Գործք Առաքելոց գրքի Փիլիպպոս ավետարանչի հետ:
6. **Քարթողիմոսը**, ենթադրվում է, որ նա նույն Նաթանայելն է, իսրայելացի, որի մեջ Հիսուսը նենգություն չգտավ (Հովհ. 1:47):
7. **Թովմասը**, նաև Դիդիմոս կոչվածը, որ նշանակում է «երկվորյակ»: Մովորաբար հայտնի է որպես «թերահավատ Թովմաս», որի կասկածները ավարտվեցին հիասքանչ ձևով Քրիստոսին խոստովանելով (Հովհ. 20:28):
8. **Մատթեոս**՝ նախկին մաքսավոր՝ այս Ավետարանի հեղինակը:
9. **Հակոբոսը՝ Ալփեոսի որդին**: Որոշակի ոչինչ հայտնի չէ նրա մասին:
10. **Աբեռոսը, որի մականունը Թադեոս է**: Նա հայտնի է նաև որպես Հուդա՝ Հակոբոսի որդի (Ղուկ. 6:16): Նրա մասին արձանագրված է միայն Հովհ. 14:22-ում:
11. **Սիմոն Կանանացին**, որին Ղուկասն անվանում է նախանձահույզ (Ղուկ. 6:15):
12. **Հուդա Իսկարիովտացին**՝ մեր Տիրոջ մատնիչը:

Այն ժամանակ աշակերտները մոտավորապես քսանից երեսուն տարեկան էին: Նրանք կանչվել էին հասարակության տարբեր խավերից, և հավանաբար միջին կարողությունների տեր երիտասարդներ էին: Նրանց իրական մեծությունը Հիսուսի հետ հաղորդակցությունն էր:

Գ. Ծառայություն Իսրայելին (10:5-33)

10:5-6. Այս գլխի մնացած մասը պարունակում է Տեր Հիսուսի հրահանգները, որոնք վերաբերում են **Իսրայելի տան** համար հատուկ քարոզչական արշավին: Այն չպետք է շփոթել ավելի ուշ յորթանասուն

հոգու ուղարկելու (Ղուկ. 10:1) կամ Մեծ հանձնարարականի հետ (Մատթ. 28:19-20): Սա ժամանակավոր հանձնարարություն էր հատուկ նպատակով՝ հայտարարելու, որ մոտեցել է **Երկնքի Թագավորությունը**: Թեև բոլոր դարերի Աստծո ժողովրդի համար որոշ սկզբունքներ տևական արժեք ունեն, բայց այն փաստը, որ հետագայում դրանցից մի քանիսը չեղյալ համարվեցին Տեր Հիսուսի կողմից, այն բանի ապացույցն է, որ դրանք նախատեսված չէին մնայուն լինելու համար (Ղուկ. 22:35-36):

Նախ տրվում է *երթուղին*: Աշակերտները չպետք է գնային **հեթանոսների** կամ **սամարացիների**՝ խառնված ցեղի քաղաքը, որ ասելի էր հրեաներին: Այդ ժամանակ նրանց ծառայությունը սահմանափակվում էր մասնավորապես **Իսրայելի տան կորած ոչխարների ետևից** գնալով:

10:7. *Պատգամը* պետք է հոչակեր, որ **Երկնքի Թագավորությունը մոտեցել է**: Եթե Իսրայելը մերժի այդ լուրն ընդունել, ապա նրան ներում չի լինի, որովհետև պաշտոնական հայտարարությունը հնչում է բացառապես նրանց համար: Թագավորությունը մոտեցել է ի դեմս Թագավորի Անձի: Իսրայելը պետք է որոշի. ընդունել կամ մերժել Նրան:

10:8. Աշակերտներին տրված էին *հավատարմագրեր*, որպեսզի հաստատվեր նրանց պատգամը: Նրանց գործն էր՝ հիվանդներին բժշկել, բորոտներին մաքրել, մեռելներին հարուցանել¹⁶ և դևերին հանել: Հրեաները հրաշք էին պահանջում (1 Կոր. 1:22), ուստի Աստված բարեհաճեց նրանց նշաններ տալ:

Իսկ ինչ վերաբերում է *պարգևատրմանը*, ապա Տիրոջ ներկայացուցիչները չպետք է վերցնեին ոչ մի վարձատրություն իրենց ծառայության համար: Նրանք օրհնություն էին ստանում առանց վարձի և պետք է նույն հիմունքով բաժանեին:

10:9-10. Նրանցից չէր պահանջվում ճամփորդության համար պաշար *վերցնել*: Ի վերջո, նրանք իսրայելացի էին, որ քարոզում էին իսրայելացիներին, իսկ հրեանե-

րի մեջ գոյություն ունեւր մի ճանաչված օրենք, որ մշակն արժանի է կերակուրին: Ուստի նրանք կարիք չունեին վերցնելու **ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ պղինձ, ո՛չ ուտելիք, ո՛չ պարկ, ո՛չ կրկնակի հանդերձ, ո՛չ կոշիկ և ո՛չ էլ ցուպ:** Հավանաբար այստեղ խոսքը լրացուցիչ կոշիկի կամ լրացուցիչ ցուպի մասին չէ, քանի որ նրանք արդեն ունեին ցուպ, որը թույլատրվում էր վերցնել (Մարկ. 6:8): Այս պատվերի իմաստը հետևյալն էր. նրանց կարիքները պիտի հայթայթվեին օր-օրի:

10:11. Նրանք ինչպե՛ս պիտի հոգային **կեցության** մասին: Երբ նրանք **քաղաք** էին մտնում, պետք է հարցնեին, թե այնտեղ ո՞վ է **արժանավորը**, որ նրանց ընդուներ որպես Տիրոջ աշակերտների և պատրաստ լինեւր ընդունելու բերած պատգամը: Եվ երբ նրանք գտնեին այդպիսի հյուրընկալի, նրա հետ պիտի մնային, քանի դեռ այդ քաղաքում էին, և չպետք է տեղափոխվեին, եթե նույնիսկ գտնեին ավելի լավ կենսապայմաններ:

10:12-14. Եթե **հյուրընկալն** ընդունում էր նրանց, աշակերտները պետք է **բարևեին** ընտանիքին՝ ցուցաբերելով հարգանք և երախտագիտություն նման հյուրասիրության համար: Մյուս կողմից՝ եթե տունը հրաժարվում էր ընդունել Տիրոջ պատգամաբերներին, ապա նրանք պարտավոր չէին աղոթելու, որ Աստծո **խաղաղությունը** նրանց վրա գա, այսինքն նրանք չպետք է օրհնություն խնդրեին այդ ընտանիքի համար: Եվ ոչ միայն այսքանը, նրանք պետք է ցուցադրեին Աստծո դժգոհությունը՝ **թոթափելով** իրենց ոտքերի **փոշին**: Մերժելով Քրիստոսի աշակերտներին՝ ընտանիքը մերժում էր հենց Նրան:

10:15. Հիսուսը զգուշացրեց, որ այդպիսի մերժումն ավելի խիստ պատիժ կբերի **դատաստանի օրը**, քան այլատրված **սողոմացիների և գոմորացիների** պատիժն էր: Այս խոսքերն ապացուցում են, որ դժոխքում կլինեն **տարբեր աստիճանի պատիժներ**, այլապես ինչպե՛ս կարող է այն ոմանց համար ավելի տանելի լինել, քան մյուսների:

10:16. Այս հատվածում Տեր Հիսուսը խորհուրդ է տալիս տասներկու աշակերտներին, թե ինչպես *դիմակայեն հարձականքներին*: Նրանք պետք է լինեն, ինչպես **գառներ գայլերի մեջ**՝ շրջապատված չար մարդկանցով, ովքեր նրանց կործանելու դիտավորություն ունեն: Նրանք պետք է լինեն **օձերի նման իմաստուն**՝ խուսափելով անհարկի վիճաբանություններից կամ խորամանկ փոխզիջումներից: Նրանք պետք է լինեն **անվնաս՝ աղավաղների նման**՝ պաշտպանված արդար բնավորության սպառազինությամբ և անկեղծ հավատով:

10:17. Նրանք պետք է զգուշանան նաև անհավատ հրեաներից, ովքեր նրանց կմատնեն ատյանների և ծեծի կենթարկեն **իրենց ժողովարաններում**: Նրանց վրա հարձակումները կլինեն ինչպես քաղաքացիական, այնպես էլ կրոնական:

10:18. Նրանք Քրիստոսի անվան համար **կուսակալների և թագավորների առջև** կտարվեն: Բայց Աստծո գործը պիտի հաղթանակի մարդկային չարության վրա. «Մարդն իր չար մտադրություններն ունի, սակայն Աստված Իր ճանապարհն ունի»: Թվացյալ պարտության ժամանակ աշակերտները կունենան անհամեմատելի առանձնաշնորհում՝ վկայել կառավարիչների և **հեթանոսների** առջև: Աստված բոլոր բաները միասին բարուն է գործակից դարձնելու: Քրիստոնեությունը շատ է տուժել քաղաքացիական իշխանություններից, թեև «նշանակված իշխանավորների համար ոչ մի վարդապետություն այդքան օգտակար չի եղել»:

10:19-20. Աշակերտները փորձ անելու կարիքը չունեն, թե ինչ պիտի խոսեն դատավարության ժամանակ: Նույն ժամին, Աստծո **Հոգին** նրանց աստվածային իմաստություն կտա այնպես պատասխանելու, որ Քրիստոսը փառավորվի և լիովին խափանի ու շփոթեցնի իրենց մեղադրողներին: 19-րդ համարը մեկնաբանելիս պետք է խուսափենք երկու ծայրահեղությունից: Առաջին՝ միամիտ ենթադրություն է, որ քրիստոնյաները չպետք է նախապես պատրաստեն պատգամները: Երկրորդն այն տեսա-

կետն է, որ այս համարը մեզ համար արդիական չէ այսօր: Ծիշտ է և ցանկալի, որ քարոզիչը կոնկրետ առիթով Աստծո առջև աղոթքով սպասի համապատասխան խոսքի: Բայց ճիշտ է նաև, որ կրիտիկական պահերին բոլոր հավատացյալները կարող են ապավինել Աստծո խոստումներին, որ իրենց իմաստությունն տա աստվածային ներշնչումով խոսելու համար: Նրանք դառնում են ներկայացուցիչ իրենց Հոր Հոգու համար:

10:21. Հիսուսը զգուշացրեց Իր աշակերտներին, որ նրանք բախվելու են դավաճանության ու մատնության: Եղբայրը մեղադրելու է իր եղբորը: **Հայրը** մատնելու է իր որդուն: **Որդիները** պիտի ելնեն իրենց **ծնողների** դեմ, որի հետևանքով ծնողները մահվան կմատնվեն:

Չ. Կ. Մակաուլին լավ է ասել այդ մասին.

«Մենք գտնվում ենք լավ ընկերակցության մեջ, երբ տանում ենք աշխարհի ատելությունը... Ծառան չի կարող ակրնկալել ավելի լավ վերաբերմունք թշնամու ձեռքերից, քան որ մեր Տերը կրեց: Եթե աշխարհը Հիսուսի համար ոչ մի լավ բան չուներ, քան խաչը, ապա թագավորական կառք չեն ունենա նաև Նրա հետևորդները: Եթե Նրա համար միայն փշեր էին, այնտեղ մեզ համար չեն կարող լինել պսակներ... Միայն թե հաստատ իմանանք, որ իրոք աշխարհն ատում է մեզ՝ «Քրիստոսի համար», և ոչ թե մեր մեջ եղող մի ատելի բանի, որ արժանի չէ մեր փառահեղ Տիրոջը, Ում ներկայացնում ենք»:¹⁷

10:22-23. Աշակերտները առանց բացառության՝ ատելի պիտի լինեն բոլոր մարդկանց, բոլոր մշակույթների, ազգերի, դասակարգերի և այլն: **«Ով մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի»:** Եթե առանձնացնենք այս համարը, ապա կարող է թըվալ, որ փրկությունը կարելի է վաստակել անկոտրում համբերությամբ: Մենք գիտենք, որ այս բառերը չի կարելի այսպես մեկնաբանել, որովհետև ամբողջ Աստվածաշնչում փրկությունը ներկայացված է որպես Աստծո շնորհով ձրի պարգև հավատի

միջոցով (Եփ. 2:8-9): Այս համարը նաև չի նշանակում, որ Քրիստոսին հավատարիմները պիտի փրկվեն ֆիզիկական մահից. նախորդ համարում կանխատեսվում է մի քանի հավատարիմ աշակերտների մահը: Բացատրությունը շատ պարզ է. համբերությունը ճշմարտապես փրկվածներին բնորոշ հատկանիշ է: Հայածանքի ժամանակ մինչև վերջ համբերողներն իրենց հաստատականությամբ ցույց են տալիս, որ ճշմարիտ հավատացյալներ են: Այսպիսի հայտարարություն ենք գտնում Մատթ. 24:13-ում, որը վերաբերում է Մեծ նեղության ժամանակ հրեաների հավատարիմ մնացորդին, ովքեր հրաժարվում են փոխգիջել Տեր Հիսուսի հանդեպ ունեցած իրենց հավատարմությունը: Նրանց համբերությունը հստակորեն մատնանշում է, որ նրանք ճշմարիտ աշակերտներ են:

Ապագայի մասին պատմող աստվածաշնչյան հատվածներում Աստծո Հոգին հաճախ մոտ ապագայից տեղաշարժվում է հեռավոր ապագա: Մարգարեությունը կարող է ունենալ մասնակի և անհապաղ, ինչպես նաև ավարտված և հեռավոր ժամանակներում կատարվող նշանակություն: Օրինակ՝ Քրիստոսի երկու գալուստները կարող են միավորված լինել մեկ հատվածում՝ առանց բացառության (Ես. 52:14-15, Միք. 5:2-4): Այսպիսի մարգարեական անցում է կատարում Հիսուսը 22-23-րդ համարներում: Նա զգուշացնում է Իր աշակերտներին այն հայածանքների մասին, որոնք նրանք պիտի կրեն հանուն Իրեն, այնուհետև, Նա, կարծես, տեղափոխվում է Մեծ նեղության ժամանակները և տեսնում է աշակերտներին՝ որպես Իր նվիրյալ հրեա հետևորդների: Առաջին քրիստոնյաների հայածանքից Նա անցում է կատարում այն հայածանքներին, որոնք հավատացյալները կրելու են նախքան Իր երկրորդ գալուստը:

23-րդ համարի առաջին մասը կարելի է վերագրել աշակերտներին. **«Երբ ձեզ հալածեն այս քաղաքում, մի ուրիշ քաղաք փախեք»:** Նրանք պարտավոր չեն բռնապետության տակ մնալ, եթե փախուստի ազնիվ ճանապարհ կա: «Վտանգից փախ-

չէր մեղք չէ, պարտականությունից խուսափելն է մեղք»:

23-րդ համարի վերջին մասը մեզ տեղափոխում է այն օրեր, որոնք նախորդելու են Քրիստոսի թագավորության գալստյանը. **«... Իսրայելի քաղաքները դեռ վերջացրած պիտի չլինե՞ք՝ մինչև Մարդու Որդու գալուստը»:** Այդ խոսքերը չէին կարող վերաբերել աշակերտների առաքելությանը, որովհետև Մարդու Որդին արդեն եկել էր: Աստվածաշնչի մի քանի ուսուցիչներ այս համարը հասկանում են որպես Երուսաղեմի ավերման հղում մ.թ. 70թ.: Մակայն դժվար է հասկանալ, թե ինչպես է այդ ավերումը վերաբերում «Մարդու Որդու գալուստյանը»: Ավելի հավանական է թվում, որ այս հղումը վերաբերում է Նրա երկրորդ գալստյանը: Մեծ նեղության ժամանակ Քրիստոսին հավատարիմ հրեա երբայրները Արքայության Ավետարանը պիտի տարածեն: Նրանց պիտի հալածեն և հետապնդեն: Մինչև նրանք կհասնեն Իսրայելի բոլոր քաղաքներին, Հիսուսը կվերադառնա, որպեսզի դատի Իր թշնամիներին և հաստատի Իր Թագավորությունը:

Կարող է թվալ, որ 23-րդ համարի և Մատթ. 24:14-ի միջև հակասություն կա: Այստեղ նշված է, որ **Իսրայելի ոչ բոլոր քաղաքները** կհասցնեն անցնել **մինչև Մարդու Որդու գալուստը:** Այնտեղ ասվում է, որ մինչ Նրա երկրորդ գալուստը Արքայության Ավետարանը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում: Մակայն այստեղ հակասություն չկա: Ավետարանը քարոզվելու է ամբողջ աշխարհում, թեև պարտադիր չէ յուրաքանչյուր անհատի: Այս քարոզչությունը կհանդիպի ուժեղ դիմադրության: Իսրայելում քարոզիչներին պիտի դաժանորեն հալածեն և խոչընդոտեն: Ուստի նրանք Իսրայելի քաղաքները դեռ վերջացրած պիտի չլինեն:

10:24-25. Տիրոջ աշակերտները հաճախ զարմանում էին, թե իրենք ինչո՞ւ պիտի վատ վերաբերմունք հանդուրժեն: Եթե Հիսուսը Մեսիան է, ապա ինչո՞ւ Նրա աշակերտները թագավորելու փոխարեն պիտի հալածվեն: 24-25-րդ համարներում Քրիս-

տոսը նախագգում է նրանց տարակուսանքը և պատասխանում է՝ հիշեցնելով նրանց Իր հետ փոխհարաբերության մասին: Նրանք աշակերտներ էին, Ինքը՝ նրանց Ուսուցիչը. նրանք ծառաներ էին, իսկ Ինքը՝ նրանց Տերը. նրանք տան անդամներ էին, իսկ Ինքը՝ Տանտերը: Աշակերտ լինել նշանակում է Ուսուցչին հետևել, ոչ թե Նրանից բարձր դասվել: Ծառաները չպետք է ակնկալեն, որ իրենց հետ ավելի լավ կվերաբերվեն, քան իրենց Տիրոջ: Եթե արժանավոր Տանտիրոջը **«Բեռդգերուղ»** կոչեցին («ճանճերի տեր», Ակկարոնի աստվածը, որի անունը հրեաներն օգտագործել են սատանայի անվան փոխարեն), ապա ավելի մեծ վիրավորանք պիտի հասցնեն Նրա **ընտանիքին:** Աշակերտ լինել նշանակում է նույնքան մերժված լինել, որքան Ուսուցիչը:

10:26-27. Տերն Իր աշակերտներին երեք անգամ ասաց՝ «Մի՛ վախեցե՛ք» (հ. 26, 28, 31): Նախ նրանք **չպետք է վախենան** իրենց թշնամիների թվացյալ հաղթանակից. Նրա գործը պետք է փառքով պսակվի գալիք օրը: Մինչև այժմ այդ Ավետարանը հարաբերականորեն **ձածկված էր**, իսկ Նրա ուսմունքը համեմատաբար **գաղտնի էր:** Բայց շուտով աշակերտները պիտի համարձակորեն պատգամեն քրիստոնեական ուսմունքը, որը մինչև այս կետը նրանց գաղտնի էր ասվել, այսինքն՝ առանձին, մասնավոր:

10:28. Երկրորդ՝ աշակերտները չպետք է **վախենան** մարդկանց մահաբեր գայրությանից: Ամենավատը, որ կարող են մարդիկ անել, **մարմինը սպանելն է:** Քրիստոնեայի համար ֆիզիկական մահը մեծագույն ողբերգություն չէ: Մեռնել նշանակում է Քրիստոսի հետ լինել, իսկ սա անհամեմատ ավելի լավ է: Այն ազատագրում է մեղքից, վշտից, հիվանդություններից, տառապանքներից ու մահից և անցում է դեպի հավիտենական փառք: Այլ կերպ ասած, ամենավատը, որ մարդիկ կարող են անել, իրականում լավագույնն է, որը կարող է պատահել Աստծո զավակների հետ:

Աշակերտները չպետք է վախենան մարդկանցից. նրանք պետք է ակնաձայից **վախ** ունենան **Նրա** հանդեպ, **Ով կարող է և՛**

հոգին, և՛ մարմինը կորստի մատնել դժոխքի մեջ: Ամենամեծ կորուստն Աստծուց, Քրիստոսից և հույսից հավիտենական բաժանումն է: Հոգևոր մահը կորուստ է, որը չի կարող չափվել, կորուստ, որից պետք է խուսափել ցանկացած գնով:

28-րդ համարում Հիսուսի խոսքերը հիշեցնում են Ջոն Նոքսի տապանագիրը. «Այստեղ պատկած է նա, ով այնքան շատ էր վախենում Աստծուց, որ երբեք չի վախեցել որևէ մարդուց»:

10:29. Գտնվելով տառապանքների մեջ՝ աշակերտները պետք է հավատան, որ Աստված հոգում է իրենց մասին: Այդ մասին Տերը մեզ սովորեցնում է ամենուր եղող ճնճողի օրինակով: Այս աննշան թռչուններից երկուսը վաճառվում էին **մեկ դահեկանով** (մետաղադրամ): Սակայն նրանցից ոչ մեկն **առանց Հոր գիտության գետին չի ընկնում**, առանց Նրա իմացության կամ ներկայության: Ինչ-որ մեկն ասել է. «Աստված մասնակցում է յուրաքանչյուր ճնճողի հուղարկավորությանը»:

10:30-31. Այդ նույն Աստվածը, Ով անձնապես հետաքրքրված է փոքրիկ ճնճողով, Իր գավակներից յուրաքանչյուրի **գլխի մազերի** մշտական **հաշիվն** է պահում: Մազերի հյուսքն անշուշտ ավելի քիչ է գնահատվում, քան ճնճողուկը: Սա ցույց է տալիս, որ Իր ժողովուրդն անհամեմատ **ավելի արժեքավոր** է Իր համար, **քան ճնճողուկները**: Ուրեմն, ինչո՞ւ վախենանք:

10:32. Հիմնվելով վերոհիշյալ նկատառումների վրա՝ ի՞նչն է ավելի տրամաբանական Քրիստոսի աշակերտների համար, քան **մարդկանց առջև** անվախորեն Նրան **դավանելը**: Նրանց կրած որևէ ամոթը կամ նախատիքը երկնքում պիտի առատորեն վարձատրվի, երբ Տեր Հիսուսը դավանի նրանց Իր **Հոր առջև**: Այստեղ Քրիստոսին դավանելը ներառում է Նրան վստահելը որպես Տիրոջ և Փրկչի, և ելնելով այդ ճանաչումից՝ Նրան ընդունելը կյանքով և շուրթերով: Տասներկու աշակերտներից մեծամասնության համար Տիրոջն անձնապես դավանելը հանգեցրեց նահատակության:

10:33. Երկրի վրա Քրիստոսին ուրանալը պիտի վարձատրվի ուրացությամբ **երկրնքում** Աստծո **առջև**: Քրիստոսին ուրանալն այս դեպքում նշանակում է հրաժարվել Նրա պահանջները մեկի կյանքի նկատմամբ ընդունելուց: Նրանք, որոնց կյանքն իրականում ասում է. «Ես երբեք չեմ ճանաչել Քեզ», վերջում կյանք Քրիստոսի խոսքերը. «Ես երբեք չեմ ճանաչել քեզ»: Այստեղ Տերը նկատի չունի ճնշման ներքո ժամանակավոր ուրացումը, որը կատարվեց Պետրոսի դեպքում, այլ այնպիսի ուրացում, որը բնավորության գիծ է դարձել ու վերջնական է:

Գ. Ոչ թե խաղաղություն, այլ սուր (10:34-39)

10:34. Մեր Տիրոջ խոսքերը պետք է հասկանալ փոխաբերական իմաստով, երբ Նրա գալստյան տեսանելի արդյունքները հայտարարվում են որպես Նրա գալուստի բացահայտ նպատակ: Նա ասում է, որ **Ինքը չեկավ խաղաղություն բերելու, այլ սուր**: Ըստ էության, Նա խաղաղություն բերելու համար եկավ (Եփ. 2:14-17), Նա եկել էր, որպեսզի աշխարհը Իրենով փրկվի (Հովի. 3:17):

10:35-37. Բայց այստեղ բանն այն է, որ ամեն անգամ, երբ մի անհատ դառնում է Նրա հետևորդը, ընտանիքը դիմադրում է նրան: Դարձի եկած հորը պիտի հակառակվի նրա անհավատ որդին, քրիստոնյա մորը՝ նրա անհավատ դուստրը: Վերստին ծնունդ ստացած սկեսուրն ատելի պիտի լինի այդ փորձառությունը չունեցող հարսի կողմից: Այսպիսով, Քրիստոսի և ընտանիքի միջև միշտ ընտրություն պետք է լինի: Բնական ոչ մի կապ չպետք է աշակերտին շեղի Տիրոջը բացարձակ նվիրվելուց: Փրկչիչը պետք է գերակայի հոր, մոր, որդու կամ աղջկա վրա: Աշակերտ լինելու իրավասության գներից մեկը լարված հարաբերությունների, վեճերի և սեփական ընտանիքի անդամներից խորթացած լինելու փորձառությունն է: Այդ թշնամանքը հաճախ ավելի դառն է, քան դրանք, որ հանդիպում են կյանքի տարբեր ոլորտներում:

10:38. Բայց բացի ընտանիքից՝ կա մեկ այլ բան, որ կարող է բացառել Քրիստոսին Իր օրինական բնակատեղից. դա սերն է իր սեփական կյանքի նկատմամբ: Այս առիթով Հիսուսն ավելացրեց. **«Եվ ով իր խաչը չի վերցնում և Իմ հետևից չի գալիս, Ինձ արժանի չէ»:** Անշուշտ, խաչը եղել է պատժամիջոց: Խաչը վերցնել ու Հիսուս Քրիստոսին հետևել նշանակում է ապրել անձնուրաց ու Նրան նվիրված կյանքով: Այս դեպքում նույնիսկ մահն ինքնին չի կարող բարձր գին համարվել Քրիստոսին հետևելու համար: Ոչ բոլոր աշակերտներից է պահանջվում իրենց կյանքը տալ Տիրոջ համար, բայց բոլորն են կանչված Նրան այնքան բարձր գնահատելուն՝ իրենց կյանքն ավելի թանկ չհամարելով:

10:39. Քրիստոսի հանդեպ սերը պետք է ամբողջովին իրեն հպատակեցնի ինքնապաշտպանության բնագոյր. **«Ով իր անձը գտնում է, պիտի կորցնի այն, և ով իր անձը կորցնում է Քրիստոսի համար՝ պիտի գտնի այն»:** Գայթակորությունը նրանում է, որ կառչում ենք մեր կյանքից՝ փորձելով խուսափել բոլորանվեր կյանքի ցավից ու կորստից: Մեփական հաճույքի համար անցկացրած կյանքը վատնած կյանք է: Առավել օգտակար կյանքն այն է, որն անցել է ի նպաստ Քրիստոսի: Մարդը, **ով կորցնում է իր կյանքը՝** Նրան նվիրաբերելու, **պիտի լիությանբ գտնի այն:**

Ե. Մի բաժակ սառը ջուր (10:40-42)

10:40. Ոչ բոլորը կմերժեն աշակերտների պատգամը: Ոմանք նրանց կընդունեն որպես Մեսիայի ներկայացուցիչների և մեծահոգաբար կընդունեն Նրան: Այդպիսի բարության հանդեպ աշակերտների վարձատրության հնարավորությունը սահմանափակ կլինի, սակայն նրանք անհանգստանալու կարիք չունեն, նրանց համար արվածը կհամարվի անձնապես Տիրոջ համար արված և կստանան համապատասխան վարձ:

Քրիստոսի աշակերտներին ընդունելը հավասարագոր է Անձամբ Քրիստոսին ընդունելուն, իսկ Քրիստոսին ընդունելը նույնն

է, ինչ-որ Հորն ընդունելը, **Ով ուղարկել է Նրան, քանի որ ուղարկվածը ներկայացնում է ուղարկողին:** Դեսպանին ընդունել, ով ներկայացնում է այն երկրի կառավարությունը, որը լիազորել է նրան, նշանակում է ունենալ դիվանագիտական հարաբերություններ նրա երկրի հետ:

10:41. Ամեն ոք, **ով մարգարե է ընդունում** մարգարեի անունով, **մարգարեի վարձ պիտի ստանա:**

Ա. Տ. Պիերսոնը մեկնաբանում է.

«Հրեաները մարգարեի վարձը համարում էին ամենաբարձրը, որովհետև երբ թագավորները թագավորություն էին ստանում Տիրոջ անունով և քահանաները ծառայում էին Տիրոջ անունով, գալիս էր Տիրոջ մարգարեն և խրատում էր թե՛ թագավորին, թե՛ քահանային: Քրիստոսն ասում է, որ եթե դու ոչինչ չանես և միայն ընդունես մարգարե մարգարեի անունով, ապա միևնույն վարձը, որը տրվում է մարգարեին, կտրվի նաև քեզ, եթե օգնես նրան: Եթե դու քարոզչին քննադատելու սովորություն ունես, մտածի՛ր այս մասին: Եթե օգնես նրան, որ Աստծո մասին խոսի և նրան աջակցես, դու նրա վարձից մասնաբաժին կստանաս, բայց եթե դժվարություն ստեղծես, որ ծառայությունից հեռացնեն, ապա քո վարձը կկորցնես: Օգնել մեկին, ով ուզում է բարիք անել, մեծ գործ է: Դու չպետք է ուշադրություն դարձնես ո՛չ նրա հագուստի, ո՛չ արտաքինի, ո՛չ շարժումների և ո՛չ էլ ձայնի վրա, այլ պետք է դրանցից վեր նայես ու ասես. «Գուցե Աստծո այդ պատգամն ինձ համար է: Արդյոք Աստծո մարգարե չե՞՞ այս մարդն իմ անձի համար»: Եթե այդպիսին է, ապա ընդունի՛ր նրան, բարձրացրո՛ւ նրա խոսքն ու գործը և նրա վարձից ստացի՛ր մասնաբաժին»:¹⁸

Ով արդար է ընդունում արդարի անունով, **արդարի վարձ պիտի ստանա:** Նա, ով ուրիշներին դատում է ըստ նրանց ֆիզիկական գրավչության կամ նյութական բարեկեցության, չի գիտակցում, որ ճշմարիտ բարոյական արժեքները հաճախ համեստ տեսք ունեն: Ինչպես անձը կվարվի

հասարակ աշակերտի հետ, այդպես էլ Տերն Ինքը կվարվի նրա հետ:

10:42. Քրիստոսի աշակերտի համար արված ոչ մի բարի գործ աննկատ չի մնա: Նույնիսկ **մի բաժակ սառը ջուրը** բարձր է գնահատվելու, եթե այն տրվել է **աշակերտի**, քանի որ նա Տիրոջն է հետևում:

Տերն այսպես է ավարտում աշակերտներին ուղղված Իր հատուկ հանձնարարականը՝ նրանց արքայական արժանապատվություն տալով: Այո՛, նրանց դեմ են ելնելու, մերժելու են, ձերբակալելու, դատելու, բանտարկելու, գուցե նույնիսկ սպանելու են: Բայց նրանք թող երբեք չմոռանան, որ իրենք Թագավորի ներկայացուցիչներն են և իրենց փառահեղ առանձնաշնորհումը խոսելն ու գործելն է Նրա անունից:

VII. ԱՃՈՂ ԸՆԳԳԻՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵՐԺՈՒՄ (11-12-րդ գլ.)

Ա. Հովհաննես Մկրտիչը բանտարկված (11:1-19)

11:1. Տասներկուսին Իսրայելի մեջ ժամանակավոր առաքելության ուղարկելուց հետո **Հիսուսը գնաց՝ Գալիլիայի քաղաքներում սովորեցնելու և քարոզելու**, որտեղ նախկինում ապրում էին աշակերտները:

11:2. Այդ ժամանակ Հերոդիտը **Հովհաննեսին** բանտարկեց: Միայնակ և հուսալքված՝ Հովհաննեսն սկսեց կասկածել: Եթե Հիսուսը ճշմարիտ Մեսիան է, ինչո՞ւ է թույլ տալիս, որ Իր նախակարապետը մաշվի բանտում: Ինչպես Աստծո շատ մեծ մարդիկ, Հովհաննեսը տառապում էր հավատի ժամանակավոր անկումով: Ուստի նա **իր աշակերտներից երկուսին ուղարկեց** Հիսուսին հարցնելու, թե իսկապես Նա Ա՛յն էր, Ով խոստացված էր մարգարեների կողմից, թե՞ ուրիշ Օծյալի սպասեն:

11:4-5. **Հիսուսը պատասխանեց նրանց՝** հիշեցնելով Հովհաննեսին, որ Ինքն անում է այն հրաշքները, որ մարգարեներն ասել են Մեսիայի մասին. **կույրերը տեսնում են** (Ես. 35:5), **կաղերը՝ քայլում** (Ես. 35:6), **բորոտները մաքրվում են** (Ես. 53:4, հմմտ. Մատթ. 8:16-17-ի հետ), **խուլները լսում են**

(Ես. 35:5), **մեռելները հարություն են առնում** (սա Մեսիայի մասին մարգարեացված չէր, սակայն Նրա մասին չմարգարեացված հրաշքն ավելի մեծ էր, քան մարգարեացվածը): Հիսուսը նաև Հովհաննեսին հիշեցրեց, որ **աղքատներին Ավետարանն է քարոզվում**, որպեսզի կատարվի մեսիական մարգարեությունը, որ գրված է Ես. 61:1-ում: Սովորաբար կրոնական առաջնորդներն իրենց ուշադրությունը կենտրոնացնում էին հարուստ և ազնվական մարդկանց վրա: Մեսիան Բարի Լուրը **աղքատներին** էր բերել:

11:6. Այնուհետև Փրկիչն ավելացրեց. «**Եվ երանի՛ նրան, որ Իմ պատճառով չի գայթակղվում**»: Մեկ ուրիշի բերանում այս խոսքերը կհնչեին որպես ամենամեծ եսասերի պարծենկոտություն: Հիսուսի շուրթերում դրանք Նրա անձնական կատարելության ճշմարտացի արտահայտությունն էին: Ռազմական ակնառու մի զենեքայի փոխարեն Մեսիան՝ որպես խոնարհ հյուսն եկավ: Նրա բարեպաշտությունը, հեզոթությունը և համեստությունը չէին համապատասխանում մարտնչող Մեսիայի մասին տարածված պատկերացմանը: Մարդիկ, որ առաջնորդվում էին մարմնավոր ցանկություններով, կասկածում էին թագավորության հանդեպ ունեցած Նրա հավակնությանը: Բայց Աստծո օրհնությունը հանգչում է նրանց վրա, ովքեր հոգևոր աչքերով Նազարեթից եկած Հիսուսի մեջ տեսան խոստացված Մեսիային:

6-րդ համարը չպետք է մեկնաբանվի որպես հանդիմանություն՝ ուղղված Հովհաննես Մկրտչին: Յուրաքանչյուրի հավատը ժամանակ առ ժամանակ հաստատվելու և գորանալու կարիք ունի: Մի բան է, երբ հավատի ժամանակավոր անկում ենք ունենում, բոլորովին այլ՝ մշտապես գայթակղվելը Տեր Հիսուսի Անձնավորության ճշմարիտ ճանաչողության հարցի վերաբերյալ: Մի դրվագը մարդու կյանքի ամբողջ պատմությունը չէ: Եթե մի հայացք գցենք Հովհաննեսի կյանքի վրա, հավատարմության և արիության շատ արձանագրություններ կգտնենք:

11:7-8. Եվ երբ Հովհաննեսի աշակերտները **գնացին՝** Հիսուսի վատահոլություն ներշնչող խոսքերով, Տերը **ժողովրդին** դիմեց՝ Հովհաննես Մկրտչի մասին գովասանքի ջերմ խոսքեր ասելով: Այդ նույն բազմությունը հավաքվում էր Հովհաննես Մկրտչի մոտ անապատում, երբ նա քարոզում էր այնտեղ: Ինչո՞ւ: **Տեսնելու** մարդու թույլ **եղե՞գը**, ամեն **հողմից շարժվող** անցնող մարդկային կարծի՞քը: Իհարկե, ո՛չ: Հովհաննեսն անվախ քարոզիչ էր, մարմնավորված խիղճ, ով ավելի շուտ նախընտրում էր տառապել, քան լռել, մեռնել, քան ստել: Նրանք եկել էին **տեսնելու** հարմարավետություն վայելող, լավ հագնված թագավորական մի պալատականի՞: Իհարկե, ո՛չ: Հովհաննեսը Աստծո մի պարզ մարդ էր, ում խստաբարո կյանքը մարդկանց անսահման ունայնությունը հանդիմանելով էր անցել:

11:9. Արդյոք մի **մարգարե՞ի** էին եկել տեսնելու: Իհարկե՞, Հովհաննեսը մարգարե էր, ամենամեծը բոլոր մարգարեներից: Տերն այստեղ նկատի չունեք, որ նա գերազանցում էր մյուսներին իր անձնական հատկանիշներով՝ ճարտարությամբ կամ համոզելու կարողությամբ: Նա ամենամեծն էր, քանի որ Մեսիա-Թագավորի նահակարապետն էր:

11:10. Սա պարզ է դառնում 10-րդ համարից: Հովհաննեսը Մաղաքիա 3:1-ի մարգարեության իրականացումն էր, **պատգամավոր**, ով պիտի Տիրոջը նախորդեր և ժողովրդին Նրա գալստին **պատրաստեր**: Մյուսները մարգարեացել էին Քրիստոսի գալուստը, բայց Հովհաննեսն այն ընտրյալն էր, ով պիտի հայտարարեր, որ Նա իրոք արդեն եկել է: Լավ է ասված. «Հովհաննեսը *բացեց ճանապարհը* Քրիստոսի համար, իսկ հետո *դուրս եկավ* այդ *ճանապարհից* Քրիստոսի համար»:

11:11. «**Երկնքի Թագավորության մեջ ամենափոքրը նրանից մեծ է**» արտահայտությունն ապացուցում է, որ Հիսուսը խոսում էր Հովհաննեսի առավելության և ոչ թե նրա բնութագրի մասին: Անձը, ով

Երկնքի Թագավորության մեջ ամենափոքրն է, անպայման չէ, որ ավելի լավ բնութագիր ունենա, քան Հովհաննեսինը, բայց նա մի **մեծ** առավելություն ունի: Թագավորության քաղաքացի լինելը մեծ առանձնաշնորհում է, քան դրա գալստի մասին հայտարարելը: Հովհաննեսի առավելությունը մեծ էր այն իմաստով, որ նա Տիրոջ համար ճանապարհը պատրաստեց, բայց չօգտվեց Թագավորության օրհնություններից:

11:12. Հովհաննեսի ծառայության սկզբից մինչև նրա բանտարկվելը **Երկնքի Թագավորությունը ընդդիմության է** հանդիպել: Փարիսեցիներն ու դպիրները բոլոր ուժով հակառակվել են դրան: Հերովդես թագավորն իր բաժինն է ունեցել այս ընդդիմության մեջ՝ ձերբակալելով արքայության պատգամավորին:

«... **Չորեկները բռնությամբ են վերցնում այն**». այս արտահայտությունը կարող է ունենալ երկու մեկնաբանություն: Առաջին՝ Թագավորության թշնամիներն իրենց լավագույնն են անում Թագավորությունը զավթելու համար, որպեսզի կործանեն այն: Այն, որ նրանք մերժեցին Հովհաննեսին, դարձավ հենց Իր՝ Թագավորի մերժման նախապատկերը, դրանով իսկ՝ Նրա Թագավորության: Բայց այն կարող է նաև նշանակել՝ Թագավորի գալստին պատրաստ անձիք եռանդագին արձագանքեցին այդ լուրին և իրենց ուժերը լարեցին, որպեսզի Նրա Թագավորությունը մտնեն: Այսպիսին է Ղուկ. 16:16-ի իմաստը. «Օրենքն ու մարգարեները մինչև Հովհաննեսն էին, դրանից հետո քարոզվում է Աստծո Թագավորությունը: Եվ ամեն մարդ ջանում է ներս մտնել»: Երկնքի Թագավորությունն այստեղ պատկերված է որպես պարսպապատված քաղաք, որից դուրս գտնվող բոլոր մարդիկ հարված են հասցնում նրան՝ փորձելով ներս մտնել: Դրա համար որոշակի հոգևոր բռնություն է անհրաժեշտ:

Թե այդ կարծիքներից որ մեկը կընդունվի, այստեղ միտքն այսպիսին է. Հովհան-

նեսի քարոզչությունն ուժեղ դիմադրություն առաջացրեց համատարած և խորը հետևանքներով:

11:13. «Քանի որ օրենքը և բոլոր մարգարեները մինչև Հովհաննեսը մարգարեացան»: Մեսիայի գալուստը կանխատեսվում էր պատմության ողջ ընթացքում Ծննդոցից մինչև Մաղաքիան: Երբ Հովհաննեսը պատմության բեմահարթակ բարձրացավ, նրա եզակի դերը միայն մարգարեանալը չէր, այլ Քրիստոսի առաջին գալուստին վերաբերող բոլոր մարգարեությունների կատարված լինելու ազդարարումը:

11:14. Մաղաքիան կանխասել էր, որ մինչև Մեսիայի հայտնվելը որպես նախակարապետ գալու է Եղիան (Մաղ. 4:5-6): Եթե մարդիկ **կամենային ընդունել** Հիսուսին՝ որպես Մեսիայի, Հովհաննեսը կատարած կյանքը **Եղիայի** դերը: Հովհաննեսը վերամարմնավորված Եղիան չէր. Հովհ. 1:21-ում նա ժխտում է Եղիա լինելը: Բայց նա եկավ Քրիստոսից առաջ՝ Եղիայի հոգով և գործությամբ (Ղուկ. 1:17):

11:15. Ոչ բոլորն ընդունեցին Հովհաննես Մկրտչին կամ հասկացան նրա ծառայության խորը իմաստը: Հետևաբար Տերն ավելացրեց. **«Ով լսելու ականջ ունի, թող լսի»:** Այլ կերպ ասած՝ ուշադրություն դարձրեք: Բաց մի՛ թողեք ձեր լսածի կարևորությունը: Եթե Հովհաննեսը կատարեց Եղիայի մասին մարգարեությունը, ապա Հիսուսը խոստացված Մեսիան էր: Այսպիսով, հաստատելով Հովհաննես Մկրտչի իրավասությունները՝ Հիսուսը հաստատում էր Իր՝ Աստծո Քրիստոսը լինելու պնդումը: Մեկին ընդունել նշանակում է ընդունել նաև մյուսին:

11:16-17. Բայց այդ **սերունդը**, որին Հիսուսը դիմում էր, հետաքրքրված չէր ո՛չ մեկին, ո՛չ էլ մյուսին ընդունելով: Հրեաների ուշադրությունը, ովքեր ունեին իրենց Մեսիա Թագավորի գալստյան ավետումը տեսնելու առանձնաշնորհումը, չգրավեց ո՛չ Նա, ո՛չ էլ Նրա նախակարապետը: Նրանք մի գլուխկոտրուկ էին: Հիսուսը նրանց

նմանեցրեց **շուկաներում նստած դժկամ երեխաների**, ովքեր դժգոհ էին ամեն ինչից, ինչ-որ նրանց առաջարկում էին: Եթե նրանց ընկերներն ուզում էին **փող հնչեցնել**, որպեսզի **պարեհին**, նրանք մերժում էին: Եթե նրանց ընկերները ուզում էին թաղման արարողություն դերակատարել, նրանք մերժում էին **կոծ** անել:

11:18-19. **Հովհաննեսը եկավ** որպես ճգնաժամ, և հրեաները մեղադրեցին նրան, ասելով թե՛ դև կա նրա մեջ: **Մարդու Որդին**, ընդհակառակը, սովորական մարդկանց պես ուտում և խմում էր: Եթե Հովհաննեսի ճգնաժամությունը հրեաներին անհանգստացնում էր, ապա նրանք գոհ պետք է լինեին, որ Հիսուսի ուտելը սովորական էր: Բայց ո՛չ: Նրանք Նրան անվանում էին **մի ուտող** և **գինեմոլ մարդ**, **մաքսավորների և մեղավորների բարեկամ**: Իհարկե, Հիսուսը երբեք չափից ավելի չէր ուտում ու խմում. նրանց մեղադրանքն ամբողջովին հորինված էր: Իսկապես, Նա **մաքսավորների և մեղավորների բարեկամն** էր, բայց ոչ այն իմաստով, ինչպես նրանք էին հասկանում: Նա մեղավորների բարեկամը դարձավ, որպեսզի նրանց մեղքից փրկի, բայց երբեք մասնակից չեղավ մեղքին և չխրախուսեց նրանց մեղքը:

«Մական իմաստությունն արդարացվեց իր որդիների կողմից»: Անշուշտ, Տեր Հիսուսն անձնավորված իմաստությունն էր (1 Կոր. 1:30): Թեև անհավատները կարող են զրպարտել Նրան, Նա արդարացվում է Իր գործերով և Իր հետևողների կյանքով: Թեև հրեաների հիմնական զանգվածը կարող է մերժել Նրան՝ որպես Մեսիա Թագավորի, բայց Նրա պահանջները ամբողջովին հաստատվում են Նրա հրաշքներով և Նրա հավատարիմ աշակերտների կյանքի վերափոխումով:

Բ. Վա՛յ Գալիլիայի չապաշխարած քաղաքներին (11:20-24)

11:20. Մեծ առանձնաշնորհումը մեծ պատասխանատվություն է կրում: Ոչ մի քաղաք չի ունեցել առավել արտոնյալ դիրք,

քան Քորագինը, Բեթսայիդան և Կափառնայումը: Աստծո մարդեղացած Որդին քայլեց նրանց փոշոտ փողոցներով, սովորեցրեց նրանց ընտրյալ ժողովրդին և Իր **գորավոր գործերի** մեծ մասը կատարեց նրանց պատերի ներսում: Տեսնելով այդ բոլոր անհերքելի ապացույցները, նրանք խստասրտությամբ հրաժարվեցին **ապաշխարել**: Ուստի զարմանալի չէ, որ Տերը ստիպված էր ամենախիստ դատավճիռը կայացնել:

11:21. Նա սկսեց **Քորագինից** և **Բեթսայիդայից**: Այդ քաղաքները լսել էին իրենց Փրկիչ Աստծո շնորհալի խնդրանքները և գիտակցորեն երես թեքել Նրանից: Հիսուսը մտովի տեղափոխվում է **Տյուրոս և Սիդոն** քաղաքներ, որոնք Աստծո դատավճռով ավերվեցին անբարոյականության և կռապաշտության պատճառով: Եթե նրանք Հիսուսի հրաշքները տեսնելու այդպիսի առանձնաշնորհում ունենային, պիտի խոնարհեցնեին իրենց՝ խորապես ապաշխարելով: Ուստի **Տյուրոսի և Սիդոնի համար ավելի տանելի կլինի դատաստանի օրը, քան** Քորագինի և Բեթսայիդայի:

11:22. «**Ավելի տանելի կլինի դատաստանի օրը**» արտահայտությունը մատնանշում է այն, որ դժոխքում լինելու են տարբեր աստիճանի պատիժներ ճիշտ այնպես, ինչպես երկնքում պիտի լինեն տարբեր պարգևատրումներ (1 Կոր. 3:12-15): Միակ մեղքը, որի պատճառով մարդը դատապարտվելու է դժոխքում, Հիսուս Քրիստոսին չենթարկվելն է (Հովհ. 3:36բ): Բայց դժոխքում կրելիք չարչարանքների ծանրությունը կախված է մերժած առանձնաշնորհումներից և մարդկանց կատարած մեղքերից:

11:23-24. Ոչ բոլոր քաղաքների նկատմամբ էր ցուցաբերված նման արտոնություն, որքան **Կափառնայումի**: Նազարեթը Հիսուսին մերժելուց հետո դարձավ Հիսուսի համար հարազատ քաղաք (9:1, հմմտ. Մարկ. 2:1-12), և Նրա որոշ առավել ուշագրավ հրաշքները, որ Նրա Մեսիականության անհերքելի ապացույցն են, կատարվեցին այնտեղ: Եթե մեղավոր Սողոմը՝ միա-

սեռականության մայրաքաղաքը, ունենար այդպիսի առավելություն, կապաշխարեր և չէր կործանվի: Կափառնայումն ուներ մեծ առավելություն: Նրա բնակիչները պիտի ապաշխարեին և ուրախությամբ ընդունեին Տիրոջը: Բայց Կափառնայումը բաց թողեց բարենպաստ օրը: Սողոմի մեղքը շատ մեծ էր: Բայց ավելի մեծ մեղք չկա, քան սուրբ Աստծո Որդու մերժումը Կափառնայումի կողմից: Ուստի Սողոմն այդքան խիստ չի պատժվի դատաստանի օրը, որքան Կափառնայումը: Իր առանձնաշնորհումներով **մինչև երկինք** բարձրացած Կափառնայումը **մինչև դժոխք պիտի իջնի** դատաստանի օրը: Եթե այդ պատիժը արդարացի է Կափառնայումի նկատմամբ, ապա որքան արդարացի կլինի այն վայրերի համար, որտեղ Աստվածաշունչ մատյանն առատ է, ուր Բարի լուրը հեռարձակվում է, և որտեղ քչերն են (եթե այդպիսիք կան), որ արդարացում ունեն:

Մեր Տիրոջ օրերում Գալիլիայում կային չորս նշանավոր քաղաքներ՝ Քորագին, Բեթսայիդա, Կափառնայում և Տիբերիա: Նա դատավճիռը կայացրեց միայն առաջին երեքի համար, բայց ոչ Տիբերիայի: Եվ ի՞նչ էր արդյունքը: Քորագինը և Կափառնայումն այնպես կործանվեցին, որ դրանց ստույգ տեղանքն անհայտ է: Կափառնայումի տեղանքը որոշված չէ: Տիբերիան մինչև օրս կանգուն է: Սա ուշագրավ մարգարեություն է, ևս մեկ ապացույց, որ Փրկիչը ամենագետ է, իսկ Աստվածաշունչը՝ ներշնչված:

Գ. Մերժման նկատմամբ Փրկչի արձագանքը (11:25-30)

11:26-26. Գալիլիայի այդ երեք քաղաքները ո՛չ աչք ունեին, որ տեսնեին, ո՛չ սիրտ, որ սիրեին Աստծո Քրիստոսին: Նա գիտեր, որ նրանց վերաբերմունքը Իր նկատմամբ ամբողջական մերժման նախապատկերն էր: Ինչպե՞ս արձագանքեց նրանց չկամությանը. առանց դառնության, ցինիզմի և վրեժի: Ավելի շուտ, Նա Իր ձայնը բարձրացրեց՝ շնորհակալություն հայտնելով Աստծուն, որ ոչինչ չի կարող խափանել Նրա գերիշխան նպատակները: «**Շնորհակալ եմ**

Քեզանից, ով Հայր՝ Տեր երկնքի և երկրի, քանի որ Դու այս բաները ծածուկ պահեցիր աշխարհի իմաստուններից ու գիտուններից և մանուկներին հայտնեցիր»:

Մենք պետք է խուսափենք երկու հնարավոր թյուրիմացությունից: Առաջին՝ Հիսուսն Իր ուրախությունը չէր արտահայտում զավիեական այս քաղաքների անխուսափելի դատաստանի առթիվ: Երկրորդ՝ Նա չէր ենթադրում, որ Աստված Իր ձեռքով է պահում այդ յուրյալ իմաստուններից և գիտուններից:

Այս քաղաքներն ունեցել են Տեր Հիսուսին ողջունելու բոլոր հնարավորությունները: Նրանք միտումնավոր հրաժարվեցին հնազանդել Նրան: Երբ նրանք մերժեցին յուրյալ, Աստված այն ծածկեց նրանցից: Բայց Աստծո ծրագրերը երբեք չեն ձախողվում: Եթե իմաստունները չհավատան, Աստված Նրան կհայտնի սրտով խոնարհներին: Նա սովածներին բարիքներով է լիացնում, իսկ հարուստներին՝ ձեռնունայն ճանապարհում (Ղուկ. 1:53):

Նրանք, ովքեր կարծում են, թե չափազանց իմաստուն ու ինտելիգեն են Քրիստոսի կարիքն ունենալու համար, տառապում են օրինապահության կուրությամբ: Իսկ ովքեր ընդունում են, որ իմաստության պակաս ունեն, ստանում են այն Մեկի հայտնությունը, Ում մեջ «պահված են իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Կող. 2:3): Հիսուսը շնորհակալություն էր հայտնում Հորը, Նրա կանխատեսության համար, որ եթե ոմանք չընդունեն Հիսուսին, ապա կընդունեն մյուսները: Ի դեմս ահռելի անհավատության՝ Նա մխիթարություն էր գտնում Աստծո գլխավորած ծրագրի և նպատակների մեջ:

11:27. Ամեն բան Քրիստոսին էր տրված Նրա **Հորից**: Ցանկացած մեկի շուրթերից սա կարող էր հնչել որպես հանդուգն պընդում. Տեր Հիսուսը պարզապես հաստատում է ճշմարտությունը: Այդ պահին աճող ընդդիմության պատճառով բոլորովին չէր երևում, որ Հայրն էր կառավարում Հիսուսին, այնուամենայնիվ, դա ճշմարտությո-

յուն էր: Նրա կյանքը նախագծված ծրագրով անշեղորեն մոտենում էր վերջնական փառավոր հաղթանակին: «**Ոչ որ չի ճանաչում Հորը՝ բացի Որդուց**»: Սրանում է Քրիստոսի Անձի մասին անըմբռնելի խորհուրդը: Աստվածային և մարդկային բնության միասնությունը մեկ Անձի մեջ դժվարություն է առաջացնում, որ շփոթեցնում է մարդկային միտքը: Օրինակ՝ մահվան խընդիրը: Աստված չի կարող մահանալ: Այդուհանդերձ, Հիսուսն Աստված էր և Հիսուսը մահացավ: Եվ դեռ Նրա աստվածային և մարդկային բնությունն անբաժան են: Թեև մենք ճանաչում ենք Նրան, սիրում և հավատում ենք Նրան, համենայն դեպս գիտակցում ենք, որ միայն Հայրը կարող է լիովին հասկանալ Նրան:

Քո մեջ վառ արտահայտված՝
Հոր փառքերն են փայլում,
Աստվածային շնորհով լցված՝
Հավիտյան ես ցոլում:
Գիտենալ խորհուրդներդ անհուն
Հրեշտակները չեն փորձում,
Միայն Որդին է Հոր հոգու
Խորքերը թափանցում:
Արժանի՛ ես, Գա՛նն Աստծո,
Որ խոնարհվենք առջևը Քո:

Հովսիս Կոնդեր

«Ոչ որ չի ճանաչում Հորը՝ բացի Որդուց և նրանից, ում Որդին կամենա հայտնել»: Հայրը նույնպես անքննելի է: Ի վերջո, միայն Աստված է բավականաչափ մեծ՝ Աստծուն հասկանալու համար: Մարդն իր ուժով կամ մտքով չի կարող ճանաչել Աստծուն: Բայց նրանց, ում ընտրել է, Տեր Հիսուսը կարող է հայտնել և հայտնում է Հորը: Ով գիտի Որդուն, Հորն էլ պիտի գիտենա (Հովհ. 14:7):

Այդուհանդերձ, այս ամենն ասելուց հետո պետք է խոստովանենք, որ փնտրելով 27-րդ համարի բացատրությունը, մենք գործ ունենք այնպիսի ճշմարտությունների հետ, որոնք չափազանց բարձր են մեզ համար: Մենք աղոտ ենք տեսնում, ինչպես հայելու մեջ: Եվ նույնիսկ հավիտենականության մեջ մեր սահմանափակ միտքը չի կարող լիարժեք գնահատել Աստծո մեծությո-

յունը կամ հասկանալ մարդեղացման խորհուրդը: Երբ կարդում ենք, որ Հայրը հայտնրվում է միայն նրանց, ում Որդին է ընտրում, մեզ կարող է գայթակղեցնել մի քանի արտոնված անձանց կամայական ընտրության միտքը: Հաջորդ համարը նախագուշացնում է այդպիսի մեկնաբանումից: Հիսուսի համընդհանուր հրավերն ուղղված բոլոր հոգնածներին և բեռնավորվածներին, որպեսզի նրանք Նրա մոտ գան և հանգրստություն գտնեն: Այլ խոսքերով, Նա ընտրել է նրանց, որպեսզի հայտնի Հորը Իրեն, որպես Տիրոջ և Փրկչի վստահողներին: Ուսումնասիրելով այս անսահման նուրբ հրավերը, եկե՛ք հիշենք, որ այն արվեց այն բանից հետո, երբ Հիսուսի կողմից սիրված Գալիլիայի քաղաքները կոպտորեն մերժեցին Նրան: Մարդկային ասելությունն ու կամակորությունը չկարողացան մարել Նրա սերն ու ողորմությունը: Ա. Ջ. Մակլեյն ասել է.

«Թեև Իսրայելի ժողովուրդը մոտենում է Աստծո ծանր դատաստանին, նրա Թագավորն Իր վերջին խոսքում լայնորեն բացում է անձնական փրկության դուռը, և այսպիսով ապացուցում է, որ Նա շնորհիքի Աստված է նույնիսկ դատաստանի շեմին»:¹⁹

11:28. «Եկե՛ք...»: Գալ նշանակում է հավատալ (Գործք 16:31), ընդունել (Հովհ. 1:12), ուտել (Հովհ. 6:35), խմել (Հովհ. 7:37), նայել (Ես. 45:22), խոստովանել (1 Հովհ. 4:2), լսել (Հովհ. 5:24-25), դռնով մտնել (Հովհ. 10:9), դուռը բացել (Հայտ. 3:20), դիպչել Նրա հանդերձի ծայրին (Մատթ. 9:20-21) և ընդունել հավիտենական կյանքի պարգևը Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով (Հռ. 6:23):

«Ինձ մոտ...»: Հավատի առարկան եկեղեցին, հավատամքը կամ կրոնականը չէ, այլ կենդանի Քրիստոսը: Փրկությունն անհատական է: Նրանք, ովքեր Հիսուսին ունեն, փրկվում են, քանի որ Աստված է դա անում:

«Բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ...»: Որպեսզի մարդը Հիսուսի մոտ

գնա ճիշտ ճանապարհով, պետք է ընդունի, որ ինքը բեռնավորված է մեղքի բեռով: Միայն նա կարող է փրկվել, ով ընդունում է իր կորած լինելը: Հիսուս Քրիստոսին հավատալուն նախորդում է ապաշխարությունը Աստծո առջև:

«Եվ Ես ձեզ կհանգստացնեմ...»: Ուշադրություն դարձրեք, որ հանգստությունն այստեղ նվեր է, որը ստացողը չի վաստակել և չի արժանացել: Դա *փրկության հանգստությունն է*, որը բխում է այն հասկացողությունից, որ Քրիստոսն ավարտել է փրկության գործը Գողգոթայի խաչի վրա: Դա *խղճի հանգստությունն է*, որը հետևում է այն բանի գիտակցությանը, որ մեղքերի պատիժը մեկընդմիջտ վճարվել է բոլորի համար, և որ Աստված այդ վճարումը չի պահանջելու երկու անգամ:

11:29. 29-30-րդ համարներում փրկության հրավերը փոխարինվում է ծառայության հրավերով.

«Իմ լուծը ձեզ վրա վերցրե՛ք...»: Սա նշանակում է Նրա կամքին հպատակվել, Նրան փոխանցել սեփական կյանքի վերահսկողությունը (Հռ. 12:1, 2):

«Եվ Ինձնից սովորեցե՛ք...»: Երբ մենք ընդունում ենք Նրա իշխանությունը մեր կյանքի բոլոր ոլորտների վրա, այդ ժամանակ Նա մեզ սովորեցնում է Իր ճանապարհներով քայլել:

«Որ Ես հեզ եմ և սրտով խոնարհ...»: Ի տարբերություն կոպիտ և հպարտ փարիսեցիների, ճշմարիտ Ուսուցիչը **հեզ է ու խոնարհ**: Նա, ով կվերցնի Նրա լուծը, կսովորի նաև ամենահետին դիրքը գրավել:

«Եվ ձեր անձերի համար հանգստություն կգտնեք...»: Խոսքը ոչ թե խղճի, այլ՝ սրտի հանգստության մասին է, որը կարող ենք գտնել, երբ Աստծո և մարդկանց առջև գրավենք ամենացածր դիրքը: Սա նույն հանգստությունն է, որը մարդը վերապրում է Քրիստոսին ծառայելիս, երբ դադարում է մեծ լինելու փորձից:

11:30. «Որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»: Եվ նորից ապշեցուցիչ հակադրություն փարիսեցիների հետ: Հի-

սուրը նրանց մասին ասաց. «Ծանր և դժվարակյիք բեռներ են կապում ու դնում մարդկանց ուսերին, բայց իրենք չեն կամենում մատով անգամ շարժել դրանք» (Մատթ. 23:4): Հիսուսի լուծը թեթև է, այն չի ճնշում ուսերը: Ինչ-որ մեկն առաջարկել է, որ եթե Հիսուսն Իր հյուսնի արհեստանոցի առջևի մասում ցուցանակ ունենար, այն այսպես կվերձանվեր. «Իմ լուծը ճիշտ չափով է»:

Նրա **բեռը թեթև է**: Մա չի նշանակում, որ քրիստոնյայի կյանքում դժվարություններ, փորձություններ, տառապանք կամ կսկիծ չկան: Մա նշանակում է, որ մենք միայնակ չենք կրելու դրանք: Մենք լծակից ենք Նրա հետ, Ով բավարար շնորհ է տալիս կարիքի մեջ: Նրան ծառայելը ստրկություն չէ, այլ կատարյալ ազատություն:

Ձ. Հ. Չովելթոն ասում է.

«Հավատացյալը ճակատագրական սրխալի մեջ է ընկնում, երբ փորձում է կյանքի ծանրությունը կրել մեկ օղակով: Աստուծո ծրագրում երբեք չէր նախատեսվել, որ մարդն իր բեռը միայնակ կրեր: Հետևաբար **Քրիստոսը մարդու հետ գործ ունի միայն լծակցության մեջ**: Լուծը պարանոցի լծասարքն է, որ նախատեսված է երկու հոգու համար, և Տերն Ինքն է խրնդրում լինել այդ երկուսից մեկը: Նա ուզում է բաժնեկցել աշխատանքի ցանկացած ծանրությունը: Քրիստոնեական կյանքի խաղաղության և հաղթանակի գաղտնիքն այն է, որ հանենք սեփական «ես»-ի բեռի օղակը և կրենք խաղաղությունն տվող Ուսուցչի «լուծը»:²⁰

Գ. Հիսուսը շաբաթի Տերն է (12:1-8)

12:1. Այս գլխում արձանագրված է անող մերժման ճգնաժամը: Փարիսեցիների անող գայրույթը և թշնամանքն արդեն պատրաստ էր դուրս հորդելու: Տարածայնությունը, որը բացում է դարպասները, շաբաթ օրվա հարցն է:

Այդ յուրահատուկ շաբաթ օրը **Հիսուսը** և Իր աշակերտները անցնում էին **արտերի միջով**: Նրա **աշակերտներն սկսեցին ցորենի հասկերից պոկել և ուտել**: Օրենքը թույլատրում էր հարևանի արտից ցո-

րեն ուտել, եթե գերանդի չէր օգտագործվել (2 Օր. 23:25):

12:2. Բայց **փարիսեցիները**, ովքեր կառչում էին Օրենքի կատարման մանրուքներից, պնդում էին, որ **շաբաթը** խախտվեց: Թեև նրանց հատուկ մեղադրանքները նըշված չեն, հավանական է, որ նրանք մեղադրում էին աշակերտներին. 1. բերքահավաքի (հասկեր պոկելու), 2. կալսումի (ձեռքերով տրորելու), 3. քամահարելու (ցորենը ծղոտից առանձնացնելու) մեջ:

12:3-4. Հիսուսը պատասխանեց նրանց անհեթեթ դժգոհությանը՝ հիշեցնելով **Դավթի** կյանքում տեղի ունեցած միջադեպը: Մի անգամ, արտաքսված լինելով, Դավիթն ու իր մարդիկ գնացին անապատ և կերան **առաջավորության հացերը**, տասներկու հիշարժան հացեր, որ ոչ ոքի չէր թույլատրվում ուտել՝ բացի քահանաներից: Ո՛չ Դավիթը, և ո՛չ էլ նրա մարդիկ քահանաներ չէին, բայց այնուամենայնիվ, Տերը երբեք չմեղադրեց նրանց կատարածի համար: Ինչո՞ւ:

Բանն այն է, որ Աստուծո օրենքը երբեք նպատակադրված չէր վնաս պատճառել Իր հավատարիմ ժողովրդին: Դավիթը մեղավոր չէր, որ նրան արտաքսել էին: Նրան մերժել էր մեղավոր ժողովուրդը: Եթե Իսրայելն իր օրինական տեղում լիներ, ո՛չ Դավիթը, ո՛չ էլ նրա մարդիկ չէին ուտի առաջավորության հացերը: Քանի որ Իսրայելի մեջ մեղք կար, Աստված նրանց թույլ տվեց այդ արգելված արարքը:

Համանմանությունը պարզ է: Տեր Հիսուսը Իսրայելի օրինական Թագավորն էր, բայց ժողովուրդը չընդունեց Նրան՝ որպես Տիրակալի: Եթե Քրիստոսին տրվեր Իր պատշաճ դիրքը, ապա աշակերտները այդքան չէին նվաստանա, որ շաբաթ օրը կամ շաբաթվա մեկ այլ օր այդպես ուտեին: Պատմությունը կրկնվեց: Տերը չհանդիմանեց Իր աշակերտներին, քանի որ նրանք ոչ մի վատ բան չէին արել:

12:5. Հիսուսը փարիսեցիներին հիշեցրեց, որ քահանաները **շաբաթ օրը պղծում են՝ սպանելով և կենդանիներ գոհելով ու կատարելով տաճարի շատ ուրիշ ծառայու-**

յուններ (Թվ. 28:9-10), սակայն **անմեղ են**, քանի որ Աստծուն են ծառայություն մատուցում:

12:6. Եթե փարիսեցիները գիտեին, որ քահանաները աշխատում են տաճարում ամեն շաբաթ և այն չեն պղծում, ապա ինչո՞ւ էին քննադատում աշակերտներին մի բանի համար, ինչը նրանք արեցին *Մեկի* ներկայությամբ, Ով տաճարից մեծ էր: «*Մեկի*» բառը թերևս ավելի լավ է կարդալ «այստեղ տաճարից **ինչ-որ** մեծ բան կա»: Այդ **ինչ-որ բանը** Աստծո Թագավորությունն է՝ ի դեմս Թագավորի:

12:7. Փարիսեցիները երբեք չեն հասկացել Աստծո սիրտը: Ովս. 6:6-ում Նա ասել է. «... **Ողորմություն են ցանկանում և ոչ թե՛ զոհ**»: Աստված կարեկցանքը ծիսակատարությունից վեր է դասում: Նա ավելի կնախընտրեր, որ ժողովուրդը շաբաթ օրը հասկեր պոկեր՝ իրենց քաղցը բավարարելու համար, քան այդ օրը խստորեն պահելով՝ ֆիզիկական հյուծվածություն պատճառել: Եթե փարիսեցիները հասկանային այդ, աշակերտներին չէին մեղադրի: Բայց նրանք արտաքին ճշգրտությունն ավելի բարձր էին գնահատում, քան մարդկային բարօրությունը:

12:8. Այնուհետև Փրկիչն ավելացրեց. «**Որովհետև Մարդու Որդին շաբաթի էլ տերն է**»: Նա հաստատեց Օրենքը, ուստի Նա էր դրա իսկական նշանակությունը մեկնաբանող ամենաորակավորված Անձը:

Ե. Վ. Ռոջերսն ասել է. «Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Մատթեոսը, Հոգու կողմից սովորած, ներկայացնում է Տեր Հիսուսի տիտղոսների և պաշտոնների հակիրճ ամփոփումը. Նա Մարդու Որդին է, Շաբաթի Տերը, Իմ ծառան, Իմ սիրելին, Դավթի Որդին, Տաճարից մեծը, Հովնանից մեծը, Սողոմոնից մեծը: Նա անում է սա, որպեսզի ցույց տա Հիսուսին չընդունելու և Նրա իրավունքներն Իրեն տրամադրելուց հրաժարվելու մեղքի ահագնությունը»:²¹

Մինչ մյուս իրադարձությանն անցնելը՝ Հիսուսի շաբաթ օրը չորացած ձեռքով մարդուն բժշկելը, կանգ առնենք՝ մի ակնարկ

նետելու շաբաթ օրվա մասին սուրբգրային ուսուցման վրա:

ԾԱԲԱԹ

Շաբաթը եղել է և միշտ կմնա շաբաթվա յոթերորդ օրը (շաբաթ օր):

Ստեղծագործության վեց օրերից հետո Աստված 7-րդ օրը հանգստացավ (Ծնն. 2:2): Այն ժամանակ Նա մարդուն չպատվիրեց շաբաթը պահել, թեև կարող էր այս սկզբունքը նկատի ունենալ. յոթ օրերից մեկը հանգստի օր է, որին պետք է հետևել:

Երբ տրվեցին Տասը պատվիրանները, Իսրայել ժողովրդին պատվիրվեց շաբաթը պահել (Ել. 20:8-11): Շաբաթի մասին օրենքը տարբերվում է մյուս ինը պատվիրաններից. դա ծիսական օրենք էր, իսկ մյուսները՝ բարոյական: Շաբաթ օրը չաշխատելու միակ պատճառը Աստծո պատվերն է: Մյուս պատվիրանները գործ ունեն այնպիսի բաների հետ, որոնք ըստ էության սխալ են:

Շաբաթ օրն աշխատելն արգելելը երբեք չի վերաբերել Աստծուն ծառայելուն (Մատթ. 12:5), անհրաժեշտ գործերին (Մատթ. 12:3-4) կամ ողորմության գործերին (Մատթ. 12:11-12): Տասը պատվիրաններից ինը ՆԿ-ում կրկնվում են ոչ թե որպես օրենք, այլ որպես ցուցում շնորհի տակ ապրող քրիստոնյաների համար: Միակ պատվիրանը, որը քրիստոնյաներին երբեք չի ասվել կատարել, շաբաթ օրը պահելու պատվիրանն է: Փոխարենը՝ Պողոսը սովորեցնում է, որ քրիստոնյային չի կարելի դատել այն բանի համար, որ նա չի կարողացել պահել շաբաթը (Կող. 2:16):

Քրիստոնյաների համար հատուկ օր է համարվում շաբաթվա առաջին օրը: Հիսուս Քրիստոսն այդ օրն է հարություն առել մեռելներից (Հովհ. 20:1)՝ ի սպացույց այն բանի, որ քավության գործն ավարտված և հաստատված է Աստծո կողմից: Տերունական հաջորդ երկու օրերը Նա հանդիպել է Իր աշակերտների հետ (Հովհ. 20:19, 26): Շաբաթվա առաջին օրում Սուրբ Հոգին է տրվել (Գործք 2:1, հմմտ. Ղև. 23:15-16): Առաջին աշակերտները հաց կտրելու համար

այդ օրն էին հանդիպում՝ վկայելով Տիրոջ մահը (Գործք 20:7): Սա Աստծո կողմից հաստատված օր է, երբ բոլոր քրիստոնյաները պետք է իրենց միջոցները հավաքեն Տիրոջ գործի համար (1 Կոր. 16:1-2):

Շաբաթը կամ 7-րդ օրը վրա է հասնում աշխատանքային շաբաթվա վերջում, իսկ Տիրոջ օրը կամ կիրակին շաբաթն սկսում է այն հանելի գիտակցությամբ, որ փրկության գործն ավարտված է: Շաբաթը հիշեցնում է առաջին արարչագործության մասին, իսկ Տերունական օրը՝ նոր ստեղծագործության: Շաբաթ օրը պարտավորության օր էր, իսկ Տերունական օրը առանձնաշնորհման օր է:

Քրիստոնյաները Տիրոջ օրը չեն պահում որպես փրկություն վաստակելու կամ սրբության հասնելու, ոչ էլ պատժից խուսափելու միջոց: Նրանք առանձնացնում են այդ օրը մնացած օրերից՝ ի պատասխան սիրո, նվիրաբերում են Նրան, Ով Իրեն մահվան մատնեց իրենց համար: Առօրյա գործերից ազատ լինելով՝ այդ օրը կարող ենք առանձնացնել՝ հատուկ ձևով Քրիստոսին պաշտելու ու ծառայելու համար:

Ճիշտ չէ պնդել, որ շաբաթը փոխարինվեց Տիրոջ օրով: Շաբաթը շաբաթն է, իսկ Տերունական օրը՝ կիրակին: Շաբաթը ստվերն էր, իսկ Լույսը՝ Քրիստոսն է (Կող. 2:16-17): Քրիստոսի հարությունը նշանավորեց նոր սկիզբ, և Տերունական օրը այդ սկիզբն է նշում:

Որպես հավատարիմ, Օրենքով ապրող հրեա՝ Հիսուսը պահում էր շաբաթը (ի հեճուկա փարիսեցիների մեղադրանքների): Որպես շաբաթվա Տեր՝ Նա մաքրեց այն կեղծ օրենքներից և կանոններից, որոնցով այն պատված էր:

Ե. Հիսուսը բժշկում է շաբաթ օրը (12:9-14)

12:9. Անցնելով **արտերի միջով**՝ Հիսուսը **գնաց ժողովարան**: Ղուկասը մեզ պատմում է, որ այնտեղ էին նաև դպիրներն ու փարիսեցիները, ովքեր հետևում էին Նրան, որպեսզի Նրա դեմ ինչ-որ մեղադրանք գտնեին (Ղուկ. 6:6-7):

12:10. Ժողովարանում **կար մի մարդ, որի ձեռքը չորացած էր**. սա փարիսեցիների՝ նրան օգնելու անկարողության համար վկայությունն էր: Մինչ այդ օրը նրանք սառը արհամարհանքով էին վերաբերվում նրան: Բայց հանկարծ նրանց համար նա դարձավ Հիսուսին ծուղակը գցելու արժեքավոր միջոց: Իմանալով, որ Փրկիչը միշտ հակված է թեթևացնելու մարդկային թշվառությունը, նրանք խորհում էին, որ եթե Նա շաբաթ օրը բժշկություն անի, կկարողանան Նրան բռնել պատժի արժանի արարքի մեջ: Եվ ահա նրանք սկսեցին Օրենքի վրա հիմնված հարցից. **«Օրինավոր է շաբաթ օրը բժշկություն անել»:**

12:11. Ի պատասխան՝ Փրկիչը նրանց հարցրեց. **«Մի՞թե իրենց ոչխարին վեր չեն հանի փոսից շաբաթ օրը»:** Իհարկե՛, կհանեն: Ինչո՞ւ: Գուցե նրանք պատճառաբանեին, թե դա ողորմության գործ է, բայց նաև կարող էին ունենալ մեկ այլ նկատառում. ոչխարը գումար արժեք, իսկ նրանք չէին ուզում ֆինանսական կորուստ կրել նույնիսկ շաբաթ օրը:

12:12. Մեր Տերը նրանց հիշեցրեց, որ մարդը շատ ավելի **արժեքավոր է, քան ոչխարը**: Եթե կենդանուն ողորմություն ցուցաբերելն օրինավոր է, ապա շատ ավելի արդարացի է մարդուն **շաբաթ օրը բարիք գործելը**:

12:13-14. Բռնելով հրեա առաջնորդներին իրենց սեփական ազատության ծուղակում՝ Հիսուսը բժշկեց չորացած ձեռքով մարդուն: Պատվիրելով **մարդուն ձեռքը մեկնել**՝ գործադրվեցին հավատը և մարդկային կամքը: Այնուհետև հնազանդությունը պարզևատրվեց բժշկությամբ: Շնորհիվ հիանալի Արարչի՝ ձեռքն **առողջ էր, ինչպես մյուսը**: Գուցե մտածեք, թե փարիսեցիներն ուրախացան, որ այդ մարդը, ում իրենք անգոր էին օգնելու, բժշկվեց: Ընդհակառակը, նրանք զայրացան և Հիսուսի դեմ **խորհուրդ արին**, թե ինչպես սպանեն **Նրան**: Եթե նրանցից որևէ մեկը չորացած ձեռք ունենար, շատ ուրախ կլիներ բժշկվելու շաբաթվա ցանկացած օր:

2. Բժշկություն բոլորի համար (12:15-21)

12:15-16. Երբ Հիսուսը իմացավ Իր թըշնամիների մտքերը, **հեռացավ այնտեղից**: Այդուհանդերձ, ուր որ Նա գնում էր, մեծ բազմություն էր հավաքվում, և որտեղ որ հավաքվում էին հիվանդները, **Նա բոլորին բժշկում էր**, սակայն պատվիրում էր նրանց չհրապարակել Իր հրաշալի բժշկությունների մասին, ոչ թե Իրեն վտանգից պաշտպանելու համար, այլ որպեսզի խուսափեր ամբոխի ցանկացած շարժումից, որ պատրաստ էր Նրան դարձնելու հայտնի հեղափոխական հերոս: Աստվածային ժամանակացույցը պետք է պահել: Նրա հեղափոխությունը գալու էր, բայց ոչ թե հռոմեական արյունը թափելով, այլ Իր սեփականը:

12:17-18. Նրա շնորհալի առաքելությունը **Եսայու** մարգարեության իրականացումն էր (41:9, 42:1-2): **Մարգարեն** կանխատեսել էր Մեսիային՝ որպես հեզագարո Հաղթողի: Նա պատկերեց Հիսուսին՝ որպես **Ծառայի, ում ընտրել է Եհովան, Սիրելին, Ում Աստծո Անձը հավանեց**: «Աստված Իր Հոգին Նրա վրա դրեց» արտահայտությունը մարգարեություն է, որը կատարվել է Հիսուսի մկրտության ժամանակ: Նրա ծառայությունը դուրս է գալու Իսրայելի շրջանակներից, **Նա արդարությունը հեթանոսներին պիտի հայտնի**: Վերջինս դառնում է ավելի գերիշխող, քանի որ Իսրայելի «ՈՉ»-ը ավելի բարձր է հնչում:

12:19. Այնուհետև Եսային մարգարեացավ, որ Մեսիան չի հակառակվելու և չի աղաղակելու, և որ **Նրա ձայնը** չեն լսելու **հրապարակների մեջ**: Այլ կերպ ասած, Նա չի լինելու բազմության քաղաքական ոգեշնչողը, որ մարդկանց բորբոքի:

Մակ-Քլեյնը գրում է. «Այս Թագավորը, Ով Աստծո «ծառան է», Իր օրինական բարձր դիրքին չի ձգտելու մարմնական ուժի միջոցով կամ քաղաքական դեմագոգիայով, ո՛չ էլ Իր ենթակայության տակ գտնվող գերբնական ուժերի օգնությամբ»:²²

12:20. Նա **ջախջախված եղեգը** չպիտի փշրի կամ **հանգռո պատրույզը չպիտի**

մարի: Նա չի ոտնահարելու աղքատներին և իրավագուրկներին Իր նպատակներին հասնելու համար: Նա խրախուսելու և ամրապնդելու է ճնշված և սրտով կոտրված մարդուն: Նա մինչև իսկ պիտի խանդավառի հավատի ամենափոքր կայծը մինչև բոցավառվելը: Նրա ծառայությունը պիտի շարունակվի, մինչև որ Նա **արդարությունը հաղթության հասցնի**: Մարդկային ապերախտությունը և ատելությունը չեն կարող մարել Նրա խոնարհ, սիրալիք վերաբերմունքն ուրիշների նկատմամբ:

12:21. Եվ հեթանոսները Նրա անվանը պիտի հուսան: Թեև Եսային ուրիշ բառեր է օգտագործում. «... Կոզիները սպասելու են Նրա օրենքին», սակայն նշանակությունը նույնն է. «կոզիները» վերաբերում է հեթանոս ժողովուրդներին: Նրանք ներկայացված են որպես Նրա Թագավորությանը սպասողներ, որպեսզի դառնան Նրա հավատարիմ հպատակները: Կլեյստը և Լիլին բարձր են գնահատում Եսայու այս մեջբերումը.

«... Ավետարանի գոհարներից մեկը՝ Քրիստոսի գեղեցկության պատկերը... Եսային պատկերում է Քրիստոսի միասնությունն Իր Հոր հետ, ազգերին սովորեցնելու Նրա առաքելությունը, Նրա մեծահոգությունը տառապող մարդկանց հետ հանդեպ և Նրա վերջնական հաղթանակը. աշխարհի համար ուրիշ հույս չկա՝ բացի Նրա Անունից: Քրիստոսը՝ աշխարհի Փրկիչը, ներկայացված չէ գիտական չոր եզրույթներով, այլ զգեստավորված է արևելյան հարուստ պատկերներով»:²³

Է. Անների մեղքը (12:22-32)

12:22-24. Երբ Հիսուսը բժշկեց **կույր ու համր դիվախարին**, հասարակ մարդիկ սկսեցին լրջորեն խորհել, որ Նա կարող է լինել **Դավթի Որդին**՝ Իսրայելի Մեսիան: Սա զայրացրեց **փարիսեցիներին**: Չկարողանալով հանդուրժել Հիսուսի հանդեպ եղած որևէ համակրանք՝ նրանք բարկությամբ մեղադրեցին Նրան՝ հայտարարելով, թե այդ հրաշքը կատարվել է **դևերի իշխան Բեեղզբուղի** գորությամբ: Դիվային

գորություն ունենալու չարագուշակ մեղադրանքը առաջին բացահայտ արտահայտությունն էր:

12:25-26. Կարդալով մարդկանց խորհուրդները՝ Հիսուսը մերկացրեց նրանց անմըտությունը: Նա մատնանշեց, որ ոչ մի **թագավորություն, որ ինքն իր մեջ բաժանված է, կանգուն չի մնա:** Եթե Նա սատանայի դևերին հանում էր դիվային գորությամբ, ուրեմն սատանան **ինքն իր դեմ էր** աշխատում, որ անհեթեթություն էր:

12:27. Մեր Տերն ուներ երկրորդ ջախջախիչ պատասխանը փարիսեցիների համար: Նրանց հրեա գործակիցներից մի քանիսը, որ հայտնի էին որպես երդվեցնողներ, պընդում էին, թե դևերին հանելու գորություն ունեն: Հիսուսը ո՛չ ընդունեց, ո՛չ էլ մերժեց նրանց հայտարարությունը, բայց այն օգտագործեց՝ մատնանշելու, որ **եթե Ինքը Բեեղզեբուղով է հանում դևերին**, ապա «փարիսեցիների» **որդիները** (այսինքն՝ այս երդվեցնողները) նույնն են անում: Փարիսեցիները երբեք չէին համաձայնի սրա հետ, այսուամենայնիվ չէին կարող դիմակայել փաստարկի տրամաբանությանը: Ընկերները կդատապարտեին նրանց իրենց որպես սատանայի մեղսակիցներ, ոգիներ երդվեցնողներ նկատելու պատճառով:

Սկոֆիլդն ասել է. «Փարիսեցիներն անմիջապես իրենց վրդովմունքը ցույց տվեցին սատանայական ուժերի հետ որևէ առնչություն ունենալու դեմ, քանի դա վերաբերում էր նրանց և նրանց որդիներին, սակայն նրանց մեղադրանքները դարձան անհիմն, քանի որ եթե Քրիստոսը դևերին հաներ Բեեղզեբուղի գորությամբ, նրանց որդիները կդատապարտեին նրանց անհետևողականության համար. քանի որ եթե ոգիներ հանելու իշխանության աղբյուրը սատանան է, ապա ամեն ոք, որ ունի այս իշխանությունը, դաշինքի մեջ է այդ գորության աղբյուրի հետ»:²⁴

Նրանք տրամաբանորեն չէին վարվում նմանատիպ իրադարձությունները տարբեր պատճառների վերագրելով:

12:28. Հիսուսն **Աստծո Հոգով էր հանում**

դևերին: Իր երկրավոր կյանքը Նա ապրեց Սուրբ Հոգու գորությամբ: Նա Հոգով լրցված Մեսիան էր, Ում մասին մարգարեացել էր Եսային (Ես. 11:2, 42:1, 61:1-3): Ուստի Նա փարիսեցիներին ասաց. **«Եթե Ես Աստծո Հոգով եմ հանում դևերին, ուրեմն Աստծո Թագավորությունը եկել է ձեզ վրա»:** Այս հայտարարությունը պետք է լիներ ջախջախող հարված: Նրանք հպարտանում էին իրենց աստվածաբանական գիտելիքներով, և **Աստծո Թագավորությունը եկել է նրանց վրա**, քանի որ Թագավորը նրանց մեջ էր, իսկ նրանք նույնիսկ չհասկացան, որ Նա այնտեղ է:

12:29. Հեռու լինելով սատանայի հետ դաշինքից՝ Տեր Հիսուսը սատանային հաղթողն էր: Սա Նա լուսաբանում է **գորավոր մարդու** մասին պատմությամբ: **Չորավոր մարդը** սատանան է: Նրա **տունը** այս երկրագունդն է, որտեղ նա իր ձեռքում է պահում իշխանությունը: Նրա **գույքը** դևերն են: Հիսուսը Նա է, Ով **գորավոր մարդուն կապում է**, մտնում է նրա **տունը** և կողոպտում **նրա գույքը**: Սատանային կապելը տեղի է ունենում փուլերով: Այն սկսվեց Հիսուսի քարոզչական ծառայության ընթացքում: Այն վճռականապես երաշխավորվեց Քրիստոսի մահով և հարությանբ: Այն կիրականանա ավելի քարձր մակարդակում Թագավորի Հազարամյա Թագավորության ժամանակ (Հայտ. 20:2): Եվ վերջապես, այն հավիտյան կիրականանա, երբ սատանան զգվի կրակե լճի մեջ (Հայտ. 20:10): Ներկայումս թվում է, թե սատանան կապված չէ. նա զգալի ուժ է դեռ գործադրում: Բայց նրա կործանումը որոշված է, և նրա ժամանակը կարճ է:

12:30. Ուստի Հիսուսն ասաց. **«Ով Ինձ հետ չէ, հակառակ է Ինձ. և ով Ինձ հետ չի հավաքում՝ ցրում է»:** Փարիսեցիների սրբապիղծ վերաբերմունքը ցույց էր տալիս, որ նրանք Տիրոջ հետ չեն. հետևաբար **հակառակ** են Նրան: Հրաժարվելով Նրա հետ հավաքելուց, նրանք ցրում էին հատիկները: Նրանք մեղադրում էին Հիսուսին սատանայի գորությամբ դևերին հանելու մեջ այն դեպքում, երբ իրենք էին սատա-

նայի ծառաները, որ փորձում էին Աստծո գործին վնաս հասցնել:

Մարկ. 9:40-ում Հիսուսն ասաց. «... Ով մեզ հակառակ չէ՝ մեր կողմն է»: Մա կարծես Մատթ. 12:30-ում գրված Նրա խոսքերի ուղիղ տեղափոխությունն է: Խնդիրը կյուծվի, երբ մենք հասկանանք, որ Մատթեոսի մոտ սա *փրկության* հարց է: Մարդը կամ կողմ է Քրիստոսին, կամ՝ Նրան հակառակ, չեզոք դիրք գոյություն չունի: Մարկոսի մոտ խոսքը *ծառայության* մասին է: Հիսուսի աշակերտների միջև կան շատ տարբերություններ՝ տեղական եկեղեցական պաշտամունքը, մեթոդների և վարդապետությունների մեկնաբանությունը: Ըստ այս կանոնի՝ եթե մարդը Տիրոջը հակառակ չէ, ապա Նրա կողմն է և պետք է ըստ այդմ հարգվի:

12:31-32. Այս համարները նշում են Իսրայելի առաջնորդների ճգնաժամային հարաբերությունը Քրիստոսի հետ: Նա մեղադրում է նրանց աններելի մեղքի՝ Սուրբ Հոգու դեմ եղած հայհոյության մեջ, այսինքն՝ ըստ հաստատման, Հիսուսն Իր հրաշքները կատարել է սատանայի, ոչ թե Սուրբ Հոգու գործությամբ: Փաստորեն նրանք Սուրբ Հոգուն անվանեցին Բեեթղեբուդ, դևերի իշխան:

Ամեն տեսակի մեղք և **հայհոյություն կներվեն**: Մարդը կարող է հայհոյություն անել նույնիսկ **Մարդու Որդուն** և ներում ստանալ: Բայց Սուրբ Հոգուն հայհոյել նշանակում է մեղք գործել, որի համար չկան ներում **ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ գալիք աշխարհում**՝ Հազարամյա Թագավորության մեջ: Երբ Հիսուսն ասաց «**այս աշխարհում**», Նա խոսում էր Իր երկրավոր քարոզչական ծառայության օրերի մասին: Մի տրամաբանական կասկած կա, թե արդյոք կարելի՞ է այդ աններելի մեղքը այսօր գործել, քանի որ Հիսուսը, հրաշքներ անելով, մարմնապես ներկա չէ երկրի վրա:

Աններելի մեղքը նույնը չէ, ինչ-որ Ավետարանի մերժումը. մարդը կարող է տարիներ շարունակ արհամարհանքով Փրկչին

մերժել, հետո ապաշխարել, հավատալ ու փրկվել: (Իհարկե, եթե նա անապաշխար մեռնի, ապա կմնա չներված): Չի կարելի աններելի մեղքը նույնացնել հավատորացության հետ: Հավատացյալը կարող է Տիրոջից հեռու դեգերել և դեռ վերականգնվել ծառայության մեջ Աստծո ընտանիքում:

Շատ մարդիկ անհանգստանում են, որ գործել են աններելի մեղքը: Եթե նույնիսկ հնարավոր լիներ այդ մեղքն այսօր գործել, այն փաստը, որ դա անհանգստացնում է մարդուն, հաստատում է, որ նա այդ մեղքը չի գործել: Նրանք, ովքեր գործեցին դա, անկոտրում էին և աննկուն Քրիստոսի հանդեպ իրենց ընդդիմության մեջ: Նրանց չէր անհանգստացնում Հոգուն վիրավորելու հարցը և ոչ էլ Որդուն սպանելու դավադրությունը: Նրանք ո՛չ խղճի խայթ ցուցաբերեցին, ո՛չ էլ գոջում:

Ը. Ծառը ճանաչվում է պտղից (12:33-37)

12:33. Փարիսեցիները նույնպես պետք է ընդունեին, որ Տերը բարիք արեց դևերին հանելով: Այնուամենայնիվ, նրանք Նրան մեղադրեցին չար լինելու մեջ: Նա բացահայտեց նրանց անհաստատությունն ու ասաց. «Ինքներդ դատեք: Եթե **ծառը բարի է**, ապա **նրա պտուղն էլ է բարի**, և հակառակը»: Պտուղն արտացոլում է ծառի որակը, որ արտադրում է այն: Հիսուսի ծառայության պտուղը բարի էր: Նա բժշկում էր հիվանդներին, կույրերին, խուլերին և համրերին, հանում էր դևերին և մեռելներին հարություն տալիս: Արդյոք կարո՞ղ էր փչացած ծառն այդքան լավ պտուղ տալ: Դա պարզապես անհնար է: Ապա ինչո՞ւ էին նրանք այդքան համառորեն մերժում Նրան:

12:34-35. Պատճառն այն էր, որ նրանք **իծերի ծնունդներ** էին: Նրանց չարությունը Մարդու Որդու դեմ էր, որ հաստատվում է նրանց չար խոսքերով և բխում էր նրանց չար սրտի լիությունից²⁵: Բարությանը լըցված սիրտը կարտացոլվի շնորհի և արդարության խոսքերով: Չար սիրտն ինքնիրեն դրսևորում է հայհոյությամբ, դառնությամբ և կռիվներով:

12:36. Հիսուսը հանդիսավոր ձևով նրանց (և մեզ) հայտարարեց, որ մարդիկ **հաշիվ պիտի տան ամեն դատարկ խոսքի համար**: Քանի որ մարդկանց ասած խոսքերն արտացոլում են նրանց կյանքը, ապա դրանք համապատասխան հիմք են հայթայթում դատապարտման կամ արդարանալու համար: Ինչ մեծ է լինելու փարիսեցիների դատապարտությունն այն բոլոր սարսափելի և արհամարհական խոսքերի համար, որ ասացին Աստծո սուրբ Որդու դեմ:

12:37. «**Որովհետև քո խոսքերով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես**»: Ինչ վերաբերում է հավատացյալներին, ապա նրանց չմտածված խոսքերի համար պատիժն արդեն վճարվել է Քրիստոսի մահվան շնորհիվ, սակայն մեր չմտածված խոսքերը, որոնք չեն խոստովանվել և չեն ներվել, Քրիստոսի ատյանի առջև հանգեցնելու են վարձատրության կորստի:

Թ. Հովնան մարգարեի նշանը (12:38-42)

12:38. Չնայած Հիսուսի կատարած բոլոր հրաշքներին, դպիրներն ու փարիսեցիները հանդգնարար Նրանից **նշան** էին պահանջում՝ ակնարկելով, որ *կհավատան* Նրան, եթե ապացուցի, որ Ինքը Մեսիան է: Բայց նրանց կեղծավորությունը բացահայտ էր: Եթե այդքան հրաշքներ տեսնելով չհավատացին, մի՞թե պիտի համոզվեին, եթե դրանք մեկով ավելացվեին: Այն դիրքորոշումը, որ հավատալու համար նշան է պահանջում, Աստծուն չի գոհացնում: Ինչպես Հիսուսն ասաց Թովմասին. «Երանի նրանց, որ չեն տեսել, բայց կհավատան» (Հովհ. 20:29): Աստծո մոտ, տեսնելը հետևում է հավատալուն:

12:39. Տերը դիմում է նրանց՝ որպես **չար ու շնացող սերնդի**: Չար, քանի որ գիտակցաբար չուզեցին տեսնել իրենց Մեսիային, **շնացող**, քանի որ հոգևորապես անհավատարիմ էին իրենց Աստծուն: Նրանց Արարիչ-Աստվածը, անգուգակալան Անձնավորությունը, որ Իր մեջ միավորում է բացարձակ աստվածությունն ու կատարյալ մարդե-

ղությունը, կանգնած էր նրանց մեջ, խոսում էր նրանց հետ, և դեռ նրանք համարձակվում էին Նրանից նշան պահանջել:

12:40. Նա հակիրճ պատասխանեց նրանց, որ ոչ մի նշան **չի տրվի՝ բացի Հովնան մարգարեի նշանից՝** նկատի ունենալով Իր մահը, թաղումը և հարությունը: Հովնանի փորձառությունը, երբ ձուկը կուլ տվեց նրան, իսկ հետո փսխեց (Հով. 1:17, 2:10), Տիրոջ չարչարանքների և հարության նախապատկերն էր: Նրա հարությունը պետք է լիներ վերջնական, կուլմիևացիոն նշան Իր ծառայության մեջ Իսրայելի ազգին:

Ինչպես Հովնանը երեք օր և երեք գիշեր կետի փորում էր, այնպես մեր Տերը կանխատեսեց, որ Ինքը երեք օր ու **երեք գիշեր երկրի սրտում կլինի**: Հարց է ծագում. եթե հավատում ենք ընդունված կարգով, որ Հիսուսը թաղվեց ուրբաթ օրը կեսօրից հետո և հարություն առավ կիրակի առավոտյան, ապա ինչո՞ւ են ասում, որ Նա երեք օր ու երեք գիշեր մնաց գերեզմանում: Պատասխանը հետևյալն է. համաձայն հրեական հաշվարկի՝ օրվա և գիշերվա ցանկացած մասը հաշվում են որպես ամբողջական ժամանակահատված: «Օրը և գիշերը կազմում են *«օնահ»*-ը, իսկ *«օնահ»*-ի մի մասը դիտվում է որպես ամբողջություն» (հրեական ասացվածք):

12:41. Հիսուսը երկու հակադրությունների միջոցով ցույց տվեց հրեա առաջնորդների հանցանքը: Առաջինը՝ **Նինվեում** ապրող հեթանոսները, որ ավելի քիչ առավելություններ ունեին, լսելով շրջիկ **Հովնան** մարգարեի **քարոզչությունը**, խորը գոշումով **ապաշխարեցին**: Նրանք **դատաստանի օրը պիտի վեր կենան**, որպեսզի դատապարտեն Հիսուսի օրոք ապրողներին, որ չընդունեցին **Հովնանից մեծին՝** մարմնավորված Աստծո Որդուն:

12:42. Երկրորդ՝ հեթանոս **Սաբայի թագուհին**, չունենալով հրեաների առավելությունը, **հարավից** եկավ Սողոմոնի հետ գրուցելու, ինչը պահանջում էր մեծ ծախսեր և ջանք: Հիսուսի ժամանակաշրջանի հրեաները Նրան տեսնելու համար ճամ-

փորդելու կարիք չունեին. Նա Երկնքից եկել էր նրանց փոքրիկ թաղամասը, որպեսզի դառնար նրանց Մեսիա-Թագավորը: Եվ նրանց կյանքում տեղ չգտնվեց Նրա համար, Ով ավելի **մեծ էր Սողոմոնից**: Հեթանոս թագուհին դատաստանի օրը դատապարտելու է նրանց նման քմահաճ անտարբերության համար:

Այս գլխում մեր Տերը ներկայացված է որպես Մեկը, Ով մեծ է *տանարից* (հ. 6), մեծ է *Հովնանից* (հ. 41) և *Սողոմոնից* (հ. 42): Նա «մեծ է մեծագույնից և շատ ավելի լավն է, քան լավագույնը»:

Ժ. Պիղծ ոգու վերադարձը (12:43-45)

12:43-44. Այժմ Հիսուսը փոխաբերական ձևով ամփոփում է անհավատ Իսրայելի անցյալը, ներկան և ապագան: **Մարդը**, ում մասին գրված է այստեղ, ներկայացնում է հրեա ժողովրդին: **Պիղծ ոգին** կռապաշտությունն է, ինչը բնորոշ էր այդ ազգին՝ Եգիպտոսում եղած ստրկությունից մինչև բաբելոնյան գերությունը (որը ժամանակավորապես բժշկեց Իսրայելին իր կռապաշտությունից): Սա կարծես թե պիղծ ոգու **մարդուց դուրս գալը** լիներ: Սկսած գերության ավարտից մինչև ներկա օրերը հրեաները կուռքերին չեն երկրպագել: Նրանք նման են **պարապ, մաքուր և հարդարված** տան:

Ավելի քան տասնինը հարյուրամյակ առաջ մեր Փրկիչը ջանացել է այդ դատարկ տանը ընդունելության արժանանալ: Նա այդ տան օրինական Բնակիչն է, Տերը, բայց մարդիկ համառորեն հրաժարվեցին Նրան ներս ընդունելուց: Թեև նրանք այլևս չէին երկրպագում կուռքերին, սակայն չէին երկրպագում նաև ճշմարիտ Աստծուն:

Պարապ տունը խոսում է հոգևոր դատարկության վտանգավոր վիճակի մասին, ինչպես ցույց են տալիս հետևանքները: Բարեփոխումը բավարար չէ: Պետք է իսկապես ընդունել Փրկչին:

12:45. Ի վերջո կռապաշտության ոգին որոշում կկայացնի տուն վերադառնալ **իրենից ավելի չար՝ յոթ ոգիների** ուղեկցությամբ: Քանի որ յոթը կատարելության կամ

ամբողջության թիվ է, ապա սա հավանաբար վերաբերում է կռապաշտության լիովին զարգացած ձևին: Սա ակնկալվում է ապագայում՝ Մեծ նեղության ժամանակ, երբ հավատուրաց ազգը երկրպագելու է Նեթին: Մեղքի մարդու առաջ խոնարհվելն ու նրան՝ որպես աստծո երկրպագելը կռապաշտության ավելի սարսափելի ձև է, քան ազգը երբևէ մեղանչել է անցյալում: Ուստի **մարդու վերջը** դառնում է **ավելի չար, քան առաջ էր**: Մեծ նեղության ժամանակ անհավատ Իսրայելը սարսափելի պատիժներ է կրելու, և նրա տառապանքները գերազանցելու են բաբելոնյան գերության տառապանքներին: Ժողովրդի կռապաշտ մասը լիովին բնաջնջվելու է Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ:

«Այդպես կլինի և այս չար սերնդին»: Այդ նույն հավատուրաց, Քրիստոսին մերժող ժողովուրդը, որ արհամարհեց Աստծո Որդուն Նրա առաջին գալստյան ժամանակ, դաժանորեն պատժվելու է Նրա երկրորդ գալստյան ժամանակ:

Ի. Հիսուսի մայրն ու եղբայրները (12:46-50)

Այս համարներում նկարագրված է սովորական թվացող մի դեպք, երբ Հիսուսի ընտանիքը եկավ Նրա հետ խոսելու: Ինչո՞ւ էին նրանք եկել: Այս իրադարձությունը հասկանալու բանալին մեզ կարող է տալ Մարկոսը: Հիսուսի հարազատներից մի քանիսը որոշեցին, որ Նա խենթացել է (Մարկ. 3:21, 31-35), և Նրա ընտանիքի անդամները եկել էին՝ Նրան հանդարտորեն տուն տանելու (տե՛ս նաև Հովհ. 7:5): Երբ Հիսուսին ասացին, որ **Նրա մայրն ու եղբայրները** սպասում են **դրսում՝ ուզենալով Իր հետ խոսել**, Տերը հարցով պատասխանեց. «Ո՞վ է Իմ մայրը, և ովքե՞ր են Իմ եղբայրները»: Այնուհետև մատնացույց անելով **Իր աշակերտներին՝** Նա ասաց. **«Ով Իմ Հոր կամքն է կատարում, որ երկնքում է, նա՛ է Իմ եղբայրը, քույրը և մայրը»:**

Այս ցնցող հայտարարությունը հոգևոր իմաստ ունի. այն նշանավորում է Հիսուսի հարաբերությունների հստակ շրջադարձը

Իսրայելի հետ: Մարիամը և նրա որդիները ներկայացնում էին Իսրայելի ժողովրդին՝ Հիսուսի արյունակից հարազատներին: Մինչև հիմա Նրա ծառայությունը հիմնականում ուղղված էր Իսրայելի տան կորած ոչխարներին: Բայց պարզ էր դառնում, որ Իր սեփական ժողովուրդը Նրան չէր ուզում: Իրենց Մեսիայի առջև խոնարհվելու փոխարեն՝ փարիսեցիները Հիսուսին մեղադրեցին սատանայի կողմից վերահսկվելու մեջ:

Այնպես որ Հիսուսը հիմա հայտարարում է նոր կարգավիճակի մասին: Այսուհետև Նրա հարաբերություններն Իսրայելի հետ չեն լինելու Նրա գործողությունների որոշիչ գործոնը: Թեև Նրա կարեկցող սիրտը պիտի շարունակի բարեխոսել մարմնի կողմից Իր հայրենակիցների համար, 12-րդ գլուխն ազդանշան է տալիս, որ Նրա և Իսրայելի միջև ճեղքվածքն ակնհայտ է: Սրա հետևանքները պարզ են: Իսրայելը չընդունեց Նրան, նշանակում է Նա կդառնա դեպի նրանց, ովքեր կուզեն Նրան ընդունել: Արյունակցական կապերը կփոխարինվեն հոգևոր կապերով: Աստծո հանդեպ հնազանդությունն է, որ հրեա և հեթանոս մարդկանց կրեթի կենսական հարաբերության Նրա հետ:

Նախքան այս միջադեպը թողնելը մենք պետք է հիշատակենք երկու տեսակետ, որոնք վերաբերում են Հիսուսի մորը: Առաջին՝ ակնհայտ է, որ Մարիամը արտոնյալ դիրք չի ունեցել Նրա ներկայության մեջ գտնվելու համար: Երկրորդ՝ Հիսուսի եղբայրների հիշատակումը հարված է հասցրել Մարիամի ցմահ կույս լինելու ուսմունքին: Նրանց մասնակցությունը տվյալ միջադեպին ավելի է հիմնավորում այն տեսակետը, որ նրանք իսկապես Մարիամի որդիներն էին, հետևաբար մեր Տիրոջ արյունակից եղբայրները: Այս տեսակետը հաստատվում է նման այլ գրություններով, ինչպիսիք են՝ Մղմ. 69:8, Մատթ. 13:55, Մարկ. 3:31-32, 6:3, Հովհ. 7:3, 5, Գործք 1:14, 1 Կոր. 9:5, Գաղ. 1:19:

**VIII. ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ
ՄԵՐԺՎԱԾ ԹԱԳԱՎՈՐԸ
ՀՌԶԱԿՈՒՄ Է ՆՈՐ,
ՄԻՉԱՆԿՅԱԼ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ
(13-րդ գլ.)**

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԿՆԵՐԸ

Մենք մոտեցել ենք Մատթեոսի Ավետարանի կրիտիկական կետին: Տերը մատնանշեց, որ երկրավոր փոխհարաբերություններն այսուհետ պետք է փոխարինվեն հոգևոր կապերով, և այլևս կարևոր է ոչ թե հրեական ծագումը, այլ Հայր Աստծո հանդեպ հնազանդությունը: Թագավորին մերժելով՝ դպիրները և փարիսեցիներն անխուսափելիորեն մերժեցին նաև Թագավորությունը: Այժմ մի շարք առակներով Տեր Հիսուսը ցույց է տալիս նոր ձև, որը Թագավորությունն ունենալու է Նրա մերժման և որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր հայտնվելու միջև ընկած ժամանակահատվածում: Այդ առակներից վեցը սկսվում են հետևյալ արտահայտությամբ. «Երկնքի Թագավորությունը նման է...»:

Որպեսզի ճիշտ դիտարկենք այս առակները, եկե՛ք հիշենք Թագավորության մասին քննարկումները, որոնք գրված են 3-րդ գլխում: Երկնքի Թագավորությունն այն ուրախ է, որտեղ ճանաչվել է Աստծո իշխանությունը: Այն ունի երկու հայեցակարգ. 1. *արտաքին դավանություն*, որ ներառում է բոլոր նրանց, ովքեր պնդում են, որ ճանաչում են Աստծո իշխանությունը, 2. *ներքին իրողություն*, որ ներառում է միայն նրանց, ովքեր դարձի գալով մտնում են Թագավորության մեջ:

Մենք կարդում ենք Թագավորության հինգ փուլերի մասին. 1. հինկտակարանյան փուլ, որի մեջ այն մարգարեացվել էր, 2. փուլ, որի մեջ այն «մոտեցել էր» կամ ներկա էր ի դեմս Թագավորի, 3. միջանկյալ փուլ, երբ Թագավորի մերժման և Նրա երկինք վերադառնալու հետ մեկտեղ երկրի վրա լինելու են մարդիկ, ովքեր դավանելու են, որ իրենք Թագավորի հպատակներն են,

4. Նրա տեսանելի ներկայությունը Հագարամյա Թագավորության ժամանակ, 5. և վերջապես, հավիտենական Թագավորությունը: Թագավորության մասին աստվածաշնչյան յուրաքանչյուր հղում կարող է վերաբերել այս փուլերից մեկին: 13-րդ գլխում քննարկվում է երրորդ փուլը: Այդ փուլի ընթացքում՝ Հոգեգալստից մինչև հափշտակությունը, կազմվում է Թագավորության ներքին իրողությունը (ճշմարիտ հավատացյալները), նույն ինքը՝ Եկեղեցին: Սա միակ բանն է, որ միավորում է Եկեղեցին և Թագավորությունը, այլապես նրանք նրման չեն:

Այս ամենի յույսի ներքո եկե՛ք անդրադառնանք առակներին:

Ա. Սերմնացանի առակը (13:1-9)

13:1. Հիսուսը, տնից դուրս գալով, որտեղ դիվահարին էր բժշկել, **նստեց** Գալիլիայի **ծովափին**: Աստվածաշնչի շատ ուսումնասիրողներ այդ տունը դիտում են որպես Իսրայել ժողովրդի, իսկ ծովը՝ հեթանոսների պատկեր: Այսպիսով, Տիրոջ այս շարժումը խորհրդանշում է խզումը Իսրայելի հետ: Միջանկյալ փուլում Թագավորությունն ազգերին պիտի քարոզվի:

13:2. Եվ շատ ժողովուրդ հավաքվեց ծովափին: **Նա նավակ մտավ** և սկսեց **առակներով** սովորեցնել ժողովրդին: Առակը պատմություն է, որի հիմքում ընկած է հոգևոր կամ բարոյական ուսուցում, հաճախ թաքնված իմաստով: Հաջորդ յոթ առակները մեզ պատմում են, թե ինչի նման է լինելու Թագավորությունն առաջին և երկրորդ գալստի միջև ընկած ժամանակահատվածում:

Առաջին չորս առակները պատմվեցին ժողովրդին, իսկ վերջին երեքը նախատեսված էին բացառապես աշակերտների համար: Առաջին երկուսը և յոթերորդը Տերը աշակերտներին բացատրեց, իսկ մնացածը՝ ոչ՝ հնարավորություն տալով նրանց (ինչպես նաև մեզ) դրանք մեկնաբանել, օգտվելով Իր կողմից տրված բանալի հուշումներից:

13:3. Առաջին առակը պատմում է **սերմնացանի** մասին, ով սերմերը ցանեց չորս

տարբեր տեսակի հողերի մեջ: Ինչպես և սպասվում էր, արդյունքները յուրաքանչյուր դեպքում տարբեր էին:

13:4-8.

<i>ՀՈՂ</i>	<i>ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</i>
1. Շատ ոտնակոխ եղած ճանապարհը:	1. Թռչունները կերան սերմերը:
2. Հողի բարակ շերտը քարքարոտ հիմքի վրա:	2. Սերմերը շուտ աճեցին, բայց արմատ չունեին, արևը այրեց, և դրանք չորացան :
3. Փշերով պատված հողը:	3. Սերմերը աճեցին, բայց չգոյատևեցին փշերի պատճառով:
4. Լավ հողը :	4. Սերմերը ծլեցին, աճեցին և պտուղ բերեցին: Որոշ ցողուններ պտուղ տվեցին հարյուրապատիկ, մյուսները՝ վաթսուս, ուրիշները՝ երեսուս :

13:9. Հիսուսն ավարտեց առակը խորհրդավոր նախազգուշացումով. **«Ով լսելու ականջ ունի, թո՛ղ լսի»**: Այս առակով Նա ամբողջին փոխանցում էր մի կարևոր պատգամ, իսկ աշակերտներին՝ մեկ այլ պատգամ: Ոչ ոք չպետք է բաց թողնի Նրա խոսքերի նշանակությունը:

Քանի որ Տերն Ինքն է մեկնաբանում այդ առակը 18-23-րդ համարներում, մենք կզբսպենք մեր հետաքրքրասիրությունը, մինչև հասնենք այդ հատվածին:

Բ. Առակների նպատակը (13:10-17)

13:10. Աշակերտները զարմանում էին, թե Տերն ինչո՞ւ է ժողովրդի հետ **առակների** թաքնված, այլաբանական լեզվով **խոսում**: Ուստի նրանք խնդրեցին Հիսուսին բացատրել Իր մեթոդը:

13:11. Պատասխանելով աշակերտներին՝

Հիսուսը տարբերակում անցկացրեց անհավատ ամբոխի և հավատացյալ աշակերտների միջև: Ամբոխը՝ ազգի տարբեր շերտերի տիպիկ ներկայացուցիչները, բացահայտորեն մերժեցին Նրան, թեև նրանց մերժումը չէր կարող ամբողջանալ մինչև խաչելությունը: Նրանց ջրույլատրվեց իմանալ **Երկնքի Թագավորության խորհուրդները (գաղտնիքները)**, մինչդեռ Նրա ճշմարիտ հետևորդներին արտոնվեց հասկանալ դրանք:

ՆԿ-ում խորհուրդը նախկինում չհայտնրված մի փաստ է, որը մարդը երբեք չէր կարող հասկանալ առանց աստվածային հայտնության, բայց այժմ այն հայտնվել է: **Թագավորության խորհուրդները** մինչև այժմ անհայտ ճշմարտություններ էին, որ վերաբերում էին *միջանկյալ* փուլին: Այն փաստը, որ Թագավորությունը պիտի ունենար միջանկյալ ձև, մինչև այժմ գաղտնիք է եղել: Առակները նկարագրում են Թագավորության որոշ առանձնահատկություններ Թագավորի բացակայության ժամանակ: Ոմանք այն անվանել են «Թագավորության խորհրդավոր ձև» ոչ թե դրանում առկա ինչ-որ խորհրդավորության համար, այլ քանի որ այդ ձևի մասին մինչև այժմ ոչինչ հայտնի չի եղել:

13:12. Գուցե անարդարացի թվա, որ այդ գաղտնիքները պիտի ժողովրդից պահվեն և աշակերտներին հայտնվեն: Բայց Տերը հիմնավորված պատասխան է տալիս սրան. «**Որովհետև ով որ ունի, պիտի տրվի նրան, և ավելի առատություն պիտի ունենա, իսկ ով որ չունի, նրանից նույնիսկ ունեցածը պիտի վերցվի**»: Աշակերտները Տեր Հիսուսի հանդեպ հավատ ունեին, ուստի նրանց ավելի շատ կարողություն պիտի տրվեր հասկանալու համար: Նրանք ընդունել էին լույսը, հետևաբար ավելի շատ լույս կստանային: Հրեա ժողովուրդը, ընդհակառակը, մերժեց աշխարհի Լուսին, ուստի նրանք ոչ միայն զրկվեցին շատ լույս ստանալուց, այլև կորցրին այն քիչը, որ ունեին: Մերժված Լույսը այն Լույսն է, որից նրանք հրաժարվեցին:

13:13. Մեթյու Հենրին առակները համե-

մատում է ամալի և կրակի սյան հետ, որոնք լուսավորում էին իսրայելացիների ճանապարհը, իսկ եգիպտացիներին՝ շփոթեցնում: Առակները պիտի հայտնվեն նրանց, ովքեր անկեղծորեն հետաքրքրված են, և «պիտի գայրացնեն նրանց, ովքեր թշնամաբար են վերաբերվում Հիսուսին»:

Ուստի և, սա պարզապես Հիսուսի քմահանույքը չէ, այլ սկզբունքի իրագործում, որը մեր ողջ կյանքի գրավականն է. կանխամտածված կուրությունը հանգեցնում է իրավական կուրության: Ահա թե ինչու էր Նա առակներով խոսում հրեաների հետ:

Գ. Ս. Վուդրինգն այսպես է արտահայտվել. «Քանի որ նրանք չսիրեցին ճշմարտությունը, ճշմարտության լույսը նրանց չհասավ»:²⁶ Նրանք դավանում էին, որ տեսնում են, այսինքն՝ ծանոթ են աստվածային ճշմարտությանը, բայց Մարմնավորված Ճշմարտությունը կանգնած էր նրանց առջև, և նրանք կտրականապես մերժեցին Նրան տեսնել: Ասում էին, որ լսում են Աստծո Խոսքը, բայց Կենդանի Խոսքը նրանց մեջ էր, իսկ նրանք չհնազանդեցին Նրան: Նրանք չուզեցին հասկանալ Մարմնավորման հրաշալի փաստը, այդ իսկ պատճառով զրկվեցին հասկանալու կարողությունից:

13:14-15. Նրանք Ես. 6:9-10 մարգարեության կենդանի կատարումն էին: Իսրայելի սիրտը **թանձրացել էր**, իսկ **ականջներն** անզգայացել էին Աստծո ձայնի հանդեպ: Հրեաները դիտավորյալ հրաժարվեցին **իրենց աչքերով տեսնելուց**: Նրանք գիտեին, որ եթե լսեն, տեսնեն և ապաշխարեն, ապա Աստված կբժշկի նրանց: Բայց իրենց հիվանդության և կարիքի մեջ հրաժարվեցին Նրա օգնությունից: Հետևաբար նրանց պատիժը դա էր՝ **ականջներով լրսեն ու չհասկանան, աչքերով տեսնեն ու չըմբռնեն**:

13:16-17. Աշակերտներին մեծ առանձնաշնորհում էր տրված, քանի որ նրանք տեսնում էին այն, ինչը ոչ ոք չէր տեսել: ՀԿ-ի մարգարեները և արդարները փափագել են ապրել Մեսիայի գալստյան ժամանակ, բայց նրանց ցանկությունը չիրականացավ: Աշակերտները պատիվ ունեցան ապրելու

պատմության այդ ճգնաժամային ժամանակաշրջանում, տեսնելու Մեսիային, լինելու Նրա հրաշքների ականատեսները և լսելու Նրա շուրթերից ելնող անգուզական ուսուցումը:

Գ. Սերմնացանի առակի մեկնությունը (13:18-23)

Տերը բացատրելով, թե ինչու է առակներ գործածում, անցնում է չորս տեսակի հողերի առակի մեկնաբանությանը: Նա չի ասում, թե ով է **սերմնացանը**, բայց մենք կարող ենք վստահ լինել, որ դա կամ հենց Ինքն է (հ. 37), կամ էլ նրանք, ովքեր քարոզում են Թագավորության պատգամը: Նա սերմը ներկայացնում է որպես Թագավորության խոսք (հ. 19), իսկ հողը նրանք են, ովքեր լսում են պատգամը:

13:19. Շատ ոտնակոխ եղած ճանապարհը ներկայացնում է նրանց, ովքեր հրաժարվում են պատգամն ընդունելուց: Նրանք լսում են պատգամը, բայց **չեն հասկանում** ոչ այն պատճառով, որ չեն կարող, այլ որ չեն ուզում: Թռչունները պատկերում են սատանային. նա **հափշտակում** է այդպիսի լսողների սրտի մեջ սերմանվածը: Նա համագործակցում է նրանց հետ անպտղության գործում, որը հենց իրենք են ընտրել: Փարիսեցիներն այդ կարծի հողն էին:

13:20-21. Երբ Տերը խոսում էր քարքարոտ հողի մասին, Նա նկատի ուներ հողի բարակ շերտը, որը ծածկում է ժայռը: Այն ներկայացնում է այն մարդկանց, ովքեր լսում են Խոսքը և **ուրախությամբ** ընդունում: Սկզբում սերմնացանի տրամադրությունը կարող է բարձրանալ այն բանից, որ իր քարոզչությունն այդքան հաջողված է: Բայց շուտով ավելի խորը դաս կտվորի, հասկանալով, որ այնքան էլ լավ չէ, երբ պատգամը ժպիտով և ուրախությամբ են ընդունում: Մարդը նախ պետք է մեղքի համոզում ունենա, գոջում և ապաշխարություն: Շատ ավելի հուսադրող է տեսնել արտասվող աչքերով դեպի Գողգոթա գնացողին, քան անհոգ և չափից դուրս ուրախացողին: Ճանձաղ հիմքը տալիս է մակե-

րեսային դավանություն. այնտեղ արմատի համար խորությունն չկա: Երբ այդպիսի մարդու դավանությունը «կիզիչ արևի» կողմից ենթարկվում է **նեղության կամ հալածանքի**, նա որոշում է, որ դա այդքան չարժե, և հրաժարվում է Քրիստոսին պատկանելու մտքից:

13:22. Փշերով պատված հողը ներկայացնում է մի ուրիշ դասակարգ՝ մարդիկ, ովքեր Խոսքը մակերեսորեն են լսում: Նրանք արտաքուստ Թագավորության ճշմարիտ հպատակներ են թվում, բայց որոշ ժամանակ անց նրանց հետաքրքրությունը խեղվում է **այս աշխարհի հոգսերով և հարստության խաբկանքով**: Նրանց կյանքում Աստծո համար պտուղ չկա: Լանգը սա լուսաբանում է արծաթասեր մի հոր որդու օրինակով, որն ուներ հսկայական բիզնես: Այդ որդին լսել էր Խոսքը իր երիտասարդ տարիքում, բայց ընկղմվեց բիզնեսի մեջ:

«Շուտով նա ընտրության առջև կանգնեց. իր Տիրոջը հանեցնել, թե՛ հորը: Այսպիսով, փշերը գտնվում էին հողի մեջ, երբ սերմը ցանվեց և աճեց. այս աշխարհի հոգսերն ու հարստության խաբկանքն արդեն մոտ էին: Հոր ցանկությամբ նա իր ամբողջ ժամանակը նվիրեց բիզնեսին, դարձավ ձեռնարկության ղեկավար, բայց երբ կյանքում հաջողության հասավ, գիտակցեց, որ անտեսել է երկնային արժեքները: Նրա թոշակի անցնելու ժամանակը մոտենում էր, երբ հայտնեց, որ մտադրություն ունի հոգևոր հարցերի հանդեպ ավելի ջանասեր լինել, բայց Աստված չի ծաղրվի: Թոշակի անցնելուց մի քանի ամիս հետո հանկարծամահ եղավ: Նա թողեց 90,000 ֆունտ ստերլինգ և հոգեպես վատնած կյանք: Փշերը խեղդել էին Խոսքը և այն անպտուղ դարձրեց»:²⁷

13:23. Լավ հողը ներկայացնում է ճշմարիտ հավատացյալին: **Նա լսում է Խոսքը**, ընդունում և հնազանդության միջոցով **հասկանում է** լսածը: Թեև ոչ բոլոր հավատացյալներն են մինևույն քանակությամբ պտուղ բերում, սակայն նրանք իրենց պտուղներով ցույց են տալիս, որ աստվա-

ծային կյանք ունեն: Այստեղ **պտուղը** ավելի շուտ քրիստոնեական բնույթի դրսևորման մասին է, քան մարդկանց՝ Քրիստոսին շահելու: Նոր Կտակարանում **«պտուղ»** բառը սովորաբար վերաբերում է Հոգու պտղին (Գաղ. 5:22-23):

Ինչ էր առակն ասում բազմությանը: Ակրնհայտ է, որ այն զգուշացնում էր Խոսքն առանց հնազանդության լսելու վտանգի մասին: Այն նաև հաշվարկված էր անհատ մարդկանց խրախուսելու Խոսքն անկեղծորեն ընդունելու հաջորդող ապացույցով՝ Աստծո համար պտուղ բերելով: Ինչ վերաբերում էր աշակերտներին, ապա առակը նախապատրաստում էր նրանց և Հիսուսի ապագա հետևորդներին հիապթափեցնող այն փաստին, որ փրկության լուրը լսողներից համեմատաբար քչերն են իրապես փրկվելու: Այն պաշտպանում է Հիսուս Քրիստոսի հավատարիմ հպատակներին պատրանքներից, որ ամբողջ աշխարհը դարձի է գալու Ավետարանի տարածման միջոցով: Այս առակը նաև աշակերտներին զգուշացնում է այն մասին, որ Ավետարանն ունի երեք մեծ հակառակորդ.

1. սատանան (թռչունները՝ չարը), 2. մարմինը (կիզիչ արևը՝ նեղություն կամ հալածանք) և 3. աշխարհը (փշերը՝ այս աշխարհի հոգսերը և հարստության խաբկանքը):

Վերջապես այն աշակերտներին ցույց է տալիս, թե ինչ հսկայական չափերով է վերադառնում մարդու մեջ կատարված ներդրումը: Երեսուն անգամ՝ 3000 տոկոս, վաթսուն անգամ՝ 6000 տոկոս և հարյուր անգամ՝ 10000 տոկոս վերադարձ ներդրումից: Ամեն մի ճշմարիտ դարձի իրական արդյունքներն անհնար է չափել: Կիրակնօրյա դպրոցի մի աննշան ուսուցիչ սերմ էր ցանել Դուսյոս Լ. Մուդիի սրտում: Մուդին նվաճեց ուրիշներին, նրանք էլ իրենց հերթին՝ ուրիշներին: Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչը մեկնարկեց շրջայական ռեակցիան, որը երբեք չի դադարի:

Գ. Ցորենի և որոմի մասին առակը (13:24-30)

Նախորդ առակը վառ կերպով պատկերում էր այն փաստը, որ Երկնքի Թագավորությունը ներառում է նրանց, ովքեր խոսքով են ծառայում Թագավորին, և նրանց, ովքեր Նրա ճշմարիտ աշակերտներն են: Առաջին երեք տեսակի հողերը Թագավորության ամենալայն շրջանի՝ արտաքին դավանության տիպիկ օրինակ են: Հողի չորրորդ տեսակը ներկայացնում է Թագավորությունը՝ որպես փոքր շրջան, այսինքն՝ ճշմարիտ հավատացյալներին:

13:24-26. Երկրորդ **առակը՝** ցորենի և որոմի մասին, նույնպես ներկայացնում է Թագավորության այս երկու հայեցակարգերը: Ցորենը խորհրդապատկերում է ճշմարիտ հավատացյալներին, որոմները՝ պարզապես դավանողներին: Հիսուսը **Թագավորությունը** համեմատում է մի մարդու հետ, ով **իր արտում լավ սերմ ցանեց: Բայց մինչ մարդիկ քնած էին, նրա թշնամին եկավ, ցորենի մեջ որոմ ցանեց ու գնաց:** Ունգերն ասում է, որ ամենատարածված որոմը գտնվում է Մուրբ Երկրի դաշտերում, որը «թունավոր խոտ է, և երբ սկսում է աճել, գրեթե անհնարին է ցորենից տարբերել: Բայց երբ սկսում են հունձքը հասկավորել, ցորենը և որոմը կարելի է առանց դժվարության տարբերել»:²⁸

13:27-28. Երբ **ծառաները** տեսան, որ որոմը խառնվել է լավ սերմի հետ, նրանք հարցրին տանտիրոջը, թե դա ինչպե՞ս պատահեց: Նա անմիջապես կռահեց, որ դա **թշնամու** արածն է: **Ծառաները** պատրաստ էին մոխախոտերն իսկույն քաղհանել:

13:29-30. **Բայց** տանտերը նրանց պատվիրեց սպասել **մինչև հունձը:** Այնուհետև հնձողները կառանձնացնեն դրանք: Ցորենը կհավաքեն շտեմարանների մեջ, իսկ որոմը կայրեն:

Ինչո՞ւ հողագործը պատվիրեց հետաձգել առանձնացնելու գործը: Բնության մեջ ցորենի և որոմի արմատներն այնպես են միահյուսված, որ դրանց քաղհանելն առանց մեկը մյուսի գրեթե անհնար է:

Տեր Հիսուսն այս առակը բացատրում է 37-43-րդ համարներում, ուստի հաջորդող մեկնաբանությունը մենք առայժմ կհետաձգենք:

Ե. Մանանեխի հատի առակը (13:31-32)

Այնուհետև Փրկիչը Երկնքի **Թագավորությունը** համեմատում է **մանանեխի հատիկի** հետ, որը Նա կոչեց **սերմերից** ամենափոքրը, այսինքն՝ ամենափոքրը Նրա լողների փորձառության մեջ: Երբ մարդն այդ սերմերից մեկը ցանեց, այն աճեց, ծառ դարձավ, որը ֆենոմենալ արդյունք է: Սովորական մանանեխի ծառն ավելի նման է թփի, քան թե ծառի: **Ծառն** այնքան մեծ էր, որ **թռչունները** կարող էին բույն հյուսել **նրա ճյուղերի** վրա:

Հատիկը խորհրդապատկերում է Թագավորության համեստ սկիզբը: Հայածանքի պատճառով Թագավորությունը սկզբում համեմատաբար փոքր էր և մաքուր: Բայց պետության հովանավորության և պաշտպանության շնորհիվ այն վերապրեց անբնական աճ: Այնուհետև թռչունները եկան և ճյուղերի վրա հանգստացան: Այստեղ օգտագործվեց նույն «թռչուններ» բառը, ինչոր 4-րդ համարում և Հիսուսը բացատրեց, որ թռչունները ներկայացնում են չարին (հ. 9): Սատանայի և նրա գործակալների համար Թագավորությունը դարձել էր բնադրման վայր: Այսօր քրիստոնեական վարագույրի ետևում թաքնվում են Քրիստոսին մերժող այնպիսի ուսմունքներ, ինչպիսիք են ունիտարիզմը, «Քրիստոնեական գիտությունը», մորմոնականությունը, Եհովայի վկաները և «Միատարր եկեղեցին» (մունայական): Եվ այսպես, այստեղ Տերը նախագգուշացրեց աշակերտներին, որ Նրա բացակայության ընթացքում Թագավորությունը բացառիկ աճ է ունենալու: Նրանք չպետք է խաբվեն և ոչ էլ այդ աճը հաջողություն համարեն: Դա լինելու է անառողջ աճ: Չնայած փոքրիկ սերմը դառնալու է անբնական ծառ, բայց իր մեծ չափերի շնորհիվ այն լինելու է «ղևերի կացարան ու բոլոր պիղծ ոգիների արգելանոց, և վանդակ՝ բոլոր պիղծ ու ատելի թռչունների համար» (Հայտ. 18:2):

Զ. Թթխմորի առակը (13:33)

Այնուհետև Հիսուսը **Թագավորությունը** համեմատում է **թթխմորի** հետ, որ **մի կին**

վերցրեց և երեք չափ ալյուրի մեջ հունցեց: Վերջիվերջո **ամբողջ** զանգվածը **խրմորվեց**: Այս առակի տարածված մեկնաբանությունն այս է. ալյուրը աշխարհն է, իսկ թթխմորը՝ Ավետարանը, որը պիտի քարոզվի ամբողջ աշխարհում, մինչև բոլորը փրկվեն: Սակայն այսպիսի տեսակետը հակասում է Սուրբ Գրքին՝ պատմությամբ և ընթացիկ իրադարձություններով:

Աստվածաշնչում թթխմորը միշտ ներկայացնում է որոշակի չարիք: Երբ Աստված պատվիրեց Իր ժողովրդին տներից դուրս գցել թթխմորը (Ել. 12:15), նրանք դա հասկացան: Այն անձը, որ Բաղարջակերաց տոնի առաջին օրվանից մինչև յոթերորդ օրը խմորված ինչ-որ բան էր ուտում, Իսրայելից պետք է կորչեր: Հիսուսն ասել էր, որ զգուշանան փարիսեցիների և սադուկեցիների թթխմորից (Մատթ. 16:6, 12), Հերովդեսի թթխմորից (Մարկ. 8:15): 1 Կոր. 5:6-8-ում թթխմորը սահմանվում է որպես անզգամություն և չարիք, իսկ Գաղ. 5:9-ի *համաստեքստում* որպես կեղծ ուսմունք է ներկայացված: Ընդհանուր առմամբ, թրթխմորը նշանակում է կամ չար վարդապետություն, կամ չար վարքագիծ:

Եվ այսպես, այս առակում Տերը զգուշացնում է, որ մենք չարի իշխանությանը չպետք է թույլ տանք իր գործն անել **Երկնքի Թագավորության** մեջ: Մանանեխի հատի առակը ցույց է տալիս չարիքի դրսևորումը Թագավորության արտաքին ոլորտում, իսկ այս առակը ցույց է տալիս, որ նույնպես ներքին ապականություն պիտի լինի:

Մենք կարծում ենք, որ այս առակում ալյուրը ներկայացնում է Աստծո ժողովրդի կերակուրը, որը՝ Աստվածաշնչի ուսմունքն է: **Թթխմորը** չար վարդապետությունն է, կինը՝ սուտ մարգարեուհին, որ ուսուցանում և մոլորեցնում է (Հայտ. 2:20): Արդյոք հատկանշական չէ՞, որ **կանայք** եղել են մի շարք կեղծ աղանդների հիմնադիրները: Չնայած Աստվածաշունչը նրանց արգելում է ուսուցանել Եկեղեցում (1 Կոր. 14:34, 1 Տիմ. 2:12), ոմանք, ըմբոստանալով, դարձել են վարդապետական հեղինակություններ

և կործանարար հերետիկոսությամբ կեղծում են Աստծո ժողովրդի կերակուրը:

Չ. Բրուքսն ասում է.

«Եթե առարկում են՝ ասելով, որ Քրիստոսը Երկնքի Թագավորությունը չէր նմանեցնի ինչ-որ չար բանի, ապա բավարար է պատասխանել, որ Նա Երկնքի Թագավորությունը նմանեցրել է նրան, որ ներառում է թե՛ որոմ և թե՛ ցորեն, թե՛ լավ և թե՛ վատ ձուկ, ինչը տարածվում է չար ծառայի վրա (Մատթ. 18:23-32), որ ընդունում է մի մարդու, ով հարսանիքի հանդերձ չուներ և կորած էր (Մատթ. 22:1-13)»:²⁹

Է. Առակների գործածումը իրականացնում է մարգարեությունները (13:34-35)

13:34-35. Հիսուսն առաջին չորս առակները պատմեց **ժողովրդին**: Ուսուցանելու այս մեթոդը կիրառելով՝ Տերը կատարեց Ասափի մարգարեությունը՝ Սղմ. 77:2, որ Մեսիան **առակներով** պիտի խոսի՝ **երևան հանելով այն, ինչը աշխարհի սկզբնավորումից ի վեր ծածկված էր**: Երկնքի Թագավորության առանձնահատկություններն իրենց միջանկյալ տեսքով, որ մինչև այդ թաքնված էին, հայտնվեցին:

Ը. Որոմների առակի բացատրությունը (13:36-43)

13:36. Տիրոջ ուսմունքի հաջորդ մասը ասվեց աշակերտներին **տան մեջ**: Այստեղ **աշակերտները** կարող են ներկայացնել Իսրայելի հավատացյալ մնացորդը: Կրկնակի հիշատակումը տան մասին մեզ հիշեցնում է, որ Աստված հավիտյան չմերժեց Իր ժողովրդին, որին նախապես ճանաչեց (Հն. 11:2):

13:37. Ցորենի և որոմի առակի մեկնաբանության մեջ Հիսուսը Իրեն նույնացրեց սերմնացանի հետ: Իր երկրավոր ծառայության ընթացքում Նա ցանում էր Անձամբ և շարունակում է ցանել Իր աշակերտների միջոցով մինչև օրս:

13:38. Արտը աշխարհն է: Կարևոր է շեշտել, որ արտն աշխարհն է և **ոչ թե Եկե-**

ղեցին: Բարի սերմերը Թագավորության որդիներն են: Գուցե ծիծաղելի և տարօրինակ թվա այն միտքը, որ մարդ արարածները ցանվում են հողի մեջ: Բայց բանն այն է, որ այդ Թագավորության որդիները ցանված են աշխարհում: Իր քարոզչական ծառայության տարիների ընթացքում Հիսուսն աշակերտներով ցանեց աշխարհը, ովքեր Նրա Թագավորության հավատարիմ հպատակներն էին: **Որոմը չարի որդիներն են**: Սատանան կարողանում է կեղծել աստվածային ամեն ճշմարտություն: Նա ցանում է աշխարհը նրանցով, ովքեր նման են Քրիստոսի աշակերտներին, ովքեր խոսում են նրանց նման, ինչ-որ չափով նրանց պես են վարվում, բայց նրանք Թագավորի իրական հետևորդները չեն:

13:39. Թշնամին սատանան է՝ Աստծո և Աստծո ժողովրդի հակառակորդը: Հունձը՝ աշխարհի վերջն է, Թագավորության ժամանակահատվածի միջանկյալ փուլի վերջը, որը տեղի կունենա, երբ Քրիստոսը վերադառնա՝ թագավորելու գորությամբ և փառքով: Տերը նկատի չունի Եկեղեցու ժամանակահատվածի վերջը. շփոթություն կառաջանա, եթե այստեղ Եկեղեցին ներկայացնենք:

13:40-42. Հնձողները հրեշտակներն են (տե՛ս Հայտ. 14:14-20): Թագավորության ներկա փուլի ընթացքում չի կատարվում ցորենի և որոմի որևէ բռնի առանձնացում: Նրանց թույլատրվում է միասին աճել: Բայց Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ հրեշտակները հավաքելու են բոլոր գայթակղությունները և նրանց, որ անօրենություն են գործում, և նետելու են **կրակի հնոցի մեջ**, որտեղ նրանք պիտի լացեն և ատամները կրճտացնեն:

13:43. Թագավորության արդար հպատակները, ովքեր երկրի վրա են լինելու Մեծ նեղության ժամանակ, մտնելու են **իրենց Հոր Թագավորության մեջ**, որպեսզի Քրիստոսի հետ վայելեն Հազարամյա Թագավորությունը: Նրանք փայլելու են արևի նման, այսինքն՝ փայլելու են փառքի մեջ:

Հիսուսը դարձյալ ավելացնում է խորհրդ-

դավոր դիտողությունը. «**Ով լսելու ականջ ունի, թո՛ղ լսի**»:

Այս առակը չի արդարացնում ամբարիշտ մարդկանց հանդեպ հանդուրժողականությունը տեղական քրիստոնեական եկեղեցում, ինչպես ոմանք սխալմամբ ենթադրում են: Հիշե՛ք, որ արտը աշխարհն է և ոչ թե Եկեղեցին: Տեղական եկեղեցիներին հստակորեն պատվիրվում է իրենց համայնքից դուրս հանել բոլոր նրանց, ովքեր մեղավոր են որոշակի մեղքի մեջ (1 Կոր. 5:9-13): Այս առակը պարզապես սովորեցնում է, որ Երկնքի Թագավորությունն իր խորհրդավոր ձևի մեջ ներառելու է իրականը և նմանակը, իսկականը և կեղծը, և այս իրավիճակը շարունակվելու է մինչև աշխարհի վերջը: Այնուհետև Աստծո պատգամաբերներն առանձնացնելու են կեղծը, որոնց դատաստան է սպասում, իսկ ճշմարիտները պիտի ուրախանան Քրիստոսի փառափառ թագավորության մեջ երկրի վրա:

Թ. Թաղված գանձի առակը (13:44)

Այսպիսով, բոլոր առակները սովորեցնում են, որ Երկնքի Թագավորության մեջ լինելու են լավ և վատ, ճշմարիտ և կեղծավոր հպատակներ: Հաջորդ երկու առակները մեզ ցույց են տալիս, որ լինելու են երկու տեսակի ճշմարիտ հպատակներ. 1. Եկեղեցու ժամանակաշրջանից առաջ եղած և դրանից հետո դարձի եկած հրեա հավատացյալները, 2. ներկա դարաշրջանի հավատացյալ հրեաները և հեթանոսները:

Գանձի մասին առակում Հիսուսը **Թագավորությունը** համեմատում է **արտի մեջ պահված մի գանձի հետ**: Մի մարդ գտնում է այն, թաքցնում, այնուհետև ուրախությամբ **վաճառում է իր ողջ ունեցվածքն ու գնում է այդ արտը**:

Կարելի է ենթադրել, որ **մարդը** Տեր Հիսուսն Ինքն է: (Նա էր սերմնացանի, ցորենի և որոմի առակների մարդը. հ. 37): **Գանձը** ներկայացնում է հավատացյալ հրեաների աստվածավախ մնացորդը, որն առկա էր Տեր Հիսուսի երկրավոր ծառայության ընթացքում և լինելու է Եկեղեցու հափշտակությունից հետո (տե՛ս Մադնոս

135:4, որտեղ Իսրայելը կոչվում է Աստծո յուրահատուկ գանձ): Նրանք պահված են արտում, սփռված են ամբողջ երկրով և իրականում ճանաչված չեն, բայց ոչ Աստծուց: Հիսուսն այստեղ պատկերված է որպես այդ գանձը գտնողը, ով այնուհետև գնում է դեպի խաչ և տալիս է այն ամենը, ինչ-որ Ինքն ուներ, որպեսզի աշխարհը գնի (2 Կոր. 5:19, 1 Հովի. 2:2), որտեղ պահված է այդ գանձը: Փրկագնված Իսրայելը պիտի դուրս բերվի պահված տեղից, երբ Միոնից նրա Ազատարարը գա և հաստատի երկար սպասված Մեսիայի Թագավորությունը:

Այս առակը երբեմն վերագրում են մեղավորին, որ ամեն բան թողնում է, որպեսզի ձեռք բերի մեծագույն Գանձը՝ Քրիստոսին: Բայց այսպիսի մեկնաբանությունը հակասում է շնորհի վարդապետությանը, որի համաձայն փրկությունն առանց վճարի է (Ես. 55:1, Եփ. 2:8-9):

Ժ. Պատվական մարգարիտի առակը (13:45-46)

Թագավորությունը նաև նմանեցվում է **մի վաճառականի**, ով **գեղեցիկ մարգարիտներ էր** որոնում: Երբ նա գտնում է **արտասովոր** գնով մարգարիտը, զոհում է այն ամենը, ինչ ուներ, որպեսզի գնի այն:

Մի օրհներգի մեջ ասվում է. «Ես գտել եմ մեծագույն գնով մարգարիտը...»: գտնողը մեղավորն է, իսկ մարգարիտը՝ Փրկիչը: Բայց մենք նորից բողոքարկում ենք, որովհետև մեղավորը չպետք է ամեն բան վաճառի, որ գնի Քրիստոսին:

Մենք ավելի շուտ հավատում ենք, որ **վաճառական մարդը** Տեր Հիսուսն է, **պատվական մարգարիտը**՝ Եկեղեցին: Գողգոթայի վրա Նա վաճառեց ամեն բան, որպեսզի գնի այդ մարգարիտը: Ճիշտ այնպես, ինչպես մարգարիտն է ձևավորվում ոստրեի ներսում տառապանքի միջոցով, գրգռման հետևանքով, այդպես էլ Եկեղեցին կազմավորվեց՝ Փրկչի մարմնի խոցերի և վերքերի միջոցով:

Հետաքրքիր է, որ գանձի մասին առակում Թագավորությունը նմանեցվում է

հենց գանձին: Այստեղ Թագավորությունը նմանեցվում է ոչ թե մարգարիտին, այլ վաճառական մարդուն: Ինչո՞ւ է այս տարբերությունը:

Նախորդ առակում շեշտադրումը գանձի՝ փրկագնված Իսրայելի վրա էր: Թագավորությունը սերտորեն կապված է իսրայել ազգի հետ: Այն նախ առաջարկվել էր այդ ազգին, ուստի Թագավորության գալիք ձևի մեջ հրեաները լինելու են գլխավոր հպատակները:

Ինչպես հիշատակեցինք, Եկեղեցին և Թագավորությունը միևնույն բաները չեն: Բոլոր նրանք, ովքեր գտնվում են Եկեղեցում, գտնվում են Թագավորության մեջ, նրա միջանկյալ ձևի մեջ, բայց ոչ բոլորը, որ գտնվում են Թագավորության մեջ, Եկեղեցում են: *Եկեղեցին չի լինելու Թագավորության իր գալիք ձևի մեջ, բայց պիտի թագավորի Քրիստոսի հետ նոր երկրի վրա:* Երկրորդ առակում շեշտադրված է Ինքը՝ Թագավորը և այն հսկայական գինը, որ Նա վճարեց, որպեսզի հաճոյանա և նվաճի Իր հարսին, որը կիսելու է Նրա փառքը՝ Նրա Թագավոր հռչակվելու օրը:

Ինչպես մարգարիտն է դուրս գալիս ծովից, այդպես էլ Եկեղեցին, որը երբեմն կոչվում է Քրիստոսի հեթանոս հարսը, մեծ մասամբ կազմված է ազգերից: Մա չի անտեսում դարձի եկած հրեաների ներկայության փաստը. այստեղ պարզապես նշվում է, որ ըստ Եկեղեցու հիմնական բնութագրի՝ այն ներկայացնում է մարդկանց, ովքեր կանչված են տարբեր ազգերից Հիսուսի անվան համար: Հակոբոսը սա հաստատեց որպես Աստծո մեծագույն նպատակը ներկա պահին Գործք 15:14-ում:

Ի. Ուռկանի առակը (13:47-50)

13:47-48. Այս շարքի եզրափակիչ առակը Թագավորությունը համեմատում է **ծովը գցված** մաղի կամ **ուռկանի** հետ, **որ ամեն տեսակի** ձուկ **հավաքեց**: Ձկնորսները տեսակավորեցին ձկները. **լավերը** հավաքեցին ամանների մեջ, իսկ **անպետքները** դուրս թափեցին:

13:49-50. Մեր Տերը բացատրում է այս

առակը: Ժամանակը **աշխարհի վերջն է**, այսինքն՝ Մեծ նեղության ժամանակաշրջանի վերջը: Մա Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակն է: Ձկնորսները **հրեշտակներն են**: Լավ ձկները արդարներն են, այսինքն՝ փրկվածները՝ թե՛ հրեաներ, թե՛ հեթանոսներ: Վատ ձկները մեղավորներն են, այսինքն՝ բոլոր ազգերից անհավատ մարդիկ: Կատարվում է առանձնացում, որը մենք տեսանք նաև ցորենի և որովի առակի մեջ (հ. 30, 39-43): Արդարները մըտնելու են իրենց Հոր Թագավորությունը, իսկ մեղավորներին կուղարկեն մի վայր, որտեղ կրակն է վառվում, որտեղ կլինի **լաց և ատամների կրճատում**: Մակայն սա վերջնական դատաստանը չէ: Այս դատաստանը տեղի է ունենալու Հազարամյա Թագավորության սկզբում, իսկ վերջնական դատաստանը լինելու է հազար տարին լրանալուն պես (Հայտ. 20:7-15):

Գաբելինն այսպես է մեկնաբանում այս առակը.

«Ուռկանը գցվեց ծովը, որը, ինչպես ավելի վաղ տեսանք, իրենից ներկայացնում է ազգերը: Այս առակը վերաբերում է հավիտենական Ավետարանի քարոզությանը, որը տեղի է ունենալու Մեծ նեղության ժամանակ (Հայտ. 14:6-7): Վատերին լավերից առանձնացնելու են հրեշտակները: Մա չի կարելի վերագրել ո՛չ ներկա ժամանակին, ո՛չ Եկեղեցուն, բայց այն պահին, երբ Թագավորությունը հաստատվելու շեմին լինի: Պիտի ներգրավվեն հրեշտակները, որը պարզ երևում է Հայտնության գրքից: Մեղավորները նետվելու են կրակի հնոցը, իսկ արդարները մնալու են երկրի վրա Հազարամյա Թագավորության համար»:³⁰

Լ. Ճշմարտության գանձարանը (13:51-52)

13:51. Վերջացնելով առակներով սովորեցնելը՝ Մեծ Ուսուցիչը հարցրեց Իր աշակերտներին՝ արդյոք բոլոր բաները **հասկացա՞ն**: Նրանք պատասխանեցին՝ **այո**: Նրանց պատասխանը գուցե զարմացնի մեզ կամ նրանց հանդեպ նախանձի զգացում առաջացնի: Հավանաբար մենք չենք

կարող այդպես վստահ «այո» պատասխանել:

13:52. Քանի որ հասկացել են, ապա պարտավոր են ուրիշներին պատմելու: Աշակերտները պետք է լինեն ուղի, և ոչ թե օրհնությունների ծայրակայան (եզրույթ): Այդ տասներկուսը դարձան **Երկնքի Ռազավորության** աշակերտած դպիրներ, այսինքն՝ ուսուցիչներ և ճշմարտությունը մեկնաբանողներ: **Նրանք նման էին տանուտեր մի մարդու, որ իր գանձից նոր ու հին բաներ է հանում:** Նրանք ունեցել են հարուստ պաշարներ ՀԿ-ում, ինչը կարող ենք անվանել **հին** ճշմարտություն: Երբ Քրիստոսը սովորեցնում էր առակներով, նրանք ստանում էին այն, ինչը նրանց համար բոլորովին **նոր** էր: Գիտելիքների այդ հսկայական պահեստից նրանք այդ փառավոր ճշմարտությունը պետք է տարածեին:

Խ. Հիսուսը մերժվում է Նազարեթում (13:53-58)

13:53-56. Եվ եղավ, երբ այս առակները վերջացրեց, Հիսուսը թողեց Գալիլիայի փերն ու վերջին անգամ գնաց դեպի Նազարեթ: Երբ Նա նրանց սովորեցնում էր **իրենց ժողովարանների մեջ**, ժողովուրդը զարմանում էր Նրա **իմաստության** և հրաշքների վրա, որոնց մասին նրանց պատմել էին: Նրանց համար Նա ընդամենը **հյուսնի որդին էր:** Նրանք գիտեին, որ **Նրա մայրը Մարիամն էր, եղբայրները՝ Հակոբոսը, Հովսեփը, Սիմոնն ու Հուդան...** և **քույրերը**, որ դեռևս Նազարեթում էին ապրում: Ինչպե՞ս կարող էր իրենց հայրենի քաղաքի տղաներից մեկը խոսել և անել այնպիսի բաներ, որոնց շնորհիվ դարձել էր այդքան ճանաչված: Սա շփոթեցնում էր նրանց, ուստի որոշեցին, որ ավելի հեշտ է կառչել սեփական տգիտությունից, քան ընդունել ճշմարտությունը:

13:57-58. Նրանք **գայթակղվում էին Նրանից:** Սա հուշեց **Հիսուսին** մատնանշելու, որ ճշմարիտ **մարգարեն** սովորաբար ավելի բարձր է գնահատվում իր տրոհից հեռու: Նրա սեփական թաղամասը և ազգականները աշակցեցին իրենց ծանոթ-

ների արհամարհական վերաբերմունքի տարածմանը Նազարեթում: Անհավատությունը շատ էր խանգարում Փրկչի գործին: Նա այնտեղ մի քանի հիվանդների բժշկեց (Մարկ. 6:5): Պատճառն այն չէր, որ Նա չէր *կարող* դա անել. մարդու չարությունը չի կարող սահմանափակել Աստծո գործությունը: Բայց Նա օրհնում էր մարդկանց, որ այդ օրհնությունն ստանալու ցանկությունը չունեին, կարիքներ էր լրացնում, որտեղ կարիքի գիտակցություն չկար, բժշկում էր մարդկանց, ովքեր վրդովվում էին, երբ ասվում էր, որ իրենք հիվանդ են:

IX. ՄԵՍԻԱՅԻ ԱՆԽՈՆՁ ԾՆՈՐՀՐ ՀԱՆԳԻՊՈՒՄ Է ԱՃՈՂ ԹՇՆԱՄՈՒԹՅԱՆ (14:1-16:12)

Ա. Հովհաննես Մկրտչի գլխատումը (14:1-12)

14:1-2. Հիսուսի ծառայության մասին լուրերը հասան **Հերովդես չորրորդապետին:** Հերովդես Մեծի այդ անպարկեշտ որդին հայտնի էր նաև որպես Հերովդես Անտիպաս: Նա էր, որ կարգադրել էր Հովհաննես Մկրտչի մահապատիժը: Երբ նա լսեց Հիսուսի կատարած հրաշքների մասին, խիղճը սկսեց նրան տանջել: Իր գլխատած մարգարեի մասին հիշողությունները շարունակում էին նրան այցելել: Նա իր ծառաներին ասաց. «Սա **Հովհաննես Մկրտչին** է, նա հարություն է առել **մեռելներից**, դրա համար էլ նրա միջոցով գորավոր գործեր են կատարվում»:

14:3. 3-12-րդ համարներում մեզ է ներկայացված մի բան, որը կոչվում է գրական ակնարկ դեպի անցյալ: Մատթեոսն ընդհատում է պատմությունը, որպեսզի վերանայի Հովհաննեսի մահվան հանգամանքները:

14:4-5. Հերովդեսը լքել էր իր կնոջը և ապրում էր շնացող, արյունախիղճ հարաբերություններով **Հերովդիայի՝ իր եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ** հետ: Որպես Աստծո մարգարե՝ Հովհաննեսը չէր կարող նրան չկշտամբել: Անվախորեն նա զգուշացրեց Հերովդեսին և հանդիմանեց նրան անբարո կյանքի համար:

Թագավորն այնպես էր գայրացել, որ ուզում էր նրան սպանել, բայց քաղաքական նկատառումներով դա հարմար չէր: Ժողովուրդը Հովհաննեսին **մարգարե** էր ընդունում, և հավանաբար խռովությամբ կարձագանքեին Հովհաննեսին սպանելու որևէ փորձի ժամանակ: Ուստի բռնակալն իր գայրույթը բավարարեց Հովհաննեսին ժամանակավորապես բանտարկելով: «Անաստվածները կրոնը սիրում են նույն ձեվով, ինչպես առյուծին են սիրում սատկած կամ վանդակի մեջ: Նրանք վախենում են կրոնից, երբ նա ազատ է արձակվում և սկսում է անհանգստացնել իրենց խիղճը»:³¹

14:6-11. Հերովդեսի ծննդյան օրը Հերովդիայի դուստրը Հերովդեսին այնպես հիացրեց իր պարով, որ նա անխոհեմաբար, առաջարկեց նրան այն ամենը, ինչ որ խնդրի: Իր մոր թելադրանքով նա պահանջեց **Հովհաննես Մկրտչի գլուխը... սկուտեղի վրա**: Այդ ժամանակ թագավորի գայրույթը մի փոքր հանդարտվել էր, գուցե նույնիսկ հիացած էր մարգարեի քաջությամբ և ազնվությամբ: Թեև նա տրտմեց մարգարեին կյանքից զրկելու համար, բայց ստիպված էր կատարելու իր խոստումը: Հրամանը տրվեց: Հովհաննեսին **գլխատեցին**. պարուհու սարսափելի խնդրանքը բավարարված էր:

14:12. Հովհաննեսի **աշակերտներն** իրենց ուսուցչի մարմինը պատշաճ ձևով թաղեցին, իսկ հետո **գնացին պատմեցին Հիսուսին**: Նրանք չգտան ավելի լավին, ում մոտ կարող էին իրենց վիշտն ու վրդովմունքը թափել: Սրանից ավելի լավ օրինակ նրանք չէին կարող թողնել: Հալածանքի, ընկճվածության, վշտի և տառապանքի ժամանակ մենք էլ պետք է գնանք և **Հիսուսին պատմենք այդ մասին**:

Ինչ վերաբերում է Հերովդեսին, թեև հանցագործությունը կատարված էր, բայց հիշողությունը մնացել էր: Երբ նա լսեց Հիսուսի մասին, բոլոր դրվագները միտքը եկան՝ նրան տանջելու:

Բ. Հինգ հազարի կերակրումը (14:13-21)

14:13-14. Երբ Հիսուսը լսեց, որ Իր համ-

բավը Հերովդեսին մտահոգել է, **նավակով** առանձնացավ մի ամայի տեղ՝ Գալիլայի ծովի մոտ: Մենք կարող ենք վատահ լինել, որ Նրա այնտեղ գնալը վախի հետևանք չէր. Նա գիտեր, որ Իրեն ոչինչ չի պատահի, մինչև Իր ժամի հասնելը: Մենք չգիտենք Նրա տեղափոխվելու հիմնական պատճառը, բայց ոչ պակաս պատճառ էր այն, որ Նրա աշակերտները հենց նոր էին վերադարձել ավետարանելուց (Մարկ. 6:30, Ղուկ. 9:10) ու կարիք ունեին հանգստի և առանձնության:

Սակայն հավաքված ժողովուրդը դուրս եկավ իրենց քաղաքներից և **նոքով գնաց Նրա հետևից**: Երբ Նա ափ հասավ, նրանք արդեն Իրեն էին սպասում: Փոխանակ նեղսրտելու այդ ներխուժումից՝ մեր կարեկցող Տերն անմիջապես գործի անցավ և **բժշկեց նրանց մեջ եղած հիվանդներին**:

14:15. Երեկոյան, այսինքն՝ կեսօրվա ժամը 3:00-ից հետո, Նրա **աշակերտները** զգացին, որ ճգնաժամ է հասունանում: Այդքան շատ մարդ կար, և ուտելու ոչինչ չուներին: Նրանք Հիսուսին խնդրեցին, որ մարդկանց ուղարկի **մոտակա գյուղերը**, որտեղ կարող էին **ուտելիք** գնել: Նրանք որքան քիչ էին հասկանում Հիսուսի սիրտը կամ նկատում Նրա գործությունը:

14:16-18. Տերը նրանց համոզեց, որ դա անելու **կարիքը չկա**: Ինչո՞ւ մարդիկ գնան Նրա մոտից, Ով Իր ձեռքն է բացում՝ հոգալու ամեն կենդանի արարածի կարիքը: Այնուհետև Նա աշակերտներին անակրնկալի բերեց՝ ասելով. «Դե՛րք նրանց ուտելու բան տվեք»: Նրանք զարմացան. «Ուտելու բան տա՛ր: Մենք ոչինչ չունենք, բացի **հինգ հացից և երկու ձկնից**»: Նրանք մոռացել էին, որ իրենք նաև Հիսուսին ունեն: Փրկիչը համբերությամբ ասաց. «**Դրանք Ինձ մոտ բերեք**»: Սա էր նրանց մասնակցությունը:

14:19-21. Մենք կարող ենք պատկերացնել, թե ինչպես **Տերը հրամայեց ժողովրդին նստել խոտերի վրա**: Վերցնելով **հինգ հացը և երկու ձկները**՝ Նա շնորհակալություն հայտնեց, **կտրելով** հացերը **տվեց աշակերտներին**, որպեսզի նրանք

Էլ ժողովրդին բաժանեն: Այն բավական էր բոլորի համար: Երբ բոլորը կշտացան, աշակերտները ավելացած **տասներկու լիքը կողով** հավաքեցին: Երբ Հիսուսն ավարտեց, այնտեղ ավելի շատ էր մնացել, քան երբ սկսել էր: Յուրաքանչյուր անհավատ աշակերտի համար ավելցուկի մեկական կողով էր մնացել: Եվ թերևս 10,000-15,000 մարդ կերակրվեց (5000 տղամարդ գումարած կանանց և երեխաներին):

Այս հրաշքը հոգևոր դաս է յուրաքանչյուր սերնդի աշակերտների համար: Քաղցած ամբոխ միշտ էլ կա: Միշտ էլ կա թրվացյալ խղճուկ պաշարով աշակերտների մի փոքր խումբ: Եվ միշտ ներկա է կարեկցող Փրկիչը: Երբ աշակերտները պատրաստ են Նրան տալու իրենց ամենափոքրը, որ ունեն, Նա բազմապատկում է այն, որպեսզի կերակրի հազարավորներին: Հասկանրշական տարբերությունն այն է, որ **հինգ հազար մարդ**, որոնք Գալիլիայի ծովի մոտ կշտացան, իրենց քաղցը բավարարեցին մի կարճ ժամանակով, իսկ նրանք, ովքեր կերակրվում են կենդանի Քրիստոսով, բավարարվում են հավիտենապես (տե՛ս Հովի. 6:35):

Գ. Հիսուսը քայլում է ծովի վրայով (14:22-33)

Նախորդ հրաշքը աշակերտներին համոզեց, որ իրենք հետևում են Նրան, Ով կարող է առատորեն լրացնել իրենց կարիքները: Այժմ պիտի սովորեին, որ Նա նույնպես ի գորու է իրենց պաշտպանելու, նույնիսկ գորություն տալու:

14:22-23. Արձակելով ժողովրդին՝ **Հիսուսը** պատվիրեց **Իր աշակերտներին, որ նավակը մտնեն** և նորից անցնեն ծովի մյուս կողմը: Այնուհետև Նա լեռը բարձրացավ՝ **աղոթելու**:

Երբ իրիկուն եղավ, այսինքն՝ մայրամուտից հետո, Նա **այնտեղ միայնակ էր**: (Հրեական հաշվարկով կան երկու «երեկոներ»)՝ տե՛ս Ել. 12:6-ի յուսանցքի նշումները RSV Աստվածաշնչում: Մեկը, որը նշում է 15-րդ համարի հղումը, սկսվում էր օրվա կեսից, իսկ մյուսը, որի մասին հեղինակն

անդրադարձել է այստեղ, մայրամուտին):

14:24-27. Նավակն արդեն ավից հեռու էր գտնվում և պայքարում էր **հակառակ կողմից** եկող քամու դեմ: Երբ ալիքները հարվածում էին նավակին, Հիսուսը տեսավ աշակերտների դժվար կացությունը: **Գիշերվա չորրորդ պահին** (առավոտյան ժամը 3:00-6:00-ի միջև) **Նա դեպի նրանց գրնաց՝ քայլելով ծովի վրայով**: Աշակերտները տագնապի մատնվեցին՝ մտածելով, որ **ուրվական** է: Բայց անմիջապես իրենց Ուսուցչի և Բարեկամի հանդարտեցնող ձայնը լսեցին. **«Քա՛ջ եղեք, Ես եմ, մի՛ վախեցեք»**:

Որքան՞ ճշգրտորեն է այն համապատասխանում մեր անձնական փորձի հետ: Մենք հաճախ ենք փոթորկված, շփոթված և հուսահատ: Թվում է՝ Փրկիչը շատ հեռու է: Բայց Նա ամեն ժամ աղոթում է մեզ համար: Երբ գիշերը թվում է բոլոր գիշերներից ամենամութը, Նա մեր կողքին է: Եվ նույնիսկ այդ ժամանակ մենք հաճախ շփոթում ենք Նրան ուրիշի հետ և սեղմում ենք տագնապի կոճակը: Ապա լսում ենք Նրա սփոփիչ ձայնը և հիշում, որ այդ սարսափազդու ալիքները Նրա ոտքերի տակն են:

14:28. Երբ **Պետրոսը** լսեց շատ ծանոթ և սիրելի ձայնը, նրա մեջ սերն ու խանդավառությունը բորբոքվեց: **«Տե՛ր, եթե Դու ես, հրամայի՛ր ինձ, որ ջրի վրայով Բեզմոտ գամ»**: Պետրոսի ասած «եթե»-ն թերահավատության նշան համարելու փոխարեն, ավելի լավ է տեսնել նրա համարձակ խնդրանքը՝ որպես մեծ վստահության նշան: Պետրոսը գիտակցում էր, որ երբ Տե՛րը հրամայում է Նա նաև գորություն է տալիս այն կատարելու:

14:29-33. Հենց որ Հիսուսն ասաց՝ **Ե՛կ**, Պետրոսը դուրս թռավ նավակից և Նրան ընդառաջ գնաց: Քանի դեռ իր աչքերը Հիսուսի վրա էր պահում, նա կարողացավ անել անհնարինը, բայց այն պահին, երբ ուշադրությունը կենտրոնացրեց ուժգին **քամու** վրա, սկսեց սուզվել: Գլուխը կորցրած նա աղաղակեց. **«Տե՛ր, փրկի՛ր ինձ»**: Տե՛րը ձեռքից բռնեց, քնքշորեն հանդիմանեց **թերահավատության** համար և առաջ-

նորդեց նրան դեպի նավակը: Հիսուսի՝ նավակ մտնելուն պես **քամին հանդարտվեց**: Եվ նավակի մեջ պաշտամունքի ժողով արեցին, երբ աշակերտները Հիսուսին ասացին. «**Իրապես, Գու Աստծո Որդին ես**»:

Քրիստոնեական կյանքն էլ ջրի վրայով քայլելու նման մարդկորեն անհնար է: Այդ կյանքն ապրելը հնարավոր է միայն Սուրբ Հոգու գործությամբ: Քանի դեռ նայում ենք միայն Հիսուսին՝ մեր հայացքը հեռացնելով այլ օբյեկտներից (Եբր. 12:2), մենք կարող ենք մի գերբնական կյանքով ապրել: Բայց երբ մեր ուշադրությունը դարձնում ենք ինքներս մեզ վրա կամ էլ մեր հանգամանքների վրա, սուզվում ենք: Այդ ժամանակ մենք պետք է Քրիստոսին աղաղակենք՝ նորոգվելու և աստվածային աջակցության համար:

Գ. Հիսուսը բժշկում է Գեննեսարեթում (14:34-36)

Նավակը կայանեց **Գեննեսարեթի** ափի մոտ՝ Գալիլիայի ծովի հյուսիս-արևմտյան ափում: Հենց որ բնակիչները ճանաչեցին Հիսուսին, հավաքեցին այնտեղ եղող **բուլոր հիվանդներին և բերեցին Հիսուսի մոտ**, որպեսզի հիվանդները գոնե **Նրա հանդերձի ծայրին դիպչեն**, և ովքեր որ դիպան, **կատարելապես բժշկվեցին**: Այսպիսով, այդ տարածքի բժիշկների համար այդ օրը հանգստի օր էր: Մի որոշ ժամանակ, համենայն դեպս, հիվանդներ չկային: Մեծ Բժշկի այցի շնորհիվ այդ տարածքը ձեռք բերեց առողջություն և բժշկվեց:

Ե. Պղծությունը ներսից է (15:1-20)

Հեշտ է մատնացույց արվում, որ սկզբնական գլուխներում Մատթեոսը չի հետևում ժամանակագրության կարգին: Բայց, 14-րդ գլխից սկսած և մինչև վերջ՝ իրադարձությունները հիմնականում ընթանում են հաջորդականությամբ, ինչպես որ դրանք տեղի են ունեցել:

15-րդ գլխում ի հայտ է գալիս նաև կանոնավոր հաջորդականությունը: Առաջինը՝ դպիրների և փարիսեցիների շարունակական վեճը և ընդհարումը (հ. 1-20) կանխա-

տեսում է Իսրայելի մերժումը Մեսիային: Երկրորդը՝ քանանացի կնոջ հավատը (հ. 21-28) պատկերում է, թե ինչպես է Ավետարանը տարածվում հեթանոսների մեջ ներկա դարում: Եվ, վերջապես, մեծ բազմության բժշկումը (հ. 29-31) և չորս հազարի կերակրումը (հ. 32-39) մատնանշում են գալիք հազարամյա ժամանակաշրջանի համաշխարհային առողջությունն ու բարգավաճումը:

15:1-2. Գալիրներն ու փարիսեցիները հաստատական էին Փրկչին թակարդի մեջ գցելու իրենց ջանքերի մեջ: Նրանց պատվիրակությունը **եկել էր Երուսաղեմից**, որը մեղադրում էր Հիսուսի **աշակերտներին** անմաքրության մեջ, քանի որ նրանք ուտում էին անվա **ձեռքերով** խախտելով **ձեռքերի ավանդույթը**:

Որպեսզի գնահատենք այս միջադեպը, պետք է հասկանանք մաքրուրի և անմաքրուրի մասին հիշատակումները, և թե փարիսեցիներն ի՞նչ նկատի ունեին «վանապ» ասելով: Մաքրուրի և անմաքրուրի ամբողջ հասկացողությունն սկիզբ է առնում ՀԿ-ից: Անմաքրությունը, որի մեջ մեղադրում էին աշակերտներին, ամբողջովին ծիսական էր: Օրինակ՝ եթե մարդը դիպչել է դիակի կամ կերել է որոշակի բաներ, որոնք հայտնի են որպես անմաքուր. պաշտոնապես դառնում է անմաքուր՝ նա ըստ ծեսի չէր կարող Աստծուն պաշտել: Մինչև նրա Աստծուն մոտենալը Աստծո օրենքը պահանջում էր, որ նա անցներ մաքրության արարողակարգը:

Բայց ձեռքերը մաքրության արարողակարգին ավելացրել էին նաև ավանդույթներ: Նրանք պնդում էին, որ հրեան նախքան ուտելը պետք է իր ձեռքերը եկթարկեր մաքրության մանրակրկիտ գործընթացին. նա պետք է լվանար ոչ միայն ձեռքերը, այլև բազուկից մինչև արմունկը: Եթե շուկայում էր եղել, ապա պետք է ընդուներ ծիսական լոգանք: Այսպիսով, փարիսեցիները մեղադրում էին աշակերտներին, որ նրանք բավարար կերպով չէին պահպանում լվացման ամբողջ բարդ համակարգը, որը սահման-

ված էր հրեական ավանդույթի համաձայն:

15:3-6. Տեր Հիսուսն Իր քննադատներին հիշեցրեց, որ *նրանք Աստծո պատվիրաններն* էին խախտում, ոչ թե պարզապես ձեռքերի **ավանդույթը**: Օրենքը պատվիրում էր պատվել ծնողներին, որը ներառում է նաև ֆինանսական աջակցություն անհրաժեշտության դեպքում: Բայց դպիրներն ու փարիսեցիները (և շատ շատերը) չէին ուզում իրենց գումարը ծախսել տարեց ծնողներին օգնելու համար: Ուստի նրանք հնարել էին մի ավանդույթ, ըստ որի կարողանում էին խուսափել պատասխանատվությունից: Եթե **հայրը կամ մայրը** նրանցից օգնություն խնդրեր, նրանք կարող էին պարզապես ասել. «Այն գումարը, որը ես պետք է գործածեի քեզ օգնելու համար, արդեն **Աստծուն** է նվիրաբերված, հետևաբար ես չեմ կարող տալ քեզ»: Արտասանելով այս բանաձևը՝ նրանք ազատ էին իրենց ծնողներին օգնելու ֆինանսական պատասխանատվությունից: Այսպիսի խորամանկ ավանդույթի հետևելով՝ նրանք խախտում էին Աստծո Խոսքը, որը պատվիրում էր խնամել ծնողներին:

15:7-9. Խորամանկորեն խոսքը խեղաթյուրելով՝ նրանք կատարում էին **Տասյու** մարգարեությունը (29:13): Նրանք դավանում էին, որ **իրենց շրթունքներով** են Աստծուն **պատվում, բայց նրանց սիրտը հեռացած էր** Նրանից: Նրանց երկրպագությունն առ Աստված իզուր էր, որովհետև նրանք մարդկային ավանդույթներին ավելի բարձր տեղ էին տալիս, քան Աստծո Խոսքին:

15:10-11. **Ժողովրդին** դիմելով՝ Հիսուսը մի կարևոր հայտարարություն արեց: Նա հռչակեց, որ **ոչ թե բերանը մտածն է պղծում մարդուն**, այլ ավելի շուտ **բերանից դուրս եկածը**: Մենք հազիվ թե կարողանանք գնահատել այս հայտարարության հեղափոխական բնույթը: Ղևտացիների օրենսգրի համաձայն՝ այն, ինչը բերանն էր մտնում, *պղծում էր* մարդուն: Հրեաներին արգելված էր ցանկացած կենդանու միս ուտելը, որի կնդակը երկկնդակ չէր, և որը չէր որոճում: Նրանց չէր թույլատրվում ու-

տել ձուկ, որ լողակ և թեփուկ չուներ: Աստված նրանց մանրամասն հրահանգներ էր տվել անմաքուր և մաքուր ուտելիքի վերաբերյալ:

Այժմ Օրենսդիրը հող էր պատրաստում՝ վերացնելու անմաքրության արարողությանը վերաբերող մի ամբողջ համակարգ: Նա ասաց, որ կերակուրը, որը Նրա աշակերտներն անվաճ ձեռքերով կերան, նրանց չպղծեց: Բայց դպիրների և փարիսեցիների կեղծավորությունն էր, որ իրապես պղծում էր:

15:12-14. Երբ **աշակերտները** Հիսուսին տեղեկացրին, որ **փարիսեցիները** այդպիսի հանդիմանությունից զայթակղվել են, ի պատասխան՝ Հիսուսը փարիսեցիներին համեմատեց տունկի հետ, որ չի տնկվել Աստծո կողմից: Նրանք ավելի շուտ որոմներ էին, քան ցորեն: Նրանք և նրանց ուսմունքն ի վերջո արմատախիլ են լինելու, այսինքն ոչնչացվելու են: Այնուհետև Նա ավելացրեց. «**Թողե՛ք նրանց, նրանք կույր են և կույրերի առաջնորդներ**»: Թեև հոգևոր հարցերում իրենց հեղինակություն էին համարում, հոգևոր իրականության մեջ նրանք **կույր էին**, ինչպես նաև այն մարդիկ, որոնց նրանք առաջնորդում են: Պարզ է, որ թե՛ առաջնորդները, թե՛ նրանց հետևողները **փոսր կլնկնեն**:

15:15. Անկասկած, աշակերտները ցնցված էին նման հեղաշրջումից, քանի որ սովորել էին մաքուր և անմաքուր կերակուրի մասին: Նրանց համար այն մի **առակ** էր, այսինքն՝ անհասկանալի, ծածկված պատմություն: **Պետրոսը** բառացի արտահայտեց իրենց տարակուսանքը, երբ խընդրեց բացատրել:

15:16-17. Չարմանք հայտնելով, որ նրանք այդքան ուշ են հասկանում, Տերը բացատրեց, որ իրական պղծումը բարոյական է և ոչ թե ֆիզիկական: Ըստ Լուծյան, կերակուրը մաքուր կամ անմաքուր չի լինում: Իրականում ոչ մի նյութական բան ինքնին չար չէ. սխալն այն չարաշահելն է: Կերակուրը, որ մարդն ուտում է, **բերանն է մտնում, փորն է գնում** մարտողության համար, այնուհետև չմաքված մնացողը **արտաք-**

նոց է նեավում: Սա նրա բարոյական էության վրա չի ազդում, այլ միայն նրա մարմնի: Այսօր գիտենք, որ «Աստծո ամեն մի ստեղծածը բարի է, և մերժելու ոչինչ չկա, երբ այն ընդունվում է գոհությամբ, որովհետև սրբված է Աստծո Խոսքով և աղոթքով» (1 Տիմ. 4:4-5): Անշուշտ, այս հատվածը չի խոսում թունավոր բույսերի մասին, այլ սննդամթերքների, որոնք Աստծո կողմից ստեղծված են մարդկանց օգտագործման համար: Ամեն մի բան բարի է և պետք է գոհությամբ ուտել: Եթե որոշ սննդամթերքի նկատմամբ մեկն պերզիա ունի կամ չի կարողանում դա մարսել, չպետք է դրանից ուտի, բայց ընդհանուր առմամբ մենք կարող ենք ուտել՝ վստահ լինելով, որ Աստված ուտելիքը գործածում է մեզ ֆիզիկապես սնուցելու համար:

15:18. Եթե կերակուրը չի պղծում, ապա *ի՞նչն է պղծում:* Հիսուսը պատասխանեց. «... **Այն բաները, որ բերանից են դուրս գալիս, սրտից են դուրս գալիս և պղծում մարդուն:**» Այստեղ սիրտը ոչ թե արյունը մղող պոմպ է, այլ շարժառիթների և ցանկությունների ապականված աղբյուր: Մարդու բարոյական էության այս բաժինն ինքն իրեն դրսևորում է անմաքուր մտքերով, ապականող խոսքերով և չար գործերով:

15:19-20. Մարդուն պղծում են **չար խորհուրդները, սպանությունները, շնությունները, պոռնկությունները, գողությունները, սուտ վկայությունները և հայհոյությունները** (այս բառի հունարենը ներառում է նաև այլոց զրպարտելը):

Դպիրներն ու փարիսեցիները չափազանց ջանասեր էին ցուցադրության, ձեռքերը լվանալու արարողությունը մանրակրկիտ պահպանելու մեջ: Բայց նրանց ներքին կյանքը պղծված էր: Նրանք հատուկ ուշադրություն էին դարձնում մանրուքներին և անտեսում էին իսկական կարևորություն ունեցող հարցերը: Նրանք քննադատում էին աշակերտներին ոչ Աստծուց տրված ավանդույթները խախտելու համար, երբ իրենք դավադրաբար ուզում էին Աստծո Որդուն սպանել և մեղավոր լինել 19-րդ համարում բերված ցանկի բոլոր մեղքերով:

2. Հեթանոս կինը օրհնվում է իր հավատի համար (15:21-28)

15:21-22. Հիսուսն այնտեղից առանձնացավ **Տյուրոսի և Սիդոնի կողմերը՝** Միջերկրական ծովի ափին: Որքան գիտենք, սա Նրա քարոզչական ծառայության միակ դեպքն է, երբ Նա գտնվում էր հրեական տարածքից դուրս: Այստեղ՝ Փյունիկեում, մի քանանացի կին խնդրում էր բժշկել իր **աղջկան, ով սաստիկ տանջվում էր դեփից:**

Շատ կարևոր է գիտակցել, որ այս կինը հրեուհի չէր, այլ հեթանոս: Նա սերում էր քանանացիների անբարոյական ցեղից, որը Աստված նախատեսել էր ջնջել երկրի վրայից: Հետուի գլխավորությամբ Քանանի երկիր ներխուժման ժամանակ Իսրայելի անհնազանդության պատճառով նրանցից մի քանիսը կենդանի էին մնացել, և այս կինն այդ ողջ մնացածների սերնդից էր: Լինելով հեթանոս՝ նա Աստծո ընտրյալ երկրավոր ժողովրդին տրված արտոնություններից չէր օգտվում: Նա օտարական էր, որ հույս չուներ: Ելնելով իր դիրքից՝ նա չէր կարող Աստծուց կամ Մեսիայից որևէ բան պահանջել:

Հիսուսի հետ խոսելիս նա դիմում էր Նրան՝ որպես **Տիրոջ, Դավթի Որդու:** Դա տխրոս էր, որ հրեաները գործածում էին Մեսիայի մասին խոսելիս: Թեև Հիսուսը իսկապես **Դավթի Որդին էր**, հեթանոսներն իրավունք չուներին Նրան դիմել այս հիմունքով: Ահա թե ինչու Նա անմիջապես չպատասխանեց նրան:

15:23. **Աշակերտները մոտենալով աղաչում էին Հիսուսին՝ հեռու ուղարկել** նրան, քանի որ ձանձրացնում էր իրենց: Տիրոջ համար նա հավատի լավ օրինակ էր և անոթ, որի մեջ Նրա շնորհը պիտի փայլեր: Բայց նախ Նա պետք է ստուգեր և ուղղեր նրա հավատը:

15:24-25. Նա հիշեցրեց նրան, որ Իր առաքելությունն ուղղված է **Իսրայելի տան կորած ոչխարներին**, ոչ թե հեթանոսներին, և անշուշտ, ոչ քանանացիներին: Նա չընկճվեց այդ բացահայտ մերժումից: Հրա-

ժարվելով «Դավթի Որդի» տիտղոսից՝ կինը երկրպագեց Նրան՝ ասելով. «**Տե՛ր, օգնի՛ր ինձ**»: Եթե նա իրավունք չուներ Նրան մոտենալ որպես հրեա Մեսիայի, ապա կարող էր մոտենալ որպես արարած իր Արարչին:

15:26. Որպեսզի էլ ավելի ստուգի նրա հավատի իրական լինելը, Հիսուսն ասաց նրան, որ **չի կարելի** հրեա մանուկների կերակուրը վերցնել հացը հեթանոս **շներին** տալու համար: Եթե սա մեր ականջներին կոպիտ է հնչում, հիշենք, որ այն նման է վիրաբույժի դանակին, որը վնասելու համար չի նախատեսված, այլ բժշկելու: Այո՛, նա *հեթանոս* էր: Հրեաները հեթանոսներին նայում էին որպես աղբ հավաքող շների, որ ուտելիք գտնելու համար թափառում էին փողոցներում: Սակայն Հիսուսն այստեղ օգտագործում է մի բառ, որը նշանակում է **փոքրիկ սիրված շնիկներ**: Հարցը հետևյալն էր. արդյոք նա գիտակցո՞ւմ էր Նրա ամենասիրյալ ողորմությունն անգամ ստանալու իր անարժանությունը:

15:27. Սքանչելի էր նրա պատասխանը: Նա լիովին համաձայնեց Հիսուսի տված նկարագրության հետ: Հաշվի առնելով իր անարժան դիրքը՝ նա հանձնվեց Նրա ողորմությանը, սիրուն և շնորհին: Ի պատասխան՝ նա ասաց. «Դու ճիշտ ես: Ես ընդամենը սեղանի տակ գտնվող **փոքրիկ շնիկներից** մեկն եմ: Բայց նկատում եմ, որ **սեղանից** երբեմն **փշրանքներն ընկնում են** հատակի վրա: Թո՛ւյլ տուր վերցնեմ մի փոքր այդ փշրանքներից: Ես անարժան եմ, որ Դու իմ աղջկան բժշկես, բայց ես Քեզ աղերսում եմ դա անել Քո անարժան արարածներից մեկի համար»:

15:28. Հիսուսը գովեց նրան իր **մեծ հավատի** համար: Մինչ անհավատ մանուկները հացի կարիք չունեին, այստեղ էր նա, ով իրեն «շնիկ» էր համարում և լալագին խնդրում էր: Նրա հավատը վարձատրվեց. նրա աղջիկը նույն պահին **բժշկվեց**: Այն փաստը, որ Հիսուսը բժշկեց հեթանոսի աղջկան տարածության վրա, հանգեցնում է այն մտքին, որ Աստծո աջից Նրա առկա ծառայությունը հոգևոր բժշկություն է

շնորհում այս դարաշրջանի հեթանոսներին, երբ Նրա հնագույն ժողովուրդն ազգովին մի կողմ է դրված:

Է. Հիսուսը բժշկում է մի մեծ բազմություն (15:29-31)

Մարկ. 7:31-ում կարդում ենք, որ Տերը Տյուրոսից դուրս եկավ և գնաց դեպի հյուսիս՝ Սիդոն, այնուհետև Հորդանանի միջով արևելք և դեպի հարավ՝ Դեկապոլիսի սահմանները: Այնտեղ՝ Գալիլիայի ծովի մոտ, Նա բժշկեց **կաղերին, կույրերին, համրերին, հաշմանդամներին և ուրիշ այլ հիվանդների**: Չարմացած ժողովուրդը **փառավորում էր Իսրայելի Աստծուն**: Ենթադրում են, որ դա եղել է հարևան հեթանոս ազգերի մեջ: Մարդիկ, նույնացնելով Հիսուսին և Նրա աշակերտներին Իսրայելի հետ, ճիշտ եզրակացրին, որ նրանց մեջ **Իսրայելի Աստվածն** է գործում:

Ը. Չորս հազարի կերակրումը (15:32-36)

15:32. Անուշադիր կամ քննադատող ընթերցողները, շփոթելով այս իրադարձությունը հինգ հազարի կերակրման հետ, մեղադրում էին Աստվածաշունչն ընդօրինակելու, հակասության և սխալ հաշվարկի մեջ: Բանն այն է, որ սրանք երկու տարբեր իրադարձություններ են և ավելի շուտ լրացնում են իրար, քան թե հակասում:

Երեք օր Տիրոջ հետ մնալուց հետո **ժողովրդի** ուտելիքը վերջացավ: Նա չէր կարող նրանց սոված արձակել, քանի որ կարող էին **ճանապարհին** ուժասպառ լինել:

15:33-34. **Նրա աշակերտները** նորից շփոթվեցին՝ կանգնելով անհնարին խնդրի առջև՝ ինչպե՞ս կերակրել նման բազմություն: Այս անգամ նրանք միայն **յոթ** հաց և **մի քանի մանր ձկներ ունեին**:

15:35-36. Ինչպես հինգ հազարի դեպքում, Հիսուսը ժողովրդին նստեցրեց, **գոհացավ, կտրեց** հացերը և ձկները ու **տրվեց Իր աշակերտներին**, որպեսզի նրանք բաժանեն: Նա սպասում է, որ աշակերտներն անեն այն, ինչ կարող են, իսկ հետո քայլեր է ձեռնարկում և անում է այն, ինչ նրանք չեն կարող:

15:37-39. Երբ ժողովուրդը **կշտացավ, յոթ զամբյուղ լիքը** ավելացած ուտելիք հավաքեցին: Ուտողների թիվը **չորս հազար այր մարդիկ էին՝ կանանցից և երեխաներից բացի:**

Հաջորդ գլխում կտեսնենք, որ ժողովրդին կերակրելու այս երկու հրաշքներին վերաբերող վիճակագրությունը կարևոր է (16:8-12): Աստվածաշնչյան պատմության յուրաքանչյուր մանրուք իմաստավորված է: Ժողովրդին արձակելով՝ մեր Տերը **նավակը մտավ և եկավ Մագդաղիա**, որը գտնվում է Գալիլիայի ծովի արևմտյան ափում:

Թ. Փարիսեցիների և սադուկեցիների թթխմորը (16:1-12)

16:1. Փարիսեցիներն ու սադուկեցիները ավանդական հակառակորդներ էին աստվածաբանական հարցերում: Նրանք ներկայացնում էին վարդապետական երկու ծայրահեղություն: Սակայն նրանց միավորում էր մեկ ընդհանուր նպատակ՝ Փրկչին վնասել: Որպեսզի փորձեն Հիսուսին, նրանք **խնդրեցին** Նրան, որ **երկնքից նշան** ցույց տա իրենց: Մեզ անհասկանալի ինչ-որ ձևով նրանք փորձում էին ստիպել Նրան փոխզիջման գնալ: Երկնքից նշան խնդրելով՝ նրանք հավանաբար մտածում էին, որ աղբյուրը տարբեր կլինի, քան Նրա նախորդ հրաշքները: Կամ էլ գուցե ուզում էին մի գերբնական նշան երկնքում: Հիսուսի բոլոր հրաշքները կատարվել են երկրի վրա: Կարո՞ղ էր Նա երկնային հրաշքներ էլ անել:

16:2-3. Նա պատասխանեց նրանց՝ շարունակելով **երկնքի** մասին թեման: Եթե նրանք երեկոյան տեսնում էին **կարմիր երկնակամար**, ապա հաջորդ օրվա համար կանխատեսում էին **պարզ եղանակ**: Գիտեին նաև, որ **առավոտյան կարմրած ու մթագնած** երկինքը կանխատեսում է փոթորիկներ այդ օրը:³² Նրանք մասնագետ էին երկրի երեսը քննելու մեջ, բայց **ժամանակների նշանները** չէին կարողանում քննել:

Ի՞նչ **նշաններ** էին դրանք: Մեսիայի գալուստը ազդարարող մարգարեն հայտնվեց

ի դեմն Հովհաննես Մկրտչի: Մեսիայի մասին մարգարեացած հրաշքները, գործերը, որոնք մարդկանցից ոչ ոք երբևէ չէր արել, կատարվել էին նրանց ներկայությամբ: Ժամանակների մյուս նշանը Մեսիայի բացահայտ մերժվելն էր հրեաների կողմից և Ավետարանի անցումը հեթանոսներին՝ մարգարեությունների համաձայն: Եվ չնայած այս անհերքելի ապացույցներին, նրանք բոլորովին չէին տեսնում, որ պատմություն է ստեղծվում, կամ իրականանում է մարգարեությունը:

16:4. Երբ Հիսուսն Անձամբ կանգնած էր նրանց մեջ, նշան փնտրող փարիսեցիներն ու սադուկեցիներն իրենք իրենց, որպես **չար** և հոգևորապես **շնացող սերունդ** ցուցադրեցին: Այժմ նրանց **ուրիշ նշան չի տրվի՝ բացի Հովնան մարգարեի նշանից**: Ինչպես բացատրված է 12:39 նշումների մեջ, սա Քրիստոսի հարության օրն է: Չար և շնացող սերունդը խաչելու է իր Մեսիային, բայց Աստված Նրան մեռելներից հարուցանելու է: Սա լինելու է կործանման նշան բոլոր նրանց համար, ովքեր մերժեցին Նրա՝ որպես օրինական Կառավարչի առջև խոնարհվելը:

Այս հատվածն ավարտվում է չարաբաստիկ բառերով. «**Եվ թողեց նրանց ու գրնաց**»: Այս բառերի հոգևոր իմաստը պիտի բոլորին ակնհայտ լինի:

16:5-6. Երբ **աշակերտները** Տիրոջը միացան լճի արևելյան **ափում**, նրանք **մոռացել էին** իրենց հետ ուտելիք **վերցնել**: Ուստի երբ Հիսուսը նրանց դիմեց՝ նախազգուշացնելով՝ **զգո՛ւյշ եղեք փարիսեցիների և սադուկեցիների թթխմորից**, նրանք մտածեցին, որ Նա ասում է. «Մի՛ գնացեք այդ հրեա առաջնորդների մոտ ուտելիքի համար»: Կերակրվելու մտահոգությունը նրանց ստիպեց բառացիորեն նայել բնական բացատրությանը, որտեղ հոգևոր դաս էր նախատեսված:

16:7-10. Նրանք դեռևս անհանգստանում էին ուտելիքի պակասության մասին, չնայած այն հանգամանքին, որ իրենց հետ էր Նա, Ով կերակրել էր հինգ և չորս հազարներին: Ուստի Նա հիշեցրեց երկու հրաշք-

ների մասին, որոնցից բխող դասը վերաբերում էր աստվածային թվաբանությանը և խնամակալությանը, *որովհետև Հիսուսն ինչքան քիչ աշխատեր, այնքան շատ մարդ կկերակրեր, և ավելի շատ ուտելիք կավերանար*: Երբ միայն հինգ հաց և երկու ձուկ կար, Նա կերակրեց հինգ հազարին, և ավելացավ տասներկու կողով ուտելիք: Ունենալով ավելի շատ քանակությամբ հաց և ձուկ՝ Նա կերակրեց ընդամենը չորս հազարի, և ավելացավ ընդամենը յոթ կողով: Եթե մեր սահմանափակ միջոցները հանձնենք Նրա տնօրինությանը, Նա կարող է դրանք բազմապատկել հակառակ համամասնությամբ մեր գումարի վրա. «Զիչը շատ ավելի է, եթե դրանում Աստված կա»:

Այստեղ **կողովը**³³ նկարագրող մեկ ուրիշ բառ է գործածված, քան հինգ հազարին կերակրելիս: Այս դեպքում յոթ կողովներն ավելի մեծ են եղել, քան տասներկուսը նախորդ դեպքում: Բայց դասի էությունը չի փոխվում. ինչո՞ւ անհանգստանալ սովի և կարիքի մասին, երբ հաղորդակցություն ունենք Մեկի հետ, Ով անսահմանափակ գոություն և պաշարներ ունի:

16:11-12. Խոսելով **փարիսեցիների և սադուկեցիների թթխմորի** մասին՝ Տերն ակնարկում էր ոչ թե հացը, այլ չար վարդապետությունները և վարքը: Դուկ. 12:1-ում փարիսեցիների թթխմորը սահմանվում է որպես կեղծավորություն: Թեև նրանք պընդում էին, որ պահում են Աստծո Խոսքի ամենափոքր մանրամասները, սակայն նրանց հնազանդությունը ցուցադրական և մակերեսային էր. ներքուստ նրանք չար էին և ապականված:

Սադուկեցիների թթխմորը ռացիոնալիզմն էր: Նրանք՝ իրենց ժամանակի ազատամիտները, այսօրվա լիբերալների նման կառուցեցին կասկածների և հերքումների մի ամբողջ համակարգ: Նրանք ժխտում էին հրեշտակների և հոգիների գոյությունը, մարմնի հարությունը, հոգու անմահությունը և հավիտենական պատիժը: Սա թերահավատության (սկեպտիցիզմի) թրթխմորն է, եթե այն հանդուրժվի, կտարած-

վի և կթափանցի, ինչպես թթխմորը այլուրի մեջ:

X. ԹԱԳԱՎՈՐԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ (16:13-17:27)

Ա. Պետրոսի մեծ դավանությունը (16:13-20)

16:13-14. Փիլիպպյան Կեսարիան գրտնըվում էր Գալիլիայի ծովից մոտավորապես քառասուն կմ դեպի հյուսիս և Հորդանանից ութ կմ դեպի արևելք: Երբ Հիսուսը եկավ մոտակա գյուղերը (Մարկոս 8:27), մի իրադարձություն պատահեց, որը Նրա վարդապետական ծառայության գազաթնակետն է համարվում: Մինչ այդ Նա առաջնորդում էր Իր աշակերտներին՝ Իր Անձի մասին ճիշտ հասկացողությունը տալով: Հաջողության հասնելով սրանում՝ Նա վճռականորեն Իր դեմքն ուղղեց դեպի խաչը:

Նա սկսեց **Իր աշակերտներին** հարցնել, թե մարդիկ Իր անձի մասին ի՞նչ էին ասում: Տարբեր պատասխաններ տրվեցին՝ սկսած **Հովհաննես Մկրտչից** մինչև **Եղիան, Երեմիան, կամ մարգարեներից մեկը**: Սովորական մարդու համար Նա շատերից մեկն էր: Լավը, բայց ոչ Լավագույնը: Մեծը, բայց ոչ Մեծագույնը: Մարգարե էր, բայց ոչ Մարգարեն: Այդպիսի տեսակետը լրիվ անարժեք էր: Այն դատապարտում էր Նրան՝ մեղմ գովասանքով: Եթե Նա պարզապես մի մարդ է, ուրեմն խաբեքա է, քանի որ հայտարարում էր Հայր Աստծո հետ հավասար լինելը:

16:15-16. Ուստի Հիսուսը հարցրեց աշակերտներին, թե իրենք ի՞նչ են կարծում, թե ո՞վ է Նա: **Սիմոն Պետրոսը** իր պատմական խոստովանությունն արեց. «**Դու Զրիստոսն ես՝ Կենդանի Աստծո Որդին**»: Այլ կերպ ասած, Նա Իսրայելի Մեսիան էր և Աստծո Որդին:

16:17-18. Մեր Տերն օրհնեց **Պետրոսին՝ Հովհաննի** որդուն: Այս ձկնորսն իր խելքով կամ բնածին իմաստությամբ չհասավ Հի-

սուսի մասին այսպիսի հասկացողության: Երան **Հայր** Աստվածն այն **հայտնեց** գերբնական ձևով: Բայց Որդին նույնպես մի կարևոր բան էր ուզում Պետրոսին ասել: Ուստի Հիսուսն ավելացրեց. «**Եվ Ես էլ ասում եմ քեզ, որ դու Պետրոս ես. և այս վեմի վրա պիտի շինեմ Իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթահարելու այն**»: Բոլորս գիտենք, որ այս համարի շուրջ ավելի շատ տարածայնություններ են պտտվում, քան Ավետարանի որևէ այլ համարի: Հարցը հետևյալն է. «Ո՞վ կամ ի՞նչ է վեմը»: Խնդրի մի մասը առաջանում է այն փաստից, որ «Պետրոս» անունը և «վեմ» բառը հունարենում միևնույն ձևն ունեն, բայց պարունակում են տարբեր իմաստներ: Առաջինը՝ *petros*, նշանակում է քար կամ փխրուն ժայռախույթ, երկրորդը՝ *petra* նշանակում է ժայռ, անասան վեմ: Հետևաբար, ըստ էության, Հիսուսն ասաց. «**Դու Պետրոս ես (քար), և այս վեմի վրա պիտի շինեմ Իմ եկեղեցին**»: Նա չասաց, որ Իր Եկեղեցին պիտի շինի քարի վրա, այլ ժայռի վրա:

Եթե Պետրոսը վեմը չէր, ապա ո՞վ էր: Եթե մենք հավատարիմ մնանք համատեքստին, ապա պատասխանը սա է. վեմը Պետրոսի խոստովանությունն էր, որ Քրիստոսը Կենդանի Աստծո Որդին է, ճշմարտություն, որի վրա Եկեղեցին է հիմնված: Եփեսացիների թղթի 2:20-ը սովորեցնում է, որ Եկեղեցին կառուցված է Հիսուս Քրիստոսի՝ գլխավոր անկյունաքարի վրա: Աստվածաշնչյան այս հայտարարությունը, որ մենք հաստատված ենք առաքյալների ու մարգարեների հիմքի վրա, վերաբերում է ոչ թե նրանց, այլ այն հիմքին, որը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսին վերաբերող իրենց ուսմունքի վրա:

1 Կոր. 10:4-ում Քրիստոսը ներկայացված է որպես Վեմ: Այս կապակցությամբ Մորզանը կարևոր հիշեցում է կատարում.

«Հիշե՛ք, թե Նա խոսում էր հրեաների հետ: Եթե մենք հետևենք «վեմ» բառի օգտագործմանը երբայերեն սուրբգրություններում, ապա կգտնենք, որ այն երբեք մարդու չի խորհրդապատկերել, այլ միայն

Աստծուն: Այնպես որ Փիլիպպյան Կեսարիայի կողմերում Եկեղեցին Պետրոսի վրա չկառուցվեց: Հիսուսը չէր կատակում խոսքերի նշանակության հետ: Նա վերցրեց իրենց հին եբրայական պատկերը՝ վեմը, որը միշտ եղել է աստվածության խորհրդանիշը, և ասաց. «Աստծո Քրիստոսի վրա, կենդանի Աստծո Որդու վրա, Ես պիտի շինեմ Իմ Եկեղեցին»:³⁴

Պետրոսը երբեք իր մասին չի խոսել որպես Եկեղեցու հիմքի: Նա երկու անգամ անդրադարձել է Քրիստոսին՝ որպես Վեմի (Գործք 4:11-12, 1 Պետ. 2:4-8), բայց պատկերն այստեղ բոլորովին այլ է. վեմ՝ անկյան գուլիս, բայց ոչ թե հիմք:

«**Ես պիտի շինեմ Իմ եկեղեցին**»: Այստեղ մենք **Եկեղեցու** առաջին հիշատակումն ունենք Աստվածաշնչում: Այն գոյություն չունեի ՀԿ-ում: Երբ Հիսուսն ասաց այս խոսքերը, Եկեղեցին դեռ ապագայում էր: Այն կազմավորվեց Հոգեգալուստի օրը և բաղկացած է Քրիստոսին ճշմարիտ հավատացողներից՝ թե՛ հրեաներից, թե՛ հեթանոսներից: Մի որոշակի համայնք՝ ճանաչված որպես Քրիստոսի Մարմին և Հարս, ունի մի յուրահատուկ երկնային կոչում և նախասահմանված ապագա:

Մենք հազիվ թե ակնկալեինք, որ Եկեղեցին կներկայացվեր Մատթեոսի Ավետարանում, որտեղ հիմնական թեմաներն են Իսրայելը և Թագավորությունը: Սակայն Քրիստոսին մերժելու հետևանքով եկավ մի միջանկյալ ժամանակաշրջան՝ Եկեղեցու ժամանակաշրջանը, որը շարունակվելու է մինչև Եկեղեցու հափշտակությունը: Այնուհետև Աստված կվերականգնի Իր հարաբերություններն Իսրայելի հետ ազգային մակարդակով: Ուստի այստեղ լիովին տեղին է այն, որ Աստված Եկեղեցին ներկայացնում է որպես Իր դիսպենսացիոն ծրագրի հաջորդ քայլը, Իսրայելի մերժումից հետո:

«**Դժոխքի դռները չեն հաղթահարելու այն**» արտահայտությունը կարելի է հասկանալ երկու ձևով: Առաջին՝ **դժոխքի դռները** պատկերում են անհաջող հարձակումը Եկեղեցու վրա. Եկեղեցին կանգուն

է մնալու իր դեմ ուղղված բոլոր հարձակումներից հետո. Եկեղեցին կարող է Ինքնին ներկայանալ որպես հարձակման անցնող և հաղթանակող: Ամեն դեպքում մահվան ուժերը պարտվելու են ապրող հավատացյալների հափշտակությամբ և Քրիստոսով ննջեցյալների հարությամբ:

16:19. «Եվ կտամ քեզ երկնքի Թագավորության բանալիները» չի նշանակում, որ Պետրոսին է տրված մարդկանց երկինք ներս թողնելու իշխանությունը: Այստեղ խոսքը *երկրի* վրա եղող **Երկնքի Թագավորության** մասին է՝ մի ոլորտի, որ ներառում է բոլոր նրանց, ովքեր դավանում են իրենց հավատարմությունը Թագավորի հանդեպ, բոլոր նրանց, ովքեր պնդում են, որ իրենք քրիստոնյա են: **Բանալիները** խոսում են հասանելիության կամ մուտքի մասին: Բանալիները, համաձայն Մեծ Հանձնարարականի (Մատթ. 28:19)՝ աշակերտել, մկրտել և սովորեցնել, բացում են դավանության ոլորտի դուռը: Մկրտությունը փրկության անհրաժեշտ պայման չէ, բայց նվիրման առաջին արարողությունն է, որի միջոցով մարդիկ հրապարակայնորեն դավանում են իրենց հավատարմությունը Թագավորի հանդեպ: Առաջին անգամ Պետրոսը բանալիները օգտագործեց Պենտեկոստեի օրը: Նրանք չէին տրված միմիայն նրան, այլ նրան՝ որպես բոլոր աշակերտների ներկայացուցիչ: (Տե՛ս Մատթ. 18:18-ը. նույն խոստումը տրված է նրանց բոլորին):

«... Ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում և ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում»: Այս համարը և սրան համահունչ հատվածը, ըստ Հովհ. 20:23-ի, երբեմն օգտագործում են, որպեսզի սովորեցնեն, որ Պետրոսին և նրա թվացյալ հաջորդներին մեղքերը ներելու իշխանություն է տրված: Մենք գիտենք, որ դա անկարելի է. միայն Աստված կարող է մեղքերը ներել:

Այս համարը հասկանալու երկու ճանապարհ գոյություն ունի: Առաջին՝ դա կարող է նշանակել, որ առաքյալները մեղքերը կա-

պելու և արձակելու իշխանություն ունեին, որը մենք այսօր չունենք: Օրինակ՝ Պետրոսը Անանիային և Սափիրային իրենց մեղքերով կապեց, այնպես որ նրանք ակնթարթորեն մահվամբ պատժվեցին (Գործք 5:1-10), իսկ Պողոսը Կորնթոսում արձակեց պատժված մարդուն իր մեղքերի հետևանքներից, որովհետև այդ մարդն ապաշխարեց (2 Կոր. 2:10):

Կամ էլ այս համարը կարող է նշանակել, որ ամեն բան, ինչ առաքյալները կապեն կամ արձակեն երկրի վրա, պետք է *արդեն* կապված կամ արձակված լինի երկնքում: Այսպիսով, Ռայրին ասում է. «Ոչ թե առաքյալները, այլ Երկինքն է նախաձեռնում բոլոր «կապել»-ներն ու «արձակել»-ները, իսկ առաքյալներն ընդամենը հայտարարում են դրանք»:³⁵

Այս համարի միակ հնարավոր բացատրությունը, որ կիրառելի է այսօրվա համար, դա նրա *հռչակագրային* իմաստն է: Երբ մեղավորը գոջում է իր մեղքերի համար և ընդունում է Հիսուս Քրիստոսին՝ որպես անձնական Փրկչի, քրիստոնյան կարող է *հռչակել*, որ այդ մարդու մեղքերը ներված են: Երբ մեղավորը մերժում է Փրկչին, քրիստոնյա ծառայողը կարող է *հռչակել*, որ նրա մեղքերը պահպանված են: Ուլիյամ Բելին գրում է. «Ամեն անգամ, երբ Եկեղեցին գործում է Տիրոջ անունով և իրականում կատարում է Նրա կամքը, Աստծո կնիքը դրվում է իրենց գործերի վրա»:

16:20. Կրկին կարդում ենք, որ Տեր Հիսուսն **Իր աշակերտներին պատվիրեց մարդկանց չասել**, որ Ինքը Մեսիան է. քանի որ Իսրայելի անհավատության պատճառով ոչ մի լավ բան չէր կարող լինել, եթե սա բացահայտվեր: Անկասկած, ժողովրդական շարժումը Նրան թագադրելու համար վնաս կպատճառեր, քանի որ այդպիսի անժամանակ դեպքերի զարգացումը կարող էր դաժանորեն ճնշվել հռոմեացիների կողմից:

Մտյուարտը, ով Հիսուսի ծառայության այս բաժինն անվանում է շրջադարձային, գրում է.

«Այդ օրը Փիլիպպյան Կեսարիան նշում

Է Ավետարանների ջրաբաժանումը: Այս պահից սկսած՝ վտակներն սկսում են այլ ուղղությամբ հոսել: Հավանաբար թվում էր՝ ժողովրդականության ալիքը, որը Հիսուսի ծառայության վաղ շրջանում Նրան տանում էր գահակալության, այժմ ետևովում էր մնացել: Այժմ հոսանքը տանում էր դեպի խաչ... Կեսարիայում Հիսուսը կարծես կանգնած էր բաժանարար գծի վրա: Սա նման էր բլրի, որից Նա կարող էր տեսնել Իր ետևում մնացած բոլոր ճանապարհները, որ անցել էր, իսկ առջևում Նրան սպասվում էր մութ ու սարսափելի ճանապարհ: Նա հայացքը ետ ուղղեց, ուր դեռ թրթռում էին երջանիկ օրերի մայրամուտի շողերը, իսկ հետո շրջվեց և գնաց, ստվերներին ընդառաջ: Նրա երթուղին այժմ տանում էր դեպի Գողգոթա»:³⁶

Բ. Աշակերտների նախապատրաստումը Իր մահվան և հարության համար (16:21-23)

16:21. Այժմ երբ աշակերտները հասկացան, որ Հիսուսը Մեսիան է՝ կենդանի Աստծո Որդին, նրանք պատրաստ էին լսելու Նրա առաջին ուղղակի կանխատեսումն Իր մահվան և հարության մասին: Այժմ նրանք գիտեին, որ Նրա գործը երբեք չի ձախողվի, որ իրենք հաղթողի կողմում են, ինչ էլ պատահի, հաղթանակն ապահովված է: Ուստի Տերը լուրը հայտնեց նախապատրաստված սրտերին: Նա **պետք է Երուսաղեմ գնա**, պետք է **շատ չարչարանքներ կրի** կրոնական առաջնորդների կողմից, պետք է **սպանվի և երրորդ օրը հարություն առնի**: Լուրը բավարար էր, որպեսզի կործաներ ցանկացած շարժում՝ բացառությամբ վերջինի. **պետք է... երրորդ օրը հարություն առնի**: Սրանում էր ամբողջ տարբերությունը:

16:22. Պետրոսը շատ վրդովվեց այն մըտքից, որ իր Ուսուցիչը ենթարկվելու էր նրման վերաբերմունքի: Նրան մի կողմ տանելով, ասես արգելափակելով Նրա ճանապարհը՝ նա բողոքարկեց. «**Քա՛վ լիցի, Տեր, թող այդ բանը չպատահի Քեզ**»:

16:23. Նա հանդիմանություն ստացավ

Տեր Հիսուսի կողմից: Նա աշխարհ էր եկել, որպեսզի մեռներ մեղավորների համար: Ինչ-որ բան կամ որևէ մեկը, որ խոչընդոտում էր Նրան այդ նպատակին հասնելու մեջ, Աստծո կամքին հակառակ էր գնում: Այդ պատճառով Նա ասաց. «**Ետև՛ս անցիր, սատանա՛, դու գայթակղություն ես Ինձ համար, որովհետև դու ոչ թե Աստծո բաներն ես խորհում, այլ մարդկանց**»: Պետրոսին անվանելով սատանա՝ Հիսուսը նկատի չունեց, որ առաքյալը դիվահար էր կամ գտնվում էր սատանայի վերահսկողության տակ: Նա պարզապես նկատի ուներ, որ Պետրոսի գործողություններն ու խոսքերը ճիշտ այն էին, ինչ կարելի էր սպասել սատանայից (որի անունը նշանակում է *հակառակորդ*): Գողգոթայի դեմ բողոքելով՝ Պետրոսը Փրկչին խոչընդոտ էր դառնում:

Յուրաքանչյուր քրիստոնյա կանչված է վերցնելու իր խաչը և գնալու Տեր Հիսուսի հետևից, բայց երբ հեռվից արահետի վրա նշմարվում է խաչը, ներքին ձայնն ասում է. «Քա՛վ լիցի, փրկի՛ր ինքդ քեզ»: Կամ գուցե մեր սիրելիների ձայներն են մեզ փորձում շեղել հնազանդության ուղուց: Այդ պահերին մենք նույնպես պետք է ասենք. «Ետև՛ս անցիր, սատանա՛: Դու խոչընդոտ ես ինձ համար»:

Գ. Նախապատրաստում ճշմարիտ աշակերտության համար (16:24-28)

16:24. Այժմ Տեր Հիսուսը պարզորոշ ասում է, թե ինչ է պետք Իր աշակերտը լինելու համար՝ անձնուրաց լինել, խաչը կրել և Նրան հետևել: **Անձն ուրանալը** նույնը չէ, ինչ-որ ինքնաիրաժարումը. դա նշանակում է այնքան լիարժեք ենթարկվել Նրա վերահսկողությանը, որ «ես»-ը ոչ մի իրավունք չունենա: **Խաչը վերցնել** նշանակում է համբերությամբ կրել ամոթ, տառապանք և թերևս մարտիրոսվել հանուն Նրա, մեռնել մեղքին, ես-ին և աշխարհին: **Հետևել** Նրան նշանակում է ապրել այնպես, ինչպես Նա ապրեց՝ Իր մեջ ներառելով լիարժեք խոնարհությունը, աղքատությունը, կարեկցանքը, սերը, շնորհը և ամեն առաքի-

նություն:

16:25. Տերը աշակերտության համար կանխատեսում է երկու խոչընդոտ: Առաջինը բնական փորձությունն է իր անձը **փրկելու** անհարմարություններից, ցավից, միայնակությունից կամ կորստից: Երկրորդ փորձությունը հարստանալն է: Ինչ վերաբերում է առաջինին, ապա Հիսուսը զգուշացրեց, որ նրանք, ովքեր կառչում են իրենց կյանքից՝ հետապնդելով եսասիրական նպատակներ, երբեք բավարարվածություն չեն գտնի, իսկ նրանք, ովքեր առանց վախի հրաժարվում են իրենց կյանքից հանուն Նրա, պիտի գտնեն իրենց գոյության պատճառը:

16:26. Երկրորդ փորձությունը՝ հարստանալը, պարզապես անտրամաբանական է: «Պատկերացրեք, - ասաց Հիսուսը, - որ **մարդը** այնքան հաջողակ է դառնում բիզնեսում, որ շահում է **ամբողջ աշխարհը**: Այդ անմիտ փնտրտուքն այնքան ժամանակ և էներգիա է կյանելու, որ նա անտեսելու է իր կյանքի գլխավոր նպատակը: Ինչ օգուտ, որ նա ձեռք բերի այդ բոլոր գումարները և հետո մեռնի՝ իր հետ ոչինչ չտանելով, և հավիտենականությունը դատարկաձեռն անցկացնի»: Մարդն ավելի կարևոր գործերի համար է այստեղ գտնվում, քան գումար վաստակելը: Նա կանչված է ներկայացնելու Իր Թագավորի շահերը: Եթե նա բաց թողնի այդ անելը, կկորցնի ամեն ինչ:

24-րդ համարում Հիսուսը նրանց ամենավատ բանի մասին ասաց: Քրիստոնեության առանձնահատկությունը սա է. դու պետք է ի սկզբանե իմանաս ամենավատը: Բայց երբեք չես դադարի բացահայտել գանձերը և օրհնությունները: Այս մասին Բարնհաուսը լավ է ասել.

«Երբ մեկը տեսել է այն ամենը, ինչը վանող է գրություններում, թաքցնելու ոչինչ չկա, ինչով կարելի է նրան անակրեկալի բերել: Յուրաքանչյուր նոր բան, որի մասին մենք երբևէ պիտի սովորենք այս կյանքում կամ ապագայում, մեզ բավականություն է պատճառելու»:³⁷

16:27. Այժմ Տերը Իրեններին հիշեցնում

է Իր **փառքի** մասին, որը հաջորդելու է տառապանքին: Նա մատնանշում է Իր երկրորդ գալուստը, երբ երկիր կվերադառնա **Իր հրեշտակների հետ Իր Հոր** մշտագո **փառքով**: **Այն ժամանակ Նա կհատուցի** նրանց, ովքեր ապրում են Նրա համար: Հաջողակ կյանքի միակ ուղին փառավոր ապագայի համար նպատակադրվելն է, որոշելը, թե ինչն է իրականում կարևորը, և ապա դրա ետևից գնալը՝ ջանք չինայելով:

16:28. Այնուհետև Հիսուսն ապշեցուցիչ հայտարարություն արեց, որ Նրա հետ **կանգնածների մեջ** կան ոմանք, **ովքեր պիտի չառնեն մահվան համը**, մինչև որ տեսնեն Իրեն՝ **Իր Թագավորությամբ գալիս**: Խնդիրը, իհարկե, այն է, որ այդ բոլոր աշակերտները մահացել են, իսկ Քրիստոսը դեռ չի եկել Իր փառքով և գորությամբ, որպեսզի հաստատի Իր Թագավորությունը: Բայց այն կյուծվի, եթե գլխի ավարտը հաշվի չառնենք: Մենք կարծում ենք, որ այդ հանելուկային հայտարարության բացատրությունը հաջորդ գլխի առաջին ութ համարներում է գտնվում: Այս համարները պարզաբանում են Այլակերպության լեռան վրա կատարված իրադարձությունները: Այնտեղ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը տեսան կերպարանափոխված Քրիստոսին: Նրանք իրապես առանձնաշնորհում ունեցան տեսնել Քրիստոսին Իր Թագավորության փառքի մեջ:

Քրիստոսի այլակերպության մեջ մեզ հայտնվում է Նրա ապագա Թագավորության ուրվագիծը: Պետրոսն այդ իրադարձությունը նկարագրում է որպես «... Մեր Տեր Հիսուս Քրիստոսի գորությունն ու գալուստը...» (2 Պետ. 1:16): Տեր Հիսուս Քրիստոսի գորությունն ու գալուստը վերաբերում են Նրա երկրորդ գալստին: Հովհաննեսն էլ է խոսում լեռան վրա իրենց փորձառության մասին, այն ժամանակների, երբ «... Նրա փառքը տեսանք որպես Հոր Միածնի փառքը» (Հովի. 1:14): Քրիստոսի առաջին գալուստը խոնարհությամբ էր, Նրա երկրորդ գալուստը լինելու է փառքով: Այսպիսով, 28-րդ համարում ասված կանխատեսումը լեռան վրա կատարվեց.

Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը Մարդու Որդուն տեսան, բայց արդեն ոչ թե որպես հեզ նագովրեցու, այլ որպես փառավորված Թագավորի:

Գ. Աշակերտների նախապատրաստումը փառքին.

Այլակերպությունը (17:1-8)

17:1-2. Փիլիպպյան Կեսարիայում կատարված իրադարձություններից **6 օր** անց **Հիսուսն Իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին ու նրանց մի բարձր լեռ հանեց**, որը գտնվում էր ինչոր մի տեղ Գալիլիայում: Ծառ մեկնաբաններ այդ 6 օրերին նշանակություն են տալիս: Օրինակ՝ Գաբելինն ասում է. «Վեցը մարդկային թիվ է, թիվ, որ մատնանշում է աշխատանքի օրերը: Այն բանից հետո, երբ վեց աշխատանքային օրերը և մարդու օրն ավարտվի, կգա Տիրոջ օրը, Թագավորությունը»:

Երբ Ղուկասն ասում է, որ այլակերպությունը տեղի ունեցավ «ութ օր հետո» (9:28), նա ըստ երևույթին նկատի ունի թե՛ այն օրը, երբ Հիսուսն այդ կանխատեսեց Իր աշակերտներին, և թե՛ այլակերպության օրը: Քանի որ ութը հարության և նոր սկզբի թիվն է, ապա Թագավորությունը լիովին կարելի է համեմատել սկզբի հետ, ինչպես Ղուկասն է դա անում:

Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, ովքեր հավանաբար առանձնապես մոտ էին Փրկչին, Նա արտոնեց Իրեն կերպարանափոխված տեսնել: Մինչև հիմա Նրա փառքը ծածկված էր մարդու մարմնով: Բայց այժմ **Նրա դեմքը և զգեստները** փայլեցին **ինչպես արեգակը** և ապշեցուցիչ ճերմակաթույր էին, որը Նրա աստվածության տեսանելի դրսևորումն էր ճիշտ այնպես, ինչպես ամպի փառքը կամ *shekinah-ն* ՀԿ-ում խորհրդանշում էր Աստծո ներկայությունը: Այդ տեսարանը նախորդում էր այն պատկերին, որը Տեր Հիսուսը պիտի ունենա, երբ նորից հայտնվի՝ հաստատելու Իր Թագավորությունը: Նա հաջորդ անգամ հայտնվելու է ոչ որպես գոհաբերվող Գառ, այլ որպես Հուրայի ցեղի

Առյուծ: Նրան տեսնողները անմիջապես պիտի ընդունեն Նրան՝ որպես Աստծո Որդու, թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ:

17:3. Լեռան վրա հայտնվեցին Մովսեսը և Եղիան և քննարկում էին Նրա մտապուտ մահը Երուսաղեմում (Ղուկ. 9:30-31): Մովսեսը և Եղիան իրենցից ներկայացնում էին հինկտակարանյան սուրբերին: Կամ եթե Մովսեսին համարենք Օրենքի ներկայացուցիչ, իսկ Եղիային՝ մարգարեների ներկայացուցիչ, ապա կոտեսնենք ՀԿ-ի երկու բաժինները, որոնք մատնանշում են Քրիստոսի առաջիկա չարչարանքները և հետագա փառքը: Երրորդ հավանականությունն այն է, որ Մովսեսը, ով մահից հետո երկինք գնաց, պատկերում է բոլոր նրանց, ովքեր մեռելներից հարություն են առնելու Հագարամյա Թագավորություն մտնելու համար: Իսկ Եղիան, ով երկինք հափշտակվեց, ներկայացնում է նրանց, ովքեր Թագավորություն կհասնեն հափշտակվելով:

Աշակերտները՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, ներկայացնում են նորկտակարանյան սուրբերին: Նրանք նաև կարող են լինել հավատարիմ հրեաների մնացորդի նախապատկերը, որը կենդանի է մնալու երկրորդ գալստյան ժամանակ և Թագավորություն է մտնելու Քրիստոսի հետ:

Լեռան ստորոտի բազմությունը (հ. 14, հմմտ. Ղուկ. 9:37) համեմատվում է հեթանոս ազգերի հետ, որոնք նույնպես կիսելու են Քրիստոսի Հագարամյա իշխանության օրհնությունները:

17:4-5. **Պետրոսը** խորապես հուզվել էր այդ կապակցությամբ. նա լավ էր հիշում հրեաների պատմությունը: Ցանկանալով երկարաձգել այդ հիասքանչ տեսիլքը՝ նա միանգամից առաջարկեց հիշատակի **երեք** վրան կամ **տաղավար** շինել, **մեկը Հիսուսի համար, մեկը Մովսեսի, մյուսն էլ Եղիայի**: Նա իրավացի էր, որ Հիսուսին առաջին տեղում դրեց, բայց սխալ էր, որ չնշեց Նրա գերազանցությունը: Հիսուսը մեկը չէ հավասարների միջից, Նա բոլորի Տերն է: Որպեսզի այդ դասը սովորեցնեն, Հայր Աստված նրանց ծածկեց մի լուսավոր

ամպով, այնուհետև հայտարարեց. «**Ռա՛ է Իմ սիրելի Որդին, Որին հավանել եմ, Ռա՛ն լսեցեք**»: Թագավորության մեջ Քրիստոսը լինելու է անգուգական Մեկը, գերագույն Միապետը, Ում խոսքը վերջնական հեղինակություն է ունենալու: Այդպես պետք է լինի Նա ներկայիս հետևորդների սրտերում:

17:6-8. Այլշեղով այդ ամպի փառքով և Աստծո ձայնով՝ **աշակերտները երեսնիվայր ընկան**: Բայց Հիսուսը նրանց պատվիրեց վեր կենալ և **չվախենալ**: Երբ նրանք բարձրացան, բացի **Հիսուսից՝ ոչ մեկին չտեսան**: Այդպես է լինելու Թագավորության մեջ. Տերը լինելու է «Էմմանուելի երկրի ամբողջ փառքը»:

Ե. Նախակարապետի մասին (17:9-13)

17:9. **Լեռից** իջնելիս Հիսուսը պատվիրեց աշակերտներին լռել իրենց տեսածի մասին, մինչև Նա **մեռելներից հարություն առնի**: Հրեաները չսպիագանց մտահոգված էին, որ մեկը իրենց ազատեր հռոմեական լծից: Նրանք ուրախությամբ կողջունեին Հիսուսին, եթե նրանց փրկեր *Հոմի լծից*, բայց Նրան չէին ուզում որպես *մեռից փրկող Փրկչի*: Հանուն գործնական նպատակների Իսրայելը մերժեց իր Մեսիային, ուստի անհիմաստ էր հրեաներին պատմել մեսիական փառքի տեսիլքի մասին: Հարությունից հետո այս պատգամը հռչակվելու էր ամբողջ աշխարհում:

17:10-13. Աշակերտները հենց նոր տեսան Քրիստոսի գալստի իշխանության և փառքի նախադիտումը: Բայց Նրա նախակարապետը դեռ չէր հայտնվել: Մաղաքիան մարգարեացել էր, որ **Եղիան պիտի գա** նախքան Մեսիայի գալուստը (Մաղ. 4:5-6), ուստի **աշակերտները Հիսուսին հարցրին** այդ մասին: Տերը համաձայնեց նրանց հետ, որ **ճշմարիտ է՝ առաջ Եղիան** պետք է գա որպես բարեկարգող, որպեսզի ամեն բան վերականգնի, բայց բացատրեց, որ **Եղիան արդեն եկել է**: Ակնհայտ է, որ Նա նկատի ուներ **Հովհաննես Մկրտչին** (տե՛ս հ. 13): Հովհաննեսը Եղիան չէր (Հովհ. 1:21), բայց եկել էր Եղիայի «հոգով և գորությամբ» (Ղուկ. 1:17): Եթե Իսրայելն ընդուներ Հովհաննեսին և նրա պատգամը, նա կկատարեր ամեն բան, որ մարգարեացված էր Եղիայի մասին (Մատթ. 11:14), բայց ազգը չհասկացավ Հովհաննեսի առաքելությունը և նրա հետ վարվեց այնպես, ինչպես իրեն էր հաճելի: Հովհաննեսի մահը հստակ կանխագուշակում էր այն, թե նրանք ինչ են անելու Մարդու Որդու հետ: Նրանք մերժեցին նախակարապետին, Թագավորին էլ կմերժեն: Երբ Հիսուսը դա բացատրեց աշակերտներին, նրանք հասկացան, որ Նա խոսում էր **Հովհաննես Մկրտչի** մասին:

Մա նաև հիմք է հանդիսանում հավատալու, որ Քրիստոսի երկրորդ գալստից առաջ հայտնվելու է մի մարգարե, որպեսզի Իսրայելին պատրաստի Թագավորի գալստին: Թե դա անձամբ Եղիան կլինի, թե մեկ ուրիշը նմանատիպ ծառայությամբ, իրականում անհնար է ասել:

2. Ծառայության նախապատրաստումը ծոմի և աղոթքի միջոցով (17:14-21)

2. Ծառայության նախապատրաստումը ծոմի և աղոթքի միջոցով (17:14-21)

Կյանքը միայն լեռան գագաթը նվաճելու փորձը չէ: Հոգևոր վերելքների ակնթարթներից հետո գալիս է մի ժամանակ, երբ գագաթից պիտի իջնենք, որպեսզի ծառայենք մարդկային կարիքների հովտում:

17:14-15. Լեռան ստորոտում Փրկչին էր սպասում մի մտահոգված հայր: **Ծնկի գալով Նրա առջև՝** նա դուրս թափեց իր հրատապ խնդրանքը, որ իր դիվահար որդուն բժշկի: Որդին տառապում էր **լուսնոտության** ծանր տեսակով, որը հաճախ նրան **կրակի մեջ էր նետում, շատ անգամ՝ ջրի**, այնպես որ նրա թշվառ վիճակը բարդանում էր այրվածքներով և խեղդվելու վտանգով: Նա Սատանայի պատճառած տառապանքների ամենադաժան դասական օրինակն է:

17:16. Այս հայրն օգնություն խնդրեց աշակերտներից, բայց իմացավ, որ «մարդկային օգնությունն ունայն է»: Նրանք անգոր էին բժշկելու:

17:17. «**Ո՛վ անհավատ և մոլորյալ սերունդ, մինչև ե՛րբ պիտի ձեզ հետ լինեմ, մինչև ե՛րբ պիտի համբերեմ ձեզ**»,

խոսքն ուղղված է աշակերտներին: Նրանք հավատ չունեին, որ բժշկեին լուսնոտին. այդ օրերին այսպիսի վիճակի մեջ էր Իսրայելի մեծ մասը՝ համատ և անհավատ:

17:18. Հենց որ լուսնոտին բերեցին Նրա մոտ, **Հիսուսը սաստեց դեհին**, և տառապյալը իսկույն բժշկվեց:

17:19-20. Իրենց անգորությունից տարակուսած **աշակերտները** Հիսուսին խնդրեցին առանձին բացատրել իրենց անհաջողության պատճառը: Նրա պատասխանն անմիջական էր՝ **անհավատություն**: Եթե նրանք **մանանեխի** հատիկի չափ (բոլոր սերմերից ամենափոքրը) **հավատ** ունենան, կարող են **լեռանը** հրամայել ծովը նետվել, և այդպես կլինի: Իհարկե, պետք է գիտակցել, որ ճշմարիտ հավատը պետք է հիմնվի Աստծո որոշակի պատվիրանների կամ խոստումների վրա: Ակնկալելով որոշակի տպավորիչ անպարարության կատարումը, որ բավարարի անձնական քմահաճույքը, դա հավատ չէ, այլ ամբարտավանություն: Բայց եթե Աստված հավատացյալին առաջնորդում է որոշակի ուղղությամբ կամ տալիս է որոշակի հրաման, ապա քրիստոնյան կարող է ունենալ առավելագույն վստահությունը, որ նույնիսկ լեռան մեծությամբ դրժվարությունները պետք է հրաշքով վերանան: Ոչ մի բան անհնարին չէ նրանց համար, ովքեր հավատում են:

17:21. «Մակայն այս տեսակը միայն ծոմապահությամբ և աղոթքով կարելի է հանել». սա բացակայում է RSV-ում և Աստվածաշնչի առավել ժամանակակից թարգմանություններում, քանի որ այդ համարը բացակայում է շատ վաղ ձեռագրերում: Մակայն այն կարելի է գտնել ձեռագրերի մեծամասնության մեջ, և դա համապատասխանում է հատուկ դժվար խնդիր ունեցող համատեքստին:

Է. Հիսուսը պատրաստում է աշակերտներին Իր մոտալուսմատնության կապակցությամբ (17:22-23)

Կրկին, առանց ողբերգություն խաղալու, Տեր Հիսուսն Իր աշակերտներին զգուշաց-

րեց, որ պիտի մահվան մատնվի: Եվ նորից հնչեց վերջնական հաղթանակի խոսքը. **Նա երեք օր հետո հարություն պիտի առնի**: Եթե Նա նախապես չասեր նրանց Իր մահվան մասին, նրանք լիովին կհուսալքվեին, երբ դա տեղի ունենա: Ամոթալի մահը և տառապանքը համահունչ չէր Մեսիայի մասին իրենց ակնկալիքներին:

Առանց այն էլ նրանք խիստ մտահոգված էին, որ Նա պատրաստվում էր իրենցից հեռանալու և որ Նա սպանվելու էր: Նրանք լսեցին չարչարանքների մասին Նրա կանխատեսումը, բայց թվում է, բաց էին թողել Նրա հարություն առնելու խոստումը:

Ը. Պետրոսը և նրա Ուսուցիչը վճարում են իրենց տուրքը (17:24-27)

17:24-25. **Կափառնայումում տաճարի տուրք հավաքողները** հարցրին Պետրոսին, թե իր **Ուսուցիչն** արդյոք վճարո՞ւմ է երկդրամյան, որը գործածվում էր տաճարի թանկ ծառայությունն իրականացնելու համար: Պետրոսը պատասխանեց՝ **այո**: Գուցե շփոթված աշակերտն ուզում էր դժվար կացությունից Քրիստոսին փրկել:

Տիրոջ ամենագիտությունը երևում է հաջորդող դեպքերից: Երբ Պետրոսը տուն մտավ, առաջինը Հիսուսը խոսեց նրա հետ նախքան Պետրոսը հնարավորություն կունենար պատահածի մասին պատմելու: «**Քեզ ինչպե՞ս է թվում, Սիմոն, երկրի թագավորներն ումի՞ց են վերցնում հարկը կամ տուրքը, իրենց որդիների՞ց, թե՞ օտարներից**»: Այդ հարցը պետք է հասկանալ այդ օրերի լույսի ներքո: Կառավարիչը հարկ էր վերցնում իր հպատակներից, որպեսզի աջակցի իր թագավորությանը և իր ընտանիքին, բայց իր ընտանիքից չէր վերցնում: Ըստ մեր կառավարման ձևի՝ բոլորն են հարկ վճարում, այդ թվում կառավարիչը և իր ընտանիքը:

17:26. Պետրոսը ճիշտ պատասխանեց, որ իշխողներն **օտարներից** են հարկ վերցնում: Հիսուսն ասաց՝ ուրեմն **որդիներն ազատ են**: Բանը նրանում է, որ այդ տաճարը Աստծո Տունն էր: Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու համար տաճարի տուրքը

վճարելը հավասարագոր էր Ինքն Իրեն տուրք վճարելուն:

17:27. Սակայն այդ անհիմն օրինախախտումից վրդովվելու փոխարեն Տերը համաձայնեց տուրքը վճարել: Իսկ որտեղի՞ց պիտի փող վաստակեր: Երբեք արձանագրված չէ, որ Հիսուսն Իր մոտ գումար պահեր: Նա Պետրոսին ուղարկեց Գալիլիայի **ծովը** և նրան պատվիրեց առաջին բռնած ձուկը բերել: Այդ ձկան բերանի մեջ կար մի **արծաթադրամ**, որով Պետրոսը տուրքը վճարեց, կեսը՝ Տեր Հիսուսի, մյուս կեսը՝ իր համար:

Այս զարմանալի հրաշքը, որ խիստ հակիրճ է պատմված, հստակորեն ցույց է տալիս Քրիստոսի ամենագիտությունը: Նա գիտեր, թե Գալիլիայի ծովի բոլոր ձկներից որը արծաթադրամ ուներ իր բերանում: Նա գիտեր հենց այդ ձկան գտնվելու վայրը: Եվ գիտեր, որ առաջինը Պետրոսը կբռներ նրան:

Եթե որևէ աստվածային սկզբունք ներառվեր, Հիսուսը տուրքը չէր վճարի: Դա պարզապես բարոյական անտարբերություն էր Նրա հանդեպ: Նա պատրաստ էր վճարելու, քան թե Օրենքը խախտելու: Մենք՝ որպես հավատացյալներ, ազատ ենք Օրենքից: Այնուհանդերձ, բարոյական արժեք չունեցող դեպքերում պետք է հարգենք ուրիշների խիղճը և նրանց գայթակղեցնող բաներ չանենք:

XI. ԹԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՀԱՆՔՆԵՐՆ ԻՐ ԱՇԿԵՐՏՆԵՐԻՆ (18-20-րդ գլ.)

Ա. Խոնարհության մասին (18:1-6)

18-րդ գլուխն անվանել են գրույց մեծության և ներման մասին: Այն ուրվագծում է իրենց Քրիստոս արքայի հպատակները համարող մարդկանց բնորոշող վարքագծի սկզբունքները:

18:1. Աշակերտները Երկնքի Թագավորության մասին միշտ մտածել են որպես խաղաղության և բարգավաճման ոսկե դար: Այժմ նրանք սկսել էին պատվավոր դիրք ցանկալ այնտեղ: Նրանց ես-ը փնտրող հո-

զին արտահայտվեց հետևյալ հարցով. «**Ո՞վ է մեծ Երկնքի Թագավորության մեջ**»:

18:2-3. Հիսուսը նրանց պատասխանեց կենդանի օրինակով: Փոքր երեխային կանգնեցնելով նրանց մեջ՝ Նա ասաց, որ մարդիկ պետք է **դարձի գան** և փոքրիկ **երեխաների** պես **լինեն**, որպեսզի **Երկնքի Թագավորությունը մտնեն**: Նա խոսում էր Թագավորության ներքին իրականության մասին. որպեսզի մարդը ճշմարիտ հավատացյալ դառնա, պետք է հրաժարվի անձնական մեծության մասին մտքերից և փոքրիկ երեխայի խոնարհ դիրքը զբաղեցնի: Սա սկսվում է այն պահից, երբ նա ընդունում է իր մեղսունակ ու անարժան լինելը և ընդունում է Հիսուս Քրիստոսին՝ որպես իր միակ հույսի: Այս կեցվածքը պետք է շարունակվի իր ամբողջ քրիստոնեական կյանքում: Հիսուսը չէր ասում, որ Իր աշակերտները փրկված չեն: Բոլորը, բացի Հուդայից, անկեղծորեն հավատում էին Նրան և հետևաբար արդարացվել էին: Բայց նրանք դեռևս չէին ստացել Սուրբ Հոգին՝ որպես իրենց մեջ բնակող Անձ և հետևաբար զուրկ էին գորությունից ճշմարիտ *խոնարհության* համար, որ այսօր մենք ունենք, բայց պետք եղածի պես չենք օգտագործում: Նույնպես նրանք կարիք ունեին դարձի գալու այն իմաստով, որ նրանց ամբողջ սխալ մտածելակերպը պետք է փոխվեր՝ ըստ Թագավորության կանոնների:

18:4. Երկնքի Թագավորության մեջ ամենամեծ մարդը նա է, ով **իր անձը խոնարհեցնում է** փոքրիկ **մանկան պես**: Պարզ է, որ Երկնքի Թագավորության չափանիշներն ու արժեքները լիովին հակառակ են աշխարհի չափանիշներին: Մեր ամբողջ մտածելակերպը պետք է վերակառուցվի, մենք պետք է նույն միտքն ունենանք, ինչ Քրիստոսն ունի (Փիլ. 2:5-8):

18:5. Այստեղ Տերը սովորական երեխայից գրեթե աննկատորեն անցնում է հոգեվոր երեխային: Ով ընդունում է Նրա խոնարհ հետևողներից մեկին **Իր անունով**, կվարձատրվի, որպես թե Տիրոջն է ընդունում: Աշակերտի համար արվածը կհամարվի որպես Ուսուցչի համար արված:

18:6. Եվ ընդհակառակը, նա, ով հավատացյալին գայթակղեցնի՝ դրդելով մեղք գործելու, սոսկալի դատապարտություն է կրելու. **ավելի լավ է նրան, որ ջաղացքար կախվի նրա պարանոցից, և նա խեղդվի ծովի խորքում:** (Չաղացքարը, որի մասին ասվում է այստեղ, կարող էր միայն կենդանին պատել, փոքրը կարելի էր ձեռքով պատել): Իր անձի դեմ մեղք գործելը վատ է, բայց հավատացյալին մեղքի մեջ զգելը նշանակում է ոչնչացնել նրա անմեղությունը, ապականել նրա միտքը և արատավորել նրա հեղինակությունը: Ավելի լավ է բռնությանը մեռնել, քան կատակել ուրիշի մաքրության հետ:

Բ. Գայթակղությունների մասին (18:7-14)

18:7. Հիսուսը շարունակեց բացատրել, թե անհնար է, որ **գայթակղություններ** չգան: **Աշխարհը**, մարմինը և սատանան միավորվեցին, որպեսզի հրապուրեն և այլասերեն: Բայց թե՛ մարդը դառնում է չար ուժերի գործակալը, նրա մեղքը մեծ է լինելու: Ուստի Փրկիչը զգուշացրեց, որ ավելի լավ է մարդն իր նկատմամբ խստություն ցուցաբերի, քան գայթակղի Աստծո գավակին:

18:8-9. Եթե մեղանչում է **ձեռքը, ոտքը** կամ **աչքը**, ապա ավելի լավ է այդ անդամը զոհաբերել վիրաբուժական միջամտության, քան թույլ տալ, որ այն Աստծո գործը ոչնչացնի մեկ ուրիշի կյանքում: **Ավելի լավ է առանց ձեռքի կամ աչքի մտնել կյանք**, քան թե չվնասված, բոլոր անդամներով նետվել դժոխք: Տերը նկատի չունի, որ երկրնքում ոմանք ձեռք չեն ունենալու, այլ պարզապես բացատրում է հավատացյալի ֆիզիկական վիճակը այն պահին, երբ նա այս կյանքից հաջորդին է անցնում: Կասկած չկա, որ հարուցյալ մարմինը լինելու է կատարյալ և ամբողջական:

18:10. Այնուհետև Աստծո Որդին զգուշացրեց, որ չի կարելի արհամարհել **այս փոքրիկներից մեկին**, ովքեր Նրան են պատկանում, լինի մանուկ, թե մեծ: Կամենալով ընդգծել նրանց կարևորությունը Աստծո համար՝ Նա հավելեց, որ **նրանց**

հրեշտակները մշտապես գտնվում են Աստծո ներկայության մեջ՝ տեսնելով Նրա **երեսը**: Այստեղ **հրեշտակները** հավանաբար պահապան հրեշտակներն են (տե՛ս նաև Եբր. 1:14):

18:11. Մեր Փրկչի առաքելության մասին այս համարը բացակայում է RSV և շատ այլ ժամանակակից Աստվածաշունչների մեջ, բայց այն համապատասխանում է այս բաժնի կլիմաքսին և լայնորեն հաստատված է այլ ձեռագրերի կողմից:³⁸

18:12-13. Այդ փոքրիկները նաև Հովվի փրկարար ծառայության քնքուշ օբյեկտներն են: Եթե **հարյուր ոչխարից** զեղծ մեկը մոլորվի, Նա թողնում է **իննսունինին** և փնտրում է մոլորվածին, մինչև նրան գտնի: Հովվի խիստ ուրախանում է մոլորված ոչխարին գտնելու համար, որը մեզ սովորեցնում է գնահատել և հարգել Նրա փոքրիկներին:

18:14. Այդ փոքրիկներն արժեքավոր են ոչ միայն հրեշտակների և Հովվի համար, այլ նաև **Հայր** Աստծո համար: Նա **չի կամենում, որ այս փոքրիկներից մեկը կորչի**: Եթե նրանք այնքան կարևոր են, որ նրանց հետ զբաղվում են հրեշտակները, Տեր Հիսուսը և երկնավոր Հայրը, ապա պարզ է, որ մենք երբեք չպետք է նրանց արհամարհենք, որքան էլ անսիրելի ու աննշան երևան:

Գ. Վիրավորողներին ուղղելու մասին (18:15-20)

Գլխի մնացած մասում խոսվում է եկեղեցու անդամների միջև տարաձայնությունների կարգավորման և անասհման ներում ցույց տալու կարիքի մասին:

18:15. Խոսելով քրիստոնյայի պատասխանատվության մասին, որ վիրավորվել է մեկ ուրիշ հավատացյալի կողմից, Հիսուսը ճշգրիտ հրահանգներ է տալիս: Նախ գործը պետք է քննարկել առանձին երկու կողմերի միջև: Եթե վիրավորողն ընդունում է իր հանցանքը, ապա հաշտությունը հասանելի է: Ամբողջ դժբախտությունն այն է, որ մենք այդպես չենք վարվում: Մենք բամբասում ենք ուրիշների հետ այդ մասին: Այնու-

հետև գործը կրակի պես տարածվում է, վեճը՝ ուժեղանում: Եկե՛ք հիշենք, որ առաջին քայլը. **«Գնա՛ր և հանդիմանի՛ր նրան, երբ դու և նա մենակ եք»:**

18:16. Եթե հանցավոր եղբայրը չլսի, ապա վիրավորվածը պետք է իր հետ վերցնի **մեկ կամ երկու** վկաների՝ ջանալով նրան շահել: Սա շեշտում է նրա շարունակական համառության լուրջ բնույթը: Բայց ավելին. այն սպահովում է իրագրելի վկայություն, ինչպես Սուրբ Գիրքն է պահանջում. **«Այլ երկու կամ երեք վկաների բերանով հաստատվի եղելությունը»** (2 Օր. 19:15): Ոչ ոք չի կարող չափել խնդրի մեծությունը, որը անհնազանդության պատճառով պատուհասեց եկեղեցին ըստ այն պարզ կանոնի, որ ուրիշ անձի դեմ մեղադրանքը պետք է հաստատվի մեկ կամ երկու ակնատեսների վկայությամբ: Այս առումով աշխարհիկ դատարանները հաճախ ավելի արդարացի են գործում, քան քրիստոնեական եկեղեցիները կամ համայնքները:

18:17. Եթե մեղադրյալը տակավին **հրաժարվում է** խոստովանել և ներողություն խնդրել, գործը պետք է վերանայի տեղական **եկեղեցին**: Կարևոր է նշել, որ ոչ թե քաղաքացիական դատարանը, այլ տեղական համայնքն է այն պատասխանատու մարմինը, որ պիտի գործը լսի: Քրիստոնյային արգելված է դատի տալ մեկ ուրիշ հավատացյալի (1 Կոր. 6:1-8):

Եթե մեղադրյալը հրաժարվում է ընդունել իր մեղքը եկեղեցու առջև, ապա նա պետք է համարվի **հեթանոսի և մաքսավորի պես**: Այս արտահայտության ավելի հասկանալի միտքը հետևյալն է. նրան պետք է նայել որպես եկեղեցու ոլորտից դուրս մեկը: Թեև նա կարող է իսկական հավատացյալ լինել, չի սպրում որպես այդպիսին, հետևաբար նրա հետ պետք է համապատասխանաբար վարվել: Թեև նա դեռևս տիեզերական եկեղեցու անդամ է, սակայն տեղական եկեղեցու արտոնությունից նրան պետք է հեռացնել: Այսպիսի կարգապահական պատիժը համարվում է շատ լուրջ գործ. այն հավատացյալին ժամանակավորապես հանձնում է սատանայի

իշխանությանը **«մարմնավորի կորստյան համար, որպեսզի հոգին փրկվի Տեր Հիսուսի օրը»** (1 Կոր. 5:5): Սրա նպատակն է նրա մեջ արթնացնել մեղքի գիտակցություն և առաջնորդել իր մեղքերը խոստովանելու: Քանի դեռ այդ կետին չի հասել, հավատացյալները պետք է քաղաքավարությամբ վարվեն նրա հետ, բայց պետք է նաև իրենց վերաբերմունքով ցույց տան, որ իրենք չեն համակերպվում նրա մեղքի հետ և չեն կարող որպես հավատակցի նրա հետ հաղորդակցվել: Համայնքը նրան պետք է հուշի, որ նա կրկին ետ կընդունվի, հենց որ անկեղծ ապաշխարության նշանները երեվան:

18:18. Այս համարը շարունակում է նախորդ թեման: Երբ համայնքն աղոթքով և Խոսքին հնազանդելով մարդուն կապում է կարգապահական միջոցներով, նրա գործողությունները պատվի են արժանանում **երկնքում**: Երբ պատժվածը գոջում և խոստովանում է իր մեղքը, տեղական եկեղեցին վերականգնում է նրա անդամակցությունը. այս արձակման գործողությունը հաստատված է նաև Աստծո կողմից (տե՛ս Հովհ. 20:23):

18:19. Հարց է ծագում. որքա՞ն մեծ պիտի լինի եկեղեցին, որպեսզի կապի կամ արձակի, ինչպես նկարագրված է վերը: Պատասխանը հետևյալն է. **երկու** հավատացյալներ կարող են աղոթքով Աստծո առջև բերել այդպիսի խնդիրները՝ վստահելով, որ Տերը լսում է իրենց: Թեև 19-րդ համարը կարելի է օգտագործել որպես աղոթքի պատասխանների սովորական խոստում, *համատեքստում* այն վերաբերում է եկեղեցական կարգապահության մասին աղոթքին: Երբ այն օգտագործում են հավաքական աղոթքի դեպքում, այն պետք է հասկացվի աղոթքի մասին մյուս բոլոր ուսուցումների լույսի ներքո:

Օրինակ՝ մենք պետք է աղոթենք՝

1. Աստծո հայտնված կամքի համաձայն (1 Հովհ. 5:14-15),
2. Հավատով (Հակ. 1:6-8),
3. Անկեղծ սրտով (Եբր. 10:22) և այլն:

18:20. Այս համարը պետք է մեկնաբանել համատեքստի լույսի ներքո: Այն ընդհանուր առմամբ չի վերաբերում նորկտակարանյան եկեղեցու պարզագույն ձևին, ոչ էլ սովորական աղոթքի ծառայությանը, այլ հավաքույթին, որտեղ եկեղեցին ինչ-որ մեղքի պատճառով բաժանված երկու քրիստոնյաների հաշտությունն է փնտրում: Այն կարելի է իրավացիորեն կիրառել հավատացյալների բոլոր հավաքույթներին, որտեղ Քրիստոսն է կենտրոնը, բայց այստեղ հավաքույթը հատուկ նպատակ ունի:

Հավաքվել «Նրա անունով» նշանակում է Նրա հեղինակությամբ՝ գիտակցելով, թե Ով է Նա մեզ համար, և Նրա Խոսքին հնազանդելով: Ոչ մի խումբ չի կարող պնդել, որ միայն իրենք են հավաքվում Նրա անունով, եթե դա այդպես լիներ, ապա երկրի վրա Նրա ներկայությունը կսահմանափակվեր Իր մարմնի մի փոքր մասի վրա: Որտեղ էլ **երկու կամ երեք հոգի հավաքվեն՝** ընդունելով Նրան՝ որպես Տիրոջ և Փրկչի, այնտեղ Նա **նրանց մեջ է:**

Գ. Անսահմանափակ ներում (18:21-35)

18:21-22. Այդ պահին **Պետրոսն** ուզեց իմանալ, թե ինքը **քանի՞ անգամ** պիտի **ներքի եղբորը**, որ մեղանչել է իր դեմ: Հավանաբար նա մտածեց, որ արտասովոր շնորհ էր ցուցաբերում, երբ առաջարկեց **յոթ** թիվը որպես ծայրագույն սահմանաչափ: **Հիսուսը** պատասխանեց. **«Զեմ ասում... մինչև յոթն անգամ, այլ՝ մինչև յոթանասուն անգամ յոթը»:** Նա չէր պատրաստվում մեզ հասկացնել, թե բառացիորեն՝ 490 անգամ, սա ասվեց փոխաբերական իմաստով՝ այսինքն՝ անսահմանափակ:

Այդ դեպքում մեկը կարող է հարցնել. ինչո՞ւ անցնել վերը նշված քայլերով՝ անհանգրստացնելով ինքդ քեզ: Ինչո՞ւ սխալվողի մոտ գնալ միայնակ, հետո՝ մեկ կամ երկու վկաների հետ, ապա նրան եկեղեցի տանել: Ինչո՞ւ պարզապես չներել և դրանով վերջացնել:

Պատասխանն այն է, որ ներման ընթացքն իր մեջ ներառում է որոշակի փուլեր, ինչպիսիք են.

1. Երբ մի եղբայր ինձ վիրավորի կամ մեղանչի իմ դեմ, ես պետք է *իմ սրտում* անմիջապես ներեմ նրան (Եփ. 4:32): Սա ազատում է ինձ չներելու դատը հոգուց և հանցանքը թողնում է **նրա** վրա:
2. Թեև ներել եմ նրան իմ սրտում, ես դեռ չեմ ասել նրան այդ մասին: Արդարացի չէ բացահայտորեն ցույց տալ, որ նա ներված է, եթե նա չի գղջացել: Ուստի ես պարտավոր եմ եղբոր մոտ գնալ և սիրով նրան հանդիմանել՝ հուսալով, որ կընդունի իր մեղքը (Ղուկ. 17:3):
3. Հենց որ նա ներողություն խնդրի ու խոստովանի իր մեղքը, ես պետք է ասեմ նրան, որ ներված է (Ղուկ. 17:4):

18:23. Այնուհետև Հիսուսը **Երկնքի Թագավորության** մասին մի առակ է պատմում, որպեսզի աշակերտներին, ովքեր ճրիաբար են ներվել, զգուշացնի աններող հոգու հետևանքներից:

18:24-27. Նա պատմեց մի **թագավորի մասին, որ ուզեց** կարգի բերել պարտքերի գիրքը: Մի ծառա, որը **նրան պարտք էր տասը հազար տաղանդ**, չէր կարողանում վճարել այդ պարտքը, ուստի նրա տերը հրամայեց պարտքի վճարման համար նրան և նրա ընտանիքի անդամներին ստրկության վաճառել: Վշտից իրեն կորցրած ծառան աղաչում էր տիրոջը, որպեսզի ժամանակ տա, և խոստանում էր **բոլորը վճարել**, եթե իրեն հնարավորություն ընձեռվեր:

«Ծատ պարտապանների նման նա չափազանց լավատես էր՝ հուսալով, որ կարող է պարտքերը վճարել, եթե միայն նրան ժամանակ տրվեր (հ. 26): Գալիլիայի ընդհանուր եկամուտը կարող էր մինչև 300 տաղանդի հասնել, իսկ այս մարդը պարտք էր 10,000 տաղանդ: Պարտքի նման ահռելի չափը կանխամտածված էր: Այն պետք է ունկնդիրներին ցնցեր և գրավեր նրանց ուշադրությունը, ինչպես նաև ընդգծեր առ Աստված ունեցած հսկայական պարտքը:

Մարտին Լյութերն ասում էր, որ մենք բոլորս մուրացկաններ ենք Նրա առջև:

Մենք չենք կարող հույս ունենալ, որ կարող ենք վճարել մեր պարտքերը»:

*Սուրբգրության միավորում
ամենօրյա նշումներ*

Երբ **տերը** տեսավ իր **ծառայի** զոջումը, նա շնորհեց նրան ամբողջ 10,000 տաղանդը: Սա շնորհի առատաձեռն դրսևորումն էր, ոչ թե արդարության:

18:28-30. Այդ ծառան մի ծառայակից ուներ, ով իրեն **հարյուր դահեկան էր** (մի քանի հարյուր դոլար) **պարտք:** Ընկերոջը ներելու փոխարեն՝ նրա կոկորդից **բռնելով** պահանջում էր ամբողջությամբ պարտքը վճարել: Դժբախտ պարտապանն աղաչում էր հետաձգել ժամկետը, բայց անօգուտ: Նրան **բանտ** նետեց, **մինչև որ պարտքը վճարի**, որն անհավանական էր, քանի որ բանտում նա գրկվել էր գումար վաստակելու հնարավորությունից:

18:31-34. Մյուս **ծառայակիցները** վրդովվեցին նման անհետևողական վարքագծից, **պատմեցին իրենց տիրոջն այն ամենը, ինչ եղել էր:** Նա զայրացավ անգույթ պարտապանի վրա. իր այդ մեծ պարտքի ներումը ստանալով՝ նա չուզեց ներել այդ չնչին գումարը: Եվ նրան հանձնեցին դահիճներին, մինչև որ իր պարտքը վճարի:

18:35. Այս առակի կիրառումը պարզ է: Աստված Թագավորն է: Նրա բոլոր ծառաները հսկայական գումար էին Նրան պարտք (մեղք), որը նրանք ի վիճակի չէին վճարելու: Հիանալի շնորհով և կարեկցանքով, Տերը վճարեց այդ պարտքը և շնորհեց լիարժեք և ձրի ներում:

Այժմ պատկերացրեք, որ մի քրիստոնյա վիրավորել է մեկ ուրիշին: Երբ նրան հանդիմանում են, նա ներողություն է խրնդրում: Բայց վիրավորված հավատացյալը հրաժարվում է ներել: Անձամբ նրան ներել են միլիոնավոր դոլարներ, իսկ նա չի ուզում ներել մի քանի հարյուրը: Արդյոք Թագավորը թույլ կտա՞, որ այդպիսի պահվածքն անպատիժ մնա: Իհարկե, ո՛չ: Հանցավորը պիտի պատժվի այս կյանքում և կապված կլինի Քրիստոսի ստյանի առջև:

Ե. Ամուսնության, ամուսնալուծության և ներքինիների մասին (19:1-12)

19:1-2. Ավարտելով Իր ծառայությունը՝ **Գալիլիայում**, Տերը գնաց հարավ՝ դեպի Երուսաղեմ: Թեև Նրա ճշգրիտ երթուղին հայտնի չէ, ակնհայտ է, որ Նա ճամփորդել է Բերիայի միջով, Հորդանանի արևելյան կողմը: Մատթեոսն այս տարածքի մասին անորոշ է խոսում **որպես Հրեաստանի սահմանները՝ Հորդանանի մյուս կողմը:** Բերիայի ծառայությունն ընդգրկում է 19:1 և 20:16 կամ 20:28 համարները: Թե Նա երբ է անցել Հորդանանի միջով դեպի Հրեաստան, հստակորեն չի ասվում:

19:3. Հավանաբար մեծ բազմությունը, որ հետևում էր Հիսուսին՝ բժշկվելու համար, **փարիսեցիներին** ահազանգել էր Տիրոջ գտնվելու վայրը: Վայրի շների ոհմակի նըման նրանք եկան Նրա մոտ, որպեսզի Իր խոսքերով Նրան ծուղակը գցեն: Նրանք հարցրին, արդյոք օրինավո՞ր է **արձակելը** ցանկացած պատճառով կամ որոշակի հիմքով: Ինչ էլ Նա պատասխաներ, միևնույնն է, հրեաների մի մասը պիտի զայրանար: Մեկ դպրոցը շատ ազատամտական վերաբերմունք ուներ ամուսնալուծության նկատմամբ, մյուսը շատ խիստ էր այդ հարցում:

19:4-6. Մեր Տերը բացատրեց, որ ըստ Աստծո սկզբնական մտադրության՝ մարդը պետք է ունենար միայն մեկ կենդանի կին: Աստված, ստեղծելով **արու և էգ**, վճռեց, որ ամուսնական հարաբերությունները պիտի փոխարինեն ծնողական հարաբերություններին: Նա նաև ասաց, որ ամուսնությունն անձերի միություն է: Աստծո մտադրությունն այն էր, որ Աստծո կողմից հաստատված այս միությունը չխախտվի մարդկային օրենքով կամ որոշմամբ:

19:7. Փարիսեցիները կարծում էին, որ Հ-ին այք ծակող հակասության մեջ բռնեցին Տիրոջը: Մի՞թե **Մովսեսը** չէր պատվիրել **ապահարգանի** մասին դրույթը: Տղամարդը պարզապես իր կնոջը կարող էր ապահարգանի թուղթ տալ և նրան իր տնից դուրս հանել (2 Օր. 24:1-4):

19:8. Հիսուսը համաձայնեց, որ **Մովսեսը**

թույլատրել էր ամուսնալուծությունը, բայց ոչ նրա համար, որ ամուսնալուծությունը մարդկության համար Աստծո լավագույն մտադրությունն էր, այլ Իսրայելի հավատքից ընկած վիճակի պատճառով. **«Մովսեսը ձեր կարծրասրտության համար թույլ տվեց, որ արձակեք ձեր կանանց, բայց սկզբից այդպես չի եղել»:** Ըստ Աստծո իդեալական մտադրության՝ ամուսնալուծություն չպետք է լիներ: Բայց Աստված հաճախ հանդուրժում է հանգամանքներ, որոնք Նրա կամքով չեն:

19:9. Այնուհետև Տերը բացարձակ իշխանությամբ հայտարարեց, որ անցյալի ամուսնալուծության հանդուրժումը այսուհետ դադարում է: Ապագայում ամուսնալուծության միայն մեկ օրինական պատճառ կարող է լինել՝ ամուսնական անհավատարմություն: Եթե մարդն արձակի կնոջը մի այլ պատճառով և կրկին ամուսնանա, ապա նա հանցավոր է **շնության** մեջ:

Թեև այս մասին ուղղակի չի ասվում, մեր Տիրոջ խոսքերից կարելի է հասկանալ, որ այնտեղ, որտեղ տրվում է արձակում պոռնկության պատճառով, անմեղ կողմը ազատ է նորից ամուսնանալու համար: Այլապես ամուսնալուծությունը չի հասնի նպատակին, տեղի կունենա միայն բաժանում:

Սեռական անբարոյականություն կամ պոռնկություն ընդհանուր առմամբ հասկացվել է որպես շնություն: Մակայն Աստվածաշունչն ուսումնասիրող շատ ընդունակ ուսանողներ կարծում են, որ այն վերաբերում է միայն նախաամուսնական անբարոյականությանը, որը բացահայտվում է ամուսնանալուց հետո (տե՛ս 2 Օր. 22:13-21): Մյուսները կարծում են, որ այն վերաբերում է միայն հրեական ամուսնական սովորություններին, և դա է պատճառը, որ «բացառության դրույթը» գտնվում է միայն այստեղ՝ Մատթեոսի հրեական Ավետարանում:

Ամուսնալուծությանը վերաբերող ավելի լիարժեք քննարկումների համար տե՛ս 5:31-32-ի մեկնաբանությունը:

19:10. Երբ **աշակերտները** լսեցին ամուս-

նալուծության մասին Հիսուսի ուսուցումը, այն ծայրահեղ եզրակացությանը հանգեցին, որ եթե ամուսնալուծությունը հնարավոր է միայն մեկ դեպքում, ապա ընտանեկան կյանքում մեղքից խուսափելու համար **ամուսնանալը լավ չէ** ամենևին:

Բայց միայնակ մնալն էլ նրանց չի փրկի մեղք գործելուց:

19:11. Ուստի Փրկիչը նրանց հիշեցրեց, որ ամուրի մնալու կարողությունը չի եղել սահմանված կանոն. միայն նրանք, որոնց հատուկ շնորհ է տրված, կարող են ամուսնությունից հրաժարվել: Ասվածը՝ **«Բոլորը չեն կարող ընդունել այս բանը, բացի նրանցից, որոնց տրված է»**, չի նշանակում, թե բոլորը չեն կարող հասկանալ, թե ինչ է հետևում, սա նշանակում է, որ նրանք չեն կարող անարատ կյանքով ապրել, եթե կանչված չեն դրան:

19:12. Տեր Հիսուսը բացատրում է, որ կան երեք տեսակի **ներքինիներ**. ոմանք **ներքինիներ** են, որովհետև ծնվել են առանց բազմացման կարողության: Մյուսներն այդպիսին են դարձել, որովհետև մարդկանց կողմից ամորձատվել են. Արեվելքի կառավարիչները հարեմի սպասավորներին հաճախ վիրահատության էին ենթարկում, որպեսզի նրանց ներքինի դարձնեին: Բայց Հիսուսն այստեղ խոսում է հատկապես նրանց մասին, ովքեր **իրենք իրենց են ներքինի դարձրել երկնքի թագավորության համար**: Այդ մարդիկ կարող էին ամուսնանալ, նրանք չունեն ֆիզիկական արատ: Մակայն նվիրվելով Թագավորին և Նրա Թագավորությանը՝ ինքնակամորեն հրաժարվում են ամուսնությունից, որպեսզի Զրիստոսի ծառայությանը նվիրվեն՝ առանց այլ հոգսերի: Ինչպես Պողոսը գրեց ավելի ուշ. «Չամուսնացածը հոգս է անում Տիրոջ գործերի համար, թե ինչպես հաճելի լինի Տիրոջը» (1 Կոր. 7:32): Նրանց չամուսնացած լինելը կապված չէր ֆիզիկական պատճառների հետ, այլ կամավոր ժուժկալություն էր:

Բոլոր մարդիկ չեն կարող այդպես ապրել, այլ միայն նրանք, ովքեր արտոնված

են Աստծո կողմից. «... Բայց ամեն մարդ իր հատուկ պարզևն ունի Աստծուց՝ մեկն այսպես, մյուսն՝ այնպես» (1 Կոր. 7:7):

2. Երեխաների մասին (19:13-15)

Հետաքրքիր է, որ ամուսնավուծության մասին քննարկումից հետո խոսվում է երեխաների մասին (տե՛ս նաև Մարկ. 10:1-16): Հաճախ նրանք, ովքեր ապրում են քայքայված ընտանիքներում, բոլորից շատ են տառապում:

Ծնողները Հիսուսի մոտ բերեցին իրենց **փոքրիկ երեխաներին**, որպեսզի Ուսուցիչ - Հովիվը նրանց օրհնի: **Աշակերտները**, դա խոչընդոտ ու ձանձրույթ համարելով, **հանդիմանում էին** ծնողներին: Իսկ Հիսուսը միջամտեց այնպիսի խոսքերով, որ այդ օրվանից բոլոր տարիքի երեխաներին սիրելի են. **«Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին և մի՛ արգելեք, որ գան Ինձ մոտ, որովհետև այդպիսիներինն է երկնքի թագավորությունը»:**

Մի քանի կարևոր դասեր են ծագում այս խոսքերից: Առաջինը՝ դրանք պետք է քաջալերեն Տիրոջ ծառային, թե որքան կարևոր է երեխաներին Քրիստոսի մոտ առաջնորդելը, որոնց միտքն ավելի ընկալունակ է Աստծո Խոսքի նկատմամբ:

Երկրորդ՝ այն երեխաներին, ովքեր ուզում են Տիրոջ առջև խոստովանել իրենց մեղքերը, պետք է խրախուսել և ոչ թե վանել: Ոչ ոք չգիտի, թե դժոխքում ո՞րն է ամենափոքր տարիքը: Եթե երեխան սրտանց փափագում է փրկվել, չպետք է նրան ասել, որ նա դեռ շատ փոքր է: Միևնույն ժամանակ չպետք է երեխաների վրա ճնշում գործադրել՝ ստիպելով նրանց կեղծ խոստովանություն կատարել: Քանի որ նրանք շատ զգայուն են հուզական կոչերի նկատմամբ, նրանց պետք է պաշտպանել ավետարանչության մեթոդների ուժեղ ճնշումից: Երեխաները փրկություն ստանալու համար չպետք է սպասեն, որ չափահաս դառնան, այլ ընդհակառակը, մեծերը պետք է երեխաների նման դառնան (18:3-4, Մարկ. 10:15):

Երրորդ՝ մեր Տիրոջ այս խոսքերը պա-

տասխանում են հետևյալ հարցին. «Ի՞նչ կպատահի այն երեխաների հետ, ովքեր մահանում են նախքան պատասխանատվություն կրելու տարիքին հասնելը»: Հիսուսը պատասխանեց. «... **Այդպիսիներինն է երկնքի թագավորությունը**»: Սա պետք է ծնողների համար բավարար երաշխիք հանդիսանա, ովքեր տառապում են իրենց փոքրիկների կորստյան պատճառով:

Երբեմն այս հատվածն օգտագործում են՝ արդարացնելու փոքրիկ երեխաների մկրտությունը, նպատակ ունենալով նրանց դարձնել Քրիստոսի Մարմնի անդամներ և Թագավորության ժառանգորդներ: Ավելի ուշադրությամբ կարդալով այս հատվածը մենք կհասկանանք, որ այս ծնողներն իրենց երեխաներին մկրտելու նպատակով չբերեցին Հիսուսի մոտ: Այն ցույց է տալիս, որ երեխաներն արդեն իսկ երկնքի սեփականատերերն են: Այս համարներում ոչ մի բառ իսկ չկա ջրի կաթիլի մասին:

Է. Հարստության մասին. Հարուստ երիտասարդը (19:16-26)

19:16. Այս միջադեպը մեզ հնարավորություն է տալիս սովորել հակադրությունների միջոցով: Քիչ առաջ տեսանք, որ Երկրնքի Թագավորությունը երեխաներին է պատկանում: Այժմ մենք կտեսնենք, թե որքան դժվար է չափահասների համար այնտեղ մտնելը:

Հարուստ մարդն ընդհատում է Տիրոջը մի ակնհայտորեն անկեղծ հարցով: Դիմելով Հիսուսին **«Բարի՛ վարդապետ»** անվանումով, նա հարցրեց, թե ինքը **ի՞նչ պիտի անի, որ հավիտենական կյանք ունենա**: Այս հարցը բացահայտեց Հիսուսի ճշմարիտ ինքնության և փրկության ճանապարհի մասին նրա անտեղյակությունը: Նա Հիսուսին կոչում էր **«Վարդապետ»**՝ Նրան հավասարացնելով ուրիշ մեծ մարդկանց հետ: Եվ նա խոսում է հավիտենական կյանքը վաստակելու մասին, այն շահելու և ոչ թե որպես պարզև ստանալու մասին:

19:17. Մեր Տերը նրան ստուգեց այս երկու հարցերով: Նա հարցրեց. **«Ինչո՞ւ ես**

Ինձ բարի անվանում, մեկից բացի բարի չկա, որն է՝ Աստված»: Այստեղ Հիսուսը չհերքեց Իր աստվածությունը, բայց հնարավորություն ընձեռեց, որ այս մարդն ասի. «Ահա թե ինչու եմ Քեզ Բարի անվանում, քանի որ Դու Աստված ես»:

Փրկության ճանապարհի մասին նրա պատկերացումներն ստուգելու համար Հիսուսն ասաց. **«Եթե ուզում ես կյանքը մտնել, պահի՛ր պատվիրանները»:** Փրկիչը չէր ուզում ասել, որ մարդը կարող է փրկվել պատվիրանները պահելով: Ավելի շուտ, Նա Օրենքը հիշատակեց, որպեսզի մեղքի գիտակցություն առաջացնի այդ մարդու սրտում: Այդ մարդը մոլորված էր՝ կարծելով, որ կարող է Թագավորությունը ժառանգել իր գործերի հիման վրա: Ուստի թող նա Օրենքը կատարի, որը նրան ասում է ինչ *անել*:

19:18-20. Տեր Հիսուսը մեջբերեց հինգ պատվիրանները, որոնք հիմնականում վերաբերում էին մեր երիտասարդին, և ամփոփեց դրանք կիզակետային արտահայտությամբ. **«Դրացուդ սիրի՛ր քո անձի պես»:** Իր եսասիրությունից կուրացած՝ այդ մարդը պարծենալով հայտարարեց, որ միշտ պահել է այդ պատվիրանները:

19:21. Այնուհետև Տերը ցույց տվեց այդ մարդու անկարողությունը սիրելու իր դրացուն իր անձի պես՝ առաջարկելով, որ **վաճառի** իր ամբողջ ունեցվածքը և գումարը **տա աղքատներին**: Ապա **գնա** Հիսուսի մոտ և Նրան **հետևի**:

Տերը մտքում չուներ, որ այս մարդը կարող էր փրկվել, եթե վաճառեր իր ունեցվածքը և ստացվածը տար բարեգործական նպատակի համար: Փրկության համար միայն մեկ ճանապարհ կա՝ Տիրոջը հավատալ:

Բայց փրկվելու համար մարդը պետք է գիտակցի, որ մեղանչել և խախտել է Աստծո սուրբ պահանջները: Հարուստ մարդու իր ունեցվածքը բաժանելու դժկամությունը ցույց տվեց, որ նա չէր սիրում իր դրացուն իր անձի պես: Նա պետք է ասեր. «Տեր, եթե դա է ինձնից պահանջվում,

ապա ես մեղավոր եմ: Ես չեմ կարող ինքս ինձ փրկել իմ սեփական ուժերով: Ուստի խնդրում եմ Քեզ, ինձ փրկի՛ր Քո շնորհով»: Եթե նա արձագանքեր Փրկչի հրահանգներին, նրան ցույց կտրվեր փրկության ճանապարհը:

19:22. Փոխարենը՝ **տրտմած հեռացավ**:

19:23-24. Հարուստ մարդու արձագանքը դրդեց Հիսուսին՝ նշելու, որ **հարուստը դժվարությամբ կմտնի երկնքի թագավորությունը**: Հարստությունը կուռք դառնալու հակում ունի: Դժվար բան է այն ունենալ և դրան չապավինել: Ապա մեր Տերը հայտարարեց. **«Ավելի հեշտ է, որ ուղտն ասեղի անցքով անցնի, քան թե հարուստն Աստծո թագավորությունը մտնի»:** Նա չափազանցություն կիրառեց՝ վառ և անմոռանալի տպավորություն թողնելու համար:

Ակնհայտորեն անկարելի է, որ ուղտն ասեղի անցքով անցնի: Հաճախ բացատրում են, որ «ասեղի անցքը» քաղաքի դարպասի ամենափոքր դուռն է խորհրդանշում: Ուղտը կարող էր ծնկի գալով դրա միջով անցնել, բայց մեծ դժվարությամբ: Սակայն Դուկասի Ավետարանի գուգահեռ հատվածում օգտագործվում է նույն «ասեղ» բառը, որպեսզի նկարագրի այն ասեղը, որը օգտագործում են վիրաբույժները: Համատեքստից պարզ է դառնում, որ Տերը ոչ թե դժվարությունների մասին է խոսում, այլ անկարելիության: Դարձ ասած՝ հարուստը պարզապես **չի կարող** փրկվել:

19:25. Այդ խոսքերը լսելով՝ **աշակերտները զարմացան**: Որպես Մովսեսի օրենքով սպրող հրեաներ, որի համաձայն Տերը բարգավաճում էր խոստանում նրանց, ովքեր հնազանդում էին Իրեն, նրանք վրստահ էին, որ հարստությունն Աստծո օրհնության վկայությունն է: Եթե նրանք, որ այս ձևով վայելում էին Աստծո օրհնությունը, չէին կարող փրկվել, ապա ո՞վ *կարող է* փրկվել:

19:26. Տերը պատասխանեց. **«Մարդու համար դա անկարելի է, բայց Աստծո համար ամեն բան կարելի է»:** Մարդկու-

րեն ասած, **անկարելի է**, որ մեկը իրեն փրկի, միայն Աստված կարող է հոգին փրկել: Բայց հարուստի համար ավելի դժվար է իր կամքը հպատակեցնել Քրիստոսին, քան աղքատի, և սրա մասին է վկայում այն փաստը, որ քիչ թվով հարուստներ են դարձի գալիս: Նրանց համար գրեթե անհնար է տեսանելի միջոցների վստահելի հենարանը փոխարինել անտեսանելի Փրկչի հանդեպ ունեցած հավատով: Միայն Աստված կարող է նրանց մեջ իրականացնել այդպիսի փոփոխություն:

Մեկնաբանները և քարոզիչները այստեղ մշտապես ավելացնում են, որ լիովին արդարացի է, որ քրիստոնյաները հարուստ լինեն: Տարօրինակ է, որ կուտակած երկրավոր գանձերն արդարացնելու համար նրանք օգտագործում են մի հատված, որտեղ Տերը դատապարտում է հարստությունը՝ այն համարելով մարդու հավերժական բարեկեցության խոչընդոտ: Եվ ցավալի է տեսնել, թե քրիստոնյան ինչպես է հարստությունից կառչում՝ ամենուր տեսնելով սարսափելի կարիքը, և իմանալով, որ Տերը միանշանակ արգելեց երկրի վրա հարստություն հավաքելը, և որ Քրիստոսի վերադարձը մոտալուտ է: Հարստություն կուտակելը մեզ դատապարտում է, քանի որ մենք մեր դրացուն չենք սիրում մեր անձի պես:

Ը. Չոհաբերված կյանքի վարձատրությունը (19:27-30)

19:27. Պետրոսը կռահեց Փրկչի ուսուցման միտքը: Հասկանալով Հիսուսի ասածը՝ «Ամեն բան թողե՛ք և Ինձ հետևե՛ք»՝ Պետրոսը ներքուստ ցնծում էր, որ ինքը և մյուս աշակերտները ճիշտ այդպես էին վարվել: Նա հարցրեց. «**Հիմա ի՞նչ է լինելու մեզ**»: Այստեղ դրսևորվեց նրա հպարտությունը. հին բնույթը նորից գլուխ բարձրացրեց: Այս հոգուց բոլորս պիտի զգուշանանք: Նա սակարկում էր Տիրոջ հետ:

19:28-29. Տերը վստահեցրեց Պետրոսին, որ այն ամենը, ինչ արվել է Իր համար, պիտի առատորեն վարձատրվի: Ինչ վերաբերում է մասնավորապես տասներկու աշա-

կերտներին, ապա նրանք ունենալու են իրենց պատվավոր դիրքը Հազարամյա Թագավորության ժամանակ: **Վերականգնումը** վերաբերում է երկրի վրա Քրիստոսի ապագա կառավարմանը. սա բացատրվում է հետևյալ արտահայտությամբ. «... **Երբ Մարդու Որդին նստի Իր փառաց աթոռին**»: Մենք արդեն խոսել ենք Թագավորության այս փուլի մասին՝ որպես Թագավորության **տեսանելի դրսևորում**: Այդ ժամանակ տասներկուսը նստելու են **տասներկու աթոռների վրա և դատելու են Իսրայելի տասներկու ցեղերին**: ՆԿ-ում վարձատրությունը փոխկապակցված է Հազարամյա Թագավորության կառավարման համակարգում գրաված դիրքից (Ղուկ. 19:17-19): Նրանք **վարձատրվելու են Քրիստոսի ատյանի առջև**, բայց **հայտնվելու են**, երբ Տերը երկիր վերադառնա՝ թագավորելու:

Ինչ վերաբերում է բոլոր հավատացյալներին, Հիսուսն ասաց. «**Ով թողել է տղաներ, կամ եղբայրներ, կամ քույրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ երեխաներ, կամ արտեր՝ Իմ անվան համար, հարյուրապատիկը պիտի ստանա և հավիտենական կյանքը պիտի ժառանգի**»: Այս կյանքում նրանք վայելում են ամբողջ աշխարհի հավատացյալների հաղորդակցությունը, որն ավելի քան փոխհատուցում է երկրավոր խզված կապերի ամրապնդմանը: Նրանց թողած մեկ տան համար նրանք ստանում են հարյուրավոր քրիստոնեական տներ, որտեղ ջերմորեն ընդունում են նրանց: Նրանց թողած արտերի կամ այլ հարստության համար նրանք ստանում են անհաշիվ հոգևոր հարստություն:

Բոլոր հավատացյալների ապագա վարձատրությունը **հավիտենական կյանքն** է: Սա չի նշանակում, որ մենք հավիտենական կյանքը վաստակում ենք ամեն բան թողնելով և զոհաբերելով: Հավիտենական կյանքը պարզ է, և այն չեն կարող վաստակել կամ արժանանալ: Այստեղ խոսվում է այն մասին, որ նրանք, ովքեր թողել են ամեն բան, երկնքում հավիտենական կյան-

քը վայելելու ավելի մեծ հնարավորությամբ են վարձատրվելու: Բոլոր հավատացյալները ունենալու են հավիտենական կյանք, բայց ոչ բոլորն են նույն չափով վայելելու:

19:30. Տերն Իր խոսքն ավարտեց հոգու դեմ գործարքի զգուշացումով: Նա, ըստ էության, Պետրոսին ասաց. «Ինչ որ դու անում ես Ինձ համար, վարձատրվելու է, բայց զգուշացի՛ր, որ չառաջնորդվես եսասիրական նկատառումներով, որովհետև այդ դեպքում **շատ առաջիններ վերջին պիտի լինեն, և վերջիններ առաջին:** Այս արտահայտությունը լուսաբանվում է հաջորդ գլխում առակի միջոցով: Այս հայտարարությունը կարող է նաև որպես նախագուշացում դիտվել, որ աշակերտության ճանապարհին լավ սկսելը բավարար չէ: Թե ինչպես ենք այն վերջացնում, սա է կարեվորը: Նախքան այս գլխի ավարտը հարկ է նկատել, որ 23 և 24 համաներում «Երկրնքի Թագավորություն» և «Աստծո Թագավորություն» արտահայտությունները օգտագործված են փոխարինաբար, հետևաբար այս երկու եզրույթները հոմանիշներ են:

Թ. Աշխատանքի վարձատրությունը այգում (20:1-16)

20:1-2. Այս առակը (19-րդ գլխի վերջին մասի վարձատրության մասին քննարկման շարունակությունը) լուսաբանում է հետևյալ ճշմարտությունը. երբ բոլոր ճշմարիտ աշակերտները վարձատրություն ստանան, վարձատրության կարգը որոշվելու է, թե աշակերտներն ինչ հոգով են կատարել ծառայությունը:

Առակը նկարագրում է **տանուտեր մարդուն, որը վաղ առավոտյան ելավ իր այգու համար մշակներ վարձելու:** Այդ մարդիկ համաձայնեցին աշխատել **օրավարձը մեկ դահեկանով**, որը չափավոր վճար էր այդ ժամանակ: Ենթադրենք նրանք սկսեցին աշխատել առավոտյան ժամը 06:00-ից:

20:3-4. Առավոտյան ժամը 09:00-ին տանուտերը **հրապարակում** (շուկայի հրապարակ) գտավ ուրիշ գործազուրկ մշակների: Այս անգամ վարձակալելու ոչ մի պայ-

մանագիր չկնքվեց: Նրանք աշխատելու գնացին՝ պարզապես վստահելով նրա խոսքին, որ **արժանին** կտա իրենց:

20:5-7. **Կեսօրին** և կեսօրվա ժամը 15:00-ին տանուտերը ուրիշ մարդկանց էլ վարձեց նույն հիմքով, որ նրանց ազնվորեն կվարձատրի: Ժամը 17:00-ին նա ուրիշ մշակների էլ գտավ՝ պարսպ կանգնած: Նրանք ծույլ չէին, աշխատել էին ուզում, բայց չէին կարողանում աշխատանք գտնել: Հետևաբար նա նրանց էլ **այգի** ուղարկեց՝ առանց վճարի մասին քննարկելու:

Կարևոր է նշել, որ առաջին մշակները վարձվեցին պայմանագրով, բոլոր մյուսները վճարման հարցը թողել էին տանուտերի հայեցողությանը:

20:8. Օրվա վերջում տանուտերը իր վերակացուին պատվիրեց մարդկանց վճարել, **վերջիններից սկսած մինչև առաջինները:** (Այսպիսով, ամենաշուտ վարձվածները տեսան, թե մյուսներն ինչքան են ստանում):

20:9-12. Վճարը բոլորի համար նույնն էր՝ **մեկ դահեկան:** Առավոտյան ժամը 06:00-ին եկածները կարծում էին, որ ավելի շատ կստանան, բայց ոչ, իրենք էլ մեկ դահեկան ստացան: Նրանք ընդվզեցին. **վերջիվերջո իրենք ավելի երկար էին աշխատել և կրել օրվա տապը:**

20:13-14. Տանուտերի նրանցից մեկին ուղղված պատասխանում մենք գտնում ենք առակի անփոփոխ դասերը: Նախ նա ասաց. **«Ընկե՛ր, ես քեզ չեմ գրկում, չե՛ որ դու ինձ հետ համաձայնեցիր աշխատել մեկ դահեկանով: Վերցրո՛ւ քոնը և գնա. ես այս վերջինին նույնքան պիտի տամ, որքան քեզ»:** Առաջինները պայմանավորվել էին աշխատել օրավարձը մեկ դահեկանով և ըստ իրենց համաձայնության՝ աշխատավարձն ստացան: Ուրիշները հանձնվել էին տանուտերի շնորհին և շնորհ ստացան: Շնորհն ավելի լավ է, քան արդարությունը: Ավելի լավ է մեր վարձատրության հարցը Տիրոջը հանձնել, քան թե Նրա հետ գործարք կնքել:

20:15. Այնուհետև տանուտերն ասաց. **«Մի՛թե իրավունք չունեմ իմ ունեցված-**

քի հետ այնպես վարվելու, ինչպես ցանկանում եմ»: Դասը, իհարկե, այն է, որ Աստված գերիշխան է: Նա կարող է անել այն, ինչն Իրեն հաճելի է: Իսկ ինչ-որ Իրեն է հաճելի, միշտ էլ կլինի ճիշտ, արդարացի և ազնիվ: Տանուտերը շարունակեց. **«Քո աչքը չա՛ր է, որ ես բարի եմ»:** Այս հարցը բացահայտում է մարդու բնության եսասիրական հակումը: Ժամը 06:00-ից վարձված մշակները ստացան այնքան, ինչքան իրենք վաստակել էին, սակայն նրանք նախանձում էին, որովհետև մյուսները ստացել էին միևնույն վճարը՝ ավելի քիչ աշխատելով: Մեզանից շատերը պիտի խոստովանեն, որ մեզ նույնպես մի քիչ անարդար է թվում: Սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ Երկնքի Թագավորության մեջ մենք պետք է բոլորովին նոր մտածելակերպ ունենանք: Մենք պետք է հրաժարվենք մեր ազահ և մրցունակ հոգուց, և մտածենք այնպես, ինչպես Տերն է մտածում: Այգու տերը գիտեր, որ այդ բոլոր մարդիկ գումարի կարիք ունեն, ուստի վճարեց նրանց ըստ կարիքի և ոչ թե ազահությամբ: Ոչ ոք իրեն արժանիից պակաս չստացավ, բայց բոլորը ստացան այնքան, որքան պետք էր իրենց և իրենց ընտանիքների համար: Ինչպես ասում է Ջեյմս Մոյուարտը, այստեղ դասը սա է. «Մարդը, ով մտածում է վերջնական վարձատրությունը սակարկելու մասին միշտ կսխալվի: Վերջին անփոփոխ խոսքը միշտ պատկանում է Աստծո սիրառատ բարությանը»:³⁹ Որքան շատ ենք ուսումնասիրում առակը այս լույսի ներքո, այնքան ավելի լավ ենք հասկանում, որ այն ոչ միայն արդարացի է, այլև լիովին գեղեցիկ է: Նրանք, ովքեր առավոտյան ժամը 06:00-ից վարձվեցին, պետք է լրացուցիչ փոխհատուցում համարեին ամբողջ օրը այդպիսի հիանալի տիրոջը ծառայելը:

20:16. Հիսուսն առակը ավարտեց հետևյալ խոսքերով. **«Այսպես, վերջիններն առաջին կլինեն, իսկ առաջինները՝ վերջին»** (տե՛ս 19:30): Վարձատրության ժամանակ անակնկալներ են լինելու: Ոմանք, ովքեր *մտածում* են, որ առաջինն են լինելու, վերջինն են լինելու, որովհետև նրանց

ծառայությունը լցված էր հպարտության և եսասիրական հոգու ձգտումներով: Մյուսները, ովքեր ծառայել են սիրուց և երախտագիտությունից դրդված, բարձր պատվի են արժանանալու:

Գործերը, որոնք կարևորեցինք,
Նա մեզ ցույց կտա,
Որ լոկ մեղքեր են դրանք,
Փոքրիկ արարքները, որ մոռացել ենք:
Նա մեզ ցույց կտա, որ դրանք հենց
Կատարված են Իր անվան համար:

Անն

Ժ. Իր Մահվան և հարության մասին (20:17-19)

Ակնհայտ է, որ Տերը հեռացավ Բերիասից, որպեսզի Երիթովի միջով ուղևորվի **Երուսաղեմ** (հ. 29): Նա մեկ անգամ ևս մի կողմ **քաշեց տասներկու աշակերտներին**, որպեսզի նրանց բացատրի, թե ինչ է կատարվելու, երբ նրանք Սուրբ քաղաք հասնեն: Նա **պիտի մատնվի գլխավոր քահանաների ու դպիրների ձեռքը**՝ բացահայտ ակնարկ է Հուդայի դավաճանության մասին: Նա **պիտի մահվան** դատապարտվի հրեա առաջնորդների ձեռքով: Մահապատիժն իրականացնելու իշխանությունը չունենալով՝ նրանք պիտի **Նրան** մատնեն **հեթանոսներին** (հռոմեացիներին): Նրան պիտի ծաղրեն, պիտի խարազանեն և խաչեն: Բայց մահը չի պահելու իր գոհին. **երրորդ օրը Նա հարություն պիտի առնի:**

Ի. Երկնքի Թագավորության մեջ գրաված դիրքի մասին (20:20-28)

Սա մարդու բնության տխուր պատկերն է, որովհետև Իր սարսափելի տառապանքների մասին Հիսուսի երրորդ կանխատեսումից անմիջապես հետո նրա հետևորդներն ավելի շատ մտածում էին իրենց փառքի մասին, քան Նրա չարչարանքների:

«Չարչարանքների մասին Քրիստոսի առաջին կանխատեսումը տեղիք տվեց Պետրոսի առարկությանը (16:22), երկրորդին շուտով հետևեց աշակերտների հարցը. «Ո՛վ է մե՞ծ...»: Այստեղ մենք գրտնում ենք երրորդ կանխատեսումը, որն ավարտվում է Հակոբոսի և Հովհաննեսի

պահանջկոտ խնդրանքով: Նրանք համառորեն այք էին փակում գալիք դժվարությունների մասին նախագգուշացման վրա և տեսնում էին միայն փառքի խոստումը, որովհետև Թագավորության մասին ունեին սխալ, նյութական տեսակետ»:

*Մուրբգրության միավորում
ամենօրյա նշումներ*

20:20-21. Հակոբոսի և Հովհաննեսի **մայրը** մոտեցավ Հիսուսին՝ **խնդրելով**, որ իր որդիները Նրա **Թագավորության մեջ** նստեն Նրա երկու կողմերում: Այն, որ Նրա գալիք Թագավորության հանդեպ նա իր հույսը չկորցրեց և ուզում էր, որ իր որդիները Հիսուսին մոտ լինեն, գովելի է: Բայց նա չէր հասկանում այն սկզբունքները, որոնց հիման վրա պատիվ է շնորհվելու Թագավորության մեջ:

Մարկոսն ասում է, որ որդիներն իրենք արտահայտեցին այդ խնդրանքը (Մարկ. 10:35), հավանաբար նրանք դա արեցին առանց նրա թելադրանքի կամ, գուցե, երեքն էլ մոտեցել են Հիսուսին: Դրանում ոչ մի հակասություն չկա:

20:22. **Հիսուսը** անկեղծորեն նրանց **պատասխանեց**, որ նրանք չեն հասկանում, թե ինչ են խնդրում: Նրանք ուզում էին թագ՝ առանց խաչի, գահ՝ առանց գոհասեղանի, փառք՝ առանց տառապանքի: Ուստի Նա հարցրեց նրանց. «**Կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ Ես եմ խմելու**»: Մենք կասկած չունենք, թե Նա ինչ նկատի ուներ **գավաթ** ասելիս, Նա հենց նոր էր դրանք նկարագրել 18-19-րդ համարներում: Նա պիտի չարչարվեր և մեռներ:

Հակոբոսը և Հովհաննեսը հայտնեցին իրենց պատրաստակամությունը կիսելու Նրա չարչարանքը, չնայած գուցե նրանց վստահությունը հիմնված էր նախանձախընդրության վրա, քան գիտելիքի:

20:23. Հիսուսը նրանց վստահեցրեց, որ Իր **բաժակը, իրոք**, նրանք **կխմեն**: Հակոբոսը պիտի նահատակվեր, իսկ Հովհաննեսը պիտի հալածվեր և Պատմոս կղզում արտրվեր: Ռոբերտ Կրոստերն ասել է. «Հակո-

բոսը մահացավ մարտիրոսի մահով, իսկ Հովհաննեսն ապրեց մարտիրոսի կյանք»:

Այնուհետև Հիսուսը նրանց բացատրեց, որ Թագավորության մեջ պատվավոր տեղերը Նրա կողմից չի շնորհվում, **Հոր** կողմից է որոշված այդ հատուկ հիմքը, որի համաձայն պիտի տրվեն այդ տեղերը: Նրանք կարծում էին, որ դա քաղաքական պաշտպանության հարց էր, որ շնորհիվ Հիսուսի հետ ունեցած մտերիմ հարաբերությունների՝ իրենք կարող էին հավակնել բարձր դիրքերի: Բայց դա անհատական բարեհաճության հարց չէր: Աստծո խորհրդում աջ և ձախ կողմերում նստելը տրվելու է Նրա անվան համար կրած չարչարանքների հիման վրա: Սա չի նշանակում, որ հիմնական պատվավոր տեղերը նախատեսված են միայն 1-ին դարի քրիստոնյաների համար, ներկայումս ապրողներից մի քանիսը նույնպես կարող են հասնել դրան տառապանքների միջոցով:

20:24. **Եվ երբ տասը լսեցին, բարկացան**, որ Չեբեղիոսի որդիները նման ցանկություն արտահայտեցին: Նրանք հավանաբար բարկացել էին, որովհետև հենց իրենք էին ուզում մեծ լինել: Նրանց զայրացրել էր այն, որ Հակոբոսը և Հովհաննեսն իրենց ցանկության մասին առաջինը հայտնեցին:

20:25-27. Սա Տիրոջը հնարավորություն տվեց Իր Թագավորության մեջ բարձր դիրքի մասին հեղափոխական հայտարարություն անել: **Հեթանոսները** կարծում են, որ իշխելով և տիրելով են դառնում մեծ: Քրիստոսի թագավորության մեջ մեծությունը դրսևորվում է ծառայության մեջ: Ով ուզում է բարձր դիրքի հասնել, պետք է **սպասավոր լինի, և ով կկամենա գլխավոր լինել**, պետք է **ծառա** դառնա:

20:28. **Մարդու Որդու** կյանքն այդպիսի ստորադաս ծառայության կատարյալ օրինակ է: Նա այս աշխարհ **չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և Իր կյանքը շատերի համար որպես փրկագին տալու**: Նրա մարդկային ամբողջ նպատակը կարելի է ամփոփել երկու բառով՝ **ծա-**

ռայել և տալ: Չարմանալի է, որ Բարձրյալ Տերը մինչև մտուր և խաչ Իրեն խոնարհեցրեց: Նրա մեծությունը դրսևորվեց Նրա նվաստացման խորության մեջ: Այդ նույնը մեզ հետ պիտի լինի:

Նա Իր կյանքը՝ **որպես փրկագին տվեց շատերի համար:** Նրա մահը բավարարեց մեղքի հանդեպ Աստծո բոլոր արդարացի պահանջները: Այն բավարար էր, որ ամբողջ աշխարհի մեղքը վերցնեք: Բայց այն գործություն ունի միայն նրանց համար, ովքեր ընդունում են Նրան՝ որպես իրենց Տիրոջ և Փրկչի: Երբևէ դու այդ արե՞լ ես:

L. Երկու կույրերի բժշկումը (20:29-34)

20:29-30. Այս անգամ Հիսուսը Հորդանանն անցավ Բերիայի կողմից և **Երիքով** հասավ: Երբ Նա քաղաքից դուրս էր գալիս, **երկու կույրեր** սկսեցին Նրան աղաղակել. «**Ողորմի՛ր մեզ, Տե՛ր, Դավթի՛ Որդի՛:** **Որդի Դավթի** տիտղոսի օգտագործումը նշանակում է, որ ֆիզիկապես կույր լինելով՝ նրանց հոգևոր տեսողությունն այնքան սուր էր, որ նրանք Հիսուսի մեջ Մեսիային տեսան: Նրանք կարող են ներկայացնել կույր Իսրայելի հավատացյալ մնացորդը, որը Նրան՝ որպես Քրիստոս էր ընդունում, որպեսզի երբ վերադառնա, թագավորի (Ես. 35:5, 42:7, Հո. 11:25-26, 2 Կոր. 3:16, Հայտ. 1:7):

20:31-34. Մարդիկ փորձում էին նրանց լռեցնել, **բայց նրանք ավելի բարձր էին աղաղակում** Նրա ետևից: Երբ Տեր Հիսուսը նրանց հարցրեց, թե ի՞նչ են ուզում, նրանք չտրվեցին ընդհանրացումների, ինչպես մենք ենք հաճախ անում, երբ աղոթում ենք: Նրանք հստակորեն ներկայացրին իրենց ցանկությունը. «**Տե՛ր, թող մեր աչքերը բացվեն**»: Նրանց որոշակի խընդրանքը ստացավ որոշակի պատասխան: **Հիսուսն էլ խղճալով դիպավ նրանց աչքերին, ու անմիջապես նրանց աչքերը տեսողություն ստացան, և նրանք գնացին Նրա ետևից:**

Գաբելիներ հետևյալ օգտակար դիտողությունն է անում Հիսուսի՝ նրանց աչքերին դիպելու կապակցությամբ.

«Մենք մինչ այդմ ենք իմացել հպվելու միջոցով բժշկելու յուրահատուկ նշանակության մասին, որ կա գրված Ավետարանում: Ամեն անգամ, երբ Տերը բժշկում է հպման միջոցով, այն մեզ հիշեցնում է երկրի վրա Իր անձնական ներկայության մասին և Իր ողորմածության մասին Իսրայելի հանդեպ: Երբ Նա բժշկում է Իր Խոսքով՝ առանց Իր անձի ներկայության ... կամ հպվում է հավատքի միջոցով, դա վերաբերում է երկրի վրա Նրա բացակայության ժամանակաշրջանին, երբ հեթանոսները, հավատքով Նրան գալով, Նրանից բժշկություն կստանան»:⁴⁰

Մատթեոսի արած այս միջադեպի դասավորվածությունը դժվարություն է առաջացնում Մարկ. 10:46-52-ի և Ղուկ. 18:35-43, 19:1-ի միջև: Այստեղ խոսվում է *երկու կույրերի* մասին՝ Մարկոսը և Ղուկասը հիշատակել են միայն *մեկին*: Ենթադրվում է, որ Մարկոսն ու Ղուկասը հիշատակել են բոլորիս հայտնի Բարտիմեոսին, իսկ Մատթեոսը, իր Ավետարանը մասնավորապես հրեաների համար գրելով, հիշատակել է *երկուսին*՝ որպես նվազագույն քանակ՝ վկայությունը ճշմարիտ համարելու համար (2 Կոր. 13:1): Մարկոսի և Մատթեոսի Ավետարաններում ասվում է, որ այդ դեպքը տեղի ունեցավ, երբ Հիսուսը դուրս էր գալիս Երիքովից, Ղուկասը նշում է, որ դա կատարվեց, երբ Նա քաղաքին էր մոտենում: Իրականում գոյություն ունեին երկու Երիքով՝ հին և նոր, բժշկության հրաշքը, հավանաբար կատարվեց, երբ Հիսուսը դուրս էր գալիս մեկից և մտնում մյուսը:

XII. ԹԱԳԱՎՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ ԵՎ ՄԵՐԺՎԵԼԸ (21-23-րդ գլ.)

Ա. Հաղթական մուտք (21:1-11)

21:1-3. Երիքովից դուրս գալով՝ Հիսուսը գնաց **Ձիթենյաց լեռան** արևելյան կողմը, որտեղ Բեթանիան և **Բեթփագեն** էին գտնվում: Այդտեղից ճանապարհը շրջանցում էր Ձիթենյաց լեռան հարավային կողմը՝ իջնելով դեպի Հովսափատի հովիտը՝ հատելով Կեդրոն հեղեղատը և բարձրանում վեր՝ դեպի **Երուսաղեմ**:

Հիսուսը **աշակերտներից երկուսին ուղարկեց** Բեթանիա՝ կանխավ իմանալով, որ նրանք այնտեղ **կապված մի էշ կգտնեն քուռակի հետ**: Նրանք պիտի արձակեին կենդանիներին և **բերեին** Հիսուսի մոտ: Եթե ինչ-որ մեկը նրանց հարցներ, թե ինչ են անում, նրանք պիտի պատասխանեին, որ **Տիրոջը** պետք են այդ կենդանիները: Այա տերը կհամաձայնի: Հավանաբար տերը ճանաչում էր Հիսուսին և նախկինում Նրան առաջարկել էր իր օգնությունը: Կամ էլ այս դեպքը ցույց էր տալիս Նրա ամենագիտությունը և Տիրոջ գերիշխանությունը: Ամեն բան պատահեց ճիշտ այնպես, ինչպես Հիսուսն էր կանխատեսել:

21:4-5. Կենդանիներին Իր մոտ բերելու Հիսուսի պահանջը Եսայու և Չաքարիայի կանխատեսումների իրականացումն էր.

«Ասացե՛ք Միոնի աղջկան. ահա քո թագավորը քեզ մոտ է գալիս՝ հեզ և էշի ու էշի քուռակի վրա նստած»:

21:6. Եվ երբ աշակերտներն իրենց հանդերձները գցեցին կենդանիների վրա, Հիսուսը նստեց ավանակի վրա (Մարկ. 11:7), և գնացին դեպի Երուսաղեմ: Դա պատմական պահ էր: Համաձայն պրն. Ռոբերտ Անդերսոնի՝ Դանիելի մարգարեության 69 շաբաթը արդեն լրացել էր (տե՛ս իր հաշվարկները *«Եկող Իշխանը»* գրքում): Դրանից հետո Մեսիան մահով պիտի կտրվի (Դան. 9:26):

Այս ձևով Երուսաղեմ մտնելով՝ Տեր Հիսուսը մտածված և բացեիբաց հայտնեց Իր Մեսիա լինելը: Լանգը գրում է.

«Նա, փաստորեն, մարգարեությունը կատարեց, որն Իր ժամանակ միաձայն մեկնաբանվել էր որպես մեսիական: Եթե նախկինում Իր տիտղոսի մասին հայտարարելը Նա վտանգավոր էր համարում, այժմ անընդունելի էր համարում լռությունը... Այսուհետև հնարավոր չի լինելու ասել, որ Նա երբեք բացարձակ միանշանակորեն չէր հայտարարել Իր մասին: Երբ հետագայում Երուսաղեմը Մեսիայի սպանության մեջ մեղադրվի, չի կարող ասել, որ Մեսիան բոլորին հասկանալի նշան չէր տվել»:⁴¹

21:7-8. Տերը քաղաք մտավ **հագուստների** գորգի և արմավի **ճյուղերի** վրայով, Իր ականջներում հնչող ժողովրդի բացականչություններով: Շատ կարճ ժամանակով Նա թագավոր ճանաչվեց:

21:9. Ժողովուրդը գոչում էր. **«Ովսանա Դավթի Որդուն: Օրհնյալ է Տիրոջ անունով եկողը»:** Սղմ. 117:25-26-ի այս մեջբերումն ականհայտորեն վերաբերում է Մեսիային: Բնագրում **«ովսանա»** նշանակում է «հիմա՛ փրկիր», թերևս ժողովուրդն ուզում էր ասել. «Փրկի՛ր մեզ հռոմեական կեղեքիչներից»: Ավելի ուշ այս արտահայտությունը դարձավ գովաբանական բացականչություն: **«Որդի Դավթի»** և **«օրհնյալ է Տիրոջ անունով եկողը»** արտահայտությունները հստակորեն մատնանշում են, որ Հիսուսին՝ որպես Մեսիա էին ընդունում: Օրհնյալ է Նա, Ով գալիս է Եհովայի իշխանությամբ՝ Նրա կամքը կատարելու համար:

Մարկոսն իր պատմության մեջ ամբողջի աղաղակները գրառելիս նշում է նաև. **«Օրհնյալ լինի մեր Հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է Տիրոջ անունով»** արտահայտությունը (Մարկ. 11:10): Այն մատնանշում է ժողովրդի փափագը, որ շատ շուտով Թագավորությունը հաստատվելու էր Բրիստոսի միջոցով, որ նստած է Դավթի աթոռին: Գոչելով **«Օվսանա բարձունքներում»**՝ ամբողջ կոչ էր անում երկրնքին միանալ երկրի հետ՝ փառաբանելով Մեսիային և միագուցե Նրան կոչ էր անում փրկել երկնքի բարձունքներից:

Մարկոսը (11:11) արձանագրում է, որ Երուսաղեմ մտնելով՝ Հիսուսը գնաց տաճար, ոչ թե տաճարի ներքը, այլ՝ դեպի գավիթ: Ենթադրվում է, որ դա եղել է Աստծո տունը, բայց Նա տանը չէր այդ տաճարում, որովհետև քահանաները և ժողովուրդը հրաժարվել էին Նրան Իր արժանի տեղը տալ: Իր շուրջն արագորեն նայելուց հետո Փրկիչը տասներկուսի հետ գնաց դեպի Բեթանիա: Դա տեղի ունեցավ կիրակի երեկոյան:

21:10-11. Այդ ժամանակ ամբողջ **քաղաքը** տարակուսանքի մեջ էր Նրա ինքնության շուրջ: Նրանք, ովքեր հարցնում էին Նրա մասին, միայն ասում էին, որ Նա **Հի-**

**տուս մարգարեն է՝ Գալիլիայի Նազա-
րեթից:** Մրանից երևում է, որ իրականում
քչերն էին հասկացել, որ Նա Մեսիան է:
Մեկ շաբաթ էլ չէր անցնի, որ այդ փոփո-
խամիտ ամբոխը պիտի գոչեր. «Խաչի՛ր
Նրան, խաչի՛ր Նրան»:

Բ. Տաճարի մաքրագործումը (21:12-13)

21:12. Իր հանրային ծառայության սկըզ-
բում Հիսուսը տաճարի շրջակայքից դուրս
հանեց առևտրականներին (Հովհ. 2:13-16):
Բայց հանուն մեծ շահույթի՝ տաճարի դրսի
գավթում նորից գլուխ էր բարձրացրել վե-
րավաճառքը: Չոհարեղավող կենդանիներն
ու թռչունները գնվում և վաճառվում էին
չափից ավելի գներով: **Փող փոխողները**
փողը փոխանակում էին կես սիկղով, որով
հրեաները պիտի տաճարի տուրքը վճա-
րեին, որը չափազանց մեծ վարձ էր: Այժմ,
երբ **Հիսուսի** ծառայությունն ավարտին էր
մոտենում, Նա նորից **դուրս հանեց** նրանց,
ովքեր օգտվում էին սուրբ գործերում:

21:13. Համադրելով Եսայու և Երեմիայի
մեջբերումները՝ Նա դատապարտեց սրբա-
պղծումը, չարչիական ոգին և բացառիկ ար-
տոնությունները: Մեջբերելով Ես. 56:7-ը՝
Նա հիշեցրեց նրանց, որ Աստված այդ տա-
ճարը նախատեսել էր **աղոթքի տուն** լինե-
լու համար: Նրանք այն **ավազակների** որջ
էին դարձրել (Եր. 7:11):

Տաճարի մաքրագործումը Նրա առաջին
պաշտոնական գործն էր Երուսաղեմ մտնե-
լուց հետո: Այս արարքով Նա հստակորեն
հայտարարեց տաճարի Տերը լինելու Իր ի-
րավունքի մասին:

Այս դեպքը մեզ համար այսօր երկակի
նշանակություն ունի: Մեր եկեղեցական
կյանքում Նրա մաքրագործող իշխանույ-
թյան կարիքն ունենք, որպեսզի դուրս հանի
շուկաները, ընթրիքները և մի շարք այլ գու-
մար շահելու միջոցները: Մեր անձնական
կյանքը նույնպես Տիրոջ մաքրագործող ծա-
ռայության մշտական կարիքն ունի մեր
մարմիններում, որ Սուրբ Հոգու տաճարն
է:

Գ. Քահանաների և դպիրների զայրույթը (21:14-17)

21:14. Հաջորդ տեսարանում տեսնում ենք
տաճարի բակում **կույրերին և կաղերին**
բժշկող մեր Տիրոջը: Նա գրավում էր կա-
րիքավորներին, ուր էլ որ գնար, և երբեք
նրանց չէր արձակում առանց նրանց կա-
րիքին արձագանքելու:

21:15-16. Բայց անբարյացակամ այքերն
ամենուր հետևում էին նրան: Եվ երբ **քա-
հանաներն ու դպիրները** լսեցին երեխա-
ների աղաղակը, որ Հիսուսին՝ որպես Դավ-
թի Որդի էին հռչակում, զայրացան:

Նրանք ասացին. «**Լսո՛ւմ ես, դրանք ի՞նչ
են ասում**», նրանք ակնկալում էին, որ Նա
կարգելի երեխաներին Իրեն Մեսիա կոչել:
Եթե Հիսուսը Մեսիան չէր, ապա այդ մա-
սին բոլորին միանգամից ասելու ամենա-
հարմար ժամանակն էր: Բայց Նրա պա-
տասխանը հաստատեց, որ երեխաները
ճիշտ էին: Նա մեջբերեց Յոթանասնից
(Մեպտուազինտա) Մով. 8:3-ը. «**Մանուկ-
ների և ծծկեր երեխաների բերանով օրի-
նություն կատարեցիր**»: Եթե գիտակներ
համարվող դպիրները և քահանաները չէին
փառաբանում Նրան՝ որպես Օծյալի, ապա
Տիրոջը փոքր երեխաները պիտի երկրպա-
զեին: Երեխաների հոգևոր հասկացողույթ-
յունը հաճախ գերազանցում է իրենց տա-
րիքին, և նրանց հավատքի և սիրո խոս-
քերն արտասովոր փառք են բերում Տիրոջ
անվանը:

21:17. Թողնելով կրոնական առաջնորդ-
ներին, որ խորհեն այս ճշմարտություննե-
րի մասին, Հիսուսը վերադարձավ **Բեթա-
նիա** և այնտեղ գիշերեց:

Դ. Անպտուղ թզենին (21:18-22)

21:18-19. **Առավոտյան**, երբ վերադառ-
նում էր Երուսաղեմ, Տերը մոտեցավ մի
թզենու՝ հուսարով քաղցր բավարարող մի
պտուղ գտնել: **Եվ դրա վրա տերևներից
բացի ոչինչ չգտնելով**՝ Նա ասաց. «**Այլևս
հավիտյան քեզանից պտուղ թող չլինի**»,
և թզենին իսկույն չորացավ:

Մարկոսն այստեղ ավելացնում է (11:12-
14), որ դեռևս թզի ժամանակը չէր, հետև-

վարար ծառին դատապարտելը պտուղ չունենալու պատճառով, Փրկչին կարծես պատկերում է որպես անխոհեմ և նեղացկոտ: Իմանալով, որ այդպիսի բան չի կարող լինել, ինչպես՝ բացատրել այս բարդ իրավիճակը:

Աստվածաշնչյան երկրներում թզենիները տալիս էին վաղահաս ուտելի պտուղներ մինչև տերևների հայտնվելը: Դա հերթական բերքի նախանշանն էր: Եթե վաղահաս թզերը չէին հայտնվել, ինչպես այդ թզենու դեպքում, դա ցույց էր տալիս, որ ավելի ուշ էլ բերք չի լինելու:

Սա միակ հրաշքն է, երբ Հիսուսն օրհնելու փոխարեն անիծեց, վերականգնելու փոխարեն կյանքն ավերեց: Հենց սա էլ դժվարություն է առաջացնում: Նման քննադատությունը մատնում է Քրիստոսի Անձի մասին անտեղյակությունը: Նա Աստված է՝ տիեզերքի Գերիշխանը: Նրա որոշ գործերը խորհրդավոր են մեզ համար, սակայն մենք պետք է ելնենք այն նախադրյալից, որ դրանք միշտ ճիշտ են: Այս դեպքում Տերը գիտեր, որ այդ թզենին երբեք պտուղ չէր տալու, և Նա վարվեց ագարակատիրոջ պես. անպտուղ ծառն իր այգուց հանեց:

Նույնիսկ նրանք, ովքեր քննադատում են մեր Տիրոջը թզենուն անիծելու համար, ընդունում են, որ դա խորհրդանշական արարք էր: Այս դեպքը համարվում է այն վրդովված ընդունելության մեկնաբանությունը, որին Նա արժանացել էր Երուսաղեմում: Գինու և ձիթապտղի ծառի նման թզենին ներկայացնում է Իսրայել ազգին: Երբ Հիսուսն Իր ժողովրդի մոտ եկավ, տեսավ տերևներ, որոնք խոսում էին դավանության մասին, բայց Աստծո համար պտուղ չկար: Հիսուսը ժողովրդից պտուղ էր փափագում:

Քանի որ վաղահաս պտուղներ չկային, Նա գիտեր, որ այդ անհավատ ժողովրդից ուշահաս պտուղներ էլ չեն լինելու, ուստի անիծեց թզենուն: Սա դատաստանի նախապատկերն էր, որ տեղալու էր ժողովրդի վրա մ.թ. 70թ.:

Պետք է հիշենք, որ քանի դեռ Իսրայելն *անհավատ* է, հավիտյան անպտուղ է մնա-

լու: Ժողովրդի *մնացորդը* կվերադառնա Մեսիային հափշտակությունից հետո: Նրանք պտուղներ են բերելու Նրա համար Մեծ նեղության ժամանակ և Նրա Հազարամյա Թագավորության ընթացքում:

Չնայած այս հատվածի հիմնական մեկնաբանությունը վերաբերում է Իսրայել ժողովրդին, այն կիրառելի է բոլոր ժամանակների մարդկանց համար, ովքեր շատ են խոսում և քիչ գործում:

21:20-22. Երբ **աշակերտները** տեսան ծառի հանկարծակի չորանալը, զարմացան, և Տերը նրանց ասաց, որ նրանք կարող են ավելի մեծ հրաշքներ անել, եթե **հավատ** ունենան: Օրինակ՝ նրանք կարող էին լեռանն ասել. «**Ելի՛ր ու ձովն ընկիր**», այդպես էլ կլինի: «**Եվ ամեն բան, ինչ որ աղոթքի մեջ խնդրեք հավատալով, դուք պիտի ստանաք**»:

Պետք է կրկին լուսաբանենք, որ աղոթքին վերաբերող այս թվացյալ անպայմանական խոստումները պետք է Աստվածաշնչում այս թեմային վերաբերող ամբողջ ուսմունքի լույսի ներքո հասկանալ: 22-րդ համարը չի նշանակում, որ ցանկացած քրիստոնյա կարող է իր ցանկացածը խրնդել և ակնկալել, որ ստանալու է դա: Նա պետք է աղոթի պայմանների համաձայն, որ տրված են Աստվածաշնչում:

Ե. Հիսուսին հարցնում են Նրա իշխանության մասին (21:23-27)

21:23. Երբ Հիսուսը **եկավ տաճարի** արտաքին գավիթը և ուսուցանում էր, **գլխավոր քահանաներն ու ժողովրդի ավագներն** ընդհատեցին Նրա ուսուցումը՝ հարցնելով, թե ո՞վ է Նրան տվել սովորեցնելու, հրաշքներ գործելու և տաճարը մաքրելու **իշխանությունը**: Նրանք հույս ունեին ծուղակը գցել Նրան՝ անկախ նրանից, թե Նա ինչպես կպատասխանի: Եթե Նա հայտարարեր, որ որպես Աստծո Որդի՝ Ինքն Իրենում ուներ իշխանություն, նրանք կմեղադրեին նրան հայիոյության մեջ: Եթե պնդեր, որ Իր իշխանությունը «մարդկանցից է», նրանք կվարկաբեկեին Նրան: Եթե Նա ասեր, որ Իր իշխանությունը Աստծուց

Էր, ապա մարտահրավեր կնետեին Նրան: Լինելով պաշտոնապես կրթված և մարդկանց կողմից նշանակված՝ նրանք իրենց հավատի պահապաններ էին համարում, մասնագետներ, որ լիազորված էին՝ ուղղորդելու ժողովրդի կրոնական կյանքը: Հիսուսը չուներ պաշտոնական կրթություն, ոչ էլ կրոնական առաջնորդների կողմից տրված բարձրագույն կրթության դիպլոմ: Նրանց մարտահրավերն արտացոլում էր վաղեմի գայրույթը, որ պրոֆեսիոնալ կրոնականներն զգում են այն մարդկանց հանդեպ, ովքեր ունեն աստվածային օծության իշխանությունը:

21:24-25. Հիսուսը նրանց խոստացավ բացատրել Իր իշխանության մասին, եթե նրանք պատասխանեն Իր հարցին. «Հովհաննեսի մկրտությունը որտեղի՞ց էր. **երկրներից, թե՛ մարդկանցից**»: Այստեղ «Հովհաննեսի մկրտությունը» արտահայտությունը պետք է հասկանալ Հովհաննեսի ծառայությունն նշանակությամբ: Հետևաբար հարցն այսպես էր դրված. «Հովհաննեսին ո՞վ էր իշխանություն տվել իր ծառայությունը կատարելու համար: Կարգադրությունը մարդկանցից էր, թե՛ աստվածային: Ինչպիսի՞ հավատարմագրեր նա ուներ Իսրայելի առաջնորդների կողմից տրված»: Պատասխանը պարզ էր. Հովհաննեսը մարդ էր՝ Աստծո կողմից ուղարկված: Նրա գործությունը բխում էր *աստվածային լիազորությունից* և ոչ թե *մարդու հաստատումից*:

Քահանաները և ժողովրդի ավագները դժվար կացության մեջ էին հայտնվել: Եթե ընդունեին, որ Հովհաննեսն Աստծո կողմից էր ուղարկված, կհայտնվեին ծուղակի մեջ: Հովհաննեսը Հիսուսին որպես Մեսիա էր ներկայացրել: Եթե Հովհաննեսի իշխանությունն աստվածային էր, ապա ինչո՞ւ նրանք չապաշխարեցին և **չհավատացին Քրիստոսին**:

21:26. Իսկ եթե ասեին, որ Հովհաննեսն Աստծո կողմից չէր ընտրված, ապա ժողովրդի մեծ մասը, որ **Հովհաննեսին** որպես **մարգարե** էր ընդունում, ծաղրի կենթարկեին իրենց: Եթե նրանք համաձայ-

նեին, որ Հովհաննեսն ուղարկված էր Աստծո կողմից, ստիպված կլինեին պատասխանել իրենց սեփական հարցին. Հիսուսը Մեսիան էր, Ուս նախակարապետը Հովհաննեսն էր:

21:27. Բայց նրանք հրաժարվում էին այդ փաստն ընդունելուց և հետևաբար մնացին իրենց տգիտության մեջ: Նրանք չէին կարողանում ասել Հովհաննեսի գործության աղբյուրը: Այնուհետև Հիսուսն ասաց. **«Ես էլ ձեզ չեմ ասի, թե ինչ իշխանությամբ եմ անում այս բաները»**: Ինչո՞ւ Նա պիտի նրանց ասեր այն, ինչը նրանք արդեն գիտեին, բայց չէին կամենում ընդունել:

2. Երկու որդիների առակը (21:28-32)

21:28-30. Այս առակը խայթող կշտամբանք էր գլխավոր քահանաների և ավագների համար, որ նրանք չհնազանդվեցին Հովհաննեսի ապաշխարության և հավատալու կոչին: Այն **մի մարդու** մասին է, որ **իր երկու որդիներին** խնդրեց **այգու մեջ աշխատել**: Մեկը հրաժարվեց, իսկ հետո փոխեց իր միտքն ու գնաց: Մյուսը համաձայնեց, բայց երբեք էլ չգնաց:

21:31-32. Պատասխանելով այն հարցին, թե ո՞ր որդին **կատարեց Հոր կամքը**, կրոնական առաջնորդներն սկամայից իրենք իրենց մեղադրեցին՝ ասելով՝ **Առաջինը**:

Տերը մեկնաբանեց առակը: **Մաքսավորներին և պոռնիկներին** Նա նմանեցրեց առաջին որդուն: Նրանք այդպիսի տպավորություն չէին թողնում, թե պատրաստ են անմիջապես հնազանդել Հովհաննես Մկրտչին, բայց ի վերջո նրանցից շատերն ապաշխարեցին և Հիսուսին հավատացին: Կրոնական առաջնորդները նման էին երկրորդ որդուն: Նրանք դավանում էին, որ հաստատում են Հովհաննեսի քարոզը, բայց երբեք չխոստովանեցին իրենց մեղքերը և չվստահեցին Հիսուսին: Ուստի հայտնի մեղավորները կմտնեն Աստծո Թագավորությունը, իսկ ինքնաբավ կրոնական առաջնորդները դրսում կմնան: Այսօր էլ նույնն է կատարվում: Ակնառու մեղավորներն ավելի մեծ պատրաստակամությամբ են ընդունում Բարի լուրը, քան նրանք, ովքեր ծածկ-

վում են կեղծ բարեպաշտության արտաքին փայլով:

«**Հովհաննեսն արդարության ճանապարհով եկավ ձեզ մոտ**» արտահայտությունը նշանակում է, որ նա եկել էր քարոզելու ապաշխարության և հավատի միջոցով արդարության անհրաժեշտության մասին:

Է. Չար մշակների առակը (21:33-46)

21:33-39. Հետագայում, պատասխանելով իշխանության մասին հարցին, Հիսուսը պատմեց մեկ ուրիշ **առակ մի տանուտերի մասին, որ այգի տնկեց ու այն ցանկապատեց** և նրա մեջ **հնձան փորեց, աշտարակ շինեց** և հանձնելով **մշակներին՝ հեռու երկիր գնաց: Բերքը հավաքելու ժամանակ նա իր ծառաներին ուղարկեց մշակների մոտ**, որպեսզի նրա պտուղը վերցնեն, բայց մշակները մեկին ծեծեցին, մյուսին սպանեցին, մեկ ուրիշին էլ քարկոծեցին: Երբ նա **ուղարկեց ուրիշ ծառաներ**, նրանց էլ նույնն արեցին: Երրորդ անգամ նա **ուղարկեց իր որդուն՝** մտածելով, որ **կհարգեն նրան:** Հաստատ իմանալով, որ նա ժառանգն է, նրանք **սպանեցին նրան՝ ժառանգությանը** տիրանալու նպատակով:

21:40-41. Այդ պահին Տերը հարցրեց քահանաներին և ավագներին, թե տանուտերը **ի՞նչ** կաներ այդ մշակներին: Նրանք պատասխանեցին. «**Նա չարաչար կկործանի այդ չար մարդկանց և այգին կտա ուրիշ մշակների, որոնք պտուղները ժամանակին կտան նրան:**»

Այս առակը դժվար չէ մեկնաբանել: Աստված տանուտերն է, Իսրայելը՝ այգին (Մով. 80:8, Ես. 5:1-7, Եր. 2:21): Ցանկապատը՝ Մովսեսի օրենքը, որը Իսրայելին առանձնացրեց հեթանոսներից և պահպանեց նրանց՝ որպես Տիրոջ ընտրյալ ժողովրդի: Հնձանը փոխաբերաբար նշանակում է պտուղ, որ Իսրայելը պիտի արտադրեր Աստծո համար: Աշտարակն ակնարկում է Եհովայի աչալուրջ հոգատարությունն Իր ժողովրդի նկատմամբ, մշակները՝ գլխավոր քահանաները և դպիրները:

Աստված բազմիցս Իսրայել ժողովրդի մոտ էր ուղարկել Իր ծառաներին, մարգարեներին՝ ակնկալելով այգու եղբայրության, սրբության և սիրո պտուղները: Բայց ժողովուրդը մարգարեներին հալածեց և նրանցից մի քանիսին սպանեց: Վերջապես Աստված Իր Որդուն ուղարկեց՝ ասելով. «Թերևս իմ որդուց կամաչեն» (հ. 37): Գլխավոր քահանաները և դպիրներն ասացին. «Սա է ժառանգը». ճակատագրական ընդունելություն: Նրանք գաղտնի համաձայնեցին, որ Հիսուսը Աստծո Որդին է (թեև հրապարակավ դա ժխտում էին), և այս ձևով պատասխանեցին իշխանության մասին իրենց սեփական հարցին: Նրա իշխանությունը փաստում էր, որ Նա Աստծո Որդին էր:

Առակում նրանց խոսքերը այսպես են մեջբերված. «Սա է ժառանգը, եկե՛ք սրան սպանենք, որպեսզի ժառանգությանը տիրանանք» (հ. 38): Իրական կյանքում նրանք ասացին. «Եթե մենք Նրան այսպես թողնենք, բոլորը պիտի հավատան Նրան. և հռոմեացիները պիտի գան ու մեր տե՛ղն էլ, մեր ա՛գգն էլ պիտի առնեն» (Հովհ. 11:48): Այսպիսով, մերժեցին Նրան, դուրս հանեցին և խաչեցին:

21:42. Երբ Փրկիչը գլխավոր քահանաներին և դպիրներին հարցրեց, թե տանուտերն ի՞նչ կաներ այդ մշակներին, նրանց պատասխանն իրենց դատապարտեց, ինչպես Նա ցույց է տալիս 42-43-րդ համարներում: Նա մեջբերեց Սղմ. 118:22. «**Այն քարը, որ կառուցողները մերժեցին, անկյունաքար դարձավ: Սա Տիրոջից եղավ և սքանչելի է մեր աչքերին:**» Երբ Քրիստոսը՝ Քարը, Իրեն հայտնեց կառուցողներին՝ Իսրայելի առաջնորդներին, նրանք Նրա համար տեղ չգտան իրենց շինարարական ծրագրերում: Նրանք շարտեցին Նրան որպես ոչ պետքականի: Բայց Իր մահից հետո Նա մեռելներից հարություն առավ, և Աստված Նրան անգերագանց տեղ տվեց: Նա դարձավ ամենակարևոր քարը Աստծո շինության մեջ. «... Աստված Նրան խիստ բարձրացրեց և Նրան տվեց մի անուն, որ բարձր է բոլոր անուններից» (Փիլ. 2:9):

21:43. Այնուհետև Հիսուսը բացահայտորեն հայտարարեց, որ **Աստծո Թագավորությունը ձեզնից կվերցվի** (Իսրայելից) **և կտրվի մի ազգի, որ պտուղներ կբերի:** Այդպես էլ եղավ: Իսրայելը՝ որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ, մերժվել էր և իրավական առումով արդեն կուրացած էր: Մեսիային մերժող ժողովրդի վրա դառնություն էր եկել: Մարգարեությունը, որ **Աստծո թագավորությունը կտրվի մի ազգի, որ պտուղներ կբերի**, պետք է հասկանալ որպես հղում. 1. եկեղեցուն, որ կազմված է հավատացյալ հրեաներից և հեթանոսներից, «սուրբ ազգ, Նրան պատկանող ժողովուրդ» (1 Պետ. 2:9) կամ 2. Իսրայելի հավատացյալ մասը, որն ապրելու է Մեծ նեղության ժամանակ: Փրկագնված Իսրայելը պտուղ է բերելու Աստծո համար:

21:44. «**Եվ ով ընկնի այս քարի վրա, կփշրվի, և ում վրա որ այն ընկնի, փոշու կվերածի նրան:**» Համարի առաջին հատվածում **քարը** գտնվում էր երկրի վրա, երկրորդ մասում այն վերևից է ընկնում: Այստեղ ենթադրվում է Քրիստոսի երկու գալուստները: Երբ Նա առաջին անգամ եկավ, հրեա առաջնորդները սայթաքեցին Նրա վրա և ջարդուփշուր եղան: Երբ Նա նորից գա, Նա իջնելու է՝ դատաստան անելու՝ ցիրուցան անելով Իր թշնամիներին փոշու պես:

21:45-46. Գլխավոր քահանաները և փարիսեցիները հասկացան, որ այդ **առակներն** անմիջականորեն իրենց են ուղղված՝ ի պատասխան Քրիստոսի իշխանության վերաբերյալ տրված իրենց հարցի: Նրանք ուզում էին անմիջապես բռնել Նրան, բայց **ժողովրդից վախեցան**, որ տակավին Հիսուսին **որպես «մարգարե էին ընդունում»:**

Ը. Հարսանեկան ընթրիքի առակը (22:1-14)

22:1-6. Հիսուսը չավարտեց Իր խոսակցությունը գլխավոր քահանաների և փարիսեցիների հետ: Հարսանեկան **ընթրիքն** առակում սիրված Իսրայելին Նա կրկին պատկերեց որպես մերժված, իսկ արհա-

մարիված հեթանոսներին՝ հյուրերի սեղանի շուրջը նստած: Նա **Երկնքի Թագավորությունը** նմանեցրեց մի **թագավորի, որ իր որդու համար հարսանիքի խնջույք արեց:** Հրավերն արվել էր երկու փուլով: Նախ՝ նախնական հրավերը, որ կատարվել էր ծառաների կողմից անհատական կարգով, կտրուկ մերժվել էր: Երկրորդ հրավերը հայտարարվեց, երբ արդեն խնջույքը պատրաստ էր: Որոշ հրավիրվածներ, որ շատ զբաղված էին իրենց արտերով և գործարքներով, արհամարհանքով վարվեցին: Ուրիշներն էլ ուժ գործադրեցին, **բռնեցին**, նախատեցին ու **սպանեցին** ծառաներին:

22:7-10. Թագավորն այնքան **բարկացավ**, որ այն **սպանողներին կոտորեց և նրանց քաղաքն այրեց:** Չեղարկելով հյուրերի առաջին ցանկը՝ նա նոր, ընդհանուր հրավեր տվեց բոլոր նրանց համար, ովքեր կկամենան գալ: Այս անգամ **հարսանյաց սրահում** ազատ տեղ չկար:

22:11-13. Մակայն **հյուրերի** մեջ հայտնրվել էր մեկը, որ **հարսանիքի հանդերձ չէր հագել:** Երբ նրան հարցրին, թե ինչու է անհամապատասխան հագուստով եկել, **նա պապանձվեց:** Թագավորն իր ծառաներին հրամայեց նրան խավարի մեջ զցել, որտեղ **կլինի լաց և ատամների կրճտում:** 13-րդ համարի և 3-րդ համարի ծառաները նույնը չեն:

22:14. Մեր Տերը եզրափակեց առակը հետևյալ խոսքերով. «**Որովհետև կանչվածները շատ են, բայց ընտրյալները՝ քիչ:**»

Ինչ վերաբերում է այս առակի իմաստին, ապա Աստված Ինքն է Թագավորը, իսկ Նրա Որդին՝ Տեր Հիսուսը: Հարսանեկան խնջույքը հարսանեկան ուրախության համապատասխան նկարագրությունն է, որ բնութագրում է Երկնքի Թագավորությունը: Այս առակում Եկեղեցին՝ որպես Քրիստոսի հարս ներկայացնելը անտեղի բարդացնում է պատկերը: Առակի գլխավոր միտքը Իսրայելին մի կողմ դնելն է, ոչ թե առանձնահատուկ հրավերը և Եկեղեցու նակատագիրը:

Հրավերի առաջին փուլը պատկերում է Հովհաննես Մկրտչին և աշակերտներին, որ

Իսրայելին բարեհաճորեն հրավիրում էին հարսանեկան խնջույքի: Բայց այդ ազգը հրաժարվեց ընդունելուց: «Բայց նրանք չուզեցին գալ» խոսքերը (հ. 3) խաչելութան ժամանակ իր ողբերգական գազալթանակետին հասավ:

Հրավերի երկրորդ փուլը ենթադրում է Ավետարանի հռչակումը հրեաներին (Գործք): Ոմանք արհամարհանքով վերաբերվեցին պատգամին: Ոմանք բռնություն գործադրեցին պատգամաբերների նկատմամբ. առաքյալների մեծ մասը նահատակվեց:

Թագավորը, արդարացիորեն բարկանալով Իսրայելի վրա, «իբ գորքն» ուղարկեց, այսինքն՝ Տիտոսին և նրա հռոմեական լեզեռնին՝ կործանելու Երուսաղեմը և նրա բնակչության մեծ մասը մ.թ. 70թ.: Նրանք «իբ գորքն» էին այն իմաստով, որ Նա դրանք՝ որպես գործիք օգտագործեց Իսրայելին պատժելու համար: Դրանք պաշտոնապես Նրանն էին, եթե նույնիսկ անձամբ Նրան չէին ճանաչում:

Այժմ Իսրայելը ազգովին դուրս է հանվել, և Ավետարանն ուղղված է հեթանոսներին՝ թե՛ վատերին, և թե՛ լավերին (Գործք 13:45-46, 28:28): Բայց յուրաքանչյուր մարդու էությունը, որ ընդունել է հրավերը, փորձվելու է: Առանց հարսանիքի հանդերձի մարդը նա է, ով դավանում է, որ պատրաստ է Թագավորության համար, բայց իրականում Հիսուս Քրիստոսում Աստծո արդարության հանդերձը երբեք չի հագել (2 Կոր. 5:21): Իրականում, հարսանիքի հանդերձ չունեցող մարդուն ներում չկա (և չի եղել): Ինչպես նշում է Ռայրին, այն օրերում հյուրերին հանդերձ տրամադրելու սովորություն կար, եթե նրանք չունեին: Այդ մարդն ակնհայտորեն չի օգտվել առաջարկվող դրույթից: Երբ նրան հարցնում են, թե նա Թագավորություն մտնելու իրավունք ունի՞, նա լռում է, որովհետև Քրիստոսին չունի (Հռ. 3:19): Նրա բաժինը դրսի խավարն է, որտեղ լինելու է լաց և ատամների կրճատում: Լացը ենթադրում է, որ դժոխքում տառապում են: Ոմանք կարծում են, որ ատամների կրճատումն նշանակությունը շարունակական ատելությունն ու ա-

պատամբությունն է Աստծո դեմ: Եթե այդպես է, ապա դա հերքում է այն պատկերացումը, որ դժոխքի կրակները մաքրագործող ազդեցություն ունեն:

14-րդ համարը վերաբերում է ամբողջ առակին, ոչ թե միայն առանց հարսանիքի հանդերձի մարդու միջադեպին: **Կանչվածները շատ են**, այսինքն՝ Ավետարանի հրավերը շատերին է ասվում, բայց **ընտրյալները՝ քիչ**: Ոմանք մերժում են հրավերը, և նույնիսկ նրանք, ովքեր դրականորեն են արձագանքում, պարզվում է, որ ստախոս են: Բոլոր նրանք, ովքեր արձագանքում են Բարի Լուրին, ընտրյալներ են: Միակ ճանապարհը, որ մեկը կարող է ասել, թե արդյոք նա ընտրված է, նրա վերաբերմունքն է Տեր Հիսուսի հանդեպ, թե ի՞նչ է անում Տեր Հիսուս Քրիստոսի համար: Ինչպես ասել է Ջենինքսը. «Բոլորն են կանչված խնջույքը վայելելու, բայց ոչ բոլորն են կամենում Տվողին վստահել, որ Նա խնջույքին համապատասխան հանդերձ կտա»:

Թ. Կեսարին և Աստծուն տրվող տուրքը (22:15-22)

22-րդ գլուխը հարցերի գլուխ է, որոնց օգնությամբ երեք տարբեր պատվիրակություններ փորձում էին Աստծո Որդուն ծուղակի մեջ գցել:

22:15-16. Այստեղ կարդում ենք **փարիսեցիների և հերովդեսականների** ձեռնարկած փորձի մասին: Այս երկու կուսակցությունները կատաղի թշնամիներ էին, բայց նրանց ժամանակավորապես համախմբել էր Փրկչի հանդեպ ընդհանուր ատելությունը: Նրանց նպատակն էր Քրիստոսին դրդել քաղաքական վտանգավոր հետեւանք ունեցող մի հայտարարություն անելու: Նրանք օգտվում էին կայսրի հավատարմության հարցի շուրջ հրեաների միջև եղած տարաձայնությունից: Ոմանք կրքոտորեն ընդդիմանում էին հեթանոս կայսրին հպատակվել: Մյուսները, օրինակ՝ հերովդեսականները, որդեգրել էին ավելի հանդուրժող տեսակետ:

22:17. Սկզբում նրանք քծնանքով հանդախտում էին՝ շեշտելով Նրա բնավո-

րության մաքրությունը, Նրա ճշմարտացիությունը և անվախությունը: Այնուհետև սաղորիչ բնույթի հարց տվեցին Նրան. **«Կայսրին հարկ տալը օրինավո՞ր է, թե՞ ոչ»:**

Եթե Հիսուսը պատասխաներ «Ոչ», ապա Նա ոչ միայն կհակադրվեր հերովդեսականներին, այլև կմեղադրվեր հռոմեական կառավարության դեմ ապստամբության մեջ: Փարիսեցիները Նրան կշեղեին ճանապարհից և Նրա դեմ մեղադրանք կբարդեին: Եթե ասեր «Այո», Նա կբախվեր տաքարյուն հրեաների ազգայնամոլ հոգու հետ: Նա կկորցներ հասարակ ժողովրդի զգալի աջակցությունը, աջակցություն, որ խոչընդոտում էր առաջնորդներին Նրանից ազատվելու իրենց ջանքերում:

22:18-19. Հիսուսը բացահայտորեն նրանց **կեղծավորներ** անվանեց, որ փորձում էին Իրեն թակարդը գցել: Ապա Նա խնդրեց ցույց տալ մի **դահեկան**, մետաղադրամ, որով հռոմեական կառավարությանը հարկ էին վճարում: Ամեն անգամ, երբ հրեաները տեսնում էին դրամի վրա կայսեր պատկերը և գիրը, նրանց համար տհաճ հիշեցում էր, որ հարկատու են և գտնվում են հեթանոսների իշխանության տակ: Դահեկանը պետք է նրանց հիշեցներ, որ հռոմեացիների տիրակալությունը համարվում էր իրենց մեղքի արդյունքը: Եթե նրանք հավատարիմ մնային Եհովային, կայսրին հարկ վճարելու հարց երբեք չէր ծագի:

22:20-21. Երբ Հիսուսը նրանց հարցրեց. **«Այս պատկերը և գիրն ո՞ւմն է»:** Նրանք ստիպված պատասխանեցին. **«Կայսրինը»:** Այն ժամանակ Տերը նրանց ասաց. **«Ուրեմն կայսրինը տվեք կայսրին, իսկ Աստծունը՝ Աստծուն»:**

Այդ հարցը նրանց համար նման էր բումերանգի: Կայսրին հարկ վճարելու հարցի միջոցով նրանք հույս ունեին Հիսուսին ծուղակը գցել: Նա բացահայտեց այն փաստը, որ նրանք Աստծո հասանելիքը չէին տալիս: Թեև դժգոհում էին, բայց կայսրի հասանելիքը տալիս էին, իսկ Աստծունը՝ անտեսում: Նա, Ով կանգնած էր նրանց առջև, Աստծո Էության ստույգ արտահայտությո-

յունն էր (Եբր. 1:3), իսկ նրանք թերացան Նրան Իր օրինական տեղը տալու մեջ:

Հիսուսի պատասխանը ցույց է տալիս, որ հավատացյալը երկբաղաքացիություն ունի: Նա պարտավոր է հնազանդել և նյութապես աջակցել մարդկային իշխանություններին: Նա չպետք է հայհոյի իշխանավորներին և ոչ էլ կառավարությունը տապալելու փորձ անի: Նա պետք է նրանց համար աղոթի: Որպես երկնքի քաղաքացի՝ նա պարտավոր է Աստծուն հնազանդել, եթե հակասություն առաջանա Աստծուն և իշխանություններին հնազանդելու միջև, նա առաջին հերթին պետք է Աստծուն հավատարիմ լինի (Գործք 5:29):

Մեջբերելով 21-րդ համարը՝ մեզնից շատերը շեշտում են այն մասը, որ վերաբերում է կայսրին, և հեշտությամբ բաց են թողնում Աստծուն վերաբերող մասը, այսինքն՝ մենք էլ այն նույն սխալն ենք անում, որի համար Հիսուսը դատապարտեց փարիսեցիներին:

22:22. Երբ փարիսեցիները **լսեցին** Նրա պատասխանը, հասկացան, որ պարտվել են: Նրանք միայն զարմացան և զնացին:

Ժ. Մադուկեցիները և մեռելների հարության մասին նրանց հանելուկը (22:23-33)

22:23-24. Ինչպես արդեն նախապես նշվել է, սադուկեցիներն այդ ժամանակի ազատական աստվածաբաններն էին, որ հերքում էին մարմնի հարությունը, հրեշտակների գոյությունը և հրաշքները: Ի դեպ, նրանց հերքումներն ավելի շատ էին, քան պնդումները:

Նրանց ներկայացուցիչները Հիսուսի մոտ **եկան** մի հորինված պատմությամբ, որպեսզի ծաղրեն հարության գաղափարը: Նրանք Նրան հիշեցրին մահացած եղբոր այրու հետ ամուսնանալու օրենքի մասին (2 Օր. 25:5): Այդ օրենքի համաձայն՝ եթե իրայելացին առանց **զավակի** մեռնի, ապա **նրա եղբայրը** պետք է ամուսնանար այրու հետ, որպեսզի պահպանի նրա սերունդն Իսրայելում և ընտանիքի շրջանակներում պահի ժառանգությունը:

22:25-28. Նրանց հանելուկի մեջ խոսվում էր մի կնոջ մասին, որ կորցրել էր իր ամուսնուն, այնուհետև ամուսնացել էր նրա եղբայրներից մեկի հետ: Երկրորդ եղբայրը մահանում է, ուստի նա ամուսնանում է երրորդի և այդպես՝ մինչև յոթերորդը: Վերջապես, **կինն էլ մեռավ:** Այնուհետև հաջորդեց այն հարցը, որի նպատակն էր նվաստացնել Նրան, Ով հենց Ինքն է հարությունը (Հովհ. 11:25). «**Հիմա, հարության ժամանակ այն յոթից որի՞ կինը պիտի լինի նա, քանի որ բոլորն էլ նրան որպես կին ունեցան**»:

22:29. Հիմնականում նրանք պնդում էին, որ հարության գաղափարն անհաղթահարելի դժվարություններ է ստեղծում, նշանակում է՝ այն խելամիտ չէ, հետևաբար և այն իրականություն չէ: Հիսուսը նրանց պատասխանեց, որ դժվարությունները վարդապետության մեջ չեն, այլ նրանց մտածելակերպի, նրանք ո՛չ **Գրքերը** գիտեին և ո՛չ էլ՝ **Աստծո գորությունը:**

Առաջին հերթին՝ նրանք **Գրքերը** չգիտեին: Աստվածաշունչը երբեք չի խոսում, որ ամուսին-կին հարաբերությունները Երկրնքում շարունակվելու են: Թեև տղամարդկանց՝ որպես տղամարդ են ճանաչելու, իսկ կանանց՝ որպես կին, բայց բոլորն էլ հրեշտակների նման են լինելու այն իմաստով, որ նրանք ո՛չ կին են առնելու և ո՛չ էլ ամուսնության են տրվելու:

Երկրորդ՝ նրանք **Աստծո գորությունը** չգիտեին: Եթե Նա կարողացել էր հողից մարդ արարել, մի՞թե չէր կարող հեշտությամբ հողից բարձրացնել նրանց, ովքեր մահացել են, և նրանց մահկանացու մարմինները վերափոխել փառավորյալ մարմինների:

22:30-32. Այնուհետև, Տեր Հիսուսը Գրություններից ներկայացրեց այդ փաստարկը, որպեսզի ցույց տա, որ հարությունն ուղղակի անխուսափելի է: Ելից 3:6-ում Աստված Իր մասին խոսում է որպես **Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված:** Եվ Հիսուսը մատնանշեց, որ «**Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ կենդանիների**»: Աստված այդ մարդկանց հետ ուխտ էր կապել,

բայց նրանք մահացել էին մինչև այդ ուխտերի ամբողջությամբ կատարվելը: Ինչպե՞ս կարող է Աստված Իր մասին խոսել որպես երեք մարդկանց Աստված, որոնց մարմինները գտնվում են գերեզմանում: Ինչպե՞ս կարող է Նա, Ով չի խախտում Իր խոտումները, կատարել դրանք այն մարդկանց համար, ովքեր վաղուց մահացել են: Կա միայն մեկ պատասխան՝ հարությունը:

22:33. Չարմանալի չէ, որ **ժողովուրդը այս լսելով, զարմացավ Նրա վարդապետության վրա:** Մենք էլ ենք զարմանում:

Ի. Մեծ պատվիրանը (22:34-40)

22:34-36. **Երբ փարիսեցիները լսեցին, որ Հիսուսն իրենց հակառակորդ սաղուկեցիներին պապանձեցրեց,** Նրա մոտ եկան հարցազրույցի: Նրանց խոսնակը՝ **Օրենքի ուսուցիչը**, խնդրեց Հիսուսին առանձնացնել **Օրենքի մեծ պատվիրանը:**

22:37-38. Հիսուսը վարպետորեն ամփոփեց մարդու պարտականություններն առ Աստված առաջին և մեծ պատվիրանի մեջ. «**Միբի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով և քո ամբողջ մտքով**»: Մարկոսն ավելացնում է. «և քո ամբողջ գորությամբ» (Մարկ. 12:30): Մա նշանակում է, որ մարդու առաջին պարտականությունն է սիրել Աստծուն իր ամբողջ էությամբ: Ինչպես արդեն նշվել է, սիրտը խոսում է հուզական բնույթի մասին, հոգին՝ կամքի, միտքը՝ մտավոր, և ուժը՝ ֆիզիկական բնույթի մասին:

22:39-40. Այնուհետև Հիսուսն ավելացրեց, որ մարդու երկրորդ պարտականությունը՝ **սիրի՛ր դրացուդ քո անձի պես:** Բարնար նշել է. «Աստծո և մարդու նկատմամբ սերն իր մեջ է ամփոփում ամբողջ կրոնը, և այդ սիրո դրսևորումը փափագել են Մովսեսը, մարգարեները, Փրկիչը և առաքյալները»: Մենք պետք է հաճախակի խորհենք այս խոսքերի մասին. «**Միբի՛ր դրացուդ քո անձի պես**»: Մենք պետք է մտածենք՝ որքան շատ ենք ինքներս մեզ սիրում, ինչքան շատ բան ենք անում մեր անձի հարմարավետության և խնամքի համար: Այնուհետև պետք է փորձենք պատ-

կերացնել, թե ինչ կլիներ, եթե այդ սերը մենք տարածեինք մեր դրացիների վրա: Իսկ հետո այդպես անենք: Նման վարքագիծը բնական չէ, այլ գերբնական: Միայն վերստին ծնունդ ունեցողները կարող են դա անել, եթե թույլ տան Քրիստոսին, որ իրենց միջոցով դա իրագործի:

Լ. Դավթի Որդին՝ Դավթի Տերն Է (22:41-46)

22:41-42. Մինչ փարիսեցիները դեռևս ցնցված էին Օրենքի ուսուցչին տված Հիսուսի պատասխանից, Նա նրանց առջև դժվար խնդիր դրեց. «**Ի՞նչ եք կարծում Քրիստոսի մասին. Նա ո՞ւմ Որդին է:**»:

Փարիսեցիների մեծամասնությունը չէին հավատում, որ Տեր Հիսուսը Քրիստոսն է. նրանք տակավին Մեսիային էին սպասում: Այնպես որ Հիսուսը նրանց չհարցրեց. «Ի՞նչ եք կարծում Իմ մասին» (չնայած, իհարկե, դա նույնպես նկատի ուներ): Նա պարզապես հարցրեց, ո՞ւմ Որդին է լինելու Մեսիան, երբ Նա հայտնվի:

Նրանք ճիշտ պատասխանեցին, որ Մեսիան **Դավթի** հետնորդն է լինելու:

22:43-44. Այնուհետև Տեր Հիսուսը մեջբերում կատարեց Մղմ. 110:1, որտեղ Դավիթն ասել է. «**Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստիր Իմ աջ կողմը, մինչև Քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ:**» Առաջին «ՏԵՐ» բառը վերաբերում է Հայր Աստծուն, իսկ երկրորդը՝ Մեսիային: Նշանակում է՝ Դավիթը Մեսիայի մասին խոսում էր որպես Իր Տիրոջ:

22:45. Այժմ Հիսուսը նրանց հարց ուղղեց. «**Եթե Դավիթը Նրան Տեր է կոչում, Նա ինչպե՞ս է նրա որդին:**» Պատասխան. Մեսիան թե՛ Դավթի Տերն է, թե՛ Դավթի Որդին, և՛ Աստված է, և՛ Մարդ: Որպես Աստված՝ Նա Դավթի Տերն է, որպես Մարդ՝ Նա Դավթի Որդին է:

Եթե փարիսեցիներն ընդունեին ուսուցումը, նրանք կհասկանային, որ Հիսուսը Մեսիան էր՝ Դավթի Որդին՝ Մարիամի գծով, և Աստծո Որդին, որ հայտնվեց Իր խոսքերով, գործերով և ճանապարհներով:

22:46. Բայց նրանք հրաժարվեցին տես-

նելուց: Նրա իմաստությամբ բոլորովին շփոթված՝ նրանք դադարեցրին հարցերով Նրան ծուղակը գցելու փորձերը: Հետագայում պիտի կիրառեին մեկ այլ մեթոդ՝ բռնությունը:

Խ. Չգուշացում, որպեսզի գործերը չհակասեն խոսքերին (23:1-12)

23:1-4. Այս գլխի սկզբնական համարներում Փրկիչը պատվիրում է ժողովրդին և **Իր աշակերտներին** զգուշանալ **դպիրներից և փարիսեցիներից:** Այդ առաջնորդները նստել էին Մովսեսի աթոռի վրա, այսինքն սովորեցնում էին Մովսեսի օրենքը: Ընդհանրապես նրանց ուսուցումները հուսալի էին, բայց գործնական կյանքում ոչ: Նրանց համոզումները ավելի լավն էին, քան նրանց վարքագիծը: Մա հենց այն դեպքն է, երբ խոսքերը հակասում են գործերին: Ուստի Տերն ասաց. «**Ամեն ինչ, որ ձեզ հրահանգեն՝ պահե՛ք և արե՛ք, բայց նրանց գործերի պես մի՛ արեք, որովհետև ասում են, բայց չեն անում:**»:

Նրանք ծանր պահանջներ էին դնում (հավանաբար Օրենքի տառի ճշգրիտ կատարումը), բայց որևէ մեկին չէին օգնում տանելու այդ անտանելի բեռը:

23:5. Նրանք կատարում էին բոլոր կրոնական ծիսակատարությունները, բայց ոչ սրտանց, այլ մարդկանց երևալու համար: Օրինակի համար նրանք օգտագործում էին գրապանակները: Երբ Աստված պատվիրեց Իսրայելին Իր խոսքերը որպես նշան կապել ձեռքերին և աչքերի միջև՝ ճակատին (Ել. 13:9, 16, 2 Օր. 6:8, 11:18), Նա նկատի ուներ, որ Օրենքը պետք է մշտապես նրանց առջև լինե՛ր՝ ղեկավարելով նրանց գործունեությունը: Նրանք, հոգևոր այս հրահանգը կրճատելով, դարձրել էին տառացի, ֆիզիկական իմաստով: Մուրբգրային հատվածները դնելով կաշվե պատիճի մեջ՝ նրանք դրանք կապում էին ճակատին կամ ձեռքին: Նրանք մտահոգված չէին Օրենքին հնազանդելու մասին, քանի դեռ կրում էին ծիծաղելի լայն գրապանակները, որ ցույց էր տալիս նրանց գերհոգևորությունը: Օրենքը հրեաներին նաև պատվիրում էր հանդերձ-

ների եզրերին ծոպեր շինել կապույտ ժապավենով (Թվ. 15:37-41, 2 Օր. 22:12): Այդ տարբերակիչ նախշը պետք է նրանց հիշեցնե՞ր, որ նրանք հատուկ ժողովուրդ են, որ իրենց ընթացքով պետք է տարբերվեն մյուս ազգերից: Փարիսեցիներն անտեսել էին այդ կարևոր հոգևոր դասը և բավարարվում էին երկար ծոպեր կրելով:

23:6-8. Նրանք ցույց էին տալիս իրենց մեծամտությունը՝ գրավելով պատմավոր տեղերը **ընթրիքների ժամանակ և ժողովարաններում:** Նրանք փայփայում էին իրենց եսը **հրապարակներում բարևներով,** և հատկապես ուրախանում էին, երբ նրանց «**Ռաբբի**» էին կոչում (որ նշանակում է «իմ մեծ») կամ «ուսուցիչ»):

23:9-10. Այստեղ Տերը գգուշացնում է Իր աշակերտներին չօգտագործել տարբերակիչ տիտղոսներ, որոնք պիտի վերապահվեն միայն Աստծուն: Մեզ չպետք է ռաբբի կոչեն որպես տարբերակիչ տիտղոս, որովհետև կա մեկ **Ռուսուցի՝ Քրիստոսը:** Մենք ոչ մեկին չպետք է հայր կոչենք, մեր **Հայրը** Աստված է: Վեպոնն այսպես է մեկնաբանում այս համարների էությունը.

«Սա Աստծո հետ մարդու էական փոխհարաբերությունների հռչակագիրն է: Երեք բաներ են քրիստոնյային բնորոշում. Ո՛վ է նա, ինչի՞ է հավատում և ի՞նչ է անում. վարդապետությունը, փորձառությունը և գործելակերպը: Մարդն իր հոգևոր գոյության համար կարիք ունի երեք բաների՝ կյանքի, հրահանգի, առաջնորդության. սա ճիշտ այն է, որ մեր Տերը Ավետարանում հռչակեց վեց բառով. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը...»: Ոչ մեկին որպես Հայր մի՛ ընդունեք, որովհետև ոչ մի մարդ չի կարող հաղորդել կամ պաշտպանել հոգևոր կյանքը, մարդկանցից ոչ մեկին անսխալական ուսուցչի աստիճան մի՛ տվեք, ոչ ոքի թույլ մի՛ տվեք, որ ստանձնի հոգևոր տնօրենի պաշտոնը, դուք նույնպես իրավունք ունեք Աստծո և Քրիստոսի հետ ունենալ նույն մտերիմ հարաբերությունը, ինչպես ցանկացած այլ մարդ»:⁴²

Փրկչի խոսքերի պարզ նշանակությունն

այն է, որ Երկնքի Թագավորությունում բոլոր հավատացյալները եղբայրություն են կազմում, որտեղ տարբերակիչ տիտղոսների տեղ չկա՝ մեկին մյուսից վեր դասելով: Պարզապես մտածե՛ք, ինչպիսի տիտղոսներ գոյություն ունեն այսօր քրիստոնեության մեջ. «Պատվելի», «Վերապատվելի», «Հայր» և բազմաթիվ այլ: Նույնիսկ արտաբուստ անվնաս թվացող «դոկտոր»-ը լատիներեն նշանակում է «ուսուցիչ»: (Այս նախազգուշացումները հստակորեն վերաբերում են *հոգևորներին*, այլ ոչ թե բնական, մասնագիտական կամ կրթական հարաբերություններին: Օրինակ՝ այն չի արգելում երեխային իր ծնողին «հայր» կոչել, ոչ էլ հիվանդին՝ իրենց բժշկին «դոկտոր» կոչել): Երբ խոսքը վերաբերում է առօրյա հարաբերություններին, ապա գործում է հետևյալ կանոնը. «յուրաքանչյուրին վճարեք պետք եղածը,... ում պատիվ՝ պատիվը» (Հռ. 13:7):

23:11-12. Այստեղ մեկ անգամ ևս երևում է երկնքի Թագավորության արմատապես տարբերվող բնույթը, այսինքն՝ ճշմարիտ մեծությունը բոլորովին հակառակ է մարդկային պատկերացումներին: Տեր Հիսուսն ասաց. «**Եվ նա, որ ձեր մեջ ամենից մեծն է, ձեր սպասավորը պիտի լինի: Եվ ով իր անձը բարձրացնի, պիտի խոնարհվի. և ով իր անձը խոնարհեցնի, պիտի բարձրանա**»: Ճշմարիտ մեծությունը խոնարհվում է ծառայելու: Իրենց անձերը բարձրացնող փարիսեցիները պիտի ցածրանան: Ճշմարիտ աշակերտները, ովքեր խոնարհեցնում են իրենց, ժամանակին պիտի բարձրանան:

Ծ. «Վա՛յ» դպիրներին և փարիսեցիներին (23:13-36)

Այնուհետև Տեր Հիսուսն ութ անգամ «վա՛յ» է արտաբերում Իր օրերի կրոնական հպարտ կեղծավորներին: Դա անե՞ծք չէր, այլ ավելի շուտ ափսոսանքի արտահայտություն էր՝ ուղղված իրենց ճակատագրին, որ նման է «ափսո՛ն, ավա՛ղ» արտահայտությանը:

23:13. Առաջին «վա՛յ»-ն ուղղված էր նրանց

խստասրտությանը, որ խոչընդոտում էին մյուսներին: Նրանք իրենք էին հրաժարվել մտնել **Թագավորություն** և համառորեն խանգարում էին մյուսներին, որ **մտնեն**: Տարօրինակ է, բայց կրոնական առաջնորդները հաճախ հենց իրենք են հանդես գալիս շնորհաց Ավետարանի ակտիվ հակառակորդները: Նրանք կարող են սիրով հանդուրժել ամեն բան, բացի փրկության Բարի Լուրից: Սովորական մարդը չի ուզում լինել Աստծո շնորհի առարկան և չի էլ ուզում, որ Աստված ուրիշներին հայտնի:

23:14. Երկրորդ «վայ»-ը⁴³ նրանց քննադատում է **որբևայրիների տները** յուրացնելու և ձևական **երկար աղոթքներով** թաքնվելու համար: Ժամանակակից որոշ աղանդներ օգտագործում են նմանատիպ հնարք՝ համոզելով տարեց որբևայրիներին, հաճախ չհաստատված հավատացյալներին իրենց ունեցվածքը «եկեղեցուն» կտակել: Բարեպաշտության նման հավակնորդներն **ավելի մեծ դատապարտություն պիտի ընդունեն**:

23:15. Երրորդ մեղադրանքը նրանց սխալ նպատակի ծանայող ջանքերն են: Նրանք անցնում էին աներևակայելի տարածություններ, որ գոնե մեկ հոգու նորահավատ **դարձնեին**, բայց դրանից հետո նրան իրենցից **երկու անգամ ավելի** չար էին դարձնում: Նման նախանձախնդրության ժամանակակից համանմանությունն աղանդների կեղծ եռանդն է: Մի խումբ պատրաստ է 700 դուռ թակել, որպեսզի գոնե մեկ հոգու հասնեն իրենց գործի համար, բայց վերջնական արդյունքը չարիք է: Ինչ-որ մեկն ասել է. «Դարձի եկածների մեծ մասը դառնում է առավել այլասերված»:

23:16-22. Չորրորդ՝ Տերը նրանց մեղադրեց փաստաբանության կեղծ կամ միտումնավոր անազնիվ դատողության մեջ: Նրանք ստեղծել էին հիմնավորումների մի կեղծ համակարգ, որպեսզի խուսափեին երդման համար վճարումից: Օրինակ՝ նրանք սովորեցնում էին, որ եթե **տաճարով** երդվես, կարող ես երդումը խախտել, բայց եթե **տաճարի ոսկով** երդվես, պետք է խոստումը կատարես: Նրանք ասում էին,

որ գոհասեղանի վրայի ընծայով երդվելը պարտադիր է, իսկ դատարկ գոհասեղանով երդվելը ոչ մի բան էլ չէ: Այսպիսով, նրանք ոսկին Աստծուց բարձր էին գնահատում (տաճարը Աստծո տունն էր), իսկ գոհասեղանի ընծան (նյութական արժեքի մի տեսակ)՝ գոհասեղանից վեր: Նրանք ավելի շատ հետաքրքրված էին նյութականով, քան հոգևորով: Նրանք նախընտրում էին ստանալ (ընծա), քան թե տալը (գոհասեղանը՝ տալու տեղը):

Դիմելով նրանց՝ որպես **կույր առաջնորդների**, Հիսուսը մերկացրեց նրանց կեղծիքը: Տաճարի ոսկին ձեռք էր բերել հատուկ արժեք միայն այն պատճառով, որ այն կապված էր Աստծո բնակության հետ: Հենց գոհասեղանն էր, որ ընծային արժեք էր տալիս: Մարդիկ, ովքեր կարծում են, որ ոսկին ինքնին արժեք ունի, կույր են. այն արժեքավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ օգտագործվում է Աստծո փառքի համար: Մարմնավոր շարժառիթով տրված նվերներն արժեք չունեն, սակայն նվերները, որոնք տրվում են Տիրոջը կամ Նրա անվան համար, հավիտենական արժեք ունեն:

Փաստորեն, փարիսեցիներն ինչ էլ որ երդվեին, այդ երդման մեջ Աստված էր ներգրավված, և նրանք պարտավոր էին կատարել այդ երդումը: Մարդը չի կարող փախչել իր պարտականություններից ճշմարտանման հիմնավորումներով: Երդումները պարտավորեցնող են, և խոստումները պետք է կատարվեն: Անիմաստ է դիմել տարբեր ձևական մեթոդների, որպեսզի խուսափեն պարտավորությունների կատարումից:

23:23-24. Հինգերորդ «վայ»-ն իմաստագրված ծեսերի դեմ է: **Դպիրները և փարիսեցիները** շատ բծախնդիր էին իրենց անեցրած խոտաբույսերից Տիրոջը տասանորդ տալու հարցում: Տեր Հիսուսը նրանց չդատապարտեց, որ հոգ էին տանում հնազանդության այդքան ճշմարտման ներամասնության մասին, բայց Նա խստորեն քննադատեց նրանց ծայրահեղ անսկզբունքայնությունը, երբ պետք էր ցուցաբերել **արդարադատություն, ողորմություն** և հա-

վատարմություն ուրիշների նկատմամբ: Օգտագործելով պատկերավոր խոսքն անգուգական արտահայտչականությամբ՝ Հիսուսը նրանց բնութագրեց որպես **մժեղը քամող, բայց ուղտը՝ կույ տվող**: Մժեղը մի փոքրիկ միջատ է, որ հաճախ ընկնում է քաղցր գինով լի բաժակի մեջ, որը քամում էին ատամների միջով գինին ներծծելով: Որքան ծիծաղելի է այդքան աննշանի մասին անհանգստանալը, իսկ հետո հապշտապ կույ տալ Պաղեստինի ամենամեծ անմաքուր կենդանուն: Փարիսեցիները չափից դուրս անհանգստանում էին մանրուքներով, բայց կույր էին այնպիսի սոսկայի մեղքերի նկատմամբ, ինչպիսիք են կեղծավորությունը, անագնավությունը, կարծրատրտությունը և ազահությունը: Նրանք կորցրել էին իրենց համամասնության գագու մը:

23:25-26. Վեցերորդ «վայ»-ը վերաբերում է արտաքին տեսքի պահպանմանը: Կրոնական արտաքին ձևերը խստությամբ պահող փարիսեցիներն **ազահությամբ և անիրավությամբ**⁴⁴ լցված սրտեր ունեին: Նրանք նախ **բաժակի և ամանի ներսի կողմը** պիտի մաքրեին, այսինքն՝ նրանց սրտերը պետք է մաքրվեն ապաշխարության և հավատի միջոցով, և միայն դրանից հետո ընդունելի կլինեն նրանց արտաքին վարքագիծը: Տարբերություն կա մեր անձի և անհատականության միջև: Մենք հակված ենք ընդգծել մեր անհատականությունն այնպես, որ ուրիշները մեր մասին մտածեն, ինչպես մենք ենք ուզում: Աստված ընդգծում է մեր անձը՝ այն, ինչ մենք իրականում ենք: Աստված ուզում է, որ մեր ներքին մարդու մեջ ճշմարտություն լինի (Մղմ. 51:6):

23:27-28. Յոթերորդ «վայ»-ը հարվածում է արտաքին երևույթի պահպանմանը: Տարբերությունն այն է, որ վեցերորդ «վայ»-ը մտրակում է թաքնված ազահությունը, իսկ յոթերորդը՝ դատապարտում է թաքնված **կեղծավորությունը և անօրենությունը**:

Սովորաբար գերեզմանները սպիտակեցնում էին այնպես, որ հրեա մարդը պատահաբար չդիպչեր դրան և դրանով ծիսակա-

նորեն չպղծվեր: Հիսուսը դպիրներին և փարիսեցիներին նմանեցնում է այդ **սպիտակեցրած գերեզմաններին**, որոնք դրսից մաքուր էին երևում, իսկ ներսը լցված էին նեխած մնացորդներով: Մարդիկ կարծում էին, որ կրոնական առաջնորդների հետ շփվելը կնպաստի իրենց սրբագործմանը, բայց իրականում պղծվում էին, քանի որ նրանք կեղծավորությամբ ու անօրենությամբ լի էին:

23:29-30. Վերջին «վայ»-ն ուղղված է ընդդեմ այն բանի, որ մենք արտաքին հարգանքի պիտակի ներքո կարող ենք ներքուստ մարդասպան լինել: **Դպիրները և փարիսեցիները** ձևացնում էին, որ հարգում են հինկտակարանյան **մարգարեներին**՝ շինելով կամ վերանորոգելով նրանց **շիրմաքարերը** և նրանց կոթողները ծաղկեպսակներով զարդարելով: Նրանց հիշատակին նվիրված ելույթներում, նրանք ասում էին, որ իրենց նախահայրերի հետ մասնակից **չէին լինի մարգարեների** սպանությանը:

23:31. Հիսուսը նրանց ասաց. **«Հեռաբար դուք վկայում եք ձեր մասին, որ դուք մարգարեներին սպանողների որդիներն եք»**: Իսկ ինչպե՞ս էին դրա մասին նրանք վկայում: Գրեթե ակնհայտ է նախորդ համարից, որ նրանք իրենց զատում էին իրենց հայրերից, ովքեր սպանել էին մարգարեներին: Նախ՝ ընդունում էին, որ իրենց հայրերը, որոնց ֆիզիկական որդիներն էին իրենք, մարգարեների արյուն են հեղել: Բայց Հիսուսն այստեղ կիրառեց **«որդիներ»** բառը՝ մտքում ունենալով այն մարդկանց, որոնց կարելի էր նույն ձևով բնութագրել: Նա գիտեր, որ թեպետ նրանք զարդարում էին մարգարեների գերեզմանները, միաժամանակ Իր մահն էին դավադրում: Երկրորդ՝ մեռած մարգարեներին հարգանք մատուցելով իսկ, նրանք ասում էին. «Մենք սիրում ենք միայն մեռած մարգարեներին»: Այս առումով նրանք նույնպես իրենց հայրերի որդիներն էին:

23:32. Այնուհետև Հիսուսն ավելացրեց. **«Ուրեմն լցրե՛ք ձեր հայրերի չափը»**: Մարգարեներին կյանքից զրկելով՝ հայրերը

լցրել էին սպանության բաժակը: Դպիրներն ու փարիսեցիներն այն շուտով լցնելու էին մինչև եզրը՝ սպանելով Տեր Հիսուսին և Նրա աշակերտներին՝ իրենց հայրերի սկսած գործը մի սարսափելի գագայթնակետի հասցնելով:

23:33. Այս առիթով Աստծո Որդին այսպիսի որոտընդոտ խոսքեր արտասանեց. **«Օձեր, իժերի՛ ծնունդներ, ինչպե՛ս պիտի փախչեք դժոխքի դատաստանից»:** Արդյոք կարո՞ղ էր Մարմնավորված Սերն այդպիսի խայթող խոսքեր ասել: Այո՛: Որովհետև իսկական սերը պետք է լինի նաև արդար և սուրբ: Հանրաճանաչ պատկերացումը, թե Հիսուսը մի անմեղ բարեփոխիչ էր, անընդունակ որևէ զգացումի՛ բացի սիրուց, աստվածաշնչային չէ: Սերը կարող է լինել անսասան, բայց միշտ պետք է արդար լինի:

Կարևոր է հիշել, որ դատապարտության այս խոսքերը նետվեցին կրոնական առաջնորդներին, այլ ոչ թե հարբեցողներին և անբարոյականներին: Էկումենիկ դարում, երբ որոշ ավետարանական քրիստոնյաներ ուժերը միավորում են Քրիստոսի խաչի հայտնի թշնամիների հետ, լավ կլիներ խորհել Հիսուսի օրինակի մասին և հիշել այն խոսքերը, որոնք Հեռու ասաց Հովսեփասին. «Պե՞տք էր, որ օգնեիր անաստվածին ու սիրեիր Տիրոջն ասողներին» (2 Մն. 19:2):

23:34-35. Հիսուսը ոչ միայն կանխատեսեց Իր մահը, Նա դպիրներին և փարիսեցիներն հստակորեն ասաց, որ Նրա ուղարկածներից նրանք կսպանեն ոմանց՝ **մարգարեներին, իմաստուններին և Օրենքի վարդապետներին:** Նահատակությունից խուսափողներից ոմանց պիտի ծեծեն **ժողովարանների մեջ և քաղաքից քաղաք** հալածեն: Այսպես Իսրայելի կրոնական առաջնորդներն իրենց վրա են դիզելու նահատակության պատմության ամբողջ մեղքերը: Նրանց վրա է **գալու ամեն արդար արյուն, որ երկրի վրա թափվել է... Արելից... մինչև Չաքարիայի արյունը**, ում սպանության մասին գրված է 2 Մն. 24:20-21-ում՝ ըստ եբրայական Աստվածաշնչի գրքերի հաջորդականության վերջին գրք-

քում: (Մա ՀԿ-ի գրքի հեղինակ Չաքարիան չէ):

23:36. Անցյալի ամբողջ մեղքը պիտի գա այս **սերնդի** կամ ազգի վրա, որոնց դիմում էր Քրիստոսը, կարծես ամբողջ թափված արյունը հավաքվեց և Փրկչի անմեղ մահվան մեջ հասավ իր գագայթնակետին: Պատիժների հեղեղը թափվելու է մի ազգի վրա, որն առանց պատճառի ասեց իր Մեսիային և Նրան գամեց ոճրագործի խաչի վրա:

Կ. Հիսուսի ողբը Երուսաղեմի վրա (23:37-39)

23:37. Նշանակալից է, որ Տեր Հիսուսի վայերը պարունակող գլուխը (որ մյուս բոլոր գլուխներից ավելի երկար է) ավարտվում է Նրա արցունքներով: Փարիսեցիներին ուղղված սուր մեղադրանքներից հետո Նա դառնագին ողբում է հնարավորությունը կորցրած քաղաքի վրա: Կրկնվող անունը՝ **«Երուսաղեմ, Երուսաղեմ»**, ներծծված է աննկարագրելի զգացմունքներով: Այդ քաղաքը սպանել էր **մարգարեներին** և քարկոծել էր Աստծո ուղարկածներին, բայց դեռ Տերը սիրում էր նրան և հաճախ ուզում էր պաշտպանել, և նրա զավակներին սիրով հավաքել Իր մոտ, **ինչպես հավն է հավաքում ձագերին իր թևերի տակ**, բայց նա **չուզեց**:

23:38. Իր ողբի վերջում Տեր Հիսուսն ասաց. **«Ահա ձեր տունը ավերակ է թողնելով մեզ»:** Առաջին հերթին, տունը այստեղ տաճարն է, բայց կարելի է այստեղ ներառել թե՛ Երուսաղեմ քաղաքը, թե՛ ազգը: Քրիստոսի մահվան և Նրա երկրորդ գալուստյան միջև լինելու է ժամանակամիջոց, երբ անհավատ Իսրայելը Նրան չի տեսնելու (հարությունից հետո Նրան տեսել են միայն հավատացյալները):

23:39. Այս համարը ակնկալում է երկրորդ գալուստը, երբ Իսրայելի հավատացյալ մասը կընդունի Քրիստոսին՝ որպես իրենց Մեսիա Թագավորի: Այդ ընդունումը թաքնված է այս խոսքերի մեջ. **«Օրհնյալ է Նա, ով գալիս է Տիրոջ անունով»:**

Այստեղ ոչ մի ակնարկ չկա, որ Քրիստոսին սպանողները Նրան ընդունելու երկ-

րորդ հնարավորություն են ունենալու: Նա խոսում էր Իսրայելի մասին այլաբանորեն՝ նրա բնակիչների և ընդհանուր առմամբ Իսրայելի մասին: Հաջորդ անգամ, երբ Երուսաղեմի բնակիչները Նրա մահից հետո Նրան տեսնեն, պիտի այն ժամանակ լինի, երբ նրանք Նրան պիտի նայեն, Ում խոցեցին. սուգ պիտի անեն նրա վրա միամորթի սուգի պես (Չաք. 12:10): Հրեական հաշվարկներով չկա ավելի դառը ողբ, քան ողբը միածին որդու վրա:

XIII. ԹՎԳՎՎՈՐԻ ԽՈՍՔԸ ԶԻԹԵՆՅԱՑ ԼԵՌԱՆ ՎՐԱ (24-25-րդ գլ.)

24-25-րդ գլուխները ձևավորում են այսպես կոչված Ձիթենյաց քննախոսությունը, որն իր անվանումը ստացել է շնորհիվ այն կարևոր հայտարարության, որ տվեց Ձիթենյաց լեռան վրա: Այս գրույցն ունի բացարձակ մարգարեական բնույթ, այն մատնացույց է անում Մեծ նեղության շրջանը և Տիրոջ երկրորդ գալուստը: Այն հիմնականում, բայց ոչ լիովին, վերաբերում է Իսրայելի ժողովրդին: Գործողության վայրը, ակնհայտորեն, Պաղեստինն է. օրինակ՝ «այն ժամանակ Հրեաստանում եղողները թող լեռները փախչեն» (24:16): Դրա միջավայրը հստակ հրեական է, օրինակ՝ «Աղոթե՛ք, որ ձեր փախուստը ձմռանը չլինի, ոչ էլ՝ շաբաթ օրը» (24:20): Կատարված հղումը ընտրյալների մասին (24:22), պետք է հասկանալ որպես Աստծո *ընտրյալ հրեաները*, այլ ոչ թե Եկեղեցին: Եթե Եկեղեցու մասին լուսաբանություն փնտրենք, ապա նրա մասին մենք չենք գտնի ո՛չ մարգարեական գրքերում և ո՛չ էլ պատմած առակներում:

Ա. Հիտուը կանխատեսում է տաճարի կործանումը (24:1-2)

Շարադրանքն սկսում է բազմանշանակ հայտարարությամբ, որ **Հիտուը, տաճարից դուրս գալով, գնում էր**: Նրա գնալու ուղղությունը շատ մեծ նշանակություն ունի, եթե հաշվի առնենք այն խոսքերը, որ Նա ասել էր քիչ առաջ. «... Ահա ձեր տունը

ավերակ է թողնվում ձեզ» (23:38): Մա մեզ հիշեցնում է Եզեկիելի նկարագրած հեռացող փառքը (Եզ. 9:3, 10:4, 11:23):

Աշակերտները ուզում էին, որ Հիտուսն իրենց հետ միասին հիանար տաճարի ճարտարապետական գեղեցկությամբ: Նրանց գրավում էր ոչ թե հավիտենականը, այլ անցողիկը, ավելի մտահոգված էին սովորով, քան էությամբ: Հիտուսը զգուշացրեց, որ այդ շինությունը լիովին քանդվելու է, այնպես որ **քարը քարի վրա չի մնալու**: Տիտոսը գուր էր փորձում տաճարը փրկել, քանի որ նրա զինվորներն այրեցին շինությունը՝ այսպես կատարելով Քրիստոսի մարգարեությունը: Երբ կրակը հալեցրեց ոսկե նախշերը, հեղուկ մետաղը քարերի միջով ներքև հոսեց: Որպեսզի ձեռք բերեին դրանք, զինվորները ստիպված էին քարերը մեկ առ մեկ հանել ճիշտ այնպես, ինչպես կանխատեսել էր մեր Տերը: Այդ պատիժը կատարվեց մ.թ. 70թ.-ին, երբ հռոմեացիները Տիտոսի գլխավորությամբ պաշարեցին Երուսաղեմը:

Բ. Մեծ նեղության առաջին կեսը (24:3-14)

24:3. Այն բանից հետո, երբ Հիտուսը **գնաց Ձիթենյաց լեռը, աշակերտները Նրան առանձին մոտեցան** և երեք հարց տվեցին Նրան.

- 1. Ե՛րբ են այս բաները տեղի ունենալու,** այսինքն ե՛րբ է տաճարն ավերվելու:
- 2. Ի՞նչն է լինելու Նրա գալստյան նշանը,** այսինքն ինչպիսի՞ գերբնական երեվոյթներ պիտի նախորդեն Նրա երկիր վերադառնալու ժամանակ, որպեսզի Թագավորություն հաստատի:
- 3. Ի՞նչն է լինելու աշխարհի վերջի** նշանը, այսինքն Իր փառահեղ թագավորումից առաջ անմիջականորեն ի՞նչն է ազդարարելու դարի ավարտի մասին: (2-րդ և 3-րդ հարցերը էապես նույնն են):

Մենք պետք է հիշենք, որ այդ հրեա աշակերտների մտածողությունը ծավալվում էր Մեսիայի երկրի վրա փառահեղ դարի շուրջը: Նրանք չէին կարծում, որ Քրիստոսը

գալու է Եկեղեցու համար: Նրանք քիչ բան գիտեին (եթե գիտեին) Նրա գալստյան այդ փուլի մասին: Նրանք ակնկալում էին, որ Նրա գալուստը լինելու է զորությամբ և փառքով՝ ոչնչացնելու Իր թշնամիներին և կառավարելու ամբողջ աշխարհը:

Մենք պետք է նաև հստակորեն հասկանանք, որ նրանք ոչ թե **աշխարհի** վերջի մասին էին խոսում (ինչպես «Քինգ Ջեյմս տարբերակում» է), այլ **դարի** ավարտի մասին (հուն. *aiōn*):

Նրանք չստացան իրենց առաջին հարցի ուղղակի պատասխանը: Ավելի շուտ, Փրկչի չըրկիչը կարծես համակցեց մ.թ. 70թ.-ի Երուսաղեմի պաշարումը (տե՛ս Ղուկ. 21:20-24) նմանատիպ պաշարման հետ, որը տեղի է ունենալու վերջին օրերում: Ուսումնասիրելով մարգարեությունները՝ հաճախ տեսնում ենք, թե Տերն ինչպես է աննկատելիորեն վաղ, մասնակի կատարումից անցնում դեպի ավելի ուշ՝ դրանց վերջնական կատարմանը:

Երկրորդ և երրորդ հարցերի պատասխանը տրված է 24:4-44-ում: Այդ համարները նկարագրում են մեծ նեղության յոթ տարվա ժամանակաշրջանը, որ պետք է նախորդի Քրիստոսի փառավոր գալստյանը: Առաջին երեք ու կես տարիները նկարագրված են 4-14-րդ համարներում: Վերջին երեք ու կես տարիները, որ հայտնի են որպես Մեծ նեղության և Հակոբի նեղության ժամանակ (Եր. 30:7), լինելու է աննախադեպ տառապանքների ժամանակաշրջան երկրի վրա ապրողների համար:

Պայմաններից շատերը, որ բնութագրում են Մեծ նեղության առաջին կեսը, մասամբ արդեն կատարվել են մարդկային պատմության ընթացքում, բայց քննարկվող ժամանակաշրջանում դրանք ի հայտ են գալու ավելի ինտենսիվ ձևով: Նրանք, ովքեր Եկեղեցում են գտնվում, նեղությունն արդեն խոստացված էր (Հովհ. 16:33), բայց այն անհամեմատ տարբեր է **այն** նեղությունից, որ պետք է թափվի Աստծո Որդուն մերժող աշխարհի վրա:

Մենք հավատում ենք, որ Եկեղեցին աշ-

խարհից պիտի վերցված լինի (1 Թես. 4:13-18) նախքան այն օրը, երբ գալու է Աստծո բարկությունը (1 Թես. 1:10, 5:9, 2 Թես. 2:1-12, Հայտ. 3:10):

24:4-5. Մեծ նեղության առաջին կեսի ժամանակաշրջանում հայտնվելու են շատ սուտ մեսիաներ, որոնք հաջողությամբ խաբելու են շատ մարդկանց: Բազմաթիվ կեղծ աղանդների ներկայիս անը կարող է լինել դրա նախերգանքը, բայց ոչ լիարժեք կատարումը: Այդ կեղծ կրոնական առաջնորդները լինելու են հրեաները, որ պնդելու են, թե **Քրիստոսն** են:

24:6-7. Նաև լինելու են **պատերազմներ և պատերազմների լուրեր: Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ:** Գուցե շատ հեշտ է մտածելը, որ դա արդեն կատարվում է այսօր, բայց այն, ինչ տեսնում ենք, մեղմ է՝ համեմատած գալիք բաների հետ: Իրականում հաջորդ իրադարձությունն Աստծո ժամանակացույցով Եկեղեցու հափշտակությունն է (Հովհ. 14:1-6, 1 Կոր. 15:51-57): Մինչ այդ կատարվող ոչ մի մարգարեություն չկա: Այն բանից հետո, երբ Եկեղեցին վերցվի, սկսելու է գործել Աստծո մարգարեական ժամացույցը, և այդ իրադարձություններն արագորեն են դրսևորվելու: **Սովեր, համաճարակներ և երկրաշարժեր** պիտի լինեն երկրի տարբեր **տեղերում:** Այսօր իսկ բնակչության կարուկ աճի պատճառով աշխարհի ղեկավարները մտահոգված են սովի տեսիլով, բայց այդ սովը կարող է ուժեղանալ պատերազմների հետևանքով:

Առավել ուշադրություն են գրավում **երկրաշարժերը**, ոչ միայն դրանք, որոնք տեղի են ունենում հիմա, այլ նաև սպասվող: Ներկա երկրաշարժերն ընդամենը ակնարկ են մեր Փրկչի խոսքերի փաստացի կատարման:

24:8. Այս համարը հստակ մատնանշում է այդ ժամանակաշրջանը՝ որպես **ցավերի սկիզբ:** Դա ծննդյան ցավերի սկիզբն է, ինչը նոր կարգուկանոն է բերելու Մեսիա Թագավորի օրոք:

24:9-10. Հավատարիմ հավատացյալները անձնական մեծ փորձությունների միջից են անցնելու Մեծ նեղության ժամանակ: Ազգերը ստեղծության դաժան քարոզարշավ են վարելու բոլոր նրանց դեմ, ովքեր Քրիստոսին հավատարիմ են: Նրանց ոչ միայն պիտի դատեն կրոնական և քաղաքացիական դատարաններում (Մարկ. 13:9), այլ շատերը պիտի նահատակվեն, քանի որ նրանք հրաժարվելու են ուրանալուց: Թեև քրիստոնեական վկայության բոլոր ժամանակաշրջաններում նման փորձություններ եղել են, բայց սա կարծես, հատուկ հղում պիտի լինի 144 000 հավատացյալ հրեաներին, ովքեր հատուկ ծառայություն են ունենալու այդ ընթացքում:

Ծատերը պիտի ուրանան՝ չուզենալով չարչարվել և մահանալ: Ընտանիքի անդամները տեղեկություն են տալու ընդդեմ իրենց հարազատների և նրանց **մատնելու են** վայրագ հալածողների ձեռքը:

24:11. Եվ շատ սուտ մարգարեներ պիտի ելնեն և շատերին մոլորեցնեն: Նրանց չպետք է շփոթել սուտ մեսիանների հետ, որոնց մասին ասվում է 5-րդ համարում: **Սուտ մարգարեները** պնդելու են, որ իրենք Աստծո պատգամավորներն են: Նրանց կարելի է ճանաչել երկու եղանակով. նրանց մարգարեությունները ոչ միշտ են կատարվում և նրանց ուսմունքը միշտ հեռացնում է մարդկանց ճշմարիտ Աստծուց: Սուտ *մարգարեների* մասին հիշեցումը մեկ անգամ ևս հաստատում է այն, որ Մեծ նեղությունն իր բնույթով հիմնականում հրեական է: **Սուտ մարգարեները** կապված են Իսրայել ժողովրդի հետ, Եկեղեցում վտանգը գալիս է **սուտ վարդապետներից** (2 Պետ. 2:1):

24:12. Անօրենության շատանալու պատճառով մարդկային սերը ակնհայտորեն ավելի ու ավելի է պակասելու: Անսեր արարքները սովորական երևույթ են լինելու:

24:13. «Բայց ով որ մինչև վերջ համբերի, նա պիտի փրկվի»: Անշուշտ, սա չի նշանակում, որ այդ ժամանակ մարդկանց հոգիները պիտի փրկվեն շնորհիվ նրանց համբերության. Աստվածաշնչում փրկությո-

յունը միշտ էլ ներկայացված է որպես Աստծո շնորհի պարգև, որ ստանում են՝ հավատալով Քրիստոսի փոխանորդական մահվանն ու հարությանը: Սա նաև չի նշանակում, որ բոլոր համբերողները խուսափելու են ֆիզիկական տառապանքից: Արդեն գիտենք, որ շատ հավատացյալներ պիտի նահատակվեն (հ. 9): Սա ընդհանուր հայտարարություն է, որ նրանք, ովքեր չուրանալով, հաստատակամորեն կկրեն հալածանքները, պիտի ներկայանան Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ: Թող ոչ ոք չմտածի, որ ուրանալով կարող է հալածանքներից փախչել կամ փրկվել: **Պիտի փրկվեն** միայն նրանք, ովքեր ունեն ճշմարիտ հավատ: Թեև փրկարար հավատը կարող է սխալվել, սակայն այն միշտ հաստատունության որակ ունի:

24:14. Արքայության Ավետարանն այս ժամանակաշրջանում պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ **բոլոր ազգերին վկայություն լինելու համար:** Ինչպես բացատրված է 4:23-ի մեկնաբանության մեջ, Արքայության Ավետարանը Բարի լուրն է, որ Քրիստոսը գալիս է Իր **Թագավորությունը** հիմնելու երկրի վրա, և նրանք, ովքեր հավատով կընդունեն Նրան Մեծ նեղության ընթացքում, վայելելու են Հազարամյա Թագավորության օրհնությունները:

14-րդ համարը հաճախ չարաշահում են, որպեսզի ցույց տան, որ Քրիստոսը չի կարող վերադառնալ Իր Եկեղեցու համար ցանկացած պահին, քանի որ դեռ շատ ցեղեր չեն լսել Բարի Լուրը: Դժվարությունը կվերանա, երբ հասկանանք, որ դա ավելի շուտ վերաբերում է Իր սրբերի *հետ* Նրա գալստին, ոչ թե Իր սուրբերի *համար*: Եվ այդ խոսքերը վերաբերում են **Արքայության** Ավետարանին, ոչ թե **Աստծո շնորհաց** Ավետարանին (տե՛ս 4:23-ի մեկնաբանությունը):

Գոյություն ունի ապշեցուցիչ զուգահեռ, որոնք թվարկված են 3-14-րդ համարներում, և դրանց միջև, որ գրված են Հայտնության գրքի 6:1-11-ում: **Ճերմակ** ձիու հեծյալը **սուտ մեսիան** է, **կարմիր** ձիու հեծյալը՝ **պատերազմը**, **սև** ձիու հեծյալը՝

սովը, դեղնավուն ձիու հեծյալը՝ **համաճարակը** կամ **մահը**: Չոհասեղանի տակ եղող հոգիները նահատակներն են: Հայտնության գրքի 6:12-17-ում նկարագրված իրադարձությունները փոխկապակցված են Մատթ. 24:19-31-ի նկարագրության հետ:

Գ. Մեծ նեղությունը (24:15-28)

24:15. Այս համարում մենք կարդում ենք Մեծ նեղության կեսի մասին: Մենք սա հասկանում ենք 15-րդ համարը համեմատելով Դան. 9:27-ի հետ: Դանիելը կանխատեսել էր, որ յոթանասուներորդ յոթնյակի կեսին, այսինքն՝ երեք ու կես տարվա վերջում, սուրբ վայրում, այսինքն՝ Երուսաղեմի տաճարում, դրվելու է կուռքի պատկերը: Բոլոր մարդիկ երկրպագելու են այդ նոդկալի կուռքին: Նրանք, ովքեր հրաժարվեն, պիտի սպանվեն (Հայտ. 13:15):

«Ուստի երբ տեսնեք Դանիել մարգարեի միջոցով ասված ավերմունքի պղծությունը սուրբ վայրում կանգնած (կարդացողը թող հասկանա)...»: Նրանք, ովքեր Աստծո Խոսքը գիտեն, կուռքի տեղադրումը կազդանշանի, որ Մեծ նեղությունը սկսվել է: Նշենք, որ Տերն ուզում է՝ որ նա, ով **կարդում է** մարգարեությունը կարդացողը, հասկանա այն:

24:16. Եվ այն ժամանակ չրեաստանում եղողները թող լեռները փախչեն, Երուսաղեմի շրջակայքում պատկերին երկրպագություն չանողները արագորեն կհայտնաբերվեն:

24:17-19. Անհրաժեշտ է լինելու հնարավորինս շտապել: Եթե մեկը տանիքի վրա է, թող իր **տնից որևէ բան** չվերցնի: Ունեցվածքը հավաքելու վրա ժամանակ ծախսելը կարող է կյանքի ու մահվան հարց դառնալ: **Արտի մեջ** աշխատող մարդը չպետք է ետ դառնա **իր հանդերձները** վերցնելու, որտեղ էլ դրանք թողած լինի: **Հղիները և կուրծք տվողները** հայտնվելու են անելանելի իրավիճակում՝ նրանց համար դժվար է լինելու արագ փախչելը:

24:20. Հավատացյալները պետք է **աղոթեն**, որ ճգնաժամային պահը **ձմռանը** չլինի՝ ճամփորդության իր լրացուցիչ վտանգ-

ներով, և որպեսզի այն **շաբաթ օրը** չլինի, քանի որ հեռավորությունը, որ նրանք կարող են անցնել, սահմանափակվելու է օրենքով (Ել. 16:29): Շաբաթ օրվա ճամփորդությունը բավական չի լինելու, որպեսզի նրանք դուրս գան վտանգավոր գոտուց:

24:21. «Որովհետև այն ժամանակ այնպիսի մեծ նեղություն պիտի լինի, որի նմանը աշխարհի սկզբից մինչև հիմա չի եղել, և չի էլ լինի»: Տվյալ նկարագրությունն առանձնացնում է այս ժամանակահատվածը բոլոր հավատաքնություններից, ջարդերից, քաղաքական հետապնդումներից, կոտորածներից և ցեղասպանություններից: Այս մարգարեությունը չէր կարող կատարված լինել նախկին հավատաքնների ժամանակ, քանի որ հստակորեն ասված է, որ այդ ժամանակահատվածը ավարտվելու է Թրիստոսի երկրորդ գալստով:

24:22. Այդ նեղությունը այնքան սաստիկ է լինելու, որ, **եթե այդ օրերը չկրճատվեին**, ոչ ոք չէր փրկվի: Մա չի կարող նշանակել, որ Մեծ նեղության այդքան հաճախ հատկեցված երեք ու կես տարիների տևողությունը, պիտի կրճատվի: Հավանաբար դա նշանակում է, որ Աստված հրաշալի ձևով կրճատելու է ցերեկվա տևողությունը, որի ընթացում կատարվում են ամենաշատ կոիվներն ու սպանողը: **Ընտրյալների շնորհիվ** (նրանց, ովքեր ընդունել են Հիսուսին) Տերը թույլ է տալու, որ մուրճն ավելի շուտ ընկնի:

24:23-26. 23-24-րդ համարները պարունակում են նորովի զգուշացումները ընդդեմ **սուտ** մեսիանների և **սուտ մարգարեների**: Ճգնաժամի պայմաններում պիտի լուրեր տարածվեն, թե Մեսիան ինչ-որ գաղտնի տեղում է: Նմանատիպ լուրերը պիտի օգտագործեն, որպեսզի բռնեն նրանց, ովքեր անկեղծորեն և սիրով սպասում են Թրիստոսին: Այնպես որ, Տերը զգուշացնում է բոլոր աշակերտներին, որ նրանք չհավատան գաղտնի գալստյան մասին տեղական լուրերին: Նույնիսկ նրանք, ովքեր հրաշքներ են գործել, պարտադիր չէ, որ Աստծուց լինեն. հրաշքներն իրենց ծագումով կարող են սատանայական լինել: Անօ-

րենին տրվելու է սատանայական գորուջություն հրաշքներ գործելու համար (2 Թես. 2:9-10):

24:27. Քրիստոսի գալուստը լինելու է ակներև. այն լինելու է հանկարծակի, հասարակայնորեն, համաշխարհային և փառավորված: Այն **կայծակի** նման լինելու է ակնթարթային և բոլորին պարզ տեսանելի:

24:28. Եվ ոչ մի բարոյական անմաքրություն չի կարող փախչել Նրա բարկությունից և դատաստանից. **«Քանի որ որտեղ մեռած մարմին կա, այնտեղ են հավաքվում արժիվները»:** Մեռած մարմինը պատկերում է հուղայականությունը, քրիստոնեական աշխարհի հավատորացների և ամբողջ աշխարհի համակարգը, որոնք միավորվել են Աստծո և Նրա Քրիստոսի դեմ: **Արժիվները** կամ անգղները մարմնավորում են Աստծո դատաստանները, որ թափվելու են Մեսիայի հայտնվելու ժամանակ:

Գ. Երկրորդ գալուստը (24:29-31)

24:29. Մեծ նեղության ավարտին երկրներում լինելու են սարսափելի փոփոխություններ: **Արեգակը պիտի խավարի**, և քանի որ լուսնի լույսը սուկ արեգակի արտացոլանքն է, **լուսինը նույնպես իր լույսը պիտի չտա:** Աստղերը երկնքից վայր պիտի ընկնեն, և մոլորակները տեղաշարժվելու են իրենց ուղեծրից: Կարիք չկա ասելու, որ նման հսկայական տիեզերական ցնցումները կազդեն երկրի եղանակի, մակրոթաջության և տարվա եղանակների վրա.

«Այդ պահին երկրաշարժը երկիրը կխարխլի: Օղը և ջուրը կշարունակեն ինքնաբերաբար շարժվել, փոթորիկները պիտի ավլեն երկիրը: Ծովերը կհեղեղեն մայրցամաքները, իրենց հետ տանելով մանրախիճը, ավազը և ծովային կենդանիներին՝ գցելով դրանք ցամաքի վրա: Ծոզը կսաստկանա, լեռները կհալչեն, հրաբուխները կժայթքեն, լավան ճեղքերից կհոսի ճաքած գետնի վրա և հսկայական տարածքներ կծածկի: Հարթավայրերի վրա դուրս կցցվեն լեռներ և կսկսեն տեղաշարժվել և կբարձրանան ուրիշ լեռների լանջերին, առաջացնելով ճեղքեր և

ճաքեր: Լճերը կշրջվեն և կդատարկվեն, գետերը կփոխեն իրենց հունը. խոշոր հողատարածքներն իրենց բոլոր բնակիչներով կանցնեն ջրի տակ: Անտառները պիտի այրվեն կամ փոթորիկները և մոլեգնած ծովերը հողից կպոկեն դրանք, որի վրա աճում էին, և ճյուղերի և արմատների հսկայական կույտ կդիզեն: Ծովերը կվերածվեն անապատների, և նրանց ջրերը դուրս կթափվեն»:⁴⁵

24:30. **«Եվ այն ժամանակ Մարդու Որդու նշանը պիտի երևա երկնքում»:** Մեզ չի ասվում, թե դա ինչ **նշան** է: Նրա առաջին գալուստն ուղեկցում էր երկնքի նշանով՝ աստղով: Միգուցե այդ հրաշք աստղը կավետի նաև Նրա երկրորդ գալուստը: Ոմանք կարծում են, որ նշանը հենց Ինքը՝ **Մարդու Որդին** է: Ինչ էլ այն նշանակի, բոլորի համար դա պարզ կլինի, երբ հայտնվի: Անշուշտ, **Երկրի բոլոր ազգերը պիտի ողբան**, որ մերժեցին Քրիստոսին: Բայց հիմնականում պիտի ողբան *երկրի*⁴⁶ այս ցեղերը՝ Իսրայելի տասներկու ցեղերը: «... Եվ նրանք նրան պիտի նայեն, ում խոցեցին. սուգ պիտի անեն նրա վրա միամորի սուգի պես, և պիտի ցավեն նրա վրա, ինչպես անդրանիկի վրա կցավեն» (Չաք. 12:10): Այնուհետև **«պիտի տեսնեն Մարդու Որդուն երկնքի ամպերով գալիս՝ գորությանը ու մեծ փառքով»:** Ինչ հրաշալի պահ: Նա, ում խոցեցին և խաչեցին, պիտի արդարանա որպես կյանքի և փառքի Տերը: Հեզ և խոնարհ Հիսուսը հայտնվելու է որպես հենց Ինքը՝ Եհովան: Չոհված Գառն իջնելու է որպես հաղթող Առյուծ: Արիամարիված Նազարեթից եկող հյուսնը գալու է որպես թագավորների Թագավոր և տերերի Տեր: Նրա կառքերը լինելու են երկրնքի ամպերը: Նա գալու է արքայական գորությանը և շքեղությանը, մի պահ, որի համար ամբողջ արարչագործությունը հազարավոր տարիներ հառաչել է:

24:31. Երբ Նա իջնի, պիտի **ուղարկի Իր հրեշտակներին** աշխարհի չորս ծագերից **հավաքելու Իր ընտրյալ ժողովրդին**, հավատացյալ Իսրայելին Պաղեստինի երկրում:

Ե. ԹՂԵՆՈՒ ԱՌԱԿԸ (24:32-35)

24:32. «Արդ, թղենու առակից սովորեցե՛ք»: Հիսուսը նորից հոգևոր դաս է քաղում բնությունից: Երբ թղենու ոստերը կանաչում են և փափկում՝ **իմանում եք, որ ամառը մոտ է:** Մենք արդեն գիտենք, որ թղենին պատկերում է Իսրայելի ժողովրդին (21:18-22): Հարյուրավոր տարիներ Իսրայելը եղել է քնած. ո՛չ սեփական կառավարություն, ո՛չ հող, ո՛չ տանար, ո՛չ քահանայություն, եղել է զրկված ազգային կյանքի բոլոր նշաններից: Ազգը ցրված էր ամբողջ աշխարհում:

Այնուհետև, 1948թ.-ին Իսրայելը դարձավ ազգ իր սեփական հողի վրա, կառավարությամբ, արժույթով, դրոշով և այլն: Հոգևորապես ազգը տակավին ամուլ է և սառը, այն Աստծո համար պտուղ չի բերում: Բայց ազգային առումով մենք կարող ենք ասել, որ նրա ոստերն արդեն կանաչ են և **փափուկ:**

24:33. «Այսպես էլ դուք, երբ այս ամեն բաները տեսնեք, իմացե՛ք, որ այն մոտ է՝ դռների հետևում»: Իսրայելի որպես ազգ առաջացումը նշանակում է ոչ միայն այն, որ մոտ է մեծ նեղության սկիզբը, այլ նաև այն, որ Ինքը՝ Տերն է մոտ՝ **դռների հետևում:**

Եթե Քրիստոսի Թագավորության գալուստն այդքան մոտ է, ապա որքան ավելի՝ Եկեղեցու հափշտակությունը: Եթե մենք արդեն տեսնում ենք իրադարձությունների ստվերները, որոնք պիտի նախորդեն փառքի մեջ Նրա հայտնությանը, ապա որքան մոտ ենք Նրա գալստյան 1-ին փուլին (1 Թես. 4:13-18):

24:34. ԹՂԵՆՈՒՆ արված հողումից հետո Հիսուսն ավելացրեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, թե այս ազգը չի անցնի, մինչև որ այս ամենը կատարվի»: «Այս ազգը» ասելով նկատի չունենք այն օրերում ապրող մարդկանց, երբ Քրիստոսը երկրի վրա էր, նրանք բոլորը մահացել են, իսկ 24-րդ գլխի իրադարձությունները դեռ չեն կատարվել: Ուրեմն մեր Տերն ի՞նչ նկատի ուներ «այս ազգը» ասելիս: Գոյություն ունեն երկու ճշմարտանման բացատրություններ:

Ֆ. Ու. Գրանտը և ուրիշներ կարծում են, որ այստեղ թաքնված է հետևյալ միտքը. «Նույն այդ սերունդը, որը պիտի տեսնի այդ իրադարձությունների սկիզբը, կտեսնի և ավարտը»:⁴⁷ Այդ նույն մարդիկ, որ տեսնում են Իսրայելի՝ որպես ազգի վերելքը (կամ էլ Մեծ նեղության սկիզբը), կտեսնեն երկնքի ամպերով եկող իրենց Տիրոջը, որպեսզի երկրի վրա թագավորեն:

Մյուս բացատրությունն այսպիսին է. «**ազգը**» պետք է հասկանալ որպես «*mass*»: Մա հունարեն բառի լիովին ընդունելի թարգմանությունն է, որ նշանակում է միևնույն ֆոնդային, դաստիարակության կամ ընտանեկան մարդկանց միություն (Մատթ. 12:45, 23:35-36): Այսպիսով, Հիսուսը կանխատեսեց, որ հրեական ռասան գոյատևելու է, որպեսզի այդ բոլոր իրադարձությունները ավարտված տեսնի: Նրանց շարունակական գոյատևումը, չնայած դաժան հալածանքների, հանդիսանում է պատմության հրաշքը:

Բայց կարծում եմ, որ այստեղ կա ևս մեկ հավելյալ միտք: Հիսուսի օրոք «այս ազգը» մի ռասա էր, որ համառորեն հրաժարվում էր Նրան՝ որպես Մեսիայի ընդունելուց: Կարծում եմ՝ Նա կանխատեսում էր, որ Իսրայել ժողովուրդը շարունակելու է մնալ Քրիստոսին մերժող վիճակի մեջ մինչև Նրա երկրորդ գալուստը: Այնուհետև, բոլոր ապստամբները պիտի ոչնչանան, և միայն նրանք, ովքեր հոժարակամ կենթարկվեն Նրա տիրապետությանը, պիտի փրկվեն, որպեսզի Հազարամյա Թագավորությունը մտնեն:

24:35. Ընդգծելու համար, որ Իր կանխասածները անփոփոխ են, Հիսուսն ավելացրեց, որ **երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը պիտի չանցնեն:** Խոսելով անցնող **երկնքի** մասին՝ Նա նկատի ուներ աստղային և մթնոլորտային երկինքը, մեր վերևի կապույտ երկնակամարը, ոչ թե Երկինքը, որ հանդիսանում է Աստծո բնակության վայրը (2 Կոր. 12:2-4): Երկնքի և երկրի կործանումը նկարագրված է 2 Պետ. 3:10-13-ում և կրկին հիշատակվում է Հայտնության գրքում (20:11):

2. Նրա գալստյան օրը և ժամն անհայտ են (24:36-44)

24:36. Ինչ վերաբերում է Նրա երկրորդ գալստյան **օրվան և ժամին**, ապա դրանք **«ոչ ոք չգիտի, ո՛չ, նույնիսկ երկնքի հրեշտակները չգիտեն,⁴⁸ այլ միայն՝ Իմ Հայրը»**: Սա զգուշացում է ժամկետներ սահմանելու գայթակղության դեմ կամ դրանք սահմանողներին հավատալու դեմ: Մեզ չի զարմացնում այն, որ այդ մասին հրեշտակները չգիտեն, որովհետև նրանք սահմանափակ արարածներ են՝ սահմանափակ գիտելիքներով:

Թեև մինչև Քրիստոսի վերադարձն ապրողները չեն իմանալու այդ **օրը** կամ **ժամը**, ենթադրվում է, որ մարգարեությանը ծանոթ եղողները կկարողանան իմանալ **տարին**: Օրինակ՝ նրանք կիմանան, որ անցնելու է մոտավորապես 3,5 տարի այն բանից հետո, երբ գազանի պատկերը կդրվի տանարում (Դան. 9:27, տե՛ս նաև Դան. 7:25, 12:7, 11, Հայտ. 11:2-3, 12:14, 13:5):

24:37-39. Այն օրերում, սակայն, մարդկանց մեծ մասը լինելու է անտարբեր, **ինչպես Նոյի օրերում**: Չնայած ջրհեղեղից առաջվա օրերը ասավոր չար էին, այստեղ այդ հատկությունը չի շեշտվում: Մարդիկ ուտում էին և խմում, կին էին առնում և **մարդի գնում**, այլ խոսքերով, նրանք առօրյա կյանքն այնպես էին ապրում, կարծես պատրաստվում էին հավերժ ապրելու: Թեև նրանց զգուշացրել էին եկող ջրհեղեղի մասին, նրանք այնպես էին ապրում, որ ասես ջրհեղեղի համար անհասանելի էին: Երբ ջրհեղեղը եկավ, անպատրաստ գտնվեցին, առանց անվտանգ վայրի: Ճիշտ այսպես է լինելու, երբ Քրիստոսը վե-րադառնա: Փրկվելու են միայն նրանք, ովքեր Քրիստոսի մեջ են՝ փրկության տապանում:

24:40-41. Այն ժամանակ, եթե երկու **հոգի լինեն արտում, մեկը կվերցվի** դատաստանի համար, իսկ մյուսը մնալու է, որպեսզի Հագարամյա Թագավորությունը մտնի: **Երկու կին մեկ երկանքով աղալիս** ակնթարթորեն պիտի բաժանվեն: Մեկին

կտանի ջրհեղեղի դատաստանը, իսկ մյուսը մնալու է, որպեսզի վայելի Քրիստոսի Թագավորության օրհնությունները: 40-41-րդ համարները հաճախ օգտագործում են որպես անհավատներին ուղղված զգուշացում՝ հղում կատարելով Քրիստոսի գալլստյան առաջին փուլին, երբ Նա երկինք կտանի բոլոր հավատացյալներին, իսկ բոլոր անհավատներին կթողնի դատաստանի համար: Չնայած նման **կիրառությունն** այս հատվածի համար կարող է ընդունելի լինել, համատեքստից պարզ է դառնում, որ այս **մեկնաբանությունը** վերաբերում է Քրիստոսի Թագավորությանը:

24:42-44. Հաշվի առնելով օրվա և ժամի մասին անորոշությունը մարդիկ պետք է **արթուն** լինեն: Եթե որևէ մեկն իմանար, որ պատրաստվում են իր տուն ներխուժելու, պատրաստ կլինի դրան, եթե նույնիսկ չիմանա ճշգրիտ ժամանակը: Մարդու Որդին գալու է այն ժամանակ, երբ ժողովրդի զգալի մասն ամենաքիչն է ակնկալում: Հետևաբար Նրա ժողովուրդը պետք է անհամբերությամբ սպասի Նրան:

Է. Իմաստուն և չար ծառաների առակը (24:45-51)

24:45-47. Այս գլխի վերջին բաժնում Տեր Հիսուսը ցույց է տալիս, որ **ծառայի** իրական բնավորության մասին կարելի է դատել՝ ելնելով այն բանից, թե նա ինչպես է իրեն պահում՝ իմանալով, որ իր Տերը վերադառնալու է: Բոլոր ծառաները պետք է ժամանակին կերակրեն ընտանիքի անդամներին: Բայց իրենց Քրիստոսի ծառա կոչողներից ոչ բոլորն են անկեղծ:

Իմաստուն ծառան նա է, ով հոգատար է գտնվում Աստծո ժողովրդի հանդեպ: Այդպիսի ծառային պատվելու են, Թագավորության մեջ նրան մեծ պատասխանատվություն են վստահելու: Տերը **նրան իր բոլոր ունեցվածքի վրա կկարգի**:

24:48-51. **Չար ծառան** ներկայացնում է անվանական հավատացյալին, ում վարքագծի վրա չի ազդում այն փաստը, որ նրա Տերը շուտով վերադառնալու է: Նա **սկսում է իր ծառայակիցներին ձեռել և հարբե-**

ցողների հետ ուտել ու խմել: Նման վարքագիծը ցույց է տալիս, որ նա պատրաստ չէ Թագավորության համար: Երբ Թագավորը գա, նրան կպատժի և **նրա բաժինը կդնի կեղծավորների հետ**, ուր մարդիկ լաց են լինելու և կրճատացնելու են իրենց ատամները:

Այս առակն անդրադառնում է երկրի վրա Քրիստոսի տեսանելի վերադարձին՝ որպես Մեսիա Թագավորի: Բայց առակի սկզբունքը հավասարապես վերաբերում է նաև հափշտակությանը: Շատերը, ովքեր իրենց մասին ասում են, թե իրենք քրիստոնյա են, իրենց Աստծո ժողովրդի հանդեպ թշնամական վերաբերմունքով և անաստվածների հետ ընկերությամբ ցույց են տալիս, որ Քրիստոսին չեն սպասում: Նրանց համար այն լինելու է դատապարտություն, այլ ոչ թե օրհնություն:

Ը. Տասը կույսերի առակը (25:1-13)

25:1-5. Առաջին բառերը՝ «այն ժամանակ», դիմելով հետ՝ 24-րդ գլխին՝ այս առակը հստակ դասակարգում է Թագավորի երկիր վերադառնալուն նախորդող ժամանակներին և Նրա վերադարձի ժամանակահատվածին: Հիսուսը **Երկնքի Թագավորությունը** նմանեցնում է այն ժամանակի **տասը կույսերին, որոնք վերցրին իրենց լապտերները և դուրս եկան փեսային դիմավորելու: Նրանցից հինգը իմաստուն էին** և իրենց լապտերների համար **յուղ** էին վերցրել, մյուսներն այն չունեին: Մինչ սպասում էին, բոլորն էլ քնեցին:

Հինգ **իմաստունները** ներկայացնում են Մեծ նեղության ժամանակ Քրիստոսի ճշմարիտ աշակերտներին: **Լապտերները** խոսում են նրանց հավատի դավանության մասին, իսկ **յուղը** սովորաբար համարվում է Սուրբ Հոգու խորհրդանիշը: **Հիմար** կույսերը ներկայացնում են նրանց, ովքեր ասում են, որ պահել են մեսիական հույսը, սակայն նրանք երբեք դարձի չեն եկել, հետևաբար և Սուրբ Հոգին չունեն: **Փեսան** Քրիստոսն է՝ Թագավորը. Նրա ուշացումը խորհրդանշում է Նրա երկու գալուստների միջև ընկած ժամանակահատվածը: Այն

փաստը, որ բոլոր տասը կույսերն էլ **քնեցին**, ցույց է տալիս, որ նրանք արտաքինապես շատ չէին տարբերվում:

25:6. Կեսգիշերին լուր հնչեց, որ **փեսան գալիս է:** Նախորդ գլխից մենք իմացանք, որ Նրա գալուստն ազդարարվելու են սարսափազդու նշաններով:

25:7-9. Այն ժամանակ **կույսերը ելան և իրենց լապտերները պատրաստեցին**, բոլորն էին ուզում պատրաստ լինել: Հիմարները, որոնց յուղը չէր բավարարում, խընդրում էին մյուսներից մի քիչ իրենց տալ, բայց նրանք նրանց ուղարկեցին **վաճառողների** մոտ: Իմաստունների մերժումը եսասիրական է թվում, բայց հոգևոր հարթության տեսանկյունից նայելով՝ ոչ ոք մյուսին չի կարող Հոգի բաշխել: Անշուշտ, Սուրբ Հոգին չի գնվում, բայց Աստվածաշունչն օգտագործում է փրկությունն առանց գումարի և առանց վճարի գնելու գրական պատկերներ:

25:10-12. Եվ երբ **նրանք գնացին, փեսան եկավ:** Միրիական և Վուլկաթա տարբերակներն ասում են, որ Նա եկավ *Իր հարսի հետ*: Սա կատարելապես համապատասխանում է մարգարեական պատկերին: Տեր Հիսուսը հարսանիքից վերադառնալու է Իր Հարսի՝ Եկեղեցու հետ (1 Թես. 3:13): (Հարսանիքը տեղի է ունենալու Երկնքում (Եփ. 5:27) հափշտակությունից հետո): Մեծ նեղության սրբերի հավատարիմ մնացորդը Նրա հետ գնալու են հարսանիքի: Հարսանեկան խնջույքը համարվում է Քրիստոսի երկրավոր թագավորության ուրախության և օրհնության հարմար նկարագրությունը: Իմաստուն կույսերը **Նրա հետ մտան հարսանիքի, և դուռը փակվեց:** Չափազանց ուշ էր, որպեսզի մեկ ուրիշն էլ կարողանար Թագավորություն մտնել: Երբ **եկան մյուս կույսերն էլ** և փորձում էին մտնել, փեսան ուրացավ նրանց՝ ասելով, որ երբեք նրանց չի ճանաչել. սա պարզ ապացույց է, որ նրանք երբեք վերստին ծնված չեն եղել:

25:13. Այս առակի դասը, ինչպես Հիսուսն ասաց՝ **արթուն եղեք**, որովհետև Նրա գալուստյան **ոչ օրը և ոչ էլ ժամը** հայտնի

չեն: Հավատացյալները պետք է ապրեն այն գիտակցությամբ, որ Տերը կարող է գալ ցանկացած պահի: Արդյոք մեր լապտերները պատրաստ վիճակում են և լցված են յուղով:

Թ. Տաղանդների առակը (25:14-30)

25:14-18. Հաջորդ առակը նույնպես սովորեցնում է, որ Տիրոջ վերադարձի պահին լինելու են ճշմարիտ և կեղծ ծառաներ: Պատմությունը պատվում է մի **մարդու** շուրջ, ով, նախքան երկար ճամփորդության ուղևորվելը, կանչեց **իր ծառաներին** և **նրանց հանձնեց** տարբեր քանակությամբ գումար. **ամեն մեկին տվեց իր կարողության չափ: Մեկին տվեց հինգ տաղանդ, մեկին՝ երկու և վերջինին՝ մեկ:** Նրանք այդ գումարները շրջանառության մեջ պիտի դնեին, այնպես որ տերը շահույթ ստանար: **Հինգ տաղանդ ստացողը ձեռք բերեց ևս հինգ տաղանդ: Երկու տաղանդ ստացողը նույնպես կրկնապատկեց իր գումարը: Իսկ ով մեկը վերցրեց, գնաց, փոս փորեց և թաղեց դրա մեջ:**

Դժվար չէ նկատել, որ այդ մարդը Զրիստոսն է, իսկ երկար ճամփորդությունը գալուստների միջև ընկած ժամանակահատվածն է: Երեք ծառաները մեծ նեղության ընթացքում ապրող իսրայելացիներն են, ովքեր պատասխանատու էին ներկայացնելու բացակայող տիրոջ շահերը: Նրանց հանձնված պատասխանատվությունը համապատասխանում էր իրենց անհատական կարողություններին:

25:19-23. Երկար ժամանակ հետո եկավ այս ծառաների տերը և նրանցից հաշիվ պահանջեց: Սա երկրորդ գալստյան նկարագրությունն է: Առաջին երկու ծառաները բացարձակ նույն գովասանքը ստացան. **«Լավ, բարի և հավատարիմ ծառա. քիչ բաների մեջ հավատարիմ եղար, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ»:** Նրանց ծառայության ստուգարքը ոչ այնքան նրանում էր, թե որքան էին շահել, այլ թե որքան ջանասիրաբար էին նրանք աշխատել: Նրանցից յուրաքանչյուրը լիովին օգտագործել էր

իր կարողությունը և հարյուրտոկոսանոց արդյունք ստացել: Նրանք ներկայացնում են ճշմարիտ հավատացյալներին, որոնց վարձատրությունը լինելու է Հազարամյա Թագավորության օրհնությունների վայելումը:

25:24-25. Երրորդ ծառան արդարանալուց և իր տիրոջ հասցեին վիրավորական խոսքեր ասելուց բացի ոչինչ չունեց: Նա նրան մեղադրեց այն բանում, որ տերը մի **խիստ** և անխոհեմ մարդ էր, **հնձում էր այնտեղից, որտեղ չէր սերմանել, և հավաքում այնտեղից՝ որտեղ չէր ցանել:** Նա իրեն արդարացրեց դրանով, որ վախից կաթվածահար եղած՝ թաքցրել էր իր **տաղանդը:** Այդ ծառան, անկասկած, անհավատ էր. ոչ մի իսկական ծառա թույլ չի տա իր տիրոջ մասին այդպես մտածել:

25:26-27. Տերը նրան հանդիմանեց, քանի որ նա **չար էր և ծույլ:** Եթե այդպես էր մտածում իր տիրոջ մասին, ինչո՞ւ նա իր տիրոջ **տված տաղանդը սեղանավորներին** չտվեց, որպեսզի շահույթ ստանար: Ի միջի այլոց, 26-րդ համարում տերը չի համաձայնում իր դեմ հարուցած մեղադրանքի հետ: Փոխարենը՝ նա ասում է. «Եթե ես այդպիսի տիրոջ համարում ունեի ըստ քեզ, ապա առավել ևս պիտի տաղանդը շահեցնեիր: Զո խոսքերը դատապարտում են քեզ, ոչ թե՛ արդարացնում»:

25:28-29. Եթե այդ մարդն իր տաղանդով շահեր ևս մեկ տաղանդ, ապա կստանար նույնպիսի գովասանք, ինչպես մյուսները: Փոխարենը նա ստիպված էր գետնի փոսը ցույց տալ: Նրա **տաղանդը վերցրին** և տվեցին **տասը տաղանդ** ունեցող մարդուն: Դրան հետևում է մի օրենք, որն ամրագրված է հոգևոր ոլորտում. **«Որովհետև ամեն ունեցողի պիտի տրվի, և նա առատություն պիտի ունենա, իսկ ով չունի, նրանից ունեցածն էլ պիտի վերցվի»:** Նրանց, ովքեր ուզում են օգտակար լինել Աստծո փառքի համար, միջոցները տրվում են: Որքան ավելի շատ են նրանք անում, այնքան ավելի շատ հնարավորություն է տրվում նրանց անելու Նրա համար: Եվ հակառակը՝ մենք կորցնում ենք այն, ինչը

չենք օգտագործում: Հյուծվածությունը ծուլության վարձն է:

27-րդ համարում **սեղանավորների** մասին արված հիշատակումը ենթադրում է, որ եթե չենք կարողանում Տիրոջ համար օգտագործել այն, ինչ ունենք, ապա այն պետք է տանք ուրիշներին, ովքեր **կարողանում են**: Սեղանավորները այս դեպքում կարող են լինել միսիոներները, աստվածաշնչյան ընկերությունները, քրիստոնեական հրատարակչությունները, ավետարանական ռադիոձայնակները և այլն: Աշխարհում, ինչպիսին մերն է, ոչ մի արդարացում չկա գումարը շրջանառության մեջ չդնելու համար: Պիեթսունը օգտակար խորհուրդներ է տալիս.

«Երկչոտ հոգիները, որ պիտանի չեն համարձակ և անկախ ծառայության համար ի օգուտ Թագավորության, կարող են միավորել իրենց անկարողությունն ուրիշների կարողության և խելամուռության հետ, ովքեր իրենց նվերները և ունեցվածքը պիտանի կդարձնեն Տիրոջ և Նրա Եկեղեցու համար... Տեսնեն ունի գումար կամ ուրիշ պարգևներ, բայց նաև հավատի և հեռատեսության, գործնական եռանդի և իմաստության պակաս ունի: Աստծո **«սեղանավորները»** կարող են նրան ցույց տալ, թե ինչպես օգուտ բերել Տիրոջը... Եկեղեցին մասամբ այնպես է ապրում, որ մեկ անդամի ուժը կարող է օգնել մեկ ուրիշի տկարությանը, և բոլորի փոխհամագործակցությամբ կարող է ավելանալ ամենափոքրի և ամենաթույլի գործությունը»:⁴⁹

25:30. Անպիտան ծառան դուրս նետվեց, Թագավորությունից վտարվեց: Նա կիսեց մեղավորների տառապալից ճակատագիրը: Իր տաղանդը ներդնելու անկարողությունը չէր նրա դատապարտության պատճառը, ավելի շուտ՝ բարի գործերի պակասը ցույց տվեց, որ նա չուներ փրկարար հավատ:

Ժ. Թագավորը դատում է ազգերին (25:31-46)

25:31. Այս բաժինը նկարագրում է ազգերի դատաստանը, որը չպետք է շփոթել Քրիստոսի առյուծանի դատաստանի և մեծ

ճերմակ գահի առջև դատաստանի հետ:

Քրիստոսի առյուծանի այն ժամանակն է, երբ հափշտակությունից հետո վերանայելու և վարձատրելու են միայն հավատացյալներին (Հռ. 14:10, 1 Կոր. 3:11-15, 2 Կոր. 5:9-10): Դատաստանը մեծ ճերմակ գահի առջև տեղի է ունենալու հավիտենականության մեջ Հագարամյա Թագավորությունից հետո: Չար մեռելները պիտի դատվեն և Կրակե լիճը զգվեն (Հայտ. 20:11-15):

Ազգերի կամ հեթանոսների դատաստանը (հունարեն բառը կարող է նշանակել երկուսն էլ) տեղի է ունենալու երկրի վրա այն բանից հետո, երբ Քրիստոսը գա՝ թագավորելու, ինչը հստակորեն նշում է 31-րդ համարը. **«Երբ Մարդու Որդին գա Իր փառքով և բոլոր սուրբ հրեշտակները Նրա հետ...»**: Եթե մենք ճիշտ ենք, որ նույնացնում ենք այդ դատաստանը Հովելի 3-ի հետ, ապա նրա գտնվելու վայրը Հովսափատի հովիտն է Երուսաղեմից դուրս (3:2): Ազգերը դատվելու են՝ համաձայն Քրիստոսի հրեա եղբայրների նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքի, Մեծ նեղության ընթացքում (Հով. 3:1-2, 12-14, Մատթ. 25:31-46):

25:32. Կարևոր է նշել, որ այստեղ հիշատակվում են երեք դասակարգեր՝ **«ոչխարները»**, **«այծերը»** և **«Քրիստոսի եղբայրները»**: Առաջին երկու խմբերը, որոնց համար Քրիստոսը նստած է դատելու, Մեծ նեղության օրերում ապրող հեթանոսներն են: Երրորդ դասակարգը Քրիստոսի հավատարիմ հրեա եղբայրներն են, որոնք, չնայելով սաստկացող հալածանքներին, չուրացան Նրա անունը Մեծ նեղության ժամանակ:

25:33-40. Թագավորը **«ոչխարներին»** տեղավորում է **Իր աջ կողմում, իսկ «այծերին»՝ ձախ կողմում**: Այնուհետև Նա հրավիրում է **«ոչխարներին»** մտնել **աշխարհի հիմնադրումից** նրանց **համար պատրաստված** Իր փառավոր **Թագավորությունը**: Տրված հիմնավորումն այն է, որ նրանք Նրան **ուտելիք էին տվել**, երբ Նա **սոված էր, խմելիք էին տվել**, երբ **ծարավ էր**, Նրան **ընդունել էին**, երբ Նա **օտարական էր**, Նրան **հագցրել էին**, երբ **մերկ էր**,

այցելել էին Նրան, երբ Նա **հիվանդ** էր և **բանախի մեջ** այցելել էին Նրան: **Արդար** «ոչխարները» նույնիսկ չգիտեին, որ երբևէ այդպիսի բարիք էին արել Թագավորին. իրենց սերնդի օրոք Նա երկրի վրա չի էլ եղել: Այն ժամանակ Նա նրանց բացատրեց, որ օգնելով Իր **այս եղբայրներից ամենավորին՝** նրանք օգնել էին Իրեն: Իր աշակերտներից մեկի համար արվածը վարձատրվում է որպես անձամբ Իր համար արված:

25:41-45. Անարդար «այծերին» ասվեց, որ նրանք **հեռանան** Իրենից **հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է Սատանայի և նրա հրեշտակների համար**, քանի որ Մեծ նեղության ժամանակ նրանք չկարողացան հոգալ Նրան «Հակոբի նեղության ժամանակ»: Այդ ժամանակ նրանք կսկսեն իրենց արդարացնել՝ ասելով, որ Նրան երբեք չեն տեսել, Նա նրանց հիշեցնում է, որ Իր հետևորդներին անտեսելը հաստատում է Իր անտեսումը:

25:46. Այսպիսով, «այծերը» **պիտի գնան հավիտենական տանջանքի մեջ**, իսկ «ոչխարները»՝ **հավիտենական կյանք**: Բայց սա առաջացնում է երկու դժվարություն: Նախ՝ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ ազգերը **մասսայական** են փրկվում կամ կործանվում: Երկրորդ՝ պատմությունը ստեղծում է այնպիսի տպավորություն, որ «ոչխարները» փրկվում են իրենց բարի գործերի շնորհիվ, իսկ «այծերը»՝ դատապարտվում են, քանի որ չկարողացան բարիք գործել: Ինչ վերաբերում է առաջին խնդրին, սպա պետք է հիշել, որ Աստված **ճիշտ այդպես** է վարվում ազգերի հետ: Հինկտակարանյան պատմությունը հարուստ է օրինակներով, երբ ազգերը պատժվում էին իրենց մեղքերի պատճառով (Ես. 10:12-19, 47:5-15, Եզ. 25:6-7, Ամբ. 1:3, 6, 9, 11, 13, 2:1, 4, 6, Աբդ. 10, Չաք. 14:1-5): Չհավատալու պատճառ չկա, որ ազգերը պիտի շարունակեն ճաշակել աստվածային հատուցումը: Մա չի նշանակում, որ ազգի ամեն անհատ ներգրավվելու է տվյալ հատուցման արդյունքում: Աստվածային արդարության սկզբունքները կիրառվելու

են ինչպես ազգային, այնպես էլ անհատական հիմունքներով:

Այս հատվածում «*ethnē*» բառը թարգմանված է որպես «ազգեր», որ միանշանակ կարող է թարգմանվել «հեթանոս»: Ոմանք կարծում են, որ տրված հատվածը նկարագրում է անհատ հեթանոսների դատը: Անկախ նրանից, այն անհատական է, թե ազգային, խնդիրը նրանում է, թե ինչպե՞ս է նման հսկայական ամբոխը հավաքվելու Տիրոջ առջև Պաղեստինում: Թերևս ավելի ճիշտ կլինի մտածել, որ դատաստանի համար հավաքվելու են ազգերի ներկայացուցիչները կամ առանձին դասակարգերը:

Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, սպա այս հատվածը չի կարելի օգտագործել՝ ուսուցանելով, թե փրկությունը գործերով է: Աստվածաշնչի անփոփոխ վկայությունն այն է, որ փրկությունը հավատի միջոցով է, ոչ թե գործերից (Եփ. 2:8-9): Բայց Աստվածաշունչը նաև սովորեցնում է՝ ընդգծելով, որ ճշմարիտ հավատը բարի գործեր է կատարում: Եթե չկան բարի գործեր, սպա դա վկայում է, որ անձը երբեք էլ փրկված չի եղել: Ուստի մենք պիտի հասկանանք, որ հեթանոսները հրեական մնացորդին օգնելու համար չէ որ փրկվում են, այլ քանի որ այդ բարությունն արտացոլում է Աստծո հանդեպ ունեցած նրանց սերը:

Անհրաժեշտ է նշել ևս երեք կետ: Առաջին՝ ասվում է, որ Թագավորությունն արդարների համար պատրաստված էր աշխարհի հիմնադրումից (հ. 34), իսկ դժոխքը՝ Սատանայի և նրա հրեշտակների համար (հ. 41): Աստված փափագում է մարդկանց օրհնել. ի սկզբանե դժոխքը նախատեսված չէր մարդկային ցեղի համար: Բայց եթե մարդիկ ինքնակամ մերժում են կյանքը, բնականաբար ընտրում են մահը:

Երկրորդ կետը. Տեր Հիսուսը խոսում էր հավիտենական կրակի (նույն բառն է ինչոր «մշտական» բառը) մասին (հ. 41), հավիտենական տանջանքի (հ. 46) և հավիտենական կյանքի (հ. 46): Նա, Ով սովորեցնում էր հավիտենական կյանքի մասին, սովորեցնում էր նաև հավիտենական տանջանքի մասին: Քանի որ նույն «հավիտե-

նական» բառը օգտագործվում է թե՛ կյանքը, թե՛ դատապարտությունը նկարագրելու համար, սպա մեկն առանց մյուսի ընդունելը հակասական է: Եթե բառը, որ թարգմանված է որպես «հավիտենական», չի նշանակում «*մշտական*», սպա հունարենում չկա մեկ այլ բառ, որ կարողանար փոխանցել այդ իմաստը: Բայց մենք գիտենք, որ այն իսկապես «մշտական» է նշանակում, որովհետև այն օգտագործվել է հավիտենական Աստծուն նկարագրելիս (1 Տիմ. 1:17):

Եվ վերջապես, հեթանոսների դատաստանը մեզ համոզիչ կերպով հիշեցնում է, որ Քրիստոսը և Իր ժողովուրդը միասնական են, ինչ հուզում է նրանց, հուզում է Աստծուն: Մենք ունենք հսկայական ներուժ, որպեսզի Նրան բարություն ցուցաբերենք՝ դա անելով Աստծուն սիրողների համար:

XIV. ԹԱԳԱՎՈՐԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ ԵՎ ՄԱՀՆԸ (26-27-րդ գլ.)

Ա. Հիսուսին սպանելու դավադրությունը (26:1-5)

26:1-2. Այս Ավետարանում չորրորդ և վերջին անգամ մեր Տերը կրկնեց Իր նախագուշացումը, որ Նա պիտի մահանա (16:21, 17:23, 20:18): Նրա հայտարարությունը մատնանշում էր այն, որ նրանց փոխհարաբերությունների ժամանակը մոտենում էր ավարտին Չատկի և Իր խաչելության միջակայքում. «**Գիտեք, որ այս երկու օրից զատկի տոնն է, և Մարդու Որդին կմատնվի խաչվելու**»: Այդ տարի Չատկիը պետք է գտներ իր իսկական իմաստը: Չատկի Գառը վերջապես հայտնվել էր և շուտով պիտի մորթվեր:

26:3-5. Ճիշտ այն պահին, երբ Նա ասաց այդ խոսքերը, **գլխավոր քահանաները, դպիրները և ժողովրդի ավագները հավաքվեցին Կայիափա քահանայապետի սրահում**, որպեսզի ծրագրեին իրենց ռազմավարությունը: Նրանք ուզում էին Հիսուսին գաղտնի ձերբակալել և սպանել, բայց կարծում էին՝ խելամիտ չէր լինի այդ անել

տոնի ժամանակ, քանի որ **ժողովուրդը** կարող էր Նրա մահապատժին դիմադրել: Անհավատալի է, որ Իսրայելը կառավարող կրոնական առաջնորդները, ծրագրում էին իրենց Մեսիայի մահը: Առաջինը նրանք պետք է ընդունեին Նրան և Թագավոր հռչակեին: Փոխարենը, նրանք Նրա թշնամիների ավանգարդը դարձան:

Բ. Հիսուսի օծումը Բեթանիայում (26:6-13)

26:6-7. Քահանաների դավադրությունների, աշակերտների ճղճիմ վիճաբանության, Հուդայի դավաճանության կողքին այս դեպքը հաճելի սփոփանք էր: **Երբ Հիսուսը Բեթանիայում էր՝ բորոտ Սիմոնի տանը, Նրան մոտեցավ մի կին և Նրա գլխի վրա շիջ ցրեց շատ թանկագին օծանելիք**: Նրա գոհաբերության արժեքը արտահայտեց Տեր Հիսուսի հանդեպ նրա նվիրվածության խորությունը՝ ասելով, որ իրականում աշխարհում չկա մի բան, որ չսփազանց լավ լինի Նրա համար:

26:8-9. Նրա աշակերտները և մասնավորապես Հուդան (Հովհ. 12:4-5) այդ արարքը նկատեցին որպես հսկայական **վատնում**: Նրանք կարծում էին, որ ավելի լավ կլիներ այդ գումարն **աղքատներին տալ**:

26:10-12. Հիսուսն ուղղեց նրանց սխալ մտածողությունը: Կնոջ արարքը գեղեցիկ էր և ոչ թե վատնում: Ավելին՝ այն ճիշտ ժամանակին արվեց: Աղքատներին միշտ էլ կարելի է օգնել: Բայց պատմության մեջ Փրկիչը միայն մեկ անգամ կարող էր օծվել Իր թաղման համար: Ժամը հասել էր, և միայն մի **կին**՝ հոգևոր խորաթափանցությամբ Նրան հասկացավ: Հավատալով Իր մահվան մասին Տիրոջ կանխատեսումներին, նա որոշել էր՝ հիմա կամ երբեք: Ինչպես պարզվեց, նա ճիշտ էր: Մյուս կանանց, որ թաղումից հետո եկան Նրա մարմինն օծելու, խանգարեց հարությունը (Մարկ. 16:1-6):

26:13. Տեր Հիսուսը հավերժացրեց նրա սիրո պարզ արարքը. «**Ճշմարիտ են ասում ձեզ, թե ամբողջ աշխարհում ուր որ այս Ավետարանը քարոզվի, այս կնոջ արածն**

Էլ կպատմվի՝ նրա հիշատակի համար»:

Ճշմարիտ ծառայության ցանկացած արարք երկնային սրահները լցնում է անուշ բուրմունքով և անջնջելիորեն արձանագրվում է Տիրոջ հիշողության մեջ:

Գ. Հուդայի մատնությունը (26:14-16)

26:14-15. Այն ժամանակ **տասներկուսից մեկը՝** աշակերտներից մեկը, որ ապրել էր Տեր Հիսուսի հետ, քայլել էր Նրա հետ, տեսել էր Նրա հրաշքները, լսել էր Նրա անգուգական ուսուցումը և ականատես էր եղել առանց մեղքի կյանքի հրաշքին, նա, ում Հիսուսը կարող էր կոչել «իմ մոտիկ բարեկամը... ով հացս էր ուտում» (Մդմ. 41:9), իր կրունկը բարձրացրեց Աստծո Ռոդու դեմ: **Հուդա Իսկարիովտացին գնաց գլխավոր քահանաների մոտ** և համաձայնեց ծախել իր Ուսուցչին **երեսուն կրտոր արծաթով:** Քահանաները նրան տեղում վճարեցին անարգ գումար՝ շուրջ 15 դոլար:

Ապշեցուցիչ է Միմոնի տանը Հիսուսին օժող կնոջ և Հուդայի միջև եղած հակադրությունը: Նա բարձր գնահատեց Փրկչին: Հուդան Նրան խիստ ցածր գնահատեց:

26:16. Այսպիսով, նա, ով բարիքից բացի ուրիշ ոչինչ չէր տեսել Հիսուսից, գնաց՝ պատրաստելու սարսափելի գործարքի իր բաժինը:

Դ. Վերջին գատիկը (26:17-25)

26:17. **Բաղարջակերաց տոնի առաջին օրն էր** մի ժամանակ, երբ հրեական տներին դուրս էին հանում բոլոր թթխմորները: Ինչպիսի մտքեր էին պարուրել Տիրոջը, երբ Նա **աշակերտներին** ուղարկեց Երուսաղեմ, որ **պատրաստեն Չատիկը:** Ընթրիքի յուրաքանչյուր մանրուք դառը նշանակություն ուներ:

26:18-20. Տեր Հիսուսն աշակերտներին ուղարկեց՝ փնտրելու մի **մարդու, ում անունը նշված չէ,** որպեսզի նա նրանց ուղեկցեր նախատեսված տունը: Գուցե հրահանգների անորոշությունը նախատեսված էր դավադիրներին շփոթեցնելու համար: Ամեն դեպքում, մենք տեսնում ենք անձանց

մասին Հիսուսի լիարժեք իրազեկությունը, նրանց գտնվելու վայրը և նրանց գործակցելու պատրաստակամությունը: Ուշադրություն՝ նրա դարձրեք Նրա խոսքերին. «**Վարդապետն ասում է. Իմ ժամանակը մոտ է, աշակերտներին հետ քո տանն եմ անելու գատիկը**»: Նա անվրդով դիմավորեց Իր մոտալուտ մահը: Կատարյալ շնորհով Նա կազմակերպեց Ընթրիքը: Ի՞նչ մեծ առանձնաշնորհում էր այդ անանուն մարդու համար, որ իր տունը տրամադրեց վերջին Չատիկի համար:

26:21-24. Երբ բոլորն ուտում էին, Հիսուսը ցնցող հայտարարություն արեց, որ տասներկուսից **մեկը մատնելու է** Իրեն: Աշակերտների սիրտը լցվեց վշտով, տրդամությամբ և կասկածով: Նրանք մեկը մյուսի հետևից հարցրին. «**Տեր, մի՞թե ես եմ**»: Երբ բոլորը՝ բացի Հուդայից հարցրին, Հիսուսը նրանց ասաց, որ դա նա է, **ով** իր ձեռքը **ամանի մեջ տարավ** Իր հետ: Տերը վերցրեց պատառը, այն թաթախեց արգանակի մեջ և Հուդային տվեց (Հովհ. 13:26)՝ ի նշան հատուկ մտերմության և բարեկամության: Նա նրանց հիշեցրեց, որ այն, ինչ պիտի տեղի ունենար, անխուսափելի էր: Բայց այդ հանգամանքը դավաճանին չէր ազատում պատասխանատվությունից. **լավ կլինեք այն մարդու համար, եթե ինքը ծնված չլինեք:** Հուդան կանխամտածված կատարեց Փրկչին ծախելու ընտրությունը, որի համար էլ անձնական պատասխանատվություն էր կրում:

26:25. Երբ Հուդան վերջապես հարց տրվեց, թե արդյոք ի՞նքն է, Հիսուսը պատասխանեց՝ այո:

Ե. Տիրոջ առաջին ընթրիքը (26:26-29)

Հովհ. 13:30-ից մենք գիտենք, որ Հուդան պատառն առնելուն պես դուրս գնաց, և գիշեր էր: Ուստի կարող ենք եզրակացնել, որ նա չէր մասնակցում, երբ հաստատվում էր Տիրոջ Ընթրիքը (թեև զգալի տարածայնություններ կան այս հարցի շուրջ):

26:26. Այն բանից հետո, երբ ավարտվեց վերջին Չատիկը, Փրկիչը հաստատեց այն, ինչը մենք անվանում ենք Տերունական

Ընթրիք: Կարևոր բաղադրիչները՝ հացը և գինին՝ որպես գառակի Ընթրիքի մի մաս արդեն սեղանի վրա էին. Հիսուսը նոր իմաստ տվեց դրանց: Նախ Նա **հացը վերցրեց, օրհնեց և կտրեց** այն: **Տալով** այն **աշակերտներին**, Նա ասաց. «**Վերցրե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը**»: Քանի որ Նրա մարմինը դեռ չէր խաչվել, պարզ է, որ Նա փոխարենական իմաստով էր խոսում՝ օգտագործելով հացը, որ խորհրդանշում է Իր մարմինը:

26:27-28. Նույնը կարելի է ասել **գավաթի** համար. անոթն օգտագործում էին, որպեսզի հայտարարեին նրա պարունակության մասին: Գավաթը պարունակում էր որթատունկի բերքը, որն իր հերթին, խորհրդանշում էր **Նոր Ուխտի Արյունը**: Այդ նոր, շնորհի անվերապահ ուխտը կհաստատվի Նրա թանկագին **Արյամբ**, որը թափվեց շատերի մեղքերի թողության համար: Նրա արյունը *բավարար էր*՝ ապահովելու բոլորի ներումը: Բայց այստեղ այն թափվում էր **շատերի համար** այն իմաստով, որ այն *արդյունավետ էր*՝ հեռացնելու միայն նրանց մեղքերը, ովքեր հավատում են:

26:29. Այնուհետև Փրկիչն Իր աշակերտներին հիշեցրեց, որ **որթի բերքից չէր խմելու** նրանց հետ, մինչև այն օրը, երբ վերադառնա երկրի վրա թագավորելու: Այդ ժամանակ գինին նոր նշանակություն կունենա. այն խոսելու է Իր **Հոր Թագավորության** ուրախության և երանության մասին:

Հաճախ հարց է առաջանում. ի՞նչ պետք է օգտագործենք Տերունական Ընթրիքի համար՝ թթխմորո՞վ, թե՞ անթթխմոր հաց, թթված գինի, թե՞ չթթված: Մի փոքր կասկած կա այն մասին, որ Տերը օգտագործել է անթթխմոր հաց և թթված գինի (այն օրերում *բոլոր* գինիները թթվում էին): Նրանք, ովքեր ապացուցում են, որ թթխմորով հացը չի համապատասխանում խորհրդանիշին (թթխմորը մեղքի պատկերն է), պետք է հասկանան, որ նույնը կարելի է ասել թթված գինու մասին: Ողբերգություն է, երբ մենք այնքան ենք զբաղվում բաղադրիչ *տարրերով*, որ չենք կարողանում տեսնել հենց *Իրեն*՝ Տիրոջը: Պողոսը շեշտում է, որ

կարևոր է հացի հոգևոր նշանակությունը, ոչ թե հացը. «... Քրիստոսը՝ մեր Չատիկը, մեզ համար զոհվեց. ուրեմն եկե՛ք տոնը կատարենք ոչ թե հին խմորով, ո՛չ էլ չարության և անզգամության խմորով, այլ՝ անկեղծության և ճշմարտության անխմոր հացով» (1 Կոր. 5:7-8): Կարևորը ոչ թե *հացի* միջի թթխմորն է, այլ մեր *կյանքի* թթխմորը:

2. Ինքնավստահ աշակերտները (26:30-35)

26:30. Տերունական Ընթրիքից հետո փոքրիկ խումբը **օրհնություն** երգեց, հավանաբար Մղմ. 113-118-ից վերցված՝ «Մեծ Հալել»: Այնուհետև նրանք դուրս եկան Երուսաղեմից, անցան Կեդրոն Հեղեղատի միջով և Ձիթենյաց լեռան արևմտյան լանջով բարձրացան Գեթսեմանի պարտեզ:

26:31. Իր ողջ երկրավոր ծառայության ընթացքում Տեր Հիսուսը բարեխղճորեն զգուշացրել էր Իր աշակերտներին առաջիկա ճանապարհի մասին: Այժմ էլ Նա նրանց ասաց, որ բոլորը այդ **գիշեր** Իրեն կլքեն: Երբ նրանք տեսնեն բռնկվող փոթորկի կատաղությունը, վախով կլցվեն: Իրենց կյանքը փրկելու համար կլքեն իրենց Ուսուցչին: Կատարվելու էր Չաքարիայի մարգարեությունը. «Ես հովվին պիտի հարվածեմ, ու հոտի ոչխարները պիտի ցրվեն» (13:7):

26:32. Բայց Նա նրանց առանց հույսի չի թողնի: Չնայած նրանք ամաչելու են, որ եղել են Նրա հետ, Նա երբեք նրանց չի թողնի: Մեռելներից հարություն առնելուց հետո Նա կհանդիպի նրանց **Գալիլիայում**: Հրաշալի, երբեք չփոփոխվող Բարեկամ:

26:33-34. Պետրոսն արագ ընդհատեց Տիրոջը՝ հավաստիացնելով, որ եթե անգամ մյուսները Նրան լքեն, նա **երբեք** չի անի նման բան: Հիսուսն ուղղեց «*երբեք*»-ը՝ դարձնելով «**այս գիշեր... երեք անգամ**»: Դեռ արադաղը չկանչած՝ այդ պոռթկուն, իմպուլսիվ աշակերտը **երեք անգամ** ուրանալու էր իր Ուսուցչին:

26:35. Ծարունակելով պաշտպանել իր նվիրվածությունը՝ **Պետրոսը** պնդում էր, որ ավելի լավ էր **մեռնել** Քրիստոսի հետ, քան Նրան **ուրանալ**: Բոլոր **աշակերտ-**

ներն էլ այդպես էին ասում: Նրանք անկեղծ էին և դա ասում էին, որովհետև նրանք չէին ճանաչում իրենց սրտերը:

Է. Տառապանքը Գեթսեմանիում (26:36-46)

Ոչ որ չի կարող սկսել Գեթսեմանի այգու նկարագրությունը՝ առանց գիտակցելու, որ քայլում է սուրբ հողի վրա: Ամեն ոք, ով փորձում է մեկնաբանել այս համարները ակնաձայնի երկյուղով և զսպվածությամբ է մոտենում դրան, ինչպես գրում էր Գայ Զինգրը. «Այս իրադարձությունների աստվածային բնույթը ստիպում է վախենալ, որ հանկարծ չփչացնենք այն՝ որևէ բանի դիպչելով»:

26:36-38. Մտնելով **Գեթսեմանի** (նշանակում է «ձիթապտղի մեծ տաշտ» կամ «ձին թապտղի մամլիչ»)՝ **Հիսուսը աշակերտներին** տասնմեկից ութին պատվիրեց **նստել** և սպասել, այնուհետև Իր հետ վերցրեց **Պետրոսին և Չեբեղեոսի երկու որդիներին** և խորացավ պարտեզի մեջ: Կարելի՞ է արդյոք սրանից ենթադրել, որ տարբեր աշակերտներ տարբեր կարողություններ ունեն Փրկչին Իր տանջանքների ժամանակ կարեկցություն ցուցաբերելիս:

Նա սկսեց տրտմել ու վշտանալ: Նա անկեղծորեն խոստովանեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, որ Իր **հոգին մահու չափ տրտում է:** Դա, անկասկած, Նրա սուրբ հոգու անասելի հակակրանքն էր, քանի որ Նա կանխագգում էր, որ դառնալու էր մեր մեղքերի թողության ընծան: Մենք, որ մեղավոր ենք, չենք կարող պատկերացնել, թե ինչ է նշանակում Նրա՝ Անմեղի՝ մեզ համար մեղք դառնալը (2 Կոր. 5:21):

26:39. Չարմանալի չէ, որ Նա այդ երեքին թողեց և պարտեզի մեջ **մի քիչ առաջ գնաց:** Այլևս ոչ ոք չէր կարող կիսել Նրա տառապանքը կամ աղոթել Նրա աղոթքը. «**Հայր Իմ, եթե կարելի է, թող այս բաժակն անցնի Ինձանից, բայց ոչ թե ինչպես Ես եմ կամենում, այլ ինչպես Դու:**»:

Եթե կարծում ենք, որ այս աղոթքն արտահայտում է դժկամություն կամ ետ դառ-

նալու ցանկություն, պետք է հիշենք Հովհ. 12:27-28-ի Նրա խոսքերը. «Հիմա հոգիս խռովված է, և ի՞նչ ասեմ՝ Հայր, փրկի՛ր Ինձ այս ժամից. սակայն հենց այս նպատակի համար Ես եկա այս ժամին: Հայր, փառավորի՛ր Քո անունը»: Հետևաբար աղոթելիս, որ **այս բաժակն անցնի** Իրենից, Նա *չէր* խնդրում Իրեն խաչից ազատել: Հենց դա էր Նրա՝ աշխարհ գալու նպատակը:

Նրա աղոթքը հռետորական էր, այսինքն՝ այն նախատեսված չէր պատասխան ստանալու համար, այլ մեզ դաս տալու համար: Այլ կերպ ասած, Հիսուսն ասում էր. «Հայր Իմ, եթե որևէ այլ ճանապարհ կա, որ ամբարիշտ մեղավորները կարողանային փրկվել՝ բացի խաչ տանող Իմ ճանապարհից, հենց հիմա հայտնի՛ր այդ ճանապարհը: Սակայն այս ամենի մեջ, Ես ուզում եմ, որ Դու իմանաս՝ Քո կամքին հակառակ Ես ոչինչ չեմ ուզում»:

Ի՞նչ էր պատասխանը: Ոչ մի պատասխան չկար. երկինքները լռում էին: Այս պերճախոս լռությունից մենք գիտենք, որ մեկ ուրիշ ճանապարհ չկար հանցավոր մեղավորներին արդարացնելու համար, Աստված ուրիշ ճանապարհ չունե՛ր՝ բացի Հիսուս Թրիստոսի՝ անմեղ Փրկչի զոհաբերությունից, որ մեռնելու էր որպես մեր Փոխանորդը:

26:40-41. Վերադառնալով **աշակերտների մոտ՝ Նա նրանց քնած գտավ:** Նրանց հոգին **հոժար էր**, բայց **մարմինը՝ տկար:** Մենք չենք համարձակվի նրանց դատապարտել, եթե մտածենք մեր սեփական աղոթքի կյանքի մասին: Մենք ավելի լավ ենք քնում, քան աղոթում. մեր մտքերը թափառում են, երբ պետք է արթուն մնան: Որքան հաճախ Տերը մեզ պիտի ասի, ինչպես Պետրոսին ասաց. «... **Մեկ ժա՛մ էլ չկարողացաք արթուն մնալ Ինձ հետ: Արթո՛ւն մնացեք և աղո՛թք արեք, որ փորձության մեջ չմտնեք:**»:

26:42. Երկրորդ անգամ նորից գնաց, Նա **աղոթում էր՝** արտահայտելով Իր հնազանդությունը Հոր կամքի հանդեպ: Տա-

ռապանքի ու մահվան բաժակը Նա պատրաստ էր մինչև վերջ խմելու:

Նա ստիպված էր միայնակ լինել Իր աղոթքի կյանքում: Նա աշակերտներին աղոթել էր սովորեցնում և աղոթում էր նրանց ներկայությամբ, բայց նրանց *հետ* Նա երբեք չաղոթեց: Նրա Անձի և գործի յուրահատկությունը բացառում էր մյուսների մասնակցությունն Իր աղոթքի կյանքում:

26:43-45. Երբ Նա աշակերտների մոտ եկավ երկրորդ անգամ, նրանք **նորից քնած էին:** Երբ նա երրորդ անգամ, Նա աղոթում էր, նրանք էլի քնում էին: Այն ժամանակ Նա նրանց ասաց. **«Սրանից հետո քնե՛ք և հանգստացե՛ք. ահա ժամը հասավ, և Մարդու Որդին կմատնվի մեղավորների ձեռքը»:**

26:46. Նրա հսկումի պահին Նրա հետ արթուն հսկելու հնարավորությունը բաց թողնվեց: Մատնողի ոտնաձայներն արդեն լսելի էին: Հիսուսն ասաց. **«Ելե՛ք, գնանք այստեղից»**, - ոչ թե նահանջել, այլ պետք էր թշնամուն ընդառաջ գնալ:

Պարտեզից հեռանալուց առաջ եկե՛ք մեկ անգամ ևս կանգ առնենք, որպեսզի լսենք Նրա դառը հեկեկոցը, հասկանանք Նրա վշտի խորությունը և ամբողջ սրտով Նրան շնորհակալություն հայտնենք:

Ը. Գեթսեմանիում Հիսուսը մատնվեց և ձերբակալվեց (26:47-56)

Իր արարածների մեկի կողմից անմեղ Փրկչի մատնությունը պատմության ամենագարմանայի անոմալիան է: Մարդու սարսափելի անկումից բացի՝ մենք կատարյալ շփոթմունքի մեջ կլինեինք բացատրություն գտնելու առումով, թե ինչը հիմք ծառայեց Հուդայի աններելի դավաճանության համար:

26:47. Եվ մինչ Հիսուսը **դեռ խոսում էր** տասնմեկի հետ, **Հուդան** եկավ **սրերով և մահակներով** զինված մի մեծ բազմության հետ: Անշուշտ, զենքը մաս չէր կազմում Հուդայի ծրագրում, նա երբեք չէր տեսել, որ Փրկիչը ընդդիմանար կամ ի պատասխան հարվածեր: Միգուցե, զենքը խորհրդանշում է գլխավոր քահանաների և ժողովրդի ա-

վագների Հիսուսին բռնելու վճռականությունը՝ փախուստի ոչ մի հնարավորություն չտալով Նրան:

26:48. Հուդան բազմությանը օգնելու համար որպես նշան պիտի օգտագործեր համբույրը, որպեսզի Հիսուսին Իր աշակերտներից տարբերեին: Միտ համընդհանուր խորհրդանիշը պետք է պատվազրկվեր ամենաստոր օգտագործման համար:

26:49. Մոտենալով Հիսուսին՝ Հուդան ասաց. **«Ողջո՛ւյն, վարդապետ»**, այնուհետև **համբուրեց Նրան:** Այս հատվածում **համբույր** բառի համար օգտագործված են երկու տարբեր բառեր: Առաջինը՝ 48-րդ համարում՝ սովորական համբույր բառն է: Իսկ 49-րդ համարում օգտագործված է ավելի ուժեղ բառ, որ նշանակում է կրկնվող կամ ցուցադրական համբույր:

26:50. Հանդարտությամբ, համոզիչ խորաթափանցությամբ Հիսուսը հարցրեց. **«Ընկե՛ր, ինչի՞ համար եկար»:** Կասկած չկա, որ այս խոսքերը եռացրած ջրի նման լցվեցին Հուդայի վրա, սակայն իրադարձություններն սկսեցին արագ զարգանալ: Բազմությունը խոնվեց և առանց հասպաղելու՝ բռնեցին Հիսուսին:

26:51. Աշակերտներից մեկը, Հովի. 18:10-ից գիտենք, որ դա Պետրոսն էր, **իր սուրը հանեց և կտրեց** քահանայապետի **ծառայի ականջը:** Անհավանական է, որ Պետրոսը նպատակաուղղվել էր ականջի վրա, անկասկած, նա մտադրվել էր մահացու հարված հասցնել: Աստվածային նախախնամությանը պետք է վերագրենք այն, որ նրա նշանառությունն այնքան վատ էր, որքան նրա դատողությունը:

26:52. Տեր Հիսուսի բարոյական մեծությունը վառ կերպով փայլում էր նաև այստեղ: Նախ Նա աստեղ Պետրոսին. **«Սուրդ տե՛ղը դիր, որովհետև բոլոր սուր վերցնողները սրով պիտի մեռնեն»:** Քրիստոսի Թագավորության մեջ հաղթանակները մարմնական միջոցներով չեն նվաճում: Հոգևոր պատերազմ մղելիս զինված ուժերին դիմելը աղետ է հրավիրում: Թող սուր օգտագործեն Թագավորության թշնամիներ-

րը, նրանք վերջնական պարտություն են կրելու: Քրիստոսի զինվորը թող դիմի աղոթքին, Աստծո Խոսքին և Հոգու զորությանը լցված կյանքին:

Բժիշկ Ղուկասից մենք իմանում ենք, որ Հիսուսը բժշկեց Մաղքոսի ականջը, քանի որ դա էր տուժածի անունը (Ղուկ. 22:51, Հովհ. 18:10): Արդյոք սա շնորհի հրաշալի դրսևորում չէ՞: Նա սիրում էր նրանց, ովքեր ասում էին Իրեն, բարություն էր ցույց տալիս նրանց, ովքեր Իր կյանքն էին փրկատրում:

26:53-54. Եթե Հիսուսն ուզենար դիմադրել այդ ամբոխին, չէր սահմանափակվի Պետրոսի խոհուկ սրով: Մի ակնթարթում Նա կարող էր խնդրել, և կուղարկվեր **ավելի քան տասնչորս գունդ հրեշտակներ** (36,000 - 72,000): Բայց դա միայն կխափաներ Աստծո ծրագիրը: **Գրքերը** կանխասել էին մատնությունը, Նրա տառապանքները, խաչելությունը և հարությունը, և դրանք պիտի **կատարվեին**:

26:55. Այնուհետև Տեր Հիսուսը հիշեցրեց բազմությանը, թե ինչպիսի անհեթեթություն էր Իրեն **բռնելու** համար գենքով **գալը**: Նրանք երբեք Նրան չէին տեսել բռնություն գործադրելիս կամ թալանով զբաղվելիս: Փոխարենը՝ Նա հանդարտ Ուսուցիչ էր՝ **ամեն օր տաճարում** նստած: Նրանք կարող էին Նրան հեշտությամբ բռնել այն ժամանակ, բայց չարեցին: Էլ ինչո՞ւ էին հիմա **սրերով ու մահակներով** եկել: Մեղմ ասած, նրանց վարքագիծն անտրամաբանական էր:

26:56. Չնայելով այս բոլորին՝ Փրկիչը գիտակցում էր, որ մարդկային չարությունը կարող էր հաջողության հասնել միայն Աստծո որոշակի ծրագրի համաձայն. **«Բայց այս ամենը եղավ, որպեսզի մարգարեների Գրքերը կատարվեն»**: Հասկանալով, որ Վարդապետն այլևս չի կարող ազատվել, **բոլոր աշակերտները լքեցին ու խուճապահար փախան**: Եթե նրանց վախկոտությունն աններելի էր, ապա մերը՝ առավել ևս: Նրանք դեռևս Մուրբ Հոգին չէին ստացել, իսկ մենք ստացել ենք:

Թ. Հիսուսը Կայիափայի առջև (26:57-68)

26:57. Տեր Հիսուսի գործով երկու հիմնական դատավարություն էր ընթանում՝ կրոնական դատավարություն հրեական առաջնորդների առջև և քաղաքացիական դատավարություն հռոմեական իշխանությունների առջև: Բոլոր չորս Ավետարանների արձանագրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դատավարությունն ընթանում էր երեք փուլով: Հովհաննեսի գրառումները ցույց են տալիս, որ Հիսուսին առաջին հերթին տարան Աննայի՝ Կայիափայի աներոջ մոտ: Նկարագրությունը Մատթեոսի Ավետարանում սկսվում է երկրորդ փուլից՝ **Կայիափա քահանայապետի** տանից: Ատյանը (սինողը կամ սինողիոնը) այնտեղ էր **հավաքվել**: Սովորաբար մեղադրյալին հնարավորություն էր տրվում պատրաստվելու իր պաշտպանությանը: Բայց կրոնական առաջնորդներն աճապարանք փորձում էին գործը վերջացնել՝ Հիսուսին գրկելով արդար դատավարությունից (Ես. 53:8):

Այդ գիշեր փարիսեցիները, սադուկեցիները, **դպիրներն ու ժողովրդի ավագները**՝ ատյանի անդամները, ցուցաբերեցին բացարձակ արհամարհանք Օրենքի հանդեպ, որի «պաշտպաններն» էին իրենք: Նրանք ո՛չ գիշերով, ո՛չ էլ որևէ հրեական տոնի ժամանակ հավաքվելու իրավունք չունեին: Նրանց արգելված էր վկաներին կաշառել՝ սուտ վկայություններ տալու համար: Մահվան դատավճիռը չպետք է իրականացվեր, քանի դեռ գիշերը չէր անցել: Եվ եթե նրանք հավաքված չէին քարահատակ Սրահում՝ տաճարի տարածքում, նրանց դատավճիռը պարտավորեցնող չէր: Հիսուսից շուտ ազատվելու անհամբերությունից հրեական իշխող շրջանակները չամաչեցին իրենց իսկ սեփական օրենքների խախտումից:

26:58. Կայիափան նախագահող դատավորն էր: Ատյանը, ըստ երևույթին, հանդես էր գալիս ինչպես ատենակալների, այնպես էլ մեղադրողների դերում՝ մեղմ ասած անհավասար համադրություն: Հիսուսն Ամ-

բաստանյալն էր: Իսկ **Պետրոսը** հուսալի հեռավորությունից հետևում էր. նա նստեց **ծառաների հետ՝ վերջը տեսնելու** համար:

26:59-61. Հրեա առաջնորդների համար դժվար էր գտնել **սուտ վկայություն Հիսուսի դեմ**: Նրանք ավելի մեծ հաջողություն կունենային, եթե դատական ընթացակարգում կատարեին իրենց առաջնահերթ պարտականությունը և փնտրեին Նրա անմեղության ապացույցները: Վերջապես, **երկու սուտ վկաներ** ներկայացրին Հիսուսի խոսքերի աղճատված շարադրանքը. «Քանդեցե՛ք այդ տաճարը և երեք օրում ես կկանգնեցնեմ այն» (Հովհ. 2:19-21): Ըստ վկաների՝ Նա սպառնացել էր **քանդել** Երուսաղեմի **տաճարը**, իսկ հետո այն վերակառուցել: Իրականում Նա կանխատեսել էր Իր մահը և հաջորդող հարությունը: Այժմ հրեաները Նրա կանխատեսումն օգտագործեցին որպես Նրա սպանության արդարացում:

26:62-63. Այս բոլոր մեղադրանքների ընթացքում Տեր Հիսուսը ոչինչ չասաց. «... Ինչպես ոչխարը մուռջ է Իր խուզողների առաջ, այնպես Իր բերանը չբացեց» (Ես. 53:7): Քահանայապետը, Նրա լռությունից զրգոյված, պատասխան էր պահանջում: Փրկիչը դեռ խուսափում էր պատասխանից: Վերջապես քահանայապետն ասաց Նրան. **«Երդվեցնում եմ Քեզ կենդանի Աստծով, որ մեզ ասես, թե Դո՛ւ ես Քրիստոսը՝ Աստծո Որդին»**: Մովսեսի օրենքը պահանջում էր, որ հրեան քահանայապետին պատասխանի, երբ նա նրան երդվեցնում է (Գև. 5:1):

26:64. Լինելով Օրենքին հնազանդ հրեա՝ Հիսուսը պատասխանեց. **«Դո՛ւ ասացիր»**: Այնուհետև Նա ավելի որոշակի հաստատեց Իր Օծյալ լինելը և աստվածությունը. **«Բայց ասում եմ ձեզ, որ սրանից հետո կտեսնեք Մարդու Որդուն գորության աջ կողմում նստած և երկնքի ամպերով գալիս»**: Ըստ էության, Նա ասում էր. «Ես եմ Քրիստոսը՝ Աստծո Որդին, ինչպես դու ասացիր: Այժմ Իմ փառքը քողարկված է մարդու մարմնի մեջ. Ես բոլորովին ուրիշ

Մարդ եմ երևում: Դուք Ինձ տեսնում եք Իմ նվաստացման օրերում: Բայց գալու է այն օրը, երբ դուք՝ հրեաներդ, կտեսնեք Ինձ՝ որպես փառավորված, Աստծուն հավասար բոլոր առումներով՝ նստած Նրա աջ կողմում և երկնքի ամպերով գալիս»:

64-րդ համարում երկրորդ դեմքի **դերասնուն**⁵⁰ օգտագործված է եզակի թվով, այսինքն՝ այն վերաբերում է Կայիափային: Երկրորդ և երրորդ անգամ այն դրված է հոգնակի թվով, քանի որ վկայակոչում է այն հրեաներին, ովքեր պիտի ապրեն Քրիստոսի փառավոր հայտնության ժամանակ և պիտի հստակ տեսնեն, որ Նա Աստծո Որդին է:

«Երբեմն պնդում են, - գրում է Լենսկին, - որ Հիսուսը երբեք Իրեն չի կոչել Աստծո Որդի: Այստեղ (հ. 46) Նա *երդվում է*, որ Նա ոչ այլ ոք է, քան Աստծո Որդի»:⁵¹

26:65-67. Կայիափայի հարցը նպատակակետին դիպավ: Հիսուսն ակնարկեց Դանիելի մեսիական մարգարեությունը. «Գիշերվա տեսիլքներում տեսնում էի, և ահա Մարդու Որդու նման մեկը երկնքի ամպերով եկավ և Հինավուրցին մոտեցավ, և Նրա առաջ բերին նրան» (Դան. 7:13): Քահանայապետի արձագանքն ապացուցում է, որ նա հասկացել էր Հիսուսի՝ Աստծո հետ Իր հավասարության մասին հայտարարությունը (տե՛ս Հովհ. 5:18): Նա իր քահանայապետական **հանդերձները պատռեց** ի նշան այն բանի, որ վկան հայիոյություն էր անում: Ասոյանին ուղղված նրա զայրացկոտ խոսքերը Հիսուսին մեղավոր էին հռչակում: Երբ դատավճռի մասին հարց տրվեց, խորհուրդը պատասխանեց. **«Մահապարտ է»**:

26:68. Դատաստանի երկրորդ փուլն ավարտվեց նրանով, որ իրավաբանները Մեղադրյալին ծեծում էին և թքում Նրա երեսին, իսկ հետո ծաղրանքով Նրանից պահանջում, որ եթե **Քրիստոսն** է, թող ցուցադրի Իր գորությունը՝ բացահայտելով Իրեն խփողներին: Ամբողջ դատաքննությունը ոչ միայն անօրինական էր, այլ նաև խայտառակություն:

Ժ. Պետրոսն ուրանում է Հիսուսին և դառնորեն լացում (26:69-75)

26:69-72. Այժմ Պետրոսի ամենամռայլ ժամն էր: Երբ նա դուրսը՝ **գավթում, նստած** էր, մի երիտասարդ կին անցավ կողքով և նրան մեղադրեց, որ նա Հիսուսի գործակիցն է եղել: Նրա ուրացումը վճռական էր և արագ. **«Ես չգիտեմ, թե ինչ ես ասում»:** Նա դուրս եկավ գավթից, հավանաբար որ իրեն նորից չնկատեն: Բայց այնտեղ մի **ուրիշ աղջիկ** բոլորի առջև ճանաչեց նրան՝ որպես **Նագովրեցի Հիսուսի հետ** եղողներից մեկի: Այս անգամ նա երդվեց, որ **Այդ Մարդուն** չի ճանաչում: **«Այդ Մարդը»** եղել էր նրա Վարդապետը:

26:73-74. Եվ քիչ հետո այնտեղ կանգնած մի քանի մարդիկ մոտեցան, և ասացին. **«Անշուշտ դու էլ նրանցից ես, քանի որ քո խոսվածքը քեզ մատնում է»:** Միայն պարզ ուրացումն այլևս բավարար չէր, այս անգամ նա հաստատեց այն անիծելով ու երդվելով. **«Այն մարդուն չեմ ճանաչում»:** Եվ հանկարծ **աքաղաղը կանչեց:**

26:75. Ծանոթ ձայնը խախտեց ոչ միայն առավոտյան ժամերի թությունը, այլև Պետրոսի սիրտը խոցեց: Փոխված աշակերտը հիշեց այն, ինչ Տերն ասել էր. **դուրս ելնելով՝ դառնորեն լաց եղավ:**

Ավետարաններում, թվում է, հակասություն կա՝ կապված ուրացման թվի և ժամանակի հետ: Մատթեոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարաններում գրված է, որ Հիսուսն ասաց. **«Դեռ աքաղաղը չկանչած՝ երեք անգամ կուրանաս Ինձ»** (Մատթ. 26:34, տե՛ս նաև Ղուկ. 22:34, Հովհ. 13:38): Մարկ. 14:30-ում կանխասածն այսպիսին է. **«Աքաղաղը դեռ երկու անգամ չկանչած՝ երեք անգամ դու պիտի ուրանաս Ինձ»:**

Հնարավոր է միայն մեկ աքաղաղ չէր կանչել. մեկը՝ գիշերը, իսկ մյուսը՝ լուսաբացին: Նաև հնարավոր է, որ Ավետարանները գրառել են առնվազն Պետրոսի վեց տարբեր ուրացումները: Նա Քրիստոսին ուրացավ. 1. երիտասարդ կնոջ առջև (Մատթ. 26:69-70, Մարկ. 14:66-68), 2. մյուս երիտասարդ կնոջ առջև (Մատթ. 26:71-

72, Մարկ. 14:69-70), 3. այնտեղ կանգնած բազմության առջև (Մատթ. 26:73-74, Մարկ. 14:70-71), 4. մի մարդու առջև (Ղուկ. 22:58), 5. մեկ այլ մարդու առջև (Ղուկ. 22:59-60), 6. քահանայապետի ծառայի առջև (Հովհ. 18:26-27): Մենք կարծում ենք, որ այս վերջինը նման չէ մյուսներին, որովհետև նա ասաց. **«Զէ՛ որ ես քեզ տեսա այն պարտեզում Նրա հետ»:** Մյուսների համար նշված չէ, որ նման բան ասեին:

Ի. Առավոտյան դատավարությունն ատյանի առջև (27:1-2)

Կրոնական դատավարության երրորդ փուլը տեղի ունեցավ **առավոտյան՝** ատյանի առջև: Ոչ մի գործ չէր թույլատրվում ավարտել նույն օրը, երբ այն սկսված էր, եթե ամբաստանյալը արդարացված չէր: Ենթադրվում էր, որ պիտի գիշերն անցներ նախքան դատավճռի հրապարակումը, «որ կարող է կարեկցության զգացմունքներ հայտնրվելու ժամանակ ունենային»: Այս դեպքում կրոնական առաջնորդները, թվում է, ջանում էին ցանկացած կարեկցության զգացմունք սառեցնել: Բայց, քանի որ գիշերային դատավարությունները հազվագյուտ երևույթներ էին, նրանք առավոտյան նիստ գումարեցին, որպեսզի օրինական հիմնավորում տային իրենց դատավճռին:

Հռոմեական օրենքի համաձայն՝ հրեա առաջնորդները մահապատիժ իրականացնելու իրավունք չունեին: Այդ պատճառով մենք հիմա տեսնում ենք, որ նրանք շտապում էին Հիսուսին ներկայացնել **Պոնտացի Պիղատոսին՝** հռոմեական կուսակալին: Չնայած հռոմեական ամեն ինչի նկատմամբ իրենց մեծ ատելությանը՝ այժմ նրանց պետք էր «օգտագործել» այդ իշխանությունը, որպեսզի բավարարեին ավելի **մեծ** ատելություն: Հիսուսի հանդեպ ընդդիմությունը հաշտեցրել էր ամենաանհաշտելի թշնամիներին:

Լ. Հուդայի գղզումը և նրա մահը (27:3-10)

27:3-4. Գիտակցելով իր մեղքը՝ **անմեղ արյուն մատնելով,** Հուդան գումարը վե-

րադարձրեց **գլխավոր քահանաներին ու ժողովրդի ավագներին**: Այդ խորամանկ դավադիրները, ովքեր այդպիսի ակտորժակով համագործակցել էին մի քանի ժամ առաջ, հրաժարվեցին հետագա որևէ մասնակցություն ունենալ այդ գործի մեջ: Սա դավաճանության պարզևներից մեկն է: Հուդան **գղջաց**, բայց նրա ապաշխարությունն աստվածահանո չէր, որ փրկության է առաջնորդում: Ափսոսալով հետևանքների համար, որոնք նրա հանցանքը հենց իր վրա բերեցին, նա, այնուամենայնիվ, չէր կամենում ընդունել Քրիստոսին՝ որպես Տիրոջ ու Փրկչի:

27:5. Հուսահատված Հուդան **արձաք դրամները թափեց տաճարի մեջ**, ուր իրավունք ունեին մտնել միայն քահանաները, այնուհետև դուրս գնաց և ինքնասպան եղավ: Այս պատմությունը համեմատելով Գործք 1:18-ի հետ՝ եզրակացնում ենք, որ նա ծառից էր կախվել, և որ պարանը կամ ճյուղը կտրվել էր, նրա մարմինը ցած էր ընկել անդունդի մեջ, և փորոտիքը դուրս թափվել:

27:6. **Գլխավոր քահանաները** չափազանց «հոգևոր էին», որպեսզի այդ գումարը դնեին տաճարի **գանձանակի մեջ**, որովհետև դա **արյան գին էր**, հանցավորներն իրենք էին, որ վճարել էին այդ գումարը Մեսիային իրենց հանձնելու համար: Ինչպես Տեր Հիսուսը ասաց, նրանք բաժակի դրսի կողմն էին մաքրել, բայց ներսը լի էր խաբեությամբ, դավաճանությամբ և սպանությամբ:

27:7-10. Նրանք այդ գումարն օգտագործեցին **բրուտի արտը** գնելու համար, որտեղ թաղում էին անմաքուր, հեթանոս օտարների՝ շատ քիչ հասկանալով, թե քանի հեթանոս հորդաներ պիտի ներխուժեին իրենց երկիրը և արյամբ հեղեղեին իրենց փողոցները: Այդ ժամանակից ի վեր դա եղել է **Արյան արտ** մեղավոր ազգի համար:

Գլխավոր քահանաներն ակամա կատարեցին Չաքարիայի մարգարեությունը, որ թաղման գումարը գործածվելու էր բրուտից գնումներ անելու համար (Չաք. 11:12-

13): Տարօրինակ է սակայն, որ Չաքարիայի այդ հատվածն ունի այլընտրանքային ընթերցանության տարբերակ՝ «գանձանակ» «բրուտի» համար (RSV):

«Քահանաները կասկածում էին, թե արդյոք կարելի՞ է արյան գինը դնել գանձանակի մեջ, ուստի նրանք կատարեցին այլ ընթերցումների մարգարեությունները, դրանք բրուտին տալով՝ փոխանակեցին իր արտի հետ»:

*Մտրագրության միավորում
ամենօրյա նշումներ*

Մատթեոսն այս մարգարեությունը վերագրում է **Երեմիային**, մինչդեռ այն ակնհայտորեն գալիս է Չաքարիայի գրքից: Հավանաբար նա այս մեջբերումը վերագրել է Երեմիային, քանի որ այդ մարգարեն գլխավորում էր մարգարեական ցուցակը՝ համաձայն բազմաթիվ եբրայական ձեռագրերում պահպանված հնագույն կարգի և հայտնի ըստ Թալմուդյան ավանդույթի: Նման կիրառումը հանդիպում է Ղուկ. 24:44-ում, որտեղ եբրայական կանոնի երրորդ բաժինը կրում էր Մաղմոսներ գրքի անունը:

Խ. Հիսուսը առաջին անգամ հայտնվում է Պիղատոսի առջև (27:11-14)

Հիսուսի դեմ ուղղված հրեաների հիմնական մեղադրանքները կրոնական բնույթի էին, և նրանք այդ հիմունքներով էին Նրան դատում: Բայց *կրոնական* մեղադրանքների իրականացումը Հռոմի դատարանում կշիռ չուներ: Դա իմանալով՝ հրեաները Հիսուսին Պիղատոսի դատին ներկայացնելիս Նրա դեմ երեք *քաղաքական* մեղադրանքներ առաջ քաշեցին (Ղուկ. 23:2).

1. Նա հեղափոխական էր, կայսրության համար վտանգ ներկայացնող:
2. Ժողովրդին արգելում էր կայսրին հարկ տալ, որով խոչընդոտում էր կայսրության բարգավաճումը:
3. Նա Իրեն Թագավոր էր կոչում, հետևաբար սպառնում էր կայսրի իշխանությանը և դիրքին:

Մատթեոսի Ավետարանում կարդում ենք, թե ինչպես է Պիղատոսը Նրան հարցա-

քննում ըստ երրորդ մեղադրանքի: Այն հարցին, թե արդյոք Նա՞ էր **հրեաների թագավորը**, Հիսուսը դրական պատասխանեց: Նրա պատասխանը վիրավորանքի և զրպարտության տարափ առաջացրեց հրեա առաջնորդների կողմից: Պիղատոսը **շատ զարմացավ** Մեղադրյալի լուռության վրա. Նա նրանց մեղադրանքներից նույնիսկ մեկը չարժանացրեց պատասխանի: Հավանաբար, մինչ այդ կուսակալը չէր տեսել նման հարձակման ներքո ոչ մի խոսք չասող որևէ մեկին:

Ծ. Հիսուսը թե՛ Բարաբբան (27:15-26)

27:15-18. Հռոմեական իշխանությունները սովորություն ունեին Չատկի տոնի առթիվ մի հրեա **դատապարտյալ ազատ արձակել** հրեաներին բարեհաճելու համար: Մի այդպիսի օրենքով դատապարտյալ էր **Բարաբբան**՝ մի հրեա, որ մեղադրվում էր խռովության և մարդասպանության մեջ (Մարկ. 15:7): Որպես խռովարար՝ ընդդեմ հռոմեական իրավունքների, նա հավանաբար ժողովրդականություն էր վայելում իր հայրենակիցների մեջ: Այսպիսով, երբ Պիղատոսը նրանց առաջարկեց ընտրություն անել **Հիսուսի և Բարաբբայի** միջև, նրանք բարձրաձայն աղաղակելով պահանջեցին վերջինիս: Կուսակալը չզարմացավ. նա գիտեր, որ հասարակական կարծիքը մասամբ ձևավորվում էր գլխավոր քահանաների կողմից, ովքեր նախանձից դրդված մատնեցին Հիսուսին:

27:19. Դատավարությունը ժամանակավորապես ընդհատվեց Պիղատոսի **կնոջ** սուրհանդակի կողմից: Նա կոչ էր անում իր ամուսնուն, որ հարգալից վերաբերվեր Հիսուսին, քանի որ նա շատ անհանգստացնող **երազ** էր տեսել **Նրա** մասին:

27:20-23. Բեմի հետևում **գլխավոր քահանաները և ծերերը** հրահրում էին ժողովրդին, որ խնդրեն արձակել Բարաբբային, իսկ Հիսուսին՝ սպանել: Ուստի երբ **Պիղատոսը** կրկին հարցրեց, թե նրանք ո՞ւմ կուզեին ազատել, նրանք պահանջեցին մարդասպանին: Խճճվելով իր սեփական անվճռականության ուստայնի մեջ՝ Պիղա-

տոսը հարցրեց. **«Իսկ ի՞նչ անեմ Հիսուսին, որ Քրիստոս է կոչվում»:** Նրանք միաբերան պահանջեցին Նրան խաչել, ինչն անհասկանալի էր կուսակալի համար: Ինչո՞ւ Նրան խաչել: Ի՞նչ հանցագործություն էր Նա կատարել: Բայց արդեն շատ ուշ էր այդ հարցը քննարկելու համար. ամբոխի հիստերիան գլուխ էր բարձրացրել: Հնչեց աղաղակը. **«Թող խաչվի»:**

27:24. **Պիղատոսի** համար պարզ էր, որ մարդիկ անողոք են, և կարող էր խռովություն սկսվել: Ուստի նա **ձեռքերը լվաց** ամբոխի աչքի առջև՝ հայտարարելով իր անմեղությունը Մեղադրյալի **արյունից**: Բայց ջուրը երբեք չի ազատի Պիղատոսին պատմության արդարադատության ամենալուրջ ձախողման մեղքից:

27:25. Ամբոխը չափազանց մոլեգնած էր, որպեսզի մեղավորության մասին անհանգրստանար, հոժար էին պատասխանատվություն կրելուն. **«Գրա արյունը մեր և մեր որդիների վրա թող լինի»:** Այդ օրվանից Իսրայել ժողովուրդը իրենց թաղերից գցվեցին ջարդերի մեջ, համակենտրոնացման ճամբարներից՝ գազի խցիկների մեջ. նա տառապեց իր մերժած Մեսիայի արյան սարսափելի մեղքի պատճառով: Նրանք դեռ դեմ առ դեմ պիտի հանդիպեն «Հակոբի» զարհուրելի «նեղության ժամանակի» հետ՝ Մեծ նեղության յոթ տարիների, որ նկարագրված են Մատթ. 24-րդ և Հայտ. 6-19-րդ գլուխներում: Այդ անեծքը կմնա նրանց վրա, մինչև որ նրանք մերժված Հիսուսին ընդունեն որպես իրենց Մեսիա Թագավորի:

27:26. Պիղատոսը **Բարաբբային արձակեց** ամբոխի համար, և դրանից հետո Բարաբբայի ոգին է իշխում աշխարհում: Մարդասպանը մինչև օրս նստած է գահին, իսկ արդար Թագավորը մերժված է: Այնուհետև, այն օրերի սովորության համաձայն, Մեղադրյալին **ձաղկում էին**: Մեծ կաշվե մտրակը, սուր մետաղի կտորներով ամրացված, ցած էր իջնում Նրա մեջքի ողջ երկայնքով՝ յուրաքանչյուր հարվածով պատռելով մարմինը և առաջացնելով արյան հոսք: Այժմ թուլամորթ կուսակալին ոչինչ

չէր մնում անելու՝ բացի Հիսուսին զինվորների ձեռքը հանձնելուց, որ խաչվի:

Կ. Զինվորները ծաղրում են Հիսուսին (27:27-31)

27:27-28. Կուսակալի զինվորները Հիսուսին տարան պալատ և ամբողջ գորագունդը հավաքեցին Նրա շուրջը, հավանաբար մի քանի հարյուր մարդ: Թե ինչ կատարվեց հետո, դժվար է պատկերացնել: Արարիչը և տիեզերքը կանգուն Պահողը կրեց անպատմելի վիրավորանքներ բիրտ ու դաժան զինվորների կողմից, Իր անարժան մեղավոր արարածների կողմից: **Նրանք մերկացրին Նրան և մի կարմիր քղամիդ գցեցին վրան**, որը թագավորական հանդերձի ընդօրինակն էր: Բայց այդ հանդերձը մեզ ինչ-որ բան է ասում: Քանի որ որդան կարմիրը կապակցվում է մեղքի հետ (Ես. 1:18), ես սիրում եմ մտածել, որ կարմիր քղամիդը պատկերում է իմ մեղքերը՝ դրված Հիսուսի վրա, որ ես կարողանամ հագնել Աստծո արդարության պատմունանը (2 Կոր. 5:21):

27:29-30. Նրանք փշերից պսակ հյուսեցին և դրեցին Նրա գլխին: Եվ չնայած նրանց կոպիտ կատակին՝ մենք հասկանում ենք, որ Նա կրեց *փշե պսակը*, որպեսզի մենք կարողանանք *փառաց պսակ* ունենալ: Նրանք ծաղրում էին Նրան՝ որպես Մեղքի Թագավորի, մենք երկրպագում ենք Նրան՝ որպես մեղավորների Փրկչի:

Նրանք նաև **մի եղեգ** տվեցին Նրան՝ որպես գավազանի ծաղրանք: Նրանք չգիտեին, որ այդ եղեգը բռնող ձեռքն այն ձեռքն է, որ կառավարում է ամբողջ աշխարհը, որ Հիսուսի խոցված ձեռքը այժմ պահում է տիեզերական տիրապետության գավազանը:

Նրանք **ձնկի էին գալիս** Նրա առջև և դիմում էին Նրան՝ որպես **հրեաների թագավորի**: Այսքանով չբավարարվելով՝ **թըքում էին** աշխարհի միակ կատարյալ Մարդու դեմքին, որ երբևէ ապրել էր: Այնուհետև նրանք **վերցրին եղեգը ու հարվածեցին Նրա գլխին**:

Հիսուսը համբերատար կրեց այդ ամենը,

Նա ոչ մի բառ չասաց. «Մտաբերե՛ք Նրան, որ Իր դեմ մեղավորների այդպիսի հսկանակությունը կրեց, որպեսզի չլինի թե հոգնեք և ձեր սրտում հուսալքվեք» (Եբր. 12:3):

27:31. Վերջապես, նրանք **Իր հանդերձները հագցնելով՝ տարան խաչելու**:

Հ. Թագավորի խաչելությունը (27:32-44)

27:32. Մեր Տերն Իր **խաչը** ճանապարհի մի մասը տարավ (Հովհ. 19:17): Այնուհետև զինվորները **պարտադրեցին Սիմոն** անունով մի մարդու (**Կյուրենից**, հյուսիսային Աֆրիկա), որ Նրա փոխարեն խաչը տանի: Ոմանք կարծում են, որ նա հրեա էր, մյուսները՝ որ սևամորթ էր: Կարևորն այն է, որ նա այդ խաչը կրելու հրաշալի առանձնաշնորհումն է ունեցել:

27:33. **Գողգոթա՝** արամերեն «գանգ»: «Քավարի». սա հունարեն «*kranion*» բառի լատիներենից անգլիականացված թարգմանությունն է: Գուցե այդ տարածքը գանգի ձև ուներ կամ այդ անունն էր ստացել, որովհետև այն եղել է մահապատժի վայր: Դրա գտնվելու տեղն անհայտ է:

27:34. Նախքան Նրան խաչելը զինվորները Նրան **լեղիով խառնված քացախ** առաջարկեցին, որը տալիս էին դատապարտված հանցագործներին որպես ցավազրկող: Հիսուսը չուզեց այն խմել: Նրա համար կարևոր էր մարդկային մեղքերի ամբողջ ծանրությունը կրել առանց թմրեցնելու զգայարանները, ցավը՝ առանց թեթեվացնելու:

27:35. Մատթեոսը խաչելությունը նկարագրում է պարզորեն և առանց հույզերի: Նա չի տրվում դրամատիզմի, չի դիմում սենսացիոն լրագրության, կանգ չի առնում ազդեցիկ մանրամասների վրա: Նա պարզապես հաստատում է փաստը. այնուհետև նրանք **Նրան խաչը հանեցին**: Հավերժությունն անգամ չի կարող սպառել այս խոսքերի խորությունը:

Ինչպես մարգարեացված էր Մաղմոս 22:18-ում, զինվորները **Նրա հանդերձները բաժանեցին...** և Իր պատմունանի վրա **վիճակ գցեցին**: Դա էր Նրա երկրավոր ամբողջ ունեցվածքը: Դենին ասել է. «Միակ

կատարյալ կյանքը, որ երբևիցե ապրել է այս աշխարհում, Նրա կյանքն է, Ով ոչինչ չուներ և ոչինչ չթողեց՝ բացի Իր հազամ հանդերձից»:

27:36. Այդ զինվորները ներկայացնում էին աշխարհի փոքր մարդկանց: Նրանք, ըստ երևույթին, պատկերացում չունեին, որ պատմություն էր գրվում: Եթե մի քիչ հասկանային, թե ինչ է տեղի ունենում, չէին **նստի** և չէին **հսկի**, *ծնկի կգային* և կերկրպագեին:

27:37. Նրանք Քրիստոսի **գլխավերևում** մի գրվածք տեղադրեցին. «**ՍԱ Է ՀԻՍՈՒՍԸ՝ ՀՐԵԱՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԸ**»: Այդ գրվածքի ճշգրիտ ձևակերպումը մի փոքր տարբեր է չորս Ավետարաններում:⁵² Մարկոսն ասում է. «Հրեաների թագավորը» (15:26), Ղուկասը՝ «Սա է հրեաների թագավորը» (23:38), և Հովհաննեսը՝ «Հիսուս Նագովրեցի՝ հրեաների թագավոր» (19:19): Գլխավոր քահանաները բողոքարկեցին, որ գրվածքը չպետք է պաշտոնական արձանագրություն ներկայացներ, այլ գուտ Մեղադրյալի հայտարարությունը: Սակայն Պիղատոսն անտեսեց նրանց պահանջը. այնտեղ գրված էր ճշմարտությունը, որ բոլորը տեսնեին՝ եբրայերեն, լատիներեն և հունարեն (Հովհ. 19:19-22):

27:38. Արդյոք այդ չէ՞ր պատճառը, որ Աստծո անմեղ Որդին գտնվում էր **երկու ավազակների** մեջտեղում, քանի որ Եսային 700 տարի առաջ կանխասել էր, որ Նա պիտի հանցավորների հետ հաշվվեր (Ես. 53:12): Սկզբում երկու ավազակները նախատում և հայհոյում էին Նրան (հ. 44): Բայց հետո նրանցից մեկն ապաշխարեց և ճիշտ ժամանակին փրկվեց, ընդամենը մի քանի ժամ հետո նա Քրիստոսի հետ դրախտում էր (Ղուկ. 23:42-43):

27:39-40. Եթե խաչը բացահայտում է Աստծո սերը, ապա այն բացահայտում է նաև մարդու անառակությունը: Անցորդները կանգ էին առնում երկար ժամանակ, որպեսզի ծաղրեին Հովվին, որ մեռնում էր Իր ոչխարների համար. «**ՌՆՆ, որ տաճարը պիտի քանդեիր ու երեք օրում վերակառուցեիր, փրկի՛ր Քեզ: Եթե Աստծո**

Որդին ես, իջի՛ր խաչից»: Սա է իրատեսական անհավատության լեզուն: «Տո՛ւյց տուր մեզ, և մենք կհավատանք»: Սա նաև ազատականության լեզուն է. «Իջի՛ր խաչից, այլ կերպ ասած. վերացրո՛ւ խաչի անարգանքը, և մենք կհավատանք»: Ուխյամ Բութան ասել է. «Նրանք պնդում էին, որ կհավատային, եթե Նա իջներ. Մենք հավատում ենք, քանի որ Նա մնաց այնտեղ»:

27:41-44. **Գլխավոր քահանաները, դպիրները և ավազները** միացան այդ երգչախմբին: Չմտածված ներմբռնումով նրանք գոչում էին. «**Ուրիշներին ազատեց, իսկ իրեն չի կարողանում ազատել**»: Նրանք ծաղրելու համար էին ասում, իսկ մենք այն ընդունում ենք որպես գովաբանության օրհներգ.

Իրեն Նա չէր կարող փրկել.
Նա խաչի վրա պիտ մեռներ,
Քանզի չէր հասնի ողորմությունը
Կորած մեղավորներին:
Այո՛, Աստծո Որդի Քրիստոսը
Արյունաքամ պիտի լիներ,
Որ մեղավորները մեղքից ազատվեն:

Ալբերտ Միլլայն

Սա ճշմարտություն էր Տիրոջ կյանքում, և ճշմարտություն պիտի լինի նաև մեր կյանքում: Մենք չենք կարող ուրիշներին փրկել, մինչ փորձում ենք ինքներս մեզ փրկել:

Կրոնական առաջնորդները ծաղրում էին Նրա արած հայտարարությունը, որ Նա Փրկիչն է, որ **Իսրայելի թագավորն է**, որ Նա **Աստծո Որդին է**: Նույնիսկ ավազակները միացան նրանց հայհոյությանը: Կրոնական առաջնորդները միաբանվեցին հանցագործների հետ՝ անարգելու իրենց Աստծուն:

Ց. Խավարի երեք ժամերը (27:45-50)

27:45. Մարդկանց կողմից Նրա կրած բոլոր տառապանքներն ու նվաստացումներն աննշան էին՝ համեմատած այն քանի հետ, ինչը Նրա առջև հայտնվեց հիմա: **Եվ վեցերորդ ժամից** (կեսօր) **մինչև իններորդ ժամը** (կեսօրվա ժամը 3:00) **խավար եղավ** ոչ միայն Պաղեստինի **ամբողջ երկրի վրա**, այլև Նրա սուրբ հոգում: Ճիշտ այդ

ժամանակ էր, որ Նա կրեց մեր մեղքերի աննկարագրելի անեծքը: Այդ երեք ժամերի ընթացում Նրան ճնշում էր դժոխքը, որին մենք էինք արժանի, և Աստծո բարկությունը՝ մեր բոլոր մեղքերի համար: Մենք միայն աղոտ կերպով ենք տեսնում այն, մենք չենք կարող իմանալ, թե ինչ էր Նրա համար նշանակում բավարարել Աստծո բոլոր արդարացի պահանջները մեղքի հանդեպ: Մենք միայն գիտենք, որ այն երեք ժամերի ընթացքում Նա վճարեց սահմանված պարտքի գինը և ավարտեց այն գործը, որն անհրաժեշտ էր մարդուն ազատագրելու համար:

27:46. Եվ մոտ կեսօրվա ժամը երեքին Նա բարձր ձայնով աղաղակեց. **«Աստված Իմ, Աստված Իմ, ինչո՞ւ Ինձ լքեցիր»:** Պատասխանը գտնում ենք Մկմ. 22:3-ում. «... Դու սուրբ ես, ով Իսրայելի փառաբանությունների մեջ բնակվող»: Քանի որ Աստված սուրբ է, Նա չի կարող անտեսել մեղքը: Ընդհակառակը, Նա պետք է պատժի այն: Տեր Հիսուսն Ինքը մեղք չուներ, բայց Նա Իր վրա վերցրեց մեր մեղքերի հանցանքը: Երբ Աստված՝ որպես Դատավոր, վար նայեց և տեսավ մեր մեղքերը անմեղ Փոխարինողի վրա, Նա հեռացրեց սերը Իր սիրելի Որդուց: Այս բաժանումն էր, որ առաջացրեց Հիսուսի սրտի աղաղակը, ինչը տիկ. Բրաունինգը շատ գեղեցիկ է անվանել «Էմմանուելի որբացած աղաղակը».

Էքվաճ, Աստված Նրանից երես թեքեց
առժամանակ,
Եվ Ադամի մեղքը ելավ արդար Որդու
և Հոր միջև.
Այո՛, Էմմանուելի որբացած աղաղակը
Մեկ անգամ Իր տիեզերքը ցնցեց,
Վեր բարձրացավ մենակ առանց
արձագանքի.
«Աստված Իմ, ինչո՞ւ Ինձ լքեցիր»:

Էլիզաբեթ Բարրետ Բրաունինգ

27:47-48. Երբ Հիսուսն աղաղակեց. **«Էլի՛, Էլի՛...»**, այնտեղ կանգնածներից ոմանք ասացին. **«Նա Եղիային է կանչում»:** Նրանք իսկապես՝ շփոթել էին անունները, թե պարզապես ծաղրում էին, պարզ չէ:

Նրանցից մեկը վերցրեց երկար **եղեգր**, որպեսզի **քացախով** թաթախված **սպունգը** մոտեցնի Նրա շուրթերին: Ըստ Մադնոս 69:21-ի՝ դա գթասարտության արարք չէր, այլ տառապանքի լրացուցիչ ձև:

27:49. Ընդհանուր կարծիքն այսպիսին էր. սպասել և տեսնել, թե **Եղիան պիտի գա՞** այն դերը կատարելու, որ հրեական ավանդույթը վերագրում էր նրան՝ արդարներին օգնության հասնել: Բայց դա Եղիայի գալու ժամանակը չէր (Մադ. 4:5), դա Հիսուսի մեռնելու ժամանակն էր:

27:50. Երբ Հիսուսը **դարձյալ մեծ ձայնով աղաղակեց**, Նա **Հոգին ավանդեց**: Մեծ ձայնով աղաղակելը ցույց է տալիս, որ մահանալիս Նրա ուժերը տեղում էին, ոչ թե Նա թուլացած էր: Այն փաստը, որ Նա Հոգին ավանդեց, Նրա մահը տարբերում էր բոլոր մյուսներից: Մենք մեռնում ենք, որովհետև պիտի մեռնենք, Նա մահացավ, որովհետև ընտրել էր մահը: Մի՞թե Նա չասաց. «... Ես Իմ կյանքը դնում եմ, որպեսզի դարձյալ առնեմ այն: Ոչ ոք այն չի վերցնում Ինձանից, այլ Ես Ինքս եմ այն վար դնում. Ես իշխանություն ունեմ այն վար դնելու և իշխանություն ունեմ վերստին այն առնելու» (Հովհ. 10:17-18):

Տիեզերքի Արարիչը՝ որպես Մարդ,
Անեծք դարձավ մարդու համար,
Իր իսկ տված օրենքները
Նա վճարեց լիարժեք:
Նրա սուրբ մատները, որ ստեղծել էին
ճյուղը,
Փշի վերածվեց՝ պսակելով Նրա
ճակատը:
Նրա ձեռքերը՝ խոցված գամերով,
Նա պատրաստել էր Իր նախատեսած
Գաղտնի վայրերում:
Նա արարել էր անտառները, ուր ծառն
էր անել,
Նրա մարմինը ծառից էր կախվել,
Խաչափայտի վրա էր Նա մահացել:
Նույնիսկ բուրբ Նա էր արարել,
Որտեղ խաչն էին ամրացրել:
Եվ երկինքը, որ մթազնել էր Նրա
գլխավերևում,
Տարածվել էր երկրի վրա Նրա միջոցով:
Արևը, որ ծածկել էր իր երեսը Նրանից,

Նրա հրամանով էր կախված տիեզերքում:
 Գեղարդը, որը թափեց Նրա սուրբ արյունը,
 Կոփված էր այնտեղ՝
 Աստծո դարբնոցում:
 Գերեզմանում, ուր դրվեց Նրա մարմինը,
 Ժայռակոփ էր, որ Իր ձեռքով էր արարվել:
 Այն գահը, որին նստած է Նա հիմա,
 Ի հավիտենից Նրանն է եղել,
 Բայց նոր փառավոր պսակներն են Նրա ճակատը պսակել,
 Ու ամեն ծունկ պիտի խոնարհվի Նրա անվան առջև:

Ճ. Վ. Փիթ

Ղ. Պատռված վարագույրը (27:51-54)

27:51. Նրա մահվան պահին ծանր վարագույրը, որը բաժանում էր տաճարի երկու գլխավոր սենյակները, անտեսանելի Ձեռքով պատռվեց **վերևից մինչև ներքև:** Մինչև այդ **վարագույրն** արգելում էր բոլորի մուտքը դեպի Սրբություն Սրբոց, որտեղ Աստված էր բնակվում: Միայն մի մարդ կարող էր մտնել ներքին սրբարանը, և այն էլ՝ տարին մեկ անգամ:

Երբ այեցիներին ուղղված թղթից գիտենք, որ վարագույրը ներկայացնում էր Հիսուսի մարմինը: Դրա պատռվելը պատկերում էր Նրա մարմնի հանձնումը մահին: Նրա մահվան շնորհիվ մենք «... Համարձակությամբ մտնենք Սրբարանը Հիսուսի արյամբ, նոր ու կենդանի՝ ճանապարհով, որ մեզ համար բացեց վարագույրի միջով, որ Իր մարմինն է» (Եբր. 10:19-20): Այժմ ամենախոնարհի հավատացյալը ցանկացած պահի կարող է աղոթքի միջոցով և Նրան փառաբանելով մտնել Աստծո ներկայության մեջ: Բայց մենք երբեք չպետք է մոռանանք, որ այդ առանձնաշնորհումը մեզ համար գնվել է հսկայական գնով՝ Հիսուսի արյամբ:

Աստծո Որդու մահը սարսափելի փոփոխություններ առաջացրեց նաև բնության մեջ, ասես անկենդան ստեղծագործությունը կարեկցում էր իր Արարչին: Երկիրը շարժվեց, որի պատճառով վիթխարի **քարերը ճեղքվեցին**, և շատ **գերեզմաններ բացվեցին:**

27:52-53. Բայց ուշադրություն դարձրեք, որ այդ գերեզմաններում թաղվածները **հարություն առան և մտան** Երուսաղեմ, ուր **շատերին երևացին** միայն **Հիսուսի հարությունից հետո:** Աստվածաշունչը չի նրշում, թե այդ սրբերը նորից մահացան, թե Հիսուսի հետ երկինք գնացին:

27:54. Բնության տարօրինակ ցնցումները համոզեցին հռոմեացի **հարյուրապետին** և նրա մարդկանց, որ **Հիսուսը Աստծո Որդին էր** (թեև հունարենում «Աստծո Որդի»-ի առջև չի դրված որոշյալ հոդը, բառերի հաջորդականությունն այն հստակեցնում է)⁵³: **Հարյուրապետը** ի՞նչ նկատի ուներ: Արդյոք սա Հիսուս Քրիստոսին՝ որպես Տիրոջ և Փրկչի լիարժեք դավանությունն էր, թե՞ այդ խոստովանությունը նշանակում էր, որ Հիսուսն ավելին էր, քան մարդ: Մենք չենք կարող որևէ բան հաստատել: Սակայն դա մատնանշում է ակնածանքի և գիտակցության այն զգացումը, որ բնության հուզումներն ինչ-որ ձևով կապված էին Հիսուսի մահվան հետ, ոչ թե նրանց մահվան հետ, ովքեր Նրա հետ էին խաչվել:

Ճ. Հավատարիմ կանայք (27:55-56)

Հատուկ հիշատակված են այն **կանայք**, ովքեր նվիրված ծառայում էին Տիրոջը և **Գալիլիայից** մինչև Երուսաղեմ Նրա **հետևից էին եկել:** Այնտեղ էին **Մարիամ Մագդաղենացին, Հակոբոսի և Հովսեփի մայր Մարիամը** և Սողոմեն, ով Չեբեդեոսի կինն էր: Այդ կանանց անվախ նվիրումն աչքի է ընկնում առանձնահատուկ փայլով: Նրանք մնացել էին Հիսուսի հետ, երբ տղամարդ աշակերտները փախել էին փրկելու իրենց կյանքը:

Մ. Թաղումը Հովսեփի գերեզմանում (27:57-61)

27:57-61. Արիմաթիացի մի **հարուստ մարդ, որի անունը Հովսեփ էր** և ատյանի անդամ էր, իր հավանությունը չէր տվել խորհրդին՝ Հիսուսին Պիղատոսի ձեռքը մատնելու որոշմանը (Ղուկ. 23:51): Եթե մինչ այդ նա եղել էր գաղտնի **աշակերտ**, ապա այժմ բոլոր զգուշությունները դեն էր

զցել: Քաջությամբ **գնաց Պիղատոսի մոտ** և իր Տիրոջը թաղելու համար թույլտվություն խնդրեց: Պատկերացնենք, թե ինչպիսի անակնկալ է եղել Պիղատոսի և ինչպիսի սաղորանք՝ հրեաների համար, որ ատյանի անդամը հրապարակավ Խաչվածի կողմն էր կանգնել: Թաղելով Հիսուսի մարմինը՝ Հովսեփը իրականում թաղեց իրեն թե՛ տնտեսապես, թե՛ սոցիալապես և թե՛ կրոնական առումով: Այդ արարքը նրան ընդմիջու բաժանեց Տեր Հիսուսին սպանողներից:

27:59-60. Պիղատոսն արտոնեց, և **Հովսեփը** սիրով օժեց **մարմինը, փաթաթեց մաքուր կտավով** և ծալքերի մեջ անուշահոտ համեմունքներ դրեց: Այնուհետև Նրան դրեց **իր նոր գերեզմանի մեջ**, որը ամուր **ժայռի** մեջ էր փորված: Գերեզմանի մուտքը **մի մեծ քարով** փակվեց, որ ջրադացքարի ձև ուներ և մտնում էր մուտքի փորված անցքի մեջ:

Դարեր առաջ Եսային մարգարեացել էր. «Նրա գերեզմանն ամբարիշտների հետ դրվեց, բայց երբ մեռավ, հարուստի հետ եղավ, քանի որ բռնություն չէր արել, և խաբեություն չկար նրա բերանում» (Ես. 53:9): Նրա թշնամիները, անկասկած, ծրագրել էին Նրա մարմինը նետել Ենովիի հովիտ, որպեսզի աղբանոցի կրակն այն կլաներ, կամ աղվեսներն ուտեին: Բայց Աստված խափանեց նրանց ծրագրերը և օգտագործեց Հովսեփին, որպեսզի *հարուստի հետ* ապահովեր Նրա թաղումը:

27:61. Հովսեփի հեռանալուց հետո **Մարիամ Մագդաղենացին** և Հակոբոսի ու Հովսեփի մայրը մնացին **գերեզմանի դիմաց**՝ գերեզմանը հսկելու:

Յ. Հսկվող գերեզմանը (27:62-66)

27:62-64. Չատկի 1-ին օրը, որ կոչվում է **Պատրաստության օր**, խաչելության օրն էր: **Հեռակյալ օրը գլխավոր քահանաներն ու փարիսեցիներն** անհանգստացել էին: Հիշելով Հիսուսի ասածները, որ Նա պիտի հարություն առնի, նրանք գնացին Պիղատոսի մոտ և խնդրեցին, որ գերեզմանի մոտ հատուկ պահապաններ նշանակի: Սա ար-

վում էր, որ Նրա **աշակերտները** չգողանային մարմինը և խոսք տարածեին, որ իբր Նա հարություն է առել: Նրանք վախենում էին, որ այդ դեպքում **վերջին մուրրությունն առաջինից վատ կլիներ**, այսինքն՝ Նրա հարություն առնելու լուրն ավելի վատ կլիներ, քան Նրա՝ Մեսիա և Աստծո Որդի լինելու հայտարարությունը:

27:65-66. Պիղատոսը պատասխանեց. **«Գուրք պահապան զինվորներ ունեք, գնացե՛ք և, ինչքան կարող եք, հսկողություն սահմանեցե՛ք»:** Սա կարող էր նշանակել, որ արդեն հռոմեական պահակախումբ էր տվել նրանց: Կամ էլ այն կարող է նշանակել. «Ձեր խնդրանքը բավարարված է: Ես ձեզ եմ տալիս պահապան զինվորներին»: Արդյոք Պիղատոսի ձայնի մեջ հեզնա՞նք կար, երբ ասաց. **«Ինչքան կարող եք, հսկողություն սահմանեցե՛ք»:** Եվ նրանք արեցին իրենց լավագույնը: Նրանք գերեզմանի քարը կնքեցին և պահպանության զինվորներ նշանակեցին, բայց նրանց անվտանգության պահպանության լավագույն միջոցները պարզապես անբավարար գտնվեցին: Ուլենտերն ասում է.

«Գերեզմանի պահպանության անվտանգության միջոցները, որոնք կիրառեցին նրա թշնամիները, «քարը կնքելով ու զինվորներ նշանակելով» (62, 64), հանգեցրին այն բանին, որ Աստված չեղարկեց այդ ամբարիշտների բոլոր ծրագրերը և ներկայացրեց Թագավորի հարության անհերքելի ապացույցները»:⁵⁴

XV. ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ (28-րդ գլ.)

Ա. Դատարկ գերեզմանը և Տիրոջ հարությունը (28:1-10)

28:1-4. Շաբաթվա 1-ին օրվա (կիրակի) լուսաբացին երկու Մարիամները **եկան՝ գերեզմանը տեսնելու:** Երբ նրանք եկան, **մեծ երկրաշարժ եղավ:...** **Տիրոջ հրեշտակը, երկնքից իջնելով, եկավ և գերեզմանի դռնից քարը մի կողմ գլորեց ու նրա վրա նստեց:** Հռոմեական **պահապանները**, զարհուրելով լուսանաճանչ էակի հագուս-

տի շրացուցիչ սպիտակ լուսից, մեռելի պես եղան:

28:5-6. Հրեշտակը **կանանց** համոզեց, որ չվախենան: Նրան, Ում նրանք փնտրում էին, **հարություն առավ**, ինչպես խոստացել էր. **«Եկե՛ք, տեսե՛ք այն տեղը, որտեղ պառկած էր Տերը»:** Քարը գլորված էր ոչ թե Տիրոջ դուրս գալու համար, այլ որպեսզի կանայք կարողանային տեսնել, որ Նա հարություն էր առել:

28:7-10. Այնուհետև հրեշտակը կանանց հանձնարարեց **շուտ գնալ ու Նրա աշակերտներին** ավետել այդ ուրախալի լուրը: Տերը ողջ է և նրանց հետ կհանդիպի **Գալիլայում**: Երբ նրանք գնում էին, որպեսզի առաքյալներին պատմեն, Հիսուսը նրանց հայտնվեց և ողջունեց մեկ բառով. **«Ուրախ եղեք»**⁵⁵: Նրանք պատասխանեցին Նրա **ոտքերին** փարվելով և երկրպագեցին Նրան: Այնուհետև Նա անձամբ նրանց հանձնարարեց աշակերտներին տեղեկացնել, որ Նրան կտեսնեն **Գալիլայում**:

Բ. Չինվորներին սուտ խոսելու համար կաշառեցին (28:11-15)

28:11. Ուշքի գալով զինվորներից **մի քանիսը** վախվորած գնացին **գլխավոր քահանաների** մոտ՝ նորությունը պատմելու: Նրանք չէին կատարել իրենց հանձնարարված գործը: Գերեզմանը դատարկ էր:

28:12-13. Դժվար չէ պատկերացնել կրոնական առաջնորդների սարսափը: Քահանաներն ավագների հետ զաղտնի հավաքվեցին, որպեսզի պլանավորեն իրենց ռազմավարությունը: Հուսահատված՝ նրանք կաշառեցին **զինվորներին**, որպեսզի մտացածին մի պատմություն տարածեն, թե երբ իրենք **քնած էին, աշակերտները գողացան** Հիսուսի մարմինը:

Այդպիսի բացատրությունն ավելի շատ հարցեր է առաջացնում, քան դրանց պատասխաններ: Ինչո՞ւ էին զինվորները քնած, երբ նրանք պիտի պահպանություն անեին: Ինչպե՞ս կարող էին աշակերտները քարը գլորել և նրանց չարթնացնել: Ինչպե՞ս կարող էին բոլոր զինվորները միաժամանակ քնել: Եթե քնած էին, որտեղի՞ց իմացան, որ

աշակերտները գողացան մարմինը: Եթե այդ պատմությունը ճշմարիտ է, ապա ինչո՞ւ նրանց կաշառեցին, որպեսզի այդպիսի բան պատմեն: Եթե աշակերտները գողացել էին մարմինը, ապա ինչո՞ւ էին նրանք ժամանակ վատնել թաղման կտավները հանելով ու վարշամակը ծալելով (Ղուկ. 24:12, Հովհ. 20:6-7):

28:14. Փաստորեն զինվորներին վճարել էին, որպեսզի նրանք մի պատմություն պատմեին, որը հենց իրենց էր մեղադրում: Հռոմեական օրենքի համաձայն՝ քնած պահակը մահվան էր դատապարտվում: Ուստի հրեա առաջնորդներն ստիպված նրանց խոստացան միջամտել, եթե **այդ լուրը** ինչոր ձևով **հասներ կուսակալին**:

Մինողը գիտեր, որ եթե ճշմարտությունն ինքն իրեն արդարացնում է, ապա ստիպետք է աջակցել բազմաթիվ այլ ստերով:

28:15. Այնուամենայնիվ, այդ առասպելը **մինչև օրս պահպանվել է շատ հրեաների շրջանակում**, ինչպես նաև հեթանոսների մեջ: Կան նաև ուրիշ առասպելներ: Ուիլբուր Սմիթը շարադրել է դրանցից երկուսը.

1. Առաջին ենթադրությունը հետևյալն է. կանայք ուրիշ գերեզման էին այցելել: Մի պահ մտածեք այդ մասին: Կարո՞ղ եք դուք մոռանալ ձեր թանկագին և սիրելի մարդու գերեզմանի գտնվելու տեղը ուրբաթ օրվա կեսօրից մինչև կիրակի օրվա առավոտվա միջև ընկած ժամանակահատվածում: Ավելին՝ խոսքը չի վերաբերում Հովսեփ Արիմաթիացու գերեզմանին. դա նրա սեփական պարտեզն էր, այնտեղ ուրիշ գերեզմաններ չկային:

Այժմ եկե՛ք պատկերացնենք, որ եղել են նաև ուրիշ գերեզմաններ, որոնք իրականում չեն եղել, և որ կանայք արտասովորապես աչքերով են գնացել, փնտրել են և եկել են սխալ գերեզմանի մոտ: Դե՛ ինչ, եկե՛ք կանանց շնորհենք: Բայց Միմոն Պետրոսը և Հովհաննեսը՝ երկու ձկնորսներ, ովքեր լաց չէին լինում, նույնպես գերեզման գնացին և այն դատարկ գտան: Ի՞նչ եք կարծում, նրանք սխալ գերեզման էին գնացել: Բայց ավելին. երբ նրանք գերեզման գնացին և այն դատարկ գտան, այնտեղ հրեշտակ կար, որ ասաց. «Նա

այստեղ չէ, որովհետև հարություն առավ: Եկե՛ք, տեսե՛ք այն տեղը, որտեղ պառկած էր Տերը»: Ի՞նչ եք կարծում, հրեշտա՞կն էլ էր սխալ գերեզման մտել: Մի՛ մոռացեք, որ այս տեսությունները խելացի մարդիկ են հորինել: Սա անմտություն է:

2. Մյուսները կարծում են, որ Հիսուսը չէր մահացել, այլ կորցրել էր գիտակցությունը, իսկ հետո ինչ-որ ձևով ուշքի էր եկել խոնավ գերեզմանում և դուրս եկել: Գերեզմանի դուռը մի հսկայական քարով էր փակած, կնքված հռոմեական իշխանության կնիքով: Ոչ ոք երբեք չէր կարող գերեզմանի ներսից գլորել քարը, որը գլորել էին լանջն ի վար և տեղադրել էին ակոսի մեջ: Հիսուսը չէր կարող գերեզմանից դուրս գալ, որովհետև արյունաքամ հաշմանդամ էր:

Պարզ ճշմարտությունն այն էր, որ Տեր Հիսուսի հարությունը միանգամայն հաստատված պատմական փաստ է: Իր չարչարանքներից հետո Նա բազմաթիվ անհերքելի ապացույցներով Ինքն Իրեն կենդանի ցույց տվեց Իր աշակերտներին: Խորհրդածե՛ք այս առանձնահատուկ դեպքերի մասին, երբ Նա հայտնվեց Իրենների՝

1. Մարիամ Մագդաղենացուն (Մարկ. 16:9-11),
2. Կանանց (Մատթ. 28:8-10),
3. Պետրոսին (Ղուկ. 24:34),
4. Էմմաուսի ճանապարհի երկու աշակերտներին (Ղուկ. 24:13-32),
5. Աշակերտներին՝ բացի Թովմասից (Հովհ. 20:19-25),
6. Աշակերտներին և Թովմասին (Հովհ. 20:26-31),
7. Յոթ աշակերտներին Գալիլիայի ծովակի մոտ (Հովհ. 21),
8. 500-ից ավելի հավատացյալների (1 Կոր. 15:6),
9. Հակոբոսին (1 Կոր. 15:7),
10. Աշակերտներին՝ Չիթենյաց լեռան վրա (Գործք 1:3-12):

Մեր քրիստոնեական հավատի անսասան և անխախտ մեծ հիմնաքարերից մեկը Տեր Հիսուս Քրիստոսի հարության պատմական փաստն է: Այստեղ դու և ես կարող ենք կանգնել և հավատի համար

պայքար մղել, քանի որ այս իրողությունը հերքել չի կարելի: Այն կարելի է ժխտել, բայց հերքել չի կարելի:⁵⁶

Գ. Մեծ Հանձնարարականը (28:16-20)

28:16-17. Գալիլիայում հարուցյալ Տերը հայտնվեց Իր **աշակերտներին** անհայտ լեռան վրա: Նման հայտնության մասին գրքված է նաև Մարկոս 16:15-18 և 1 Կոր. 15:6-ում: Ի՞նչ հրաշալի հավաքույթ: Նրա տառապանքները մեկընդմիշտ անցել էին: Եվ որովհետև Նա ապրում էր, նրանք էլ պիտի ապրեն: Նա կանգնած էր նրանց առջև փառավորյալ մարմնով: Նրանք երկրպագեցին ապրող, սիրող Տիրոջը, թեև նրանցից մի քանիսի գիտակցության մեջ դեռևս թաքնրված կասկածներ կային:

28:18. Այնուհետև Տերը նրանց բացատրեց, որ **ամեն իշխանություն** Իրեն է **տրված երկնքում և երկրի վրա**: Որոշ իմաստով, իհարկե, Նա միշտ ունեցել է իշխանություն: Բայց այստեղ Նա խոսում էր մի իշխանության մասին, որը Նրան էր տրվել որպես նոր ստեղծագործության Գլխի: Իր մահից և հարությունից հետո Նա իշխանություն ունի հավիտենական կյանք տալու բոլոր նրանց, ում Աստված տվեց Նրան (Հովհ. 17:2): Նա միշտ ուներ իշխանություն՝ որպես բոլոր ստեղծվածների անդրանիկը: Բայց այժմ, երբ Նա կատարեց քավության գործը, Նա ձեռք բերեց իշխանությունը որպես անդրանիկը՝ մեռելներից, «որպեսզի Ինքն ամեն ինչում առաջնություն ունենա» (Կող. 1:15-18):

28:19-20. Որպես նոր ստեղծագործության Գլուխ՝ Նա Մեծ Հանձնարարականը տվեց, որ բովանդակում է «մնայուն պատվերներ» բոլոր հավատացյալներին Թագավորության ներկա փուլի ընթացքում՝ Թագավորի մերժման և Նրա երկրորդ գալըստյան միջև ընկած ժամանակը:

Այդ հանձնարարականը պարունակում է երեք պատվերներ, և ոչ թե առաջարկներ.

1. **«Ուրեմն, գնացե՛ք ու սովորեցրե՛ք բոլոր ազգերին»:** Սա չի ենթադրում ամբողջ աշխարհի դարձի գալը: Քարոզելով Ավետարանը՝ աշակերտները պի-

տի տեսնեին, թե ինչպես են մյուսները դառնում աշակերտներ կամ Փրկչի հետևորդներ՝ բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից և լեզուներից:

2. Մկրտեցե՛ք **«Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով»**: Քրիստոսի պատգամաբերները պատասխանատու են սովորեցնելու, թե ինչ է մկրտությունը, և պնդել, որ այն տրված է որպես պատվեր, և պետք է հնազանդել նրան: Հավատացյալի մկրտությամբ քրիստոնյաները հրապարակավ նույնացնում են իրենց աստվածության Երրորդության հետ: Նրանք դավանում են, որ Աստված իրենց Հայրն է, Հիսուս Քրիստոսը՝ իրենց Տերն ու Փրկիչը, և Սուրբ Հոգին՝ Նա է, Ով բնակվում է նրանց մեջ, գորացնում է նրանց և սովորեցնում: 19-րդ համարում **«անունով»** բառը դրված է եզակի թվով: Մեկ **անունով** կամ էությամբ, սակայն երեք Անձինք՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

3. Սովորեցրե՛ք **«նրանց, որ պահեն այն ամենը, ինչ ես ձեզ պատվիրեցի»**: Այս Հանձնարարականը իր մեջ ավելի շատ բան է ներառում, քան ավետարանչությունը. բավարար չէ պարզապես մարդկանց դարձի բերել և հետո նրանց թողնել իրենց հույսին: Նրանց պետք է սովորեցնել Քրիստոսի պատվիրաններին հնազանդել, որոնք գտնվում են ՆԿ-ում: Աշակերտության էությունը այն է, որ մենք ավելի շատ նմանվենք մեր Վարդապետին, իսկ սա իրագործվում է համակարգված ուսուցումով և Աստծո Խոսքին հնազանդելով:

Այնուհետև Փրկիչը ավելացրեց մինչև **աշխարհի վերջը** Իր աշակերտների հետ լինելու խոստումը: Նրանք առաջ չեն գնա մենակ՝ զրկված Իր օգնությունից: Նրանց բոլոր ծառայություններում ու ճանապարհորդություններում նրանք ճանաչելու են Աստծո Որդու ընկերակցությունը:

Ուշադրություն դարձրեք, որ Մեծ Հանձնարարականի մեջ «ամեն» բառը չորս անգամ օգտագործվում է տարբեր դրսևորումներով՝ **ամեն իշխանություն, բոլոր ազգե-**

րին, պահեն այն ամենը, ամեն օր:

Այսպիսով, Ավետարանն ավարտվում է Մեծ Հանձնարարականով և մեր փառավոր Տիրոջ մխիթարական խոսքով: Գրեթե երկու տասնյակ դարեր անց Նրա խոսքերն ունեն նույն հավաստիությունը, նույն արդիականությունը և նույն կիրառությունը: Այս հանձնարարությունը դեռևս անավարտ է:

Ի՞նչ ենք մենք անում Տեր Հիսուսի վերջին պատվերը իրականացնելու համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

¹(1:1) *«Եհովա»* անունը եբրայական *«Յահվա»* անվան հայկականացված ձևն է, որը սովորաբար թարգմանվում է «Տեր» բառով: Նույնը կարելի է ասել նաև եբրայական *«Յեշուհա»* անվան հայկականացված *«Հիսուս»* անվան մասին:

²(4:2-3) Տրված տեսակի պայմանական նախադասությունը օգտագործվում է սահմանական եղանակի հետ: Այդ նախադասության միտքը կարելի է այսպես շարադրել. «Եթե Դու Աստծո Որդին ես, ես շնորհում եմ այն»:

³(Էքսկուրս). Բնօրինակի մեջ այստեղ օգտագործված է «դիսպենսացիա» (dispensation), այսինքն՝ «կառավարում, կարգի բերել»։ Այն նկարագրում է մեթոդների էությունը, որոնք Աստված օգտագործել է մարդկային ցեղի հանդեպ պատմության որոշակի պահերին: Բառը *չի* նշանակում միայն ժամանակահատված, ավելի շուտ՝ խոսքը վերաբերում է աստվածային մտադրություններին ցանկացած դարաշրջանի *ընթացքում*: Տրված բառը մենք նույն ձևով ենք օգտագործում, երբ խոսում ենք Ռեյգանի վարչակազմի մասին՝ ի մտքը ունենալով քաղաքականությունը, որին հետևեց նախագահ Ռեյգանը իր պաշտոնավարման ընթացքում:

⁴(5:13) Albert Barnes, *Notes on the New Testament, Matthew and Mark*, էջ 47:

⁵(5:22) NIV-ում բաց է թողնված *«իզուր»* բառը, այսպիսով տրված կանոնը տարածվում է նաև արդար բարկության վրա:

⁶(5:44-47) NU-ում «մաքսավորներ» բառի փոխարեն օգտագործված է «հեթանոսներ» բառը:

⁷(5:44-47) Ձեռագրերի մեծամասնության մեջ «եղբայրներ» բառի փոխարեն գործածված է «ընկերներ» բառը:

⁸(6:13) Որոշ աստվածաբանների կարծիքով այդ փառաբանությունը փոխառված է 1 Մն. 29:11-ից պաշտամունքի նպատակով: Սա ընդամենը ենթադրություն է:

⁹(7:13-14) Ձեռագրերի մեծամասնության մեջ այս նախադասությունը բացականշան է. «Ինչպես նեղ է այն դուռը և նեղվածք է այն ճամփան, որ դեպի կյանք է տանում, և քչերն են, որ գտնում են այն»:

¹⁰(7:28-29) Jamieson, Faussert & Brown, *Critical and Explanatory Commentary on the New Testament*, V:50:

¹¹(8:2) Բորոտության որոշ ձևեր, որոնք հիշատակված են Աստվածաշնչում, և հիվանդությունը, որը մենք անվանում ենք Հանսենի հիվանդություն, նույնը չեն: Օրինակ՝ Դևտացոց գրքում ասվում է, որ հիվանդության մի որոշակի ընթացքում հնարավոր է վարակվել՝ դիպչելով հիվանդի տանը կամ հագուստին:

¹²(8:16-17) Arno C. Gaebelein, *The Gospel of Matthew*, էջ 193:

¹³(8:28) NU-ում օգտագործված է «Գեղեցասցիներ» բառը: Քաղաքի և տարածաշրջանի անունները կարող են որոշակիորեն համընկնել:

¹⁴(9:16) Gaebelein, *Matthew*, էջ 193:

¹⁵(9:17) W. L. Pettingill, *Simple Studies in Matthew*, էջեր 111-112:

¹⁶(10:8) Ձեռագրերի մեծամասնության մեջ բացակայում են «մեռելներին հարուցե՛ք» արտահայտությունը:

¹⁷(10:21) J. C. Macaulay, *Obedient Unto Death: Devotional Studies in John's Gospel*, 11:59:

¹⁸(10:41) Arthur T. Pierson, «The Work of Church for the Believer», *The Ministry of Keswick, First Series*, էջ 114:

¹⁹(11:27) Alva J. Gospel McClain, *The Greatness of the Kingdom*, էջ 311:

²⁰(11:30) J. H. Jowett, Quoted in *Our Daily Bread*:

²¹(12:8) E. W. Rogers, *Jesus the Christ*, էջեր 65-66:

²²(12:19) McClain, *Kingdom*, էջ 283:

²³(12:21) Kleist and Lilly, *The New Testament rendered from the Original Greek with Expanded Notes*, էջ 45:

²⁴(12:27) Ella E. Pohle, *C. I. Scofield's Question Box*, էջ 97:

²⁵(12:34-35) Տեքստերի մեծամասնության մեջ բացակայում են «իր սրտի մեջ» արտահայտությունը:

²⁶(13:13) H Chester Woodring: Չհրատարակված նշումներ Մատթեոսի Ավետարանի պարապմունքների համար, Emmaus Bible School, 1961:

²⁷(13:22) G. H. Lang, *The Parabolic Teaching of Scripture*, էջ 68:

²⁸(13:24-26) Merrill F. Unger, *Unger's Bible Dictionary*, էջ 1145:

²⁹(13:33) J. H. Brookes, *I am Coming*, էջ 65:

³⁰(13:49-50) Gaebelein, *Matthew*, էջ 302:

³¹(14:4-5) Աղբյուրն անհայտ է:

³²(16:2-3) Անշուշտ, տվյալ եղանակի տեսությունը վերաբերում է Իսրայելին, բայց ոչ թե Հյուսիսային Ամերիկային կամ Բրիտանիային:

³³(16:7-10) 12 կողովներում 5000-ից մնացած, կարող է ավելի քիչ հաս պարունակել, քան 4000-ից՝ մնացած յոթ կողովներում:

³⁴(16:17-18) G. Campbell Morgan, *The Gospel According to Matthew*, էջ 211:

³⁵(16:19) Charles C. Ryrie, ed., *The Ryrie Study Bible, New King James Version*, էջ 1506:

³⁶(16:20) James S. Stewart, *The Life and Teaching of Jesus Christ*, էջ 106:

³⁷(16:26) Donald Grey Barnhouse, *Words Fitly Spoken*, էջ 53:

³⁸(18:11) NU-ում բացակայում է այս հատվածը, սակայն առկա է ձեռագրերի մեծամասնության մեջ:

³⁹(20:15) James S. Stewart, *A Man in Christ*, էջ 252:

⁴⁰(20:31-34) Gaebelein, *Matthew*, էջ 420:

⁴¹(21:6) J. P. Lange, *A Commentary on the Holy Scriptures*, 25 Vols, pagination unknown:

⁴²(23:9-10) H. G. Weston, *Matthew, the Genesis of the New Testament*, էջ 110:

⁴³(23:14) NU-ում բացակայում է երկրորդ վայր:

⁴⁴(23:25-26) Որոշ ձեռագրերում «*ἀδικία*» (*adikia*) բառի փոխարեն օգտագործված է «*ἀσκήρασις*» (*akrasia*):

⁴⁵(24:29) I. Velikovskiy, *Earth in Upheaval*, էջ 136:

⁴⁶(24:30) Հունարեն «երկիր» բառը (*ge*) ունի երկու նշանակություն. «աշխարհ, որտեղ մենք ապրում ենք» և «երկիր»:

⁴⁷(24:34) F. W. Grint, «Matthew», *Numerical Bible*, The Gospels, էջ 230:

⁴⁸(24:36) NU-ում ավելացված է «ոչ Որդին»:

⁴⁹(25:28-29) *Our Lord's Teachings About Money* (թերթիկ), էջեր 3-4:

⁵⁰(26:64) Եզակի թվով հունարեն *su* դերանունը գործածվում է այստեղ որպես արտահայտչական միջոց: Երկրորդ անգամ այն գործածված է հոգնակի թվով՝ «դուք» (*humin*), և երրորդ անգամ հանդես է գալիս բայի վերջավորություն *opsesthe*:

⁵¹(26:64) R. C. H. Lenski, *The Interpretation of St. Matthew's Gospel*, էջ 1064:

⁵²(27:37) Եթե միացնենք գրվածքի բոլոր մասերը, կստացվի. «Սա է Հիսուսը Նազարեթից՝ Հրեաների Թագավորը»:

⁵³(27:54) Հունարենում գոյականները, բաղադրյալ ստորոգյալի որոշակի մասերը, սովորաբար գործածվում են առանց հոդի («Կովվելի կանոն»-ի բաժինը):

⁵⁴(27:65-66) Merrill F. Unger, *Unger's Bible Handbook*, էջ 491:

⁵⁵(28:8) «Ուրախացեք», սովորական հունական ողջույնն է. այս բառի բառացի թարգմանությունը Հարության առավոտի համար կարծես ավելի հարմար է:

⁵⁶(28:15) Wilbur Smith, «In the Study», *Moody Monthly*, April, 1969թ.:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Barnhouse, Donald Grey. *Words Fitly Spoken*. Wheaton: Tyndale House Publishers, 1969թ.:

Gaebelein, A. C. *The Gospel of Matthew*. New York: Loizeaux Bros., 1910թ.:

Kelly, William. *Lectures on Matthew*. New York: Loizeaux Bros., 1911թ.:

Lensky, R. C. H. *The Interpretation of Saint Matthew's Gospel*. Minneapolis: Augsburg Publishing House, 1933թ.:

Maccauley, J. C. *Behold Your King*. Chicago: The Moody Bible Institute, 1982թ.:

Morgan, G. Campell. *The Gospel According to Matthew*. New York: Fleming H. Revell Company, 1929թ.:

Pettingill, W. L. *Simple Studies in Matthew*. Harrisburg: Fred Kelker, 1910թ.:

Tasker, R. V. G. *The Gospel According to St. Matthew, TBC*. Grand Rapids: Wm. B. Eerdmans, Publishing Company, 1961թ.:

Thomas, W. H. Griffith. *Outline Studies in Matthew*. Grand Rapids: Wm. B. Eerdmans, Publishing Company, 1961թ.:

Weston, H. G. *Matthew, the Genesis of the New Testament*. Philadelphia: American Baptist Publication Socoeety, n. d.:

Պարբերականներ և չիրատարակված նյութեր

Smith, Wilbur. «In the Study», *Moody Monthly*, April, 1969.

Woodring, H. Chester. *Class Notes on Matthew*, 1961, Emmaus Bible Scholl, Oak Park, II. (now Emmaus Bible College).

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Նախաբան

«Մարկոսի Ավետարանում առկա են թարմությունը և եռանդը, որ հափշտակում են քրիստոնյա ընթերցողին ու նրա մեջ ինչ-որ ձևով իր օրհնյալ Տիրոջ օրհնակով ծառայելու փափագ առաջացնում»:

Ավգուստ Վան Ռին

I. Հատուկ տեղը կանոնում

Քանի որ Մարկոսի Ավետարանն ամենակարճն է, իսկ նրա նյութերի գրեթե իննսուն տոկոսը ներկայացված են նաև Մատթեոսի և Ղուկասի կամ երկուսի մոտ էլ, ապա ի՞նչ ներդրում է նա արել, առանց որի մենք չենք կարող:

Նախևառաջ Մարկոսի սեղմ ոճն ու լրագրողական պարզությունը նրա Ավետարանը դարձրել են քրիստոնեական հավատի իդեալական ներածություն: Միսիոներական նոր դաշտերում հաճախ առաջինը Մարկոսի Ավետարանն են թարգմանում մայրենի լեզվով:

Մակայն ոչ միայն պարզ գործնական *ոճը*, որ հատկապես մատչելի էր հռոմեացիներին և նրանց ժամանակակից նմանակներին, այլև Մարկոսի Ավետարանի *քուլանդակությունը*, այն դարձնում է յուրահատուկ:

Մարկոսը հիմնականում անդրադառնում է միևնույն իրադարձություններին, ինչ-որ Մատթեոսն ու Ղուկասը՝ նրանց ավելացնելով մի քանի յուրահատուկ, բայց ավելի գունեղ մանրամասներ, որոնք բացակայում են մյուսների մոտ: Օրինակ՝ նա ուշադրություն է դարձնում այն բանին, թե Հիսուսն ինչպես էր նայում աշակերտներին, ինչպես էր բարկանում, և ինչպես էր նրանց առջևից քայլում Երուսաղեմ տանող ճանապարհին: Այդ մանրամասները, անկասկած, փոխանցվել էին Պետրոսից, ում հետ նա մտերիմ էր իր կյանքի վերջին օրերին: Ավանդությունն

ասում է, և հավանաբար դա այդպես է, որ Մարկոսի Ավետարանը, ըստ էության, Պետրոսի հիշողություններն են. այն հաշվի է առնում անձնական մանրամասները, գործողությունների զարգացումը և գրքի ակամատեսի ազդեցությունը:

Համընդհանուր կարծիքն այն է, որ Մարկոսն այն երիտասարդն էր, որ մերկ փախավ (14:51-52), և սա նրա գրքի համեստ ստորագրությունն է: (Ի սկզբանե Ավետարանների վերնագրերը տվյալ գրքերի մասը չեն կազմել): Ավանդությունը, հավանաբար ճիշտ է, քանի որ Հովհաննես Մարկոսն ապրել է Երուսաղեմում, և եթե նա ինչ-որ ձևով կապված չլիներ Ավետարանի հետ, ապա այս փոքրիկ պատմությունը պատմելու ոչ մի պատճառ չէր լինի:

II. Հեղինակը

Հեղինակների մեծ մասն ընդունում են վաղ Եկեղեցու միահամուռ կարծիքը, որ երկրորդ Ավետարանը գրվել է Հովհաննես Մարկոսի կողմից: Նա եղել է երուսաղեմացի Մարիամի որդին, ում տունը քրիստոնյաներն օգտագործել են որպես ժողովատեղի:

Արտաքին վկայություններն այս առումով վաղ են, ծանրակշիռ և կայսրության տարբեր մասերից: Պապիան (մոտավորապես մ.թ. 110թ.) մեջբերում է անում Հովհաննես Երեցից, (հավանաբար Հովհաննես առաքյալից, թեև չի բացատրվում նաև մեկ այլ

վաղ աշակերտ), ով մատնանշում էր, որ այդ Ավետարանը գրել է Մարկոսը՝ Պետրոսի գործակիցը: Մրանում համակարծիք են Հուստինոս Վկան, Իրենիուսը, Տերտուղիանոսը, Կղեմես Ալեքսանդրիացին, Օրիգենեսը և «Նախաբան ընդդեմ Մարկոսի»-ն:

Մարկոսի հեղինակության *ներքին վկայությունները*, թեև ծավալուն չեն, ամեն դեպքում համընկնում են վաղ քրիստոնեության այս համընդհանուր ավանդության հետ:

Հեղինակը, ակնհայտ է, լավ գիտեր Պաղեստինը, մասնավորապես Երուսաղեմը: Վերնատան մասին պատմությունը ներկայացված է ավելի մանրակրկիտ, քան մյուս Ավետարաններում: Չարմանալի չէ՛, եթե իրադարձությունները տեղի են ունեցել նրա պատանեկության հայրենի քաղաքում: Ավետարանը արտացոլում է որոշակի արամական (Պաղեստինի լեզուն) միջավայր, հրեական սովորությունների ըմբռնում, իսկ գունեղ շարադրանքը ենթադրում է սերտ կապ ականատեսի հետ: Գրքի բովանդակության ուրվագիծը համապատասխանում է Գործք 10-րդ գլխի Պետրոսի քարոզի հետ:

Այն ավանդությունը, որ Մարկոսն Ավետարանը գրել է Հռոմում, հաստատվում է մեծաթիվ լատիներեն բառերի (ինչպիսիք են *ցենտուրիոն* - հարյուրապետ, *ցենսիոս* - մարդահամար, *դինարիոս* - մեկ դահեկան, *լեզոն* և *պռետորիս* - կուսակալի դատավարության սրահը) օգտագործումից, ի տարբերություն մյուս ավետարանիչների:

ՆԿ-ում տասն անգամ հիշատակված է մեր հեղինակի՝ Մարկոսի հեթանոսական (լատիներեն) անունը, իսկ երեք անգամ՝ Հովհաննես Մարկոս հրեա-հեթանոսական համակցված անունը: Մարկոսը, ով սկզբում եղել է Պողոսի, այնուհետև՝ իր զարմիկ Բառնաբասի «ծառան» կամ օգնականը, և ըստ հավաստի ավանդության՝ Պետրոսի (մինչև նրա մահը), նա իդեալական մարդն է Կատարյալ Ծառայի մասին Ավետարանը գրելու համար:

III. Գրելու տարեթիվը

Մարկոսի Ավետարանի գրելու տարեթի-

վը քննարկման առարկա է դարձել նույնիսկ Աստվածաշնչին հավատացող պահպանողական աստվածաշնչագետների կողմից: Հնարավոր չէ նշգրտությամբ սահմանել տարեթիվը, բայց, այնուամենայնիվ նըշվում է մինչև Երուսաղեմի ավերումը:

Ավանդույթը տեսակետների մեջ էլ է բաժանվում՝ արդյոք Մարկոսը Տիրոջ կյանքի մասին Պետրոսի քարոզը գրեց *մի՞նչև* վերջինիս մահը (մինչև 64-68թթ.), թե՛ դրանից *հետո*:

Մասնավորապես, եթե Մարկոսի Ավետարանն առաջին գրված Ավետարանն է, ինչպես սովորեցնում են աստվածաշնչագետների մեծ մասը, ապա անհրաժեշտ է գրելու համար ավելի վաղ տարեթիվ, որպեսզի Ղուկասը կարողանար օգտագործել Մարկոսի նյութերը: Որոշ աստվածաշնչագետներ Մարկոսի Ավետարանը թվագրում են 50-ական թվականների սկիզբը, սակայն ավելի հավանական է թվում մ.թ. 57-60թթ.-ի թվագրումը:

IV. Ենթահողը և թեման

Այս Ավետարանում ներկայացված է Աստծո Կատարյալ Ծառայի՝ մեր Տիրոջ Հիսուս Զրիստոսի պատմությունը: Պատմությունը Նրա մասին է, Ով մեկ կողմ դրեց Իր երկնային փառքի արտաքին պերճությունը և Ծառայի կերպարանք առավ երկրի վրա (Փիլ. 2:7): Սա աննախադեպ պատմություն է Նրա մասին, Ով «... Չէր եկել ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և Իր Անձը որպես փրկագին շատերի համար տալու» (Մարկ. 10:45):

Եթե հիշենք, որ այդ Կատարյալ Ծառան ոչ այլ ոք էր, քան Աստծո Որդին, Ով հոժարակամ ծառայի զոգնոց կապեց և դարձավ մարդկանց Ծառա, ապա Ավետարանը հավիտենական ճոխությամբ կփայլի մեզ համար: Այստեղ տեսնում ենք մարդեղացած Աստծո Որդուն, Ով երկրի վրա ապրեց որպես կախյալ Մարդ: Նա ամեն ինչում կատարելապես հնազանդվեց Իր Հոր կամքին, իսկ Նրա բոլոր գորավոր գործերը կատարվեցին Սուրբ Հոգու գորությամբ:

Հեղինակը՝ Հովհաննես Մարկոսը, եղել է Տիրոջ ծառան. նա լավ սկսեց, ունեցավ որոշակի անկում (Գործք 15:38), բայց ի վերջո վերականգնվեց՝ հօգուտ ծառայության (2 Տիմ. 4:11):

Մարկոսն իր ոճով արագ է, աշխույժ և հակիրճ: Նա ավելի շատ ընդգծում է Տիրոջ գործերը, քան՝ Նրա խոսքերը. սա է հաստատում այն փաստը, որ նա արձանագրել է տասնինը հրաշք և ընդամենը չորս առակ:

Այս Ավետարանը ուսումնասիրելիս պետք է փորձենք բացահայտել երեք բան. 1. ինչի՞ մասին է այն խոսում, 2. ի՞նչ է այն նշանակում և 3. ի՞նչ դաս կա դրա մեջ ինձ համար: Բոլոր նրանք, ովքեր փափագում են լինել *Տիրոջ ճշմարիտ և հավատարիմ ծառաները*, այս Ավետարանը պետք է դառնա նրանց ծառայության արժեքավոր դասագիրքը:

ՈՒՐՎԱԳԻԾ

- I. ԾԱՌԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (1:1-13)
- II. ԾԱՌԱՅԻ ՎԱՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԼԻԼԻԱՅՈՒՄ (1:14-3:12)
- III. ԾԱՌԱՅԻ ԿԱՆՉԸ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ (3:13-8:38)
- IV. ԾԱՌԱՅԻ ԾԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ (9-10-րդ գլ.)
- V. ԾԱՌԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ (11-12-րդ գլ.)
- VI. ԾԱՌԱՅԻ ԾԱՌԸ ՁԻԹԵՆՅԱՑ ԼԵՌԱՆ ՎՐԱ (13-րդ գլ.)
- VII. ԾԱՌԱՅԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ ԵՎ ՄԱՀԸ (14-15-րդ գլ.)
- VIII. ԾԱՌԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ (16-րդ գլ.)

Մեկնաբանություն

I. ԾԱՌԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (1:1-13)

Ա. Ծառայի նախակարապետը պատրաստում է ճանապարհը (1:1-8)

1:1. Մարկոսի Ավետարանի թեման **Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի** մասին Բարի Լուրն է: Քանի որ հեղինակի նպատակն է ընդգծել Տեր Հիսուսի Ծառայի դերը, նա սկսում է ոչ թե ծննդաբանությունից, այլ՝ Փրկչի հասարակական ծառայությունից: Եվ այն հայտարարվեց Հովհաննես Մկրտչի՝ Բարի Լուրն ազդարարողի կողմից:

1:2-3. Մաղաքիա և Եսայի՝ մարգարեները խոսել են **պատգամաբերի** մասին, որ Մեսիայի առջևից պիտի գնար՝ ժողովրդին կոչ անելով բարոյապես և հոգևորապես պատրաստվելու Նրա գալստյանը (Մաղ. 3:1, Ես. 40:3): Հովհաննես Մկրտչիչը իրագործեց այդ

մարգարեությունը: Նա ուղարկված էր որպես **«անապատում կանչողի ձայնը»**:

1:4. Նրա պատգամի նշանակությունն այն էր, որ մարդիկ ապաշխարեն՝ փոխեն իրենց մտքերը և թողնեն իրենց մեղքերը ու **մեղքերի թողություն** ստանան: Հակառակ դեպքում նրանք ի վիճակի չեն լինի Տիրոջն ընդունելու: Միայն սուրբ մարդիկ են կարողանում գնահատել Աստծո Սուրբ Որդուն:

1:5. Երբ Հովհաննես Մկրտչին լսողները ապաշխարում էին, նա մկրտում էր նրանց: Դա նրանց դարձի գալու արտաքին արտահայտությունն էր: Մկրտությունը նրանց հրապարակայնորեն առանձնացնում էր Իսրայել ժողովրդի զանգվածից, ովքեր Տիրոջը լքել էին: Այն նրանց միավորում էր ժողովրդի մնացորդի հետ, որը պատրաստ էր Քրիստոսին ընդունել: 5-րդ համարից կարող է թվալ, թե Հովհաննեսի քարոզի հան-

դեպ արձագանքը համընդհանուր էր: Բայց դա այդպես չէր: Սկզբում դա կարող էր ուզեցնել շատերին, որոնք չէին հասկանում, որ ինչ էր պատահում: Երբ մարդկանց բազմությունը դեպի անապատ էր շտապում եռանդուն քարոզչին լսելու համար, բայց մարդկանց մեծամասնությունն իրապես չհաստատվանեց և չթողեց իր մեղքը: Սա երևալու է պատմության զարգացման ընթացքում:

1:6. Ի՞նչ տեսակի մարդ էր **Հովհաննեսը**: Այսօր նրան կարող են կոչել մոլեռանդ ու ճգնաժամ: Անապատն էր նրա տունը: Նրա հագուստը, ինչպես Եդիպիինը, ամենակուպիտը և ամենահասարակն էր: Նրա կերակուրը բավարար էր նրա կյանքի և ուժի պահպանման համար, բայց դժվար թե ճիշտ կոչես: Նա մի մարդ էր, որ ամեն բան հպատակեցրել էր մեկ փառավոր խնդրի կատարմանը՝ մարդկանց Քրիստոսի հետ ծանոթացնելուն: Հավանաբար, նա կարող էր հարուստ լինել, բայց նախընտրեց աղքատությունը: Այսպիսով նա դարձավ գլուխը դնելու տեղ չունեցողի մասին հարմար պատգամաբեր: Մենք կարող ենք սրանից դաս քաղել. պարզությունը պետք է բնորոշի բոլոր նրանց, ովքեր Տիրոջ ծառաներն են:

1:7. Հովհաննեսի պատգամը Տեր Հիսուս Քրիստոսի գերազանցության մասին էր: Նա ասում էր, որ Հիսուսն անձնական գերազանցությամբ և ծառայությամբ ավելի գորեղ է: Հովհաննեսն իրեն արժանի չէր համարում Փրկչի **կոշիկների կապերն արձակելուն** (ստորաքարշ ստրուկի պարտականություն): Սուրբ Հոգով լցված քարոզը միշտ բարձրացնում է Տեր Հիսուս Քրիստոսին և գահընկեց անում սեփական «ես»-ը:

1:8. Հովհաննեսը **ջրով** էր մկրտում: Դա արտաքին նշան էր փոփոխություն չարտադրած մարդու կյանքում: Հիսուսը նրանց **կմկրտի Սուրբ Հոգով**. այդ մկրտությունն առաջացնելու է հոգևոր գործության մեծ ներհոսք (Գործք 1:8): Այն նաև միավորելու է բոլոր հավատացյալներին Քրիստոսի Մարմնի՝ Եկեղեցու մեջ (1 Կոր. 12:13):

Բ. Նախակարապետը մկրտում է Ծառային (1:9-10)

1:9. Այդ ժամանակ ավարտին էր մոտենում այսպես կոչված 30 տարվա լուռությունը Նազարեթում: Տեր Հիսուս Քրիստոսը պատրաստ էր անցնելու Իր հասարակական ծառայությանը: Առաջին հերթին Նա անցավ 96կմ՝ **Նազարեթից դեպի Հորդանան**, Երիքովի մոտ: Այնտեղ Նա **Հովհաննեսից մկրտվեց**: Նրա դեպքում, իհարկե, ապաշխարություն չէր պահանջվում, քանի որ Նա խոստովանելու մեղքեր չունեց: Տիրոջ համար մկրտությունը խորհրդանշական գործողություն էր, որ պատկերում էր Գողգոթայի վրա վերջնականապես Նրա մահվան մեջ մկրտվելը և Նրա հարությունը մեռելներից: Այսպիսով, Նրա հասարակական ծառայության հենց սկզբում կար խաչի և դատարկ գերեզմանի կենդանի նախանշանը:

1:10-11. Եվ անմիջապես Հիսուսի **ջրից դուրս գալուն պես, Նա տեսավ երկինքը բացված և Հոգին, որ աղավնու նման իջնում էր Իր վրա**: Երկնքից հնչեց Հայր Աստծո **ձայնը՝** հաստատելով Հիսուսին, որպես Իր **սիրելի Արդուն**:

Մեր Տիրոջ կյանքում չի եղել մի պահ, երբ Նա Սուրբ Հոգով լցված չլիներ: Բայց այժմ **Սուրբ Հոգին** իջավ **Նրա** վրա՝ օծելով Նրան ծառայության համար և օծելով գործությամբ: Սա Հոգու հատուկ ծառայություն էր, նախապատրաստում առաջիկա երեք տարիների ծառայությանը: Սուրբ Հոգու գործությունը պարտադիր է: Մարդը կարող է ունենալ կրթություն, տաղանդներ, լինել գերազանց հոետոր, սակայն առանց այս խորհրդավոր առանձնահատկության, որ կոչում ենք «օծություն», նրա աշխատանքը կլինի անկենդան և անարդյունավետ: Մեր առջև է դրված մի առաջնակարգ հարց. «Արդյոք ես ծառայության համար ինձ գորացնող Սուրբ Հոգու փորձառությունն ունե՞մ»:

Գ. Ծառան փորձվում է սատանայից (1:12-13)

Եհովայի ծառան **անապատում քառա-**

սուն օր սատանայից փորձվեց: Աստծո **Հոգին** Նրան չէր բերել այդ հանդիպմանը՝ տեսնելու, թե արդյոք Նա կմեղանչի՞, այլ ապացուցելու, որ Նա չի կարող մեղանչել: Եթե Հիսուսը կարող էր որպես Մարդ մեղանչել այս երկրի վրա, ապա ի՞նչ հավաստիացում ունենք, որ Նա հիմա Երկնքում չի մեղանչի որպես Մարդ:

Ինչո՞ւ է Մարկոսը մատնանշում, որ Նա **գազանների հետ էր** այնտեղ: Արդյոք դրանք սատանայի կողմից ոգեշնչված կենդանիներ էին, որ ձգտում էին ոչնչացնել Տիրոջը: Թե՛ իրենց Արարչի ներկայությամբ հնազանդ էին դարձել: Մենք միայն կարող ենք հարցեր տալ:

Քառասուն օրերի ավարտից հետո **հրեշտակները ծառայում էին Նրան** (հմմտ. Մատթ. 4:11). փորձվելու ընթացքում Նա ոչինչ չկերավ (Ղուկ. 4:2):

Հավատացյալի կյանքում փորձություններն անխուսափելի են: Տիրոջն ավելի մոտ հետևող մարդիկ ավելի ուժեղ են լինում: Սատանան իր վառողները չի վատնում անվանական քրիստոնյաների վրա, այլ իր խոշոր տրամաչափի գեներերը բացում է նրանց դեմ, ովքեր հոգևոր պատերազմում տարածքներ են գրավում: Փորձվելը մեղք չէ: Մեղքը փորձությանը *հանձնվելն է*: Մենք չենք կարող սեփական ուժերով դիմադրել: Բայց հավատացյալի մեջ բնակվող Սուրբ Հոգին նրա գործությունն է, որ ճնշում է խավար կրքերը:

II. ԾԱՌԱՅՅԻ ՎԱՂ ԾԱՌԱՅՅՈՒԹՅՈՒՆԸ ԳՎԼԻԼԻԱՅՈՒՄ (1:14-3:12)

Ա. Ծառան սկսում է իր ծառայությունը (1:14-15)

Մարկոսը բաց է թողնում Հուդայում կատարած Տիրոջ ծառայությունը (տե՛ս Հովհ. 1:1-4:54) և սկսում է Գալիլիայի մեծ ծառայությունից, որն ընդգրկում է մեկ տարի և ինն ամիս ժամանակահատվածը (1:14-9:50): Այնուհետև, նախքան Երուսաղեմի վերջին շաբաթին անդրադառնալը նա համառոտակի խոսում է Բերիայում վերջին փուլի ծառայության մասին (10:1-10:45):

Հիսուսը Գալիլիա եկավ, քարոզեց Աստծո Թագավորության՝ Ավետարանը: Մասնավորապես Նրա քարոզը հետևյալն էր.

1. **Ժամանակը լրացել է:** Համաձայն մարգարեական ժամատախտակի, մարդկանց մեջ Թագավորի հայտնվելու ժամանակը հաստատված էր: Այժմ այդ ժամանակը եկել էր:
2. **Աստծո Թագավորությունը մոտեցել է:** Թագավորը ներկա էր և ամենաագնիվ մտադրությամբ Թագավորություն էր առաջարկում Իսրայել ժողովրդին: **Թագավորությունը մոտեցել էր** այն իմաստով, որ Թագավորն էր հայտնվել:
3. Նա մարդկանց կոչ էր անում **ապաշխարել ու Ավետարանին հավատալ:** Որպեսզի Թագավորություն մտնելու համար ընտրված լինեն, մարդիկ պետք է երես դարձնեն մեղքից և հավատան Տեր Հիսուսի մասին Բարի Լուրին:

Բ. Չորս ձկնորսների կանչվելը (1:16-20)

1:16-18. Երբ Նա անցնում էր Գալիլիայի ծովեզրով, տեսավ Միմոնին և Անդրեսսին, ովքեր ձուկ էին որսում: Նա նրանց նախկինում էլ էր հանդիպել. փաստորեն նրանք Հիսուսի աշակերտները դարձան Նրա ծառայության արշալույսին (Հովհ. 1:40-41): Այժմ Նա նրանց կանչում էր Իր հետ լինելու համար՝ խոստանալով **մարդկանց ձկնորսներ** դարձնել: Նրանք անմիջապես թողեցին իրենց շահութաբեր ձրկնորսության գործը և Նրան հետևեցին: Նրանց հնազանդությունն ակնթարթային էր, զոհաբերական և լիարժեք:

Չուկ որսալն արվեստ է, հոգիներ շահելը՝ նույնպես:

1. Այն *համբերություն* է պահանջում: Հանախ պետք է միայնակ ժամերով սպասել:
2. Այն պահանջում է խայծի, հրապուրանքի կամ ցանցի օգտագործման *հստություն*:
3. Պահանջվում է *խորաթափանցություն* և ողջամտություն՝ զնալու այնտեղ, ուր ձկներն են լողում:

4. Պահանջվում է *հետևողականություն*:
Լավ ձկնորսը շուտ չի հուսահատվում:
5. Պահանջվում է *լույություն*: Ամենալավ
ռազմավարությունը միջամտություն-
ներից խուսափելն է և անձամբ որոշ
հեռավորության վրա գտնվելը:

Մենք **մարդկանց ձկնորսներ** ենք դառ-
նում, երբ Քրիստոսին ենք հետևում: Որ-
քան շատ Նրան նմանվենք, այնքան ավելի
հաջողակ կլինենք՝ ուրիշներին շահելու
Նրա համար: Մեր պարտականությունն է
հետևել Նրան, մնացած բաների մասին Նա
կհոգա:

**1:19-20. Եվ այնտեղից մի քիչ առաջ
գնալով, Տեր Հիսուսը հանդիպեց Հակոբոսին
և Հովհաննեսին, Չերեդիոսի որդի-
ներին, ովքեր իրենց ուռվաններն էին նո-
րոգում:** Եվ երբ Նա նրանց կանչեց, նրանք
հրաժեշտ տվեցին իրենց **հորը** և Տիրոջ
հետևից գնացին:

Քրիստոսն այսօր էլ կանչում է մարդ-
կանց՝ թողնելու ամեն բան և Իրեն հետե-
վելու (Լուկ. 14:33): Ո՛չ ունեցվածքը, ո՛չ
ծնողները չպետք է արգելք լինեն մեր հնա-
զանդությանը:

Գ. Պիղծ ոգու դուրս հանելը (1:21-28)

21-34-րդ համարները նկարագրում են
Տեր Հիսուսի առօրյային բնորոշ մի օր:
Հրաշքը հետևում էր հրաշքին, երբ մեծ
Բժիշկը բուժում էր դիվահարներին ու հի-
վանդներին:

Փրկչի կատարած բժշկության հրաշքնե-
րը ցույց են տալիս, թե ինչպես է Նա մարդ-
կանց ազատում մեղքի սարսափելի հետե-
վանքներից: Սա լուսաբանվում է հաջորդ
էջում բերված աղյուսակում:

Թեև այսօր քարոզիչը կանչված չէ կատա-
րելու նման ֆիզիկական բժշկություններ,
նա կանչված է շարունակաբար գործ ունե-
նալու այդ հիվանդությունները պատճա-
ռող հոգևոր խնդիրների հետ: Մի՞թե սրանք
մեծամեծ հրաշքներ չեն, որոնց մասին Տեր
Հիսուսը հիշատակեց Հովհ. 14:12-ում. «Ով
հավատում է Ինձ, գործերը, որ Ես անում
եմ՝ Ինքն էլ պիտի անի, և դրանցից ավելի
մեծ գործեր պիտի անի»:

1:21-22. Սակայն եկե՛ք վերադառնանք
Մարկոսի պատմությանը: **Կափառնալու-
մում շաբաթ օրը** Հիսուսը **ժողովարան
մտավ** և սկսեց սովորեցնել: Մարդիկ հաս-
կացան, որ Նա սովորական ուսուցիչ չէ:
Նրա խոսքերը պարունակում էին ան-
ժխտելի գորություն, ի տարբերություն
դպիրների, ովքեր միապաղաղ և մեխա-
նիկորեն էին սովորեցնում: Նրա արտա-
հայտություններն Ամենակարողի կողմից
ուղարկված նետեր էին: Նրա դասերը գրա-
վիչ էին, համոզիչ ու մարտահրավեր նե-
տող: Դպիրները պարտադրում էին հին
կրոնը: Տեր Հիսուսի ուսուցման մեջ անի-
րական ոչինչ չկար: Նա իրավունք ուներ
հռչակելու Իր ուսուցումը, որովհետև սպ-
րում էր համաձայն Իր ուսուցման:

Ամեն ոք, ով սովորեցնում է Աստծո Խոս-
քը, պետք է իշխանությամբ խոսի կամ էլ՝
ընդհանրապես չխոսի: Մաղմոսերգուն ա-
սել է. «Հավատացի, դրա համար էլ խոսե-
ցի» (Մղմ. 116:10): Պողոսը կրկնել է այդ
բառերը 2 Կոր. 4:13-ում: Նրանց պատգա-
մը հիմնված էր խորը համոզմունքի վրա:

1:23. Նրանց ժողովարանում մի դիվա-
հար մարդ կար, որի մեջ դև էր բնակվում:
Այդ դևը նկարագրված է որպես **պիղծ ո-
գի**: Սա հավանաբար նշանակում է, որ
ոգին դրսևորում էր իր ներկայությունը՝
մարդուն դարձնելով ֆիզիկապես և բարո-
յապես պիղծ: Դիվահարությունը չպետք է
շփոթել հոգեկան հիվանդությունների տար-
բեր ձևերի հետ: Դրանք տարբեր բաներ են:
Դիվահար մարդու մեջ իրականում բնակ-
վում և վերահսկում է չար ոգին: Մարդը
հաճախ կարող է գերբնական արարքներ
կատարել, հաճախ մոլեգնել և հայիոյել, երբ
հանդիպում է Տեր Հիսուս Քրիստոսի Անձի
և գործերի հետ:

1:24. Ուշադրություն՝ նա դարձրեք, որ պիղծ
ոգին **Հիսուսին** էր աղաղակում և Նրան
Նազովրեցի ու **Աստծո Սուրբ** էր կոչում:
Ուշադրություն՝ նա դարձրեք նաև հոգնակի
դերանվան փոփոխությանը եզակիի. **մենք
Քեզ հետ ի՞նչ գործ ունենք... Դու եկել
ես մեզ կորստյա՞ն մատնելու: Ես գիտեմ
Քեզ...** Սկզբում դևը խոսում է, ասես, իրեն

ՀՐԱՇԹ	ԱՉԱՏԱԳՐՈՒՄ
1. Պիղծ ոգի ունեցող մարդու բժշկումը (1:23-26)	1. Մեղքի պղծությունից:
2. Միմոնի գոքանչի բժշկումը (16:29-31)	2. Մեղքի գրգռումից և անհանգստությունից:
3. Բորոսի բժշկումը (1:40-45)	3. Մեղքի զարշանքից:
4. Անդամալույծի բժշկումը (2:1-12)	4. Մեղքի պատճառած անօգնականությունից:
5. Չորացած ձեռքով հիվանդի բժշկումը (3:1-5)	5. Մեղքի պատճառած անպիտանությունից:
6. Դիվահարի բժշկումը (5:1-20)	6. Մեղքի թշվառությունից, բռնությունից և սարսափից:
7. Արյունահոսությամբ տառապող կնոջ բժշկումը (5:25-34)	7. Կենսունակությունից զրկող մեղքի գորությունից:
8. Հայրոսի աղջկա հարությունը (5:21-24, 35-43)	8. Մեղքի պատճառած հոգևոր մահից:
9. Փյունիկեցի կնոջ աղջկա բժշկումը (7:24-30)	9. Մեղքի և սատանայի գերությունից:
10. Խուլ ու համրի բժշկումը (7:31-37)	10. Աստծո Խոսքը լսելու և հոգևոր բաների մասին խոսելու անկարողությունից:
11. Կույրի բժշկումը (8:22-26)	11. Ավետարանի հանդեպ ունեցած կուրությունից:
12. Դիվահար պատանու բժշկումը (9:14-29)	12. Սատանայի դաժան իշխանությունից:
13. Կույր Բարտիմեոսի բժշկումը (10:46-52)	13. Կույր և աղքատ իրավիճակից, որի մեջ զգում է մեղքը:

մարդու հետ միավորելով, այնուհետև՝ միայն իր անունից:

1:25-26. Հիսուսը չէր ընդունում դևերի վկայությունը, եթե նույնիսկ այն ճիշտ էր: Ուստի Նա հրամայեց պիղծ ոգուն **պապանձվել և դո՛ւրս գալ** մարդու միջից: Պետք է որ անսովոր լիներ **ցնցվող** մարդուն տեսնելն ու ոգու բարձրաձայն աղաղակը լսելը, որ լքում էր իր գոհին:

1:27-28. Այդ հրաշքը մեծ հիացմունք պատճառեց: Մարդիկ նոր բան էին տեսնում և զարմանում էին, որ Մարդը կարող է դևին դուրս հանել պարզապես նրան հրամայելով: Նրանք զարմացած մտածում էին, թե արդյոք սա կրոնական ուսմունքի մեջ նոր դպրոցի սկիզբը չէ: Հրաշքի մասին լուրն անմիջապես **տարածվեց Գալիլիա-**

յի բոլոր կողմերում: Մինչ հաջորդ համարների անցնելը, եկե՛ք երեք կետ նշենք.

1. Ակնհայտ է, որ Քրիստոսի առաջին գալուստը երկրի վրա դիվային գործունեության մեծ պոռթկում առաջացրեց:
2. Բոլոր չար ոգիների վրա Քրիստոսի ունեցած իշխանությունը հանդիսանում է Նրա վերջնական հաղթանակի նախապատկերը սատանայի ու նրա բոլոր գործակալների նկատմամբ:
3. Որտեղ Աստված գործում է, այնտեղ սատանան դիմադրում է: Բոլոր նրանք, ովքեր սկսում են Տիրոջը ծառայելու ուղին, յուրաքանչյուր քայլափոխին կարող են դիմադրության հանդիպել... Որովհետև մենք մարմնի և արյան հետ չենք պատերազմում, այլ՝ իշխանութ-

յունների, գորությունների, այս աշխարհի խավարի իշխանների և բարձր տեղերում եղող հոգևոր չարության դեմ (Եփ. 6:12):

Գ. Պետրոսի զոքանչի բժշկումը (1:29-31)

«Շուտով»-ն այս Ավետարանին բնորոշ բառերից մեկն է, այն հատկապես համահունչ է Ավետարանին, որը Տեր Հիսուս Քրիստոսի մեջ ընդգծում է Ծառայի բնութագիրը:

1:29-30. Մեր Տերը **ժողովարանից** գնաց Միմոնի տուն: Երբ Նա եկավ այնտեղ, **Սիմոնի զոքանչը ջերմի մեջ պառկած էր:** 30-րդ համարում նշված է, որ **անմիջապես նրա մասին ասացին Նրան:** Նրանք ժամանակը չվատնեցին և կարիքը ներկայացրին Բժիշկի ուշադրությանը:

1:31. Առանց որևէ բառ ասելու, Հիսուսը նրա **ձեռքից բռնեց** և օգնեց, որ ոտքի կանգնի: Նա **խսկույն** բժշկվեց: Սովորաբար, ջերմը թուլացնում է մարդուն: Տվյալ դեպքում Տերը ոչ միայն բժշկեց ջերմը, այլև անմիջապես ուժ տվեց ծառայելու համար, և **նա ծառայում էր նրանց:**

Չ. Ռ. Միլերն ասել է.

«Յուրաքանչյուր հիվանդ ապաքինվելուց հետո սովորական կամ արտասովոր ճանապարհով պետք է շտապի ետ ստացած կյանքը նվիրել Աստծո ծառայությանը: Մարդկանց մեծամասնությունը միշտ առիթ է փնտրում Քրիստոսին ծառայելու համար՝ պատկերացնելով որոշակի ընտիր և փայլուն ծառայություն, որ իրենք կուզեն անել: Միաժամանակ նրանք իրենց ձեռքից բաց են թողնում այն, ինչ Քրիստոսն է ուզում, որ նրանք անեն: Քրիստոսի համար իսկական ծառայությունը առաջին հերթին մեր ամենօրյա պարտականությունների բարեխիղճ կատարումն է»:³

Ուշագրավ է նաև այն, որ յուրաքանչյուր բժշկության հրաշքի ժամանակ Փրկիչը տարբեր ձևով է վարվում: Սա մեզ հիշեցնում է այն մասին, որ երկու բոլորովին միանման դարձ գոյություն չունի: Ամեն մարդու պետք է անհատական հիմունքներով մոտենալ:

Այն, որ Պետրոսը զոքանչ ուներ, ցույց է տալիս, որ կուսակրոն քահանայության մասին գաղափարը օտար էր այդ օրերում: Դա մարդկային ավանդույթ է, որն Աստծո Խոսքում չի գտնում որևէ հաստատում և մեծ չարիք է ծնում:

Ե. Բժշկություն մայրամուտին (1:32-34)

Փրկչի ներկա լինելու մասին լուրն օրվա ընթացքում տարածվեց քաղաքով մեկ: Քանի որ շաբաթ էր, մարդիկ չէին համարձակվում կարիքավորներին Նրա մոտ բերել: Բայց երբ արևը մայր մտավ և շաբաթ օրն անցավ, մարդկանց բազմությունը շտապեց դեպի Պետրոսի տան դուռը: **Հիվանդները** և **դիվահարները** այնտեղ գորություն փորձառեցին, որն ազատում էր որևէ հիվանդությունից և ամեն տեսակ մեղքից:

Զ. Քարոզը Գալիլիայում (1:35-39)

1:35. Հիսուսը, **լուսածագից շատ առաջ ելնելով, գնաց մի ամայի տեղ**, ուր ոչ մի բան չէր խանգարում Նրան աղոթելու: Եհովայի Ծառան ամեն առավոտ Իր ականջն էր բացում՝ ընդունելու Հայր Աստծո հրահանգներն այդ օրվա համար (Ես. 50:4-5): Եթե Տեր Հիսուսն ամեն առավոտ աղոթելու անհրաժեշտությունն զգում էր, ապա որքան ավելի մենք: Ուշադրություն դարձրեք, որ Նա **աղոթում** էր նաև այն ժամանակ, երբ ինչ-որ բան շատ կարևոր էր Իր համար. Նա ելնում էր և առանձնանում **առավոտյան շատ շուտ:** Աղոթքը չպետք է լինի անձնական հարմարավետության խնդիր, այլ՝ անձնական կարգապահության և գոհաբերության: Արդյոք սա չի՞ լուսաբանում, թե ինչու է մեր ծառայությունը շատ բաներում անարդյունավետ:

1:36-37. Այն պահին, երբ **Սիմոնը** և իր հետ եղողները գնացին, մարդկանց բազմությունը նորից հավաքվել էր տան մոտ: Աշակերտները գնացին Տիրոջն ասելու Նրա առող ժողովրդականության մասին:

1:38. Չարմանալի է, բայց Նա քաղաք չվերադարձավ, այլ աշակերտներին տարավ մոտակա **գյուղաքաղաքները**՝ բացատրելով, որ Ինքը պետք է **այնտեղ էլ քարոզի:** Ինչո՞ւ Նա չվերադարձավ Կափառնայում:

1. Առաջին՝ Նա քիչ առաջ էր աղոթքի պահ ունեցել և իմացել էր, թե Աստված ինչ էր ուզում, որ Նա աներ այդ օրը:
2. Երկրորդ՝ Նա հասկանում էր, որ Կափառնայումնում ժողովրդական շարժումը մակերեսային է: Փրկչին երբեք չէր հրապարտում մեծ բազմությունը: Արտաքին երևույթից այն կողմ նայելով՝ Նա տեսավ նրանց սրտերում եղածը:
3. Նա գիտեր ժողովրդականության վրտանգների մասին և Իր օրինակով սովորեցնում էր աշակերտներին զգույշ լինել, երբ իրենց մասին բոլորը լավ են արձագանքում:
4. Նա հաստատականորեն խուսափում էր ցանկացած մակերեսային, հուզական ցուցադրումներից, ինչպիսին էր խաչից առաջ թագ դնելու փորձը:
5. Նա մեծ ուշադրություն էր հատկացնում Խոսքի քարոզչությանը: Բժշկության հրաշքները, որ նախատեսված էին թեթևացնելու մարդկային թշվառ վիճակը, նախատեսված էին նաև քարոզչության վրա ուշադրություն դարձնելու համար:

1:39. Այսպիսով, Հիսուսը **ամբողջ Գալիլիայով մեկ նրանց ժողովարաններում քարոզում էր ու դներին հանում:** Նա համատեղում էր քարոզչությունը գործնականի հետ, ասում էր և անում: Հետաքրքիր է նկատել, թե որքան հաճախ էր Նա ժողովարաններում դներ հանում: Արդյոք ազատական եկեղեցիներն այսօր համանման են ժողովարաններին:

Է. Բորոտի մաքրվելը (1:40-45)

Բորոտի մասին պատմությունը մեզ համար աղոթքի մի ուսանելի օրինակ է, որին Աստված պատասխանում է.

1. Անկեղծ էր և հուսալքված. **աղաչում էր Նրան,**
2. Հարգանք էր ցույց տալիս. **Նրա առջև ծնկի էր եկել,**
3. Խոնարհությամբ ու հեզությամբ էր. **ասել էր՝ եթե կամենաս:**

4. Հավատով էր. **ասել էր՝ կարող ես:**
5. Ընդունում էր իր կարիքը. **ասել էր՝ կարող ես ինձ մաքրել:**
6. Խնդրանքը հատուկ էր, ոչ թե «ինձ օրհնիր», այլ՝ **ինձ մաքրիր:**
7. Խնդրանքն անձնական էր. **ասել էր՝ կարող ես ինձ մաքրել:**
8. Այն հակիրճ էր: Բնագրում այն բաղկացած է հինգ բառից:

Տեսնե՛ք, թե ինչ պատահեց:

Հիսուսն էլ խղճաց: Եկե՛ք այս խոսքերը միշտ հիացմունքի և երախտագիտության զգացումով կարդանք:

Նա ձեռքը մեկնեց: Մտածե՛ք այս մասին: Աստծո ձեռքը տարածվում է որպես պատասխան խոնարհաբար ասված հավատով լի աղոթքին:

Նա դիպավ նրան: Օրենքի համաձայն մարդը ծիսականորեն անմաքուր էր դառնում, եթե դիպչեր բորոտին: Բացի այդ, կար նաև վարակվելու վտանգը: Սակայն Մուրբ Մարդու Որդին համակված էր մարդկային տառապանքով և ցրեց մեղքի ավերածությունները՝ առանց դրանից վարակվելու:

Նա ասաց. **«Կամենում եմ»:** Նա ավելի շատ է կամենում բուժել, քան մենք՝ բուժված լինել: Այնուհետև ավելացրեց. **«Մաքրվի՛ր»:** Բորոտի մաշկն անմիջապես դարձավ հարթ ու մաքուր:

Նա արգելեց հրաշքը հրապարակել մինչև որ մարդն իրեն **քահանային** ցույց տար և պահանջվող ընձան մատուցեր (Ղև. 14:2): Այստեղ, նախևառաջ, այս մարդու հնազանդության ստուգարքն էր: Արդյոք նա վարվե՞ց այնպես, ինչպես պատվիրվել էր իրեն: Նա այդպես չարեց. նա հրապարակեց իր հետ կատարվածը, ինչը խանգարեց Տիրոջ գործին (հ. 45): Դա նաև քահանայի խորաթափանցության ստուգարքն էր: Արդյոք նա հասկացա՞վ, որ եկել էր երկար սպասված Մեսիան, որ կատարում էր հրաշալի բժշկության հրաշքներ: Եթե նա Իսրայել ազգի տիպիկ ներկայացուցիչն էր, ապա՝ ոչ:

Եվ նորից տեսնում ենք, որ Հիսուսը հեռացավ բազմությունից և **ամայի տեղե-**

րում էր ծառայություն անում: Նա հաջողությունը չէր չափում քանակով:

Ը. Անդամալույծի բժշկումը (2:1-12)

2:1-4. Շուտով, երբ Տերը **Կափառնայում մտավ**, այն **տանը**, որտեղ Նա մնում էր, **շատ մարդիկ հավաքվեցին**: Լուրն արագորեն տարածվեց: Մարդիկ փափագում էին Հրաշագործին գործի մեջ տեսնել: Մարդիկ ձգտում են այնտեղ, որտեղ Աստված գործությամբ է գործում: Փրկիչը հավատարմաբար **նրանց Խոսքն էր քարոզում**, և մարդիկ նույնիսկ դռան մոտ էին հավաքվել: Բազմության ետևի կողմում, ինքնաշեն պատգարակի վրա **մի անդամալույծ** կար, **որին չորս հոգով էին կրում**: Բազմության պատճառով նրան դժվար էր մոտեցնել Տեր Հիսուսին: Սովորաբար, միշտ խոչընդոտներ են առաջանում, երբ ուրիշներին առաջնորդում ենք Հիսուսի մոտ: Բայց հավատը լուծում է գտնում: Չորս հոգիները դրսի աստիճաններով բարձրացան տան կտուրը: Մասամբ **բացելով տան առաստաղը**՝ ցած իջեցրին **անդամալույծին**, հավանաբար բակի մեջտեղում՝ բերելով նրան Աստծո Որդու մոտ: Ինչ-որ մեկն այդ լավ ընկերներին մականուն է տվել՝ կարեկցանք, համագործակցություն, ինքնատիպություն և հարատևություն: Մեզնից յուրաքանչյուրը պետք է ձգտի լինել մի այնպիսի ընկեր, ով դրսևորում է այս հատկանիշները:

2:5. **Հիսուսը**, տպավորված **նրանց հավատքով, անդամալույծին ասաց.** «**Որդյա՛կ, քո մեղքերը ներված են**»: Այս խոսքերը տարօրինակ են թվում: Չէ՞ որ, հարցը վերաբերում էր անդամալույծությանը և ոչ թե մեղքին, այդպես չէ՞: Այո՛, բայց Հիսուսը ախտանշանների ետևում տեսնում էր պատճառը: Նա առանց հոգին բժշկելու, մարմինը չէր բժշկի: Նա չէր բուժում մահկանացու մարմինը՝ անտեսելով հավերժության հարցը: Այսպիսով, Նա ասաց. «**Քո մեղքերը ներված են**»: Սա հրաշալի նորություն էր: Այժմ այս երկրի վրա այդ մարդու **մեղքերը ներված էին**: Նա կարիք չուներ սպասելու մինչև Դատաստանի Օրը: Նա այդ օրն ստացավ ներման հավաստիացում:

Յուրաքանչյուր ոք, ով իր հավատը դրել է Տեր Հիսուս Քրիստոսի վրա, նմանատիպ վատահություն ունի:

2:6-7. **Դպիրները** շուտ կռահեցին այս հայտարարության նշանակությունը: Նրանք բավականին լավ էին պատրաստված աստվածաշնչյան վարդապետության մեջ՝ իմանալու, որ միայն **Աստված կարող է մեղքերի թողություն տալ**: Հետևաբար որևէ մեկը, որ հայտարարում է մեղքերը ներելու մասին, այն դեպքում է, որ Ինքն Աստված է: Մինչև այդ պահը նրանց տրամաբանությունը ճիշտ էր: Սակայն Տեր Հիսուս Քրիստոսին որպես Աստծո ընդունելու փոխարեն, նրանք իրենց արտերում Նրան մեղադրեցին **հայհոյության** մեջ:

2:8-9. Հիսուսը կարդաց նրանց մտքերը, ինչն ինքնին Նրա գերբնական գործության ապացույցն էր: Նա հրահրող հարց տվեց. «**Ո՞րն է ավելի հեշտ.** հայտարարել, որ մարդու մեղքերը ներված են, թե՞ ասել, որ նրա անդամալուծությունը բուժված է»: Իրականում, *ասել* մեկը նույնքան հեշտ է, որքան և մյուսը: Բայց մարդկային տեսանկյունից, հնարավոր չէ հավասարապես *կատարել* ո՛չ մեկը և ո՛չ էլ մյուսը:

2:10-12. Տերն արդեն հայտարարել էր այդ մարդու մեղքերի թողության մասին: Այո՛, բայց արդյոք դա իրականում տեղի ունեցա՞վ: Դպիրները չէին կարող *տեսնել*, թե ինչպես էին մարդու մեղքերը ներվում, հետևաբար նրանք չհավատացին: Յուրյց տալու համար, որ մարդու մեղքերը իրոք ներվել են, Փրկիչը դպիրներին տեսանելի բան ցուցադրեց, որ նրանք կարողանային տեսնել: Նա անդամալույծին ասաց. «**Վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ ու տո՛ւնդ գնա**»: Մարդն անմիջապես հնազանդվեց: Մարդիկ **զարմացան**: Իրենց կյանքում **այսպիսի բան երբեք չէին տեսել**: Սակայն, չնայած ապշեցուցիչ վկայությանը, դպիրները չհավատացին: Հավատքը ներառում է մարդու կամքը, իսկ նրանք չէին ուզում հավատալ:

Թ. Ղևիի կանչվելը (2:13-17)

2:13-14. Մինչ Հիսուսը սովորեցնում էր

ժողովրդին **ծովի մոտ**, Նա տեսավ **Ղևիին**, որ հարկ էր հավաքում: Ղևին մեզ հայտնի է որպես Մատթեոս, ով հետագայում գրեց առաջին Ավետարանը: Նա հրեա էր, բայց նրա զբաղմունքը բոլորովին հրեական չէր՝ հաշվի առնելով, որ նա հարկ էր հավաքում ատելի հռոմեական իշխանության համար: Նման մարդիկ միշտ չէ, որ աչքի են ընկել ազնվությամբ, փաստորեն, նրանց վերևից էին նայում, ինչպես՝ պոռնիկներին, որպես՝ հասարակության տակաճեղքներ: Այնուամենայնիվ հավիտենականության մեջ Ղևիի համար հաշվի կառնվի այն, որ լսելով Քրիստոսի կանչը՝ նա ամեն բան թողեց և **գնաց Նրա ետևից**: Արդ, թո՛ղ որ մեզնից ամեն մեկը նրա նման ակնթարթորեն և անխոս հնազանդվի: Ներկայումս այն կարող է մեծ զոհաբերություն թվալ, բայց հավիտենականության մեջ դա զոհաբերություն չի համարվի, ինչպես ասել է նահատակված միսիոներ Չոն Էլիոտը. «Բոլորովին էլ հիմար չէ այն մարդը, ով տալիս է այն, ինչը չի կարող պահել, ձեռք բերելու համար այն, ինչը չի կարող կորցնել»:

2:15. Ղևին իր **տանը** ճաշկերույթ էր կազմակերպել, որտեղ կարող էր իր ընկերներին ծանոթացնել Տեր Հիսուս Քրիստոսի հետ: Նրա ընկերները մեծամասամբ իր նման էին՝ **մաքսավորներ և մեղավորներ**: Հիսուսն ընդունեց հրավերը՝ նրանց հետ ժամանակ անցկացնելու:

2:16. **Դպիրներն ու փարիսեցիները** մտածեցին, որ լուրջ սխալի մեջ են բռնել Նրան: Անմիջականորեն Նրան դիմելու փոխարեն, նրանք դիմեցին Նրա աշակերտներին և փորձեցին խաթարել նրանց վստահությունն ու նվիրվածությունը: **Այդ ինչպե՛ս է** նրանց Տերը **մեղավորների և մաքսավորների հետ** ուտում ու խմում:

2:17. **Երբ Հիսուսը լսեց**, նրանց հիշեցրեց, որ առողջները բժիշկի կարիք չունեն, այլ՝ միայն հիվանդները: Դպիրները երթադրում էին, որ իրենք **առողջ** են, հետևաբար Մեծ Բժիշկի կարիքը չէին ընդունում: Մաքսավորները և մեղավորներն ընդունել էին իրենց հանցանքը և օգնության կարիքը: Հիսուսը եկել էր՝ կանչելու այնպիսի մեղավոր-

ների, ինչպիսին նրանք էին, այլ ոչ թե իրենց արդարացրած մարդկանց:

Մեզ համար էլ այստեղ դաս կա: Մենք չպետք է ինքներս մեզ կողպենք քրիստոնեական համայնքում: Ընդհակառակը, պետք է փորձենք բարեկամաբար վարվել անաստված մարդկանց հետ, որպեսզի նրանց առաջնորդենք մեր Տիրոջ և Փրկչի մոտ: Մեղավորների հետ բարեկամական կապեր հաստատելիս չպետք է այնպիսի բան անենք, որը կվարկարեկի մեր վկայությունը, և ոչ էլ թույլ տանք չփրկված մարդկանց, որ մեզ ներքև քաշելով՝ իրենց մակարդակին հասցնեն: Մենք պետք է նախաձեռնենք ու դրական ուղղությամբ առաջնորդենք ընկերներին՝ նրանց համար հոգևորապես օգտակար լինելով: Ավելի հեշտ կլիներ չար աշխարհից մեկուսանալ, բայց ո՛չ Հիսուսը, ո՛չ էլ Նրա հետևորդները դա չարեցին:

Դպիրները կարծում էին, որ Տիրոջ համբավը կկործանեն, եթե Նրան մեղավորների բարեկամ կոչեն: Բայց նրանց ծրագրած վիրավորանքն ավելի մեծ հաղթություն շնորհեց: Բոլոր փրկվածներն ուրախությամբ Նրան մեղավորների Բարեկամ են ընդունում և հավիտյան սիրելու են դրա համար:

Ժ. Վիճաբանություն ծոմապահության մասին (2:18-22)

2:18. **Հովհաննեսի աշակերտները և փարիսեցիները** կիրառում էին **ծոմապահությունը**, որպես կրոնական վարժություն: ՀԿ-ում ծոմապահությունը սահմանված էր որպես խոր վշտի արտահայտություն: Սակայն այն զգալիորեն կորցրել էր իր նշանակությունը և դարձել սովորական ծես: Նրանք նկատեցին, որ Հիսուսի **աշակերտները ծոմ չեն պահում**, և հավանաբար նրանց սրտում նախանձ և ինքնախղճահարություն արթնացավ, երբ նրանք Տիրոջը դիմեցին բացատրության համար:

2:19-20. Ի պատասխան՝ Նա Իր աշակերտներին համեմատեց **փեսայի** ընկերների հետ: Փեսան հենց Ինքն էր: **Քանի դեռ** փեսան իրենց հետ էր, նրանք վշտի արտա-

քին դրսևորման պատճառ չունեին: **Բայց օրեր կզան,** երբ Նա **իրենցից կվերցվի, ահա այն օրերին** նրանք **ծոմ պահելու** պատճառ կունենան:

2:21. Տերն անմիջապես երկու օրինակ հավելեց՝ հայտարարելով Նոր Դարաշրջանի գալստյան մասին, որն անհամատեղելի էր նախորդի հետ: Առաջին օրինակը վերաբերում է **նոր լաթից** կարկատանին, որի կտորը դեռևս լվացված չէ և լվանալուց չի կարճացել: Եթե այն օգտագործեն **հին հանդերձը** կարկատելու համար, ապա այն անխուսափելիորեն կնեղանա և կպատռի հին լաթը: Հանդերձը, որը պատրաստված է հին կտորից, ամուր չէ և եթե դրա վրա նոր կտորով կարկատան դնեն, անպայման կպատռվի: Հիսուսը հին տնտեսությունը համեմատեց հին հանդերձի հետ: Հիսուսը երբեք մտադրված չէր քրիստոնեությունը կարկատել հուդայականության վրա. դա մի նոր մեկնարկ էր: Հին դարաշրջանի վիշտը, որն արտահայտվում էր ծոմապահությանը, պետք է իր տեղը զիջեր Նորի ուրախությանը:

2:22. Երկրորդ օրինակի մեջ խոսքը **նոր գինու** և **հին տիկերի** մասին էր: Հին կաշվե տիկերը կորցնում էին իրենց առաձգականությունը: Եվ եթե նրանց մեջ **նոր գինի** լցնեն, ապա ճնշումը, որն առաջանում է խմորման ընթացքում, տիկերը կպատռի: **Նոր գինին** մարմնավորում է քրիստոնեական հավատի ուրախությունն ու գործությունը: **Հին տիկերը** պատկերում են հուդայականության ձևերն ու ծեսերը: Նոր գինին նոր տիկերի կարիք ունի: Հովհաննեսի աշակերտները և փարիսեցիները կարիք չունեին Տիրոջ հետևորդներին դնելու վշտի ծոմապահության գերության տակ, քանի որ այն արդեն կիրառվում էր: Պետք է թույլ տալ, որ նոր կյանքի ուրախությունն ու եռանդն ինքն իրեն արտահայտի: Քրիստոնեությունը միշտ տուժել է, երբ մարդը փորձել է այն խառնել օրինապաշտության հետ: Տեր Հիսուսը սովորեցրեց, որ Օրենքն ու շնորհքը անհամատեղելի են: Դրանք միմյանց հակադիր սկզբունքներ են:

Ի. Վիճաբանություն շաբաթ օրվա մասին (2:23-28)

2:23-24. Այս միջադեպը լուսարանում է հուդայական ավանդույթների և Ավետարանի ազատության միջև եղած հակասությունը, որի մասին էլ հենց սովորեցնում էր Հիսուսը:

Եվ եղավ, երբ մի շաբաթ օր Նա անցնում էր արտերի միջով, Նրա աշակերտները սկսեցին հասկեր պոկել, որպեսզի ուտեն: Դա բոլորովին էլ չէր խախտում Աստծո օրենքը: Բայց, համաձայն մանր ավանդույթների, որ հաստատված էր երեցների կողմից, աշակերտները խախտում էին շաբաթը, քանի որ «բերք էին հավաքում», իսկ գուցե նաև «կայսում էին»՝ ցորենի հատիկները տրորում իրենց ձեռքերում, որպեսզի թեփը հանեն:

2:25-26. Պատասխանելով նրանց մեղադրանքին՝ Տերը հիշեցրեց ՀԿ-ից մի միջադեպ: Թեև Դավիթը օծված թագավոր էր, նրան մերժում էին, և թագավորելու փոխարեն, նա հետապնդվում էր կաքավի պես: Մեկ անգամ, երբ վերջացել էին նրա պաշարները, **նա մտավ Աստծո տուն** և վերցրեց **առաջավորության հացերը**՝ իր մարդկանց և իր համար: Մովորաբար, բացի քահանաներից, ուրիշներին չէր թույլատրվում առաջավորության հացերն ուտել: Սակայն Աստված Դավթին չհանդիմանեց այդ արարքի համար: Ինչո՞ւ: Որովհետև իրավիճակն Իսրայելում անհարիր էր: Քանի դեռ Դավիթը չէր կարողանում զբաղեցնել իր օրինական տեղը, որպես թագավոր, Աստված թույլ տվեց նրան անել այն, ինչը սովորաբար անօրինական էր համարվում:

Նույնը պատահեց Տեր Հիսուս Բրիստոսի հետ: Օծված լինելով՝ Նա չէր թագավորում: Այն փաստը, որ Նրա աշակերտները ստիպված էին հասկեր հավաքել ճանապարհին, ցույց էր տալիս, որ գործերը ճիշտ չէին ընթանում Իսրայելում: Քննադատելու փոխարեն փարիսեցիներն իրենք պիտի հյուրընկալություն ցուցաբերեին Հիսուսին ու Նրա աշակերտներին:

Եթե Դավիթը առաջավորության հացերն ուտելով իսկապես խախտել էր Օրենքը, և Աստված նրան չէր հանդիմանել, ապա աշակերտներն առավել ևս անմեղ էին, ովքեր այդպիսի հանգամանքներում ոչինչ չէին խախտել, բացի երեցների ավանդույթներից:

26-րդ համարը մատնանշում է, որ Դավիթն **առաջավորության հացերը կերավ**, երբ **Աբիաթարն** էր քահանայապետը: Ըստ 1 Թագ. 21:1-ի՝ այդ ժամանակ Աբիմելեքն էր քահանա: Աբիաթարը նրա որդին էր: Գուցե Դավիթի հանդեպ քահանայապետի նվիրվածությունն էր պատճառը, որ նա թույլ տվեց Օրենքի նման անսովոր շեղում:

2:27-28. Մեր Տերն Իր խոսքերն ավարտեց՝ հիշեցնելով փարիսեցիներին, որ շաբաթը հաստատված էր Աստծո կողմից մարդու բարօրության համար, և ոչ թե նրա ստրկացման: Ի հավելում Նա ասաց, որ **Մարդու Որդին շաբաթի էլ Տերն է**, Նա հաստատեց շաբաթը: Հետևաբար, Նա իրավունք ուներ որոշելու, թե ինչն էր թույլատրելի այդ օրը, և ինչը՝ արգելված: Անշուշտ, շաբաթը երբեք նախատեսված չէր կարիքի դեպքում աշխատանքը կամ ողորմության գործերը արգելելու համար: Զրիստոնյաները պարտավոր չեն շաբաթը պահել: Այդ օրը տրված էր Իսրայել ժողովրդին: Զրիստոնեության հատկանշական օրը Տերունական օրն է, շաբաթվա 1-ին օրը: Ամեն դեպքում այդ օրը չի նշանավորում որևէ օրինական թույլտվություն կամ արգելք: Ավելի շուտ դա ուրախության օր է, երբ հավատացյալները, աշխարհային զբաղմունքներից ազատվելով, կարող են Աստծուն երկրպագել, ծառայել և իրենց հոգիների մասին հոգ տանել: Մենք չպետք է հարցնենք. «Կարելի՞ է տերունական օրը դա անել», այլ ընդհակառակը. «Ինչպե՞ս կարող եմ լավագույն կերպով օգտագործել այդ օրը Աստծո փառքի համար իմ մերձավորին օրհնության պատճառ լինելու և իմ հոգևոր բարօրության համար»:

Լ. Աստծո Ծառան բժշկում է շաբաթ օրով (3:1-6)

3:1-2. Մեկ ուրիշ փորձություն տեղի ունեցավ շաբաթ օրը: Երբ Հիսուսը **նորից ժողովարան մտավ**. Նա տեսավ **մի մարդու, որի ձեռքը չորացած էր**: Ներկաների մոտ հարց առաջացավ. արդյոք Հիսուսը **շաբաթ օրով կբժշկի**: Եթե այո, ապա փարիսեցիները Նրա դեմ նորից գործ կհարուցեին: Պատկերացրե՛ք նրանց կեղծավորությունը և կեղծությունը: Նրանք չէին կարողանում ոչ մի բանով օգնել այդ մարդուն և վրդովվում էին, ով կարողանում էր դա անել: Նրանք պատճառ էին փնտրում, որպեսզի դատապարտեին կյանքի Տիրոջը: Եթե Նա շաբաթ օրով բժշկեր, ապա կշտապեին Նրան հոշոտել՝ գայլի ոհմակի պես:

3:3-4. Տերը մարդուն պատվիրեց **կանգնել և մեջտեղ գալ**: Մթնոլորտը լի էր սպասումով: Այնուհետև Նա փարիսեցիներին ասաց. «**Շաբաթ օրով բարի՞ գործելն է օրինավոր, թե՞ չար. կյանք փրկելը, թե՞ կործանելը**»: Նրա հարցը բացահայտեց փարիսեցիների չարությունը: Նրանք կարծում էին, որ շաբաթ օրով հրաշքներ և բժշկություններ անելով՝ Նա խախտում էր Օրենքը: Բայց սխալ չէին համարում այն, որ շաբաթ օրով ծրագրում էին Նրա սպանությունը:

3:5. Չարմանալի չէ, որ նրանք չպատասխանեցին: Լարված թուրքունից հետո Փրկիչն այդ մարդուն ասաց. «**Երկարի՞ր ձեռքդ**»: Երբ նա դա արեց, ուժերը վերադարձան, մարմինը վերգտավ իր բնական չափերը, և կնճիռներն անհետացան:

3:6. Սա արդեն անտանելի էր **փարիսեցիների** համար: Նրանք **դուրս եկան**, կապ հաստատեցին իրենց ավանդական թշնամիների՝ **հերովդեսականների** հետ, և խորհուրդ էին անում նրանց հետ՝ Հիսուսին **կործանելու** նպատակով: Եվ այդ բոլորը տեղի էր ունենում շաբաթ օրը: Հերովդեսն իրականացրել էր Հովհաննես Մկրտչի սպանությունը: Միգուցե նրա կուսակցությունը նույն հաջողությամբ էլ կսպաներ Հիսուսին: Փարիսեցիները հույս էին փայփայում:

Խ. Մեծ բազմությամբ շրջապատված Ծառան (3:7-12)

3:7-10. Թողնելով ժողովարանը՝ Հիսուսը Գալիլիայի **ծովեզերք քաշվեց**: Աստվածաշնչում ծովը հաճախ խորհրդապատկերում է հեթանոսներին: Հետևաբար, Նրա գործողությունները կարելի է ներկայացնել որպես շրջադարձ՝ հրեաներից դեպի հեթանոսները: **Մեծ բազմություն** էր հավաքվել ոչ միայն **Գալիլիայից**, այլև տարբեր կողմերից: Բազմությունն այնքան մեծ էր, որ Հիսուսը խնդրեց մի նավակ պատրաստել, որպեսզի ասիից դուրս գար և չնեղվեր բազմության կողմից, ովքեր եկել էին բժշկվելու համար:

3:11-12. Երբ **պիղծ ոգիները** աղաղակում էին բազմության միջից, որ **Նա Աստծո Որդին է, Նա խստորեն սաստում էր նրանց** դա ասել: Ինչպես արդեն նշվել է, Նա չէր ընդունում չար ոգիների վկայությունը: Նա չէր ժխտում, որ Աստծո Որդին էր, բայց որոշել էր վերահսկել ժամանակը և Իրեն հայտնելու կերպը որպես Այդպիսին: Հիսուսը բժշկելու իշխանություն ուներ, սակայն Նրա հրաշքները կատարվում էին միայն այն մարդկանց համար, ովքեր գալիս էին օգնություն ստանալու: Նույնն է նաև փրկության դեպքում: Նրա փրկելու գործունեությունը բոլորի համար էլ բավարար է, բայց ներգործում է միայն նրանց համար, ովքեր վստահում են Իրեն:

Փրկչի ծառայությունից սովորում ենք, որ կարիքն ինքնին կանչված լինել *չէ*: Կարիքն ամենուր էր: Տեր Հիսուսը կախված էր Հոր Աստծո հրահանգներից, Ով հայտնում էր Նրան, թե որտեղ և երբ ծառայել: Մենք էլ նույն ձևով պետք է վարվենք:

ՈՒ. ԾԱՌԱՍՅՈՒՆ ԿԱՆՉՈՒ ԵՎ ՊՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ (3:13-8:38)

Ա. Տասներկու աշակերտների ընտրվելը (3:13-19)

3:13-18. Աշխարհն ավետարանելու խնդրի կապակցությամբ Հիսուսը սահմանեց **տասներկու** աշակերտներին: Ոչ մի հրաշալի

բան չկար այդ մարդկանց մեջ, Հիսուսի հետ ունեցած կապը նրանց երևելի դարձրեց:

Նրանք երիտասարդ էին: Չ. Ե. Ստյուարտը սքանչելի մեկնաբանություն ունի աշակերտների երիտասարդության մասին.

«Քրիստոնեությունն սկսվեց երիտասարդական շարժման պես... Ցավոք, քրիստոնեական մշակույթում և քրիստոնեական քարոզների մեջ այդ փաստը չափազանց հաճախ են խլացնում: Սակայն միանգամայն հստակ է, որ առաջին աշակերտները եղել են մի խումբ երիտասարդներ: Ուստի զարմանալի չէ, որ քրիստոնեությունն աշխարհի մտավ որպես երիտասարդական շարժում: Առաքյալների մեծ մասը, հավանաբար եղել են 20 տարեկան, երբ Հիսուսին հետևեցին... Մենք երբեք չպետք է մոռանանք, որ Հիսուսն Ինքն էլ Իր երկրավոր ծառայությանն անցավ երիտասարդ տարիքում՝ «ցողի պես» (Մղմ. 110:3, այս սաղմոսն առաջին անգամ կիրառվել է Հիսուսի կողմից՝ Իր համար, իսկ հետո դա արել է առաքելական եկեղեցին): Ավելի ուշ քրիստոնյաների ճշմարիտ մղումն է եղել Կատակոմբաների պատերին իրենց Տիրոջը պատկերելը ոչ թե ծեր ու հոգնած կամ ցավից ջախջախված մեկի նմանությամբ, այլ՝ երիտասարդ հովվի՝ առավոտյան, բլուրների վրա: Իսահակ Ուոթսի հայտնի օրհներգի բառերն արտահայտում են իրական փաստը.

Երբ նայում եմ հրաշալի խաչին,

Ուր որ մեռավ *երիտասարդ փառաց Իշխանը*:

Եվ ոչ ոք երբեք չի հասկացել երիտասարդների սիրտը լի ուրախությամբ ու համարձակությամբ, առատաձեռնությամբ և հույսով, իրենց հանկարծակի միայնակությամբ և մշտական երազկոտությամբ, ներքին խռովքներով և ծանր փորձություններով: Ոչ ոք այնպես լավ չի հասկացել նրանց, ինչպես Հիսուսը: Եվ ոչ ոք, բացի Հիսուսից, այդքան հստակ չի գիտակցել, որ կյանքի երիտասարդ տարիները, երբ անսովոր գաղտնի մտքերն են բորբոքվում և ամբողջ աշխարհն է սկսվում մեր առջև բացվել, համարվում են Աստծո հպման լավագույն ժամանակը հոգու համար... Երբ ուսումնասիրում

ենք առաջին Տասներկուսի մասին պատմությունը, մենք իրականում կարդում ենք երիտասարդ մարդկանց արկածների մասին: Տեսնում ենք, թե ինչպես են նրանք հետևում իրենց Առաջնորդին դեպի անհայտը՝ հստակ չհասկանալով, թե ով է Նա, կամ ինչու են նրանք այդպես վարվում, կամ դեպի ուր է Նա նրանց առաջնորդում: Նրանք հրապուրված էին Նրանով, հիացած, հափշտակված և բռնրված Նրա հոգում եղած ինչ-որ անդիմադրելի բանով: Ընկերներից ծաղրված, թշնամիների կողմից հալածված, երբեմն կասկածներով և իրենց սրտերում անող տրտուներով, որ գրեթե ուզում էին հրաժարվել ամեն բանից, բայց տակավին Նրան հավատարիմ էին, նրանք գնում էին իրենց հույսերի փլատակների միջով դեպի ավելի մեծ հավատարմությունը և, վերջիվերջո, վաստակեցին հաղթանակը. նրանց տրվեց մեծ անուն. *Te Deum*՝ «փառավորված առաքյալներ»: Արժե նրանց տեսնելը, որովհետև մենք նույնպես կարող ենք նրանց հոգով բռնկվել և կառչել Հիսուսին»:⁴

Տասներկուսի կանչվելը հետապնդում էր եռակի նպատակ. 1. որ նրանք **Իր հետ լինեն**, 2. որ **նրանց քարոզելու ուղարկի**, 3. որ **նրանք հիվանդություններ բժշկելու և դևեր հանելու իշխանություն ունենան**:

Առաջին՝ նրանց սպասվում էր ուսուցման շրջանը՝ անհատական պատրաստություն՝ հանրությանը քարոզելուց առաջ: Սա ծառայության հիմնական սկզբունքն է: Նախքան որպես Աստծո ներկայացուցիչներ խոսելը մենք պարտավոր ենք **Նրա հետ** ժամանակ անցկացնել:

Երկրորդ՝ Հիսուսը նրանց **քարոզելու** ուղարկեց: Աստծո Խոսքի հռչակումը նրանց ավետարանչության հիմնական մեթոդն է, որը միշտ պետք է գլխավորը լինի: Ոչ մի բան չպետք է նրան հետին պլան մղի:

Երրորդ՝ նրանց տրվեց գերբնական իշխանություն: **Դևեր** հանելը մարդկանց համար ապացույց էր, որ Աստված էր առաքյալների միջոցով խոսում: Աստվածաշունչը դեռևս անավարտ էր: Հրաշքները հանդիսանում

էին Աստծո կողմից ուղարկվածների լիազորագիրը: Մեր օրերում մարդիկ ամբողջական Աստծո Խոսքին մոտենալու հնարավորություն ունեն և պարտավոր են հավատալ նրան՝ *ասանց* հրաշքների ապացույցի:

3:19. Առաքյալների անվան շարքում է գտնվում **Հուդա Իսկարիովտացու** անունը: Առեղծված է, թե ինչպես այս մարդը, որն ընտրվել էր որպես առաքյալ, դարձավ մեր Տիրոջ մատնիչը: Քրիստոնեական ծառայության ամենամեծ ցավերից մեկն այն է, որ ընդունակ, ազնիվ մի անձնավորություն, որ նվիրված մարդ էր երևում, ավելի ուշ երես է թեքում Փրկչից և աշխարհ է վերադառնում՝ նորից Նրան խաչելով:

Տասնմեկն իրենց հավատարմությունն ապացուցեցին Տիրոջ նկատմամբ, և նրանց միջոցով Նա շրջեց աշխարհը: Նրանց գործը շարունակվում է մշտապես զարգացող ավետարանչական միջոցառումների մեջ, և մեր օրերում մենք ինչ-որ իմաստով նրանց ծառայության մնայուն պտուղն ենք: Եվ ոչ ոք չի կարող ասել, թե որքան հեռու կարող է հասնել մեր ազդեցությունը քրիստոնեության տարածման մեջ:

Բ. Աններիկի մեղքը (3:20-30)

3:20-21. Հիսուսն Իր աշակերտներին ընտրելուց հետո լեռան վրայից վերադառնում էր Գալիլիայի տուն: Այնպիսի **բազմություն** էր հավաքվել, որ Նա, Իր աշակերտների հետ զբաղված լինելով, չկարողացավ հաց ուտել: Լսելով այն մասին, թե ինչ է անում, **Նրա հարազատները** մտածեցին, որ **Նա խենթացել է**, և եկան, որպեսզի Նրան դուրս տանեն: Անկասկած, իրենց ընտանիքի անդամ հանդիսացող այդ կրոնական մոլեռանդի ջանասիրությունը նրանց անհարմար վիճակի մեջ էր գցել:

Չ. Ռ. Միլերը մեկնաբանում է.

«Նրա անպարտելի մոլեռանդությունը նրանք կարող էին բացատրել լոկ եզրակացնելով, որ Նա խելագար էր: Մեր օրերում նմանատիպ շատ արտահայտություններ ենք լսում, երբ Քրիստոսին նվիրված մի հետևորդ՝ սիրելով Իր Տի-

րոջը, լիովին ուրանում է սեփական անձը: Մարդիկ ասում են. «Նա, երևի, խելագար է»: Նրանք կարծում են, որ ամեն ոք, ում կրոնական զգացումները բոցավառում են անսովոր ավյունով, կամ ով ավելի փութաջանորեն է աճում Տիրոջ գործի մեջ, քան սովորական քրիստոնյան, խելագար է...:

Սա լավ տեսակի խելագարություն է: Ափսոս, որ ներկայումս դա այնքան հազվագյուտ է: Եթե այն ավելի շատ լիներ, մեր շուրջը չէին լինի այդքան շատ չփրկված հոգիներ, որ մահանում են հենց մեր եկեղեցիների սուվերի ներքո, այդքան դժվար չէր լինի միսիոներներ և գումար գտնելը, որպեսզի Ավետարանը հասցնեն հեռավոր երկրներ, մեր եկեղեցիներում չէին լինի այդքան շատ ազատ աթոռներ, չէին լինի այդքան երկար դադարներ աղոթաժողովների ժամանակ, այդքան քիչ ուսուցիչներ չէին լինի մեր կիրակնօրյա դպրոցներում: Մի հիանալի բան կլիներ, եթե բոլոր քրիստոնյաները խելագարվեին, ինչպես Տերը կամ Պողոսը: Այս աշխարհի խելագարությունը շատ ավելի վատ է, որը երբեք թույլ չի տալիս մտածել մեկ այլ աշխարհի մասին, որը մշտապես առնչվելով կորած մարդկանց հետ՝ երբեք չի խղճում նրանց, չի մտածում նրանց կորած վիճակի մասին, ոչ մի ջանք չի գործադրում նրանց փրկելու համար: Ավելի հեշտ է պահպանել սառը դատողությունը և մնալ սառնասիրտ և ինքներս մեզ ետ պահել կորած հոգիների մասին մտահոգությունից. բայց մենք շարունակում ենք մեր եղբայրների գործը և ոչ մի չարագործություն չի կարող ավելի վատը լինել, քան ուշադրություն չդարձնելը այն բանին, որ մարդիկ հավիտենական փրկության կարիքն ունենան»:⁵

Ճիշտ է, որ Աստծո համար բոցավառվող մարդը իր ժամանակակիցների համար խելագար է թվում: Որքան շատ նմանվենք Քրիստոսին, այնքան ավելի շատ արհամարհանք կճաշակենք մեր հարազատների և ընկերների կողմից անհասկացողության պատճառով: Եթե մեր անձերը հարստություն դիզելուն նվիրենք, մարդիկ կծափահա-

րեն մեզ, իսկ եթե Հիսուս Քրիստոսին մոլեռանդ կերպով նվիրենք, մարդիկ կծաղրեն մեզ:

3:22. Դպիրները չէին կարծում, որ Նա խելագար է: Նրանք Նրա դեմ մեղադրական առաջադրեցին՝ հայտարարելով, որ Նա **Բեեղզեբուդի** իշխանությամբ է դևերին հանում, **դևերի իշխանով**: Բեեղզեբուդ անունը նշանակում է «աղբի ճանճերի տեր» կամ «մնացուկների տեր»: Սա լուրջ, նողկալի և հայհոյական մեղադրանք էր:

3:23. Սկզբում Հիսուսը հերքեց այն, ապա դատապարտեց այդ հայտարարությունն անողներին: Եթե Նա Բեեղզեբուդի օգնությամբ է հանում դևերին, ապա սատանան ինքն իր հետ է կռվում՝ խափանելով սեփական ձեռնարկները. նրա նպատակը մարդկանց վերահսկելն է դևերի օգնությամբ, ոչ թե նրանցից ազատելը:

3:24-26. Թագավորությունը, տունը կամ անձնավորությունը, որ **ինքն իր մեջ բաժանված է**, չի կարող կանգուն մնալ: Շարունակական բնակությունը կախված է ներքին համագործակցությունից, և ոչ թե հակամարտությունից:

3:27. Ուստի դպիրների կողմից առաջադրած մեղադրանքն անհեթեթություն էր: Իրականում Տեր Հիսուսն անում էր նրանց ասածի ճիշտ հակառակը: Նրա հրաշքներն, ավելի շուտ, ցույց էին տալիս սատանայի անկումը, ոչ թե նրա քաջագործությունը: Փրկիչը ճիշտ այդ նկատի ուներ, երբ ասաց. **«Ոչ ոք չի կարող մտնել գորավոր մեկի տունը և հափշտակել նրա ունեցվածքը, եթե նախ չկապի գորավոր մարդուն և հետո կողոպտի նրա տունը»:**

Չորավոր մարդը սատանան է: **Տունը**՝ նրա տերությունը, **նա**՝ այս աշխարհի աստվածը: **Նրա ունեցվածքը** մարդիկ են, որոնց վրա ինքն իշխանություն ունի: Հիսուսը կապում է սատանային և հափշտակում **նրա տունը**: Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ սատանան պիտի կապվի և զցվի դժոխքի մեջ հազար տարով: Փրկչի երկրավոր ծառայության ընթացքում դևեր հանելը կանխատեսում էր սատանայի վերջնա-

կան և կատարյալ կապվելը:

3:28-30. Տերը դատապարտեց դպիրներին 28-30-րդ համարներում, ովքեր մեղավոր էին աններելի մեղքի մեջ: Մեղադրելով Հիսուսին այն բանում, որ Նա սատանայի իշխանությամբ էր հանում դևերին, երբ իրականում Նա անում էր դա Սուրբ Հոգու գործությամբ, նրանք, ըստ էության, Սուրբ Հոգուն դև անվանեցին: Սա հայհոյություն է **Սուրբ Հոգու դեմ:** Բոլոր մեղքերը կարող են **ներվել**, բայց հատկապես այս մեղքը ներում չունի: Սա **հավիտենական** մեղք է:

Մարդիկ կարո՞ղ են այս մեղքը գործել մեր օրերում: Հավանաբար ոչ: Այդ մեղքը գոյություն ուներ այն ժամանակ, երբ Հիսուսը հրաշքներ էր անում երկրի վրա: Քանի որ Նա այժմ երկրի վրա չէ ֆիզիկապես, դևերին հանելու, նման հայհոյության հնարավորությունը Սուրբ Հոգու դեմ գոյություն չունի: Մարդիկ, որ անհանգստանում են, թե աններելի մեղք են գործում, չպետք է անհանգստանան: Այն փաստը, որ նրանք արդեն մտահոգված են, ցույց է տալիս է, որ մեղավոր չեն Սուրբ Հոգուն հայհոյություն անելու մեջ:

Գ. Ծառայի ճշմարիտ մայրն ու եղբայրները (3:31-35)

Հիսուսի մայրը՝ Մարիամը և **Նրա եղբայրները** եկան Իր հետ խոսելու: Բազմությունը խանգարում էր նրանց Նրան մոտենալ, և նրանք մարդ ուղարկեցին՝ ասելու, որ իրենք **դրսում** Իրեն են սպասում: Երբ ուղարկվածը Նրան ասաց, որ **Նրա մայրը և եղբայրները՝** ուզում են Իրեն տեսնել, Նա, **Իր շուրջը նստածներին նայելով**, ասաց, որ **ով կատարում է Աստծո կամքը, նա է Իր մայրը և եղբայրը:**

Այստեղից կարող ենք մի քանի դաս սովորել.

1. Նախևառաջ Տեր Հիսուսի խոսքերը սաստում են Մարիամի պաշտամունքը՝ Մարիամի աստվածացումը: Նա հարգանքով էր նրան վերաբերվում, որպես Իր հարազատ մոր, բայց մատնանշում էր, որ հոգևոր փոխհարաբերությունները գերակա են ազգակցական հարա-

բերություններից: Մարիամի համար ավելի պատվաբեր կլիներ Աստծո կամքը կատարելը, քան Նրա մայրը լինելը:

2. Երկրորդ՝ սա հերքում է այն ուսմունքը, որ Մարիամը ցմահ կույս է մնացել: Հիսուսը եղբայրներ ուներ: Հիսուսը Մարիամի անդրանիկն էր, բայց ավելի ուշ ծնվել են նրա մյուս որդիներն ու դուստրերը (տե՛ս Մատթ. 13:55, Մարկ. 6:3, Հովհ. 2:12, 7:3, 5, 10, Գործք 1:14, 1 Կոր. 9:5, Գաղ. 1:19: Տե՛ս նաև Սղմ. 69:8):
3. Հիսուսի համար Աստծո շահերը վեր էին ազգակցական կապերից: Նա այսօր էլ Իր հետևորդներին ասում է. «Եթե մեկն Ինձ մոտ գա և չստի իր հորը և մորը, կնոջը և որդիներին, եղբայրներին ու քույրերին, ինչպես նաև իր կյանքը, չի կարող Իմ աշակերտը լինել» (Ղուկ. 14:26):
4. Այս հատվածը մեզ հիշեցնում է, որ հավատացյալների կապն իրենց հավատակիցների հետ պետք է ավելի ամուր լինի, քան իրենց չիրկված արյունակից ազգականների հետ:
5. Եվ վերջապես, այստեղ շեշտվում է, թե Հիսուսի համար որքան կարևոր տեղ է զբաղեցնում Աստծո կամքը կատարելը: Արդյոք ես համապատասխանո՞ւմ եմ այս չափանիշներին: Արդյո՞ք ես Նրա մայրը կամ եղբայրն եմ:

Գ. Սերմնացանի առակը (4:1-20)

4:1-2. Եվ Հիսուսը **դարձյալ սկսեց սովորեցնել ծովեզերքում:** Դարձյալ շատ մեծ բազմության պատճառով Նա ստիպված գործածեց **նավը** որպես ամբիոն՝ ափից մի փոքր հեռանալով: Եվ դարձյալ Նա Իր մասին հոգևոր դասեր էր սովորեցնում՝ օգտագործելով բնաշխարհը: Նա կարողանում էր հոգևոր ճշմարտությունները տեսնել բնության թագավորության մեջ: Բոլորս կարիք ունենք նման տեսողության:

4:3-4. Այս առակը պատմում է սերմնացանի, սերմի և հողի մասին: Ճամփեզրի հողը շատ **պինդ էր**, որպեսզի սերմը ներս թափանցեր: **Եվ թռչունները եկան** ու կերան սերմերը:

4:5-6. Քարքարոտ տեղի գետինն ուներ հողի բարակ շերտ, որը ծածկում էր պինդ ապարը: Հողի շերտի քռությունը թույլ չտվեց, որ սերմը խորը արմատներ գցեր:

4:7. Փշերի մեջ ընկած սերմին գրկեցին սննդից և արևի լույսից և խեղդեցին այն:

4:8-9. Բարի հողը խորը հերկված էր և բարենպաստ պայմաններ ուներ սերմերի աճի համար: Որոշ սերմեր պտուղ տվեցին մեկի տեղ **երեսուն**, մյուսները՝ **վաթսուն**, իսկ որոշները՝ **հարյուր**:

4:10-12. Երբ աշակերտները Հիսուսի հետ առանձին մնացին, **հարցրին Նրան**, թե ինչո՞ւ էր Նա առակներով խոսում: Նա բացատրեց նրանց, որ միայն ընկալունակ սրտով մարդկանց է **տրված իմանալ Աստծո արքայության խորհուրդը**: ՆԿ-ում **խորհուրդը** մինչև այժմ չհայտնված ճշմարտություն է, որը կարող է հայտնի դառնալ միայն հատուկ հայտնությամբ: **Աստծո արքայության խորհուրդը** հետևյալն է.

1. Տեր Հիսուսը մերժվեց, երբ Իրեն՝ որպես Իսրայելի Թագավոր առաջադրեց:
2. Նախքան աշխարհում արքայության տառացի հաստատումը պետք է միջանկյալ ժամանակահատված անցնի:
3. Այդ միջանկյալ ժամանակահատվածում այն գոյություն է ունենալու հոգևոր ձևով: Բոլոր նրանք, ովքեր ընդունում են Զրիստոսին որպես Թագավորի, արքայության մեջ են լինելու նույնիսկ Իր՝ Թագավորի բացակայության ժամանակ:
4. Միջանկյալ ժամանակահատվածում Աստծո Խոսքը ցանվելու է փոփոխական հաջողությամբ: Որոշ մարդիկ իրապես դարձի են գալու, մյուսներն էլ լինելու են անվանական հավատացյալներ: Բոլոր իրենց քրիստոնյա անվանողները լինելու են արքայության արտաքին ոլորտում, և միայն ճշմարիտ հավատացյալներն են մտնելու արքայության ներքին ոլորտ:

11-12-րդ համարները բացատրում են, թե ինչու է այդ ճշմարտությունը շարադրված առակներում: Աստված Իր ընտանեկան

զադոնիքները հայտնում է նրանց, ում սրտերը բաց են, ընկալունակ ու հնազանդ, և դիտավորությամբ թաքցնում է ճշմարտությունը նրանցից, ովքեր մերժում են իրենց տրված լույսը: Դրանք այն մարդիկ են, ում Հիսուսը կոչեց **դրսիններ**: Պատահական ընթերցողի համար 12-րդ համարի խոսքերը կարող են շատ խիստ և անարդար թվալ. «**Որպեսզի տեսնելով տեսնեն ու չընկալեն և լսելով լսեն՝ ու չհասկանան, չլինի թե երբևիցե դարձի գան և նրանց մեղքերը ներվեն նրանց**»:

Սակայն մենք պետք է հիշենք այն հսկայական արտոնությունը, որ այդ մարդիկ վայելում էին: Աստծո Որդին սովորեցնում էր՝ նրանց կողքին լինելով և նրանց առջև մեծամեծ հրաշքներ անելով: Նրան որպես ճշմարիտ Մեսիայի ընդունելու փոխարեն նրանք հիմա էլ էին Նրան մերժում: Քանի որ արհամարհեցին աշխարհի Լույսին, պիտի գրկվեն Նրա ուսմունքի լույսից: Այն ժամանակ տեսնելով Նրա հրաշքները՝ տակավին չէին հասկանում դրանց հոգևոր նշանակությունը. լսում էին Նրա խոսքերը և չէին գնահատում դրանց մեջ եղած խորը դասերը:

Գոյություն ունի Ավետարանը վերջին անգամ լսելու հնարավորությունը: Մեղավորը կարող է բաց թողնել շնորհի օրը: Մարդիկ շարժվում են փրկության կողքով: Փրկչին մերժած կանայք ու տղամարդիկ կան, ովքեր այլևս ապաշխարելու և ներում ստանալու հնարավորություն չեն ունենալու: Նրանք կարող են լսել Ավետարանի լուրը, բայց այն ընկնի խստացած ականջների և անզգա սրտերի մեջ: Մենք ասում ենք. «Քանի դեռ ապրում ենք, հույս կա»: Սակայն Աստվածաշունչը խոսում է որոշ մարդկանց մասին, ովքեր կենդանի են, բայց գրկված են ապաշխարելու հույսից (օր.՝ Եբր. 4:4-6):

4:13. Կրկին վերադառնալով սերմնացանի առակին՝ Տեր Հիսուս Զրիստոսը հարցրեց Իր աշակերտներին, թե ինչպե՞ս կարող են **հասկանալ բոլոր առակները**, եթե նրանք չեն հասկանում այդ պարզ առակը:

4:14. Փրկիչը չնույնացրեց Իրեն **սերմա-**

նողի հետ: Դա կարող էր լինել հենց Ինքը կամ նրանք, ովքեր քարոզում են որպես Իր ներկայացուցիչներ: Նա ասաց, որ սերմը **Խոսքն է:**

4:15-20. Հողի տարբեր տեսակները ներկայացնում են մարդկանց սրտերը և այն, թե ինչպես են նրանք ընդունում Խոսքը. հաջորդականությունը հետևյալն է.

Ճանապարհի եզրի հողը (հ. 15): Մա կարծր սիրտն է: Այսպիսի անձը համառորեն, անվրդով և վճռականորեն Փրկչին «ոչ» է ասում: Սատանան, որ ներկայացված է թռչունների տեսքով, հափշտակում է Խոսքը: Մեղավորը պատգամի հանդեպ անտարբեր է և անդրդվելի: Հետևաբար, նա անտարբեր և անզգա է դրա հանդեպ:

Ժայռոտ տեղերում (հ. 16-17): Այսպիսի մարդը մակերեսային է արձագանքում **Խոսքին:** Թերևս Ավետարանի ջերմեռանդ կոչի ներքո տրվելով հույզերին՝ նա հայտարարում է Քրիստոսի հանդեպ իր հավատի մասին: Բայց սա ընդամենը մտային համաձայնություն է: Դրա մեջ բացակայում է անձի իրական նվիրումը Քրիստոսին: Նա **ուրախությամբ** է ընդունում Խոսքը. ավելի լավ կլիներ, որ նա այն ընդուներ խորը ապաշխարությամբ և գոջումով: Կարծես նրա գործերը լավ են ընթանում որոշ ժամանակ: Բայց հետո, երբ իր դավանության պատճառով **նեղություն կամ հալածանք է սկսվում**, նա որոշում է, որ գինը չափազանց է և հրաժարվում է ամեն բանից: Նա հայտարարում է իր քրիստոնյա լինելու մասին, քանի դեռ այն ընդունելի է, բայց հալածանքը բացահայտում է նրա անիրական լինելը:

Փշերը (հ. 18-19): Այս մարդիկ նույնպես խոստումնալից սկիզբ են ունենում: Բոլոր արտաքին նշաններով նրանք կարծես ճշմարիտ հավատացյալներ են: Բայց հետո սկսում են զբաղվել գործերով, աշխարհիկ հոգսերով, հարստանալու ցանկությամբ: Նրանք կորցնում են հոգևոր հարցերի նկատմամբ հետաքրքրությունը, մինչև, ի վերջո, բոլորովին դադարում են իրենց քրիստոնյա կոչել:

Բարի հողը (հ. 20): Այստեղ տեսնում ենք

Խոսքի հստակ ընդունումը՝ անկախ գնից: Նրանք իսկապես վերստին ծնված մարդիկ են: Նրանք Թագավոր Քրիստոսի հավատարիմ հպատակներն են: Ո՛չ աշխարհը, ո՛չ մարմինը, ո՛չ էլ սատանան չեն կարող խարխլել նրանց վստահությունը Նրա հանդեպ:

Նույնիսկ «բարի հող» կոչվող լսողների մեջ կան պտղաբերության տարբեր աստիճաններ: **Ոմանք** պտուղ են տալիս **երեսուն, ոմանք՝ վաթսուն և ոմանք՝ հարյուր:** Ի՞նչն է որոշում պտղաբերության աստիճանը: Առավել պտղաբեր կյանք ունեն այն մարդիկ, ովքեր հնազանդվում են Խոսքին՝ անմիջապես, առանց տարակուսանքի և ուրախությամբ:

Ե. Լսողների պատասխանատվությունը (4:21-25)

4:21. **Ճրագն** այստեղ ներկայացնում է այն ճշմարտությունները, որոնք Տերը շարադրեց Իր աշակերտների համար: Այդ ճշմարտությունները չպետք է դնել **կաթասայի կամ մահճի տակ**, այլ՝ դրսում, ակներև, որ մարդիկ տեսնեն: **Կաթասան** կարող է խորհրդանշել գործը, որ եթե նրան հնարավորություն տրվի, պիտի գողանա Տիրոջ գործին նվիրելու ժամանակը: **Մահիճը** կարող է խոսել հարմարավետության կամ ծուլության մասին. երկուսն էլ ավետարանչության թշնամիներն են:

4:22. Հիսուսը ժողովրդի հետ առակներով էր խոսում: Ճշմարտության խորությունը **ծածկված** էր նրանցից: Սակայն աստվածային միտումը կայանում էր նրանում, որ այդ թաքնված ճշմարտություններն աշակերտները բացատրելու էին հոժարակամ սրտերին: 22-րդ համարը նաև կարող է նշանակել, որ աշակերտները մշտապես պիտի հիշեցնեն հայտնության գալիք օրվա մասին, երբ կերևա, թե արդյոք կարելի՞ էր գործին կամ սեփական հաճույքներին թույլատրել գերակայել Փրկչի վկայությանը:

4:23. Այս խոսքերի լռությունը երևում է Հիսուսի հորդորներից. «**Եթե մեկը լսելու ականջ ունի՝ թող լսի:**»

4:24. Այնուհետև Փրկիչն ավելացրեց մեկ

ուրիշ լուրջ գգուշացում. **«Չգո՛ւյշ եղեք, թե ինչ եք լսում»:** Եթե ես լսում եմ Աստծո Խոսքից մի պատվեր, բայց չեմ կատարում, ապա չեմ կարող ուրիշ մարդկանց փոխանցել այն: Ուսուցումը գորություն և գործունեության շրջանակներ ձեռք կրերի միայն այն ժամանակ, երբ մարդիկ դրա ճշմարտացիությունը տեսնեն քարոզչի կյանքում:

Այն, ինչ տալիս ենք ուրիշների հետ ճշմարտությունը կիսելիս, մեծ օգուտով մեզ ետ կգա: Ուսուցիչը դասին պատրաստվելիս, սովորաբար, ավելի շատ է սովորում, քան աշակերտները: Իսկ մեր գալիք վարձատրությունը ավելի մեծ է լինելու, քան մեր չնչին ծախսերը:

4:25. Ամեն անգամ, երբ ձեռք ենք բերում մի նոր ճշմարտություն և թույլ ենք տալիս, որ այն իրականություն դառնա մեր կյանքում, մենք համոզված ենք լինում, որ **ավելի շատ** ճշմարտություն պիտի տրվի: Մյուս կողմից, չկիրառելով ճշմարտությունը կյանքում՝ մենք կորցնում ենք այն, ինչը ձեռք էինք բերել նախկինում:

2. Աճող սերմի առակը (4:26-29)

Այս առակը կարող ենք գտնել միայն Մարկոսի Ավետարանում: Այն կարելի է մեկնաբանել առնվազն երկու ձևով: **Մարդը**, հավանաբար խորհրդապատկերում է Տեր Հիսուս Քրիստոսին, Ով **սերմ** է գցում երկրի վրա Իր հասարակական ծառայության ժամանակ, իսկ հետո երկինք է վերադառնում: Մերմը սկսում է անել՝ գաղտնի, աննկատ, բայց անպարտելիորեն: Մի փոքր սկզբից ճշմարիտ հավատացյալների բերքը զարգանում է: **Իսկ երբ պտուղ է տալիս... հունձը** վերցվում է երկնային շտեմարանների մեջ:

Կամ էլ առակը կարող է նախատեսված լինել աշակերտներին խրախուսելու համար: Նրանց պատասխանատվությունը **սերմ** ցանելն է: Նրանք կարող են **քնել և արթնանալ, գիշեր ու ցերեկ**՝ իմանալով, որ Աստծո Խոսքը նրանց դատարկ չի վերադառնա, այլ կկատարի այն, ինչի համար նախատեսված էր: Խորհրդավոր և հրաշա-

լի գործընթացի միջոցով, մարդկային ուժից ու կարողությունից բոլորովին անկախ, Խոսքը գործում է մարդկանց սրտերում՝ Աստծո համար պտուղ բերելով: Մարդը տնկում է և ջրում, բայց Աստված է անեցնում: Մակայն նման մեկնաբանության ժամանակ դժվար կլինի բացատրել 29-րդ համարը: Միայն Աստված կարող է գործի դնել **մանգաղը**, երբ **հնձի** ժամանակը գա: Բայց, առակի համաձայն, նույն մարդը, որ սերմ է ցանում, **գործի է դնում մանգաղը** հասունացած հնձի վրա:

Է. Մանանելիս հատիկի առակը (4:30-34)

4:30-32. Այս առակը պատկերում է **արքայության** աճը, որ սկզբում նման էր **մանանելիս հատիկի**, իսկ հետո դառնում է բավական մեծ ծառ կամ թուփ, որպեսզի **թռչունները** բնակվեն նրա հովանու տակ: Արքայությունն սկսվեց մի փոքր, հալածվող փոքրամասնությունից: Այնուհետև այն դարձավ ավելի տարածված և կառավարության կողմից հաստատվեց որպես պետական կրոն: Այդ աճը տպավորիչ էր, բայց անառողջ, այն մեծամասամբ ներկայացնում էին այնպիսի մարդիկ, ովքեր շրթունքներով էին ծառայում Թագավորին, բայց իսկապես դարձի չէին եկել:

Ինչպես ասում է Վենս Հավները.

«Քանի դեռ եկեղեցին վերքի նշաններ էր կրում, նա առաջ էր շարժվում: Երբ նա սկսեց շքանշաններ կրել, կորցրեց իր ուժը: Եկեղեցու համար նշանակալից օր էր, երբ քրիստոնյաներին գցում էին որպես առյուծների կեր, քան այն ժամանակ, երբ նա գնում էր հատուկ շրջանի տոմսակներ և նստում հանրահայտ բեմերի վրա»:⁷

Մանանելիս թուփը, հետևաբար պատկերում է ձևական քրիստոնեությունը, որի հովանու տակ հավաքվում են բոլոր սուտ ուսուցիչները: Սա արքայության իր ներկա գոյության արտաքին ձևն է:

4:33-34. Այս համարները ներկայացնում են ուսուցման կարևոր սկզբունքները: Հիսուսը սովորեցնում էր մարդկանց, **որքան որ նրանք կարող էին լսել**: Նա հիմնվում

էր նրանց նախկին գիտելիքների վրա և մինչև հաջորդին անցնելը, ժամանակ էր տալիս առաջին դասը յուրացնելու համար: Գիտակցելով Իր ունկնդիրների ընդունակությունները՝ Նա նրանց կարողությունից վեր հանձնարարություններով չէր ծանրաբեռնում (տե՛ս նաև Հովհ. 16:12, 1 Կոր. 3:2, Եբր. 5:12): Որոշ քարոզիչների մեթոդը մեզ կարող է հանգեցնել այն մտքին, թե իբր Հիսուսն ասել է. «Արածեցրո՛ւ Իմ ընձուղտներին», փոխարենն ասելու. «Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին»:

Թեև Նրա ընդհանուր ուսուցումն առակներով էր, Նա **բացատրում էր Իր աշակերտներին** առանձին ժամանակ: Նա տալիս է լույսը նրանց, ովքեր անկեղծորեն փափագում են այն:

Ը. Քամին և ծովը հնազանդվում են Ծառային (4:35-41)

4:35-37. Եվ նույն օրը իրիկնապահին Հիսուսը և Իր աշակերտները Գալիլիայի ծովով անցան արևելյան կողմ: Նրանք որևէ նախապատրաստական աշխատանք չէին արել: Նրանց նավի հետ ուրիշ **փոքրիկ նավեր էլ կային**: Հանկարծ մեծ փոթորիկ բարձրացավ: Հսկայական **ալիքները** սպառնում էին **նավը** ջրով ողողել:

4:38-41. Հիսուսը քնել էր նավի **ետևի կողմում**: Իսելահեղ աշակերտները **Նրան արթնացրին՝** հանդիմանելով իրենց անվտանգության հանդեպ հոգատարության թվացյալ բացակայության համար: **Եվ արթնանալով՝ Նա սաստեց քամուն** և ալիքներին: Եվ նույն պահին մեծ **խաղաղություն** իջավ: Այնուհետև Հիսուսը հակիրճ ձևով նախատեց Իր հետևորդներին իրենց վախի ու թերահավատության համար: Նրանք շփոթված էին այդ հրաշքից: Թեև գիտեին, թե Ով է Հիսուսը, սակայն մեկ անգամ ևս տպավորվեցին Նրա ցուցադրած զորությունից, որին հնազանդվում էին բնության ուժերը:

Այս դեպքը ցույց է տալիս Տեր Հիսուս Քրիստոսի մարդկային և աստվածային էությունը: Նա քնել էր նավի ետևի կողմում. այստեղ հայտնվում է Նրա մարդ-

կային բնությունը: Նա հրամայեց և ծովը խաղաղվեց. սա ցույց է տալիս Նրա աստվածային բնությունը:

Այստեղ բացահայտվում է բնության վրա ունեցած Նրա զորությունը, իսկ նախորդ հրաշքները ցույց էին տալիս հիվանդությունների և դևերի վրա ունեցած Նրա իշխանությունը:

Եվ վերջապես, այս իրադարձությունը մեզ քաջալերում է, որ Հիսուս Քրիստոսի մոտ զնանք կյանքի բոլոր փոթորիկների ժամանակ իմանալով, որ նավակը երբեք չի կարող խորտակվել, երբ Նա դրա մեջ է:

Դու այն Տերն ես, Ով քնել էր բարձի վրա,
Դու այն Տերն ես, Ով մեղմացրեց
կատաղի ծովը,
Մեզ ի՛նչ քամու ծեծկոտոցը, ալիքների
բարձրությունը.
Երբ Քեզ հետ ենք մենք նավակում:

Էյմի Բարնայքլ

Թ. Գաղարացի դիվահարի բժշկումը (5:1-20)

5:1-5. **Գաղարացիների երկիրը**⁸ գըտնըվում էր Գալիլիայի ծովի արևելյան ափին: Այնտեղ Հիսուսը հանդիպեց մի խիստ կատաղի դիվահար մարդու, որ սարսափելի էր հասարակության համար: Նրան կապելու փորձերն անհաջողությամբ էին ավարտվում: Նա ապրում էր **գերեզմաններում** և լեռներում և մշտապես **աղաղակում էր և ինքն իրեն քարերով վիրավորում**:

5:6-13. Երբ դիվահարը **տեսավ Հիսուսին**, սկզբում հարգանքով վարվեց, իսկ հետո սկսեց բարձրաձայն աղաղակել: «Ի՛նչ ճշմարտացի և սոսկալի պատկեր է սա. մարդը խոնարհվել է երկրպագելու, խնդրանքով և հավատով, բայց, այնուամենայնիվ, նա ատում է, հանդուգն է և վախենում է. կրկնակի անհատականություն. ձգտում են ազատությանը և տակավին կառչում տառապանքին (Մուրբզրության միավորում ամենօրյա նշումներ):

Իրադարձությունների հերթականությունը հստակ չէ, սակայն այն կարելի է պատկերացնել հետևյալ ձևով.

1. Դիվահարը երկրպագության ակտ կատարեց Տեր Հիսուս Բրիստոսի առջև (հ. 6):
2. Հիսուսը **պիղծ ոգուն** հրամայեց **դուրս գալ այդ մարդուց** (հ.8):
3. Ոգին, որ խոսում էր այդ մարդու միջոցով, ճանաչեց Հիսուսին, վիճարկեց Նրա միջամտելու իրավասությունը և երդվելով՝ աղաչեց Տեր Հիսուսին իրեն չտանջել (հ.7):
4. Հիսուսը **հարցրեց** մարդու **անունը**: Անունը **լեգիոն** էր և նշանակում էր, որ այդ մարդու մեջ շատ դևեր էին բնակվում (հ.9): Դա ակնհայտ է և չի հակասում 2-րդ համարին, որտեղ ասվում է, թե նա պիղծ ոգուց էր բռնված (եգակի թվով):
5. Թերևս դևերի խոսնակն էր, որը **խոզերի բուլուկը** մտնելու թույլտվություն էր աղերսում (հ.10-12):
6. Թույլատրվեց, ինչի արդյունքում մոտ **երկու հազար** խոզեր գահավիժեցին դեպի ծովը, և **ծովում խեղդվեցին** (հ.13):

Տիրոջը հաճախ քննադատում են այն բանի համար, որ թույլատրեց խոզերի ոչնչացումը:

Հարկ է նշել մի քանի միտք.

1. Նա չէր նրանց ոչնչացման պատճառը. Նա միայն թույլատրեց: Խոզերը ոչնչացան սատանայի կործանարար գործության պատճառով:
2. Այստեղ որևէ արձանագրություն չկա, որ խոզերի տերերը մեղադրանք առաջադրեցին: Հավանաբար, դրանք հրեաներ էին, որոնց արգելված էր խոզերի բուծումը:
3. Մարդու հոգին ավելի արժեքավոր է, քան աշխարհի բոլոր խոզերը:
4. Եթե իմանայինք այնքան, որքան Հիսուսը գիտեր, մենք էլ կվարվեինք այնպես, ինչպես Նա վարվեց:

5:14-17. Նրանք, ովքեր տեսան խոզերի կործանումը, վազեցին քաղաք և պատմեցին նորությունները: Քաղաքի բնակիչները,

գալով, տեսան նախկին դիվահարին, որ **հագնված ու զգաստացած նստել էր** Հիսուսի ոտքերի մոտ: Մարդիկ վախեցան: Այս մասին շատ դիպուկ է ասված. «Մարդիկ վախեցան, երբ Նա հանդարտեցրեց ծովի փոթորիկը, իսկ հետո՝ մարդու հոգում եղած փոթորիկը»: Ականատեսները նորից պատմում էին պատահածի մասին եկվորներին: Բնակիչների համար դա չափազանց շատ էր: Նրանք սկսեցին աղաչել Հիսուսին, որ **հեռանա իրենց սահմաններից**: Ամբողջ պատահարի մեջ ցնցող մասը սա է, ոչ թե խոզերի կործանումը: Պարզվեց, որ Բրիստոսը շատ թանկ հյուր էր:

«Անհամար մարդիկ այսօր էլ ուզում են, որ Բրիստոսը հեռու մնա իրենցից՝ վախենալով, որ Նրա հետ ընկերակցությունը կարող է հանգեցնել սոցիալական, ֆինանսական և անձնական որոշ կորուստների: Իրենց ունեցվածքը պահպանելով՝ նրանք կորցնում են իրենց հոգիները» («Քաղված»):

5:18-20. Երբ Հիսուսը պատրաստվում էր **նավը մտնելով** հեռանալ, բուժված մարդը Նրանից ուղեկցելու թույլտվություն խընդրեց: Սա արժանավայել խնդրանք էր, որ նոր կյանքի մասին էր վկայում, բայց Հիսուսը նրան **տուն** ուղարկեց՝ որպես Աստծո մեծ գործության և ողորմության կենդանի վկա: Մարդը հնազանդվեց և բարի լուրը տարածեց **Գեկապոլիսում**՝ մի տարածք, որ ընդգրկում է տասը քաղաքներ:

Սրա մեջ մշտապես գործող պատվեր կա բոլոր նրանց համար, ովքեր վայելել են Աստծո փրկարար շնորհը. «**Գնա՛ տունդ՝ բարեկամներիդ մոտ և պատմի՛ր նրանց, թե Տերն ինչեր արեց քեզ համար և քեզ գթաց**»: Ավետարանչությունը սկսվում է տնից:

Ժ. Անբուժելիի բժշկումը և մեռածին հարուցանելը (5:21-43)

5:21-23. Վերադառնալով կապուտակ Գալիլիա ծովի արևմտյան ափ, Տեր Հիսուսը դարձյալ **շատ ժողովուրդների** կենտրոնում հայտնվեց: Մի խելահեղ հայր վազելով եկավ Նրա մոտ: Դա **Հայրոսն էր, ժո-**

դովարանի պետերից մեկը: Նրա փոքրիկ աղջիկը մահամերձ էր: Արդյոք Հիսուսը կգնա՞ր և **ձեռքը վրան կդնե՞ր, որ նա բժշկվեր ու ապրեր:**

5:24. Տերն արձագանքեց և ուղևորվեց դեպի նրա տունը: Մեծ բազմություն էր **հետևում** Նրան և նեղում էին **Նրան:** Հետաքրքիր է անմիջապես այն բառերից հետո, որ բազմությունը *նեղում էր* Նրան, սկսվում է հավատով բժշկվելու մասին պատմությունը՝ Նրան *ղիսչելու* միջոցով:

5:25-26. Հուսալքված կինը Հիսուսի ճանապարհը կտրեց, որ գնում էր Հայրոսի տուն: Մեր Տերը ո՛չ բարկացավ և ո՛չ էլ վրդովվեց այդ թվացյալ ընդհատումից: Ինչպե՞ս ենք արձագանքում, երբ ընդհատում են մեզ:

«Կարծում եմ, որ ամենամեծ օգուտն եմ գտնում, երբ մարդու ծրագրած աշխատանքի մեջ բոլոր ընդհատումները և խոչընդոտները փորձում եմ դիտարկել, որպես Աստծո կողմից ուղարկված դաստիարակություն ու փորձություն, որպեսզի օգնի, որ մարդն իր աշխատանքի մեջ եսասեր չդառնա... Սա ժամանակի վատնում չէ, ինչպես փորձվում ենք մտածել: Դա տվյալ օրվա աշխատանքի ամենակարևոր մասն է, այն մասը, որ թերևս, լավագույնն է Աստծուն մատուցելու համար» («Ընտրված հասկեր» օրացույց):

Այս կինը **տասներկու տարի** տառապել էր շարունակական արյունահոսությամբ: **Բազմաթիվ բժիշկներ**, ում նա դիմել էր, կիրառել էին բուժման ամենաուժեղ ձևերը, սպառել նրա դրամական միջոցները և **ավելի վատացած** վիճակում էին թողել: Երբ ապաքինվելու հույսերը լիովին լքեցին նրան, ինչ-որ մեկը նրան ասաց Հիսուսի մասին: Առանց ժամանակ կորցնելու սկսեց փնտրել Նրան: Ամբոխի միջով անցնելով նա **դիպավ Նրա հանդերձի** ծայրին: Նրա արյունահոսությունը անմիջապես դադարեց, և իրեն լիարժեք առողջ զգաց:

5:30. Նա պատրաստվում էր աննկատ հեռանալ, բայց Տերը թույլ չտվեց նրան Իրեն, որպես Փրկչի հրապարակավ ընդունելու օրհնությունը բաց թողնել: Նա զգաց, որ

Իրենից աստվածային զորություն դուրս եկավ, երբ կինը Նրան դիպավ. նրան բժըշկելը Նրա համար ինչ-որ բան արժեր: Եվ այսպես, Նա հարցրեց. «**Ո՞վ դիպավ Իմ հանդերձին**»: Պատասխանը, իհարկե, գիտեր, բայց այդ հարցը տվեց նրա համար, որպեսզի նրան առաջ կանչի բազմության միջից:

5:31. Աշակերտները մտածեցին, որ դա անհեթեթ հարց էր: Բազմությունը Նրան անընդհատ նեղում էր: Ինչո՞ւ է հարցնում. «**Ո՞վ դիպավ Ինձ**»: Սակայն տարբերություն կա ֆիզիկական հպման և հուսալքված հավատով հպման միջև: Հնարավոր է նույնիսկ Նրան շատ մտերիմ լինել և չվստահել, բայց անհնար է հավել Նրան հավատով այնպես, որ Նա չիմանա դա և չբժշկի:

5:32-33. **Կինը, վախենալով և դողողալով**, առաջ եկավ. նա **ընկավ Նրա առջև** և առաջին անգամ հրապարակավ դավանեց Հիսուս Քրիստոսին:

5:34. Այնուհետև Նա նրա հոգուն հուսադրող խոսքեր ասաց: Քրիստոսին բացահայտ դավանելը հսկայական նշանակություն ունի: Առանց դրա քրիստոնեական կյանքը չի կարող գեթ մի փոքր էլ աճել: Երբ համարձակորեն Նրա կողմն ենք կանգնում, Նա լցնում է մեր հոգիները հավատի կատարյալ վստահությամբ: Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերը հաստատեցին ոչ միայն նրա ֆիզիկական բժշկությունը, այլև, անկասկած, իր մեջ պարունակում էին հոգու փրկության մեծ օրհնություն:

5:35-38. Այդ պահին պատգամաբերները եկան այն լուրով, որ Հայրոսի **աղջիկը** մահացել էր: **Ուսուցչին** անհանգստացնելու կարիք չկար: Տերը, Իր ողորմությամբ, հանգրստացրեց Հայրոսին, ապա Իր հետ վերցնելով **Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին**՝ գնաց **տունը**: Նրանց դիմավորեցին լացողների բարձր աղաղակները, որ բնորոշ էր արևելյան երկրներում վշտի ժամանակ. որոշ լացողների վարձում էին:

5:39-42. Երբ Տեր Հիսուսը նրանց վստահեցրեց, որ աղջնակը **մեռած չէ, այլ քնած է**, նրանց արցունքները վերածվեցին ծաղ-

րի: Նա անվախորեն Իր հետ վերցրեց ընտանիքի ամենամերձավորներին և գնաց անշարժ պառկած երեխայի մոտ: Նրա **ձեռքից բռնելով՝ ասաց** արամերեն. «**Աղջիկ, քեզ եմ ասում՝ վեր կաց**»: Եվ տասներկուամյա **աղջիկը** անմիջապես **վեր կացավ և քայլեց**: Ազգականներն ապշել էին, և անկասկած, ուրախությունից իրենց կորցրել էին:

5:43. Տերն արգելեց նրանց տարածել հրաշքի մասին յուրը: Նրան չէր հետաքրքրքրում զանգվածների շրջանում համբավ ունենալը: Նա պետք է վճռականորեն գնար դեպի խաչը:

Եթե այդ աղջիկն իսկապես մահացել էր, սպա այս գլուխը ցույց է տալիս Հիսուս Քրիստոսի իշխանությունը դևերի, հիվանդության և մահվան վրա: Ոչ բոլոր աստվածաբաններն են համաձայն այն մտքին, որ աղջիկը մեռած էր: Հիսուսն ասաց, որ նա մեռած չէ, այլ քնած է: Թերևս, նա գտնվում էր խորը թմբիրի մեջ: Նա կարող էր նույնքան հեշտությամբ հարուցանել նրան մեռելներից, բայց Նա Իրեն չէր վերագրի դա, եթե աղջիկն ընդամենը անգիտակից վիճակում էր:

Չպետք է անտեսենք այս գլխի եզրափակիչ խոսքերը. «... **Հրամայեց, որ ուտելիք տրվի նրան**»: Հոգևոր ծառայության մեջ սա նշանակում է խնամակալություն: Հոգիները, ովքեր զգացել են նոր կյանքի բարբախումը, սնվելու կարիք ունեն: Աշակերտի համար Փրկչի հանդեպ իր սերն արտահայտելու միջոցներից մեկն էլ Նրա ոչխարներից արածեցնելն է:

Ի. Ծառան մերժվում է Նազարեթում (6:1-6)

6:1-3. Հիսուսն Իր **աշակերտների** հետ Նազարեթ վերադարձավ: Դա այն **գավառն էր** որտեղ նա աշխատել էր որպես հյուսն: **Ծաբաթ օրը** Նա սովորեցնում էր **ժողովարանում**: **Չարմացած** մարդիկ չէին կարողանում ժխտել Նրա ուսմունքի իմաստությունը և Նրա հրաշքների ապշեցուցիչ լինելը: Այնուամենայնիվ նրանք բոլորովին էլ չէին ուզում ընդունել Նրան՝ որպես

Աստծո Որդու: Նրանք մտածում էին Նրա մասին՝ որպես **հյուսնի, Մարիամի որդու**, Ում եղբայրները և **քույրերը** դեռ այնտեղ էին: Եթե Նա Նազարեթ վերադառնար որպես հզոր հերոս-նվաճող, այն ժամանակ նրանք մեծ պատրաստակամությամբ կընդունեին Նրան: Բայց Նա եկավ հեզ շնորհով, խոնարհաբար: Դա նրանց **գայթակղեցնում** էր:

6:4-6. Հենց այդ ժամանակ Հիսուսը նկատեց, որ **մարգարեին** սովորաբար տնից հեռու են լավագույն ընդունելության արժանացնում: Նրա ազգականները և բարեկամները չափից ավելի մոտ էին Նրան, որպեսզի գնահատեին Նրա Անձը կամ ծառայությունը: «Ոչ մի տեղ այնքան դժվար չէ ծառայել Տիրոջը, քան տանը»: Նազովրեցիները ինքնին արհամարհված մարդիկ էին: Ընդհանուր վերաբերմունքն այդ ժողովրդի նկատմամբ այսպիսին էր. «Միթե Նազարեթից մի լավ բան դուրս կգա»: Եվ դեռևս հասարակության կողմից այս արհամարհված մարդիկ վերևից էին նայում Տեր Հիսուսին: Հպարտության և մարդկային սրտի անհավատության ինչպիսի՜ լուսաբանում: Հենց անհավատությունը խոչընդոտեց Փրկչի գործունեությանը Նազարեթում: Նա միայն **մի քանի** հիվանդների բժշկեց, և սա ամենն էր, ինչ Նա կարողացավ անել այնտեղ: Նրան զարմացնում էր մարդկանց անհավատությունը: Ջ. Գ. Միլերը գգուշացնում է.

«Այդպիսի անհավատության հետևանքները բազմապատկում են չարությունը: Այն փակում է շնորհի և ողորմության ուղիները, և միայն մի բարակ շիթ կարող է հոսել դեպի մարդկային հոգու կարիքը»:⁹

Հիսուսը նորից ճաշակեց չհասկացված և ոտնահարված լինելու միայնությունը: Նրա հետևորդներից շատերը Նրա հետ կիսում են այդ վիշտը: Հանախ Տիրոջ ծառաները հայտնվում են շատ նվաստացուցիչ իրավիճակում: Արդյոք մենք կարողանո՞ւմ ենք արտաքին երևույթից ավելի հեռուն տեսնել ու ճանաչել ճշմարիտ հոգևոր արժեքը: Իր մերժվելը Նազարեթում Նրան չմտահոգեց,

և Տերը մոտակա գյուղերում շրջելով սովորեցնում էր Խոսքը:

Լ. Ծառան ուղարկում է Իր աշակերտներին (6:7-13)

6:7. Տասներկուսի ճանապարհի ընկնելու ժամանակը եկավ: Նրանք գտնվում էին Փրկչի անգուգական դպրոցում. այժմ նրանք պիտի առաջ գնային որպես փառավոր Խոսքի մունետիկներ: Տեր Հիսուսը նրանց **երկու-երկու** ուղարկեց: Այս ձևով քարոզը հաստատվում էր երկու վկաների շուրթերով: Սա նաև տալիս էր գորություն և փոխադարձ օգնություն միասին ճամփորդելիս: Եվ, վերջապես, երկուսի ներկայությունը կարող էր օգտակար լինել բարոյապես ցածր պայմաններով միջավայրերում: Այնուհետև **Նա նրանց պիղծ ոգիների վրա իշխանություն տվեց:** Այս մասին արժե նշել: Դևեր հանելն Աստծո գործն է. միայն Աստված կարող է մարդկանց օժտել նման իշխանությամբ:

6:8. Եթե մեր Տիրոջ Թագավորությունն այս աշխարհից լիներ, ապա երբեք չէր արտասանի 8-11-րդ համարների հրահանգները: Դրանք սովորական աշխարհիկ ղեկավարի կողմից տրվող պատվերների բացարձակ հակապատկերն են: Աշակերտները պետք է ճանապարհ ելնելին առանց պաշարների. **ո՛չ պայուսակ, ո՛չ հաց, ո՛չ էլ դրամ՝ իրենց գոտիների մեջ:** Բոլոր անհրաժեշտ բաները ձեռք բերելու համար նրանք պետք է Տիրոջը վստահեին:

6:9. Նա թույլ տվեց նրանց վերցնել **հողաթափ** և գավազան. վերջինս, հավանաբար կենդանիներից պաշտպանվելու համար, և միայն մեկ հանդերձ: Անշուշտ, ոչ ոք չէր նախանձի աշակերտների ունեցվածքին և չէր հրապուրվի քրիստոնեությամբ՝ հարստանալու հեռանկարով: Իսկ ամեն իշխանություն, որ ունենալու էին աշակերտները, պիտի Աստծուց գար. նրանք իրենց ամբողջովին Նրան ընծայեցին: Ճամփորդելիս նրանց ֆինանսական վիճակը շատ աղքատ էր, բայց և այնպես նրանք ներկայացնում էին Աստծո Որդուն և պատված էին Նրա իշխանությամբ:

6:10. Նրանք պետք է ընդունեին հյուրընկալությունը, որտեղ որ այն առաջարկեին, և **մնային** այն տանը մինչև այնտեղից հեռանալը: Այս հրահանգը կանխում էր առավել հարմարավետ կացարաններ ընտրելը: Նրանց առաքելությունը քարոզելն էր Նրա մասին, Ով չհանեցրեց Ինքն Իրեն և չփնտրեց Իր «ես»-ը: Նրանք չպետք է քարոզությունը փոխգիջեին ճոխության փրկատրուքով, հարմարավետությամբ և կյանքի դյուրությամբ:

6:11. Եթե մի տեղ մերժում էին աշակերտներին և նրանց խոսքը, ապա նրանք պարտավորված չէին այնտեղ մնալու: Այդպես վարվելը նշանակում էր մարգարիտը խոզերի առջև գցել: Հեռանալիս աշակերտները պետք է իրենց **ոտքերի տակի փոշին թոթափեին**, ինչը խորհրդանշում էր, որ Աստված մերժում է բոլոր նրանց, ովքեր մերժում են Իր սիրելի Որդուն:

Թեև որոշ հրահանգներ ժամանակավոր բնույթ էին կրում և ավելի ուշ չեղարկվեցին Տեր Հիսուս Քրիստոսի կողմից (Ղուկ. 22:35-36), սակայն Քրիստոսի ծառայի համար դրանց մեջ մարմնավորվում են բոլոր ժամանակների մնայուն սկզբունքները:

6:12-13. Աշակերտները **դուրս եկան ու քարոզում էին մարդկանց, որ ապաշխարեն, շատ դևեր էին հանում ու շատ հիվանդների յուղով օժում ու բժշկում:** Յուղով օժելը, մեր կարծիքով, խորհրդանշական գործողություն էր, որ պատկերում էր Սուրբ Հոգու մեղմացնող, սփոփող գորությունը:

Խ. Ծառայի նախակարապետը գլխատված է (6:14-29)

6:14-16. Երբ Հերովդես թագավորին հասավ այն լուրը, որ երկրով մեկ մի Հրաշագործ է ճամփորդում, նա անմիջապես եզրակացրեց, թե **Հովհաննես Մկրտիչը հարություն է առել մեռելներից:** Ոմանք ասում էին, որ դա **Եղիան է** կամ **մարգարեների նման մեկը**, բայց Հերովդեսը համոզված էր, որ այն մարդը, ում ինքը **գլխատեց**, հարություն է առել: Հովհաննես Մկրտիչն Աստծո ձայնն էր: Հերովդեսը

լռեցրել էր այդ ձայնը: Այժմ խղճի սարսափելի տանջանքները հետապնդում էին Հերովդեսին իր արածի համար: Նա հասկանում էր, թե ինչքան ծանր է հանցագործի ուղին:

6:17-20. Այժմ պատմությունը վերադառնում է Հովհաննեսի մահապատժի ժամանակներին: Հովհաննես Մկրտիչը հանդիմանել էր Հերովդեսին, **իր եղբոր՝ Փիլիպպոսի կնոջ** հետ ապօրինի ամուսնության համար: Հերովդեսին՝ Հերովդեսի կինը, չարացել էր և երդվել էր վրեժխնդիր լինել: Բայց Հերովդեսը հարգում էր Հովհաննեսին՝ գիտակցելով, որ նա **սուրբ մարդ է**, և խոչընդոտում էր կնոջ ջանքերին:

6:21-25. Վերջապես նրա համար հնարավորություն հայտնվեց: Հերովդեսի ծննդյան տոնակատարության ժամանակ, որին ներկա էին բոլոր տեղական նշանավոր դեմքերը, **Հերովդեսն** այնպես էր կարգադրել, որ իր աղջիկը պարի: Մա այնքան **հաճեցրեց Հերովդեսին**, որ խոստացավ աղջկան տալ ամեն ինչ, անգամ իր **թագավորության կեսը**: Իր մոր կողմից հրահրված՝ նա խընդրեց **Հովհաննես Մկրտչի գլուխը սկուտեղի վրա**:

6:26-28. **Թագավորը** ծուղակն ընկավ: Հակառակ իր ցանկությանը և ողջամտությանը, նա բավարարեց խնդրանքը: Մեղքը ուստայն էր հյուսել նրա շուրջը, և թագավորվասալը դարձավ չար կնոջ և կրքոտ պարի գոհը:

6:29. Երբ Հովհաննեսի հավատարիմ **աշակերտները լսեցին** պատահածի մասին, եկան, վերցրին մարմինը և դրեցին **գերեզմանի մեջ**, իսկ հետո գնացին ու Հիսուսին պատմեցին այդ մասին:

Ծ. Հինգ հազարին կերակրելը (6:30-44)

6:30. Այս հրաշքը նկարագրված է բոլոր չորս Ավետարաններում: Այն տեղի է ունեցել Հիսուսի հասարակական ծառայության երրորդ տարվա սկզբին: Առաքյալները հենց նոր էին վերադարձել Կափառնայում իրենց առաջին քարոզչական առաքելությունից (տե՛ս հ.7-13): Գուցե նրանք ուրախացել էին հաջողությամբ, կամ էլ հոգնել էին, ոտքերը

ցավեցրել: Հասկանալով, որ նրանք կարիք ունեն հանգստի և լռության, Տերը նավով մի ամայի տեղ տարավ նրանց՝ Գալիլիայի ծովափին:

6:31-32. Մենք հաճախ ենք լսում, թե ինչպես **«եկե՛ք մի առանձին ամայի տեղ ու մի քիչ հանգստացե՛ք»** խոսքերն օգտագործելով՝ քրիստոնյաները արդարացնում են շքեղ հանգիստը: Զեյլին գրել է.

«Լավ կլիներ, եթե մենք էլ ավելի շատ հանգստանալու նման կարիք ունենայինք: Այսինքն, մեր գործերն այնքան առատ լինեին, մեր անձնագոհությունը հանուն ուրիշների օրհնության այնքան շարունակական լիներ, որ մենք էլ համոզված լինեինք, թե Տիրոջ այս խոսքերը վերաբերում են նաև մեզ»:¹⁰

6:33-34. Մեծ բազմությունը լճի ափի երկայնքով հետևում էր Տիրոջը և Նրա աշակերտներին: Հիսուսը **զթաց** մարդկանց: Նրանք թափառում էին առանց հոգևոր առաջնորդի, քաղցած և անպաշտպան: Նա **սկսեց նրանց շատ բաներ սովորեցնել**:

6:35-36. Երկար **օրը** հոգնեցրել էր Հիսուսի **աշակերտներին**, և նրանք սկսեցին անհանգստանալ մարդկանց մասին. նրանք այնքան շատ էին, իսկ **ուտելու ոչինչ** չկար: Նրանք սկսեցին համոզել Տիրոջը **արձակել** ժողովրդին: Այդ նույն մարդիկ կարեկցանքի զգացում առաջացրին Փրկչի մոտ և արտնետություն՝ աշակերտների մոտ: Մենք ինչպե՛ս ենք ընկալում մեզ շրջապատող մարդկանց. որպես անհանգստացողներ՝ թե՛ մեր սիրո կարիքն ունեցողների:

6:37-38. Հիսուսն աշակերտների կողմը շրջվեց ու ասաց. **«Դուք դրանց ուտելիք սովե՛ք»**: Այս ամենը անհեթեթ էր թվում. հինգ հազար տղամարդ, գումարած կանայք և երեխաներ, ու էլ ոչինչ, բացի հինգ հացից, երկու ձկնից և Աստուծուց:

6:39-44. Հաջորդող հրաշքի շնորհիվ աշակերտները տեսան, թե ինչպես է Փրկիչն Իրեն տալու, որպեսզի դառնա կյանքի հաց սոված աշխարհի համար: Նրա մարմինը կտորվելու էր, որպեսզի ուրիշները կարողանային հավիտենական կյանք ունենալ:

Եվ իսկապես, Նրա արտասանած խոսքերը հիշեցնում էին Տերունական Ընթրիքը, որը կատարվում է ի հիշատակ Նրա մահվան. Նա **առավ**, Նա **օրհնեց**, Նա **կտրեց**, Նա **տվեց**:

Աշակերտներն էլ թանկարժեք դասեր սովորեցին Նրան ծառայելու մասին.

1. Տեր Հիսուսի աշակերտները երբեք չպետք է կասկածեն Նրա իշխանությանը, որ կարող է ապահովել իրենց բոլոր կարիքները: Եթե Նա կարող է կերակրել **հինգ հացով ու երկու ձկով հինգ հազար մարդու**, ապա կարող է նաև ապահովել Իրեն վստահությամբ ծառայողներին ցանկացած իրավիճակում: Նրանք կարող են Նրա համար գործել՝ չանհանգստանալով ապրուստի մասին: Եթե նրանք նախ Աստծո Թագավորությունը և Նրա արդարությունն են փնտրում, նրանց բոլոր կարիքները բավարարվելու են:
2. Ինչպե՞ս ավետարանել կործանվող աշխարհին: Հիսուսն ասաց. **«Գ՛ու՛րք դրանց ուտելիք տվեք»**: Եթե մենք Նրան ենք տալիս ինչ-որ ունենք, որքան էլ չնչին դրանք թվան, Նա կարող է շատերի համար այն օրհնության վերածել:
3. Նա այդ աշխատանքը կատարեց համակարգված ձևով, մարդկանց խմբերի բաժանելով **հարյուր-հարյուր և հիսուն-հիսուն**:
4. Նա **օրհնեց և կտրեց** հացերն ու ձրկները: Առանց օրհնության դրանք չէին կարող որևէ օգուտ տալ: Առանց կրտրատելու դրանք չէին բավականացնի: «Պատճառը, որ լավ չենք ծառայում մարդկանց այն է, որ ինչպես հարկն է դեռ չենք կտորվել» («Քաղված»):
5. Հիսուսն անձամբ ջբաժանեց ուտելիքը: Նա թույլ տվեց Իր **աշակերտներին** դա անել: Նրա ծրագիրն է՝ աշխարհին կերակրել Իր մարդկանց միջոցով:
6. Ուտելիքը **բոլորին** բավարարեց: Եթե մերօրյա բոլոր հավատացյալները Տիրոջ գործը իրենց ամենօրյա կարիքներից վեր դասեն, ապա ամբողջ աշխար-

իը Բարի Լուրը կլսի այս սերնդում:

7. Ուտելիքի **կտորտանքը (տասներկու լիքը կողով)** նշանակալիորեն ավելի շատ էր, քան այն ուտելիքը, որով Նա սկսեց: Աստված ճոխությամբ Տվող է: Սակայն ուշադրություն դարձրեք՝ ոչինչ չէր վատնվել: Ավելցուկը հավաքվել էր: Վատնումը մեղք է:
8. Ամենամեծ հրաշքներից մեկը երբեք տեղի չէր ունենա, եթե աշակերտներն իրենց հանգստանալու փափագը պլանդեին: Որքան հաճախ է դա մեզ հետ կատարվում:

Կ. Հիսուսը քայլում է ծովի վրայով (6:45-52)

6:45-50. Փրկիչը կարող է ապահովել ոչ միայն Իր ծառայողների ապրուստի միջոցները, այլև նրանց ապահովությունը:

Աշակերտներին **նավով** ետ ուղարկելով դեպի լճի արևմտյան ափ՝ Հիսուսը գնաց **լեռը՝ աղոթելու**: Գիշերային խավարի միջից Նա տեսավ, որ աշակերտները դժվարությամբ էին թիավարում **քամու** դեմ: Նա շտապեց նրանց օգնելու՝ **ծովի վրայով քայլելով**: Սկզբում նրանք շատ վախեցան՝ մտածելով, որ **ուրվական է**: Ապա Նա խոսեց նրանց հետ և մտավ նավակի մեջ: **Քամին** անմիջապես **դադարեց**:

6:51-52. Պատմությունն ավարտվում է հետևյալ խոսքերով. **«Եվ իրենք իրենց մեջ խիստ ապշեցին ու զարմացան, քանի որ սրտերը կարծրացած լինելով՝ չէին հասկացել հացի հրաշքը»**: Այստեղ ասվում է այն բանի մասին, որ նույնիսկ տեսնելով Տիրոջ զորության դրսևորումը հացերի հրաշքի ժամանակ՝ նրանք տակավին չէին հասկանում, որ Հիսուսի համար անհնարին բան չկար: Նրանք չպետք է զարմանային՝ տեսնելով Նրան ծովի վրա քայլելիս: Այս հրաշքը նախորդից առավել չէր, որին քիչ առաջ ականատես էին եղել: Հավատի պակասությունն առաջացրեց սրտի կարծրացում, և նրանց հոգևոր ընկալումը բթացավ:

Եկեղեցին այս հրաշքի մեջ տեսնում է ներկա դարաշրջանը և դրա ավարտը: Հիսուսը լեռան վրա. սա խորհրդապատկերում

Է Քրիստոսի ներկա ծառայությունը երկրնքում, որ բարեխոսում է Իր ժողովրդի համար: Աշակերտները մարմնավորում են Նրա ծառայողներին, որ պայքարում են փոթորկի և կյանքի փորձությունների հետ: Ծուտով Փրկիչը կվերադառնա Իրենների մոտ, նրանց կազատի վտանգներից և նեղություններից և հուսալի ճանապարհով կառաջնորդի դեպի երկնային ասիլ:

Հ. Ծառան բժշկում է Գեներեսարթում (6:53-56)

Երբ Տերը վերադարձավ ծովի արևմտյան ասի, Նրան շրջապատեցին **հիվանդները**: **Եվ ուր որ Նա մտնում էր**, մարդիկ կարոտյալներին մահիճներով բերում էին Նրա մոտ: **Ծուկայի** հրապարակները դառնում էին հիվանդանոցներ: Մարդիկ ուզում էին մոտենալ Նրան այնքան մոտ, որ **գոնե Իր հանդերձի քղանցքին դիպչեն**: Բոլորը, **ովքեր դիպան Նրան, բժշկվեցին**:

Յ. Աստծո Խոսքին հակառակ ավանդույթներ (7:1-23)

7:1. Փարիսեցիները և դպիրները հրեաների կրոնական առաջնորդներն էին, ովքեր ստեղծել էին դժվար իրագործելի ավանդույթների հսկայական համակարգ, որը այնպես էին միահյուսել Աստծո օրենքի հետ, որ դրանք ձեռք էին բերել գրեթե հավասար հեղինակություն: Իրականում, որոշ դեպքերում այդ ավանդույթները հակասում էին սուրբգրությանը կամ թուլացնում Աստծո օրենքը: Կրոնական առաջնորդները հաճույքով կանոններ էին պարտադրում, և մարդիկ հնազանդորեն ընդունում էին դրանք՝ ծեսերով հագեցած մի համակարգ, որ հեռու էր իրականությունից:

7:2-4. Այս հատվածում հանդիպում ենք փարիսեցիներին և դպիրներին Հիսուսին քննադատելիս, որովհետև **Նրա աշակերտները անվաճառք** էին ուտում: Դա չէր նշանակում, որ աշակերտները չէին լվացել ձեռքերը նախքան ուտելը, այլ, որ նրանք չէին կատարել ավանդույթով սահմանված մշակված կարգով ծեսը: Օրինակ՝ մարդը ծիսականորեն **անմաքուր** էր համարվում այնքան ժամանակ, քանի դեռ

ձեռքերը մինչև արմունկները չէր լվացել: Եթե նրանք գտնվում էին մարդաշատ տեղերում, նրանցից պահանջվում էր լվացման արարողություն կատարել: Լվացման այդ բարդ համակարգն իր մեջ էր ներառում նույնիսկ կաթսաների և բաժակների լվացումը: Ե. Սթենլի Ջոունսը փարիսեցիների մասին գրում է.

«Նրանք երկար ճանապարհ էին անցել Երուսաղեմից, որպեսզի Հիսուսի հետ հանդիպեն, բայց կյանքի նկատմամբ նրանց վերաբերմունքն այնքան բացասական ու բժախնդիր էր, որ այն ամենը, ինչ տեսան, անվաճառքներն էին: Նրանք չկարողացան տեսնել փրկության մեծագույն շարժումը, որ երբևէ տեղի է ունեցել մեր մոլորակի վրա. շարժում, որը մաքրում է մարդկանց մտքերը, հոգիները և մարմինները... Նրանք լայն բացած աչքերով տեսնում էին մանրուքը և աննշան բաները, իսկ կարևորը չէին տեսնում: Պատմությունը չի հիշում նրանց: Նրանց բացասականությունը հիշվում է միայն որպես ֆոն՝ Քրիստոսի դրական ազդեցության համար: Նրանք քննադատություն թողեցին, իսկ Նա՝ ապաշխարություն: Նրանք հավաքում էին թույլ կողմերն ու սխալները, Նա հետևորդներ էր հավաքում»:¹¹

7:5-8. Հիսուսն արագորեն մատնանշեց այդ մարդկանց կեղծավորությունը: Նրանք իրենց այնպես էին պահում, ինչպես **Եսայիին** էր կանխատեսել: Նրանք հայտարարում էին, որ մեծապես նվիրված են Տիրոջը, բայց ներքուստ ապականված էին: Մանրամասնորեն հետևելով ավանդույթներին՝ ձևացնում էին, որ Աստծուն են երկրպագում, սակայն աստվածաշնչյան վարդապետությունը փոխարինել էին իրենց ծեսերով: Աստծո Խոսքը հավատի և բարոյականության բոլոր հարցերում որպես միակ հեղինակություն ընդունելու փոխարեն շրջանցում էին սուրբգրային հստակ պահանջներն իրենց **ավանդույթով**:

7:9-10. Հիսուսն օրինակ բերեց, թե ինչպես են **ավանդույթները** չեղարկում **Աստծո** օրենքը: Տասը պատվիրաններից մեկը պահանջում էր, որ երեխաները **պատվեն**

իրենց ծնողներին, որն իր մեջ էր ներառում նաև նրանց խնամքը: **Մահվամբ** պիտի պատժվեր ամեն ոք, ով չարախոսում էր իր **հորը կամ մորը**:

7:11-13. **Քայց** մի հրեական **ավանդույթ** էր հայտնվել, որ հայտնի էր որպես **Կորբան**, որ նշանակում էր «տրված» կամ «նվիրված»: Ենթադրենք՝ հրեական ընտանիքում ծնողները կարիքավոր են: Որդին նրանց մասին հոգավոր համար գումար ունի, բայց չի ուզում դա անել: Այն ամենը, ինչ նրանից պահանջվում էր, դա «կորբան» ասելն էր՝ նկատի ունենալով, որ իր գումարը նվիրվում է **Աստծուն** կամ տաճարին: Սա նրան ազատում էր իր ծնողների հանդեպ պատասխանատվությունից և հետագայում նրանց տրամադրվող որևէ տեսակի օգնությունից: Նա կարող էր այդ գումարը անժամկետ պահել և իր նպատակների համար օգտագործել: Կարևոր չէր՝ կծախսի՞ արդյոք այդ գումարը տաճարի կարիքների համար, թե՞ ոչ: Քելին նշում է.

«Առաջնորդները մի սխեմա են մշակել, որը թույլ է տալիս պահպանել սեփականությունը և կրոնական նպատակների համար նախատեսվածը, որպեսզի Աստծո Խոսքը կարդալուց հետո մարդկանց խիղճը հանգստացնեն... Աստված էր մարդուն պատվիրել ծնողներին պատվել, և Նա դատապարտում էր որևէ անհարգալից վերաբերմունք նրանց նկատմամբ: Քայց եղել են մարդիկ, ովքեր կրոնի քողի տակ խախտել են Աստծո երկու պատվիրանները: Այդ ավանդական «կորբան» բառին Տերը վերաբերվում է ոչ միայն որպես սխալ արարք ծնողների նկատմամբ, այլև որպես անհնազանդություն Աստծո պատվիրանների հանդեպ»:¹²

7:14-16. 14-րդ համարից սկսած՝ Տերը հեղափոխական հայտարարություն է անում, որ մարդուն պղծում է ոչ թե այն, ինչ մըտնում է նրա բերանը, օրինակ՝ անվաճ ձեռքով կերած կերակուրը, այլ այն ամենը, ինչ մարդուց է դուրս գալիս, օրինակ՝ Աստծո Խոսքը մերժող ավանդույթները:

7:17-19. Այս հայտարարությունը նույ-

նիսկ **աշակերտներին** մտահոգեց: Լինելով ՀԿ-ի ուսմունքով դաստիարակված՝ նրանք միշտ կարծել են, որ ուտելիքների որոշակի տեսակներ, օրինակ՝ խոզի միսը, ճագարը կամ ծովախեցգետինը, անմաքուր են և կարող են իրենց պղծել: Այժմ Հիսուսը բացեիքաց հայտարարեց, որ մարդու մեջ մտնող ոչ մի բան նրան չի պղծում: Որոշակի առումով սա ազդանշանում էր օրինապաշտության ժամանակահատվածի ավարտը:

7:20-23. Մարդուն պղծում է նրանից **դուրս եկածը. չար խորհուրդները, շնությունները, պոռնկությունները, սպանությունները, գողությունները, ազահությունը, չարությունը, նենգությունը, պիղծ ցանկությունները, չար աչքը, հայիտությունը, ամբարտավանությունը, անզգամությունը**: Ելնելով այս համատեքստից՝ այս ցանկի մեջ ընդգրկվում են նաև մարդկային ավանդույթները: Կորբանի ավանդույթը հավասարագոր էր սպանության: Ծնողները սովամահ պիտի լինեին, քանի դեռ այս անբարոյական երդումը չէր ոչընչացվել:

Մեծագույն դասերից մեկը, որ սովորում ենք այս հատվածից, հետևյալն է. մենք պետք է բոլոր ուսուցումներն ու ավանդույթները մշտապես ստուգենք Աստծո Խոսքով՝ հնազանդվելով այն ամենին, ինչն Աստծուց է, և մերժելով այն ամենը, ինչ մարդկային է: Սկզբում մեկը կարող է սովորեցնել ու քարոզել մաքուր հոգևոր ճշմարտություններ՝ հասնելով դրան, որ Սուրբ Գրքին հավատացող մարդիկ իրեն ընդունեն: Հասնելով դրան՝ նա կսկսի ավելացնել մարդկային ուսմունք: Նրան նվիրված հետևորդները, մտածելով, որ նա չի կարող սխալվել, կուրորեն կգնան իր հետևից, չնայած այն հանգամանքին, որ նրա ուսմունքը բթացնելու է Խոսքի կտրուկությունը կամ ջնջում է նրա հստակ նշանակությունը:

Այդպես դպիրները և փարիսեյիները ձեռք բերեցին Խոսքի ուսուցիչների հեղինակություն: Բայց այժմ նրանք չեղարկում էին Խոսքի բուն էությունը: Տեր Հիսուսը

ստիպված էր զգուշացնել ժողովրդին, որ Աստծո Խոսքն է դեկավարում մարդկանց, ոչ թե մարդիկ, այլ՝ Խոսքը: Մեզ համար ճշմարտության գլխավոր չափանիշը պետք է լինի. «Ի՞նչ է ասում Աստծո Խոսքը»:

Ղ. Հավատով օրհնություն ստացած հեթանոս կինը (7:24-30)

7:24-25. Հիսուսը նախորդ համարներում ցույց տվեց, որ բոլոր ուտելիքները մաքուր են: Այստեղ Նա ցույց է տալիս, որ հեթանոսներին այլևս չպետք է արհամարհել և անմաքուր համարել: Հիսուսն ուղևորվեց դեպի հյուսիս-արևմուտք, **Տյուրոսի և Սիդոնի սահմանները**՝ տեղանք, որ հայտնի էր նաև որպես Սիրիական Փյունիկե: Նա փորձում էր առանց որևէ մեկի իմացության **տուն** մտնել: Բայց Նրա խոսքերն Իրենից առաջ էին տեղ հասել, և Նրա ներկայության մասին լուրը շուտով հայտնի դարձավ: Նրա մոտ եկավ մի հեթանոս **կին**՝ իր դիվահար **աղջկան** օգնություն ցուցաբերելու խնդրանքով:

7:26. Մենք շեշտում ենք այն փաստը, որ նա **հեթանոս** էր, ոչ թե հրեուհի: Հրեաները՝ Աստծո ընտրյալ ժողովուրդը, Աստծո մոտ հատուկ դիրք էին գրավում, արտոնյալ դիրք: Նա նրանց հետ զարմանալի ուխտ էր հաստատել, նրանց էր վստահել սուրբգրությունը և նրանց հետ էր բնակվել Ժողովքի խորանում, իսկ հետո՝ տանարում: Ի հակադրություն սրան, հեթանոսներն օտարացած էին Իսրայելի քաղաքակցությունից, խոստման ուխտերին՝ օտար, առանց Քրիստոսի, այս աշխարհում առանց հույսի և առանց Աստծո էին (Եփ. 2:11-12): Տեր Հիսուսը նախևառաջ եկել էր Իսրայել ժողովրդի համար: Նա Իրեն ներկայացրեց, որպես այդ ժողովրդի Թագավոր: Ավետարանն առաջին հերթին քարոզվել էր Իսրայելի տանը: Այս բոլորը հիշելը կարևոր է, որպեսզի հասկանանք Նրա գրույցը **փյունիկեցի** կնոջ հետ: Երբ նա **աղաչում էր Նրան, որ դևն իր աղջկանից հանի**, Նա, ըստ երևույթին, կտրուկ մերժեց:

7:27. Հիսուսն էլ ասաց, որ **նախ** պետք է **երեխաները** (իսրայելացիները) **կշտանան**,

և որ լավ չէ **երեխաների հացը վերցնել և նետել շներին** (հեթանոսներին): Նրա պատասխանը մերժում չէր: Նա ասաց. «**Թող նախ երեխաները կշտանան**»: Այս խոսքերը կարող են կոպիտ թվալ: Իրականում դրանք նրա ապաշխարության և հավատի ստուգարքի համար էին: Այդ ժամանակ Նրա ծառայությունը նախևառաջ ուղղված էր հրեաներին: Որպես հեթանոս կին, նա չէր կարող Նրանից պահանջել կամ էլ բարիքներ ակնկալել: Արդյոք այդ կինը ընդունում էր այդ ճշմարտությունը:

7:28. Եվ նա ընդունեց այն՝ ասելով. «**Այո, Տեր:** Ես ընդամենը շուն-հեթանոս եմ: Սակայն նկատեցի, որ նույնիսկ շները երեխաների՝ **սեղանի տակ** թափած **փշրանքներն** են ուտում: Ես միայն մեկ բան եմ խնդրում՝ փշրանքներ, որ մնացել են հրեաների համար կատարած **Քո** ծառայությունից»:

7:29-30. Սա հրաշալի հավատ էր: Տերը անմիջապես նրան պարզևստրեց՝ հեռավորության վրա բժշկելով աղջկան: Երբ կինն իր տունը գնաց, նրա **աղջիկը** լիովին առողջ էր:

Ճ. Խուլ ու համրի բժշկումը (7:31-37)

7:31-32. Միջերկրական ծովափից մեր Տերը վերադարձավ և գնաց դեպի **Գալիլիայի ծովի** արևելյան ափը՝ մի շրջան, որը հայտնի էր **Գեկապոլիս** անվամբ: Այստեղ մի միջադեպ է տեղի ունեցել, որ միայն Մարկոսի Ավետարանում է արձանագրված: Հոգատար ընկերները **Նրա մոտ բերեցին խուլ ու դժվարախոս** մի մարդու: Գուցե, ֆիզիկական տձևությամբ էր պայմանավորված դժվարախոսությունը, կամ էլ երբեք հստակ ձայներ չսելով՝ նա չէր կարողանում ճիշտ վերարտադրել դրանք: Ամեն դեպքում, այստեղ ներկայացված է մեղավոր մարդու պատկերը՝ Աստծո ձայնի հանդեպ խուլ և, հետևաբար, ուրիշներին Նրա մասին պատմելու անկարող:

7:33-34. Սկզբում Հիսուսը մարդուն **մի կողմ տարավ**: Նա **մատները դրեց նրա ականջների մեջ, թթեց ու նրա լեզվին դիպավ**, այսպիսով ժեստերի լեզվով ասաց

ՀԻՆԳ ՀԱՉԱՐԸ

ՉՈՐՍ ՀԱՉԱՐԸ

- 1. Մարդիկ հրեա էին (Հովհ. 6:14-15):
- 2. Ժողովուրդը մեկ օր Հիսուսի հետ անցկացրեց (Հովհ. 6:35):
- 3. Հիսուսն օգտագործեց հինգ հաց և երկու ձուկ (Մատթ. 14:17):
- 4. Կանանցից և երեխաներից բացի կշատացան հինգ հազար տղամարդ: (Մատթ. 14:21):
- 5. Տասներկու կողով ավելացավ (Մատթ. 14:20):

- 1. Մարդիկ հավանաբար հեթանոսներ էին, նրանք ապրում էին Դեկապոլիսում:
- 2. Ժողովուրդը երեք օր մնաց Հիսուսի մոտ (8:2):
- 3. Նա օգտագործեց յոթ հաց և մի քանի ձուկ (8:5-7):
- 4. Կանանցից և երեխաներից բացի կշատացան չորս հազար տղամարդ: (Մատթ. 15:38):
- 5. Յոթ զամբյուղ ավելացավ (8:8):

մարդուն, որ մտադիր է բացել նրա ականջները և նրա լեզվի կապանքներն արձակել: Այնուհետև Հիսուսը նայեց դեպի երկինք՝ մատնանշելով, որ Իր իշխանությունն Աստծուց է: Նրա հառաչանքն արտահայտում էր կրած տառապանքների հանդեպ ցավակցություն, որ մեղքը մարդկության վրա էր բերել: Եվ, վերջապես, Նա ասաց՝ «**Եփփաթա**»՝ արամերեն բառ, որ նշանակում է «բացվիր»:

7:35-36. Մարդն **անմիջապես** պարզ լսողություն և խոսելու կարողություն ստացավ: Տերը մարդկանց խնդրեց այդ հրաշքի մասին չհրապարակել, բայց նրանք չհնազանդվեցին Իր հրահանգին: Անհնազանդությունը երբեք արդարացում չունի, ինչքան էլ մարդու մտադրությունները լավը լինեն:

7:37. Ներկաները **զարմանում էին**՝ Նրա հրաշալի գործերը տեսնելով: Նրանք ասում էին. «**Մա ամեն ինչ լավ է անում. թե խուլերին է լսել տալիս, և թե համբերին՝ խոսել**»: Նրանք ճշմարտությունը չգիտեին, որի մասին խոսում էին: Եթե ապրեին Գողգոթայի այս կողմում, ապա նրանց խոսքերը լցված կլինեին ավելի խորը համոզմունքով և զգացումով:

Այն օրվանից, երբ իմացանք Նրա սիրո մասին, Թե ինչպիսի ողորմություն ցուցաբերեց Նա մեզ,

Ողորմություն, որ վեր է մեր գովասանքից, Մեր Հիսուսը ամեն ինչ լավ արեց:

Սամուել Մեդլի

Մ. Չորս հազարի կերակրումը (8:1-10)

8:1-9. Այս հրաշքը հիշեցնում է հինգ հազարի կերակրումը: Մակայն ուշադրությունն դարձրեք այն տարբերություններին, որոնք նշված են աղյուսակում:

Որքան քիչ էին Հիսուսի աշխատանքային նյութերը, այնքան ավելի շատ էր Նա արարում և ավելի շատ էր ավելանում: Յոթերորդ գլխում տեսանք սեղանի փշրանքները, որ թափվում էին հեթանոս կնոջ համար: Այստեղ կերակրվում էին բազմաթիվ հեթանոսներ: Էրդմանը այսպես է մեկնաբանում.

«Առաջին հրաշքն այստեղ ակնարկում է, որ փշրանքները սեղանից կարող էին թափվել կարիքավոր հեթանոսների համար: Երկրորդ հրաշքը կարող է մատնանշել այն, որ Հիսուսը, Իր սեփական ժողովրդից մերժված լինելով, Իր կյանքն է տալու աշխարհի համար և կյանքի Հացն է դառնալու բոլոր ազգերի համար»:¹³

Վտանգ կա, որ այսպիսի դեպքը, ինչպիսին է չորս հազարի կերակրումը, կդիտվի որպես սոսկ աննշան կրկնություն: Աստվածաշունչն ուսումնասիրելիս պետք է մոտե-

նանք այն համոզմամբ, որ նրա ամեն մի խոսքը լցված է հոգևոր ճշմարտությամբ, եթե նույնիսկ մեր ներկա հասկացողությամբ ի վիճակի չենք այն տեսնելու:

8:10. Դեկապոլիսից դուրս գալով, Հիսուսը և Իր **աշակերտներն** անցան Գալիլիայի ծովով և եկան արևմտյան ափը, **Գաղմանությալի** կողմերը (Մատթ. 15:39-ում՝ Մագդաղիա):

Յ. Փարիսեցիները երկնքից նշան են ուզում տեսնել (8:11-13)

8:11. **Փարիսեցիները** Նրան էին սպասում և սկսեցին **երկնքից նշան** պահանջել: Նրանց կուրությունն ու ամբարտավանությունը հսկայական էր: Նրանց առջև էր կանգնած Նա, Ով մեծագույն նշանն էր՝ Հիսուս Քրիստոսը, Տերն Ինքը: Նա ճշմարիտ նշանն էր, որ եկել էր երկնքից, բայց նրանք ըստ արժանվույն չգնահատեցին Նրան: Նրանք լսում էին Նրա անգուգական խոսքերը, տեսնում էին Նրա հիանալի հրաշքները, հաղորդակցվում էին բացարձակապես անմեղսունակ Մարդու՝ մարմնով հայտնված Աստծո հետ, և դեռ իրենց կուրությամբ **երկնքից նշան** էին պահանջում:

8:12-13. Չարմանալի չէ, որ Փրկիչը **հառաչեց**: Եթե աշխարհի պատմության մեջ ինչ-որ մի սերունդ առանձնաշնորհում էր ունեցել, ապա դա հրեաների սերունդն էր, որի մի մասը կազմում էին այդ փարիսեցիները: Եվ այնուամենայնիվ կույր էին ամենապարզ ապացույցի՝ Մեսիայի հայտնության առջև. նրանք երկնքից էին նշան պահանջում, և ոչ թե երկրից: Հիսուսը պատասխանեց. «Այլևս ոչ մի նշան չի տրվելու: Դուք բաց եք թողել ձեր հնարավորությունը»: Նա **նորից նավակը մտավ**, և նրանք ուղևորվեցին դեպի արևելք:

Ն. Փարիսեցիների և Հերովդեսի խմորը (8:14-21)

8:14-15. Ճամփորդության ժամանակ աշակերտները հիշեցին, որ մոռացել են հաց վերցնել: Հիսուսը դեռևս մտածում էր փարիսեցիների հետ ունեցած Իր հանդիպման

մասին, երբ նրանց զգուշացրեց **փարիսեցիների խմորի և Հերովդեսի խմորի** մասին: Աստվածաշնչում խմորը մշտապես չար բան է խորհրդապատկերում, որը տարածվում է դանդաղորեն և աննկատ՝ ազդելով այն ամենին, ինչին հավում ես: **Փարիսեցիների խմորն** իր մեջ ներառում էր կեղծավորությունը, ծիսապաշտությունը, ինքնարդարացումը և մոլեռանդությունը: Փարիսեցիները արտաքինապես հավակնում էին հատուկ սրբության, բայց ներքուստ ապականված էին և անարդար: **Հերովդեսի խմորը** իր մեջ կարող է ներառել կասկածամտությունը, անբարոյակաությունը և աշխարհասիրությունը: Հերովդեսականները տարբերվում էին այս մեղքերով:

8:16-21. Աշակերտները բոլորովին չէին հասկացել Հիսուսի խոսքերը: Նրանք մտածում էին ուստիլիքի մասին: Այդ ժամանակ Նա արագորեն ինը հարց տվեց նրանց: Առաջին հինգում Նա հանդիմանեց նրանց բթամտության համար: Վերջին չորս հարցերը հանդիմանում էին նրանց, որ նրանք անհանգստանում էին իրենց կարիքների համար այն դեպքում, երբ Նա նրանց հետ էր: Մի՞թե Նա չէր կերակրել **հինգ հազարին հինգ հացով**, որից մնացել էր տասներկու զամբյուղ կտորտանքներով: Այո՛: Մի՞թե Նա չէր կերակրել **չորս հազարին յոթ** հացով, որից մնացել էր **յոթ** զամբյուղ կտորտանքներով: Այո՛, դա Նա էր արել: Այդ դեպքում, ինչո՞ւ չէին հասկանում, որ Նա կարող էր առատորեն ապահովել աշակերտների մի բուռ կարիքը նավակի մեջ: Մի՞թե չէին գիտակցում, որ Արարիչը և տիեզերքի Ամենակալը իրենց հետ էր նավակում:

Ծ. Կույրի բժշկումը Բեթսայի դայում (8:22-26)

Այս հրաշքը նկարագրված է միայն Մարկոսի Ավետարանում, որ անդրադառնում է մի քանի հետաքրքիր հարցերի: Ինչո՞ւ Հիսուսը մարդուն **քաղաքից** դուրս տարավ նախքան նրան բժշկելը: Ինչո՞ւ Նա այդ մարդուն չբժշկեց պարզապես նրան հավել-

յով: Ո՞րն էր նման անսովոր «միջոցի» թքելու նպատակը: Ինչո՞ւ մարդը միանգամից¹⁴ չատացավ կատարյալ տեսողություն: Ավետարաններում սա միակ բժշկության օրինակն է, որը փուլերով տեղի ունեցավ: Եվ վերջապես, ինչո՞ւ Հիսուսն այդ մարդուն արգելեց հրաշքի մասին պատմել **քաղաքում**: Մեր Տերը գերիշխան է, և պարտավոր չէ Իր գործողությունների համար հաշվետու լինել մեզ: Այն ամենը, ինչ Նա անում էր, հիմնավոր պատճառ ուներ, եթե նույնիսկ մենք չենք կարողանում դա ընկալել: Բժշկության բոլոր դեպքերը տարբեր են, քանի որ դարձի գալու յուրաքանչյուր դեպքն էլ տարբեր է: Ոմանք հենց դարձի են գալիս, ձեռք են բերում աչքի ընկնող հոգևոր տեսողություն: Մյուսներն սկզբում աղոտ են տեսնում, բայց ժամանակի ընթացքում ձեռք են բերում փրկության լիարժեք վստահություն:

Ո. Պետրոսի նշանավոր խոստովանությունը (8:27-30)

Այս գլխի վերջին երկու հատվածները մեզ տանում են թիրախի կարևոր կետին՝ Տասներկուսի ուսմանը: Աշակերտները պետք է ունենային անձնական խորը հասկացողություն Հիսուսի ով լինելու մասին, մինչև որ Նա կարողանար նրանց պատմել առաջիկա ճանապարհի մասին և հրավիրել կյանքի նվիրումով և զոհաբերությամբ Իրեն հետևել: Այս հատվածը մեզ տանում է դեպի աշակերտության սիրտը: Ցավոք, այսօր դա քրիստոնեական մտածողության և գործնականի առավել անտեսված ոլորտն է:

8:27-28. Հիսուսն Իր աշակերտների հետ առանձնություն էր փնտրում հեռու հյուսիսում: Փիլիպպեի Կեսարիայի ճանապարհին Նա անդրադարձավ մի թեմայի՝ հարցնելով, թե մարդիկ Իր մասին ի՞նչ կարծիք ունեն: Ընդհանուր առմամբ, Մարդիկ ընդունում էին, որ Նա մեծ մարդ է, Հովհաննես Մկրտչին հավասար, Եղիան կամ այլ մարգարեներից մեկը: Բայց մարդկային պատիվը, իրականում, անպատվություն է: Եթե Հիսուսն Աստված

չէր, ապա Նա խաբերա էր, խելագար կամ լեզենդար Անձնավորություն: Ուրիշ տարբերակ չկար:

8:29-30. Այնուհետև Հիսուսը ուղղակիորեն աշակերտներին հարցրեց, թե նրանք ինչ կարծիք ունեն Իր մասին: **Պետրոսն** անմիջապես պատասխանեց, որ Նա Քրիստոսն է, այսինքն՝ Մեսիան, կամ Օծյալը: Պետրոսն այդ մասին իմացականորեն գիտեր, բայց այդ պահին նրա կյանքում ինչոր բան կատարվեց, որովհետև այժմ դա նրա անձնական խորը համոզումն էր: Կյանքն այլևս չէր կարող նույնը լինել: Պետրոսն այլևս չէր կարող գոհանալ իր եսակենտրոն գոյությամբ: Եթե Հիսուսը Մեսիան է, ապա Պետրոսը պետք է կատարյալ նվիրումով Նրա համար ապրի:

Չ. Ծառան կանխատեսում է Իր մահն ու հարությունը (8:31-38)

Մինչև այս պահը հետևում էինք, թե ինչպես էր Եհովայի Ծառայի կյանքն անցնում ուրիշներին անդադար ծառայելով: Մենք տեսանք Նրա թշնամիների աստվությունը և բարեկամների անհասկացողությունը: Մենք տեսանք մի կյանք, որը լի էր դինամիկ զորությամբ, բարոյական կատարելությամբ, անսահման սիրով և խոնարհությամբ:

8:31. Սակայն Աստծուն ծառայելու ճանապարհը տանում է դեպի չարչարանքներ և մահ: Այդ պատճառով Փրկիչն Իր աշակերտներին պարզորեն ասաց, որ Նա **պետք է 1. չարչարվի, 2. մերժվի, 3. սպանվի, 4. հարություն առնի**: Նրա համար փառքի ճանապարհն անցնում էր նախևառաջ խաչի և գերեզմանի միջով: Ֆ. Ու. Գրանտը դա այսպես է արտահայտել. «Ծառայության սիրտը դրսևորվում է զոհաբերության մեջ»:

8:32-33. Պետրոսը չէր կարողանում համաձայնել այն մտքի հետ, որ Հիսուսը պետք է չարչարվեր և մեռներ. դա հակասում էր Մեսիայի մասին նրա պատկերացմանը: Նա նաև չէր ուզում ընդունել այն միտքը, որ Տերն ու Տիրակալը սպանվելու էր Իր թշնամիների կողմից: Նա հանդիմանեց

Փրկչին այդպես խոսելու համար: Ճիշտ այդ ժամանակ Հիսուսն ասաց Պետրոսին. **«Ետևես գնա, սատանա՛, որովհետև դու Աստծո բաները չես մտածում, այլ՝ մարդկանց բաները»:** Հիսուսը բնավ չէր մեղադրում Պետրոսին, որ նա սատանա էր կամ նրա մեջ սատանա էր բնակվում: Նրա խոսքերը նշանակում էին. «Դու այնպես ես խոսում, ինչպես կիսոսեր սատանան: Նա միշտ փորձում է մեզ ետ կանգնեցնել Աստծուն ամբողջությամբ հնազանդվելու մտքից: Նա գայթակղում է մեզ, որ ընտրենք դեպի գահ տանող հեշտ ուղին»: Պետրոսի խոսքերն իրենց ծագումով և բովանդակությամբ սատանայական էին, և դա Տիրոջը վրդովմունք պատճառեց: Քեյին մեկնաբանում է.

«Ի՞նչն այդպես հուզեց մեր Տիրոջը: Դա որոգայթ է, որ բոլորիս է սպառնում՝ սեփական անձը փրկելու ցանկությունը, հեշտ ճանապարհի նախընտրությունը խաչի ճամփայից: Արդյոք ճիշտ չէ՞, որ բնականորեն փախչում ենք փորձություններից, ամոթից և մերժումից. որ խուսափում ենք նեղություններից, որոնք այս աշխարհում անխուսափելի են Աստծո կամքը կատարելիս, միշտ գերադասում ենք հանգիստ, արժանապատիվ կյանքի ուղին, կարճ ասած՝ երկու աշխարհների լավագույնը: Մարդը որքան հեշտությամբ կարող է ծուղակն ընկնել: Պետրոսը չէր հասկանում, թե ինչո՞ւ Մեսիան պիտի այդ ամբողջ տառապանքի ուղին անցներ: Եթե Պետրոսի տեղը լինեինք, միգուցե ավելի վատն ասեինք կամ մտածեինք: Պետրոսի առարկությունը գերձ չէր այդ մարդկային ուժեղ հակումից: Նա ամբողջ սրտով սիրում էր Փրկչին: Սակայն դա աշխարհի ոգու անգիտակից դրսևորումն էր»:¹⁵

Ուշադրություն՝ ն դարձրեք, որ Տեր Հիսուսը նախ **նայեց Իր աշակերտներին**, իսկ հետո **սաստեց Պետրոսին՝** կարծես ասելով. «Եթե ես չխաչվեմ, ապա ինչպե՞ս պիտի փրկվեն Իմ աշակերտները»:

8:34. Այնուհետև Հիսուսն իրապես **ասաց նրանց**. «Ես գնում եմ չարչարվելու և մեռնելու մարդկանց փրկության համար:

Եթե ուզում եք **Իմ ետևից գալ**, ապա պետք է մերժեք ցանկացած եասսիրական շարժառիթ, գիտակցորեն ընտրեք ամոթի, տառապանքի և մահվան ուղին և **Ինձ հետևեք**: Գուցե ստիպված լինեք հրաժարվել ձեր հարմարավետությունից, աշխարհի հաճույքներից, երկրավոր կապերից, փառամոլությունից, նյութական հարստությունից և նույնիսկ կյանքից»: Նման հայտարարությունը մեզ մտածելու տեղիք է տալիս, թե ինչպե՞ս կարող ենք իրականում հավատալ այն մտքին, թե իրավունք ունենք շքեղության և հաճույքների մեջ ապրելու: Ինչպե՞ս կարող ենք արդարացնել նյութապաշտությունը, եասսիրությունը և մեր սառնասրտությունը: Նրա խոսքերը մեզ կոչ են անում անձնագոհության, անձնատուր լինելու, տառապանքի և զոհաբերվող կյանքի:

8:35. Միշտ էլ կա **կյանքը փրկելու** փորձությունը՝ ապրել հարմարություններով, հայթայթել ապագայի համար, անել սեփական ընտրությունը, «ես»-ը դնել ամեն ինչի կենտրոնում: Ավելի վստահելի ուղի չկա սեփական հոգին կորցնելու համար: Քրիստոսը մեզ կանչում է մեր կյանքն ամբողջությամբ տալու Իր և Ավետարանի համար՝ ամբողջովին Իրեն նվիրվելով՝ հոգով, շնչով ու մարմնով: Նա կանչում է մեզ սպառելու և սպառվելու Իր սուրբ ծառայության մեջ, և եթե անհրաժեշտ է, մեր կյանքը դնելու աշխարհի ավետարանչության համար: Ահա թե ինչ է նշանակում հոգին կորցնել: Հոգին փրկելու ավելի ապահով ճանապարհ չկա:

8:36-37. Եթե նույնիսկ հավատացյալը կարողանար հավաքել աշխարհի ամբողջ հարստությունն իր ողջ կյանքի ընթացքում, դա նրան ի՞նչ օգուտ կտար: Նա կկորցներ իր կյանքն Աստծո փառքի համար օգտագործելու և կորածներին փրկության առաջնորդելու հնարավորությունը: Դա վատ գործարք կլիներ: Մեր կյանքն ավելին արժե, քան այս աշխարհի բոլոր առաջարկվող բաները: Մենք ո՞ւմ կնվիրենք այն. ինքներս մե՞զ, թե՞ Քրիստոսին:

8:38. Մեր Տերը հասկանում էր, որ Իր

երիտասարդ աշակերտներից մի քանիսը, ծաղրանքից վախենալով, կարող են սայթաքել աշակերտության ճանապարհին: Ուստի Նա հիշեցրեց նրանց, որ ովքեր փորձում են Նրա անվան համար նախատինք կրելուց խուսափել, ավելի մեծ ամոթ կվերապրեն, երբ Նա իշխանությամբ Երկիր վերադառնա: Ինչպիսի՛ միտք: Մեր Տերը շուտով Երկիր կվերադառնա, այս անգամ ոչ թե նվաստացման, այլ Իր փառքի և Իր Հոր փառքի մեջ սուրբ հրեշտակների հետ: Դա լինելու է մի շրջուցիչ տեսարան: Այն ժամանակ Նա ամաչելու է նրանցից, ովքեր հիմա ամաչում են Իրենից: Թող որ Նրա այս խոսքերը. **«Ով Ինձ և Իմ Խոսքը ամոթ համարի այս շնացող ու մեղավոր սերնդի մեջ...»**, խոսեն մեր սրտերին: Անհեթեթություն է անմեղ Փրկչից ամաչելը մի աշխարհում, որը լի է անհավատարմությամբ և մեղքով:

IV. ԾԱՌԱՅՅԻ ԾԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՊԻ ԵՐՈՒՍԱԳԼԵՄ (9-10-րդ գլ.)

Ա. Ծառայի այլակերպությունը (9:1-13)

Աշակերտների առջև անարգանքի, տառապանքի և մահվան ուղին ներկայացնելուց և անձնագոհության ու անձնուրացության կյանքով Իրեն հետևելու կոչն ուղղելուց հետո Տերն այստեղ ցույց է տալիս պատկերի մյուս կողմը: Թեև աշակերտությունը թանկ գին ունի այս աշխարհում, այն բազմապատիկ վարձատրություն կստանա փառքի մեջ:

9:1-7. Տերն սկսեց զգուշացնել այն մասին, որ աշակերտներից **ոմանք մահ չեն ճաշակի**, մինչև **չտեսնեն Աստծո թագավորությունը՝ գորությամբ եկած**: Նա նկատի ունեւր **Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին**: Այլակերպության լեռան վրա նրանք տեսան **Աստծո թագավորությունը՝ գորությամբ եկած**: Այս մեջբերումի իմաստը հետևյալն է. Քրիստոսի անվան համար մեր բոլոր տառապանքներն առատորեն վարձատրվելու են, երբ Նա վերադառնա Իր ծառաների հետ՝ փառքի մեջ: Իրավի-

ճակը, որ տիրում էր լեռան վրա, Քրիստոսի Հազարամյա Թագավորության նախապատկերն էր:

1. Հիսուսը **պայծառակերպվեց՝** շրացուցիչ փայլը ճառագում էր Իր Անձից: Նույնիսկ **Նրա հանդերձներն** այնպես **փայլեցին**, որ երկրի վրա ոչ մի գունաթափիչ չէր կարող սպիտակեցնել:
2. Առաջին գալստյան ժամանակ Հիսուսի փառքը քողարկված էր: Նա եկել էր որպես վշտերի Մարդ՝ խոնարհ ու ցավերին տեղյակ: Սակայն Նա վերադառնալու է փառքի մեջ: Այդ ժամանակ ոչ ոք Նրա հանդեպ չի համարձակվելու սխալ գործել: Բոլորը հայտնապես Նրան կտեսնեն որպես թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ:
3. Նրա հետ էին **Եղիան ու Մովսեսը**: Նրանք ներկայացնում են. ա. հինկտակարանյան սրբերին, կամ բ. Օրենքը (Մովսեսը) և մարգարեներին (Եղիան), կամ գ. մեռած սրբերին, և նրանց, ովքեր այլակերպվելու են:
4. Այնտեղ ներկա էին **Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը**: Նրանք կարող են ներկայացնել նորկտակարանյան սրբերին կամ նրանց, ովքեր ողջ են լինելու Թագավորությունը հիմնելիս:
5. Կենտրոնական անձը **Հիսուսն** էր: Ի պատասխան Պետրոսի **երեք վրան** շինելու առաջարկին, **երկնքից ձայն** հնչեց, որ արգելում էր դա անել: Քրիստոսը բոլոր բաների վրա պետք է գերակայություն ունենա: Նա է լինելու երկրի փառքը՝ Էմմանուելը:
6. **Ամպը**, հավանաբար «շեկինահ»-ն է կամ փառքի ամպը, որը հինկտակարանյան ժամանակաշրջանում գտնվում էր տաճարի Սրբության Սրբոցում: Այն հանդիսանում էր Աստծո ներկայության տեսանելի արտահայտությունը:
7. **Չայնը** Հոր Աստծո ձայնն էր, որ հաստատում էր Քրիստոսին՝ որպես **սիրելի Որդու**:

9:8. Երբ ամպը վերացավ, աշակերտները **ոչ ոքի չտեսան, այլ միայն Հիսուսին**: Սա

այն փառավոր և գերապատիվ տեղն է, որ Հիսուսը պիտի ունենա, երբ Իր թագավորությունը գործությամբ գա, և որը Նա պիտի ունենա Իր հետևորդների սրտերում ներկայումս:

9:9-10. Եվ երբ իջնում էին լեռից, պատվիրեց, որ ոչ ոքի չպատմեն իրենց տեսածի մասին, մինչև որ Մարդու Որդին մեռելներից հարություն առնի: Այս վերջին միտքը մտահոգեց նրանց: Հնարավոր է, նրանք դեռևս չէին կարողանում ըմբռնել, որ Նա պիտի սպանվի և հարություն առնի: Նրանք չէին հասկանում, թե ինչ կարող էր նշանակել «մեռելներից հարություն առնել» արտահայտությունը: Որպես հրեա, նրանք գիտեին ճշմարտությունը, որ բոլորը պիտի հարություն առնեն: Բայց Հիսուսը խոսում էր ընտրովի հարության մասին: Նա հարություն առավ շատ մեռելների միջից. բոլորը Նրա հետ հարություն չեն առնելու: Այս ճշմարտությունը հանդիպում է միայն ՆԿ-ում:

9:11. Աշակերտների առջև ևս մեկ խրնդիր ծագեց: Նրանք հենց նոր տեսել էին Թագավորության նախապատկերը: Բայց միթե Մաղաքիան չէ՞ր կանխատեսել, որ **նախ Եղիան պիտի գա, նախքան Մեսիայի գալը**, որպեսզի ամեն բան վերականգնի և ճանապարհը պատրաստի Նրա տիեզերական Թագավորությունը հաստատելու համար (Մաղ. 4:5): Որտե՞ղ էր Եղիան: Արդյոք **նախ նա պիտի գա՞**, ինչպես **դպիրներն** են ասում:

9:12-13. Հիսուսը պատասխանեց այդ հարցին. «**Իրոք, նախ Եղիան պիտի գա**»: Բայց այստեղ ավելի կարևոր հարց է ծագում. «Արդյոք հինկտակարանյան Գրքերում կանխատեսված չէ՞ր, որ **Մարդու Որդին** շատ չարչարանքներ պիտի կրեր **և անարգվեր**»: Ինչ վերաբերում է Եղիային, ապա **Եղիան** եկել էր՝ ի դեմս Հովհաննես Մկրտչի և նրա ծառայության, բայց մարդիկ նրա հետ վարվեցին այնպես, ինչպես կամեցան. ճիշտ այդպես էլ վարվեցին Եղիայի հետ: Հովհաննես Մկրտչի մահը վկայում էր, թե մարդիկ ինչպես են վարվելու Մարդու Որդու հետ: Նրանք մերժե-

ցին նախակարապետին, նրանք Թագավորին էլ կմերժեն:

Բ. Դիվահար տղայի բժշկումը (9:14-29)

9:14-16. Աշակերտներն իրավունք չունեին մնալու փառքի լեռան գագաթին: Լեռան ստորոտում, հովտում, նրանց էր սպասում հառաչող, հեկեկացող մարդկությունը: Նրանց ոտքերի առջև էին տարածվել աշխարհի կարիքները: Երբ Հիսուսը և երեք աշակերտները հասան լեռան ստորոտը, **դպիրները**, բազմությունը և մյուս **աշակերտներն** աշխուժորեն վիճարանում էին: Հենց որ Տերը հայտնվեց, խոսակցությունն ընդհատվեց և ժողովուրդն ընդառաջ վազեց Նրան: «**Ինչո՞ւ էիք վիճում** Իմ աշակերտների հետ», - հարցրեց Հիսուսը:

9:17-18. Խելագարված հայրը վրդովված պատմեց Տիրոջը իր **որդու** մասին, որ **համր ոգով** էր դիվահարված: Ոգին գետնով էր տալիս նրան, ստիպում **ատամները կրճտացնել**, բերանը փրփրում էր: Այդ սարսափելի ցնցումներից երեխան կամաց-կամաց մարում էր: Հայրը դիմել էր **աշակերտներին**, բայց նրանք **չէին կարողացել** օգնել:

9:19. Հիսուսը հանդիմանեց աշակերտներին նրանց անհավատության համար: Մի՞թե Նա նրանց իշխանությամբ չէր օժտել, որ դևերին հանեն: **Մինչև ե՞րբ** Նա պիտի նրանց հետ լիներ, որ նրանք օգտագործեին Իր տված իշխանությունը: **Մինչև ե՞րբ** Նա պիտի համբերեր նրանց անգոր և պարտված կյանքը:

9:20-23. Երբ համր ոգով դիվահարին **բերեցին** Տիրոջ մոտ, դևը խիստ լուրջ ցնցումներ առաջացրեց: Տերը հարցրեց **հորը**, թե ինչքա՞ն ժամանակ է, որ այս բանը պատահել է երեխային: Հայրը բացատրեց, որ **մանկությունից**: Ցնցումների ժամանակ դևը **շատ անգամ** նրան **կրակի ու ջրի մեջ է գցել**: Հաճախ նա մահվան եզրին է եղել: Այնուհետև հայրը խնդրեց Տիրոջը, որ գլթա և օգնի, **եթե** կարող էր: Դա սրտի աղեկտուր ճիչն էր, որ տարիների հուսահատությունը ճնշել էր: **Հիսուսը** պատասխանեց, որ հարցը դա չէր, թե արդյոք Ինքը կկա-

րողանա բժշկել, այլ այն, թե հայրը կարո՞ղ է **հավատալ**: Կենդանի Աստծո հանդեպ հավատը միշտ էլ վարձատրվում է: Նրա համար անհնարին բան չկա:

9:24. Հայրը հայտնեց հավատքի և անհավատության պարադոքսը, որ բոլոր ժամանակների Աստծո ժողովրդի փորձառությունն է. «**Տե՛ր, հավատո՞ւմ եմ, օգնի՛ր իմ անհավատությանը**»: Մենք ուզում ենք հավատալ, բայց մեզ կասկածներն են պատում: Մենք ատում ենք այդ ներքին, չար դարացած հակասությունը և, կարծես թե, ապարդյուն ենք պայքարում դրա դեմ:

9:25-27. Երբ **Հիսուսը** սաստեց **պիղծ ոգուն** և նրան հրամայեց երեխայի միջից դուրս գալ, սկսվեց ևս մեկ ցնցում, իսկ հետո փոքր մարմինը **մեռելի նման** թուլացավ: Տերը բարձրացրեց նրան և իր հորը վերադարձրեց:

9:28-29. Ավելի ուշ, երբ մեր Տերն Իր **աշակերտների** հետ մենակ էր **տանը**, նրանք **հարցրին Նրան**, թե ինչո՞ւ իրենք չկարողացան հանել ոգին: Նա պատասխանեց, որ որոշ հրաշքներ պահանջում են **աղոթք և ծոմապահություն**: Մեզանից ո՞վ է, որ իր քրիստոնեական ծառայության մեջ ժամանակ առ ժամանակ չի բախվել պարտության և անհաջողության զգացումին: Մենք գործում ենք անխոնջորեն և բարեխղճորեն, սակայն դեռևս չենք տեսել Աստծո Հոգու գործի արդյունքները գործության մեջ: Մենք նույնպես լսում ենք Փրկչի խոսքերը, որ հիշեցնում են մեզ. «**Այս տեսակը ...**» և այլն:

Գ. Հիսուսը դարձյալ խոսում է Իր մահվան և հարության մասին (9:30-32)

9:30. Տերը դուրս եկավ Փիլիպպեի Կեսարիայից և **անցնում էր Գալիլիայի միջով**: Այդ ճանապարհը Նրան տանելու էր Երուսաղեմ և դեպի խաչը: Նա ուզում էր աննկատ ճամփորդել: Իր հասարակական ծառայությունը Նա հիմնականում ավարտել էր: Այժմ աշակերտների հետ էր ժամանակ անցկացնում՝ նրանց սովորեցնելով և պատրաստելով առաջիկա դեպքերին:

9:31-32. Նա բացահայտորեն նրանց ասաց, որ Իրեն մատնելու են և սպանելու են, և որ **երրորդ օրը Նա հարություն է առնելու**: Նրանք, չգիտես ինչու, չհասկացան Իր խոսքերը, իսկ **հարցնել վախենում էին**: Հաճախ մենք էլ ենք վախենում հարցնել և կորցնում ենք օրհնությունը:

Դ. Թագավորության մեջ մեծ լինելը (9:33-37)

9:33-34. Երբ **Կափառնայում** եկան՝ այն տունը, որտեղ պիտի գիշերեին, Հիսուսը **հարցրեց**, թե նրանք ինչի՞ մասին էին վիճում ճանապարհին: Աշակերտներն ամաչում էին խոստովանել, որ վիճում էին, **թե ո՞վ է մեծը**: Հավանաբար, այլակերպությունն արթնացրել էր նրանց հույսերը մոտալուտ թագավորության մասին և իրենց համար պատվավոր տեղեր էին ընտրում այնտեղ: Ցավալի է գիտակցել, որ ճիշտ այն պահին, երբ Հիսուսը խոսում էր Իր մոտալուտ մահվան մասին, նրանք որոշում էին, թե ո՞վ է իրենցից ամենալավը: Ինչպես Երեմիան է ասում, մարդու սիրտն ամեն բանից ավելի նենգավոր ու խիստ չար է (Եր. 17:9):

9:35-37. Իմանալով, թե նրանք ինչի մասին էին վիճում, Հիսուսը նրանց խոնարհության դաս տվեց: Նա ասաց, որ առաջինը լինելուն տանող ճանապարհը ինքնակամ բոլորից հետինը լինելն է ծառայության մեջ և ուրիշների համար ապրելը: Նա նրանց առջև մի **երեխա** կանգնեցրեց և գրկեց նրան: Նա շեշտեց, որ բարությունը, որ Իր անունով տրվում է նվազագույն հարգվածին, ամենաքիչը ճանաչվածին, դա է մեծության նշանը: Սա նույնն է, ինչ-որ ողորմություն ցուցաբերելը անձամբ Հիսուսին, և ոչ միայն Նրան, այլև Հայր Աստծուն: «Ո՞վ օրհնյալ Տեր Հիսուս, Զո ուսմունքը քննեց և մերկացրեց իմ մարմնավոր սիրտը: Կոտրի՛ր իմ «ես»-ը և Դու գործի՛ր իմ կյանքի միջոցով»:

Ե. Ծառան արգելում է աղանդավորությունը (9:38-42)

Այս գլուխը կարծես լի է անհաջողություններով: Պետրոսի խոսքերն Այլակեր-

պուրջան լեռան վրա տեղին չէին (հ. 5-6): Աշակերտներին չհաջողվեց համր ոգին հանել (հ. 18): Այնուհետև նրանք վիճում էին, թե ով է մեծը (հ. 34): 38-40-րդ համարներում տեսնում ենք, թե ինչպես նրանք աղանդավորական ոգի ցուցաբերեցին:

9:38. Հովհաննեսը՝ սիրելի աշակերտն էր, որ Հիսուսին պատմեց, որ հանդիպել են մեկին, ով Իր **անունով դևեր էր հանում:** Աշակերտները նրան արգելեցին դա անել, քանի որ այդ մարդը չմիացավ իրենց: Մարդը սուտ վարդապետություն չէր քարոզում և մեղքի մեջ չէր ապրում: Նա պարզապես չէր միացել աշակերտներին:

Նրանք շրջան էին գծել, ու ես դրսում էի, Ապտամբ, հերետիկոս, ծաղրի արժանի, Բայց սերը և ես պետք է հաղթեինք.
Շրջան գծեցինք, նրանց էլ ներքաշեցինք:

9:39. Հիսուսն ասաց. «Մի՛ արգելեք նրան: Եթե նա Իմ նկատմամբ բավականաչափ հավատ ունի և Իմ անունով դևեր է հանում, ապա նա Իմ կողմից է և սատանայի դեմ է գործում: Նա չի կարող Իմ դեմ ելնել և **Իմ դեմ խոսել**, կամ Իմ թըշնամին լինել»:

9:40. Թվում է, թե այս համարը հակասում է Մատթ. 12:30-ին, որտեղ Հիսուսն ասաց. «Նա՛ ով ինձ հետ չէ, հակառակ է Ինձ, և ով Ինձ հետ չի հավաքում՝ ցրում է»:
Բայց իրականում այստեղ հակասություն չկա: Մատթեոսի Ավետարանում խոսքը վերաբերում էր Քրիստոսի ով լինելուն, թե արդյոք Քրիստոսն Աստծո Որդի՞ն էր, թե՞ դևերի իշխանությամբ էր օժտված: Այսպիսի հիմնարար հարցում ամեն ոք, ով Հիսուսի հետ չէր, Նրան հակառակ էր գործում:

Այս համարում խոսվում է ոչ թե Քրիստոսի Անձի կամ գործերի մասին, այլ Տիրոջ ծառայության մեջ համագործակցության մասին: Այստեղ անհրաժեշտ է համբերատարություն և սեր: Նա, ում ծառայությունն ուղղված չէ Քրիստոսի **դեմ**, պետք է ուղղված լինի սատանայի դեմ և, հետևաբար նա Քրիստոսի կողմից է:

9:41. Նույնիսկ ամենաչնչին բարի գործը, որ արված է Քրիստոսի **անունով**, վարձա-

տրվելու է: **Մեկ բաժակ ջուրը**, որ աշակերտին կմատուցեն, **քանի որ նա Քրիստոսին** է պատկանում, աննկատ չի մնա: Իր անունով դև հանելը բավականին աչքի ընկնող գործ է: Մեկ բաժակ **ջուր** տալը սովորական բան է: Սակայն թե՛ սա և թե՛ մյուսը արժեքավոր են Տիրոջ համար, եթե արվում է Իր փառքի համար: «**Որովհետև դուք Քրիստոսին եք պատկանում**», - սա է այն լարը, որ պետք է հավատացյալներին մեկտեղ միավորի: Եթե այս խոսքերը մեր տեսադաշտում պահենք, կազատվենք մեզ քրիստոնեական ծառայության մեջ եղող առանձնանալու հոգուց, մանր վիճաբանություններից և նախանձից:

9:42. Տիրոջ ծառան մշտապես պետք է հաշվի առնի, թե իր խոսքերն ու արարքներն ինչպես են ազդում ուրիշների վրա: Դրանք կարող են գայթակղեցնել հավատակցին և ամբողջ կյանքում հոգևոր վնաս պատճառել: **Ավելի լավ կլինեք** այդպիսի մարդու **վզից ջաղացի քար** կախվել ու ծովը զգվել, քան թույլատրվել, որ նա **գայթակղեցնի այս փոքրիկներից մեկին՝** շեղվելու սրբության և ճշմարտության ճանապարհից:

2. Անգութ անձնագույություն (9:43-50)

9:43. Այս գլխի հաջորդ համարները շեշտում են կարգապահության և անձնուրացության անհրաժեշտությունը: Ամեն ոք, ով կանգնել է ճշմարիտ աշակերտության ճանապարհին, պետք է մշտապես պայքարի բնական ցանկությունների և հակումների դեմ: Մարմնին հանեցնելը կործանման է տանում: Դրանց վերահսկումը հոգևոր հաղթանակ է ապահովում:

Տերը խոսեց **ձեռքի, ոտքի և աչքի** մասին՝ բացատրելով, որ ավելի լավ կլինեք դրանք կորցնել, քան գայթակղվել և **դժոխքում** հայտնվել: Նպատակին հասնելն արժանի է ամեն զոհողության:

Ձեռքը խորհրդապատկերում է մեր գործերը, **ոտքը՝** մեր քայլվածքը, իսկ **աչքը՝** մեր ցանկությունները: Սրանք վտանգ սպառնացող պոտենցիալ գոտիներն են: Եթե դրանց հետ խիստ չվարվենք, դրանք կա-

րող են առաջնորդել հավիտենական կործանման:

Արդյոք այս հատվածը սովորեցնո՞ւմ է, որ ճշմարիտ հավատացյալը կարող է կործանվել և հավիտենականությունը դժոխքում անցկացնել: Ենթատեքստից դուրս այս համարները կարող են նմանատիպ մտքի հանգեցնել: Բայց ելնելով ամբողջ նորկտակարանյան ուսմունքից՝ մենք կարող ենք եզրակացնել, որ յուրաքանչյուր դժոխք գնացող մարդ երբեք ճշմարիտ քրիստոնյա չի եղել: Մարդը կարող է *ասել*, որ ինքը վերջստին ծնունդ ունի և արտաքին լավ վկայություն պահպանել որոշ ժամանակ: Բայց եթե նա շարունակ տեղ է տալիս մարմնականին, պարզ է, որ նա երբեք էլ փրկված չի եղել:

9:44-48. Տերը բազմիցս¹⁶ խոսում է դժոխքի մասին, մի վայրի, **որտեղ որդը չի մեռնում և կրակը չի մարում:** Չափազանց լուրջ է հնչում: Եթե իրականում հավատալիք դրան, կապրեինք ոչ թե ինչքի, այլ անմահ հոգիների համար: «Ո՛վ Տեր, տո՛ւր ինձ կարեկցություն հոգիների հանդեպ»:

Բարեբախտաբար, կարիք չկա անդամահատել սեփական ձեռքը կամ ոտքը կամ հանել աչքը՝ ելնելով բարոյական նկատառումներից: Հիսուսը մեզ խորհուրդ չի տվել նման ծայրահեղություններ գործադրել: Նա պարզապես ասել է, որ *սալեյի լավ է* գոհաբերել մարմնի այդ անդամների գործածությունը, քան դրանք չարաշահելու պատճառով **դժոխք** նետվել:

9:49. Հատկապես դժվար են 49-50-րդ համարները: Ուստի կետ առ կետ ուսումնասիրենք դրանք:

«Որովհետև ամեն մեկը կրակով պիտի աղվի»: Երեք հիմնական հարց է ծագում. 1. Ո՞ր **կրակի** մասին է այստեղ խոսվում: 2. Ի՞նչ է նշանակում **«աղվել»**: 3. **«Ամեն մեկ»** արտահայտությունը մատնանշում է փրկվածների՞ն, անհավատների՞ն, թե՞ երկուսին էլ:

«Կրակը» կարող է նշանակել դժոխք (ինչպես հ. 44, 46, 48) կամ ցանկացած դատաստան՝ ներառելով Աստծո դատաստա-

նը հավատացյալների գործերի վրա, ինչպես նաև ինքն իրեն դատելը:

Աղը պահպանում է, մաքրում և համ է տալիս: Արևելյան երկրներում այն նաև համարվում է նվիրվածության, ընկերության և խոստումին հավատարիմ մնալու գրավական:

Եթե **«ամեն մեկը»** վերաբերում է անհավատներին, ապա դա հանգեցնում է այն մտքին, որ նրանք պահպանվելու են դժոխքի կրակի մեջ, այսինքն՝ հավիտենական դատաստան են կրելու:

Եթե **«ամեն մեկը»** վերաբերում է հավատացյալներին, ապա այս հատվածի հիման վրա նրանք պետք է. 1. այս կյանքում մաքրվեն աստվածային մաքրագործող կրակով, կամ 2. իրենց պահեն ապականությունից՝ գործադրելով ինքնազսպությունը և անձնուրացությունը, կամ էլ 3. Քրիստոսի ատյանի առջև փորձվեն:

«Եվ ամեն զոհ աղով պիտի աղվի»: Այս նախադասությունը¹⁷ մեջբերված է Ղև. 2:13-ից (տե՛ս նաև Թվ. 18:19, 2 Մն. 13:5): Աղը խորհրդանշում է Աստծո և Իր ժողովրդի միջև եղած ուխտը՝ հիշեցնելով ժողովրդին, որ ուխտը համարվում է հանդիսավոր պայմանագիր, որը պետք է անարատությամբ պահեին: Մեր մարմինները ներկայացնելով Աստծուն որպես կենդանի զոհ (Հռ. 12:1-2)՝ մենք պետք է գոհն աղով համեմենք՝ այն դարձնելով անդառնալի նվիրում:

9:50. **«Աղը լավ է»:** Քրիստոնյաները երկրի աղն են (Մատթ. 5:13): Աստված ակնկալում է, որ նրանք աշխարհի վրա ունենան առողջարար և մաքրագործող ազդեցություն: Քանի դեռ նրանք կատարում են իրենց աշակերտությունը, օրհնություն են բոլորի համար:

«Բայց եթե աղն իր աղայնությունը կորցնի, ինչո՞վ պիտի դուք համեմեք այն»: **Աղը**, որ կորցրել է իր ուժը, արժեզրկվել է: Քրիստոնյան, որ չի կատարում իր պարտականությունները որպես ճշմարիտ աշակերտ, անպտուղ է և անարդյունավետ: Բավարար չէ քրիստոնեական

կյանքի լավ սկիզբը: Մինչև Աստծո զավակն իր կյանքում ինքն իրեն մշտական և արմատական չդատի, չի կարող նպատակին հասնել, որի համար Աստված նրան փրկել է:

«Աղ ունեցեք դուք ձեր մեջ»: Աշխարհում Աստծո ա՛ղը եղեք: Բարերար ազդեցությո՜ւն գործադրեք Քրիստոսի փառքի համար: Անհանդուրժողական՝ եղեք ամեն բանի նկատմամբ ձեր կյանքում, որը կնվազեցնի ձեր արդյունավետությունը Նրա համար:

«Խաղաղություն ունեցեք միմյանց հետ»: Այստեղ, հավանաբար հղումը կատարված է 33-34-րդ համարների համար, որտեղ աշակերտները վիճում էին, թե ո՞վ է մեծը: Պետք է մի կողմ դնել հպարտությունը, և այն փոխարինել բոլորի հանդեպ խոնարհ ծառայությամբ:

Ամփոփելով՝ կարելի է հետևյալ եզրակացության հանգել. 49-50-րդ համարները, հավանաբար, ներկայացնում են հավատացյալի կյանքը որպես գոհ առ Աստված: Այն կրակով է աղված, այսինքն՝ նրան բնորոշ է ինքնաբնությունն ու անձնուրացությունը: Այն կրակով է աղված, այսինքն՝ համարվում է հաստատուն նվիրվածության գրավականն առ Աստված: Եթե հավատացյալը ետ է կանգնում իր խոստումներից կամ չի կարողանում խստորեն վերահսկել մեղապից ցանկությունները, ապա իր կյանքը կանհամանա, կդառնա անարժեք և անիմաստ: Ուստի նա պետք է իր կյանքից արմատախիլ անի այն ամենը, ինչը խոչընդոտում է Աստծո կողմից որոշված իր առաքելությանը: Նա պետք է նաև խաղաղ հարաբերություններ պահպանի մյուս հավատացյալների հետ:

Է. Ամուսնություն և ամուսնալուծություն (10:1-12)

10:1. Մեր Տերը Գալիլիայից ուղևորվեց դեպի հարավ-արևելք, Բերիա՝ մի շրջան, որը գտնվում է **Հորդանանի** արևելյան ափում: Նրա ծառայությունը Բերիայում շարունակվում է մինչև 10:45-ը:

10:2. Փարիսեցիներն արագորեն գրտ-

նում են Նրան: Գալիի ոհմակի նման, նրանք գնում էին որսի ետևից: Ջանալով Նրան ծուղակի մեջ գցել՝ նրանք հարցրին, թե արդյոք **օրինավո՞ր է, որ մարդ իր կնոջն արձակի:** Հիսուսը մատնանշեց Հնգամատյանը: **Մովսեսն ի՞նչ պատվիրեց ձեզ:**

10:3-9. Նրանք խույս տվեցին Նրա հարցից՝ ասելով, որ **Մովսեսը թույլ տվեց:** Նա տղամարդուն մեկ պայմանով թույլ տվեց բաժանվել կնոջից: Այդ պայմանը **արձակման թուղթ** գրելն էր կնոջ համար: Բայց սա չէր Աստծո մտադրությունը. ամուսնալուծությունը մարդկանց սրտի **կարծրության** պատճառով թույլատրվեց: Աստվածային մտադրությամբ տղամարդը և կինը միանում են ամուսնությամբ ողջ կյանքի համար: Այս պատվիրանը գործադրվում է տղամարդու և կնոջ արարման ժամանակից: Տղամարդը պիտի **թողնի** իր ծնողներին և ամուսնանա, որպեսզի նա և իր կինը դառնան **մեկ մարմին:** Ինչ որ **Աստված միացրեց**, այն չպիտի բաժանվի մարդկային հրամանով:

10:10. Ըստ երևույթին, դա նույնիսկ **Նրա աշակերտների** համար դժվարընդունելի էր: Այդ ժամանակաշրջանում կանայք չունեին իրավական պաշտպանություն և հարգանք: Հաճախ նրանց հետ գրեթե արհամարհանքով էին վարվում: Տղամարդը կարող էր բաժանվել կնոջից, եթե գոհ չէր նրանից: Կինը ոչ մի իրավունք չուներ: Հաճախ նրա հետ վարվում էին որպես սեփականության:

10:11-12. Երբ աշակերտները Տիրոջը նույն հարցը տվեցին, Նա հստակ ասաց, որ ամուսնալուծությունից հետո նորից ամուսնանալը **շնություն է**, անկախ այն բանից, թե ամուսնալուծության հանցավորը ով է՝ տղամա՛րդը, թե՛ **կինը:** Հաշվի առնելով այս համարն ինքնին՝ կարելի է եզրակացնել, որ ամուսնալուծությունն արգելված է բոլոր հանգամանքներում: Բայց Մատթ. 19:9-ում Հիսուսը բացառություն է անում: Երբ ամուսիններից մեկը մեղավոր է պոռնկության մեջ, մյուսին թույլատրվում է ամուսնալուծության դիմել, և հետևաբար

նա ազատ է նորից ամուսնանալու համար: Նաև 1 Կոր. 7:15-ում թույլատրվում է ամուսնալուծությունը, երբ ամուսիններից անհավատը լքում է հավատացյալին:

Անշուշտ, ամուսնալուծության և կրկնակի ամուսնության ամբողջ թեմային առընչվող դժվարություններ կան: Հաճախ ընտանեկան հարաբերություններն այնքան են խճճված, որ Սողոմոնի իմաստությունն է պահանջվում դրանք պարզելու համար: Իտառնաշփոթից խուսափելու ամենալավ միջոցն ամուսնալուծությունից խույս տայն է: Ամուսնալուծությունը մթազնում է կյանքը և շատ հարցեր է դնում դրանում ներգրավված մարդկանց առջև: Երբ ամուսնալուծված անձն ուզում է անդամակցել տեղական եկեղեցուն, երեցները պետք է Աստծո վախով վերանայեն այդ դեպքը: Յուրաքանչյուր դեպք տարբեր է և պետք է ամանձին դիտարկվի:

Այս հատվածը ցույց է տալիս, որ Քրիստոսը մտահոգ էր ոչ միայն ամուսնական կապերի սրբությամբ, այլև՝ կնոջ իրավունքների: Քրիստոնեությունը պատշաճ հարգանքով է վերաբերվում կանանց, ինչը չես կարող գտնել այլ կրոններում:

Ը. Հիսուսը օրհնում է մանուկներին (10:13-16)

10:13. Այստեղ տեսնում ենք Տեր Հիսուսի հոգատարությունը **մանուկների** հանդեպ: Ծնողները **բերում էին** իրենց **մանուկներին**, որ Ուսուցիչը և Հովիվը նրանց օրհներ, բայց աշակերտները թույլ չէին տալիս:

10:14-16. Տերը **խիստ բարկացավ ու ասաց**, որ **Աստծո թագավորությունը** պատկանում է մանուկներին և նրանց, ովքեր հավատում և խոնարհվում են մանուկների նման: Թագավորություն **մտնելու** համար չափահասները պետք է դառնան մանուկների նման:

Չորջ Մաքդոնալդը սիրում էր կրկնել, որ չի հավատում մարդու քրիստոնեությանը, եթե նրա դռան առջև չկան խաղացող աղջնակներ և տղաներ: Անշուշտ, այս համարները պետք է ազդեցություն ունենան Տիրոջ ծառայի վրա. կարևոր է Աստծո

Խոսքը հասցնել մանուկներին: Երեխաների միտքը չափազանց ճկուն է և ընկալունակ: Ու. Գրեհեմ Սկրոգին ասել է. «Ձեր լավագույնը եղեք երեխաների համար և ձեր լավագույնը տվեք նրանց»:

Թ. Մեծահարուստ երիտասարդը (10:17-31)

10:17. Ակնհայտ է, որ հարուստ մարդը Տիրոջ առջև եկավ անկեղծ հարցով: Հիսուսին կոչելով «Բարի Վարդապետ»՝ նա հարցրեց, թե **ինչ անի, որ հավիտենական կյանքը ժառանգի**:

10:18. Հիսուսը կենտրոնացավ «**Բարի Վարդապետ**» արտահայտության վրա: Նա չիրաժարվեց այդ կոչումից, բայց դա գործածեց այդ մարդու հավատը փորձելու համար: Միայն **Աստված** է բարի: Արդյոք կամենո՞ւմ էր մեծահարուստը Տեր Հիսուս Քրիստոսին որպես Աստծո դավանել: Ըստ երևույթին՝ ո՛չ:

10:19-20. Այնուհետև Փրկիչն օգտագործեց Օրենքը՝ մեղքի ճանաչողության համար: Այս մարդն ինքն իրեն խաբում էր դրանով, որ Թագավորությունը կարելի է ժառանգել կատարած *գործերի* սկզբունքով: Այդ դեպքում թող նա հնազանդվեր Օրենքին, որը նրան ասում էր ինչ պետք է **անել**: Մեր Տերը նրան հիշեցրեց հինգ պատվիրանները, որոնք հիմնականում առընչվում են մերձավորների հանդեպ ունեցած մեր հարաբերություններին: Իրականում, այդ պատվիրաններն ասում են. «Մի՞րի՞ր քո դրացուն քո անձի պես»: Մարդն ասաց, որ այդ պատվիրանները **մանկությունից պահել է**:

10:21-22. Բայց արդյոք նա սիրո՞ւմ էր իր դրացուն իր անձի պես: Եթե այո, ապա թող ապացուցեր՝ ծախելով ամբողջ ունեցվածքը և գումարն **աղքատներին** բաժանելով: Օ՛, դա բոլորովին այլ բան է: Նա **վշտացած գնաց, որովհետև շատ հարստություն ուներ**:

Տեր Հիսուս Քրիստոսը նկատի չունեց այն, որ ծախելով ունեցվածքը և այն որպես ողորմություն բաժանելով՝ մարդը կարող էր փրկություն ձեռք բերել: Փրկության տա-

նող միայն մեկ ճանապարհ կա՝ Տիրոջ հանդեպ հավատը: Բայց փրկություն ձեռք բերելու համար, մարդ պետք է ընդունի, որ ինքը մեղավոր է և սուրբ Աստծո պահանջները չի բավարարում: Տերը մարդուն մատնանշեց Տասը Պատվիրանները, որպեսզի նրա իսկ մեղավորության մեջ նրան համոզի: Հարուստ երիտասարդի՝ իր ունեցվածքը բաժանելու չկամությունը ցույց տվեց, որ ինքը չի սիրում իր դրացուն իր անձի պես: Նա պետք է ասեր. «Տե՛ր, եթե հենց դա է պահանջվում, ապա ես մեղավոր եմ: Ես չեմ կարող փրկել ինձ սեփական ուժերով: Ուստի խնդրում եմ, որ ինձ փրկես Քո շնորհով»: Բայց նա շատ էր սիրում իր ունեցվածքը: Նա չէր ուզում հրաժարվել դրանից: Նա նախընտրեց պահպանել այն:

Երբ Հիսուսն այդ մարդուն առաջարկեց բոլորը ծախել, Նա այդ մեթոդը չէր առաջարկում որպես փրկության ճանապարհ: Նա մարդուն ցույց տվեց, որ վերջինս խախտել է Աստծո օրենքը, և հետևաբար, փրկության կարիք ունի: Եթե նա արձագանքեր Փրկչի հրահանգներին, փրկության ճանապարհը նրան կտրվեր:

Բայց այստեղ մեկ հարց էլ է առաջանում: Մենք՝ հավատացյալներս, արդյոք պիտի սիրենք մեր դրացուն մեր անձի պես: Արդյոք Հիսուսը մեզ ասո՞ւմ է. «**Ինչ որ ունես, ծախիր և տո՛ւր աղքատներին ու երկնքում վարձ կունենաս և ե՛կ, խաչը վերցրո՛ւ և Ինձ հետևի՛ր**»: Ամեն ոք իր համար պետք է պատասխան տա, բայց մինչ այդ նկատի առնենք հետևյալ անհերքելի փաստերը.

1. Հազարավոր մարդիկ ամեն օր մահանում են սովից:
2. Երկրագնդի բնակչության կեսից ավելին երբեք չի լսել Բարի Լուրը:
3. Մեր նյութական ունեցվածքը կարելի է օգտագործել մարդկանց հոգևոր և ֆիզիկական կարիքները թեթևացնելու համար:
4. Քրիստոսի օրինակը մեզ սովորեցնում է, որ մենք պետք է աղքատանանք, որ ուրիշները հարստանան (2 Կոր. 8:9):

5. Իմանալով, թե որքան կարճ է մեր կյանքը և որքան մոտ է Քրիստոսի գալուստը, մենք պետք է հետևություն անենք. մեր գումարներն Աստծո գործի մեջ ներդնելու ժամանակը հիմա է: Երբ Նա գա, այլևս շատ ուշ կլինի:

10:23-25. Տեսնելով, թե ինչպես մեծահարուստն անհետացավ ամբողջի մեջ, Հիսուսը նշեց, որ հարուստների համար դժվար է **Աստծո թագավորություն** մտնելը: Այս խոսքերը զարմացրին աշակերտներին: Նրանք սովորաբար հարստությունն Աստծուց օրհնություն էին համարում: Այդ պատճառով Հիսուսը կրկնեց. «**Որդյակներ, որքան դժվար է, որ հարստության¹⁸ վրա հուսացողները մտնեն Աստծո թագավորությունը**»: Եվ իսկապես: Նա շարունակեց. «**Ավելի հեշտ է, որ ուղտն ասեղի անցքով անցնի, քան հարուստն Աստծո թագավորություն մտնի**»:

10:26-27. Մա աշակերտների մոտ հարց առաջացրեց. «**Իսկ ո՞վ կարող է փրկվել**»: Որպես Օրենքի համաձայն ապրող հրեաներ, նրանք ճիշտ էին համարում հարստությունը դիտել որպես Աստծո օրհնության ցուցանիշ: Համաձայն Մովսեսի օրենքի, Աստված բարգավաճում էր խոստանում Իրեն հնազանդողներին: Մրանից աշակերտները պետք է եզրակացնեին, որ եթե հարուստը չի կարող Աստծո Թագավորություն մտնել, ապա ոչ ոք էլ չի կարող: Հիսուսը պատասխանեց, որ մարդկանց համար **անհնարինը Աստծո համար հնարավոր է**:

Մենք ի՞նչ եզրակացության ենք հանգում՝ ուսումնասիրելով այս հատվածը:

Նախ, հատկապես հարուստների համար դժվար է փրկվել (հ. 23), քանի որ նրանք իրենց հարստությունն ավելի շատ են սիրում, քան Աստծուն: Նրանք ավելի շուտ Աստծուց կհրաժարվեն, քան իրենց գումարից: Նրանք վատահում են ոչ թե Տիրոջը, այլ իրենց հարստությանը: Քանի դեռ այս վիճակում են, նրանք չեն կարող փրկվել:

Իսկապես, ՀԿ-ում հարստությունն Աստծո օրհնության նշան էր համարվում: Բայց

այժմ իրավիճակը փոխվել է: Աստծո օրհնության նշանի փոխարեն հարստությունը դարձել է մարդու նվիրվածության փորձարկում առ Աստած:

Ավելի հեշտ է, որ ուղտն ասեղի անցքով անցնի, քան հարուստն Աստծո Թագավորության դարպասներով մտնի: Այլ կերպ ասած, հարուստը պարզապես չի կարող փրկվել: Այստեղ ինչ-որ մեկը կարող է առարկել, որ մարդկայնորեն *ոչ ոք* չի կարող փրկվել: Եվ դա ճիշտ է: Բայց սա ավելի մեծ ճշմարտություն է հարուստների դեպքում: Նա բախվում է այնպիսի իրավիճակների, որոնց մասին աղքատը նույնիսկ տեղյակ չէ: Մամոնայի իշխանությունը պետք է գահընկեց արվի սրտի գահից, և նա Աստծո առջև պիտի կանգնի որպես աղքատ: Այդպիսի փոփոխությունն իրականացնելը մարդկային ուժերով անհնար է: Միայն Աստված կարող է դա անել:

Այն քրիստոնյաները, ովքեր գանձեր են հավաքում երկրի վրա, սովորաբար իրենց անհնազանդության համար հատուցումը ստանում են սեփական երեխաների կյանքում: Այդպիսի ընտանիքներից շատ քչերն են Տիրոջ հետ ճիշտ հարաբերություններում գտնվում:

10:28-30. Պետրոսն ըմբռնեց Փրկչի ուսմունքի միտքը: Նա հասկացավ, թե Հիսուսն ինչ էր ուզում ասել. «Ամեն բան թողնել և Իրեն հետևել»: Հիսուսը հաստատեց այդ խոսքերի ճշմարտացիությունը՝ խոստանալով վարձատրություն ներկայումս և հավիտենականության մեջ նրանց, ովքեր ամեն բան կթողնեն Իր և Ավետարանի համար:

1. Ներկայիս վարձատրությունը կազմում է տապը հազար տոկոս, բայց ոչ գումարային տեսքով, այլ.

Ա) **տներ՝** այն մարդկանց տները, որ տրվում են Տիրոջ ծառաների բնակության համար,

Բ) **եղբայրներ, քույրեր, հայրեր, մայրեր և զավակներ՝** քրիստոնյա բարեկամները, ում հետ հաղորդակցությունը հարստացնում է կյանքը,

Գ) **արտեր՝** աշխարհի երկրները, որոնք նա պահանջում է Թագավորի անունով, Դ) **հավաճանքներ՝** դրանք ներկա վարձատրության մասն են կազմում: Ուրախության պատճառ է, երբ մարդ արժանի է գտնվում տառապանք կրելուն հանուն Հիսուսի:

2. Գալիք վարձատրությունը **հավիտենական կյանքն** է: Դա չի նշանակում, որ ամեն բան թողնելով՝ հավիտենական կյանքն ենք վաստակում: Հավիտենական կյանքը պարզ է: Այստեղ թաքնըված է այն միտքը, որ ամեն բան թողնողները որպես վարձատրություն ստանալու են ավելի մեծ կարողություն՝ վայելելու հավիտենական կյանքը երկրներում: Բոլոր հավատացյալներն ունեն այդ կյանքը, բայց ոչ բոլորն են նույն չափով այն վայելելու:

10:31. Այնուհետև մեր Տերը մի նախագուշացում ավելացրեց. «**Բայց շատերը, որ առաջինն են, հետիններ պիտի լինեն, իսկ հետինները՝ առաջին**»: Լավ սկիզբը աշակերտության ճանապարհին բավարար չէ: Հաշվի է առնվելու այն, թե մենք ինչպես կհասնենք ավարտին:

Այրենապղն ասել է. «Ոչ բոլորն են, որ խոստանում են հավատարիմ ու նվիրված հետևորդներ լինել, ոչ բոլորն են հանուն Քրիստոսի մինչև վերջ շարունակում անձնուրացության ճանապարհով ընթանալ: Կի՞նեն նաև այնպիսիք, ովքեր, թվում է՝ հետևում էին գտնվում, որոնց նվիրվածությունը կասկածելի էր, բայց փորձության ժամին պահպանել են հավատարմությունը և անձնագոհությունը»:¹⁹

Ժ. Ծառայի երրորդ կանխատեսումը չարչարանքների մասին (10:32-34)

10:32. Երուսաղեմ գնալու ժամանակը եկել էր: Հիսուս Քրիստոսի այս ճանապարհը տանում էր դեպի Գեթսեմանի, վիշտ ու տառապանքի, խաչի ամոթին և տազնապներին:

Ինչպիսի՞ գզացումներ էին Նրան պարուրել այդ պահին: Արդյոք կարո՞ղ ենք հաս-

կանալ այս խոսքերից. «**Հիսուսը գնում էր նրանց առջևից**»: Նա լի էր Աստծո կամքը կատարելու վճռականությամբ՝ լիովին գիտակցելով դրա արժեքը: Նա միայնակ էր. Նա գնում էր աշակերտների առջևից: Նա լի էր ուրախությամբ՝ խորը, հաստատուն ուրախությամբ այն մտքից, որ կատարում է Հոր կամքը, գալիք փառքի ուրախ հեռանկարը, Իր հարսի փրկագնաման ուրախությունը: Նա գիտեր Իրեն սպասվող ուրախության մասին, և այդ պատճառով համբերեց ամոթը, գնաց դեպի խաչ:

Մենք էլ ենք **գարմանում**՝ տեսնելով, թե Նա ինչպես է առջևից քայլում: Մեր անսասան Առաջնորդը, մեր հավատի Հեղինակը և Կատարողը, մեր փառավոր Տերը, աստվածային Իշխանը: Էրդմանը գրում է.

«Եկե՛ք կանգ առնենք ու նայենք Նրա դեմքին, Աստծո Որդուն, որ խրոխտ քայլերով գնում էր դեպի խաչը: Արդյոք սա մեզ չի՞ խրախուսում նոր սխրանքների, մինչ Իրեն ենք հետևում, արդյոք մեր սրտում չի՞ բոցավառվում սիրո կրակը, երբ տեսնում ենք, թե Նա ինչպես է հոժարակամ գնում մեռնելու մեզ համար, և արդյոք մեզ չի՞ գարմացնում այդ մահվան իմաստն ու խորհուրդը»:²⁰

Նրա հետևորդները **վախենում էին**: Նրանք գիտեին, որ Երուսաղեմի կրոնական իշխանությունները Նրա մահն էին կամենում:

10:33-34. Հիսուսն Իր աշակերտներին երրորդ անգամ մանրամասնորեն նկարագրում է գալիք իրադարձությունները: Այդ մարգարեական ծրագիրը վկայում է այն մասին, որ Նա ավելին էր, քան սոսկ Մարդը.

1. «**Ահա բարձրանում ենք Երուսաղեմ**» (11:1-13:37):
2. «**Մարդու Որդին պիտի գլխավոր քահանաների ու դպիրների ձեռքը մատնելվի**» (14:1-2, 43-53):
3. «**Նրան մահվան պիտի դատապարտեն**» (14:55-65):
4. «**Ու հեթանոսներին պիտի հանձնեն**» (15:1):

5. «**Եվ պիտի ծաղրեն Նրան ու պիտի ծեծեն Նրան, պիտի թքեն Նրա վրա ու պիտի սպանեն Նրան**» (15:2-38):
6. «**Եվ երրորդ օրը Նա հարություն պիտի առնի**» (16:1-11):

Ի. Մեծ լինելը ծառայության մեջ (10:35-45)

10:35-37. Իր մոտալուտ խաչելության մասին այս տխուր կանխատեսումից հետո **Հակոբոսն ու Հովհաննեսը Նրա մոտ եկան** անպատեհ հարցով: Քրիստոսին մոտ լինելու նրանց փափագը հիանալի էր, բայց սեփական անձի մեծության փափագը առնվազն անհամեստություն էր: Նրանք ցույց տվեցին իրենց հավատն առ այն, որ Հիսուսը շուտով Իր թագավորությունն է հաստատելու, այնինչ պիտի մտածեին Նրա մոտալուտ տառապանքների մասին:

10:38-39. **Հիսուսը** հարցրեց նրանց, թե արդյոք **կարո՞ղ են խմել Իր բաժակը**, որը խորհրդանշում էր Իր չարչարանքները և մասնակցել Իր **մկրտությանը**, որ խորհրդանշում էր Իր մահվան հիշատակումը: Նրանք հայտարարեցին, որ **կարող են**, և Նա հաստատեց, որ իրավացի են: Նրանք չարչարվելու էին Իր հանդեպ ունեցած իրենց նվիրվածության համար, իսկ Հակոբոսը նույնիսկ պիտի նահատակվեր (Գործք 12:2):

10:40. Բայց հետո Նա բացատրեց, որ Թագավորության պատվավոր տեղերը չեն տրվում կամայականորեն: Այն պետք է վաստակել: Այստեղ լավ կլինի հիշել, որ Թագավորության մուտքը մեզ համար շնորհով է բաց՝ հավատի միջոցով, բայց մեր *դիրքը* թագավորության մեջ որոշվելու է Քրիստոսի հանդեպ հավատարմությամբ:

10:41-44. Մյուս տասն աշակերտներն **սկսեցին բարկանալ Հակոբոսի և Հովհաննեսի վրա**, որ փորձում էին իրենցից առաջ անցնել: Բայց նրանց զայրույթը վկայում էր այն մասին, որ նրանք նույն հոգին ունեին: Սա առիթ ծառայեց, որ Տերը նրանց մի հիանալի դաս սովորեցնի մեծության մասին, որ արմատապես տարբերվում էր

սովորականից: Դարձի չեկածների մեջ այս աշխարհի մեծամեծերը նրանք են, ովքեր կառավարում են ըստ իրենց հանույքի: Նրանք ամբարտավան են և իշխող իրենց ստորադասների հանդեպ: Բայց Քրիստոսի Թագավորության մեջ մեծ լինելը նշվում է ծառայությամբ: **Ով ուզում է մեծ լինել, բող բոլորի ծառան լինի:**

10:45. Մրա մեծագույն օրինակը հենց Ինքը **Մարդու Որդին է, Ով չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և Իր Անձը որպես փրկագին շատերի համար տալու:** Մտածե՛ք դրա մասին: Նա գերբնական ձևով ծնվեց այս աշխարհում: Նրա ողջ կյանքը բաղկացած էր ծառայությունից: Եվ Իր փոխանորդական մահով Նա Իր կյանքը տվեց:

Ինչպես նշվեց վերը, 45-րդ համարն ամբողջ Ավետարանի բանալին է: Սա աստվածաբանություն է մանրանկարով, մեծագույն Կյանքի կտավ, որ երբևէ աշխարհին հայտնի է:

L. Կույր Բարտիմեոսի բժշկությունը (10:46-52)

10:46. Այնուհետև գործողությունները տեղափոխվում են Բերիայից Հրեաստան: Տերը և Իր աշակերտները, Հորդանանը հատելով, եկան **Երիքով:** Այնտեղ նրանք հանդիպեցին **Կույր Բարտիմեոսին՝** անհուսալի կարիքով մի մարդու, ով գիտեր այդ կարիքի մասին և դրանից ազատվելու վճարկանությունն ուներ:

10:47. Բարտիմեոսը մեր Տիրոջ մեջ ճանաչեց **Դավթի Որդուն** և այդ անունով Նրան դիմեց: Ինչպիսի՛ հեզմանք: Այն ժամանակ, երբ Իսրայել ժողովուրդը կույր էր, և չէր տեսնում Մեսիայի ներկայությունը, կույր հրեան օժտված էր ճշմարիտ հոգևոր տեսողությամբ:

10:48-52. Նրա՝ ողորմության համար բարձրացրած համառ աղաղակներն անպատասխան չմնացին: Տեսողության համար նրա հատուկ խնդրանքին տրվեց կոնկրետ պատասխան: Նրա երախտագիտությունն արտահայտվեց հավատարիմ աշակերտության մեջ, երբ հետևեց **Հիսու-**

սին Իր վերջին ուղևորության ժամանակ դեպի Երուսաղեմ: Այն պետք է ուրախացնեն Տիրոջ սիրտը, երբ Նա դեպի խաչ գնալիս Երիքովում այդպիսի հավատ գտավ: Լավ եղավ, որ հենց այդ օրը Բարտիմեոսը Տիրոջն աղաղակեց, որովհետև Փրկիչն այլևս չէր անցնելու այդ ճանապարհով:

V. ԾԱՌԱՅՅԻ ԾԱՌԱՅՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐՈՒՍԱԳՂԵՄՈՒՄ (11-12-րդ գլ.)

Ա. Հաղթական մուտքը (11:1-11)

11:1-3. Սկսվում է վերջին շաբաթվա արձանագրությունը: Հիսուսը կանգ առավ **Զիթենյաց լեռան** արևելյան կողմում, **Բերթիագեի** («խակ թզերի տուն») և **Բերթանիայի** («աղբատների, ընկճվածների, նեղյալների տուն») մոտակայքում:

Եկել էր ժամանակը, երբ Հիսուսը պետք է բացահայտ ներկայանար հրեա ժողովրդի առջև որպես իրենց Մեսիա-Թագավոր: Նա պետք է դա աներ, որպեսզի կատարվեր Չաքարիայի մարգարեությունը (9:9)՝ **Էշի քուռակի** վրա հեծած: Եվ այսպես, Նա **Իր աշակերտներից երկուսին** ուղարկեց Բերթանիայից Բերթիագե: Ունենալով կատարյալ գիտելիք և լիարժեք իշխանություն՝ Նա նրանց պատվիրեց գտնել մի կապված **ավանակ**, որի վրա ոչ ոք չէր նստել, և բերել Իր մոտ: Եթե ինչ-որ մեկն առարկեր նրանց, ապա նրանք պիտի ասեին, որ այն **Տիրոջը պետք է:** Այստեղ հայտնված Տիրոջ ամենագիտությունը ոմն մեկին դրդեց հետևյալ խոսքերն ասել. «Սա արդիականության Քրիստոսը չէ, այլ՝ պատմության և երկնքի»:

11:4-6. Ամեն բան պատահեց այնպես, ինչպես Հիսուսն էր կանխատեսել: Աշակերտները **գտան** դռան մոտ կապված **ավանակին** գյուղի խաչմերուկի մոտ: Երբ նրանց հարցրին, թե ինչո՞ւ են արձակում կենդանուն, աշակերտները պատասխանեցին այնպես, ինչպես իրենց պատվիրված էր: Այդ ժամանակ մարդիկ **նրանց թույլ տվեցին**, որ գնան:

11:7-8. Թեև ավանակի վրա նախկինում երբեք չէին նստել, նա չհակառակվեց, երբ իր Արարչին տանում էր Երուսաղեմ: Տերը

քաղաք մտավ՝ անցնելով փոփած **հագուստների** և **արմավենու ճյուղերի** վրայով ժողովրդի աղաղակների ներքո, որ հնչում էին Իր ականջներում: Գոնե առնվազն մի պահ Նա Թագավոր է ճանաչվել:

11:9-10. Մարդիկ աղաղակում էին.

1. **«Օվսաննա».** սկզբնապես այս բառը նշանակում էր «Փրկի՛ր, մենք աղաչում ենք», բայց հետո այն դարձավ գովաբանության բացականչություն: Հավանաբար մարդիկ նկատի ունեին «Աղաչում ենք, փրկի՛ր մեզ հռոմեական կեղեքիչներից»:
2. **«Օրհնյալ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով».** սա պարզ խոստովանություն է, որ Հիսուսը խոստացյալ Մեսիան է (Մով. 118:26):
3. **«Օրհնյալ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է Տիրոջ անունով».** նրանք կարծում էին, որ մոտեցել է Թագավորությունը հաստատելու ժամանակը, և Քրիստոսը կնստի Դավթի գահին:
4. **«Օվսաննա բարձունքներում».** սա երկնքի **բարձունքներում** Տիրոջը *փառաբանելու* կամ երկնքի **բարձունքներից փրկություն** ցուցաբերելու կոչ է:

11:11. Հիսուսը **Երուսաղեմ** մտնելուն պես **տաճար** գնաց, բայց ոչ Սրբաբանը, այլ տաճարի գավիթը: Սովորաբար եթադրվում է, որ այն Աստծո տունն էր: Բայց այդ տաճարում Նա տանը չէր, որովհետև քահանաները և ժողովուրդը հրաժարվեցին Իր օրինական տեղը տալ Նրան: Հետևաբար անցողակի **Իր շուրջը նայելով՝ Փրկիչը տասներկու** աշակերտների հետ **Բեթանիա** գնաց: Կիրակի երեկո էր:

Բ. Անպտուղ թզենին (11:12-14)

Այս դեպքը Փրկչի մեկնաբանությունն էր Երուսաղեմում Իրեն ցույց տրված աղմկոտ ընդունելության: Նա հրեա ժողովրդին նայում էր որպես անպտուղ **թզենու**. այն ուներ հավատի դավանության տերևներ, բայց չունեի գեթ մեկ պտուղ: «Օվսաննա» գոչյունը շուտով վերածվելու էր արյունահեղ գոչյունի. «Լսաչի՛ր Նրան»:

Այս հատվածը հասկանալու մի ակնհայտ դժվարություն կա: Հիսուսն անիծեց թզենուն, որովհետև վրան պտուղ չկար, թեև արձանագրության մեջ պարզ ասված է, որ դեռևս **թզի ժամանակը չէր**: Թվում է, թե Հիսուսն անխոհեմությամբ և անհամբերությամբ վարվեց: Բայց մենք գիտենք, որ դա այդպես չէ: Ուստի ինչպե՞ս բացատրել այդ հետաքրքրական դեպքը:

Աստվածաշնչյան հողերի թզենիները տալիս էին վաղահաս ուտելի պտուղներ մինչև տերևների հայտնվելը: Դրանք համարվում էին սովորական բերքի ավետաբերները, ինչն այստեղ նկարագրված է որպես **թզի ժամանակը**: Եթե վաղահաս թզերը չէին հայտնվում, դա նշան էր, որ ավելի ուշ սովորական բերք չէր լինելու: Երբ Հիսուսը Իսրայել եկավ ժողովրդի մոտ, Նա տեսավ տերևները, ինչը խոսում էր իրենց դավանության մասին, բայց Աստծո համար պտուղ չգտավ: Դա խոստում էր առանց իրագործման, դավանություն՝ առանց իրականության: Հիսուսը պտուղ էր փափագում այդ ժողովրդից: Քանի որ վաղահաս պտուղը բացակայում էր, Նա գիտեր, որ այդ անհավատ ժողովրդից ուշահաս պտուղ էլ չէր լինի, այդ պատճառով էլ անիծեց թզենուն: Սա կանխորոշեց այն դատավճիռը, որ վիճակվելու էր Իսրայելին մ.թ. 70թ.-ին:

Սակայն սա չի նշանակում, որ Իսրայելը հավիտենական անպտղության է դատապարտված: Հրեա ժողովուրդը *ժամանակավորապես* է թողնված: Երբ որ Քրիստոսը վերադառնա՝ թագավորելու, ժողովուրդը կվերածնվի և նորից ձեռք կբերի Աստծո բարեհաճությունը:

Սա միակ հրաշքն է, երբ Քրիստոսն անիծեց և ոչ թե օրհնեց, կործանեց կյանքը և ոչ թե վերականգնեց այն: Սա դժվարություն է առաջացնում: Սակայն առարկություններն այստեղ անհիմն են: Արարիչը գերիշխան իրավունք ունի ոչնչացնելու անշունչ առարկան՝ կարևոր դաս սովորեցնելու և դրանով իսկ հավիտենական կործանումից մարդկանց փրկելու համար:

Թեև այս հատվածի մեկնաբանությունը հիմնականում Իսրայելի հետ է կապված,

այն կիրառելի է բոլոր ժամանակների մարդկանց համար, ովքեր համատեղում են մեծախոսությունն ու ցածր վարքը:

Գ. Ծառան մաքրում է տաճարը (11:15-19)

11:15-16. Իր հանրային ծառայության սկզբում Հիսուսը տաճարից դուրս հանեց առևտրականներին (Հովհ. 2:13-22): Այժմ, երբ Նրա ծառայությունը մոտենում էր ավարտին, Նա դարձյալ **տաճարի** բակը մտավ և դուրս հանեց նրանց, ովքեր արարողակարգերից շահույթ էին ստանում: Նա նույնիսկ **թույլ չէր տալիս, որ որևէ մեկը մի անոթ անգամ անցկացնի տաճարի միջով:**

11:17. Միավորելով Եսայու և Երեմիայի մեջբերումները՝ Նա դատապարտեց սրբապղծությունը, անջատողականությունն ու առևտրի հոգին: Աստված նախատեսել էր, որ տաճարը լիներ **աղոթքի տուն բոլոր ազգերի համար** (Ես. 56:7) և ոչ միայն Իսրայելի: Իսկ նրանք այն վերածել էին կրոնական շուկայի, մութ գործարքների և խարդախությունների իրականացման վայրի (Եր. 7:11):

11:18. Դպիրներն ու գլխավոր քահանաները խորապես վիրավորվեցին Նրա մեղադրանքներից: Նրանք ուզում էին Նրան **կործանել**, բայց բացահայտ չէին կարողանում դա անել. հասարակ ժողովուրդն ակնածանքով էր նայում Հիսուսին:

11:19. Երեկոյան **Նա դուրս եկավ քաղաքից:** Բնագրի բայի ժամանակաձևը մատնանշում է, որ դա Նրա սովորությունն էր, հավանաբար ապահովության միտումով: Նա Իր անձի համար չէր վախենում: Մենք պետք է հիշենք, որ Նրա ծառայության մի մասը ոչխարների պահպանությունն էր, այսինքն՝ Իր աշակերտների (Հովհ. 17:6-19): Բացի այդ, Իր կողմից միամտություն կլիներ սահմանված ժամանակից շուտ թշնամիների կամքին հանձնվելը:

Դ. Անպատու թզենու դարը (11:20-26)

11:20-23. Հաջորդ **առավոտյան** Երուսաղեմ գնալու ճանապարհին աշակերտներն

անհիծված թզենու կողքով էին անցնում: Թզենին **արմատից չորացել էր:** Երբ **Պետրոսը** այն հիշեցրեց Տիրոջը, Նա պարզապես ասաց. **«Աստծո հանդեպ հավատ ունեցեք»:** Իսկ ի՞նչ կապ ունեն այս խոսքերը թզենու հետ: Հաջորդող համարները ցույց են տալիս, որ Հիսուսը կոչ էր անում հավատալ, ինչը դժվարություններից ազատվելու միջոց էր: Եթե աշակերտներն **Աստծո հանդեպ հավատ ունեն**, ապա նրանք կարող են հաղթահարել անպտղության խնդիրը և վերացնել լեռան չափի խոչընդոտները:

Սակայն այս համարները մարդուն իրավունք չեն տալիս աղոթելու գերբնական գործություն ունենալու, իր պահանջների կամ սեփական հարմարությունների իրականացման համար: Հավատի յուրաքանչյուր քայլը պետք է Աստծո խոստման վրա հենվի: Եթե գիտենք, որ որոշակի դժվարությունը հեռացնելն Աստծո կամքն է, ապա կարող ենք լիակատար վստահությամբ աղոթել, որ այն կատարվելու է: Իրականում, մենք կարող ենք հավատով աղոթել այն ժամանակ, երբ վստահ ենք, որ մեր փափագը համընկնում է Աստծո կամքի հետ, որ հայտնված է Աստվածաշնչում, կամ երբ ներքին վկայություն ենք ստանում Հոգուց:

11:24. Եթե մեր կյանքն իսկապես Տիրոջ հետ սերտ հաղորդակցություն ունի և Հոգով ենք աղոթում, ապա կարող ենք աղոթքի պատասխանի վերաբերյալ վստահ լինել նախքան պատասխան ստանալը:

11:25-26. Սակայն աղոթքի պատասխան ստանալու հիմնական պայմաններից մեկը ներման հոգին է: Եթե մեր մեջ փայփայում ենք դառնությունը և ուրիշներից վրեժ առնելու փափագ ունենք, ապա չենք կարող ակնկալել, որ Աստված կլսի ու կպատասխանի մեզ: Մենք պետք է **ներենք**, որպեսզի ներվենք: Սա չի վերաբերում մեղքերի իրավաբանական ներմանը դարձի գալու պահից: Դա միայն շնորհով է՝ հավատի միջոցով: Այստեղ խոսքը Աստծո հայրական վերաբերմունքի մասին է Իր զավակների նկատմամբ: Չներելու հոգին կործանում է **Երկնավոր Հոր** հետ հավատացյալի փոխ-

հարաբերությունը և խոչընդոտում օրհնության հոսքին:

Ե. Ծառայի իշխանության հարցը (11:27-33)

11:27-28. Հենց որ Հիսուսը մոտեցավ **տաճարին**, Նրա մոտ եկան կրոնական առաջնորդները և երկու հարց տալով՝ կասկածի տակ դրեցին Նրա իշխանությունը. **1. «Գուի՞նչ իշխանությամբ ես անում այդ բաները», 2. «Եվ ո՞վ տվեց Քեզ այդ իշխանությունը»**, այսինքն՝ տանաբար մաքրելու, թզենին անիծելու և հաղթականորեն Երուսաղեմ մտնելու: Նրանք հույս ունեին Նրան ծուղակը գցելու՝ անկախ դրանից, թե ինչ կպատասխաներ: Եթե Նա հայտարարեր, որ Ինքն Իր մեջ իշխանություն ունի որպես Աստծո Որդի, նրանք կմեղադրեին Նրան հայհոյության մեջ: Եթե ասեր, որ մարդկանց կողմից տրված իշխանություն ունի, նրանք կհեղինակագրեին Նրան: Եթե ասեր, որ Աստծուց է ստացել իշխանությունը, նրանք մարտահրավեր կնետեին այդ հայտարարությանը, քանի որ իրենք իրենց Աստծո կողմից նշանակված ժողովրդի կրոնական առաջնորդներ էին համարում:

11:29-32. Բայց Հիսուսը հարցով պատասխանեց հարցին. Հովհաննես Մկրտիչն Աստծո կողմից լիազորություն ունե՞ր, թե՞ ոչ: **Հովհաննեսի մկրտություն** ասելով՝ ենթադրվում է նրա ամբողջ ծառայությունը: Այդ հարցը նրանց շփոթության մեջ գցեց: Եթե Հովհաննեսի ծառայությունը երկնքից էր, ապա նրանք պիտի արձագանքեին ապաշխարության նրա կոչին: Իսկ եթե համարձակվեին նսեմացնել Հովհաննեսի ծառայությունը, ապա ժողովրդի գայրույթը կրորբորեին, ովքեր **Հովհաննեսին** դեռևս համարում էին Աստծո խոսնակ:

11:33. Երբ նրանք հրաժարվեցին պատասխանել՝ խոստովանելով, որ չգիտեն, Տերը հրաժարվեց նրանց հետ քննարկել Իր իշխանության հարցը: Քանի դեռ նրանք չէին կամենում ընդունել նախակարապետի իշխանությունը, հազիվ թե ճանաչեին հենց Իր՝ Թագավորի ավելի բարձր իշխանությունը:

2. Չար մշակների առակը (12:1-12)

12:1. Տեր Հիսուսը չղադարեցրեց հրեական իշխանությունների հետ Իր գրույցը, նույնիսկ երբ հրաժարվեց պատասխանել նրանց հարցին: **Առակի** ձևով Նա նրանց սուր մեղադրանք ներկայացրեց Աստծո Որդուն մերժելու համար: **Մի մարդ (Աստված Ինքը) այգի տնկեց: Այգին** Իսրայելի զբաղեցրած առանձնահատուկ դիրքն էր: **Ցանկապատը** համարվում է Մովսեսի օրենքը, որ առանձնացնում էր Իսրայելին հեթանոսներից և պահպանում էր նրանց՝ որպես Աստծո ընտրյալ ժողովրդի: **Մշակները** կրոնական առաջնորդներն էին, ինչպիսիք են՝ փարիսեցիները, դավիդները և երեցները:

12:2-5. Աստված բազմիցս ուղարկեց Իր ծառաներին ու մարգարեներին Իսրայել ժողովրդի մոտ՝ հաղորդակցություն, սրբություն և սեր փնտրելով: Բայց ժողովուրդը հալածեց մարգարեներին և նրանցից մի քանիսին **սպանեց**:

12:6-8. Վերջապես, Աստված Իր սիրելի **Որդուն** ուղարկեց: Նրանք, անշուշտ, պիտի **հարգեին** Նրան: Բայց դա տեղի չունեցավ: Նրանք Նրա դեմ դավադրություն ծրագրեցին և ի վերջո **սպանեցին**: Այդ խոսքերով Տերը կանխատեսում էր Իր սեփական մահը և մատնացույց էր անում Իրեն սպանողներին:

12:9. Ի՞նչ է անելու Աստված այդպիսի չար մարդկանց հետ: Նա **կկործանի** նրանց, իսկ առանձնահատուկ տեղը **ուրիշներին կտա**: «**Ուրիշներ**» բառը կարելի է վերագրել հեթանոսներին կամ վերջին օրերում ապաշխարած Իսրայելի մնացորդին:

12:10-11. Այս բոլորը կատարվեց հինկտակարանյան գրքերի իրականացման համար: Օրինակ՝ Մով. 118:22-23 մարգարեանում է, որ հրեա առաջնորդները **մերժելու** են Մեսիային՝ հոգուտ իրենց ծրագրերի: Նրանք տեղ չեն գտնելու **անկյունաքարի** համար: Բայց Իր մահից հետո Նա հարություն է առնելու մեռելներից և Աստծո կողմից առանձնահատուկ տեղ է գրավելու: Նա լինելու է Աստծո շինության **անկյան գուլիար**:

12:12. Հրեա առաջնորդները հասկացան առակի իմաստը: Նրանք հավատում էին, որ 118-րդ Սաղմոսը Մեսիայի մասին է խոսում: Այժմ նրանք լսեցին, թե ինչպես Տեր Հիսուս Քրիստոսն այն հինքն Իր համար կիրառեց: Նրանք ուզում էին բռնել Նրան, բայց դեռևս ժամանակը չէր: **Ժողովուրդը** կարող էր Հիսուսի կողմն անցնել: Այսպիսով, կրոնական առաջնորդները ժամանակավորապես **թողեցին Նրան:**

Է. Կայսրինը՝ կայսրին, իսկ Աստծունը՝ Աստծուն (12:13-17)

12-րդ գլուխը փարիսեցիների, հերովդեասականների և սադուկեցիների՝ Տեր Հիսուսի վրա հարձակումների մասին է: Այս գլուխը հարցերի գլուխ է (տե՛ս 9, 10, 14, 15, 16, 23, 24, 26, 28, 35, 37 համարները):

12:13-14. Փարիսեցիները և հերովդեասականները, որ անհաշտելի թշնամիներ էին, այժմ միասին էին: Նրանց միավորել էր Փրկչի հանդեպ ունեցած ընդհանուր ատելությունը: Նրանք փորձում էին Նրան ստիպել ասել մի այնպիսի բան, որը կկարողանային Նրա դեմ օգտագործել: Ուստի, հարցրին Նրան, թե արդյոք **օրինավոր է հռոմեական իշխանությանը տուրք տալը:**

Հրեաներից ոչ մեկին *դուր չէր գալիս* հեթանոսների իշխանության ներքո ապրելը: Փարիսեցիները կրքոտությամբ ատում էին նրանց, մինչդեռ հերովդեասականներն ավելի հանդուրժողական դիրք ունեին: Եթե Հիսուսը բացահայտ աջակցեր **կայսրին** տուրք տալուն, ապա շատ հրեաներ կհեռանային Իրենից: Եթե Նա խոսեր ընդդեմ Կեսարի, ապա նրանք կիրախրեին հռոմեական իշխանությանը, որ Նրան ձերբակալեն և դատեն որպես դավաճանի:

12:15-16. Հիսուսը խնդրեց, որ որևէ մեկն Իրեն մեկ **դահեկան** բերի: Ըստ երևույթին, Նա Անձամբ չունեւ: Մետաղադրամի վրա պատկերված էր Տիրերիոս կայսրը՝ ի հիշեցում այն բանի, որ հրեաները նվաճված, գերված ժողովուրդ են: Ինչո՞ւ էին նրանք այդպիսի իրավիճակում հայտնվել: Մեղքի և անհավատարմության պատճառով: Նրանք պետք է խոնարհ լինեին՝ ըն-

դունելու, որ իրենց կողմից օգտագործվող դրամների վրա պատկերված էր հեթանոս բռնապետը:

12:17. Հիսուսը նրանց ասաց. **«Կայսրինը տվեք կայսրին և Աստծունը՝ Աստծուն»:** Նրանց մեծ ձախողումն առաջին շրջանում չէր կատարվել, այլ երկրորդ: Թեև դժկամությամբ, բայց նրանք վճարում էին հռոմեացիների հարկերը, բայց Աստծո իրավունքներն իրենց կյանքում անտեսված էին: Մետաղադրամի վրա պատկերված էր կայսրի պատկերը, հետևաբար այն պատկանում էր կայսրին: Մարդը Աստծո պատկերն է կրում. Աստված նրան Իր պատկերով և նմանությամբ ստեղծեց (Ծնն. 1:26-27), հետևաբար մարդը Աստծուն է պատկանում:

Հավատացյալը պետք է ենթարկվի ու աջակցի իշխանությանը, որի ղեկավարության ներքո ապրում է: Նա չպետք է չարախոսի երկրի կառավարության մասին կամ մասնակցի իշխանությանը տասպալելու գործին: Նա պարտավոր է հարկերը վճարել և աղոթել բոլոր ղեկավարների համար: Եթե նրան կոչ են անում նմանատիպ ինչ-որ բան անել, որը կխախտի նրա հավատարմությունը Աստծո հանդեպ, նա պետք է հրաժարվի և պատիժը կրի: Աստծո պահանջները պետք է առաջին տեղում լինեն: Այդ պահանջներին հավատարիմ մնալով՝ քրիստոնյաները միշտ պետք է բարի վկայություն ունենան աշխարհի համար:

Ը. Սադուկեցիները և մեռելների հարության մասին նրանց հանելուկը (12:18-27)

12:18. Սադուկեցիներն այն օրերի ազատախոհները կամ իրապաշտներն էին: Նրանք ծաղրում էին մարմնական **հարության** գաղափարը: Այդ գաղափարը ծաղրելու միտումով նրանք Տիրոջ մոտ եկան մի անհեթեթ պատմությամբ:

12:19. Նրանք Հիսուսին հիշեցրին, որ **Մովսեսի** օրենքը հատուկ խնամք էր նախատեսել Իսրայելի այրիների համար: Ընտանիքի ազգանունն ու սեփականությունը պահելու համար օրենքը նախատեսել էր,

որ եթե տղամարդն անզավակ մեռնի, ապա **նրա եղբայրը** պետք է ամուսնանա նրա այրու հետ (2 Օր. 25:5-10):

12:20-23. Այստեղ ներկայացվում է երևակայական պատմություն մի կնոջ մասին, որ հերթականությամբ **յոթ եղբայրների** հետ ամուսնացավ: **Եվ վերջում** նա էլ **մեռավ**: Եվ այստեղ նրանք «խելացի» հարց տվեցին. «**Ուրեմն հարության ժամանակ... նրանցից որի՞ կինը պիտի լինի**»:

12:24. Նրանք իրենց մասին շատ մեծ կարծիք ունեին. Տերը ցույց տվեց նրանց խորը տգիտությունը, քանի որ նրանք չգիտեին թե՛ **Գրքերը**, որ սովորեցնում են մեռելների հարության մասին, և թե՛ **Աստծո գորությունը**, որ մեռելներին հարություն է տալիս:

12:25. Նախևառաջ նրանք պետք է իմանային, որ ամուսնական փոխհարաբերությունները երկնքում չեն շարունակվում: Հավատացյալները երկնքում ճանաչելու են մեկը մյուսին և չեն կորցնելու իրենց տարբերությունը որպես տղամարդ ու կին, **բայց ո՛չ կին կառնեն և ո՛չ էլ մարդու կգնան**: Այս առումով, նրանք լինելու են **հրեշտակների նման, որ երկնքում են**:

12:26-27. Այնուհետև Տերը սաղուկեցիներին (ովքեր Մովսեսի գրքերն ավելի բարձր էին գնահատում ՀՎ-ի մյուս գրքերից) հիշեցրեց **Մովսեսի** հետ կատարված այրվող մորենու դեպքը (Ել. 3:6): Այնտեղ Աստված Իր մասին խոսում էր որպես **Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը**: Փրկիչն օգտագործեց սա, որպեսզի ցույց տա, որ **Աստված մեռելների Աստվածը չէ, այլ ողջերի**:

Բայց ինչպե՛ս: Մի՞թե Աբրահամը, Իսահակը և Հակոբը մահացած չէին, երբ Աստված հայտնվեց Մովսեսին: Այո՛, նրանց մարմինները գտնվում էին Քերթունամ Մաքսիելայի այրում: Ուրեմն ինչպե՛ս է Աստված ողջերի Աստվածը: Փաստարկները, ըստ երևույթին, սրանք են.

1. Աստված նահապետներին խոստում էր տվել ինչպես հողերի, այնպես էլ Մեսիայի վերաբերյալ:

2. Այդ խոստումները չիրականացան իրենց կյանքի օրոք:

3. Երբ Աստված խոսեց Մովսեսի հետ այրվող մորենու մոտ, նահապետների մարմինները գտնվում էին գերեզմանի մեջ:

4. Եվ Աստված Ինքն Իր մասին խոսեց որպես ողջերի Աստված:

5. Նա պիտի կատարեր Աբրահամին, Իսահակին և Հակոբին տված խոստումները:

6. Հետևաբար, ըստ մեզ հայտնի Աստծո բնության, հարությունը բացարձակ անհրաժեշտություն է:

Եվ այսպես Տերը սաղուկեցիներին հրաժեշտ տալուց ասաց. «**Հետևաբար, դուք մեծապես սխալվում եք**»:

Թ. Մեծ պատվիրանը (12:28-34)

12:28. Դպիրներից մեկը, որ տպավորվել էր քննադատների **հարցերին** ուղղված մեր Տիրոջ ճշգրիտ մեկնաբանումից, **հարցրեց Նրան, թե ո՞րն է պատվիրաններից ամենակարևորը**: Դա ազնիվ հարց էր, և որոշ առումով կյանքի ամենակարևոր հարցը: Իրականում նա խնդրում էր մարդու գոյության գլխավոր նպատակի սեղմ ձևակերպումը:

12:29. Սկզբում Հիսուսը մեջբերում կատարեց «Շննա»-յից՝ հրեական հավատի խորհրդանիշ 2 Օր. 6:4-ից. «**Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է**»:

12:30. Այնուհետև Նա ամփոփեց մարդու պատասխանատվությունն Աստծո առջև: **Սիրել** Նրան ամբողջ սրտով, անձով, մըտքով և գորությամբ: Աստված մարդու կյանքում պիտի զբաղեցնի բարձրագույն տեղը: Չպետք է թույլ տալ, որ մեկ այլ սեր մրցակցի Աստծո սիրո հետ:

12:31. Տասը պատվիրանների երկրորդ մասը մեզ սովորեցնում է **սիրել** մեր **դրացուն մեր անձի պես**: Մենք Աստծուն պետք է սիրենք *ավելի* շատ, քան ինքներս մեզ, իսկ մեր դրացուն՝ մեր անձի *պես*: Եվ այսպես, կյանքի իրական իմաստը նախևառաջ Աստծուն սիրելն է, իսկ հետո՝ մյուս-

ներին: Խոսքը չի վերաբերում նյութակա-
նին: Կարևորը Աստված է, և կարևոր են
մարդիկ:

12:32-33. Դպիրն անկեղծորեն համաձայ-
նեց այս բացատրության հետ՝ հստակ գո-
վասանքի արժանացնելով, որ **սերն** Աստծո
և **դրացու** հանդեպ ավելի կարևոր է, քան
ծեսերը: Նա հասկանում էր, որ մարդիկ
կարող են կրոնական արարողություններ
անել և ուրիշներին ցուցադրել իրենց բա-
րեպաշտությունը, բայց ներքին, անձնական
սրբություն չունենալ: Նա խոստովանեց, որ
Աստված ուշադրություն է դարձնում ինչ-
պես մարդու հոգևոր վիճակին, այնպես էլ
նրա արարքներին:

12:34. Եվ Հիսուսը, լսելով այդ ուշագրավ
խոսքերը, դպիրին ասաց, որ նա **հեռու չէ
Աստծո թագավորությունից**: Թագավո-
րության ճշմարիտ հպատակները չեն փոր-
ձում խաբել Աստծուն, մարդկանց կամ ի-
րենք իրենց՝ քողարկվելով արտաքին կրո-
նասիրությամբ: Հասկանալով, որ Աստված
նայում է սրտերին, նրանք գալիս են Նրա
մոտ՝ մեղքից մաքրվելու և Նրա համար
հաճելի կյանքով ապրելու գործության ա-
կրկնկալիքով:

Սրանից հետո **այլևս ոչ ոք չէր համար-
ձակվում** սաղրիչ հարցերով Տիրոջը ծու-
ղակը գցել:

Ժ. Դավթի Որդին Դավթի Տերն է (12:35-37)

Դպիրները միշտ սովորեցնում էին, որ
Մեսիան լինելու էր **Դավթի** հետնորդը:
Թեև սա ճիշտ է, բայց այն ամբողջ ճշմար-
տությունը չէ: Տանարի բակում Տեր Հիսուս
Քրիստոսն Իր շուրջը հավաքվածներին
ուղղեց այս դժվար հարցը, որն առաջա-
նում է Դավթի Մղմ. 110:1-ում Մեսիայի՝
որպես իր Տիրոջ մասին գրվածից: Ինչպե՞ս
կարող է դա լինել: Ինչպե՞ս կարող էր Մե-
սիան միաժամանակ լինել **Դավթի Որդին**
և նրա **Տերը**: Մեզ համար պատասխանը
պարզ է: Մեսիան թե՛ Մարդ է և թե՛ Աստ-
ված: Որպես **Դավթի Որդի**՝ Նա Մարդ է,
որպես **Դավթի Տերը**՝ Նա Աստված է:

Եվ շատ մարդիկ ուրախությամբ լսում

էին Նրան: Ակնհայտ է, որ ուզում էին այդ
փաստն ընդունել, եթե նույնիսկ այն լիովին
հասկանալի չէր իրենց համար: Սակայն
փարիսեցիների և դպիրների մասին ոչինչ
չի ասվում: Նրանց լռությունը չարագույժ
էր:

Ի. Զգուշացում դպիրներից (12:38-40)

12:38-39. Դպիրների կրոնասիրությունն
արտաքուստ էր: Նրանք սիրում էին **փա-
ռավոր հանդերձներով** շրջել: Սա տարբե-
րակում էր նրանց հասարակ ժողովրդի
մեջ և սրբանման տեսք էր տալիս: Նրանք
սիրում էին, որ իրենց ողջունեին հասարա-
կական վայրերում՝ դիմելով վերամբարձ
տիտղոսներով: Դա մխիթարում էր նրանց
ես-ը: Նրանք ձգտում էին **ժողովարաննե-
րում** պատվավոր տեղերը զբաղեցնել, կար-
ծես թե այդ զբաղեցրած տեղերը կարող
էին ինչ-որ կապ ունենալ բարեպաշտույթ-
յան հետ: Նրանք ոչ միայն կրոնական գե-
րազանցության էին ձգտում, այլև փափա-
գում էին սոցիալական տարբերություններ
ունենալ: Նրանք ուզում էին **խնջույքի
տներում պատվավոր տեղերը**:

12:40. Ներքուստ նրանք լի էին ազահու-
թյամբ և կեղծավորությամբ: Որպեսզի
հարստանան, գողանում էին **որբևայրի-
ների** սեփականությունը և գոյության մի-
ջոցները՝ ձևացնելով, թե գումարը Տիրոջ
համար է: Նրանք **երկար աղոթքներ** էին
արտասանում՝ ուռնացված, վերամբարձ,
փառասիրությամբ լի, աղոթքներ, որ սոսկ
բառերի հավաքածու էին: Այլ կերպ ասած,
նրանց դուր էր գալիս *յուրօրինակությունը*՝
փառավոր հանդերձները, *ժողովրդականու-
թյունը*՝ բարևներ ընդունելը, *ուշագրավույթ-
յունը*՝ առաջին պոռոները, *առաջնությունը*՝
պատվավոր տեղերը, *ունեցվածքը*՝ որբևայ-
րիների տները, *ձևական բարեպաշտությու-
նը*՝ երկար աղոթելը:

Լ. Որբևայրու երկու լուման (12:41-44)

Դպիրների ազահույթյան վառ հակա-
պատկերը որբևայրու նախանձախնդիր
ծառայությունն էր: Նրանք «ուտում էին»
որբևայրիների տները, իսկ այս մեկն **իր բո-**

լոր ունեցածը Տիրոջ համար տվեց: Այս դեպքը ցույց է տալիս Տիրոջ ամենագիտությունը: Տեսնելով հարուստների գցած բավական մեծ նվիրատվությունները տաճարի զանձանակի մեջ՝ Նա գիտեր, որ նրանց տվածը գոհաբերություն չէ: Նրանք **իրենց ավելցուկից էին գցում**: Իմանալով նաև, որ որբևայրու գցած երկու լուծան ներկայացնում էր **իր ամբողջ ապրուստը**՝ Նա հայտարարեց, որ որբևայրին ավելի շատ գցեց զանձանակի մեջ, քան բոլորը միասին: Դրամական արժեքով նա շատ քիչ գցեց: Բայց Տերը գնահատում է մեր շարժառիթը, մեր միջոցները և այն, թե որքան ենք թողնում մեզ: Սա մեծ քաջալերություն է նրանց համար, որոնց նյութական ունեցվածքը քիչ է, բայց Աստծո համար գոհաբերելու փափագը՝ մեծ:

Չարմանալին այն է, որ մենք կարող ենք հավանություն տալ որբևայրու գործին և համաձայնել Փրկչի կարծիքի հետ, բայց չհետևել այդ կնոջ օրինակին: Եթե մենք իրականում հավատալիք այն բանին, ինչին մեր խոսքերով հավատում ենք, ապա մենք էլ նույնը կանեինք, ինչ որ նա արեց: Այդ նվերի միջոցով նա արտահայտեց իր համոզմունքը, որ ամեն բան Տիրոջն է պատկանում. Նա արժանի է բոլոր բաներին և պիտի ունենա բոլորը: Այսօր շատ քրիստոնյաներ քննադատում են նրան սեփական ապագայի մասին չհոգալու համար: Արդյո՞ք նրա արարքը խոսում է անհետատեսության և անխոհեմության մասին: Գուցե սրա հետ շատերը կհամաձայնեն: Սակայն սրանում է կայանում հավատի կյանքը. բոլորը տալ Աստծո գործի համար հիմա և ապագան Նրան վստահել: Մի՞թե Նա չխոստացավ հոգ տանել նրանց համար, ովքեր նախ փնտրում են Աստծո Թագավորությունը և Նրա արդարությունը (Մատթ. 6:33):

Արմատակա՞ն է, հեղափոխակա՞ն է: Զանի դեռ չենք տեսնում, որ Քրիստոսի ուսմունքն իր էությանը արմատական է և հեղափոխական, մեզ համար անհասկանալի կլինի Նրա ծառայության հիմնական իմաստը:

IV. ՃԱՌԱՅՅԻ ՃԱՌԸ ՁԻԹԵՆՅԱՑ ԼԵՌԱՆ ՎՐԱ (13-րդ գլ.)

Ա. Հիսուսը կանխատեսում է տաճարի ավերումը (13:1-2)

13:1. Երբ Տեր Հիսուսն Իր մահից առաջ վերջին անգամ դուրս էր գալիս **տաճարից, աշակերտներից մեկը** փորձեց արթնացնել Նրա խանդավառությունը տաճարի շքեղության նկատմամբ և ուշադրություն դարձրեց շրջապատող ճարտարապետության վրա: Աշակերտներին հիացնում էր հսկայական քարերով կառուցված ճարտարապետական այդ նվաճումը:

13:2. Փրկիչը նկատեց, որ այդ բոլորը շուտով ավերվելու է: **Քարը քարի վրա պիտի չմնա**, երբ հռոմեական բանակը Երուսաղեմ ներխուժի մ.թ. 70թ.-ին: Ինչո՞ւ հրապուրվել մի բանով, որ ընդամենն անցողիկ ստվեր է:

Բ. Նեղությունների սկիզբը (13:3-8)

Ձիթենյաց լեռան վրա Իր ճառի մեջ Տերն աշակերտների ուշադրությունը կենտրոնացրեց ավելի կարևոր իրադարձությունների վրա: Մարգարեություններից մի քանիսը, թվում է, վերաբերում են մ.թ. 70թ.-ի Երուսաղեմին: Սակայն դրանց մեծ մասը պետք է վերագրել ավելի ուշ ժամանակաշրջանի՝ Մեծ նեղության ժամանակաշրջանին և Քրիստոսի իշխանությամբ ու փառքով վերադարձին: Քրիստոնյաների *նշանաբանը*, որ կիրառելի է բոլոր ժամանակների հավատացյալների համար, հետևյալն է. 1. *Չգուշացե՛ք* (հ. 5, 23-33), 2. *չտագնասպե՛ք* (հ. 7), 3. *մինչև վերջ համբերե՛ք* (հ. 13), 4. *արդյո՞նք* (հ. 18, 33), 5. *արդո՞ւն մնացե՛ք* (հ. 9, 33, 35, 37):

13:3-4. Ճառը սկսվեց **Պետրոսի, Հակոբոսի, Հովհաննեսի և Անդրեասի** հարցից: **Ե՞րբ է** տաճարն ավերվելու, և **ո՞րն է լինելու** մարգարեացած դեպքերին նախորդող **նշանը**: Տիրոջ պատասխանը վերաբերում էր տաճարի ավելի ուշ ավերմանը, որը կատարվելու է Մեծ նեղության ժամանակ՝ նախքան Իր երկրորդ գալուստը:

13:5-6. Առաջին՝ նրանք պետք է **զգուշանան**, որ **չլինի թե մեկը** մոլորեցնի նրանց՝ պնդելով, թե ինքը Մեսիան է: Հայտնվելու են շատ սուտ քրիստոսներ, որը հաստատում է բազմաթիվ աղանդների ի հայտ գալը, և որոնցից յուրաքանչյուրն ունի սեփական հակաքրիստոսը:

13:7-8. Երկրորդ՝ չպետք է **պատերազմների և պատերազմների լուրերը** մեկնաբանել որպես ժամանակների վերջի նշան: Բոլոր միջանկյալ ժամանակաշրջանների ընթացքում տեղի են ունենալու ազգամիջյան գոտություններ: Բացի այդ՝ բնության մեջ տեղի են ունենալու մեծ աղետներ՝ **երկրաշարժեր, սովեր, խռովություններ**: Մրանք դեռ նախաձեռնողյան ցավերն են, որ ազդարարելու են աննախադեպ երկունքի ցավերի ժամանակը:

Գ. Աշակերտների հալածանքը (13:9-13)

13:9. Երրորդ՝ Տերը մարգարեացավ, որ նրանք, ովքեր մշտապես վկայելու են Իր մասին, մեծ փորձությունների միջով պիտի անցնեն: Նրանց մատնելու են կրոնական և քաղաքացիական ատյաններին:

Թեև այս համարը կարելի է վերագրել քրիստոնեական վկայության բոլոր ժամանակներին, այդուհանդերձ այն հատուկ ձևով մատնանշում է 144,000 հրեա հավատացյալների ծառայությունը, ովքեր նախքան Քրիստոսի թագավորելը Ավետարանը պիտի տանեն աշխարհի բոլոր ազգերին:

13:10. Այս համարը *չպետք է* օգտագործվի սովորեցնելու, որ **նախ Ավետարանը պիտի քարոզվի համաշխարհայինից առաջ**: Աստծո Խոսքը *պետք է* քարոզել ամբողջ աշխարհում, և այն հավանաբար *քարոզվելու է*: Բայց ասել, որ այն *պետք է* քարոզված լինի, նշանակում է հայտարարել մի բան, որ Աստվածաշունչը չի նշում: Այս մարգարեությունը կարող է չկատարվել մինչև Քրիստոսի գալը Իր սուրբերի համար. Նա կարող է գալ որևէ պահի:

13:11. Տերը խոստացավ, որ ատյան տարվող հավատացյալները, որոնց հալածելու են Իր անվան համար, պաշտպանության

ժամանակ Աստծո կողմից օգնություն են ստանալու: Նրանք կարիք չունեն նախապես պատրաստելու իրենց փաստարկը, հավանաբար նրանք դրա համար ժամանակ չեն ունենալու: **Սուրբ Հոգին** նրանց տալու է ճիշտ բառերը: Այս խոստումը չի կարելի օգտագործել որպես այսօր քարոզին և ավետարանչությանը չպատրաստվելու պատրվակ. այն գերբնական օգնության գրավականն է ճգնաժամի պահերին: Այդ խոստումը նահատակների համար է, ոչ թե ծառայողների:

13:12-13. Նեղության օրերի ևս մեկ նշան. հաճախակի դավաճանություն նրանց հանդեպ, ովքեր հավատարիմ են Փրկչին: Ընտանիքի անդամներն իրենց հավատացյալ բարեկամների դեմ պիտի ելնեն: Աշխարհ է հորդելու հակաքրիստոնեական զգացումների մեծ ալիք: Տեր Հիսուս Քրիստոսին հավատարիմ մնալու համար խիզախություն է պետք. **ով մինչև վերջ համբերի, պիտի փրկվի**: Սա չի նշանակում, որ համբերողը իր տոկոսության համար պիտի հավիտենական փրկություն ստանա: Դա կլիներ Ավետարանի խեղաթյուրում: Սա նաև չի նշանակում, որ Մեծ նեղության ժամանակ հավատարիմ քրիստոնյաներն ազատվելու են ֆիզիկական մահից, քանի որ կարդում ենք, որ շատերն իրենց արյունով են կնքելու իրենց վկայությունը: Սա, հավանաբար նշանակում է, որ մինչև վերջ կայունությունը ծառայելու է որպես իրական փրկության ապացույց, այսինքն՝ *բնութագրելու է* նրանց, ովքեր իսկապես *փրկված են*:

Գ. Մեծ նեղությունը (13:14-23)

13:14-18. 14-րդ համարը նշում է նեղությունների ժամանակաշրջանի կեսը՝ *Մեծ* նեղության սկիզբը: Մենք սա հասկանում ենք, երբ այս հատվածը համեմատում ենք **Գան. 9:27-ի** հետ: Այդ ժամանակ Երուսաղեմի տաճարում տեղադրելու են մի մեծ նոդկալի կուռք: Մարդիկ ստիպված են լինելու դրան երկրպագել կամ մեռնել: Ճշմարիտ հավատացյալները, իհարկե, հրաժարվելու են:

Այդ կուռքի տեղադրումը ազդարարելու

է մեծ հալածանքի սկիզբը: Աստվածաշունչ կարդացողները և նրան հավատացողներն իմանալու են, որ **Հրեաստանից** փախչելու ժամանակը եկել է: Նրանք նույնիսկ անձնական իրերը վերցնելու ժամանակ չեն ունենալու: Հաստկապես դժվար իրավիճակում են հայտնվելու **հղիները** և **ստնտու** մայրերը: Ավելի վտանգավոր պիտի լինի, եթե փախուստը **ձմռանը** տեղի ունենա:

13:19. Դա լինելու է **Մեծ նեղության** ժամանակաշրջանը, ինչպիսին երբեք չի եղել անցյալում և չի կրկնվի ապագայում: Դա *Մեծ նեղությունն է:* Այստեղ Տեր Հիսուս Քրիստոսը չի խոսում սովորական նեղությունների մասին, որոնց հանդիպում են բոլոր ժամանակների հավատացյալները: Այդ ժամանակաշրջանը բացառիկ է իր նեղությունների խորությամբ:

Ուշադրություն՝ նրաձրեք, որ նեղությունը հիմնականում վերաբերելու է հրեաներին: Մենք կարդում ենք տաճարի (հ. 14, հմմտ. Մատթ. 24:15) և Հրեաստանի մասին (հ. 14): Դա Հակոբի նեղության ժամանակն է (Եր. 30:7): Այստեղ Եկեղեցին չի դիտարկվում: Այն երկինք է վերցվելու նախքան Տիրոջ օրվա սկսվելը (1 Թես. 4:13-18, հմմտ. 1 Թես. 5:1-3):

13:20. Այդ օրերին Աստծո բարկության գավաթը թափվելու է աշխարհի վրա: Դրանք լինելու են աղետների, քաոսի և արյունահեղության օրեր: Փաստորեն, սպանություններն այնքան մասսայական են լինելու, որ Աստված գերբնական ձևով կրճատելու է ցերեկվա տևողությունը, այլապես *ոչ ոք* ողջ չի մնա:

13:21-22. Մեծ նեղության ժամանակաշրջանը դարձյալ դառնալու է **սուտ** մեփայի վերեքի վկան: Մարդիկ այնքան հուսահատված են լինելու, որ դիմելու են ցանկացած մարդու, ով կապահովի իրենց անվտանգությունը: Բայց հավատացյալները պետք է հիշեն, որ Քրիստոսը չի հայտնվելու լռությամբ կամ առանց զգուշացման: Եթե նույնիսկ այդ **սուտ քրիստոսները** գերբնական հրաշքներ անեն, ինչը անելու են, **ընտրյալները** չեն խաբվելու. նրանք հասկանալու են, որ այդ հրաշքները սա-

տանայի կողմից են ոգեշնչված: Հրաշքները պարտադիր չէ, որ աստվածային ծագում ունենան: Դրանք ներկայացնում են գերմարդկային շեղումները բնության հայտնի օրենքներից, բայց նրանք կարող են ներկայացնել նաև սատանայի, հրեշտակների և դևերի աշխատանքը: Անօրենը սատանայից զորություն է ստանալու հրաշքներ անելու համար (2 Թես. 2:9):

13:23. Ուստի հավատացյալները պետք է **զգույշ լինեն** և հիշեն նախազգուշացման մասին:

Ե. Երկրորդ գալուստը (13:24-27)

13:24-25. **Այդ նեղությունից հետո** երկրներում տեղի են ունենալու ապշեցուցիչ խախտումներ: Խավարը պարուրելու է երկիրը ցերեկ ու գիշեր: **Երկնքի աստղերը պիտի ընկնեն ու երկնքի զորությունները պիտի շարժվեն** (զորությունները, որ պահում են երկնային մարմինները ուղեծրի վրա):

13:26-27. Այնուհետև սարսափահար մարդիկ **պիտի տեսնեն** երկիր վերադարձող **Մարդու Որդուն** այս անգամ ոչ թե որպես հասարակ Նագովրեցի, այլ փառավոր Հաղթող: Նա գալու է **ամպերով**՝ բյուրավոր հրեշտակային էակների և փառավորված արբերի ուղեկցությամբ: Դա լինելու է աննկարագրելի զորության և շացուցիչ փառքի տեսարան: Նա պիտի ուղարկի Իր հրեշտակներին և **պիտի հավաքի Իր ընտրյալներին**, այսինքն՝ նրանց, ովքեր ընդունել էին Իրեն՝ որպես Տիրոջ և Փրկչի նեղության ժամանակաշրջանում: Երկրի չորս կողմերից՝ Չինաստանից մինչև Կոլումբիա, նրանք գալու են, որպեսզի վայելեն Իր հազարամյա թագավորության զարմանալի շնորհները երկրի վրա: Սակայն մինևույն ժամանակ պիտի կործանվեն Նրա թշնամիները:

2. Թզենու առակը (13:28-31)

13:28. Թզենին հրեա ժողովրդի խորհրդապատկերն է կամ տիպը: Հիսուսն այստեղ ցույց տվեց, որ մինչև Իր երկրորդ գալուստը թզենու ճյուղերը փափկելու են և **սկսելու են տերևներ դուրս գալ:**

1948թ.-ին կազմավորվեց Իսրայելի անկախ պետությունը: Այժմ այդ երկիրը շատ ավելի ազդեցություն ունի համաշխարհային իրադարձությունների վրա, քան իր չափերն են: Իսրայելի մասին կարելի է ասել, որ նա սկսել է տերևներ դուրս տալ: Դեռևս պտուղ չունի. փաստորեն, ոչ մի պտուղ չի լինի, մինչև Մեսիան չվերադառնա մի ժողովրդի մոտ, որ կամենում է Նրան ընդունել:

13:29. Իսրայելի պետության կազմավորումը և զարգացումը մեզ մատնանշում են, որ Թագավորը²¹ «**մոտ է, դռների մոտ**»: Եթե մոտ է Նրա իշխանությունը, ապա որքան ավելի մոտ է Նրա գալուստը Եկեղեցու համար:

13:30. Հաճախ այս համարն այսպես են հասկանում, թե այս գլխի բոլոր մարգարեությունները տեղի են ունեցել դեռևս Քրիստոսի օրոք ապրող մարդկանց կյանքում: Սակայն համարի այդպիսի մեկնաբանությունը սխալ է, որովհետև շատ իրադարձություններ, հատկապես 24-27-րդ համարներում նկարագրվածները, պարզապես այդ ժամանակ տեղի չեն ունեցել: Մյուսներն այս համարը վերագրում են այն **ազգին**, որ ապրելու է թզենու տերևները երևալու ժամանակ, այսինքն՝ մի սերունդ, որի օրոք կազմավորվեց Իսրայել պետությունը (1948թ.-ին), տեսնելու է երկրորդ գալուստը: Մենք նախընտրում ենք երրորդ տեսակետը: **Այս ազգը** կարող է նշանակել «այս սերունդը»: Մեր կարծիքով, այդ բառը նշանակում է «այն հրեական ցեղը, որը բնութագրվում է անհավատությամբ և Մեսիային մերժելով»: Պատմությունը վկայում է այն մասին, որ «այս ազգը» դեռևս *չի* անցել: Հրեա ժողովուրդը ոչ միայն գոյատևեց որպես առանձին ազգ, այլև շարունակեց իր մեջ արմատացած խորը թըշնամությունը Տեր Հիսուս Քրիստոսի նկատմամբ: Հիսուսը կանխատեսել էր, որ այդ ժողովրդի ազգային առանձնահատկությունները չեն փոխվելու մինչև Իր երկրորդ գալուստը:

13:31. Մեր Տերն ընդգծեց Իր կանխատեսումներից յուրաքանչյուրի բացարձակ

ստուգությունը: Մթնոլորտային **երկինքը** և աստղային **երկինքը կանցնեն**: Երկիրն ինքնին կործանվելու է: Սակայն Նրա ասած յուրաքանչյուր խոսքը կատարվելու է:

Է. Օրը և ժամը հայտնի չեն (13:32-37)

13:32. Հիսուսն ասաց. «**Այդ օրվա և այդ ժամի մասին ոչ ոք չգիտի, ո՛չ հրեշտակները, որ երկնքում են, և ո՛չ էլ Որդին, այլ՝ միայն Հայրը**»: Լավ հայտնի է, որ այդ համարը օգտագործել են Ավետարանի թղթամիները որպես ապացույց այն մասին, որ Հիսուսը մեզ նման սահմանափակ գիտելիք ունեցող Մարդ էր: Այն նաև օգտագործել են անկեղծ, բայց մոլորված հավատացյալները, որպեսզի ցույց տան, որ Հիսուսը զրկվեց Իր աստվածային հատկություններից, երբ աշխարհ եկավ որպես Մարդ:

Այս մեկնաբանություններից ոչ մեկն էլ ճիշտ չէ: Հիսուսը եղել է և է միաժամանակ թե՛ Աստված և թե՛ Մարդ: Նա ուներ աստվածության բոլոր հատկանիշները և կատարյալ մարդու բոլոր հատկանիշները: Ճիշտ է, Նրա աստվածությունը թաքնված էր մարդկային մարմնում: Բայց, այնուամենայնիվ, այն կար: Նա երբեք, ոչ մի ակնթարթ չի դադարել լիովին Աստված լինելուց:

Այդ դեպքում ինչպե՞ս կարելի է ասել, որ Նա չգիտի Իր երկրորդ գալստյան ժամանակը: Մենք հավատում ենք, որ այս հարցի բանալին կարող ենք գտնել Հովհ. 15:15-ում. «... Որովհետև ծառան չգիտի, թե իր տերն ինչ է անում»: Որպես կատարյալ Ծառա՝ Տերը չգիտեր Իր գալստյան օրն ու ժամը (Հովհ. 12:50, 17:8): Որպես Աստված՝ Նա, անշուշտ, գիտեր այդ մասին: Բայց որպես Ծառա՝ Նրան տրված չէր դա իմանալ, որպեսզի չհայտնեի այն ուրիշներին: Ջեյմս Գ. Բրուկսը սա այսպես է բացատրում.

«Սա մեր Տիրոջ աստվածային ամենագիտության ժխտումը չէ, այլ պարզ հաստատումն այն մասին, որ մարդկության քավությունն իրականացնելիս Նրա գործը չէր «իմանալ ժամերն ու ժամանակները, որ Հայրը Իր գործությամբ հաստա-

տեց» (Գործք 1:7): Հիսուսը գիտեր, որ Ինքը նորից է գալու, և հաճախ էր խոսում Իր երկրորդ գալստյան մասին, բայց վերադարձի տարեթվերի սահմանումը չէր մտնում Իր ծառայության մեջ որպես Որդի, հետևաբար Նա կարող էր այս հարցը Իր հետևորդներին թողնել որպես մշտական սպասումների և ցանկության առարկա»:²²

13:33-37. Այս գլուխն ավարտվում է արթուն մնալու և աղոթք անելու հորդորով հիշելով Տիրոջ վերադարձի մասին: Այն փաստը, որ մենք **չգիտենք** սահմանված ժամանակը, մեզ պետք է արթուն պահի:

Ամենօրյա կյանքում սովորական է նմանատիպ իրավիճակը: Մարդը երկար ճամփորդության է մեկնում: Նա հրահանգներ է տալիս իր ծառային և պատվիրում է պահակին արթուն մնալ՝ իր վերադարձին սպասելիս: Հիսուսն Իրեն համեմատեց այդ ճանապարհորդող մարդու հետ: Նա կարող է վերադառնալ գիշերվա որևէ ժամին: Նա Իր մարդկանց, գիշերային պահակներին չպետք է **քնած** գտնի: Ուստի հետևյալ խոսքն ավանդեց Իր բոլոր ժողովրդին. «**Արթուն կացեք**»:

VII. ԾԱՌԱՅԻ ՉՎՐՉՎԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՀԸ (14-15-րդ գլ.)

Ա. Հիսուսին սպանելու դավադրություն (14:1-2)

Այժմ այդ ճակատագրական շարքվա չորեքշաբթին էր: **Երկու օր հետո Չատիկն էր**, որ ազդարարում էր **Քաղաքակերպ** տոնի յոթ օրերի սկիզբը: Կրոնական առաջնորդները որոշել էին կործանել Տեր Հիսուսին, բայց չէին ուզում դա անել կրոնական տոների ժամանակ, քանի որ շատ մարդիկ դեռևս Հիսուսին մարգարե էին համարում:

Թեև գլխավոր **քահանաներն ու դպիրները** որոշել էին **չսպանել** Նրան **տոնի** ժամանակ, աստվածային նախախնամությունը բեկանեց դա, և Աստծո Չատիկ Գառը սպանվեց ճիշտ այդ ժամանակ (տե՛ս Մատթ. 26:2):

Բ. Հիսուսի օծումը Բեթանիայում (14:3-9)

Ինչպես ոսկերիչն է ադամանդը դնում սև թավշյա կտորի վրա՝ դրա գեղեցկությունն արտահայտիչ դարձնելու համար, այնպես էլ Մուրբ Հոգին և Նրա երկրավոր գրող Մարկոսը հմտորեն ընդգծել են կնոջ ճառագող սերը մեր Տիրոջ հանդեպ՝ հակառակ կրոնական վերնախավի և Հուդայի չարաբաստիկ դավադրության:

14:3. Միմոն բորոտը հյուրասիրություն էր կազմակերպել Փրկչի պատվին, հավանաբար որպես երախտագիտություն բժրշկվելու համար: Անանուն կինը, հավանաբար Մարիամը Բեթանիայից (Հովհ. 12:3), **թանկարժեք** անուշահոտ յուղը շոյալորեն թափեց **Նրա գլխին**: Ինչ մեծ էր նրա սերը Հիսուսի հանդեպ:

14:4-5. Հյուրերից **ոմանք** մտածեցին, որ դա հսկայական վատնում էր: Նա անխոհեմ վարվեց և մեծ վնաս պատճառեց: Ինչո՞ւ **չծախեց** անուշահոտ յուղը և գումարը **աղքատներին չտվեց**: **Երեք հարյուր դահեկանը** տարեկան աշխատավարձն էր: Մարդիկ այսօր էլ կարծում են, որ Տիրոջը մեկ տարվա կյանք տալը վատնում է: Նրանք որքան ավելի մեծ վատնում կհամարեին, եթե ամբողջ կյանքը տալին Տիրոջը:

14:6-8. Տեր **Հիսուսը** հանդիմանեց նրանց տրտունջը: Կինը օգտագործեց Փրկչին պատվելու իր ոսկե հնարավորությունը: Եթե նրանք այդքան հոգատար էին աղքատների նկատմամբ, ապա միշտ էլ հնարավորություն կունենային նրանց օգնելու, որովհետև **աղքատներին միշտ ձեզ հետ ունեք**: Տերը շուտով պիտի մեռներ ու թաղվեր: Այս կինը ցուցաբերեց իր սերը, ինչպես կարող էր: Գուցե չէր կարողանալու հոգ տանել Նրա **մարմնի** համար մահից հետո, ուստի նա ապացուցեց իր սերը, քանի դեռ Նա ողջ էր:

14:9. Այդ անուշահոտ յուղի բույրը հասել է մեր սերունդներին: Հիսուսն ասաց, որ նրա մասին հիշատակվելու է ամբողջ աշխարհում: Նրա մասին հիշվում է Ավետարանի բոլոր գրառումներում:

Գ. Հուդայի մատնությունը (14:10-11)

Կինը բարձր գնահատեց Փրկչին: Ի հակադրություն դրան՝ **Հուդան**, ով ապրել էր Տեր Հիսուս Քրիստոսի հետ ամենաքիչը մեկ տարի և բարիքից բացի ուրիշ ոչինչ չէր ստացել Նրանից, Նրան ցածր էր գնահատում: Նա գնաց գլխավոր քահանաների մոտ և վստահեցրեց նրանց, որ Աստծո Որդուն նրանց ձեռքը **կմատնի**: Նրանք ուրախությամբ ընդունեցին նրա առաջարկը՝ խոստանալով վճարել մատնության համար: Հիմա մնում էր մշակել մանրամասները:

Դ. Չատիկի նախապատրաստությունները (14:12-16)

Թեև ճշգրիտ ժամանակագրությունը հստակ չէ, մենք հիմա հավանաբար մոտենում ենք զատկական շաբաթվա հինգշաբթի օրվան: Աշակերտները դժվար թե հասկանային, որ այդ Չատիկը դառնալու է բոլոր Չատիկների կատարումը և գազաթնակետը, որ երբևէ տեղի էր ունեցել: Նրանք հարցրին Տիրոջը, թե որտե՞ր կպատվիրի անցկացնել **զատկական ընթրիքը**: Նա **ուղարկեց** նրանց Երուսաղեմ՝ հանձնարարելով գտնել **մի մարդու՝ ջրի կուժը ուսին**. հազվագյուտ երևույթ, որովհետև սովորաբար կանայք էին կժերը կրում: Այդ մարդը կառաջնորդի նրանց այդ հատուկ տունը: Այնուհետև նրանք պիտի խնդրեին տանտիրոջը, որ ցույց տա նրանց սենյակը, որտեղ **Ուսուցիչը** կարող էր Իր **աշակերտների հետ Չատիկն ուտել**:

Հրաշալի է տեսնել Տիրոջ ընտրության և կարգադրելու ձևը: Նա գործում է որպես մարդկանց և սեփականության գերիշխան Ղեկավար: Հրաշալի է նաև տեսնել արձագանքող սրտերը, որ իրենց անձերն ու ունեցվածքը դնում են Իր տրամադրության տակ: Ի՞նչ հաճելի է մեզ համար, երբ վայրկենական մուտք ենք տրամադրում Նրան մեր կյանքի յուրաքանչյուր սենյակի մեջ:

Ե. Հիսուսը կանխատեսում է Իր մատնությունը (14:17-21)

Նույն օրը՝ երեկոյան, **Հիսուսը տասներ-**

կուսի հետ եկավ պատրաստված վերնատունը: Երբ **նրանք** թիկնել և **ուտում էին**, Հիսուսը հայտարարեց, որ աշակերտներից **մեկը մատնելու է** Իրեն: Բոլորը ընդունեցին իրենց բնույթի չարությունը: Մեփական անձի հանդեպ առողջ անվստահությամբ ամեն մեկը հարցնում էր, թե արդյոք ինքն է մեղավորը: Այնուհետև Հիսուսը բացահայտեց մատնիչին՝ որպես մեկին, ով Իր հետ հացը արգանակի մեջ թաթախեց, այսինքն՝ նա, ում Նա հացի պատառը տվեց: Հիսուսն ասաց, որ Մարդու Որդին կգնա Իր մահվանը, ինչպես մարգարեացված է, բայց Իրեն մատնողի կործանումը սարսափելի է լինելու: Փաստորեն, **լավ կլինեք այդ մարդուն, որ ծնված չլինեք**:

Զ. Տերունական առաջին ընթրիքը (14:22-26)

14:23-25. Հացը վերցնելով՝ Հուդան գնաց, և գիշեր էր (Հովհ. 13:30): Այնուհետև Հիսուսը հաստատեց այն, ինչը մեզ հայտնի է որպես Տերունական ընթրիք: Դրա սքանչելի նշանակությունը կարելի է ամփոփել երեք բառով. 1. Նա **վերցրեց**՝ մարդկային կերպարանք առավ Իր վրա, 2. **կտրեց**՝ Նա խաչի վրա կտրվեց, 3. **տվեց**՝ Ինքն Իրեն տվեց մեզ համար:

Հացը նշանակում է Նրա տված մարմինը, **բաժակը**՝ Նրա հեղած արյունը: Իր արյամբ Նա հաստատեց **Նոր Ուխտը**: Նրա համար այլևս տոնակատարություն չի լինելու մինչև երկիր վերադառնալը և Իր **Թագավորությունը** հաստատելը:

14:26. Եվ նրանք գոհության երգ երգեցին, հավանաբար 114-119 սաղմոսներից մի հատված: Այնուհետև Երուսաղեմից դուրս եկան Կեդրոնի միջով և **եկան Զիթենյաց լեռը**:

Է. Պետրոսի ինքնավստահությունը (14:27-31)

14:27-28. Ճանապարհին Փրկիչը զգուշացնում էր աշակերտներին, որ առաջիկա ժամերին նրանք բոլորն էլ ամաչելու և վախենալու են խոստովանել, որ Իր հետևորդներն են: Կատարվելու է Չաքարիայի մարգարեությունը. **հովիվը** պիտի հարվածվի,

իսկ Նրա **ոչխարները պիտի ցրվեն** (Չաբ. 13:7): Բայց Իր ողորմությամբ Նա հավաստիացրեց նրանց, որ չի ուրանա. մեռելներից հարություն առնելուց հետո Նա պիտի սպասի նրանց **Գալիլիայում**:

14:29-30. Պետրոսին վրդովեցրեց Տիրոջն ուրանալու միտքը: Միգուցե մյուսներն ուրանան, բայց ի՞նքը, երբե՛ք: Տեր Հիսուսն ուղղեց «երբեք» բառը՝ ասելով «շուտով»: **Աքաղաղը դեռ երկու անգամ չկանչած՝ Պետրոսը երեք անգամ պիտի ուրանար Փրկչին:**

14:31. «Դա անհեթեթություն է, - գոչեց Պետրոսը: Ես նախընտրում եմ մեռնել, քան **Քեզ ուրանալ**»: Պետրոսը միակը չէր, որ բարձրաձայն պարծենում էր: Բոլորն էլ նույնն էին ասում հապճեպ և ինքնավրասահ: Եկե՛ք երբեք չմոռանանք, որ մենք նրանցից ոչ մի բանով չենք տարբերվում: Մենք պետք է իմանանք մեր սրտերի վախկոտության և թուլության մասին:

Ը. Տագնապ Գեթսեմանիում (14:32-42)

14:32. Երկիրը խավարի մեջ թաղվեց: Հինգշաբթի օրվա գիշերին հաջորդելու եկավ ուրբաթ օրվա առավոտը: Երբ նրանք եկան ցանկապատված մի տեղ, որ **Գեթսեմանի էր կոչվում**, Հիսուսը ութ աշակերտներին թողեց մուտքի մոտ:

14:33-34. Նա **Իր հետ վերցրեց Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին** դեպի այգու խորքերը: Այնտեղ աղոթելիս սպասում էր մեղքի պատարագ դառնալուն մեզ համար. Նա փորձառեց անհաղթահարելի բեռի ծանրությունն Իր սուրբ Անձի վրա: Մենք չենք կարող հասկանալ, թե ինչ էր նշանակում Իր նման անմեղի համար մեզ համար մեղք դառնալ: Նա թողեց երեք աշակերտներին՝ նրանց հանձնարարելով **մնալ** այնտեղ և արթուն լինել: Նա, **մի քիչ առաջ գնալով**, այգում մենակ մնաց: Այդպես էլ Նա գնալու էր խաչվելու մենակ՝ կրելով Աստծո սարսափելի պատիժը մեր մեղքերի համար:

14:35. Չարմանքով և ապշահար տեսնում ենք, թե ինչպես էր Տեր Հիսուս Քրիստոսը երեսնիվայր աղոթում Աստծուն: Արդ-

յոք Նա խաչից ազատվելու թույլտվություն էր խնդրում: Ամեննին էլ ոչ, չէ՞ որ Նա հենց այդ նպատակի համար էր այս աշխարհ եկել: Նախևառաջ **Նա աղոթում էր, որ եթե կարելի է, այն ժամն Իրենից անցնի**: Եթե Իր մահվան, թաղվելու և հարություն առնելու փոխարեն մեկ ուրիշ ճանապարհ կա մեղավորներին փրկելու համար, ապա թող Աստված հայտնի այդ ճանապարհը: Երկինքները լռում էին: Ուրիշ ոչ մի ճանապարհ չկար, որով մենք կարող էինք փրկվել:

14:36. Նա նորից աղոթեց. **«Աբբա, Հայր, ամեն բան Քեզ համար կարելի է: Հեռացրո՛ւ Ինձնից այս բաժակը, բայց ոչ թե ինչպես Ես եմ ուզում, այլ ինչպես Դու կկամենաս»**: Ուշադրություն դարձրեք, որ Նա այստեղ Աստծուն դիմում է որպես Իր սիրելի **Հորը**, Ում համար **ամեն բան կարելի է**: Այստեղ հարցն այդքան ֆիզիկական հնարավորությունների մասին չէ, որքան բարոյական: Արդյոք կարո՞ղ էր ամենակարող Հայրը գտնել մեկ այլ արդարացի հիմնավորում, որի հիման վրա հնարավոր կլիներ ամբարիշտ մեղավորներին փրկել: Երկինքների լռությունը ցույց տվեց, որ ուրիշ ճանապարհ չկա: Պետք է Աստծո սուրբ Որդին արյուն թափեր, որպեսզի մեղավորները մեղքից ազատվեին:

14:37-40. Վերադառնալով երեք աշակերտների մոտ՝ Նա **նրանց քնած գտավ**: Հիսուսը զգուշացրել էր Պետրոսին, որ չքնեք այդ վճռական **ժամին**: Միայն վերջերս Պետրոսը պարծենում էր իր հաստատակամությամբ: Այժմ նա չէր կարողանում նույնիսկ արթուն մնալ: Եթե մարդ չի կարողանում աղոթել **մեկ ժամ**, ապա քիչ հավանական է, որ մեծ ճնշման պահին կկարողանա փորձությանը դիմակայել: Անկախ նրանից, թե ինչքան հոժար է նրա հոգին, նա պետք է հաշվի առնի իր մարմնակալի տկարությունը:

14:41-42. Տերը երեք անգամ վերադարձավ և Իր աշակերտներին քնած գտավ: Այնուհետև Նա ասաց. **«Դուք դեռ քնած եք և հանգստանո՞ւմ եք: Բավական է, ժամը հասավ, ահա Մարդու Որդին**

կմատնվի մեղավորների ձեռքը»: Դրանից հետո նրանք վեր կացան, որ գնան: Բայց նրանք չէին կարողանալու հեռու գնալ:

Թ. Հիսուսը մատնվում ու ձերբակալվում է (14:43-52)

14:43. Հուդան արդեն պարտեզ էր մտել զինված մարդկանց խմբով: Նրանք հայտնըվեցին **սրերով ու բրերով**, կարծես թե պատրաստվում էին վտանգավոր հանցագործ բռնելու:

14:44-45. Մատնիչը նրանց նշան տվեց: Նա **համբուրեց** Նրան, Ում պիտի **բռնեին**: Եվ այսպես, Հուդան մոտեցավ Հիսուսին՝ Նրան «**Ռաբբի**» կոչելով, և **համբուրեց** Նրան: Բնագրի մեջ շեշտված ձևը ենթադրում է բազմաթիվ կամ ցուցադրական համբույր: Ինչո՞ւ Հուդան մատնեց Տիրոջը: Արդյոք հուսախաբված էր այն բանից, որ Հիսուսը երկրի իշխանության դեկն Իր ձեռքը չառավ, կամ գուցե Թագավորության մեջ առանձնահատուկ տեղ ունենալու նրա հույսերն անհետացա՞ն, կամ ազահուրյունը հաղթեց: Այս բոլոր նշվածները կարող էին պատճառ լինել իր անպատիվ արարքին:

14:46-50. Մատնիչի զինված կամակատարները մոտեցան ու բռնեցին Հիսուսին: Պետրոսն արագորեն **սուրը քաշեց և քահանայապետի ծառայի ականջը կտրեց**: Սա բնական արձագանք էր, ոչ թե հոգևոր: Պետրոսն օգտագործեց մարմնավոր զենք հոգևոր պատերազմում: Տերը սաստեց Պետրոսին և հրաշքով վերականգնեց ականջը, ինչպես կարդում ենք Ղուկաս 22:51-ում և Հովհ. 18:11-ում: Այնուհետև Հիսուսն Իրեն բռնողներին հիշեցրեց, թե ինչ անհեթեթություն էր նրանց կողմից Իրեն ուժով բռնելը: Նա **ամեն օր** նրանց **հետ էր և տաճարում սովորեցնում էր**: Ինչո՞ւ այդ ժամանակ չբռնեցին: Նա գիտեր պատասխանը: Որպեսզի **գրվածները կատարվեն**, որոնց մեջ մարգարեացված էր, որ Նա պիտի մատնվի (Մղմ. 41:9), ձերբակալվի (Ես. 53:7), ծեծվի (Մղմ. 22:12) և լքվի (Չաք. 13:7):

14:51-52. Մարկոսը միակ ավետարանիչն

է, որ նկարագրում է այս իրադարձությունը: Մեծապես տարածված է այն կարծիքը, որ Մարկոսն էր հենց այն **երիտասարդը**, ով հապճեպ փախուստի ժամանակ իր կտավը թողեց զինված մարդկանց ձեռքում: **Կտավը** սովորական հագուստ չէր, այլ գործվածքի մի կտոր, որ իր հետ վերցրել էր, որպես ծածկոցին փոխարինող մի բան:

Էրդմանը մեկնաբանում է. «Այս պատկերավոր միջադեպը հավանաբար ավելացված է՝ ցույց տալու, որ Իր տառապանքի և ցավի ժամերին Հիսուսը լիովին լքված էր: Նա, անկասկած, գիտեր, թե ինչ էր նշանակում միայնակ տառապել»:

Ժ. Հիսուսը քահանայապետի առջև (14:53-54)

Այս դատական գործի գրառումն սկսվում է 53-րդ համարից, շարունակվում է մինչև 15:1-ը և բաժանվում է երեք մասի՝ 1. դատավարություն քահանայապետի առջև (հ. 53-54), 2. ատյանի կեսգիշերային ժողովը (հ. 55-65), 3. ատյանի առավոտյան նիստը (15:1):

14:53. Ընդհանուր առմամբ ընդունված է, որ այստեղ Մարկոսը նկարագրում է Կալիստոս քահանայապետի առջև կայացած դատավարությունը: Աննայի մոտ տեղի ունեցած դատավարությունը կարելի է գտնել Հովհ. 18:13, 19-24-ում:

14:54. Պետրոսը հետևում էր Տեր Հիսուսին մինչև **քահանայապետի սրահի ներսը**՝ ընտրելով ապահով հեռավորություն: Ինչ-որ մեկը հետևյալ ձևով է ուրվագծել նրա անկումը:

1. Սկզբում նա պայքարեց. եռանդ, որ սրխալ ուղղությամբ էր ընթանում:
2. Այնուհետև փախավ. վախեցած հրաժարվեց իր Ուսուցչից:
3. Վերջապես, նա հեռվից էր հետևում. կիսակատար աշակերտություն գիշերային ժամերին:

Նա սպասավորների հետ **նստեց կրակի մոտ** և տաքանում էր իր Տիրոջ թշնամիների հետ:

Ի. Հիսուսն ատյանի առջև (14:55-65)

14:55-59. Թեև այստեղ մասնավորապես չի ասվում, բայց 55-րդ համարը, թվում է, սկսում է նկարագրել ատյանի կեսգիշերային ժողովը: Այդ կառույցը, որ կազմված էր յոթանասուներեկ կրոնական առաջնորդներից, հավաքվել էր քահանայապետի նախագահությամբ: Այդ արտասովոր գիշերը փարիսեցիները, սադուկեցիները, դպիրներն ու ծերերը, որ մտնում էին ատյանի կազմի մեջ, ծայրահեղ արհամարհանք ցուցաբերեցին Օրենքի նկատմամբ, ըստ որի նրանք պիտի գործեին: Նրանք չպետք է ժողով հավաքեին գիշերով կամ հրեական տոներից որևէ մեկի ժամանակ: Նրանք չպետք է կաշառեին վկաներին սուտ վկայություն ձեռք բերելու համար: Մահապատիժը չպետք է կիրառվեր մինչ լուսանալը: Նրանց դատավճիռներն անվավեր էին համարվում, եթե նրանք հավաքված չէին Տաշած քարի սրահում:

Ցանկանալով հնարավորինս շուտ հաշվեհարդար տեսնել Տեր Հիսուսի հետ՝ կրոնական իշխանությունները, առանց վարանելու, խախտեցին իրենց սեփական օրենքները: Նրանք որոշեցին **սուտ** վկայություն տվողներին ներգրավել, բայց նրանց չհաջողվեց համաձայնեցված ցուցմունքներ ստանալ: Ինչ-որ մեկը Տիրոջ խոսքերը՝ **այս ձեռակերտ տաճարը քանդել և երեք օրում ուրիշը կառուցելը**, ներկայացրեց որպես սպառնալիք: Հիսուսի իրականում ասված խոսքերը գրված են Հովհ. 2:19-ում: Նրանք միտումնավոր կերպով շփոթեցին Երուսաղեմի տաճարը Իր մարմնի տաճարի հետ:

14:60-62. Քահանայապետի առաջին հարցին Հիսուսը չպատասխանեց: Բայց երբ Նրան երդվեցնելով հարցրին (Մատթ. 26:63), թե արդյոք Ինքն է Մեսիան՝ **Օրինյալի Որդին**, Փրկիչը պատասխանեց՝ «այո»՝ հնազանդվելով Ղև. 5:1-ի գրվածքին: Այնուհետև, ասես վերացնելով Իր մասին որևէ կասկած՝ Տեր Հիսուսն ասաց քահանայապետին, որ նա **կտեսնի Մարդու Որդուն՝ գորության աջ կողմում նստած և երկնքի ամպերով գալիս**: Սրանով Նա նկատի ուներ, որ քահանայապետն Իրեն

բացահայտորեն կտեսնի, երբ Ինքը՝ որպես Աստված հայտնվի: Հիսուսի առաջին գալուստյան ժամանակ Նրա աստվածության փառքը քողարկված էր մարդկային մարմնի մեջ: Բայց երբ Նա գորությանմբ և մեծ փառքով նորից գա, քողը վերցվելու է, և բոլորը ճշգրտորեն իմանալու են, թե ով է Նա:

14:63-64. Քահանայապետը հասկացավ, թե Հիսուսն ինչ նկատի ուներ: Նա **պատռեց** իր հանդերձները՝ որպես արդար վրդովմունքի նշան՝ ընդդեմ ենթադրվող **հայհոյանքի**: Միակ խրայելացին, ով առաջինը պետք է պատրաստ լիներ ճանաչելու և ընդունելու Մեսիային, բարձրաձայնում էր Նրա դատավճիռը: Բայց նա միայնակ չէր ամբողջ ատյանը²³ նրա հետ համաձայնեց, որ Հիսուսը **հայհոյեց**, և **դատապարտեցին Նրան, թե՛ մահապարտ է**:

14:65. Դրան հաջորդեց մի տզեղ տեսարան: Ատյանի որոշ անդամներ **սկսեցին թքել** Աստծո Որդու վրա. **Նրա երեսը ծածկում էին** ու պահանջում, որ Նա Իրեն խփողների անուններն ասի: Գրեթե անհավատալի է, որ փառքի արժանի Փրկիչը պետք է դիմանար Իր դեմ ուղղված մեղավորների նման հարձակմանը: **Սպասավորները՝** տանարի ոստիկանները, միացան հնչած վիրավորանքների ընդհանուր երգչախմբին և **ապտակում էին Նրան**:

Լ. Պետրոսն ուրանում է Հիսուսին և դառնագին լացում (14:66-72)

14:66-68. Պետրոսը սպասում էր **ներքևի սրահում**: Քահանայապետի աղախիններից մեկն անցավ: Նա ուշի ուշով նայեց նրան, իսկ հետո մեղադրեց **Հիսուս** Նագովրեցու հետևորդը լինելու մեջ: Տաքարյուն աշակերտը ձևացրեց, որ բոլորովին չի հասկանում, թե նա ինչ է ասում, իսկ հետո տեղափոխվեց դեպի նախասրահ: Այդ ժամանակ **աքաղաղը** կանչեց: Դա սոսկալի պահ էր: Մեղքն իր սարսափելի տուրքը գանձեց:

14:69-70. Աղախինը նորից տեսավ նրան և մատնացույց արեց որպես Հիսուսի աշակերտի: Պետրոսը մեկ անգամ ևս սառնա-

սրբոտրեն ուրացավ՝ հավանաբար մտածելով, թե ինչո՞ւ մարդիկ իրեն հանգիստ չեն թողնում: Այնուհետև ինչ-որ մարդիկ Պետրոսին ասացին. «**Իսկապես դու էլ նրանցից ես, որովհետև գալիլիացի ես և նրանց նման ես խոսում**»:

14:71-72. Պետրոսն սկսեց երդվել, անիծել և հայտարարել, որ **չի ճանաչում այդ Մարդուն**: Այն պահին, երբ այդ բառերը դուրս թռան նրա շուրթերից, **աքաղաղը կանչեց**: Կարծես բնությունը այդ ձևով էր բողոքարկում փոքրոգի ստի դեմ: Պետրոսն անմիջապես հասկացավ, որ Տիրոջ կանխատեսումը կատարվեց: Նա դուրս եկավ և **սկսեց լաց լինել**: Հասկանչական է, որ բոլոր չորս Ավետարաններն էլ գրի են առել Պետրոսի ուրացումը: Բոլորս պետք է յուրացնենք այն դասը, որ ինքնավստահությունը հանգեցնում է նվաստացման: Պետք է սովորենք ամբողջովին հենվել Աստծո գործության վրա և ոչ թե մեր:

Խ. Ատյանի առավոտյան խորհուրդը (15:1)

15:1. Այս համարը նկարագրում է ատյանի **առավոտյան** խորհուրդը, որը հավանաբար հավաքվել էր՝ վավերացնելու նախորդ գիշերվա անօրինական գործողությունները: Արդյունքում՝ Հիսուսին **կապեցին** և **Պիղատոսի**՝ Պաղեստինի հռոմեական կուսակալի մոտ տարան:

Ծ. Հիսուսը՝ Պիղատոսի առջև (15:2-5)

15:2. Մինչև հիմա Հիսուսը կանգնած էր կրոնական առաջնորդների ատյանի առջև, ովքեր Նրան մեղադրում էին *հայհոյության* մեջ: Իսկ այժմ Նրան տարան քաղաքացիական դատարան և մեղադրեցին *դավանանության* մեջ: Քաղաքացիական դատավարությունը տեղի էր ունենում երեք փուլով՝ նախ՝ Պիղատոսի առջև, այնուհետև՝ Հերովդեսի առջև և վերջապես՝ դարձյալ Պիղատոսի առջև:

Պիղատոսը հարցրեց, թե Տեր Հիսուսն էր **հրեաների Թագավորը**: Եթե այո, ապա հետևաբար Նա ծրագրել էր Կեսարի իշխանության տապալումը. այսպիսով մե-

ղադրվում էր դավաճանության մեջ:

15:3-5. Գլխավոր քահանաները Հիսուսի վրա թափեցին մեղադրանքների մի ամբողջ կույտ: Պիղատոսը չէր կարողանում կողմնորոշվել բազմաթիվ մեղադրանքների տարափից: Նա հարցրեց Հիսուսին, թե ինչո՞ւ Նա ոչինչ չի ասում հօգուտ Իր պաշտպանության, բայց **Հիսուսը** հրաժարվեց Իրեն մեղադրողներին պատասխանելուց:

Կ. Հիսուսի՞ն, թե՞ Բարաբբային (15:6-15)

15:6-8. Հռոմեական կառավարիչը Չատկի տոնի առիթով **մեկ** հրեա **բանտարկյալ** արձակելու սովորություն ուներ. մի տեսակ քաղաքական կաշառք էր դժբախտ ժողովրդի համար: Այդ առիթով ընտրված բանտարկյալը Բարաբբան էր, որ մեղադրվում էր **խռովության** և **մարդասպանության** մեջ: Երբ Պիղատոսն առաջարկեց Հիսուսին **ազատ արձակել**՝ զրգռելով նախանձոտ գլխավոր քահանաներին, վերջիններս դրդեցին ժողովրդին՝ խնդրել Բարաբբայի համար: Այն նույն մարդիկ, ովքեր մեղադրում էին Հիսուսին Կեսարի դավաճանության մեջ, խնդրում էին ազատ արձակել մի մարդու, ով իսկապես *մեղավոր* էր այդ հանցագործության մեջ: Գլխավոր քահանաների դիրքը անտրամաբանական էր և անհեթեթ, բայց մեղքը այդպիսին է: Նրանք ամենից շատ նախանձում էին Նրա ժողովրդականությանը:

15:9-14. Պիղատոսը հարցրեց, թե ի՞նչ անի այն Մեկի հետ, Ով Իրեն **հրեաների Թագավոր** է անվանում: Ժողովուրդը խելակորույս աղաղակեց. «**Խա՛չը հանիր Նրան**»: Պիղատոսը պահանջեց ասել պատճառը, բայց պատճառ չկար: Ամբոխի հիստերիան անում էր: Նրանք կարող էին միայն մեկ բան գոչել. «**Խա՛չը հանիր Նրան**»:

15:15. Եվ այսպես, թուլամորթ Պիղատոսն արեց այն, ինչը նրանք էին ուզում. **Բարաբբային ազատ արձակեց**, իսկ Հիսուսին հրամայեց ծեծել և **հանձնեց** Նրան զինվորներին, որպեսզի խաչը հանեն: Իր անարդարությամբ դա հրեշավոր դատա-

վճիռ էր: Այնուամենայնիվ, այնտեղ էր ամփոփվում մեր քավության այլաբանությունը. անմեղին ուղարկում են մեռնելու, որպեսզի մեղավորները կարողանան ազատություն ստանալ:

Հ. Չինվորները ծաղրում են Աստծո ճառային (15:16-21)

15:16-19. Չինվորները Հիսուսին տարան արահի ներսը՝ կառավարչի նստավայրը: **Ամբողջ գունդը** մեկտեղ կանչելով՝ նրանք հրեաների թագավորի ծաղրական թագադրումն էին բեմադրել: Եթե նրանք իմանալին... Նրանց առջև էր կանգնած **Աստծո Որդին**, իսկ նրանք **Նրան ծիրանի հագցրին, փշերից հյուսված պսակ** դրեցին սեփական Արարչի գլխին: Նրանք ծաղրում էին ու տիեզերքի Ամենակալին **հրեաների թագավոր** էին անվանում: Նրանք **հարվածում էին** կյանքի և փառքի Տիրոջ **գլխին**: Նրանք **թքում էին** խաղաղության Իշխանի վրա: Նրանք հեզնաբար ծնկի էին գալիս թագավորների թագավորի և տերերի Տիրոջ առջև:

15:20-21. Ավարտելով այդ բիրտ ծաղրուծանակը՝ նրանք նորից **Իր հանդերձները հագցրին ու դուրս տարան, որ խաչեն Նրան**: Մարկոսն այստեղ հիշատակում է, որ զինվորները հրամայեցին անցորդին՝ Միմոն Կյուրենացուն՝ հյուսիսային Աֆրիկայից, որ **Նրա խաչափայտը** տանի: Միգուցե նա սևամորթ էր, բայց ավելի հավանական է, որ հելլենացի հրեա էր: Նա երկու որդի ուներ՝ **Ալեքսանդր և Ռուփոս**: Նրանք հավանաբար հավատացյալ էին, եթե սա նույն **Ռուփոսն** է, ում մասին հիշատակված է Հռ. 16:13-ում: Կրելով Հիսուսի խաչը՝ նա մեզ ցույց տվեց, թե ինչը մեզ պիտի բնութագրի որպես Փրկչի աշակերտներ:

Յ. Խաչելությունը (15:22-32)

Աստծո Հոգին խաչելությունը նկարագրում է պարզ և սառնասրտորեն: Նա կանգ չի առնում այդ մահապատժի կատարման ծայրահեղ դաժանությունների կամ սարսափելի տառապանքների հետևանքների վրա:

Գողգոթայի ճշգրիտ գտնվելու վայրը հայտնի չէ այսօր, թեև ավանդական վայրում վեր է խոյանում Սուրբ Հարության տաճարը, որ գտնվում է քաղաքի պատերից ներս: Այս մտքի ջատագովները հաստատում են, որ Քրիստոսի օրոք այն եղել է քաղաքի պատերից դուրս: Մյուս ենթադրվող վայրը Գողգոթի Գողգոթան է, որ գտնվում է քաղաքային պատերից դեպի հյուսիս և այգու տարածքին հարակից է:

15:22. Գողգոթան արամերեն բառ է, որ նշանակում է «**գանգի տեղ**»: Հավանաբար այդ վայրն ունեցել է գանգի ձև կամ այդ անվանումն է ստացել, քանի որ այնտեղ էին իրականացնում մահապատիժները:

15:23. Չինվորները Հիսուսին **զմուռսով խառնած գինի** առաջարկեցին: Այդ խառնուրդի ազդեցությունը թմրադեղի նման էր, որ բթացնում էր զգայարանները: Վճռականությամբ լցված, որ մարդկային մեղքերը կրելու էր Իր ամբողջ գիտակցությամբ, **Նա չվերցրեց** այն:

15:24. Չինվորները վիճակ գցեցին այն Մարդու հանդերձների համար, ում նրանք խաչեցին: Փրկչի հանդերձները, որ նրանք վերցրին, գրեթե Նրա ամբողջ նյութական ունեցվածքն էր:

15:25-28. Առավոտյան ժամը ինն էր, երբ **Նրան խաչեցին**: Նրա գլխավերևում տեղադրեցին հետևյալ գրվածքը. «**ՀՐԵԱՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԸ**»: Մարկոսը գրվածքն ամբողջությամբ չի ներկայացնում, այլ բավարարվում է դրա իմաստով (տե՛ս Մատթ. 27:37, Ղուկ. 23:38, Հովհ. 19:19): Եվ Նրա հետ երկու **ավագակներ** էլ խաչեցին, ամեն մեկը **յուրաքանչյուր** կողմում, ճիշտ այնպես, ինչպես Եսային կանխատեսել էր, որ Իր մահվամբ Նա չարագործների հետ դասվեց (Ես. 53:12):²⁴

15:29-30. Այնտեղի անցորդները, **գլխավոր քահանաները, դպիրները** (տե՛ս հ. 31-32) և երկու ավագակները (տե՛ս հ. 32) հայիտյում էին Տեր Հիսուսին (տե՛ս 29-30):

Անցորդները հավանաբար հրեաներ էին, որ գնում էին քաղաք՝ Չատիկը տոնելու: Նրանք բավականաչափ երկար մնացին

դրուում, որպեսզի վիրավորանքներ նետեն զատկական Գառնուկի վրա: Նրանք Նրա խոսքերը՝ իրենց սիրելի **տաճարը** քանդել և **երեք օրում** այն վերականգնելը, սպառնալիքի էին վերածել: Եթե Նա այդքան մեծ է, թող Ինքն Իրեն փրկի և **խաչից ցած իջնի**:

15:31. Գլխավոր քահանաները և դպիրները ծաղրում էին **ուրիշներին** փրկելու Նրա հայտարարությունը. «**Ուրիշներին փրկեց, Իր անձը չի կարողանում փրկել**»: Դա չարամիտ դաժանություն էր, բայց և այնպես ոչ կանխամտածված ճշմարտություն: Դա ճիշտ էր Տիրոջ կյանքում, մեր կյանքում՝ նույնպես: Մենք չենք կարող *ուրիշներին* փրկել, մինչդեռ փորձում ենք *ինքներս մեզ* փրկել:

15:32. Կրոնական առաջնորդները նույնպես կոչ էին անում **խաչից** իջնել, եթե Նա Մեսիան է՝ **Իսրայելի Թագավորը**: «Այդ ժամանակ մենք կհավատանք, - ասում էին նրանք: Այնպես արա, որ մենք **տեսնենք ու հավատանք**»:²⁵ Բայց Աստծո օրենքն այսպիսին է. «Հավատացե՛ք, իսկ հետո կտեսնեք»:

Նույնիսկ ավագակներն էին Նրան նախատում:

Ղ. Խավարի երեք ժամերը (15:33-41)

15:33. Կեսօրից մինչև ցերեկվա ժամը երեքը **ամբողջ երկրի վրա խավար իջավ**: Այդ ժամերին Հիսուսը կրում էր Աստծո լիարժեք դատապարտությունը մեր մեղքերի համար: Նա չարչարվում էր՝ հոգևորապես մենակ և Աստծուց բաժանված լինելով: Մեր մահկանացու միտքը չի կարող հասկանալ այն չարչարանքները, որ Նա կրեց, երբ Իր Անձը մեղքի համար զոհեց:

15:34. Այս չարչարանքների վերջում Հիսուսը **բարձր ձայնով** արամերեն **աղաղակեց**. «**Աստվա՛՛՛՛՛՛՛ իմ, Աստվա՛՛՛՛՛՛՛ իմ, ինչո՛ւ Ինձ լքեցիր**»: Աստված Նրան լքեց, որովհետև Իր սրբությամբ Նա չէր կարող մեղքին մասնակից լինել: Տեր Հիսուս Քրիստոսը մեր մեղքերի հետ Իրեն նույնացրեց և ամբողջությամբ կրեց դրանց պատիժը:

15:35-36. Դաժան ամբոխի միջից **ոմանք**,

լսելով Նրա խոսքերը. «Էլի, Էլի, լամա՛ սաբաքթանի», մտածեցին, որ Նա **Եղիային է կանչում**: Որպես վերջին վիրավորանք նրանցից մեկը **սպունգը քացախի մեջ թաթախեց** և, **եղեգի վրա** տեղադրելով, **տվեց Նրան, որ խմի**:

15:37. Հիսուսը **բարձր ձայնով աղաղակեց**. հաղթականորեն **հոգին ավանդեց**: Նրա մահը Իր կամքի դրսևորումն էր, ոչ թե բռնի ու պատահական:

15:38. Այդ պահին **տաճարի վարագույրը երկուսի պատռվեց՝ վերևից մինչև ներքև**: Դա Աստծո գործն էր, որը ցույց տվեց, որ Քրիստոսի մահվան միջոցով Աստծո սրբարանի մուտքը այսուհետև դարձավ բոլոր հավատացյալների առանձնաշնորհումը (տե՛ս Եբր. 10:19-22): Սա ազդարարում էր նոր մեծ դարաշրջանի սկիզբը: Այն լինելու էր Աստծուն մոտեցնող դարաշրջան, այլ ոչ թե Նրանից հեռացնող:

15:39. Թեև հռոմեական սպայի խոստովանությունն ազնիվ էր, բայց անպայմանորեն չի նշանակում, որ նա Հիսուսին Աստծուն հավասար ընդունեց: Հեթանոս հարյուրապետը Նրան՝ որպես **Աստծո Որդու** ընդունեց: Նա, անկասկած, զգաց այդ պահի ամբողջ պատմականությունը: Սակայն արդյո՞ք նրա հավատը ճշմարիտ էր, պարզ չէ:

15:40-41. Մարկոսը հիշատակում է, որ խաչի մոտ մի քանի **կանայք** էին մնացել: Արժանի է հիշատակելու, որ կանայք փայլփրվում են Ավետարանի պատմության մեջ: Անձնական անվտանգության նկատառումները տղամարդկանց ստիպել էին թաքնվել: Կանանց նվիրվածությունը Քրիստոսի սիրո հանդեպ անձնական բարեկեցությունից վեր էր դրված: Նրանք վերջինն էին խաչի մոտ, և առաջինը՝ գերեզմանի մոտ:

Ճ. Թաղումը Հովսեփի գերեզմանում (15:42-47)

15:42. Ծաբաթը սկսվեց **ուրբաթ օրվա մայրամուտից**: Ծաբաթին նախորդող օրը նույնպես տոն էր, որ հայտնի էր որպես **պատրաստության օր**:²⁶

15:43. Արագ գործելու անհրաժեշտությունը, հավանաբար **Հովսեփ Արիմաթիացուն** համարձակությունն տվեց Պիղատոսից թույլտվություն խնդրելու՝ **Հիսուսի մարմինը** թաղելու համար: Հովսեփին աստվածապաշտ հրեա էր, թերևս սինեդրիոնի անդամ (Ղուկ. 23:50-51, տե՛ս նաև Մատթ. 27:57, Հովհ. 19:38):

15:44-45. Պիղատոսը դժվարությամբ հավատաց, որ Հիսուսն **արդեն մեռել է**: Երբ հարյուրապետը հաստատեց այդ փաստը, կուսակալը **մարմինը տվեց Հովսեփին**: Այս հատվածում Հիսուսի մարմնի առումով երկու տարբեր բառեր են օգտագործված: Հովսեփը խնդրեց Տեր Հիսուսի *մարմինը*, իսկ Պիղատոսը տվեց նրան *Նրա դին*:

15:46. Մեծ հոգատարությամբ Հովսեփը (նաև Նիկողեմոսը, Հովհ. 19:38-39) մարմինը օժեց, կտավով փաթաթեց և հետո Նրան դրեց իր **նոր գերեզմանի մեջ**: Գերեզմանը **ժայռի մեջ փորված** մի փոքր խորշ էր: Մուտքը կնքվեց մետաղադրամի նման քարով, որը գլորվեց ժայռում փորված ակոսի մեջ:

15:47. Եվ կրկին հիշատակվում է երկու կանանց, մասնավորապես երկու Մարիամների ներկայությունը: Մենք հիանում ենք նրանցով իրենց անխոնջ և անվախ սիրո համար: Ասվում է, որ այսօր միսիոներների գերակշռող մասը կանայք են: Իսկ ո՛ր են տղամարդիկ:

VIII. ԾԱՌԱՅՅՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿԸ (16-րդ գլ.)

Ա. Կանայք՝ դատարկ գերեզմանի մոտ (16:1-8)

16:1-4. Շաբաթ երեկոյան երկու Մարիամները և **Սողոմոն** գերեզման եկան, որպեսզի Հիսուսի մարմինը խունկերով օժեն: Նրանք գիտեին, որ հեշտ չէր լինելու: Նրանք գիտեին, որ գերեզմանի մուտքի մոտ հսկայական **քար** էր գլորած: Նրանք գիտեին հռոմեական կնիքի և գերեզմանը հսկող զինվորների մասին: Բայց սերը թռչում է խոչընդոտող լեռների վրայով, որպեսզի հասնի պաշտամունքի առարկային:

Կիրակի օրը՝ **վաղ առավոտյան**, նրանք բարձրաձայն հարցնում էին միմյանց. «Ո՞վ **պիտի գլորի քարը գերեզմանի դռնից մեզ համար**»: Նրանք **նայեցին** և տեսան, որ այն արդեն գլորված էր: Որքան հաճախ է պատահում, երբ մտադրվում ենք Փրկչին պատիվ մատուցել, դժվարությունները վերանում են, մինչև մենք հասնում ենք դրանց:

16:5-6. **Գերեզմանի ներսը մտնելով** նրանք մի հրեշտակ **տեսան**՝ երիտասարդի տեսքով, **սպիտակ պատմունճանով**: Նա արագորեն փարատեց նրանց վախերը՝ հայտարարելով, որ **Հիսուսը հարություն առավ**: Գերեզմանը դատարկ էր:

16:7. Այնուհետև հրեշտակը նրանց պատվիրեց լինել Հարության մունեստիկները: Նրանք պետք է **ասեին Նրա աշակերտներին և Պետրոսին**, որ Հիսուսը հանդիպելու է իրենց **Գալիլիայում**: Ուշադրություն՝ նրանք, որ Պետրոսը՝ այն աշակերտը, ով ուրացել էր իր Տիրոջը, առանձին է հիշատակված: Հարուցյալ Փրկիչը նրանից չհրաժարվեց. Նա սիրում էր նրան և փափագում էր նրան նորից տեսնել: Անհրաժեշտ էր վերականգնող հատուկ աշխատանք կատարել: Մոլորված ոչխարին պետք է ետ բերել՝ Հովվի հետ հաղորդակցվելու համար: Մոլորվածը պետք է Հոր տուն վերադառնա:

16:8. Կանայք **փախան գերեզմանից**՝ վախով և սարսափով պարուրված: Նրանք շատ էին վախենում որևէ մեկին պատմել, թե ինչ էր տեղի ունեցել: Սա զարմանալի չէ: Չարմանալին այն է, թե նրանք որքան համարձակ էին, հավատարիմ ու նվիրված:

Քանի որ Մարկոսի Ավետարանի երկու գլխավոր հնագույն ձեռագրերը չեն ներառում 9-20-րդ համարները, ժամանակակից շատ աստվածաշնչագետներ ենթադրում են, որ դրանք վավերական չեն: Սակայն կան ուժեղ փաստարկներ դրանք տեքստի մեջ ներառելու օգտին:

1. Իրականում մյուս բոլոր հունական ձեռագրերը և եկեղեցական շատ հայրերի գրքեր *պարունակում են* այդ հատվածը:

2. 8-րդ համարը բոլորովին տարօրինակ ավարտ է հասկապես հունարենում, որի մեջ վերջին բառն այստեղ «gar» է (համար): Այդ բառը հազվադեպ է հանդիպում նույնիսկ նախադասության վերջում, առավել ևս՝ գրքի վերջում:
3. Ինչպես մի քանիսն են սովորեցնում, եթե Մարկոսի Ավետարանի բնագրի վերջավորությունը կորել է, իսկ սա ավելի ուշ ամփոփում է, ապա մեր Տիրոջ խոսքը Իր Խոսքերի պահպանության մասին (Մատթ. 24:35), ըստ երևույթին, չի կատարվել:
4. Այդ հատվածի բովանդակությունն *ուղղափառ* է:
5. Ոճը, և հատկապես բառապաշարը, մոտ են և զուգահեռ գրքի 1-ին գլխին:²⁷ Դա կառուցվածքի օրինակ է, որ կոչվում է *խիսիզս*, որտեղ աշխատանքի սկիզբը և վերջը զուգահեռ են (աբգդ, դգբա):

Բ. Հիսուսը երևում է Մարիամ Մագդաղենացուն (16:9-11)

16:9. Փրկիչն առաջինը երևաց Մարիամ Մագդաղենացուն: Առաջին անգամ նա Հիսուսին հանդիպել էր, երբ Տերը նրանից **յոթ դև էր հանել**: Այդ ժամանակվանից նա սիրով ծառայում էր Նրան իր ունեցվածքով: Նա եղել էր խաչելության վկան և տեսել էր, թե որտեղ էին դրել Նրա մարմինը:

Մյուս Ավետարաններից իմանում ենք, որ գերեզմանը դատարկ գտնելով՝ նա վազեց՝ պատմելու այդ մասին Պետրոսին ու Հովհաննեսին: Նրա հետ վերադառնալով նրանք գերեզմանը դատարկ գտան, ինչպես որ նրանց ասել էր: Նրանք վերադարձան տուն, իսկ նա մնաց դատարկ գերեզմանի մոտ: Հենց այդ ժամանակ էլ Հիսուսը երևաց նրան:

16:10-11. Նա նորից վերադարձավ քաղաք և լավ նորությունը պատմեց սգացող աշակերտներին: Նրանց համար այդ նորությունը չափազանց լավն էր, որպեսզի հավատային: **Նրանք չհավատացին** Մարիամին:

Գ. Հիսուսը երևում է երկու աշակերտներին (16:12-13)

16:12. Այս իրադարձության ամբողջական նկարագրությունը արձանագրված է Ղուկ. 24:13-31-ում: Այստեղ կարդում ենք, որ Էմմաուսի ճանապարհին Հիսուսը **այլ կերպ երևաց երկու** աշակերտներին: Մարիամին Նա երևաց այգեպանի տեսքով: Այստեղ Նա ճամփորդի տեսք ուներ: Բայց դա նույն Հիսուսն էր՝ Իր փառավորված մարմնով:

16:13. Երբ երկու աշակերտները վերադարձան Երուսաղեմ և պատմեցին հարություն առած Փրկչի հետ իրենց հաղորդակցության մասին, նրանց նույն անհավատությանը ընդունեցին, ինչպես և Մարիամին:

Դ. Հիսուսը երևում է տասնմեկին (16:14-18)

16:14. Տասնմեկին երևալը տեղի ունեցավ այդ նույն կիրակի երեկոյան (Ղուկ. 24:36, Հովհ. 20:19-24, 1 Կոր. 15:5): Թեև այստեղ խոսվում է **տասնմեկ** աշակերտների մասին, ներկա էին միայն տասը: Թովմասը այդ անգամ բացակայում էր: Հիսուսն Իր աշակերտներին հանդիմանեց, որ Իր հարության մասին լուրը մերժեցին ընդունել Մարիամից և մյուսներից:

16:15. Այս համարում արձանագրված է մի պատվեր, որ տրվել է Տիրոջ կողմից Իր համբարձման նախօրեին: Այսպիսով, 14-15-րդ համարների միջև ժամանակամիջոց կա: Աշակերտներին հանձնարարվում է **Ավետարանը քարոզել** բոլոր արարածներին: Փրկչի նպատակը աշխարհին ավետարանելն էր: Նա մտադրվել էր այն իրականացնել տասնմեկ աշակերտների հետ, ովքեր Իրեն հետևելու համար բառացիորեն թողնելու էին ամեն բան:

16:16. Քարոզությունն ունենալու է երկու արդյունք: Ոմանք հավատալու են, **մկրտվելու են և պիտի փրկվեն**, իսկ մյուսները չեն հավատալու և **պիտի դատապարտվեն**:

Ոմանք 16-րդ համարն օգտագործում են, որպեսզի սովորեցնեն փրկվելու համար ջրային մկրտության անհրաժեշտությունը:

Մենք գիտենք, որ դա այդպես չէ հետևյալ պատճառներով.

1. Իտալի վրայի ավազակը չմկրտվեց, սակայն հավաստիացավ, որ Քրիստոսի հետ դրախտում է լինելու (Ղուկ. 23:43):
2. Կեսարիայում հեթանոսները մկրտվեցին փրկություն ստանալուց *հետո* (Գործք 10:44-48):
3. Հիսուսն Ինքը չէր մկրտում (Հովհ. 4:1-2). ինչ տարօրինակ բացթողում, եթե մկրտությունն անհրաժեշտություն էր փրկության համար:
4. Պողոսը գոհանում էր Աստուծուց, որ ինքը միայն մի քանիսին է մկրտել Կորնթոսում (1 Կոր. 1:14-16). անհավանական գոհություն է, եթե մկրտությունը կարևոր պայման լիներ փրկության համար:
5. ՆԿ-ում մոտ 150 հատված մատնանշում է, որ փրկությունը տրվում է միայն հավատի միջոցով: Ոչ մի համար չի հավաստում վկայությունների այդ գերակշռող մեծամասնությանը:
6. ՆԿ-ում մկրտությունը կապված է մահվան ու թաղման հետ, այլ ոչ թե հոգևոր ծնունդի:

Այդ դեպքում ի՞նչ է *նշանակում* 16-րդ համարը: Մենք ենթադրում ենք, որ այնտեղ մկրտությունը հիշատակվում է որպես հավատքի արտաքին ակնկալվող արտահայտություն: Մկրտությունը փրկության *պայման* չէ, այլ արտաքին *հռչակում այն մասին*, որ մարդը փրկվել է:

16:17-18. Այստեղ Հիսուսը թվարկում է որոշակի հրաշքներ, որոնք պիտի ուղեկցեն նրանց, ովքեր հավատում են Ավետարանին: Երբ կարդում ենք այդ համարները, ակնհայտ հարց է ծագում. «Այդ նշանները դրսևորվո՞ւմ են այսօր»: Մենք հավատում ենք, որ այդ **նշանները** նախատեսված էին հիմնականում առաքյալների ժամանակաշրջանի համար, մինչև ամբողջական Աստվածաշունչը հասանելի դարձավ ավարտուն ձևով: Այդ նշանների մեծ մասը հանդիպում են Գործք Առաքելոց գրքում.

1. **Դևեր հանել** (Գործք 8:7, 16:18, 19:11-16):
2. **Նոր լեզուներ** (Գործք 2:4-11, 10:46, 19:6):
3. **Օձեր բռնել** (Գործք 28:5):
4. **Մահացու թույն խմել՝** առանց վնասակար հետևանքների: Գործք Առաքելոց գրքում արձանագրված չէ: Եկեղեցու պատմիչ Եվսեբիոսն այդ հատկությունը վերագրում է Հովհաննեսին ու Բառնարասին:
5. **Հիվանդների վրա ձեռք դնել՝** նրանց բժշկության համար (Գործք 3:7, 19:11, 28:8-9):

Ի՞նչ էր այդ հրաշքների նպատակը: Մենք հավատում ենք, որ պատասխանը գտնվում է Եբր. 2:3-4-ում: Մինչև ՆԿ-ը ավարտուն ձևով ունենալը մարդիկ հարցեր էին ուղղում առաքյալներին և կարիք ունեին նաև մյուսներին ապացուցելու, որ Ավետարանն աստվածային է: Քարոզությունը հաստատելու համար Աստված վկայությունը տալիս էր նշանների, հրաշքների և Սուրբ Հոգու տարբեր պարզևների միջոցով:

Նման նշանների կարիքն այսօր անցել է: Մենք ունենք ամբողջական Աստվածաշունչը: Եթե մարդիկ չեն հավատում նրան, ապա նրանք ոչ մի բանի էլ չեն հավատա: Մարկոսը **չի ասել**, որ հրաշքները շարունակվելու են: *Այստեղ չկան* «մինչև աշխարհի վերջը» **խոսքերը**, ինչպես Մատթ. 28:18-20-ում:

Սակայն Մարտին Լյութերը ենթադրում է, որ «... Նշանները, որոնց մասին այստեղ խոսվում է, պետք է օգտագործվեն անհրաժեշտության դեպքում: Երբ կարիք է առաջանում, և Ավետարանը հայտնվում է ճրնջման տակ, այդ ժամանակ մենք անպայման պիտի անենք այդ նշանները և թույլ չտանք, որ Ավետարանը զրպարտեն ու մերժեն»:

Ե. Ծառայի համբարձումը Աստծո աջ կողմում (16:19-20)

16:19. Իր հարությունից քառասուն օր անց մեր **Տեր** Հիսուս Քրիստոսը **երկինք համբարձվեց և Աստծո աջ կողմում նըս-**

տեղ: Դա պատվի և իշխանության տեղն է:

16:20. Նրա պատվերին հնազանդվելով՝ աշակերտները՝ որպես բոցավառ ջահեր, առաջ **գնացին՝** քարոզելով Ավետարանի լուրը և Փրկչի համար հոգիներ շահելով: **Տիրոջ** գորությունը նրանց հետ էր: Խոստացված նշաններն ուղեկցում էին քարոզչությանը՝ **հաստատելով Խոսքը**, որ նրանք խոսում էին:

Այստեղ ավարտվում է պատմությունը. Քրիստոսը երկնքում է, իսկ երկրի վրա մի քանի նվիրյալ աշակերտներ աշխարհի ավետարանչության ծանրությունն իրենց վրա վերցրին և իրենց լիովին հանձնեցին մի բանի, որի արդյունքները հավիտենական հետևանքներ են ունենալու:

Մեր սերնդի մեջ մեզ է վստահված Մեծ հանձնարարականը: Մեր խնդիրն է Ավետարանը հասցնել յուրաքանչյուր մարդու:

Բոլոր մարդկանց մեկ երրորդը, որ երբևէ ապրել են երկրի վրա, ապրում են մեր օրերում: 2000թ.-ին երկրի վրա ապրելու են բոլոր մարդկանց կեսը, որ երբևէ ապրել են երկրի վրա: Բնակչության այսպիսի բուռն աճի դեպքում մեր խնդիրը մեծանում է: Բայց մեթոդը միշտ էլ նույնն է. Քրիստոսին անսահման սիրող, նվիրված աշակերտներ են պետք, ովքեր Նրա համար ոչ մի գոհաբերություն չափազանց մեծ չեն համարի:

Աստծո կամքն աշխարհի ավետարանումն է: Ի՞նչ ենք անում մենք դրա համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

¹(1:2-3) ՆՍ-ում գրված է «Եսայի մարգարե», բայց առաջին մեջբերումը Մաղաքիայից է արված: Ավանդական թարգմանության մեջ օգտագործված է «մարգարեներ» բառը, որը հիմնված է ձեռագրերի մեծամասնության վրա և ավելի արժանահավատ է:

²(1:14-15) ՆՍ-ում «թագավորության» բառը ջնջված է:

³(1:31) J. R. Miller, *Come Ye Apart*, մարտի 28-ի ընթերցանությունից:

⁴(1:13-18) James E. Stewart, *The Life and*

Theaching of Jesus Christ, էջեր 55-56:

⁵(3:20-21) Miller, *Come*, հունիսի 6-ի ընթերցանությունից:

⁶(3:31-35) և՛ ՆՍ-ում (հնում), և՛ Մ-ում (մեծամասնությունում) ավելացնում է «և քույրերը» արտահայտությունը, որն ընդունելի է:

⁷(4:30-32) մեջբերված է J. Oswald Sanders-ի կողմից *Spiritual Maturity*-ում, էջ 110:

⁸(5:1-5) ՆՍ-ում օգտագործված է «գերգնացիներ» բառը:

⁹(6:4-6) J. G. Miller, ավելի վաղ ժամանակի փաստաթղթերը բացակայում են:

¹⁰(6:31-32) William Kelly, *An Exposition of the Gospel of Mark*, էջ 85:

¹¹(7:2-4) E. Stanley Jones, *Growing Spiritually*, էջ 109:

¹²(7:11-13) Kelly, *Mark*, էջ 105:

¹³(8:1-9) Charles R. Erdman, *The Gospel of Mark*, էջ 116:

¹⁴(8:22-26) Մարդը հավանաբար անմիջապես կատարյալ տեսողություն ստացավ, բայց ճիշտ այնպես, ինչպես կատարյալ տեսողությամբ նորածին մանուկը, որ պիտի *սովորեր հայացքը կենտրոնացնել օբյեկտի վրա*:

¹⁵(8:32-33) Kelly, *Mark*, էջ 136:

¹⁶(9:44-48) Տերը երեք անգամ մեջբերում է Ես. 66:24-ի խոսքերը՝ զգուշացնելու համար հավիտենականությունը դժոխքում անցկացնելու վտանգի մասին:

¹⁷ՆՍ-ում չկա այս արտահայտությունը:

¹⁸ՆՍ-ում չկա «հարստության վրա հուսացողները» արտահայտությունը, բայց սա է հատվածի կենտրոնական շեշտադրումը:

¹⁹(10:31) Harry A. Ironside, *Expository Notes on the Gospel of Mark*, էջ 157:

²⁰(10:32) Erdman, *Mark*, էջ 147:

²¹(13:29) Հունարենում այս դեպքում ենթական ընդամենը ստորոգյալի վերջավորությունն է՝ «կա» (estin), որը համատեքստում կարող է ունենալ «Նա» (Քրիստոսը) կամ «այն» (իրադարձությունների կանխատեսումները): Այս երկու նշանակությունները համընկնում են:

²²(13:32) James H. Brookes, *I Am coming*, էջ 40:

²³(14:63-64) Կարծում են, որ Հովսեփ Արիմաթիացին և Նիկողեմոսը ներկա չեն եղել այդ անօրինական ժողովին:

²⁴(15:25-28) ՄԱ-ում չկա այս մեջբերումը:

²⁵(15:32) Ձեռագրերի մեծամասնության մեջ ավելացված է «Նրան» բառը, որն անհատականացնում է առաջնորդների խոսումը (հավանաբար կեղծ):

²⁶(15:42) Ժամանակակից հունարենում «պատրաստություն» բառն օգտագործվում է «ուրբաթ» բառի նշանակությամբ:

²⁷(16:8) Տե՛ս Georg Salmon-ի *Historical Introduction to the Study of the Books of the New Testament-ը*, էջեր 144-151:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Alexander, Joseph Addison. *The Gospel According to Mark*. Edinburgh: The Banner of Truth Trust, 1960թ.:

Coates, C. A. *An Outline of Mark's Gospel and other Ministry*. Kingston-on-Thames: Stow Hill Bible and Tract Depot, 1964թ.:

Cole, Alan. *The Gospel According to St. Mark*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1961թ.:

Erdman, Charles R. *The Gospel of Mark*. Philadelphia: The Westminster Press, 1917թ.:

Ironside, Harry A. *Expository Notes on the Gospel of Mark*. Neptune, N. J.: Loizeaux Brothers Publishers, 1948թ.:

Kelly, William. *An Exposition of the Gospel of Mark*. London: C. A. Hammond, 1934թ.:

Lenski, R. C. H. *The Interpretation of St. Mark's Gospel*. Minneapolis: Augsburg Publishing House, 1946թ.:

Swete, Henry Barclay. *The Gospel According to St. Mark*. London: MacMillan and Company, Limited, 1902թ.:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ

Նախարան

«Գոյություն ունեցող գրքերից ամենագեղեցիկը»:

Էռնեստ Ռենան

I. Հատուկ տեղը կանոնում

«Գոյություն ունեցող գրքերից ամենագեղեցիկը». սա բարձր գնահատական է, հատկապես երբ այն հնչում է սկեպտիկի շուրթերից: Այնուամենայնիվ, Ղուկասի Ավետարանին հենց այսպիսի գնահատական է տվել ֆրանսիացի քննադատ Ռենանը: Եվ ո՞ր զգայուն *հավատացյալը*, կարդալով ավետարանի այս ներշնչյալ գլուխգործոցը, կուզենա հակառակվել նրա խոսքերին: Ղուկասը հավանաբար միակ հեթանոս գրողն էր, ով Աստծո կողմից ընտրվեց Նրա Գիրքը գրելու համար, և սա կարող է նրա հատուկ գրավչությունը մասամբ բացատրել մեզ՝ հունա-հռոմեական մշակույթի արևմրտյան ժառանգորդներին:

Հոգևոր իմաստով մենք շատ ավելի աղքատ կլինեինք Տեր Հիսուսին և Նրա ծառայությանը տրված մեր գնահատականի մեջ՝ առանց Ղուկաս բժշկի եզակի արտահայտչականության: Նա ընդգծում է առանձին անձերի, նույնիսկ աղքատների ու վտարանդիների նկատմամբ մեր Տիրոջ յուրահատուկ շահագրգռվածությունը: Նրա սերն ու փրկությունը տարածվում է ոչ միայն հրեաների, այլև բոլոր մարդկանց վրա: Ղուկասը յուրահատուկ կերպով ուշադրությունը կենտրոնացնում է նաև փառաբանության, գովերգության (Ղուկ. 1 և 2 գլուխներում օրինակներ է տալիս վաղ քրիստոնեական օրհներգերից), աղոթքի և Մուրբ Հոգու վրա:

II. Հեղինակը

Ղուկասը ծնունդով Անտիոքից էր, մասնագիտությամբ՝ բժիշկ: Նա երկար ժամանակ եղել է Պողոսի ուղեկիցը, շատ է գրուցել մյուս առաքյալների հետ և իր երկու գրքերում էլ մեզ համար թողել է նրանցից ստացած անձի դարմանման օրինակները:

Եվսերոսի «Եկեղեցու պատմություն» աշխատությունում երրորդ Ավետարանի (iii, 4) հեղինակի վերաբերյալ *արտաքին վկայությունը* համընկնում է համընդհանուր վաղ քրիստոնեական ավանդության հետ: Իրիներուր շատ հղումներ է անում երրորդ Ավետարանից՝ որպես Ղուկասի գրչին պատկանող Ավետարան: Հօգուտ Ղուկասի հեղինակության՝ վաղ շրջանի մյուս վկայությունների մեջ են ներառվում Հուստինիոս վկայի, Հիգիսիփիոսի, Կղեմես Ալեքսանդրացու և Տերտուղիանոսի վկայությունները: Ղուկասի Ավետարանը միակն էր, որ ընդունում էր հայտնի հերետիկոս Մարկիոնը, այն էլ զգուշորեն շեղված ու կրճատված հրատարակությամբ: Մուրատորյան հատվածական կանոնում երրորդ Ավետարանը կոչվում է ըստ Ղուկասի:

Ղուկասը միակ ավետարանիչն է, ով գրել է իր Ավետարանի շարունակությունը, և հենց այս գրքից՝ Գործք Առաքելոցից, ավելի հստակ է երևում, որ Ղուկասն է 3-րդ Ավետարանի հեղինակը: «Մենք» դերանունով հանդիպող հատվածները նկարագրում են այն իրադարձությունները, որտեղ անձնապես մասնակցել է արձանագրողը (16:10,

20:5-6, 21:15, 27:1, 28:16 հմմտ. 2 Տիմ. 4:11): Բոլորի միջից ընտրելով՝ կարելի է միայն Ղուկասին հարմար գտնել որպես այդ բոլոր իրադարձությունների մասնակից: Գրելու ոճից և Թեոփիլոսին նվիրված լինելուց լիովին պարզ է, որ Ղուկասի Ավետարանը և Գործք Առաքելոցը պատկանում են միևնույն հեղինակի գրչին:

Պողոսը Ղուկասին «սիրելի բժիշկ» է անվանում և նրա մասին յուրահատուկ ձևով է խոսում՝ նրան չխառնելով հրեա քրիստոնյաների հետ (Կոր. 4:14), ինչն էլ մատնացույց է անում նրան՝ որպես ՆԿ-ում միակ հեթանոս հեղինակի: Ղուկասի Ավետարանն ու Գործք Առաքելոցը ծավալով գերազանցում են Պողոսի թղթերին միասին վերցրած:

Ներքին վկայությունները ուժեղացնում են արտաքին փաստաթղթերն ու եկեղեցական ավանդույթները: Բառապաշարն էլ հաճախ ավելի ճշգրիտ է բժշկական եզրույթներում, քան նորկտակարանյան մյուս գրողների մոտ: Հունարենի գրական ոճի հետ միասին հաստատվում է, որ հեղինակը հեթանոսական ծագմամբ, բայց քրիստոնեական մշակույթով բժիշկ է, ով միևնույն ժամանակ շատ լավ ու մանրամասն տեղյակ է հրեաներին բնորոշ յուրահատկություններին: Ամսաթվերի ու ճշգրիտ հետազոտությունների (օրինակ՝ 1:1-4, 3:1) նկատմամբ Ղուկասի սերը նրան դնում են Եկեղեցու առաջին պատմիչների շարքում:

III. Գրելու տարեթիվը

Ավետարանի գրման հնարավոր թվականն 1-ին դարի 60-ականների սկիզբն է: Ոմանք այն վերագրում են մ.թ. 75-85թթ., կամ նույնիսկ 2-րդ դարին, ինչը մասամբ բխում է այն ժխտումից, որ Քրիստոսը կարող էր ճշգրտորեն կանխատեսել Երուսաղեմի կործանումը: Քաղաքը կործանվեց մ.թ. 70թ.-ին, ուստի Տիրոջ մարգարեությունը պետք է գրված լիներ այդ թվականից առաջ:

Քանի որ գրեթե բոլորը համաձայն են, որ Ղուկասի Ավետարանը ժամանակի առու-

մով պետք է նախորդի Գործք Առաքելոցի գրվելուն, իսկ Գործքը վերջանում է Պողոսի՝ Հռոմ ժամանելով՝ մոտ մ.թ. 63թ.-ին, ապա հավաստի է թվում ավելի վաղ տարեթիվը: Հռոմի մեծ հրդեհն ու քրիստոնյաների հալածանքը, որոնց մեղավոր հայտարարեց Ներոնը (մ.թ. 64թ.-ին), ինչպես նաև Պետրոսի ու Պողոսի մարտիրոսվելը դրժվար թե անուշադրության մատնվել եկեղեցական առաջին պատմիչի կողմից, եթե այդ իրադարձություններն արդեն կատարված լինեին: Հետևաբար ավելի հավանական թվականը մ.թ. 61-62թթ. է:

IV. Ենթահողը և թեման

Հույներն այնպիսի մարդ էին փնտրում, ով օժտված կլիներ աստվածային կատարելությամբ ու միաժամանակ իր մեջ կհամադրեր տղամարդկանց ու կանանց լավագույն գծերը, բայց գերծ կլիներ նրանց թերություններից: Որպես այդպիսին՝ Ղուկասը ներկայացնում է Քրիստոսին՝ Մարդու Որդուն՝ հզոր և միևնույն ժամանակ՝ կարեկցությամբ լի: Նա ընդգծում է Նրա մարդկային բնույթը:

Օրինակ՝ մյուս Ավետարանների հետ համեմատած՝ այստեղ ավելի շատ է շեշտվում Տեր Հիսուսի աղոթքի կյանքը: Հաճախ հիշվում են համակրանքի ու կարեկցանքի զգացումները: Հնարավոր է՝ ճիշտ այդ պատճառով էլ այստեղ յուրահատուկ տեղ են զբաղեցնում կանայք ու երեխաները: Ղուկասի Ավետարանը հայտնի է նաև որպես միսիոներական Ավետարան: Այս Ավետարանն ուղղված է հեթանոսներին, իսկ Տեր Հիսուսը ներկայացված է որպես աշխարհի Փրկիչ: Եվ վերջապես, այս Ավետարանը աշակերտության ձեռնարկ է: Մենք հետևելով ենք մեր Տիրոջ կյանքի աշակերտության ուղղուն և լսում Նրա ընդարձակ շարադրանքը, երբ Նա խրատում և կրթում էր Իր հետևորդներին: Մասնավորապես հենց սրան էլ պետք է հետևենք մենք մեր մեկնաբանություններում: Կատարյալ Մարդու կյանքում դիտարկելու ենք այն առաքինությունները, որոնք սահմանում են մարդկա-

յին կատարյալ կյանքը: Նրա խոսքերում նաև արտացոլվում է խաչի ճանապարհը, որին Նա մեզ կոչ է անում հետևել:

Սկսելով «Ավետարանն ըստ Ղուկասի» ուսումնասիրությունը՝ եկե՛ք հնազանդվենք Փրկչի կոչին, ամեն բան թողնենք ու Նրան

հետևենք: Հնազանդությունը հոգևոր ճանաչողություն, գիտելիք ձեռք բերելու օրգանն է: Սուրբ Գրքի իմաստը մեզ համար ավելի պարզ ու թանկագին կդառնա այն ժամանակ, երբ խորասուզվենք այստեղ նկարագրված իրադարձությունների մեջ:

ՈՒՐՎԱԳԻԾ

- I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՂՈՒԿԱՍԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՄԵԹՈՂԸ (1:1-4)
- II. ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԳԱԼՈՒՍՏՆ ՈՒ ՆՐԱ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏՆԸ (1:5-2:52)
- III. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (3:1-4:30)
- IV. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ Է ԻՐ ՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ (4:31-5:26)
- V. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ԲԱՑԱՏՐՈՒՄ Է ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ (5:27-6:49)
- VI. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ Է ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ (7:1-9:50)
- VII. ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԴԵՍ ԱՃՈՂ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (9:51-11:54)
- VIII. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (12-16-րդ գլ.)
- IX. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ՀՐԱՀԱՆԳՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ (17:1-19:27)
- X. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՍՈՒՄ (19:28-21:38)
- XI. ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ՉԱՐՉԱՐԱՆՔՆ ՈՒ ՄԱՀԸ (22-23-րդ գլ.)
- XII. ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԸ (24-րդ գլ.)

Մեկնաբանություն

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՂՈՒԿԱՍԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՆՐԱ ՄԵԹՈՂԸ (1:1-4)

Ներածության մեջ Ղուկասն իրեն որպես պատմաբան է ներկայացնում: Նա նկարագրում է իրեն հասանելի փաստացի աղբյուրներն ու այն մեթոդը, որին ինքը հետևել է, հետո բացատրում է գրելու նպատակը: Մարդկային տեսանկյունից նա երկու տեսակի սկզբնաղբյուր ուներ՝ Քրիստոսի կյանքի մասին արձանագրություններն ու Նրա ականատեսների բանավոր զեկույցները:

1:1. Գրավոր աղբյուրները նկարագրված են 1-ին համարում. **քանի որ շատերը ձեռնարկեցին մեր մեջ հաստատ իմացված**

բաների պատմությունը հերթականությամբ շարադրել...: Մենք չգիտենք, թե ովքեր են այդ հեղինակները: Նրանց մեջ կարող էին լինել Մատթեոսն ու Մարկոսը, իսկ ուրիշներն էլ ակներևաբար ի վերուստ ներշնչված չէին դրա համար (Հովհաննեսը ուշ է գրել):

1:2. Ղուկասը նաև հիմնվել է բանավոր ավանդությունների վրա. **ինչպես մեզ ավանդեցին նրանք, որ սկզբից ականատեսներ և Խոսքի սպասավորներ եղան:** Ղուկասը չի ներկայանում որպես ականատես, սակայն ներկայացնում է ականատես մարդկանց պատմածները: Մեր Տիրոջ այդ աշակերտներին նա անվանում է **ականատեսներ** ու **Խոսքի սպասավորներ:** Այստեղ նա «Խոսք» բառը օգտագործում է

որպես Քրիստոսի անուն այնպես, ինչպես Հովհաննեսը իր Ավետարանում: «**Սկզբից**» բառն այստեղ նշանակում է քրիստոնեական դարաշրջանի սկիզբը, որի մասին հռչակեց Հովհաննես Մկրտիչը: Այն փաստը, որ Ղուկասն օգտագործել է գրավոր ու բանավոր աղբյուրներ, չի բացառում նրա գրածների բառացի ներշնչվածությունը: Դա նշանակում է, որ Սուրբ Հոգին նրան ղեկավարեց նյութերի ընտրության ու դասակարգման մեջ:

Ջեյմս Ս. Մոյուարտը այսպես է մեկնաբանում.

«Ղուկասն ամենայն պարզությամբ մատնանշում է, որ Աստծո կողմից ներշնչված գրողները հրաշքով ազատված չէին պատմական մանրակրկիտ ուսումնասիրություն կատարելու անհրաժեշտությունից...: Ներշնչումը մարդկային մտքի ու կարողությունների կախարդական ձևով հափշտակում չէր Աստծո կողմից, այլ Իր կամքը արտահայտելու ձև Իրեն ընծայված մարդկային մտքի ու կարողության միջոցով: Այն չէր անտեսում սուրբ տեքստերը գրողների անհատականությունը և նրանց Աստծո մեքենաներ չէր դարձնում, այլ զորացնում էր նրանց անձնավորությունը և մարդուն Աստծո կենդանի վկա դարձնում»:¹

1:3. Ղուկասը համառոտ ներկայացնում է իր դրդապատճառներն ու օգտագործած մեթոդը. **ինձ էլ լավ թվաց, հենց սկզբից ամեն ինչին ճշգրտորեն ծանոթ լինելով, հերթականությամբ քեզ գրել, ով գերագանց Թեոփիլոս...**: Ինչ վերաբերում է դրդապատճառներին, ապա նրան **լավ թվաց**: Եթե մարդկային տեսանկյունից նայենք, ապա դա համոզվածություն էր առ այն, որ նա պետք է գրեր Ավետարանը: Իհարկե, մեզ հայտնի է, որ աստվածային ստիպողականությունը հետաքրքիր ձևով խառնված էր մարդկային այս որոշման հետ:

Ինչ վերաբերում է իր մեթոդին, ապա նա նախապես ճշգրտորեն նշել է **հենց սկզբի** ընդհանուր ընթացքը: Նա իր առջև խնդիր էր դրել գիտականորեն մանրամասն ու-

սումնասիրել մեր Փրկչի կյանքի իրադարձությունների ընթացքը: Ղուկասը ստուգել էր իր աղբյուրների ճշգրտությունը, մի կողմ էր դրել այն ամենը, որ հոգևորապես չէր համապատասխանում, իսկ հետո շարադրել էր հավաքած նյութերն այն հերթականությամբ, որն ունենք այսօր: Երբ Ղուկասն ասում է, որ իրադարձությունները գրել է **հերթականությամբ**, ապա անպայման նկատի չունի ժամանակագրական հերթականությունը: Իրադարձություններն իր Ավետարանում միշտ չէ, որ դրված են այն հերթականությամբ, ըստ որի տեղի են ունեցել: Նրանց դասավորվածության հերթականությունն ավելի շուտ բարոյական է կամ հոգևոր, այսինքն դրանք կապված են թեմատիկ հերթականությամբ կամ բարոյական խրատանիով, ոչ թե ժամանակով: Չնայած որ այս Ավետարանը և Գործք Առաքելոցը հասցեագրված են **Թեոփիլոսին**, մենք նրա մասին զարմանալիորեն քիչ բան գիտենք: Նրան դիմելով որպես **գերագանց** մեկին՝ Ղուկասը ցույց է տալիս, որ նա պետական ծառայող էր: Նրա անվան նշանակությունն է՝ *Աստծո բարեկամ*: Հավանաբար նա Հռոմեական կայսրության արտասահմանյան ծառայությունում պատվավոր և պատասխանատու դիրք ունեցող քրիստոնյա էր:

1:4. Ղուկասի նպատակը Թեոփիլոսին գրավոր պատմություն ներկայացնելն էր, որը կհաստատեր Տեր Հիսուսի կյանքին ու ծառայությանը վերաբերող բաների հավաստիությունը, որոնք նա արդեն սովորել էր: Գրավոր հաղորդագրությունը տարբերվում է կայունությամբ ու պաշտպանված է բանավոր փոխանցման ժամանակ ծագող անճշտություններից:

Այս ձևով 1-4-րդ համարները տալիս են մեզ աստվածաշնչյան այս գրքի գրվելու մարդկային հանգամանքների և պարագաների կարճ, բայց սպառիչ նախապատմությունը: Մենք գիտենք, որ Ղուկասը ներշնչմամբ է գրել: Այստեղ նա այդ մասին չի հիշատակում: Նա պարզապես օգտագործում է **սկզբից** (հ. 3) բառը, որը նաև կարելի է թարգմանել որպես *ի վերուստ*:²

II. ՄԱՐԳՈՒ ՈՐԴՈՒ ԳԱՆՈՒՍՏՆ ՈՒ ՆՐԱ ՆԱԽԱԿԱՐԱԳԹԵՏԸ (1:5-2:52)

Ա. Նախակարապետի ծննդյան մասին լուրը (1:5-25)

1:5-6. Ղուկասն իր պատմությունն սկսում է մեզ ներկայացնելով Հովհաննես Մկրտչի ծնողներին: Նրանք ապրում էին այն ժամանակ, երբ **Հուդայի** վրա թագավորում էր չարական **Հերովդես** Մեծը: Նա իդումեացի էր, այսինքն՝ Եսափի սերնդից:

Չաքարիան, որ նշանակում է *Տերը հիշում է*, քահանա էր **Աբիայի կարգից**¹ հրեական քահանայությունում Դավթի հաստատած քսանչորս դասակարգություններից մեկը (1 Մն. 24:10): Յուրաքանչյուր դաս տարին երկու անգամ՝ շաբաթից շաբաթ, կանչվում էր Երուսաղեմի տաճարում ծառայություն մատուցելու համար: Այդ ժամանակ այնքան շատ քահանաներ կային, որ Սրբություն մտնելու և խնկարկելու առանձնաշնորհումը կյանքում մեկ անգամ էր տրվում կամ ընդհանրապես չէր լինում:

Եղիսաբեթը, որ նշանակում է *Աստծո երդում*, նույնպես **Ահարոնի** քահանայական սերնդից էր: Ինքն ու իր ամուսինը նվիրյալ հրեաներ էին, որոնք ամենայն մանրամասնությամբ ջանում էին պահպանել ՀԿ-ի ինչպես բարոյական, այնպես էլ ծիսական գրվածքները: Իհարկե, նրանք առանց մեղքի չէին, բայց մեղք գործելիս ջանում էին զոհ մատուցել կամ ինչ-որ այլ միջոցներով պահպանել ծիսական պահանջները:

1:7. Այս գույգը *գավիսկներ չունեիր*. անպատվելի վիճակ ցանկացած հրեայի համար: Բժիշկ Ղուկասը նշում է, որ պատճառը Եղիսաբեթի անպտղությունն էր: Դժվարությունը խորանում էր այն փաստով, որ **երկուսն էլ արդեն ծերացել էին**:

1:8-10. Մի օր **տաճարում** Չաքարիան իր քահանայական պարտականություններն էր կատարում: Դա նրա կյանքի ամենամեծ օրն էր, որովհետև նրան վիճակվել էր տաճար մտնել՝ **խնկարկություն անելու**: Տաճարից **դուրս** հավաքված էր **աղոթող ժողովրդի** մի մեծ բազմություն: Ոչ ոք որո-

շակիրեն չգիտի, թե ինչ է նշանակում **խընկարկության ժամանակ**:

Նկատելք. Ավետարանն սկսվում է տաճարում **ժողովրդի** մեծ բազմության **աղոթքով** և ավարտվում է տաճարում մարդկանց փառաբանությամբ: Միջանկյալ գլուխներն այն մասին են պատմում, թե ինչպես են նրանց աղոթքները պատասխանվել Տեր Հիսուս Քրիստոսի Անձնավորությամբ ու ծառայությամբ: Սա շա՛տ ոգևորիչ է:

1:11-14. Քահանայի ու ժողովրդի միաբան աղոթքը դարձավ աստվածային հայտնության հարմարագույն ժամանակն ու իրավիճակը: **Եվ Տիրոջ հրեշտակը երևաց նրան՝ խնկի սեղանի աջ կողմում կանգնած՝** շնորհի վայրում: Սկզբում **Չաքարիան** վախեցավ. նրա ժամանակակիցներից ոչ ոք հրեշտակ չէր տեսել: Սակայն հրեշտակը նրան հանգստացրեց՝ զարմանալի մի լուր հաղորդելով: **Եղիսաբեթը** մի **որդի** է ծնելու, ում պետք է **Հովհաննես** անվանեն՝ *Եհովայի ողորմությունը կամ շնորհը*: Նա ոչ միայն իր ծնողներին **ուրախություն ու ցնծություն է** բերելու, այլև օրհնություն է լինելու **շատերի** համար:

1:15. Այդ երեխան **մեծ պիտի լինի Տիրոջ առջև**. միակ մեծությունն է, որ իրական նշանակություն ունի: Նախևառաջ նա մեծ է լինելու անձնապես Տիրոջ համար առանձնացված լինելու շնորհիվ. նա խաղողից պատրաստված **գինի** և ցորենից պատրաստված **օղի** չի խմելու:

Այնուհետև նա մեծ կլինի իր հոգևոր ուժով և **դեռ իր մոր արգանդից Սուրբ Հոգով պիտի լցվի**: Սա չի նշանակում, որ Հովհաննեսն ի ծնե փրկված կամ դարձի էր եկած. սա նշանակում է միայն այն, որ Աստծո Հոգին հենց սկզբից էլ նրա հետ էր, որպեսզի նրան պատրաստի յուրահատուկ առաքելության՝ Քրիստոսի նախակարապետը լինելու համար:

1:16-17. Այնուհետև նա մեծ կլինի Մեսիայի մունետիկի դերը ստանձնելու համար: Հրեա ժողովրդից **շատերին** նա **Տիրոջն է դարձնելու**: Նրա ծառայությունը նմանվելու է **Եղիա** մարգարեի ծառայությանը, ով

ձգտում էր ժողովրդին առաջնորդել Աստծո հետ ճիշտ փոխհարաբերությունների ապաշխարության միջոցով:

Չ. Քոլեման Լոքը նշում է.

«Նրա քարոզը անհոգ ծնողների սիրտը դարձրեց երեխաների հանդեպ իրական հոգևոր հոգատարությանը: Նա նաև անհնազանդ և ըմբոստ երեխաների սրտերն ուղղեց դեպի արդարների իմաստությունը»:³

Այլ խոսքերով, նա ջանալու է աշխարհից հավաքել հավատացյալների հասարակությունը, որը պատրաստ կլինի դիմավորելու Տիրոջը Նրա հայտնվելու ժամանակ: Սա արժանի ծառայություն է մեզանից յուրաքանչյուրի համար:

Ուշադրություն դարձրեք, թե 16-17-րդ համարներն ինչպես են մատնանշում Քրիստոսի աստվածությունը: 16-րդ համարում ասված է, որ Հովհաննեսն **Իսրայելի որդիներից շատերին պիտի դարձնի դեպի իրենց Տեր Աստվածը**: Այնուհետև 17-րդ համարում ասվում է, որ Հովհաննեսը **կգնա Նրա առջևից**: Ո՞ւմ է մատնանշում «Նրա» բառը: Նախորդ համարից լիովին պարզ է, որ դա վերաբերում է Աստծուն (**դեպի իրենց Տեր Աստվածը**): Բայց մենք գիտենք, որ Հովհաննեսը Հիսուսի նախակարապետն էր: Ուրեմն հետևությունն ակնհայտ է. Հիսուսն Աստված է:

1:18. Ծերունի **Չաքարիան** հուսահատության մեջ ընկավ խոստումը կատարելու կատարյալ անհնարինության պատճառով: Ինքն ու իր **կինը տարիքն առած էին** երեխայի ծնողներ դառնալու համար: Այս հասարակ հարցով արտահայտվեց նրա՝ կասկածներով լի սիրտը:

1:19. Հրեշտակը նախ պատասխանեց՝ նշելով իր անունը՝ **Գաբրիել (Աստծո հոգորդ)**: Թեև ընդհանրապես նա ներկայացվում է որպես հրեշտակապետ, սակայն սուրբգրությունները նրան հիշատակում են միայն որպես **Աստծո առջև կանգնող** և Աստծուց մարդկանց պատգամներ բերող հրեշտակ (Դան. 8:16, 9:21):

1:20. Քանի որ Չաքարիան տարակուսեց, գրկվեց խոսելու կարողությունից **մինչև** երեխայի ծնունդը: Երբ հավատացյալը կասկածի տակ է դնում Աստծո Խոսքը, նա կորցնում է իր վկայությունն ու երգը: Անհավատությունը կնքում է շուրթերը, և դրանք այնքան ժամանակ կնքված են մնում, մինչև հավատը վերականգնվում է ու պոռթկում է փառաբանությամբ ու վկայությամբ:

1:21-22. **Ժողովուրդն** անհամբերությամբ սպասում էր տաճարից դուրս. սովորաբար խնկարկող քահանան ավելի շուտ էր դուրս գալիս: Երբ վերջապես **Չաքարիան** դուրս եկավ, նշաններով էր նրանց հետ հաղորդակցվում: Այդ ժամանակ նրանք **հասկացան, որ տաճարում տեսիլք է տեսել**:

1:23. Տաճարում իր ծառայության օրերի ավարտից հետո քահանան **վերադարձավ** տուն և հրեշտակի կանխատեսածի համաձայն՝ նա չէր կարողանում խոսել:

1:24-25. Երբ **Եղիսաբեթը** հղիացավ, **հինգ ամիս** իր տնից դուրս չեկավ և իր մեջ ցնծում էր, որ **Տերը** նրա վրայից չբերության **նախատինքը** վերցրեց:

Բ. Մարդու Որդու ծննդյան ավետումը (1:26-38)

1:26-27. Չաքարիային հայտնվելուց **վեց ամիս** անց կամ Եղիսաբեթի հղիանալուց հետո **Գաբրիելը** կրկին հայտնվեց՝ այս անգամ **Մարիամ** անունով **Կույսին**, ով ապրում էր **Գալիլիայի Նազարեթում**: Մարիամը **նշանված էր Դավթի** անմիջական սերնդից **Հովսեփ** անունով մարդու հետ, ով ժառանգել էր Դավթի գահին նստելու օրինական իրավունքը, թեև հյուսն էր: Նշանադրությունն ավելի գորեղ համաձայնություն էր, քան մեր օրերի նշանդրերը: Բանն այն է, որ այն հնարավոր էր լուծարել ամուսնալուծության պես՝ օրենքի որոշմամբ:

1:28. Հրեշտակը դիմեց Մարիամին և նրան **շնորհընկալ** անվանեց, ում Տերը յուրահատուկ առանձնաշնորհմամբ այցելեց: Այստեղ պետք է երկու միտք առանձնացնել. 1. հրեշտակը *չերկրյազեց* Մա-

րիամին և նրան չդիմեց աղոթքով: Նա պարզապես ողջունեց նրան. 2. Նա *չասաց*, որ Մարիամը «վի է շնորհով», այլ որ նա **օրհնյալ է**:⁴

1:29-30. Հասկանալի է, որ այսպիսի ողջունից Մարիամը **շփոթվեց**: Նա մտածում էր, թե դա ինչ կարող էր նշանակել: **Հրեշտակը** հանդարտեցրեց նրա վախերը, իսկ հետո ասաց, որ Աստված նրան ընտրել է՝ լինելու երկար սպասված Մեսիայի մայրը:

1:31-33. Ուշադրություն՝ նա դարձրեք այն կարևոր ճշմարտություններին, որոնք բովանդակված են ավետման մեջ.

Մեսիայի ճշմարիտ մարդկային բնույթը. **ահա կհղիանաս և Որդի կծնես**:

Նրա աստվածությունն ու Փրկիչ լինելու առաքելությունը. **Նրա անունը ՀԻՍՈՒՍ կդնես**, որ նշանակում է *Եհովան Փրկիչ է*:

Նրա անբաժանելի մեծությունը. **Նա մեծ կլինի**. դա վերաբերում է ինչպես Նրա Անձնավորությանը, այնպես էլ Նրա ծառայությանը:

Նրա Աստծո Որդի լինելու ինքնությունը. **Բարձրյալի Որդի կկոչվի**:

Նրա կոչումը համապատասխանում է Դավթի գահին. **Տեր Աստված Նրան կտա Իր Հոր՝ Դավթի աթոռը**: Սրանով Նա որպես Մեսիա է հաստատվում:

Նրա անանցանելի ու տիեզերական թագավորությունը. **Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, և Նրա թագավորությանը վերջ չի լինի**:

Պարզ է, որ 31-32ա-րդ համարները վերաբերում են Զրիստոսի առաջին գալուստին, մինչ 32բ-33-րդ համարները նկարագրում են Նրա երկրորդ գալուստը՝ որպես թագավորների Թագավորի ու տերերի Տիրոջ:

1:34-35. Մարիամի «Ինչպե՛ս կլինի դա» հարցը զարմանք էր արտահայտում, ոչ թե կասկած: Ինչպե՛ս կարող էր երեխա ծնել, եթե **տղամարդ** չէր ճանաչում: Չնայած հրեշտակն այդ մասին շատ բառեր չասաց, բայց պատասխանը հետևյալն էր՝ *կուսակյան ծնունդ*: **Սուրբ Հոգին** պետք է հրաշք կատարեր: Նա **կգա** Մարիամի վրա, և

Բարձրյալի զորությունը հովանի կլինի նրան: Մարիամի «Ինչպե՛ս կլինի դա» հարցին, որը մարդկային հասկացողությանը անհնարին է թվում, Աստված պատասխանում է՝ **Սուրբ Հոգու միջոցով ուստի քեզանից ծնվածը Սուրբ կլինի և կկոչվի Աստծո Որդի**: Հետևաբար այստեղ մարդեղացման մասին մեծ հայտարարություն ունենք: Մարիամի որդին մարմնով հայտնված Աստվածն է: Լեզուն ի վիճակի չէ ամբողջությամբ արտահայտելու այստեղ թաքնված խորհուրդը:

1:36-37. Այնուհետև հրեշտակը Մարիամին հայտնեց այն լուրը, որ **Եղիսաբեթը՝** նրա **ազգականը**, որը նախկինում **չբեր էր**, արդեն **վեցերորդ ամիսն է**, որ հղի է: Այս հրաշքը պետք է հաստատեր Մարիամին, որ **Աստծո համար անկարելի բան չկա**:

1:38. Գեղեցիկ խոնարհությանը **Մարիամն** իրեն հանձնեց Տիրոջը՝ Նրա զարմանահրաշ նպատակների կատարման համար: Այնուհետև **հրեշտակը գնաց նրա մոտից**:

Գ. Մարիամն այցելում է Եղիսաբեթին (1:39-45)

1:39-40. Մեզ չի ասված, թե ինչու այն ժամանակ **Մարիամը գնաց Եղիսաբեթին** այցելելու: Միգուցե նա ուզում էր խույս տալ վարկաբեկությունից, որն անխուսափելիորեն կծագեր Նազարեթում, եթե իմանային իր վիճակի մասին: Եթե այդպես է, այդ դեպքում Եղիսաբեթի կողմից ցույց տրված հյուրընկալությունն ու բարությունը կրկնակի հաճելի էին:

1:41. Հենց որ **Եղիսաբեթը լսեց** Մարիամի ողջունը, **մանուկը խաղաց նրա որովայնում** դեռ չծնված նախակարապետի խորհրդավոր, ակամա արձագանքը դեռ չծնված Մեսիայի ժամանման առթիվ: **Եվ Եղիսաբեթը Սուրբ Հոգով լցվեց**, այսինքն՝ Նա վերահսկողության տակ վերցրեց Եղիսաբեթին՝ ուղղորդելով նրա խոսքն ու գործողությունը:

1-ին գլխում խոսվում է Սուրբ Հոգով լրցված երեք մարդկանց՝ Հովհաննես Մկրտչի (հ. 15), Եղիսաբեթի (հ. 41) և Չաքարիայի

(հ. 67) մասին:

Սուրբ Հոգով լցված լինելու նշաններից մեկը սաղմոսներով, օրհներգերով և հոգևվոր երգերով արտահայտվող խոսքն է (Եփ. 5:18-19): Դրա համար էլ զարմանալի չէ, որ երեք երգ ենք գտնում այս գլխում և երկուսն էլ՝ հաջորդում: Նրանցից չորսը լայն տարածում ունեն լատիներեն անվանումներով. 1. Եղիսաբեթի ողջույնը (1:42-45), 2. «Magnificat» (Մեծարում) (1:46-55), 3. «Benedictus» (Օրհնյալ է) (1:68-79), 4. «Gloria in Excelsis Deo» (Փառք Բարձունքներում) (2:14) և 5. «Nunc dimittis» (Հիմա արձակում ես) (2:29-32):

1:42-45. Խոսելով յուրահատուկ ներշնչվածությամբ՝ Եղիսաբեթը Մարիամին ողջունեց որպես իր **Տիրոջ մորը**: Նրա սրբտուն նախանձի ոչ մի հետք չկար, միայն ուրախություն և հիացմունք էր այն բանից, որ դեռ չծնված Երեխան իր **Տերն է**: Մարիամը **օրհնյալ է կանանց մեջ**, որովհետև նրան էր տրված Մեսիային ծննդաբերելու առանձնաշնորհումը: **Օրհնյալ է նրա որովայնի պտուղը**, քանի որ Նա Տերն ու Փրկիչն է: Աստվածաշունչը Մարիամին *երթեք* աստվածամայր Մարիամ չի անվանում: Նա իսկապես Հիսուսի մայրն էր, իսկ Հիսուսն Աստված է, բայց, այնուամենայնիվ, վարդապետորեն անհեթեթ կլինի ասել, որ Աստված մայր ունի: Հիսուսը գոյություն ուներ ի հավիտենից. մինչ Մարիամը սահմանափակ արարած էր և ճշգրիտ գիտեր այն ամսաթիվը, թե երբ սկսեց գոյություն ունենալ: Նա Հիսուսի մայրն էր միայն Նրա մարդեղացման առումով:

Եղիսաբեթն անկեղծ հիացմունքով հաղորդեց իր դեռ չծնված մանկան ոգևորությունը, երբ Մարիամը ողջունեց նրան: Այնուհետև նա Մարիամին վստահեցրեց, որ իր հավատը առատությամբ վարձատրվելու է: Նրա ակնկալիքներն իրականանալու են: Նրա հավատն իզուր չէ: Նրա Երեխան ծնվելու է խոստման համաձայն:

Դ. Մարիամը մեծարում է Տիրոջը (1:46-56)

1:46-49. «Magnificat»-ը հիշեցնում է Աննայի երգը (1 Թագ. 2:1-10): Նախ **Մարիամը** փառաբանեց **Տիրոջը** այն բանի համար, ինչ Նա կատարեց իր համար (հ. 46բ-49): Ուշադրություն դարձրեք նրա խոսքերին. «... **Բոլոր սերունդները ինձ երանելի պիտի կոչեն**» (հ. 48): Նրանից չեն դուրս գալիս օրհնությունները, այլ նրան երանելի պիտի անվանեն: Նա **Աստծո** մասին խոսում է, որպես իր **Փրկչի՝** այսպիսով հերքելով Մարիամի մեղսունակ չինելու գաղափարը:

1:50-53. Այնուհետև նա փառավորեց Տիրոջը նրա համար, որ **Նրա ողորմությունն Իրենից վախեցողների վրա է սերնդից սերունդ: Նա զորավորներին իջեցրեց աթոռներից և խոնարհներին ու սովածներին բարձրացրեց:**

1:54-55. Եվ վերջապես, նա Տիրոջը մեծարեց Նրա հավատարմության համար, որ կատարեց **Իսրայելի** մասին **Աբրահամին և նրա շավղին** տված խոստումները:

1:56. Մոտ երեք ամիս Եղիսաբեթի մոտ մնալուց հետո Մարիամը **վերադարձավ իր տունը՝** Նազարեթ: Բայց նա դեռ ամուսնացած չէր: Անկասկած, նա դարձավ իր հարևանների կասկածի ու չարախոսության նյութը: Բայց Աստված արդարացնելու էր նրան, պետք էր սպասել:

Ե. Նախակարապետի ծնունդը (1:57-66)

1:57-61. Եղիսաբեթի ծննդաբերելու **ժամանակը** մոտեցավ, և նա **որդի** ծնեց: **Ազգականներն** ու բարեկամները ուրախացան: **Ութերորդ օրը**, երբ **մանկանը** թվատեցին, բոլորը կարծում էին, որ բնականաբար, **նրան իր հոր անունով՝ Չաքարիա էին անվանելու**: Երբ **նրա մայրն** ասաց, որ տղայի անունը **Հովհաննես** է լինելու, մարդիկ զարմացան, որովհետև նրանց **ազգականների** մեջ **այդ անունով** ոչ մեկը չկար:

1:62-63. Որպեսզի վերջնական որոշման գային, **նշաններով հարցրին** Չաքարիա-

յին: Մա ցույց է տալիս, որ նա ոչ միայն համր էր, այլև խուլ: Նա **տախտակ ուզեց** և այդ հարցը լուծեց՝ գրելով. «Մանկան **անունը Հովհաննես է**»: Բոլոր ներկաները զարմացան:

1:64-66. Բայց նրանք ավելի զարմացան՝ տեսնելով, թե ինչպես Չաքարիայի «Հովհաննես» գրելուց անմիջապես հետո նրան վերադարձավ խոսելու կարողությունը: Լուրն արագորեն տարածվեց **Հրեաստանի բոլոր լեռնային շրջաններում**, և մարդիկ մտածում էին, թե ինչպիսին է լինելու այս արտասովոր մանկան ծառայությունը: Նրանք գիտեին, որ **Տիրոջ** յուրահատուկ բարեհաճությունը **նրա հետ էր**:

2. Չաքարիայի մարգարեությունը Հովհաննեսի մասին (1:67-80)

1:67. Վերջապես ազատվելով անհավատության կապանքից **ու Սուրբ Հոգով լրջվելով**՝ Չաքարիան ներշնչում ստացավ, որպեսզի հինկտակարանյան մեջբերումներով փառաբանությամբ հարուստ մի պերճախոս օրհներգ ասի:

1:68-69. *Գոհություն Աստծուն Իր կատարածների համար:* Չաքարիան գիտակցեց, որ իր որդի Հովհաննեսի ծնունդը ցույց էր տալիս Մեսիայի գալու մոտ լինելը: Նա Քրիստոսի գալու մասին խոսեց որպես կատարված փաստի նախքան դրա կատարվելը: Հավատը նրան հնարավորություն տվեց ասելու, որ **Աստված արդեն այցելեց ու փրկություն բերեց Իր ժողովրդին՝ ուղարկելով Փրկագնողին: Եհովան փրկության եղջյուր հանեց Դավթի թագավորական տանը:** Եղջյուրն օգտագործվում էր թագավորների օժման յուղի համար, հետևաբար այստեղ այն կարող է նշանակել «Փրկության **Թագավոր**՝ ըստ Դավթի թագավորական գծի»: Կամ էլ եղջյուրը կարող է լինել իշխանության խորհրդանիշը և այդ ձևով նշանակել «Չորավոր Փրկիչ»:

1:70-71. *Գոհություն Աստծուն մարգարեությունների կատարման համար:* Մեսիայի գալուստի մասին կանխատեսվել էր **սկզբից ի վեր Իր սուրբ մարգարեների բերանով:**

Նրանք ժողովրդին խոստացել էին **փրկություն թշնամիներից** և անվտանգություն հակառակորդներից:

1:72-75. *Գոհություն Աստծուն Իր խոստումների հավատարիմ լինելու համար:* Տերն անպայմանական **ուխտ** կապեց **Աբրահամի** հետ: Այդ խոստումը կատարվեց Աբրահամի սերնդի՝ Տեր Հիսուս Քրիստոսի գալով: Նրա բերած փրկությունն արտաքին ու ներքին էր: Արտաքինն արտահայտվում էր **մեր թշնամիների ձեռքից ազատագրմամբ:** Նրա ներքին իմաստն էլ **առանց վախի... սրբությամբ ու արդարությամբ Նրան ծառայելու** մեջ էր:

Հիմնվելով այս հատվածի՝ վրա՝ Ջ. Քեմբել Մորգանը երկու հիանալի միտք է արտահայտել: Նախևառաջ նա ցույց է տալիս «Հովհաննես» անվան ու երգի թեմայի միջև եղած ցնցող կապը. դրանք երկուսն էլ Աստծո շնորհի մասին են: Այնուհետև նա 72-73-րդ համարներում ակնարկ է նետում Հովհաննես, Չաքարիա և Եղիսաբեթ անունների վրա.

Հովհաննես՝ խոստացված շնորհը (հ. 72),

Չաքարիա՝ հիշել (հ. 72),

Եղիսաբեթ՝ երդում (հ. 73):

Հովհաննեսի մեջ հայտնված Աստծո ուղորմությունն այն բանի արդյունքն է, որ **Նա հիշում է Իր սուրբ Ուխտը:**

1:76-77. *Հովհաննեսի առաքելությունը Փրկչի պատգամաբերող լինելն էր:* Հովհաննեսին նախասահմանված էր լինել **Բարձրյալի մարգարեն**՝ մարդկանց սրտերը պատրաստելու **Տիրոջ** գալստյանը և **փրկություն քարոզելու Նրա ժողովրդին իրենց մեղքերի թողությամբ:** Այստեղ տեսնում ենք, որ ՀԿ-ի Եհովայի մասին հիշատակումները վերաբերում են ՆԿ-ի Հիսուսի մասին խոսքերին: Մաղաքիան կանխատեսում է պատգամաբերի հայտնվելը, ով պատրաստելու էր Եհովայի ճանապարհը (Մաղ. 3:1): Չաքարիան Հովհաննեսին նույնացնում է պատգամաբերի հետ: Մենք գիտենք, որ Հովհաննեսը եկավ **պատրաստելու** Հիսուսի ճանապարհը: Հետևությունն ակնհայտ է. Հիսուսը Եհովան է:

1:78-79. *Քրիստոսի գալուստը նմանեցված է արևածագին:* Դարերի հոլովույթում աշխարհը սուզվեց **խավարի մեջ:** Այժմ **մեր Աստծո գթառատ ողորմության շնորհիվ** պետք է բացվեր լուսաբացը: Այն պետք է բացվեր Քրիստոսի Անձով՝ լուսավորելով **խավարում ու մահվան սովերում նստած** հեթանոսներին և Իսրայելի քայլերն ուղղելով դեպի **խաղաղության ճամփան** (տե՛ս Մաղ. 4:2):

1:80. Գլուխն ավարտվում է մի պարզ նշումով, **որ երեխան աճում էր ֆիզիկապես ու հոգևորապես և բնակվում էր անապատում մինչև այն օրը,** երբ հրապարակավ հայտնվեց **Իսրայել** ժողովրդին:

Է. Մարդու Որդու ծնունդը (2:1-7)

2:1-3. **Օգոստոս կայսեր կողմից հրաման ելավ, որ ամբողջ երկիրը մարդահամարի գա,** այսինքն՝ **մարդահամարը** պետք է կայանար նրա ամբողջ կայսրության մեջ: **Այս մարդահամարն առաջին անգամ եղավ, երբ Կյուրենիոսը Միրիայի կուսակալն էր:** Երկար ժամանակ Ղուկասի Ավետարանի ճշգրտությունը կասկածի տակ էր դրվում Կյուրենիոսին հիշատակելու պատճառով: Այնուամենայնիվ, հնէաբանական վերջին բացահայտումները հաստատում են այս արձանագրությունը: Իր տեսակետով **Օգոստոս կայսրը** ցուցադրում էր իր գերազանցությունը հունա-հռոմեական աշխարհի վրա: Մակայն աստվածային տեսանկյունից հեթանոս այս կայսրը պարզապես մի խաղալիք էր աստվածային ծրագրի զարգացման մեջ (տե՛ս Առ. 21:1):

2:4-7. Հենց ճիշտ ժամանակին Օգոստոսի հրամանը **Հովսեփին ու Մարիամին** բերեց **Բեթղեհեմ,** որպեսզի իրականանա մարգարեությունը, ու Մեսիան ծնվի այնտեղ (Միք. 5:2): Երբ նրանք **Գալիլիայից** եկան **Բեթղեհեմ,** քաղաքը մարդկանցով լցված էր: Միակ հարմար տեղը, որ կարողացան գտնել մնալու համար, **իջևանատան** ախոռն էր: Սա մի նախանշան էր, որ մատնանշում էր, թե մարդիկ ինչպես են ընդունելու իրենց Փրկչին: Ճիշտ այն ժամանակ, երբ **Նազարեթից** այս գույզն այնտեղ

էր գտնվում, Մարիամն **իր անդրանիկ որդուն ծնեց:** Նա **խանձարուրի մեջ փաթաթեց Նրան** ու սիրով **դրեց մսուրի մեջ:**

Այսպես, անօգնական Մանկան Անձով մարմնավորված, զարշահոտ ախոռի աղքատության մեջ Աստված այցելեց մեր մոլորակ: Ապշեցուցիչ է: Այս մասին գեղեցիկ է ասել Դարբին.

«Նա իր ճանապարհն սկսեց մսուրից, ավարտեց խաչի վրա և ճանապարհն անցնելիս Իր գլուխը դնելու տեղ չունեք»:⁶

Ը. Հրեշտակներն ու հովիվները (2:8-20)

2:8. Այս եզակի ծննդյան առաջին ծանուցումը տրվեց ոչ թե Երուսաղեմի կրոնական ղեկավարներին, այլ Հուդայի բյուրենրի լանջերի վրա իրենց հոտերը հսկող **հովիվներին՝** հասարակ մարդկանց, ովքեր բարեխղճորեն կատարում էին իրենց աշխատանքը:

Ջեյմս Ս. Ստյուարտը նշում է.

«Մի՞թե բազմանշանակ չէ այն փաստը, որ հենց շատ հասարակ մարդիկ, շատ հասարակ աշխատանքով զբաղվածներն առաջինն իրենց այքերով տեսան Տիրոջ գալստյան փառքը: Առաջին՝ դա նշանակում է, որ պարտականությունների վայրը, ինչքան էլ այն հասարակ լինի, տեսիլքի վայր է: Երկրորդ՝ Թագավորության դարպասներն ամենայն պատրաստվածությամբ բացվում են հենց այնպիսի մարդկանց համար, ովքեր պահել են կյանքի խորը, պարզ բարեպաշտությունները և չեն կորցրել մանկանման սիրտը»:⁷

2:9-11. **Տիրոջ հրեշտակը** կանգնեց հովիվների առջև և պայծառ գորեղ մի լույս **փայլեց նրանց** շուրջբոլորը: Քանի որ նրանք ահաբեկված էին, հրեշտակը նրանց հանդարտեցրեց ու հաղորդեց լուրը: Դա բարի լուր էր **մեծ ուրախության** մասին **բոլոր մարդկանց** համար: Ճիշտ այդ օրը **Բեթղեհեմի մերձակայքում Մանուկ էր ծընվել:** Այդ Մանուկը **Փրկիչն է, որ Քրիստոս Տերն է:** Այստեղ աստվածաբանությունն է տրված մանրանկարով: Նախևառաջ **Նա Փրկիչ է,** ինչն արտահայտված է Նրա Հիսուս անվան մեջ: Այնուհետև **Նա Քրիս-**

տոսն է՝ Աստծո Օծյալը, Իսրայելի Մեսիան: Եվ վերջապես, Նա **Տերն է՝** Աստված՝ մարմնով հայտնված:

2:12. Ինչպե՞ս հովիվները կճանաչեն Նրան: Հրեշտակը նրանց կրկնակի նշան տվեց: Առաջին՝ Մանուկին կգտնեն **խանձարուրի մեջ պատված:** Նախկինում էլ նրանք տեսել էին խանձարուրով մանուկ: Սակայն հրեշտակները հենց նոր հռչակեցին, որ այդ Մանուկը Տերն է: Երբեք ոչ ոք Տիրոջը չէր տեսել մանկան կերպարանքով **Մանուկը խանձարուրով պատված:** Երկրորդ՝ Նրան կգտնեն **մտուրում պառկած:** Կասկածելի է, որ հովիվները երբևէ նորածին տեսած լինեին այդպիսի անհարմար տեղում: Այդ անհարմար տեղը տրվեց կյանքի ու փառքի Տիրոջը, երբ Նա աշխարհ եկավ: Գլխապառույտ է առաջանում այն մտքերից, որ տիեզերքի Արարիչն ու Ամենակալը մարդկության պատմության մեջ մտավ ոչ թե զինվորական տիրակալի պես, այլ **Մանկան:** Դեռևս սա է մարդեղացման ճշմարտությունը:

2:13-14. Եվ **հանկարծակի** ընդհատվեց մինչ այժմ զսպվող երկնային հիացմունքը: **Հրեշտակին միացավ երկնավոր զորքի մի բազմություն, որ օրհնում էր Աստծուն:** Այս փառաբանությունը, որն ամենուր հայտնի է «*Gloria in Excelsis Deo*» անունով, արտացոլում է այս Մանկան ծննդի ամբողջ նշանակությունը: Նրա կյանքն ու ծառայությունը **Աստծուն փառք են բերելու Բարձունքներում, խաղաղություն՝ երկրում և մարդկանց մեջ՝ հաճություն,** կամ այն մարդկանց, որոնց Նա հանձնում է:⁸ Աստծո հաճությունն ունեն նրանք, ովքեր զոջում են իրենց մեղքերի համար և ընդունում Հիսուս Քրիստոսին՝ որպես Տիրոջ ու Փրկչի:

2:15-19. Հենց որ **հրեշտակները հեռացան, հովիվները** շտապեցին **Բերդեհեն և գտան Մարիամին ու Հովսեփին, նաև Հիսուսին՝ մտուրի մեջ դրված:** Նրանք հանգամանորեն պատմեցին հրեշտակների այցելության մասին՝ մեծ զարմանք պատճառելով ախոռում եղողներին: **Իսկ Մարիամը** կատարվածի մասին ավելի խոր ըմբռո-

նում ուներ. **նա այս բոլորը պահում էր և իր սրտում մտորում:**

2:20. **Հովիվները վերադարձան** իրենց հոտերին՝ ուրախությամբ լի բոլոր այն բաների համար, որ լսեցին ու տեսան՝ **փառաբանելով ու օրհնելով Աստծուն:**

Թ. Հիսուսի թլփատությունն ու ընծայումը (2:21-24)

Այս հատվածում նվազագույնը երեք տարբեր ծեսեր են նկարագրված.

1. Առաջինը Հիսուսի **թլփատությունն է:** Այն կատարվեց, երբ լրացան Նրա **ութօրերը:** Սա այն ուխտի նշանն էր, որն Աստված հաստատեց Աբրահամի հետ: Ծիշտ նույն օրն էլ **Մանկանը**, հրեական սովորության համաձայն, անուն դրվեց: Հրեշտակը նախապես Մարիամին ու Հովսեփին ասել էր, որ Նրան **ՀԻՍՈՍ** անվանեն:
2. Երկրորդ ծեսը կապված է Մարիամի **մաքրության** հետ: Այն տեղի ունեցավ Հիսուսի ծնվելուց քառասուն օր հետո (տե՛ս Ղև. 12:1-4): Սովորաբար ծնողները պետք է ողջակեզի համար գառնուկ մատուցեին, իսկ մեղքի պատարագի համար՝ տատրակ կամ աղավնու ձագ: Բայց իբրև աղքատների՝ նրանց թույլատրվում էր **մեկ զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ** մատուցել (Ղև. 12:6-8): Այն փաստը, որ Մարիամը գառնուկ չբերեց, այլ միայն **աղավնու երկու ձագ**, հաստատում է, որ Հիսուսն աղքատության մեջ էր ծնվել:
3. Երրորդ ծեսը Հիսուսին **Երուսաղեմի** տաճարում ներկայացնելն էր: Նախապես Աստված պատվիրել էր, որպեսզի անդրանիկ որդիներն Իրեն պատկանեն. նրանք պետք է կազմեին քահանայական դասը (Ել. 13:2): Հետագայում Աստված քահանայական ծառայության համար առանձնացրեց Ղևիի ցեղին (Ել. 28:1-2): Հետո ծնողներին թույլատրվեց հինգ սիկղ վճարելով «փրկագներ» կամ ազատել իրենց անդրանիկ տղային: Նրանք դա կատարում էին փոքրիկին **Տիրոջն** ընծայելիս:

Ժ. Միմոնն ապրում էր, որպեսզի տեսներ Մեսիային (2:25-35)

2:25-26. Միմոնը Մեսիային սպասող բարեպաշտ հրեաների մնացորդներից էր: **Սուրբ Հոգուց նրան հայտնվել էր, որ մինչև չտեսնի Տիրոջ Օծյալին, մահ չի տեսնելու.** «Տիրոջ գաղտնիքն Իրենից վախեցողների հետ է» (Մղմ. 25:14): Աստվածային գիտության խորհրդավոր հաղորդակցություն գոյություն ունի նրանց համար, ովքեր Աստծո հետ հանդարտ ու խոհուն հաղորդակցությամբ են քայլում:

2:27-28. Այնպես պատահեց, որ Միմոնը **տաճար** եկավ ճիշտ այն օրը, երբ Հիսուսի **ծնողները** Նրան Աստծուն էին ընծայում: Միմոնին գերբնական ձևով հայտնվել էր, որ այդ Մանուկը խոստացված Մեսիան է: Հիսուսին **իր գրկի** մեջ վերցնելով՝ նա մի հիանալի երգ ասաց, որը հիմա հայտնի է *«Nunc Dimittis»* անունով (*Հիմա արձակում եմ*):

2:29-32. Այս երգի հիմնական միտքը հետևյալն է. **Տե՛ր, այժմ խաղաղությամբ արձակի՛ր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի. որովհետև հանձինս այդ Մանկան՝ իմ աչքերը տեսան Քո փրկությունը՝** խոստացված Ազատագրողին, ինչպես Դու խոստացել էիր ինձ: Դու նախասահմանեցիր, որ Նա փրկություն բերի բոլոր ազգերին: Նա կլինի **լույս՝ հեթանոսներին լուսավորելու** (Նրա առաջին գալուստը), և կփայլի **փառքի մեջ Քո Իսրայել ժողովրդի համար** (Նրա երկրորդ գալուստը): Հիսուս Քրիստոսի հետ հանդիպումից հետո Միմոնը պատրաստ էր մեռնելու: Մահվան խայթոցը հեռացվեց:

2:33. Ղուկասը մեծ ուշադրությամբ պահպանում է կուսական ծննդի մասին վարդապետությունը՝ այն ճշգրտորեն արտահայտելով հետևյալ խոսքերի միջոցով. **«Հովսեփը և Իր մայրը»**, ինչպես կարդում ենք Աստվածաշնչի ավանդական K. James թարգմանության և շատ այլ ձեռագրերում:⁹

2:34-35. Մեսիայի համար Աստծուն ուղղված փառաբանությունից հետո **Միմոնը օրհնեց** ծնողներին, իսկ հետո **Մարիամին** մարգարեական խոսքեր ասաց: Մար-

գարեությունը չորս մասից էր բաղկացած.

1. **Այս Մանուկը** նախասահմանված է **Իսրայելում շատերի անկման և բարձրացման պատճառ դառնալու** համար: Ամբարտավանները, չզոջացողներն ու անհավատները ընկնելու են և պատրժվեն: Նրանք, ովքեր խոնարհվեն, ապաշխարեն ու ընդունեն Տե՛ր Հիսուսին, կբարձրանան ու կօրհնվեն:
2. **Մանուկը** նախասահմանված է նաև **հակառակության նշան լինելու համար**: Այս խոսքերում Քրիստոսի Անձնավորության հետ կապված յուրահատուկ իմաստ կա: Երկրի վրա հենց Նրա ներկայությունը մեծ հանդիմանություն էր մեղքի ու անարբության համար, որ երևան հանեց մարդկային արտի դառը թշնամությունը:
3. **Այո՛, սուրը քո հոգին նույնպես պիտի խոցի**: Այստեղ Միմոնը կանխատեսում է այն վիշտը, որ պիտի պատի Մարիամի սիրտը, երբ կտեսնի իր Որդու խաչելությունը (Հովհ. 19:25):
4. **Որ շատ սրտերի խորհուրդները հայտնի դառնան**: Փրկչի հանդեպ մարդկանց վերաբերմունքը դառնալու է նրանց ներքին մղումների ու հակումների փորձաքարը:

Այսպիսով, Միմոնի երգը ներառում է փորձաքարի, գայթակղության քարի, նպատակին հասնելու միջոցի և սրի մասին մտքերը:

Ի. Աննա մարգարեուհին (2:36-39)

2:36-37. **Աննա մարգարեուհին**, ինչպես և Միմոնը, պատկանում էր Մեսիայի գալուստին սպասող Իսրայելի հավատարիմ մնացորդին: Նա **Աստերի ցեղից էր**, որ նշանակում է *երանելի, օրհնյալ*, այն տասը ցեղերից մեկը, որոնց ասորեստանցիները գերի էին տարել մ.թ.ա. 721թ.-ին: Աննան հավանաբար հարյուր տարեկանից բարձր էր, որից **յոթ** տարիներն ամուսնու հետ էր ապրել, իսկ հետո **ութաունչորս տարի որբևայրի էր**: Որպես **մարգարեուհի՝** նա, անկասկած, աստվածային հայտնություններ էր ստացել և **ձառայում էր** որպես

Աստծո մունետիկ: Նա հավատարմորեն հաճախում էր հասարակական ծառայություններին **տաճարում** և Աստծուն էր երկրպագում **գիշեր ու ցերեկ ծոմերով ու աղոթքներով**: Նրա խոր ծերությունն արգելք չէր հանդիսանում Տիրոջը ծառայելու համար:

2:38. Ճիշտ այն ժամանակ, երբ Հիսուսին բերեցին Տիրոջ առջև, և Միմոնը դիմեց Մարիամին, Աննան մոտեցավ այդ մարդկանց փոքրիկ խմբին: Նա **գոհույթյուն հայտնեց Տիրոջը** խոստացված Ազատարարի համար, իսկ հետո Հիսուսի մասին խոսեց նրանց հետ, ովքեր **Երուսաղեմում փրկություն** էին սպասում:

2:39. Հովսեփին ու Մարիամը մաքրման ու նվիրման բոլոր ծիսակատարությունները կատարելուց հետո **վերադարձան Գալիլիա՝** իրենց **Նազարեթ** քաղաքը: Ղուկասը չի հիշատակում մոզերի այցելության ու Եգիպտոս փախչելու մասին:

L. Հիսուսի մանկության տարիները (2:40-52)

2:40. Հիսուս **Մանուկի** բնական անը հետևյալ ձևով է նկարագրված. *Ֆիզիկական առումով* Մանուկը **մեծանում էր ու գորանում հոգով**:¹⁰ Նա անցավ ֆիզիկական զարգացման սովորական փուլերով՝ սովորեց քայլել, խոսել, խաղալ ու աշխատել: Այս բանի շնորհիվ Նա կարող է մեզ կարեկցել մեր անի յուրաքանչյուր փուլում: *Մտային առումով* Նա **իմաստությամբ էր լցվում**: Նա ոչ միայն յուրացրել էր այբուբենը, մաթեմատիկան և այդ օրերի ընդունված գիտելիքները, այլև աճում էր **իմաստությամբ**, այսինքն՝ այդ գիտելիքները կիրառում էր գործնականում կյանքի դժվարությունները հաղթահարելիս: *Հոգեփոր առումով* **Աստծո շնորհը Նրա վրա էր**: Նա քայլում էր Աստծո հետ հաղորդակցվելով և Սուրբ Հոգուց կախված լինելով: Նա ուսումնասիրում էր սուրբգրությունը, աղոթքի ժամեր ունենում և հաճույք էր ստանում Իր Հոր կամքը կատարելուց:

2:41-44. Հրեա տղան տասներկու տարեկանում դառնում է «Օրենքի որդի»: **Երբ**

մեր Տիրոջ **տասներկու տարին** լրացավ, Նրա ընտանիքը **Չատկի տոնի** առթիվ տարեկան ուխտագնացություն կատարեց **Երուսաղեմ**: Բայց երբ նրանք վերադառնում էին Գալիլիա, նկատեցին, որ Տեր **Հիսուսն** իրենց շրջանակում չէ: Սա մեզ համար կարող է տարօրինակ թվալ, քանի դեռ չենք հասկացել, որ ընտանիքը հավանաբար ճանապարհորդում էր բավականին մեծ քարավանով: Նրանք, անկասկած, մտածում էին, որ Հիսուսը գնում էր Իր հասակակից այլ երեխաների հետ:

Նախքան Հովսեփին ու Մարիամին դատելը հիշե՛ք, որ մենք կարող ենք հեշտությամբ **անցնել մեկ օրվա ճանապարհը՝ կարծելով**, որ Հիսուսը մեր մեջ է գտնվում, երբ իրականում կորցրել ենք Նրա հետ կապը մեր կյանքում չխոստովանված մեղքի պատճառով: Նրա հետ կապը վերականգնելու համար պետք է վերադառնանք այնտեղ, որտեղ ընդհատվել են մեր հարաբերությունները, իսկ հետո խոստովանենք մեղքերն ու հրաժարվենք դրանցից:

2:45-47. **Երուսաղեմ** վերադառնալով հուզված ծնողները Հիսուսին գտան տաճարում՝ **վարդապետների հետ նստած**: **Նա լսում էր նրանց և հարցեր էր տալիս**: Այստեղ ոչ մի ակնարկ չկա այն ենթադրությանը, որ Նա վաղահաս երեխայի նման էր վարվում՝ վիճաբանելով տաճարի երեցների հետ: Ընդհակառակը՝ Նա զբաղեցրել էր սովորական երեխայի տեղը՝ Իր ուսուցիչներից խոնարհությամբ և հանդարտությամբ սովորելով: Անշուշտ, զրույցի ընթացքում Նրան որոշակի հարցեր էին տալիս, քանի որ մարդիկ զարմանում էին **Նրա իմաստության ու տված պատասխանների վրա**:

2:48. Նույնիսկ նրա ծնողները **զարմացան**՝ գտնելով, որ Հիսուսը շատ իմաստուն կերպով մասնակցում է մարդկանց զրույցին, որոնք տարիքով Իրենից բավականին մեծ էին: Այնուամենայնիվ, **մայրն** արտահայտեց իր մեջ կուտակված անհանգստությունն ու զրգովածությունը և հանդիմանեց Նրան: Հիսուսը չգիտե՛ր, որ նրանք անհանգստացած են Իր համար:

2:49. Տիրոջ պատասխանը, Նրա առաջին խոսքերը, որոնք արձանագրված են, ցույց են տալիս, որ Նա լիովին գիտակցում էր Իր ինքնությունը՝ Աստծո Որդի լինելը, ինչպես նաև աստվածային առաքելությունը. «**Ինչո՞ւ էիք Ինձ փնտրում, չգիտեի՞ք, որ Ես Իմ Հոր գործին պետք է լինեմ**»: Մարիամն ասաց. «Քո հայրն ու ես...»: Նա պատասխանեց, որ **Իր Հոր գործին է:**

2:50. Այն ժամանակ նրանք չհասկացան Նրա պատասխանի իմաստը: Դրանք անսովոր խոսքեր էին՝ ասված տասներկու տարեկան պատանու կողմից:

2:51. Ինչևէ, նրանք նորից միասին էին և կարող էին վերադառնալ **Նազարեթ:** Հիսուսի բարոյական կատարելությունը երեվում է հետևյալ խոսքերում. «...և **հնազանդ էր նրանց**»: Չնայած որ Նա տիեզերքի Արարիչն էր, այնուամենայնիվ, որպես հնազանդ երեխա Իր տեղն զբաղեցրեց այդ հրեական համեստ ընտանիքում: Մակայն ամբողջ ժամանակ **Նրա մայրն այս բոլոր խոսքերը պահում էր իր սրտում:**

2:52. Մեզ կրկին ներկայացված է մեր Տիրոջ ճշմարիտ մարդկային բնության և բնական աճի պատկերը.

1. Նրա մտային զարգացումը. **զարգանում էր իմաստությամբ:**
2. Նրա ֆիզիկական զարգացումը... **և հասակով:**
3. Նրա հոգևոր զարգացումը. **շնորհ գրանելով Աստծո առջև:**
4. Նրա ընկերային զարգացումը. **շնորհ գտնելով մարդկանց առջև:**

Նա բացարձակապես կատարյալ էր Իր աճի բոլոր բնագավառներում: Այստեղ Ղուկասի պատմությունը լռությամբ շրջանցում է այն տասնութ տարիները, որոնք Տեր Հիսուսը՝ որպես հյուսնի Որդի, անցկացրել էր Նազարեթում: Այս տարիները մեզ սովորեցնում են պատրաստվելու և սովորելու կարևորությունը, համբերության անհրաժեշտությունը և հասարակ աշխատանքը գնահատելը: Դրանք մեզ նախազգուշացնում են հոգևոր ծնունդից անմիջապես հասարակական ծառայության անցնելու փորձու-

թյան մասին: Նրանք, ովքեր իսկական հոգևոր մանկություն և պատանեկություն չեն ունեցել, իրենց ապագա կյանքի ու ծառայության համար ապերջանկություն են կուտակում:

III. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (3:1-4:30)

Ա. Նրա նախակարապետը պատրաստում է ճանապարհը (3:1-20)

3:1-2. Որպես պատմաբան՝ Ղուկասը նշում է Հովհաննեսի քարոզչությունն սկսելու տարին՝ հիշատակելով քաղաքական ու կրոնական առաջնորդներին, որոնք այն ժամանակ իշխանության կազմում էին. մեկ **կայսր**, մեկ **կուսակալ**, երեք **չորրորդապետ** և երկու **քահանայապետ**: Հիշատակված քաղաքական ղեկավարները նման էին այն երկաթյա սեղմակներին, որոնց ենթակայության տակ էր գտնվում հրեա ժողովուրդը: Այն փաստը, որ Իսրայելում երկու քահանայապետ կար, վկայում էր, որ ժողովրդի մեջ չկար ո՛չ կրոնական, ո՛չ էլ քաղաքական կարգ ու կանոն: Չնայած աշխարհի չափանիշներով այս մարդիկ մեծ էին, սակայն Աստծո աչքում նրանք մեղավոր էին ու անսկզբունք: Դրա համար էլ, երբ Աստված ուզեց դիմել մարդկանց, Նա շրջանցեց պալատն ու սինագոգը և Իր խոսքը հաղորդեց **Չաքարիայի որդի Հովհաննեսին:**

3:3. Հովհաննեսն անմիջապես գնաց **Հորդանանի մոտակայքում գտնվող բոլոր շրջանները**, հավանաբար Երիքովից ոչ հեռու: Նա Իսրայել ժողովրդին կոչ արեց ապաշխարել՝ մեղքերից թողություն ստանալու համար և այդպիսով պատրաստվել Մեսիայի գալստին: Նա կոչ էր անում մարդկանց, որ մկրտվեն՝ որպես իրական ապաշխարության արտաքին նշան: Հովհաննեսը ճշմարիտ մարգարե էր, խղճմտանքի մարմնավորում՝ մեղքի դեմ աղաղակելով և հոգևոր նորոգության կանչելով:

3:4. Այսպիսով, նրա ծառայությունը Եսայու մարգարեության 40:3-5-ի իրականա-

ցումն էր: Նա **անապատում կանչողի ձայնն էր**: Հոգևոր իմաստով Իսրայելն այն ժամանակ **անապատ** էր: Նա չորացած ու տխուր էր և պտուղ չէր տալիս Աստծուն: Տիրոջ գալստին պատրաստվելու համար ժողովուրդը պետք է բարոյական փոփոխությունների միջով անցներ: Երբ թագավորը պատրաստվում էր թագավորական այցելության, բոլորը զգուշությամբ պատրաստվում էին, շտկում ճանապարհները, որպեսզի նրա գալն ավելի հարմարավետ դարձնեն: Հովհաննեսն էլ ժողովուրդին հենց այսպիսի բան անելու կոչ էր հղում, միայն թե խոսքը ոչ թե տառացիորեն ճանապարհները վերանորոգելու մասին էր, այլ իրենց սրտերը Մեսիային դիմավորելու համար պատրաստելուն:

3:5. Քրիստոսի գալստյան արդյունքը հետևյալ ձևով է նկարագրված.

Բոլոր ձորերը պիտի լցվեն. ամեն ոք, ով իսկապես ապաշխարում է և խոնարհվում, պիտի փրկվի ու բավարարվի:

Բոլոր լեռներն ու բլուրները պիտի ցածրանան. այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին դպիրներն ու փարիսեցիները, հպարտ ու ամբարտավան, պետք է խոնարհվեն:

Ծուռը պիտի շտկվի. նրանք, ովքեր մաքսավորների պես անագնիվ էին, պետք է շտկեին իրենց բնավորությունը:

Խորդուբորդ տեղերը հարթ ճամփաների պիտի վերածվեն. զինվորներն ու այլ մարդիկ, կտրուկ ու կոշտ բնավորություն ունեցողները կդառնան նուրբ ու ազնիվ:

3:6. Վերջնական արդյունքն այն պիտի լինի, որ **ամեն մի մարմին** (ինչպես հրեաները, այնպես էլ հեթանոսները) **պիտի տեսնի Աստծո փրկությունը**: Նրա առաջին գալստյան ժամանակ փրկություն առաջարկվեց բոլոր մարդկանց, չնայած ոչ բոլորն այն ընդունեցին: Երբ Նա վերադառնա՝ թագավորելու, այս համարն ամբողջությամբ կիրականանա: Այն ժամանակ Իսրայելը կփրկվի, իսկ հեթանոսները նույնպես հնարավորություն կստանան օգտվելու Նրա փառավոր Թագավորության օրհնություններից:

3:7. Հովհաննեսը տեսավ, որ **մկրտվելու համար իր մոտ եկող բազմությունից** ոչ բոլորն են անկեղծ: Ոմանք պարզապես ձեվացնում էին՝ առանց արդարության համար ծարավ կամ քաղց զգալու: Հենց այդպիսիներին Հովհաննեսն անվանեց **«իժեքի ծնունդներ»**: **«Ո՛վ ձեզ զգուշացրեց փախչել գալիք ցատումից»** հարցադրումը ցույց է տալիս, որ Հովհաննեսը չէր արել դա. նրա պատգամն ուղղված էր նրանց, ովքեր հոժար էին խոստովանելու իրենց մեղքերը:

3:8. Եթե նրանք իսկապես ուզում են Աստծո հետ գործ ունենալ, ապա պետք է ցույց տան իրենց ապաշխարության ճշմարտացիությունն իրենց վերափոխված կյանքի վկայությամբ: Ծշմարիտ ապաշխարությունը **պտուղներ** է տալիս: Նրանք չպետք է մտածեն, թե բավարար է **Աբրահամից** սերված լինելը: Բարեպաշտ մարդկանց հետ ազգակցականությունը ոչ ոքի բարեպաշտ չի դարձնում: Իր նպատակներն իրականացնելու համար Աստված չի սահմանափակվում Աբրահամի ֆիզիկական սերնդով. Նա կարող է Հորդանան գետի **քարերից** վերցնել ու դրանցից **Աբրահամի որդիներ հանել**: Այստեղ *քարերը* հավանաբար խորհրդանշում են հեթանոսներին, որոնց Աստված կարող է աստվածալին շնորհի հրաշքով վերափոխել, դարձնել Աբրահամի պես հավատ ունեցող հավատացյալներ: Այդպես էլ կատարվեց: Աբրահամի ֆիզիկական սերունդը՝ որպես ազգ, մերժեց Աստծո Քրիստոսին: Սակայն շատ հեթանոսներ Նրան ընդունեցին որպես Տիրոջ ու Փրկչի և դրանով դարձան Աբրահամի հոգևոր սերունդը:

3:9. **«Եվ հիմա էլ կացինը ծառերի արմատին է դրված»** պատկերավոր արտահայտությունը նշանակում է, որ Քրիստոսի գալուստը ստուգելու է մարդու ապաշխարության իսկությունը: Ապաշխարության պտուղներ չունեցողները կդատապարտվեն:

Հովհաննեսի շուրթերից բառերն ու ձևակերպումները թրի պես էին դուրս գալիս. «իժի ծնունդներ», «գալիք ցատում», «կա-

ցին», «կկտրվի», «կրակը կնետվի»: Աստծո մարգարեները երբեք քաղցրալեզու չեն եղել. նրանք բարոյականության մեծ քարոզիչներ են եղել, ու հաճախ նրանց խոսքերը՝ որպես մեր նախնիների մարտական կացիաներ, իջել են նրանց թշնամիների սահավարտների վրա (Մուրբգրության միավորում ամենօրյա նշումներ):

3:10. Հանդիմանությունից զգաստացած **ժողովուրդը** Հովհաննեսին խնդրեց գործնական խորհուրդներ տալ իրենց ապաշխարության ճշմարտացիությունը ցույց տալու վերաբերյալ:

3:11-14. Այս համարներում Հովհաննեսը նրանց կոնկրետ ճանապարհներ ցույց տրվեց, թե ինչպես կարող են ապացուցել իրենց անկեղծությունը: Ընդհանուր առմամբ, նրանք պետք է իրենց անձի պես սիրեին իրենց դրացիներին և աղքատների հետ կիսեին իրենց հագուստն ու **կերակուրը**:

Ինչ վերաբերում էր **մաքսավորներին**, ապա նրանք պետք է խիստ մաքուր լինեին իրենց բոլոր գործարքներում: Քանի որ որպես դասակարգ նրանք հայտնի էին իրենց այլատերվածությամբ, դա որոշակի վկայություն կլիներ ճշմարիտ փոփոխության մասին:

Եվ վերջապես, ծառայության մեջ գտնվող **զինվորներին** ասվեց, որ փախչեն ծառայողների մեջ տարածված երեք մեղքերից՝ բռնությունից, զրպարտությունից և անկրշտությունից: Կարևոր է հասկանալ, որ այս պահանջների կատարումը մարդկանց չէր փրկում, ավելի շուտ, սա այն բանի արտաքին վկայությունն էր, որ նրանց սիրտը ճշմարտապես ուղիղ վիճակում էր Աստծո առջև:

3:15-16ա. Չարմանալի էր սովերի տակ մնալու Հովհաննեսի ձգտումը: Գոնե որոշ ժամանակով նա կարող էր իբրև Մեսիա հանդես գալ և շատ հետևորդներ գրավել: Դրա փոխարեն, իրեն Քրիստոսի հետ համեմատելիս նա իր մասին ծայրահեղ համեստությամբ խոսեց: Նա բացատրեց, որ իր մկրտությունն արտաքին ու ֆիզիկական

էր, մինչ Քրիստոսի մկրտությունը պետք է լինի ներքին ու հոգևոր: Նա ասաց, որ **արժանի չէ Մեսիայի կոշիկների կապերն արձակելուն**:

3:16բ-17. Քրիստոսը պետք է **Մուրբ Հոգով ու կրակով** մկրտի: Նրա մկրտությունը պետք է երկու մասից բաղկացած լինի: Նախ **Նա պետք է** հավատացյալներին **մկրտի Մուրբ Հոգով**. սա այն խոստումն է, որը կատարվելու է Պենտեկոստի օրը, երբ հավատացյալները մկրտվեն Քրիստոսի Մարմնում: Բայց հետո **Նա կմկրտի կրակով**:

17-րդ համարից պարզ երևում է, որ **կրակով** մկրտությունը դատաստանի օրվա մկրտությունն է: Այստեղ Տերը որպես ցորեն քամհարող է պատկերված: Երբ Նա քամհարով թափահարում է ցորենը, **դարմանը** կալի վրայից մի կողմ է քշվում: Հետո այն ավում ու այրում են:

Երբ Հովհաննեսը խոսեց մարդկանց խառն բազմության՝ հավատացյալների ու անհավատների հետ, նա հիշատակեց ինչպես **Հոգով**, այնպես էլ **կրակով** մկրտությունը (Մատթ. 3:11 և այստեղ): Երբ նա միայն հավատացյալների հետ խոսեց (Մարկ. 1:5), բաց թողեց կրակով մկրտվելը: Ոչ մի ճշմարիտ հավատացյալ չի փորձառելու կրակով մկրտությունը:

3:18-20. Վերջապես Ղուկասը պատրաստ է ուշադրությունը Հովհաննեսի վրայից տեղափոխել Հիսուսի վրա: Դրա համար էլ նա հաջորդ համարներում ընդհանրացնում է Հովհաննեսի ծառայության մնացած մասը և մեզ տանում է առաջ՝ մինչև **Հերովդեսի** կողմից Հովհաննեսի բանտարկվելը: Փաստորեն Հովհաննեսը բանտարկվել է մոտավորապես տասնութ ամիս անց: Նա **հանդիմանեց** Հերովդեսին իր եղբոր կնոջ հետ կենակցելու համար: Հերովդեսն իր բոլոր չար գործերը պսակեց Հովհաննեսին **բանտ նետելով**:

Բ. Պատրաստություն մկրտության միջոցով (3:21-22)

Որքանով Հովհաննեսը դուրս է գալիս մեր տեսադաշտից, այնքանով էլ Տեր Հիսուսը

գրադեցնում է առաջին տեղը: Մոտ երեսուն տարեկանում նա սկսում է Իր հրապարակային ծառայությունը Հորդանան գետում **մկրտվելով**:

Մի քանի հետաքրքիր պահեր կան Նրա մկրտության հետ կապված.

1. Այստեղ ներկա են Երրորդության բոլոր երեք Անձերը՝ **Հիսուսը** (հ. 21), **Մուրբ Հոգին** (հ. 22ա) և **Հայրը** (հ. 22բ):
2. Միայն Ղուկասն է գրել այն փաստը, որ Հիսուսն **աղոթում էր** մկրտության ժամանակ (հ. 21): Սա համապատասխանում է Ղուկասի նպատակին, որպեսզի Քրիստոսին ներկայացնի որպես Հայր Աստծուց միշտ կախյալ Մարդու Որդի: Մեր Տիրոջ աղոթքի կյանքը գերիշխող թեմա է այս Ավետարանում: Նա աղոթում է Իր հրապարակային ծառայության հենց սկզբում: Նա աղոթում է, երբ հանրահայտ է դառնում ու Նրան բազմաթիվ մարդիկ են հետևում (5:16): Նա մի ամբողջ գիշեր աղոթելով անցկացրեց նախքան տասներկու աշակերտներին ընտրելը (6:12): Նա աղոթեց Փիլիպպոսի՝ Կեսարիայում կատարվածի նախօրեին Ուսուցչական ծառայության գազաթնակետին (9:18): Նա աղոթեց Այլակերպության լեռան վրա (9:28): Նա աղոթեց Իր աշակերտների ներկայությամբ, ու դա առիթ դարձավ աղոթքի մասին սովորեցնելու (11:1): Նա աղոթեց, որ Պետրոսը հավատի մեջ մնա (22:32): Նա աղոթեց Գեթսեմանի պարտեզում (22:41, 44):
3. Հիսուսի մկրտությունն այն երեք դեպքերից մեկն էր, երբ Աստված խոսեց **երկնքից** Իր սիրելի **Որդու** ծառայության մասին: Երեսուն տարի շարունակ Աստծո աչքը քննում էր Նազարեթում ապրող Հիսուսի անթերի կյանքը. ահա Նրա վճիռը. **«Որին խիստ հավանեցի»**: Մյուս երկու դեպքերը, երբ Հայրը մարդկանց ներկայությամբ խոսեց երկնքից, կատարվեցին Այլակերպության լեռան վրա, երբ Պետրոսը առաջարկեց տաղավարներ շինել (Ղուկաս 9:35), և երբ հույները, ցանկանալով Հի-

սուսին տեսնել, եկան Փիլիպպոսի մոտ (Հովհ. 12:20-28):

Գ. Պատրաստություն մարդկությանը հաղորդվելու միջոցով (3:23-38)

Մինչ մեր Տերը կանգնեց Իր հրապարակային **ծառայությանը**, Ղուկասը դադար է տալիս ու ներկայացնում է Նրա ազգաբանությունը: Եթե Հիսուսն իսկապես մարդ է, ապա Նա պետք է սերի **Ադամից**: Այս ազգաբանությունը ցույց է տալիս, որ Նա իսկապես այդպիսին է: Լայն տարածում ունեցող համոզմունք է, որ այստեղ ներկայացված է Հիսուսի ազգաբանությունը Մարիամի սերնդաբանության գծի համաձայն: Ուշադրություն դարձրեք. 23-րդ համարը չի ասում, որ Հիսուսը Հովսեփի որդին է, այլ. **«... Լինելով, ինչպես կարծում էին, Հովսեփի որդին»**: Եթե այսպիսի տեսակետը ճիշտ է, այդ դեպքում **Հեղին** (հ. 23) Հովսեփի աներն էր և Մարիամի հայրը:

Ուսումնասիրողների շրջանակում լայն տարածում ունի այն կարծիքը, թե այս ազգաբանությունը հետևում է Մարիամի գծին հետևյալ պատճառներով.

1. Ակնհայտ է, որ Հովսեփի ընտանեկան գիծը ներկայացված է Մատթեոսի Ավետարանում (1:2-16):
2. Ղուկասի Ավետարանի առաջին գլուխներում Մարիամին ավելի աչքի ընկնող տեղ է տրված, քան Հովսեփին, իսկ Մատթեոսի մոտ բոլորովին հակառակն է:
3. Հրեաների մոտ կանանց անունները սերնդաբանական կապերում շատ չէին օգտագործում: Դրանով էլ բացատրվում է Մարիամի անվան բաց թողնվելը:
4. Մատթ. 1:16-ում հստակ նշված է, որ Հակոբը ծնեց Հովսեփին: Այստեղ՝ Ղուկասի մոտ, չի ասվում, որ Հովսեփը Հեղիի որդին էր: *Որդին* կարող է նշանակել *փեսան*:
5. Բնագրում ազգաբանության մեջ՝ ամեն անունից առաջ, *բացի մեկից*, դրված է (*tou*) որոշակի հոդը հայցական հոլովով: Այդ մեկը Հովսեփի անունն է:

Ճիշտ այս բացատրությունն է ստիպում ենթադրել, որ Հովսեփը ազգաբանության մեջ ներառված է միայն այն պատճառով, որ Մարիամի ամուսինն է:

Չնայած ազգաբանությունը մանրամասնորեն ուսումնասիրելու անհրաժեշտություն չկա, այնուամենայնիվ, օգտակար է ուշադրություն դարձնել մի քանի կարևոր կետերի.

1. Այս ցանկը ցույց է տալիս, որ Մարիամը սերում էր **Դավթից**, նրա որդի **Նաթանից** (հ. 31): Մատթեոսի Ավետարանում Հիսուսը Դավթի գահի *օրինավոր* ժառանգորդն է Սողոմոնի միջոցով: Որպես Հովսեփի օրինավոր որդի՝ Տերը կատարեց Դավթի հետ Աստծո ուխտի այն մասը, որտեղ խոստանում էր, որ նրա գահը հավիտյան է հաստատվելու: Սակայն Հիսուսը չէր կարող Հովսեփի իսկական որդին լինել ու չհայտնվել: Եթե Հիսուսը Հովսեփի իսկական որդին լիներ, ապա կհայտնվեր Հեքոնիային տված Աստծո անեծքի տակ, ըստ որի՝ այդ չար թագավորի սերնդից ոչ ոք չէր բարգավաճելու (Եր. 22:30):
 Որպես Մարիամի իսկական որդի՝ Հիսուսը կատարեց Աստծո ուխտի այն մասը, որտեղ նրան խոստացված էր, որ նրա *սերունդը* գահին կլինի հավիտյան: Իսկ սերելով Դավթից Նաթանի միջոցով՝ Հիսուսը չէր ընկնում Հեքոնիային ասված անեծքի տակ:
2. **Ադամը** ներկայացված է որպես **Աստծո Որդի** (հ. 38): Սա պարզապես նշանակում է, որ Աստված էր նրան ստեղծել:
3. Ակնհայտ է, որ մեսիական գիծը Տեր Հիսուսով է ավարտվում: *Այլևս ոչ ոք երբևէ* չի կարող օրինական լիիրավ հավակնություններ ներկայացնել Դավթի գահի նկատմամբ:

Գ. Պատրաստություն փորձության միջոցով (4:1-13)

4:1. Մեր Տիրոջ կյանքում այնպիսի ժամանակ չի եղել, որ Նա Սուրբ Հոգով լցված չլինի, սակայն այստեղ Նրա փորձվելու մա-

սին կոնկրետ հիշատակվում է: **Սուրբ Հոգով լցված** լինել նշանակում է ամբողջությամբ Նրան ենթարկվել և ամբողջությամբ հնազանդ լինել Աստծո յուրաքանչյուր խոսքին: Սուրբ Հոգով լցված մարդը ազատված է ամեն տեսակի գիտակցական մեղքից ու եսասիրությունից, և նրանում լիությամբ բնակվում է Աստծո Խոսքը: Երբ Տեր Հիսուսը վերադարձավ **Հորդանանից**, որտեղ մկրտվեց, Նա **Սուրբ Հոգուց առաջնորդվեց անապատ՝** հավանաբար Մեդյալ ծովի արևմտյան ափի երկարությամբ ընկած Հրեական անապատը:

4:2-3. Այնտեղ Նա **քառասուն օր սատանայից փորձվեց. օրեր**, որոնց ընթացքում Տերը **ոչինչ չկերավ**: Քառասունօրյա փորձության վերջում սկսեց եռակի փորձությունը, որին ավելի ծանոթ ենք: Փաստորեն, փորձություններն անցան երեք տարբեր տեղերում՝ անապատում, լեռան վրա և Երուսաղեմի տաճարում: Հիսուսի մարդկային բնության իրականությունը արտացոլված է **«քաղց զգաց»** բառերում: Առաջին փորձությունը ճիշտ այդ նպատակն էր հետապնդում: Մատանան Տիրոջն առաջարկեց Իր աստվածային իշխանությունն օգտագործել մարմնական քաղցի հագեցման համար: Ինքն իրենով այդպիսի արարքն օրինական էր, սակայն այդպես անելով՝ Հիսուսը ճիշտ վարված չէր լինի, քանի որ սատանային հնազանդված կլիներ: Նա պետք է գործեր Իր Հոր կամքի համաձայն: Այս փորձության իմաստը սրանում էր:

4:4. **Հիսուսն** այս փորձությանը հակադարձեց՝ սուրբգրությունից մեջբերելով 2 Օր. 8:3-ը: Աստծո Խոսքին հնազանդվելը շատ ավելի կարևոր է, քան ֆիզիկական պահանջների բավարարումը: Նա չվիճեց: Դարբին ասել է. «Սուրբգրային միակ համարն էլ պապանձեցնում է, եթե այն Սուրբ Հոգու գորությամբ է օգտագործվում: Կարծիքների պայքարում գորության ողջ գաղտնիքը Աստծո Խոսքի ճիշտ օգտագործման մեջ է»:

4:5-7. Երկրորդ փորձության ժամանակ **սատանան մեկ վայրկյանում Նրան ցույց**

ավեց աշխարհի բոլոր թագավորությունները: Սատանայից շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի ցույց տա այն ամենը, ինչ ինքը կարող էր առաջարկել: Նա ոչ թե հենց աշխարհը առաջարկեց, այլ **այս աշխարհի թագավորությունները:** Որոշակի իմաստով՝ Նա **խսկապես** աշխարհի **թագավորությունների** վրա իշխանություն ունի: Մարդու մեղանչելու պատճառով սատանան դարձավ «այս աշխարհի իշխանը» (Հովհ. 12:3, 14:30, 16:11), «այս դարի աստվածը» (2 Կոր. 4:4) և «օդի իշխանության իշխանը» (Եփ. 2:2): Ըստ Աստծո նպատակի՝ «Այս աշխարհի թագավորությունները դարձան մեր Տիրոջն ու Նրա Օծյալինը» (Հայտ. 11:15): Այսպիսով, սատանան Քրիստոսին առաջարկեց այն, ինչը ժամանակի ընթացքում ամեն դեպքում պատկանելու է Նրան:

Սակայն գահին տանող ճանապարհը չէր կարող կարճ լինել: Դրան նախորդում էր խաչը: Իր խորհրդով Աստված նախասահմանել էր, որ Տեր Հիսուս Քրիստոսը մինչ Իր փառքի մեջ մտնելը նախ պետք է չարչարվեր: Նա չէր կարող նպատակին ապօրինի միջոցներով հասնել: Ոչ մի պարագայում Հիսուսը չէր **երկրպագի** սատանային՝ անկախ դրանից, թե Իրեն ինչպիսի պարգևատրություն կառաջարկվեր:

4:8. Ուստի Տերը մեջբերեց Երկրորդ Օրինացի խոսքերը (6:13), որպեսզի ցույց տա, որ Ինքը՝ իբրև Մարդ, պետք է միայն Աստծուն **պաշտի ու ծառայի:**

4:9-11. Երրորդ փորձության ժամանակ սատանան Նրան տարավ **Երուսաղեմ, կանգնեցրեց տաճարի աշտարակի վրա** ու առաջարկեց **ցած գցվել:** Մի՞թե Աստված Սղմ. 91:11-12-ում չխոստացավ, որ կպահպանի Մեսիային: Հնարավոր է, որ սատանան Հիսուսին փորձում էր, որպեսզի Նա Իրեն՝ իբրև Մեսիա հայտնեք սենսացիոն տեսարան ցուցադրելու նպատակով: Մաղաքիան կանխատեսել էր, որ Մեսիան հանկարծակի է Իր տաճարը մտնելու (Մաղ. 3:1): Հետևաբար այստեղ Հիսուսին հնարավորություն տրվեց խոստացյալ Ազատարարի փառքն ու ճանաչումը ձեռք

բերել՝ առանց Գողգոթայի խաչի վրա բարձրանալու:

4:12. Երրորդ անգամ Հիսուսը փորձությանը հակադարձեց՝ Աստվածաշնչից մեջբերելով 2 Օր. 6:16-ը, որն արգելում է **Աստծուն** փորձելը:

4:13. Սուրբ Հոգու սրով ետ շարտված **սատանան միառժամանակ** հեռացավ Հիսուսից: Սովորաբար փորձությունները գալիս են ավելի գործող պիքի ձևով, քան հոսքերի:

Խոսելով փորձության մասին՝ պետք է հիշել մի քանի լրացուցիչ մանրամասներ.

1. Ղուկասի կողմից արձանագրված փորձությունների հերթականությունը տարբերվում է Մատթեոսի արձանագրություններից: 2-րդ և 3-րդ փորձությունները անհայտ պատճառով այլ հերթականությամբ են դասավորված:
2. Բոլոր երեք դեպքերում էլ Հիսուսին առաջարկված նպատակը նույնն է, բայց ճիշտ չեն դրան հասնելու միջոցները: Միշտ էլ սխալ է սատանային լսելը, նրան կամ ցանկացած այլ արարված էակի երկրպագելն ու Աստծուն փորձելը:
3. Առաջին փորձությունը վերաբերում էր մարմնին, երկրորդը՝ անձին, իսկ երրորդը՝ հոգուն: Դրանք համապատասխանաբար շոշափում էին մարմնի ցանկությունը, աչքի ցանկությունն ու այս աշխարհի հպարտությունը:
4. Բոլոր երեք փորձություններն էլ պտտվում են մարդկային էության երեք գորավոր մղումների՝ ֆիզիկական կարիքների, իշխելու և տիրելու փափագի, ինչպես նաև համընդհանուր ճանաչման արժանանալու ցանկության շուրջ: Որքան հաճախ է պատահում, որ աշակերտները հանդիպում են հարմարավետության ու հաճույքի ճանապարհին ընտրելու, աշխարհում աչքի ընկնող դիրք գրավելու և Եկեղեցում բարձր դիրք զբաղեցնելու ձգտման փորձությունների:
5. Բոլոր երեք փորձություններում սա-

տանան կրոնական լեզու օգտագործեց և դրանով փորձությունը զգեստավորեց առաքինության արտաքին հանդերձով: Նա նույնիսկ սուրբգրությունից համարներ մեջբերեց (հ. 10-11):

Ջեյմս Ստյուարտը շատ տեղին նկատել է.

«Փորձությունների նկարագրության ուսումնասիրությունը երկու կարևոր պահ է լուսավորում: Մի կողմից այն ապացուցում է, որ պարտադիր չէ, որ փորձությունը մեղք լինի: Մյուս կողմից, այս պատմությունը լույս է սփռում հետագայում աշակերտի կողմից ասված հանրաճանաչ արտահայտության վրա. «Հենց նրանով, որ Նա Ինքը փորձություն ևրելով չարչարվեց, կարող է օգնել փորձվողներին» (Եբր. 2:18):¹¹

Երբեմն ասում են, որ փորձությունն անհմաստ էր, քանի որ Տեր Հիսուսը չէր կարող մեղք գործել: Հիսուսն իսկապես Աստված է, իսկ Աստված չի կարող մեղք գործել: Տեր Հիսուսը երբեք աստվածության ստորոգելիներով չէր վարվում: Նրա երկրավոր կյանքում Նրա աստվածությունը ծածկված էր, բայց այն մի կողմ դրված չէր և ոչ էլ կարող էր դրվել: Ոմանք ասում են, թե որպես Աստված՝ Նա չէր կարող մեղք գործել, բայց որպես Մարդ՝ կարող էր: Բայց Նա և՛ Աստված է, և՛ Մարդ է, ուստի հնարավոր չէ նույնիսկ մտածել, որ Նա կարող է մեղք գործել այսօր: Փորձության նպատակն այն չէր, որ տեսնեինք, թե Նա *կարող էր* մեղք գործել, այլ որպեսզի ապացուցվի, որ Նա *չի կարող* մեղք գործել: Միայն սուրբ, անմեղ Մարդը կարող էր մեր Ազատարարը լինել:

Ե. Պատրաստություն ուսուցանելու միջոցով (4:14-30)

4:14-15. 13-14-րդ համարների միջև մեկ տարվա ժամանակահատված կա: Այդ ընթացքում Տերը ծառայում էր Հրեաստանում: Այդ ծառայության մասին միակ արձանագրությունը գտնվում է Հովհաննեսի Ավետարանի 2-5-րդ գլուխներում:

Երբ Հիսուսը Հոգու գործությամբ վերա-

դարձավ Գալիլիա, որպեսզի սկսի Իր հրապարակային ծառայության երկրորդ տարին, **Նրա համբավը տարածվեց գավառի բոլոր կողմերում**: Երբ Նա **սովորեցնում էր** հրեական ժողովարաններում, ամենուր լայն ճանաչում էր ստանում:

4:16-21. Իր մանկության քաղաք **Նազաբեթում** Հիսուսը, Իր սովորության համաձայն, **շաբաթ օրը ժողովարան մտավ**: Եվ երկու բան կար, որ, ինչպես կարդում ենք, Նա կանոնավոր կատարում էր. աղոթում էր (Ղուկ. 22:39) և սովորություն ուներ սովորեցնելու ուրիշներին (Մարկ. 10:1):

Ժողովարան այցելություններից մեկի ժամանակ Նա կանգնեց, որ կարդա հինկտակարանյան գրություններից: Ծառայողը Նրան տվեց Եսայու մարգարեության գալարը: Տերը բացեց գալարի այն տեղը, որը մեզ հայտնի է որպես Եսայու մարգարեության 61-րդ գլխի 1-ին և 2-րդ համարի սկիզբ: Այդ համարը հայտնի էր որպես Մեսիայի ծառայությունը նկարագրող հատված: Երբ Հիսուսն ասաց. «**Այսօր այս գրվածքը կատարվեց ու ձեր ախանջներով լսեցիք**», Նա միանշանակորեն հայտարարեց, որ Ինքը Իսրայելի Մեսիան է:

Ուշադրություն՝ ն դարձրեք Մեսիայի ծառայության մեծագույն նպատակներին: Նա եկավ, որպեսզի լուծի պատմության ողջ ընթացքում մարդկությանը տանջող ահռելի դժվարությունները.

Աղքատություն. **աղքատներին Ավետարանը քարոզելու:**

Վիշտ. **սրտով կոտրվածներին բժշկելու:**
Գերություն. **գերիներին փրկություն քարոզելու:**

Տառապանք. **կույրերի աչքերը բացելու:**
Ճնշվածություն. **ճնշվածներին ազատելու:**

Մի խոսքով, Նա եկավ՝ Տիրոջ ընդունելի տարին հռչակելու՝ նոր դարաշրջանի լուսաբացն այս աշխարհի լացող, ողբացող բազմությունների համար: Նա Իրեն՝ որպես պատասխան, ներկայացրեց մեզ տանջող բոլոր չարիքների դեմ: Եվ դա ճշմարիտ է՝ անկախ դրանից, թե այս չարիքների մա-

սին մտածում ենք ֆիզիկական, թե՞ հոգևոր առումով: Քրիստոսն է դրանց պատասխանը:

Եվ բողոքովին պատահական չէր, որ Նա Իր ընթերցումն ընդհատեց այս խոսքերով՝ «... **Տիրոջ ընդունելի տարին հռչակելու**»: Նա չշարունակեց մեջբերել Եսայի մարգարեի «... Եվ մեր Աստծո վրեժխնդրության օրը» խոսքերը: Նրա առաջին գալստյան նպատակը **Տիրոջ ընդունելի տարին հռչակելն էր**: Ներկա շնորհի դարն ընդունելի ժամանակն է և փրկության օրը: Երբ Նա երկրորդ անգամ երկիր վերադառնա, այն ժամանակ կհռչակի մեր Աստծո վրեժխնդրությունը: Նկատե՛ք, որ **ընդունելի ժամանակի մասին** ասված է որպես **տարի**, իսկ վրեժխնդրության ժամանակի մասին՝ որպես *օր*:

4:22. Պարզ է, որ մարդիկ շատ տպավորվել էին: Նրա մասին լավ բաներ էին ասում: Նրանց գրավել էին **Նրա շնորհալի խոսքերը**: Նրանց համար խորհրդավոր էր, թե **Հովսեփի որդին**՝ Հյուսնը, որտեղ էր այդքան զարգացել:

4:23. Տերը գիտեր, որ իր մասսայականությունը մակերեսային է: Մարդիկ իսկապես չընդունեցին Նրա ճշմարիտ էությունն ու արժեքը: Նրանց համար Նա իրենց հայրենակիցներից մեկն էր, ով Կափառնայումն էր, ով ինչ-որ լավ բան էր արել: Նա կանխագգում էր, որ նրանք կարող էին Իրեն ասել. «**Բժիշկ, ինքդ քեզ բժշկիր**»: Այս ասացվածքը սովորաբար հետևյալ իմաստն ունեւր. «Քեզ համար արա՛ այն, ինչ ուրիշներին արեցիր: Եթե դու հայտարարում ես, որ ուրիշներին բժշկում ես, ապա քո սեփական վիճակը բժշկիր»: Սակայն այստեղ նշանակությունը մի քիչ տարբերվում է: Դա բացատրվում է հաջորդող խոսքերում. «**Ինչ բաներ, որ լսեցինք, թե կատարեցիր Կափառնայումնում, այստեղ՝ Քո գավառում էլ արա**»: Սա արհամարհական մարտահրավեր էր, որպեսզի Նա Նազարեթում էլ հրաշքներ կատարեր, ինչպես արել էր այլ վայրերում, և դրանով Իրեն փրկեր ծաղրանքներից:

4:24-27. Ի պատասխան՝ Տերը մի սկզբունք ասաց, որը խորապես արմատացել է մարդկանց գործնական կյանքում. մեծ մարդկանց **իրենց** սեփական հայրենիքում չեն գնահատում: Այնուհետև Նա երկու ականառու դեպք հիշեցրեց ՀԿ-ից, երբ Աստծո մարգարեները չէին հարգվում Իսրայել ժողովրդի կողմից, և հետևաբար ուղարկվում էին հեթանոսներին: Երբ **մեծ սով եղավ** Իսրայելում, **Եղիան չուղարկվեց մի** հրեա որբնայրու մոտ, թեև շատ որբնայրիներ կային, բայց Աստված նրան **ուղարկեց** Սիդոն՝ մի հեթանոս **այրի կնոջ** մոտ: Ու չնայած **Եղիսեի** ծառայության ժամանակ **Իսրայելի մեջ շատ բորոտներ կային**, նա նրանցից ոչ մեկին չօգնեց: Դրա փոխարեն նա ուղարկվեց սիրիական բանակի գորահրամանատար **Նեեմանի** մոտ: Պատկերացրե՛ք, թե Հիսուսի խոսքերը ինչպես ազդեցին հրեաների վրա: Նրանք կանանց, հեթանոսներին, բորոտներին հասարակական սանդուղքի ամենաներքևի աստիճանին էին դասում: Սակայն Տերն այստեղ դիտավորյալ այս երեքին անհավատ հրեաներից *բարձր* դասեց: Նա ճիշտ այն մասին էր խոսում, որ հինկտակարանյան պատմությունը պետք է կրկնվի: Չնայած Իր հրաշքներին՝ Նա կմերժվի ոչ միայն Նազարեթ քաղաքի բնակիչներից, այլև ողջ Իսրայել ժողովրդից: Այնուհետև Նա կդիմի հեթանոսներին, ինչպես արեցին Եղիան ու Եղիսեն:

4:28. Նազարեթի մարդիկ ճիշտ հասկացան Նրա խոսքերը: Նրանք բարկությամբ լցվեցին, երբ ընդամենը մեկ անգամ լսեցին հեթանոսներին ցույց տված գթության մասին:

Եպիսկոպոս Ռեյլը մեկնաբանում է.

«Մարդիկ շատ են ատում այստեղ Քրիստոսի կողմից հռչակված Աստծո գերիշխանության վարդապետությունը: Աստված պարտավոր չէր նրանց մեջ հրաշքներ կատարել»:¹²

4:29-30. Մարդիկ վեր կացան ու **Նրան քաղաքից դուրս հանեցին... որ բարձր տեղից ցած գցեն Նրան**: Անկասկած, դա

սատանայի կողմից էր հարուցված. ևս մի փորձ արքայական ժառանգին ոչնչացնելու համար: Սակայն Հիսուսը հրաշքով անցավ ամբոխի միջով ու լքեց քաղաքը: Հակառակորդները անգոր էին Նրան կանգնեցնելու համար: Որքանով մեզ հայտնի է, Նա այլևս Նազարեթ չվերադարձավ:

IV. ՄԱՐԳՈՒ ՈՐԳԻՆ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ Է ԻՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ (4:31-5:26)

Ա. Զորություն պիղծ ոգու վրա (4:31-37)

4:31-34. Այն, ինչ կորցրեց Նազարեթը, շահեկան եղավ Կափառնայումի համար: Այս քաղաքի մարդիկ Հիսուսի ուսմունքը հեղինակավոր ճանաչեցին: Նրա խոսքերը համոզում էին ու արթնացնում: 31-41-րդ համարները նկարագրում են Տիրոջ կյանքի սովորական շաբաթ օրերից մեկը: Այստեղ Նա ներկայացված է որպես Տեր դևերի ու հիվանդությունների վրա: Սկզբում Նա եկավ **ժողովարան** և այնտեղ **հանդիպեց պիղծ ոգի ունեցող** մարդուն: «**Պիղծ**» ասականը հաճախ օգտագործվում է չար ոգիներին նկարագրելու համար: Դա նշանակում է, որ նրանք պիղծ էին ու պղծում էին իրենց զոհերին: Այս հատվածում երեվում է դևերով բռնված լինելու իրականությունը: Նախ սարսափի ճիչ եկավ. «**Թճճ մեզ, ի՞նչ ես ուզում մեզանից**»: Այնուհետև ոգին հստակ ցույց տվեց, որ գիտեր, թե Ով է Հիսուսը՝ **Աստծո Սուրբը**, Ով վերջին հաշվով հաղթելու է սատանայի զորքերին:

4:35. Հիսուսը դևին կրկնակի պահանջ ներկայացրեց. «**Պապանձվիր և դ՛րքս արի դրանից**»: Դևը նախ մարդուն գետնին հարվածեց, սակայն առանց վնասելու, որից հետո Հիսուսի ասածը կատարեց:

4:36-37. Մարդիկ **սարսափի մեջ** էին: Հիսուսի խոսքերում ի՞նչ կար, որ **պիղծ ոգիներն** էլ էին հնազանդվում Նրան: Դա ի՞նչ աներևակայելի **հեղինակություն ու զորություն** էր, որով Նա խոսում էր: Զարմանալի չէ, որ **Նրա համբավը տարածվեց ամբողջ շրջակայքում**:

Հիսուսի կատարած ֆիզիկական բոլոր հրաշքները ցուցադրում են այն նմանատիպ հրաշքները, որոնք Նա կատարել է հոգևոր բնագավառում: Օրինակի՝ Ղուկասի Ավետարանում ստորև թվարկված հրաշքներից հետևյալ հոգևոր դասերն են բխում.

Պիղծ ոգիների հանելը (4:30-37) - մեղքի պղծությունից ու անմաքրությունից ազատում:

Պետրոսի զոքանչի բժշկությունը (4:38-39) - մեղքի պատճառած անհանգստությունից ու թուլությունից ազատագրում:

Բորոտի բժշկությունը (5:12-16) - մեղքի անտանելիությունից ու հուսալքությունից վերականգնում (տե՛ս նաև 17:11-19):

Անդամալույծը (5:17-26) - հոգևոր կաթվածահարությունից ազատում ու Աստծուն ծառայելու հնարավորություն:

Որբևայրի կնոջ տղայի վերակենդանացումը (7:11-17) - մեղավորները մեռած են անօրենությունների ու մեղքերի մեջ և կյանքի կարիք ունեն (տե՛ս նաև 8:49-56):

Ծովի վրա փոթորկի հանդարտեցումը (8:22-25) - Քրիստոսը կարող է հսկել Իր աշակերտների կյանքում մոլեգնող փոթորիկները:

Դևերի լեզեռնը (8:26-39) - մեղքը ծնում է բռնություն, անմտություն և մարդկանց վտարում քաղաքակիրթ հասարակությունից: Տերը պարզևում է պարկեշտություն, ողջամտություն և Իր հետ հաղորդակցություն:

Նրա հանդերձի ծայրին հպվող կինը (8:43-48) - աղքատացումն ու ընկճախտը մեղքով են ի հայտ գալիս:

Հինգ հազար մարդկանց կերակրելը (9:10-17) - մեղավոր աշխարհն է՝ առանց Աստծո հացի: Քրիստոսն այս կարիքները հոգում է Իր աշակերտների միջոցով:

Դիվահար որդին (9:37-43ա) - մեղքի դաժանությունն ու բռնությունը և Քրիստոսի բժշկող զորությունը:

Թուլության ոգի ունեցող կինը (13:10-17) - մեղքը աղմատում ու խեղում է, իսկ Հիսուսին դիպչելը լիովին վերականգնում է:

Ջրդողյալ մարդը (14:1-6) - մեղքն առաջացնում է անհարմարություն, սահմանափակում և վտանգ:

Կույր աղքատը (18:35-43) - մեղքը մարդկանց աչքերը փակում է, որպեսզի չտեսնեն հավիտենականության իրական լինելը: Նոր ծնունդ ունենալու հետևանքով աչքերը բացվում են:

Բ. Չորություն ջերմի վրա (4:38-39)

Այնուհետև Հիսուսին խնդրեցին **Սիմոնի տուն** գնալ, որտեղ **Սիմոնի զոքանչը բարձր ջերմությունից տանջվում էր**: Տերը **սաստեց ջերմին** և այն անմիջապես թողեց նրան: Առողջացումը ոչ միայն արագ կատարվեց, այլև ամբողջապես բուժվեց, քանի որ այդ կինը կարողացավ վեր կենալ ու հոգ տանել ընտանիքին: Մովորաբար բարձր ջերմությունից հետո մարդը թույլ, անեռանդ և անտարբեր է գգում: Կուսակրոնության ջատագով հոգևորականները շատ քիչ մխիթարություն կգտնեն այս հատվածում: Պետրոսն ամուսնացած էր:

Գ. Չորություն հիվանդությունների ու դևերի վրա (4:40-41)

4:40. Զանի որ շաբաթ օրը մոտենում էր ավարտին, մարդիկ, հարկադրված անգործությունից ազատվելով, հաշմանդամներ և դիվահարներ **բերեցին Նրա մոտ**: Նրանցից ոչ մեկն իզուր չեկավ: Նա **բժշկեց** յուրաքանչյուր հիվանդի և վտարեց դևերին: Ծատերը, որ այսօր հայտարարում են, թե հավատով բժշկում են, իրենց հրաշքները սահմանափակում են ընտրյալ թեկնածուներով: Հիսուսը բժշկեց *յուրաքանչյուրին*:

4:41. Վտարված **դևերը** զիտեին, որ Հիսուսը **Քրիստոսն է՝ Աստծո Որդին**: Նա դևերի վկայությունը չէր ընդունում: Նա նրանց պետք է ստիպեր, որ պապանձվեն: **Նրանք գիտեին, որ Ինքը Քրիստոսն է՝ Մեսիան, սակայն Աստված այս փաստը հռչակելու համար այլ և ավելի լավ գործիքներ ունի**:

Դ. Չորություն՝ գնալու և քարոզելու (4:42-44)

Հաջորդ օրը Հիսուսն առանձնացավ ա-

մայի մի վայրում՝ Կափառնայումի մոտակայքում: **Ժողովուրդը որոնեց Նրան** ու գտավ: Նրանք աղաչում էին, որ չգնա: Բայց Հիսուսը նրանց հիշեցրեց, որ Իր ծառայությունը պետք է կատարի նաև **Գալիլիայի ուրիշ քաղաքներում**: Այսպես ժողովարանից ժողովարան Նա գնում և **քարոզում էր Աստծո թագավորության** Բարի լուրը: Հիսուսն Ինքն էր Թագավորը: Նա ուզում էր մարդկանց վրա թագավորել: Բայց նախքան դա նրանք պետք է ապաշխարեին: Նա չէր թագավորի նրանց վրա, ովքեր կառչում էին իրենց մեղքերից: Դա խոչընդոտ էր: Նրանք ուզում էին փրկվել քաղաքական դժվարություններից, ոչ թե իրենց մեղքերից:

Ե. Չորություն ուրիշներին սովորեցնելու միջոցով. աշակերտների կանչվելը (5:1-11)

Պետրոսին կանչելու մասին պարզ հաղորդագրությունից մի քանի կարևոր դասեր են բխում:

Տերը որպես ամբիոն օգտագործեց Պետրոսի **նավակը**, որտեղից քարոզեց ժողովրդին: Եթե մենք Տիրոջը ներկայացնենք մեզ պատկանող ունեցվածքը, ապա Նա զարմանալի կերպով կօգտագործի այն, նաև կպարզևատրի մեզ:

1. Նա ճշգրտորեն ցույց տվեց Պետրոսին, թե որտեղից կարելի է շատ ճույղ բռնել այն բանից հետո, երբ Պետրոսն ու մյուսները մի **ամբողջ գիշեր** ծանր ու ապարդյուն աշխատել էին: Ամենագետ Տերը գիտի, թե որտեղ են ձկները լողում: Մեր սեփական իմաստությամբ ու գործությամբ կատարած ծառայությունն անհաջող է լինելու: Քրիստոնեական աշխատանքի հաջողության գաղտնիքը Տիրոջ կողմից առաջնորդված լինելու մեջ է:
2. Չնայած որ Պետրոսն ինքը փորձառու ձկնորս էր, նա Հյուսնից ընդունեց այս խորհուրդը, և արդյունքում ուռկանները լցվեցին: «... **Քո խոսքով ուռկանը կզցեն**». այս խոսքերը ցուցադրում են հեզության, իրատ ընդունելու և ներ-

քին հնազանդության արժեքը:

3. Նրանք **խորը** տեղում էին գտնվում, երբ ցանցերը լիուլի լցվեցին, բայց ուռկանները **չպատռվեցին**: Նույնպես էլ մենք պետք է դադարենք ափի վրա նեղվելուց և պետք է դուրս գանք բաց ծով: Չարչարանքների, վշտի և կորստի պես հավատն էլ իր խորությունն ունի: Եվ հենց այդ խորություններն էլ լցնում են ուռկանները:
4. **Նրանց ուռկաններն** սկսեցին պատռվել, իսկ նավերը **սուզվելու վրա էին** (հ. 6-7): Քրիստոսի առաջնորդությամբ եղած ծառայությունը դժվարությունների է բերում, բայց որքան բավականություն կա այդ դժվարություններից: Դրանք այնպիսի դժվարություններ են, որոնցից ցնծում է իսկական ձկնորսի սիրտը:
5. Տեր Հիսուսի փառքի տեսիլքը **Պետրոսի** մոտ սեփական ոչնչությունը զգալու ճնշող զգացում առաջացրեց: Այդպես եղավ նաև Եսայու հետ (6:5), այդպես է լինում բոլորի հետ, ովքեր տեսնում են Թագավորին Իր ողջ գեղեցկությամբ:
6. Քրիստոսը Պետրոսին կանչեց **մարդկանց** ձկնորս լինելու այն ժամանակ, երբ նա զբաղված էր իր սովորական աշխատանքով: Առաջնորդության սպասելով՝ զբաղվե՞ք ձեր ձեռքի գտած աշխատանքով: Դրանում ներդրե՞ք ձեր ողջ ուժը: Արե՞ք սրտանց, իբրև Տիրոջ համար: Ինչպես դեկը նավին ուղղորդում է միայն շարժման ընթացքում, այնպես էլ Աստված մարդկանց ուղղորդում է այն ժամանակ, երբ նրանք շարժման մեջ են գտնվում:
7. Քրիստոսը Պետրոսին ձկնորսությունից կանչեց **մարդկանց** ձկնորս լինելու կամ եթե բառացի ասենք՝ «մարդկանց կենդանի որսալու»: Օվկիանոսի բոլոր ձկները չեն համեմատվի այն անչափելի ուրախության հետ, երբ տեսնում ենք Քրիստոսի և հավիտենականության համար շահված գեթ մեկ հոգուն:

8. Պետրոսը, **Հակոբոսն ու Հովհաննեսը** երկու նավակներն էլ ափ հանեցին, **ամեն ինչ թողեցին ու հեռուեցին** Հիսուսին. դա նրանց կյանքի ամենահաջողակ օրերից մեկն էր:

Որքան շատ բան էր կախված նրանց այդ որոշումից: Մենք երևի թե երբեք չստեղծենք նրանց մասին, եթե նրանք չնախընտրեին իրենց նավակները թողնել:

2. Չորություն բորոտության վրա (5:12-16)

5:12. Ղուկաս բժիշկը հատուկ հիշատակում է այս փաստը, որ **մարդը բորոտությամբ էր պատված**: Դա բորոտության բարձրորդի վիճակ էր, մարդկային հասկացողությամբ՝ բացարձակ անհույս: Բայց բորոտը հիանալի հավատ ուներ: Նա ասաց. «**Տե՛ր, եթե կամենաս, կարող ես ինձ մաքրել**»: Աշխարհում ուրիշ ոչ ոքի նա չէր կարող սա ասել: Սակայն նա բացարձակորեն վստահում էր Տիրոջ գործությանը: Երբ ասաց «**եթե կամենաս**». դրանով չէր կասկածում Քրիստոսի կամեցողության վրա: Ավելի ճիշտ, իբրև աղերսող, բուժվելու ոչ մի իրավունք չունենալով՝ նա իրեն հանձնում էր Տիրոջ գթությանն ու շնորհին:

5:13. Բժշկական տեսանկյունով բորոտին դիպչելը վտանգավոր էր: Կրոնական առումով՝ պղծություն, իսկ սոցիալական առումով՝ նվաստացում: Սակայն Փրկիչը ոչ մի ախտով չվարակվեց: Ընդհակառակը, բորոտի մարմին խուժեցին բժշկության ու առողջության ալիքները: Դա աստիճանական առողջացում չէր. **և անմիջապես բորոտությունը գնաց նրանից**: Խորհե՛ք, թե դա ինչ նշանակություն պիտի ունենար անհույս, անօգնական բորոտի համար. մի ակնթարթում ամբողջական վերականգնում:

5:14. Հիսուսը **պատվիրեց նրան**, որ **ոչ ոքի չասի** բժշկվելու մասին: Փրկիչը չուզեց գրավել ամբոխի հետաքրքրությունը կամ Իրեն Թագավոր հռչակելու ժողովրդական շարժում առաջացնել: Ընդհակառակը, Տերը բորոտին պատվիրեց **գնալ և իրեն քահանային ցույց տալ** ու մատուցել **Մով-**

սեսի պատվիրած **ընծան** (Ղև. 14:4): Չհաբերության յուրաքանչյուր մասնիկը Քրիստոսի մասին էր խոսում: **Քահանայի** գործառույթի մեջ էր մտնում բորոտին քննելը և որոշելը, թե արդյոք նա իսկապես բժշկվել է: Քահանան չէր կարող *բուժել*. նա միայն կարող էր *հայտարարել*, որ մարդը բուժված էր: Այդ քահանան նախկինում երբեք բուժված բորոտ չէր տեսել: Դա եզակի դեպք էր: Դրա միջոցով նա պետք է հասկանար, որ վերջապես Մեսիան հայտնվել է: Այս իրադարձությունը պետք է որ **վկայություն** դառնար բոլոր քահանաների համար: Սակայն նրանց սիրտը անհավատությանմբ էր կուրացած:

5:15-16. Չնայած Տիրոջ կատարած հրաշքի մասին չհռչակելու պատվերին՝ լուրն արագ տարածվեց, և **շատ ժողովուրդ էր հավաքվում** Նրա մոտ բժշկվելու համար: Հիսուսը հաճախ **ամայի տեղեր էր քաշվում**, որպեսզի աղոթքով անցկացնի ժամանակը: Մեր Փրկիչն աղոթքի Մարդ էր: Հասկանալի է, որ Նրան՝ որպես Մարդու Որդու ներկայացնող Ավետարանն ավելի շատ է խոսում Նրա աղոթքի կյանքի մասին, քան՝ մյուսները:

Է. Չորություն անդամալույծի վրա (5:17-26)

5:17. Որքան Հիսուսի ծառայության մասին լուրը տարածվում էր, այնքան **փարիսեցիներն ու Օրենքի ուսուցիչներն** ավելի թշնամաբար էին տրամադրվում: Այստեղ կարդում ենք, թե ինչպես նրանք հավաքվեցին **Գալիլայում**՝ ակնհայտորեն Նրա դեմ ինչ-որ մեղադրանք գտնելու դիտավորությամբ:

Տիրոջ զորությունը ներկա էր հիվանդներին **բժշկելու համար**: Փաստորեն Հիսուսը միշտ ուներ բժշկելու զորություն, սակայն միշտ չէ, որ բարենպաստ պայմաններ էին լինում: Օրինակ՝ Նազարեթում Նա չկարողացավ շատ մեծ գործեր կատարել ժողովրդի անհավատության պատճառով (Մատթ. 13:58):

5:18-19. Այն տանը, որտեղ Հիսուսը սովորեցնում էր, չորս մարդ **մահիճով անդա-**

մալույծ մի մարդ բերեցին: Նրանք **ամբողջի պատճառով** չկարողացան նրան Հիսուսի մոտ՝ **ներս տանել**, ուստի դրսի աստիճաններով բարձրացան տանիք: Հետո հանելով կղմինդրները՝ առաստաղի վրա բացված անցքով իջեցրին մարդուն:

5:20-21. Հիսուսն ուշադրություն դարձրեց **հավատին**, որ այնքան հեռու գնաց կարիքավորին Իր մոտ բերելու համար: Եվ Նա, **նրանց հավատը տեսնելով**, այսինքն՝ չորս ընկերների և հատկապես հաշմանդամի հավատը, ասաց անդամալույծին. «**Ո՛վ մարդ, քո մեղքերը քեզ ներված են**»: Այս աննախադեպ խոսքերը արթնացրին **դպիրներին ու փարիսեցիներին**: Նրանք գիտեին, որ ոչ մեկը, բացի **Աստծուց**, չի կարող **մեղքերի թողություն տալ**: Չցանկանալով ընդունել, որ Հիսուսն Աստված է, նրանք տրտնջացին, թե Նա հայոյություն է խոսում:

5:22-23. Այն ժամանակ Հիսուսն սկսեց նրանց ապացուցել, որ Նա իսկապես թողություն տվեց այդ մարդու մեղքերին: Նախևառաջ Նա հարցրեց նրանց, **թե ո՞րն է ավելի հեշտ՝ «Բո մեղքերը քեզ ներված են» ասելը, թե՞ «Վեր կաց և քայլի՛ր» ասելը**: Որոշակի իմաստով այսպես կամ այնպես *ասելը* հեշտ է, բայց բոլորովին այլ բան է այս կամ մյուսը *կատարելը*, որովհետև թե՛ թողություն տալը և թե՛ քայլեցնելը մարդկանց ուժերից վեր, անհնարին բան է: Այստեղ էականն այն է, որ կարծես թե ուզում է ասել. «Բո մեղքերը քեզ ներված են» ասելն ավելի հեշտ է, որովհետև հնարավոր չէ տեսնել՝ արդյոք դա կատարվե՞ց: Իսկ ասել. «**Վեր կաց և քայլի՛ր**», կարելի էր տեսնել հիվանդի բժշկվելով:

Փարիսեցիները չէին կարող *տեսնել*, թե իրո՞ք այդ մարդու մեղքերը ներվեցին, դրա համար էլ չէին հավատա: Այդ պատճառով Հիսուսը հրաշք կատարեց, որպեսզի նրանք կարողանան *տեսնել* այն բանի ապացույցը, որ Ինքը իսկապես այդ մարդու մեղքերին թողություն տվեց: Նա անդամալույծին քայլելու զորություն պարգևեց:

5:24. «Բայց որպեսզի իմանաք, որ Մարդու Որդին երկրի վրա իշխանություն ունի մեղքերը ներելու»: «Մարդու Որդին» տիտղոսը ընդգծում է Տիրոջ կատարյալ մարդկային բնույթը: Որոշակի իմաստով բոլորս էլ մարդու որդիներ ենք, սակայն «Մարդու Որդին» տիտղոսը Տեր Հիսուսին առանձնացնում է երբևէ ապրած բոլոր մարդկանցից: Այն Նրան նկարագրում է որպես Աստծո հանությունն ունեցող մի Մարդու, Ով կատարյալ է բարոյապես, Ով չարչարվելու է, արյունն է հեղելու և մեռնելու է, և Ում տրված է տիեզերքի ղեկավարությունը:

5:25. Նրա խոսքին հնազանդվելով՝ անդամալույծը կանգնեց, վերցրեց իր մահիճն ու գնաց իր տուն՝ **Աստծուն փառավորելով:**

5:26. Իսկ ամբոխը տառացիորեն **ապշեց**. նրանք **ևս փառավորեցին Աստծուն՝** ասելով, որ այդ օրը **անսովոր բաներ տեսան**. այն է՝ մեղքերի թողության հռչակումն ու դա հաստատող հրաշքը:

V. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ԲԱՅԱՏՐՈՒՄ Է ԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ (5:27-6:49)

Ա. Հիսուսը կանչում է Ղևիին (5:27-28)

Ղևիին հրեա **մաքսավոր էր**. հռոմեական կառավարության համար հարկեր էր հավաքում: Հրեա ցեղակիցներն ատում էին այդպիսի մարդկանց ոչ միայն Հռոմի հետ համագործակցելու համար, այլև ազնիվ չլինելու: Մի անգամ, երբ Ղևիին զբաղված էր իր աշխատանքով, Հիսուսն այնտեղով անցնելիս նրան հրավիրեց, որ դառնա Իր հետևորդը: Չարմանալի պատրաստակամությամբ Ղևիին **ամեն բան թողեց, ելավ ու գնաց Նրա հետևից**: Մտածե՞ք այն հիանալի հետևանքների մասին, որ հետևեցին այդ պարզ որոշմանը: Ղևիին կամ Մատթեոսը դարձավ առաջին Ավետարանը գրողը: Արժե՞ հնազանդվել Տիրոջ հրավերին ու հետևել Նրան:

Բ. Ինչո՞ւ է Մարդու Որդին հրավիրում մեղավորներին (5:29-32)

5:29-30. Կարծիք կա, որ մեծ **ճաշկերույթ կազմակերպելով՝ Ղևիին** երեք նպատակ էր հետապնդում: Նա ուզում էր նախ պատվել Տիրոջը, հետո բոլորի ներկայությամբ վկայել իր նոր համոզումների մասին, ինչպես նաև Հիսուսին ներկայացնել իր ընկերներին: Հրեաների մեծամասնությունը մաքսավորների բազմության հետ սեղան չէր նստի: Հիսուսը ճաշեց **մաքսավորների ու մեղավորների հետ**: Անշուշտ, Նա չէր բաժնեկցում նրանց մեղքերին և ոչ էլ այնպիսի բան կաներ, որ փոխգիջման տաներ Իր վկայությունը: Նա այդ հանդիպումներն օգտագործում էր նրանց սովորեցնելու, հանդիմանելու և օրհնելու համար:

Իսկ դպիրներն ու փարիսեցիները¹³ քննադատեցին Հիսուսին այդ արհամարհված, հասարակության ստորին շերտում գտնվողների հետ հաղորդակցվելու համար:

5:31. **Հիսուսը պատասխանեց նրանց ու ասաց**, որ Իր արարքները կատարյալ համաձայնության մեջ են աշխարհ գալու Իր նպատակի հետ: Առողջները կարիք չունեն բժիշկի. նա միայն **հիվանդներին** է պետք:

5:32. Փարիսեցիներն իրենց **արդար** էին համարում: Նրանք մեղքի կամ կարիքի նկատմամբ խոր ըմբռնում չունեին: Հետևաբար չկարողացան օգուտ քաղել Բժշկապետի ծառայությունից: Բայց մաքսավորներն ու մեղավորները հասկացան, որ իրենք **մեղավորներ են** ու կարիք ունեն փրկվելու իրենց մեղքերից: Փրկիչը ճիշտ այդպիսի մարդկանց համար եկավ: Փաստորեն փարիսեցիներն արդարներ **չէին**: Նրանք նույնքան փրկության կարիք ունեին, ինչքան մաքսավորները: Բայց նրանք չէին ուզում խոստովանել իրենց մեղքերն ու ընդունել իրենց հանցանքը: Եվ դրա համար էլ քննադատեցին Բժիշկին՝ ծանր հիվանդներին այցելելու համար:

Գ. Բացատրվում է, թե ինչու Հիսուսի աշակերտները ծոմ չէին պահում (5:33-35)

5:33. Փարիսեցիների հաջորդ գործողությունը ծոմապահության սովորության մասին Հիսուսին հարցաքննելն էր: Չէ՞ որ **Հովհաննես Մկրտչի աշակերտներն** ընդօրինակում էին իրենց ուսուցչի ճգնավորական կյանքին: **Փարիսեցիների** հետևորդներն էլ բազմաթիվ ավանդական ծոմեր էին պահում: Իսկ Հիսուսի աշակերտներն այդպիսի բաներ չէին անում: Ինչո՞ւ:

5:34-35. Տերը պատասխանեց, որ Նրա աշակերտները ծոմ պահելու պատճառ չունեն, քանի որ Ինքը դեռ նրանց **հետ է**: Այստեղ Նա ծոմը կապում է վշտի ու սգի հետ: Երբ Նա **կվերցվի իրենցից**, կմահանա բռնությամբ, այդ ժամանակ նրանք ծոմ կպահեն՝ արտահայտելով իրենց վիշտը:

Դ. Երեք առակներ նոր դարաշրջանի մասին (5:36-39)

5:36. Այնուհետև երեք առակներ են հաջորդում, որոնք սովորեցնում են, որ նոր դարաշրջան է սկսվել, և որ նորը չպետք է խառնել հին հետ:

Առաջին առակում հին հանդերձը խորհրդանշում է Օրենքի համակարգը կամ ժամանակը, իսկ **նոր հանդերձը** նկարագրում է շնորհի ժամանակաշրջանը: Նրանք անհամատեղելի են: Օրենքը շնորհի հետ խառնելու փորձը արդյունքում փչացնում է և՛ մեկը, և՛ մյուսը: Նոր հանդերձից վերցրած կարկատանը կպատռի նոր հանդերձը և արտաքին տեսքով ու ամրությամբ **հնի հետ չի հարմարվի**: Այդ մասին լավ է ասել Ջ. Ն. Դարբին. «Հիսուսը երբեք չէր փորձի քրիստոնեությունը ձուլել հուդայականությանը: Մարմինն ու Օրենքը միասին են ընթանում, բայց շնորհն ու Օրենքը՝ Աստծո արդարությունն ու մարդու արդարությունը, երբեք չեն խառնվում»:

5:37-38. *Երկրորդ* առակը սովորեցնում է, որ իմաստուն չէ **նոր գինին** ցնել **հին տիկերի մեջ**: Եռացող նոր գինին ճնշում է գործադրում տիկերի պատերին, որոնք արդեն գուրկ են բավարար առաձգականությամբ

յուն կամ ճկվելու հատկություն ունենալուց: Տիկերը **պայթում են**, իսկ գինին **դուրս է թափվում**: Դարերի ընթացքում ձևավորված հրեական կադապարները, կարգերը, ավանդություններն ու ծեսերը շատ խիստ էին, որպեսզի իրենց մեջ տեղավորեին նոր դարաշրջանի ուրախությունը, լիությունն ու գորությունը: Այս գլխում **նոր տիկերը** իրենց արտացոլումն են գտնում պայմանական մեթոդներից ազատված այն չորս մարդկանց մեջ, որոնք անդամալուծի բերեցին Հիսուսի մոտ: Նոր գինի կարելի է տեսնել Ղևիի թարմության ու ջանադրության մեջ: **Հին տիկերը** պատկերված են փարիսեցիների ձանձրալի և սառը ձևականությամբ:

5:39. *Երրորդ* առակը հաստատում է, որ **ոչ մեկը, հին գինին խմելով**, նախապատվություն չի տա **նորին**: **Քանի որ կասի՝ «Հինն ավելի լավ է»**: Այստեղ ցույց է տալիս հանուն նորի հինը թողնելու մարդկանց բնական չկամությունը, հանուն քրիստոնեության՝ հուդայականությունը, հանուն շնորհի՝ Օրենքը, հանուն իրականության՝ շուքը: Ինչպես ասում է Դարբին. «Կադապարներին, մարդկային կարգերին, հայրերի կրոնին և այլ բաներին վարժված մարդկանց երբեք դուր չի գա Թագավորության նոր սկզբունքն ու գորությունը»:

Ե. Մարդու Որդին Ե Ճաբաթվա Տերը (6:1-11)

6:1-2. Այժմ մեր առջև շաբաթ օրը տեղի ունեցած երկու իրադարձություններն են, որոնք ցույց են տալիս, որ կրոնական առաջնորդների աճող դիմադրությունն իր գազաթանակետին է հասնում: Առաջին դեպքը կատարվեց **երկրորդ շաբաթ օրը՝ առաջինն անցնելուց հետո** (բնագրից բառացի թարգմանություն): Այլ խոսքով, այս շաբաթ օրը Չատկից հետո առաջին շաբաթ օրն էր: Երկրորդ շաբաթ օրը նրան հաջորդողն էր: Ուրեմն՝ **երկրորդ շաբաթ օրը՝ առաջինն անցնելուց հետո**, Տերն ու Իր աշակերտներն **անցնում էին արտերի միջով**: **Աշակերտները հասկեր էին պոկում, ավիի մեջ շփում և ուտում**: **Փարիսեցիներ**

ըը նրանց չէին կարող մեղադրել հասկեր պոկելու մեջ. դա Օրենքով թույլատրվում էր (2 Օր. 23:25): Նրանք մեղադրում էին, որ դա **շաբաթ օրն** են անում: Հասկեր պոկելը նրանք բերքահավաք համարեցին, իսկ ձեռքերով ափի մեջ **շփելը՝** կախում:

6:3-5. Դավթի կյանքից օրինակ բերելով՝ Տիրոջ պատասխանը հանգեցնում էր նրան, որ շաբաթի մասին օրենքը երբեք չի արգելել աշխատանքը անհրաժեշտության դեպքում: Մերժված և հետապնդվող **Դավիթն** ու նրա մարդիկ սոված էին: Նա **մտավ Աստծո տուն, վերցրեց առաջավորության հացը**, որը սովորաբար նախատեսված էր **քահանաների համար**: Աստված Դավթի համար բացառություն արեց: Իսրայելը մեղքի մեջ էր գտնվում: Թագավորը մերժված էր: Պետք չէր ստրուկի պես կատարել առաջավորության հացի մասին օրենքը՝ քաղցած թողնելով Աստծո թագավորին:

Այստեղ նմանատիպ իրավիճակ էր: Քրիստոսն ու Նրա աշակերտները քաղցած էին: Փարիսեցիներն ավելի շուտ թույլ կտային, որ նրանք սովեին, քան շաբաթ օրով ցորեն վերցնեին: Սակայն **Մարդու Որդին շաբաթի էլ Տերն է**: Նա է հաստատել Օրենքը, և ոչ ոք Նրանից լավ չի կարող մեկնաբանել Օրենքի ճշմարիտ հոգևոր նշանակությունն ու փրկել այն ոչ ճիշտ ըմբռնումից:

6:6-8. Երկրորդ իրադարձությունը կատարվեց **մեկ ուրիշ շաբաթ օր**: Դա մի հրաշալի բժշկությունն էր: **Դպիրներն ու փարիսեցիները** մոտիկից ու չարամտորեն դիտում էին Հիսուսին, թե **շաբաթ օրը բժշկություն կանի՞ արդյոք՝ բժշկելով չորացած ձեռք** ունեցող **մարդուն**: Իմանալով Հիսուսին ու հենվելով անցյալի փորձի վրա՝ նրանք ծանրակշիռ պատճառ ունեին՝ համարելու, որ Նա այդպես էլ կանի: Տերը չի հասթափեցրեց նրանց: Նա սկզբում այդ մարդուն պատվիրեց **բարձրանալ և կանգնել** ժողովարանի **կենտրոնում**: Այս դրամատիկ գործողությունը բոլորի ուշադրությունը կենտրոնացրեց այն բանի վրա, թե ինչ պիտի կատարվեր:

6:9. Այն ժամանակ **Հիսուսն ասաց** Իր քննադատներին. «**Ես ձեզ մի բան հարց-**

նեմ, օրինավոր է շաբաթ օրը բարի՞ բան անել, թե՞ չար»: Եթե նրանք ճիշտ պատասխան տային, ապա ստիպված էին ընդունելու, որ շաբաթ օրը պետք է բարի բան անել, իսկ չարը սխալ է: Եթե պետք է բարի բան անել, ապա Նա, այդ մարդուն բժշկելով, բարի բան արեց: Եթե ճիշտ չէ շաբաթ օրը **չար բան** անելը, ապա նրանք, Տեր Հիսուսին սպանելու համար դավադրություն կազմակերպելով, խախտում էին շաբաթը:

6:10. Հակառակորդների կողմից պատասխան չստացվեց: Այդ դեպքում Հիսուսն այդ մարդուն պատվիրեց **մեկնել** իր չորացած աջ **ձեռքը**: Միայն բժիշկ Ղուկասն է հիշատակում, որ դա աջ ձեռքն էր: Այս պատվերի հետ անհրաժեշտ գորություն եկավ: Երբ մարդը հնազանդվեց, **նրա ձեռքն առողջացավ մյուսի պես**:

6:11. Փարիսեցիներն ու դպիրները **կատաղությամբ լցվեցին**: Նրանք ուզում էին Հիսուսին դատապարտել շաբաթ օրը խախտելու համար, չնայած որ Նա, ընդամենը մի քանի բառ ասելով, մարդուն բժշկեց: Այդտեղ ոչ մի ֆիզիկական աշխատանք չկար: Այնուամենայնիվ, նրանք դավադրություն կազմակերպեցին Նրան բռնելու համար:

Աստված շաբաթ օրը նախատեսել է մարդու բարիքի համար: Ճիշտ ընկալման դեպքում այն չէր արգելում անհրաժեշտությունից բխող կամ գթասարտության նպատակով կատարված աշխատանքը:

2. Տասներկու առաքյալների ընտրությունը (6:12-19)

6:12. Նախքան Տասներկուսին ընտրելը Հիսուսն **ամբողջ գիշերն** անցկացրեց **աղոթելով**: Ինչպիսի՞ հանդիմանություն է սա թե՞ մեր ջերմեռանդության որակին և թե՞ Աստծուց անկախ լինելու մեր փորձերին: Ղուկասը միակ ավետարանիչն է, որ հիշատակում է աղոթելով անցկացրած **գիշերվա** մասին:

6:13-16. **Աշակերտների** ավելի լայն շրջանակից Նա **ընտրեց Տասներկուսին**, որոնք էին՝

Միմոնը, ում նաև Պետրոս կոչեց, Հովհաննի որդին՝ ամենանշանավոր առաքյալներից մեկը:

Անդրեասը՝ նրա եղբայրը: Մա այն Անդրեասն էր, որ Պետրոսին բերեց Հիսուսի մոտ:

Հակոբոսը՝ Չեբեդիոսի որդին: Նրան Հովհաննեսի հետ միասին առանձնաշնորհում տրվեց Այլակերպության լեռան վրա բարձրանալու: Նա սպանվեց Հերովդես Ագրիպա առաջինի կողմից:

Հովհաննեսը՝ Չեբեդիոսի որդին: Հիսուսը Հակոբոսին ու Հովհաննեսին անվանեց «որոտման որդիներ»: Մա այն Հովհաննեսն է, որ իր անունով Ավետարան և թղթեր է գրել, ինչպես նաև՝ Հայտնության գիրքը:

Փիլիպպոսը ծնունդով Բեթսայիդայից էր, ով Նաթանայելին բերեց Հիսուսի մոտ: Չշվոթել Գործք Առաքելոց գրքի Փիլիպպոս ավետարանչի հետ:

Բարդողիմեոսը: Համընդհանուր կարծիք է, որ սա Նաթանայելի երկրորդ անունն է: Բարդողիմեոսը հիշվում է միայն Տասներկուսի անվանացանկում:

Մատթեոսը մաքսավոր էր, նաև Ղևի էին անվանում: Նա գրեց առաջին Ավետարանը:

Թովմասը նաև Երկվորյակ էր կոչվում: Նա ասաց, որ չի հավատա Հիսուսի հարությանը, մինչև չտեսնի համոզիչ ապացույցներ:

Հակոբոսը՝ Ալփեսուսի որդին: Հավանաբար նա էր, ով պատասխանատու դիրք զբաղեցրեց Երուսաղեմի եկեղեցում, երբ Չեբեդիոսի որդի Հակոբոսը սպանվեց Հերովդեսի կողմից:

Միմոնը, որ նախանձահույզ էր կոչվում: Մուրք Գրքում գրվածներից նրա մասին քիչ բան է հայտնի:

Հուդան՝ Հակոբոսի եղբայրը: Հնարավոր է, որ նա Հուդա թղթի հեղինակն է, և ընդհանուր առմամբ ճանաչվում է, որ նա Թադեոս կոչվող Ղեբեոսն էր (Մատթ. 10:3, Մարկ. 3:18):

Հուդա Իսկարիովտացին: Ենթադրվում է, որ նա Հուդայի Կարիովտից էր, հետև-

վաբար միակ առաքյալն էր, որ Գալիլիայից չէր: Նա մեր Տիրոջ մատնիչն էր և Հիսուսի կողմից կոչվեց «կորստյան որդի»:

Աշակերտները մեծ ինտելեկտի կամ ընդունակությունների տեր մարդիկ չէին: Նրանք մարդկության տիպիկ ներկայացուցիչներն էին: Նրանց մեծ դարձրեց Տեր Հիսուսի հետ փոխհարաբերությունն ու Նրան նվիրվելը: Երբ Փրկիչը նրանց ընտրեց, նրանք հավանաբար քսան տարեկանի մոտ երիտասարդներ էին: Երիտասարդությունն այն ժամանակն է, երբ մարդիկ ավելի նախանձավոր են, ուսման հանդեպ ընկալունակ, կարող են դժվարությունները կրել: Հիսուսն ընտրեց միայն տասներկու աշակերտ: Նրան ավելի շատ հետաքրքրում էր որակը, քան քանակը: Ծիշտ ընտրության շնորհիվ Նա կարող էր նրանց ուղարկել՝ ամբողջ աշխարհին ավետարանելու:

Աշակերտներին ընտրելուց հետո հաջորդ կարևոր քայլը Աստծո Արքայության սկզբունքների մանրակրկիտ ուսուցումն էր: Այս գլխի մնացած մասը նվիրված է այնպիսի բնավորության և վարքագծի ընդհանրացված շարադրանքին, որոնք պետք է բնորոշեն Տեր Հիսուս Բրիստոսի աշակերտներին:

6:17-19. Հետևյալ շարադրանքը մի քիչ տարբերվում է Լեռան քարոզից (Մատթ. 5-7): Այն լեռան վրա հնչեց, իսկ սա՝ **տափարակ տեղում:** Այնտեղ միայն երանիներ էին, վայեր չկային, իսկ այստեղ՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը: Նաև այլ տարբերություններ կան՝ խոսքերի, ծավալի և ուղղվածության:¹⁴

Ուշադրություն դարձրեք. խիստ աշակերտության մասին այս քարոզն ասվել է ժողովրդի մեծ **բազմության**, ինչպես նաև Տասներկուսի համար: Թվում է, թե որտեղ էլ որ Հիսուսին մարդկանց մեծ բազմություն էր հետևում, Նա ստուգում էր նրանց անկեղծությունը՝ դիմելով մեծ անմիջակա-նությանը: Ինչ-որ մեկն ասել է. «Բրիստոսը սկզբում Իրենով հրապուրում է, իսկ հետո՝ մաղում»:

Ժողովուրդը հավաքվել էր **Հրեաստանից, Երուսաղեմից,** այսինքն՝ հարավային

կողմից, **Տյուրոսի և Միդոնի** վայրերից, այսինքն՝ հյուսիս-արևմուտքից: Եկել էին ինչպես հեթանոսներ, այնպես էլ հրեաներ: Հիվանդներն ու դիվահարներն ավելի էին մոտենում, որպեսզի հավեն Տեր Հիսուսին: Նրանք գիտեին, որ **Նրանից զորություն էր ելնում** և բժշկում բոլորին:

Կարևոր է հասկանալ, թե արմատապես որքան նոր էր Փրկչի ուսմունքը: Հիշե՛ք, Նա դեպի խաչն էր գնում: Նա պետք է մեռներ, թաղվեր, երրորդ օրը հարություն առներ և երկինք վերադառնար: Ծնորիով փրկության Բարի Լուրը պետք է տարածվեր աշխարհով մեկ: Մարդկանց փրկագնվելը կախված էր Բարի Լուրը լսելուց: Ինչպե՞ս կարող էր աշխարհը ավետարանվել: Աշխարհի հզորները կարող էին մեծ բանակներ կազմել, անսահմանափակ ֆինանսներ ներդնել, առատ ուտելիք տրամադրել, մարդկանց տրամադրությունը բարձրացնող զվարճանքներ կազմակերպել, հասարակական լավ հարաբերություններ ստեղծել:

Է. Երանիներ և վայեր (6:20-26)

6:20. Հիսուսը տասներկու աշակերտներ ընտրեց և նրանց ուղարկեց աղքատության, քաղցի և հալածանքի մեջ: Հնարավոր է աշխարհին ավետարանել այս ձևով: Այո՛, այսպես և ոչ ուրիշ կերպ:

Փրկիչն սկսեց չորս երանիներով և չորս վայերով:

«Երանի՛ աղքատներիդ...»: Ոչ թե պարզապես աղքատներն են երանելի, այլ *դուք՝* աղքատներդ: Ինքն իրենով աղքատությունն օրհնություն չէ, ավելի հաճախ այն դժբախտություն է: Այստեղ Հիսուսը խոսում է հանուն Իրեն մեզ վրա աղքատություն վերցնելու մասին: Նա չի խոսում այնպիսի մարդկանց մասին, ովքեր աղքատ են ծուլության, ողբերգության կամ իրենցից անկախ պատճառների հետևանքով: Բայց Նա մատնանշում է նրանց, ովքեր դիտավորյալ ընտրում են աղքատությունը, որպեսզի ուրիշ մարդկանց վկայեն իրենց Փրկչի մասին: Եվ երբ խորությամբ մտածեք սրա մասին, ապա կհամոզվեք, որ սա

է միակ իմաստալից մոտեցումը: Պատկերացրե՛ք, որ աշակերտները որպես հարուստներ ուղարկվեին: Մարդիկ ամբոխներով կշրջապատեին Քրիստոսի դրոշը՝ հարստանալու հույսով: Բայց իրականում աշակերտները չէին կարող նրանց արժաթ և ոսկի խոստանալ: Մարդիկ պետք է գալին միայն հոգևոր օրհնություններ փնտրելու համար: Բացի դրանից, եթե աշակերտները հարուստներ լինեին, ապա նրանք կկորցնեին Տիրոջից մշտական կախման մեջ լինելու օրհնությունն ու Նրան հավատարիմ լինելու ապացույցը: Աստուծո Թագավորությունը պատկանում է մարդկանց, ովքեր գոհ են իրենց ընթացիկ կարիքների բավարարվածությունից: Այնպես որ, ինչ էլ որ դրանից ավել է, կարող են տալ Տիրոջ գործի համար:

6:21. «Երանի՛ ձեզ, որ հիմա քաղցած եք»: Եվ նորից այստեղ նկատի չունի կերակրի անբավարարությունից տառապող մարդկանց ամբոխին: Խոսքը Հիսուս Քրիստոսի աշակերտների մասին է, ովքեր կամավոր ընտրում են անձնուրաց կյանքը, որպեսզի թեթևացնեն մարդկանց ինչպես հոգևոր, այնպես էլ ֆիզիկական կարիքները: Դրանք մարդիկ են, ովքեր նախընտրում են սնվել պարզ և ոչ թանկ ուտելիքով, միայն թե իրենց հաճույքներով գայթակղության պատճառ չլինեն, որ մարդիկ չզրկվեն Ավետարանից: Յուրաքանչյուր այսպիսի անձնուրացություն պետք է վարձատրվի գալիք օրը:

«Երանի՛ ձեզ, որ հիմա լալիս եք»: Ինքը իրենով վիշտը օրհնություն չէ: Հավիտենական բարիքը պայմանավորված չէ չփրկված մարդկանց հառաչանքներով: Այստեղ Հիսուսը խոսում է արցունքների մասին, որոնք հանուն Իրեն են թափվում. կործանվողների և մոլորյալ մարդկության համար թափվող արցունքներ, արցունքներ, որոնք թափվում են Եկեղեցու բաժանված ու տկարացած վիճակի համար: Բոլոր տրտմություններին կարելի է տոկալ Տեր Հիսուս Քրիստոսին ծառայելու ընթացքում: Նրանք, ովքեր արցունքներով են ցանում, ուրախությամբ կհնձեն:

6:22. «Երանի ձեզ, երբ մարդիկ ձեզ առնեն և հեռացնեն իրենց ընկերությունից, նախատեն ու վատաբանեն»: Այս օրհնությունները նրանց համար չեն, ովքեր տառապում են իրենց սեփական մեղքերի ու հիմարության համար: Այն պատկանում է նրանց, ովքեր մերժված են, հեռացված են, նախատված ու զրպարտված են *Քրիստոսին նվիրված լինելու* պատճառով:

Այս չորս երանիները հասկանալու բանալին գտնվում է **«Մարդու Որդու համար»** խոսքերում: Այն, ինչը ինքն իրենից անեծք էր ներկայացնում, դառնում է օրհնություն, երբ հոժարությամբ այն կրում ենք հանուն Նրա: Բայց խթանող շարժառիթը պետք է լինի Քրիստոսի հանդեպ սերը, հակառակ դեպքում՝ ամենահերոսական զոհաբերություններն իսկ անիմաստ են:

6:23. Քրիստոսի համար հայածվելն ուրախանալու առիթ է: Առաջին՝ **որովհետև ձեր վարձը շատ է երկնքում:** Երկրորդ՝ այն չարչարվողին միացնում է Նրան անցյալ դարերի հավատարիմ վկաների հետ:

Չորս երանիները նկարագրում են Աստծո Արքայության մեջ գտնվող իդեալական մարդուն՝ չափավոր, տոկուն, զոհաբերվող ու առանց ավելորդությունների:

6:24. Բայց մյուս կողմից՝ չորս վայերը մատնանշում են նրանց, ովքեր ամենաքիչ հարգվածներն են Քրիստոսի նոր ընկերության մեջ: Որքան էլ ահավոր լինի, նրանք այն մարդիկ են, ովքեր այսօրվա աշխարհում մեծ են համարվում: **«Վա՛յ ձեզ՝ հարուստներիդ»:** Բարոյական լուրջ դժվարություն կա այս աշխարհում հարստություն ձեռք բերելու հետ կապված, որտեղ հազարավորներ ամեն օր մեռնում են սովից, և որտեղ ամեն մի երկրորդ անձնավորություն զրկված է Քրիստոսին հավատալով փրկություն ստանալու մասին Բարի լուրը լսելու հնարավորությունից: Քրիստոնյաները, որոնք փորձության մեջ են ընկնում այս աշխարհում՝ հարստություն դիզելով «նեղ օրվա» համար ինչ-որ բան խնայելու միտումով, պետք է խորաքնին մտորեն Հիսուս Քրիստոսի այս խոսքերի շուրջ: Այսպես անել նշանակում է սխալ

աշխարհի համար ապրել: Ի միջի այլոց, հարուստների մասին այս վայը շատ համոզիչ կերպով ապացուցում է, որ երբ Տերն ասաց. «Երանի աղքատներիդ» (հ. 20), Նա նկատի չունեի հոգով աղքատներին: Հակառակ դեպքում 24-րդ համարը պետք է նշանակեր. «Վա՛յ ձեզ՝ հոգով հարուստներիդ». իսկ այսպիսի նշանակությունն անհավանական է: Նա, ով հարստություն ունի և դա չի օգտագործում ուրիշներին հավիտենալես հարստացնելու համար, արդեն **ստացել է իր միակ**, երբևէ ստանալիք վարձատրությունը՝ իր եսասիրական ցանկությունների ներկա պահի բավարարությունը:

6:25. **«Վա՛յ ձեզ, որ կուշտ եք»:** Սա այն հավատացյալներն են, ովքեր թանկ ռեսուրսաններում են ճաշում, սնվում են բացառապես առողջ կերակուրներով, ովքեր մթերային խանութներում գնումների ժամանակ իրենց անձերից ոչ մի բան չեն խնայում: Նրանց նշանաբանն է. «Աստծո ժողովրդի համար անմատչելի բաներ չկան»: Տերն ասում է, որ նրանք պետք է **քաղցեն** գալիք օրը, երբ վարձատրություն կտրվի հավատարիմ, զոհաբերված աշակերտության համար:

«Վա՛յ ձեզ, որ ծիծաղում եք հիմա»: Այս վայը ուղղված է ընդդեմ նրանց, ովքեր ապրում են վայելքների, հաճույքների և խրախճանքների անդադար շրջապատյուտի մեջ: Նրանք իրենց այնպես են պահում, կարծես թե կյանքը ստեղծված է ուրախ և թեթև ժամանցի համար, և այք են փակում Հիսուս Քրիստոսին չունեցող մարդկանց հուսահատ վիճակի վրա: Նրանք, ովքեր **ծիծաղում են հիմա, պիտի սգան ու լան**, երբ ետ նայեն ու տեսնեն կորցրած հնարավորությունները, անձնական հաճույքներով սայթաքելը և սեփական հոգևոր աղքատությունը:

6:26. **«Վա՛յ ձեզ, երբ բոլոր¹⁵ մարդիկ լավ խոսեն ձեր մասին»:** Ինչո՞ւ: Որովհետև դա այն բանի հավաստի նշանն է, որ դուք կյանքը չեք ապրում կամ հավատարմորեն չեք հոչակում Խոսքը: Իր բնությունով ավետարանական լուրն ուղղված է անաստված մարդկանց դեմ: Նա, ով ընդունում

է այս աշխարհի ծափահարությունները, ՀԿ-ի **սուտ մարգարեների** ուղեկիցն է, ովքեր մարդկանց ականջներն ուրախացնում էին՝ ասելով այն, ինչ նրանք ուզում էին լսել: Նրանք ավելի շատ ձգտում էին մարդկանցից պատիվ ստանալ, քան Աստծուն փառավորել:

Ը. Մարդու Որդու գաղտնի զենքը՝ սերը (6:27-38)

6:27-29ա. Այստեղ Տեր Հիսուսն Իր աշակերտների համար բացում է Աստծո զինանոցի Իր գաղտնի զենքը՝ **սերը**: Դա աշխարհին ավետարանելու ամենաարդյունավետ զենքերից մեկն է: Սակայն երբ Նա խոսում է **սիրո** մասին, նկատի չունի նույն անունը կրող մարդկային զգացումը: Սա *գերբնական* սերն է: Միայն վերստին ծընվածները կարող են այդպիսի սերը ճանաչել ու դրսևորել: Այն բացարձակորեն անհասանելի է այն մարդուն, ում մեջ Սուրբ Հոգին չի բնակվում: Մարդասպանը կարող է սեփական երեխաներին սիրել, բայց դա այն սերը չէ, որ Հիսուսն է քարոզում: Այդ սերը պարզապես մարդկային կապվածություն է, իսկ սա աստվածային սեր է: Առաջինը կախված է միայն ֆիզիկական կյանքից, երկրորդը՝ աստվածային: Առաջինը հիմնականում զգացումների հետ է կապված, երկրորդը, ըստ էության, կամքի հարց է: Ամեն մարդ կարող է սիրել բարեկամներին, սակայն գերբնական գորություն է պետք մեր թշնամիներին սիրելու համար: Եվ հենց դա է Նոր Կտակարանի սերը (հունարեն՝ «*agape*»): **Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, բարի՛ք արեք ձեզ ատողներին: Օրհնեցե՛ք ձեզ անիծողներին և աղոթե՛ք նրանց համար, ովքեր ձեզ նեղություն են տալիս, ինչպես նաև՝ քո երեսին** ասպտակողին մյուս կողմն էլ դարձրու:

Ֆ. Բ. Մեյերը բացատրում է.

«Սերն իր խորիմաստության մեջ. դա քրիստոնեության առավելությունն է: Թըշնամիների նկատմամբ ունենալ այն նույն վերաբերմունքը, ինչ ուրիշ մարդիկ ունենում են բարեկամների հանդեպ, անձրեփի ու արևի լույսի պես տալ անբարիշտ-

ներին այնպես, ինչպես արդարներին, ծառայել նրանց, ովքեր վանում են ու բարյացկամ չեն քո հանդեպ, ինչպես այլ մարդիկ ծառայում են գրավիչ ու հմայիչ մարդկանց, չփոխվել՝ **տրամադրությամբ պայմանավորված, քմահաճությամբ ցանկությամբ, համբերությամբ տառապել, չար բան չմտածել, ճշմարտությանը խնդակից լինել, ամեն բանի հավատալ, միշտ հուսալ, երբեք չդադարել.** սա է սերը, իսկ այսպիսի սերը Սուրբ Հոգու ներկայության արդյունքն է: Մենք ինքներս չենք կարող այն ձեռք բերել»:¹⁶

Այսպիսի սերն անպարտելի է: Աշխարհը կարող է հաղթել այն մարդուն, ով պատասխան հարված է տալիս: Նա սովոր է ջունգլիների օրենքով կռիվներին ու հակահարվածի սկզբունքներին: Սակայն չգիտի՝ ինչպես վարվել մարդու հետ, ով բոլոր անարդարություններին բարությանը է պատասխանում: Այսպիսի վարքագիծն այս աշխարհից չէ: Նա ամբողջովին շփոթվում է այդպիսի վարքագծից:

6:29բ-31. Ի պատասխան վրայից հանված վերարկուի՝ սերը նաև շապիկն է տալիս: Նա երբեք երես չի թեքում իրական կարիքից: Երբ անարդարացի խլում են նրա ունեցվածքը, նա չի խնդրում վերադարձնել: Սիրո ոսկե կանոնը սա է. ուրիշների հետ վարվել այնպիսի բարությանը և ուշադրությամբ, ինչպիսի բարությանը և ուշադրությամբ կցանկանաս վարվեն քեզ հետ:

6:32-34. Դարձի չեկած մարդիկ **սիրում են** միայն նրանց, ովքեր **սիրում են** իրենց: Սա բնական վարվելաձև է և այնքան լայն ընդունելության արժանի, որ ներգործություն չունի չփրկված մարդկանց աշխարհի վրա: Բանկերն ու ընկերությունները *սպարքով* գումար են տալիս այն հույսով, որ տոկոսներով տո կստանան: Դրա համար աստվածային սեր չի պահանջվում:

6:35. Դրա համար էլ Հիսուսը կրկնեց, որ մենք պետք է **սիրենք** մեր **թշնամիներին, և բարիք անենք ու փոխ տանք՝ ոչինչ չակնկալելով**: Սա հաստատ քրիստոնեա-

կան վարքագիծ է, և այն հատուկ է նրանց, ովքեր **Բարձրյալի Որդիներ** են: Իհարկե, մարդիկ Բարձրյալի Որդիներ այս ձևով չեն *դասնում*. դա կարող է միայն տեղի ունենալ Հիսուս Քրիստոսին՝ որպես Տեր ու Փրկիչ ընդունելու միջոցով (Հովհ. 1:12): Բայց հենց այս ձևով ճշմարիտ հավատացյալները *հաստատում են*, որ իրենք Աստծո գավակներն են: Աստված մեզ հետ այնպես է վարվում, ինչպես նկարագրված է 27-35-րդ համարներում: **Նա բարի է ապերախտների և չարերի հանդեպ:** Երբ մենք էլ ենք այդպես վարվում, ընտանեկան նմանություն ենք դրսևորում: Ցույց ենք տալիս, որ Աստծուց ենք ծնվել:

6:36. Ողորմած լինել նշանակում է ներել նույնիսկ այն ժամանակ, երբ ի գորու եք վրեժ առնելու: **Հայրն** Իր ողորմությունը հայտնեց դրանով, որ մեզ չտվեց մեր արժանի պատիժը: Նա ուզում է, որ մենք էլ ողորմություն դրսևորենք ուրիշների հանդեպ:

6:37. Երկու բան կա, որ սերը չի անում. չի **դատում** և չի **դատապարտում**: Հիսուսն ասաց. **«Մի՛ դատեք և չեք դատվի»:** Նախ՝ մենք չպետք է դատենք մարդկանց շարժառիթները: Մենք չենք կարող կարդալ նրանց սրտինը, հետևաբար չենք կարող իմանալ, թե ինչու են այդպես վարվում: Չպետք է դատապարտենք նաև մեկ այլ քրիստոնյայի աշխատելու կամ ծառայության սկզբունքները (1 Կոր. 4:1-5). միայն Աստված է այս բոլորի Դատավորը: Եվ ընդհանրապես, մենք չպետք է դատապարտենք: Քննադատության հոգին, հանցանք փրկությունը խախտում են սիրո օրենքը:

Ամեն դեպքում որոշակի բնագավառներ կան, որտեղ քրիստոնյաներին դատելու *իրավունք է տրված*: Հաճախ մենք ստիպված ենք որոշել՝ արդյոք անձը ճշմարիտ քրիստոնյա է, թե ոչ, հակառակ դեպքում երբեք չենք հասկանա «այլախառը լծակցությունը» (2 Կոր. 6:14): Մեղքը պետք է դատապարտվի և՛ ընտանիքում, և՛ եկեղեցում: Այլ խոսքով, մենք պետք է դատենք, թե ինչն է բարի, ինչն է չար՝ առանց շարժառիթները

պատժելու կամ մարդու բնույթը կործանելու:

«Ներեցե՛ք ու պիտի ներվի ձեզ»: Այստեղ մեր ներվելը կախման մեջ է դրված մեր ներելու ցանկությունից: Սակայն Սուրբ Գրքի ուրիշ հատվածներ մեզ պարզ սովորեցնում են, որ Քրիստոսին հավատով ընդունելով՝ մենք ներվում ենք ամբողջությամբ և առանց պայմանների: Ինչպե՞ս ընդունել այս թվացյալ հակասությունը: Բացատրությունը հետևյալն է. մենք խոսում ենք երկու տարբեր ներումների մասին՝ *իրավաբանական* և *հայրական*: *Իրավաբանական ներումը* տալիս է Դատավոր-Աստված յուրաքանչյուրին, ով հավատում է Տեր Հիսուս Քրիստոսին: Դա նշանակում է, որ մեղքերի համար սահմանված պատիժը Քրիստոսը կրեց, և Նրան հավատացող մեղավորն ազատ է այդ պատժից: Այսպիսի ներումն անպայմանական է:

Հայրական ներումը տրվում է Հայր Աստծուց Իր անառակ որդուն, երբ նա խոստովանում է սեփական մեղքերն ու հրաժարվում դրանցից: Արդյունքում տեղի է ունենում Աստծո ընտանիքի հետ հաղորդակցության վերականգնում, և այն ոչ մի բանով կապված չէ մեղքի պատժի հետ: Որպես Հայր՝ Աստված չի կարող մեզ ներել, եթե մենք չենք ուզում միմյանց ներել: Նա չի կարող այդպես վարվել, ո՛չ էլ հաղորդակցություն ունենալ այդպես վարվողների հետ: Եվ հենց այդ հայրական ներումն է մատնանշում Հիսուսը **«ու պիտի ներվի ձեզ»** խոսքերում:

6:38. Մերը դրսևորվում է տալով (տե՛ս Հովհ. 3:16, Եփ. 5:25): Քրիստոնեական ծառայությունը տալու ծառայություն է: Նա, ով **առատությամբ** տալիս է, առատորեն էլ կվարձատրվի: Այստեղ մի մարդու օրինակ է բերված, ում հագուստի առաջնամասում հաստ գոգնոցի պես մեծ փեշ կա: Նա այն օգտագործում է ցանելու ցորեն կրելու համար: Ինչքան հեռու գցի ցորենը, այնքան շատ կլինի բերքը: Նա կվարձատրվի **մեծ չափով, թխմված, թափ տըրված**, այնքան, որ **հորդելով կլցնեն**: Նա

վարձատրությունը կրնդունի գոգով, այսինքն՝ իր հագուստի փեշով: Մա կյանքի հաստատուն սկզբունքն է. մենք հնձում ենք մեր ցանածին համապատասխան, մեր գործողություններն արձագանքելու են մեզ, որովհետև **ինչ չափով որ չափեք, նույն չափով կչափվի ձեզ:** Եթե մենք ցանենք նյութականը, ապա կհնձենք հոգևոր անգին գանձը: Նույնպես ճշմարիտ է և այն, որ ինչ պահում ենք մեզ համար, կորցնում ենք, իսկ ինչ տալիս ենք, ունենում ենք:

Թ. Կույր կեղծավորի մասին առակը (6:39-45)

6:39. Նախորդ համարներում Տեր Հիսուս Քրիստոսն այն մասին սովորեցրեց, որ աշակերտները պետք է իրագործեն տալու ծառայությունը: Այժմ Նա զգուշացնում է, որ ուրիշների համար օրհնություն դառնալու նրանց սահմանը պայմանավորված է իրենց սեփական հոգևոր վիճակով: Կարո՞ղ է **կույրը կույրին առաջնորդել, չէ՞ որ երկուսն էլ փոսը կընկնեն:** Մենք չենք կարող տալ այն, ինչը չունենք: Եթե մեր աչքերը փակ են Աստծո Խոսքի որոշ ճշմարտությունների նկատմամբ, ապա մենք ոչ մեկին չենք կարող օգնել այդ բնագավառում: Եթե մեր հոգևոր կյանքում կույր կետեր կան, ապա դրանք հավանաբար կլինեն նաև նրանց կյանքում, ում մենք սովորեցնում ենք:

6:40. Աշակերտն ավելին չէ իր վարդապետից, բայց կատարյալը նա է, ով իր վարդապետին կնմանվի: Մարդը չի կարող սովորեցնել այն, ինչ ինքը չգիտի: Նա չի կարող իր աշակերտներին հասցնել ավելի բարձր մակարդակի, քան այն, որին հասել է ինքը: Որքան շատ է նա նրանց սովորեցնում, այնքան նրանք շատ են նմանվում իրեն: Միանգամայն նրա սեփական աճի փուլը ձևավորում է այն վերևի սահմանը, մինչև ուր կարող է նրանց հասցնել: Աշակերտը **կատարելության** է հասնում, երբ նմանվում է ուսուցչին, ում մոտ սովորում է: Ուսուցչի վարդապետության կամ կյանքի մեջ եղած թերություններն անցնում են աշակերտներին, և ուսման ավարտին չի

կարելի աշակերտներից սպասել, որ նրանք իրենց ուսուցչից ավելի բարձր լինեն:

6:41-42. Այս կարևոր ճշմարտությունն ավելի գունեղ ցուցադրված է **շյուղի և գերանի** օրինակով: Մի անգամ մի մարդ անցնում էր այնտեղով, որտեղ ցորեն են ծեծում: Հանկարծակի ուժեղ քամուց քրշված **դարմանի** մի աննշան կտոր հայտնվեց նրա աչքում: Նա տրորեց աչքը դրանից ազատվելու համար, սակայն ինչքան շատ տրորեց, այնքան շատ խորացավ, այնքան շատ աչքը գրգռվեց: Այդ ժամանակ կողքով մի ուրիշ մարդ էր անցնում: Նա տեսավ առաջինի դժվար վիճակը և օգնություն առաջարկեց: Սակայն այդ մարդու աչքի մեջ **գերան** կար: Նա հագիվ թե կարողանար օգնել, որովհետև ի վիճակի չէր տեսնելու, թե ինչ է անում: Ակնհայտ դասն այն է, որ ուսուցիչը չի կարող իր աշակերտների հետ խոսել նրանց թերությունների մասին, եթե իր կյանքում կան նույն թերությունները և նույնիսկ ավելի մեծ ձեվաչափով, որոնք ինքը չի տեսնում: Եթե ուզում ենք ուրիշներին օգնել, ապա մեր կյանքն էլ պետք է օրինակ լինի: Հակառակ դեպքում մարդիկ մեզ կասեն. «Բժիշկ, քե՛զ բուժիր»:

6:43-45. Չորրորդ օրինակը, որ Տերը բերում է, **ծառը և պտուղն** է: Ծառը **բարի** կամ **չար** պտուղ է բերում՝ կախված նրանից, թե ինչ է այն իրենից ներկայացնում: Ծառի մասին մենք դատում ենք՝ ելնելով իր տված պտղի տեսակից ու որակից: Նույնն է աշակերտության պարագայում: Բարոյապես մաքուր և հոգևորապես առողջ մարդը կարող է օրհնություն տալ ուրիշներին **իր սրտի բարի գանձից:** Մյուս կողմից, մարդը, ում ներաշխարհն անմաքուր է, **իր սրտի չար գանձից չարություն է բխեցնում:**

Ուրեմն 39-45-րդ համարներում Տերն աշակերտներին բացատրում է, որ նրանց ծառայությունը պետք է լինի բնույթի ծառայություն: Ավելի կարևոր է, թե ինչպիսի անձնավորություն են իրենք, քան թե ինչ են ասել կամ արել: Թե ովքեր են իրենք, ի

վերջո կորոշի նրանց ծառայության վերջնական արդյունքը:

Ժ. Տերը հնազանդություն է պահանջում (6:46-49)

6:46. «Եվ ինչո՞ւ եք Ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում ու չեք կատարում Իմ ասածները»: «Տե՛ր» բառը նշանակում է *տիրակալ*: Այն նկատի ունի, որ Տերը մեր կյանքի վրա լիիրավ իշխանություն ունի, որ մենք պատկանում ենք Նրան և պարտավոր ենք կատարել այն ամենը, ինչ Նա ասում է: Նրան **Տե՛ր** կոչել, իսկ հետո չհնազանդվել Նրան, բացարձակ հակասություն է: Բավարար չէ պարզապես հայտարարել Նրա տերությունն ընդունելու մասին: Ճշմարիտ սերն ու հավատն իրենց մեջ հնազանդություն են ընդգրկում: Մենք Նրան իսկապես չենք սիրում և իսկապես չենք հավատում, եթե չենք անում այն, ինչ Ինքն է ասում:

Դու Ինձ «Ճանապարհ» ես անվանում և Ինձ չես հետևում:

Դու Ինձ «Կյանք» ես անվանում և Ինձնով չես ապրում:

Դու Ինձ «Ղեկավար» ես անվանում և Ինձ չես հնազանդվում:

Եթե Ես քեզ դատապարտեմ, Ինձ չմեղադրես:

Դու Ինձ «Հաց» ես անվանում և Ինձ չես ճաշակում:

Դու Ինձ «Տե՛ր» ես անվանում և Ինձ չես ծառայում:

Եթե Ես քեզ դատապարտեմ, Ինձ չմեղադրես:

Ջեֆրի Օ' Հարս

6:47-49. Ցանկանալով ավելի ամրապնդել այս կարևոր ճշմարտությունը՝ Տերը պատմում է երկու շինարարների մասին: Սովորաբար այս պատմությունը վերագրում ենք Բարի լուրին: Ասում ենք. «Իմաստուն մարդը նա է, ով հավատացել ու փրկվել է, հիմար մարդը նա է, ով մերժում է Քրիստոսին ու կորչում է»: Սա, իհարկե, արժեքավոր *կիրառություն* է: Բայց եթե այս պատմությունը մեկնաբանենք իր համատեքստում, կգտնենք, որ ավելի խոր իմաստ կա այնտեղ:

Իմաստուն մարդը նա է, ով **գալիս է Քրիստոսին** (փրկություն), **լսում է Տիրոջ խոսքը** (հրահանգներ) և **կատարում է** դրանք (հնազանդություն): Դա այն մարդն է, ով իր կյանքը կառուցում է քրիստոնեական աշակերտության այն սկզբունքների վրա, որոնք շարադրված են այս գլխում: Սա կյանքը կառուցելու լավագույն ճանապարհն է: Երբ տունը փորձվում է ջրհեղեղների ուժգնությունից և ջրերի հոսանքներից, այն ամուր կանգնած է մնում, որովհետև **ժայռի՝ Քրիստոսի և Նրա ուսմունքի վրա էր հաստատված**:¹⁷

Հիմար մարդը լսող է (հրահանգներ), բայց ուսմունքին չհնազանդվող (անհնազանդություն): Նա իր կյանքը կառուցում է այն բանի վրա, ինչ իրեն ամենալավն է թվում՝ հետևելով այս աշխարհի մարմնավոր սկզբունքներին: Երբ կյանքի փոթորիկները մոլեգնում են, նրա **առանց հիմքի տունը** քշվում է հոսանքներից: Գուցե նրա հոգին փրկվել է, բայց նա կորցնում է իր կյանքը:

Իմաստուն մարդը նա է, ով «աղքատ է, քաղցած է, սգում է և հալածվում», և այս բոլորը հանուն Մարդու Որդու: Աշխարհն այսպիսի մարդուն կոչում է անխելք: Հիսուսը նրան կոչում է իմաստուն:

Ամմիտ մարդը նա է, ով հարուստ է, ճոխ խնջույքներ է անում, զվարճանքի մեջ է ապրում ու ընդունված է մարդկանց կողմից: Աշխարհը նրան անվանում է իմաստուն մարդ: Հիսուսը նրան կոչում է անմիտ:

VI. ՄԱՐԳՈՒ ՈՐԳԻՆ ԸՆԴԱՐՉՍԿՆԻՄ Ե ԻՐ ԾԱՌԱՅՅՈՒԹՅՈՒՆԸ (7:1-9:50)

Ա. Հարյուրապետի ծառայի բժշկությունը (7:1-10)

7:1-3. Ավարտելով Իր խոսքը՝ Հիսուսը թողեց ժողովրդին ու **մտավ Կափառնայում**: Այնտեղ Նրան **հրեաների երեցներն** էին փնտրում, որոնք եկել էին խնդրելու, որ Նա օգնի հեթանոս **հարյուրապետի ծառային**: Հավանաբար, այդ հարյուրապետը

յուրահատուկ ձևով էր ողորմած գտնվել հրեա ժողովրդի նկատմամբ, նույնիսկ ժողովարան էր կառուցել նրա համար: ՆԿ-ի մյուս բոլոր հարյուրապետների նման նա դրականորեն է ներկայացված (Ղուկ. 23:47, Գործք 10:1-48):

Հազվադեպ է, որ տերը այսքան բարյացակամ լինի իր ծառայի հանդեպ, ինչպես այս հարյուրապետը: Երբ **ծառան հիվանդ** էր, հարյուրապետը **հրեաների երեցներին** խնդրեց Հիսուսին աղերսել, որպեսզի Նա բժշկի իրեն: Որքանով մեզ հայտնի է, հռոմեացի այս սպան միակ մարդն էր, որ Հիսուսից օրհնություն էր փնտրում **ծառայի** համար:

7:4-7. Ժողովրդի երեցները հայտնվեցին տարօրինակ իրավիճակում: Նրանք Հիսուսին չէին հավատում, սակայն հարյուրապետի հետ բարեկամությունը պահելու կարիքը նրանց ստիպեց Հիսուսի մոտ գնալ: Հարյուրապետի համար նրանք ասացին, որ **նա արժանի է**: Բայց երբ հարյուրապետը հանդիպեց Հիսուսին, ասաց. «**Ես արժանի չեմ**», ինչը նշանակում էր. «Ես այդքան էլ կարևոր չեմ»:

Ըստ Մատթեոսի Ավետարանի՝ հարյուրապետն անմիջապես գնաց Հիսուսի մոտ: Այստեղ՝ Ղուկասի մոտ, նա ուղարկեց երեցներին: Սրանում հակասություն չկա: Սկզբում նա ուղարկեց երեցներին, իսկ հետո ինքը գնաց Հիսուսի մոտ:

Հարյուրապետի խոնարհությունն ու հավատը զարմանք են առաջացնում: Նա իրեն արժանի **չհամարեց**, որ **Հիսուսին իր հարկի տակ ընդուներ**: Նա նաև իրեն արժանի չհամարեց Հիսուսի մոտ անձամբ **գալու**: Սակայն բավական հավատ ուներ, որպեսզի ընդուներ, որ Հիսուսը կարող է բժշկել՝ առանց անձնապես ներկա գտնվելու: Նրա մի **խոսքը** կչքացնի հիվանդությունը:

7:8. Այնուհետև հարյուրապետը բացատրում է, որ պատկերացում ունի **իշխանության** ու պատասխանատվության մասին. այդ բնագավառում նա զգալի փորձ ունի: Ինքն էլ հռոմեական կառավարության իշխանության տակ գտնվող մարդ է և պատասխանատու է նրա հրամանների կա-

տարման համար: Բացի դրանից՝ հենց ինքը **ենթակա զինվորներ** ունի, որոնք անմիջապես հնազանդվում են իր հրամաններին: Նա գիտակցեց, որ Հիսուսն էլ իշխանություն ունի հիվանդությունների վրա, ինչպես հռոմեական կառավարությունն իշխանություն ունի իր վրա, և Նա էլ ունի ենթականեր:

7:9-10. Պատահական չէր, որ **Հիսուսը զարմացավ** տեսնելով այս հեթանոս հարյուրապետի հավատը: **Իսրայելում** ոչ ոք այդպիսի նախանձախնդրությամբ չդավանեց Հիսուսի բացարձակ իշխանությունը: **Այսպիսի մեծ հավատը** երբեք առանց վարձատրության չի մնում: Երբ պատգամավորները վերադարձան հարյուրապետի **տուն, ծառային բժշկված** գտան:

Սա Ավետարանում այն երկու դեպքերից մեկն է, երբ կարդում ենք, որ Տեր Հիսուսը **զարմացավ**: Նա զարմացավ տեսնելով այս հեթանոս հարյուրապետի հավատը, և Նա զարմացավ տեսնելով Իսրայելի անհավատությունը (Մարկ. 6:6):

Բ. Այրի կնոջ որդու հարությունը (7:11-17)

7:11-15. **Նայինը**՝ Կափառնայումից հարավ-արևմուտք գտնվող մի ավան էր: Երբ Հիսուսը մոտեցավ դրան, **քաղաքից** դուրս եկող թաղման թափոր տեսավ: **Որբևայրի մոր մեկ հատիկ որդուն** էին թաղում: Տերը **գրաց** հույսից զրկված մորը: Հավելով պատգարակին, որի վրա դրված էր դին՝ հավանաբար թափորը կանգնեցնելու համար, Հիսուսը պատվիրեց **պատանուն վեր կենալ**: Ճիշտ այդ պահին կյանքը վերադարձավ մարմնի մեջ, և երիտասարդը **նըստեց**: Այսպիսով, Նա՝ Տերը և մահի, ինչպես նաև հիվանդության վրա իշխանություն ունեցողը, երիտասարդին վերադարձրեց իր **մորը**:

7:16-17. Բոլոր ներկաներին պատեց **վախը**: Մարդիկ դարձան անիրականալի հրաշքի վկաներ: Մեռածը վերադարձավ կյանքի: Նրանք հավատացին, որ Տեր Հիսուսը Աստուծուց ուղարկված **Մի մեծ Մարգարե է**: Սակայն նրանք **«Աստված այցելել է Իր**

Ժողովրդին» խոսքերն ասելուց հավանաբար չէին հասկանում այն, որ Հիսուսը հենց *Ինքն է* Աստված: Նրանց հասկացողությամբ հրաշքը այն մասին էր վկայում, որ Աստված նրանց մեջ գործեց, բայց ոչ Անձամբ: Հրաշքի մասին նրանց տեղեկությունը տարածվեց **շրջակա բոլոր տեղերում:**

ԲԺԻՉԼ Ղուկասը գրում է Հիսուսի հարուցանած երեք «միամորիկ երեխաների»՝ որբևայրու որդու, Հայրուսի աղջկա (8:42) և դիվահարված երեխայի պատմությունները (9:38):

9. Մարդու Որդին հորդորում է Իր նախակարապետին (7:18-23)

7:18-20. Հիսուսի հրաշքների մասին լուրերը հասան **Հովհաննես** Մկրտչին, ով Մեռյալ ծովի արևելյան ափին գտնվող Մաքարիուս ամրոցի բանտում էր: Եթե Հիսուսն իսկապես Մեսիան է, ապա ինչո՞ւ Իր իշխանությունը չի հայտնում Հովհաննեսին Հերովդեսի ձեռքից ազատելով: Ուստի Հովհաննեսն ուղարկեց իր **աշակերտներից երկուսին**, որպեսզի հարցնեն Հիսուսին՝ իսկապես Նա Մեսիա՞ն է, թե՞ Քրիստոսը դեռ պիտի գա: Մեզ կարող է տարօրինակ թվալ այն, որ Հովհաննեսը հարցնում է Հիսուսի մեսիականության մասին: Սակայն պետք է հիշենք, որ նույնիսկ ամենալավ մարդիկ հավաստի կարճատև անկումներ են ունենում: Ֆիզիկական չարչարանքները կարող են տանել հոգեկան լուրջ ընկճվածության:

7:21-23. Հիսուսը պատասխանեց Հովհաննեսի հարցին՝ նրան հիշեցնելով, որ Ինքը կատարել է մարգարեների կանխատեսած հրաշքները, որոնք պետք է Մեսիան կատարեր (Ես. 35:5-6, 61:1): Այնուհետև որպես հետգրություն՝ ավելացրեց՝ **Հովհաննեսին ասելով. «Եվ երանելի է նա, ով Իմ պատճառով չի գայթակղվում»:** Սա կարելի է հասկանալ որպես հանդիմանություն. Հովհաննեսը **գայթակղվել էր** այն բանից, որ Հիսուսը չէր վերցրել իշխանության սանձերն ու Իրեն չէր հայտնել այնպես, ինչպես սպասում էր ժողովուրդը: Սակայն դա նաև կարելի է հասկանալ որպես

հավատը չթողնելու կոչ՝ ուղղված Հովհաննեսին:

Ս. Ջ. Մուրն ասում է.

«Ես չգիտեմ հավատը փորձելու ուրիշ ավելի դժվար պահեր, քան դրանք, երբ Հիսուսը շատացնում է Իր իշխանության վկայությունը և *դա չի օգտագործում...* Մեծ շնորհ է պետք, երբ ուղարկվածները վերադառնում են այս խոսքերով. «Այո՛, Նրանն է ողջ իշխանությունը և այն ամենը, ինչ մտածում ես, բայց Նա բանտից քո դուրս գալու մասին մեկ բառ անգամ չասաց...»: Ոչ մի բացատրություն. հավատը քաջալերվում է, բանտի դռները մընում են փակված, և հետո այս խոսքը. «Եվ երանելի է նա, ով Իմ պատճառով չի գայթակղվում»: Ահա և բոլորը»:¹⁸

9. Մարդու Որդին գովեստով է խոսում Իր նախակարապետի մասին (7:24-29)

7:24. Անկախ այն բանից, ինչ Հիսուսն Անձնապես ասաց Հովհաննեսին, Նա ժողովրդի առջև կարող էր միայն գովել նրան: Երբ ժողովուրդը հավաքվել էր Հորդանանի անապատում, ի՞նչ էր փնտրում: Անհույս, անհաստատ, տատանվող և մարդկային շահ փնտրող մեկի՞ն: Ոչ ոք չէր կարող մեղադրել Հովհաննեսին **քամուց շարժվող մի եղեգ** լինելու մեջ:

7:25. Արդյոք նրանք սպասում էին տեսնել նրան շքեղ, ժամանակակից հագուստով, ճոխության ու հարմարավետության մեջ ապրելի՞ս: Ո՛չ, այդպիսի մարդիկ բնակվում են **թագավորական պալատներում**՝ ձգտելով վայելել պալատի բոլոր հնարավոր հանույքները և անհամար կապեր հաստատել անձնական շահի և հաջողության համար:

7:26. Նրանք գնացին՝ **տեսնելու մի մարգարեի**՝ մարմնացած խղճմտանքի, ով հրոչակում էր Կենդանի Աստծո Խոսքը՝ առանց հաշվի առնելու, թե դա ինչ կարժե՞նա իր համար: Նա **մարգարեից էլ մեծ էր:**

7:27. Նա անձամբ մարգարեության սուբյեկտ էր և Թագավորին ներկայացնելու եզակի արտոնություն ուներ: Տե՛ր Հիսուսը

հղում կատարեց Մադաքիայից (3:1), որպեսզի ցույց տա, որ Հովհաննեսի մասին խոստումը տրված էր ՀԿ-ում: Սակայն Նա մեջբերելիս դերանունների հետաքրքիր տեղափոխություն կատարեց: Մադ. 3:1-ում կարդում ենք. «Ահա Ես ուղարկում եմ Իմ պատգամավորին, և նա ճանապարհ կպատրաստի Իմ առջև»: Հիսուսը սա այսպես արտահայտեց. «**Ահա Իմ դեսպանն եմ ուղարկում Քո երեսի առջևից, որը Քո ճանապարհը պիտի պատրաստի Քո առջև**»: «Իմ» դերանունը փոխարինեց «Քո»-ով: Գողեթը այս փոխարինումը այսպես է բացատրում.

«Մարգարեի տեսանկյունից Նա, Ով ուղարկում էր, և Ում առջև պատրաստվում էր ճանապարհը, միևնույն Անձն է՝ Եհովան: Հետևաբար Մադաքիայի մոտ «Իմ առջև» է: Բայց Հիսուսը, Ով Իր մասին էր խոսում, երբեք Իրեն Հոր հետ չէր խառնում. անհրաժեշտ էր տարբերակում մտցնել: Նա Եհովան չէ, Ով խոսում է Իր մասին, այլ Եհովան խոսում է Հիսուսի հետ, այստեղից էլ «Քո երեսի առջևից» ձևն է: Ըստ այս վկայության՝ արդյոք այս մեջբերումից չի՞ հետևում, որ թե՛ մարգարեի և թե՛ Հիսուսի պատկերացմամբ Մեսիայի գալուստը Եհովայի գալուստն է»:¹⁹

7:28. Հիսուսը շարունակեց Հովհաննեսի գովասանքը՝ վստահեցնելով, որ **կանանցից ծնվածների մեջ Հովհաննես Մկրտչից մեծ մարգարե չկա**: Այս գերազանցությունը վերաբերում է ոչ թե նրա բնավորությանը, այլ Մեսիայի նախակարապետի դիրքին: Ուրիշներ էլ կային, որոնք ջանքով, մաքրությամբ և անձնուրաց նվիրվածությամբ նույնքան մեծ էին, ինչպես նա: Սակայն ոչ ոք չունեցավ Թագավորի գալուստը հոչակելու արտոնությունը: Սրանում է Հովհաննեսի եզակիությունը: Այնուամենայնիվ, Տերն ավելացրեց. «**Նա, որ փոքրագույնն է Աստծո արքայության մեջ, նրանից մեծ է**»: **Արքայության** օրհնությունները վայելելն ավելի **մեծ** է, քան Թագավորի նախակարապետ լինելը:

7:29. Հիսուսը, հավանաբար շարունակում է Հովհաննեսի մասին խոսել նաև 29-րդ համարում, դրա համար էլ ավելացրած է. «... Մաքսավորները լսելով **նրան**»: «Նրան» դերանունը հիշեցնում է, թե ինչպես է ընդունվել Հովհաննեսի պատգամը: Հասարակ **ժողովուրդը**, ինչպես նաև **մաքսավորների** պես համընդհանուր ճանաչում ունեցող մեղավորները ապաշխարեցին և **մկրտվեցին** Հորդանանում: Հավատալով Հովհաննեսից լսածներին և վարվելով նրա քարոզի համաձայն՝ նրանք **արդարացրին Աստծուն**, այսինքն՝ ընդունեցին, որ Աստված իրավունք ունի պահանջելու, որպեսզի Իսրայելի ժողովուրդն ապաշխարի նախքան Քրիստոսի նրանց վրա թագավորելը: Այստեղ օգտագործված «*արդարացրին Աստծուն*» բառակապակցությունը ցույց է տալիս, որ այն չի կարող նշանակել *արդար դարձնել*. ոչ ոք չի կարող Աստծուն արդար *դարձնել*: Այն ավելի շուտ նշանակում է ընդունել, որ Աստված արդար է Իր կարգադրությունների ու պահանջների մեջ:

Ե. Մարդու Որդին քննադատում է այս ազգին (7:30-35)

7:30-34. **Փարիսեցիներն** ու դպիրները հրաժարվեցին Հովհաննեսի մկրտությունից և դրանով **անարգեցին** իրենց բարօրությանն ուղղված Աստծո ծրագիրը: Փաստորեն անհնարին էր հանձնել այս **ազգի** մարդկանց, ում նրանք դեկավարում էին: Հիսուսը նրանց նմանեցրեց **հրապարակներում** նստած **երեխաներին**: Նրանք չէին ուզում ո՛չ հարսանիք խաղալ, ո՛չ էլ հուղարկավորություն: Նրանք կամակոր, քմահան, անկանխատեսելի ժողովուրդ էին: Աստված նրանց մեջ ինչպիսի ծառայություն էլ կատարեր, դրա հանդեպ մի առարկություն կգտնեին: **Հովհաննես Մկրտիչը** նրանց պարզության, խստակեցության և անձնուրացության մի օրինակ ցույց տվեց: Դա նրանց դուր չեկավ: Ավելին, նրանք քննադատեցին նրան՝ որպես դիվահարի: **Մարդու Որդին** ուտում և խմում է **մաքսավորների ու մեղավորների** հետ, այսինքն՝ նրանց հետ, ում եկել է օրհնելու: Փարիսե-

ցիները դրանից էլ են դժգոհ: Նրանք Հիսուսին անվանեցին որկրամոլ ու գինեմոլ: Ծոմ կամ ճաշկերույթ, հուղարկավորություն կամ հարսանիք, Հովհաննես կամ Հիսուս. ոչ մի բան և ոչ ոք չի կարող նրանց հաճեցնել:

Ռեյլը նախագգուշացնում է.

«Մենք պետք է հրաժարվենք ամեն մարդու դուր գալու ձգտումից: Դա հնարավոր չէ, և դրա փորձը ժամանակի վատնում է: Մենք պետք է բավարարվենք Քրիստոսի հետևից գնալով, և թող աշխարհն ապի այն, ինչ ուզում է: Ինչ էլ որ անենք, մենք չենք կարող նրանց բավարարել և ոչ էլ կարող ենք խոչընդոտ հանդիսանալ նրանց չարակամ դիտողություններին: Նրանք սկզբում գտան, թե ինչ բանում մեղադրեն Հովհաննես Մկրտչին, իսկ հետո նրա օրհնյալ Ուսուցչին: Նրանք կշարունակեն փնտելի ու մեղադրանք փնտրել Ուսուցչի աշակերտների վրա այնքան ժամանակ, քանի դեռ նրանցից մեկը երկրի վրա է»:²⁰

7:35. «Սակայն իմաստությունն արդարացվեց իր բոլոր զավակների կողմից»: Այստեղ **իմաստությունը** ներկայացնում է հենց Փրկչին: Աշակերտների փոքրամասնությունը, որը պատվում է իմաստությանը, Նրա **զավակներն են**: Թեև ժողովրդի հիմնական մասսան մերժում է Հիսուսին, Նրա ճշմարիտ հետևորդներն արդարացնում են Նրա հայտարարությունները՝ ապրելով սիրով, սրբությամբ ու նվիրվածությամբ:

2. Մեղավոր կինն օժում է Փրկչին անուշահոտ յուղով (7:36-39)

7:36. Ստորև հետևում է այն իրադարձությունը, որը կարող է մեզ համար օրինակ հանդիսանալ, թե ինչպես է իմաստությունն արդարացվում իր զավակներից մեկով՝ մի մեղավոր կնոջ միջոցով: Դուկտոր Հ. Ս. Վուդերինգը ճիշտ տեղին է ասել. «Երբ Աստված չի կարողանում ստիպել կրոնական առաջնորդներին Քրիստոսին գնահատել, Նա դա տալիս է մեղավոր կնոջն անելու»: Փարիսեցի Սիմոնը հրավիրեց Հիսուսին իր տուն, որ իրենց հետ ուտի, հնարավոր է

հետաքրքրությունից, միգուցե և թշնամաբար տրամադրված լինելուց:

7:37-38. Ծիշտ այդ ժամանակ սենյակ է մտնում մեղավոր **կինը**: Մենք չգիտենք, թե ով է նա: Ավանդությունն ասում է, որ դա Մարիամ Մագդաղենացին էր, բայց այս վարկածը Սուրբ Գրքով չի հաստատվում: Այդ կինը ալաբաստրե **շշով** անուշահոտ յուղ էր **բերել**: Երբ Հիսուսը սեղանին դարձած թիկնել էր բազմոցին՝ կերակուր ուտելու, կինը **կանգնել էր հետևի կողմից Նրա ոտքերի մոտ**: Նա սկսեց **արցունքներով լվանալ Նրա ոտքերը, իր գլխի մազերով սրբել** և անդադար Նրա **ոտքերը համբուրել**: Այնուհետև նա **օժեց** Նրան թանկարժեք անուշահոտություններով: Այդպիսի երկրպագությունն ու զոհողությունը ցույց տվեցին նրա համոզմունքը, որ Հիսուսի համար ոչ մի բան չարժե խնայել:

7:39. Սիմոնի վերաբերմունքը բոլորովին այլ էր: Նա կարծում էր, որ մարգարեները, ինչպես և փարիսեցիները պետք է գատվեն մեղավորներից: **Եթե** Հիսուսն իսկական **մարգարե լիներ**, եզրակացրեց նա, չէր թույլատրի **մեղավոր կնոջը** այդպիսի սեր ցույց տալ Իրեն:

Ե. Երկու պարտապանների մասին առակը (7:40-50)

7:40-43. Հիսուսը կարգաց **Սիմոնի** մըտքերն ու քաղաքավարությամբ նրան ինչ-որ **բան** ասելու թույլտվություն խնդրեց: Մեծ հմտությամբ Տերը պատմում է **փոխ տվողի** և **երկու պարտապանների** մասին: **Մեկը պարտք էր** հինգ հարյուր դահեկան, իսկ մյուսը՝ հիսուն: Բայց քանի որ անկարող էին **վճարելու**, ուստի պարտատերը երկուսի պարտքն էլ ներեց: Այդ պահին Հիսուսը հարցրեց Սիմոնին, թե պարտապաններից **ո՞րն** ավելի **կսիրի** պարտատիրոջը: Փարիսեցին ճիշտ պատասխանեց. «**Կարծում եմ՝ նա, ում շատ շնորհեց**»: Սա ընդունելով, ինչպես Հիսուսը ցույց տվեց նրան հետագայում, նա դատապարտեց իրեն:

7:44-47. Այն պահից, երբ Հիսուսը **տուն մտավ**, այդ կնոջ սիրո տարափը տեղաց Նրա վրա: Ի հակադրություն կնոջը՝ փա-

րիսեցիին Հիսուսին սառը ընդունելություն ցույց տվեց, նույնիսկ չհոգաց սովորական քաղաքավարության այնպիսի կանոնների պահպանության մասին, ինչպիսին են հյուրի ոտքերը լվանալը, նրա այտը համբուրելը և գլխի օծման յուղ տալը: Ինչո՞ւ Միմոնն այդպես վարվեց: Պատճառն այն էր, որ կինը գիտակցել էր, թե որքան շատ էր իրեն ներվել, իսկ Միմոնն իրեն ընդհանրապես մեծ մեղավոր չէր զգում: **«Ում քիչ է ներվում, նա քիչ է սիրում»:**

Հիսուսը չսասց, թե փարիսեցիին մեծ մեղավոր չէ: Նա ավելի շուտ ընդգծեց, որ Միմոնը երբեք իսկապես չի ընդունել իր մեղքի մեծությունն ու չի ներվել: Եթե նա դա գիտակցեր, ապա Տիրոջը կսիրեր այնպիսի խորությամբ, ինչպիսի խորությամբ սիրեց մեղավոր կինը: Բոլորս էլ մեծ մեղավորներ ենք: Բոլորս էլ կարող ենք ճանաչել մեծ ներումը: Բոլորս էլ կարող ենք սիրել Տիրոջը:

7:48. Այնուհետև Հիսուսը բոլորի ներկայությամբ հայտարարեց կնոջը, որ նրա **մեղքերը ներված են:** Նա չներվեց Զրիստոսի հանդեպ ունեցած իր սիրո *շնորհիվ*. նրա սերը ներված լինելու արդյունքն էր: Նա շատ սիրեց, որովհետև նրան շատ ներվեց: Հիսուսն օգտվեց այս առիթից, որպեսզի բոլորի ներկայությամբ հայտարարի նրա մեղքերի թողության մասին:

7:49-50. Մյուս հյուրերն իրենց մտքում հարցնում էին **մեղքեր** ներելու Տեր Հիսուսի իրավունքի մասին: Մարմնավոր սիրտն ասում է շնորհը: Սակայն Հիսուսը կրկին վստահեցրեց այդ **կնոջը**, որ նրա **հավատը փրկեց** նրան, ու արձակեց նրան **խաղաղությամբ**: Սա մի բան է, որ հոգեբանները չեն կարողանում անել: Նրանք կարող են փորձել բացատրել հանցանքի առաջացրած բարդությունները, բայց չեն կարող ուրախություն ու խաղաղություն տալ, որ Հիսուսն է տալիս:

Որոշ քրիստոնյաներ, պաշտպանելով անդարձ մարդկանց հետ սերտ հարաբերություններ պահպանելու, նրանց խրախճանքներին ու հանույքներին մասնակցելու գործնական երևույթը, ճիշտ չեն մեկնաբանում

մեր Տիրոջ պահվածքը, Ով սեղանի շուրջը ճաշում էր փարիսեցու հետ: Ռեյլը զգուշացնում է.

«Նա ով օգտվում է այս փաստարկից, լավ է, որ հիշի, թե Հիսուսն ինչպես էր Իրեն պահում այդ դեպքում: Նա կատարում էր «Իր Հոր գործը», որի համար էլ եկել էր փարիսեցու սեղանի մոտ: Նա հանդիմանեց փարիսեցուն նրա մեղքի համար: Նա բացատրեց նրան շնորհով եղած մեղքերի թողության բնույթն ու Իր հանդեպ ճշմարիտ սիրո գաղտնիքը: Նա հռչակեց հավատի փրկարար էությունը:

Եթե այն քրիստոնյաները, ովքեր փաստարկներ են բերում հոգուտ անապաշխարների հետ մտերմիկ հարաբերության, նրանց տները այցելեն մեր Տիրոջ հոգով, խոսեն ու իրենց դրսևորեն այնպես, ինչպես Նա արեց, ապա թող միշտ ամեն առումով շարունակեն այդ գործնականությունը: Բայց արդյոք նրանք իրենց անապաշխար ծանոթների սեղանների մոտ խոսո՞ւմ ու վարվո՞ւմ են այնպես, ինչպես Հիսուսը վարվեց Միմոնի հետ: Լավ կլինի, որ նրանք պատասխանեն այս հարցին»:²¹

Ը. Մի քանի կանայք ծառայում են Հիսուսին (8:1-3)

Չվետք է մոռանալ, որ Ավետարանն ընդամենը մի քանի իրադարձություններ է նկարագրում մեր Տիրոջ կյանքից ու ծառայությունից: Սուրբ Հոգին Իր հայեցողությամբ ընտրել է որոշ թեմաներ և բաց թողել շատ ուրիշներ: Այստեղ մեր առջև մի պարզ պատմություն է այն մասին, թե ինչպես էր Հիսուսը ծառայություն կատարում Իր աշակերտների հետ Գալիլիայի **քաղաքներում ու գյուղերում**: Երբ Նա քարոզում էր՝ ավետարանելով **Աստծո թագավորությունը, կանայք**, ում Նա օրհնեց, ծառայում էին Նրան, հավանաբար կերակուրով և կեցությամբ: Օրինակ՝ այնտեղ էր **Մարիամը, որ Մագդաղենացի էր կոչվում**: Ոմանք ենթադրում են, որ նա ազնվական կին էր Մագդաղայից: Ամեն դեպքում, նրանից հրաշքով **յոթ դև** էր հանվել: Այնտեղ էր նաև **Հովհաննան**, որի ամուսինը **Հե-**

ըովդեսի տան տեսուչն էր, ինչպես նաև **Շուշանը և շատ ուրիշներ**: Մեր Տիրոջ հանդեպ նրանց սերն աննկատ ու անհիշատակ չմնաց: Իրենց ունեցվածքը Հիսուսի հետ բաժնեկցելով՝ նրանք շատ չէին մտածում, որ հաջորդող բոլոր դարերի քրիստոնյաները կկարդան իրենց առատաձեռնության ու հյուրասիրության մասին:

Մեր Տիրոջ ծառայության նյութն **Աստծո Արքայությունն** ավետարանելն էր: **Աստծո Արքայությունն** նշանակում է Աստծո տեսանելի ու անտեսանելի Արքայությունը, որտեղ ընդունվում է Աստծո կառավարումը: Մատթեոսը «Երկնային Արքայություն» տերմինն է օգտագործում, բայց հիմնականում դա նույն նշանակությունն ունի՝ «Բարձրյալն է տիրում մարդկային թագավորությունների վրա» (Դան. 4:17) և «Երկրնքում եղողն է իշխում» (Դան. 4:26):

ՆԿ-ում Արքայության զարգացման մի քանի փուլերի մասին ենք կարդում.

1. Նախ Արքայության մասին հռչակեց Հովհաննես Մկրտիչը, ով ասաց, որ այն մոտեցել է (Մատթ. 3:1-2):
2. Այնուհետև Արքայությունն իրականում ներկա գտնվեց Արքայի Անձնավորությամբ («որովհետև Աստծո թագավորությունը ձեր ներսում է», Ղուկ. 17:21): Դա Թագավորության մասին Հիսուսի հռչակած բարի լուրն էր: Նա Իրեն առաջարկեց որպես Իսրայելի թագավոր (Ղուկ. 23:3):
3. Ավելի ուշ տեսնում ենք, թե ինչպես է Իսրայելի ժողովուրդը մերժում Աստծո Արքայությունը (Ղուկ. 19:14, Հովհ. 19:15):
4. Այսօր Արքայությունը ներկա է խորհրդավոր կերպով (Մատթ. 13:11): Քրիստոս Արքան ժամանակավորապես բացակայում է, բայց երկրի վրա որոշ մարդիկ ընդունում են Նրա կառավարումն իրենց սրտում: Որոշակի իմաստով այսօր Արքայությունն ընդգրկում է բոլոր նրանց, ովքեր դավանում են, որ ընդունում են Աստծո կառավարումը, նույնիսկ եթե նրանք իս-

կապես դարձի եկած էլ չլինեն: Այս արտաքին դավանության ոլորտը երևում է սերմնացանի (Ղուկ. 8:4-15), ցորենի, որումների (Մատթ. 13:24-30) և ուռկանում եղող ձկների առակներում (Մատթ. 13:47-50): Սակայն իր խորը, ճշմարիտ առումով Արքայությունն ընդգրկում է միայն նրանց, ովքեր դարձի են եկել (Մատթ. 18:3) կամ վերստին են ծնվել (Հովհ. 3:3): Սա ներքին իրականության ոլորտն է (տես Մատթ. 3:1-2-ի մեկնաբանությունը):

5. Մի օր Արքայությունը տառացիորեն հաստատվելու է այստեղ՝ երկրի վրա, ու Տեր Հիսուս Քրիստոսը՝ որպես թագավորների Թագավոր ու տերերի Տեր, թագավորելու է հազար տարի (Հայտ. 11:15, 19:16, 20:4):
6. Վերջին փուլը հայտնի է որպես մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավիտենական Թագավորություն (2 Պետ. 1:11): Այս թագավորությունը հավիտենականությունում է:

Թ. Մերմնացանի առակը (8:4-15)

8:4-8. Մերմնացանի առակը Թագավորությունը նկարագրում է իր ներկա տեսքով: Այն սովորեցնում է, որ Աստծո Թագավորությունն իր մեջ ոչ միայն դավանություն է ներառում, այլև իրականություն: Այն մի շատ լուրջ զգուշացման հիմք է, թե ինչպես պետք է **լսենք** Աստծո Խոսքը: Պետք չէ թեթևամտությամբ լսել սուրբգրությունից տրվող պատգամն ու խրատը: Դրանք լսողների վրա ավելի մեծ պատասխանատվություն է ընկնում, քան նախքան լսելը: Եթե նրանք մերժում են լսածը կամ ընտրում են, թե Խոսքի որ բաժնին հնազանդվել, իսկ որին՝ ոչ, դա իրենց կործանման համար են անում: Բայց եթե լսում են Խոսքը և հնազանդվում, ապա ավելի կարողունակ են դառնում Աստծուց ավելի շատ լույս ընդունելու: Հիսուսն **առակը** պատմում էր մարդկանց **բազմությանը**, իսկ հետո բացատրում աշակերտներին:

Առակում խոսվում էր **սերմնացանի**, նրա **սերմերի**, **սերմերն** ընդունող չորս տե-

ասկ հողերի և չորս տեսակ արդյունքների մասին:

ՀՈՂԻ ՏԵՍԱԿԸ

ԱՐԴՅՈՆՆԵՐԸ

- 1. Ճանապարհի եզրին **Կոխկառվեցին** մարդկանցից, և **թռչունները կերան դրանք:**
- 2. Ապառաժի վրա **Չորացան,** որովհետև **խոնավություն չկար:**
- 3. Փշերի մեջ **Խեղդվեցին փշերի մեջ:**
- 4. Լավ հող **Հարյուրապատիկ պտուղ տվեցին:**

Տերն առական ավարտեց հետևյալ խոսքերով. «**Ով լսելու ականջ ունի, թող լսի**»: Այլ խոսքերով, երբ Աստծո Խոսքն էք լսում, ուշադիր եղեք, թե ինչպես էք այն ընդունում: Որպեսզի պտուղ լինի, սերմը պետք է ընկնի **լավ հողի մեջ:**

8:9-10. Հիսուսի **աշակերտները** հարցրին **Նրան այդ առակի իմաստի** մասին, և Տերը բացատրեց, որ **Աստծո արքայության խորհուրդները** հասկանալի չեն լինելու ամեն մի մարդու: Քանի որ աշակերտներն ուզում էին վստահել ու լսել. նրանց **տրված էր Քրիստոսի ուսմունքը** հասկանալու կարողությունը: Սակայն Հիսուսը դիտավորյալ էր շատ ճշմարտություններ **առակի** ձևով շարադրում, որպեսզի այոք, ում մոտ չկար Նրա հանդեպ իսկական սեր, չհասկանային, այնպես որ **նայեն, բայց չտեսնեն. լսեն, բայց չհասկանան:** Որոշակի իմաստով նրանք լսում ու տեսնում էին: Օրինակ՝ նրանք գիտեին, որ Հիսուսը խոսում էր սերմնացանի ու նրա սերմերի մասին: Բայց չհասկացան այս **օրինակի** ավելի խորունկ իմաստը: Նրանք չհասկացան, որ իրենց սիրտը պինդ, անընկալունակ, փշերով պատված հողն էր, և Խոսքը լսելուց օգուտ չէին քաղում:

8:11-15. Տերը միայն աշակերտներին հայտնեց **առակի** նշանակությունը: Քանի որ նրանք արդեն ընդունել էին Քրիստոսից ստացած ուսմունքը, ուստի նրանց ավելին պիտի տրվեր: Հիսուսը բացատրեց,

որ **սերմը Աստծո Խոսքն է,** այսինքն՝ Աստծո ճշմարտությունը, Նրա ուսմունքը:

Ճանապարհի եզրին ընկածները խորհրդանշում են նրանց, ովքեր լսեցին Խոսքը, բայց նրան մակերեսորեն ու թեթևամըտորեն վերաբերվեցին: Այն մնաց իրենց կյանքի մակերեսին: Դրա համար էլ **սատանայի** (երկնքի թռչունները) համար դյուրին էր նրանց սրտից Խոսքը հանելը:

Ունկնդիրները, որոնք ներկայացված են որպես **ապառաժոտ** հող, նույնպես լսեցին Խոսքը, բայց թույլ չտվեցին, որ այն թափանցի իրենց մեջ: Նրանք չապաշխարեցին: Սերմը օժանդակություն (խոնավություն) չստացավ, այդ իսկ պատճառով չորացավ ու մեռավ: Հնարավոր է, որ սկզբում նրանք փայլուն կերպով դավանեցին իրենց հավատը, բայց դա իրականությանը չէր համապատասխանում: Արտաքինից նրանց հավատի անը կենդանի թվաց, բայց ներսում **արմատ** չուներ: Երբ դժբախտություններն սկսվեցին, նրանք թողեցին իրենց քրիստոնեական դավանանքը:

Ունկնդիրները, որոնք համեմատվում են **փշոտ հողի** հետ, որոշ ժամանակ լավ ընթացան, սակայն ցույց տվեցին իրենց ոչ ճշմարիտ հավատացյալ լինելը դրանով, որ ձախողվեցին ընթացքը հաստատակամորեն շարունակելու մեջ: **Հոգսերը, հարստությունները և այս կյանքի վայելքները** առաջատար դարձան, իսկ Խոսքը՝ ճնշվեց ու խեղդվեց:

Լավ հողի մեջ ընկածները ներկայացնում են ճշմարիտ հավատացյալներին, որոնց սիրտը **բարի ու մաքուր է:** Նրանք ոչ միայն ընկալեցին Խոսքը, այլև թույլատրեցին, որ այն ձևավորի իրենց կյանքը: Նրանք ընկալունակ էին ուսմունքի նկատմամբ և հնազանդ էին դրան, ուստի զարգացնելով ճշմարիտ քրիստոնեական բնավորությունը՝ **պտուղ** տվեցին Աստծո համար: Դարբին հետևյալ ձևով է ամփոփում այս հատվածում շարադրվածը.

«Եթե Խոսքը լսելով ես ոչ միայն ուրախանում եմ լսածից, այլև այն դարձնում եմ իմ սեփականությունը, այն դառնում է իմ հոգու մի մասը, ապա ես ավելին ձեռք

կերեմ, որովհետև երբ ճշմարտությունը դառնում է իմ հոգու ունեցվածքը, այն ավելին ընկալելու կարողություն է առաջացնում»:²²

Ժ. Լսողների պատասխանատվությունը (8:16-18)

8:16. Առաջին հայացքից թվում է, թե այս և նախորդ բաժիններն իրար հետ կապակցված չեն: Բայց իրականում մտքի շարունակությունն այստեղ չի ընդհատվում: Փրկիչը, այնուամենայնիվ, ընդգծում է այն բանի կարևորությունը, թե Նրա աշակերտներն ինչպես են վարվում Իր ուսմունքի հետ: Նա իրեն նմանեցնում է մի մարդու, **ով ճրագը չի վառում և ծածկում ամանով կամ դնում մահճակալի տակ, այլ դնում է աշտանակի վրա**, որպեսզի մարդիկ **լույսը տեսնեն**: Աշակերտների համար Աստծո Թագավորության սկզբունքները շարադրելով՝ Նա վառեց ճրագը: Նրանք դրանով ի՞նչ պիտի անեին:

Նախևառաջ նրանք չպետք է ծածկեին դա **ամանով**: Մատթ. 5:15, Մարկ. 4:21 և Ղուկ. 11: 33-ում նույնպես ամանի մասին է ասվում, որը առևտրի բնագավառում որպես չափման միջոց էր օգտագործվում: Ուստի, չափման միջոց հանդիսացող ամանի տակ ծածկված ճրագը կարող էր նշանակել, որ գործարար կյանքի դատարկության մեջ մարդու վկայությունը մթազնում կամ կաշկանդվում է: Ավելի լավ կլիներ ճրագը դնել ամանի վրա, այսինքն՝ քրիստոնեությունը կիրառել նաև գործարար ոլորտում, և անձնական գործն օգտագործել որպես ամբիոն՝ Ավետարանը քարոզելու համար:

Այնուհետև աշակերտները չպետք է ճրագը թաքցնեին **մահճակալի տակ**: Մահճակալը խոսում է հանգստի, հարմարավետության, ծուլության ու հաճույքի մասին: Ինչպես են այս բոլորը խանգարում լույսին: Աշակերտը պետք է ճրագը դնի աշտանակի վրա: Այլ խոսքով, նա պետք է ապրի ճշմարտությամբ ու քարոզի այն, որպեսզի բոլորը կարողանան տեսնել ճշմարտությունը:

8:17. Այս համարը, հավանաբար ցույց է տալիս, որ եթե մենք թույլատրում ենք, որ գործարար կյանքն ու ծուլությունը սահմանափակեն Խոսքի քարոզչությունը, ապա այդ արհամարհանքն ու մեր ձախողվածությունն ի հայտ են գալու: Թաքցված ճշմարտությունը **բացահայտվելու է**, և այն, ինչը մենք թաքցնում էինք, **երևան է** գալու:

8:18. Ուստի պետք է ուշադիր լինենք, թե **ինչպես ենք լսում**: Եթե ճշմարտությունը հավատարմորեն ենք ուրիշներին փոխանցում, ապա Աստված մեզ համար բոլորովին նոր ու ավելի խոր ճշմարտություններ կբացի: Ընդհակառակը, եթե ավետարանչության ջանասեր հոգին չունենք, ապա Աստված մեզ կգրկի ճշմարտությունից, որը թվում է, թե ունենք: Մենք կորցնում ենք այն, ինչից չենք օգտվում: Ջ. Հ. Լանգը մեկնաբանում է.

«Աշակերտները մեծ կամեցողությամբ էին լսում, որպեսզի և՛ ընկալեին, և՛ հավատային, և՛ հնազանդեին, իսկ ուրիշները լսում էին անտարբեր, կամ էլ հետաքրքրասիրությունից դրդված, կամ էլ լսածին վճռականորեն հակառակվելու համար: Առաջիններին ավելի շատ գիտելիք է տրվելու, երկրորդները գրկվելու են նույնիսկ այն գիտելիքից, որ նրանց թվում է, թե ունեն»:²³

Եթե ուզում ենք պահել Բարիքը՝ վերից, Պետք է դարձնենք մերձավորին բաժնեկից,

Դադարելով տալուց, կդադարենք ունենալուց,

Քանզի սա է օրենքը Միրո:

Ռ. Ս. Թրևեն

Ի. Հիսուսի ճշմարիտ մայրն ու եղբայրները (8:19-21)

Այն պահին, երբ Հիսուսն Իր խոսքն էր հաղորդում, Նրան ասացին, որ Նրա մոտ են եկել **մայրն ու եղբայրները** և ուզում են Նրան տեսնել: Նրանք **բազմության պատճառով չկարողացան Իրեն մոտենալ**: Ի պատասխան՝ Տերն ասաց, որ Իր հետ իսկական փոխհարաբերությունները կախված են ոչ թե բնական կապերից, այլ

Աստծո Խոսքին հնազանդվելուց: Նա որպես Իր ընտանիքի անդամ է ընդունում բոլոր նրանց, ովքեր ակնածում են Խոսքից, հեգույթամբ ընդունում են այն ու ներքնապես պատրաստ են հնազանդվելու: Ոչ մի ամբողջ չի կարող Նրա *հոգևոր* ընտանիքին խանգարել Նրա կողմից ընդունելություն ունենալուն:

I. Մարդու Որդին սանձում է փոթորիկը (8:22-25)

8:22. Այս գլխի մնացած մասում պատմվում է, թե Հիսուսն ինչպես է դրսևորում բնության ուժերի, դևերի, հիվանդությունների և նույնիսկ մահվան վրա Իր իշխանությունը: Բոլորը ենթարկվում են Նրա խոսքին, միայն մարդիկ են մերժում Նրան:

Գալիլիայի ծովի վրա ուժեղ փոթորիկներն անսպասելի են սկսվում և նավարկելը դարձնում վտանգավոր: Բայց թերևս այս փոթորիկը սատանայական ծագում ուներ, որ փորձում էր կործանել Փրկչին:

8:23. Մինչ փոթորկի սկսվելը Տեր Հիսուսը **քնեց**: Այն փաստը, որ *Նա* քնած էր, հավաստիացնում է Իր մարդկային բնույթ ունենալու ճշմարտացիությունը: **Փոթորիկը** հանդարտվեց, երբ Հիսուսը խոսեց. այս փաստը հաստատում է Նրա բացարձակ աստվածությունը:

8:24. Աշակերտներն **արթնացրին** Ուսուցչին՝ իրենց ահավոր սարսափն արտահայտելով: Նա կանգնեց ու **սաստեց քանոն** ու ալիքներին, և **խաղաղություն** եղավ: Այն, ինչ Նա արեց Գալիլիայի ծովին, կարող է անել և այսօր վիրավորված, փոթորիկներից ցնցված աշակերտին:

8:25. Նա հարցրեց աշակերտներին. **«Ո՞ր է ձեր հավատը»**: Նրանք չպետք է անհանգրստանային, չպետք է արթնացնեին Նրան: Ոչ մի ալիք չէր կարող խորտակել այն նավը, որի մեջ պատկած էր օվկիանոսի, երկրի ու երկնքի Տիրակալը: Հիսուսի հետ նույն նավում լինել նշանակում է բացարձակ անվտանգության ու հանգստության մեջ լինել:

Աշակերտներն ամբողջությամբ չէին գնահատում իրենց Տիրոջ իշխանության սահմանները: Նրա մասին իրենց ըմբռնումը

բավարար չէր: **Նրանք զարմացան**, որ բնության ուժերը ենթարկվում են Նրան: Նրանք ոչնչով չէին տարբերվում մեզանից: Կյանքի փոթորիկներում մենք էլ ենք հաճախ ընկնում հուսահատությունների մեջ: Այնուհետև, երբ Տերն օգնության է գալիս, զարմանում ենք Նրա դրսևորած իշխանությունից: Եվ մենք զարմանում ենք, որ Նրան լիովին չենք վստահում:

Խ. Գաղարացի դիվահարի բժշկումը (8:26-39)

8:26-27. Երբ Հիսուսն ու Իր աշակերտները հասան ափ, հայտնվեցին **գաղարացիների** երկրում:²⁴ Այնտեղ նրանց հանդիպեց **չար ոգի ունեցող մի մարդ**: Մատթեոսը երկու դիվահար է հիշատակում, իսկ Մարկոսն ու Ղուկասը միայն մեկի մասին են խոսում: Այդպիսի թվացյալ անհամապատասխանությունը կարող է մատնանշել այն, որ իսկապես երկու տարբեր դեպքեր են եղել կամ հեղինակներից մեկն ավելի ամբողջական է նկարագրել պատմությունը, քան մյուսները: Այս դեպքում դևերին զոհ դարձածը հագուստ չէր **հագնում**, փախչում էր հասարակությունից և ապրում էր **գերեզմաններում**:

8:28-29. Երբ **Հիսուսին տեսավ**, նա աղաչեց, որ իրեն հանգիստ թողնի: Իհարկե, այդ դժբախտ մարդու միջոցով խոսում էր **ալիքձ ոգին**:

Դիվահարված լինելն իրականություն է: Այդ դևերը միայն ազդեցություններ չէին: Դրանք գերբնական էակներ էին, որոնք ներքնակվում էին մարդու մեջ և ղեկավարում նրա մտքերը, խոսքը և վարքը: Այս դեպքում դևերը մարդուն ստիպում էին ծայրահեղ կատաղի լինել, այնքան, որ այդպիսի սաստիկ նուպաներից մեկի ժամանակ նա **կտրել էր** շղթաները, որոնցով նրան կապել էին, ու փախել **անբնակ վայր**: Եվ զարմանալի չէ, երբ տեսնում ենք, որ այդպիսի մի մարդու մեջ այնքան դևեր էին հավաքվել, որ կարողացան երկու հազար խոզ ոչնչացնել (տե՛ս Մարկ. 5:13):

8:30-31. Այդ մարդու **անունը «Լեզեոն»** էր, որովհետև բռնված էր **դևերի** լեզեոնով:

Այդ դեերը Հիսուսին ընդունում էին որպես Բարձրյալ Աստծո Որդու: Նրանք նաև գիտեին իրենց նկատմամբ գալիք անխուսափելի դատաստանի և այն մասին, որ Հիսուսն է դատելու իրենց: Սակայն ուզում էին հետաձգել այն և աղաչեցին Հիսուսին, որ իրենց անդունդ գնալ չհրամայի:

8:32-33. Նրանք թույլատրություն խնդրեցին՝ մարդուն թողնելով մտնել **խոզերի մեծ բոլուկի** մեջ, որոնք արածում էին հենց այնտեղ՝ **սարի վրա**: Նրանց թույլատրվեց դա, որի հետևանքով **խոզերն այդ գահավեժ տեղից կատաղորեն վազեցին դեպի ծովակը և այնտեղ խեղդվեցին**: Այսօր Տիրոջը քննադատում են ինչ-որ մեկի սեփականությունը ոչնչացնելու համար: Բայց եթե հրեաներն էին խոզ պահում, ապա նրանց գործը անագնիվ ու ապօրինի էր: Հրեա էին, թե հեթանոս, նրանք պետք է մի մարդուն ավելի գնահատեին, քան երկու հազար խոզերին:

8:34-39. Լուրն արագ տարածվեց այդ վայրում: Երբ մի մեծ ամբոխ հավաքվեց, նրանք տեսան նախկին դիվահարին ամբողջությամբ բնական, առողջ և պատշան վիճակում: **Գաղարացիների** շրջանի բնակիչներն այնպես անհանգստացան, որ **աղաչեցին Հիսուսին** հեռանալ իրենցից: Նրանք ավելի շատ իրենց խոզերի մասին էին մտածում, քան Փրկչի, ավելի շատ իրենց խոզերի բազմացման մասին էին մտածում, քան իրենց անձերի: Դարբին նկատում է.

«Աշխարհը Հիսուսին աղաչում է հեռանալ, որովհետև ուզում է սեփական հանույքներով ապրել, քանի որ Աստծո ներկայության գործունեից ավելի են վրդովվում, քան դեերի լեզուին: Հիսուսը հեռանում է: Նրա միջոցով բժշկված մարդը փափագում է Նրա հետ լինել, սակայն Տերը նրան ետ է ուղարկում լինելու իրեն հայտնված շնորհի ու գործության վկան»:²⁵

Ավելի ուշ, երբ Հիսուսն այցելեց Դեկապոլիս, Նրան համակրողների մի մեծ բազմություն դիմավորեց (Մարկ. 7:31-37): Արդյոք սա բժշկված դիվահարի հավատարիմ վկայության արդյունքը չէ՞ր:

Ծ. Անբուժելի հիվանդի բժշկությունը և հանգուցյալ աղջնակի հարությունը (8:40-56)

8:40-42. Տեր Հիսուսը Գալիլիայի ծովով վերադարձավ ետ՝ արևմտյան ափ: Այնտեղ մարդկանց մեծ բազմություն էր հավաքվել, որոնք **սպասում էին Իրեն**: Հատկապես **Հայրսը՝ ժողովարանի գլխավորը**, ուզում էր Նրան տեսնել, որովհետև նրա **տասներկու տարեկան աղջիկը** մահամերձ էր: Նա համառորեն **աղաչում էր** Հիսուսին, որ անմիջապես իր տունը մտնի: Սակայն **բազմությունը խոնվում էր Նրա շուրջը՝** խանգարելով առաջ շարժվելուն:

8:43. Ամբոխի մեջ կար մի երկչոտ, հուսահատ **կին, որ տասներկու տարուց ավելի տառապում էր արյունահոսությամբ**: Ղուկաս բժիշկը խոստովանում է, որ այդ կինը բժիշկների վրա էր ծախսել **բոլոր ունեցվածքը** և խնայողությունները, բայց **բժիշկներից** ոչ մեկը չէր կարողացել բժշկել նրան: Մարկոսը ոչ պրոֆեսիոնալ դիտողություն է անում՝ ընդգծելով, որ փաստորեն նրա վիճակը վատացել էր:

8:44-45. Նա զգաց, որ Հիսուսի մեջ գորություն կա, որ կարող է իրեն բժշկել, և դրա համար էլ ամբոխի միջով հասավ այնտեղ, որտեղ Նա էր: Մոտենալով՝ նա դիպավ Նրա հանդերձի ծայրին՝ հրեական հագուստի եզրին կամ ստորին ծայրի ծոպերին (Թվ. 15:38-39, 2 Օր. 22:12): **Եվ անմիջապես նրա արյունահոսությունը դադարեց**, և նա կատարելապես առողջացավ: Նա փորձեց կամացուկ հեռանալ, սակայն նրա փախուստին խոչընդոտեց Հիսուսի հարցը. **«Ո՞վ դիպավ Ինձ»:** **Պետրոսն** ու մյուս աշակերտները կարծեցին, որ դա այնքան էլ տրամաբանական հարց չէ, տարբեր մարդիկ էին հավաքվել, հրում էին և Նրան դիպում:

8:46. Բայց **Հիսուսն** իմացավ, որ դա ուրիշ տեսակի հպում էր: Ինչպես որ մեկն ասել է. «Մարմինը հրում է, իսկ հավատը՝ հավում»:²⁶ Նա գիտեր, որ Իրեն հավատը **դիպավ**, որովհետև Իրենից դուրս եկող **գորություն զգաց**, կնոջը բժշկող գորությո-

յուն: Իհարկե, Նա ավելի պակաս գորավոր չդարձավ, քան մինչ այդ էր, բայց բժշկությունը Նրա համար ինչ-որ *գին* ունեցավ: Չորություն ծախսվեց:

8:47-48. Կինը **դողալով եկավ Նրա առջև** և բացատրեց, թե ինչու է **Նրան դիպչել** ու երախտապարտորեն վկայեց կատարվածի մասին: Հիսուսը պարզևատրեց նրան հրապարակային վկայության համար՝ բոլորի ներկայությամբ քաջալերելով նրա հավատն ու **խաղաղություն** մաղթելով: Հնարավոր չէ, որ որևէ մեկը երբևիցե Հիսուսին այդպիսի հավատով հավի, և Նա չիմանա դրա մասին և Իր օրհնությունը չտա: Եվ ոչ ոք երբևիցե Նրան բացահայտ չի դավանի՝ առանց իր փրկված լինելու վստահությունն ստանալու:

8:49. Արյունահոսությամբ տառապող կնոջ բժշկումը հավանաբար շատ չուշացրեց Ճանապարհի գնացող Հիսուսին, սակայն դա բավարար ժամանակ էր, որ ինչ-որ մեկը բերեր այն լուրը, որ Հայրոսի **աղջիկը մեռել էր**, և հետևաբար այլևս պետք չէին Ուսուցչի ծառայությունները: Հիսուսի միջոցով բժշկվելու հավատը կար, բայց չկար այն հավատը, որ Նա կարող է մեռելներին հարուցանել:

8:50. Բայց այդքան հեշտ չէր **Հիսուսին** ետ պահել: Նա հուսադրիչ, քաջալերական և խոստումնալից խոսքեր ասաց. **«Մի՛ վախեցիր, միայն հավատա՛, և նա կապրի»:**

8:51-53. Տուն գալով՝ Նա մտավ սենյակ՝ Իր հետ վերցնելով միայն **Պետրոսին, Հովհաննեսին ու Հակոբոսին** ծնողների հետ միասին: Բոլորը վշտից ողբում էին, բայց Հիսուսը նրանց պատվիրեց դադարեցնել լացը, որովհետև **աղջիկը մեռած չէր, այլ քնած:** Սա Նրա հանդեպ ծիծաղ առաջացրեց, որովհետև նրանք նշգրտորեն գիտեին, **որ նա մեռած էր:**

Նա իսկապես մեռած էր, թե՛ խոր քնի՝ թմբիրի մեջ էր: Մեկնաբանների մեծամասնությունը համաձայնում է, որ նա մեռած էր: Նրանք մատնանշում են, որ Հիսուսը Ղազարոսի մասին էլ ասաց, որ նա քնած է՝ նկատի ունենալով, որ նա մեռած էր: Մըր Ռոբերտ Անդերսոնն ասում է, որ իրականում

նում աղջիկը մեռած չէր:²⁶ Ահա նրա փաստարկները.

1. Հիսուսն աղջկա մասին ասաց, որ նա կապրի: Նա օգտագործեց այս գլխի 48-րդ համարի նույն բառը, որտեղ այն վերաբերում է բժշկությանը, ոչ թե հարությանը: Այս բառը ոչ մի անգամ ՆԿ-ում չի օգտագործվում, երբ խոսքը մեռելներից հարություն առնելու մասին է:
2. Հիսուսը Ղազարոսի դեպքում «քնած» բառի նշանակությունն ունեցող այլ բառ օգտագործեց:
3. Մարդիկ կարծում էին, որ նա մեռած էր, բայց Հիսուսն Իրեն չէր վերագրի մեռելներից հարուցանելը, քանի որ հաստատ գիտեր, որ աղջիկը մեռած էր:

Անդերսոնն ասում է, որ այս հարցը միայն կախված է նրանից, թե մենք ում ենք ուզում հավատալ: Հիսուսն ասաց, որ նա քնած է: Մյուսներն էլ կարծում էին, որ նա մեռած է:

8:54-56. Ամեն դեպքում Հիսուսը նրան ասաց. **«Աղջի՛կ, վեր կաց»:** **Նա իսկույն ոտքի կանգնեց:** Աղջկան ծնողներին վերադարձնելով՝ Հիսուսը նրանց պատվիրեց, որ հրաշքի մասին լուրը չտարածեն: Նրան չէին հետաքրքրում հանրահայտությունը, հասարակության անկայուն հիացմունքը, անիմաստ հետաքրքրասիրությունը:

Մրանով ավարտվում է Հիսուսի երկրավոր ծառայության 2-րդ տարին: 9-րդ գլուխը բացում է 3-րդ տարին, որը սկսվում է Տասներկուսին ժողովրդի մեջ ծառայության ուղարկելով:

Կ. Մարդու Որդին Իր աշակերտներին ուղարկում է ծառայության (9:1-11)

9:1-2. Այս իրադարձությունը շատ է հիշեցնում Մատթ. 10:1-15-ում **տասներկու աշակերտներին** ուղարկելը, բայց զգալի տարբերություններով: Օրինակ՝ Մատթեոսի Ավետարանում աշակերտներին պատվիրվեց գնալ միայն հրեաներին, նաև նրանց ասվեց ոչ միայն **հիվանդություններ բժշկելու**, այլև մեռելներին հարուցանելու մասին: Հավանաբար, Ղուկասն ասում

ուանց պատճառի չէ, որ կարճացրել է իր տարբերակը, սակայն մեզ համար պարզ չէ այդ պատճառը: Տերը ոչ միայն հրաշքներ անելու գործություն և իշխանություն **ուներ**, այլև Նա այդ **գործությունն ու իշխանությունը փոխանցեց** ուրիշներին: **Չորուքուն** նշանակում է ուժ կամ կարողություն: **Իշխանություն** նշանակում է գործությունն օգտագործելու իրավունք: Աշակերտների քարոզը հաստատվում էր նշաններով ու հրաշքներով (Եբր. 2:3-4) ամբողջ Աստվածաշնչի գրավոր տարբերակի բացակայության պայմաններում: Աստված կարող է հրաշալի ձևով բժշկել: Հարցն այն է, թե արդյոք հիմա՞ էլ բժշկությունը պետք է ուղեկցի Ավետարանի քարոզին:

9:3-5. Այժմ աշակերտները հնարավորություն ստացան գործնականում կիրառել այն սկզբունքները, որոնք նրանց սովորեցրել էր Տերը: Նրանք իրենց նյութական կարիքների համար պետք է վստահեին Նրան և իրենց հետ չվերցնեին **ոչ պարկ, ոչ հաց, ոչ էլ արծաթ**: Նրանք պետք է շատ համեստ ապրեին՝ առանց ավելորդությունների, ներառյալ նույնիսկ հանդերձ փոխելը: Նրանք պետք է **մնային** առաջին **տանը**, որտեղ նրանց կրկնումնեին՝ առանց ավելի հարմարավետ կացարան փնտրելու հույսով տեղից տեղ փոխադրվելու: Նրանք չպետք է երկար մնային նրանց մեջ, ովքեր մերժում էին Խոսքը, կամ ճնշեին նրանց, ովքեր մերժում էին պատգամը. պատվերի համաձայն՝ նրանք պետք է **թոթափեին իրենց ոտքերի փոշին՝ որպես նրանց դեմ վկայություն**:

9:6. Աշակերտները հավանաբար գնացին **Գալիլիայի քաղաքներն ու գյուղերը**, ուր քարոզեցին Ավետարանը և բժշկեցին հիվանդներին: Պետք է հիշեցնել, որ նրանց ավետարանչությունը կապված էր Թագավորության հետ, նրանք մարդկանց հոչակում էին իրենց մեջ ներկա Թագավորի ու ապաշխարածների վրա թագավորելու Նրա ցանկության մասին:

9:7. **Հերովդես** Անտիպասը այդ ժամանակ **չորրորդապետ էր** Գալիլիայում և Բերիայում: Նա կառավարում էր իր հոր՝

Հերովդես Մեծի թագավորության մեջ մըտնող տարածքի մեկ քառորդի վրա: Նրան լուր հասավ, որ իր տարածքում ինչ-որ մեկը մեծ հրաշքներ է կատարում: Նրա մըտքում այդ պահին սկսեցին հարցեր առաջանալ: **Հովհաննես** Մկրտչի մասին հիշողությունները դեռ շարունակում էին անհանգրստացնել նրան: Հերովդեսը, Հովհաննեսին գլխատելով, լռեցրեց այդ անվախ ձայնը, բայց նա դեռ վախենում էր նրա կյանքի գործությունից: Ո՞վ էր նա, որ ստիպում էր Հերովդեսին միշտ Հովհաննեսի մասին մտածել: Լուրեր տարածվեցին, **թե Հովհաննեսն է մեռելներից հարություն առել**:

9:8-9. Ոմանք ենթադրում էին, որ Եղիան է հայտնվել կամ ՀԿ-ի հին մարգարեններից մեկը: Հերովդեսը փորձում էր ճնշել իր տագնապը՝ ուրիշներին հիշեցնելով, որ ինքը **գլխատել է** Հովհաննեսին: **Քայց սա Ո՞վ է: Նա ուզում էր Նրան տեսնել**, բայց տեսավ միայն խաչելությունից առաջ: Սուրբ Հոգով լցված կյանքի գործությունը՝ Տեր Հիսուս Քրիստոսը՝ ատաղձագործը Նագարեթից, դող էր պատճառում Հերովդեսին, ով նույնիսկ չէր տեսել Նրան: Չպետք է թերագնահատել Սուրբ Հոգով լցված մարդու ազդեցությունը:

9:10. **Առաքյալները վերադարձան** ու իրենց առաքելության արդյունքների մասին անմիջապես հաղորդեցին Տեր Հիսուսին: Հավանաբար սա լավ կանոն կարող է լինել քրիստոնյա գործիչների համար: Հանախ ծառայության գովազդը տանում է խանդի ու բաժանումների: Չ. Քեմբել Մորգանը դա այսպես է մեկնաբանում. «Վիճակագրության նկատմամբ մեր ավյունը բխում է եսասիրությունից և մարմնից, ոչ թե Հոգուց»: Մեր Տերը վերցրեց աշակերտներին Իր հետ և **գնաց մի ամայի հատուկ տեղ՝ Բեթսայիդայի (Չկնորսության տուն)** մոտ: Թվում է, թե այն ժամանակ երկու Բեթսայիդա կար. մեկը Գալիլիա ծովի արևմտյան ափին, իսկ մյուսը՝ արևելյան: Ծշգրիտ տեղը հայտնի չէ:

9:11. Հանգստի համար առանձնանալու բոլոր հույսերն արագորեն ցրվեցին: Անմի-

ջապես ժողովուրդ հավաքվեց: Տեր Հիսուսը միշտ հասանելի էր: Նա այն չդիտարկեց որպես զայրացնող խանգարում: Նա երբեք չափից դուրս զբաղված չի եղել, որ չօրհնի: Փաստորեն, այստեղ պարզ խոսվում է այն մասին, որ **Նա բարյացակամությամբ ընդունեց նրանց և խոսեց Աստծո թագավորության մասին ու բժշկեց նրանց, ովքեր բժշկության կարիք ունեին:**

Հ. Հինգ հազարի կերակրումը (9:12-17)

9:12. Քանի որ երեկոն մոտենում էր, **տասներկու աշակերտներն** սկսեցին անհանգստանալ, որովհետև շատ մարդիկ կային, որոնք սննդի կարիք ունեին: Անելանելի իրավիճակ էր: Դրա համար էլ նրանք Տիրոջից խնդրեցին, որ **արձակի ժողովրդին:** Սա որքան նման է մեր սրտին: Երբ գործը մեզ է վերաբերում, մենք Պետրոսի նման ենք ասում. «Հրամայի՛ր ինձ Քեզ մոտ գալ...»: Իսկ որքան դյուրին է ուրիշների համար ասել. «**Արձակի՛ր այս ժողովրդին, որ գնան**»:

9:13. Հիսուսը նրանց չարձակեց շրջակա գյուղերից կերակուր հայթայթելու համար: Ինչո՞ւ աշակերտներն ուրիշներին օգնելու նպատակով ճանապարհորդեն՝ այքաթող անելով նրանց, ովքեր կանգնած են իրենց շեմին: Թող աշակերտները կերակրեն հավաքված ժողովրդին: Նրանք առարկեցին, որ միայն **հինգ հաց ու երկու ձուկ** ունեն՝ մոռանալով, որ նաև ունեին Տեր Հիսուսի անսահման պաշարները, որոնք կարող էին օգտագործել:

9:14-17. Նա պարզապես աշակերտներին խնդրեց **նստեցնել հինգ հազար մարդուն** և առավել կանանց ու երեխաներին: Այնուհետև գոհություն մատուցելով՝ **կտրեց** հացը և տվեց **աշակերտներին**, որպեսզի բաշխեն: Նրանք էլ իրենց հերթին այն բաժանեցին մարդկանց: Բոլորի համար էլ շատ ուտելիք կար: Փաստորեն, երբ ուտելն ավարտեցին, ավելի շատ ուտելիք մնաց, քան ընթրիքից առաջ: Կտորտանքներից **տասներկու կողով** լցվեց, յուրաքանչյուր աշակերտին մեկ կողով: Նրանք, ովքեր ձգտում են ապացուցել, որ դա հրաշք չէ,

պարզապես լրացնում են խառնաշփոթության էջերը:

Այս իրադարձությունը խոր իմաստ ունի աշակերտների համար, որոնց վրա է դրված աշխարհին ավետարանելու խնդիրը: **Հինգ հազար մարդիկ** ներկայացնում են Աստծո հացին կարոտ կործանվող մարդկությունը: Աշակերտները ներկայացնում են անօգնական քրիստոնյաներին, որոնց պաշարները սահմանափակ են, և չեն ուզում կիսել իրենց ունեցածը: Տիրոջ պատվերը. «Դուք նրանց ուտելի՛ք տվեք», Մեծ հանձնարարությունն է՝ այլ բառերով շարադրված: Դասն այստեղ հետևյալն է. եթե մենք տալիս ենք Հիսուսին մեր ունեցածը, Նա կարող է դա բազմացնել, որպեսզի կշտացնի հոգևորապես քաղցած ժողովրդին: Աղամանդե մատանին, ապահովագրությունը, բանկային հաշիվը, սպորտային գույքը... այս բոլորը կարելի է վերածել, օրինակ՝ ավետարանչական գրականության, իսկ գրականությունն էլ արդյունքում հոգիներին կառաջնորդի փրկության, որոնք էլ իրենց հերթին կլինեն Աստծո Գառան երկրպագուները հավիտենականությունում:

Եթե քրիստոնյաներն իրենք իրենց և իրենց ունեցածը ներկայացնեն Քրիստոսին, աշխարհը հնարավոր կլինի ավետարանել դեռ ներկա սերնդի կյանքի ընթացքում: Մրանում է հինգ հազարին կերակրելու հրաշքի անփոփոխ դասը:

Ձ. Պետրոսի մեծ դավանությունը (9:18-22)

9:18. Բազմաթիվ մարդկանց հրաշքով կերակրվելուց անմիջապես հետո մեր առջև Պետրոսի մեծ դավանությունն է Քրիստոսի մասին Փիլիպպեի Կեսարիայում: Արդյոք հացերի և ձկների բազմացման հետ կապված հրաշքը բացե՞ց աշակերտների աչքերը, որպեսզի տեսնեն Տեր Հիսուսի՝ Աստծո Օծյալի փառքը: Փիլիպպեի Կեսարիայում տեղի ունեցած այս իրադարձությունը բոլորի կողմից ընդունված է որպես Փրկչի ուսուցանելու ծառայության ջրաբաժան տասներկուսին սովորեցնելու նպա-

տակով: Մինչ այս պահը Նա համբերատար նրանց առաջնորդում էր՝ գիտակցելու, թե Ով է Ինքը և ինչ կարող է անել նրանց մեջ և նրանց միջոցով: Այստեղ Նա հասավ այդ նպատակին և դրա համար էլ սրանից հետո վճռականորեն գնաց դեպի խաչ: **Քրիստոսն առանձին աղոթեց:** Ոչ մի տեղ գրված չէ, որ Տեր Հիսուսն աղոթել է աշակերտների հետ: Նա աղոթել է նրանց համար, աղոթել է նրանց ներկայությամբ և սովորեցրել է աղոթել, սակայն Նրա անձնական աղոթքի կյանքը նրանցից առանձին էր ընթանում: Իր աղոթքի պահերից մեկից հետո Նա աշակերտներին հարցրեց, թե **ժողովուրդն Իր մասին ի՞նչ է ասում:**

9:19-20. Նրանք Հիսուսին տարբեր կարծիքներ հաղորդեցին. ոմանք կարծում էին, թե **Նա Հովհաննես Մկրտիչն է**, մյուսները՝ **Եղիան**, ուրիշներն էլ ասում էին, որ Նա հինկտակարանյան **մարգարեներից մեկն է**, որը հարություն է առել: Իսկ երբ Նա աշակերտներին հարցրեց, **Պետրոսը** վստահորեն Նրան դավանեց որպես **Աստծո Քրիստոսի** կամ Մեսիայի:

Փիլիպպեի Կեսարիայում այս իրադարձության վերաբերյալ Ջեյմս Սոյոուարտի մեկնաբանություններն այնքան գերազանց են, որ մենք դրանք ամբողջությամբ կներկայացնենք ստորև.

«Նա սկսեց անկողմնակալ հարցով. «Ժողովուրդն Իմ մասին ի՞նչ է ասում, Ո՛վ եմ Ես»: Ոչ մեկի համար էլ դժվար չէր այդ հարցին պատասխանելը, որովհետև բոլոր կողմերից մարդիկ ինչ-որ բան ասում էին Հիսուսի մասին: Տասնյակ դատողություններ կային: Օդում ամենահնարավոր շշուկներն ու կարծիքներն էին պտտվում: Բոլորի լեզվի վրա Հիսուս անունն էր: Եվ մարդիկ ոչ միայն Հիսուսի մասին ինչ-որ բաներ էին պատմում, այլ *մեծ բաներ* էին պատմում: Ոմանք կարծում էին, որ Նա մեռելներից հարություն առած Հովհաննես Մկրտիչն էր: Մյուսներն ասում էին, որ Նա Եղիային էր հիշեցնում: Ոմանք Երեմիայի կամ մեկ ուրիշ մարգարեի մասին էին ասում: Այլ խոսքերով ասած, չնայած Նրա Անձնավորության մասին գոյություն ունեցող

կարծիքները միաշունչ չէին, այնուամենայնիվ, մարդիկ համաձայն էին, որ Նա մեծ Մեկն էր: Նրա տեղը իրենց ազգի հետոսների շարքում էր:

Այստեղ արժե նկատել, որ պատմությունը կրկնվում է: Կրկին Հիսուսի անունը բոլորի շուրթերին է: Նրա մասին խոսվում է քրիստոնեական Եկեղեցու սահմաններից էլ հեռու: Եվ Նրա մասին դատողություններն էլ բոլորովին տարբեր են: Փափինին, Տեր Հիսուսին նայելով, Նրանում Պոետ է տեսնում: Բոյուս Բարթոնը Գործի Մարդ է տեսնում: Միդդլթոն Մերրին տեսնում է Միստիկի: Ուղղափառությունից հեռու մարդիկ պատրաստ են Հիսուսին բարձրացնելու որպես առաջնորդի օրինակի բոլոր ժամանակների սրբերի ու բարոյականության բոլոր ուսուցիչների համար: «Նույնիսկ հիմա,- ասել է Ջ. Սոյոուարտ Միլը, - նույնիսկ անհավատի համար դժվար կլինեք գտնել վերացականությունից կոնկրետության անցնելու առաքինության կանոնների ամենալավ տարբերակը, քան ձգտել ապրել այնպես, որ մեր կյանքը հաճելի լինի Քրիստոսին»: Նրա օրերի մարդկանց նման, ովքեր Նրան Հովհաննես Մկրտիչ, Եղիա, Երեմիա կոչեցին, այսօրվա մարդիկ նույնպես համաձայն են, որ բոլոր ժամանակների սրբերի ու հերոսների մեջ Հիսուսն ամենաբարձր դիրքն է զբաղեցնում:

Սակայն Հիսուսը գոհ չի լինի այսպիսի ճանաչումից: Մարդիկ Նրան անվանեցին Հովհաննես, Եղիա, Երեմիա: Բայց դա նշանակում էր, որ Նա այդ ցանկում շատերից մեկն էր: Դա նշանակում էր, որ նախադեպեր, գուգահեռներ կային, և նույնիսկ եթե Նա առաջին շարքում էլ կանգնեք, ընդամենը կլինեք *առաջինը հավասարների մեջ*: Սակայն լիովին պարզ է, որ դա այն չէ, ինչին հավակնում էր Նոր Կտակարանի Քրիստոսը: Մարդիկ կարող են Քրիստոսի հայտարարության հետ համաձայնել կամ ոչ, բայց ինչ վերաբերում է հենց հայտարարության փաստին, ապա դրանում կասկածի նշույլ իսկ չկա: Քրիստոսը հայտարարեց, որ Նա այնպիսին էր, Ում նախադեպը, գուգահեռը, մրցակիցը, օրինակը չկար (օրի-

նակ՝ Մատթ. 10:37, 11:27, 24:35, Հովհ. 10:30, 14:6)»:²⁷

9:21. Պետրոսի պատմական դավանություննից անմիջապես հետո Տերը խստորեն պատվիրեց նրանց, որ այս մասին ոչ մեկին չասեն, ոչինչ չի կարող ընդհատել դեպի խաչ տանող Իր ճանապարհը: Այնուհետև Փրկիչը նրանց հայտնեց Իր մոտ ապագայի մասին: Ինքը պետք է շատ չարչարվի ու մերժվի մեծերից՝ Իսրայելի կրոնական առաջնորդներից, և պիտի սպանվի և երրորդ օրը հարություն առնի: Սա ցնցող հայտարարություն էր: Եկե՛ք չմոռանանք, որ այս խոսքերն ասվեցին երկրի վրա երբևէ ապրած միակ անմեղ ու արդար Մարդու կողմից: Դրանք ասվեցին Իսրայելի ճշմարիտ Մեսիայի կողմից: Դա մարմնով հայտնված Աստծո խոսքերն էին: Դրանք մեզ ասում են, որ լեցունության, կատարելության և Աստծո կամքին հնազանդ կյանքն իր մեջ ընդգրկում է տառապանք, մերժում, մահ այս կամ այն ձևով, և կյանքի հարություն, որն անմահ է: Դա մյուսների համար գոհաբերված կյանքն է:

Սա, իհարկե, Մեսիայի դերի մասին մասսայական կարծիքի լրիվ հակասակներն էր: Մարդիկ սպասում էին զենք ճոճող, թշնամիներին ոչնչացնող առաջնորդի: Այս խոսքերը պետք է ցնցեին աշակերտներին: Բայց եթե, ըստ նրանց դավանության, Հիսուսն այնուամենայնիվ Աստծո Քրիստոսն էր, ապա նրանք հիասթափվելու և հուսահատվելու պատճառ չունեին: Եթե Նա Աստծո Օծյալն է, ապա Նրա գործը երբեք չի ձախողվի: Անկախ դրանից, թե ինչ կարող է տեղի ունենալ Նրա հետ կամ նրանց հետ, հաղթանակը նրանցն է: Հաղթանակն ու պաշտպանությունը անխուսափելի են:

Ղ. Խաչը վերցնելու հրավեր (9:23-27)

9:23. Իր ապագան նրանց ցույց տալով՝ Տերը հրավիրեց աշակերտներին **Իր հետևից գնալ**: Սա նշանակում էր ուրանալ իրենց անձը և վերցնել իրենց խաչը: Մեփական **անձն ուրանալ** նշանակում է կամավոր հրաժարվել այսպես կոչված ծրագրելու և ընտրելու իրավունքից, փոխարենը

ընդունել Նրա առաջնորդությունը կյանքի բոլոր բնագավառներում: Մեփական **խաչը վերցնել** նշանակում է գիտակցաբար այնպիսի կյանք ընտրել, ինչպիսի կյանքով Նա ապրեց: Դա իր մեջ ընդգրկում է.

- հակառակություն սիրելի մարդկանց կողմից,
- պարսավանք աշխարհից. թողնել ընտանիք, տուն, հողեր և կյանքի հարմարություններ,
- ամբողջական կախում Աստծուց,
- հնազանդություն Սուրբ Հոգու առաջնորդությանը,
- ոչ ընդհանուր ընդունելության արժանացած պատգամի հռչակում,
- միայնակության ճանապարհ,
- կրոնական կազմակերպությունների ղեկավարների կողմից կազմակերպված հարձակումներ,
- արդարության համար տառապանք,
- չարախոսություն ու ամոթ,
- այլոց համար կյանքի գոհաբերում,
- սեփական անձի և աշխարհի համար մեռնել:

Սակայն այն նույնպես ներառում է մի կյանք ձեռք բերել, որն իրական կյանքն է: Դա նշանակում է վերջապես գտնել գոյության իսկական պատճառը: Եվ դա նշանակում է հավիտենական վարձատրություն: Բնագողորեն մենք խուսափում ենք խաչի կյանքից: Չենք ուզում հավատալ, որ մեզ համար դա է Աստծո կամքը: Մինչդեռ **«Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ...»** Հիսուսի խոսքերը նշանակում են, որ ոչ ոք բացառված չէ, ոչ ոք զիջված չէ:

9:24. Բնական միտումը ինքնակենտրոն, ինքնագոհ, որոշակի ռեժիմով, մանր համակեցություններով մեր կյանքը **պահելն է**: Մենք կարող ենք տրվել մեր հաճույքներին ու ցանկություններին, ձգտել հարմարավետության, վայելքի՝ ապրելով ներկայի համար, մեր տաղանդները ծախելով աշխարհին մի քանի տարվա խաբուսիկ ապահովության դիմաց: Բայց հենց դա անելով՝ **կորցնում ենք** մեր կյանքը, այ-

սինքն՝ կորցնում ենք **կյանքի** իսկական իմաստը և դրան ուղեկցող հոգևոր բավարարությունը: Մյուս կողմից՝ մենք կարող ենք մեր կյանքը **կորցնել** Փրկչի համար: Մարդիկ մեզ անվանում են անխելք, եթե հրաժարվում ենք անձնական եսասիրական հավակնություններից և ամեն բանից առաջ ձգտում ենք Աստծո Թագավորությանն ու Նրա արդարությանը և անմնացորդ նվիրվում Նրան: Բայց այսպիսի նվիրված կյանքն է հենց իսկական կյանքը: Նրանում է ուրախությունը, սուրբ անհոգությունը, ամեն նկարագրություն գերազանցող ներքին խորը բավարարվածությունը:

9:25. Չրուցելով Տասներկուսի հետ՝ Փրկչը հասկացավ, որ նյութական հարստություններին ձգտելը կարող է ուժեղ արգելք լինել ամբողջական նվիրման համար: Դրա համար էլ Նա այսպիսի մի բան ասաց. «Պատկերացրեք, որ դուք կարող եք հավաքել **ամբողջ աշխարհի** ոսկին ու արծաթը, բոլոր անշարժ գույքերը, ունեցվածքները, բաժնետոմսերն ու պարտատոմսերը ձեր սեփականությունը դարձնել: Պատկերացրեք, որ ձեր խելահեղ ջանքերով այս բոլորը ձեռք բերելիս կորցնեք կյանքի ճշմարիտ նպատակը: Ի՞նչ օգուտ ձեզ դրանցից: Դուք կարող եք տիրել ձեր դիզածին ընդամենը մի կարճ ժամանակով, իսկ հետո թողնելու եք ընդմիջտ: Անխելքություն կլինի այս կարճ կյանքը ծախել մի քանի փոշե խաղալիքների համար»:

9:26. Քրիստոսին ամբողջությամբ նվիրվելու մյուս արգելքը ամոթանք կրելու երկյուղն է: Արարածի համար ծայրաստիճան անխելքություն է իր Արարչից ամաչելը, մեղավորին՝ իր Փրկչից **ամոթ** զգալը: Եվ մեզանից ո՞վ է, որ անթերի է այս հարցում: Տերն ընդունում էր ամաչելու հնարավորությունը և լրջորեն զգուշացրեց դրա մասին: Եթե մենք, ամոթից խուսափելով, անվանական քրիստոնյայի կյանք ապրենք՝ աշխարհին նմանվելով, ապա **Մարդու Որդին էլ** մեզ **ամոթ կհամարի, երբ գա Իր և Իր Հոր և սուրբ հրեշտակների փառքով**: Նա շեշտում է Իր Երկրորդ գալստյան եռակի

մեծությունը՝ կարծես թե ասելով, որ ամեն մի ամոթ կամ նախատիք, որ կրում ենք հիմա Իր պատճառով, ապագայում, երբ Նա հայտնվի փառքով, դրանք երեք անգամ փոքր են թվալու մեզ՝ համեմատած նրանց ամոթի հետ, ովքեր հիմա մերժում են Նրան:

9:27. Նրա փառքի մասին այս հիշատակումը կապվում է դրան հաջորդող մտքի հետ: Նա կանխատեսում է, որ այնտեղ **կանգնած** աշակերտներից **ոմանք** տեսնելու են **Աստծո թագավորությունը նախքան** իրենց **մահը**: Նրա խոսքերը կատարվեցին 28-36-րդ համարներում՝ Այլակերպության լեռան վրայի իրադարձություններում: Այդ աշակերտներից էին Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը: Լեռան վրա նրանք տեսան այն բանի կանխավայելումը, որը լինելու է, երբ Տեր Հիսուսը երկրի վրա հաստատի Իր Թագավորությունը: Եվ ճիշտ այս մասին է ասում Պետրոս առաքյալն իր 2-րդ թղթում.

«Որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գործունեությունն ու գալուստը ձեզ ցույց տվեցինք ոչ թե վարպետորեն հյուսված առասպելների հետևելով, այլ Նրա մեծափառության ականատեսը լինելով: Քանի որ Ինքը Հայր Աստծուց ստացավ փառքն ու պատիվը, երբ գերազանց փառքից եկավ Նրան այն ձայնը, թե՛ «Սա է Իմ սիրելի Որդին, Ում հավանել եմ»: Եվ երկրնքից եկած այս ձայնը մենք լսեցինք, երբ Նրա հետ էինք՝ սուրբ լեռան վրա (1:16-18)»:

Նկատեցե՛ք այս հաստատվածում Տիրոջ ուսմունքի շարունակականությունը: Նա հենց նոր հայտարարեց Իր մոտալուտ մերժման, չարչարանքների ու մահվան մասին: Նա կոչ արեց Իր աշակերտներին անձնուրացորեն հետևել Իրեն՝ չնայած տառապանքներին ու զոհողություններին: Փաստորեն Նա ասում է. «Հիշե՛ք՝ եթե դուք Ինձ հետ չարչարվում եք, ապա Ինձ հետ էլ պիտի թագավորեք: Իհարկե ետևում փառք է: Վարձատրությունը երբեք չի կարող համեմատվել տառապանքի գնի հետ»:

Ճ. Մարդու Որդու այլակերպությունը (9:28-36)

9:28-29. Ութ օր հետո Հիսուսը վերցրեց Պետրոսին, Հովհաննեսին և Հակոբոսին ու լեռը բարձրացավ՝ աղոթելու: Այս լեռան տեղը հայտնի չէ, չնայած մեծ հավանականությամբ դա բարձր, ձյունածածկ Հերմոն լեռն է: Երբ մեր Տերն աղոթում էր, Նրա տեսքը պայծառակերպվեց: Այս ամենի մեջ գրավիչ ճշմարտությունը այն է, որ աղոթքը փոխում է մարդու դեմքի արտահայտությունը: **Նրա երեսի տեսքը** լուսավորվեց պայծառությամբ, իսկ **Նրա հագուստը** փայլեց շագուցիչ սպիտակությունից: Ինչպես նշվեց վերևում, սա այն փառքի նախապատկերն է, որ Նա ունենալու է Իր գալիք Արքայության մեջ: Երբ Նա այստեղ՝ երկրի վրա էր, Նրա փառքը սովորաբար ծածկված էր Նրա մարմնով: Նա այստեղ ծառայի պես նվաստացած վիճակում էր ապրում, սակայն Հազարամյակի ժամանակ Նրա փառքն ամբողջությամբ է հայտնրվելու: Բոլորը տեսնելու են Քրիստոսին՝ Իր ողջ փայլով ու մեծությամբ:

Այս մասին լավ է ասում Վ. Հ. Ռոջերսը.

«Այլակերպության մեջ մանրանկարի տեսքով հատնված են գալիք Արքայությանը բնորոշ գծերը: Մենք տեսնում ենք Տիրոջը փառք հագած, ոչ թե նվաստացման հանդերձներով: Մեր առջև Մովսեսն է՝ իր փառավոր վիճակում: Նա ներկայացնում է վերածնվածներին, ովքեր Արքայություն մտան մահվան միջոցով: Մենք տեսնում ենք փառքի մեջ պարուրված Եղիային: Նա ներկայացնում է փրկագնվածներին, ովքեր Արքայություն մտան հափշտակության միջոցով: Երեք աշակերտներ կան՝ Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը, ովքեր փառավորված չեն. նրանք Հազարամյա Թագավորության մեջ Իսրայելի ներկայացուցիչներն են մարմնի մեջ: Այնուհետև, լեռան ստորոտին մարդկանց բազմություններ են՝ ազգերի ներկայացուցիչները, որոնք թագավորություն են մտնելու դրա հանդիսավոր հռչակումից հետո»:²⁸

9:30-31. Երկու մարդիկ՝ Մովսեսն ու Ե-

ղիան, Հիսուսի հետ խոսում էին Նրա մահվան (*բառացիորեն՝ երբի*) մասին, որը կատարվելու էր Երուսաղեմում: Նկատեցե՛ք, որ այստեղ Նրա մահվան մասին խոսվում է որպես կատարվածի մասին: Նաև նկատե՛ք, որ մահը ոչ թե գոյության ընդհատումն է, այլ պարզապես մեկնում՝ մի տեղից դեպի մյուսը:

9:32-33. Այս բոլորը կատարվելու պահին աշակերտները քնաթաթախ էին: Եպիսկոպոս Ռեյլն ասում է.

«Ուշադրություն դարձրեք դրան, որ այն նույն աշակերտները, որոնք փառքի հայտնության պահին քնած էին, քնած էին նաև Գեթսեմանի պարտեզում պայքարի ժամանակ: Մարմինն ու արյունը իսկապես փոխվելու անհրաժեշտություն ունեն մինչ երկինք մտնելը: Մեր տկար ու թույլ մարմինները չեն կարող Քրիստոսի հետ զգոն մնալ Նրա փորձության ժամին, ինչպես նաև արթուն լինել Նրա հետ Իր փառքի մեջ: Մեր ֆիզիկական կառուցվածքը պետք է մեծ փոփոխության ենթարկվի նախքան երկնքում հայտնրվելը»:²⁹

Ամբողջությամբ **արթնանալով՝** նրանք **տեսան** Քրիստոսի փառքի վառ փայլը կամ պայծառ շողարձակումը: Ցանկանալով պահպանել այս իրադարձության սրբությունը՝ **Պետրոսն** առաջարկեց **երեք վրան** կամ տաղավարներ կառուցել. **մեկը՝ Հիսուսի համար, մեկը՝ Մովսեսի և մյուսը՝ Եղիայի:** Մակայն նրա գաղափարները հիմնված էին գիտությունից զուրկ նախանձավորության վրա:

9:34-36. Նրանց բոլոր կողմերից շրջապատող **ամպից** հնչեց Աստծո **ձայնը**, որն ասում էր, թե Հիսուսն Աստծո **սիրելի Որդին է**, և պատվիրեց **Նրան լսել:** Երբ այդ **ձայնը** լռեց, Մովսեսն ու Եղիան անհետացան, Հիսուսը միայնակ մնաց: Այդպես պետք է լինի փառքի մեջ. Նա պետք է նախապատիվ լինի ամեն բանում: Նա ոչ մեկի հետ չի կիսելու Իր փառքը:

Աշակերտները լեռան վրայից այնպիսի խոր ակնածանքով հեռացան, որ ոչ մեկի հետ չքննարկեցին այդ իրադարձությունը:

Մ. Գիվահարված պատանու բժշկությունը (9:37-43ա)

9:37-39. Փառքի լեռից Հիսուսն ու աշակերտները **հաջորդ օրը** վերադարձան մարդկային կարիքների հարթակ: Կյանքում հոգևոր հիացման պահեր կան, սակայն Աստված դրանք հավասարակշռում է ամենօրյա ծանր աշխատանքի ու հոգսերի շրջաններով: **Նրան հանդիպող բազմությունից** մի վշտահար հայր դուրս եկավ և աղաչեց Հիսուսին օգնել իր դիվահար որդուն: Դա նրա միակ որդին էր, հետևաբար և իր սրտի ուրախությունը: Ասելու չէ, թե հայրն ինչպես էր տառապում՝ տեսնելով որդուն դիվային ցնցումների ժամանակ: Այդ նույնները հանկարծակի էին սկսվում առանց զգուշացման: Պատանին բղավում էր, իսկ հետո բերանից **փրփուր** հանում: Դևը նահանջում էր միայն ուժեղ պայքարից հետո՝ տղային թողնելով շատ տանջալից վիճակում:

9:40. Վշտացյալ հայրը դիմել էր **աշակերտների** օգնությանը, բայց նրանք անգոր էին գտնվել: Ինչո՞ւ աշակերտները չէին կարողացել օգնել պատանուն: Գուցե նրանք իրենց ծառայության մեջ արհեստավարժ էին դարձել: Գուցե մտածում էին, որ կարող են հույս դնել Հոգով լցված ծառայության վրա, սակայն առանց կանոնավոր հոգևոր վարժությունների: Հնարավոր է՝ նրանք ընդունում էին, որ ամեն բան ինքնըստինքյան կկատարվի:

9:41. Կատարված տեսարանը վշտացրեց Տեր **Հիսուսին**: Առանց որևէ մեկին անունով կոչելու՝ Նա ասաց. «**Ո՛վ անհավատ և մոլորված սերունդ**»: Սա կարող էր վերաբերել աշակերտներին, ժողովրդին, հորը կամ բոլորին միասին վերցրած: Բոլորն էլ այնքան անօգնական էին մարդկային կարիքի առջև՝ չնայած այն հանգամանքին, որ կարող էին դիմել Նրան՝ գորության անսպառ աղբյուրին: **Մինչև ե՞րբ** Նա նրանց **հետ պիտի լիներ և համբերեր**: Այնուհետև Նա ասաց հորը. «**Որդուդ այստե՛ղ բեր**»:

9:42-43ա. Եվ երբ պատանին **մոտենում**

էր Հիսուսին, նա **դևից** բռնվեց, որը բարկությանը գետին խփեց նրան: Սակայն Հիսուսին չվախեցրեց պիղծ ոգու դրսևորած ուժը: Նրան ավելի խոչընդոտում էր մարդկանց անհավատությունը, քան դիվային գորությունը: **Հիսուսը** դուրս հանեց **պիղծ ոգուն և երեխային բժշկելով՝ կրկին հորը հանձնեց**: Եվ բոլոր մարդիկ **զարմացան**: Նրանք ընդունեցին, որ Աստված հրաշք կատարեց: Նրանք այդ հրաշքի միջոցով տեսան **Աստծո մեծափառության** դրսևորումը:

Յ. Մարդու Որդին կանխատեսում է Իր մահն ու հարությունը (9:43բ-45)

9:43բ-44. **Աշակերտները** ենթադրում էին, որ նրանց Ուսուցիչը շարունակելու է հրաշքներ կատարել այնքան ժամանակ, մինչև որ բոլոր ժողովուրդը Նրան՝ որպես Թագավորի ընդունի: Որպեսզի նրանց մըտքերը նման մոլորություններից ազատի, Տերը կրկին նրանց հիշեցրեց, որ **Մարդու Որդին** պետք է **մատնվի մարդկանց ձեռքը**, այսինքն՝ պետք է սպանվի:

9:45. Ինչո՞ւ **չհասկացան այդ** կանխատեսումը: Պարզ այն պատճառով, որ նրանք սայթաքեցին՝ Մեսիայի մասին մտածելով որպես ժողովրդական հերոսի: Ըստ իրենց պատկերացումների՝ Նրա մահը նշանակում էր գործի պարտություն: Նրանց անձնական հույսերն այնքան մեծ էին, որ ուրիշ բան չէին կարողանում ընկալել: Ոչ թե Աստված էր նրանցից ծածկում այս ճշմարտությունը, այլ նրանք վճռականապես մերժում էին դրան հավատալ: Նույնիսկ **վախենում էին** դրա մասին **Նրան հարցնել**՝ երկյուղ կրելով, որ իրենց վախերը կհաստատվեն:

Ն. Ճշմարիտ մեծությունը Թագավորության մեջ (9:46-48)

9:46. Աշակերտները ոչ միայն հույս ունեին, թե փառավոր Թագավորությունը շուտով հաստատվելու է, այլև հաշվարկներ ունեին այդ Թագավորության նշանակալից տեղերի վերաբերյալ: Նրանք արդեն իրար մեջ հարցրել էին, **թե իրենցից ո՞վ է լինելու մեծը**:

9:47-48. Իմանալով նրանց հուզող հարցի մասին՝ **Հիսուսը** վերցրեց **մի երեխայի** և Իր առջև կանգնեցնելով՝ բացատրեց, որ յուրաքանչյուր որ, ով ընդունի **երեխային** Իր **անունով**, ընդունում է Իրեն: Առաջին հայացքից սա ոչ մի ձևով կապ չունի այն հարցի հետ, թե աշակերտներից ով է մեծը: Մակայն կապը, թեև ոչ ակնառու, երևում է. ճշմարիտ մեծությունը փոքրերի, անօգնականների, աշխարհի կողմից անտեսվածների նկատմամբ սիրառատ հոգատարության մեջ է: Այդ իսկ պատճառով **«ով ձեր մեջ փոքրագույնն է, նա մեծ կլինի»** խոսքերով Հիսուսը մատնացույց էր անում նրանց, ովքեր կխոնարհեցնեն իրենց՝ հաղորդակցվելով այն հավատացյալների հետ, ովքեր ոչնչով աչքի չեն ընկնում, աննշան ու արհամարհված են:

Մատթ. 18:14-ում Տերն ասաց, որ Երկնային Արքայության մեջ մեծ նա կլինի, ով իրեն խոնարհեցնում է փոքրիկ երեխայի պես: Այստեղ՝ Ղուկասի մոտ, ասվում է Աստծո զավակների շրջանակում փոքրագույններից մեկը լինելու մասին: Թե՛ այս և թե՛ մյուս դեպքում խոսքն այն մասին է, որ Փրկչի պես խոնարհ լինենք:

Ծ. Մարդու Որդին արգելում է աղանդավորությունը (9:49-50)

9:49. Այս դեպքն այն վարքագծի օրինակն է, որից Տերը աշակերտներին պատվիրեց խույս տալ: Նրանք հանդիպեցին **մեկին, ով դևեր էր հանում** Հիսուսի **անունով**: Լավագույն պատճառ չունենալով՝ նրանք **արգելեցին նրան** այն հիմքով, որ նա իրենց հետևորդը **չէր**: Այլ խոսքով, նրանք հրաժարվեցին Նրա անունով Աստծո զավակին ընդունելուց: Նրանք դրսևորեցին աղանդավորություն և նեղմտություն, չնայած որ պետք է ուրախանային, որ մարդուց դևերը վտարվել էին: Նրանք երբեք չպետք է նախանձեին մարդուն կամ մարդկանց խմբին, ովքեր ավելի շատ դևեր կարող էին հանել, քան իրենք: Ուստի, այդ դեպքում յուրաքանչյուր աշակերտ պետք է իրեն պահպանի այս բացառիկության, այսինքն՝ հոգևոր գործության ու հեղինակության վրա մենաշնորհ ունենալու ցանկությունից:

9:50. **Հիսուսը նրանց ասաց. «Մի՛ արգելեք նրան, որովհետև ով որ մեզ հակառակ չէ՝ մեզ հետ է»:** Ինչ վերաբերում է Քրիստոսի Անձին ու գործին, ապա այստեղ չեզոք վիճակ չի կարող լինել: Եթե մարդիկ *կողմ* չեն Քրիստոսին, ապա նրանք *դեմ* են Նրան: Բայց երբ խոսքը քրիստոնեական ծառայության մասին է, ապա Ա. Լ. Վիլյամսն ասում է.

«Անկեղծ քրիստոնյաները պետք է հիշեն, որ երբ իրենց խմբից չեղողները որևէ բան են անում Քրիստոսի անունով, ընդհանրապես դա Նրա գործն առաջ է մղում... Ուսուցչի պատասխանը լայն և հեռուն գնացող ճշմարտություն է բովանդակում: Ոչ մի երկրավոր ընկերակցություն, ինչքան էլ սուրբ լինի, չի կարող հավակնել աստվածային գործությանը, որը անբաժանելիորեն կապված է Նրա անունը ճշմարտությամբ ու հավատով օգտագործելու հետ»:³⁰

VII. ՄԱՐԴՈՒ ՈՐԴՈՒ ԴԵՄ ԱՃՈՂ ԴԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (9:51-11:54)

Ա. Մամարիան մերժում է Մարդու Որդուն (9:51-56)

9:51. Արդեն մոտենում էր Հիսուսի երկինք համբարձվելու **ժամանակը**: Նա լավ գիտեր այդ մասին: Նա նաև գիտեր, որ դրա ճանապարհին էր կանգնած խաչը, ուստի վճռականորեն շարժվեց դեպի **Երուսաղեմ**՝ ընդառաջ բոլոր սպասվող դեպքերին:

9:52-53. Նրա ճանապարհին ընկած սամարացիների **գյուղերից մեկը** չիյուրընկալեց Աստծո Որդուն: Մարդկանց հայտնի էր, որ Նա դեպի **Երուսաղեմ** է գնում, և դա բավարար պատճառ էր, որպեսզի որքան հնարավոր էր խոչընդոտեին Նրան: Չէ՞ որ սամարացիների ու հրեաների միջև ուժեղ ստեղծություն կար: Աղանդավորության, չհամբերելու, մասնատման և ազգային հպարտության հոգին նրանց անբարյացակամ էր դարձրել փառքի Տիրոջն **ընդունելու** համար:

9:54-56. Հակորոսն ու Հովհաննեսն այնքան զայրացան այդպիսի անհյուրընկալությունից, որ առաջարկեցին **երկնքից կրակ** կանչել անարգողներին կործանելու համար: Հիսուսը ճիշտ այդ պահին **սաստեց նրանց**: Նա չէր եկել **մարդկանց կյանքերը կործանելու, այլ փրկելու**: Դա Տիրոջ ընդունելի տարին էր, ոչ թե Աստծո վրեժխընդրության օրը: Աշակերտները պետք է որ տարբերվեին շնորհով, ոչ թե ռիսակալությամբ:

Բ. Աշակերտության խոչընդոտները (9:57-62)

9:57. Այս համարներում հանդիպում ենք երեք մարդկանց, ովքեր ուզում էին աշակերտ դառնալ: Նրանք ներկայացնում են աշակերտության ճանապարհի երեք հիմնական խոչընդոտները: Առաջին մարդը լիովին վստահ էր, որ ուզում է Հիսուսի **հետևից գնալ** ամենուր և ամեն տեղ: Նա չապասեց, որ իրեն կանչեն, այլ իր ներքին մղումով ինքն իրեն առաջարկեց: Նա իր վրա վստահ էր, չափազանց մեծ փափագ ուներ ու գնի մասին չէր մտածում: Նա իր ասածի իսկական իմաստը չգիտեր:

9:58. Սկզբում թվում է, թե Հիսուսի պատասխանը կապ չունի մարդու առաջարկի հետ: Բայց իրականում այնտեղ սերտ կապ կա: **Հիսուսը** փաստորեն ասաց. «Դու գիտե՞ս, թե իրականում ի՞նչ է նշանակում հետևել Ինձ: Դա նշանակում է, որ պետք է թողնես կյանքի հարմարություններն ու հարմարավետությունները: Ես տուն չունեմ, որը կարող եմ Իմը կոչել: Այս Երկիրն Ինձ հանգիստ չի տալիս: **Ազվեսները և երկնքի թռչուններն** իրենց հարմարավետությունն ու անվտանգությունն ավելի ունեն, քան Ես: Ուզո՞ւմ ես Ինձ հետևել, նույնիսկ եթե դա նշանակի հրաժարվել այն բանից, ինչը մարդկանց մեծամասնությունը դիտարկում է որպես իրենց անքակտելի իրավունք»: Երբ կարդում ենք, որ **Մարդու Որդին գլուխը դնելու տեղ չունի**, խղճում ենք Նրան: Մի մեկնաբան նշում է. «Նա մեր խղճահարության կարիքը չունի: Խըղճացե՛ք ձեզ, եթե դուք տուն ունեք, որը ես

է պահում ձեզ այն ժամանակ, երբ Քրիստոսն ուզում է, որ գնաք աշխարհի լայնարձակ վայրերը»: Մենք այլևս չենք լսում այդ մարդու մասին և միայն կարող ենք ենթադրել, որ նա չցանկացավ հրաժարվել կյանքի առաջնային հարմարություններից, որպեսզի հետևեր Աստծո Որդուն:

9:59. Երկրորդ մարդը լսեց Քրիստոսի՝ Իրեն **հետևելու** հրավերը: Նա ուզում էր դա ընդունել, սակայն նախ ուզում էր **գնալ ու թաղել** իր հորը: Ուշադրություն դարձրեք նրա խոսքերին. «**Տե՛ր, թույլ տո՛ւր ինձ, որ նախ գնամ**»: Այլ խոսքով. «**Տե՛ր... նախ ինձ...**»: Նա Հիսուսին որպես **Տիրոջ** էր դիմում, բայց գործնականում սեփական ցանկություններն ու շահերն էր առաջ տանում: «Տեր» և «նախ ինձ» բառերն ամբողջությամբ իրար հակառակ են: Մենք պետք է կա՛մ մեկը, կա՛մ մյուսն ընտրենք: Արդյոք **հայրն** արդեն մեռա՞ծ էր, թե՛ որդին պատրաստվում էր տանը սպասելու նրա մահվանը: Դա ոչինչ չէր փոխելու. նա թույլ տվեց, որ մի ուրիշ բան կարևոր լինի, քան Քրիստոսի հրավերը: Բոլորովին օրինավոր է և պետք է հարգանք մատուցել մեռնողին կամ մահամերձ հորը, բայց երբ թույլ է տրվում, որ ինչ-որ մեկը կամ ինչ-որ մի բան մրցակցի Քրիստոսի հետ, ապա դա որոշակիորեն դառնում է մեղք: Այս մարդը մի ուրիշ բան ուներ անելու, գուցե աշխատանք կամ զբաղմունք, որ շեղում էր նրան անձնվիրաբար աշակերտելու ճանապարհից:

9:60. Տերը հանդիմանեց նրան երկակիության համար՝ ասելով. «**Թող մեռելները թաղեն իրենց մեռելներին, իսկ դու գնա՛ և Աստծո թագավորությունը քարոզիր**»: *Հոգևորապես* մեռածները կարող են *Ֆիզիկապես* մեռածներին թաղել, սակայն նրանք չեն կարող Ավետարանը քարոզել: Աշակերտները չպետք է նախապատվություն տան այն գործերին, որոնք չփրկված մարդիկ էլ կարող են լավ կատարել: Հավատացյալը պետք է ճշգրտորեն իմանա իր անփոխարինելիության մասին, ինչ վերաբերում է իր կյանքի գլխավոր նպատակին: Երկրի վրա նրա գլխավոր

նպատակը Քրիստոսի գործն առաջ տանելն է:

9:61. Երրորդ հնարավոր աշակերտը նման էր առաջինին այն բանով, որ ինքն իրեն առաջադրեց **հետևել** Քրիստոսին: Նա նման էր երկրորդին այն բանով, որ իրար հակասող խոսքեր ասաց. **«Տե՛ր... նախ ինձ»:** Նա ուզեց **նախ** հրաժեշտ տալ իր ընտանիքին: Ինքնըստինքյան այս խընդրանքը տրամաբանական ու թույլատրելի էր, սակայն նույնիսկ կյանքի այս հասարակ բարեկրթությունները սխալ կլինեն, եթե դրանք անմիջական ու կատարյալ հնազանդությունից առաջ դնենք:

9:62. Հիսուսն ասաց նրան, որ **իր ձեռքն** աշակերտության **մաճի վրա դնողը** չպետք է **ետ** նայի,³¹ հակառակ դեպքում նա **Աստծո արքայությանը հարմար չէ:** Քրիստոսի հետևորդները չեն կարող կես սրտով աշխատողներ լինել կամ սենտիմենտալ մոտեցում ունենալ:

Ընտանիքի կամ բարեկամների մասին հոգալը թեև օրինական է, սակայն չպետք է մեզ շեղի Տիրոջը լիովին ընծայվելուց: **«Աստծո արքայությանը հարմար չէ»** արտահայտությունը վերաբերում է ոչ թե փրկությանը, այլ ծառայությանը: Այստեղ հարցը Թագավորություն *մտնելու* մասին չէ, այլ նրա մեջ մտնելուց հետո Թագավորության մեջ *ծառայելու*: Մենք Թագավորություն ենք մտնում Տեր Հիսուսի Անձի ու կատարած գործի շնորհիվ: Այն մերն է դառնում Նրա վրա ունեցած հավատի շնորհիվ:

Այսպիսով, մեր առջև աշակերտության ճանապարհին կա այս մարդկանց օրինակներով ցուցադրված երեք էական խոչընդոտ.

1. նյութական հարմարավետություններ,
2. աշխատանք կամ զբաղմունք,
3. ընտանիք ու ընկերներ:

Քրիստոսը պետք է սրտերում թագավորի՝ առանց որևէ մրցակից ունենալու: Մյուս բոլոր սերերն ու մյուս բոլոր հավատարմությունները պետք է երկրորդական լինեն:

Գ. Յոթանասուն աշակերտներն ուղարկվում են ծառայության (10:1-16)

10:1-12. Ավետարաններում սա միակ արձանագրությունն է այն մասին, թե ինչպես Տերը **յոթանասուն**³² աշակերտներին ուղարկեց ծառայության: Այն շատ մոտիկից հիշեցնում է Մատթեոսի Ավետարանի տասերորդ գլխում Տասներկուսին ծառայության ուղարկելու ժամանակ ասված հրաժեշտի խոսքերը: Սակայն ըստ Մատթեոսի՝ աշակերտները ուղարկվեցին հյուսիսային շրջաններ, մինչ յոթանասունը՝ հարավ, այն երթուղով, որով Տերը գնաց Երուսաղեմ: Ըստ երևույթին, այս առաքելությունը պետք է պատրաստեր Տիրոջ ճանապարհը՝ Փիլեպպեի Կեսարիայից ճանապարհորդելու հյուսիս՝ Գալիլիայով ու Սամարիայով, Հորդանանով, դեպի հարավ՝ Բերիայով, իսկ հետո Հորդանանով ետ՝ Երուսաղեմ:

Չնայած յոթանասունի ծառայությունն ու լիազորությունները լոկ ժամանակավոր էին, սակայն Տիրոջ կողմից նրանց տրված խրատները շատ կենսական սկզբունքներ են պարունակում, որոնք քրիստոնյաների համար կիրառելի են բոլոր դարերում:

Այդ սկզբունքներից մի քանիսը կարելի է ընդհանրացնել հետևյալ ձևով.

1. Նա նրանց **երկու-երկու** ուղարկեց (հ. 1): Սա ենթադրում է վկայության իրավասություն: «... Երկու կամ երեք վկաների կողմից ամեն բան պիտի հաստատվի» (2 Կոր. 13:1):
2. Տիրոջը ծառայողը պետք է անդադար **աղոթի**, որ **Նա մշակներ ուղարկի Իր հնձի համար** (հ. 2): Միշտ էլ կարիքն ավելին է, քան մշակների առկայությունը: Աղոթելով **մշակների համար**՝ մենք, ակնհայտ է, ինքներս պետք է գնալու փափագ ունենանք: Նկատե՛ք. **խնդրեցե՛ք** (հ. 2), **գնացե՛ք** (հ. 3):
3. Հիսուսի աշակերտներն ուղարկվեցին թշնամաբար տրամադրված շրջապատներ (հ. 3): Արտաքինից նրանք նման էին անպաշտպան **գառների՝ գայլերի մեջ:** Նրանք չէին կարող թագավորական

պատիվներ ակնկալել աշխարհից, ավելի շուտ նրանց սպասվում էր հալածանք և նույնիսկ մահ:

4. Չպետք է առաջնորդվել անձնական հարմարությունների պատկերացումներով (հ. 4ա): **«Չվերցնե՛ք ձեզ հետ ո՛չ քսակ, ո՛չ պարկ, ո՛չ կոշիկներ»:** **Քսակը** մատնանշում է ֆինանսական պահուստներ: **Պարկը** ենթադրում է պահեստային մթերքը: **Կոշիկները** կարող են վերաբերել կա՛մ պահեստային մի զույգ կոշիկներին, կա՛մ էլ յուրահատուկ հարմարությամբ կոշիկներին: Երեքն էլ խոսում են աղքատության մասին, որը, ոչինչ չունենալով, **«և դեռ ամեն ինչ ունի»** և հարստացնում է շատերին (2 Կոր. 6:10):
5. **«Եվ ճանապարհին ոչ ոքի բարև չտա՛ք»** (հ. 4բ): Քրիստոսին ծառայողները չպետք է ժամանակ վատնեն երկարատև, արարողակարգային ողջույններին, ինչպիսիք ընդունված էին Արեվելքում: Նրանք պետք է քաղաքավարի ու բարի լինեն, և այդ ընթացքում իրենց ժամանակն օգտագործեն Ավետարանի փառավոր հռչակման համար, ոչ թե անօգուտ զրույցների: Ժամանակ չկա ոչ անհրաժեշտ ձգձգումների համար:
6. Նրանք պետք է հյուրընկալություն ընդունեին այնտեղ, որտեղ իրենց կառաջարկեին (հ. 5-6): Եթե նրանց սկզբնական ողջույնը տանտերը բարեհաճությամբ ընդունեց, նա **խաղաղության որդի** էր: Այդ մարդուն բնորոշ է **խաղաղությունը**, և նա ընդունում է խաղաղության մասին լուրը: Եթե աշակերտներին մերժեին, նրանք չպետք է հուսահատվեին. նրանց խաղաղությունը **կվերադառնա** իրենց, այսինքն՝ նրանք ոչինչ չեն կորցրել և չեն վատնել, ուրիշ մարդիկ կընդունեն այն:
7. Աշակերտները պետք է **նույն տանը մնային**, որը նրանց ծածկ էր առաջարկում (հ. 7): **Տնից տուն** տեղափոխվելը կարող էր նրանց բնութագրել այնպիսի մարդկանց պես, ովքեր հետամուտ են

ճոխ կացարանի, մինչդեռ պետք է պարզ ապրել և ամեն բանի համար շնորհակալ լինել:

8. Նրանք, առանց տատանումի, պետք է ընդունեին իրենց առաջարկված կերակուրն ու խմիչքը (հ. 7): Որպես Տիրոջ ծառաներ՝ նրանք արժանի են ծախսերը հոգալուն:
9. Քաղաքներն ու ավանները, ինչպես և անհատները, Տիրոջ հանդեպ կա՛մ կողմ, կա՛մ հակառակ դիրքն են զբաղեցնում (հ. 8-9): Եթե բնակավայրն ընդունեց Խոսքը, ապա աշակերտները պետք է այնտեղ քարոզեին, հյուրընկալվեին և մարդկանց տանեին Ավետարանի օրհնությունը: Քրիստոսին ծառայողները պետք է **ուստեն** այն, **ինչ կղնեն** նրանց **առջև՝** առանց ուստելիքի նկատմամբ դժվարահաճություն դրսեվորելու ու առանց տանտիրոջն անհարմարություն պատճառելու: Չէ՞ որ կերակուրը չէ, որ կարևոր է նրանց կյանքում: Տիրոջ ուղարկածներին ընդունող քաղաքներում նրանք պետք է բժշկեին նրանց հիվանդներին: Նրանց նույնպես **մտոեցել է** Աստծո Արքայությունը (հ. 9):
10. Քաղաքը կարող է մերժել Ավետարանը և զրկվել այն կրկին լսելու արտոնությունից (հ. 10-12): Կգա մի ժամանակ, երբ Աստված Իր Խոսքը վերջին անգամ կհնչեցնի և այլևս ուրիշ առիթ չի լինի: Մարդիկ չպետք է կատակեն Ավետարանի հետ, որովհետև կարող են հավիտյան զրկվել նրանից: Նա, ով մերժում է լույսը, կմերժվի լույսի մեջ լինելուց: Այն քաղաքներն ու ավանները, որոնք առանձնաշնորհում ունեն լսելու Բարի Լուրը և մերժում են այն, ավելի խստությամբ են դատվելու, քան **Սողոմ** քաղաքը: Որքան մեծ է արտոնությունը, այնքան մեծ է պատասխանատվությունը:

10:13-14. Այս խոսքերն ասելիս Հիսուսը հիշեց Գալիլիայի երեք քաղաքների մասին, որոնց ավելի բարձր արտոնություններ էին տրված, քան որևէ այլ քաղաքի: Նրանք

տեսան, թե Նա ինչպես էր հրաշքներ կատարում իրենց փողոցներում: Նրանք լսեցին Նրա բարեհաճ վարդապետությունը: Եվ այդ բոլորից հետո լրիվ մերժեցին Նրան: Եթե **Քորազինում** և **Բեթսայիդայում** Նրա կատարած հրաշքները **Տյուրոսում** և **Սիդոնում եղած լինեին**, այդ մերձծովյան քաղաքները **վաղուց... ապաշխարած կլինեին**: Քանի որ Գալիլիայի քաղաքները, Հիսուսի գործերը տեսնելով, մնացին անտարբեր, նրանց դատաստանն ավելի խիստ է լինելու, քան **Տյուրոսինը** և **Սիդոնինը**: Պատմական փաստերը վկայում են, որ Քորազինն ու Բեթսայիդան այնքան անխնա են կործանվել, որ այսօր անհնար է ճշգրիտ որոշել նրանց գտնվելու վայրը:

10:15. Նազարեթից հեռանալուց հետո **Կափառնայումը** Հիսուսի համար հարազատ քաղաք դարձավ: Այս քաղաքը **բարձրացավ մինչև երկինք՝** ըստ իրեն տրված արտոնությունների: Սակայն նա արհամարհեց իր ամենահայտնի Քաղաքացուն և բաց թողեց իր հնարավորության օրը: Այդ պատճառով նա **մինչև դժոխք պիտի իջնի** դատաստանի օրը:

10:16. Հիսուսը յոթանասունին տված հրահանգներն ավարտեց՝ հայտարարելով, որ նրանք Իր դեսպաններն են: Նրանց մերժել, նշանակում է Իրեն մերժել, իսկ Իրեն մերժել, նշանակում է Հայր Աստծուն մերժել:

Ռեյլը մեկնաբանում է.

«Նոր Կտակարանում ավելի զորեղ խոսքեր չկան, քան սրանք, որոնք վերաբերում են հավատարիմ ծառայի աշխատանքի արժանապատվությանն ու իր խոսքերը լսելուց հրաժարվող մարդկանց հանցանքին: Պետք է հիշել, որ այս խոսքերը հասցեագրված չեն տասներկու առաքյալներին, այլ յոթանասուն աշակերտներին, որոնց անուններն ու հետագա պատմությունը մեզ ընդհանրապես հայտնի չեն: Սքոթը նշում է. «Մերժել դեսպանին կամ նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցույց տալ նշանակում է հարգանքի չարժանացնել այն իշխանին, ով նրան հանձնարարությ-

յուն է տվել, և ում նա ներկայացնում է: Առաքյալներն ու յոթանասուն աշակերտները Քրիստոսի կողմից ուղարկվածներն ու Նրա ներկայացուցիչներն են, նրանց մերժողներն ու արհամարհողները փաստորեն մերժեցին ու արհամարհեցին Նրան»:³³

Գ. Յոթանասունի վերադարձը (10:17-24)

10:17-18. Երբ **յոթանասուն** աշակերտները **վերադարձան** իրենց առաքելությունից, նրանք խանդավառ էին, որ նույնիսկ **ղևերն էին հնազանդվում** իրենց: Հիսուսի պատասխանը կարելի է երկակի հասկանալ: Առաջին՝ Նրա խոսքերը կարող էին նշանակել, որ նրանց հաջողության մեջ Նա տեսավ սատանայի՝ երկնքից վերջնականապես վայր ընկնելու գրավականը: Չեմհտոնը, Փոսսեթը և Բռաունը այդպես են վերածնակերպում Նրա խոսքերը.

«Ես ձեզ հետևեցի ձեր առաքելության ժամանակ և դիտեցի դրա հաղթությունները: Մինչ ձեզ ապեցնում էր, որ դևերն Իմ անունով ձեզ հնազանդվում են, Իմ առջև ավելի մեծ տեսարան բացվեց, հանկարծակի կայծակի նման սատանան երկրնքից վայր ընկավ երկրի վրա»:

Սատանայի այս անկումն ապագայում է: Նա դեռ պետք է երկնքից վտարվի Միքայելի ու նրա հրեշտակների կողմից (Հայտ. 12:7-9): Դա տեղի կունենա Մեծ Նեղության ժամանակ՝ մինչ Քրիստոսի երկրի վրա փառավոր թագավորելը:

Քրիստոսի խոսքերի երկրորդ մեկնաբանությունը հավանաբար հպարտության դեմ զգուշացումն է: Նա կարծես ասում է. «Այո՛, դուք լի եք ցնծությամբ, որովհետև նույնիսկ դևերն են ձեզ հնազանդվում: Սակայն հիշե՛ք. հպարտությունը նախամեղքն է: Հպարտությունն էր, որ Արուսյակին առաջնորդեց երկնքից վայր ընկնելու և վտարվելու: Չգուշացե՛ք, որպեսզի դուք խույս տաք այդպիսի վտանգից»:

10:19. Տերն Իր աշակերտներին **իշխանություն** տվեց չար գործությունների դեմ: Իրենց առաքելության ընթացքում նրանց շնորհված էր վնասներից պաշտպանությ-

յուն: Սա վերաբերում է Աստծո բոլոր ծառաներին. նրանք պաշտպանված են:

10:20. Սակայն նրանք չպետք է **ուրախանան ոգիների** վրա ունեցած իրենց իշխանությամբ, այլ ավելի շուտ պետք է **ուրախանան, որ** իրենք փրկված են: Սա միակ արձանագրված դեպքն է, երբ Տերն Իր աշակերտներին պատվիրեց չուրախանալ: Քրիստոնեական ծառայության մեջ հաջողությունն իր մեջ նուրբ վտանգ է պարունակում, մինչդեռ այն փաստը, որ մեր **անունները գրված են երկնքում**, մեզ հիշեցնում է Աստծո և Նրա Որդու առջև մեր անսահման պարտքի մասին: Կարելի է անվախորեն ուրախանալ շնորհով փրկությունն ստացած լինելու համար:

10:21. Մարդկանց մեծամասնության կողմից մերժված **Հիսուսը** նայեց Իր համեստ հետևորդներին և **Հոգով ուրախացավ** գոհանալով **Հորից** Նրա անչափելի իմաստության համար: Յոթանասուն աշակերտներն աշխարհի չափազանց **իմաստուններն ու գիտունները** չէին: Նրանք ո՛չ մտավորականներ էին և ո՛չ էլ գիտնականներ: Նրանք պարզապես **մանուկներ էին**, սակայն հավատ, նվիրվածություն և անառարկելի հնազանդություն ունեցող մանուկներ: Մտավորականները չափից ավելի իմաստուն էին, չափից ավելի գիտուն, չափից ավելի խելացի՝ սեփական բարիքը հասկանալու համար: Հպարտությունը նրանց կուրացրել էր Աստծո սիրելի Որդու թանկարժեք ճշմարտության նկատմամբ: Աստված կարող է ավելի արդյունավետ գործել հենց մանուկների միջոցով: Մեր Տերն ուրախ էր բոլոր նրանց համար, ում Աստված տվել էր Իրեն: Նա ուրախացավ յոթանասուն աշակերտների սկզբնական հաջողությամբ, որը կանխագուշակեց սատանայի գալիք անկումը:

10:22. **Ամեն բան** երկնքում, երկրի վրա և երկրի տակ **տրված էր** Որդուն Իր **Հորից**: Աստված ամբողջ տիեզերքը հանձնել էր Իր Որդու իշխանությանը: **Ոչ ոք չգիտի, թե ով է Որդին՝ բացի Հորից**: Մարդեղացման հետ կապված խորհուրդ կա, որի մեջ ոչ ոք չի կարող խորամուխ լինել՝

բացի Հորից: Այն, թե ինչպես Աստված կարող է մարդանալ և բնակվել մարդկային մարմնում, ստեղծվածների հասկացողությունից վեր է: **Ոչ ոք չգիտի, թե ո՞վ է Հայրը՝ բացի Որդուց, և նրանից, ում Որդին կկամենա հայտնել**: Աստված նաև վեր է մարդկային հասկացողությունից: Որդին Նրան կատարելապես գիտի, և հենց Որդին Հորը հայտնեց Նրան հավատացող տկարներին, աննշաններին ու արհամարհվածներին (1 Կոր. 1:26-29): Որդուն տեսնողները տեսել են Հորը: Հոր ծոցում գըտնըվող Միածին Որդին լրիվ հայտնեց Նրան (Հովհ. 1:18):

Քելին ասում է. «Որդին իսկապես հայտնեց Հորը, սակայն մարդկային միտքը մոլորվում է, երբ փորձում է բացատրել Քրիստոսի Անձնավորության փառահեղության անլուծելի գաղտնիքը»:

10:23-24. Տերն Իր **աշակերտներին առանձին** ասաց, որ նրանք եզակի ուրախության օրերում են ապրում: ՀԿ-ի շատ **մարգարեներ և թագավորներ փափագել են տեսնել Մեսիայի օրերը, բայց չեն տեսել**: Տեր Հիսուսն այստեղ ասում է, որ Ինքը Նա է՝ Մեսիան, Ում ապաստում էին հինկտակարանյան մարգարեները: Աշակերտներին Իսրայելի հույսի հրաշքները տեսնելու և ուսմունքը լսելու առանձնաշնորհում էր տրված:

Ե. Օրենագետն ու բարի սամարացին (10:25-37)

10:25. **Օրենքի ուսուցիչը՝** Մովսեսի օրենքի փորձագետը, ըստ երևույթին, անկեղծ չէր իր հարցադրման մեջ: Նա ջանում էր Փրկչին խոսքերի մեջ բռնելով՝ փորձության ենթարկել: Հավանաբար նա կարծում էր, որ Տերը կիրաժարվի Օրենքից: Նրա համար Հիսուսն ընդամենը **Վարդապետ** էր, իսկ **հավիտենական կյանքը՝** այնպիսի մի բան, որին կարելի է արժանանալ կամ վաստակել:

10:26-28. Տեր Հիսուսն այս բոլորը հաշվի էր առել Իր պատասխանում: Եթե Օրենքի ուսուցիչը խոնարհ ու գղջացող լիներ, ապա Փրկիչը նրան կպատասխաներ մեծ

ամմիջականությանը: Իսկ այս պարագաների ամկայության դեպքում Հիսուսը նրա ուշադրությունը ուղղորդեց **Օրենքի** վրա: **Օրենքը** ի՞նչ էր պահանջում: Այն պահանջում էր, որ մարդն ամեն բանից առավել **սիրի Տեր Աստծուն** և իր **դրացուն՝ իր անձի պես**: Հիսուսը նրան ասաց, որ **այդպես անելով՝ նա կապրի**: Առաջին հայացքից կարող է թվալ, որ Տերը Օրենքը պահպանելու միջոցով փրկության մասին էր սովորեցնում: Սակայն այդպես չէ: Աստված երբեք չի նախատեսել, որ որևէ մեկը երբևէ Օրենքի միջոցով փրկվի: Տասը պատվիրանները տրվեցին մեղսունակ մարդկանց: Օրենքի նպատակը մեղքից փրկելը չէր, այլ մեղքի գիտակցությանն առաջնորդելն էր: Օրենքի գործառույթն այն է, որ մարդուն ցույց տա իր մեղավորությունը:

Մեղավոր մարդը չի կարող սիրել Աստծուն **ամբողջ սրտով** և իր **դրացուն** էլ՝ իր **անձի պես**: Եթե նա կարողանար դա անել ծնվելուց մինչև մեռնելը, ապա փրկության կարիք չէր ունենա: Նա կործանված չէր լինի: Բայց նույնիսկ այդ դեպքում էլ նրա վարձատրությունը պետք է լիներ երկրի վրայի երկար կյանքը, ոչ թե երկնային հավիտենական կյանքը: Նրա կյանքը կշարունակվեր այնքան ժամանակ, որքան որ կապրեր առանց մեղքի: Հավիտենական կյանքը նախատեսված է միայն այն մեղավորների համար, ովքեր ընդունեցին իրենց կործանված վիճակը և փրկվեցին Աստծո շնորհով:

Այսպիսով, Քրիստոսի «**Այդպես արա ու կապրես**» հայտարարությունը պարզ ենթադրություն էր: Եթե Օրենքից կատարված Տիրոջ մեջբերումն Օրենքի ուսուցչի վրա ցանկալի ազդեցություն ունենար, ապա նա կասեր. «Եթե դա է Աստված ուզում, ապա ես կործանված, անօգնական և անհույս եմ: Ես ինձ ներկայացնում եմ Քո սիրուն ու ողորմությանը: Փրկի՛ր ինձ Քո շնորհով»:

10:29. Դրա փոխարեն Նա ձգտում էր **իրեն արդարացնել**: Ինչո՞ւ նա այդպես արեց: Ոչ ոք նրան չէր մեղադրում: Նա

գիտակցեց իր հանցանքը, և նրա սիրտը հպարտորեն ըմբոստացավ, որպեսզի հակառակվի: Նա հարցրեց. «**Իսկ ո՞վ է իմ դրացին**»: Նրա կողմից դա խույս տալու փորձ էր:

10:30-35. Ի պատասխան այդ հարցին՝ Տեր **Հիսուսը** պատմեց բարի սամարացու մասին պատմությունը: Այս պատմության մանրամասները բոլորին ծանոթ են: Կողոպտման զոհ դարձած անձը, հավանական է, որ հրեա էր, **կիսամեռ պառկած էր Երիթովի** ճանապարհին: Հրեա **քահանան**, իսկ հետո **ղևտացին** հրաժարվեցին օգնություն ցույց տալուց. հավանաբար մտածեցին, թե դա ծուղակ է, կամ վախեցան, որ իրենց էլ կարող են թալանել, եթե հապաղեն: Օգնության եկավ ատելի **սամարացին**: Առաջին օգնությունը ցույց տալով՝ նա տուժածին տեղափոխեց **իջևանատուն և նրան հոգ տարավ**: Սամարացու համար դրացին կարիքի մեջ գտնվող հրեան էր:

10:36-37. Այնուհետև Փրկիչը մի անխուսափելի հարց տվեց: Այդ **երեքից ո՞րն էր** անօգնական մարդու **դրացին**: Իհարկե, նրան ողորմություն ցույց տվողը: Այո՛, իհարկե: Այդ դեպքում Օրենքի ուսուցիչը պետք է գնար ու այդպես աներ: «Եթե սամարացին, ողորմություն հայտնելով կարողացավ ապացուցել հրեային, որ նա իր ճշմարիտ դրացին է, ապա պետք է ընդունել, որ բոլոր մարդիկ էլ դրացիներ են»:³⁴

Մեզ համար դժվար չէ քահանայի ու ղևտացու մեջ տեսնել մեռած մեղավորին օգնություն ցույց տալու Օրենքի անկարողության պատկերը: Օրենքը պատվիրում էր. «Միրի՛ր քո դրացուն քո անձի պես», բայց հնազանդվելու համար գորություն չէր տալիս: Նույնպես և դժվար չէ բարի սամարացու մեջ տեսնել Տեր Հիսուսին, Ով եկավ, որտեղ մենք էինք, փրկեց մեզ մեր մեղքերից և հոգաց մեր մասին երկրից մինչև երկինք ձգվող ողջ ճանապարհի ու ամբողջ հավիտենականության համար: Քահանաներն ու ղևտացիները կարող են մեզ հիասթափեցնել, բայց Բարի սամարացին երբեք չի հիասթափեցնի:

Բարի սամարացու մասին պատմությունն

անսպասելի շրջադարձ կատարեց: Այն սկսվեց. «Ո՞վ է իմ դրացին» հարցի պատասխանով, բայց ավարտվեց. «Ինչպե՞ս կարող ես ապացուցել, որ դու նրա դրացին ես» հարցադրումով:

2. Մարիամն ու Մարթան (10:38-42)

10:38-41. Այնուհետև Տերն Իր ուշադրությունը դարձնում է Աստծո Խոսքի և աղոթքի՝ որպես օրինության երկու մեծ միջոցների վրա (10:38-11:54):

Մարիամը նստեց Հիսուսի ոտքերի մոտ ու սկսեց լսել Նրա խոսքերը, իսկ Մարթան խիստ զբաղված էր արքայական Հյուրին հյուրասիրելու պատրաստությամբ: Մարթան ուզում էր, որ **Տերը** շտապեցներ **Մարիամին**, որպեսզի նա օգներ իրեն, սակայն Հիսուսը նրբորեն հանդիմանեց **Մարթային** նրա նեղսրտության համար:

10:42. Մեր Տերն ավելի բարձր է գնահատում մեր սերը, քան մեր ծառայությունը: Ծառայությունը կարող է ուղեկցվել հպարտությամբ ու սեփական կարևորությամբ: Մեզ **մեկ բան է պետք**. Նրա հետ հաղորդակցվել: Դա այն **բարի բաժինն է, որը չի վերցվում**: «Տերն ուզում է մեզ վերածել մարթաներից մարիամների, - նկատում է Ա. Քոուլթերը, - ինչպես որ ուզում է մեզ վերածել Օրենքի ուսուցիչներից դրացիներին»:³⁵

Չառլզ Էրդմանը գրում է.

«Թեև Տերը գնահատում է այն ամենը, ինչ ձեռնարկում ենք Իր համար, բայց և այնպես Նա գիտի, որ ամենից շատ կարիք ունենք Իր ոտքերի մոտ նստելու և Իր կամքը լսելու: Հետո մեր գործերի մեջ մենք կլինենք հանգիստ, խաղաղ, բարի, և մեր ծառայությունը վերջապես կարող է կատարելության հասնել, ինչպես Մարիամի դեպքում, երբ վերջին դրվագում նա Հիսուսի ոտքերին թափեց անուշահոտ օծանելիքը, որի բուրմունքը մինչ օրս լցնում է աշխարհը»:³⁶

Է. Աշակերտների աղոթքը (11:1-4)

10-11-րդ գլուխների միջև ժամանակամիջոց կա, որը լրացվում է Հովհաննեսի Ավետարանի 9:1-10:21 հատվածում:

11:1. Սա Ղուկասի Ավետարանում արձանագրված մեր Տիրոջ աղոթքի կյանքին վերաբերող հաճախակի հղումներից մեկն է: Այն համապատասխանում է Քրիստոսին՝ որպես Մարդու Որդի ներկայացնելու Ղուկասի նպատակին, որով ցույց է տալիս, որ Նա միշտ կախման մեջ էր Աստծուց՝ Իր Հորից: Աշակերտները զգացին, որ աղոթքն իրական ու կենսական էր Հիսուսի կյանքում: Երբ նրանք լսեցին Նրա աղոթքը, իրենց մեջ նույնպես աղոթելու փափագ առաջացավ: Դրա համար էլ **Իր աշակերտներից մեկը խնդրեց**, որպեսզի Տերը նրանց **աղոթել սովորեցնի**: Նա չսասց. «*Մեզ սովորեցրո՞ւ ինչպես աղոթենք*», այլ «*Մեզ աղոթել սովորեցրո՞ւ*»: Ինչպիսին էլ որ լինի խնդրանքը, անշուշտ, իր մեջ պարունակում է ինչպես գործողություն, այնպես էլ մեթոդ:

11:2. Աղոթքի օրինակը, որը Տեր Հիսուսը տվեց նրանց այդ ժամանակ, որոշ չափով տարբերվում է Մատթեոսի Ավետարանում գրված այսպես կոչված Տերունական աղոթքից: Այս տարբերություններն ունեն և՛ նպատակ, և՛ նշանակություն: Դրանցից ոչ մեկն էլ պատահական չէ:

Նախևառաջ Տերն Իր աշակերտներին սովորեցրեց Աստծուն դիմել որպես «**Հայր մեր**»: Ընտանեկան նման ջերմ փոխհարաբերություններն անձանոթ էին Հ-ի հավատացյալներին: Սա պարզապես նշանակում է, որ սրանից հետո հավատացյալներն Աստծո հետ պետք է խոսեն իբրև Երկնային սիրող **Հոր** հետ: Այնուհետև մեզ սովորեցնում է աղոթել Աստծո **անունը սուրբ լինելու** մասին: Մրանում արտահայտված է հավատացյալի սրտի ձգտումը, որպեսզի Աստծուն վերագրվի պատիվ, փառք ու երկրպագություն: Խնդրելով «**Քո թագավորությունը գա**» մենք աղոթում ենք, որ շուտով գա այն օրը, երբ Աստված կործանելու է չարի ուժերը և Քրիստոսի Անձով թագավորելու է **երկրի վրա՝ բոլորից վեր**, երբ լինելու է Նրա **կամքը երկրի վրա այնպես, ինչպես երկնքում**:

11:3. Աստծո Արքայությունն ու Նրա արդարությունը փնտրելուց հետո աղոթողը

պետք է հայտնի սեփական կարիքներն ու փափագները: Այստեղ արտացոլված է ինչպես Ֆիզիկական, այնպես էլ հոգևոր կերակրի հանդեպ մշտական կարիքը: Ընդունելով, որ Նա է բոլոր բարիքների աղբյուրը, մենք պետք է Նրանից **ամենօրյա** կախվածության մեջ ապրենք:

11:4. Այնուհետև հաջորդում է **մեղքերի** ներման աղոթքը այն փաստի հիման վրա, որ մենք ներողամիտ ենք գտնվել մեր դրացու նկատմամբ: Սա ակնհայտորեն չի վերաբերում մեղքի պատժի ներմանը: Այսպիսի ներումը հիմնված է Գողգոթայում Քրիստոսի կատարածի վրա և միայն հավատով է ընդունվում: Այստեղ խոսքը ծնողական կամ կառավարական ներման մասին է: Փրկությունն ստանալուց հետո Աստված մեզ հետ վարվում է, որպես Իր զավակների: Եթե Նա մեր սրտերում հայտնաբերի սառնության ու ոչ ներողամտության հոգի, Նա մեզ կպատժի, մինչև որ խոնարհվենք ու կրկին վերադառնանք Իր հետ հաղորդակցությանը: Նման ներումը վերաբերում է Աստծո հետ հաղորդակցությանը, ոչ թե Նրա հետ հարաբերությանը:

«**Մեզ փորձության մի՛ տար**» խնդրանքը որոշ մարդկանց համար դժվարություն է ներկայացնում: Մենք գիտենք, որ Աստված երբեք ոչ մեկին չի փորձում մեղքով: Մակայն Նա թույլ է տալիս, որ մեր կյանքում փորձառենք դժվարություններն ու ստուգումները, որոնք նախատեսված են մեր բարիքի համար: Հավանաբար, այստեղ այն միտքն է, որ պետք է մշտապես զգոն լինենք, քանի որ հակված ենք մոլորվելու և մեղքի մեջ ընկնելու: Մենք պետք է խրնդրենք Տիրոջը, որ մեզ ետ պահի մեղանչելուց, նույնիսկ եթե ինքներս ենք ուզում մեղք գործել: Պետք է աղոթենք, որ մեղքի հնարավորությունն ու մեղանչական արարքների ցանկությունը երբեք չհամընկնեն: Այս աղոթքն արտահայտում է մեր ուժերով գայթակհությունների՝ դիմադրելու առողջ անվստահությունը: Աղոթքն ավարտվում է **փրկի՛ր մեզ չարից խնդրանքով**:³⁷

Ը. Երկու առակ աղոթքի մասին (11:5-13)

11:5-8. Աղոթքի թեման շարունակելով Տերը մի օրինակ բերեց, որը նախատեսված էր՝ ցույց տալու, որ Աստված ուզում է լսել Իր զավակների խնդրանքներն ու պատասխանել դրանց: Այս պատմության մեջ խոսքն այն մարդու մասին է, որին **կեսգիշերին** հյուր է այցելում: Ցավոք սրբոտի, նրա ձեռքի տակ բավարար ուտելիք չի լինում: Այդ իսկ պատճառով նա գնում է հարևանի մոտ, թակում նրա տան դուռը **և երեք հաց** փոխ խնդրում: Սկզբում նրա հարևանը զայրանում է քունը խանգարելու համար և ջանք չի անում անկողնուց վեր կենալու: Մակայն լսելով անհանգստացած հյուրի շարունակական թակոցներն ու բարձրաձայն կոչերը՝ նա վերջապես վեր է կենում և **նրան տալիս** այնքան, որքան խնդրում էր:

Մենք պետք է զգույշ լինենք այս օրինակի կիրառման ժամանակ, որպեսզի խուսափենք որոշակի եզրակացություններից: Այս օրինակից մենք չպետք է եզրակացնենք, որ Աստված զայրանում է մեր հաստատակամ կամ համատ խնդրանքներից: Եվ այստեղից էլ բոլորովին չի հետևում, որ աղոթքի պատասխան ստանալու միակ կերպը հետևողականությունն է:

Այս հատվածը *սուփորեցնում* է, որ եթե մարդը պատրաստ է բարեկամին օգնելու նրա պնդերեսության համար, ապա Աստված *որքան ավելի* ուզում է լսել Իր զավակների աղաղակը:

11:9. Այստեղ սովորում ենք, որ մեր աղոթքի կյանքում մենք չպետք է ձանձրանանք կամ հիպոթափվենք: «Շարունակելք խրնդրել..., շարունակելք փնտրել..., շարունակելք թակել...»:³⁸ Երբեմն Աստված առաջին իսկ խնդրանքից պատասխանում է մեր աղոթքին: Բայց լինում են դեպքեր, երբ Նա պատասխանում է միայն շարունակական խնդրանքներից հետո:

Աստված պատասխանում է աղոթքներին, Երբեմն, երբ տկար են մեր սրտերը, Նա տալիս է ճիշտ այն պարզևները, Որոնց կարիքն ունեն հավատացյալները,

Բայց հաճախ մեր հավատը պետք է
յուրացնի
Ավելի լուրջ մի դաս
Եվ սովորի վստահել Աստծո թուությանը,
Երբ Նա չի ասում ոչինչ,
Նա, Ում անունն է Սեր,
Կպարզևի լավագույնը:
Կարող են մարել աստղերը,
Քանդվել քարե ամրոցները,
Բայց հավատարիմ է Աստված,
Ում խոստումներն են հուսալի:
Նա է մեր գորությունը:

Մ. Ջ. Փ.

Այս առակը հստակ ուսուցանում է խրնդ-
րելու, փնտրելու, թակելու հաստատակա-
մության անող աստիճանի մասին:

11:10. Այս համարը սովորեցնում է, որ **ամեն խնդրող առնում է, փնտրողը՝ գրտնում, և յուրաքանչյուր թակողի առջև բացվում է դուռը:** Այստեղ մեզ խոստում է տրվում, որ երբ մենք աղոթում ենք, Աստված միշտ տալիս է խնդրանքը կամ նույնիսկ մեր խնդրածից ավելին: «Ոչ» պատասխանը նշանակում է, որ Նրան հայտնի է, թե մեր խնդրանքը չի կարող մեզ համար լավագույնը լինել. այդ դեպքում Նրա մերժումն ավելի լավ է, քան մեր խնդրածը:

11:11-12. Այստեղ այն մասին է ասվում, որ Աստված երբեք մեզ չի խաբի **քար** տալով, երբ մենք **հաց** ենք խնդրում: Այն օրերում հացը քար հիշեցնող կյուր ու տափակ շոթի ձև ուներ: Աստված երբեք մեզ չի ծաղրի՝ տալով ինչ-որ չուտվող բան, երբ մենք Իրենից կերակուր ենք խնդրում: Եթե **ծուկ** խնդրենք, Նա մեզ **օձ** չի տա, այսինքն՝ այնպիսի մի բան, որ կարող է մեզ կործանել: Եվ եթե **ծու** խնդրենք, Նա մեզ **կարիճ** չի տա, այսինքն՝ ինչ-որ բան, որը կարող է տանջալից ցավ պատճառել:

11:13. Երկրավոր հայրը, մեղավոր բնություն ունենալով իսկ, չար պարզևներ չի տալիս, նա **գիտի բարի պարզևներ տալ իր որդիներին, ապա որքան ավելի ձեր երկնավոր Հայրը կտա Սուրբ Հոգին նրանց, ովքեր խնդրում են Նրանից:** Ջ. Գ. Բելեթն ասում է. «Նշանակալից է, որ պարզևը, որը նշվում է Իր կողմից որպես

մեր ամենամեծ կարիքը, և որը Նա ամենաշատն է ուզում տալ մեզ, Սուրբ Հոգին է»: Երբ Տեր Հիսուսն այս խոսքերն ասաց, Սուրբ Հոգին դեռ մեզ չէր տրվել, որպես մեր մեջ մշտական բնակվող Անձնավորություն, քանի որ Նա գալիս և բնակվում է մեր մեջ մեր դարձի ժամանակ (Հռ. 8:9բ, Եփ. 1:13-14):

Սակայն, իհարկե, տեղին ու անհրաժեշտ կլինի Սուրբ Հոգու մասին մի քիչ այլ ձևով աղոթել: Մենք պետք է աղոթենք, որ ուսանելի լինենք Սուրբ Հոգուց, որ Սուրբ Հոգով առաջնորդվենք, և որպեսզի Նրա գորությունը թափվի մեզ վրա Քրիստոսին ծառայելու ամբողջ ընթացքում:

Շատ հավանական է, որ երբ Հիսուսն աշակերտներին սովորեցնում էր **Սուրբ Հոգին** խնդրել, Նա վկայակոչում էր Սուրբ Հոգու *գորությունը*, որը օգնելու էր նրանց՝ ապրելու աշակերտության կյանքով, որի մասին Նա սովորեցրեց նախորդ գլուխներում: Հավանաբար նրանք գիտակցում էին, թե որքան անհնար է սեփական ուժերով հաղթահարել աշակերտության փորձությունները: Եվ դա իսկապես այդպես է: **Սուրբ Հոգին** մարդուն քրիստոնեական կյանքով ապրելու գորությունը տվողն է: Ուրեմն Հիսուսն Աստծուն ներկայացնում է մեզ այդպիսի գորություն տալու նախանձախնդրությամբ:

Հունարեն բնագրի 13-րդ համարում «Սուրբ Հոգին» բառերից առաջ բացակայում է որոշյալ հոդը: Պրոֆեսոր Հ. Բ. Սվիթթը նշում է, որ երբ այդպիսի հոդ կա, այն հենց Անձին է մատնացույց անում, իսկ երբ հոդը բացակայում է, ապա մատնացույց է անում Նրա պարզևներին և մեր մեջ Նրա ներգործությանը: Հետևաբար այս հատվածում աղոթքը ոչ այնքան Սուրբ Հոգու Անձնավորությունը, որքան մեր կյանքում Նրա ծառայության դրսևորումը ստանալու մասին է: Սա ավելի բացահայտվում է Մատթ. 7:11-ի գուգահեռ հատվածում, որտեղ ասվում է. «Որքա՞ն ավելի ձեր Հայրը, որ երկրնքում է, *բարիքներ* կտա նրանց, որ խնդրում են Իրենից»:

**Թ. Հիսուսը պատասխանում է
Իր քննադատներին (11:14-26)**

11:14-16. Իր գոհին համը դարձնող **դևին հանելուց** հետո Հիսուսը մարդկանց մեջ բավականին մեծ աղմուկ առաջացրեց: Այդ ժամանակ՝ մինչ **ժողովուրդն ապշեց**, ումանք բացահայտորեն հակառակվեցին Տիրոջը: Հակառակությունը երկու հիմնական ձև ընդունեց: Ումանք Նրան մեղադրեցին, որ **Նա Բեեղզբբուղի՝ դևերի իշխանի միջոցով է հանում դևերին**: Իսկ **ուրիշներն** էլ պահանջում էին, որպեսզի Նա իրենց **երկնային նշան** ցույց տա. հավանաբար կարծում էին, որ դա կչեզոքացնի Իր դեմ առաջադրված մեղադրանքը:

11:17-18. 17-26-րդ համարներում տրված է դևերին Իր մեջ բնակված Բեեղզբբուղի միջոցով հանելուն վերաբերող պատասխանը: Երկնքից նշան ցույց տալու խնդրանքի պատասխանը տրված է 29-րդ համարում: Նախ Տեր Հիսուսը նրանց հիշեցրեց, որ **ամեն թագավորություն, որ իր մեջ բաժանված է, կքանդվի, և տունը, որ իր դեմ բաժանված է՝ կընկնի**: Եթե Նա, դևերին հանելով, սատանայի ձեռքում գործիք է դարձել, ապա սատանան կռվում է իր սեփական ստորադասների դեմ: Ծիծաղելի է կարծել, որ սատանան նման ձևով ինքն իրեն կհակառակվի ու կխոչընդոտի իր իսկ նպատակներին:

11:19. Իսկ հետո Տերն Իր քննադատներին հիշեցրեց, որ իրենց հայրենակիցներն էլ են միևնույն ժամանակ չար հոգիներ հանել: Եթե Նա սատանայի գործությամբ է դա արել, ապա դրանից անպայման հետևում է, որ նրանք էլ են նույն գործությամբ արել: Հրեաները, իհարկե, ոչ մի գնով չէին ընդունի դա: Բայց և այնպես, ինչպե՞ս կարող էին մերժել փաստերի գորությունը: Դևերին հանելու գորությունը կա՛մ Աստծուց էր, կա՛մ էլ սատանայից: Կա՛մ մեկը, կա՛մ մյուսը. և՛ սա, և՛ մյուսը չեն կարող միաժամանակ լինել: Եթե Հիսուսը սատանայի գորությամբ գործեց, ապա դևեր հանող հրեա հոգեհանները նույնպես այդ գորությունից էին կախյալ: Դատապարտել Հիսուսին, նշանակում էր դատապարտել նաև նրանց:

11:20. Ճշմարիտ բացատրությունը հետևյալն է. Հիսուսն **Աստծո մատով էր հանում դևերին**: Ի՞նչ նկատի ուներ Նա «**Աստծո մատ**» ասելով: Մատթեոսի Ավետարանում (12:28) հետևյալն ենք կարդում. «Իսկ եթե Ես Աստծո Հոգով եմ հանում դևերին, ուրեմն Աստծո թագավորությունը եկել է ձեզ վրա»: Սրանից կարելի է եզրակացնել, որ **Աստծո մատը** ճիշտ նույնն է, ինչ-որ Աստծո Հոգին: Այն, որ Հիսուսը դևերին Աստծո Հոգով էր վտարում, միանշանակորեն վկայում էր, որ **Աստծո Թագավորությունը հասել էր** այդ սերնդի մարդկանց: Թագավորությունը եկել էր հենց Թագավորի Անձով: Ծիշտ այն փաստը, որ Տեր Հիսուսը գտնվում էր նրանց մեջ ու նմանատիպ հրաշքներ էր կատարում, այն բանի վճռական ապացույցն էր, որ պատմության թատերաբեմին էր հայտնվել Աստծո կողմից օժված Կառավարիչը:

11:21-22. Մինչ այս պահը սատանան, ով նկարագրված է որպես «**գորավոր մեկ զինված...**», անվիճելիորեն տիրում էր իր ունեցվածքի վրա: Դևերից բռնված մարդիկ ամուր կապված էին նրա կողմից, և ոչ ոք չէր վիճարկում նրա իշխանությունը: Նրա ստացվածքը ապահովության մեջ էր, այսինքն՝ ոչ ոք գորություն չունեի դիմադրելու նրա իշխանությանը: Տեր Հիսուսը սատանայից **գորավոր է. Նա հաղթեց նրան**, վերցրեց **նրա բոլոր զենքերն** ու բաժանեց **նրա ունեցվածքը**:

Նույնիսկ Հիսուսի քննադատները չէին հերքում, որ Նա չար ոգիներ էր հանում: Դա կարող է միայն նշանակել, որ սատանան հաղթված էր, իսկ նրա զոհերը՝ ազատագրված: Սրանում է այս համարների էությունը:

11:23. Այնուհետև Հիսուսն ավելացրեց, որ **ով Իր հետ չէ, հակառակ է Իրեն**, և ով Իր **հետ չի հավաքում**, նա **ցրում է**: Ինչ-որ մեկն ասել է. «Մարդը գտնվում է կա՛մ ճանապարհի վրա, կա՛մ ճանապարհի մեջ»: Մենք արդեն հիշեցինք այս համարի ու 9:50-ի թվացյալ հակասության մասին: Եթե հարցը Քրիստոսի Անձի և գործի մեջ է, ապա չեզոքությունն անհնար է: Բայց եթե

խոսքը քրիստոնեական ծառայության մասին է, ապա ովքեր դեմ չեն Քրիստոսի ծառայողներին, կլինեն նրանց կողմից: 1-ին համարում հարցը փրկությանն է վերաբերում, իսկ երկրորդում՝ ծառայությանը:

11:24-26. Տերը կարծես թե գրույցի թեման ուղղում է Իր քննադատների կողմը: Նրանք մեղադրում էին Նրան դևերից բռնընթաց լինելու մեջ: Նա Իսրայել ժողովրդին համեմատում է մարդու հետ, որը ժամանակավորապես բժշկվել էր դիվահարությունից: Սա իսկապես տեղի էր ունեցել նրանց պատմության մեջ: Մինչև իր գերությունը Իսրայել ժողովուրդը բռնված էր կռապաշտության դեմ: Սակայն գերությունը հրեաներին ազատեց այդ չար **ոգուց**, և այդ ժամանակից ի վեր նրանք այլևս երբեք չտրվեցին կռապաշտության: Նրանք գտան իրենց **ավլած ու հարդարված** տունը, բայց հրաժարվեցին Տեր Հիսուսին հրավիրել այնտեղ որպես սեփականատիրոջ: Հետևաբար Նա կանխասաց, որ գալիք օրը **պիղծ ոգին** իր հետ կվերցնի **իրենից ավելի չար յոթ հոգիներ**, և նրանք **կմըսեն** տուն և **կքնակվեն այնտեղ**: Սա ցույց է տալիս այն ահավոր կռապաշտության ձևը, որն ընդունելու է հրեա ազգը Մեծ նեղության ժամանակաշրջանում. նրանք հակաքրիստոսին ընդունելու են որպես աստծո (Հովհ. 5:43), իսկ այդ մեղքի պատիժը մեծ է լինելու, քան ազգը երբևէ վերապրել է:

Չնայած որ առաջին հերթին այս օրինակը վերաբերում է Իսրայելի *ազգային* պատմությանը, այն նաև մատնացույց է անում *անհատի* պարզ ապաշխարության կամ կյանքի ձևավորման անբավարարությանը: Բավարար չէ պարզապես մաքուր էջի անցնելը: Պետք է սրտում և կյանքում ընդունել Տեր Հիսուս Քրիստոսին: Հակառակ դեպքում մարդը բաց է մեղքի ավելի չար ձևերի ներթափանցման համար, քան դա երբևէ եղել է նախկինում:

Ժ. Ավելի երանելի, քան Մարիամը (11:27-28)

Մի կին դուրս եկավ հավաքված **ժողո-**

վըրդի միջից, որպեսզի փառավորի Հիսուսին հետևյալ խոսքերով. «**Նրանի՛ այն որովայնին, որ Քեզ կրեց և այն կրծքերին, որ Քեզ սնեցին**»: Մեր Տիրոջ պատասխանը հսկայական նշանակություն ունի: Նա չմերժեց, որ Իր մայրը՝ Մարիամը երանելի է, բայց ասաց, որ դրանից էլ ավելին կա. **ավելի** կարևոր է **Աստծո Խոսքը լսելն ու պահելը**: Այլ խոսքերով ասած, Մարիամն ավելի երանելի է Քրիստոսին հավատալու ու Նրան հետևելու համար, քան պարզապես Նրա մայրը լինելու: Ֆիզիկական փոխհարաբերություններն այնքան կարևորություն չունեն, որքան հոգեվոր փոխհարաբերությունները: Սա պետք է բավարար լինի, որպեսզի պապանձվեն նրանք, ովքեր Մարիամին դարձնում են պաշտամունքի առարկա:

Ի. Հովնանի նշանը (11:29-32)

11:29. 16-րդ համարում ոմանք փորձեցին Տեր Հիսուսին՝ երկնային **նշան** պահանջելով Նրանից: Այժմ Նա պատասխանում է այդ խնդրանքին՝ դա վերագրելով այդ **չար սերնդին**: Նրա խոսքերն առաջին հերթին վերաբերում էին այդ ժամանակ ապրող հրեաների **սերնդին**: Աստծո Որդին նրանց պատվեց Իր ներկայությամբ: Նրանք լսեցին Իր խոսքերը և դարձան Նրա հրաշքների վկաները: Սակայն դա նրանց համար բավական չէր: Այժմ նրանք հայտարարում էին, որ եթե մի մեծ, գերբնական երկնային նշան տեսնեն, կհավատան Նրան: Տերը պատասխանեց, որ **Հովնան մարգարեի նշանից բացի ուրիշ նշան չի տրվի նրանց**:

11:30. Նա մատնացույց արեց Իր հարությանը: Ինչպես **Հովնանը** փրկվեց ծովի անդունդից՝ երեք օր ու երեք գիշեր կետի որովայնում մնալով, այնպես էլ Տեր Հիսուսը հարություն է առնելու մեռելներից երեք օր ու երեք գիշեր գերեզմանում մնալուց հետո: Այլ խոսքով, Տեր Հիսուսի երկրավոր ծառայության վերջին ու եզրափակիչ հրաշքը լինելու է Նրա հարությունը: **Հովնանը նշան եղավ Նինվեի** բնակիչների **համար**: Նա մեկնեց՝ քարոզելու այդ հեթանոս քաղաքին որպես մի մարդ, որը, պատկերավոր ասած, հարություն էր առել մեռելներից:

11:31-32. Հարավի թագուհին՝ Մաբայի հեթանոս թագուհին, հսկայական հեռավորություն հաղթահարեց, որպեսզի **Սողոմոնի իմաստությունը լսի:** Նա ոչ մի հրաշք չտեսավ: Եվ եթե նա Տիրոջ օրերում ապրելու առանձնաշնորհումն ունենար, ինչպիսի՛ պատրաստակամությամբ կընդուներ Նրան: Այդ իսկ պատճառով նա **դատաստանի օրը կկանգնի** այս չար մարդկանց առջև, ովքեր առանձնաշնորհում ունեցան տեսնելու Տեր Հիսուսի գերբնական գործերն ու մերժեցին Նրան: **Հովնանից մեծ Մեկը և Սողոմոնից մեծ Մեկը** հանդես եկավ մարդկության պատմության թատերաբեմին: **Նինվեի մարդիկ Հովնանի քարոզչությամբ ապաշխարեցին,** իսկ իսրայելացիները հրաժարվեցին ապաշխարել Նրա քարոզից, Ով **Հովնանից մեծ** էր:

Այսօր անհավատությունը ծիծաղում է Հովնանի պատմության վրա՝ այն համարելով հրեական առասպել: Հիսուսը Հովնանի մասին խոսեց իբրև իրական պատմական անձնավորության մասին այնպես, ինչպես Սողոմոնի: Նրանք, ովքեր ասում են, թե կհավատան, եթե հրաշք տեսնեն, սխալվում են: Հավատը չի հիմնվում զգացական օրգանների ապացույցների վրա, այլ Աստծո կենդանի Խոսքի: Եթե անձը չի հավատում Աստծո Խոսքին, ապա նա չի հավատա, եթե մեկը նույնիսկ հարություն առնի: Նշաններ պահանջելը հանելի չէ Աստծուն: Դա հավատ չէ, այլ տեսնել է: Անհավատությունն ասում է. «Տո՛ւյց տվեք, որից հետո կհավատամ»: Աստված ասում է. «Հավատացե՛ք, իսկ հետո կտեսնեք»:

L. Վառվող ճրագի մասին առակը (11:33-36)

11:33. Առաջին հայացքից թվում է, որ այս և նախորդ համարների միջև կապ չկա: Բայց մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում մենք բավականին էական կապ կհայտնաբերենք: Տեր Հիսուսն Իր ունկնդիրներին հիշեցրեց, որ **ոչ ոք ճրագը** չի վառում և թաքնված տեղում **ամանի տակ** չի դնում: Նա ճրագը դնում է **աշտանակի՝** ճրագակալի վրա, որտեղից կա-

րելի է այն տեսնել և որտեղից այն լույս է տալիս բոլոր ներս մտնողներին:

Կիրառումը հետևյալն է. Աստված է **ճրագը վառողը:** Նա Տեր Հիսուս Քրիստոսի Անձով ու գործերով ապահովեց աշխարհի լուսավորությունը: Եվ եթե ինչ-որ մեկը չի տեսնում Լույսը, Աստծունը չէ հանցանքը: 8-րդ գլխում Հիսուսը խոսեց աշակերտների վրա դրված պատասխանատվության մասին. հավատը տարածել, ոչ թե այն «ամանի տակ թաքցնել»: Այստեղ՝ 11:33-ում, Նա մերկացնում է Իրենից նշան փնտրող քննադատների անհավատությունը, որը նրանց նախանձության ու ամոթանք կրելու երկյուղի հետևանքով էր:

11:34. Նրանց անհավատությունը անմաքուր շարժառիթների արդյունքն էր: Ֆիզիկական իրականությունում **աչքը** ամբողջ **մարմնին լույս** է տալիս: Եթե աչքն առողջ է, ապա մարդը կարող է լույսը տեսնել: Բայց եթե աչքը հիվանդ է, այսինքն՝ կույր, այդ դեպքում լույսը չի կարող թափանցել:

Նույնը նաև տեսնում ենք հոգևոր աշխարհում: Եթե անձն անկեղծ է Տեր Հիսուսին՝ որպես Աստծո Քրիստոսը ճանաչելու իր ցանկության մեջ, ապա Աստված դա կհայտնի իրեն: Եթե նրա շարժառիթները մաքուր չեն, եթե նա ուզում է կառչել իր ազահությանը, եթե նա շարունակում է վախենալ այն բանից, թե ինչ կասեն ուրիշները, ապա նա կույր է Փրկչի ճշմարիտ արժանիքների նկատմամբ:

11:35. Մարդիկ, ում Հիսուսը դիմում էր, իրենց շատ իմաստուն էին կարծում: Նրանք ենթադրում էին, որ իրենց մեջ բավական լույս կա: Բայց Տեր Հիսուսը նրանց խորհուրդ տվեց հաշվի առնել այն փաստը, որ իրենց **մեջ** եղած **լույսը** իրականում **խավար** է: Կարծեցյալ իմաստությունը և ենթադրյալ վերադասությունը նրանց Քրիստոսից հեռու պահեցին:

11:36. Նա, ում շարժառիթները մաքուր են, ով ամբողջ էությամբ բացվում է Հիսուսի՝ աշխարհի լույսի առջև, հեղեղվում է հոգևոր լուսավորվածությամբ: Նրա ներքնաաշխարհն այնպես կլուսավորվի Քրիստոսով, ինչպես լուսավորվում է մարդու մար-

մինը, երբ նա նստում է ճրագի ուղիղ ճառագայթների տակ:

Խ. Արտաքին ու ներքին մաքրություն (11:37-41)

11:37-40. Երբ Հիսուսն ընդունեց **փարիսեցիներից մեկի** ճաշի գնալու հրավերը, Նա զարմացրեց Իր տանտիրոջը նրանով, որ **ճաշելուց առաջ չվազցվեց:** Հիսուսը կարդաց նրա մտքերն ու նրան հանդիմանեց կեղծավորության ու արտաքինից կառչած լինելու համար: Հիսուսը նրան հիշեցրեց, որ իրական նշանակություն ունի ոչ թե **բաժակի դրսի** մաքրությունը, այլ **ներսի:** Արտաքինից փարիսեցիները լիովին արդար էին թվում, բայց ներսից լցված էին հափշտակությամբ ու չարությամբ: Նույն Աստվածը, Ով **դուրսը շինեց**, շինեց նաև **ներսը:** Նա հետաքրքրված է մեր ներքին կյանքի մաքրությամբ. «Մարդն աչքի երեվացածին է նայում, իսկ Տերը՝ սրտին» (1 Թ-ագ. 16:7):

11:41. Տերը հասկանում էր, թե որքան ազահ ու եսասեր էին փարիսեցիները, դրա համար էլ Նա այդ տանտիրոջը պատվիրեց նախ **ունեցածից ողորմություն տալ:** Եթե նա կարողանար դիմանալ մերձավորին սիրելու այս գերագույն ստուգատեսին, ապա **ամեն ինչ** նրա **համար մաքուր կլիներ:**

Հ. Ա. Այրենասայդը մեկնաբանում է.

«Արտաքին կանոնները իսկական արժեք կունենան միայն այն ժամանակ, երբ Աստծո սերն այնպես լցնի մարդու սիրտը, որ նա սկսի մտահոգվել մերձավորի կարիքներով: Անդադար իր համար հավաքող և իրեն շրջապատող աղքատ և կարիքավոր մարդկանց հանդեպ ծայրահեղ անտարբերությամբ վերաբերվող մարդն այն մասին է վկայում, որ իր մեջ Աստծո սերը չի բնակվում»:³⁹

Անհայտ հեղինակն ընդհանրացնում է.

«39-52-րդ համարներում գրված փարիսեցիներին և դպիրներին ուղղված խիստ խոսքերն ասվեցին փարիսեցու մոտ՝ ընթրիքի ժամանակ (հ. 37): Այն, ինչին «լավ ճաշակ» ենք անվանում, մասամբ փոխա-

րինում է ճշմարտությանը հավատարիմ լինելուն: Մենք ժպտում ենք, երբ պետք է մոայլվել, և լռում ենք, երբ պետք է խոսենք: Լավ է ընդհատել ընթրիքը, քան խախտել Աստծո հանդեպ հավատարմությունը»:

Ծ. Հանդիմանություն փարիսեցիներին (11:42-44)

11:42. Փարիսեցիները ցուցամոլ էին: Նրանք բծախնդիր էին ծիսական օրենքի մանրուքների մեջ, ինչպիսին էր աննշան **կանաչեղենի** տասանորդը: Սակայն նրանք չէին մտահոգվում Աստծո և մարդկանց հետ ունեցած իրենց փոխհարաբերությամբ, ճնշում էին աղքատներին ու կատարյալ սրբտով չէին սիրում Աստծուն: Տերը նրանց չհանդիմանեց **անանուխի, փեզենայի** և ամեն տեսակ բանջարեղենի տասանորդը տալու համար, այլ պարզապես ցույց տվեց, որ նրանք չպետք է այդքան նախանձավոր լինեն մանրուքների կատարման մեջ՝ անտեսելով կյանքի կարևոր պարտականությունները, ինչպիսիք են **Աստծո արդարությունն ու սերը:** Նրանք առանձնացնում էին երկրորդականը, իսկ գլխավորը բաց էին թողնում: Նրանք կատարելագործվում էին այն ամենում, ինչ կարող էին տեսնել այլ մարդիկ, բայց չէին մտահոգվում այն ամենով, ինչ կարող էր տեսնել միայն Աստված:

11:43. Նրանք սիրում էին իրենց ցուցադրել, **ժողովարաններում** կարևոր տեղեր զբաղեցնել և, որքան հնարավոր է, շատ ուշադրություն գրավել շուկայի հրապարակում: Այսինքն՝ նրանք հանցավոր էին ոչ միայն արտաքինին կապված լինելու համար, այլև հպարտությանը:

11:44. Եվ վերջապես Տերը նրանց համեմատեց չնշված **գերեզմանների** հետ: Ըստ Մովսեսի օրենքի՝ գերեզմանին դիպչող յուրաքանչյուր անձ պետք է յոթ օր անմաքուր համարվեր (Թվ. 19:16), նույնիսկ այն դեպքում, եթե չիմանար, որ դա գերեզման է: **Փարիսեցիներն** արտաքինից տպավորություն էին թողնում, թե նվիրված կրոնական առաջնորդներ են: Սակայն նրանք

պետք է իրենց վրա նախագոյն շացնող նշան կրեին, քանի որ իրենց դիպչող մարդկանց սրբապղծություն, անմաքրություն էր սպառնում: Նրանք չնշված, անհայտ **գերեզմաններ** էին՝ յի բարոյական անկմամբ ու անմաքրությամբ, որոնք մյուսներին վարակում էին արտաքին ծիսակատարումներով ու հպարտության վարակով:

Կ. Հանդիմանություն օրենսգետներին (11:45-52)

11:45. Օրենսգետները դպիրներ էին՝ Մովսեսի օրենքը մեկնաբանող փորձագետներ: Սակայն նրանց կարողությունը սահմանափակվում էր դրանով, որ նրանք ուրիշներին էին ասում, թե ինչ պետք է անեն: Անձամբ իրենք դա չէին կիրառում: Օրենսգետներից մեկը զգաց Հիսուսի խոսքերի հանդիմանական սուր բնույթն ու հիշեցրեց Նրան, որ փարիսեցիներին քննադատելով՝ Նա **նաև** Օրենքի մասնագետներին է վիրավորում:

11:46. Տերն օգտվեց այս առիթից, որպեսզի մատնացույց անի օրենսգետների մեղքերը: Նախ նրանք մարդկանց ճնշում էին ամեն տեսակ իրավական **բեռներով**, բայց ոչինչ չէին անում, որպեսզի նրանց օգնեն այդ **բեռները** կրելու մեջ: Բելին նշում է. «Նրանք տխրահոռակ էին այն մարդկանց նկատմամբ ունեցած իրենց արհամարհանքով, որոնց վրա կառուցվում էր իրենց կարևորությունը»:⁴⁰ Նրանց շատ կանոնները հաստատված էին մարդկանց կողմից և վերաբերում էին այն հարցերին, որոնք իրական կարևորություն չունեին:

11:47-48. Օրենսգետները կեղծավոր մարդասպաններ էին: Նրանք ձևացնում էին, թե հիանում են Աստծո մարգարեներով: Նրանք այն աստիճանին էին հասնում, որ կոթողներ էին կանգնեցնում հինկտակարանյան **մարգարեների գերեզմաններին**: Անկասկած, նրանք դա համարում էին խորին հարգանքի ապացույց: Բայց Տեր Հիսուսն այլ բանի մասին գիտեր: Չնայած որ նրանք արտաքնապես իրենց տարանջատում էին իրենց հրեա նախնիներից, ովքեր **սպանեցին** մարգարեներին, բայց գործնա-

կանում կետ առ կետ հետևում էին նրանց: Մարգարեների **գերեզմանների** կառուցման հետ միաժամանակ նրանք դավադրում էին Աստծո մեծագույն Մարգարեի՝ Տեր Հիսուսի մահը: Եվ պիտի շարունակեին սպանել Աստծո հավատարիմ մարգարեներին ու առաքյալներին:

11:49. Այս համարը համեմատելով Մատթ. 23:34-ի հետ՝ մենք տեսնում ենք, որ **Աստծո իմաստությունը** Հիսուսն Ինքն է: Այստեղ Նա մեջբերում է **Աստծո իմաստության** խոսքերը. «**Մարգարեներ կուղարկեմ նրանց մոտ**»: Մատթեոսի Ավետարանում Նա չի մեջբերում դա՝ որպես ՀԿ-ից կամ մեկ այլ աղբյուրից մեջբերում, այլ պարզապես շարադրում է որպես Իր հաստատումը: (Տե՛ս նաև 1 Կոր. 1:30, որտեղ Քրիստոսի մասին ասվում է որպես իմաստության մասին): Տեր Հիսուսը խոստացավ, որ մարդկանց համար իրենց սերընդից մարգարեներ ու առաքյալներ է ուղարկելու, իսկ նրանք **սպանելու և հալածելու են** նրանց:

11:50-51. Նա **այս ազգից** պահանջելու է **բոլոր նրանց արյունը**, ովքեր վկայում են Աստծո մասին՝ սկսած հենց ՀԿ-ում արձանագրված դեպքից, այսինքն՝ **Աբելի արյունից** մինչև վերջին դեպքը, այսինքն՝ **Չաքարիայի արյունը, որ գոհասեղանի ու տաճարի միջև թափվեց** (2 Մն. 24:21): Երկրորդ Մնացորդացը ՀԿ գրքերի հրեական ցանկի վերջին գիրքն էր: Հետևաբար Տեր Հիսուսը ներառեց մարտիրոսների ամբողջ տիրույթը՝ հիշատակելով **Աբելին** ու **Չաքարիային**: Այս խոսքերն ասելով՝ Նա լավ գիտեր, որ այդ ժամանակ ապրող սերունդն Իրեն կմատնի խաչի վրա մեռնելու՝ սարսափելի աստիճանի հասցնելով Աստծո մարդկանց դեմ ուղղված բոլոր նախորդող հալածանքները: Նրան սպանելու պատճառով էլ նախկին ժամանակներում **բոլոր** սպանվածների **արյունը** ընկավ նրանց վրա:

11:52. Եվ վերջապես Տեր Հիսուսը **օրենսգետներին** հանդիմանեց նրա համար, որ նրանք **վերցրել էին գիտության բանալիները**, այսինքն՝ ժողովրդից թաքցրել էին

Աստծո Խոսքը: Չնայած արտաքնապես նրանք դավանում էին սուրբգրությունների նկատմամբ իրենց հավատարմությունը, սակայն համառորեն հրաժարվում էին Նրան ընդունելուց, Ում մասին սուրբգրությունն է խոսում: Եվ նրանք **արգելեցին** ուրիշներին Տեր Հիսուսի մոտ գալ: Նրանք չէին ուզում Նրան և ոչ էլ ուզում էին, որ ուրիշներն ընդունեն:

Հ. Դպիրների ու փարիսեցիների պատասխանը (11:53-54)

Դպիրներն ու փարիսեցիները հայտնապես գայրացան Տիրոջ անմիջական մեղադրանքներից: Նրանք սկսեցին **խիստ բարկանալ Նրա վրա** և բազմապատկեցին իրենց ջանքերը, որպեսզի բռնեն Նրան խոսքի մեջ: Ամենահնարավոր հնարքներով նրանք ձգտում էին Նրա բերանից **մի բան որսալ**, որպեսզի մեղադրեն ու մահվան մատնեն: Այսպես վարվելով՝ նրանք ընդամենը ապացուցեցին, թե ինչպիսի ճշտությամբ է Նա նկարագրել նրանց բնույթը:

VIII. ՈւՍՈւՅՈւՄ ԵՎ ԲԺՇԿՈւԹՅՈւՆ ԴԵՊԻ ԵՐՈւՍԱԳՂԵՄ ՏԱՆՈՂ ՃԱՆԱԳԱՐՀԻՆ (12-16-րդ գլ.)

Ա. Նախագգուշացում և հավանություն (12:1-12)

12:1. Մինչ Հիսուսը դատապարտում էր փարիսեցիներին և օրենսգետներին, **հագարավոր մարդիկ խռնվում էին Նրա շուրջը**: Բանավեճերն ու վեճերը սովորաբար շատ մարդկանց են գրավում, բայց այս ամբողջը, անկասկած, հավաքվել էր՝ տեսնելու, թե ինչպես էր Հիսուսն անվախորեն հանդիմանում այդ կրոնական կեղծավոր առաջնորդներին: Չնայած մեղքի հանդեպ ոչ փոխգիշողական վերաբերմունքը միշտ չէ, որ ընդունված է, համենայն դեպս, այն իր արդարությամբ դիպչում է մարդու սրբտին: Ճշմարտությունը միշտ հաստատում է իրեն: Նախ դիմելով Իր աշակերտներին՝ Հիսուսն ասաց. **«Չգուշացե՛ք փարիսեցիների թթխմորից»**: Նա բացատրեց, որ

թթխմորը **կեղծավորության** պատկերը կամ խորհրդանիշն է: Կեղծավորը նա է, ով դիմակ է կրում, որի արտաքին կերպարանքը բոլորովին տարբերվում է ներսինից: Փարիսեցիներն իրենց ներկայացնում էին որպես կատարյալ առաքինության օրինակ, սակայն գործով դիմակահանդեսի վարպետներ էին:

12:2-3. Բայց գալու է հատուցման օրը: Այն ամենը, ինչ նրանք թաքցրել են, **հայտնվելու է**, և այն ամենը, ինչ կատարել են **մթուռայան** մեջ, **լույսի** մեջ է դուրս բերվելու:

Ինչպես կեղծավորների հատուցումն է անխուսափելի, այնպես կլինի նաև ճշմարտության հաղթանակը: Մինչ այս պահը աշակերտների հոչակած խոսքն այդքան էլ հստակ չէ և սահմանափակ լսարանի համար է սավում: Բայց Իսրայելի կողմից Մեսիային մերժելուց և Սուրբ Հոգու գալուց անմիջապես հետո աշակերտները խիզախորեն գնալու են առաջ Տեր Հիսուսի անունով և ամենուր հոչակելու են Բարի Լուրը: Այնուհետև, պատկերավոր ասած, Խոսքը տան **կտուրների վրա պիտի հայտարարվի**: Գողթեթը նշում է. «Նրանք, որոնց ձայնը չի կարողանում հիմա ունկրնդիր գտնել՝ բացի սահմանափակ և ծածուկ շրջանակներից, դառնալու են ողջ աշխարհի ուսուցիչները»:⁴¹

12:4-5. **«Ասում եմ ձեզ՝ Իմ բարեկամներին»** քաջավերական ու սրտաբուխ խոսքերով Հիսուսը նախագգուշացնում է, որ Իր աշակերտները ոչ մի փորձության ժամանակ չամաչեն այս անգին բարեկամությունից: Ամբողջ աշխարհով մեկ Քրիստոսի մասին լուրի հոչակումն իր ետևից հալածանք ու մահ է բերելու հավատարիմ աշակերտներին: Սակայն չափ կա, թե ինչ կարող են նրանց անել այնպիսի մարդիկ, ինչպիսին փարիսեցիներն են: Այդ չափը, սահմանը ֆիզիկական մահն է: Պետք չէ դրանից վախենալ: Աստված հայածողներին կայցելի ամենավատ պատժով, այսինքն՝ կդատապարտի հավիտենական մահվան **դժոխքում**: Հետևաբար աշակերտները պետք է **վախենան** Աստծուց, ոչ թե մարդուց:

12:6-7. Որպեսզի ընդգծի աշակերտներին պաշտպանելու Աստծո կամքը, Տեր Հիսուսը հիշեցրեց **ճնճողուկների** նկատմամբ Հոր հոգատարությունը: Մատթ. 10:29-ում կարդում ենք, որ երկու ճնճողուկ մեկ պղնձե դահեկանով են վաճառվում: Այստեղ մենք իմանում ենք, որ **հինգ ճնճողուկը երկու գրոշով** է վաճառվում: Այլ խոսքով, մեկ ճնճողուկ լրացուցիչ են տալիս, եթե չորսն են գնել: Սակայն այս անարժեք ճնճողուկն էլ մոռացված չէ **Աստծո** աչքին: Եթե Աստված հոգում է այդ փոքրիկ ճնճողուկի մասին, ապա որքան ավելի կպահպանի նրանց, ովքեր գնում են առաջ Իր Որդու Բարի Լուրով: Նրանց **գլխի մագերը բոլոր հաշվված են:**

12:8. Փրկիչն աշակերտներին ասաց, որ **ով կղավանի** Իրեն մարդկանց առջև, Ինքն էլ նրան կղավանի **Աստծո հրեշտակների առջև:** Այստեղ Նա խոսում է բոլոր ճշմարիտ հավատացյալների մասին: Նրան դավանել նշանակում է Նրան ընդունել որպես միակ Տիրոջն ու Փրկիչին:

12:9. Ով ուրանա Նրան **մարդկանց առջև, պիտի ուրացվի Աստծո հրեշտակների առջև:** Այստեղ, կարծես թե, Նա առաջին հերթին ակնարկում է փարիսեցիներին, սակայն այս համարը, իհարկե, ընդգրկում է բոլոր նրանց, ովքեր մերժում են ու ամաչում են ընդունել Քրիստոսին: Այն օրը այդպիսիներին Նա կասի. «Ես երբեք ձեզ չեմ ճանաչել»:

12:10. Այնուհետև Փրկիչը բացատրեց աշակերտներին, որ տարբերություն կա Իրեն քննադատելու և **Սուրբ Հոգու դեմ հայհոյություն անելու** միջև: **Մարդու Որդու դեմ** խոսողները **պիտի ներվեն**, եթե զրդջան ու հավատան: Բայց **Սուրբ Հոգու դեմ հայհոյությունը** աններելի մեղք է: Այս մեղքով էին հանցավոր փարիսեցիները (տես Մատթ. 12:22-32): Դա ի՞նչ մեղք է: Այդ մեղքը Տեր Հիսուսի հրաշքները սատանային վերագրելու մեջ է: Դա **Սուրբ Հոգու դեմ հայհոյություն է**, որովհետև Հիսուսն Իր բոլոր հրաշքները Սուրբ Հոգու գործությամբ կատարեց: Հետևաբար նրանք պնդում էին,

որ Աստծո Սուրբ Հոգին սատանա է: Այս մեղքին ներում, թողություն չկա ո՛չ այս, ո՛չ էլ գալիք դարաշրջաններում:

Հնարավոր չէ նմանատիպ մեղք գործվի ճշմարիտ հավատացյալի կողմից: Թեև ոմանք տանջվում են այն մտքից, որ իրենք գործել են դա, երբ սայթաքել են: Հոգևոր կյանքից ընկնելն աններելի մեղքը չէ: Ընկածը կարող է վերականգնվել Տիրոջ հետ ունեցած իր փոխհարաբերությունների մեջ: Հենց այն փաստը, որ մարդը մտահոգվում է, ապացուցում է, որ նա աններելի մեղք չի գործել:

Նույնպես և անհավատների կողմից Հիսուս Բրիստոսին մերժելը չի հանդիսանում աններելի մեղք: Մարդը կարող է շատ անգամ ցավեցնել Փրկիչին, բայց ի վերջո գալ Տիրոջն ու ապաշխարել, վերափոխվել: Իհարկե, եթե նա մեռնի անհավատության մեջ, այլևս չի կարող փրկություն ձեռք բերել: Այդ դեպքում նրա մեղքն իսկապես աններելի կլինի: Սակայն մեղքը, որին մեր Տերն աններելի անվանեց, փարիսեցիների կողմից գործված մեղքն էր, որ ասացին, թե Նա Իր հրաշքները դեռևի իշխանի՝ Բեեղզբեռուղի գործությամբ կատարեց:

12:11-12. Աշակերտներն անխուսափելիորեն դատարան են տարվելու **իշխանությունների առջև:** Բայց Տեր Հիսուսն ասաց, որ նրանք նախապես չպատրաստվեն, չմտածեն, թե **ի՞նչ և ինչպե՞ս պատասխանել: Սուրբ Հոգին** նրանց շուրթերին կդնի համապատասխան խոսքեր, երբ դա անհրաժեշտ լինի: Սա չ/ի նշանակում, թե Տիրոջը ծառայողներն Ավետարանը քարոզելիս կամ Աստծո Խոսքը սովորեցնելուց առաջ նախապես չպետք է աղոթքի և ուսումնասիրության ժամեր անցկացնեն: Տրված խոստումը չպետք է ծուլության առիթ հանդիսանա: Տերն այստեղ որոշակիորեն խոստանում է, որ նրանք, ում Քրիստոսի մասին վկայելու պատճառով դատարան կտանեն, հատուկ օգնություն են ստանալու **Սուրբ Հոգու** կողմից: Եվ սա համընդհանուր խոստում է Աստծո բոլոր մարդկանց համար. եթե նրանք Հոգով են քայլում,

ապա նրանց կտրվեն հենց այն խոսքերը, որոնք պետք է ասել կյանքի ճգնաժամային պահերին:

**Բ. Չգուշացում ազահության դեմ
(12:13-21)**

12:13. Այդ պահին **ժողովրդի միջից մեկը**, դուրս գալով, խնդրեց, որ Տերը լուծի **ժառանգության** մասին իր և իր **եղբոր** միջև եղած վեճը: Հաճախ ասվում է. «Որտեղ կտակ կա, այնտեղ շատ ազգականներ կան»: Կարծես թե սա հենց այդ դեպքն է: Մեզ ասված չէ, թե այդ մարդը գրկված էր օրենքով իրեն հասանելիք բաժնի՞ց, թե՞ ազահությամբ հասանելիքից ավելին էր ուզում:

12:14. Փրկիչը ճիշտ այդ պահին հիշեցրեց նրան, որ Ինքը չի եկել աշխարհի նմանատիպ կենցաղային հարցեր հարթելու համար: Նրա գալու նպատակը մեղավոր տղամարդկանց ու կանանց փրկելն է: Նա չէր պատրաստվում շեղվելու մեծ ու փառավոր առաքելությունից՝ խղճուկ ժառանգությունը բաժանելու համար: Բացի դրանից՝ Նա, ըստ օրենքի, իրավունք չունեի ունեցվածքի հետ կապված հարցեր լուծելու: Նրա որոշումները պարտադիր բնույթ չէին կրում:

12:15. Սակայն Տերն այս դեպքն *օգտագործեց*, որպեսզի Իր ունկնդիրներին զգուշացնի մարդու սրտում եղող ամենանենգ չարիքի՝ **ազահության** մասին: Կյանքում հզոր շարժիչ ուժերից մեկը նյութական բարիքների անհագ կուտակումն է: Եվ կուտակելն էլ լիովին չի համընկնում մարդու գոյության նպատակի հետ: **«Որովհետև մարդու կյանքն իր ունեցվածքի շատության մեջ չէ»:** Չ. Մյուլերը նշում է.

«Սա նախազգուշացնող դրոշակներից մեկն է, որոնք թափահարում է մեր Տերը և որոնք մեր ժամանակաշրջանի շատ մարդիկ կարծես թե չեն նկատում: Զրիստոսը շատ է ասել հարստության վտանգի մասին, բայց քչերն են վախենում հարստությունից: Ազահությունը գործնականում մեղք չի համարվում ներկա ժամանակներում: Եթե անձը խախտում է 6-րդ կամ 8-րդ պատվիրանը, նրան հանցագործ են համարում ու ամոթով պատում,

սակայն եթե նա տասներորդ պատվիրանը խախտի, դա ընդամենը ձեռներեցություն կհամարվի: Աստվածաշունչն ասում է, որ դրամասիրությունը ամեն չարյաց արմատն է, բայց ով մեջբերում է այս խոսքերը, խիստ շեշտում է «սեր» բառը՝ բացատրելով, որ ոչ թե դրամը, այլ լոկ դրամի նկատմամբ սերն է նման արմատ առաջացնում:

Իր շուրջը նայելով՝ մարդը կարող է որոշել, որ կյանքի նպատակը, իրոք, անձի ունեցվածքի շատության մեջ է: Մարդիկ կարծում են, որ իրենց մեծությունն ուղիղ համեմատական է իրենց ձեռք բերած հարստությանը: Թվում է՝ սա ճշմարտություն է, որովհետև աշխարհը մարդկանց չափում է իրենց դրամական հաշվի մեծությամբ: Սակայն երբեք ավելի մեծ նպատագրական սխալ չի եղել: Իրականում մարդը չափվում է նրանով, թե ով է, ինչ է իրենից ներկայացնում, ոչ թե ունեցվածքով»:⁴²

12:16-18. Ամմիտ **հարուստի** մասին **առակը** ցուցադրում է այն փաստը, որ կյանքում կարևորն ունեցվածքը չէ: Հարուստը բացառիկ բերք էր հավաքել: Դրա հետևանքով նրա մոտ խնդիր էր առաջացել. նա չգիտեր ի՞նչ անել հավաքած ամբողջ ցորենի հետ: Նրա ամբարները բերնեբերան լիքն էին: Բայց հետո ելքը գտավ: Խնդիրը լուծված էր: Նա **կբանդի շտեմարաններն ու** ավելի մեծերը կկառուցի: Նա կարող էր ազատել իրեն նոր, հսկա շինությունների ծախսերից ու հոգսերից, եթե գեթ նայեր իրեն շրջապատող կարիքավոր աշխարհին և այդ հարստությունն օգտագործեր հոգեվոր ու ֆիզիկական քաղցը հագեցնելու համար: «Աղքատների մերկությունը, որբևայրիների տները, երեխաների բերանները. սրանք են այն շտեմարանները, որոնք միշտ լինելու են», - ասում է Էմբոռուզը:

12:19. Նոր շտեմարանների կառուցումն ավարտելուն պես նա ծրագրում էր հանգրստի անցնել: Ուշադրություն դարձրեք նրան բնորոշ անկախության հոգուն՝ իմ շտեմարանները, իմ պտուղները, իմ բարիքը, իմ անձը: Նա ծրագրել էր իր ողջ ապագան: Պատրաստվում էր հանգիստ, ազատ

կյանք անցկացնելու՝ **հանգի՛ստ արա, կե՛ր, խմի՛ր ու զվարճացի՛ր:**

12:20-21. «Մակայն, երբ նա սկսեց այդպես մտածել ժամանակի մասին, թե ժամանակն էլ է իրենը, այդ ժամանակ նա իր հավիտենական կործանմամբ բախվեց Աստծո հետ»: **Աստված նրան ասաց**, որ ճիշտ այդ **գիշեր** մեռնելու է: Հետևաբար նա կորցնելու է իր նյութական ունեցվածքի հանդեպ իրավունքը: Այն հասնելու է ուրիշին: Ինչ-որ մեկն ասել է, որ հիմարը նա է, ում ծրագրերը գերեզմանում են ավարտվում: Այս մարդն իսկապես հիմար էր:

«**Ո՛ւմ պիտի մնա այս քո պատրաստածը**», - հարցրեց Աստված: Մենք ճիշտ այդպես էլ կարող ենք ինքներս մեզ հարցնել. «Եթե հիմա Քրիստոսը գա, ապա ո՛ւմ է մնալու իմ ողջ բարիքը»: Որքան լավ է այն օգտագործել Աստծո համար այսօր, քան թողնել, որ վաղը այն հայտնվի սատանայի ձեռքում: Մեր կատարած բարիքի օգնությամբ մենք կարող ենք հիմա **գանձեր** հավաքել երկնքում և այդ ձևով **Աստծո հանդեպ հարուստ լինել**: Կամ էլ կարող ենք այն շռայլել մեր մարմնի համար, իսկ մարմնից էլ ապականություն հնձել:

Գ. Հո՛գս, թե՛ հավատ (12:22-34)

12:22-23. Քրիստոնեական կյանքի ամենամեծ վտանգներից մեկն այն է, որ սննդի ու հագուստի ձեռքբերումը դառնում է մեր գոյության առաջին ու գլխավոր նպատակը: Մենք այնքան զբաղված ենք այս բոլորի համար դրամ վաստակելով, որ Տիրոջ գործը երկրորդ պլան ենք մղում: ՆԿ-ում շեշտվում է, որ Քրիստոսի գործը պետք է առաջին տեղը զբաղեցնի մեր կյանքում: **Կերակուրն ու հագուստը** պետք է երկրորդ տեղում լինեն: Մենք պետք է ջանասիրությամբ աշխատենք մեր ամենօրյա կարիքները հոգալու համար, իսկ հետո մեզ նվիրաբերելով Աստծո ծառայությանը՝ մեր ապագան վստահենք Նրան: Սա է հավատի կյանքը:

Երբ Տեր Հիսուսն ասաց, որ մեզ պետք չէ **մտահոգվել** կերակուրի և հագուստի համար, Նա նկատի չունեց, որ պետք է

ձեռքներս ծալված նստենք ու սպասենք, մինչև որ դրանք մեզ տրվեն: Քրիստոնեությունը ծուլության կոչ չի անում: Նա, անկասկած, նկատի ունեց, որ կյանքի կարիքների համար դրամ վաստակելով՝ մենք չպետք է թույլ տանք, որպեսզի դրանք մեզ համար չափից ավելի նշանակություն ունենան: Չէ՞ որ կյանքում ավելի կարևոր բան կա, քան այն, ինչ **ուտում** կամ հագնում ենք: Մենք այստեղ Թագավորի դեսպաններն ենք, և անձնական հարմարավետության ու արտաքին տեսքին առնչվող պատկերացումները պետք է ենթարկվեն այս փառավոր խնդրին՝ Նրա մասին հռչակելուն:

12:24. Հիսուսն օգտագործում է **ագռավներին**՝ որպես Աստծո՝ Իր արարածների նկատմամբ ունեցած հոգատարության օրինակ: Նրանք իրենց կյանքը չեն անցկացնում իրենց սննդի և ապագա կարիքների հայթայթման կատաղի վագրի մեջ: Նրանք ապրում են՝ ժամ առ ժամ Աստծուց կախման մեջ լինելով: Այն փաստը, որ **նրանք ո՛չ սերմանում են և ո՛չ էլ հնձում**, չպետք է նեղմտանա այնքան, որ սովորեցնի, թե մարդիկ պետք է ձեռնպահ մնան աշխարհային զբաղմունքներից: Նրա ճշմարիտ նշանակությունը սա է. Աստված գիտի նրանց կարիքների մասին, ում ստեղծել է, և Նա հոգալու է դրանք, եթե մենք, Նրանից կախման մեջ լինելով, ապրենք: Եթե **Աստված կերակրում է** ագռավներին, ապա որքան ավելի կկերակրի նրանց, ում ստեղծել է, ում Իր շնորհով փրկել է և կանչել է ծառայելու Իրեն: Ագռավները ո՛չ շտեմարաններ ունեն, ո՛չ ամբարներ, և Աստված օրըստօրե ապահովում է նրանց: Ինչո՞ւ մեր կյանքն անցկացնենք մեծ շտեմարաններ ու ամբարներ կառուցելով:

12:25-26. «**Ձեզանից ո՛վ կարող է հոգս անելով իր հասակի վրա մի կանգուն էլ ավելացնել**», - հարցրեց Հիսուսը: Սա ցույց է տալիս մեր ենթակայության տակ չեղող բաների մասին հոգս անելու անփմաստությունը, օրինակ՝ ապագայի մասին: Ոչ **մեկը հոգս անելով չի կարող ավելացնել** իր հասակի վրա կամ կյանքը երկարացնել: «Իր

հասակի վրա» արտահայտությունը կարելի է թարգմանել՝ «իր կյանքի տևողության վրա»: Իսկ եթե այդպես է, ապա ինչո՞ւ հոգս անել ապագայի մասին: Սրա փոխարեն՝ եկե՛ք մեր բոլոր ուժն ու ժամանակն օգտագործենք Քրիստոսին ծառայելու համար, իսկ ապագան թողնենք Նրան:

12:27-28. Ծարունակության մեջ խուժում է **շուշանների** մասին: Այս օրինակը պատկերավոր կերպով ցուցադրում է **հագուստ** ձեռք բերելու նպատակով մարդու ամենագեղեցիկ շնորհների օգտագործման փուլ լինելը, աննպատակահարմարությունը: **Շուշանները** հավանաբար վայրի կարմիր անեմոններն են: **Նրանք ո՛չ ջանք են թափում և ո՛չ էլ մանում**, այնուամենայնիվ, օժտված են բնության գեղեցկությամբ, որը մրցակցում է **Սողոմոնի ամբողջ փառքի** հետ: Եթե Աստված այսպիսի գեղեցկությամբ է զարդարում ծաղիկներին, որոնք այսօր ծաղկում են, իսկ վաղը գգվում կրակի մեջ, ապա մի՞թե Նա Իր ուշադրությունից բաց կթողնի Իր գավակների կարիքները: Մենք մեզ **թերահավատների** պես ենք պահում, երբ անհանգստանում, մտահոգվում և անվերջանալի պայքարի մեջ ենք մտնում, որպեսզի ավելի ու ավելի շատ նյութական բարիքներ ձեռք բերենք: Մենք մեր կյանքը վատնում ենք այն բանի համար, ինչն Աստված կաներ մեզ համար, եթե Նրան ավելի շատ նվիրեինք մեր ժամանակն ու տաղանդները:

12:29-31. Իրականում մեր ամենօրյա կարիքները քիչ են: Չարմանալի է՝ որքան պարզ, հասարակ կարող ենք ապրել: Ուրեմն այդ դեպքում ինչո՞ւ սննդին ու հագուստին այդպիսի երևացող տեղ տանք կյանքում: Այսպես ապրում են չփրկվածները: **Այս աշխարհի ազգերի** ուշադրությունը, որոնք Աստծուն՝ որպես իրենց Հայր չեն ճանաչում, կենտրոնացած է կերակուրի, հագուստի և հանույքների վրա. սա է նրանց գոյության շրջանի կենտրոնը: Սակայն Աստված երբեք չի նախատեսել, որ Իր գավակներն իրենց ժամանակը անցկացնեն հարմարավետությունների հետևից ընկնող

ցնորալի մրցավազքի մեջ: Նա աշխատանք ունի, որը պետք է ավարտին հասցնել երկրի վրա, և խոստացել է հոգալ նրանց մասին, ովքեր բոլոր սրտով նվիրված են Իրեն: Եթե մենք Նրա **Թագավորությունն ենք փնտրում**, ապա Նա երբեք թույլ չի տա, որ քաղցած կամ մերկ լինենք: Ի՛նչ տխուր բան է կյանքի վախճանին հասնել ու հանկարծ հայտնաբերել, որ ժամանակի մեծ մասը ծախսվել է չարքաշ աշխատանք թափելով այն բանի համար, որն արդեն ներառված է երկնային տուն գնալու տոմսի մեջ:

12:32. Աշակերտները կազմում էին անպաշտպան ոչխարների **փոքրիկ հոտ**, որը ուղարկված էր անբարյացակամ աշխարհին: Նրանք իսկապես ոչ մի տեսանելի միջոցներ չունեին ապահովված ու պաշտպանված լինելու համար: Սակայն այս երիտասարդական խղճուկ խմբին էր նախատեսված Քրիստոսի հետ ժառանգել **Թագավորությունը**: Նրանք պետք է մի օր Նրա հետ թագավորեն երկրի վրա: Հաշվի առնելով այս՝ Տերը նրանց կոչ է անում **չվախենալ**, որովհետև եթե **Հայրը** նրանց համար այդպիսի փառահեղ պատիվ է պատրաստել, ապա նրանք չպետք է մտահոգվեն միջանկյալ ճանապարհի մասին:

12:33-34. Նյութական բարիքներ կուտակելու և ժամանակը ծրագրավորելու փոխարեն նրանք կարող են այդ ունեցվածքը օգտագործել Տիրոջ գործի համար: Այսպիսով, նրանց ներդրումը կլինի երկնքի ու հավիտենականության համար: Ժամանակի կործանարար ազդեցությունը չի վնասի նրանց սեփականությանը: Երկնային գանձերն ամբողջությամբ ապահովագրված են գողությունից ու փչանալուց: Նյութական հարստություն ունենալու դժվարությունն այն է, որ սովորաբար չես կարող այն ունենալ՝ առանց դրա վրա հենվելու: Ահա թե ինչու Տեր Հիսուսն ասաց. **«Որովհետև, որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»**: Եթե մենք մեր դրամը նախօրոք երկինք ուղարկենք, մեր կապվածությունն աշխարհի բոլոր կործանվող, եղծանելի բաներից կքանդվի:

Գ. Արթուն ծառայի մասին առակը (12:35-40)

12:35. Աշակերտները ոչ միայն իրենց բոլոր կարիքների համար պետք է վստահեն Տիրոջը, այլև պետք է ապրեն՝ մշտապես սպասելով Նրա 2-րդ գալստյանը: Նրանց **գոտիները** պետք է **կապված լինեն և ճրագները՝ վառված:** Արևելյան երկրներում մարդիկ գոտի էին կապում իրենց մեջքին, որպեսզի ամրացնեին երկար կախված հագուստը, երբ ստիպված էին արագ քայլել կամ վազել: Գոտևորվելը խոսում է առաքելության մասին, որը պետք է իրականացնել, իսկ վառվող ճրագն էլ ցույց է տալիս վկայության հռչակումը:

12:36. Աշակերտները պետք է ապրեին՝ ամեն րոպե սպասելով Տիրոջ վերադարձին, կարծես թե Նա լինել **հարսանիքից** վերադարձող մարդը: Քելին մեկնաբանում է.

«Նրանք պետք է ազատ լինեին երկրավոր խոչընդոտներից, որպեսզի այն պահին, երբ Տերը թակեր դուռը, ինչպես այս օրինակում է. նրանք կարողանային անմիջապես բացել Նրա համար՝ միշտ պատրաստ ու առանց խանգարումների: Նրանց արտերը սպասում են Նրան՝ իրենց Տիրոջը, նրանք սիրում են Նրան ու պատրաստ են հանդիպելու: Նա թակում է, և նրանք ճիշտ այդ պահին բացում են»:⁴³

Հարսանիքից վերադարձող մարդու մասին պատմության մանրամասները չպետք է ընդգծել՝ դրանցից մարգարեական ապագա կորզելով: Մենք չպետք է այստեղ հիշատակվող հարսանիքը նույնացնենք Գառան հարսանիքի հետ կամ մարդու վերադարձը՝ եկեղեցու հափշտակության հետ: Տիրոջ պատմած պատմությունը նախատեսված է մի պարզ ճշմարտություն սովորեցնելու համար՝ արթուն կերպով սպասել Իր վերադարձին: Նա այն նպատակով չպատմեց, որպեսզի հաստատեր Իր գալստյան դեպքերի հերթականությունը:

12:37. Երբ տերը վերադառնում է հարսանիքից, **ծառաները** չեն քնում, այլ սպասում են նրան ու պատրաստ են գործի անց-

նելու ըստ նրա հրամանի: Նա այնքան գոհ է նրանց արթուն մնալուց, որ պատրաստ է տառացիորեն ծառայելու նրանց: Նա **գոտին՝** գոզնոցը, կկապի, **նրանց** սեղան կնըստեցնի և ուտելիք կմատուցի **նրանց:** Սա մի ազդեցիկ հիշատակություն է այն մասին, թե Նա, Ով մի անգամ աշխարհ եկավ Ծառայի կերպարանքով, ողորմածությամբ բարեհաճելու է կրկին ծառայել Իր ժողովրդին երկնային տանը: Աստվածավախ գերմանացի աստվածաբան Բենգելը կարծում է, որ 37-րդ համարն Աստծո բոլոր խոսքերից ամենամեծ խոստումն է:

12:38. Գիշերվա **երկրորդ հսկումի** պահը տևում է երեկոյան ժամը իննից մինչև կեսգիշեր, **երրորդ հսկումը՝** կեսգիշերից մինչև առավոտյան ժամը երեքը: Անկախ նրանից, թե որ հսկման պահին տերը կգա, նրա **ծառաները** գտնվում էին սպասման մեջ:

12:39-40. Տերը փոխում է տեսարանը՝ օրինակ բերելով տանտիրոջը, ում տուն անսպասելիորեն ներխուժեցին գողերը: Գողի գալը լիովին անսպասելի թվաց: **Եթե տանտերն իմանար, թե գողը որ ժամին է գալու,** ապա **թույլ չէր տա, որ իր տունը մըրտնեն:** Այստեղ դասն այն է, որ Քրիստոսի գալստյան ժամանակն անհայտ է, ոչ ոք չգիտի Նրա գալու ո՛չ օրը, ո՛չ ժամը: Երբ Նա վերջապես գա, այն հավատացյալները, ովքեր երկրի վրա են գանձեր հավաքել, դրանք կկորցնեն: Այդ իսկ պատճառով մեկն ասել է. «Քրիստոնյան կամ թողնելու է իր հարստությունը, կամ էլ գնալու է դրա մոտ»: Եթե իսկապես արթուն ենք Քրիստոսի վերադարձին սպասելիս, ապա կվաճառենք բոլոր մեր ունեցածը և երկնքում գանձեր կուներանք, որտեղ ոչ մի գող չի կարող հասնել:

Ե. Հավատարիմ և անհավատարիմ ծառաները (12:41-48)

12:41-42. Այդ ժամանակ **Պետրոսը** հարցրեց, թե ում է ուղղված արթուն լինելու մասին Քրիստոսի **առակը՝** միայն աշակերտների՞ն, թե՞ բոլոր մարդկանց: Տերը պատասխանեց, որ բոլոր նրանց համար է, ովքեր իրենց Աստծո տնտես են դավանում:

Հավատարիմ և իմաստուն տնտեսը նա է, ով կարգված է տիրոջ տան վրա և ով բաժանում է նրա մարդկանց **կերակուրը**: Այստեղ տնտեսի գլխավոր պարտականությունը վերաբերում է մարդկանց, ոչ թե նյութական բաներին: Մա համաձայն է ամբողջ համատեքստին, ուր Հիսուսն աշակերտներին նախագգուշացնում է ընդդեմ նյութապաշտության ու ազահության: Մարդիկ են կարևոր, ոչ թե իրերը:

12:43-44. Երբ Տերը **գա** ու հայտնաբերի, որ Իր ծառան իսկական հետաքրքրապիրություն է ցուցաբերում տղամարդկանց ու կանանց հոգևոր աճի նկատմամբ, ապա առատությամբ կվարձատրի նրան: Վարձատրությունը հավանաբար կապված է Հազարամյա Թագավորության ժամանակ Քրիստոսի հետ միասին կառավարելու հետ (1 Պետ. 5:1-4):

12:45. Այստեղ **ծառան** ասում է, որ Քրիստոսի համար է աշխատում, բայց իրականում անհավատ է: Աստծո ժողովրդին կերակրելու փոխարեն նա հարվածում է նրան, թալանում և ապրում հոգուտ իր կրքերի: Այստեղ հավանաբար նկատի ունի փարիսեցիներին:

12:46. Տիրոջ գալուստը մերկացնելու է նրա կեղծությունը, և նա պատժվելու է մյուս **անհավատարիմների հետ**: «**Մեջտեղից երկու կտոր կանի**» արտահայտությունը նաև կարելի է թարգմանել «խստորեն կխարազանի»:

12:47-48. Այս համարներում առաջ են քաշվում ամբողջական ծառայության հիմնարար սկզբունքները: Ուստի որքան շատ է արտոնությունը, այնքան շատ է պատասխանատվությունը: Հավատացյալների համար սա նշանակում է, որ երկնքում վարձատրության աստիճաններ են լինելու: Անհավատների համար սա նշանակում է, որ դժոխքում պատժի աստիճաններ են լինելու: Նրանց վրա, ովքեր ճանաչել են սուրբգրություններում հայտնված Աստծո **կամքը**, մեծ պատասխանատվություն է դրված դրան հնազանդվելու: Նրանց **շատ է տրված, շատ էլ կպահանջվի**: Նրանք, ովքեր գրկված են եղել այդպիսի բարձր արտո-

նությունից, նույնպես պատժվելու են իրենց սխալների համար, սակայն նրանց պատիժը այդքան խիստ չի լինելու:

2. Քրիստոսի առաջին գալուստի ազդեցությունը (12:49-53)

12:49. Տեր Հիսուսը գիտեր, որ Իր՝ **Երկիր** գալը խաղաղություն չի բերելու: Այն նախ բաժանում պիտի պատճառի, հակառակություն, հալածանք, արյունահեղություն: Նա հատկապես **երկրի վրա** այս տեսակի **կրակ** իջեցնելու չեկավ, բայց դա եղավ Նրա գալու արդյունքը կամ ազդեցությունը: Թեև Նրա երկրավոր ծառայության ժամանակ տառապանք ու հակառակություններ եղան, բայց միայն խաչից հետո մարդու սիրտը ճշմարտապես բացահայտվեց: Տերը գիտեր, որ այս բոլորը պետք է կատարվեն, և ուզում էր, որ որքան հնարավոր է շուտ բռնկվեր հենց Իր դեմ ուղղված հետապնդումների **կրակը**:

12:50. Տեր Հիսուսը պետք է **մկրտությամբ մկրտվեր**: Այստեղ մատնանշված է Գողգոթայում մեռնելու Նրա **մկրտությունը**: Որպեսզի ամբողջացնել կործանված մարդկության փրկագնումը, Նա սուկայի բռնադատումների տակ գտնվեց դեպի խաչ գնալիս: Նախատինք, չարչարանք և մահ. ահա սա էր Հոր կամքը Նրա համար, և Նա ամբողջովին հնազանդվեց դրան:

12:51-53. Նա շատ լավ գիտեր, որ այս անգամ չէր եկել **երկրին խաղաղություն** տալու: Այդ իսկ պատճառով Նա աշակերտներին զգուշացրեց, որ Իր մոտ եկող մարդիկ կհալածվեն ու կվտարվեն իրենց ընտանիքների կողմից: Քրիստոնեությունը, ներմուծվելով **հինգ** հոգուց բաղկացած սովորական ընտանիքներ, հանգեցնելու էր ընտանիքի ճեղքմանը: Հետաքրքրական է նշել մարդկային այլասերված բնության հետևյալ պիտանջանը, որ ամբարիշտ ազգականներն ավելի շուտ ուզում են, որ իրենց տղան հարբեցող կամ անառակ լինի, քան Տեր Հիսուս Քրիստոսի բացահայտ հետևորդը: Այս հատվածը հերքում է այն տեսությունը, որ Հիսուսը եկել էր՝ միավորելու ողջ մարդկությանը՝ բարեպաշտներին ու

ամբարիշտներին միասնական «մարդկային համընդհանուր եղբայրության» մեջ: Ընդհակառակը, Նա բաժանեց նրանց այնպես, որ երբեք նախկինում այդպես չէին բաժանվել:

Է. Ժամանակի նշանը (12:54-59)

12:54-55. Նախորդ համարները հասցեագրված էին աշակերտներին: Այստեղ Փրկիչը դիմում է **ժողովրդին**: Նա մարդկանց հիշեցնում է ապագան կանխատեսելու նրանց կարողության մասին: Նրանք գիտեին, որ եթե **արևմուտքից ամպ է բարձրանում** (Միջերկրական ծովից), ապա պետք է **անձրևի** սպասել: Եվ հակառակը՝ **հարավային քամին շոգ** ու չորություն է բերում: Մարդկանց բավարար էր իրենց տրամաբանությունը, որպեսզի այս ամենն իմանային: Սակայն այստեղ ավելին էր անհրաժեշտ, քան խելքը: Իմանալու փափագ էր անհրաժեշտ:

12:56. Հոգևոր հարցերում ամեն ինչ այլ է: Չնայած նրանք տիրապետում էին մարդկային առողջ մտածելակերպի, բայց չէին հասկանում, թե ինչ կարևոր **ժամանակ** է եկել մարդկության պատմության մեջ: Աստծո Որդին եկել էր աշխարհ ու այդ պահին կանգնել նրանց մեջ: Նախկինում երբեք երկինքն այսքան չէր մոտեցել: Բայց նրանք չիմացան իրենց այցելության ժամանակը: Նրանք իմանալու մտային կարողությունն ունեին, սակայն իմանալու կամքը չունեին, ուստի իրենք իրենց էին խաբում:

12:57-59. Եթե նրանք գիտակցեին իրենց սպրելու ժամանակաշրջանի նշանակությունը, ապա կշտապեին հաշտվել իրենց **թշնամու** հետ: Այստեղ իրավաբանական չորս եզրույթ է օգտագործված՝ **ոսոխ, իշխան, դատավոր, դահիճ**, և այս բոլորն էլ կարող են Աստծուն մատնանշել: Հենց այդ ժամանակ Աստված քայլեց նրանց մեջ՝ աղերսելով ու փրկություն ձեռք բերելու հնարավորություն տալով: Նրանք պետք է ապաշխարեն ու իրենց հույսը դնեն Նրա վրա: Եթե հրաժարվեն, ապա ստիպված կլինեն Աստծո առջև կանգնել որպես իրենց Դատավորի: Դատական գործը, իհարկե,

ընթանալու է նրանց դեմ: Նրանց մեղավոր են ճանաչելու և դատապարտելու են անհավատության համար: Նրանք զգվելու են **քանտի** մեջ, այսինքն՝ հավիտենական դատապարտության: Այնտեղից դուրս չեն գալու, **մինչև վերջին գրոշը չվճարեն**, այսինքն՝ երբեք դուրս չեն գալու, որովհետև երբեք չեն կարող վճարել այդքան անելի պարտքը:

Այսպիսով, Հիսուսն ասում էր, որ նրանք պետք է տարբերեն ժամանակը, որում ապրում են: Այնուհետև նրանց անհրաժեշտ էր Աստծո հետ ճիշտ փոխհարաբերությունների անցնել՝ ապաշխարելով սեփական մեղքերից և լիակատար հնազանդությամբ նվիրվելով Նրան:

Ը. Ապաշխարության կարևորությունը (13:1-5)

13:1-3. 12-րդ գլուխն ավարտվեց հրեա ժողովրդի իրենց սպրած ժամանակը զգնահատելու անկարողությամբ ու Տիրոջ զգուշացումով, որ անհապաղ ապաշխարեն, այլապես հավիտյան կկորչեն: 13-րդ գլուխը շարունակում է այս թեման և հիմնականում հղված է Իսրայելին՝ որպես ազգի, թեև սկզբունքները վերաբերում են նաև անհատներին: Չորսյցը հիմնված է ազգային երկու աղետների վրա: Առաջինը մի խումբ **գալիլիացիների** սպանությունն էր, որոնք պաշտամունքի համար Երուսաղեմ էին եկել: Հուդայի կառավարիչ **Պիղատոսը** հրամայեց սպանել նրանց, մինչ վերջիններս **գոհեր** էին մատուցում: Այս վայրագության մասին սրանից ավել ոչինչ հայտնի չէ: Չոհվածները հավանաբար Գալիլիայում ապրող հրեաներ էին: Երուսաղեմում ապրող հրեաները ենթադրում էին, թե **այդ գալիլիացիները** անավոր մեղքեր էին գործել, և որ նրանց մահը վկայում է Աստծո՝ նրանց հանդեպ ունեցած անբարյացակամության մասին: Սակայն Տեր Հիսուսն այստեղ ճշտումներ կատարեց՝ զգուշացնելով հրեա ազգին, որ **եթե չապաշխարեն, բոլորն էլ այդպես կկորչեն**:

13:4-5. Երկրորդ աղետը **Սելովամի աշտարակի** փլուզումն էր, որը պատճառ ե-

դավ **տասնույթ** մարդու մահվան: Այս դեպքի մասին այստեղ արձանագրվածից բացի ուրիշ ոչինչ հայտնի չէ: Բայց մեզ պետք էլ չէ ուրիշ մանրամասնություններ իմանալ: Տիրոջ կողմից շեշտված միտքը հետևյալն է. պետք չէ այս աղետը հասկանալ որպես հատուկ պատիժ ծանր հանցանքների համար: Ընդհակառակը, այն կարելի է դիտարկել որպես նախազգուշացում ողջ Իսրայել ժողովրդին առ այն, որ եթե չապաշխարեն, նրանց էլ այդպիսի ճակատագիր կհասնի: Այդպիսի արհավիրք նրանց վրա հասավ մ.թ. 70թ.-ին, երբ Տիտոսը ներխուժեց Երուսաղեմ:

Թ. Անպտուղ թզենու մասին առակը (13:6-9)

Այնուհետև Տեր Հիսուս Քրիստոսը պատմեց **թզենու** մասին **առակը**, որը սերտորեն կապված է նախորդ թեմայի հետ: Դժվար չէ **թզենին** նույնացնել Աստծո **այգում**, այսինքն՝ աշխարհում **տնկված** Իսրայելի հետ: Աստված ծառի վրա պտուղ որոնեց, բայց չգտավ: Ուստի ասաց այգեպանին (Տեր Հիսուսին), որ **երեք տարի** իզուր է սպասել այդ ծառի **պտղին**: Ըստ այս հատվածի ամենապարզ մեկնության՝ այդ ժամանակը վերաբերում է մեր Տիրոջ հրապարակային ծառայության առաջին երեք տարիներին: Թզենուն բավական ժամանակ էր տրված, որպեսզի պտուղ տար, եթե նա պատրաստվում էր այն տալու: Քանի որ երեք տարվա ընթացքում պտուղն ի հայտ չեկավ, դա պատճառ եղավ տրամաբանորեն եզրակացնելու, որ նա երբեք էլ պտուղ չի տա: Քանի որ ծառն անպտուղ է, Աստված հրամայեց **կտրել** այն: Այն միայն **հող էր** զբաղեցնում, որը կարելի էր մեծ օգտակարությամբ օգտագործել: Այգեպանը հետաքրքրված էր թզենիով ու խընդրեց, որ նրան ևս մեկ տարի տրվի: Եվ եթե այդ ժամանակահատվածի վերջում էլ այն անպտուղ մնա, ապա Նա կարող է **կտրել դա**: Հենց այդպես էլ եղավ: Չորրորդ տարին սկսել էր, երբ Իսրայելը մերժեց ու խաչեց Տեր Հիսուսին: Արդյունքում նրա մայրաքաղաքը քանդվեց ու բնակիչները ցիրուցան եղան:

Ձ. Հ. Լանգը դա այսպես է արտահայտել.

«Աստծո Որդին գիտեր Իր Հոր՝ այգու Տիրոջ մտադրությունները և այն, որ սարսափելի հրաման է արձակված. «Կտրի՛ր դա»: Իսրայելը սպառեց Աստծո երկանամտությունը: Ո՛չ ժողովուրդը, ո՛չ էլ առանձին անհատը ոչ մի հիմնավոր պատճառ չունեն՝ վայելելու Աստծո հոգատարությունը, եթե Աստծո փառքի ու գովեստի համար արդարության պտուղ չի արտադրում: Մարդն ապրում է նրա համար, որ փառաբանի և ուրախացնի Արարիչ Աստծուն: Եթե նա այս փառավոր նպատակին չի ծառայում, ապա իր մեղանշական անկմանը կարող է հետևել մահվան դատավճիռը, և նա կզրկվի առանձնաշնորհումից»:⁴⁴

Ժ. Կծկված կնոջ բժշկությունը (13:10-17)

13:10-13. Իսրայելի իրական վերաբերմունքը Տեր Հիսուս Քրիստոսի նկատմամբ երևում է ժողովարանի ղեկավարի վարմունքից: Այս պաշտոնյան դեմ էր նրան, որ Փրկիչը այդ կնոջը բժշկի շաբաթ օրը: Այդ կինը տասնութ տարուց ի վեր տառապում էր ողնաշարի ուժեղ թեքվածությունից: Այդ թեքվածությունը այնքան ծանր էր, որ նա **չէր կարողանում ուղիղ կանգնել**: Նույնիսկ առանց օգնության խնդրանքի Տեր **Հիսուսը** բուժիչ խոսքեր ասաց, **ձեռքը դրեց նրա վրա** և շտկեց նրա ողնաշարը:

13:14. **Ժողովարանի ղեկավարը** վրդովված մարդկանց ասաց, որ բուժվելու համար պետք է գան շաբաթվա առաջին **վեց օրերին**, ոչ թե յոթերորդ օրը: Նա ժողովրդի խնդիրների մեջ չխորասուզվող, արհեստավարժ կրոնական գործիչ էր: Նույնիսկ եթե նրանք գային շաբաթվա առաջին վեց օրերին, ինքը չէր կարող նրանց օգնություն ցույց տալ: Նա ճշտապահորեն պահպանում էր Օրենքի տեխնիկական կետերը, բայց նրա սրտում սեր և ողորմություն չկար: Եթե ինքը տասնութ տարի ողնաշարի թեքություն ունենար, կարևոր չէր համարի, թե շաբաթվա որ օրվա մեջ այն կշտկեն:

13:15-16. Տերը հանդիմանեց նրա, ինչպես նաև մյուս առաջնորդների կեղծավորությո-

յունը: Նա հիշեցրեց նրանց, որ նրանք, առանց հապաղելու, **շաբաթ օրով իրենց եզր կամ էջը մտորից արձակում են**, որպեսզի ջուր տան: Եթե շաբաթ օրով այդպիսի հոգատարություն են դրսևորում համր կենդանիներին, ապա ի՞նչ սխալ բան կար, որ Հիսուսը բժշկեց այդ կնոջը՝ **Աբրահամի աղջկան**: «Աբրահամի աղջիկ» արտահայտությունը ցույց է տալիս, որ նա ոչ միայն հրեա էր, այլև ճշմարիտ հավատացյալ, հավատի կին: Ողնաշարի ծովածությունը **սատանան** էր պատճառել նրան: Աստվածաշնչի մյուս տեղերից իմանում ենք, որ որոշ հիվանդություններ սատանայական գործունեության արդյունք են: Հոբի մարմնի պալարները սատանայից էին: Պողոս առաքյալի մարմնի «խայթոցը» սատանայից էր ուղարկվել, որպեսզի նեղի նրան: Այնուամենայնիվ, սատանան չի կարող այս բոլորը հավատացյալներին պատճառել՝ առանց Տիրոջ թույլտվության: Իսկ Աստված վերացնում է յուրաքանչյուր այսպիսի հիվանդություն կամ չարչարանք Իր փառքի համար:

13:17. Մեր Տիրոջ խոսքերը հիմնավորապես **ամաչեցրին** Իր քննադատներին: Հասարակ ժողովուրդն **ուրախանում էր** այս **փառավոր** հրաշքի համար:

Ի. Թագավորության առակները (13:18-21)

13:18-19. Բժշկության այսպիսի զարմանալի հրաշք տեսնելիս ժողովուրդը կարող էր մտածել, որ Թագավորությունը կհաստատվի շատ կարճ ժամանակում: Տերը նրանց հանեց մոլորությունից՝ **Աստծո Թագավորության** մասին երկու առակ պատմելով, որոնք ներկայացնում են Թագավորին մերժելու և թագավորելու համար Իր՝ Երկիր վերադառնալու միջև ընկած ժամանակահատվածում գործող թագավորության միջանկյալ ձևը: Դրանք պատկերում են քրիստոնեության աճը՝ ներառելով և՛ իրականը, և՛ անվանականը (տե՛ս 8:1-3-ի նշումները):

Առաջին առակում Նա **Աստծո Թագավորությունը** նմանեցրեց **մանանեխի հա-**

տիկին, որը սերմերից ամենափոքրն է: Եթե նրան հողի մեջ ցանես, ապա դրանից թուփ կանի, ոչ թե ծառ: Հետևաբար, ասելով, որ դրանից **մեծ ծառ** աճեց՝ Հիսուսը նշեց, որ այդպիսի աճը չափազանց անսովոր է: Ծառը բավական մեծ էր, այնպես որ **նրա ճյուղերի վրա** պատսպարվեցին **երկրնքի թռչունները**: Այստեղ պարփակված է այն միտքը, որ քրիստոնեությունը համեստ սկիզբ ունեցավ, **մանանեխի հատի** պես փոքրիկ: Սակայն աճին զուգահեռ այն ավելի հանրահայտ դարձավ և երևան եկավ այն քրիստոնեությունը, որ ծանոթ է մեզ այսօր: Քրիստոնեական աշխարհն իր մեջ ներառում է բոլոր նրանց, ովքեր հավատարիմ են Տիրոջը՝ անկախ նրանից՝ վերջստին ծնունդ ունեն, թե ոչ: **Երկնքի թռչունները, դրանք** անզոներն ու մյուս գիշատիչ թռչուններն են: Նրանք խորհրդանշում են չարին ու այն փաստն են անդրադարձնում, որ քրիստոնեությունը դարձել է հանգստավայր տարբեր այլասերումների համար:

13:20-21. Երկրորդ առակում Աստծո Թագավորությունը նմանեցված է **թթխմորի, որ մի կին** լցրեց **երեք չափ այլուրի մեջ**: Մենք համարում ենք, որ Սուրբ Գրքում թթխմորը միշտ չարի խորհրդանիշն է: Այս առակի միտքը հետևյալն է. չար ուսմունքը կներմուծվի Աստծո ժողովրդի մաքուր կերակրի մեջ: Չար ուսմունքը կայուն չէ, այն օժտված է աննկատելիորեն տարածվելու նենգ գորությանը:

Լ. Թագավորության նեղ դուռը (12:22-30)

13:22-23. Երբ Հիսուսն Իր ճանապարհն ուղղեց **դեպի Երուսաղեմ**, ժողովրդից ինչ-որ մեկը հարց տվեց Նրան. «**Տե՛ր, քի՛չ են նրանք, որ փրկվելու են**»: Դա կարող էր պարզապես հետաքրքրվածությունից մրդված դատարկ հարց լինել:

13:24. Տերն այդ հայեցողական հարցին պատասխանեց՝ անմիջական պատվիրան տալով: Նա հարց տվողին պատվիրեց մտա-հոգվել այն մասին, որ ինքն անձամբ **նեղ դռնով ներս մտնի**: Երբ Հիսուսն ասաց,

«Չանացե՛ք, նեղ դռնով ներս մտնե՛ք», Նա նկատի չունե՛ր, որ փրկությունը մեր կողմից ջանք է պահանջում: Այստեղ **նեղ դուռը** վերստին ծնունդն է, ըստ հավատի՝ շնորհով փրկությունը: Հիսուսն այս մարդուն կոչ արեց ջանալ նեղ դռնով ներս մտնել: «**Շատերը կուզեն մտնել, բայց չեն կարողանա**», երբ դուռը փակվի: Մա բոլորովին էլ չի նշանակում, թե նրանք կջանան մտնել դարձի դռնով: Ավելի ճիշտ այն օրը, երբ Քրիստոսը հայտնվի գորությամբ ու փառքով, նրանք կուզենան մտնել Նրա Թագավորության մեջ, բայց շատ ուշ կլինի: Ծնորհի օրը, որում ապրում ենք, կհասնի իր ավարտին:

13:25-27. Տանտերը կելնի ու դուռը կփակի: Այստեղ հրեա ժողովուրդը պատկերված է **դուռը** թակողի և **Տիրոջից** դուռը **բացել** խնդրողի դերում: Նա կմերժի նրանց այն հիմքի վրա, որ երբեք նրանց չի ճանաչել: Այդ դեպքում նրանք կբողոքեն ու կհայտարարեն, թե Նրա հետ շատ մտերմիկ փոխհարաբերություններ են ունեցել: Սակայն այս հայտարարությունները չեն ազդելու Նրա վրա: Նրանք **անիրավություն գործողներ են** և մտնելու թույլտվություն չեն ստանա:

13:28-30. Նրա մերժումն առաջացնելու է **լաց ու ատամների կրճատում:** **Լացը** խոսում է ապաշխարության մասին, իսկ **ատամների կրճատումը**՝ Աստծո հանդեպ ուժեղ ատելության: Մա ցույց է տալիս, որ դժոխային տառապանքները չեն փոխում մարդու սիրտը: Անհավատ հրեաները **Աստծո թագավորության մեջ** տեսնելու են **Աբրահամին, Իսահակին, Հակոբին ու բոլոր մարգարեներին:** Նրանք էլ հույս ունեին այնտեղ լինելու այն պարզ պատճառով, որ ազգական են Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ, սակայն նրանց **դուրս են հանելու:** Երկրի բոլոր ծայրերից հեթանոսները դիմելու են Հիսուս Քրիստոսի Արքայության պայծառությանը և վայելելու են Նրա հիասքանչ օրհնությունները: Այսպիսով, շատ հրեաներ, որոնք նախապես մըտնում էին Աստծո օրհնության ծրագրի մեջ, կմերժվեն, մինչ հեթանոսները, որոնց դի-

տում են իբրև շների, կվայելեն Քրիստոսի Հագարամյա Թագավորության օրհնությունները:

Խ. Մարգարեները կործանվում են Երուսաղեմում (13:31-35)

13:31. Ըստ երևույթին, այդ ժամանակ Տեր Հիսուսը գտնվում էր Հերովդեսի տարածքում: **Մի քանի փարիսեցիներ** մոտեցան Նրան՝ զգուշացնելու, որ **Հերովդեսն** ուզում է **սպանել** Իրեն, և խնդրեցին, որ **հեռանա** այդտեղից: Փարիսեցիների կողմից Հիսուսի բարեհաջողության ու անվտանգության մասին այսպիսի հոգատարության դրսևորումը լիովին նման չէր նրանց: Հավանաբար նրանք Հերովդեսի հետ միացել էին Հիսուսի դեմ դավադրությանը, որպեսզի վախեցնեն Նրան և չթույլատրեն Երուսաղեմ գնալ, որտեղ, ինչպես գիտեին, լավ ընդունելություն էր սպասվում Նրան:

13:32. Ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքները չտարուբերեցին մեր Տիրոջը: Նա ընդունեց, որ Հերովդեսի կողմից դա դավադրություն է, և փարիսեցիներին պատվիրեց վերադառնալ ու պատգամ փոխանցել **այդ աղվեսին:** Որոշ մարդկանց անհանգստացնում է այն փաստը, որ Տեր Հիսուսը Հերովդեսի մասին խոսեց ինչպես աղվեսի մասին, բնագրի լեզվով՝ իզական սեռի աղվեսի: Նրանց թվում է, որ այս խոսքերը խախտում են Սուրբ Գիրքը, որն արգելում է իշխանավորների մասին վատ խոսքեր ասելը (Ել. 22:28): Բայց սա չարախոսություն չէր, այլ բացարձակ ճշմարտություն: Հիսուսի խոսքերի էությունն այն էր, որ Նա ևս մի կարճ ժամանակի համար գործ ունի, որ պետք է կատարի: Նա պետք է **դներ հաներ և բժշկություններ աներ** Իր մնացած օրերում: Իսկ հետո **երրորդ օրը**, այսինքն՝ վերջին օրը, Նա ավարտելու էր Իր երկրավոր ծառայության հետ կապված գործը: Ոչինչ չի կարող խանգարել Նրան՝ կատարելու Իր պարտականությունները: Երկրի վրա ոչ մի ուժ չի կարող Նրան վնաս պատճառել մինչև նշանակված ժամանակը:

13:33. Ավելին, Նա չէր կարող սպանվել

Գալիլիայում, այդ բացառիկությունը պահվում էր **Երուսաղեմ** քաղաքի համար: Դա մի քաղաք էր, որին բնորոշ էին Բարձրյալ Աստծուն ծառայողների նկատմամբ կատարած սպանությունները: Երուսաղեմը մեծ կամ փոքր չափով տիրում էր Աստծո բանբերներին մեռցնելու մոնոպոլիային: Ճիշտ սա նկատի ունեւր Հիսուսը, երբ ասաց, որ **«հնարավոր չէ, որ մի մարգարե Երուսաղեմից դուրս կորստյան մատնվի»**:

13:34-35. Այսպիսով, մեղանչող քաղաքի մասին ճշմարտությունն ասելով՝ Հիսուսը լիասիրտ խոսքեր ասաց ու լացեց նրա վրա: **Մարգարեներին կոտորող** և Աստծո կողմից ուղարկվածներին **քարկոծող** քաղաքը Նրա քնքուշ սիրո առարկան էր: Քանի անգամ Նա **ուզեց հավաքել** այդ քաղաքի ժողովրդին, **ինչպես թուխսն է իր ձագերին հավաքում թևերի տակ**, բայց նրանք **չուզեցին**: Դժվարությունը նրանց համառ կամքն էր: Արդյունքում՝ նրանց քաղաքը, նրանց տանարը և նրանց երկիրն ավերակ պիտի թողնվի: Նրանք երկար ժամանակ արտաքսված են լինելու: Փաստորեն նրանք **չեն տեսնելու** Տիրոջը, մինչև որ չփոխեն Իր հանդեպ ունեցած իրենց վերաբերմունքը: 35-րդ համարի վերջավորությունը մատնացույց է անում Քրիստոսի երկրորդ գալուստը: Այդ ժամանակ Իսրայել ժողովրդի մնացորդը կապաշխարի ու կասի. **«Օրհնյալ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով»**: Այդ ժամանակ՝ Նրա տիրակալության օրը, Նրա ժողովուրդը ձգտելու է Իրեն:

Ծ. Ջրդողյալ մարդու բժշկությունը (14:1-6)

14:1-3. Մի շաբաթ օր փարիսեցիների գլխավորներից մեկը հրավիրեց Տիրոջն իր տուն՝ հաց ուտելու: Այն անկեղծ հյուրընկալության դրսևորում չէր, այլ ավելի շատ կրոնական առաջնորդների կողմից Աստծո Որդու վրա հանցանք փնտրելու փորձ: Հիսուսը տեսավ մի **մարդու**, ով տառապում էր **ջրդողությամբ**, այսինքն՝ նա ուռուցք ուներ, որի պատճառով ջուրը հավաքվում էր հյուսվածքներում: Փրկիչը կարդաց իր հակառակորդների մտքերը, երբ նրանց հարց-

րեց. **«Օրինավո՞ր է շաբաթ օրը բժշկություն անել»**:

14:4-6. Չնայած նրանք ուզում էին բացասական պատասխան տալ, բայց չէին կարող ոչ մի փաստարկ ներկայացնել, այդ իսկ պատճառով **նրանք լուռ մնացին**: Հիսուսը **բժշկեց** մարդուն և **ճանապարհեց նրան**: Նրա համար դա գթության գործ էր, իսկ աստվածային սերը երբեք չի դադարեցնում իր ծառայությունը, նույնիսկ շաբաթ օրը (Հովհ. 5:17): Հետո դառնալով հրեաներին՝ Նա հիշեցրեց նրանց՝ եթե նրանցից մեկի անասունն ընկնի **հորի մեջ**, նա **անմիջապես կհանի այն**: Այդպիսի արարքը կբխեր նրանց շահերից. կենդանին գումար արժեք: Բայց տեսնելով տառապող ցեղակցին՝ նրանք անտարբերություն դրսևորեցին և պատրաստ էին դատապարտելու Տեր Հիսուսին՝ ցույց տված օգնության համար: Թեև նրանք **չկարողացան պատասխան տալ** Փրկչի փաստարկներին, վստահ կարող ենք լինել, որ էլ ավելի բարկությանը բորբոքվեցին Նրա հանդեպ:

Կ. Հավակնոտ հյուրի մասին առակը (14:7-11)

Երբ Տեր Հիսուսը մտավ փարիսեցու տուն, Նա հավանաբար ուշադրություն դարձրեց, թե ինչպես էին հյուրերը մանևրում, որպեսզի գրավեն սեղանի շուրջ **առաջին տեղերը**: Նրանք ձգտում էին երևացող, պատվավոր տեղեր գրաղեցնել: Այն փաստը, որ Նա նույնպես հյուր էր, չխանգարեց Իրեն խոսել թափանցիկ և ճշմարիտ: Նա քննադատեց ինքնամեծարանքի նման ձևը: **Երբ հրավիրում են** հյուրասիրության, պետք է գրաղեցնել ոչ թե շատ պատվավոր, այլ քիչ պատվավոր **տեղը**: Երբ ուզում ենք ավելի պատվավոր տեղ գրաղեցնել, հնարավոր է՝ մեզ **ամոթահար** կտեղափոխեն քիչ պատվավոր տեղ: Եթե մենք իսկապես համեստ ենք Աստծո առջև, ապա մեզ համար շարժման ընդամենը մեկ հնարավոր ուղղություն կա, և դա դեպի **վերև** շարժումն է: Հիսուսը սովորեցրեց, որ ավելի լավ է դեպի պատվավոր տեղ առաջնորդվել, քան գրավել այդ տեղը և հետո ստիպված լինել թողնել

այն մեկ ուրիշի համար: Նա Ինքը անձնագոհության կենդանի օրինակ է (Փիլ. 2:5-8): Նա Իրեն նվաստացրեց, իսկ Աստված բարձրացրեց Նրան: **Որովհետև ով իր անձը բարձրացնում է, կխոնարհվի** Աստծո կողմից:

Հ. Հյուրեր, որոնց Աստված պատվում է (14:12-14)

Անտարակույս, փարիսեցի առաջնորդը ճաշկերույթին հրավիրել էր տեղի հայտնի մարդկանց: Հիսուսն անմիջապես նկատեց դա: Նա տեսավ, որ այդ բնակավայրի անապահով խավի մարդիկ ընդգրկված չէին հյուրերի ցանկում: Այդ իսկ պատճառով Նա առիթից օգտվեց, որպեսզի հռչակի քրիստոնեության ամենամեծ սկզբունքներից մեկը. մենք պետք է սիրենք նրանց, ովքեր շրջապատված չեն սիրով և ովքեր չեն կարող փոխհատուցել մեզ: Սովորաբար մարդիկ հրավիրում են իրենց **բարեկամներին, եղբայրներին, ազգականներին, հարուստ հարևաններին՝** հույս ունենալով նրանցից **հատուցում** ստանալ: Այսպես վարվելու համար բարեպաշտ կյանքով ապրելու պահանջ չի դրվում: Բայց անկասկած, լիովին անսովոր կլինի **աղքատների, խեղանդամների, կաղերի և կույրերի** նկատմամբ գթություն դրսևորելը: Աստված յուրահատուկ պարգևատրում է պատրաստել յուրաքանչյուրի համար, ով նման մարդկանց հանդեպ գթասրբություն է դրսևորում: Չնայած այսպիսի հյուրերը **չեն կարող հատուցել** մեզ, սակայն Աստված Ինքը խոստանում է հատուցել մարդուն **արդարների հարության ժամանակ**: Սուրբ Գրքում այն նաև կոչվում է առաջին հարություն, երբ հարություն են առնելու բոլոր ճշմարիտ հավատացյալները: Այն տեղի է ունենալու Եկեղեցու հափըշտակության ժամանակ, ինչպես նաև, մեր համոզմամբ, Մեծ նեղության շրջանի վերջում: Այսինքն՝ առաջին հարությունը միանգամայն իրադարձություն չէ, այն իրականանալու է փուլ առ փուլ:

Ձ. Պատճառաբանողների մասին առակը (14:15-24)

14:15-18. Ճաշկերույթին Հիսուսի մոտ սե-

ղան նստած հյուրերից մեկը նկատեց, թե որքան հրաշալի կլինի մասնակցել **Աստծո թագավորության** օրհնություններին: Հավանական է, որ նա գտնվում էր քիչ առաջ Տեր Հիսուսի ասած վարքագծի սկզբունքների տպավորության տակ: Կամ էլ դա պարզապես սովորական բացականչություն էր, որ այդ մարդն արտաբերեց՝ առանց դրա մասին խորը մտածելու: Այնուամենայնիվ, Տերը հակադարձեց, որ ինչքան էլ հրաշալի է **Աստծո թագավորության մեջ հաց ուտելը**, հրավիրվածներից շատերը, ցավոք սրտի, գտնում են ամենահնարավոր թյուր պատճառաբանությունները, որպեսզի արդարացնեն իրենց մերժումը: Նա Աստծուն պատկերեց որպես **մի մարդու**, որ **մեծ ընթրիք արեց և շատերին հրավիրեց**: Երբ ընթրիքը պատրաստ էր, նա ուղարկեց **իր ծառային՝ հրավիրված** հյուրերին հաղորդելու, որ արդեն ամեն ինչ **պատրաստ է**: Սա մեզ հիշեցնում է այն մեծ փաստը, որ Գողգոթայում մեր Տեր Հիսուս Զրիստոսը կատարեց փրկագնման գործը, և ավետարանական հրավերը հնչում է Նրա կատարած գործի հիման վրա: Հրավիրվածներից մեկն արդարացավ նրանով, որ հող էր **գնել և ուզում էր գնալ ու տեսնել**: Ավելի իմաստուն կլիներ՝ մինչև ձեռք բերելը գնար ու այն տեսներ: Բոլոր դեպքերում, նա նյութական իրերի նկատմամբ սերն ավելի բարձր դասեց, քան շնորհալի հրավերը:

14:19-20. Մյուսը **հինգ լուծ եզ էր գնել ու պիտի գնար, որ նրանց փորձեր**: Սա խորհրդանշում է նրանց, ովքեր իրենց աշխատանքը, գործունեությունը կամ գործը բարձր են դասում Աստծո հրավերից: Երբորդն ասաց, որ **կին է առել, դրա համար էլ չի կարող գնալ**: Ընտանեկան կապերն ու սոցիալական հարաբերությունները հաճախ են մարդկանց արգելում ավետարանական հրավերն ընդունել:

14:21-23. Երբ **ծառան** հաղորդեց **տիրոջն** այն մասին, որ բոլոր կանչվածներն արհամարհեցին հրավերը, **տերն** ուղարկեց նրան **քաղաքի** հրապարակներն ու փողոցները, որպեսզի նա **հրավիրի աղքատներին, խեղանդամներին, կաղերին և կույրերին**:

Բենգելն ասել է. «Բնությանն ու շնորհին օտար է վակուումը»: Թերևս առաջին հրավիրյալները հրեա ժողովրդի առաջնորդների նախապատկերն են: Երբ նրանք մերժեցին Ավետարանը, Աստված այն ուղղորդեց Երուսաղեմ **քաղաքի** սովորական մարդկանց: Հասարակ ժողովրդից շատերն արձագանքեցին հրավերին, սակայն տիրոջ տունը դեռ չէր լցվել: Դրա համար էլ տերը ծառային պատվիրեց գնալ **մայրուղիներն ու ցանկապատների առաջ**, որպեսզի **համոզվի** մարդկանց՝ գալու: Այստեղ աներկբա ցույց է տրված, թե ինչպես է Ավետարանը դառնում հեթանոս ազգերին: Նրանց պետք էր ստիպել ոչ թե *զենքի ուժով*, ինչպես դա արվեց քրիստոնեության պատմությունում, այլ ավելի շուտ՝ *փաստարկելու ուժով*: Պետք էր սիրով համոզել մարդկանց և ջանք թափել, որպեսզի նրանց բերեին, և տիրոջ **տունը լցվեր**:

14:24. Ուստի երբ ընթրիքը պատրաստ էր, հյուրերի սկզբնական ցուցակն այլևս ապարդյուն էր, որովհետև նրանք, ովքեր **հրավիրված էին** սկզբում, չեկան:

Ղ. Ճշմարիտ աշակերտության գինը (14:25-35)

14:25. Տիրոջ ետևից **մեծ բազմություն** էր գնում: Առաջնորդների մեծամասնությունը կուրախանային, եթե նման հետաքրքրություն իրենց անձի հանդեպ տրվեր: Սակայն Տեր Հիսուսը չէր ընտրում մարդիկ, որոնք Իրեն կհետևեին հետաքրքրասիրությունից մղված, առանց ի սրտե շահագրգռվածության: Նա փնտրում էր նրանց, ովքեր ուզում էին ապրել ամբողջական ու անկեղծ նվիրվածությամբ, և եթե պահանջվեր՝ Իր համար մեռնելու պատրաստակամությամբ: Դրա համար էլ այստեղ Նա սկսեց մաղել ամբոխին՝ նրանց ներկայացնելով աշակերտության խստագույն պայմանները: Ժամանակ առ ժամանակ Տեր Հիսուսը մարդկանց *կանչում էր* դեպի Իրեն, սակայն տեսնելով, թե ինչպես են Իրեն հետևում, Նա *մտադրում էր* նրանց: Հենց սա է տեղի ունենում այստեղ:

14:26. Առաջին՝ Հիսուսն ասաց Իրեն հե-

տևողներին, որ ճշմարիտ աշակերտ լինելու համար պետք է Իրեն սիրեն ամեն բանից առավել: Նա երբեք մարդկանց չասաց, որ պետք է ատեն **հորը և մորը, կնոջը և որդիներին, եղբայրներին ու քույրերին**: Ընդհակառակը, Նա ընդգծեց, որ Քրիստոսի հանդեպ սերը պետք է մեծ լինի, ուստի դրա հետ *համեմատած*՝ ցանկացած մեկ այլ սեր ատելություն է (հմմտ. Մատթ. 10:37): Ոչ մի ընտանեկան կապ չպետք է շեղի աշակերտին Տիրոջն ամբողջությամբ հնազանդվելու ճանապարհից:

Իրականում աշակերտության առաջին պայմանի ամենադժվար մասը այս խոսքերում է. «... **Ինչպես նաև՝ իր կյանքը**»: Մեզ պետք է ոչ միայն քիչ սիրել մեր ազգականներին, այլև պետք է **ատենք** սեփական **կյանքը**: Մեր կյանքը մեզ վրա կենտրոնացած անցկացնելու փոխարեն պետք է այն կենտրոնացնենք Քրիստոսի վրա: Հարցնելու փոխարեն, թե այս կամ այն արարքն ինչպես կազդի մեզ վրա, պետք է յուրահատուկ մանրամասնությամբ ծանրութեթև անենք, թե այն ինչպես կանդրադառնա Քրիստոսի և Նրա փառքի վրա: Անձնական հարմարավետության ու անվտանգության պատկերացումները պետք է ենթարկվեն Քրիստոսին փառավորելու և Նրա մասին վկայելու մեծ առաջադրանքին: Փրկչի խոսքերը բացարձակ են: Նա ասաց, եթե Նրան չսիրենք ամեն բանից առավել, առավել մեր ընտանիքից և սեփական կյանքից, ապա չենք կարող Իր աշակերտները լինել: Այստեղ կենսատարություն չկա:

14:27. Երկրորդ՝ Նա սովորեցրեց, որ ճշմարիտ աշակերտը պետք է **վերցնի իր խաչը** և հետևի Տիրոջը: Խաչն ինչ-որ ֆիզիկական տկարություն չէ կամ հոգեկան տառապանք, այլ նախատինքի, տառապանքի, մենակության և նույնիսկ մահի ճանապարհն է, որը մարդը կամավոր ընտրում է հանուն Քրիստոսի: Ոչ բոլոր հավատացյալներն են **խաչ վերցնում**: Դրանից կարելի է խուսափել, եթե ապրենք անվանական քրիստոնեական կյանքով: Բայց եթե որոշում ենք ամբողջությամբ մեզ Քրիստոսին նվիրել, ապա սատանայական այն-

պիսի փորձության ենք հանդիպում, ինչպիսին Աստծո Որդին փորձառեց, երբ Երկրի վրա էր: *Հենց սա է խաչը*: Աշակերտը պետք է **գնա Քրիստոսի հետևից**: Դա նշանակում է, որ նա այնպիսի կյանքով պետք է ապրի, ինչպիսի կյանքով ապրեց Քրիստոսը, երբ Երկրի վրա էր. անձնագոհության, նվաստացման, հալածանքի, նախատինքի, փորձության և մեղավորների կողմից հակառակության կյանքով:

14:28-30. Տեր Հիսուսը երկու օրինակ բերեց՝ ցանկանալով ցույց տալ, թե որքան կարևոր է Իրեն հետևելուց առաջ **ծախսերը հաշվել**: Նա քրիստոնյայի կյանքը նմանեցրեց շինարարության, իսկ հետո պատերազմի: Մարդը, **որ կամենա աշտարակ շինել, նախապես կնստի ու իր ծախսերը կհաշվի**: Եթե նրան չբավականացնի ամենը, ինչ պետք է **այն ավարտելու համար**, ապա նա չի ձեռնարկի շինարարությունը: Հակառակ դեպքում, երբ նա դնի **հիմքը** և ստիպված լինի դադարեցնել աշխատանքները, տեսնողները **կսկսեն ծաղրել նրան՝ ասելով**. «Այս մարդն սկսեց շինել և չկարողացավ ավարտել»: Ծիշտ այդպես էլ աշակերտությունն է: Նախ պետք է հաշվել գինը. իսկապե՞ս նրանք պատրաստ են իրենց կյանքը բոլորանվեր դնելու Քրիստոսի ամբողջական տրամադրության ներքո: Այսպես նրանք կարող են սկսել փառահեղ պայծառությամբ, իսկ հետո մարել: Եվ եթե այդպես լինի, ապա տեսնողները կծաղրեն նրանց լավ սկզբի և անփառունակ վերջավորության համար: Կեսկատար քրիստոնյային աշխարհը միայն արհամարհում է:

14:31-32. **Թագավորը, որ ուրիշ թագավորի դեմ պատերազմելու էլնի**, որը գորքի թվով իր գորքին գերազանցում է, պետք է մանրակրկիտ ձևով ծանրութեթև անի՝ արդյոք ինքը հնարավորություններ ունի՞ քիչ ուժերով թշնամուն հաղթելու: Նա իրեն հաշիվ է տալիս՝ սկսել մարտը կամ հանձնվել: Այդպես էլ Քրիստոսի աշակերտները կյանքում չպետք է կիսամիջոցներ լինեն:

14:33. Այս համարը հավանաբար ամբողջ

Աստվածաշնչի ոչ ընդհանուր ընդունելությունն գտած համարներից մեկն է: Այստեղ առանց առարկության ասված է. «**Այդպես էլ ձեզնից ամեն մեկը, եթե իր բոլոր ունեցվածքից չհրաժարվի, չի կարող Ինձ աշակերտ լինել**»: Այս խոսքերը շրջանցման ոչ մի տեղ չեն թողնում: Նրանք նկատի չունեն, որ մարդուն բավական է *ցանկանալ* հրաժարվել իր բոլոր ունեցածից: Ընդհակառակը, այստեղ ասված է, որ նա *պետք է* հրաժարվի իր բոլոր ունեցածից: Մենք պետք է վստահենք Տեր Հիսուսին, որովհետև Նա գիտի, թե ինչ է ասում: Նա հասկանում էր, որ այլ կերպ Իր գործը երբեք չէր կատարվի: Նա ուզում է այնպիսի տղամարդիկ ու կանայք, ովքեր Իրեն բարձր կգնահատեն աշխարհի բոլոր այլ բաներից: Ռեյլը նշում է.

«Իրեն բարիք ցանկացող մարդը նա է, ով հրաժարվում է ամեն ինչի՝ հանուն Հիսուս Քրիստոսի: Նա ընտրում է բարի բաժինը, այս կյանքում նա մի քանի տարի կրում է խաչը, իսկ գալիք աշխարհում ունենում է հավիտենական կյանքը: Նա ձեռք է բերում ամենալավ ունեցվածքը, նա իր հարստությունը վերցնում է անորշիքիմյան կյանքի համար: Նա հարուստ է շնորհով այստեղ և հարուստ է փառքով ապագայում: Եվ ամենալավն այն է, որ հավատալով Քրիստոսին՝ նա ձեռք է բերում այն, ինչը երբեք չի կորցնելու: Սա այն բարի բաժինն է, որը երբեք նրանից չի վերցվի»:⁴⁵

14:34-35. **Աղը** խորհրդանշում է աշակերտին: Տիրոջ համար նվիրաբերված ու գոհաբերական կյանքով ապրող մարդու մեջ ինչոր գեղեցիկ ու գովելի բան կա: Բայց այնուհետև կարդում ենք **աղի** մասին, որն **իր համը կորցնում է**: Ժամանակակից կերակրի աղը չի կարող իր համը կորցնել, քանի որ դա մաքուր աղ է: Սակայն աստվածաշնչյան երկրներում աղը հաճախ անմաքուր էր լինում, քանի որ դրան խառնում էին տարբեր նյութեր: Այդ իսկ պատճառով, ըստ աղի սպառման, ամանում կարող էր մնացորդ մնալ: Այդ մնացորդը պիտանի չէր: Այն չէր կարելի օգտագործել նույնիսկ հողը

պարարտացնելու համար: Այն պետք է դուրս թափվեր:

Այստեղ պատկերված է այն աշակերտը, ով փայլուն սկսում է, իսկ հետո ետ կանգնում իր տված խոստումներից: Աշակերտը միայն մի նպատակի համար է ապրում, իսկ երբ այլևս չի ծառայում այդ նպատակին, ողորմելի է դառնում: Աղի մասին կարդում ենք, որ «**դուրս են թափում այն**»: Չի ասվում, թե նրան **Աստված** է դուրս թափում. երբեք դա չի կարող լինել: Մարդիկ են **այն դուրս թափում**: Այլ խոսքով, նրանք ոտնակոխ են անում այն մարդու վկայությունը, որն սկսել էր կառուցել և ի վիճակի չէր ավարտելու: Քեյին նշում է.

«Այստեղ ցույց է տրվում լավ սկսելու և վատ վերջացնելու վտանգը: Ի՞նչը աշխարհում կարող է այդքան անպիտան լինել, քան իր եզակի հատկությունը կորցրած աղը, որի համար էլ այն գնահատում են: Սա ավելի վատ է, քան պարզապես ցանկացած այլ նպատակի համար անպիտան լինելը: Այս նկարագրությունը նույնպես կիրառելի է աշակերտի համար, որը դադարում է Քրիստոսի աշակերտը լինելուց: Նա պիտանի չի լինելու աշխարհային նպատակներին, իսկ Աստծո նպատակները լքել է: Նա չափազանց լույս ու գիտություն ունի, որպեսզի մտնի աշխարհի դատարկության ու մեղքերի մեջ, բայց շնորհի ու ճշմարտության բավակա-նությունը չունի, որպեսզի այն նրան պահի՝ գնալու Քրիստոսի ճանապարհով... Անհամ աղը դառնում է արհամարհանքի ու դատապարտության առարկա»:⁴⁶

Տեր Հիսուսն աշակերտության մասին հատվածն ավարտեց հետևյալ խոսքերով. «**Ով լսելու ականջ ունի, թող լսի**»: Այս խոսքերը ցույց են տալիս, որ ամեն ոք չէ, որ պատրաստ է լսելու աշակերտության խստագույն պայմանների մասին: Բայց եթե մարդը կամենում է հետևել Տեր Հիսուսին, կարևոր չէ, թե դա ինչ կարժենա, նա պետք է լսի ու հետևի:

Չոն Կավլինը մի առիթով ասել է. «Հանում և Քրիստոսի հրաժարվեցի ամեն բանից և ի՞նչ շահեցի: Քրիստոսում ես գտա ամեն

բան»: Հենրի Դրումմոնդը նշում է. «Աստծո Թագավորության մուտքն անվճար է, սակայն տարեկան բաժանորդագրությունը քեզանից պահանջում է ամեն ինչ»:

Ծ. Կորած ոչխարի մասին առակը (15:1-7)

15:1-2. 14-րդ գլխում մեր Տիրոջ ուսմունքը, թվում է, գրավեց արհամարհված **մաքսավորներին** ու մյուս մարդկանց, ովքեր արտաքուստ **մեղավոր** էին երևում: Չնայած Հիսուսը նրանց հանդիմանեց իրենց մեղքերի համար, նրանցից շատերն ընդունեցին, որ Նա ճիշտ է: Նրանք Քրիստոսի կողմն անցան՝ ընդդեմ սեփական անձերի: Ճշմարտապես ապաշխարելով՝ նրանք Հիսուսին ընդունեցին որպես Տիրոջ: Ամենուր, որտեղ Հիսուսը հանդիպում էր իրենց մեղքերն ընդունել ցանկացող մարդկանց, Նա դառնում էր նրանց, հոգևոր օգնություն ցույց տալիս և օրհնում:

Փարիսեցիներն ու դպիրները տրտընջում էին, որ Հիսուսը հաղորդակցվում էր այնպիսի մարդկանց հետ, ովքեր ընդհանուրի կողմից **մեղավորներ** էին համարվում: Նրանք գութ չէին ցուցաբերում սոցիալական և բարոյական ընկած այս բորոտների հանդեպ և տրտնջում էին Հիսուսի դեմ, որ նրանց խղճում էր: Դրա համար էլ Նրա դեմ մեղադրանք առաջադրեցին. «**Այս մարդը ընդունում է մեղավորներին ու նրանց հետ հաց ուտում**»: Իհարկե, մեղադրանքն արդար էր: Նրանք կարծում էին, որ այսպիսի վարքագիծը պարսավելի է, բայց իրականում հենց դա էր այն նպատակի իրագործումը, որի համար Տեր Հիսուսն աշխարհ եկավ:

Ի պատասխան նրանց մեղադրանքներին՝ Տեր Հիսուսը պատմեց կորած ոչխարի, կորած դրամի և անառակ որդու մասին առակները: Այս պատմություններն անմիջականորեն վերաբերում էին դպիրներին ու փարիսեցիներին, ովքեր երբեք չէին կտալով Աստծո առջև և չէին ընդունում իրենց կորած վիճակը: Բոլոր երեք պատմությունների իմաստն էլ այն է, որ Աստված ճշմարիտ ուրախություն և հանույք է ստանում

տեսնելով ապաշխարող մեղավորին այն դեպքում, երբ կեղծավորների ինքնաարդարացումը, որոնք չափազանց հպարտ են՝ ընդունելու իրենց մեղսունակ վիճակը, Նրան ոչ մի հաճույք չի պատճառում:

15:3-4. Այստեղ Տեր Հիսուսը հանդես է գալիս Հովվի կերպարով: **Իննսունինը** ոչխարները խորհրդանշում են դպիրներին ու փարիսեցիներին: **Կորած** ոչխարը մաքսավորի կամ էլ ընդհանուր ճանաչում ունեցող մեղավորի կերպարն է: Երբ հովվիվը տեսավ, որ իր ոչխարներից մեկը **կորել է**, նա թողեց **իննսունինին անապատում** (ոչ թե փարսիտում) և գնաց կորածի հետևից, **մինչև որ գտնի նրան**: Ինչ վերաբերում է մեր Տիրոջը, ապա այս գնալ փնտրելն իր մեջ ընդգրկում է Նրա Երկիր գալը, հանրային ծառայության տարիները, մերժվելը, չարչարանքներն ու մահը: Որքան ճշմարիտ են այս հոգևոր երգի բառերը.

Բայց փրկագնվածներից ոչ ոք
Երբեք չհնացավ,
Թե որքան խորն էին գետերն այն,
Որոնցով անցավ Տերը,
Որքան խավար էր գիշերն այն,
Որի միջով Նա քայլեց,
Որպեսզի գտնի Իր կորած ոչխարին:

Էլիզաբեթ Ս. Կլեֆելն

15:5. **Գտնելով** ոչխարին՝ **նա ուրախացած դրեց իր ուսերին** և բերեց տուն: Այստեղ մատնացույց է արվում, թե փրկված ոչխարը վայելեց այն առանձնաշնորհներն ու մտերմությունը, որոնց ծանոթ չէր, մինչ գտնվում էր մյուսների մեջ:

15:6. Հովվիվը կանչեց իր **բարեկամներին ու հարևաններին**, որպեսզի նրանք **ուրախանան** նրա հետ կորած **ոչխարի** փրկությանը: Սա խոսում է Փրկչի ուրախության մասին, երբ տեսնում է մեղավորի ապաշխարությունը:

15:7. Դասը պարզ է. **երկինքն ուրախանում է մեկ մեղավորի ապաշխարության համար** և չի ուրախանում իննսունինը մեղավորների համար, որոնք երբեք չեն գիտակցել իրենց կործանված վիճակը: Այս

համարը բոլորովին էլ չի նշանակում, որ մարդիկ կան, որոնց ապաշխարել պետք չէ: Բոլոր մարդիկ մեղավոր են, և բոլորն էլ պետք է ապաշխարեն, որպեսզի փրկվեն: Համարը նկարագրում է նրանց, ովքեր կարծում են, որ իրենց **ապաշխարություն պետք չէ**:

Մ. Կորած դրամի մասին առակը (15:8-10)

Այս պատմության մեջ **կինը** կարող է լինել Սուրբ Հոգու նախաստիպը, Ով կորածներին փնտրում է Աստծո Խոսքի **ճրագով**: Ինը հատ **արծաթյա դրամը** խոսում է անապաշխարների մասին, մինչ **մեկ կորած** արծաթյա **դրամը** մատնացույց է անում այն մարդուն, ով ուզում է ընդունել, որ ինքն Աստծուց հեռու է: Նախորդ պատմության մեջ ոչխարն իր սեփական կամքով էր հեռացել: Դրամը անշունչ առարկա է և կարող է մատնացույց անել **մեղավորի** անկենդան վիճակը: Նա մեռած է մեղքերի մեջ: Կինը շարունակում է **ջանասիրաբար փնտրել, մինչև գտնի**: Այնուհետև նա **կանչում է բարեկամներին ու հարևաններին**, որ ուրախանան իր հետ: Կորած դրամը, որ նա գտավ, նրան ավելի շատ ճշմարիտ ուրախություն բերեց, քան այն ինը դրամները, որոնք երբեք չէին կորել: Նույնը կարելի է ասել Աստծո մասին: Խոնարհվող և իր կորած վիճակը խոստովանող **մեղավորն** ուրախացնում է Աստծուն: Նրանցից, ովքեր երբեք չեն զգացել ապաշխարելու կարիքը, Նա նմանատիպ ուրախություն չի ստանում:

Յ. Անառակ որդու մասին առակը (15:11-32)

15:11-16. Այստեղ Հայր Աստվածը ներկայացված է **մի մարդու** կերպարով, ով **երկու որդի ուներ**: **Փոքրը** ներկայացնում է զղջացող մեղավորին, իսկ ավագը՝ դպիրներին ու փարիսեցիներին: Նրանք Աստծո որդիներն են՝ ըստ արարչագործության, բայց ոչ փրկագնման: Փոքր որդին հայտնի է որպես անառակ որդի: **Անառակ** որդին շոայլ է և քամուն է տալիս փողերը: Այս որդուն ձանձրացրել էր հայրական տունը,

և որոշեց հեռանալ: Նա չէր ուզում սպասել հոր մահվանը, այդ իսկ պատճառով նրանից նախապես խնդրեց ժառանգության իր **բաժինը**: Հայրը տվեց իր որդիներին նրանց հասանելիք բաժինները: Դրանից անմիջապես հետո փոքր որդին ուղևորվեց **հեռու երկիր** և իր դրամը վատնեց, մսխեց մեղավոր հաճույքների վրա: Հենց որ նրա միջոցները վերջացան, այդ երկրում մեծ սով սկսվեց, ու նա հայտնվեց կարիքի մեջ: Միակ աշխատանքը, որ կարողացավ գրտնել, **խոզեր արածեցնելն էր**, որն էլ չափազանց տհաճ աշխատանք էր սովորական հրեայի համար: Տեսնելով, թե ինչպես են խոզերն ուտում իրենց **թեփը**, նա դրանց նախանձում էր: Նրանք ավելի շատ ուտելիք ունեին, քան ինքը, և թվում էր, որ ոչ ոք չէր պատրաստվում **իրեն** օգնելու: Իրեն շրջապատող ընկերները, որոնք իր կողքին էին, երբ ինքը ազատորեն ծախսում էր փողերը, անհետացել էին:

15:17-19. Սովը բարերար ազդեցություն գործեց. նրան ստիպեց մտածել: Նա հիշեց, որ **իր հոր վարձկաններն** ավելի լավ էին ապրում, քան ինքը հիմա: Նրանք առատ ուտելիք ունեին, մինչ ինքը **սովից** մեռնում էր: Այս մասին խորհելով՝ նա որոշեց գնալ իր հոր մոտ, գղջալ, խոստովանել իր մեղքն ու ներում խնդրել: Նա հասկացավ, որ **այլևս արժանի չէ** իր հոր որդին **կոչվելու**, և մտադրված էր **վարձու** աշխատանքներ խնդրել:

15:20. Երբ նա դեռ տնից շատ հեռու էր, **հայրը տեսավ նրան, գթաց և ընդառաջ գնալով՝ նրա վզովն ընկավ ու համբուրեց նրան**: Սա հավանաբար Աստվածաշնչում միակ տեղն է, որտեղ Աստծո շտապողականությունը լավ իմաստով է ցուցադրված: Մոյուարտը պարզաբանում է.

«Հիտուը համարձակորեն ցույց է տալիս, որ Աստված չի սպասում, մինչև որ Իր ամոթահար գավակը վերադառնա տուն, արժանապատվությամբ չի կանգնում-սպասում, թե երբ է նա մոտենալու, այլ վազում է՝ հանդիպելու, որպեսզի նրան ընդունի Իր հյուրընկալ բազուկներում այնպիսին, ինչպիսին կա ամոթա-

հար, ցնցոտիներով ու ցեխոտ: Միայն «Հայր» անունը անմիջապես խամրեցրեց մեղքի գույնը և վեր խոյացրեց թողության փայլատակող փառքը»: ⁴⁷

15:21-24. **Որդին** իր խոստովանությունն արեց նախքան աշխատանք խնդրելը: Իսկ **հայրն** ընդհատեց նրան՝ ծառաներին հրամայելով, որ իր որդուն հազցնեն **լավագույն պատմունճանը, նրա ձեռքին մատանի դնեն և կոշիկներ՝ նրա ոտքերին**: Նա նաև պատվիրեց մեծ հյուրասիրություն կազմակերպել, որպեսզի տոնեն իր որդու վերադարձը, ով **կորած էր ու գտնվեց**: Հոր ացքերով նա մեռած էր, բայց հիմա **կենդանացավ**: Ինչ-որ մեկն ասել է. «Երիտասարդը լավ, զվարթ ժամանակ էր փնտրում, բայց այն չգտավ հեռավոր երկրում: Նա այն ժամանակ ուրախություն ձեռք բերեց, երբ ողջախոհությամբ մտածեց հայրական տուն վերադառնալու մասին»: Այստեղ մատնացույց է արվում այն, որ մարդիկ **սկսեցին ուրախանալ**, բայց ոչ մի տեղ գրված չէ, թե նրանց ուրախությունը վերջացավ: Ճիշտ այդպես էլ փրկված մեղավորի պարագայում է:

15:25-27. Երբ **ավագ որդին** վերադարձավ **դաշտից** և լսեց երգն ու ցնծությունը, նա **հարցրեց** ծառաներից մեկին, թե ինչ է կատարվում: Ծառան էլ ասաց նրան, որ փոքր **եղբայրը** տուն է վերադարձել, և որ **հայրն** էլ ուրախությունից իրեն կորցրել է:

15:28-30. Բարկությամբ ու նախանձով լցված՝ ավագ որդին հրաժարվեց իր հոր ուրախությունը մասնակցելուց: Ջ. Ն. Դարբին լավ է ասում այս մասին. «Այնտեղ, որտեղ թագավորում է Աստծո ուրախությունը, իրենք իրենց արդարացնող մարդիկ չեն կարող գալ: Եթե Աստված բարի է մեղավորի հանդեպ, ապա ի՞նչ օգուտ իմ արդարությունից»: Երբ **հայրը** նրան կանչեց՝ մասնակցելու խնջույքին, նա հրաժարվեց՝ վիրավորվելով, որ հայրը երբեք իրեն չի պարգևատրել հավատարիմ ծառայության ու հնազանդության համար: Նա **երբեք** իրեն **մի ուլ** էլ չէր տվել, էլ չիտսենք պարարտ հորթի մասին: Նա բողոքեց, թե երբ անառակ որդին վերադարձավ՝ հոր փողերը ծախսելով

պոռնիկների վրա, հայրը, առանց վարանելու, մեծ տոն կազմակերպեց: Ուշադրություն՝ նա դարձրեք, որ նա ասաց «այս որդիդ», ոչ թե «իմ եղբայրը»:

15:31-32. Հոր պատասխանը բացատրում է, որ ուրախությունը կապված է **մեռածի** վերականգման հետ, մինչ համառ, անշնորհակալ, անհաշտ որդին առիթ չէր տալիս տոնակատարության համար:

Վվագ որդին փարիսեցիների ու դպիրների պերճախոս օրինակն է: Նրանք վիրավորվեցին, երբ Աստված գթասրտություն դրսևորեց անմաքուր մեղավորների նկատմամբ: Իրենց և ոչ թե Աստծո մտածելակերպով, նրանք հավատարմորեն էին Նրան ծառայել, ոչ մի անգամ Նրա պատվիրանները չէին խախտել և, այնուամենայնիվ, այդ ամենի համար արժանավայել կերպով չէին վարձատրվել: Ճշմարտությունն այն էր, որ նրանք կրոնական կեղծավորներ ու հանցավոր մեղավորներ էին: Հպարտությունը կուրացրել էր նրանց, և չէին տեսնում, որ հեռու են Աստծուց, և որ Նա օրհնությունն օրհնության ետևից թափում էր իրենց վրա: Եթե միայն ցանկանային ապաշխարել և ընդունել սեփական մեղքերը, Հոր սիրտը կցնձար, ու նրանց համար նույնպես մեծ տոնակատարություն կլիներ:

Ն. Անհավատարիմ տնտեսի մասին առակը (16:1-13)

16:1-2. Այժմ Տեր Հիսուսը փարիսեցիներից ու դպիրներից դառնում է **Իբ աշակերտներին** և նրանց սովորեցնում ունեցվածքը կառավարելու մասին: Ընդունված է, որ սա Ղուկասի Ավետարանի ամենադժվար հատվածներից մեկն է: Դժվարությունը դրանում է, որ անհավատարիմ տնտեսի մասին պատմությունը, կարծես թե անհավատարմությունը ցուցադրում է գովեստի լույսի ներքո: Բայց այն վերլուծելով տեսնում ենք, որ բոլորովին էլ այդպես չէ: Այս պատմության մեջ **հարուստ մարդը** Աստված Ինքն է: **Տնտեսը** այն մարդն է, ում վստահվել է տնօրինել ուրիշի սեփականությունը: Այս պատմության էությունն այն է, որ Տիրոջ յուրաքանչյուր աշակերտը տրև-

տես է: Այս **տնտեսը** մեղադրվում էր իր տիրոջ ունեցվածքը վատնելու մեջ: Նրան կանչեցին **տնտեսական հաշիվը** ներկայացնելու ու հայտնեցին, որ ինքն ազատվելու է աշխատանքից:

16:3-6. Տնտեսը սկսեց արագորեն տրամաբանել: Նա հասկանում էր, որ ինքը պետք է ապագայի մասին մտածի: Նա արդեն շատ ծեր էր, որպեսզի ծանր ֆիզիկական աշխատանքով զբաղվեր, և չափազանց հպարտ, որպեսզի **մուրաբ**, չնայած այնքան էլ հպարտ չէր, որպեսզի հափշտակեր: Ինչպե՛ս է իրեն ապահովելու: Նա մի ծրագիր մտածեց, որը նրան կօգներ՝ ձեռք բերելու բարեկամներ, որոնք էլ իրենց հերթին նրան ողորմություն, բարիք ցույց կտային, երբ հայտնվեր չքավորության մեջ: Ծրագիրը հետևյալն էր. նա գնաց իր տիրոջ հաճախորդներից մեկի մոտ և հարցրեց, թե նա **որքան** է պարտք: Երբ հաճախորդն ասաց՝ **հարյուր մար ձեթ**, տնտեսը նրան պատվիրեց վճարել **հիսուն**, և հաշիվը փակված կհամարվի:

16:7. Մյուս հաճախորդը պարտք էր **հարյուր չափ ցորեն**: Տնտեսը նրան պատվիրեց վճարել **ութսունը** և պարտամուրհակի վրա նշում կատարեց վճարման մասին:

16:8. Յնցող է պատմության այն մասը, որտեղ **տերը գովեց անիրավ տնտեսին** այն բանի համար, որ նա **ճարակությանը վարվեց**: Ինչպե՛ս կարելի է արդարացնել նման անազնվությունը: Տնտեսի կատարածն անարդար էր: Հետագա համարները ցույց են տալիս, որ տնտեսին գովեցին ոչ թե իր խարդախ արարքի, այլ հավանաբար հեռատեսության համար: Նա խելացի վարվեց: Նա մտածեց ու հոգ տարավ ապագայի համար: Նա գոհեց ներկա շահը հանուն ապագա վարձատրության: Սա կիրառելով սեփական կյանքում՝ մենք պետք է շատ հստակ հասկանանք, որ Աստծո զավակի ապագան այս երկրի վրա չէ, այլ երկնքում: Ինչպես տնտեսը, ով որոշակի գործողություններ ձեռնարկեց, որպեսզի այստեղ՝ ներքևում, իր համար բարեկամներ ձեռք բերի աշխատանքից հեռանալուց հետո, այնպես էլ քրիստոնյան պետք է այնպես օգտագոր-

ծի իր Տիրոջ բարիքը, որ ջերմ ընդունելություն ապահովի իր համար այն ժամանակ, երբ հասնի երկինք: Մեր Տերն ասաց. «**Այս աշխարհի որդիները ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ**»: Մա նշանակում է, որ ամբարիշտ, վերստին ծնունդ չունեցող մարդիկ ավելի իմաստություն են դրսևորում աշխարհում իրենց ապագան ապահովելու համար, քան ճշմարիտ հավատացյալները՝ երկնքում գանձեր դիզելու համար:

16:9. Մենք պետք է բարեկամներ շինենք մեզ համար **անիրավ մամոնայի** միջոցով, այսինքն՝ պետք է օգտագործենք դրամն ու այլ նյութական արժեքներն այն ձևով, որ հոգիներ շահենք Քրիստոսի համար և դրանով բարեկամություն հաստատենք, որը շարունակվելու է հավիտենականության մեջ: Փիեռսոնը հստակ է ասել այս մասին.

«Դրամը կարելի է օգտագործել Աստվածաշունչ, գիրք, գրքույկ գնելու համար և դրանցով շահել մարդկանց հոգիները: Այսպիսով, ինչ-որ նյութական ու ժամանակավոր էր, դառնում է անմահ, աննյութական, հոգևոր ու հավիտենական: Ահա մեկը, ով հարյուր դոլար ունի: Նա կարող է դա ծախսել խնջույքի կամ երեկոյթի վրա, որի դեպքում հաջորդ օրն այդ դրամից ոչինչ չի մնա: Մյուս կողմից, նա մեկ դոլար է ներդնում մի հատ Աստվածաշունչ գնելու համար: Հարյուր դոլարով կարելի է Աստծո Խոսքի հարյուր օրինակ գնել: Նա իմաստությամբ ցանում է դրանք՝ որպես Թագավորության սերմեր, որոնցից աճում է հունձքը ոչ թե Աստվածաշունչի տեսքով, այլ հոգիների: Օգտագործելով անիրավը՝ նա իր համար ձեռք բերեց հավիտենական բարեկամներ, որոնք կընդունեն իրեն հավիտենական բնակարաններում, երբ նա մեկնի այնտեղ»:⁴⁸

Հետևաբար սա է մեր Տիրոջ ուսմունքը: Նյութական միջոցների իմաստուն ներդրմամբ կարող ենք մասնակցել տղամարդկանց ու կանանց հավիտենական օրինությանը: Մենք կարող ենք վստահ լինել՝ երբ մոտենանք երկնային դարպասներին, հանդիպելու ենք դիմավորող հանձնախմբին,

որը բաղկացած է լինելու այն մարդկանցից, ովքեր փրկվել են մեր նյութական զոհաբերությունների ու աղոթքների միջոցով: Այդ մարդիկ շնորհակալություն են հայտնելու մեզ՝ ասելով. «Հենց դուք հրավիրեցիք ինձ այստեղ»:

Դարբին մեկնաբանում է.

«Ընդհանրապես, յուրաքանչյուր մարդ Աստծո տնտեսն է, այլ իմաստով ու այլ պատկերով՝ Իսրայելյն Աստծո տնտեսն էր, որ դրված էր Աստծո այգում, և որին վստահվել էր Օրենքը, խոստումները, ուխտերը և Աստծուն ծառայելը: Սակայն Իսրայելը բռնվեց Աստծո բարիքները ցրիվ տալու մեջ: Մարդը, ում որպես տնտեսի էին դիտում, անհավատարիմ գտնվեց ամեն բանում: Այժմ ի՞նչ պետք է անել: Աստված գալիս է ու Իր գերիշխան շնորհով Երկրի վրա մարդու չարաշահածը վերածում է երկնային պտուղ նվաճելու միջոցի: Մարդը, ում ձեռքբերում են գտնվում աշխարհի իրերը, պետք է դրանք ամբողջությամբ օգտագործի ոչ թե Աստծուց հեռու աշխարհային անցողիկ հաճույքների վրա, այլ հաշվի առնելով ապագան: Մեզ պետք չէ ձգտել ունեցվածքի տեր դառնալուն այստեղ. ավելի լավ է ճիշտ օգտագործել այդ բոլոր ունեցվածքը, որպեսզի պաշար ունենանք այլ ժամանակի համար: Ավելի լավ է միջոցներ ներդնել բարեկամի վրա մեկ այլ օրվա համար, քան հիմա դրամին տիրել: Այս առակի մարդը դեպի կորուստ էր մեկնում: Այդ իսկ պատճառով այստեղ նա պաշտոնագուրկ տնտես է»:⁴⁹

16:10. Եթե **հավատարիմ** ենք **քիչ բանը** (դրամը) կառավարելու մեջ, ապա **հավատարիմ** կլինենք **շատ բաներ** (հոգևոր գանձերի) տնտեսվարելու մեջ: Եվ ընդհակառակը՝ նա, ով սխալ է օգտագործում Աստծո կողմից վստահված դրամը, անհավատարիմ կլինի նաև այն ժամանակ, երբ գործը հասնի ավելի նշանակալից բաներին: Դրամի հարաբերականորեն ոչ նշանակալից լինելը ընդգծված է «**քիչ բանի մեջ**» խոսքերով:

16:11. Յուրաքանչյուրը, ով ազնիվ չէ Աստծո համար **անիրավ մամոնան** օգտա-

գործելիս, հազիվ թե կարող է ակնկալել, որ Աստված իրեն կվստահի **ճշմարիտ հարստությունը**: Դրամը **անիրավ մամոնա** է անվանվում: Ըստ էության, նրանում չար բան չկա: Այդուհանդերձ դրամը անհրաժեշտ չէր լինի, եթե մեղքը չմտներ աշխարհ: Դրամը **անիրավ** է, որովհետև սովորաբար այն այնպիսի նպատակների համար են օգտագործում, որոնք ուղղված չեն Աստծուն փառավորելուն: Այստեղ այն հակադրվում է **ճշմարիտ հարստության** հետ: Դրամի արժեքն անհաստատ ու ժամանակավոր է, հոգևոր իրականության արժեքը հաստատուն ու հավիտյան է:

16:12. Այս համարը տարբերություն է մտցնում **ուրիշի** և **ձերի** միջև: Այն ամենը, ինչ ունենք՝ մեր դրամը, ժամանակը, տաղանդները, Տիրոջն են պատկանում, և մենք պետք է դրանք օգտագործենք Նրա համար: Այն, **ինչ մերն է**, վերաբերում է այն պարզևատրմանը, որը որպես արդյունք քաղում ենք այս կյանքում և գալիք կյանքում Քրիստոսին հավատարմորեն ծառայելու համար: Եթե հավատարիմ չենք այն բաներին, ինչ պատկանում է Տիրոջը, Նա ինչպե՞ս կարող է մեզ տալ **մերը**:

16:13. Գործնականում հնարավոր չէ միաժամանակ ապրել և՛ նյութականի, և՛ **Աստծո** համար: Եթե դրամն է մեր տերը դարձել, ապա չենք կարող ինչպես որ հարկն է Տիրոջը ծառայել: Որպեսզի հարստություն կուտակենք, պետք է այս խնդրին նվիրենք մեր լավագույն ուժերը: Իսկ այդ անելով՝ մենք Աստծուց գողանում ենք այն, ինչն օրենքով Նրան է պատկանում: Այս պարագայում հավատարմության երկփեղվածություն է առաջանում. խառնվում են շարժառիթները, չկան անկեղծ որոշումներ: Որտեղ մեր գանձն է, այնտեղ էլ մեր սիրտն է: Ջանալով հարստություն հավաքել՝ մենք ծառայում ենք **մամոնային**: Անհնար է միաժամանակ **ծառայել Աստծուն**: Մամոնան մեզանից պահանջում է ամեն ինչ, ինչ-որ ունենք և ինչ-որ ենք՝ մեր երեկոները, հանգրստյան օրերը, ժամանակը, այն ամենը, որ պետք է նվիրենք Տիրոջը:

Ծ. Արժաթասեր փարիսեցիները (16:14-18)

16:14. Փարիսեցիները ոչ միայն հպարտ ու կեղծավոր էին, այլև արժաթասեր: Նրանք կարծում էին, որ բարեպաշտությունը դրամ վաստակելու միջոց է: Նրանք ընտրել էին կրոնը, ինչպես ընտրում են եկամտաբեր մասնագիտությունը: Նրանց ծառայությունը չէր ուղղված Աստծուն փառավորելու և մերձավորին օգնելու վրա, այլ իրենց հարստացմանը: **Լսելով** Տեր Հիսուսի ուսմունքն այն մասին, որ պետք է թողնել աշխարհի հարստությունը և երկնքում գանձեր կուտակել, նրանք **սկսեցին հեզնել Նրան**: Նրանց համար դրամն ավելի իրական էր, քան Աստծո խոստումները: Ոչինչ նրանց ետ չի պահի հարստություն կուտակելուց:

16:15. Արտաքինից փարիսեցիները բարեպաշտ ու հոգևոր էին թվում: Նրանք իրենց արդար էին ցուցադրում **մարդկանց** առջև: Սակայն խաբուսիկ արտաքինի հետևում Աստված տեսավ նրանց **սրտերի** ազահությունը: Կյանքը, որն ապրում էին նրանք, և որին հավանություն էին տալիս ուրիշ մարդիկ (Մղմ. 49:18), **Աստծո աչքին պղծություն էր**: Նրանք իրենց հաջողակ էին համարում, որովհետև կրոնական գործունեությունը համադրում էին նյութական հարստության հետ: Սակայն Աստծո տեսակետով նրանք հոգևոր շնացողներ էին: Նրանք Եհովայի հանդեպ սեր էին դավանում, բայց իրականում նրանց աստվածը մամոնան էր:

16:16. Շատ դժվար է հասկանալ 16-18-րդ համարների մտքերի հաջորդականությունը: Առաջին ընթերցումից թվում է, թե դրանք բոլորովին կապ չունեն նախորդների կամ հաջորդող տեքստի հետ: Սակայն մեզ թվում է, որ դրանք կարելի է ավելի լավ հասկանալ, եթե հիշենք 16-րդ գլխի գլխավոր թեման՝ փարիսեցիների արժաթասիրությունն ու անհավատարմությունը: Նրանք, ովքեր հպարտանում էին, թե մանրակրկիտ պահում են Օրենքը, մերկացվեցին որպես ազահ կեղծավորներ: Օրենքի

հոգին խիստ հակասության մեջ է փարիսեցիների հոգու հետ:

Օրենքն ու մարգարեները մինչ Հովհաննեսն էին: Այս խոսքերով Տերը նկարագրեց Օրենքի ժամանակաշրջանը, որը սկսել էր Մովսեսից ու ավարտվել **Հովհաննես** Մկրտչով: Հիմա նոր ժամանակ էր սկսվել: Հովհաննեսի օրերից **քարոզվում է Աստծո թագավորությունը**: Մկրտիչը հռչակեց Իսրայելի ճշմարիտ Թագավորի գալուստը: Նա մարդկանց ասաց, որ եթե նրանք ապաշխարեն, Տեր Հիսուսը կթագավորի իրենց վրա: Նրա քարոզի և հենց Տիրոջ ու Նրա աշակերտների հետագա քարոզների արդյունքում շատ մարդիկ պատրաստակամությամբ արձագանքեցին այդ հրավերին:

«Եվ ամեն մարդ ջանում է ներս մտնել» նշանակում է, որ այս լուրին արձագանքողները բառացիորեն ներխուժեցին Թագավորության մեջ: Օրինակ՝ մաքսավորներն ու մեղավորները պետք է հաղթահարեին փարիսեցիների կողմից հաստատված արգելքները: Մյուսներից պահանջվում էր խստությամբ դատապարտել սեփական արտերում դրամի հանդեպ սերը: Պետք էր հաղթահարել նախապաշարմունքը:

16:17-18. Սակայն նոր ժամանակաշրջանի գալը չէր նշանակում, որ դեն են գցվում բարոյական հիմնական ճշմարտությունները: **Եվ ավելի հեշտ է, որ երկինքն ու երկիրն անցնեն, քան Օրենքից որևէ փոքրիկ նշանագիր պակասի:** «Օրենքից որևէ փոքրիկ նշանագիր» արտահայտությունը համեմատական է, որը վերաբերում է տեքստից փոքրիկ մասնիկի ջնջվելուն (օրինակ՝ «և» տառից գծի ջնջվելը):

Փարիսեցիները կարծում էին, որ Աստծո Թագավորության մեջ են գտնվում, սակայն Տերն ըստ էության ասաց նրանց. «Դուք չեք կարող արհամարհել Աստծո բարոյական մեծ օրենքները և դեռ հավակնել Թագավորության մեջ տեղ ունենալուն»: Նրանք հավանաբար հարցրին. «Բարոյական մեծ հրահանգներից որո՞նք չենք կատարել»: Եվ Տերը նրանց մատնացույց արեց ամուսնության մասին օրենքը, որը երբեք չի չեղարկ-

վելու: **Ով արձակում է իր կնոջը և ուրիշի է առնում՝ շնություն է անում: Եվ ով որ ամուսնալուծվածի է կնության առնում՝ շնություն է անում:** Սա համապատասխանում էր փարիսեցիների վարմունքին հոգևոր առումով: Հրեա ժողովուրդը Աստծո հետ ուխտի մեջ էր: Բայց նյութական հարստության նկատմամբ ունեցած իրենց ձգտումով փարիսեցիները մեջքով շրջվեցին Աստծուց: Հնարավոր է՝ համարը մատնանշում էր, որ նրանք հանցավոր էին ոչ միայն հոգևոր, այլև ֆիզիկական շնության մեջ:

Ո. Մեծահարուստն ու Ղազարոսը (16:19-31)

16:19-21. Տերը նյութական արժեքների տնտեսության մասին խոսքն ավարտում է՝ պատմելով երկու կյանքերի, երկու մահերի և երկու հանդերձյալ կյանքերի մասին պատմությունը: Պետք է ուշադրություն դարձնել, որ սա առակ չէ: Մենք սա ընդգծում ենք, որովհետև որոշ քննադատներ ջանում են այս պատմության լուրջ իմաստը բացատրել՝ ասելով, թե առակ է:

Հենց սկզբից էլ պետք է հստակ նշենք, որ անանուն **մեծահարուստը** դժոխքի չդատապարտվեց իր հարստության պատճառով: Փրկության հիմքը Տիրոջը հավատալն է, և մարդիկ դատապարտվելու են, քանի որ հրաժարվել են Նրան հավատալուց: Մասնավորապես, իր **դռան առջև ընկած, վերքերով ծածկված մուրացկանի** հանդեպ անտարբեր, արհամարհանքով լցված այս մեծահարուստը ցույց տվեց, որ ճշմարիտ փրկարար հավատ չունի: Եթե նրա մեջ լիներ Աստծո սերը, նա չէր կարողանա ապրել ճոխության, հարմարավետության ու ապահովվածության մեջ այն դեպքում, երբ ցեղակիցը պառկած էր իր դռան առջև ու հացի **փշրանքներ** էր աղերսում: Նա ուժով կմտներ Աստծո թագավորություն, եթե թողներ դրամի հանդեպ ունեցած սերը:

Մանապես ճշմարիտ է այն, որ **Ղազարոսը** փրկված չէր, քանի որ աղքատ էր: Իր հոգու փրկության գործը նա վստահել էր Տիրոջը:

Իսկ հիմա ուշադրությունն դարձրեք հարուստ մարդու կերպարին, ում երբեմն անվանում են «մեծահարուստ»: Նա հագնում էր միայն ամենաթանկ ու ժամանակակից հագուստներ, իսկ իր սեղանը լի էր ամենափնտրված ճաշատեսակներով: Նա ապրում էր իր համար՝ անձնատուր լինելով մարմնի ցանկություններին ու հաճույքներին: Նա չուներ անկեղծ հավատ Աստծո հանդեպ և ոչ էլ հոգատարություն իր նման մարդու նկատմամբ:

Ղազարոսը նրա հակառակ պատկերն է: Այս դժբախտ մուրացկանը, ով ամեն օր պառկած էր հարուստի տան առջև, մարմինը պատված էր **վերքերով**, սովից հյուծված էր և ընկերակցում էր կեղտոտ **շներին**, որոնք **լիզում էին նրա վերքերը**:

16:22. Երբ **աղքատը մեռավ, հրեշտակները նրան տարան Աբրահամի գոգը**: Շատերը կասկածում են՝ իսկապե՞ս հրեշտակները մասնակցում են հավատացյալների հոգիները երկինք տեղափոխելուն: Մենք կասկածելու պատճառ չենք տեսնում այս խոսքերի պարզ գործության մեջ: Հրեշտակները ծառայում են հավատացյալներին այս կյանքում ու, հավանական է, որ պատճառ կա, ըստ որի՝ նրանք պետք է կատարեն նույնը մահվան ժամին: **Աբրահամի գոգը** խորհրդանշական արտահայտություն է, որը խորհրդանշում է երանության վայրը: Ցանկացած հրեայի համար Աբրահամի հետ հաղորդակցություն ունենալու միտքը կապված է անբացատրելի երանության հետ: Մենք եզրակացնում ենք, որ **Աբրահամի գոգը** նույնն է, ինչ որ երկինքը: Երբ **հարուստն էլ մեռավ**, նրա մարմինը **թաղեցին**, այն մարմինը, որ նա խնամել էր և որի վրա շատ միջոցներ էր ծախսել:

16:23-24. Բայց սա պատմության ավարտը չէ: Նրա հոգին կամ ինքնագիտակցությամբ օժտված էությունն ընկավ **դժոխք** (հունարեն՝ «հադես»): **Ղժոխքը** («հադեսը») հինկտակարանյան «շեղ» բառի հունարեն թարգմանությունն է. դա մեռած հոգիների բնակության վայրն է: Հինկտակարանյան ժամանակաշրջանում այդպես էին կոչում

և՛ փրկվածների, և՛ չփրկվածների գտնվելու վայրը: Այստեղ այն մեջբերվում է որպես տեղ, որը նախատեսված է չփրկվածների համար, որովհետև կարդում ենք, որ հարուստը **տանջանքների** մեջ էր:

Հավանաբար աշակերտներն ապշեցին Հիսուսի այն խոսքերից, որ ասաց, թե մեծահարուստն ընկավ **դժոխք**: ՀԿ-ի հիման վրա նրանց միշտ սովորեցրել են, որ հարստությունը Աստծո օրհնությունների ու ողորմության նշանն է: Իսրայելացուն, ով հնազանդվում էր Տիրոջը, նյութական բարգավաճում էր խոստացված: Այդ դեպքում ինչպե՞ս կարող էր մեծահարուստ հրեան ընկնել դժոխք: Տեր Հիսուսը հենց նոր հռչակեց, որ Հովհաննեսի քարոզչությամբ իրերի դասավորվածության նոր կարգ սկսվեց: Հետևաբար հարստությունը՝ օրհնության նշան չէ: Այն *ստուգում* է մարդու հավատարմությունը տնտեսվարության մեջ: Ում շատ է տրված, նրանից էլ շատ կպահանջվի:

23-րդ համարը հերքում է այն միտքը, թե «հոգին քնում է», այսինքն՝ այն տեսությունը, որի համաձայն՝ մահի ու հարության միջև ընկած ժամանակահատվածում հոգին գտնվում է անգիտակից վիճակում: Համարը սպացուցում է, որ գերեզմանի մյուս կողմում գիտակից գոյություն կա: Փաստորեն մեզ զարմացնում է հարուստի իմացության ծավալը: Նա **տեսավ Աբրահամին՝ Ղազարոսն էլ նրա գոգին**: Նա կարողացավ նույնիսկ հաղորդակցվել Աբրահամի հետ: Նրան կոչելով «**Հայր Աբրահամ**»՝ նա աղաչեց նրան **ողորմության** մասին ու խնդրեց, որ **Ղազարոսը** մի կաթիլ **ջուր** բերի ու **զովացնի** իր **լեզուն**: Իհարկե, հարց է ծագում՝ ինչպե՞ս անմարմին հոգին կարող է ծարավ զգալ ու չարչարվել **բոցերի մեջ**: Մենք կարող ենք միայն եզրակացնել, որ սա պատկերավոր արտահայտություն է, սակայն դա չի նշանակում, որ տանջանքն իրական չէ:

16:25. **Աբրահամը** նրան «**որդյակ**» անվանեց՝ հաստատելով, որ հարուստը իր ֆիզիկական սերունդն էր, բայց ոչ հոգևոր: Նահապետը նրան հիշեցրեց ճոխության,

հանույքների ու հեշտապիրության մեջ անցկացրած **կյանքի** մասին: Նա նաև հիշեցրեց **իր** աղքատության ու չարչարանքների մասին: Այժմ գոյության մյուս կողմում նրանց տեղերը փոխվեցին. երկրի վրայի անհավասարությունները հակառոշվեցին:

16:26. Այս համարից իմանում ենք, որ այս կյանքում մեր կողմից կատարած ընտրությունն է որոշում մեր հավիտենական ճակատագիրը, և հենց որ վրա է հասնում մահը, **հաստատվում** է այդ ճակատագիրը: Փրկվածների կեցության վայրից անցում չկա դեպի դատապարտվածների գոնվելու վայր և հակառակը:

16:27-31. Մահից հետո հարուստը հանկարծ դառնում է ավետարանիչ: Նա ուզում է, որ ինչ-որ մեկը գնա իր **հինգ եղբայրների** մոտ, որպեսզի նրանք չգան այս **տանջանքի վայրը**: Աբրահամը պատասխանում է, որ այդ հինգ եղբայրները, որոնք հրեաներ են, ունեն հինկտակարանյան Գրքերը, և դրանք բավարար են նրանց գգուշացնելու համար: Մեծահարուստը հակաճառեց **Աբրահամին՝** ասելով, որ **եթե մեռելներից մեկը** գնա նրանց մոտ, նրանք հաստատ կապաշխարեն: Սակայն Աբրահամը վերջին խոսքը վերապահեց իրեն. նա հայտարարեց, որ Աստծո Խոսքը լսելուց հրաժարվելն է հանդիսանում վերջնականը: Եթե մարդիկ չեն լսում Աստվածաշնչի նախագգուշացումները, ապա չեն հավատա, եթե նույնիսկ ինչ-որ մեկը **մեռելներից հարություն առնի**: Սրա համոզիչ ապացույցը հենց Տեր Հիսուսի հետ կատարվածն է: Նա մեռելներից հարություն առավ, այնուամենայնիվ, մարդիկ չհավատացին Նրան:

ՆԿ-ից գիտենք, որ երբ հավատացյալը մահանում է, նրա մարմինը դնում են գերեզմանափոսում, իսկ հոգին գնում է երկինք, որպեսզի Քրիստոսի հետ լինի (2 Կոր. 5:8, Փիլ. 1:23): Երբ անհավատն է մահանում, նրա մարմինը նույնպես թաղում են գերեզմանում, սակայն հոգին գնում է դժոխք: Նրա համար դժոխքը խղճի խայթի ու տանջանքների տեղն է:

Եկեղեցու հափշտակության ժամանակ հավատացյալների մարմինները հառնելու

են գերեզմաններից և վերամիավորվելու են հոգու ու անձի հետ (1 Թեա. 4:13-18): Այդ ժամանակ նրանք հավիտյան ապրելու են Քրիստոսի հետ: Սպիտակ մեծ գահի Դատավարության ժամանակ անհավատների մարմինները, հոգիները և անձերը նույնպես կրկին վերամիավորվելու են (Հայտ. 20:12-13): Այնուհետև նրանք գցվելու են կրակե լճի մեջ՝ հավիտենական պատժի վայր:

Այսպիսով, 16-րդ գլուխը ավարտվում է չափազանց լուրջ նախազգուշացմամբ, որն ուղղված է փարիսեցիներին ու բոլոր նրանց, ովքեր ապրում են հանուն դրամի: Այսպես վարվելով՝ նրանք վտանգի են ենթարկում իրենց հոգին: Ավելի լավ է երկրի վրա հաց խնդրել, քան դժոխքում շուր:

IX. ՄԱՐԳՈՒ ՈՐԴԻՆ ՀՐԱՀԱՆԳՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ (17:1-19:27)

Ա. Գայթակղությունների մասին (17:1-2)

Այս գլխում մտքերի շարադրման հաջորդականությունն այնքան էլ պարզ չէ: Երբեմն թվում է, թե Ղուկասը միասին է հավաքում մի քանի անհամատեղելի թեմաներ: Սակայն գայթակղությունների վտանգի մասին Քրիստոսի սկզբնական նկատողությունները կարելի է կապել 16-րդ գլխի մեծահարուստի պատմության հետ: Ծքեղ, ինքնագոհ ու հարմարավետ կյանքը քրիստոնեական հավատում երիտասարդների համար կարող է հեշտությամբ վերածվել գայթակղության քարի: Հատկապես եթե մարդը հայտնի է որպես քրիստոնյա, շատերը կհետևեն նրա օրինակին: Որքան լուրջ է սա՝ Տեր Հիսուսի խոստումնալից հետևորդներին հրապուրել նյութապաշտության ու մամոնային երկրպագող կյանքի:

Իհարկե, այս սկզբունքը լայն կիրառություն ունի: **Այս փոքրիկները** կարող են գլորվել, երբ գայթակղվեն աշխարհային կյանքով: Նրանք կարող են սայթաքել սեռական մեղքի հետևանքով կամ ինչ-որ ուսմունքից, որը փոխում է Սուրբ Գրքի հրա-

տակ իմաստը: Այն ամենը, ինչ մարդկանց շեղում է անկեղծ հավատի ճանապարհից, նվիրվելուց և սրբությունից, գայթակղության քար է:

Իմանալով մարդկային բնությունն ու աշխարհի իրավիճակը՝ Տերն ասաց, որ **գայթակղություններ անպայման պիտի գան:** Սակայն սա չի նվազեցնում նրա հանցանքը, ում միջոցով գալիս են գայթակղությունները: **Ավելի լավ կլիներ** այդպիսի մարդուն, որ **ջրաղացի քար կախվեր իր վզից և ծովի խորքը գցվեր:** Պարզվում է, որ խոսքի այսպիսի գորեղ շրջադարձների նպատակը ոչ միայն ֆիզիկական մահվան, այլև հավիտենական պատժի նկարագրումն է:

Երբ Տեր Հիսուսը խոսում է **այս փորքիկներին** գայթակղեցնելու մասին, Նա հավանաբար նկատի ունի ավելի տարիքովներին, քան պարզապես երեխաներին: Նա դա ասում է հավատի մեջ երիտասարդ երողներին:

Բ. Ներման մասին (17:3-4)

Քրիստոնեական կյանքում գոյություն ունի ոչ միայն ուրիշներին գայթակղելու վտանգը, նաև թաքնված քենի վտանգը՝ ներելուց հրաժարվելը, երբ վիրավորողը ներողություն է խնդրում: Տերն էլ ճիշտ այդ մասին է խոսում այստեղ: ՆԿ-ը սովորեցնում է, թե ինչպես պետք է մոտենալ այսպիսի հարցերին.

1. Եթե մի քրիստոնյա վնաս է կրել մեկ այլ քրիստոնյայից, նա նախևառաջ պետք է իր սրտում ների իրեն վիրավորողին (Եփ. 4:32): Սա իր սիրտը ազատ կպահի գայրույթից ու չարությունից:
2. Այնուհետև նա պետք է անձամբ դիմի վիրավորողին ու **հանդիմանի նրան** (հ. 3, նաև Մատթ. 18:15): **Եթե նա ապաշխարի**, ապա պետք է նրան ասի, որ ներված է: Նույնիսկ եթե նա հաճախակի է մեղանչում, իսկ հետո ասում, որ գոջում է, նրան պետք է ներել (հ. 4):
3. Եթե անհատական հանդիմանությունն անարդյունք է մնում, ապա վնաս կրած

մարդը պետք է վերցնի մեկ կամ երկու վկա (Մատթ. 18:16): Եթե վիրավորողը նրանց չսի, այդ դեպքում գործը պետք է տանել եկեղեցու առջև: Եկեղեցու որոշումից հրաժարվելը պետք է հանգեցնի վիրավորողի վտարմանը (Մատթ. 18:17):

Հանդիմանություններն ու կարգապահական այլ միջոցների ձեռնարկման նպատակը հաշվեհարդաս տեսնելը կամ վիրավորողին նվաստացնելը չէ, այլ Տիրոջ ու եղբայրների հետ ունեցած հաղորդակցության վերականգնումն է: Բոլոր հանդիմանությունները պետք է կատարվեն սիրո հոգով: Մեզ տրված չէ դատել, թե որքան ճշմարիտ էր վիրավորողի ապաշխարությունը: Մենք պետք է հավատանք նրա խոսքերին, որ գոջացել է: Ահա թե ինչու Հիսուսն ասում է. **«Եվ եթե օրը յոթ անգամ քո դեմ մեղանչի ու յոթ անգամ դառնա և ասի. «Ապաշխարում եմ», - պետք է ներես նրան»:** Ահա այսպիսի գթասրտությամբ է մեր Հայրը մեզ հետ վարվում: Անկախ դրանից, թե որքան հաճախ չենք արդարացնում Իր սպասումները, մենք միշտ ունենք այս երաշխիքը. **«Եթե խոստովանենք մեր մեղքերը, ապա Նա հավատարիմ ու արդար է՝ մեր մեղքերը մեզ ներելու և մեզ բոլոր անիրավություններից մաքրելու համար»** (1 Հովհ. 1:9):

Գ. Հավատի մասին (17:5-6)

17:5. Օրվա ընթացքում յոթ անգամ ներելու գաղափարը **առաքյալներին** դժվար թվաց, եթե ոչ՝ անհնարին: Նրանք զգացին, որ չեն կարող այդպիսի շնորհ ցուցաբերել: Այդ իսկ պատճառով խնդրեցին **Տիրոջը ավելացնել** իրենց **հավատը:**

17:6. **Տիրոջ** պատասխանը ցույց տվեց, որ հարցն այնքան հավատի մեծության մեջ չէ, որքան դրա որակի: Խնդիրն ավելի շատ հավատ ունենալը չէ, այլ ունեցած հավատը օգտագործելը: Եղբայրներին ներելուց մեզ ետ պահողը հենց մեր սեփական հպարտությունն ու ինքներս մեզ բարձր գնահատելն է: Պետք է արմատախիլ անել ու դուրս վտարել այդ հպարտությունը: Եթե **մանա-**

նեխի հատիկի չափ հավատը կարող է **թզենուն** արմատախիլ անել ու **ծովի մեջ** տնկել, ապա այն շատ հեշտությամբ կարող է մեզ հաղթանակ տալ խստասրտության ու կարծրասրտության վրա, որոնք խանգարում են մեզ անչափ, անհաշիվ ներելու եղբորը:

Գ. Օգտակար ծառաների մասին (17:7-10)

17:7-9. Քրիստոսի ճշմարիտ ծառան հպարտանալու առիթ չունի: Սեփական անձը բարձր գնահատելու մոլուցքը պետք է արմատախիլ անել ու դրա տեղը դնել սեփական անարժանության ճշմարիտ գիտակցությունը: Այս դասը գտնում ենք ծառայի մասին պատմության մեջ: Այդ **ծառան** ամբողջ օրը **հողը մշակեց կամ կենդանիներին կերակրեց**: Երբ նա աշխատանքային ծանր օրվա վերջում **վերադառնա ու տուն մտնի**, տերը չի հրավիրի նրան սեղան **նստելու** և ընթրելու: **Մի՞թե** չի պատվիրի նրան գոգնոցը կապել ու ընթրիք մատակարարել: Միայն այդ հրամանը կատարելուց հետո է ծառային թույլատրվում իր համար **ուտել ու խմել**: Տերը **շնորհակալություն** չի հայտնի իր ծառային նրա բոլոր կատարածների համար: Դա նրա պարտականությունն էր: Չէ՞ որ ծառան պատկանում է տիրոջը, և նրա առաջին պարտականությունը հնազանդ լինելն է:

17:10. Այդպես էլ աշակերտները Տեր Հիսուս Քրիստոսի ծառաներն են: Նրանք Նրան են պատկանում հոգով, անձով ու մարմնով: Փրկչի համար կատարած ոչ մի ծառայություն չի բավականացնի՝ փոխհատուցելու Նրան Գողգոթայում իրենց համար կատարածի համար:

Այդ պատճառով բոլոր բաներն **անող** աշակերտը, ինչ նրան **հրամայված է** ՆԿ-ում, պետք է խոստովանի, որ ինքն **անպիտան ծառա է**, ով **արեց** միայն այն, **ինչ որ պարտավոր էր անել**:

Ռոյ Հեսսինը թվարկում է ստրուկ-ծառայի հետևյալ հինգ նշանները.

- 1. Նա պետք է պատրաստակամությամբ հանձն առնի աշխատանքը՝ առանց աշ-

խատանքի ետևից որևէ վարձատրություն ակնկալելու:

- 2. Դա անելիս նա պետք է հոժար լինի գնահատանք չստանալու:
- 3. Կատարելով ամբողջ հանձնարարությունը՝ չպետք է իր տիրոջը մեղադրի եսասիրության մեջ:
- 4. Պետք է իրեն համարի ոչինչ չարժեցող, անպիտան ծառա:
- 5. Նա պետք է խոստովանի, որ իր գործն անելով և հեզությամբ ու խոնարհությամբ իր դիրքն ընդունելով՝ ինքն ավելին չի արել, քան պարտավոր էր անել:⁵⁰

Ե. Հիսուսը բժշկում է տասը բորոտների (17:11-19)

17:11. Աշակերտի կյանքում ևս մի վտանգ կա՝ անշնորհակալության մեղքը: Սա երեվում է տասը բորոտների օրինակում: Կարդում ենք, որ Տեր Հիսուսն ուղևորվում էր **Երուսաղեմ**, անցնում էր **Մամարիայի ու Գալիլիայի** միջով:

17:12-14. Եվ մի **գյուղ մտնելիս Նրան տասը բորոտներ հանդիպեցին**: Իրենց ախտի պատճառով նրանք մոտիկ չեկան, բայց բարձր ձայնով կանչեցին Նրան հեռվից՝ աղաչելով, որ բժշկի իրենց: Նա վարձատրեց նրանց հավատը՝ ասելով. **«Գնացե՛ք և ձեզ ցույց տվե՛ք քահանաներին»**: Սա նշանակում էր, որ քահանայի մոտ հասնելիս արդեն նրանք կբժշկվեին բորոտությունից: Քահանան իշխանություն չունեի նրանց բժշկելու, սակայն նրա գործառույթի մեջ էր մտնում նրանց մաքուր *հայտարարելը*: Տիրոջ խոսքին հնազանդվող բորոտները գնացին քահանայի մոտ և **գնալու ընթացքում** հրաշալի կերպով **մաքրվեցին** հիվանդությունից:

17:15-18. Նրանք բոլորն էլ բժշկություն ստանալու հավատ ունեին, սակայն տասից միայն մեկը վերադարձավ՝ շնորհակալություն հայտնելու Տիրոջը: Չարմանալի է, որ այդ մեկը **սամարացի էր**՝ հրեա ժողովրդի ատելի հարևանների ներկայացուցիչը, որոնց հետ հրեաները ոչ մի գործ չէին ունենում: Նա **երեսի վրա ընկավ** Հիսուսի **ոտ-**

քերի առաջ՝ Աստծուն երկրպագող մարդու ճշմարիտ դիրքը, որը երկրպագության ճշմարիտ վայրն է: **Հիտուսը** հարցրեց. «**Չէ՞ որ տասն էլ մաքրվեցին**»: Իսկ ինչո՞ւ ոչ ոք, բացի այս **օտարականից**, չվերադարձավ, որպեսզի շնորհակալություն հայտներ: **Այա ո՞ր են** մյուս **ինը**:

17:19. Դիմելով սամարացուն՝ Տեր Հիտուսն ասաց. «**Վեր կաց և քո ճամփան գնա, քո հավատը քեզ բժշկեց**»: Միայն շնորհակալ եղողների տասը տոկոսն է ժառանգելու Քրիստոսի ճշմարիտ հարստությունները: Հիտուսը նոր օրինություններով է դիմավորում մեր վերադարձը (հ. 15) և շնորհակալությունը (հ. 16): «**Քո հավատը քեզ բժշկեց**» խոսքը մատնացույց է անում, որ ինը բժշկվեցին բորոտությունից, իսկ տասներորդը նաև փրկվեց մեղքից:

2. Աստծո թագավորության գալու մասին (17:20-37)

17:20-21. Դժվար է իմանալ, արդյոք **Աստծո թագավորության** մասին **փարիսեցիների** հարցն անկե՞ղծ էր, թե՞ պարզապես հեգնում էին: Սակայն մենք ճշգրիտ գիտենք, որ որպես հրեաներ՝ նրանք հույսեր էին փայփայում **Աստծո թագավորության** համար, որը հաստատվելու է մեծ գործությամբ ու փառքով: Նրանք արտաքին նշանների էին սպասում՝ քաղաքական մեծ փոփոխությունների: Փրկիչը նրանց ասաց. «**Աստծո թագավորությունը տեսանելի նշաններով չի գալու**», այսինքն՝ **Աստծո թագավորության** գալուստը, ամենաքիչը նրա ներկա ձևով, չի ուղեկցվելու արտաքին նշաններով: Մա անտեսանելի, երկրավոր, ժամանակավոր թագավորություն է, որի մասին կարելի է ասել, որ այն **այստեղ է** կամ **այնտեղ**: Ընդհակառակը, Փրկիչն ասաց, որ **Աստծո Թագավորությունը** մարդկանց **ներսում է**, կամ ավելի լավ տարբերակով՝ նրանց *մեջ*: Տեր Հիտուսը չէր կարող նկատի ունենալ, որ **Աստծո Թագավորությունն** իսկապես փարիսեցիների սրտերում էր, որովհետև այդ կրոնական խատասիրտ կեղծավորներն իրենց սրտերում տեղ չունեին Քրիստոս Թագավորի

համար: Նա նկատի ուներ, որ **Աստծո Թագավորությունն** իրենց միջավայրում է: Նա Իսրայելի ճշմարիտ Թագավորն էր, Նա կատարեց Իր հրաշքներն ու ի տես բոլորի ներկայացրեց Իր հավատարմագրերը: Բայց փարիսեցիները չուզեցին ընդունել Նրան: Հետևաբար **Աստծո Թագավորությունը** նրանց ներկայացվեց, բայց նրանք այն ընդհանրապես չհշմարեցին:

17:22. Փարիսեցիների հետ զրույցում Տերն **Աստծո Թագավորությունը** նկարագրեց որպես արդեն եկած մի բան: Երբ **Նա** դիմեց **աշակերտներին**, **Աստծո Թագավորության** մասին խոսեց որպես եկող իրադարձության մասին, որը հաստատվելու է Իր երկրորդ գալստյան ժամանակ: Բայց սկզբում **Նա** նկարագրեց Իր առաջին և երկրորդ գալուստների միջև ընկած ժամանակաշրջանը: **Օրեր կգան, երբ** աշակերտները **կցանկանան Մարդու Որդու օրերից մեկը տեսնել**, բայց **չեն տեսնի**: Այլ խոսքերով ասած՝ նրանք պետք է ցանկանան վերադարձնել գոնե այն **օրերից մեկը**, երբ **Նա** երկրի վրա նրանց հետ էր, ու իրենք վայելում էին Իր հետ ունեցած քաղցր հաղորդակցությունը: Այդ օրերն ինչ-որ չափով այն ժամանակի համոտեսումն էին, երբ **Նա** վերադառնալու է իշխանությամբ ու մեծ փառքով:

17:23-24. Շատ սուտ քրիստոսներ կհայտնվեն, իսկ կառավարիչները կհռչակեն Մեսիայի գալուստը: Սակայն **Նրա** հետևորդները չպետք է խաբվեն նման կեղծ լուրերով: Քրիստոսի երկրորդ գալուստն այնքան տեսանելի ու լայնածավալ է լինելու, ինչպես ծայրից ծայր երկինքը հատող **կայծակը**:

17:25. Տեր Հիտուսը նորից հիշեցրեց աշակերտներին, որ նախքան այս բաներից մեկի կատարվելը **Նա պիտի չարչարվի և մերժվի այս ազգից**:

17:26-27. Կրկին վերադառնալով Իր՝ թագավորելու համար վերադարձի թեմային, Տերը նկատեց, որ այդ փառավոր իրադարձությանը նախորդող **օրերը** նմանվելու են **Նոյի** օրերին: Մարդիկ **ուտում էին և**

խմում, կին էին առնում և մարդու գնում: Մրանում ոչ մի վատ բան չկա. սա բնական, օրինական մարդկային գործունեություն է: Չարությունը նրանում էր, որ մարդիկ ապրում էին հանուն այս բոլորի, չէին մտածում Աստծո մասին և Նրան ժամանակ չէին հատկացնում: Այն բանից հետո, երբ **Նոյը** և իր ընտանիքը **տապան մտան, ջրհեղեղը եկավ ու կործանեց բոլոր** մնացած մարդկանց: Այդպես էլ բոլոր նրանց համար, ովքեր մերժում են Աստծո կողմից առաջարկվող ողորմությունը, **Քրիստոսի երկրորդ գալուստը** նշանակելու է դատապարտություն:

17:28-30. Տերը նաև ասաց, որ Իր երկրորդ գալստյանը նախորդող օրերը նմանվելու են **Ղովտի օրերին:** Քաղաքակրթությունն այդ ժամանակ ավելի առաջ էր գնացել, մարդիկ ոչ միայն **ուտում-խմում էին**, այլև **առնում էին ու ծախում, տնկում էին ու կառուցում:** Դա առանց Աստծո ոսկե դար կառուցելու, խաղաղության հասնելու և բարգավաճելու մարդու ջանքն էր: **Նույն օրը, երբ Ղովտը,** նրա կինն ու աղջիկները **Սոդոմից դուրս եկան, կրակ և ձծումբ տեղաց երկնքից** ու այդ մեղավոր քաղաքը **կործանեց:** Այդպես կլինի այն օրը, երբ Մարդու Որդին կհայտնվի: Իրենց ցանկությունների ու հաճույքի ետևից ընկած մարդիկ կործանվելու են:

17:31. Դա մի օր է լինելու, երբ երկրավոր իրերի նկատմամբ կապվածությունը վտանգի տակ է դնելու մարդու կյանքը: Եթե մեկը **կտուրի վրա** լինի, չպետք է իր **տան** իրերը փրկելու ջանք անի: Նա, ով **դաշտում** կլինի, չպետք է **ետ դառնա** իր տուն: Նա պետք է փախչի այդ տեղերից, որտեղ դատաստանն է հասնելու:

17:32. Չնայած **Ղովտի կինը** գրեթե ուժով դուրս բերվեց Սոդոմից, սակայն նրա սիրտը պատկանում էր այդ քաղաքին: Այդ մասին է վկայում այն փաստը, որ նա ետ նայեց: Նա դուրս էր եկել Սոդոմից, բայց Սոդոմը դուրս չէր եկել նրա միջից: Արդյունքում՝ Աստված կործանեց նրան՝ վերածելով աղե արձանի:

17:33. Ով ջանում է իր կյանքը փրկել միայն անհանգստանալով ֆիզիկական անվտանգության համար և հոգ չտանելով իր անձին, **պիտի կորցնի** այն: Ընդհակառակը, յուրաքանչյուրը, ով **կորցնի** իր կյանքը այս նեղության ժամանակահատվածում Տիրոջը հավատարիմ մնալու համար, իրականում **կպահպանի** այն հավիտենականության համար:

17:34-36.⁵¹ Տիրոջ գալուստը դառնալու է բաժանման ժամանակ: **Մեկ անկողնում երկու հոգի** կլինեն քնած: **Նրանցից մեկը պիտի վերցվի** դատաստանի համար: **Մյուսը՝** հավատացյալը, ողորմության է արժանանալու, որպեսզի մտնի Քրիստոսի Թագավորության մեջ: **Երկու կին միասին ցորեն աղալուց կլինեն, նրանցից մեկը՝** անհավատը, **պիտի վերցվի** Աստծո բարկության հողմի մեջ, **մյուսը՝** Աստծո գավակը՝ **թողնվի**, որպեսզի Քրիստոսի հետ վայելի Հազարամյա Թագավորության օրհնությունները:

Իմիջիայոց, 34-35-րդ համարները հաստատում են, որ Երկիրը կոր է, պտտվում է իր առանցքի շուրջը: Այն փաստը, որ Երկրի մի մասում գիշեր է, իսկ մյուսում՝ ցերեկ, որի մասին վկայում են հիշատակված զբաղվածությունները, ցուցադրում է գիտական իմացություն, որ հայտնաբերվել է միայն շատ տարիներ անց:

17:37. Փրկչի խոսքերից աշակերտները ճիշտ հասկացան, որ Նրա երկրորդ գալուստն աղետալի դատաստան է լինելու Երկնքից հավատուրաց աշխարհի վրա: Դրա համար էլ հարցրին **Տիրոջը**, թե **որտեղ** է տեղի ունենալու դատաստանը: Նա պատասխանեց, որ **որտեղ** կլինի **մարմինը, այնտեղ էլ կհավաքվեն արժիվները:** **Արժիվները** կամ անգղները խորհրդանշում են գալիք դատաստանները: Պատասխանում հետևողականորեն մատնանշվում է, որ դատաստանի են ենթարկվելու ամեն տեսակի անհավատությունն ու Աստծուն հակառակվելը, որտեղ էլ որ դրանք գտնվեն:

Այս 17-րդ գլխում Տեր Հիսուսը զգուշացրեց աշակերտներին, որ նրանց նեղությո-

յուններ ու հալածանքներ են սպասվում: Մինչև Իր փառավոր հայտնության ժամանակը նրանք ստիպված են լինելու անցնել մեծ փորձությունների միջով: Որպեսզի նախապատրաստի նրանց, Փրկիչը տալիս է աղոթքին վերաբերող հետագա խրատները: Հաջորդ համարներում գտնում ենք որբևայրու աղոթքը, փարիսեցու աղոթքը, մաքսավորի ու մուրացկանի աղոթքները:

Է. Հարատևող որբևայրու մասին առակը (18:1-8)

18:1. Որբևայրու աղոթքի մասին **առակը** սովորեցնում է, որ **ամեն ժամանակ պետք է աղոթել ու չփատվել:** Սա ընդհանուր առմամբ ճշմարիտ է բոլոր մարդկանց և ամեն տեսակի աղոթքների համար: Սակայն այս խոսքերն այստեղ յուրահատուկ իմաստ ունեն. դրանք վերաբերում են փորձությունների ժամանակ Աստծո ազատագրությանը: Այս առանց **վիստույթի** աղոթքը Քրիստոսի առաջին ու երկրորդ գալուստների միջև ընկած երկար, հոգնեցնող միջանկյալ ժամանակաշրջանի աղոթք է:

18:2-3. Առակում ներկայացված է անիրավ **դատավորը, ով Աստծուց չէր վախենում և մարդկանցից չէր ամաչում: Եվ մի որբևայրի էլ կար, ում մի թշնամի** ճնշում էր: **Որբևայրին** համառորեն դատավորի **մոտ էր գնում** և նրանից արդարություն խնդրում, որպեսզի պաշտպանի իրեն անմարդկային վերաբերմունքից:

18:4-5. Դատավորն անտարբեր էր նրա փաստարկների արդարացիության հանդեպ: Այն փաստը, որ նրա հետ անարդար էին վարվել, դատավորին չէր դրդում որբեվայրու շահերը պաշտպանել: Սակայն վերջինիս այցելությունների հարատևությունը նրան գործի մղեց: Որբևայրու հանգիստ չտալն ու համառորեն հարատևելը հոգուտ իրեն որոշեցին գործը:

18:6-7. Այնուհետև **Տերը** բացատրեց աշակերտներին, որ եթե **անիրավ դատավորն** ստիպվեց աղքատ որբևայրու իրավունքը վերականգնել՝ նրա հարատևությունից ձանձրանալով, ապա որքան ավելի արդար **Աստված Իր ընտրյալների հա-**

մար արդարությունը կպաշտպանի: «Ընտրյալներ» բառը կարող է յուրահատուկ կերպով մատնացույց անել Մեծ նեղության ժամանակաշրջանի հրեական մնացորդին, բայց այն նաև տարածվում է բոլոր ժամանակների ճնշված հավատացյալների վրա: Աստված երկար ժամանակ չմիջամտեց, քանի որ համբերատար է մարդկանց հանդեպ և չի ուզում, որ որևէ մեկը կորչի:

18:8. Սակայն օրը գալիս է, երբ Նրա Հոգին այլևս չի ձգտելու փրկել մարդկանց, և այն ժամանակ Նա պատժելու է նրանց, ովքեր հալածանքի ենթարկեցին Իր հետևորդներին: Տեր Հիսուսն այս առակը եզրափակեց հարցով. **«Բայց երբ Մարդու Որդին գա, արդյոք հավատ կգտնի՞ երկրի վրա»:** Այստեղ Նա հավանաբար *այնպիսի* հավատ նկատի ունի, ինչպիսին ուներ աղքատ որբևայրին: Սակայն սա կարող է մատնացույց անել դրան, որ Քրիստոսի վերադարձի ժամանակ Նրան հավատարիմ կմնա միայն մի մնացորդ: Միևնույն ժամանակ մեզանից յուրաքանչյուրը պետք է ձգտի այնպիսի հավատի, որը գիշեր ու ցերեկ Աստծուն է կանչում:

Ը. Փարիսեցու և մաքսավորի մասին առակը (18:9-14)

18:9-12. Հաջորդ **առակը** հասցեագրված է այն մարդկանց, ովքեր պարծենում էին իրենց արդարությամբ և **ուրիշներին արհամարհում՝** իրենցից ցածր համարելով նրանց: Առաջին մարդուն որպես **փարիսեցի** պիտակավորելով՝ Փրկիչը կասկածի տեղ չթողեց, թե ինչպիսի մարդկանց նկատի ուներ: Չնայած փարիսեցին ձևացնում էր, թե աղոթում է, մինչդեռ իրականում **Աստծո** հետ չէր խոսում: Նա հավանաբար պարծենում էր իր բարոյական ու կրոնական նվաճումներով: Իրեն Աստծո կատարյալ չափանիշների հետ համեմատելու և իր իսկական մեղավոր վիճակը տեսնելու փոխարեն ինքն իրեն համեմատեց հասարակության մյուս մարդկանց հետ ու պարծեցավ նրանց հանդեպ ունեցած իր առավելություններով: **«Ես»** դերանվան հաճախակի կրկնությունը բացահայտում է նրա

սրտի ճշմարիտ վիճակը. ինքնասիրահարվածություն և ինքնագոհություն:

18:13. Մաքսավորը դրա ճիշտ հակառակն էր: **Կանգնելով** Աստծո առջև՝ նա զգում էր իր ծայրաստիճան ոչնչությունը: Նա խոնարհվեց փոշու աստիճան: Նա **նույնիսկ աչքերը չէր կամենում երկինք բարձրացնել, այլ իր կուրծքը ծեծելով**՝ Աստծուն էր կանչում ողորմության համար՝ ասելով. «Ո՛վ Աստված, ողորմի՛ր ինձ՝ մեղավորիս»: Նա իրեն այնպիսի մեղավոր էր համարում, ով արժանի չէր Աստծուց որևէ բան ստանալու:

18:14. Տեր Հիսուսն Իր ունկնդիրներին հիշեցրեց, որ ի հակադրություն մարդկային արտաքին նշանների՝ ճիշտ այսպիսի ինքնանվաստացման ու զղջման հոգին է Աստծուն ընդունելի: Մաքսավորն էր, ով **արդարացած գնաց իր տուն**: Աստված բարձրացնում է խոնարհներին, բայց ցածրացնում է նրանց, ովքեր իրենք իրենց են բարձրացնում:

Թ. Հիսուսը և փոքրիկ երեխաները (18:15-17)

Այս դեպքը հաստատում է վերևում ասվածը, այսինքն՝ **Աստծո Թագավորություն** մտնելու համար պետք է ունենալ փոքր երեխաների խոնարհությունը: Տեր Հիսուսի շուրջը մայրեր էին հավաքվել՝ իրենց **փոքրիկ երեխաներով**, որպեսզի Նրանից օրհնություն ստանան: **Աշակերտներին** նեղացնում էր Հիսուսի օրակարգում նմանատիպ ներխուժումը: Սակայն Տեր Հիսուսը նրանց հանդիմանեց ու քնքշորեն կանչեց **երեխաներին** Իր մոտ գալ՝ ասելով. «**Այսպիսիներինն է Աստծո Թագավորությունը**»: 16-րդ համարը պատասխանում է այն հարցին, թե ի՞նչ է կատարվում **նորածիների** հետ, երբ նրանք մահանում են: Պատասխանը սա է. նրանք Երկինք են գնում: Տերը հստակ ասաց. «**Այսպիսիներինն է Աստծո Թագավորությունը**»:

Երեխաները կարող են փրկվել շատ վաղ հասակում: Այսպիսի հասակը հավանաբար յուրաքանչյուր դեպքում տարբեր է, բայց փաստը մնում է փաստ. Հիսուսին գալ ցան-

կացող յուրաքանչյուր երեխային, ինչքան էլ նա փոքր լինի, պետք է թույլատրել դա անել, ինչպես նաև անհրաժեշտ է քաջալերել նրա հավատը:

Որպեսզի փրկություն ձեռք բերեն, երեխաները կարիք չունեն մեծանալու, բայց մեծերը, որպեսզի **մտնեն Աստծո Թագավորություն**, պետք է **երեխաների** հավատի պարզությունն ու խոնարհությունն ունենան:

Ժ. Երիտասարդ հարուստ իշխանավորը (18:18-30)

18:18-19. Այս հատվածում խոսքն այն մարդու մասին է, ով չընդունեց Աստծո թագավորությունը երեխայի պես: Մի անգամ **մի իշխանավոր** եկավ Տեր Հիսուսի մոտ, Նրան անվանեց **Բարի վարդապետ** ու հարցրեց. **Ի՞նչ պետք է անի հավիտենական կյանքը ժառանգելու համար**: Փրկիչը նախ նրան հարցրեց Իրեն «*Բարի վարդապետ*» կոչելու մասին: Հիսուսը հիշեցրեց նրան, որ միայն **Աստված է բարի**: Մեր Տերը չուրացավ, որ Նա Աստված է, բայց ուզեց, որ իշխանավորն էլ գիտակցի այդ փաստը: Եթե Նա բարի է, ապա պետք է Աստված լինի, որովհետև միայն Աստված է Իր էությանմբ բարի:

18:20. Այնուհետև Հիսուսը պատասխանեց «*ի՞նչ պետք է անեմ հավիտենական կյանքը ժառանգելու համար*» հարցին: Մենք գիտենք, որ հավիտենական կյանքը չի ժառանգվում, չի ձեռքբերվում բարի գործեր կատարելով: Հավիտենական կյանքը Աստծո պարզևն է Հիսուս Զրիստոսի միջոցով: Դիմելով իշխանավորին Տասը **պատվիրաններով**՝ Տեր Հիսուսը նկատի չունեք, որ անձը կարող է փրկվել Օրենքը պահելու միջոցով: Ընդհակառակը, Նա Օրենքն օգտագործեց, որպեսզի մարդուն հանդիմանի մեղքի համար: Տեր Հիսուսը մեջբերեց հինգ **պատվիրաններ**, որոնք վերաբերում են մերձավորի հանդեպ ունեցած մեր պարտականություններին՝ Օրենքի երկրորդ քարե տախտակին:

18:21-23. Ակնհայտ է, որ Օրենքն այդ մարդու կյանքի վրա հանդիմանական ազդե-

ցություն չէր ունեցել, որովհետև նա ամբարտավանորեն հայտարարեց, թե այդ պատվիրանները **մանկությունից ի վեր պահպանել է**: Հիսուսն ասաց, որ նրան **մի բան է պակասում**՝ սեր մերձավորի հանդեպ: Եթե նա իսկապես պահպանել էր այդ պատվիրանները, ապա կվաճառեր իր ունեցվածքն ու կրաժաներ **աղքատներին**: Բայց բանն այն էր, որ նա իր անձի պես չէր սիրում մերձավորին: Նա եսասիրական կյանք էր վարում՝ իրականում չսիրելով մերձավորին: Սա ապացուցվում է այն փաստով, որ երբ Քրիստոսի խոսքերը **լսեց**, տրտմեց, **որովհետև շատ հարստություն ուներ**:

18:24. Նրան նայելով՝ Տեր Հիսուսը նկատեց, թե որքան դժվար է **հարստություն ունեցողների համար Աստծո Թագավորությունը մտնելը**: Դժվարությունը հարըստություն ունենալն է ու միևնույն ժամանակ այն չսիրելը կամ դրան չապավինելը:

Այս հատվածը բարձրացնում է հարցեր, որոնք անհանգստացնում են ինչպես քրիստոնյաներին, այնպես էլ անհավատներին: Կարելի՞ է մեր մասին ասել, որ մենք իսկապես սիրում ենք մեր մերձավորներին, եթե սպրում ենք բարգավաճության մեջ ու շրջապատված ենք հարմարավետությամբ, մինչ նույն ժամանակ ուրիշները կորչում են՝ առանց լսելու Քրիստոսի մասին լուրը:

18:25. Հիսուսն ասաց, որ **շատ ավելի հեշտ է, որ ուղտն ասեղի անցքով անցնի, քան թե հարուստը մտնի Աստծո Թագավորություն**: Այս հայտարարությանը շատ բացատրություններ են տրված: Ումանք ենթադրում են, որ ասեղի անցքը քաղաքի պարսպի ներքին փոքրիկ դուռն է, որով ուղտը կարող է անցնել միայն ծնկի եկած: Սակայն Ղուկաս բժիշկն օգտագործում է որոշակիորեն վիրաբույժի ասեղ նշանակող բառը, և Տիրոջ խոսքի նշանակությունը, թվում է, հստակ է: Այլ խոսքերով, ինչպես **ուղտը չի կարող ասեղի անցքով անցնել**, այնպես էլ *անհնարին է հարստություն ունեցողների համար Աստծո Թագավորություն մտնելը*: Բա-

վարար չէ այս խոսքերի նշանակությունը բացատրել դրանով, որ հարուստ մարդը չի կարող սեփական ջանքերով մտնել Աստծո Թագավորության մեջ. սա վերաբերում է և՛ հարուստներին, և՛ աղքատներին: Այստեղ իմաստը հետևյալն է. *անհնար է, որ հարստություն ունեցող մարդը՝ որպես հարուստ, մտնի Աստծո Թագավորություն, քանի դեռ երկրպագում է իր բարգավաճությանը՝ թույլատրելով, որ այն կանգնի իր և իր հոգու փրկության միջև. նա չի կարող հետևել Քրիստոսին*: Փաստ է, որ շատ քիչ հարուստներ են փրկվում, և նրանք, ովքեր փրկված են, պետք է սկզբում Աստծո առջև կոտորվեն:

18:26-27. Երբ աշակերտները խորհրդածում էին այս ամենի մասին, նրանց մոտ հարց առաջացավ **ո՞վ կարող է փրկվել**: Նրանց համար հարստությունը միշտ էլ Աստծո օրհնությունների նշանն է եղել (2 Օր. 28:1-8): Եթե հրեա հարուստները չեն փրկվում, ապա ո՞վ կարող է փրկվել: Տերը պատասխանեց, որ **Աստված** կարող է անկարելին անել: Այլ խոսքերով, Նա կարող է ազահ, ընչաքաղց, խիստ ունևորից հեռացնել արծաթասիրության հոգին և այն փոխարինել Տիրոջ հանդեպ լցված ճշմարիտ սիրով: Սա աստվածային շնորհի հրաշքն է:

Այսպիսով, այս ամբողջ բաժինն Աստծո գավակներին անհանգստացնող հարցեր է բարձրացնում: Ծառան իր Տիրոջից մեծ չէ. Տեր Հիսուսը թողեց Իր երկնային հարստությունը, որպեսզի փրկի մեր արատավոր հոգիները: Մեզ համար տեղին չէ հարուստ լինել աշխարհում, որտեղ Նա աղքատ էր: Հոգիների արժեքը, Քրիստոսի գալստյան մոտիկ լինելը, Քրիստոսի սիրո գորությունը մեզ պետք է առաջնորդեն դրան, որ Տիրոջ գործի մեջ ներդնենք ամեն հնարավոր նյութական հարստություն:

18:28-30. Երբ **Պետրոսը** Տիրոջը հիշեցրեց, որ աշակերտները **թողել են** իրենց տներն ու ընտանիքները, որպեսզի հետևեն Իրեն, Տերը պատասխանեց, որ այդպիսի զոհաբերությամբ կյանքն առատությամբ վարձատրվում է այս կյանքում և հավիտե-

նականությունում էլ կստանա հետագա վարձատրությունը: 30-րդ համարի վերջին մասը (**գալիք աշխարհում՝ հավիտենական կյանքը**) չի նշանակում, որ հավիտենական կյանքը ձեռք է բերվում ամեն բանից հրաժարվելով: Այստեղ խոսվում է երկնային փառքերը վայելելու ավելի մեծ հնարավորության, ինչպես նաև Երկնքի Ռազավորության մեջ մեծ վարձատրության մասին: Դա նշանակում է «դարձի գալուց ստացած կյանքի ամբողջական իրականացում, այսինքն՝ առատ կյանք»:

Ի. Հիսուսը նորից խոսում է Իր մահվան ու հարության մասին (18:31-34)

18:31-33. Երրորդ անգամ Տերն Իր մոտն առավ տասներկու աշակերտներին և մանրամասն պատմեց նրանց այն բոլոր բաների մասին, ինչ Իրեն սպասվում էր (տե՛ս 9:22, 44): Նա կանխաձայնեց Իր չարչարանքները՝ որպես ՀՎ-ի **մարգարենների ձեռքով գրվածների** կատարում: Աստվածային նախախնամությամբ Նա հանդարտորեն բացատրեց, որ Ինքը **մատնվելու է հեթանոսներին:** «Ավելի հավանական էր, որ Նրան գաղտնի կսպանեին կամ կքարկոծեին ժողովրդական ամբոխում»:⁵² Սակայն մարգարենները նախապես ասել էին, որ Նրան կմատնեն հեթանոսներին **և կձաղրեն, կնախատեն և վրան պիտի թքեն,** ուստի այդպես էլ պետք է լիներ: Նրան պիտի ծեծեն ու պիտի սպանեն, բայց **երրորդ օրը Նա հարություն է առնելու:**

Մնացած գլուխներում ծավալվում է այն դրաման, որը Նա այդքան զարմանալի կերպով նախապես իմացավ ու ասաց.

- Ահա բարձրանում ենք Երուսաղեմ (18:35-19:45):

Մարդու Որդին պիտի **մատնվի հեթանոսներին (19:47-23:1):**

Եվ կձաղրվի, կնախատվի (23:1-32):

Ու պիտի սպանեն Նրան (23:33-56):

Բայց երրորդ օրը Նա հարություն պիտի առնի (24:1-12):

18:34. Բավական զարմանալի է, որ **աշակերտներն այս խոսքերից ոչինչ չհասկա-**

ցան: Այս խոսքերի իմաստը **նրանցից ծածկված էր:** Մեզ համար դժվար է հասկանալ, թե ինչու էին նրանք այդքան անհասկացող այս հարցում: Պատճառը հավանաբար սա էր. նրանց մտքերն այնքան լի էին ազատարարի ակնկալությամբ, ով նրանց ազատելու էր հռոմեական լծից և անմիջապես հաստատելու էր թագավորությունը, որ չէին կարողանում որևէ այլ ծրագիր ընդունել: Մենք հաճախ հավատում ենք այն բանին, ինչին **ուզում ենք** հավատալ, և դիմադրում ենք ճշմարտությանը, եթե այն չի համընկնում մեր *կանխակալ* կարծիքին:

Լ. Կույր մուրացկանի բժշկությունը (18:35-43)

18:35-37. Հորդանանն անցնելով՝ Տեր Հիսուսը դուրս եկավ Բերիայից: Ղուկասն ասում է, որ քիչ հետո տեղի ունենալիք դեպքը կատարվեց, **երբ Նա մոտենում էր Երիբովին:** Մատթեոսն ու Մարկոսը նշում են, որ դա կատարվեց, երբ Նա *հեռանում էր* Երիբովից (Մատթ. 20:29, Մարկ. 10:46): Մատթեոսը նաև նշում է երկու կույրերի մասին, իսկ Մարկոսն ու Ղուկասը մեկի մասին են ասում: Հնարավոր է՝ Ղուկասը գրում է նոր քաղաքի մասին, իսկ Մատթեոսն ու Մարկոսը՝ հին քաղաքի: Նաև հնարավոր է, որ այդ քաղաքում կույրի տեսողությունը վերադարձնելու ոչ միայն մեկ հրաշք է եղել: Ինչպիսին էլ որ լինի ճիշտ բացատրությունը, մենք հավատում ենք, որ եթե մեր գիտելիքները շատ լինեին, սպա թվացյալ հակասությունները կանհետանային:

18:38. Կույր մուրացկանն ինչ-որ կերպով **Հիսուսին** ճանաչեց որպես Մեսիայի, քանի որ Նրան դիմելիս անվանեց **Դավթի Որդի:** Նա Տիրոջը խնդրեց **ողորմել** իրեն, այսինքն՝ վերականգնել տեսողությունը:

18:39. Անտեսելով իրեն լռելի ստիպողների փորձերը՝ մուրացկանը համառորեն **կանչում էր** Տեր Հիսուսին: Մարդիկ անտարբեր էին մուրացկանի նկատմամբ: Բայց ոչ Հիսուսը:

18:40-41. Այսպես՝ **Հիսուսը կանգնեց:**

Դարբին շատ խոր մեկնաբանություն է արել. «Մի անգամ Նավեի որդի Հեսուն խնդրեց, որպեսզի արևը կանգ առնի երկրնքում, իսկ այստեղ արևի, լուսնի և երկրնքի *Տեղը* կանգնեց կույր մուրացկանի խնդրանքով»: Տեր Հիսուսը պատվիրեց, որ **նրան Իր մոտ բերեն, և հարցրեց**, թե ինչ է նա ուզում: Առանց տատանման կամ ընդհանրացնելու՝ մուրացկանը ասաց, որ ուզում է **տեսնել**: Նրա աղոթքը կարճ էր, որոշակի և հավատով լի:

18:42-43. Հիսուսը պատասխանեց նրա **խնդրանքին**, և նա **անմիջապես տեսավ**: Ավելին, նա **գնաց Տիրոջ ետևից՝ փառավորելով** Աստծուն: Այս դեպքը ցույց է տալիս, որ մենք պետք է համարձակորեն վստահենք Աստծուն՝ նույնիսկ անհնարին հասնելու մեջ: Մեծ հավատը հսկայական պատիվ է տալիս Աստծուն:

Դու գալիս ես Թագավորին
Եվ բազմաթիվ աղաչանքներ բերում,
Բայց Նրա շնորհն ու հզորությունն
այնպիսին են,
Որ ոչ ոք չի կարող ավելին խնդրել:

Ջոն Նյուտոն

Խ. Չակքեոսի դարձը (19:1-10)

Չակքեոսի դարձը պատկերավոր կերպով բացատրում է Ղուկ. 18:27-ի «Այն, ինչ մարդկանց համար անկարելի է, կարելի է Աստծու համար» խոսքերի ճշմարտությունը: Չակքեոսը հարուստ մարդ էր, և սովորաբար հարուստ մարդուն հնարավոր չէ մտնել Աստծո Թագավորություն: Սակայն Չակքեոսն իրեն խոնարհեցրեց Փրկչի առջև և թույլ չտվեց, որ հարստությունը կանգնի իր և Աստծո միջև:

19:1-5. Սա պատահեց, երբ Տերը երրորդ և վերջին անգամն էր գնում դեպի Երուսաղեմ: Նա **անցնում էր Երիքովի միջով**: Ճիշտ այդ ժամանակ Չակքեոսը **ուզեց տեսնել** Հիսուսին: Ըստ երևույթին, այս փափագը բխում էր հետաքրքրասիրությունից: Չնայած նա **մաքսապետ էր**, սակայն չամաչեց Փրկչին տեսնելու համար որոշ պայմաններ խախտել: Քանի որ **կարճա-**

հասակ էր, նա գիտեր, որ չի կարողանա Հիսուսին լավ տեսնել: Այդ իսկ պատճառով **առաջ վազելով՝ բարձրացավ Տիրոջ գնալու ճանապարհին աճած ժանտաթզենու վրա**: Հավատի այս դրսևորումն աննկատ չմնաց: Երբ **Հիսուսը** մոտեցավ այդ տեղին, **վեր նայեց և տեսավ** Չակքեոսին: Նա պատվիրեց Չակքեոսին **չուտով ցած իջնել** և Տիրոջն իր **տուն** հրավիրել: Սա միակ արձանագրված դեպքն է, երբ Փրկչին Ինքն է Իրեն մեկի տուն հրավիրում:

19:6. Չակքեոսն արեց այնպես, ինչպես իրեն պատվիրված էր, և **ուրախությամբ ընդունեց** Տիրոջը: Մենք կարող ենք գրել ճշտությամբ այդ ժամանակը համարել որպես նրա դարձի ամսաթիվ:

19:7. Փրկչին քննադատողներն սկսեցին **տրտնջալ**, քանի որ Նա **հյուր գնաց մի մարդու** տուն, ով որպես **մեղավոր** էր հայտնի: Նրանք արհամարհում էին այն փաստը, որ Տերն այս աշխարհ գալով մըտնում էր նման տներ:

19:8. Փրկությունը հիմնովին փոխեց մաքսավորի կյանքը: Նա Փրկչին հաղորդեց, որ մտադիր է իր **ունեցվածքի կեսը տալ աղքատներին**: Մինչ այդ նա աղքատներից քամում էր այն ամենը, ինչ կարող էր: Սակայն հիմա նա պատրաստվում էր **քառասպատիկ** հատուցել որևէ դրամ, որ անագնավորեն էր ձեռք բերել: Սա Օրենքի պահանջածից ավելին էր (Ել. 22:4, 7, Ղև. 6:5, Թվ. 5:7): Դա ցույց տվեց, որ այժմ Չակքեոսին ղեկավարում էր սերը, մինչ նախկինում նա ազահությամբ էր առաջնորդվում:

Փոքր իսկ կասկած չկա, որ Չակքեոսն իր հարստությունն անագնիվ կերպով էր ձեռք բերել: Վուեստը այսպես է թարգմանում 8-րդ համարի երկրորդ մասը. «Եվ քանի որ ես ճիշտ չեմ հարկել...»: Այստեղ ոչ մի «եթե» չկա:

Չակքեոսի խոսքերն այնպես են հնչում, կարծես պարծենում էր մարդասիրությամբ՝ դրան ապավինելով որպես իր փրկության հիմքի: Բայց դա ամենևին այդպես չէր: Նա ասում է, որ Քրիստոսով նոր կյանքը իր մեջ

փափագ առաջացրեց հատուցելու անցյալի համար, ինչպես նաև իբրև փրկության հետևանք՝ լցված լինելով Աստծո հանդեպ շնորհակալությամբ. նա հիմա ուզում էր իր դրամն օգտագործել Աստծո փառքի և իր մերձավորներին օրհնելու համար:

8-րդ համարը Աստվածաշնչի զորեղ համարներից մեկն է, որը խոսում է հատուցման մասին: Փրկությունը չի ազատում մարդուն անցյալում կատարած բոլոր սխալ բաները հեռացնելու պարտականությունից: Ապաշխարությունից առաջ ունեցած պարտքերը վերստին ծնունդով չեղյալ չեն հայտարարվում: Եվ եթե մինչ ապաշխարելը դրամ է գողացվել, ապա Աստծո շնորհի ճշմարիտ հասկացողությունը պահանջում է, որ մարդն Աստծո զավակ դառնալուն պես այդ դրամը վերադարձնի:

19:9. Հիսուսը բացեիբաց հայտարարեց, որ Չակքեոսի **տանը փրկություն եկավ, որովհետև** նա էլ **Աբրահամի որդի է:** Փրկությունը չեկավ Չակքեոսի հրեա լինելու պատճառով: Այստեղ «Աբրահամի որդի» արտահայտությունն ավելին է ցույց տալիս, քան բնական ծագումնաբանությունն է. դա նշանակում է, որ Չակքեոսը Տիրոջ վրա նույն հավատն ուներ, ինչ Աբրահամը: Նաև փրկությունը Չակքեոսի տուն չեկավ նրա բարեգործության ու պարտքերի փոխհատուցման հետևանքով (հ. 8): Այս բոլորը փրկության հետևանքներն էին, ոչ թե պատճառը:

19:10. Պատասխանելով նրանց, ովքեր քննադատում էին Նրան մեղավորի տուն այցելելու համար, Հիսուսն ասաց. «**Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին**»: Այլ բառերով, Չակքեոսի դարձը Քրիստոսի աշխարհ գալու նպատակի իրականացումն էր:

Ծ. Տասը ոսկեդրամների մասին առակը (19:11-27)

19:11. Երբ Տերը **Երուսաղեմին** էր մոտենում, Երիքովից ելնելիս Նրա հետևորդներից շատերը **կարծում էին, թե Աստծո Թագավորությունը շուտով հայտնվելու է:** Տասը ոսկեդրամների առակում⁵³ Նա

փարատեց նմանատիպ պատրանքները: Նա ցույց տվեց, որ Իր առաջին ու երկրորդ գալուստների միջև միջանկյալ ժամանակ է լինելու, որի ընթացքում աշակերտները պետք է աշխատեն Իր համար:

19:12-13. Ազնվական մարդու մասին այս առակը զուգահեռներ ունի Արքեդայոսի պատմության հետ: Հերովդեսը նրան իրեն հետնորդ ընտրեց, բայց ժողովուրդը մերժեց նրան: Նա մեկնեց Հռոմ, որպեսզի հաստատի իր նշանակումը, իսկ վերադառնալով՝ պարզևատրեց իր ծառաներին ու կործանեց թշնամիներին:

Այս առակում **ազնվական մի մարդ**՝ հենց Ինքը՝ Տեր Հիսուսն է, Ով **գնաց** երկինք՝ սպասելով այն ժամին, երբ **կվերադառնա** ու երկրի վրա կհաստատի Իր Թագավորությունը: **Տասը ծառաները** ներկայացնում են Նրա աշակերտներին: Նրանցից յուրաքանչյուրին Նա մեկական ոսկեդրամ տվեց ու պատվիրեց **գործածել** մինչև Իր վերադարձը: Չնայած Տիրոջ ծառաների տաղանդներն ու ընդունակությունները տարբերվում են (տե՛ս տաղանդների մասին առակը, Մատթ. 25:14-30), բայց նրանք ինչ-որ ընդհանուր բաներ ունեն, օրինակ՝ ավետարանելու և Քրիստոսին աշխարհին ներկայացնելու արտոնություն, ինչպես նաև աղոթելու արտոնություն: Ոսկեդրամը, անկասկած, դրա մասին է խոսում:

19:14. Քաղաքացիները ներկայացնում են հրեա ժողովուրդին: Նրանք ոչ միայն մերժեցին Հիսուսին, այլև նույնիսկ Նրա մեկնելուց հետո **Նրա հետևից պատգամավոր ուղարկեցին՝ ստելով. «Չենք ուզում, որ այս մարդն իշխի մեզ վրա»:** Պատգամը կարող է ներկայացնել Քրիստոսին ծառայողների հանդեպ ունեցած նրանց վերաբերմունքը, ինչպես Ստեփանոսի ու մյուս նահատակների հանդեպ:

19:15. Այստեղ տեսնում ենք այն բանի խորհրդապատկերը, թե ինչպես է Տերը վերադառնում՝ հաստատելու Իր **Թագավորությունը**: Այնուհետև Նա հաշիվ է տեսնում նրանց հետ, որոնց **ոսկեդրամ էր տվել:**

Այս դարաշրջանի հավատացյալները կանգնելու են Քրիստոսի առյուծակալության մասին: Դա տեղի է ունենալու Երկնքում հավիշտակությունից հետո:

Հրեաների հավատարիմ մնացորդը, որը Քրիստոսի մասին վկայելու է Մեծ նեղության ժամանակաշրջանում, հաշիվ տալու է Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ: Թվում է, թե առաջին հերթին հենց այդ դատաստանը նկատի ունի այս հատվածում:

9:16. Առաջին ծառան իրեն վստահված այն մեկ **ոսկեդրամից** շահեց **տասը ոսկեդրամ**: Նա գիտակցեց, որ դա իր դրամը չէ («**քո ոսկեդրամը**»), և այն օգտագործեց լավագույն ձևով՝ իր տիրոջ շահերի օգտակարության համար:

19:17. Տերը նրան գովեց այն բանի համար, որ **նա քիչ բանի մեջ հավատարիմ էր եղել**, սա հիշեցնում է, որ ամբողջ ուժով աշխատելով իսկ, մենք ոչինչ չարժեցող ծառաներ ենք: Որպես վարձատրություն նա **իշխանություն** ստացավ **տասը քաղաքի վրա**: Լիովին ակնհայտ է, որ հավատարիմ ծառայության համար պարգևատրությունը կապված է Քրիստոսի Թագավորության մեջ իշխելու հետ: Աշակերտի իշխանության սահմանները որոշվում են նրա նվիրվածության ու ինքնագոհության չափով:

19:18-19. Երկրորդ ծառան նախապես տրված մեկ **ոսկեդրամով** վաստակեց **հինգ ոսկեդրամ**: Նրա պարգևատրությունն էր **հինգ քաղաքի վրա իշխելը**:

19:20-21. Երրորդը ոչինչ **չբերեց**՝ բացի արդարանալուց: Նա վերադարձրեց **ոսկեդրամը**, որ **խնամքով պահել էր թաշկինակի մեջ փաթաթած**: Դրանով նա ոչինչ չէր վաստակել: Ինչո՞ւ: Նա նույնիսկ մեղադրեց տիրոջը: Ասաց, որ տերը **խիստ մարդ է**, ով հույս ունի իր համար վերցնել այն, որի համար ոչինչ չի ներդրել: Սակայն նրա խոսքերը դատեցին նրան: Եթե կարծում էր, որ տերը այդպիսին է, ապա նվագագույնը, որ ինքը կարող էր անել, մեկ ոսկեդրամը տոկոսով ինչ-որ շահույթ բերելու համար տալն էր:

19:22. Ազնվականի խոսքերը մեջբերելով՝ Հիսուսը չընդունեց, թե դրանք ճշմարիտ են: Հենց ծառայի մեղավոր սիրտն ու ծուլությունն էր իր տիրոջը մեղադրելու պատճառը: Բայց եթե նա իսկապես հավատում էր դրան, պետք է համապատասխանորեն գործեր:

19:23. Այս համարից թվում է, թե մեզ խորհուրդ է տրվում, որ Տիրոջ գործի համար կա՛մ ներդնենք ամեն բան, ինչ-որ ունենք, կա՛մ էլ փոխանցենք մեկին, ով դա կօգտագործի Իր համար:

19:24-26. Երրորդ ծառայի համար տիրոջ վճիռը այսպիսին է. նրանից **վերցնել ոսկեդրամը և տալ** այն առաջին ծառային, ով շահեց **տասը ոսկեդրամ**: Եթե Տիրոջ համար չենք օգտագործում մեր հնարավորությունները, ապա դրանք կվերցվեն մեզանից: Մյուս կողմից, եթե հավատարիմ ենք շատ քիչ բանում, Աստված կհոգա, որ մենք երբեք միջոցների պակասություն չզգանք ու կարողանանք Իրեն ավելի շատ ծառայել: Ոմանց համար կարող է անարդարացի թվալ, որ **ոսկեդրամը** տրվեց այն մարդուն, ով արդեն **տասն** ուներ, սակայն հոգևոր կյանքում մի ամրագրված սկզբունք կա, ըստ որի՝ բոլոր նրանք, ովքեր սիրում են Տիրոջն ու նախանձավորությամբ ծառայում են Նրան, լայն հնարավորություններ են տրվում նրան: Հնարավորություններն օգտագործելուց հրաժարվելը տանում է ամեն բան կորցնելուն:

Երրորդ ծառան գրկվեց պարգևատրությունից, բայց ասված չէ, որ նա մեկ այլ պատիժ կրեց: Այստեղ, ըստ երևույթին, հարց չի ծագում նրա փրկության մասին:

19:27. Քաղաքացիները, որոնք չէին ուզում, որ ազնվականը նրանց վրա իշխեր, մեղադրվեցին որպես **թշնամիներ** ու դատապարտվեցին մահվան: Սա մի տխուր կանխատեսում է Մեսիային մերժող ժողովրդի ճակատագրի մասին:

X. ՄԱՐԳՈՒ ՈՐԳԻՆ ԵՐՈՒՍԱԳՂԵՄՈՒՄ (19:28-21:38)

Ա. Փառավոր մուտքը (19:28-40)

19:28-34. Իսպելությանը նախորդող կիրակի օրն էր: Հիսուսը մոտենում էր **Երուսաղեմի** մոտ գտնվող Ձիթենյաց լեռան արևելյան լանջին: **Երբ** Նա **մոտեցավ Բեթփագեին ու Բեթանիային... Իր աշակերտներից երկուսին ուղարկեց դիմացի գյուղը**, որպեսզի մի **ավանակ** գտնեն Իր՝ Երուսաղեմ մտնելու համար: Նա ասաց, թե որտեղ փնտրեն կենդանուն և ինչ ասեն **տերերին**: Երբ նրանք բացատրեցին իրենց հանձնարարության էությունը, տերերը բացահայտ տրամադրվածությամբ տվեցին իրենց ավանակը Հիսուսի կարիքների համար: Հնարավոր է՝ նրանք նախկինում օրհնվել էին՝ ծառայելով Տիրոջը և իրենց օգնությունն առաջարկել Նրան ցանկացած ժամանակ, երբ այն անհրաժեշտ կլիներ Նրան:

19:35-38. Աշակերտներն **իրենց հանդերձներով** Տիրոջ համար բարձ կամ թամբ պատրաստեցին: Շատերն **իրենց հանդերձները փռեցին ճանապարհին** Նրա - առջև, երբ Նա Երուսաղեմ էր մտնում Ձիթենյաց լեռան արևմտյան ստորոտից: Այնուհետև Հիսուսի հետևորդները միաձայնորեն սկսեցին **օրհնել Աստծուն** Նրա կատարած **բոլոր այն հրաշագործությունների համար, որ տեսել էին**: Նրանք ողջունեցին Նրան Աստծո **Թագավորի** պես ու վանկարկեցին, որ Նրա գալստյան հետևանքը **խաղաղություն էր երկնքի մեջ և փառք բարձունքներում**, ոչ թե «խաղաղություն երկրի վրա»: Չէր կարող երկրի վրա խաղաղություն լինել, որովհետև խաղաղության Իշխանը մերժվեց ու շուտով պետք է խաչվեր: Բայց Գողգոթայի խաչի վրա Քրիստոսի վերահաս մահվան ու Նրա երկինք համբարձման հետևանքով **երկնքի մեջ խաղաղություն** կլինի:

19:39-40. **Փարիսեցիները** անհանգրստացան այն բանից, որ Հիսուսին այդպիսի բացահայտ պատվի արժանացրին: Նրանք

պահանջեցին, որ Նա **հանդիմաներ** Իր **աշակերտներին**: Բայց Նա **պատասխանեց** նրանց, որ նմանատիպ ընդունելությունն անխուսափելի էր: Եթե աշակերտները դա չանեն, **ապա քարերն անմիջապես կաղաղակեն**: Դրանով Նա հանդիմանեց փարիսեցիներին՝ անշունչ քարերից ավելի կարծր ու չարձագանքող լինելու համար:

Բ. Մարդու Որդին լացում է Երուսաղեմի վրա (19:41-44)

19:41-42. Երբ Հիսուսը **մոտեցավ** Երուսաղեմին, լացեց **քաղաքի** վրա, որ բաց թողեց իր ոսկյա առիթը: Եթե միայն Նրան՝ որպես Մեսիայի, ընդունեին, դա **խաղաղություն** կբերեր նրանց: Սակայն նրանք չընդունեցին, որ Նա է **խաղաղության** աղբյուրը: Հիմա այլևս շատ ուշ էր: Նրանք արդեն որոշել էին, թե ինչ էին անելու Աստծո Որդու հետ: Քանի որ նրանք մերժեցին Տիրոջը, նրանց **աչքերը** կուրացան: Քանի որ *չցանկացան* տեսնել Նրան, այլևս *չէին էլ կարող* տեսնել Նրան:

Այստեղ կա՛նգ առեք ու խորհե՛ք Փրկչի արցունքների հրաշքի մասին: Ինչպես ասել է Ու. Հ. Գրիֆֆիթ Թոմասը. «Եկե՛ք նրատենք Քրիստոսի ոտքերի մոտ այնքան ժամանակ, մինչև սովորենք Նրա արցունքների գաղտնիքը և նայելով քաղաքի ու շրջակայքի մեղքերին ու տառապանքներին՝ մենք էլ լացենք նրանց վրա»:⁵⁴

19:43-44. Հիսուսը լուրջ նախազգուշացում արեց Տիրոսի կողմից պաշարման մասին: Նա նկարագրեց, թե ինչպես են հռոմեական այդ գորավարի գորքերը **շրջապատելու** քաղաքը, հալածելու նրա բնակիչներին, սպանելու մանուկներին ու մեծահասակներին, **ավերելու** պարիսպներն ու շենքերը: Զաղաքում **քարը քարի վրա չեն թողնի**: Եվ այս բոլորը նրա համար, **որովհետև** Երուսաղեմը **չճանաչեց** իր **այցելության ժամանակը**: Տերը քաղաք այցելեց փրկության պարզևով: Բայց մարդիկ չցանկացան ընդունել Նրան: Նրանց ամենօրյա ծրագրերում տեղ չգտնվեց Նրա համար:

Գ. Տաճարի երկրորդ անգամ մաքրումը (19:45-46)

Հիսուսը **տաճարը** մաքրեց Իր հրապարակային ծառայության սկզբում (Հովհ. 2:14-47): Այժմ, երբ Նրա ծառայությունն արագորեն մոտենում էր իր ավարտին, Նա մտավ սուրբ տաճարը և **սկսեց այնտեղից դուրս հանել նրանց, ովքեր աղոթքի տունն ավազակների որջ էին դարձրել**: Միշտ էլ վտանգ կա առևտրի վերածելու այն, ինչ պատկանում է Աստծուն: Այսօրվա քրիստոնեությունը վարակված է այս չարիքով՝ եկեղեցական շուկաներն ու հանրային միջոցառումները, կազմակերպված ֆինանսական արշավները, շահույթ ստանալու նպատակով քարոզելը, և այս բոլորը՝ Քրիստոսի անվամբ:

Իր արարքները հիմնավորելու համար Քրիստոսը մեջբերում կատարեց սուրբգրությունից (Ես. 56:7 և Եր. 7:11): Եկեղեցում յուրաքանչյուր բարեփոխություն պետք է հիմնված լինի Աստծո Խոսքի վրա:

Դ. Ամենօրյա ուսուցում տաճարում (19:47-48)

Հիսուսն **ամեն օր տաճարում սովորեցնում էր** ոչ թե ներսում, այլ բակում, որտեղ մարդկանց թույլատրում էին ներկա լինել: Կրոնական ղեկավարներն առիթ էին փնտրում, որ **սպանեին Նրան**, սակայն հասարակ **ժողովուրդը** դեռ գերված էր հրաշագործ Նազովրեցիով: Նրա ժամը դեռ չէր հասել: Բայց շուտով կգա ժամը, և այն ժամանակ **գլխավոր քահանաները, դպիրները** և փարիսեցիները կմոտենան սպանություն գործելուն:

Երկուշաբթի էր: Հաջորդ օրը՝ երեքշաբթի, Նրա հանրային ուսուցման վերջին օրն էր, որը նկարագրված է 20:1 - 22:6-ում:

Ե. Մարդու Որդու իշխանության մասին հարցը (20:1-8)

20:1-2. Ինչպիսի՞ պատկեր: Մեծ Ուսուցիչը անխոնջ հոչակում է Բարի Լուրը **տաճարի** սովերում, իսկ Բարայելի առաջնորդները համարձակորեն կասկածի են ենթարկում Իր սովորեցնելու իրավունքը:

Նրանց համար Տեր Հիսուսը մի հասարակ հյուսն էր Նազարեթից: Նա չունեի այն պահանջված կրթությունը, որ տրվում էր ուսումնական հաստատությունում, վավերացվում եկեղեցական իշխանությունների կողմից: Նա ինչպիսի՞ վկայագրեր ուներ: **Ո՞վ էր սովել** Նրան սովորեցնելու, ուրիշներին քարոզելու և տաճարը մաքրելու **այդ իշխանությունը**: Նրանք ուզում էին իմանալ:

20:3-8. Հիսուսը հարցին հարցով **պատասխանեց**, և եթե նրանք դրան ճիշտ պատասխանեին, ապա կստանային իրենց հարցի պատասխանը: Արդյոք **Հովհաննեսի մկրտությունը** երկնքի՞ց էր, թե՞ մարդկանցից: Նրանք բռնվեցին: Եթե ընդունեին, որ Հովհաննեսը Աստծուց օժված էր քարոզելու համար, ապա ինչո՞ւ չստեղծեին նրա խոսքերը, չապաշխարեցին և չընդունեցին Մեսիային, Ում մասին նա հոչակեց: Իսկ եթե ասեն, որ Հովհաննեսն ընդամենը հերթական արհեստավարժ քարոզիչներից մեկն էր, ապա կգրգռեին մասսաների զայրույթը, որոնք **Հովհաննեսին՝** որպես Աստծո **մարգարեի էին** ընդունում: Ուստի պատասխանեցին, **որ չգիտեն, թե որտեղից է Հովհաննեսը ստացել իր իշխանությունը**: Հիսուսն էլ պատասխանեց. *«Այդ դեպքում Ես էլ ձեզ չեմ ասի, թե ինչ իշխանությամբ եմ սովորեցնում»*: Եթե նրանք չկարողացան ոչ մի բան ասել Հովհաննեսի մասին, ապա ինչո՞ւ կասկածի տակ դրեցին Նրա իշխանությունը, Ով ավելի մեծ էր, քան Հովհաննեսը: Այս հատվածը ցույց է տալիս, որ Աստծո Խոսքի քարոզչության գլխավոր մասը Սուրբ Հոգով լցված լինելու մեջ է: Այս պարզևն ունեցողը հաղթում է նրանց, որոնց իշխանությունը կոչումների, գիտական աստիճանների և մարդկային պատիվների մեջ է:

Որտեղի՞ց է Քո վկայականը: Ո՞վ է Քեզ ձեռնադրել: Այս տարօրինակ հարցերը, որոնց հիմքում հավանաբար ընկած է նախանձը, դեռևս չէին մոռացվել: Ավետարանի հաջողակ քարոզչի որակավորումը կամ ձեռնադրության իսկությունը, ով չի սովորել ինչ-որ հայտնի համալսարանի աստ-

վածաբանական ֆակուլտետում կամ ինչ-որ այլ տեղ, դրվում է կասկածի տակ:

2. Այգու չար մշակների մասին առակը (20:9-18)

20:9-12. Աստծո սրտի հարատև քաղձանքն Իսրայել ժողովրդի հանդեպ կրկին ավանդվում է **այգու** մասին **առակով**: Աստված է այն **մի մարդը**, ով իր **այգին** (Իսրայելը) **հանձնեց մշակներին** (ժողովրդի պետերը, տե՛ս Ես. 5:1-7): Նա **մշակների** մոտ ուղարկեց իր ծառաներին, որպեսզի **այգու բերքից** Իրեն **տան**: Այդ ծառաներն Աստծո մարգարեներն էին, ինչպես Եսային ու Հովհաննես Մկրտիչը, որոնք Իսրայելին կոչ արեցին ապաշխարել և հավատալ: Բայց Իսրայելի կառավարիչներն անընդհատ հալածեցին մարգարեներին:

20:13. Վերջապես, Աստված ուղարկեց Իր **սիրելի Որդուն**՝ հույս ունենալով, որ **կամայեն** Իրենից (չնայած Աստված, իհարկե, գիտեր, որ Քրիստոսը մերժվելու է): Ուշադրություն դարձրեք, որ Քրիստոսն Ինքն իրեն առանձնացնում է մնացածներից: Նրանք ծառաներ էին, Նա՝ Որդին:

20:14. Իրենց անցյալին հավատարիմ **մշակները** որոշեցին ազատվել **ժառանգից**: Որպես ժողովրդի ղեկավարներ ու ուսուցիչներ՝ նրանք ուզում էին տիրել այն բացառիկ իրավունքներին, «որ **ժառանգությունը մերը լինի**»: Նրանք ոչ մի ձևով չէին ուզում Հիսուսին զիջել իրենց կրոնական պաշտոնները: Նրանք կարծում էին՝ եթե Նրան սպանեն, այլևս ոչինչ չի սպառնա իրենց՝ իշխելու Իսրայելի վրա:

20:15-17. Եվ **այգուց դուրս հանելով նրան սպանեցին**: Այստեղ Հիսուսն Իր հրեա ունկնդիրներին հարցրեց, թե **այգու տերն ի՞նչ կանի** այդ չար **մշակների** հետ: Մատթեոսի Ավետարանում գլխավոր քահանաներն ու ավագներն իրենք իրենց դատապարտեցին՝ պատասխանելով, որ նա նրանց կապանի (Մատթ. 21:41): Այստեղ Հիսուսն Ինքը պատասխանեց. «**Կգա և այն մշակներին կսպանի ու այգին ուրիշներին կտա**»: Սա նշանակում էր, որ Քրիստոսին մերժող հրեաները կործանվելու են,

իսկ Աստված արտոնյալ տեղը տալու է **ուրիշներին**: «Ուրիշներին» կարող է վերաբերել հեթանոսներին կամ վերջին օրերի վերածնված Իսրայելին: Հրեաները ցնցվեցին նման խոսքեր լսելուց: «**Քավ լիցի**», - ասացին նրանք: Տերը հաստատեց այս կանխասացումը՝ մեջբերելով Մադնոս 118:22-ը: Հրեական շինարարները՝ **շինողները, անարգեցին** Քրիստոսին՝ **Քարին**: Նրանց ծրագրերում Նրա համար տեղ չգտնվեց: Սակայն Աստված որոշեց, որ Նա բոլորից բարձր է լինելու, և Նրան **անկյունաքար** դարձրեց, Քար, որը պարտադիր է և որին մեծ պատիվ է տրված:

20:18. Այս համարում մատնանշված են Քրիստոսի երկու գալուստները:⁵⁵ Նրա առաջին գալուստը պատկերված է երկրի վրա ընկած **քարով**: Մարդիկ այլաբանեցին Նրա նվաստացումից ու խոնարհությունից և **կոտրվեցին** մասերի, քանի որ անարգեցին Նրան: Այս համարի երկրորդ մասում քարը պատկերվում է որպես երկնքից ընկնող ու անհավատներին **փշրող**, գետնին հավասարեցնող:

Է. Ինչ տալ կայսրին, իսկ ինչ՝ Աստծուն (20:19-26)

20:19-20. Գլխավոր քահանաներն ու **դպիրները** հասկացան, որ Հիսուսն **այդ առակն իրենց մասին ասաց**, դրա համար էլ սկսեցին Նրան բռնելու ավելի շատ հնարավորություններ փնտրել: Նրանք **լռատեսներ ուղարկեցին**, որպեսզի Հիսուսին հրահրեն այնպիսի խոսքերի, որոնց համար կարելի էր Նրան ձերբակալել ու հանձնել հռոմեական **կուսակալի** դատաստանին: Այս խորամանկ մարդիկ սկզբում գովեցին Նրան Աստծո հանդեպ ունեցած անփոփոխ հավատարմության և մարդկանցից չվախենալու համար՝ հույս ունենալով, որ Նա կայսրի հանդեպ ինչ-որ հակառակ բան կասի:

20:21-22. Հարցրին Նրան և ասացին, արդյոք ճիշտ է, որ հրեաները **կայսրին հարկ տան**: Եթե Հիսուսը բացասական պատասխաներ, Նրան կմեղադրեին դավանանության մեջ ու դատաստանի համար

կիանձնեին հռոմեացիների ձեռքը: Եթե Նա դրական պատասխաներ, ապա այդպիսի հայացքների համար Նրանից կշրջվեին հերոսականության երկրպագողները և հրեաների հիմնական գանգվածը:

20:23-24. Հիսուսը հասկացավ, որ Իր դեմ դավադրություն է կազմակերպված: Նա խնդրեց, որ Իրեն մեկ **դահեկան** ցույց տան. հնարավոր է, որ Նա սեփականը չուներ: Այն փաստը, որ նրանք ունեին և օգտագործում էին այդ մետաղադրամները, ցույց էր տալիս հեթանոս կառավարությունից նրանց կախյալ վիճակը: «**Ո՛ւմ պատկերն ու գրությունն է սրա վրա**», - հարցրեց Հիսուսը: Նրանք էլ պատասխանեցին՝ «**Կայսրի**»:

20:25-26. Այդ ժամանակ Հիսուսը նրանց լռեցրեց՝ պատվիրելով. «**Ուրեմն կայսրինը կայսրին տվեք, Աստծունը՝ Աստծուն**»: Թվում է, թե նրանք շատ էին հետաքրքրված կայսրի շահերով, բայց հեռու էին Աստծո մասին խորհելուց: «Իրանը կայսրին է պատկանում, իսկ դուք՝ Աստծուն: Թող աշխարհը տիրի իր մետաղադրամներին, իսկ Աստված՝ Իր ստեղծագործությանը»: Այնքան հեշտ է փնտվել, մեղք գտնել փոքր գործերում, միևնույն ժամանակ այք փակել կյանքում գլխավորի վրա: Եվ այսպիսով հեշտ է մեզ նման մարդկանց պարտքերը տալ ու միևնույն ժամանակ Աստծուն կողոպտել այն բաներում, ինչ-որ օրենքով Իրեն է պատկանում:

Ը. Սաղուկեցիները և հարության մասին նրանց գլուխկոտրուկը (20:27-44)

20:27. Քանի որ քաղաքական հարցով Հիսուսին բռնելու փորձը ձախողվեց, **մի քանի սաղուկեցիներ եկան** Նրա մոտ աստվածաբանական գլուխկոտրուկով: Նրանք ամբողջությամբ ժխտում էին մեռելների հարության հնարավորությունը, դրա համար էլ ծայրահեղ օրինակի միջոցով ջանում էին **հարության** մասին ուսմունքը ծիծաղելի դարձնել:

20:28-33. Նրանք Հիսուսին հիշեցրին, որ ըստ **Մովսեսի** օրենքի՝ ամուսին պետք է ամուսնանալ իր եղբոր այրու հետ՝ սերըն-

դի շարունակության և ընտանեկան ունեցվածքը պահպանելու համար (2 Օր. 25:5): Ըստ իրենց պատմության՝ մի կին հերթականությամբ ամուսնանում է **յոթ եղբայրների** հետ: Երբ մեռավ յոթերորդը, **կինն էլ մահացավ՝ առանց զավակ թողնելու**: «**Ուստի հարության ժամանակ, նրանցից որի՞ կինը կլինի**», - ահա թե ինչ էին ուզում իմանալ: Նրանք կարծում էին, որ շատ խելացի են՝ այդպիսի անլուծելի հարց ներկայացնելով:

20:34. **Հիսուսը պատասխանեց նրանց և ասաց**, որ ամուսնական փոխհարաբերությունները հաստատված են միայն այս կյանքի համար, և դրանք չեն շարունակվում Երկնքում: Նա չասաց, թե տղամարդիկ ու կանայք Երկնքում միմյանց չեն ճանաչի, այլ այնտեղ նրանց փոխհարաբերությունները լիովին ուրիշ հիմքով են կառուցվելու:

20:35. «**Արժանի կհամարվեն այն աշխարհին հասնելու**» արտահայտությունը չի ենթադրում, որ որևէ մարդ անձնապես արժանի է Երկնքին. մեղավորների միակ արժանավորությունը Տեր Հիսուս Քրիստոսի արժանիքն է: «Միայն նրանք կհամարվեն արժանավոր, ովքեր իրենց դատում են, ովքեր ընդունում են Քրիստոսին և ովքեր ընդունում են, որ բոլոր արժանիքները պատկանում են Նրան»:⁵⁶ «**Մեռելներից հարությանը**» բառակապակցությունը վերաբերում է միայն հավատացյալների հարությանը: Այն տառացիորեն նշանակում է «**Հարություն** նրանց միջավայրից (հունարեն «ek»), ովքեր **մեռած են**»: Համընդհանուր հարության մասին այն միտքը, թե բոլոր մեռածները՝ ինչպես փրկվածները, այնպես էլ չփրկվածները, միասին են հարություն առնելու, Աստվածաշնչում չի հանդիպում:

20:36. Այնուհետև նշվում է երկնային իրավիճակի գերազանցությունը: Այլևս մահ չկա, և այս հարաբերությամբ մարդիկ **նմանվելու են հրեշտակներին**: Նրանք նաև ճանաչվելու են որպես **Աստծո որդիներ**: Հավատացյալներն արդեն Աստծո որդիներ են, բայց արտաքինից դա չի երևում:

Երկնքում նրանք տեսանելիորեն *դրսևորվելու են* որպես Աստծո որդիներ: Մա է հաստատում այն փաստը, որ նրանք մասնակից դարձան առաջին հարությանը: «Բայց զիտենք, որ երբ Նա հայտնվի, Նրա նման պիտի լինենք, քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է» (1 Հովհ. 3:2): «Երբ Քրիստոսը, Որ մեր կյանքն է, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ փառքով պիտի հայտնվեք» (Կող. 3:4):

20:37-38. Հարությունը հիմնավորելու համար Հիսուսը հղում է կատարում Ել. 3:6-ից, որտեղ Մովսեսը **Տիրոջն անվանեց Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը:** Եթե սաղուկեցիները խորը մտածեին, կհասկանային, որ՝ 1. Աստված **մեռելների Աստվածը չէ,** 2. **Աբրահամը, Իսահակն ու Հակոբը** մեռած էին: Ուստի անհրաժեշտ հետևությունն այս է, որ Աստված պետք է նրանց հարություն տար մեռելներից: Տերը չասաց. «Ես Աբրահամի Աստվածն *էի...*»: Աստված՝ որպես ողջերի Աստված, Իր բնությամբ հարություն է պահանջում:

20:39-44. **Դպիրներից ոմանք** ստիպված էին ընդունել Նրա փաստարկների գորությունը: Սակայն Հիսուսը չավարտեց Իր ասելիքը, Նա կրկին անդրադարձավ Աստծո Խոսքին: Մղմ. 110:1-ում **Դավիթը** Մեսիային իր **Տերն** է անվանում: Բոլոր հրեաները համաձայնում էին, որ Մեսիան **Դավթի որդին** է լինելու: Նա ինչպե՞ս կարող է միաժամանակ լինել և՛ Դավթի **Տերը**, և՛ Դավթի **որդին**: Տեր Հիսուսն Ինքն այդ հարցի պատասխանն էր: Նա Դավթից էր սերում որպես Մարդու Որդի և միևնույն ժամանակ Նա Դավթի արարիչն էր: Սակայն նրանք չափազանց կույր էին, որպեսզի հասկանային դա:

Թ. Չգուշացում դպիրներից (20:45-47)

Մինչ ամբողջ ժողովուրդը լսում էր, Հիսուսը բոլորի ներկայությամբ նրանց գուշացրեց **դպիրների** մասին: Նրանք **փառավոր զգեստներով** են քայլում, որպեսզի բարեպաշտ երևան: Նրանք սիրում են բազմամարդ շուկայով անցնելիս իրենց

ուղղված հնչեղ տիտղոսներ լսել: Նրանք հնարամտությամբ **առաջին աթոռներն են** զբաղեցնում ժողովարաններում և խնջույքներում, սակայն անպաշտպան որբևայրիներից խլում էին իրենց ապրուստի միջոցները՝ իրենց արատները քողարկելով **երկար աղոթքներով:** Շատ ավելի խիստ պետք է պատժվի նման կեղծավորությունը:

Ժ. Որբևայրու երկու լուծան (21:1-4)

Երբ Հիսուսը դիտում էր տաճարի **գանձանակի մեջ նվերներ գցող հարուստների**, Նրան զարմացրեց **հարուստների** և **աղքատ որբևայրու** միջև հակադրությունը: Հարուստներն ինչ-որ բան էին տալիս, իսկ որբևայրին տվեց **ամբողջ ապրուստը:** Աստծո տեսանկյունից այս աղքատ որբևայրին ավելի **շատ** տվեց, քան **բոլորը** միասին վերցրած: Նրանք տալիս էին իրենց **ավելորդից**, իսկ կինը՝ **աղքատությունից:** Նրանք տալիս էին այն, ինչը նրանց համար քիչ կամ ոչինչ արժեր, իսկ **կինը իր ամբողջ ապրուստը գցեց:** «Ավելորդ ոսկին, որը տրվում է Աստծուն, քանի որ դրա կարիքը չկա, Նա գցում է անհատակ փոսի մեջ, իսկ արյամբ ոռոգված մետաղադրամը Նա բարձրացնում է և Իր շուրթերի հպումով վերածում հավիտենական ոսկու»:⁵⁷

Ի. Ապագա դեպքերի

հաջորդականությունը (21:5-11)

5-33-րդ համարներում մարգարեական մեծ պատգամ է շարադրված: Չնայած այն հիշեցնում է Մատթ. 24-25-րդ գլուխների Ձիթենյաց լեռան քարոզը, սակայն նույնը չէ: Մենք պետք է կրկին հիշեցնենք մեզ, որ Ավետարանների տարբերությունները խորիմաստ նշանակություններ ունեն:

Այս քարոզում հայտնաբերում ենք, որ Տերը խոսում է ինչպես Երուսաղեմի մ.թ. 70թ. քանդվելու, այնպես էլ Իր երկրորդ գալստյանը նախորդող իրադարձությունների մասին: Մա կրկնակի հղման օրենքի օրինակ է: Շուտով պետք է **մասամբ իրականանան** Տիտոսի կողմից պաշարման մասին կանխասացումները, սակայն դրանք պետք է ունենան իրենց հետագա և **ամ-**

բողջական իրականացումը Մեծ նեղության վերջում:

Այս քարոզի պլանը հետևյալ ձևով է երևում.

1. Հիսուսը կանխատում է Երուսաղեմի քանդվելը (հ. 5-6):
2. Աշակերտները հարցրին, թե երբ է դատեղի ունենալու (հ. 7):
3. Հիսուսը սկզբում տվեց Իր երկրորդ գալստյանը նախորդող իրադարձությունների ընդհանուր պատկերը (հ. 8-11):
4. Այնուհետև Նա նկարագրեց Երուսաղեմի անկումը և դրան հաջորդող ժամանակաշրջանը (հ. 12-24):
5. Եվ վերջապես Նա պատմեց Իր երկրորդ գալստյանը նախորդող նշանների մասին ու Իր հետևորդներին կոչ արեց ապրել՝ սպասելով Իր վերադարձին (հ. 25-26):

21:5-6. Երբ **ոմանք** հիացած էին Հերովդեսի կողմից կառուցված **տաճարի** շքեղությամբ, Հիսուսը նրանց զգուշացրեց, որպեսզի չտարվեն **նյութականով**, որը շուտով դադարելու է գոյություն ունենալուց: **Օրեր** են գալու, երբ տաճարն ամբողջությամբ քանդվելու է:

21:7. Աշակերտների համար հետաքրքիր էր այդ պահին իմանալ, թե **երբ** է դատեղի ունենալու և **ինչ** նշան կազդարարի այդ ժամանակաշրջանի մոտեցումը: Անկասկած, նրանց հարցը բացառապես վերաբերում էր Երուսաղեմի կործանմանը:

21:8-11. Սկզբում Փրկչի պատասխանը, թվում է, նրանց տարավ ժամանակների վերջավորությանը՝ աշխարհի վերջին, երբ տաճարը դարձյալ քանդվելու է մինչև Թագավորության հաստատվելը: Լինելու են կեղծ մեսիաններ, կեղծ լուրեր, **պատերազմներ** ու ասպտամբություններ: Ոչ միայն ազգամիջյան բախումներ են լինելու, այլև բնական մեծ աղետներ. **երկրաշարժեր, սովեր ու համաճարակներ և ահավոր երևույթներ ու մեծ նշաններ պիտի լինեն երկրնքից:**

Լ. Վախճանից առաջ Ժամանակաշրջանը (21:12-19)

21:12-15. Նախորդ համարներում Հիսուսը նկարագրեց իրադարձություններ, որոնք անմիջապես նախորդելու են դարաշրջանների վերջավորությանը: 12-րդ համարն սկսվում է «**այս բոլորից առաջ...**» արտահայտությամբ, այդ իսկ պատճառով կարծում ենք, որ 12-24-րդ համարներում նկարագրված է այն ժամանակահատվածը, որն ընկնում է քարոզը տալու և ապագայի Մեծ նեղության միջև: Հիսուսի աշակերտներին ձերբակալելու են, հետապնդելու են, տանելու են կրոնական ու քաղաքացիական դատարաններ ու գնդան են նետելու: Դա նրանց կարող է անհաջողություն կամ ողբերգություն թվալ, սակայն իրականում Տերը այդ բոլորը վերածելու է **վկայության՝** Իր փառքի համար: Նրանք չպետք է նախապես պատրաստեն իրենց պաշտպանականը: Ճգնաժամային պահին Աստված նրանց կտա յուրահատուկ **իմաստություն՝** ասելու այն, ինչ լրիվ լուծության կմատնի նրանց **հակառակորդներին:**

21:16-18. Նույնպես էլ դավաճանություններ են լինելու ընտանիքներում. չփրկված **ազգականները** մատնելու են քրիստոնյաներին, իսկ նրանցից **ոմանք** սպանվելու են Քրիստոսին հավատարիմ լինելու համար: Թվացյալ հակասություն կա 16-րդ համարի «**ձեզանից ոմանց պիտի սպանեն**» արտահայտության և 18-րդ համարի «**Բայց ձեր գլխից մի մազ անգամ չի պակասի**» խոսքերի միջև: Սա միայն մի բան կարող է նշանակել. չնայած ոմանք՝ որպես Քրիստոսի մարտիրոսներ, կմեռնեն, բայց հոգեվորապես նրանք ամբողջությամբ պահպանված են: Նրանք կմեռնեն, բայց չեն կորչի:

21:19. Այս համարը մատնացույց է անում այն, որ ով տոկունությամբ կրի այս բոլորը հանուն Քրիստոսի և Նրանից չհրաժարվի, դրանով կապացուցի իր հավատի ճշմարտացիությունը: Նրանք, ովքեր ճշմարտապես փրկված են, հավատարիմ կմնան բոլոր դժվարությունների ժամանակ:

Խ. Երուսաղեմի ավերումը (21:20-24)

Հստակ է, որ այստեղ Տերը անցնում է մ.թ. 70թ.-ին **Երուսաղեմի** ավերման թեմային: Այս իրադարձության սկիզբը ազդարարելու է հռոմեական **գորքերի** կողմից **Երուսաղեմի շրջապատումը**:

«Առաջին դարի (մ.թ. 70թ.) քրիստոնյաներին որոշակի նշան էր տրված, որ ցույց էր տալու, թե երբ է սկսվելու Երուսաղեմի ավերումը ու գեղեցիկ մարմարե տաճարի՝ երկրի վրայից ջնջվելը. «Եվ երբ տեսնեք Երուսաղեմը գորքերով շրջապատված, իմացե՛ք, որ նրա ավերումը մոտ է»: Սա անկասկած Երուսաղեմի ավերման նշանն էր, և այս նշանը տեսնելով՝ քրիստոնյաները պետք է փախչեին: Անհավատությունը կարող է առարկել, որ փախչելն անհնար է, երբ քաղաքի պարիսպները շրջապատված են գորքերով, բայց Աստծո Խոսքը երբեք չի սխալվում: Հռոմեական զորավարը մի կարճ ժամանակով իր գորքերը ետ քաշեց, դրանով փախչելու հնարավորություն տվեց հավատացյալ հրեաներին: Նրանք այդպես էլ վարվեցին, գնացին Պելա առևուճով մի տեղ, որտեղ և փրկվեցին»:⁵⁸

Կրկին քաղաք մտնելու ցանկացած փորձ ճակատագրական կլինի: Զաղաքը պետք է կրի Աստծո Որդուն մերժելու պատիժը: Վա՛յ **հղի ու ստնտու** մայրերին, որոնք այդ օրերին ավելի բարդ վիճակում են հայտնվելու. նրանց համար դժվար է լինելու փախչել Աստծո դատաստանից, որ գալու է Իսրայելի **երկրի** ու հրեա **ժողովրդի** վրա: Շատերը կսպանվեն, իսկ ողջ մնացածներին գերի կտանեն այլ երկրներ:

24-րդ համարի վերջին մասը հիանալի մարգարեություն է այն մասին, որ **Երուսաղեմ** հնագույն քաղաքը գտնվելու է հեթանոսների տիրապետության տակ իր անկումից **մինչև հեթանոսների ժամանակները լրանան**: Դա չի նշանակում, որ հրեաները չեն կարող ժամանակի կարճ հատվածներում կառավարել քաղաքը: Այստեղ ավելի հավանական է այն մասին ասվածը, որ քաղաքը միշտ ենթարկվելու է հեթանոսների կողմից ներխուժումների ու

ոսնձգությունների **մինչև հեթանոսների ժամանակները լրանան**:

ՆԿ-ն տարբերություն է դնում հեթանոսների հարստության, հեթանոսների ամբողջության և հեթանոսների ժամանակների միջև:

1. **Հարստություն հեթանոսներին** (Հն. 11:12). ցույց է տալիս այն արտոնյալ վիճակը, որը զբաղեցնում են հեթանոսները ներկա ժամանակում, քանի դեռ Աստված Իսրայելին ժամանակավորապես մի կողմ է թողել:
2. **Հեթանոսների ամբողջությունը** (Հն. 11:25). դա հափշտակության ժամանակն է, երբ հեթանոսներից բաղկացած Քրիստոսի հարսը հասնելու է իր ամբողջությանը և վերցվելու է երկինք, և երբ Աստված նորից վերադառնալու է Իսրայելի հետ ունեցած Իր հարաբերությանը:
3. **Հեթանոսների ժամանակները** (Ղուկ. 21:24). իրականում սկսվել են բարեկության գերությունից (մ.թ.ա. 521թ.) և կշարունակեն մինչև այն ժամանակը, երբ հեթանոս ժողովուրդները այլևս չեն կարողանա իրենց հսկողության տակ առնել Երուսաղեմ քաղաքը:

Փրկչի ասած խոսքերի պահից դարեր շարունակ Երուսաղեմը հիմնականում գրտնրվում է հեթանոս պետությունների տիրապետության տակ: Հուլիանոս Հավատուրաց կայսրը (մ.թ. 331-363թթ.) ձգտեց վարկարեկել քրիստոնեությունը և անփառունակ դարձնել Տիրոջ մարգարեությունը: Նա հրեաներին քաջալերեց վերականգնել տաճարը: Նրանք նախանձավորությամբ սկսեցին աշխատանքը՝ իրենց շոպյությամբ օգտագործելով արծաթե բահեր և աղբը տեղափոխելով ծիրանի վարագույրներով: Սակայն նրանց աշխատանքն ընդհատեցին երկրաշարժն ու երկրից դուրս եկող հրե գնդակները: Նրանք ստիպված թողեցին այդ ծրագիրը:⁵⁹

Ծ. Երկրորդ գալուստը (21:25-28)

Այս համարները նկարագրում են **աշխարհի վրայի** բնական ցնցումներն ու ա-

դետները, որոնք առաջանալու են նախքան Քրիստոսի 2-րդ գալուստը: **Արևի, լուսնի ու աստղերի** վրա երկրի վրայից տեսանելի նշաններ են լինելու: Երկնային մարմինները դուրս են գալու իրենց ուղեծրերից: Սա կարող է հանգեցնել Երկրի առանցքի շեղման: Մեծ մակերևացային ալիքները սրբելու են ցամաքի տարածքները: Մարդիկ խուճապահար են լինելու, որովհետև երկնային մարմինները շատ են մոտենալու երկրի ուղեծրին: Սակայն բարեպաշտ մարդկանց համար հույս կա.

«... Եվ այն ժամանակ նրանք պիտի տեսնեն Մարդու Որդուն ամպերով գալիս՝ գործյամբ ու մեծ փառքով: Երբ սկսեն այս բաները լինել, վեր նայեք ու բարձրացրե՛ք ձեր գլուխները, քանի որ ձեր ազատագրումը մոտ է»:

Կ. ԹՂԵՆԻՆ ՈՒ ԲՈՂՈՐ ԾԱՌԵՐԸ (21:29-33)

21:29-31. Եվս մի նշան, որը մատնանշում է Նրա վերադարձի մոտիկությունը՝ **բողբոջած թղենին ու բոլոր ծառերը: ԹՂԵՆԻ.** սա Իսրայել ժողովրդի պատկերն է: Այս վերջին օրերում նա վկայելու է նոր կյանքի մասին: Իհարկե, անիմաստ չէ այն, որ հարյուրամյակներ շարունակ սփռվելուց ու անհայտությունից հետո Իսրայել ժողովուրդը վերականգնվեց 1948 թվականին և հիմա ճանաչված, ընդունված անդամ է ժողովուրդների ընտանիքում:

Այն, որ նաև բողբոջելու են մյուս ծառերը, կարող է խորհրդանշել ազգայնականության աճն ու նոր պետությունների առաջացումը աշխարհի զարգացող երկրներում: Այս նշանները նշանակում են, որ շուտով հաստատվելու է Քրիստոսի փառավոր Թագավորությունը:

21:32. Հիտուն ասաց, որ **այս սերունդը պիտի չանցնի, մինչև այս բոլորը կատարվեն:** Բայց ի՞նչ է ուզում ասել Նա «այս սերունդը» արտահայտությամբ:

1. Ոմանք կարծում են, որ Տերը խոսեց այդ ժամանակ ապրող սերնդի մասին, և որ այս բոլորը տեղի ունեցավ Երուսաղեմի ավերման ժամանակ: Սակայն սա չի կարող այդպես լինել, քանի որ

Քրիստոսը չվերադարձավ ամպերով, գործյամբ ու մեծ փառքով:

2. Մյուսները կարծում են, որ «այս սերունդը» խոսքը վերաբերում է մարդկանց, ովքեր ապրելու են այն ժամանակ, երբ այս նշաններն սկսեն կատարվել, և որ այս նշանների կատարման սկիզբը տեսած մարդիկ նաև կտեսնեն Քրիստոսի վերադարձը: Բոլոր կանխասված իրադարձությունները տեղի կունենան մեկ սերնդի օրոք: Սա հնարավոր բացատրություն է:
3. Մեկնություններից մեկն էլ սա է. «այս սերունդը» խոսքը վերաբերում է Քրիստոսի հանդեպ թշնամաբար վերաբերվող հրեա ազգին: Տերն ասում է, որ չնայած հրեա ազգի սփռվելուն, այն չի ոչնչացվելու, այլ կգոյատևի և Քրիստոսի հանդեպ իր վերաբերմունքը դարեր շարունակ չի փոխվի: Հավանաբար ճիշտ են երկրորդ ու երրորդ տարբերակները:

21:33. Մթնոլորտային ու աստղային երկինքը **կանցնեն**, այդպես էլ Երկիրը՝ իր ներկա ձևով: Բայց Տիրոջ այս կանխասացումները չեն մնա առանց իրականանալու:

Հ. ԶԳՈՒՉԱԳՈՒՄ ԱՐԹՈՒՆ ԼԻՆԵԼՈՒ և ԱՂՈՐՅՔԻ ՄԱՍԻՆ (21:34-38)

21:34-35. Ի դեպ, Նրա աշակերտները պետք է զգույշ լինեն, որպեսզի չտարվեն ուտելիքով, խմիչքով և այս կյանքի **հոգսերով** այնքան, որ այդ օրը **անսպասելի** չհասնի նրանց: Հենց այդպես այդ օրը կգա **բոլոր ապրողների** համար, որոնք **Երկրի** մասին մտածում են որպես իրենց մշտական բնակության վայրի:

21:36. Ծշմարիտ աշակերտները պետք է **արթուն լինեն** ու միշտ **աղոթեն**, այսպիսով իրենց առանձնացնեն ամբարիշտ աշխարհից, որը դատապարտված է՝ ստանալու Աստծո բարկությունը, և նմանվեն բոլոր նրանց, ովքեր **կանգնելու են Մարդու Որդու առջև:**

21:37-38. Ամեն օր Տերը սովորեցնում էր **տաճարում, իսկ գիշերները գնում էր Ձիթենյաց լեռը՝ գիշերելու՝** նույնիսկ տուն

չունենալով Իր իսկ ստեղծած այս աշխարհում: **Եվ Նրան լսելու համար ամբողջ ժողովուրդը վաղ առավոտից** գալիս էր **Նրա մոտ**, որպեսզի կրկին **լսեր Նրան**:

XI. ՄԱՐԳՈՒ ՈՐԳՈՒ ՉԱՐՉԱՐԱՆՔՆ ՈՒ ՄԱՀՐ (22-23-րդ գլ.)

Ա. Դավ Հիսուսին սպանելու նպատակով (22:1-2)

22:1. Այստեղ **Քաղաքակերաց տոնը** վերաբերում է այն ժամանակահատվածին, որը սկսվում է **Չատկի** հետ ու շարունակվում յոթ օր, որի ընթացքում ոչ մի խմորյալ հաց չի կարելի օգտագործել: Չատիկը տոնվում էր հրեական տարվա առաջին ամսվա՝ Նիսանի 14-ին: Յոթ օրերը՝ 15-ից մինչև 21-ը, հայտնի էին որպես **Քաղաքակերաց տոն**, բայց 1-ին համարում այս անվանումով կոչված է ամբողջ տոնը: Եթե Ղուկասը գրեր հիմնականում հրեաների համար, նա կարիք չէր ունենա հիշատակելու **Քաղաքակերաց տոնի ու Չատկի** միջև եղած կապը:

22:2. **Գլխավոր քահանաներն ու դպիրները** անդադար դավադրություններ էին կազմակերպում՝ փնտրելով, թե **ինչպես սպանեն** Տեր Հիսուսին, սակայն նրանք հասկանում էին, որ դա այնպես պետք է կատարել, որպեսզի փոթորիկ չառաջացնի, որովհետև **վախենում էին ժողովրդից**: Նրանք գիտեին, որ շատերը մեծ հարգանքով էին վերաբերվում Հիսուսին:

Բ. Հուդայի դավանանությունը (22:3-6)

22:3. **Ապա սատանան մտավ Իսկարիովտացի կոչվող Հուդայի մեջ, որը տասներկու աշակերտներից մեկն էր:** Հովհաննեսի մոտ (13:27) ասված է, որ սա կատարվեց այն բանից հետո, երբ գատկական ընթրիքի ժամանակ Հիսուսը նրան հացից մի կտոր տվեց: Մենք այն եզրակացության ենք գալիս, որ սա կատարվել է կամ հաջորդական փուլերով, կամ էլ Ղուկասը ավելի շուտ նշում է փաստը, քան կատարվածի ճշգրիտ ժամանակը:

22:4-6. Ինչպես էլ որ եղած լինի, Հուդան

սակարկել էր **գլխավոր քահանաների ու պետերի**, այսինքն՝ հրեական տաճարի պահակախմբի հրամանատարների հետ: Նա Հիսուսին նրանց ձեռքը **մատնելու** մի մանրակրկիտ ծրագիր մշակեց, որի դեպքում ժողովրդի մեջ իրարանցում չէր առաջանա: Ծրագիրը լիովին ընդունելի էր, և **նրանք խոստացան դրամ տալ** նրան, ինչպես գիտենք, երեսուն արծաթյա դրամ: Այսպիսով, Հուդան գնաց, որպեսզի մշակի իր նենգ ծրագրի մանրամասները:

Գ. Չատկի պատրաստություն (22:7-13)

22:7. Այս համարներում հիշատակված դժվարություններ կան, որոնք կապված են ժամանակի տարբեր փուլերի հետ: **Քաղաքակերաց օրը** սովորաբար նույնացվում է Նիսան 13-ի հետ, երբ հրեաները պետք է իրենց տներից դուրս հանեին բոլոր խմորյալ հացը: Սակայն այստեղ ասվում է, որ դա այն օրն էր, որի ժամանակ **պետք է գատիկը մորթվեր**, որն էլ վերաբերում է արդեն Նիսանի 14-ին: Լեոն Մորրիսը, ինչպես նաև մյուս աստվածաշնչագետները, կարծում է, որ Չատկի ժամանակ երկու օրացույցներից էին օգտվում՝ պաշտոնական և դրանից, որին հետևում էին Հիսուսն ու մյուսները:⁶⁰ Մենք կարծում ենք, որ վերջին հինգշաբթի իրադարձությունները սկսվում են այստեղ և շարունակվում մինչև 53-րդ համարը ներառյալ:

22:8-10. Տերը **Պետրոսին ու Հովհաննեսին ուղարկեց** Երուսաղեմ՝ պատրաստվելու **գատկական** ընթրիքի տոնակատարությանը: Նրանց հրահանգներ տալով՝ Նացույց տվեց, որ լիակատար գիտությամբ տիրում է ամեն բանի վրա: **Քաղաք** մտնելիս **ջրի սափոր կրող մի մարդ** պետք է **հանդիպեր** նրանց: Արևելյան քաղաքում սա անսովոր երևույթ էր. սովորաբար սափորով ջուրը կանայք էին կրում: Այստեղ տղամարդը Սուրբ Հոգու հիանալի պատկերն է, Ով ծարավ հոգիներին առաջնորդում է այնտեղ, որտեղ նրանք հաղորդակցություն կունենան Տիրոջ հետ:

22:11-13. Տերը ոչ միայն նախապես իմացավ այդ մարդու գտնվելու վայրն ու շարժ-

ման ուղղությունը, այլև Նա գիտեր, որ ինչ-որ տանտեր ուզում էր Իրեն ու Իր **աշակերտներին** տրամադրել **հարդարված մի մեծ վերնատուն**: Հնարավոր է, որ այդ մարդը ճանաչում էր Տիրոջը և իրեն ու իր ունեցածն ամբողջությամբ նվիրել էր Նրան: Տարբերություն կա հյուրերի համար **օթեվանի** և **հարդարված մի մեծ վերնատան** միջև: Մեծահոգի տանտերը աշակերտների ակնկալածից շատ ավելի լավ տեղ էր պատրաստել: Երբ Հիսուսը ծնվեց Բերթեհեմում, Նրա համար հյուրանոցում սենյակ չգտնվեց (հունարեն՝ «*kataluma*»): Այստեղ Նա Իր աշակերտներին պատվիրեց **օթևան** խընդրել (հունարեն՝ «*kataluma*»), բայց նրանց ավելի լավը ներկայացվեց՝ **հարդարված մի մեծ վերնատուն**:

Ամեն բան կատարվեց այնպես, ինչպես Նա կանխասացել էր, և աշակերտները **Չատիկը պատրաստեցին**:

Գ. Վերջին Չատիկը (22:14-18)

22:14. Դարեր շարունակ հրեաները տոնում էին Չատիկը՝ նշելով անբիծ գառնուկի արյան միջոցով Եգիպտոսից ու մահից իրենց փառավոր ազատագրությունը: Որքան վառ կերպով այս բոլորը պետք է անցներ Փրկչի մտքով, երբ **Նա սեղան նստեց ու տասներկու առաքյալներն** էլ Իր հետ, որպեսզի վերջին անգամ նշի տոնը: Նա էր Չատիկի ճշմարիտ Գառնուկը, Ում արյունը շուտով պետք է հեղվեր բոլոր նրանց փրկության համար, ովքեր հավատալու էին Իրեն:

22:15-16. Հենց այս **Չատիկը** Նրա համար անկարագրելի նշանակություն ուներ, և Նա ջերմեռանդությամբ **ուզում էր** այն ճաշակել **Իր չարչարվելուց առաջ**: Նա այլևս չի ուտի գատիկից մինչև Իր Երկիր վերադառնալն ու փառավոր **թագավորության** հաստատվելը: «**Ցանկանալով ցանկացա**» արտահայտությունը խոսում է ջերմեռանդ զգացում և կրքոտ փափագ ունենալու մասին: Այս անկեղծ խոսքերը բոլոր ժամանակների հավատացյալներին ու ազգերին հրավիրում են՝ հաշվի առնելու, թե ինչպիսի նախանձախնդրությամբ է Հիսու-

սը փափագում բոլորիս հետ հաղորդակցվել Իր սեղանի շուրջը:

22:17-18. Երբ Նա **առավ** գինով լի **բաժակը**՝ գատկական ծեսի բաղկացուցիչ մասը, **գոհացավ** դրա համար ու փոխանցեց աշակերտներին՝ մեկ անգամ ևս հիշեցնելով, որ **որթի բերքից էլ չի խմի մինչև** Իր Հազարամյա Թագավորության գալը: Չատկական ընթրիքի նկարագրությունն ավարտվում է 18-րդ համարով:

Ե. Տերունական առաջին ընթրիքը (22:19-23)

22:19-20. Վերջին Չատիկից հետո անմիջապես հաջորդեց Տերունական ընթրիքը: Տեր Հիսուսն այս սուրբ հիշատակությունը հաստատեց նրա համար, որպեսզի Նրա հետևորդները դարեր շարունակ հիշեն Իր մահը: Նախևառաջ Նա նրանց տվեց **հացը**՝ Իր **մարմնի** խորհրդանիշը, որը շուտով պետք է տրվեր նրանց համար: Այնուհետև **բաժակը**՝ Նրա անգին **արյան** պերճախոս վկայությունը, որը հեղվելու էր Գողգոթայի խաչի վրա: Նա դրա մասին ասաց իբրև Իր **արյունով Նոր Ուխտի բաժակի** մասին, **որը թափվում է** նրանց **համար**, ովքեր պատկանում են Իրեն: Սա նշանակում է, որ **նոր ուխտը**, որ ի սկզբանե հաստատեց հրեա ժողովրդի հետ, Նա վավերացրեց Իր **արյունով**: Նոր ուխտի ամբողջական իրականացումը տեղի կունենա երկրի վրա մեր Տեր Հիսուս Զրիստոսի Թագավորության ժամանակ, սակայն մենք՝ որպես հավատացյալներ, մտնում ենք դրա օրհնության մեջ ներկա ժամանակում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ հացն ու գինին Նրա մարմնի և արյան **խորհրդանիշներն են**: Նրա մարմինը դեռ տրված չէր, Նրա արյունն էլ դեռ չէր հեղվել: Հետևաբար անհեթեթ կլինի ենթադրել, որ այդ խորհրդանիշերը հրաշալի կերպով վերածվել են իրականության: Հրեա ժողովրդին արգելված էր արյունը կերակրի մեջ օգտագործել, հետևաբար և աշակերտները գիտեին, որ Նա բառացի արյան մասին չսասց, այլ Իր արյան **խորհրդապատկերի**:

22:21. Այս համարից պարզ երևում է, որ Հուդան իսկապես ներկա էր վերջին ընթրիքին: Սակայն Հովհաննեսի Ավետարանում (13-րդ գլ.) նույնքան հստակ ասված է, որ մատնիչը սենյակից դուրս եկավ այն բանից հետո, երբ Հիսուսը Նրան տվեց արգանակի մեջ թաթախված հացի կտորը: Քանի որ սա կատարվել էր մինչ Տերունական ընթրիքի հաստատվելը, շատերը համարում են, որ Հուդան ներկա չի եղել այն պահին, երբ Հիսուսը բաշխել է հացն ու գինին:

22:22. Տեր Հիսուսի չարչարանքներն ու մահը **սահմանված էին**, սակայն Հուդան գիտակցաբար, իր կամքով մատնեց Նրան: Ահա թե ինչու Հիսուսն ասաց. «**Վա՛յ այն մարդուն, որի ձեռքով Նա պիտի մատնվի**»: Չնայած Հուդան Տասներկուսից մեկն էր, բայց նա ճշմարիտ հավատացյալ չէր:

22:23. Այստեղ ցուցադրված է իրենց անձերի հանդեպ աշակերտների որոշակի գարմանքն ու անվստահությունը: Նրանք չգիտեին, **թե իրենցից ո՞վ** կարող է մեղավոր լինել **այդ ստոր բանի** մեջ:

Չ. Ծառայության մեջ ճշմարիտ մեծությունը (22:24-30)

22:24-25. Այն փաստը, որ Տերունական ընթրիքից անմիջապես հետո աշակերտների մեջ վեճ ծագեց, **թե իրենցից ով պիտի մեծ համարվի**, մարդկային սրտերի դեմ լուրջ մեղադրանք է առաջադրում: Տեր Հիսուսը նրանց հիշեցրեց, որ Իր տիրակալության մեջ մեծությունը մարդկային գաղափարների ուղիղ հակառակն է: Հեթանոս **ազգերի** վրա իշխող թագավորներն ընդունված են որպես մեծ մարդիկ, փաստորեն նրանց **բարերարներ են կոչում**: Բայց այս բոլորը միայն խոսքերով է, գործնականում նրանք դաժան բռնակալներ են: Նրանք բարության անուն ունեն, բայց նրանց անձնական բնութագրերը դրան չեն համապատասխանում:

22:26. **Այդպես չպիտի** լինեն Փրկչի հետևորդները: Նա, ով պետք է մեծ լինի, պետք է լինի ինչպես **կրտսերը**: Իսկ նա, ով

պետք է առաջնորդ լինի, պետք է խոնարհվի, համեստությամբ ծառայի ուրիշներին: Այս անսովոր հաստատումներն արմատականորեն շրջեցին համընդհանուր ավանդական պատկերացումներն այն մասին, որ կրտսերը ցածր է ավագից, իսկ ղեկավարողն իր մեծությունն արտահայտում է իշխանությամբ:

22:27. Մարդկանց պատկերացմամբ խընջույթին հյուր լինելը նշանակում էր ավելի մեծ դիրք զբաղեցնել, քան կերակուր մատակարարելը: Սակայն Տեր Հիսուս Քրիստոսը եկավ, որպեսզի ծառայի մարդկանց, և բոլոր նրանք, ովքեր հետևում են Իրեն, պետք է նմանվեն Նրան:

22:28-30. Տերը շնորհալի կերպով գովեց աշակերտներին, քանի որ նրանք **Իր հետ էին փորձությունների ընթացքում**: Քիչ առաջ նրանք վիճում էին իրար հետ: Ծատ շուտով նրանք բոլորն էլ թողնելու էին Նրան ու փախչելու էին: Այնուամենայնիվ, Նա գիտեր, որ իրենց սրտերում նրանք սիրում են Իրեն ու Իր անվան համար հալածանքներ կրեցին: Երբ Հիսուսը վերադառնա Երկիր, որպեսզի նստի Դավթի գահին ու կառավարի, որպես վարձատրություն աշակերտները **նստելու են գահերի վրա՝ Իսրայելի տասներկու ցեղերին դատելու համար**: Նույնպես էլ ճշգրիտ է, որ ինչպես Հայրը Քրիստոսին թագավորություն խոստացավ, այնպես էլ Նա խոստացավ աշակերտներին, որ նրանք թագավորելու են Իր հետ վերականգնված Իսրայելի վրա:

Է. Հիսուսը կանխատու է Պետրոսի ուրացումը (22:31-34)

Այս համարներում նկարագրված է մարդկային անհավատարմության պատմության երեք մռայլ էջերից երրորդը: Առաջինը՝ Հուդայի դավաճանությունն էր, երկրորդը՝ աշակերտների եսասիրական փառասիրությունը: Իսկ այժմ մեր առջև Պետրոսի վախկոտությունն է:

22:31-32. «**Մի՞մո՛ն, Մի՞մո՛ն**» անվան կրրկությունը վկայում է տատանվող աշակերտի նկատմամբ Քրիստոսի սիրո ու սրտամոտ վերաբերմունքի մասին: **Ստատան**

ցանկացավ բոլոր աշակերտներին **ցորենի նման մաղել**: Հիսուսը դիմեց Պետրոսին՝ որպես աշակերտների ներկայացուցիչ: Նա **աղոթեց** Միմոնի **համար**, որպեսզի նրա **հավատը չպակասի**: «**Ես քեզ համար աղոթեցի**»։ ցնցող խոսքեր են: **Ղարծի գալուց** հետո Պետրոսը պետք է **հաստատեր** իր **եղբայրներին**: Այս դարձի գալը մասնանշում է ոչ թե փրկությունը, այլ, ավելի հավանական է, անկումից հետո վերականգնումը:

22:33-34. Պետրոսը անվայելույ ինքնավրստահությամբ պատրաստակամություն հայտնեց Հիսուսին ուղեկցել **և՛ բանտ գնալու, և՛ մեռնելու**: Սակայն նա ստիպված էր լսել, որ մինչ առավոտյան լույսը ամբողջությամբ բացվի, նա **երեք անգամ կուրանա՝** ասելով, **թե** նույնիսկ **չի ճանաչում** Տիրոջը:

Մարկոսը մեջբերում է Տիրոջ խոսքերը, որ մինչ արաղաղը երկու անգամ կանչելը Պետրոսը երեք անգամ կուրանա Նրան (14:30): Մատթ. 26:34-ում, Ղուկ. 22:34-ում և Հովհ. 13:38-ում Տերն ասաց, որ մինչ արաղաղի կանչելը Պետրոսը կուրանա Իրեն երեք անգամ: Խոստովանենք, որ դժվար է հաշտեցնել այս թվացյալ հակասությունները: Հավանաբար մի քանի արաղաղներ են կանչել. մեկը՝ գիշերը, մյուսը՝ լուսաբացին: Պետք է նաև նշել, որ Ավետարանները նվազագույնը Պետրոսի կողմից վեց տարբեր ուրացումներ են նշում: Նա Քրիստոսին ուրացավ՝

1. Երիտասարդ կնոջ առջև (Մատթ. 26:69-70, Մարկ. 14:66-68):
2. Եվս մի կնոջ առջև (Մատթ. 26:71-72):
3. Այնտեղ կանգնած ժողովրդի առջև (Մատթ. 26:73-74, Մարկ. 14:70-71):
4. Մի մարդու առջև (Ղուկ. 22:58):
5. Եվս մի մարդու առջև (Ղուկ. 22:59-60):
6. Քահանայապետի ծառայի առջև (Հովհ. 18:26-27): Սա հավանաբար ուրիշ մեկն էր, որովհետև ասաց. «Զէ՞ որ ես քեզ այն պարտեզում Նրա հետ տեսա» (հ. 26):

Ը. Հրաժեշտի նոր պատվերներ (22:35-38)

22:35. Իր ծառայության սկզբում Տերն աշակերտներին **ուղարկեց առանց քսակի, պարկի և կոշիկների՝** նվազագույն իրերով: Նրանց համար բավարար կլինեին միայն անհրաժեշտները: Այդպես էլ եղավ: Նրանք խոստովանեցին, որ **ոչ մի բանի** կարիք չեն ունեցել:

22:36. Այժմ Նա ստիպված է նրանց թողնել. նրանք պետք է ծառայության նոր փուլ մտնեն: Նրանք պետք է փորձառեն աղքատությունն ու սովը, ենթարկվեն վտանգների և հոգան իրենց ամենօրյա կարիքների մասին: Այժմ նրանք պետք է վերցնեն **քսակ և պարկ** կամ պահեստային մթերք, իսկ **սրի բացակայության** դեպքում պետք է **հանդերձը ծախեն ու սուր գնեն**: Ի՞նչ նկատի ունեն Փրկիչը, երբ աշակերտներին պատվիրում էր **սուր գնել**: Հստակ է այն, որ Նա մտադրություն չունեն, որ նրանք սուրն իբրև զենք օգտագործեին ուրիշների վրա հարձակվելու համար: Դա կիսախտեր հետևյալ հատվածներում բովանդակված Իր ուսմունքը.

«Իմ թագավորությունն այս աշխարհից չէ, եթե Իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, ապա Իմ ծառաները կկռվեին, որ Ես հրեաների ձեռքը չմատնվեմ...» (Հովհ. 18:36):

«Որովհետև բոլոր սուր վերցնողները սրով պիտի մեռնեն» (Մատթ. 26:52):

«...Միրեցե՛ք ձեր թշնամիներին» (Մատթ. 5:44):

«Եթե մեկը ապտակի աջ ծնոտիդ, մյուս ծնոտդ էլ դարձրու նրան» (Մատթ. 5:39, տե՛ս նաև 2 Կոր. 10:4):

Ուրեմն ի՞նչ նկատի ունեն Տերը՝ սրի մասին խոսելով:

1. Ոմանք կարծում են, որ Նա ասաց հոգևոր սրի մասին, որը Աստծո Խոսքն է (Եփ. 6:17): Սա հնարավոր է, բայց այդ դեպքում նաև պետք է գտնել դրամի քսակի, պահեստային ուտելիքի և հանդերձի պարկի հոգևոր խորհրդապատկերները:

2. Վիլյամսը, հղում կատարելով Հռ. 13:4-ին, որտեղ սուրը ցույց է տալիս դեկավարների իշխանությունը, ասում է, որ սուրը խորհրդանշում է կառավարության կողմից հաստատված պաշտպանությունը:
3. Լենգն ասում է, որ սուրն անհրաժեշտ է մարդուն թշնամիներից պաշտպանվելու, ոչ թե հարձակվելու համար: Մակայն Մատթ. 5:39-ը, թվում է, բացառում է սրի կիրառումը նույնիսկ պաշտպանական նպատակներով:
4. Ոմանք ենթադրում են, որ սուրն անհրաժեշտ էր միայն վայրի կենդանիներից պաշտպանվելու համար: Մա հնարավոր է:

22:37. Այս համարը բացատրում է, թե ինչու սրանից հետո աշակերտներին անհրաժեշտ է վերցնել դրամի քսակը, մթերքի պարկն ու սուրը: Մինչ այս պահը Տերը նրանց հետ էր, Նա ապահովում էր հանապազօրյա կարիքները: Շուտով, Ես. 53:12-ի մարգարեության համաձայն Նա մեկնելու էր նրանցից: Այն, ինչ Նրա մասին է, **գրքվածները կատարվելու մոտ են**, այսինքն՝ Նրա երկրավոր կյանքն ու ծառայությունը մոտենում էին ավարտին ու վերջանում՝ Նրան **անօրենների հետ դասելով**:

22:38. Աշակերտները բոլորովին սխալ հասկացան Տիրոջ խոսքերը: Նրանք վերցրին **երկու սուր՝** կարծելով, որ դա լիովին բավարար կլինի սպասվող որևէ դժվարության լուծման համար: Տեր Հիսուսը գրույցն ավարտեց **«բավական է»** խոսքով: Նրանք հավանաբար կարծում էին, որ սրերի օգնությամբ կարող են ետ շարտել Նրան սպանելու թշնամիների փորձերը: Որքան հեռու էին նրանց մտադրությունները Նրա մտքերից:

Թ. Տագնապ Գեթսեմանիում (22:39-46)

22:39. Գեթսեմանի պարտեզը գտնվում էր **Զիթենյաց լեռան** արևմտյան լանջին: Հիսուսը հաճախ էր գնում այնտեղ՝ աղոթելու, և **աշակերտները**, ներառյալ և մատնիչը, գիտեին այդ մասին:

22:40. Տերունական Ընթրիքի ավարտից

հետո Հիսուսն ու աշակերտները լքեցին վերնատունն ու գնացին պարտեզ: Երբ եկան այնտեղ, Հիսուսը նրանց կոչ արեց **աղոթել, որ փորձության չենթարկվեն**: Թերևս, մասնահատուկ **փորձությունը**, որ Նա նկատի ուներ, թշնամիների կողմից շրջապատվելու պահին, Աստծուն և Նրա Քրիստոսին լքելն էր:

22:41-42. Այնուհետև Հիսուսն աշակերտներին թողեց ու պարտեզի խորքն անցավ, որտեղ միայնակ **աղոթեց**: Իր աղոթքում Նա խնդրեց, որ **եթե** դա Հոր կամքով է, թող **այդ բաժակը** հեռանա Իրենից: **Բայց** Նա ուզում էր կատարել Աստծո կամքը, **ոչ թե՝** Իր: Մենք այսպես ենք հասկանում այս աղոթքի նշանակությունը. եթե մեղավորներին փրկելու մի այլ միջոց կա, բացի խաչի վրա Իմ բարձրանալուց, ապա այս պահին ցույց տուր այդ ճամփան: Երկինքը **լռություն** պահպանեց, քանի որ այլ ճանապարհ չկար:

Մենք չենք համարում, որ պարտեզում Քրիստոսի չարչարանքները Իր փրկագրվման գործի մի մասն են: Ազատագրումը կատարվեց խաչի վրա խավարի երեք ժամերի ընթացքում: Մակայն Գեթսեմանին եղավ Գողգոթայի նախագագացումը: Այստեղ, միայն մեր մեղքերի հետ շփման մասին միտքը պատճառ եղավ Տեր Հիսուսի ծանրագին տառապանքին:

22:43-44. Նրա կատարյալ մարդեղությունը հստակ երևում էր այն **սաստիկ տառապանքի** մեջ, որն ուղեկցվում էր Նրա ծանր աշխատանքի հետ: **Եվ երկնքից հրեշտակ հայտնվեց Նրան, որ զորացնում էր Նրան**: Միայն Դուկասն է այս մասին գրում, նաև այն մասին, որ **Նրա քրտինքը արյան մեծ կաթիլների** պես էր: Հոգատար բժշկի ուշադրությունից չի վրիպել այս վերջին մանրամասնությունը:

22:45-46. Երբ Հիսուսը եկավ **աշակերտների** մոտ, նրանք **քնած** էին ոչ թե անտարբերությունից, այլ, ավելի հավանական է, վշտահարությունից: Եվ կրկին Նա կոչ արեց նրանց **վեր կենալ ու աղոթել**, որովհետև մոտենում էր ճգնաժամային պահը, երբ փորձվելու էին իշխանություն-

ների առջև ուրանալ, հրաժարվել Իրենից:

Ժ. Հիսուսը մատնվում ու ձերբակալվում է (22:47-53)

22:47-48. Այդ ընթացքում եկավ Հուդան գլխավոր քահանաների, ավագների ու տանարի իշխանավորների խմբի հետ, որպեսզի բռնեն Տիրոջը: Նախնական պայմանավորվածության համաձայն, մատնիչը պետք է Հիսուսին մատնացույց աներ՝ Նրան համբուրելով: Ստյուարտը մեկնաբանում է.

«Դա մի ահավոր ծայրահեղ հայում էր, չարագործության այն սահմանը, որից այն կողմ չի կարող անցնել մարդկանց չարագործությունը, երբ այնտեղ՝ պարտեզում, Հուդան Իր Տիրոջը մատնեց ոչ թե գոչունով, ոչ թե հարվածով կամ դաշյունով, այլ՝ համբուրյով»:⁶¹

Խորը ցավով Հիսուսը հարցրեց. «Հուդա՛ր, համբուրո՞ւմ ես մատնում Մարդու Որդուն»:

22:49-51. Աշակերտները հասկացան, թե ինչ է պատահելու, և պատրաստվեցին հարձակման: Եվ իսկապես, նրանցից մեկը՝ հենց Պետրոսը, վերցրեց սուրն ու կրտրեց քահանայապետի ծառայի աջ ականջը: Հիսուսը նրան հանդիմանեց մարմնավոր միջոցները հոգևոր պայքարում օգտագործելու համար: Նրա ժամը հասել էր, և պետք է կատարվեին Աստծո կողմից նախասահմանված նպատակները: Իր գթասրբության համաձայն, Հիսուսը, դիպչելով գոհի ականջին, բժշկեց նրան:

22:52-53. Դառնալով հրեա առաջնորդներին ու երեցներին՝ Հիսուսը հարցրեց, թե ինչո՞ւ են նրանք Իր ետևից եկել, որպես թե մի փախչող ավագակի հետևից: Մի՞թե Նա ամեն օր տաճարում չէր սովորեցնում նրանց: Նրանք այն ժամանակ չփորձեցին Նրան բռնել: Բայց Նա գիտեր պատասխանը. հիմա նրանց ժամն էր և խավարի իշխանությունը: Մոռենում էր հինգշաբթիի կեսգիշերը:

Մեր Տիրոջ համար կրոնական դատը երեք փուլով անցավ: Սկզբում Նա կանգնեց Աննայի առջև: Այնուհետև Նա կանգնեց Կայիափայի առջև: Եվ վերջապես, Նրան

տարան սինեդրիոն: Այս պահից սկսած ու մինչև 65-րդ համարը՝ իրադարձությունները հավանաբար տեղի են ունեցել ուրբաթ գիշերվա ժամը մեկից մինչև ժամը հինգը:

Ի. Պետրոսը ուրանում է Հիսուսին ու դառը լացում (22:54-62)

22:54-57. Երբ Տիրոջը տարան քահանայապետի տուն, Պետրոսը հեռվից հետևվում էր Նրան: Գալով, նա տեղ զբաղեցրեց նրանց մեջ, ովքեր տաքանում էին զավթում վառվող կրակի շուրջը: Մի աղախին, տեսնելով նրան, բացականչեց, որ նա Հիսուսի հետևորդներից մեկն է: Փոթորկված Պետրոսը ուրացավ՝ ասելով, որ Նրան չի ճանաչում:

22:58-62. Քիչ ժամանակ անց ինչ-որ մեկը մատնացույց արեց Պետրոսին՝ մեղադրելով, որ նա Հիսուս Նագովրեցու հետևորդներից մեկն է: Եվ նորից Պետրոսը մերժեց այդ մեղադրանքը: Եվ մոտ մեկ ժամ հետո կրկին մեկ ուրիշը ճանաչեց, որ Պետրոսը զավիլիացի է, ինչպես նաև Հիսուսի աշակերտը: Պետրոսը ուրացավ՝ ասելով, որ չի իմանում, թե ինչի մասին է այդ մարդը խոսում: Մակայն այս անգամ նրա ուրացումը նշվեց աքաղաղի կանչով: Այդ մութ պահին Տերը դարձավ ու նայեց Պետրոսին, և Պետրոսը հիշեց այն նախապես ասվածները, որ դեռ աքաղաղը չկանչած՝ նա երեք անգամ կուրանա Հիսուսին: Աստծո Որդու հայացքը գիշերով դուրս ուղարկեց Պետրոսին, և նա դառնապես լացեց:

Լ. Չինվորները ծաղրում են Մարդու Որդուն (22:63-65)

Հիսուսին ձերբակալեցին պահակապետերը, ովքեր կոչված էին պահպանելու Երուսաղեմի սուրբ տաճարը: Այժմ Աստծո սուրբ տան այսպես կոչված պահապանները սկսեցին ծաղրել Հիսուսին ու ծեծել Նրան: Կապելով Նրա աչքերը՝ խփում էին երեսին ու հարցնում Նրան, թե ով էր խփողը: Մա դեռ ամենը չէր, որ նրանք արեցին, բայց Հիսուսը համբերատարությամբ կրեց Իր դեմ եղած մեղավորների ամբաստանությունները:

Խ. Առավոտյան դատավարությունը սինեդրիոնի առջև (22:66-71)

22:66-69. Երբ օրը սկսվեց (առավոտվա 5:00-6:00), **երեցները** Հիսուսին **տարան իրենց առաջինը**: Սինեդրիոնի անդամներն ուղղակի հարցրին Նրան, թե արդյոք Նա Մեսիա՞ն է: Ըստ էության, Հիսուսը պատասխանեց, որ նրանց հետ անօգուտ է այս հարցի քննարկումը: Նրանք բաց չէին ճշմարտությունն ընդունելու համար: Մակայն Նա զգուշացրեց նրանց, որ նվաստացած վիճակում իրենց առջև կանգնածը մի **օր պիտի նստի Աստծո գործության աջ կողմը** (տե՛ս Մդմ. 110:1):

22:70-71. **Ապա բոլորն** ուղղակի հարցրին Նրան, թե արդյոք Նա **Աստծո Որդի՞ն** է: Կասկած չկա, թե ինչ նկատի ունեին նրանք: Նրանց համար **Աստծո Որդին** հավասար էր Աստծուն: Տերը պատասխանեց. «**Ղուք ասում եք, թե Ես եմ**» (տե՛ս Մարկ. 14:62): Հենց սրան էլ ուզում էին նրանք հասնել: Աստծուն հավասար լինելու մասին հայտարարելիս մի՞թե Նրա շուրթերից հայհոյություն **չսեցին**: Ուրիշ էլ ի՞նչ **վկայություն էր** պետք: Մակայն այստեղ մի դժվարություն ծագեց: Ըստ իրենց Օրենքի՝ աստվածանարությունը մահով էր պատժվում: Բայց հրեաները հռոմեացիների իշխանության տակ էին և լիազորություններ չունեին բանտարկյալներին մահապատժի ենթարկելու: Նրանք ստիպված էին Հիսուսին տանել **Պիղատոսի մոտ**, ում շատ չէր հետաքրքրում կրոնական այդպիսի մեղադրանքը՝ որպես աստվածանարություն: Դրա համար էլ նրանք նախընտրեցին Նրա դեմ **քաղաքական** մեղադրանքներ առաջադրել:

Ծ. Հիսուսը Պիղատոսի առջև (23:1-7)

23:1-2. Առայնում գործը քննելուց հետո Հիսուսին շուտափույթ տարան (նրանց **ամբողջ բազմությունը**) քաղաքացիական դատարան՝ հռոմեական կառավարիչ **Պիղատոսի** մոտ: Այստեղ կրոնական առաջնորդները Նրա դեմ երեք քաղաքական մեղադրանք առաջադրեցին: Առաջին՝ **Նրան** մեղադրեցին **ազգը մոլորեցնելու**, այսինքն՝

Հռոմին հավատարիմ լինելուց շրջվելու մեջ: Երկրորդ՝ նրանք ասացին, որ Նա հրեաներին արգելել է **կայսրին հարկ տալ**: Եվ երրորդ՝ Նրան մեղադրեցին Իրեն **Թագավոր** հռչակելու համար:

23:3-7. Երբ **Պիղատոսը** Հիսուսին հարցրեց, թե Նա իսկապե՞ն **հրեաների թագավորն է**, Նա պատասխանեց հաստատակամորեն: **Պիղատոսը** Նրա հայտարարությունը չմեկնաբանեց որպես սպառնալիք հռոմեական կայսրին: Հիսուսի հետ առանձնազրույցից հետո (Հովհ. 18:33-38ա) նա դիմեց **գլխավոր քահանաներին** ու ժողովրդին հետևյալ խոսքերով. «**Ես ոչ մի հանցանք չեմ գտնում այս մարդու վրա**»: Ամբոխը ավելի համառ դարձավ՝ Հիսուսին մեղադրելով անհավատարմություն բորբոքելու մեջ՝ **սկսած** արհամարհված **Գալիլիայից** մինչև նույնիսկ Երուսաղեմ: **Պիղատոսը, Գալիլիայի անունը լսելով**, կարծեց, թե իր համար փախուստի ճանապարհ է գտել: Գալիլիան գտնվում էր **Հերովդեսի իշխանության** տակ, այդ իսկ պատճառով Պիղատոսը փորձեց խույս տալ այդ գործում իր հետագա մասնակցությունից ու Հիսուսին ուղարկեց **Հերովդեսի** մոտ: Հերովդեսն **այդ ժամանակ** նույնպես **Երուսաղեմում էր**:

Հերովդես Անտիպան բեթղեհեմյան մանուկներին կոտորող Հերովդես Մեծի որդին էր: Մա այն Անտիպան էր, ով սպանեց Հովհաննես Մկրտչին, որ իրեն մեղադրեց եղբոր կնոջ հետ ապօրինի կենակցության մեջ: Մա այն Հերովդեսն էր, ում Հիսուսն անվանեց «այդ աղվեսին» (Ղուկ. 13:32):

Կ. Հերովդեսի նվաստացուցիչ հարցաքննությունը (23:8-12)

23:8. Հերովդեսը շատ ուրախացավ, երբ իր առջև տեսավ **Հիսուսին**: Նա **շատ բաներ էր լսել Նրա մասին և վաղուց հույս ուներ Նրանից մի հրաշք տեսնել**:

23:9-11. Անկախ նրանից, թե Հերովդեսը որքան **հարցաքննեց** Փրկչին, նա պատասխան չստացավ: Հրեաներն ավելի էին ծանրացնում իրենց մեղադրանքները, սակայն Հիսուսն Իր բերանը չբացեց: Միակ բանը,

որ **Հերովդեսը** կարող էր անել, թույլատրելն էր, որ իր զինվորները նվաստացնեն Հիսուսին ու ծաղրի համար **մի փառավոր հանդերձ հագցնել տալով՝ ետ Պիղատոսի մոտ ուղարկեն Նրան:**

23:12. Նախկինում Պիղատոսն ու Հերովդեսը միմյանց դեմ թշնամություն ունեին, բայց սրանից հետո նրանց թշնամությունը բարեկամությամբ փոխարինվեց: Նրանք երկուսն էլ Տեր Հիսուսի **հակառակ** կողմում էին, և սա նրանց միավորեց: Թեոֆիլակտը ողբում է այս առիթով և ասում. «Քրիստոնյաները պետք է ամաչեն, որ այն ժամանակ, երբ սատանային հաջողվում է չար մարդկանց համոզել մի կողմ դնել իրենց թշնամությունը, որպեսզի չարիք հարուցեն, քրիստոնյաները չեն կարողանում նույնիսկ իրենց բարեկամությունը պահել, որպեսզի բարիք գործեն»:

Հ. Պիղատոսի դատավճիռը՝ անմեղ, բայց դատապարտված (23:13-25)

23:13-17. Քանի որ Պիղատոսն անարդարացի վարվեց թագավորական բանտարկյալի գործի քննության մեջ, հիմա նա անելանելի վիճակում հայտնվեց: Նա շուտափույթ կանչեց հրեական ղեկավարությանը ու բացատրեց, որ **ոչ Հերովդեսը, ոչ էլ ինքը** չկարողացան ապացույցներ գտնել Հիսուսի հանցավոր լինելու մեջ. «**Նա մահվան արժանի ոչինչ չի արել**»: Դրա համար էլ առաջարկեց պատժել Տիրոջը, իսկ հետո ազատ արձակել Նրան: Ստյուարտը գրում է.

«Այդ խղճուկ փոխգիշումը, իհարկե, լիովին անարդարացի ու անտրամաբանական էր: Դա ամբոխին հաճոյանալու և միաժամանակ Հիսուսի նկատմամբ իր պարտքը կատարելու փխրուն, վախից դրդված հոգու փորձն էր: Բայց այն ոչ մի բանի էլ պիտանի չեղավ, և զարմանալի չէ, որ զայրացած քահանաները ոչ մի կերպ չէին ուզում համաձայնել նման որոշման հետ»:⁶²

23:18-23. Գլխավոր քահանաներն ու իշխանավորները զայրացան: Նրանք պահանջեցին Հիսուսի մահապատիժն ու հայտնի

հանցագործ Բարաբբայի ազատությունը, **ով քաղաքում եղած խռովության ու մարդասպանության համար էր բանտարկված:** Եվ կրկին Պիղատոսը մի թույլ փորձ ձեռնարկեց՝ Տիրոջն արդարացնելու, սակայն ամբոխի արատավոր պահանջները խլացրին այն: Ինչ էլ որ նա ասաց, միևնույնն է, նրանք շարունակեցին համառությամբ **պահանջել** Աստծո Որդու մահը:

23:24-25. Թեև Պիղատոսը Հիսուսին անմեղ էր հայտարարել, այժմ Նրան դատապարտեց մահվան, որպեսզի հաճոյանա ժողովրդին: Միաժամանակ **ազատ արձակեց** Բարաբբային, ում համար նրանք խնդրում էին:

Չ. Մարդու Որդուն տանում են Գողգոթա (23:26-32)

23:26. Մոտավորապես ուրբաթ առավոտյան ժամը ինն էր: Դեպի խաչելության վայր տանող ճանապարհին զինվորները **Միմոն Կյուրենացի անունով մեկին** հրամայեցին **տանել խաչը:** Այս մարդու մասին շատ բան հայտնի չէ, միայն գիտենք, որ հետագայում նրա երկու որդիները հայտնի քրիստոնյաներ դարձան (Մարկ. 15:21):

23:27-30. Երբ Հիսուսին տանում էին, բազմաթիվ կարեկցող հետևորդներ ողբում էին Նրա վրա: Դիմելով ամբոխի **կանանց՝ Հիսուսը** նրանց անվանեց **«Երուսաղեմի աղջիկներ»:** Նա ասաց, որ պետք չէ Իրեն խղճալ, այլ՝ իրենց: Նա նկատի ուներ այն սարսափելի ավերումը, որ գալու էր Երուսաղեմի վրա մ.թ. 70թ.-ին: Այդ օրերի չարչարանքն ու վիշտը այնքան մեծ էր լինելու, որ **ամուլ** կանանց, որոնց սովորաբար նախատում են, պետք է յուրահատուկ երջանիկներ համարեին: Տիտոսի պաշարման սարսափներն այնպիսին են լինելու, որ մարդիկ ցանկանալու են, որ իրենց վրա **ընկնեն լեռները** ու իրենց **ձածկեն բլուրները:**

23:31. Այնուհետև Տեր Հիսուսը հավելեց. **«Որովհետև, եթե կանաչ փայտին այսպես են անում, հապա չորին ի՞նչ պիտի անեն»:** Նա Ինքն էր **կանաչ** փայտը, իսկ անհավատ Իսրայելը՝ **չոր:** Եթե հռոմեացի-

ները նման նվաստացում ու չարչարանքներ տեղացրին անմեղ Աստծո Ռոդու վրա, ապա ինչպիսի՞ սոսկալի պատիժ է ընկնելու Աստծո սիրելի Ռոդու մահվան մեջ հանցավոր մարդասպանների վրա:

23:32. Հիսուսի հետ միասին մահապատժի վայր էին տանում նաև երկու չարագործների:

Ղ. Խաչելությունը (23:33-38)

23:33. Մահապատժի վայրը **Գագաթ էր կոչվում**⁶³ (Գողգոթա, Գանգ): Հավանաբար այդ բլրի տեսքը գանգ էր հիշեցնում, կամ միգուցե այն այդպես անվանվել էր, քանի որ մահվան վայր էր, իսկ գանգն էլ հաճախ որպես մահվան խորհրդանիշ է օգտագործվում: Արժանահիշատակ է խաչելության նկարագրության մասին սուրբգրության գալվածությունը: Հեղինակը չի հապաղում սոսկալի մանրամասների վրա: Ընդամենը մի պարզ արտահայտություն է. «...Այնտեղ խաչեցին Նրան»: Եվ դարձյալ Մտյուևարտի տեղին ասված խոսքերը.

«Այն, որ Մեկիան պետք է մահանար, բավական դժվար է մտքով ընկալելը, բայց այն, որ Նա պետք է մահանար այդպիսի մահով, ընդհանրապես անհասկանալի է: Այն ամենին, ինչին որ Քրիստոսը դիպել է, այդ թվում նաև խաչափայտին, Նա զարդարել, վերափոխել ու պատել է շքեղությամբ ու հմայքով: Բայց եկե՛ք երբեք չմոռանանք, թե ինչպիսի խորությունների միջից է Նա վեր խոյացրել խաչը»:⁶⁴

Ո՛հ, սովորեցրո՛ւ ինձ,
Թե ինչ նշանակություն ունի այն խաչը,
Ով կրում էր տառապալա Մեկին,
Ով դատապարտվեց արյունահեղության
Ու մահի:

Լյուսի Բեննեթ

Այդ օրը Գողգոթայում երեք խաչեր կային՝ Հիսուսի խաչը՝ մեջտեղում, իսկ Նրա աջ ու ձախ կողմերում՝ հանցագործների խաչերը: Այսպես իրականացավ Ես. 53:12-ը. «... Հանցավորների հետ հաշվվեց»:

23:34. Անսահման սիրով ու կարեկցությամբ Հիսուսն աղաղակեց խաչի վրայից.

«Հայր, ների՛ր դրանց, քանի որ չգիտեն, թե ինչ են անում»: Ինչպես իմանալ, թե այս աղոթքով աստվածային բարկության ինչպիսի Նիագարա կասեցվեց: Մորգանը Փրկչի սիրո մասին ասում է.

«Հիսուսի հոգում Իր հանդեպ վատ վարվողների նկատմամբ վիրավորվածություն, բարկություն կամ նրանց պատժելու թաքուն ցանկություն չկար: Մարդիկ հիացմունքով են խոսում երկաթյա բռունցքի մասին: Երբ լսում եմ Հիսուսի այս աղոթքը, ես գիտեմ, որ երկաթյա բռունցքի միակ վայրը դժոխքում է»:⁶⁵

Այնուհետև զինվորները, **վիճակ** գցելով, իրենց մեջ բաժանեցին **Նրա հանդերձները**:

23:35-38. Իշխանավորներն էլ, խաչի առջև կանգնած, ծաղրում էին Նրան ու մարտահրավեր նետում, որպեսզի Նա **Ինքն Իրեն էլ ազատի, եթե** իսկապես Քրիստոսն է՝ **Աստծո ընտրյալը: Չինվորներն էլ ծաղրում էին Նրան ու մոտենալով՝ քացախ մատուցում** և մարտահրավեր նետում Իրեն ազատելու կարողությանը: Նրա գլխավերևում մի գրվածք տեղադրեցին. «ՄԱ Է ՀՐԵԱՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԸ»:

Կրկին մեջբերենք Մտյուևարտի խոսքերը.

«Մենք չենք կարող այն փաստի նշանակության կողքով անցնել, որ գրվածքը երեք լեզուներով էր պատրաստված՝ հունարեն, լատիներեն և եբրայերեն: Դա, անկասկած, արված էր այն բանի համար, որ ամբոխում գտնվող յուրաքանչյուր մարդ կարողանա կարդալ, սակայն Քրիստոսի Եկեղեցին միշտ էլ դրանում հիմնավորված կերպով տեսել է Հիսուս Քրիստոսի տիեզերական տերության խորհրդանիշը: Քանի որ դրանք համաշխարհային երեք մեծ լեզուներն էին, ապա դրանցից յուրաքանչյուրը մի գերիշխող գաղափար էր մատուցում: Հունարենը մշակույթի ու գիտության լեզուն էր, և ինչպես գրվածքն էր ասում, Հիսուսն այդ բնագավառի Թագավորն էր: Լատիներենը օրենքի ու կառավարության լեզուն էր, և Հիսուսն այստեղ էլ էր Թագավոր: Եբրայերենը կրոնի հայտնության լեզուն էր, և Հիսուսը նրա Թագավորն

էր: Հետևաբար, նույնիսկ այն ժամանակ, երբ Նա գամվեց ու մահանում էր, ճշմարտապես «Նրա զլիխ վրա շատ թագեր կային» (Հայտ. 19:12):⁶⁶

Ճ. Երկու հանցագործները (23:39-43)

23:39-41. Ավետարանական մյուս պատմություններից գիտենք, որ երկու հանցագործներն էլ սկզբում նախատեսին Հիսուսին: Եթե Նա **Քրիստոսն է**, ապա ինչո՞ւ բոլորին չի **ազատում**: Բայց հետո նրանցից մեկի սրտում փոփոխություն տեղի ունեցավ: Դիմելով մյուսին՝ նա հանդիմանեց նրան անհարգալից վերաբերմունքի համար: Չէ՞ որ նրանք երկուսն էլ չարչարվում են իրենց կատարած հանցագործության համար: Իսկ մեջտեղի խաչի այդ Մարդը **ոչ մի վատ բան չի արել**:

23:42. Դառնալով **Հիսուսին՝** այդ չարագործը խնդրեց, որ **Տերը՝⁶⁷ հիշի** իրեն, **եթե** վերադառնա ու Երկրի վրա հաստատի Իր **թագավորությունը**: Սա հիանալի հավատ է: Մեռնող հանցագործը հավատաց, որ Հիսուսը մեռելներից հարություն է առնելու և ի վերջո թագավորելու է աշխարհի վրա:

23:43. **Հիսուսը** նրա հավատը պարզապես խոստմամբ, որ ճիշտ նույն օրը նրանք միասին **դրախտում կլինեն**: **Դրախտը** նույն երրորդ երկինքն է (2 Կոր. 12:2, 4) և Աստծո բնակության վայրը: **Այսօր.** ո՛հ, ինչպիսի՜ արագություն: **Ինձ հետ.** ինչպիսի՜ ընկերակցություն: **Դրախտում.** ինչպիսի՜ երջանկություն: Չառլզ Ա. Էրդմանը գրում է.

«Այս պատմությունը հետևյալ ճշմարտությունն է ցուցադրում. փրկությունը պայմանավորված է ապաշխարությամբ ու հավատով: Սակայն այն ուրիշ կարևոր ճշմարտություններ էլ է բովանդակում: Այն հայտարարում է, որ փրկությունը կախված չէ եկեղեցական խորհուրդներից: Հանցագործը երբեք չէր մկրտվել ու չէր մասնակցել Տերունական ընթրիքին... Ըստ էության, նա համարձակորեն դավանեց իր հավատը թշնամաբար տրամադրված ամբոխի ներկայությամբ, իշխանավորների ու զինվորների ծաղր ու ծանակի ներքո, ու փրկվեց առանց ինչ-

որ ծիսական սովորություններ կատարելու: Սա այն բանի կարևորագույն վկայությունն է, որ փրկությունը պայմանավորված չէ բարի գործերով... Նաև հստակ է այն, որ ոչ մի «հոգու նինջ» էլ չկա: Մարմինը կարող է քնել, բայց գիտակցությունը շարունակում է իր գոյությունը մահից հետո: Նույնպես ակնհայտ է դառնում, որ ոչ մի «քավարան» չկա: Մեղավոր ու ամոթալի կյանքից ապաշխարող հանցագործը այդ պահից անցավ երանության վիճակի մեջ: Եվ կրկին պետք է ուշադրություն դարձնենք այն բանին, որ փրկությունը համընդհանուր չէ: Երկու հանցագործներ կային, սակայն միայն մեկը փրկվեց: Եվ վերջինը՝ նկատենք, որ մահից հետո եկող ուրախության էությունը Քրիստոսի հետ անձնական հաղորդակցություն ունենալու մեջ է: Մեռնող հանցագործին տրված խոստման էությունը հետևյալն էր. «Ինձ հետ կլինես»: Սրանում է մեր երանելի երաշխիքը. Մեկնել նշանակում է Քրիստոսի հետ լինել, ինչը գերազանցում է ցանկացած բարիք»:⁶⁸

Հիսուս Քրիստոսի կողքից մեկը կարող է ճանապարհվել երկինք, իսկ մյուսը՝ դժոխք: Իհարկե ո՞ր կողմում ես գտնվում դու:

Մ. Երեքժամյա խավարը (23:44-49)

23:44. **Եվ մոտ վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը**, այսինքն՝ կեսօրից մինչև օրվա ժամը երեքը, խավարը պատեց ողջ երկրին: Սա նշան էր իսրայելացիների համար: Նրանք մերժեցին լույսը, և այժմ Աստված օրինավոր կերպով նրանց զրկեց տեսնելու հնարավորությունից:

23:45. **Ու տաճարի վարագույրը** վերևից ներքև **մեջտեղից պատռվեց**: Սա այն փաստն է խորհրդանշում, որ Տեր Հիսուս Քրիստոսի մահվան միջոցով Աստծուն մոտենալու ճանապարհ բացվեց բոլոր նրանց համար, ովքեր հավատով կգան դեպի Իրեն (Եբր. 10:20-22):

23:46-47. Հենց այս երեքժամյա խավարի ընթացքում Հիսուսը, փայտից կախված, Իր մարմնով կրեց մեր մեղքերի պատիժը: Այդ ժամանակահատվածի վերջում Նա Իր **հոգին** ավանդեց Հայր **Աստծո ձեռքերում** և

կամավոր տվեց Իր կյանքը: Հոմնեացի **հարյուրապետը** այնքան ցնցված էր այդ տեսարանից, որ **փառավորեց Աստծուն ու ասաց**. «**Իրապես այս Մարդն արդար էր**»:

23:48-49. Եվ բոլոր մարդիկ հաղթվեցին անելանելի վշտից ու ոչ բարի կանխագագուովից: Հիսուսի հավատարիմ հետևորդներից ոմանք, ինչպես նաև **Գալիլիայից եկած կանայք, որ գնում էին Նրա հետևից, հեռվից կանգնած դիտում էին** աշխարհի պատմության այս կարևորագույն տեսարանը:

Յ. Հուդարկավորությունը Հովսեփի գերեզմանում (23:50-56)

23:50-54. Մինչ այս պահը **Հովսեփը** Տեր Հիսուսի գաղտնի աշակերտն էր: Թեև սինեդրիոնի անդամ էր, բայց նա չէր համաձայնել Հիսուսի համար կայացրած վճռի հետ: Այժմ Հովսեփը համարձակորեն գնաց **Պիղատոսի մոտ ու խնդրեց**, որ իրեն վստահեն **Հիսուսի մարմինը** խաչից իջեցնելու և արժանավայել հուդարկավորելու պատիվը: Սա տեղի ունեցավ օրվա 3-րդ ու 6-րդ ժամերի միջև: Թույլտվությունը տրվեց, և Հովսեփը առանց հապաղման Նրան **փաթաթեց ազնիվ կտավով և դրեց ժայռավոր գերեզմանի մեջ**, որտեղ մինչ այդ ոչ ոք չէր դրվել: Սա տեղի ունեցավ ուրբաթ օրը՝ պատրաստության օրը: Երբ ասվում է, որ **լուսանում էր շաբաթը**, մենք պետք է հիշենք, որ հրեական շաբաթը սկսվում էր ուրբաթ օրը՝ արևի մայր մտնելու ժամանակ:

23:55-56. Հավատարիմ **կանայք, որ Գալիլիայից էին եկել**, տեսան, թե ինչպես Հովսեփը Նրա **մարմինը** տարավ հուդարկավորության վայր ու ինչպես Նրան դրեց գերեզմանում: Այնուհետև նրանք **խունկեր ու յուղեր պատրաստեցին**, որպեսզի վերադառնան ու անուշահոտությամբ օծեն Նրա մարմինը, Ում նրանք սիրում էին: Տեր Հիսուսի մարմինը թաղելով՝ Հովսեփը ինչ-որ առումով նաև հուդարկավորեց ինքնիրեն: Այս գործողությամբ նա հավետ իրեն առանձնացրեց այն ազգից, որը խա-

չեց կյանքի ու փառաց Տիրոջը: Նա այլևս երբեք մասնակից չի լինի հուդայականությանը, բայց կապրի բարոյապես նրանից հեռացած ու կվկայի նրանց դեմ:

Կանայք շաբաթ օրը, հնազանդելով շաբաթի մասին պատվիրանին, հանգստացան:

XII. ՄԱՐԳՈՒ ՈՐԳՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԸ (24-րդ գլ.)

Ա. Կանայք դատարկ գերեզմանի մոտ (24:1-12)

24:1. Այնուհետև կիրակի օրը՝ **վաղ առավոտյան**, նրանք եկան **գերեզմանի բերելով այն խնկերը, որ պատրաստել էին** Հիսուսի մարմնի համար: Բայց ինչպես կարող էին մոտենալ Նրա մարմնին: Մի՞թե չգիտեին, որ գերեզմանի մուտքը մեծ քարով է փակված: Մեզ սրա պատասխանը տրված չէ: Մենք միայն գիտենք, որ նրանք թանկագին սիրով էին Նրան սիրում, իսկ սերը հաճախ է մոռանում սիրո առարկային տանող ճանապարհի դժվարությունների մասին: Մերը նրանց վաղ առավոտից ոտքի էր հանել (հ. 1), և առատորեն պարզատրվեց (հ. 6): Ու մինչ օրս հարուցյալ Տերը վաղ վեր կացողների համար է (Առ. 8:17):

24:2-10. Երբ հասան գերեզման, **նրանք քարը գերեզմանից հեռու գլորված տեսան: Եվ ներս մտան**, սակայն **Տեր Հիսուսի մարմինը չգտան**: Դժվար չէ պատկերացնել նրանց շփոթությունը: Մինչ նրանք բացատրություն էին փնտրում եղածի համար, նրանց առջև **երկու** հրեշտակներ հայտնվեցին (տե՛ս Հովհ. 20:12) **փայլուն հագուստով** և նրանց վստահեցրին, որ Հիսուսը **կենդանի է**, ուստի իզուր է Նրան գերեզմանում փնտրելը: Նա **հարություն է առել**, ինչպես և խոստացել էր նրանց, **երբ դեռ Գալիլիայում էր**: Մի՞թե Նա նախապես չէր ասել, որ **պետք է Մարդու Որդին մեղավոր մարդկանց ձեռքը մատնվի, խաչվի և երրորդ օրը հարություն առնի** (Ղուկ. 9:22, 18:33): Այն ժամանակ նրանք հիշեցին այդ բոլորը: Նրանք շտապ **վերադարձան** քաղաք և այս բոլորը

պատմեցին տասնմեկ աշակերտներին: Հարության առաջին մունետիկների թվում էին **Մարիամ Մագդաղենացին, Հովհաննան և Հակոբոսի մայր Մարիամը:**

24:11-12. Աշակերտները **չհավատացին** նրանց խոսքերին: Դա մի հորինվածք է: Անհավանական է: Այսպես էին կարծում նրանք, մինչև որ **Պետրոսը** անձամբ չվազեց **գերեզման, ուր տեսավ միայն առանձին դրված կտավները:** Այդ գործվածքով էր մարմինն ամուր փայթաթվել: Մեզ ասված չէ, թե արդյոք նրանք քանդվա՞ծ էին, թե՛ պահպանում էին մարմնի ձևը, բայց վստահորեն կարող ենք հաստատել վերջինը: Տերը հավանաբար կարող էր բոժոժի պես լքել թաղման կտավները՝ թողնելով դրանք: Այն փաստը, որ թաղման կտավները մնացել էին, ապացուցում էր, որ մարմինը գողացված չէր. գողերը դրանք ետ փայթաթելու ժամանակ չէին ունենա: Պետրոսը վերադարձավ իր տուն՝ փորձելով գտնել այդ առեղծվածի լուծումը: Ի՞նչ էր նշանակում այս բոլորը:

Բ. Էմմաուսի ճանապարհին (24:13-35)

24:13. Էմմաուս գնացող **երկու** աշակերտներից մեկին Կղեոպաս էին անվանում: Մենք չգիտենք, թե ով էր երկրորդը: Դա կարող էր լինել նրա կինը: Կամ ինչպես ավանդություններից մեկն է հայտնում, դա հենց Ղուկասն էր: Մենք միայն կարող ենք վստահորեն ասել, որ նա առաջին տասնմեկ աշակերտներից մեկը չէր (տե՛ս հ. 33): Ամեն դեպքում, **Երուսաղեմից Էմմաուս** տասներկու կիլոմետր երկարությամբ ձգվող ճանապարհին երկուսն էլ տխուր⁶⁹ խորհրդածում էին Տիրոջ մահվան ու թաղման մասին:

24:14-18. Երբ նրանք գնում էին, նրանց մի անձանոթ միացավ: Նա հարուցյալ Տերն էր, բայց **նրանք չճանաչեցին Նրան:** Նա հարցրեց, թե ինչի մասին էին խոսում: Սկզբում նրանք, ի նշան մեծ վշտի, կարճատև դադար առան: Այնուհետև **Կղեոպասն** իր զարմանքն արտահայտեց, որ նրան՝ իբրև **Երուսաղեմ** այցելողներից մեկի, հայտնի չէ՝ **ինչ բաներ եղան այնտեղ:**

24:19-24. Հիսուսը գրույցն առաջ տարավ՝ հարցնելով. «Ի՞նչ է տեղի ունեցել»: Իրենց պատասխանի մեջ նրանք սկզբում արժանին մատուցեցին **Հիսուսին**, իսկ հետո պատմեցին Նրան դատապարտելու և խաչելու մասին: Նրանք խոսեցին իրենց կորած հույսերի մասին, իսկ հետո այն լուրի, թե **Նրա մարմինը** գերեզմանում չէր: Ավելին՝ **հրեշտակները** վստահեցրել էին կանանց, որ **Նա կենդանի է:**

24:25-27. Այն ժամանակ Հիսուսը սիրով կշտամբեց նրանց, որ չէին հասկացել, թե դա հենց այն ճանապարհն էր, որ ՀՎ-ի **մարգարեները** մարգարեացել էին Մեսիայի համար: Սկզբում Նա պետք է չարչարվեր, իսկ հետո փառավորվեր: Եվ սկսելով Ծննդոց գրքից ու շարունակելով մարգարեական բոլոր գրքերով՝ Տերը վերանայեց այն ասածները, **ինչ-որ Գրքերում գրված էր Իր մասին:** Սա աստվածաշնչյան զարմանահրաշ սերտողություն էր, և որքան մենք կփափագեինք այն ժամանակ նրա հետ լինել: Այնուամենայնիվ, մենք էլ նույն ՀՎ-ն ունենք և ունենք մեզ առաջնորդող Սուրբ Հոգին, որպեսզի նույնպես իմանանք այն բոլորը, **ինչ-որ Գրքերում գրված էր Իր մասին:**

24:28-29. Աշակերտները մոտենում էին իրենց տանը: Նրանք իրենց ուղեկցին հրավիրեցին իրենց մոտ՝ գիշերելու: Սկզբում Նա ձևացրեց, թե ուզում է շարունակել ճանապարհը. Նա չշտապեց ներս մտնել: Բայց նրանք պնդեցին, որպեսզի իրենց մոտ մնա, ու ինչպիսի՛ առատությամբ եղավ նրանց վարձատրությունը:

24:30-31. Երբ նրանք ընթրելու նստեցին, Տերը տանտիրոջ տեղը զբաղեցրեց:

«Համեստ ճաշը խորհրդավոր դարձավ, իսկ տունը՝ Աստծո Տուն: Ահա թե ինչ է ամենուր կատարում Քրիստոսը, որտեղ որ գնում է: Նրան ընդունողները լավ կընդունվեն: Երկու հոգի իրենց տունը բացեցին Նրա համար, իսկ հիմա Նա բացում է նրանց աչքերը»:

*Սուրբգրության միավորում
ամենօրյա նշումներ*

Երբ Նա հացը կտրեց ու տվեց նրանց, նրանք անմիջապես **ճանաչեցին Նրան**: Գուցե Նրա ափերի մեջ գամերի տեղերը տեսան: Մենք միայն գիտենք, որ հրաշալիորեն նրանց **աչքերը բացվեցին**, և նրանք ճանաչեցին Նրան: Հենց որ սա կատարվեց, **Նա աներևույթացավ նրանց աչքերից**:

24:32. Իսկ հետո նրանք վերհիշեցին այդ օրվա ճանապարհորդությունը: Չարմանալի չէ, որ նրանց սիրտը վառվում էր, **երբ Նա ճանապարհին խոսում էր** նրանց **հետ և Գրքերն էր մեկնում**: Նրանց Ուսուցիչն ու Ուղեկիցը հարուցյալ Տեր Հիսուս Բրիստոսն էր:

24:33. Գիշերը Էմմաուսում մնալու փոխարեն նրանք արագ ետ գնացին **Երուսաղեմ**, ուր **գտան տասնմեկ առաքյալների** և նրանց հետ միասին հավաքված ուրիշների: «Տասնմեկն» այստեղ առանց Հուդայի աշակերտների սկզբնական խումբը մատնանշող ընդհանրացնող եզրույթ է: Իրականում տասնմեկից ոչ բոլորն էին ներկա, ինչպես իմանում ենք Հովհ. 20:24-ից. այս եզրույթը հավաքական իմաստով է օգտագործված:

24:34. Մինչ Էմմաուսի աշակերտները կարողացան կիսվել իրենց ուրախալի լուրով, Երուսաղեմի աշակերտները ցնծությամբ հռչակեցին նրանց, որ **Տերը** ճշմարտապես **հարություն է առել և երևացել Միմոն Պետրոսին**:

24:35. Այժմ հերթըր հասավ Էմմաուսից եկած երկուսին՝ ասելու. «Այո՛, մենք դա գիտենք, որովհետև Նա մեզ հետ քայլեց, մտավ մեր տուն և ճանաչեցրեց Իրեն **հաց կտրելու ժամանակ**»:

Գ. Հիսուսը հայտնվեց տասնմեկին (24:36-43)

24:36-41. Հարուցյալ Տեր Հիսուսի մարմինն իրական, **մարմնից ու ոսկրից** կազմված շոշափելի մարմին էր: Դա այն մարմինն էր, որին քիչ առաջ էին թաղել, սակայն այն իմաստով էր փոխվել, որ մահը այլևս նրա վրա իշխանություն չուներ: Իր փառավորված մարմնով Հիսուսը կարող

էր մտնել դռները փակ սենյակի մեջ (Հովհ. 20:19):

Եվ Նա ճիշտ դա արեց առաջին կիրակին՝ երեկոյան: Լսելով **«Խաղաղություն ձեզ»** Նրա խոսքերը՝ աշակերտները նայեցին ու տեսան Նրան: Նրանք վախեցան՝ կարծելով, թե ոգի են տեսնում: Միայն այն ժամանակ, երբ Նա ցույց տվեց նրանց **Իր ձեռքերի ու ոտքերի** չարչարանքի նշանները, նրանք սկսեցին հասկանալ: Նույնիսկ այն ժամանակ դա չափազանց լավ նշան էր, որպեսզի դրան հավատային:

24:42-43. Այն ժամանակ, որպեսզի նրանց ցույց տա, որ Ինքն իսկապես Հիսուսն է, Նա մի քիչ **խորոված ձուկ և մեղրախորիս կերավ**:

Դ. Բացված միտք (24:44-49)

24:44-47. Այս համարները կարող են լինել Փրկչի հարության ու համբարձման միջև ընկած ժամանակահատվածի ուսմունքի ընդհանրացումը: Նա բացատրեց, որ Իր հարությունն այն խոստումների իրականացումն է, որոնց մասին Նա **ասել էր**: Մի՞թե Նա նրանց չէր նախագուշացրել, **թե պետք է, որ կատարվեն** Նրա մասին եղած հինկտակարանյան բոլոր մարգարեությունները: **Մովսեսի օրենքը, Մարգարեները և Մաղմունները**. սրանք այն հիմնական մատերն են, որոնցից բաղկացած է ՀԿ-ն: Միասին վերցրած՝ դրանք նշանակում են ամբողջ ՀԿ-ն: Որո՞նք են Քրիստոսի մասին ՀԿ-ի գլխավոր մարգարեությունները: Նրանք մատնանշում էին, որ՝

1. Նա պետք է **չարչարվեր** (Մդմ. 22:1-21, Ես. 53:1-9):
2. Նա պետք է երրորդ օրը **մեռելներից հարություն առներ** (Մդմ. 16:10, Հովհ. 1:17, Ովս. 6:2):
3. Պետք է **Նրա անունով ապաշխարություն և մեղքերի թողություն քարոզվեր բոլոր ազգերի մեջ՝ Երուսաղեմից սկսած**:

Հիսուսը **նրանց միտքը բացեց, որ Գիրքը հասկանան**: Փաստորեն այս գլուխը լի է բացված բաներով՝ բացված **գերեզման**

(հ. 12), բացված **տուն** (հ. 29), բացված **աչքեր** (հ. 31), բացված **Գրքեր** (հ. 32), բացված **շրթունքներ** (հ. 35), բացված **միտք** (հ. 45) և բացված **երկինք** (հ. 51):

24:48-49. Աշակերտները հարության **վկաներն էին**: Այժմ նրանք պետք է գնային իբրև այս փառահեղ լուրի մունետիկներ: Բայց մինչ այդ նրանք պետք է սպասեին **Հոր խոստմանը**, այսինքն՝ Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգու գալուն: Այն ժամանակ նրանք աստվածային **գորությանը կօժտվեն**⁶ հարուցյալ Քրիստոսի մասին վկայելու համար: Սուրբ Հոգին խոստացված էր ՀՎ-ի այնպիսի տեղերում, ինչպիսին է Ես. 44:3, Եզ. 36:37, Հով. 2:28:

Ե. Մարդու Որդու համբարձումը (24:50-53)

24:50-51. Քրիստոսի համբարձումը տեղի ունեցավ Նրա հարությունից քառասուն օր հետո: Նա իր աշակերտներին տարավ **մինչև Բեթանիա**, որը գտնվում էր Ձիթենյաց լեռան արևելյան կողմում, և **ձեռքերը վեր բարձրացրեց ու օրհնեց նրանց**: Նրանց օրհնելով՝ **Նա երկինք բարձրացավ**:

24:52-53. Եվ նրանք **երկրպագեցին Նրան ու մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ**: Հաջորդ տասն օրերը ժամանակի մեծամասնությունը նրանք անցկացրին **տաճարի մեջ՝ փառաբանելով ու օրհնելով Աստծուն**:

Ղուկասի Ավետարանն սկսվեց դրանով, որ բարեպաշտ հավատացյալները տանարում աղոթում էին երկար սպասված Մեսիայի համար: Այն նույնպես վերջացավ դրանով, որ բարեպաշտ մարդիկ շարունակ տանարում էին՝ **փառաբանելով ու օրհնելով Աստծուն**⁷ աղոթքին պատասխանելու և կատարած փրկագնման համար: Սա հիանալի ավարտ է այն գրքի համար, որին Ռենանն անվանեց «ամենագեղեցիկն աշխարհում»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

¹(1:2) James S. Stewart, *The Life and Teaching of Jesus Christ*, էջ 9:

²(1:4) Նույն (*anōthen*) բառը հանդիպում է Հովհ. 3:7-ում. «... Դուք պետք է վերստին ծնվեք» (կամ «ի վերուստ»):

³(1:16-17) G. Coleman Luck, *Luke*, էջ 17:

⁴(1:28) Հունարենում այս բառը կրավորական սեռի դերբայ է, որը ցույց է տալիս, որ նա (Մարիամը) շնորհ *unusquasque*: Լատիներեն *«gratia plena»* արտահայտությունը («շնորհով լի») ճիշտ չի մեկնաբանվել, այն ուսմունքը հիմնավորելու համար, որն ասում է, թե Մարիամը շնորհի *ստրյուր* է հանդիսանում:

⁵(1:72-75) G. Campbell Morgan, *The Gospel According to Luke*, էջեր 30-31:

⁶(2:7) J. N. Darby, *Synopsis of the Books of the Bible*, III:293:

⁷(2:8) Stewart, *Life and Teaching*, էջ 24:

⁸(2:13-14) Քրիստոսի ՆԱ տեքստում գրված է «բարի կամքի տեր մարդկանց», ինչը կարծես թե հակասում է մարդու պղծության մասին աստվածաշնչյան վարդապետությանը: Ավետարանականները, ովքեր ընդունում են քրիստոսական ընթերցումը, հիմնականում վերաշարադրում են:

⁹(2:33) ՆԱ տեքստում «Նրա հայրը և մայրը» արտահայտությունը չի *հեղքում* կուսական ծնունդը:

¹⁰(2:40) ՆԱ տեքստում «հոգով» բառը բաց է թողնված:

¹¹(4:13) Stewart, *Life and Teaching*, էջ 45:

¹²(4:28) John Charles Ryle, *Expository Thoughts on the Gospels, St. Luke*, I:121:

¹³(5:30) ՆԱ տեքստում գրված է՝ «փարիսեցիներն ու նրանց դպիրները», այսինքն՝ խոսքը այն դպիրների մասին է, որոնք կիսում էին փարիսեցիների համոզմունքները:

¹⁴(6:17-19) Շատ աստվածաբաններ կարծում են, որ «տափարակ տեղ» ասելով (KJ) հասկացվում էր լեռան ստորոտի *հարթ տեղանքը*: Տարբերությունը ոճի, Մատթեոսի ու Ղուկասի շեշտադրությունների ու բառերի (ներշնչված) ընտրության մեջ է՝ հաշվի առնելով լսողներին:

¹⁵(6:26) Շատ ձեռագրերում բացակայում է «բոլոր» բառը, որով հասկացվում է, որ

միայն մի քանիսը կգովեն նրանց, ովքեր համաձայն են փոխզիջման գնալ:

¹⁶(6:27-29a) F. B. Meyer, *The Heavens*, էջ 26:

¹⁷(6:47-49) Աստվածաշնչի ամենաժամանակակից թարգմանություններում բացակայում է հիմնական միտքը: Խոսքը նրա մասին չէ, թե *ինչպես*, այլ *Ում* (Քրիստոսի) վրա է անհրաժեշտ կառուցել կյանքը:

¹⁸(7:21-23) C. G. Moore, մեջբերված է W. H. Griffith Thomas կողմից, *Outline Studies in the Gospel of Luke*, էջ 129:

¹⁹(7:27) F. L. Godet, *Commentary on the Gospel of Luke*, I:350:

²⁰(7:30-34) Ryle, *St. Luke*, I:230:

²¹(7:49-50) *Ibid.*, էջ 239:

²²(8:11-15) J. N. Darby, *The Gospel of Luke*, էջ 61:

²³(8:18) G. H. Lang, *The Parabolic Teaching of the Scripture*, էջ 60:

²⁴(8:26-27) NU տեքստում այս և 27-րդ համարում գրված է «Գերզեասցիներ» բառը:

²⁵(8:34-39) Darby, *Synopsis*, III:340:

²⁶(8:51-53) Sir Robert Anderson, *Misunderstood Texts of the New Testament*, էջ 51:

²⁷(9:19-20) Stewart, *Life and Teaching*, էջեր 109-110:

²⁸(9:28-29) W. H. Rogers, ամբողջական տվյալներ չկան:

²⁹(9:32-33) Ryle, *Gospels, St. Luke*, I:320:

³⁰(9:50) A. L. Williams, ավելի ամբողջական տվյալներ չկան:

³¹(9:62) Հավանաբար նկատի ունի ոչ թե րուպեական ետադարձ հայացքը, այլ «ետ Եզիպտոս» մտածելակերպը, որը հատուկ էր անապատով ճանապարհորդող հրեաներին:

³²(10:1-12) Այստեղ և 17-րդ համարում NU տեքստում գրված է «յոթանասուներկու»:

³³(10:16) Ryle, *St. Luke*, I:357, 358:

³⁴(10:36, 37) F. Davidson, ed., *The New Bible Commentary*, էջ 851:

³⁵(10:42) C. A. Coates, *An Outline of Luke's Gospel*, էջ 129:

³⁶(10:42) Charles R. Erdman, *The Gospel of Luke*, էջ 112:

³⁷(11:4) Ղուկասը տալիս է «Հայր մեր» աղոթքի ամենասեղմ տարբերակը, հավանաբար այն բառ առ բառ չէր արտասանվում:

³⁸(11:9) Հունարենում *հրամայական եղանակով ներկա ժամանակի* բայը շարունակվող գործողություն է փոխանցում:

³⁹(11:41) Harry A. Ironside, *Addresses on the Gospel of Luke*, էջ 390:

⁴⁰(11:46) William Kelly, *An Exposition of the Gospel of Luke*, էջ 199:

⁴¹(12:2, 3) Godet, *Luke*, II:89:

⁴²(12:15) J. R. Miller, *Come Ye Apart*, Հունիս 10-ի ընթերցանություն:

⁴³(12:36) Kelly, *Luke*, էջ 214:

⁴⁴(13:6-9) Lang, *Parabolic Teaching*, էջ 230:

⁴⁵(14:33) Ryle, *Gospels, St. Luke*, II:86:

⁴⁶(14:34, 35) Kelly, *Luke*, էջ 249:

⁴⁷(15:20) Stewart, *Life and Teaching*, էջեր 77, 78:

⁴⁸(16:9) *Our Lord's Teachings About Money* (թերթիկ), էջեր 10-11:

⁴⁹(16:9) J. N. Darby, *The Man of Sorrows*, էջ 178:

⁵⁰(17:10) Roy Hession, *The Calvary Road*, էջ 49:

⁵¹(17:34-36) Ձեռագրերի մեծամասնության մեջ, նույնիսկ ամենահիներում էլ, 36-րդ համարը բացակայում է, ավելի ճիշտ դա նշանակում է, որ այն չի եղել սկզբնական տեքստում:

⁵²(18:31-33) Ryle, *Gospels, St. Luke*, II:282:

⁵³(19:11) Ոսկեդրամ (եբրայերեն՝ *Minah*, հունարեն՝ *mna*) ավելի մեծ արժեք ունեւր, քան բրիտանական ֆունտը:

⁵⁴(19:41-42) Griffith Thomas, *Luke*, էջ 303:

⁵⁵(20:18) Ուրիշները քարի մասին խոսելիս նկատի ունեն գոջացող մեղավորին, որը գոջալով, ապաշխարելով ընկնում է Հիսուսի առջև, փշրվում է ու փրկություն ստանում: Նա, ով մերժում է Քրիստոսին, փոշու է վերածվելու գալիք դատաստանի ժամանակ:

- ⁵⁶(20:35) Coates, *Luke's Gospel*, էջ 252:
- ⁵⁷(21:1-4) Dr. Joseph Parker, ամբողջական տվյալներ չկան:
- ⁵⁸(21:20-24) *Christian Truth Magazine*, նոյեմբեր 1962թ., էջ 303:
- ⁵⁹(21:20-24) Edward Gibbon, *The Decline and Fall of the Roman Empire*, II:95-101:
- ⁶⁰(22:7) Leon Morris, *The Gospel According to Luke*, էջեր 302-304:
- ⁶¹(22:47-48) Stewart, *Life and Teaching*, էջ 154:
- ⁶²(23:13-17) *Ibid.*, էջ 161:
- ⁶³(23:33) Սա միակ տեղն է անգլերեն Աստվածաշնչում (ավանդական KJ), որտեղ հանդիպում է այս սիրված անունը:
- ⁶⁴(23:33) Stewart, *Life and Teaching*, էջ 166:
- ⁶⁵(23:34) Morgan, *Luke*, էջ 269:
- ⁶⁶(23:35-38) Stewart, *Life and Teaching*, էջ 168:
- ⁶⁷(23:42) Թարգմանությունների մեծամասնությունում օգտագործված «Տե՛ր, հիշի՛ր ինձ» արտահայտությունը շատ ավելի տպավորիչ է, քան քննադատական ՆՍ տեքստում նշված «Հիսու՛ս, հիշի՛ր ինձ» արտահայտությունը:
- ⁶⁸(23:43) Erdman, *Luke*, էջեր 217, 218:
- ⁶⁹(24:13) ՆՍ տեքստում գրված է. «Ինչի՛ մասին էիք գրուցում միմյանց հետ», և նրանք տխուր կանգնեցին»:
- ⁷⁰(24:52-53) Քննադատական ՆՍ տեքստից բացակայում են «փառաբանելով ու օրհնելով» և «Ամեն» արտահայտությունները:

- Erdman, Charles R. *The Gospel of Luke*. Philadelphia: The Westminster Press, 1921թ.:
 Geldenhuys, Norval. *Commentary on the Gospel of Luke*, 2 vols. Grand Rapids: Zondervan Publishing House, 1977թ.:
 Ironside, H. A. *Addresses on the Gospel of Luke*. New York: Loizeaux Brothers, 1947թ.:
 Kelly, William. *An Exposition of the Gospel of Luke*. London: Pickering and Inglis, n.d.:
 Luck, G. Coleman. *Luke*. Chicago: Moody Press, 1960թ.:
 Morgan, G. Campbell. *The Gospel According to Luke*. New York: Fleming H. Revell Co., 1931թ.:
 Morris, Leon. *The Gospel According to St. Luke, TBC*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1974թ.:
 Thomas, W. H. Griffith. *Outline Studies in the Gospel of Luke*. Grand Rapids: Kregel Publications, 1984թ.:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Coates, C. A. *An Outline of Luke's Gospel*. Kingston on Thames: Stow Hill Bible and Tract Depot, n.d.:
- Darby, J. N. *The Gospel of Luke*. London: James Carter, n.d.:
- Darby, J. N. *The Man of Sorrows*. Glasgow: Pickering and Inglis, n.d.:
- Darby, J. N. *Notes of Addresses on the Gospel of Luke*. London: C. A. Hammond, n.d.:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Նախարան

«Աշխարհի ամենախորհմաստ գիրքը»:

Ա. Թ. Ռոբերտսոն

I. Հատուկ տեղը կանոնում

Հովհաննեսը հատուկ շեշտում է, որ իր գիրքը ավետարանչական է, «որ դուք հավատարմ» (20:31): Եկեղեցին հետևեց առաքյալների կոչին. 19-րդ դարում տարածվեցին «Ավետարան ըստ Հովհաննեսի» միլիոնավոր գրպանի գրքույկներ:

Հասուն և նվիրված շատ քրիստոնյաների համար Հովհաննեսի Ավետարանը Աստվածաշնչի ամենաաիրված գրքերից մեկն է, եթե չասենք՝ *ամենաաիրելին*: Հովհաննեսը ոչ միայն մի քանի փաստ է թվարկում մեր Տիրոջ կյանքից, այլև ներկայացնում է առաքյալի խոհերն ու մտորումները, ով Քրիստոսի հետ քայլեց Գալիլիայում պատանեկան օրերից սկսած մինչև խոր ծերության տարիները՝ Ասիայում: Նրա Ավետարանում գտնում ենք ՆԿ-ի հանրահայտ համարը՝ Հովհ. 3:16-ը, որը Մարտին Լյութերն անվանել է «փոքրիկ Ավետարան»:

Եթե Հովհաննեսի Ավետարանը *միակը* լիներ ՆԿ-ում, բոլորը այնտեղ կգտնեին բավարար նյութեր՝ կյանքի մնացած օրերում ուսումնասիրելու և խորհելու համար:

II. Հեղինակը

Չորրորդ Ավետարանի հեղինակի ինքնությունը վերջին 150 տարիների ընթացքում շատ լայն ու ակտիվ քննարկման առարկա է դարձել: Այդպիսի մեծ հետաքրքրության պատճառը, անկասկած, ավետարանչի այն պնդումն է, որ Հիսուս Քրիստոսը Աստված

է: Փորձեր են արվել ապացուցելու, որ այս Ավետարանը գրվել է ոչ թե ականատեսի, այլ անհայտ, բայց հանճարեղ մի աստվածաբանի կողմից, ով ապրել է իր նկարագրած դեպքերից հիսուն կամ հարյուր տարի անց: Հետևաբար այն անդրադարձնում է Քրիստոսի մասին Եկեղեցու ուսմունքը և ոչ թե այն, թե Ով էր Հիսուսն իրականում և թե ինչ էր ասել ու արել:

Կդեմես Ալեքսանդրիացին գրում է այն մասին, թե ինչպես են Եփեսոսում Հովհաննեսի մտերիմ բարեկամները առաջարկում նրան գրել մի Ավետարան, որը լրացնում է արդեն իսկ գրված համանմաններին: Եվ ահա, Մուրբ Հոգու ներշնչամբ, առաքյալն ստեղծեց *հոգևոր* Ավետարանը: Սա ամենավին չի նշանակում, որ մնացած Ավետարանները *հոգևոր չեն*: Պարզապես այն յուրահատուկ շեշտադրությունը, որ Հովհաննեսն անում է Հիսուսի Խոսքերի և Նրա կատարած հրաշալի նշանների ավելի խորը նշանակության վրա, մեզ իրավունք է տալիս տվյալ Ավետարանն առանձնացնել որպես «*հոգևոր*» Ավետարան:

Արտաքին վկայություններ

Առաջին գրավոր վկայություններն այն մասին, որ դիտարկվող Ավետարանի հեղինակը Հովհաննեսն է, գտնվում են Թեոֆիլի աշխատություններում, ով Անտիոքից էր (մոտավորապես մ.թ. 170թ.): Գոյություն ունեն և այլ, ավելի վաղ ոչ բացահայտ հիշատակումներ ու հղումներ չորրորդ Ավետա-

րանից Իզնատիոսի, Հուստինիոս Վկայի, Տացիանի, Մուրատորյան կանոնում և Վասիլիոսի ու Վալենտին հերձվածողների մոտ:

Ավետարանի հեղինակի անունը բացահայտ նշված չէ, սակայն գոյություն ունեն ոչ պակաս ծանրակշիռ ապացույցներ հոգուտայն բանի, որ դա Հովհաննես առաքյալն է՝ տասներկու աշակերտներից մեկը:

Իրինեոսը փակում է աշակերտների շրջան, որը հենց Հիսուս Զրիստոսից գնում է դեպի Հովհաննեսը, Հովհաննեսից՝ Պողիկարպոսը, Պողիկարպոսից՝ Իրինեոսը: Այս ձևով ընդգրկվում է քրիստոնեության ծագումից մինչև 2-րդ դարի վերջին ժամանակաշրջանը: Իրինեոսը հաճախ է մեջբերում այս Ավետարանից՝ համարելով, որ այն Հովհաննեսի Ավետարանն է (ընդունում էր որպես Եկեղեցու կողմից հաստատված գրություն): Իրինեոսից սկսած՝ այս Ավետարանը համընդհանուր ճանաչում է ունեցել, այդ թվում Կոնստանդինոպոլիսի և Տերտուղիանոսի կողմից:

Մինչև 19-րդ դարի սկիզբը Հովհաննեսի հեղինակությունը կասկածներ չի հարուցել: Բացառություն է կազմել Ալոգիների ոչ այնքան հայտնի աղանդը, որի ներկայացուցիչները մերժում էին այս փաստը:

Ենթադրություն կա, որ 21-րդ գլխի ամենավերջին մասը ավելացված է Եփեսոսի եկեղեցու առաջնորդների կողմից 1-ին դարի վերջում, որպեսզի հավատացյալները խրախուսվեն՝ ընդունելու Հովհաննեսի Ավետարանը: 24-րդ համարը մեզ կրկին վերադարձնում է 20-րդ համարում, ինչպես նաև 13:23-ում հիշված «այն աշակերտին, ում Հիսուսը սիրում էր»: Այս նշվածները միշտ ընկալվել են որպես Հովհաննես առաքյալին վերաբերող ակնարկներ:

Ազատախոհներն էլ պնդում են, որ չորրորդ Ավետարանը գրվել է 2-րդ դարի վերջում: Սակայն 1920 թ.-ին Եգիպտոսում Հովհաննեսի Ավետարանի 18-րդ գլխից մի հատված է հայտնաբերվել (Պապիրոս 52, օբյեկտիվ մեթոդների օգնությամբ թվագրված է 2-րդ դարի *սուաջին* կեսով, մոտավորապես մ.թ. 125թ.): Այն փաստը, որ այն

գտնվել է գավառական փոքրիկ քաղաքում (օրինակ՝ ոչ թե Ալեքսանդրիայում), հաստատում է, որ ավանդականորեն ընդունված գրվելու տարեթիվը՝ 1-ին դարի վերջը, հավաստի է, քանի որ որոշ ժամանակ էր պահանջվում, որպեսզի ձեռագրերը Եփեսոսից տարածվեին մինչև հարավային Եգիպտոսի սահմանները: Նման հատված է նաև Հովհաննեսի Ավետարանի 5-րդ գլխից Պապիրոս Եգերտոն 2-ը, որը նույնպես վերաբերում է 2-րդ դարի սկզբին: Սա նույնպես հաստատում է այն ենթադրությունը, որ տվյալ Ավետարանը գրված է Հովհաննես առաքյալի օրոք:

Ներքին վկայություններ

19-րդ դարի վերջում անգլիացի հայտնի գիտնական-աստվածաբան, եպիսկոպոս Վեսթթոթը շատ համոզիչ կերպով ապացուցեց Հովհաննեսի հեղինակությունը: Նրա դատողությունների հաջորդականությունը այսպիսին է.

1. հեղինակը, անկասկած, *հրեա* էր. գրելու ոճը, բառամթերքը, հրեական սովորությունների ու մշակութային յուրահատկությունների իմացությունը, ինչպես նաև Ավետարանում արտացոլված հինկտակարանյան ենթահողը հաստատում են տվյալ ենթադրությունը:
2. Այս *հրեան սպրում էր Պաղեստինում* (1:28, 2:1, 11, 4:46, 11:18, 54, 21:1-2): Նա լավ գիտեր Երուսաղեմն ու տաճարը (5:2, 9:7, 18:1, 19:13, 17, 20, 41, տե՛ս նաև 2:14-16, 8:20, 10:22):
3. Նա իր պատմածի *ականատեսն էր*: Տեքստում բազմաթիվ փոքրիկ տեղեկություններ են հանդիպում՝ գործողության տեղի, անձերի, ժամանակի և բարքերի հետ կապված (4:46, 5:14, 6:59, 12:21, 13:1, 14:5, 8, 18:6, 19:31):
4. Նա *սուաքյալներից մեկն էր*: Նա քաջատեղյակ է աշակերտների շրջանակի ներքին կյանքին և հենց Տիրոջ կյանքին (6:19, 60-61, 12:16, 13:22, 28, 16:19):
5. Զանի որ հեղինակն անուններով կոչում է մյուս աշակերտներին, բայց երբեք

իրեն *չի հիշատակում*, սա մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ 13:23, 19:26, 20:2, 21:7, 20-ի անանուն աշակերտը *Հովհաննես առաքյալն է*: Եվս երեք կարևոր տեղեր՝ 1:14 19:35 և 21:24, որոնք հաստատում են, որ Ավետարանի հեղինակը նկարագրված իրադարձությունների ականատեսն է:

III. Գրելու տարեթիվը

Իրենիոսը վստահությամբ հաստատում է, որ Հովհաննեսն իր Ավետարանը գրել է Եփեսոսում: Եթե նա ճիշտ է, ապա ամենավաղ հնարավոր տարեթիվը համընկնում է Հովհաննեսի Եփեսոս ժամանելու տարեթվի հետ՝ մոտավորապես մ.թ. 69 կամ 70թ.: Քանի որ Հովհաննեսը ոչ մի տեղ չի հիշատակում Երուսաղեմի ավերման մասին, կարելի է ենթադրել, որ դա դեռ տեղի չէր ունեցել: Այս փաստը թույլ է տալիս եզրակացնել, որ Ավետարանը գրվել է այս ահավոր իրադարձությունից առաջ:

Մի շարք ավելի ազատախոհ աստվածաշնչագետներ, հետամուտ լինելով կապ գտնելու Մեռյալ ծովի մոտ հայտնաբերված գալարների հետ, առաջ քաշեցին այն վարկածը, թե Հովհաննեսի Ավետարանը գրվել է մ.թ. 45-46թթ.-ին: Սա, ինքնըստինքյան, ոչ սովորական իրադարձություն է, քանի որ սովորաբար հենց ազատախոհներն են պնդում ավելի ուշ թվագրության մասին, մինչ պահպանողականները պաշտպանում են վաղ թվագրության մասին վարկածները: Տվյալ դեպքում վաղ Եկեղեցու ավանդությունը կողմնակից է ավելի ուշ թվագրված լինելուն:

Առաջին հարյուրամյակի վերջում գրված լինելուն վերաբերող փաստարկները բավական ծանրակշիռ են: Աստվածաշնչագետների մեծամասնությունը համաձայն է Իրենիոսի, Կղեմես Ալեքսանդրիացու և Հերոնիմոսի հետ, որ Հովհաննեսի Ավետարանը չորս Ավետարաններից վերջին գրվածն է և մասամբ հենվում է համանման Ավետարանների վրա: Այն փաստը, որ այս Ավետարանում ոչինչ չի ասվում Երուսաղեմի ավերման մասին, հավանաբար այն պատճառով

է, որ գիրքը գրվել է առաջին ցնցումներն անցնելուց տասնհինգ-քսան տարի *հետո*: Իրենիոսը գրում է, որ Հովհաննեսն ապրել է մինչև Տրոյան կայսրի կառավարումը, ով գահ է բարձրացել մ.թ. 98թ.-ին, ուրեմն շատ հավանական է, որ Ավետարանը գրվել է անմիջապես դրանից առաջ: Ավետարանում տեղ գտած «իրեաների» մասին հիշատակությունը նույնպես վկայում է ավելի ուշ թվագրված լինելու մասին, երբ քրիստոնյաներին ուղղված իրեաների հակագրեցությունը վերանեց հալածանքի:

Այսպիսով, գրվելու ճիշտ տարեթիվը հնարավոր չէ պատկերացնել, սակայն ավելի հավանական ժամանակահատված է մ.թ. 85-95թթ.:

IV. Ենթահողը և թեման

Հովհաննեսի ամբողջ Ավետարանը կառուցված է Հիսուսի կատարած յոթ հրաշքների կամ նշանների շուրջ: Դրանցից յուրաքանչյուրը մի ապացույց է, որ Հիսուսն Աստված է.

1. Հարսանեկան խնջույքին ջուրը գինի դարձնելը Գալիլիայի Կանայում (2:9):
2. Ազնվականի որդու բժշկությունը (4:46-54):
3. Բեթեզդայի ավազանի մոտ գտնվող հիվանդի բժշկությունը (5:2-9):
4. Հինգ հազարի կերակրումը (6:1-14):
5. Հիսուսը քայլում է Գալիլիայի ծովի վրայով, որպեսզի աշակերտներին փրկի փոթորկից (6:16-21):
6. Ի ծնե կույրի բժշկությունը (9:1-7):
7. Ղազարոսին հարություն տալը (11:1-44):

Ի հավելումն այս յոթ հրաշքների, որոնք կատարվեցին ժողովրդի ներկայությամբ՝ կա նաև մեկը՝ ութերորդ հրաշքը, որը Հիսուսը կատարեց աշակերտների ներկայությամբ հարությունից հետո. դա ձկների մեծաքանակ որսն էր (21:1-14):

Չարլզ Ռ. Էրդմանը գրել է, որ չորրորդ Ավետարանն «ավելի շատ մարդկանց է մղել Հիսուսին հետևելու, ավելի շատ հավատաց-

յայնների է ոգեշնչել արդար ծառայության և ավելի մեծ քանակով դժվար խնդիրներ է դրել հետազոտողների առջև, քան ցանկացած այլ գիրք»:

Հենց Հովհաննեսի Ավետարանում է վերականգնվում Քրիստոսի երկրավոր ծառայության *ժամանակագրությունը*: Եթե հետևենք մյուս երեք Ավետարաններին, կարող է թվալ, որ այն միայն մեկ տարի է տևել: Հովհաննեսի մոտ համաժողովրդական տոների հիշատակումը ծառայության ժամանակաշրջանը ներկայացնում է մոտավորապես երեք տարի: Ուշադրություն դարձրեք հետևյալ հղումներին. հրեական Չատկի առաջին տոնը (2:12-13) «հրեաների տոնն էր» (5:1). սա կարող է լինել կամ Չատկիը, կամ Փուրիմը՝ երկրորդ (կամ էլ երրորդ) Չատկի տոնը (6:4), տաղավարների տոնը (7:2), Նավակատիքի տոնը (10:22) և Չատկի վերջին տոնը (12:1):

Հովհաննեսը նաև շատ ճշգրիտ է ժամանակի հիշատակման մեջ: Եթե մյուս երեք ավետարանիչներին լրիվ բավարարում են ժամանակի մասին մոտավոր նշումները, ապա Հովհաննեսն այնպիսի մանրամասներ է նշում, ինչպիսին են յոթերորդ ժամը (4:52), երրորդ օրը (2:1), երկու օր (11:6) և վեց օր (12:1):

Այս Ավետարանի *ոճն ու բառապաշարը* եզակի է, համադրելի միայն Հովհաննեսի թղթերի ոճի հետ: Դրանում նախադասությունները կարճ ու պարզ են: Հեղինակը բացահայտորեն երբայերեն է մտածում, չնայած որ հունարեն է գրում: Հանախ որքան նախադասությունը կարճ է, այնքան ավելի կարևոր է նրանում ամփոփված ճշմարտությունը: Մյուս Ավետարանների հետ համադրելիս բառապաշարը շատ սահմանափակ է, բայց շատ խորն է իմաստով: Ուշադրություն դարձրեք հետևյալ կարևոր բառերին և տեքստում դրանց հանդիպման հաճախականությանը՝ Հայր (118), հավա-

տալ (100), աշխարհ (78), սիրել (45), վկայել (47), կյանք (37), լույս (24):

Հովհաննեսի Ավետարանի առանձնահատկություններից մեկն է հեղինակի կողմից յոթ թվի և դրան պատիկ թվերի հաճախակի կիրառումը: Ողջ Մուրբ Գրքի մեջ այս թվի հետ միշտ կապված է եղել կատարելության և ամբողջականության գաղափարը (տե՛ս Ծնն. 2:1-3): Այս Ավետարանում Աստծո Հոգին Հիսուս Քրիստոսի Անձով կատարյալ ու ամբողջական աստվածային հայտնություն է կատարել, դրա համար էլ այստեղ բավական շատ ենք հանդիպում յոթ թվի հետ կապված օրինակների:

Հովհաննեսի Ավետարանից նույնպես հայտնի են «Ես եմ...»-ով սկսվող 7 արտահայտությունները՝ «Կյանքի հացը» (6:35, 41, 48, 51), «Աշխարհի լույսը» (8:12, 9:3), «Դուռը» (10:7, 9), «Բարի հովիվը» (10:11, 14), «Հարությունն ու կյանքը» (11:25), «Ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (14:6), «Որթը» (15:1, 5): Քիչ հայտնի են ուրիշ «Ես Նա եմ», «Ես եմ» արտահայտությունները, որոնց համար բացատրություններ չեն տրվում. 4:26, 6:20, 8:24, 28, 58, 13:19, 18:5, 8: Վերջին համարում երկու անգամ է գրված:

6-րդ գլխում, որտեղ խոսվում է Կյանքի հացի մասին, օգտագործված հունարեն բառը թարգմանվել է «հաց» և «նկանակներ»: Այն հանդիպում է քսանմեկ անգամ, որը յոթին բազմապատիկ թիվ է: Նույն գլխում «հացը երկնքից» բառակապակցությունը հանդիպում է ճիշտ յոթ անգամ, այնքան, որքան «երկնքից իջած» արտահայտությունը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հովհաննեսն այս Ավետարանը գրեց, որպեսզի բոլոր կարդացողները հավատան, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, և հավատարիվ՝ կյանք ունենան Նրա անունով (20:31):

ՈՒՐՎԱԳԻԾ

- I. ՆԱԽԱԲԱՆ. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԱՌԱՋԻՆ ԳԱԼՈՒՍՏԸ (1:1-18)
- II. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ (1:19-4:54)
- III. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ (5-րդ գլ.)
- IV. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ. ԳԱԼԻԼԻԱ (6-րդ գլ.)
- V. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ. ԵՐՈՒՍՏՂԵՄ (7:1-10:39)
- VI. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ. ԲԵՐԻԱ (10:40-11:57)
- VII. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԻՆ (12-17-րդ գլ.)
- VIII. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԱՀԸ (18-19-րդ գլ.)
- IX. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԸ (20-րդ գլ.)
- X. ՎԵՐՉԱԲԱՆ. ՀԱՐՈՒՅՑԱԼ ՈՐԴԻՆ ԻՐ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ (21-րդ գլ.)

Մեկնաբանություն

I. ՆԱԽԱԲԱՆ. ԱՍՏՈՆ ՈՐԴՈՒ ԱՌԱՋԻՆ ԳԱԼՈՒՍՏԸ (1:1-18)

Հովհաննեսն իր Ավետարանն սկսում է *Բանի* մասին պատմելով, բայց միանգամից չի բացատրում՝ ով կամ ինչ է Բանը: Բանը լեզվի միավոր է, որի օգնությամբ կարողանում ենք ինքներս մեզ արտահայտել, բացատրվել այլ մարդկանց հետ: Բայց Հովհաննեսն ավելի շուտ գրում է *Անձի* մասին, քան թե *լեզվի*: Այդ Անձը Տեր Հիսուս Քրիստոսն է՝ Աստծո Որդին: Աստված Տեր Հիսուսի Անձի միջոցով Իրեն ամբողջությամբ հայտնեց մարդկությանը: Աշխարհ գալով՝ Քրիստոսը կատարելապես մեզ ցույց տվեց, թե Աստված ինչպիսին է: Մեր փոխարեն խաչի վրա մեռնելով՝ Նա մեզ հասկացրեց, թե Աստված որքան խորն է մեզ սիրում: Ուստի Քրիստոսն Աստծո կենդանի Խոսքն է՝ մարդկանց ուղղված, Աստծո մտքերի արտահայտությունը:

Ա. Բանը հավիտենականության ու ժամանակի մեջ (1:1-5)

1:1. «Մկզբում էր Բանը»: Նա Ինքն սկիզբ չուներ, այլ գոյություն ուներ հավիտյան: Այնքան, որքան մարդկային միտքը կարող է ետ գնալ, Տեր Հիսուսը միշտ եղել է:

Նա երբեք ստեղծված չի եղել: Նա սկիզբ չի ունեցել: Այս Ավետարանում Աստծո Որդու ծննդաբանությունը ներառելը տեղին չէր լինի: **Եվ Բանն Աստծո մոտ էր.** Նա ինքնուրույն և որոշակի Անձնավորություն էր: Նա ոչ թե պարզապես գաղափար, միտք կամ անորոշ օրինակ էր, այլ իրական Անձ, Ով **Աստծո հետ էր: Եվ Բանն Աստված էր:** Նա ոչ միայն **Աստծո հետ էր բնակվում,** այլև **Ինքն Աստված էր:**

Աստվածաշունչը սովորեցնում է, որ մեկ Աստված կա, և Աստվածության մեջ երեք Անձեր են՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Այս երեք Անձերն էլ Աստված են: Այս համարում հիշատակված են Աստվածության երկու Անձերը՝ Հայր Աստված ու Որդի Աստված: Սա առաջինն է տվյալ Ավետարանում այն հստակ հաստատումներից, որ *Հիսուս Քրիստոսն Աստված է*: Բավարար չէ ասել, որ Նա Աստծո նման է կամ աստվածային է: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Նա **Աստված է**:

1:2. Առաջին հայացքից թվում է, թե այս համարը վերը նշվածի կրկնությունն է, բայց իրականում այդպես չէ: Տվյալ համարը սովորեցնում է, որ Քրիստոսի Անձնավորությունն ու Նրա աստվածությունը **սկիզբ** չեն

ուներցել: Նա առաջին անգամ Անձնավորութ-
յունը չդարձավ՝ մարմնավորվելով Բեթղե-
հեմի Մանկան մեջ: Ավելին՝ Նա Աստված
չդարձավ մեռելներից հարություն առնելուց
հետո, ինչպես մի քանիսը սովորեցնում են
այսօր: Ի հավիտենից Նա Աստված է:

1:3. «Ամեն ինչ Նրանով եղավ»: Նա ա-
րարված չէր. ավելի ճիշտ, Նա **ամենի** Արա-
րիչն էր: Նա արարեց մարդկությունը, կեն-
դանիներին, երկնային մոլորակները, հրեշ-
տակներին՝ բոլոր երևելի ու աներևույթ
բաները: **Եվ առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ
որ եղավ:** Այս խոսքերը ոչ մի հնարավոր
բացատրություն չեն թույլատրում: Եթե ամեն
ինչ ստեղծված է, ապա Նրանով է ստեղծ-
ված: Եվ իբրև Արարիչ, բնականաբար, Նա
գերակա է այն ամենին, ինչ ստեղծեց: Աստ-
ծո երեք Անձերն էլ մասնակցել են արար-
չագործության ընթացակարգին. «Սկզբում
Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը»
(Ծնն. 1:1): «Եվ Աստծո Հոգին շարժվում էր
ջրերի երեսին» (Ծնն. 1:2): «Ամեն ինչ Նրա-
նով և Նրա (Քրիստոսի) համար ստեղծ-
վեց» (Կող. 1:16բ):

1:4. Նրանում էր կյանքը: Սա չի նշանա-
կում, որ Նրա մեջ պարզապես կյանք կար,
այլ այն, որ Նա էր և է **կյանքի աղբյուրը:**
«Կյանք» բառն այստեղ իր մեջ ներառում է
և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր կյանքը: Ծնվե-
լով՝ մենք ֆիզիկական կյանք ստացանք:
Երբ վերստին ենք ծնվում, հոգևոր կյանք
ենք ստանում: Երկուսն էլ Նրանից են
բխում:

«Եվ կյանքը մարդկանց լույսն էր»: Մեզ
կյանք պարգևողը նաև **մարդկանց լույսն
է:** Նա մարդուն անհրաժեշտ ուղղություն
և առաջնորդություն է տալիս: Չէ՞ որ մի
բան է գոյություն ունենալը և լիովին այլ
բան՝ ապրել իմանալը, կյանքի նպատակն
ու երկնքի ճանապարհը իմանալը: Նա և՛
մեզ **կյանք** Տվողն է, և՛ մեր ճանապարհը
Լուսավորողը:

Ավետարանի այս 1-ին գլխում են գտնվում
մեր Տեր Հիսուս Քրիստոսի յոթ հիանալի
անունները: Նա կոչվում է. 1. Բան (1, 14),
2. Լույս (5, 7), 3. Աստծո Գառ (29, 36), 4.
Աստծո Որդի (34, 49), 5. Քրիստոս (Մեսիա)

(41), 6. Իսրայելի Թագավոր (49), 7. Մարդու
Որդի (51): Առաջին չորս անունները, որոն-
ցից յուրաքանչյուրը մատնանշվում է նվա-
զագույնը երկու անգամ, կիրառելի են թվում
բոլորի համար: Վերջին երեք անունները,
որոնցից յուրաքանչյուրը նշվում է միայն
մեկ անգամ, վերաբերում էին Իսրայելին՝
Աստծո հնագույն ժողովրդին:

**1:5. «Եվ լույսը խավարի մեջ լուսավո-
րում է»:** Մեղքի հայտնությունը մթազնեց
մարդկանց մտքերը: Մեղքը աշխարհին ըն-
կրդմեց **խավարի մեջ** այն իմաստով, որ
մարդիկ ոչ միայն Աստծուն չէին ճանաչում,
այլ չէին էլ ուզում Նրան ճանաչել: Այս **խա-
վարի մեջ** եկավ Տեր Հիսուսը՝ խավարում
փայլող **լույսը:**

«Եվ խավարը չճանաչեց այն»: Սա կա-
րող է նշանակել, որ խավարը չհասկացավ
Տեր Հիսուսին, երբ Նա աշխարհ եկավ:
Մարդիկ չհասկացան, թե Ով է Նա իրակա-
նում և ինչու եկավ: Այլ բացատրություն
ևս կա, որը տրված է NKJV լուսանցքնե-
րում. **խավարը չկարողացավ հաղթահա-
րել այն:** Կարելի է առաջարկել նաև այսպի-
սի հասկացություն. մարդկանցից մերժվելն
ու նրանց թշնամական վերաբերմունքը
չհանգարեցին ճշմարիտ **լույսին** փայլելու:

**Բ. Հովհաննես Մկրտչի ծառայությունը
(1:6-8)**

1:6. Այս համարը վերաբերում է Հովհան-
նես Մկրտչին, ոչ թե այս Ավետարանը
գրող Հովհաննեսին: **Հովհաննես Մկրտիչը
ուղարկված էր Աստծո կողմից՝** որպես
Տեր Հիսուսի նախակարապետը: Նրա ա-
ռաքելությունը Քրիստոսի գալստյան մա-
սին հայտարարելն էր ու մարդկանց պատ-
րաստելը Նրան ընդունելու համար:

1:7. Սա... եկավ վկայելու, որ Հիսուսը իս-
կապես աշխարհի **Լույսն էր, որպեսզի բո-
լոր** մարդիկ կարողանան **հավատալ** Նրա
միջոցով:

1:8. Եթե Հովհաննեսը փորձեր իր վրա
հրավիրել ուշադրությունը, նա անհավա-
տարիմ կլիներ իրեն տրված առաջադրան-
քին: Նա մարդկանց վկայեց Հիսուսի, ոչ թե
իր մասին:

9. Աստծո Որդու առաջին գալուստը (1:9-18)

1:9. «Այն է ճշմարիտ լույսը»: Բազում դարերի ընթացքում տարբեր մարդիկ հաստատում էին, թե իրենք առաջնորդներ ու փրկիչներ էին, բայց Նա, Ում մասին վկայեց Հովհաննեսը, ճշմարիտ **Լույսն էր**, ամենագերագանց ու ամենախկական **Լույսը**: Այս համարի մեկ այլ թարգմանություն այսպես է հնչում. «Ճշմարիտ Լույսը, աշխարհի գալով, լուսավորում է յուրաքանչյուր մարդու»: Այլ բառերով՝ «աշխարհի եկող» բառակապակցությունն ավելի շուտ նկարագրում է **ճշմարիտ Լույսին**, ոչ թե **յուրաքանչյուր մարդու**: Ծնորհիվ **ճշմարիտ Լույսի աշխարհի գալուն՝** յուրաքանչյուր մարդ լուսավորվեց: Սա չի նշանակում, թե յուրաքանչյուր ոք Քրիստոսի մասին ինչ-որ ներքին գիտելիք ստացավ: Սա նաև չի նշանակում, թե բոլոր մարդիկ լսել են Տեր Հիսուսի մասին այս կամ այլ ժամանակ: Ավելի ճիշտ, սա նշանակում է, որ **Լույսը** փայլում, լուսավորում է բոլոր մարդկանց՝ անկախ ազգությունից, ռասայից կամ մաշկի գույնից: Սա նաև նշանակում է, որ բոլոր մարդկանց լուսավորելով՝ Տեր Հիսուսը նրանց ցույց տվեց ճշմարիտ լույսի մեջ, այսինքն՝ բացահայտեց, երևան հանեց նրանց էությունը: Որպես կատարյալ Մարդ այս աշխարհի գալով՝ Նա ցույց տվեց, թե որքան անկատար են մարդիկ: Երբ սենյակն ընկղմված է խավարում, դուք կահույքի վրայի փոշին չեք տեսնում: Բայց երբ այնտեղ է թափանցում լույսը, սենյակը երևում է այնպես, ինչպես իրականում կա: Ծիշտ այդպես էլ **ճշմարիտ Լույսի** ցոլքը մարդուն ցույց է տալիս այնպիսին, ինչպիսին իրականում նա կա:

1:10. Բեթղեհեմում Իր ծնվելու ժամանակից մինչև այն օրը, երբ Նա երկինք վերադարձավ, Հիսուսը հենց **նույն աշխարհում էր**, որում ապրում ենք հիմա: Նա է արարել այս ողջ աշխարհը և դրա օրինական Տիրակալն է: Նրան՝ որպես Արարչի ընդունելու փոխարեն՝ մարդիկ մտածեցին, որ Նա ընդամենն իրենց պես մարդ է, Նրա հետ

վարվեցին օտարականի և վտարանդիի պես:

1:11. «Յուրայիններին եկավ» (իրեններին կամ Իրեն - NKJV-ի լուսանցքներում): Նա ոտնձգություն չէր անում ինչ-որ մեկի սեփականության նկատմամբ: Նա ապրում էր այն մոլորակի վրա, որն Ինքն էր ստեղծել: **Ու յուրայինները (իր մարդիկ) Նրան չընդունեցին**: Լայն իմաստով՝ սա կարող է վերաբերել ողջ մարդկությանը. իսկապես, մարդկության մեծամասնությունը Նրան մերժեց: Բայց ավելի նեղ իմաստով՝ Նրա ընտրյալ երկրավոր ժողովուրդը հրեաներն էին: Աշխարհի գալով՝ Նա հայտնվեց հրեաներին որպես նրանց Մեսիա, բայց նրանք **չընդունեցին Նրան**:

1:12. Ուրեմն՝ հիմա Նա նորից է Իրեն առաջարկում մարդկությանը, և **Իրեն** ընդունողին Նա իրավունք կամ **իշխանություն է տալիս Աստծո որդիներ լինելու**:

Այս համարը մեզ հստակ ասում է, թե ինչպես կարող ենք **Աստծո որդիներ** դառնալ: Ո՛չ բարի գործերը, ո՛չ եկեղեցու անդամ լինելը, ո՛չ էլ մեր առավելագույնս ներդրած ջանքերը դրան չեն առաջնորդում, միայն մի բան է պետք՝ **Նրան** ընդունել, **Նրա անվանը** հավատալ:

1:13. Ֆիզիկական իմաստով որդի դառնալու համար պետք է **ծնվել**: Ծիշտ այդպես էլ, Աստծո զավակ դառնալու համար պետք է երկրորդ ծնունդ ունենալ: Այն հայտնի է որպես վերստին ծնունդ, կամ դարձ, կամ փրկություն: Այս համարը մեզ հաղորդում է վերստին ծննդին չառաջնորդող *երեք նախապարհների* և վերստին ծնունդ *ստանալու* միայն *մեկ* հնարավորության մասին: Սկզբում՝ երեք ճանապարհներ, որոնք մեզ չեն կարող տանել վերստին ծնունդի **Ոչ արյունից**: Սա նշանակում է, որ անձը քրիստոնյա չի դառնում քրիստոնյա ծնողներ ունենալով: Փրկությունը ծնողներից երեխային չի փոխանցվում **արյան** միջոցով: Այն **մարմնի կամքից չէ**: Այլ խոսքով, մարդը չի կարող իր սեփական **մարմնի** ջանքերով վերստին ծնունդ ստանալ: Այսինքն՝ թեկուզև նա փափագում է փրկություն ստանալ,

բայց դրա համար սեփական կամքը բավարար չէ: Այն **և ոչ էլ մարդու կամքից է**: Ոչ մի մարդ չի կարող փրկություն տալ մեկ ուրիշ մարդու: Օրինակ՝ քարոզիչը կարող է փափագել, որպեսզի ինչ-որ կոնկրետ անձ վերստին ծնվի, բայց նա ի գորու չէ նրան այդ հիանալի ծնունդը շնորհել: Այդ դեպքում ինչպե՞ս է այդ ծնունդը տեղի ունենում: Պատասխանը գտնում ենք այս խոսքում. **այլ Աստուց ծնվեցին**: Սա նշանակում է, որ մարդուն նոր կյանքի համար վերըստին ծնունդ տալու գործությունը գտնվում է ոչ թե ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի մեջ, այլ **Աստծո**:

1:14. «Եվ Բանը մարմին եղավ», երբ Հիսուսը՝ որպես Մանուկ, ծնվեց Բեթղեհեմում: Նա՝ որպես Աստծո Որդի, միշտ Հոր հետ էր Երկնքում և ահա աշխարհ եկավ մարդկային մարմնով: Նա **բնակվեց մեր մեջ**: Նրա գալուստը կարճաժամկետ չէր, որ ինչ-որ սխալի կամ անհասկացողության պատճառ լիներ: Աստված իսկապես եկավ այս երկիր ու որպես Մարդ ապրեց մարդկանց մեջ այս երկրի վրա: «Բնակվեց» բառը նշանակում է «ապրեց վրանում» կամ «Իր վրանը կանգնեցրեց»: Նրա մարմինը «վրան» էր, որով Նա մարդկանց մեջ ապրեց երեսուներեք տարի:

«Եվ մենք Նրա փառքը տեսանք»: Աստվածաշնչում «փառք» բառը հաճախ հասկացվում է որպես պայծառ, փայլող լույս, որը տեսանելի էր լինում Աստծո ներկայության ժամանակ: Այն նաև նշանակում է Աստծո կատարելությունն ու սրբությունը: Երկրի վրա ապրելով՝ Տեր Հիսուսն Իր փառքը ծածկեց մարդկային մարմնում: Բայց Նրա փառքը *հայտնվեց* երկու ձևով: Առաջին՝ Նրանում էր *բարոյակյան փառքը*: Սրա տակ հասկանում ենք Նրա կատարյալ կյանքի ու բնավորության փայլը: Նրա մեջ չկար ոչ մի արատ կամ ֆիզիկական աննշան թերություն: Նա կատարյալ էր ամեն բանում: Նրա բոլոր արժանիքները Նրա կյանքում դրսևորվեցին բացարձակ ներդաշնակության մեջ: Հետո Նրա փառքը տեսանելի եղավ այլակերպության լեռան վրա (Մատթ. 17:1-2): Այդ պահին Պետրո-

սը, Հակոբոսն ու Հովհաննեսը տեսան Նրա՝ արևի պես փայլող դեմքը և լույսի պես ճերմակ զգեստները: Այս երեք աշակերտներին հնարավորություն տրվեց նախապես տեսնելու այն ողջ մեծափառությունը, որը Տեր Հիսուսն ունենալու է նորից երկիր վերադառնալու և հազար տարի թագավորելու ժամանակ:

Անկասկած, Հովհաննեսի կողմից արտաբերված **«մենք Նրա փառքը տեսանք»** խոսքերը, առաջին հերթին վերաբերում են Տեր Հիսուսի *բարոյակյան փառավորությանը*: Նա և մյուս առաքյալները տեսան այս երկրի վրա երբևէ գոյություն ունեցած, բացարձակ կատարյալ կյանքի հրաշալիությունը: Հնարավոր է նաև, որ Հովհաննեսը նկատի ուներ Այլակերպության լեռան վրայի իրադարձությունը: Աշակերտներին հայտնված **փառքը** հաստատեց, որ Նա իսկապես Աստծո Որդին է: Հիսուսը **Հոր Միածին Որդին է**, այսինքն՝ Քրիստոսը Աստծո միակ Որդին է: Աստված Իր նմանությամբ ուրիշ մեկը չունե՛ր՝ բացի Որդուց: Ինչ-որ իմաստով բոլոր ճշմարիտ հավատացյալներն Աստծո որդիներ են: Բայց Հիսուսը՝ Աստծո **Որդին**, միակն է Իր կարգի մեջ: Աստծո Որդի լինելով՝ Նա հավասար է Աստծուն:

Փրկիչը **լեցուն էր շնորհով ու ճշմարտությամբ**: Մի կողմից Նա մարդկանց հանդեպ լի էր բարությանը, որին արժանի չէին, մյուս կողմից՝ Նա բացարձակապես ազնիվ և ուղիղ էր ու երբեք չէր արդարացնում մեղքն ու չարին հավանություն չէր տալիս: Լինել բացարձակ գթառատ և միաժամանակ բացարձակ արդար, սա միայն Աստված կարող է անել:

1:15. Հովհաննես Մկրտիչը **վկայեց**, որ Հիսուսն Աստծո Որդին էր: Նախքան Տերն Իր ծառայությունն սկսելը Հովհաննեսը մարդկանց հայտնեց Նրա մասին: Երբ Հիսուսը դուրս եկավ ծառայության ասպարեզ, Հովհաննեսը այսպիսի խոսքեր ասաց. «Սա է, որի մասին ես ասացի...»: Ինչ վերաբերում է Հիսուսի ծննդյանն ու ծառայությանը, ապա Նա Հովհաննեսից **հետո** եկավ: Նա ծնվել էր Հովհաննեսից վեց ամիս հե-

տո և Իսրայել ժողովրդին էր ներկայացել Հովհաննեսի քարոզելուց ու մկրտել սկսելուց որոշ ժամանակ անց: Բայց Հիսուսը Հովհաննեսից **նախապատիվ եղավ:** Նա մեծ էր, քան Հովհաննեսը, Նա արժանի էր մեծ պատվի միայն այն պարզ պատճառով, որ Նա Հովհաննեսից **առաջ էր:** Նա Աստծո Որդին էր, հավիտյան գոյություն ունեւր:

1:16. Նրանք, ովքեր հավատում են Տեր Հիսուսին, հոգևոր ուժ են ստանում **Նրա լիությունից:** **Նրա լիությունն** այնքան մեծ է, որ Նա կարող է դրանով բավարարել բոլոր երկրների և դարերի քրիստոնյաներին: **«Շնորհ՝ շնորհի փոխարեն»** արտահայտությունը, հավանաբար նշանակում է «շնորհ՝ շնորհի հետևից» կամ «լիովի շնորհ»: Այստեղ **շնորհը** Աստծո գթասրբությունն է, որը Նա հեղում է Իր սիրելի որդիների վրա:

1:17. Հովհաննեսը հակադրում է ՀԿ-ի շրջանը ՆԿ-ի դարաշրջանին: **Մովսեսի ձեռքով տրված Օրենքը** շնորհի արտահայտությունը չէր: Այն մարդկանցից պահանջում էր հնազանդություն և այն խախտելու դեպքում դատապարտում էր մահվան: Այն մարդկանց ցույց էր տալիս, թե որն է ճիշտը, բայց գորություն չէր տալիս այդպես վարվելու: Այն տրվեց, որպեսզի մարդկանց ցույց տա, որ նրանք մեղավորներ են, բայց չկարողացավ փրկել նրանց իրենց մեղքից: **Բայց շնորհը և ճմարտությունը Հիսուս Քրիստոսով եկան:** Նա եկավ ոչ թե աշխարհին դատելու, այլ փրկելու անարժաններին, նրանց, ովքեր չկարողացան իրենք իրենց փրկել, ովքեր Նրա թշնամիներն էին: Սա է **շնորհը՝** Երկնքի լավագույնը երկրի վատագույնի համար:

Ոչ միայն **շնորհը եկավ Հիսուսով,** այլ նաև **ճմարտությունը:** Նա Իր մասին ասաց. «Ես եմ... ճմարտությունը»: Նա բացարձակ ազնիվ ու հավատարիմ էր Իր բոլոր խոսքերում և արարքներում: Նա շնորհ չդրսևորեց **ճմարտության** հաշվին: Նա սիրում էր մեղավորին, բայց չէր սիրում նրա մեղքը: Նա գիտեր, որ մեղքի վարձը մահ է: Հետևաբար Նա Ինքը մեռավ մահվան պատիժը հատուցելով, որպեսզի մեզ ցույց

տա Իր անսահման սերը մեր հոգիները փրկելով և մեզ համար Երկնքում տուն պատրաստելով, որին արժանի չէինք:

1:18. Աստծուն երբեք ոչ ոք չի տեսել: Աստված Հոգի է, հետևաբար Նա անտեսանելի է: Նա մարմին չունի: Թեև Նա ՀԿ-ում մարդկանց երևացել է Հրեշտակի կամ Մարդու տեսքով, բայց դրանք չեն հայտնում, թե Աստված ինչպիսին է: Դրանք ընդամենը ժամանակավոր առիթներ էին, որ Նա ընտրեց Իր մարդկանց հետ խոսելու համար: Միայն Տեր Հիսուս Քրիստոսը՝ Աստծո **Միածին Որդին,**¹ Նա է Աստծո միակ Որդին, և Նրա նման մեկ այլ որդի չկա: Նա միշտ յուրահատուկ մտերմիկ տեղ է զբաղեցնում Հայր Աստծո մոտ: Նույնիսկ այն ժամանակ, երբ Հիսուսն այստեղ՝ երկրի վրա էր, Նա միշտ գտնվում էր **Հոր ծոցում:** Նա Աստծո հետ մեկ էր և Աստծուն հավասար: Օրհնյալ է Նա, Ով ողջ լիությանը մարդկանց ցույց տվեց, թե Ով է Աստված: Երբ մարդիկ Հիսուսին տեսան, նրանք Աստծուն տեսան, նրանք լսեցին Աստծուն խոսելիս: Նրանք զգացին Աստծո սերն ու գուրջը: Մարդկանց հանդեպ Աստծո խորհուրդներն ու Նրա վերաբերմունքն ամբողջությամբ **դրսևորվեցին** Քրիստոսի միջոցով:

II. ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ (1:19-4:54)

Ա. Հովհաննես Մկրտչի վկայությունը (1:19-34)

1:19. Լուրը, որ Մեսիան գալիս է, և իրեն **Հովհաննես** անվանող մարդը ժողովրդին կոչ էր անում ապաշխարության, հասավ **Երուսաղեմ:** **Հրեաները քահանաներից ու ղևտացիներից** կազմված մի խումբ **ուղարկեցին,** որպեսզի պարզաբանեն, թե ով է նա: **Քահանաները** կարևոր ծառայություն էին անում տաճարում, մինչ **ղևտացիների** ծառայությունն ընդհանուր պարտականություններն էին: **«Դու ո՞վ ես,** - հարցրին Հովհաննեսին. - երկար սպասված Մեսիա՞ն ես»:

1:20. Մեկ ուրիշը, երբ նրան Քրիստոս

անվանեին, կարող էր օգտվել այդ առիթից, որպեսզի փառավորվեր: Բայց Հովհաննեսը հավատարիմ վկա էր: Նա վկայեց, որ ինքը **Քրիստոսը (Մեսիան) չէ:**

1:21-22. Հրեաներն ակնկալում էին, որ Քրիստոսի գալուց առաջ նախ Եղիան երկիր կվերադառնա (Մաղ. 4:5): Նրանք այսպես էին մտածում. եթե Հովհաննեսը Մեսիան չէ, ապա հնարավոր է, որ նա **Եղիան է:** Բայց Հովհաննեսը նրանց վստահեցրեց, որ ինքը Եղիան չէ: Երկրորդ Օրինացում (18:15) Մովսեսն ասել էր. «Քո Տեր Աստվածը քո միջից, քո եղբայրներից ինձ նման մի Մարգարե դուրս կբերի քեզ համար. Նրան լսեցեք»: Հրեաներն այս կանխատեսումը հիշելով՝ մտածեցին գուցե Հովհաննեսն է Մովսեսի կողմից նշված **մարգարեն:** Բայց Հովհաննեսը նորից վստահեցրեց, որ դա այդպես չէ: Պատվիրակությունը չէր ցանկանում Երուսաղեմ գնալ առանց որոշակի **պատասխանի,** դրա համար էլ նրա անդամները Հովհաննեսին նորից հարցրին, թե ով է ինքը:

1:23. «**Նա ասաց, «Ես նրա ձայնն եմ, որ անապատում կանչում է...»:**» Ի պատասխան նրանց հարցի՝ Հովհաննեսը մեջբերեց Ես. 40:3-ը, որտեղ գրված է այն մարգարեությունը, թե հայտնվելու է նախակարապետը ու հայտարարելու է Քրիստոսի գալստյան մասին: Այլ խոսքով, Հովհաննեսը հաստատեց, որ ինքը կանխատեսված նախակարապետն է: Նա **ձայնն էր,** իսկ Իսրայելը՝ **անապատը:** Իրենց մեղքերի ու Աստծուց շրջվելու պատճառով մարդիկ անապատի պես չոր ու անպտուղ դարձան: Հովհաննեսն իր մասին պարզ էր խոսում՝ իբրև **ձայն:** Նա իրեն չէր ներկայացնում որպես մեծ մարդ, ում պետք է գովաբանել և հիանալ: Նա **ձայն էր,** որին պետք է ոչ թե տեսնել, այլ լսել: Հովհաննեսը **ձայնն էր,** իսկ Քրիստոսը՝ Բանը: Բանը ձայնի կարիքն ունի, որպեսզի նրա մասին իմանան, ձայնն առանց բանի (խոսքի) ոչ մի նշանակություն չունի: Բանն անսահման ավելի մեծ է, քան ձայնը, սակայն Նրա ձայնը լինելը մեծ առանձնաշնորհում կարող է լինել:

Հովհաննեսը հռչակում էր «**Ուղղեցե՛ք ՏԻՐՈՋ ճանապարհները**» լուրը: Այլ խոսքով, «Մեսիան գալիս է: Ձեր կյանքից հեռացրե՛ք այն բոլոր բաները, որոնք ձեզ արգելում են դիմավորել Նրան: Ապաշխարե՛ք ձեր մեղքերից, որպեսզի Նա կարողանա գալ ու իշխել ձեզ վրա՝ որպես Իսրայելի Թագավոր»:

1:24-25. Փարիսեցիները հրեաների մեջ մի խիստ աղանդ էին, որ հպարտանում էին Օրենքն իմանալու իրենց առաջնակարգ գիտությամբ ու ՀԿ պատվիրանների փոքրիկ մանրամասներն անգամ կատարելու կարողությամբ: Իրականում նրանցից շատերը կեղծավորներ էին, որոնք թաքնվել էին կրոնավորության տակ և մեղավոր կյանք էին վարում: Նրանք ուզում էին իմանալ, թե Հովհաննեսն ինչ իրավունքով է մկրտում, եթե նա իրենց թվարկած իշխանություն ունեցող մարդկանցից մեկը չէր:

1:26-27. «**Ես ջրով եմ մկրտում,**» - ասաց **Հովհաննեսը:** Նա չցանկացավ, որ ինչ-որ մեկը *իր* մասին խորհի որպես կարևոր անձի: Նրա գործը մարդկանց՝ Քրիստոսի գալստյանը պատրաստելն էր: Ամեն անգամ, երբ նրան ունկնդրողներն ապաշխարում էին իրենց մեղքերից, նա ջրով մկրտում էր նրանց որպես նրանց ներքին փոփոխության արտաքին խորհրդանիշ: «**Բայց ձեր մեջ մեկը կա, ում դուք չեք ճանաչում,**» - շարունակեց Հովհաննեսը՝ իհարկե նկատի ունենալով Հիսուսին: Փարիսեցիները չճանաչեցին Նրան՝ որպես երկար սպասված Մեսիայի: Փաստորեն Հովհաննեսը փարիսեցիներին ասաց. «Իմ մասին մի՛ մտածեք որպես մի մեծ մարդու: Տեր Հիսուսն է միայն, որ արժանի է ուշադրության, սակայն իրականում **դուք չգիտեք,** թե ով է Նա»: Նա Հովհաննես Մկրտչից հետո եկավ, բայց հենց Ինքն է արժանի ամեն գովասանքի ու պատվի: Ստրուկի կամ ծառայի պարտականությունն էր համարվում իր տիրոջ կոշիկների կապերն արձակելը: Բայց Հովհաննեսն իրեն **արժանի չէր** համարում Հիսուսին ծառայել, նույնիսկ այդպիսի համեստ, խոնարհ ծառայությամբ:

1:28. Բերթաբարայի կամ Բերթանիա՝ ըստ NKJV-լուսանցքի: Աշխարհագրական ճիշտ տեղը, ըստ այլ աղբյուրների, անհայտ է: Բայց մենք գիտենք, որ այն **Հորդանան** գետի արևելյան ափին էր: Եթե *Բերթանիա* ընթերցումն ընդունենք, այն չի կարող Երուսաղեմի մոտ եղող Բերթանիան լինել:

1:29. Հաջորդ օրը՝ Երուսաղեմից եկած փարիսեցիների հետ զրույցից հետո, **Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ դեպի իրեն էր գալիս:** Այդ պահից ցնցված՝ մեծ հուզումով նա բացականչեց. «**Ահա Աստծո գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը:**» Հրեաների մոտ գառը զոհաբերական կենդանի էր համարվում: Աստված Իր ընտրյալ ժողովրդին պատվիրել էր գառնուկ զոհաբերել և նրա արյունը ցողել: Գառնուկը մահանում էր որպես փոխանորդ, նրա արյունը թափվում էր մեղքերի թողության համար:

Մակայն հինկտակարանյան շրջանում մորթված կենդանիների արյունը մեղքը չէր վերացնում: Այդ գառնուկները խորհրդապատկերներ էին. դրանք խորհրդանշում էին, որ մի օր Աստված ուղարկելու է **Գառին**, Ով իսկապես *կհեռացնի* բոլոր մեղքերը: Երկար տարիներ հավատացյալ հրեաներն սպասում էին այս **Գառան** հայտնությանը: Վերջապես այդ ժամանակը եկավ, և ահա Հովհաննես Մկրտիչը հանդիսավորությամբ հայտարարեց **Աստծո** ճշմարիտ **Գառան** գալստյան մասին:

«Հիսուսը **աշխարհի մեղքը** կվերցնի» ասելով՝ նա նկատի չունեի, որ այդ ձևով ներվելու են բոլոր մարդկանց մեղքերը: Չնայած որ Քրիստոսի մահը բավարար մեծ զին է ողջ **աշխարհի** մեղքերի համար, սակայն միայն այն մեղավորներն են ներում ստանում, ովքեր Տեր Հիսուսին ընդունում են որպես իրենց Փրկիչը:

Ջ. Ս. Ջոնսը նշում է, որ այս համարում շարադրված է քրիստոնեական փրկագրքման բացառիկությունը.

1. Այն գերազանցում է բոլոր մյուս զոհերին իր ԲՆՈՒՅԹՈՎ: Եթե հրեականության մեջ զոհի կենդանի էին ծառայում

անբանավոր գառնուկները, ապա քրիստոնեության մեջ զոհ դարձավ Աստծո Գառը:

2. Այն գերազանցում է բոլոր մյուս զոհերին իր ԱՐԴՅՈՒՆՎՎԵՏՈՒԹՅԱՄԲ: Եթե հուդայականության մեջ զոհերն ամեն տարի հիշեցնում էին մեղքի մասին, ապա քրիստոնեության մեջ Չոհը վերացրեց մեղքերը: «Նա մեկ անգամ ընդմիշտ հայտնվեց Իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար»:

3. Այն գերազանցում է բոլոր մյուս զոհերին իր ազդեցության ՄԱՍՇՏԱԲՆԵՐՈՎ: Եթե հրեական զոհերը միայն մի ժողովրդի արտոնություններն էին, ապա քրիստոնեությունում զոհը նախատեսված է բոլոր ազգերի համար. «... Որ վերցնում է աշխարհի մեղքը»:²

1:30-31. Հովհաննեսը երբեք չէր հոգնում մարդկանց հիշեցնելուց, որ ինքն ընդամենը պատրաստում է Նրա ճանապարհը, Ով իրենից մեծ է: Հիսուսը մեծ էր, քան Հովհաննեսը ճիշտ այնպես, ինչպես Աստված է մեծ մարդուց: Հովհաննեսը Հիսուսից մի քանի ամիս առաջ էր ծնվել, բայց Հիսուսը հավիտյան գոյություն ուներ: Երբ Հովհաննեսն ասաց. «**Ես Նրան չգիտեի**», պարտադիր չէ, որ նա նկատի ունենար, թե երբեք նախկինում Հիսուսին չէր տեսել:

Հովհաննեսն ու Հիսուսը զարմիկներ էին, և լիովին հավանական է, որ լավ ծանոթ էին իրար: Բայց Հովհաննեսն իր զարմիկի մեջ չէր ճանաչել Մեսիային մինչև Նրա մկրտության պահը: Հովհաննեսի առաքելությունը Տիրոջ համար ճանապարհ պատրաստելն էր, իսկ Նրա գալուց հետո Նրան **Իսրայել** ժողովրդին ցույց տալն էր: Ճիշտ այդ պատճառով էր Հովհաննեսը մարդկանց **ջրով** մկրտում, որպեսզի նրանց պատրաստի Քրիստոսի գալստյանը, ոչ թե որ աշակերտներ գրավի:

1:32. Այստեղ խոսքն այն պահի մասին է, երբ Հովհաննեսը Հիսուսին մկրտեց Հորդանանում: Այն պահին, երբ Տերը ջրից դուրս եկավ, Աստծո **Հոգին** իջավ **որպես աղավնի** և **Նրա վրա մնաց** (հմմտ. Մատթ. 3:16):

Այնուհետև հեղինակը շարունակում է բացատրել այդ փաստի նշանակությունը:

1:33. Աստված Հովհաննեսին հայտնել էր, որ Մեսիան գալու էր, և երբ Նա գար, **Հոգին** իջնելու էր Նրա վրա ու մնալու էր Նրա վրա: Հետևաբար երբ սա կատարվեց Հիսուսի հետ, Հովհաննեսը հասկացավ, որ իր առջև Նա է, Ով պետք է մկրտի **Սուրբ Հոգով: Սուրբ Հոգին** Անձնավորություն է, աստվածության երեք Անձերից մեկը: Նա հավասար է Հայր Աստծուն և Որդի Աստծուն:

Հովհաննեսը **ջրով էր մկրտում**, իսկ Հիսուսը պետք է **Սուրբ Հոգով** մկրտությունը տեղի ունեցավ Պենտեկոստի օրը (Գործք 1:5, 2:4, 38): Այդ ժամանակ **Սուրբ Հոգին** երկնքից իջավ, որպեսզի բնակվի յուրաքանչյուր հավատացյալի մեջ, ինչպես նաև նրան դարձնի Եկեղեցու, այսինքն՝ Քրիստոսի մարմնի անդամ (1 Կոր. 12:13):

1:34. Հիմնվելով Հիսուսի մկրտության ժամանակ իր տեսածների վրա՝ Հովհաննեսը վստահաբար **վկայեց**, որ Հիսուս Նագովրեցին **Աստծո Որդին է**, Ում աշխարհ գալու մասին նախապես ասվել էր: Երբ Հովհաննեսն ասաց, որ Քրիստոսը **Աստծո Որդին է**, նկատի ուներ, որ Նա Որդի Աստվածն է:

Բ. Անդրեասի, Հովհաննեսի ու Պետրոսի կանչը (1:35-42)

1:35-36. Այստեղ նշված հաջորդ օրը **երրորդն է: Հովհաննեսն** իր **երկու աշակերտների** հետ էր: Այս մարդիկ լսել էին Հովհաննեսի քարոզը և հավատացել իր ասածներին, բայց դեռ չէին հանդիպել Տեր Հիսուսի հետ: Հիմա Հովհաննեսը բոլորին վկայեց Տիրոջ մասին: Դրանից մի օր առաջ նա խոսում էր Նրա Անձի մասին (Աստծո Գառը) և Նրա առաքելության մասին (Մեկը, Ով Իր վրա կվերցնի աշխարհի մեղքը): Հիմա նա պարզապես ուշադրություն է հրավիրում Նրա Անձի վրա: Նրա պատգամը պարզ ու հակիրճ էր. նա մեծարում էր ոչ թե իրեն, այլ Փրկչին:

1:37. Իր ճշմարտացի քարոզի պատճառով Հովհաննեսը կորցրեց **երկու աշակերտներին**, բայց նա գոհ էր՝ տեսնելով, որ նրանք հետևում են **Հիսուսին**: Մեզ համար այստեղ հետևյալ դասը կա. մենք ավելի շատ պետք է անհանգստանանք դրանով, որ մեր բարեկամները հետևեն Տիրոջը, ոչ թե մեր մասին բարձր կարծիք ունենան:

1:38. Փրկիչը միշտ հետաքրքրված է նրանցով, ովքեր հետևում են Իրեն: Այստեղ երկու աշակերտներին Իր հետաքրքրությունը ցույց տվեց՝ հարցնելով. **«Ի՞նչ եք ուզում»:** Նա գիտեր հարցի պատասխանը. Նա ամեն բան գիտեր, բայց ուզում էր, որ նրանք խոսքերով արտահայտեն իրենց ցանկությունը: Նրանց պատասխանը. **«Ռաբբի՛, որտեղ ե՞ս մնում»**, ցույց տվեց, որ նրանք ուզում էին Տիրոջ հետ լինել ու Նրան ավելի լավ ճանաչել: Նրանց չէր բավարարում Նրա հետ պարզ հանդիպումը: Նրանք ձգտում էին Նրա հետ հաղորդակցություն ունենալ: **«Ռաբբի»** հրեական բառ է, նշանակում է **«ուսուցիչ»** (բառացիորեն «ինձնից մեծ մեկը»):

1:39. **«Նա ասաց նրանց. «Եկե՛ք և տեսե՛ք»»:** Փրկչին ճանաչելու ոչ մի անկեղծ ցանկություն անպատասխան չի մնում: Հիսուսը նրանց հրավիրեց Իր կացարանը, որտեղ մնում էր այդ ժամանակ (հավանաբար ժամանակակից տների հետ համեմատած՝ դա շատ աղքատիկ կացարան էր):

«Եկան ու տեսան, թե որտեղ էր մնում, և այդ օրը Նրա մոտ մնացին, որովհետև մոտ տասներորդ ժամն էր»: Երբեք այս մարդիկ չէին արժանացել նման պատվի: Նրանք այդ գիշեր մնացին հենց այն տանը, որտեղ տիեզերքի Արարիչն էր: Նրանք հրեա ժողովրդի առաջին ներկայացուցիչներից էին, ովքեր ճանաչեցին Մեսիային:

Տասներորդ ժամն էր՝ առավոտյան ժամը տասը կամ կեսօրից հետո ժամը չորսը: Սովորաբար նախապատվությունը տալիս են ավելի վաղ ժամին (հռոմեական):

1:40. **Երկու** աշակերտներից **մեկն Անդրեասն էր: Անդրեասն** այդքան շատ հայտնի չէ այսօր, ինչպես նրա **եղբայր Սի-**

մոն Պետրոսը, բայց հետաքրքիր է նկատել, որ առաջինը նա հանդիպեց Հիսուսին:

Մյուսի անունը մեզ հայտնի չէ, բայց Աստվածաշնչի բոլոր ուսումնասիրողները ենթադրում են, որ Հովհաննեսն է այս Ավետարանի հեղինակը: Նրանք սա պատճառաբանում են Հովհաննեսի բնավորության համեստությամբ ու խոնարհությամբ, որի հետևանքով Հովհաննեսն իր անունը չի գրել:

1:41. Երբ մեկը գտնում է Հիսուսին, սովորաբար ցանկանում է, որ իր ազգականներն էլ հանդիպեն Նրա հետ: Փրկությունը չափազանց լավ բան է և միայն մեր մեջ պահել հնարավոր չէ: Դրա համար էլ Անդրեասը, լուրով ոգևորված, արագորեն գնաց իր Միմոն եղբոր մոտ. **«Մենք Մեսիային գտանք»:** Ինչ ցնցող հայտարարություն: Նվազագույնը չորս հազար տարի մարդիկ սպասել են խոստացված Զրիստոսին՝ Աստծո Օծյալին: Եվ ահա **Միմոնը** հարազատ եղբոր շուրթերից մի զարմանալի լուր է լսում, թե Մեսիան իրենց կողքին է: Նրանք իսկապես ապրում էին այն ժամանակահատվածում, երբ պատմությունն էր կերտվում: Անդրեասի լուրը որքան պարզ էր: Ընդամենը երեք բառ՝ **«Մենք Մեսիային գտանք»**, բայց Աստված դրանք օգտագործեց Պետրոսին նվաճելու համար: Այս համարը մեզ սովորեցնում է, որ պարտադիր չէ մեծ քարոզիչ կամ խելացի հռետոր լինել: Մենք պետք է մարդկանց ասենք Տեր Հիսուսի մասին պարզ բառերով, իսկ Աստված կհոգա մնացածը:

1:42. Անդրեասն իր եղբորը **բերեց** ճիշտ տեղ և ճիշտ Անձի մոտ: Նա չբերեց նրան եկեղեցի, դավանանքի կամ հոգևոր սպասավորի մոտ: Նա **բերեց նրան Հիսուսի մոտ:** Ինչ կարևոր արարք է սա: Անդրեասի հետաքրքրության շնորհիվ Միմոնը հետագայում դարձավ մեծ «մարդկանց ձրկնորս» և Տիրոջ առաքյալների առաջնորդներից մեկը: Միմոնն ավելի հայտնի է, քան նրա եղբայրը, բայց անկասկած, Անդրեասը Պետրոսի հետ միասին կիսում է ընդհանուր վարձատրությունը, քանի որ հենց ինքը բերեց Պետրոսին Հիսուսի մոտ: Տերը

գիտեր Միմոնի անունը, թեև ոչ մեկը Միմոնին չէր ներկայացրել Նրան: Նա նաև գիտեր, որ Միմոնն անկայուն բնավորություն ունի: Եվ վերջապես, Նա գիտեր, որ Միմոնի բնավորությունն այնքան է փոխվելու, որ նա դառնայու է ժայռի պես ամուր: Հիսուսն ինչպե՞ս գիտեր այս բոլորը: Պատասխանը մեկն է. Նա Աստված էր և Աստված է:

Միմոնի անունը փոխվեց. նա կոչվեց **Կեփաս**, որը արամեերեն նշանակում է **«քար»**, և նա իսկապես դարձավ ամուր բնավորության տեր մարդ, հատկապես Տիրոջ համբարձումից ու Մուրբ Հոգու գալստից հետո:

Գ. Փիլիպպոսի և Նաթանայելի կանչը (1:43-51)

1:43. Սա արդեն չորրորդ **օրն է**, որի մասին ընթերցում ենք առաջին գլխում: Բոշը ծանուցում է, որ առաջին օրը մենք տեսնում ենք *միայն Հովհաննեսին* (հ. 15-28), երկրորդ օրը՝ *Հովհաննեսին ու Հիսուսին* (հ. 29-34), երրորդ օրը մենք տեսնում ենք *Հիսուսին և Հովհաննեսին* (35-42), չորրորդ օրը տեսնում ենք *միայն Հիսուսին* (43-51): Տերը քայլում էր դեպի հյուսիս՝ **Գալիլիայի** շրջանը: Նա այնտեղ **գտավ Փիլիպպոսին** ու հրավիրեց, որ Իրեն հետևի. **«Ի՛նձ հետևիր»:** Սրանք մեծ խոսքեր են, քանի որ Հիսուսն ասաց, և մեծ են մատուցվող արտոնությունների շնորհիվ: Փրկիչը հիմա էլ է կրկնում այս պարզ, միևնույն ժամանակ վեհ հրավերը երկրի բոլոր մարդկանց համար:

1:44. Բեթսայիդան Գալիլիայի ծովափնյա **քաղաքներից** էր: Աշխարհի վրա շատ քիչ քաղաքներ են երբևէ արժանացել այդպիսի պատվի: Տերն այնտեղ է կատարել Իր գորավոր հրաշքներից մի քանիսը (Ղուկաս 10:13): Սա **Փիլիպպոսի, Անդրեասի ու Պետրոսի** հարազատ քաղաքն էր: Սակայն այդ քաղաքը մերժեց Փրկչին և արդյունքում այնպես կործանվեց, որ հիմա դրա ճշգրիտ տեղն անգամ չենք կարող գտնել:

1:45. Փիլիպպոսն ուզում էր ինչ-որ մեկի հետ էլ կիսվել իր ձեռք բերած ուրախությամբ, ուստի գնաց ու գտավ **Նաթանայելին:** Նորադարձները հոգիների ամենալավ

շահողներ են: Նրա պատգամը պարզ ու նպատակային էր: Նա Նաթանայելին հաղորդեց, որ **գտել է Մովսեսի ու Մարգարեների** կողմից խոստացված Մեսիային. դա **Հիսուսն է Նազարեթից**: Փաստորեն նրա պատգամն այդքան էլ ճշգրիտ չէր: Նա Հիսուսին կոչեց **Հովսեփի որդի**: Հիսուսը ծնվել էր Մարիամ կույսից և մարդկային հայր չուներ: **Հովսեփն** ընդունեց Հիսուսին և այդ ձևով դարձավ նրա հայրացուն, բայց ոչ Նրա իսկական հայրը:

Ջեյմս Ս. Ստյուարտը մեկնաբանում է.

«Քրիստոսը երբեք սկզբում անվերապահ հավատ չէր պահանջում: Նա երբեք սովորություն չուներ մարդկանց ետ ուղարկել նրանց անկատար հավատի պատճառով: Այսօր էլ այդպես չի անում: Նա Իր եղբայրների կողքին է: Քրիստոսը նրանց առաջարկում է միանալ Իրեն ցանկացած փուլում: Նա ընդունում է նրանց այն հավատով, որ նրանք կարող են առաջարկել Քրիստոսին: Նա հասկանում է, որ դա սկիզբն է, և այստեղից էլ Իր բարեկամներին առաջ է տանում, ինչպես առաջին խմբին աստիճանաբար, քայլ առ քայլ առաջնորդեց դեպի Նրա Ով լինելու նվիրական խորհրդին և աշակերտության մեծ փառքին»:³

1:46. Նաթանայելը դժվարությունների առջև էր կանգնած: **Նազարեթն** արհամարիված քաղաք էր Գալիլիայում: Նաթանայելին անհնարին էր թվում, որ Մեսիան այդպիսի աղքատ տեղում է ապրում: Ուստի նա արտահայտվեց իրեն անհանգստացնող հարցի մասին: **Փիլիպպոսը** չվիճեց: Նա զգաց, որ առարկության համար լավագույն պատասխանը մարդկանց անմիջականորեն Տեր Հիսուսի հետ ծանոթացնելն է. արժեքավոր դաս բոլոր նրանց համար, ովքեր ուզում են Քրիստոսի համար հոգիների շահել: Պետք չէ վիճել: Պետք չէ երկար վեճերի բռնվել: Պետք է պարզապես մարդկանց առաջարկել **եկ և տես**:

1:47. Այս համարը հաստատում է, որ **Հիսուսը** գիտեր ամեն ինչ: **Նաթանայելի** հետ առանց որևէ նախնական ծանոթություն ունենալու՝ Նա հայտարարում է, որ **Նաթա-**

նայելը մի ճշմարիտ իսրայելացի է, որի մեջ նենգություն չկա: Հակոբը չուներ այն համբավը, որը հարիր է մաքուր ձեռքեր ունեցող գործարարին, բայց Նաթանայելը մի իսրայելացի էր, որի մեջ «Հակոբ» չկար:

1:48. Նաթանայելը ակնհայտորեն տեսավ, որ լիովին անձանոթ մեկն իր հետ այնպես է խոսում, կարծես իրեն ճանաչում է: Հավանաբար նա մարդկանց տեսադաշտից դուրս էր, երբ նստած էր **թզնուտակ**: Անտարակույս, ծառի կախված ճյուղերն ու շրջապատող կանաչությունը նրան թաքցրել էին մարդկանց աչքերից: Բայց Հիսուսը, չնայած հուսալի թաքստոցին, **տեսավ** նրան:

1:49. Գուցե մարդկանց տեսադաշտից թաքնված Նաթանայելին տեսնելու Տեր Հիսուսի գորությունն էր, որ համոզեց **Նաթանայելին**, կամ գուցե այս գիտելիքը գերբնական ճանապարհով նրան տրվեց: Բոլոր դեպքերում, նա արդեն գիտեր, որ Հիսուսն **Աստծո Որդին է և Իսրայելի Թագավորը**:

1:50. Տերը երկու ապացույց տվեց Նաթանայելին այն մասին, որ Ինքը Մեսիան է: Նա նկարագրեց նրա բնավորությունը և ասաց, որ տեսել է իրեն այն ժամանակ, երբ ոչ ոք չէր կարող նրան տեսնել: Այս երկու ապացույցները բավարար էին Նաթանայելի համար, որ նա հավատար: Բայց այժմ Տեր Հիսուսը խոստացավ, որ նա **ավելի շատ** ապացույցներ **կտեսնի**, քան **սրանք են**:

1:51. Ամեն անգամ, երբ Տեր Հիսուսն Իր խոսքն սկսում էր «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ**» (տառացիորեն՝ «Ամեն, ամեն»)՝ արտահայտությամբ, Նա պատրաստվում էր մի կարևոր բան ասելու: Այստեղ Նա Նաթանայելին տալիս է պատկերը, թե երբ Ինքը կվերադառնա և կիշխի ողջ երկրի վրա: Այն ժամանակ աշխարհն իմանալու է, որ արհամարիված Նազարեթում ապրած հյուսնի Որդին իսկապես Աստծո Որդին է և Իսրայելի Թագավորը: Այդ օրը **երկինքը կբացվի**: Աստծո բարեհաճությունը կհանգչի Թագավորի վրա, որովհետև Նա է թագավորում, և Երուսաղեմն էլ Նրա թագավորության մայրաքաղաքն է:

Հավանաբար Նաթանայելը խորհրդա-
ծում էր Հակոբի սանդուղքի մասին պատ-
մության վրա (Ծնն. 28:12): Այդ սանդուղքը,
իր վրայով բարձրացող և իջնող հրեշտակ-
ներով հանդերձ, խորհրդանշում էր Տեր Հի-
սուս Քրիստոսին, Ով երկինք տանող միակ
ճանապարհն է: **Աստծո հրեշտակները** պի-
տի բարձրանան ու իջնեն **Մարդու Որդու**
վրայով: Հրեշտակներն Աստծո սպասա-
վորներն են, որոնք, կրակի բոցի պես շարժ-
վելով, կատարում են Աստծո հանձնարա-
րությունը: Երբ Հիսուսը թագավորի, հրեշ-
տակները երկնքից երկիր են իջնելու Աստ-
ծո կամքը կատարելու համար:

Հիսուսը Նաթանայելին ասաց, որ նա տե-
սել է Նրա մեսիականության դրսևորման
չնչին մասը: Քրիստոսի գալիք Թագավորու-
թյան մեջ նա կտեսնի Տեր Հիսուսին՝ որպես
Աստծո օծյալ Որդի՝ ամբողջությամբ բա-
ցահայտված: Այդ ժամանակ ողջ մարդկու-
թյունը կիմանա, որ հնարավոր է, որ Նա-
գարեթից էլ մի լավ Անձ դուրս գա:

**Գ. Առաջին հրաշքը. ջուրը փոխվում է
գինու (2:1-11)**

2:1. «Եվ երրորդ օրը». անկասկած, սա
վերաբերում է Տիրոջ՝ **Գալիլիայում** գըտ-
նըվելու **երրորդ օրվան:** 1:43-ում կարդա-
ցինք, որ Փրկիչը եկավ այս տարածք: Մենք
ճշգրիտ չգիտենք, թե **Կանան** որտեղ էր
գտնվում, բայց այս գլխի 12-րդ համարից
գիտենք, որ այն գտնվում էր Կափառնա-
յումից ոչ շատ հեռու և հաստատված էր
բարձունքի վրա:

Այդ օրը **«հարսանիք կար Գալիլիայի
Կանա քաղաքում և Հիսուսի մայրն այն-
տեղ էր»:** Հետաքրքիր է ուշադրություն
դարձնել հետևյալին. Մարիամի մասին խո-
սում են որպես **Հիսուսի մոր** մասին: Փըր-
կիչը հայտնի էր ոչ թե որպես կույս Մա-
րիամի Որդի, այլ Մարիամը հայտնի էր,
քանի որ մեր Տիրոջ մայրն է եղել: Մուրբ
Գիրքը միշտ յուրահատուկ տեղ է հատ-
կացնում Քրիստոսին, ոչ թե Մարիամին:

**2:2. «Հիսուսն էլ հրավիրվեց այդ հար-
սանիքին, և Իր աշակերտներն էլ»:** Որ-
քան խելացի որոշում էր հարսանիքի կազ-

մակերպիչների կողմից Քրիստոսին հրա-
վիրելը: Այս միանշանակ իմաստուն որո-
շումն իրական է և հիմա, երբ մարդիկ հրա-
վիրում են Տիրոջը իրենց հարսանիքին: Որ-
պեսզի այսպես վարվեն, փեսան ու հարսնա-
ցուն պետք է Տեր Հիսուսին հավատացող
ճշմարիտ հավատացյալներ լինեն: Նրանք
նաև պետք է իրենց կյանքը հանձնեն Փըրկ-
չին և գան այն համոզմանը, որ նրանց տու-
նը պիտի լինի այն տեղը, որտեղ Նա սիրում
է լինել:

2:3. Հարսանիքում գինին պակասեց: Երբ
Հիսուսի մայրը հասկացավ, թե ինչ կա-
տարվեց, այդ մասին ասաց իր Որդուն: Նա
գիտեր, որ Որդին կարող է հրաշք կատա-
րել ու գինով ապահովել, և հնարավոր է,
որ մայրը ցանկանում էր, որպեսզի Հիսուսն
Իրեն հայտնի հավաքված հյուրերին որպես
Աստծո Որդի: Մուրբ Գրքում գինին հաճախ
ուրախության խորհրդանիշ է: Երբ Մա-
րիամն ասաց. **«Մրանք գինի չունեն»**, նա
տվեց չփրկված տղամարդկանց ու կանանց
ճիշտ նկարագրությունը: Անհավատը զըրկ-
ված է իսկական և հարատև ուրախությու-
նից:

2:4. Տիրոջ՝ Իր մորը տված պատասխանը
սառն ու զուսպ է թվում: Բայց սա այնքան էլ
ուժեղ առարկություն չէ, որքան մեզ թվում է:
Այստեղ օգտագործված **«կին»** բառը հար-
գալից է և համապատասխանում է մեր
«տիկին», «տիրուհի» բառերին: Իսկ **«Ի՞նչ
ունեն Ես քեզ հետ»** հարցը տալով՝ Տերը
հասկացնել էր տալիս, որ Իր աստվածային
հանձնարարության կատարման համար
հնազանդվում է ոչ թե Իր մոր խորհուրդ-
ներին, այլ գործում է ամբողջությամբ՝ հնա-
զանդվելով Իր Երկնավոր Հոր կամքին: Մա-
րիամն ուզում էր Հիսուսին փառքի մեջ տես-
նել, բայց Նա ստիպված էր նրան հիշեցնե-
լու, որ դրա համար **ժամանակը դեռ չէր
հասել:** Նախքան որպես հաղթանակած
Քրիստոս աշխարհին հայտնվելը Նա պետք
է սկզբում բարձրանար զոհաստեղանի վրա,
որը և արեց Գողգոթայի խաչի վրա:

Վիլյամսը հետևյալն է ընդգծում.

«Ի՞նչ ունեն Ես քեզ հետ» արտահայ-

տուրությունն Աստվածաշնչում մի քանի անգամ է կրկնվում: Դա նշանակում է. «Մեր մեջ ընդհանուր ի՞նչ կա»: Պատասխանը. «Ոչինչ»: Այս խոսքերը Դավիթը երկու անգամ է օգտագործում՝ դիմելով իր զարմիկներին՝ Ծարուհեայի որդիներին: Հոգևոր կյանքում նրանց միջև բացարձակ ոչ մի ընդհանուր բան չկար: Եղիսեն այս արտահայտությունն է օգտագործում (4 Թագ. 3:13), որպեսզի արտահայտի, թե որքան խորն է իր և Աքաբի որդի՝ Հերոբովամի միջև եղած բաժանումը: Դևերն օգտագործում են այս արտահայտությունը երեք անգամ՝ ցույց տալով, որ սատանան ոչ մի ընդհանուր բան չունի Զրիստոսի հետ: Եվ վերջապես, Տերն օգտագործեց այս խոսքերը՝ դիմելով Մարիամին, որպեսզի ցույց տա, թե ինչ անանցանելի անդունդ կա Իր անսահման աստվածության և Մարիամի մեղանչական էության միջև, և որ միայն մի Ձայն է Իր համար հեղինակավոր»:⁵

2:5 Մարիամը հասկացավ Նրա խոսքերի նշանակությունը, ուստի պատվիրեց, որ ծառաներն անեն այն, **ինչ** Հիսուսն ասի: Նրա խոսքերը կարևոր են մեզանից յուրաքանչյուրի համար: Ուշադրություն դարձրեք. Մարիամը մարդկանց չհրամայեց *իր* կարգադրությունները կատարել, ոչ էլ ուրիշ մեկի: Նա ցույց տվեց Հիսուսին և ծառաներին պատվիրեց, որ միայն Նա է, Ում պետք է հնազանդվել: Տեր Հիսուսի պատվերները տրված են մեզ ՆԿ-ի էջերի վրա: Կարդալով այս անգին Գիրքը՝ մենք պետք է հիշենք Մարիամի գրի առնված վերջին խոսքերը. «**Ինչ որ ձեզ ասի, արե՛ք**»:

2:6. Այնտեղ, որտեղ հարսանիքն էր լինում, **քարե վեց ջրի կարասներ կային**, դրանք ջուր ամբարելու համար էին, որոնցից ամեն մեկը յոթանասուն կամ հարյուր լիտր ջուր էր **պարունակում**: Այս ջուրը հրեաները ծիսական լվացումների համար էին օգտագործում: Օրինակ՝ եթե հրեան մեռած մարմնի էր դիպչել, անմաքուր էր համարվում այնքան ժամանակ, մինչև որ չկատարեր լվացման արարողակարգը:

2:7. **Հիսուսը** պատվիրեց **կարասները ջրով լցնել**: Ծառաներն անմիջապես կա-

տարեցին պատվիրանը: Հրաշք կատարելու համար Տերն օգտագործում է հասանելի միջոցներ: Նա կարգադրեց, որ մարդիկ **ամանները ջրով լցնեն**, իսկ հետո արեց այն, ինչ ոչ մեկը չի կարող անել. ջուրը գինու վերածեց: Հենց ծառաներն էին ամանները ջրով **լցնողները**, ոչ թե աշակերտները: Այս ձևով Տերը կանխեց խաբեության մեջ մեղադրվելու ցանկացած հնարավորություն: Կարասները **բերնեբերան** ջրով լրցվեցին, ուստի ոչ ոք չէր կարող ասել, որ ջրի մեջ գինի են ավելացրել:

2:8. Հրաշքը կատարվեց: Տերը հրամայեց ծառաներին **վերցնել** կարասներից և **տանել սեղանապետին**: Հստակ է, որ հրաշքն ակնթարթորեն կատարվեց: Ջուրը գինու վերածվեց ոչ թե աստիճանաբար, այլ լիտրվայրկյանի կամ դրան մոտ ժամանակահատվածի ընթացքում: Ինչ-որ մեկը սա արտահայտել է բանաստեղծական ձևով. «Անգիտակից ջուրը, իր Արարչին տեսնելով, կարմրեց»:

2:9. **Սեղանապետը** պատասխանատվություն էր կրում սեղանների վրա ամեն ինչ բավարար քանակությամբ լինելու համար: Համոտեսելով գինին՝ նա հասկացավ, որ անսովոր բան է կատարվել: **Նա չգիտեր**, որտեղից են բերել **գինին**, բայց հասկացավ, որ դա բարձրորակ գին է, ուստի անմիջապես **կանչեց փեսային**:

Այսօր քրիստոնյաներն ինչպե՞ս պետք է վերաբերվեն գինու հետ: Երբեմն խորհուրդ են տալիս գինին բժշկական նպատակներով օգտագործել, և սա լիովին համընկնում է ՆԿ-ի ուսուցման հետ (1 Տիմ. 5:23): Ինչ վերաբերում է սեղանի վրա գինի դնելուն, ապա քրիստոնյաները պետք է շրջահայաց գործեն բոլոր իրավիճակներում և բոլոր մշակույթներում՝ նախ փնտրելով Տիրոջ փառքը, ոչ թե իրենց եսասիրական ցանկությունների բավարարությունը: Երբեք չմերժելով Աստծո բարի պարգևները, հավատացյալները պետք է հիշեն հարբեցողության դեմ (Հռ. 13:13, Գաղ. 5:21, Եփ. 5:18, 1 Պետ. 4:3) և առհասարակ չափավորության բացակայության դեմ (1 Կոր. 6:12) ուղղված սուրբգրային նախազուշացումները: Վեր-

ջապես, սրբերը պետք է միշտ մտածեն իրենց արարքների մասին, որպեսզի ուրիշների գայթակղություն պատճառ չդառնան (Հռ. 14:21):

2:10. Մեղանապետն ուշադրություն է հրավիրում Տեր Հիսուսի գործողությունների տարբերվող յուրահատկության վրա, որը նման չէր մարդկանց սովորական վարվելակերպին: Հարսանիքներում սովորաբար ընդունված է ամենալավ **գինին** մատուցել սկզբում, երբ մարդիկ լավագույնս կարող են գնահատել համը և ըմբռնել դրա տարատեսակները: Ավելի ուշ՝ ուտել-խամելուց հետո, նրանք չեն կարող խմիչքի որակի մասին այդպիսի լավ գնահատական տալ: Այս յուրահատուկ հարսանիքում ամենալավ գինին մատուցվեց վերջում: Մեզ համար այստեղ պահված հոգևոր իմաստ կա: Սովորաբար աշխարհը մարդկանց ամենալավ բաներն առաջարկում է սկզբում: Ամենագայթակղիչ առաջարկներն ահում են երիտասարդներին: Իսկ հետո, երբ կյանքը վատնվի պարապ հաճույքներում, աշխարհը տարիքով մարդկանց միայն կրճտներ կարող է առաջարկել: Քրիստոնեական կյանքը լիովին հակառակն է: Այն միշտ կատարելագործվում է: Քրիստոսն ամենալավ գինին պահում է վերջում: Ուրախությունը շարունակվում է մինչև վերջ:

Սուրբ Գրքի այս տեքստն անմիջականորեն վերաբերում է Իսրայել ժողովրդին: Այդ ժամանակ հրեաները գրկված էին ճշմարիտ ուրախությունից: Մարդիկ պահպանում էին միօրինակ արարողակարգերն ու ծեսերը. նրանց կյանքը ձանձրալի ու միապաղաղ ընթացք ուներ: Նրանք օտար էին աստվածային ուրախությանը: Տեր Հիսուսը նրանց փնտրեց, որպեսզի սովորեցնի Իրեն հավատալ: Հիսուսը նրանց տաղտուկ գոյությունը վերափոխեց առատ ուրախության: Քրիստոսի մեջ հրեական ծեսերի ու արարողակարգերի «ջուրը» կարող է վերածվել ուրախ իրականության գինու:

2:11. Այն հաստատումը, թե «Սա հրաշքների սկիզբն էր», բացառում է մեր Տիրոջը վերագրվող հրաշքները, որոնք իբրև Նա կատարել է մանկության տարիներին:

Դրանք կարելի է գտնել այնպիսի կեղծ ավետարաններում, ինչպիսին է «Ավետարան ըստ Պետրոսի»: Դրանք մեր Տիրոջն են վերագրում հրաշքներ, որ իբրև կատարվել են Նրա երեխայության ժամանակ: Ըստ էության դրանք ոչնչով չեն տարբերվում աստվածահայեցողությունից: Նման բան կանխատեսելով՝ Սուրբ Հոգին գաղտնի է պահել մեր Տիրոջ կյանքի այդ փուլն ու Նրա համբավը՝ այս փոքրիկ գրառումն անելով:

Չուրը գինու վերածելը նշան էր, այսինքն՝ հրաշք, որում որոշակի դաս կա: Սա գերմարդկային գործողություն էր հոգևոր նշանակությամբ: Հիսուսը հրաշքներ էր կատարում, որպեսզի ցույց տա, որ Ինքն Աստծո կողմից ուղարկված ճշմարիտ Մեսիան է: Այս նշանները ներկայացնելով՝ Նա **հայտնում էր Իր փառքը**: Նա մարդկանց վկայեց, որ Ինքը մարմնով հայտնված իրական Աստվածն է: **Իր աշակերտները հավատացին Նրան**: Իհարկե, նրանք ավելի շուտ էին Նրան հավատացել, բայց հիմա նրանց հավատն ամրապնդվեց. նրանք սկսեցին լիովին վստահել Նրան:

Սինդիյան Չոնսն ընդգծում է.

«Մովսեսի առաջին հրաշքը ջուրը արյան վերածելն էր. դրա մեջ կործանարար խորը տարր կար: Բայց Հիսուսի առաջին հրաշքը ջուրը գինու վերածելն էր. այստեղ հանգստացնող, մխիթարող տարր կար»:⁶

Ե. Աստծո Որդին Մաքրում է Իր Հոր տունը (2:12-17)

2:12. Այժմ Փրկիչը թողնում է Կանան և **Ինքը, Իր մայրը, Իր եղբայրներն ու Իր աշակերտները իջնում են Կափառնայում**: Նրանք մնացին Կափառնայում միայն **մի քանի օր**: Ծուտով Տերը ելավ Երուսաղեմ:

2:13. Այս համարներում մեզ տրված է Տիրոջ առաջին վկայությունը **Երուսաղեմի** մասին: Նրա ծառայության այս փուլը շարունակվում է մինչև 3-րդ գլխի 21 համարը: Նա Իր ծառայությունն սկսեց ու ավարտեց տաճարի մաքրությամբ **հրեական Զատկի** նախօրեին (հմմտ. Մատթ. 21:12-

13, Մարկ. 11:15-18, Ղուկ. 19:45-46): Հրեական Չատիկը տոնվում էր ամեն տարի՝ հիշատակելով Իսրայելի որդիների՝ Եգիպտոսի գերությունից ազատագրումը. նրանք, անցնելով Կարմիր ծովով, եկան անապատ, իսկ հետո մտան ավետյաց երկիր: Հրեական Չատիկ առաջին տոնակատարությունն արձանագրված է Ելից գրքի 12-րդ գլխում: Որպես նվիրված հրեա՝ Տեր Հիսուսը **եղավ Երուսաղեմ՝** տոնելու հրեական օրացույցի այս կարևոր տոնը:

2:14. Տաճար գալով՝ Նա տեսավ, որ այն շուկայի էր վերածվել: Վաճառում էին **արջառ, ոչխար, աղավնի**, իսկ **լումայափոխները**, սեղանների շուրջ նստած, իրենց գործով էին զբաղվում: Չոհարերության համար կենդանիներ ու թռչուններ էին վաճառում պաշտամունքի համար Երուսաղեմ եկած մարդկանց: Լումայափոխները փոխանակում էին այլ երկրներից եկած այցելուների տարադրամները՝ երուսաղեմականի, որ ուխտավորներն ընծայում էին տաճարին: Հայտնի է, որ հաճախ այդ լումայափոխներն օգտվում էին ապօրենի արտոնություններից և հեռու երկրներից եկածների դրամը բարձրացված արժեքով էին փոխանակում:

2:15. Հիսուսի պատրաստած **խարազանը** հավանաբար **պարանից հյուսված** մի փոքրիկ մտրակ էր: Գրված չէ, թե Նա դա օգտագործել է ներկաներից որևէ մեկի վրա: Ըստ ամենայնի, Իր ձեռքում պահած խարազանը պարզապես իշխանության խորհրդանիշ էր: Այն թափահարելով՝ Նա **տաճարից դուրս էր հանում** առևտրականներին ու **շուռ տալիս** լումայափոխների **սեղանները**:

2:16. Օրենքը թույլ էր տալիս աղքատներին մի զույգ աղավնի գոհարելու, քանի որ ավելի թանկարժեք կենդանիները նրանց հասանելի չէին: **Աղավնի ծախողներին** Տերը հրամայեց **վերցնել դրանք այդտեղից**: Նրանք իրավունք չունեին Իր **Հոր տունը առևտրի տուն շինելու**: Բոլոր դարերում էլ Աստված Իր ժողովրդին զգուշացրել է, որ չի կարելի կրոնական ծառայությունը հարստանալու միջոցի վերածել: Հիսուսի

գործողություններում ոչ մի դաժան կամ անարդար բան չկար: Ավելի շուտ դրանք Նրա սրբության ու արդարության դրսևորումներն էին:

2:17. Նրա աշակերտները, տեսնելով կատարվածը, հիշեցին Մով. 69:9-ում արձանագրված խոսքերը: Այնտեղ կանխատեսվում էր, որ երբ Մեսիան գա, Նա պիտի **լցվի** Աստծո տան հանդեպ ունեցած ծայրահեղ **նախանձով**: Եվ երբ տեսան, թե ինչպիսի եռանդով Հիսուսը պահանջեց, որ առ Աստված պաշտամունքը ոչ մի բանով չպղծվի, նրանք հասկացան, որ իրենց առջև կանգնած է Նա, Ում մասին գրել է սաղմոսերգուն:

Մենք չպետք է մոռանանք, որ քրիստոնյայի մարմինը Սուրբ Հոգու տաճարն է: Ճիշտ այնպես, ինչպես Տեր Հիսուսն անհանգստացավ Երուսաղեմի տաճարի մաքրությամբ, այնպես էլ մենք պետք է մեր մարմինները ներկայացնենք, որ Տերն անդադար մաքրի:

2. Հիսուսը կանխատեսում է Իր մահն ու հարությունը (2:18-22)

2:18. Տպավորություն է ստեղծվում, որ հրեաները միշտ ինչ-որ նշաններ ու հրաշքներ էին փնտրում: Նրանք կարծես թե ասում էին. «Եթե Դու մեր առջև ինչ-որ նշանավոր ու գորեղ բան անես, այդ դեպքում կհավատանք»: Մակայն Տեր Հիսուսը մեկը մյուսի ետևից հրաշքներ էր անում, բայց և այնպես նրանց սրտերը փակ էին Նրա համար: 18-րդ համարում նրանք իրենց կասկածանքն են արտահայտում առևտրականներին տաճարից դուրս հանելու Նրա ունեցած իշխանության հանդեպ: Նրանք պահանջեցին, որ Նա այնպիսի **նշան** ցույց տա, որը կապացուցի, թե Ինքը Մեսիան է:

2:19. Ի պատասխան նրանց պնդման՝ Տեր Հիսուսը զարմանալի խոսքեր ասաց Իր մահվան ու հարության մասին: Նա ասաց, որ նրանք կարող են **քանդել** Իր տաճարը, և Ինքը **երեք օրում** կկանգնեցնի այն: Այս համարում կրկին նշվում է Քրիստոսի աստվածության մասին: Միայն Աստված կարող էր ասել. «**Եվ երեք օրում Ես կկանգնեցնեմ այն**»:

2:20. Հրեաները չհասկացան Նրան: Նրանց ավելի հետաքրքրում էին նյութական բաները, քան հոգևոր ճշմարտությունները: Միակ տաճարը, որի մասին կարող էին նրանք մտածել, Երուսաղեմում գտնվող Հերովդեսի տաճարն էր: **Քառասունվեց տարի պահանջվեց այդ տաճարի շինարարության համար**, և նրանք չէին կարող պատկերացնել, թե մարդն ինչպես կարող է այն վերականգնել **երեք օրում**:

2:21. Տեր Հիսուսն այստեղ **ասաց Իր** սեփական **մարմնի** մասին, որը սրբարան էր, և այնտեղ էր բնակվում աստվածության ողջ լիությունը: Հրեաներն ինչպես պղծեցին Երուսաղեմի տաճարը, այնպես էլ մի քանի տարի անց Նրան դատապարտեցին մահվան:

2:22. Ավելի ուշ, երբ Տեր Հիսուսը մատնվեց մահվան ու **մեռելներից հարություն առավ, Նրա աշակերտները հիշեցին, որ Նա** խոստացել էր երեք օրից հարություն առնել: Տեսնելով մարգարեության հրաշալի իրականացումը՝ նրանք **հավատացին Գրքին և այն խոսքին, որ Հիսուսն ասել էր**:

Մենք հաճախ ենք բախվում դժվար հասկացվող ճշմարտություններին: Բայց հենց այդ ժամանակ ենք գիտակցում, որ պետք է ամբողջ սրտով գնահատենք Աստծո Խոսքը: Ինչ-որ ժամանակ հետո Տերը մեզ միանշանակ պատասխան կտա, նույնիսկ եթե դա չենք հասկանում հիմա: Այստեղ ասվում է, **որ նրանք հավատացին Գրքին**: Սա նշանակում է, որ նրանք հավատացին Մեսիայի հարության մասին ՀԿ-ի կանխատեսումներին:

Է. Շատերը հավատացին Քրիստոսին (2:23-25)

2:23. Հրեական **Չառակին Երուսաղեմում** Հիսուսի կատարած **հրաշքների** հետևանքով **շատերը հավատացին Նրա անվանը**: Սա չի նշանակում, որ նրանք իսկապես իրենց կյանքը վստահեցին Նրան. նրանք միայն դավանեցին, որ ընդունել են Նրան: Նրանք իրենց որոշումը չհաստատեցին ոչ մի գործողությամբ, Հիսուսին հետևեցին

միայն արտաքինապես, խոսքերով: Նման ձեվով երկրի վրա ապրող շատ մարդիկ իրենց քրիստոնյա են կոչում, բայց իրականում, Տեր Հիսուս Քրիստոսին հավատալով, երբեք վերստին ծնունդ չեն ունեցել:

2:24. Չնայած որ շատերը հավատացին Նրան, սակայն **Հիսուսը նրանց չհավատաց** (նույն բառն է հունարենում): Այսինքն՝ **Հիսուսն Իր անձը չէր վստահում նրանց**: Նա հասկանում էր, որ նրանք Իր մոտ են եկել հետաքրքրությունից մղված: Նրանք ինչ-որ ցնցող ու տպավորիչ բան էին փրճարում: **Նա գիտեր բոլոր մարդկանց**, նրանց մտքերն ու շարժառիթները: Նա գիտեր, թե ինչու նրանք այդպես, ոչ թե այլ կերպ վարվեցին: Նա գիտեր, թե նրանց հավատը իրական էր, թե՞ միայն նմանակում:

2:25. Ոչ մեկն այնքան լավ չգիտի մարդու էությունը, ինչպես Տերը: Այդ առումով Նա ոչ մեկի խորհրդի ու լուսաբանության **կարիքը չունեց**: Նա **մարդու մասին** ամբողջական գիտություն ուներ և տեսնում էր, թե ինչու է մարդն իրեն հենց այդպես պահում:

Ը. Հիսուսը ուսուցում է Նիկողեմոսին վերստին ծննդյան մասին (3:1-21)

3:1. **Նիկողեմոսի** պատմությունը քիչ առաջ կատարվածի ճիշտ հակապատկերն է: Երուսաղեմում շատ հրեաներ պնդում էին, որ հավատում են Տիրոջը, բայց Նա գիտեր, որ նրանց հավատը ճշմարիտ չէր: Նիկողեմոսը բացառություն էր: Տերը նրա մեջ տեսավ ճշմարտությունը ճանաչելու լուրջ փափագ: Տեղին է մեջբերել 1-ին համարը **«Փարիսեցիների մեջ մի մարդ կար՝ Նիկողեմոս անունով, հրեաների իշխանավոր»**:⁷

Նիկողեմոսին որպես ուսուցիչ էին ճանաչում: Հնարավոր է, որ Նա եկել էր Տիրոջ մոտ՝ գիտելիք ձեռք բերելու, որպեսզի վերադառնա ու այն բաժնեկցի հրեաների հետ:

3:2. Աստվածաշունչը չի ասում, թե *ինչու* Նիկողեմոսը **գիշերով Հիսուսի մոտ եկավ**: Ամենաակնհայտ բացատրությունն այն է, որ նա վախեցավ, չուզեց, որ նկատեն Տեր Հիսուսի մոտ գնալը, քանի որ հրեաների

մեծամասնությունը կտրականապես չէր ընդունում Տիրոջը: Մակայն Նա եկավ Հիսուսի մոտ՝ հաստատելով, որ Տերն իսկապես **Աստծուց** ուղարկված **Վարդապետ է**, Ուսուցիչ է, որովհետև ոչ մեկը չէր կարող այդպիսի հրաշքներ կատարել, եթե **Աստված** նրա հետ չլիներ: Չնայած իր ստացած գիտելիքներին՝ Նիկողեմոսը չճանաչեց Տիրոջը որպես մարմնով հայտնված Աստծո: Նա նման էր նրանց, ովքեր այսօր ընդունում են, որ Հիսուսը մեծ Մարդ էր, հիանալի Ուսուցիչ, հզոր Անհատականություն: Այս բոլոր պնդումները հեռու են ճշմարտությունից: Հիսուսն Աստված էր և է:

3:3. Առաջին հայացքից Հիսուսի պատասխանը թվում է, թե կապ չունի Նիկողեմոսի քիչ առաջվա ասածի հետ: Մեր Տերը նրան պատասխանեց. «Նիկողեմոս, դու եկել ես Ինձ մոտ ինչ-որ բան սովորելու, բայց իրականում այն, ինչի կարիքն ունես, **վերստին ծնունդն է:** Դրանից պետք է սկսես: Նա, ով վերստին չծնվի, **չի կարող Աստծո արքայությունը տեսնել:**»

Տերն այս հիանալի միտքը ներկայացնում է հետևյալ խոսքերով. «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ...**» (բառացիորեն՝ «*Ամեն, ամեն*»): Այս խոսքերով Նա հասկացնում էր, որ սրանց հաջորդելու է կարևոր ճշմարտությունը:

Ինչպես բոլոր հրեաները, Նիկողեմոսն սպասում էր Մեսիային, Ով պիտի գար ու Իսրայելին ազատեր հռոմեական տիրապետությունից: Այդ ժամանակ Հռոմեական կայսրությունը տիրում էր աշխարհին, և հրեաներն էլ ենթարկվում էին նրա օրենքներին ու կառավարությանը: Նիկողեմոսը շատ էր սպասում այն պահին, երբ Մեսիան երկրի վրա կհաստատի Իր Թագավորությունը, երբ այլ ազգերի մեջ հրեաները կլինեն առաջինը, կկործանվեն նրանց բոլոր թշնամիները: Իսկ այստեղ Հիսուսն ասում է Նիկողեմոսին՝ այդ Արքայությունը մտնելու համար մարդ պետք է **վերստին ծնվի:** Ճիշտ այնպես, ինչպես ֆիզիկական կյանքի համար անհրաժեշտ է առաջին անգամ ծնվել, այնպես էլ աստվածային կյանքի հա-

մար պետք է երկրորդ անգամ ծնվել: «**Վերստին ծնված**» արտահայտությունը կարող է և նշանակել «ի վերուստ ծնված»: Այլ խոսքով, Քրիստոսի Թագավորություն կարող են մտնել միայն նրանք, որոնց կյանքը փոխվել է: Նրա իշխանությունը լինելու է արդարությամբ, ուստի Նրա հպատակները նույնպես պետք է արդարներ լինեն: Նա չի կարող ղեկավարել շարունակաբար մեղք գործող մարդկանց:

3:4. Մենք նորից տեսնում ենք, թե մարդկանց համար որքան դժվար է հասկանալ Տեր Հիսուսի խոսքերը: **Նիկողեմոսը** ամեն ինչ բառացիորեն էր ընկալում: Նա չէր պատկերացնում, թե չափահաս, ծեր մարդն ինչպես կարող է նորից **ծնվել:** Նա մտածում էր, որ ֆիզիկական աշխարհում անհնարին է այս ընթացակարգը՝ մի՞թե մարդ կարող է երկրորդ անգամ **իր մոր արգանդը մտնել և ծնվել:**

Նիկողեմոսն այն բանի օրինակն է, որ «բնական մարդն Աստծո Հոգու բաները չի ընդունում, քանի որ դրանք հիմարություն են նրա համար, ոչ էլ կարող է ճանաչել, քանի որ դրանք հոգևորապես են ըմբռնվում» (1 Կոր. 2:14):

3:5. Հետագա բացատրության մեջ, Հիսուսը հաղորդեց Նիկողեմոսին, որ նա պետք է **ջրից և Հոգուց ծնվի:** Հակառակ դեպքում, երբեք չի կարող **մտնել Աստծո Արքայության մեջ:**

Ի՞նչ նկատի ուներ Հիսուսը: Ծատերը պընդում են «ջուր» բառի *inunzugh* հմաստը և կարծում, որ Տեր Հիսուսն ասաց մկրտության անհրաժեշտության մասին, իբրև փրկության պայմանի: Մակայն նման ուսմունքը հակասում է Աստվածաշնչի մնացած մասին: Աստծո Խոսքում կարդում ենք, որ փրկությունը կարելի է ստանալ միայն Հիսուս Քրիստոսին հավատալով: Պետք է մկրտվեն միայն նրանք, ովքեր արդեն ստացել են փրկությունը. այն փրկության միջոց չէ:

Ոմանք ենթադրում են, որ այս համարում **ջուրը** վերաբերում է Աստծո Խոսքին: Եփ. 5:25-26-րդ համարներում ջուրը սերտորեն

կապված է Աստծո Խոսքի հետ: Ըստ 1 Պետ. 1:23 և Հակ. 1:18 համարների վերըստին ծնունդը կատարվում է Աստծո Խոսքի միջոցով: Ճատ հավանական է, որ այս համարում ջուրը իսկապես խորհրդանշում է Աստվածաշունչը: Մենք գիտենք, որ առանց Սուրբ Գրքի ոչ մի փրկություն չի կարող տեղի ունենալ, որովհետև միայն Աստծո Խոսքում է բովանդակվում այն լուրը, որ կարող է նախապես պատրաստել մեղավորին, նախքան որևէ վերստին ծնունդ լինելը:

Բայց **ջուրը** կարող է նաև վերաբերել Սուրբ Հոգուն: Հովհ. 7:38-39-րդ համարներում Տեր Հիսուսը խոսեց կենդանի ջրի գետերի մասին, և լիովին պարզ է, որ այնտեղ «ջուր» բառի տակ Նա նկատի ուներ Սուրբ Հոգուն: Եթե 7-րդ գլխում ջուրը Սուրբ Հոգու խորհրդանիշն է, ինչու՞ այն չի կարող ունենալ նույն նշանակությունը 3-րդ գրվածում:

Բայց եթե այդպիսի մեկնությունն ընդունենք, մի դժվարություն կծագի: Հիսուսն ասաց. «**Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, նա չի կարող Աստծո Թագավորությունը մտնել**»: Եթե այստեղ **ջուրը Հոգի է** նշանակում, ապա ստացվում է՝ այս համարում Հոգին կրկնակի է հիշատակված: Բայց, այստեղ «և» թարգմանված բառը կարելի էր ավելի ճիշտ թարգմանել ու կլիներ «նույն» բառը: Այդ դեպքում համարը կկարդացվեր այսպես՝ «**Եթե մեկը նույն Հոգու ջրից չծնվի, նա չի կարող Աստծո Թագավորությունը մտնել**»: Մենք կարծում ենք՝ սա է այս համարի ճիշտ միտքը: Ֆիզիկական ծնունդը բավարար չէ:⁸ **Աստծո Թագավորություն** մտնելու համար նաև պետք է հոգևոր ծնունդ տեղի ունենա: Այդ հոգևոր ծնունդ իրականացնողն Աստծո Սուրբ Հոգին է, երբ մարդը հավատում է Տեր Հիսուս Քրիստոսին: Այս մեկնաբանությունը հաստատվում է այն փաստով, որ «Հոգուց ծրնվածը» արտահայտությունը երկու անգամ հանդիպում է հաջորդող համարներում (հ. 6, 8):

3:6. Նույնիսկ եթե Նիկողեմոսը կարողանար ինչ-որ ձևով մտնել իր մոր արգանդը և նորից ծնվեր, դա չէր փոխի նրա մեղավոր

բնույթը: «**Մարմնից ծնվածը մարմին է**» արտահայտությունը նշանակում է, որ երկրավոր ծնողներից ծնված երեխաները մեղսունակ են. նրանք անհույս ու անօգնական են և չեն կարող իրենք իրենց փրկել: Մյուս կողմից, **Հոգուց ծնվածը հոգի է**: Հոգևոր ծնունդն այն ժամանակ է կատարվում, երբ մարդն իրեն վատահում է Տեր Հիսուսին: Երբ մարդը Հոգու գործությամբ վերստին ծնվում է, նա ստանում է նոր բնություն և կարող է մտնել Աստծո Թագավորություն:

3:7. Պետք չէր, որ Նիկողեմոսը **զարմանար** Տեր Հիսուսի ուսմունքի վրա: Նա պետք է հասկանար **վերստին ծննդյան** անհրաժեշտությունն ու իր աղետալի վիճակը շտկելու մարդու կատարյալ անկարողությունը: Նա պետք է հասկանար, որ Աստծո Թագավորության մեջ մտնելու համար անձը պետք է լինի սուրբ, մաքուր և հոգևոր:

3:8. Ցանկանալով պատկերավոր ձևով բացատրել հոգևոր ճշմարտությունը՝ Տեր Հիսուսը հաճախ օրինակներ էր բերում բնությունից: Այստեղ էլ Նա կիրառեց այդ մոտեցումը: Նա Նիկողեմոսին հիշեցրեց, որ քամին **որտեղ ուզում է, փչում է, և դու նրա ձայնը լսում ես, բայց չես կարող ասել, թե որտեղի՞ց է գալիս կամ ո՞ւր է գնում**: Վերստին ծնունդը շատ նման է **քամուն**: Առաջինը՝ այն իրականանում է Աստծո կամքով: Դա մի գործություն չէ, որին մարդը կարող է կառավարել: Երկրորդ՝ նոր ծնունդն անտեսանելի է: Դուք չեք կարող տեսնել, թե դա ինչպե՞ս է տեղի ունենում, բայց տեսնում եք դրա արդյունքները մարդու կյանքում: Երբ մարդը փրկվում է, նրա մեջ արմատական փոփոխություններ են տեղի ունենում: Նախապես սիրված չարությունը դառնում է ատելի: Նախկինում իրեն ատելի Աստծո գործերը դառնում են իր միակ սիրելիները: Ոչ մեկը չի կարող ամբողջությամբ հասկանալ քամին, այդպես էլ հնարավոր չէ հասկանալ նոր ծնունդը՝ Աստծո Հոգու զարմանահրաշ գործը: Բացի այդ՝ նոր ծնունդը նման է **քամուն** իր անկանխատեսելիությամբ: Հնարավոր չէ ճշտել՝ երբ և **որտեղ** այն տեղի կունենա:

3:9. Ու կրկին Նիկողեմնոսը ցուցադրեց աստվածային բաները հասկանալու մարդկային մտքի անկարողությունը: Անտարակույս, նա դեռ շարունակում էր նոր ծնունդի մասին մտածել բնական կամ ֆիզիկական դրսևորմամբ, ոչ թե հոգևոր: Եվ նա հարցրեց Տեր Հիսուսին. «**Այդ ինչպե՞ս կարող է լինել:**»

3:10. Հիսուսը պատասխանեց, որ, որպես **Իսրայելի վարդապետ**՝ Նիկողեմնոս պետք է հասկացած լիներ **այդ:** ՀԿ-ի Գրությունները հստակ սովորեցնում են, որ երբ Մեսիան երկիր վերադառնա ու հաստատի Իր Թագավորությունը, Նա սկզբում կդատի Իր թշնամիներին ու կհեռացնի բոլոր զայթակղությունները: Միայն նրանք, ովքեր խոստովանել ու հրաժարվել են իրենց մեղքերից, կմտնեն Թագավորություն:

3:11. Այնուհետև Հիսուսն ընդգծում է Իր ուսմունքի անսխալականությունն ու դրա նկատմամբ մարդու համառ անհավատությունը: Ի հավիտենից Նա գիտեր Իր ուսմունքի ճշմարտացիությունը և միայն ասում էր այն, **ինչ գիտեր ու տեսել էր:** Բայց Նիկողեմնոսն ու այն ժամանակվա հրեաների մեծամասնությունը հրաժարվեցին Նրա վկայությանը հավատալուց:

3:12. Ի՞նչ է այդ **երկրավորը**, որին անդրադառնում է Տերն այս համարում: Այստեղ Նա խոսում է Իր **երկրավոր** Թագավորության մասին: Նիկողեմնոսը ՀԿ-ից գիտեր, որ մի օր Մեսիան պիտի գա այստեղ՝ երկրի վրա հաստատելու Իր Թագավորությունը՝ Երուսաղեմ մայրաքաղաքով: Նիկողեմնոսը չկարողացավ հասկանալ, որ այդ Թագավորությունն մտնել կարելի է միայն վերստին ծնվելով: Իսկ ի՞նչ էին **երկնավոր բաները**, որոնց մասին խոսում է Հիսուսը: Դրանք ճշմարտություններ են, որ բացատրվում են հետագա համարներում. Այն հիանալի միջոցը, որով մարդը վերստին ծնունդ է ստանում:

3:13. Տեր Հիսուսը միակ Անձն էր, որ իրավունք ուներ երկնայինի մասին խոսելու, քանի որ եղել էր **Երկնքում:** Նա ոչ միայն Աստծուց ուղարկված Ուսուցիչ էր, այլ Նա էր, Ով ի հավիտենից ապրել էր Հայր Աստ-

ծոն հետ և աշխարհ **իջել:** «**Ոչ մի մարդ երկինք չի բարձրացել**» ասելով՝ Նա նկատի չունեի, որ ՀԿ-ի սրբերը, ինչպիսիք են Ենովքն ու Եղիան, երկինք չեն մտել, այլ որ իրենք իրենց ուժով չեն մտել, այլ երկինք են *վերցվել*, մինչդեռ Նա **երկինք էր մտել** Իր սեփական ուժով: Մյուս բացատրությունն այսպիսին է. բացի Նրանից՝ ոչ մի մարդ մշտական մուտք չունեի Աստծո ներկայության մեջ: Նա կարող էր բարձրանալ Աստծո բնակատեղին յուրահատուկ ձևով, որովհետև Երկնքից էր իջել այս երկրի վրա: Տեր Հիսուսը երկրի վրա գտնվելիս և Նիկողեմնոսի հետ զրուցելիս ասաց, որ Նա **Երկնքում է:** Սա ինչպե՞ս կարող է պատահել: Որպես Աստված՝ Տերը կարող էր միաժամանակ ամեն տեղ լինել: Ճիշտ սա նկատի ունենք, երբ ասում են, որ Նա ամենուրեք է: Չնայած որ որոշ ժամանակակից մեկնաբաններ բաց են թողնում «**որ Երկնքում է**» խոսքերը, դրանք բազմիցս ապացուցվում են ձեռագրերով ու տեքստի անբաժանելի մասն են:

3:14. Հիմա Տեր Հիսուսը պատրաստ է Նիկողեմնոսի համար բացելու երկնային ճշմարտությունը: Ինչպե՞ս կարող է վերստին ծնունդը տեղի ունենալ: Պետք է վճարվի մարդու մեղքերի գինը: Մարդիկ իրենց մեղքերով ծանրաբեռնված չեն կարող մտնել Երկինք: **Եվ ինչպես Մովսեսն անապատի մեջ պղնձե օձը բարձրացրեց**, երբ ամբողջ Իսրայել ժողովրդին խայթում էին օձերը, **այդպես էլ պետք է Մարդու Որդին բարձրացվի:** (Կարդացե՛ք Թվ. 21:4-9-ը): Իսրայելի ժողովուրդն անապատով դեպի Խոստացյալ երկիր ճամփորդելիս սկսեցին Տիրոջ դեմ տրտնջալ: Նրանց պատժելու համար Տերը թունավոր օձեր ուղարկեց և ժողովրդից շատերը մեռան: Երբ ողջ մնացածները զոջալով Տիրոջն էին կանչում, Նա Մովսեսին հրամայեց պղնձից **օձ** պատրաստել և ամրացնել ձողի վրա: Եվ խայթվածները, դրան նայելով, հրաշքով փրկվում էին ու բժշկվում:

Հիսուսը դիմեց ՀԿ-ի այս դրվագին, որպեսզի պատկերավոր ձևով բացատրի վերստին ծնունդը: Տղամարդկանց ու կա-

նանց կիզել են մեղքի թունավոր օձերը՝ նրանց հավիտենական մահվան դատապարտելով: Պղնձե օձը Տեր Հիսուսի խորհրդապատկերն է: Պղինձն Աստվածաշնչում դատաստանի խորհրդանիշն է: Տեր Հիսուսն անմեղ էր և երբեք դատաստանի չէր ենթարկվելու, բայց Նա մեր փոխարեն դատապարտվեց մահվան, որին մենք էինք արժանի: Ձողը խորհրդանշում է Գողգոթայի խաչափայտը, որի վրա գամեցին Հիսուսին: Մենք փրկություն կստանանք, եթե հավատով Նրան նայենք:

3:15. Բացարձակապես անմեղ Փրկիչը կրեց մեր մեղքերը, որպեսզի Նրանում մենք ձեռք բերենք Աստծո արդարությունը: **Որպեսզի ով որ** Տեր Հիսուս Քրիստոսին **հավատա**, չկորչի, այլ ձրիաբար ստանա **հավիտենական կյանքը**:

3:16. Սա, անկասկած, ամբողջ Աստվածաշնչում ամենահայտնի համարներից մեկն է, որովհետև այստեղ հստակորեն ու պարզությամբ շարադրված է Ավետարանի ողջ էությունը: Այն ամփոփում է այն, ինչ Տեր Հիսուսը սովորեցրեց Նիկողեմոսին, այն է՝ ինչպես վերստին ծնունդ ստանալ: Մենք կարդում ենք. «**Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը...**»: **Աշխարհն** այստեղ նկատի ունի ամբողջ մարդկությանը: Աստված չի սիրում մարդու մեղքերը կամ աշխարհի արատավոր համակարգը, բայց սիրում է մարդկանց ու չի ուզում, որ որևիցե մեկը կորչի:

Նրա սիրո անսահմանությունն ապացուցված է նրանով, որ Նա **Իր Միածին Որդուն տվեց**: Աստված Տեր Հիսուսի նման ուրիշ որդի չունի: Նրա անհատնում սերը դրանով արտահայտվեց, որ մեղավորի փրկկազմման համար Նա **Իր միակ Որդուն տվեց**: Սա բոլորովին էլ չի նշանակում, թե բոլորը փրկվում են: Հավիտենական կյանք ստանալու համար մարդը նախ պետք է ընդունի այն, ինչ Քրիստոսն է կատարել իր համար: Ահա թե ինչու է այստեղ ավելացված «**ով Նրան հավատա չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա**» խոսքերը: Կորչելու անհրաժեշտություն չկա: Փրկությո-

յուն ստանալու միջոց կա, բայց դրա համար մարդը պետք է հաստատի, որ Տեր Հիսուսն իր անձնական Փրկիչն է: Երբ նա սա անում է, հավիտենական **կյանքը** ստանում է որպես ներկա սեփականություն: Բորհամը գրում է.

«Երբ եկեղեցին կըմբռնի այն սերը, որով Աստված սիրեց աշխարհը, նա այլևս չի կարողանա անգործ մնալ և չի հանգստանա այնքան ժամանակ, մինչև որ չնվաճվեն մեծ կայարությունները, մինչև որ չհպատակեցվեն յուրաքանչյուր կոթայան կղզյակները»:⁹

3:17. Աստված, խիստ ու դաժան կառավարիչ չէ, ով ուզում է մարդկության վրա թափել Իր բարկությունը: Նրա սիրտը մարդկանց հանդեպ լցված է քնքշությամբ. մարդկանց փրկելու համար Նա վճարեց առավելագույն գինը: Նա կարող էր ուղարկել **Իր Որդուն աշխարհ, որպեսզի աշխարհին դատի**, բայց Նա դա **չարեց**: Ընդհակառակը՝ Նա Հիսուսին այստեղ ուղարկեց՝ չարչարվելու, արյուն թափելու և մեռնելու, **որպեսզի աշխարհը Նրանով փրկվի**: Իսաչի վրա կատարած Տեր Հիսուսի գործն այնքան մեծ նշանակություն ունեցավ, որ բոլոր մեղավորները, որտեղ էլ որ լինեն, կարող են փրկվել, եթե ընդունեն Նրան:

3:18. Ամբողջ մարդկությունը բաժանված է երկու դասակարգի՝ հավատացյալների ու անհավատների: Մեր հավիտենական ճակատագիրը որոշվում է դրանով, թե մենք ինչ դիրք կզբաղեցնենք Աստծո Որդու հանդեպ: Փրկիչն հավատացողները **չեն դատապարտվի, իսկ** Նրան **չհավատացողներն արդեն դատապարտված են**: Տեր Հիսուսն ավարտել է փրկության գործը, և հիմա մեզանից յուրաքանչյուրին մնում է որոշել, ընդունել կամ մերժել Նրան: Սարսափելի բան է այսպիսի սիրո պարզևր մերժելը: Եթե անձը չհավատա Տեր Հիսուսին, ապա Աստծուն այլ բան չի մնում անել, քան դատապարտել նրան:

Նրա **անվանը** հավատալը նույնն է, ինչ որ *Նրան* հավատալը: Աստվածաշնչում ա-

նուրը ներկայացնում է անձին: Եթե հավատում ենք Նրա **անվանը**, դուք հավատում եք **Նրան**:

3:19. Հիսուսը **լույսն է, որ աշխարհ եկավ**: Նա է Աստծո անմեղ, անարատ Գառը: Նա մեռավ ողջ աշխարհի մեղքերի համար: Բայց դրա համար մարդիկ արդյոք սիրո՞ւմ են Նրան: Ո՛չ, նրանք մերժում են Նրան: Նրանք նախընտրում են մեղք գործել: Նրանք չեն ցանկանում ընդունել Հիսուսին՝ որպես անձնական Փրկչի, և այս ձևով մերժում են Նրան: Դեպի իրենց ուղղված լույսից հեռու փախչող սողացող միջատների պես չար մարդիկ փախչում են Քրիստոսի ներկայությունից:

3:20. Մեղք սիրողներն ատում են լույսը, որովհետև լույսի առկայության դեպքում հստակորեն երևում է իրենց ամբողջ մեղավորությունը: Երբ Հիսուսը երկրի վրա էր, մեղավորները Նրա ներկայությամբ իրենց անհարմար էին զգում, որովհետև Նա Իր սրբությամբ բացահայտում էր նրանց անավոր վիճակը: Փայտի ծռությունը ցույց տալու լավագույն միջոցներից մեկը դրա կողքին ուղիղ փայտ դնելն է: Տեղ Հիսուսն աշխարհ եկավ որպես կատարյալ Մարդ և դրանով բացահայտեց բոլոր մարդկանց կեղծավորությունը, անագնավությունը:

3:21. Եթե մարդն իսկապես անկեղծ է Աստծո առջև, նա կզնա **դեպի լույսը**, այսինքն՝ Տեղ Հիսուսին, և կհասկանա իր էության մեղսալիությունը: Հետո նա կվըստահի իր Փրկչին և այս կերպով վերստին ծնունդ կստանա՝ հավատալով Քրիստոսին:

Թ. Հովհաննես Մկրտչի ծառայությունը Հրեաստանում (3:22-36)

3:22. Այս գլխի առաջին մասը նկարագրում է Տեղ Հիսուսի վկայությունը Երուսաղեմում: Այս համարից սկսած ու մինչև գլխի ավարտը Հովհաննեսը նկարագրում է Քրիստոսի ծառայությունը **Հրեաստանում**, որտեղ Նա շարունակեց հռչակել փրկության Բարի լուրը: Մարդիկ գալիս էին Լույսի մոտ և **մկրտվում**: Այս համարից երևում է, որ Հիսուսն Ինքը մկրտում

էր, բայց Հովհ. 4:2-ից իմանում ենք, որ Նրա աշակերտներն էին մկրտում:

3:23. Այս համարում հիշատակված **Հովհաննեսը** Հովհաննես Մկրտիչն է: Նա շարունակում էր Հրեաստանում մարդկանց կոչ անել ապաշխարության ու մկրտում էր Մեսիայի գալուստից առաջ ապաշխարել ցանկացող հրեաներին: **Եվ Հովհաննեսն էլ Այննուն էր մկրտում՝ Մաղեմի մոտ, որովհետև այնտեղ շատ ջուր կար**: Սա վերջնական ապացույց չէ այն բանի, որ նա մկրտել է ամբողջական ընկղմումով, բայց թույլ է տալիս այդպիսի ենթադրություն կատարել: Եթե նա մկրտեր ջուր սրսկելով կամ ջուր լցնելով, ապա **շատ ջուր լինելու** անհրաժեշտության հարցը չէր ծագի:

3:24. Այս համարը մեկ անգամ ևս հաստատում է Հովհաննեսի ծառայության ու նրա կոչին հավատացող աստվածավախ հրեաների արձագանքի շարունակականությունը: Մոտ ապագայում **Հովհաննեսը կբանտարկվի** և կգլխատվի իր հավատարիմ վկայության համար: Բայց մինչ այդ նա ջանասիրաբար իրականացնում էր իր առաքելությունը:

3:25. Այս համարից պարզ է դառնում, որ **Հովհաննեսի** մի քանի **աշակերտների ու հրեաների միջև վեճ էր** առաջացել **մաքրության վերաբերյալ**: Սա ի՞նչ է նշանակում: Այստեղ՝ **մաքրության** տակ, հավանաբար հասկացվում է մկրտությունը: Վեճը բորբոքվել էր այն բանից, թե ո՞ւմ մկրտությունն է լավ՝ Հովհաննեսի, թե՞ Հիսուսի: Ո՞ւմ մկրտությունն ավելի մեծ ուժ ունի և ո՞ւմ մկրտությունն է ավելի նշանակալից: Հնարավոր է, որ **Հովհաննեսի աշակերտներից ոմանք** անխոհեմաբար հայտարարել էին, որ իրենց ուսուցչի մկրտությունից առավել լավ մկրտություն գոյություն չունի: Հնարավոր է նաև, որ փարիսեցիները փորձում էին Հովհաննեսի աշակերտների մեջ նախանձ առաջացնել Հիսուսի և Նրա հանրահայտության հանդեպ:

3:26. Նրանք եկան Հովհաննեսի մոտ վեճը լուծելու նպատակով: Հնարավոր է, որ նրանք ասացին նրան. «Եթե քո մկրտությո՞ւնը»

յունն ավելի լավն է, ինչո՞ւ են շատերը քեզ թողնում և Հիսուսի մոտ գնում»: **«Նա, որ Հորդանանի այն կողմում էր քեզ հետ»** խոսքերը վերաբերում են Քրիստոսին: Հովհաննեսը վկայեց Տեր Հիսուսի մասին և իր վկայությունից հետո շատ աշակերտներ թողեցին իրեն ու Հիսուսին հետևեցին:

3:27. Եթե Հովհաննեսի պատասխանը նկատի ունի Տեր Հիսուսին, ապա այն նշանակում է, որ Փրկչին ուղեկցող հաջողությունն այն բանի վկայությունն է, որ Նրա գործողությունները հավանության են արժանացել Աստծո կողմից: Եթե Հովհաննեսը խոսեց իր մասին, ապա նա նկատի ուներ, որ երբեք մեծության կամ կարևոր դիրքի չի ձգտել: Նա երբեք չհաստատեց, որ իր մկրտությունը բարձր է Հիսուսի մկրտությունից: Նա պարզապես ասաց, որ ինքը ոչինչ չունի՝ բացի դրանից, ինչ տրված է իրեն **երկնքից**: Սա ճշմարտություն է բոլորիս համար, և աշխարհում ոչ մի պատճառ չկա, որ մեզ հիմք տա մեկ ուրիշի նկատմամբ հպարտանալու կամ բարձր համարում ունենալու:

3:28. Հովհաննեսը նորից հիշեցնում է իր աշակերտներին, որ ինքը **Քրիստոսը չէ, այլ միայն ուղարկված է** Նրա առջևից, որպեսզի պատրաստի Մեսիայի ճանապարհը: Ինչո՞ւ պետք է նրա շուրջը վեճեր ծագեն: Ինչո՞ւ պետք է նրա շուրջն աղմուկ առաջանա: Նա մեծ չէր, նա պարզապես մարդկանց վկայեց Տեր Հիսուսի մասին:

3:29. Տեր Հիսուս Քրիստոսը **փեսան էր**: Հովհաննես Մկրտիչը պարզապես **փեսայի բարեկամն էր**, «ամենալավ մարդը»: Հարսը պատկանում է ոչ թե փեսայի բարեկամին, այլ հենց **փեսային**: Միանգամայն բնական է, որ մարդիկ հետևեին Հիսուսին, ոչ թե Հովհաննեսին: Այստեղ **հարսը** նրանք են, ովքեր դառնում են Տեր Հիսուսի աշակերտները: ՀԿ-ում Իսրայելի մասին խոսվում էր որպես Եհովայի կնոջ մասին: ՆԿ-ում ավելի ուշ Քրիստոսի Եկեղեցու անդամները նկարագրված են Հարսի կերպարով: Բայց այստեղ՝ Հովհաննեսի Ավետարանում, այս բառն ընդհանուր մտքով է

օգտագործված և նկատի ունի նրանց, ովքեր թողել են Հովհաննես Մկրտչին ու գնացել Մեսիայի հետևից: Այն չի վերաբերում ո՛չ Իսրայելին, ո՛չ էլ Եկեղեցուն: Հովհաննեսը չէր վիրավորվում, որ կորցնում է իր հետևորդներին: Նրա համար մեծ ուրախություն էր լսել **փեսայի ձայնը**: Նրա այս **ուրախությունն իրականացավ**, երբ մարդիկ սկսեցին փառաբանել ու պատվել Քրիստոսին:

3:30. Այս համարում ամփոփված է Հովհաննեսի ծառայության նպատակը: Նա ջանասիրաբար աշխատեց, տղամարդկանց ու կանանց ուշադրությունը հրավիրեց Տիրոջ վրա և նրանց համար բացահայտեց Քրիստոսի ճշմարիտ կարևորությունը: Այս անելով՝ Հովհաննեսը հասկանում էր, որ պետք է իրեն պահի ետին պլանում: Քրիստոսի ծառայի համար իսկապես անհավատարմություն կլինեիր ուշադրությունն իր վրա հրավիրելը:

Ուշադրություն՝ ն դարձրեք այս գլխում երեք անգամ օգտագործված «պետք է» բառին, որը վերաբերում է *մեղավորին* (3:7), *Փրկչին* (3:14) և *սրբին* (3:30):

3:31. Հիսուսն է, **որ վերից է գալիս և ամենից վեր է**: Այս հաստատումը վկայում է Նրա երկնային սկզբնավորության ու գերիշխանության մասին: Որպեսզի ցույց տա ենթակա անձ լինող իր վիճակը, Հովհաննեսն իր մասին ասաց. **«Նա, որ երկրից է, երկրավոր է և երկրից է խոսում»**: Սա նշանակում էր, որ նա մարդ էր ծնվել (երկրավոր ծնողներից): Նա երկնային կոչում, աստիճան չունեիր և չէր կարող Աստծո Որդու ունեցած հեղինակությամբ խոսել: Նա Տեր Հիսուսից ցածր էր, որովհետև **Նա, որ երկնքից է գալիս, ամենից վեր է**: Քրիստոսը տիեզերքի Ամենակալն է: Դրա համար էլ միանգամայն բնական է, որ մարդիկ Նրան են հետևում, ոչ թե Նրա մունետիկին:

3:32. Տեր Հիսուսը միշտ խոսում էր իշխանություն ունեցող Անձի պես: Նա մարդկանց հաղորդեց այն, ինչ Ինքն էր **լսել ու տեսել**: Միայն կամ կեղծիքի որևէ հնարա-

վորություն բացառված էր: Եվ դեռ տարօրինակ է, **սակայն Նրա վկայությունը ոչ մի մարդ չի ընդունում:** «Ոչ մի մարդ» արտահայտությունը չպետք է ուղիղ իմաստով հասկանալ: Մարդիկ եղան, ովքեր ընդունեցին Տեր Հիսուսի խոսքերը: Մակայն Հովհաննեսը մարդկությանն ամբողջական էր դիտում և ընդամենը նշել է այն փաստը, որ մարդկանց մեծ մասը մերժեց Փրկչի ուսմունքը: Հիսուսը Նա էր, Ով երկնքից էր իջել, բայց ոչ շատերը ցանկացան լսել Նրան:

3:33. Այս համարը նկարագրում է այն ոչ շատերին, ովքեր ընդունեցին Տիրոջ խոսքերը՝ որպես Աստծո խոսքեր: Եվ ընդունելով Նրա վկայությունը **կնքեցին, թե Աստված ճշմարիտ է:** Ճիշտ նույնն է և այսօր: Մարդիկ, ովքեր ընդունում են Ավետարանի լուրը, կանգնում են Աստծո կողքին և հակառակ իրենց անձին ու մարդկության մնացած մասին: Նրանք հասկանում են, որ **Աստծո** կողմից բոլոր ասվածները **ճշմարտություն են:** Ուշադրություն՝ դարձրեք, թե 33-րդ համարն ինչ պարզությամբ է սովորեցնում Քրիստոսի աստվածության մասին: Այդտեղ ասվում է, ով հավատում է Քրիստոսի **վկայությանը**, նա ընդունում է, որ **Աստված ճշմարիտ է:** Այլ խոսքով, Քրիստոսի վկայությունը *Աստծո* վկայությունն է, և առաջինն ընդունել, նշանակում է ընդունել նաև երկրորդը:

3:34. Հիսուսը Նա էր, **Ում Աստված ուղարկեց:** Նա **Աստծո խոսքերն էր խոսում:** Ի հաստատումն այս արտահայտության՝ Հովհաննեսն ավելացնում է. «...**Քանի որ Աստված Նրան չափով չի տալիս Հոգին:**» Քրիստոսն օժիված էր Աստծո Սուրբ Հոգուց ոչ այնպես, ինչպես այլ մարդիկ: Ուրիշները գիտակցում էին իրենց ծառայության մեջ Սուրբ Հոգու օգնության կարիքը, բայց նրանցից ոչ մեկը չծառայեց այնպիսի գործությամբ, ինչպիսի գործությամբ ծառայություն կատարեց Աստծո Որդին՝ Սուրբ Հոգու գործությամբ: Մարգարեներն Աստծուց ստանում էին մասնակի հայտնություններ, բայց «Հոգին Քրիստոսի մեջ և Նրա միջոցով մարդկությանը հայտնեց իմաստությունը, Աստծո սիրտը՝ Իր անսահ-

ման սիրով»:

3:35. Հովհաննեսի Ավետարանում այս համարն այն յոթ համարներից մեկն է, որոնք մեզ հաղորդում են, որ **Հայրը սիրում է Որդուն:** Նրա սերն արտահայտվում է այն բանում, որ Հայրը **ամեն բան** Նրա վերահսկողությանն է հանձնել: Այդ բաների թվում, որոնց լիակատար պատասխանատուն Փրկիչն է, մարդկանց հոգիների վերջնակայանն է, ինչպես բացատրվում է 36-րդ համարում:

3:36. Աստված Քրիստոսին իշխանություն տվեց **հավիտենական կյանք** տալ բոլոր Իրեն հավատացողներին: Սա ամբողջ Աստվածաշնչի ամենապարզ համարներից մեկն է, որը ցույց է տալիս, թե ինչպես անձը կարող է փրկություն ստանալ: *Պարզապես անհրաժեշտ է հավատալ Որդուն:* Այս համարը կարդալով՝ մենք հասկանում ենք, որ սա Աստված է ասում: Նա խոստում է տալիս, որը երբեք չի կարող խախտվել: Նա հստակ ու պատասխանատու կերպով ասում է, որ ամեն ոք, ով **հավատում է Որդուն, հավիտենական կյանք ունի:** Այս խոստումն ընդունել չի նշանակում վտանգավոր քայլ առնել: Սա պարզապես նշանակում է հավատալ այն բանին, որ ոչ մի դեպքում չի կարող կեղծ լինել: **Իսկ ով չի հավատում Որդուն, նա կյանքը չպիտի տեսնի, այլ Աստծո բարկությունը մնում է նրա վրա:** Այս համարից հասկանում ենք, որ հավիտենական կյանքը կախված է դրանից, թե ինչպես ենք վարվում Աստծո **Որդու** հետ: Եթե ընդունում ենք Նրան, Աստված մեզ հավիտենական կյանքի ձրի պարգևն է տալիս: Եթե մերժում ենք Նրան, մենք երբեք չենք վայելի հավիտենական **կյանքը:** Ավելին, մեզ սպասում է Աստծո **բարկությունը.** այն արդեն կախված է մեր գլխին և ցանկացած պահին պատրաստ է ընկնելու մեզ վրա:

Ուշադրություն՝ դարձրեք, այս համարում ոչինչ չի ասվում Օրենքը և Ոսկե կանոնը պահելու, եկեղեցի հաճախելու, բարի գործեր կատարելու կամ մեր անձնական ուժերով երկինք գնալ կարողանալու մասին:

Ժ. Սամարացի կնոջ դարձի գալը (4:1-30)

4:1-2. Փարիսեցիները լսել են, թե Հիսուսն ավելի շատ աշակերտներ ունի և մկրտել է, քան Հովհաննեսը, և որ Հովհաննեսի ժողովրդականությունն ակնհայտորեն ընկնում է: Հնարավոր է, որ նրանք փորձեցին օգտագործել այդ փաստը, որպեսզի նախանձ ու մրցակցություն առաջացնեն Հովհաննեսի ու Տեր Հիսուսի աշակերտների միջև: Չնայած **Հիսուսն Ինքը չէր** մկրտում, մկրտում էին **Նրա աշակերտները:** Բոլոր դեպքերում մարդիկ մկրտվում էին որպես Տիրոջ հետևորդներ կամ աշակերտներ:

4:3. Թողնելով **Հրեաստանը** և **Գալիլիա** ուղևորվելով՝ Հիսուսը խափանեց փարիսեցիների փորձերը՝ նրանց գրկելով մրցակցություն սերմանելու հնարավորությունից: Բայց այս համարում ևս կարևոր նշանակություն ունեցող մի բան կա: **Հրեաստանը** հուդայականության գլխավոր կենտրոնն էր, մինչ **Գալիլիան** հայտնի էր որպես արմատացած հեթանոսական շրջան: Տեր Հիսուսն իմանալով, որ հրեա առաջնորդները մերժում են Իրեն ու Իր վկայությունը, փրկության լուրով դիմեց հեթանոսներին:

4:4. **Սամարիան** ընկած էր Հրեաստանից Գալիլիա տանող ճանապարհի վրա: Բայց ոչ բոլոր հրեաներն էին օգտվում այդ ուղիղ ճանապարհից: Նրանք այնքան էին արիամարհում Սամարիայի շրջանը, որ նախընտրում էին Բերիայով շրջանցել, որպեսզի Գալիլիա հասնեն հյուսիսից: Իսկ այստեղ ասվում է, որ **Նա պետք է Սամարիայով անցներ:** Նա ստիպված էր այդ ճանապարհով գնալ ոչ թե աշխարհագրական նկատառումներից ելնելով, այլ որ **այնտեղ** կարիքավոր մի անձ էր ապրում, ում Նա կարող էր օգնել:

4:5. Ճանապարհորդելով **Սամարիայով** Տեր Հիսուսը եկավ **Սյուլքար կոչվող** փոքրիկ քաղաքը: Այդ քաղաքից ոչ շատ հեռու մի հողակտոր կար, որը **Հակոբն իր որդի Հովսեփին տվեց** (Ծնն. 48:22): Հիսուսն այդ տարածքներով էր ճամփորդում, և դրա վաղեմի պատմության բոլոր դրվագները անցնում էին Իր մտքով:

4:6. **Այնտեղ** մի աղքյուր **կար,** որը հայտնի էր որպես **Հակոբի ջրհոր:** Դա աստվածաշնչյան այն քիչ վայրերից մեկն է, որ այսօր էլ կարելի է դյուրությամբ ճանաչել:

Կեսօրին **մոտ էր** (հրեական ժամանակով) կամ կեսօրվա վեցերորդ ժամն էր (հռոմեական ժամանակով), երբ **Հիսուսը** հասավ ջրհորի մոտ: Երկար ճանապարհից **հոգնած՝ Նա այդ ջրհորի եզրին նստեց:** Հիսուսն Աստծո Որդին է, բայց Նա նաև Մարդ էր: Որպես Աստված՝ Նա երբեք չպետք է հոգներ, բայց որպես Մարդ՝ Նա հոգնում էր: Մեզ համար դժվար է սա հասկանալ: Բայց մեր մահկանացու մտքով մինչև վերջ հասկանալ Տեր Հիսուս Քրիստոսի Անձնավորությունն անհնար է: Այն ճշմարտությունը, որ Աստված կարող է աշխարհի իջնել և որպես Մարդ ապրել մարդկանց մեջ, մեր հասկացողությունից վեր խորհուրդ է:

4:7. Երբ Տեր Հիսուսը նստած էր ջրհորի մոտ, քաղաքից **մի կին եկավ՝ ջուր հանելու:** Եթե կեսօր էր (ինչպես հաստատում են որոշ աստվածաշնչագետներ), ապա օրվա ամենաշոգ պահին ջրհորից ջուր բերելու գնալը խիստ անհարմար էր: Սակայն այս կինը բարոյագուրկ մեղավոր մեկն էր, ավելի ճիշտ, ամոթի զգացումով էր այդ ժամն ընտրել՝ իմանալով, որ այդ ժամանակ ուրիշ ոչ մի կնոջ չի հանդիպի: Իհարկե, Տեր Հիսուսը գիտեր, որ նա այդ ժամին ջրհորի մոտ է գալու: Նա գիտեր կնոջ հոգու ծարավը և եկել էր՝ նրան հանդիպելու և ազատելու մեղավոր կյանքից:

Այս հատվածում տեսնում ենք վարպետ Հոգիներ Ծահողին գործելիս: Օգտակար կլինի սովորել այն մեթոդները, որոնք Նա օգտագործեց սամարացի կնոջ կարիքներն իրեն ցույց տալու համար և ապա լուծումն առաջարկեց: Մեր Տերն այդ կնոջ հետ խոսեց ընդամենը յոթ անգամ: Կինն էլ յոթ անգամ պատասխանեց՝ վեց անգամ Տիրոջը և մի անգամ իր քաղաքի բնակիչներին: Եթե մենք էլ գրուցեինք Տիրոջ հետ այնքան, որքան կինը, մենք էլ այդպիսի հաջողություն կունենայինք՝ վկայել մեր «բնակա-

վայրի մարդկանց»: Հիսուսը գրույցը խընդրանքով սկսեց: Ծանապարհորդությունից հոգնած լինելով՝ Նա նրան ասաց. **«Ինձ ջուր տուր, խմեմ»:**

4:8. Այս համարը բացատրում է մարդկային տեսանկյունից, թե ինչու է Տերը նրանից ջուր խնդրում: **Քանի որ Իր աշակերտները** Սյուքար **Էին գնացել, որ ուտելիք գնեն:** Նրանք իրենց հետ էին տարել ջրի դույլը: Ուստի Տերը ոչինչ չունեի ջրհորից ջուր հանելու համար:

4:9. Կինը Տեր Հիսուսին ճանաչեց որպես **հրեա** և զարմացավ, որ Նա **սամարացու** հետ խոսեց: Սամարացիները կարծում էին, որ Հակոբի ցեղից են եկել, և իրենք իրենց ճշմարիտ իսրայելացիներ էին համարում: Իրականում, նրանք հրեաների և հեթանոսների խառնուրդ էին: Գարիգին լեռը համարվում էր նրանց երկրպագության պաշտոնական վայրը: Այդ լեռը գտնվում էր Սամարիայում և լավ երևում էր Տիրոջն ու Նրա հետ գրուցող կնոջը: Հրեաները սամարացիների հետ անհաշտելի ստեղծույթյամբ էին վերաբերվում: Նրանք սամարացիներին խառնածին էին համարում: Այդ իսկ պատճառով սամարացի կինը Տեր Հիսուսին ասաց. **«Դու, որ հրեա ես, ինչպե՞ս ես ինձանից՝ մի սամարացի կնոջից, խմելու ջուր ուզում»:** Նա դեռ չէր հասկանում, որ իր Արարչի հետ է խոսում, և Նրա սերը բարձր է մարդկային մանր տարբերություններից:

4:10-11. Շնորհի խնդրելով՝ Տերն արթնացրեց նրա շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը: Հիմա Նա ավելի է գրգռում նրա հետաքրքրությունը՝ Իր մասին խոսելով որպես և՛ Աստված, և՛ Մարդ: Նա ամեն բանից առաջ **Աստծո պարզեն էր:** Աստված տվեց Իր միակ, միածին Որդուն, որպեսզի Նա դառնա աշխարհի Փրկիչը: Բայց Նա նաև Մարդ էր, Ով ճանապարհին հոգնել էր ու **ջուր** էր խնդրում: Այլ խոսքերով, եթե կինը հասկանար, որ Նա, Ում հետ ինքը խոսում է, մարմնով հայտնրված Աստվածն է, նա ինքը Նրանից օրհնություն կխնդրեր, **և Նա էլ նրան կտար կենդանի ջուրը:** Կինը բառացի հասկացավ

«ջուր»-ը և որոշեց, որ Նա ոչինչ չունի ջուր քաշելու համար: Նա չճանաչեց Տիրոջը և չկարողացավ ամբողջությամբ հասկանալ Նրա խոսքերը:

4:12. Նրա շփոթությունն ավելի խորացավ, երբ մտածեց **հայր Հակոբի** մասին, **որ այս հորը տվեց** նրանց: Հենց **ինքը, իր որդիները և իր հոտերը** դրանից խմեցին: Հիմա՝ հարյուրամյակներ անց, հայտնվել է մի հոգնած ճամփորդ, ով ջուր է խնդրում Հակոբի ջրհորից ու հայտնում, որ կարող է Հակոբի տված ջրից ավելի լավ ջուր տալ: Եթե Նա ավելի լավն ունի, ինչո՞ւ է այդ դեպքում Հակոբի ջրհորից ջուր խնդրում:

4:13. Ուստի Տերն սկսեց բացատրել Հակոբի հորի ջրի և այն ջրի միջև եղած տարբերությունը, որը Նա կտա: **Ով այս ջրից խմի, նորից կծարավի:** Սամարացի կինը սա լավ գիտեր: Օրըստօրե նա գալիս էր այստեղ՝ ջուր քաշելու, բայց միևնույնն էր, երբեք չէր բավարարում: Նույնը վերաբերում է աշխարհի բոլոր ջրհորներին: Մարդիկ փնտրում են երկրավոր բավականություն ու բավարարվածություն, բայց այն չի կարող հագեցնել մարդու սրտի ծարավը: Ինչպես ասել է Օգոստինոսն իր **«Խոստովանություններում».** «Օ՛, Տեր, Դու ստեղծեցիր մեզ Քեզ համար, ու մեր սիրտն անհանգիստ է, մինչև որ Քո մեջ չհանգստանա»:

4:14. Հիսուսի տված ջուրը իսկապես հագեցնում է ծարավը: **Ով կխմի** Քրիստոսի օրհնությունն ու ողորմությունը, նա **չի ծարավի** նորից: Նրա պարզենները ոչ միայն լիությամբ լցնում են սիրտը, այլ բխում են Նրա լիությունից: Դրանք նման են բխող աղբյուրներին՝ մշտապես լեփ-լեցուն դարձնելով ոչ միայն այս, այլ նաև հավիտենական կյանքում: **«Հավիտենական կյանքի համար բխող»** արտահայտությունը նշանակում է, որ ջուրը, որը Քրիստոսն է տալիս, սահմանափակված չէ երկրավոր հնարավորություններով, այլ պետք է հավիտյան բխի: Հակադրությունն ակնհայտ է: Այն ամենը, ինչով կարող է ապահովել երկիրը, անբավարար է մարդկային սիրտը լցնելու համար, բայց Քրիստոսի պարզենած օրհնությունները

որ ոչ միայն լցնում են սիրտը, այլև այնքան մեծ են, որ սիրտը չի կարող այն տեղավորել:

Ամբողջ հսկա աշխարհը բավարար չէ, Որպեսզի լցնի փոքրիկ սրտի երեք անկյունները.

Նա շարունակում է ծարավել ու պաղատել.

Միայն նրան ստեղծած Երրորդությունը կարող է

Բավարարել մարդու հսկայական եռանկյունաձև սիրտը:

Չորջ Հերբերտ

Այս աշխարհի հաճույքներն ընդամենը մի քանի կարճ տարիների համար են, իսկ Քրիստոսի պարզևաճ ուրախությունները շարունակվելու են նաև **հավիտենական կյանքում**:

4:15. Երբ **կինը** լսեց այդ հրաշալի ջրի մասին, անմիջապես ցանկացավ ունենալ այն: Բայց նա դեռ մտածում էր *սովորական* ջրի մասին: Նա չէր ուզում ամեն օր **գալ** ջրհորի մոտ, ջուր **հանել** և տանել գլխին դրած ծանր կուժով: Նա չհասկացավ, որ Տեր Հիսուսը խոսում էր հոգևոր ջրի մասին, որ Նա նկատի ուներ այն օրհնությունները, որոնք մարդու հոգու մեջ են գալիս Հիսուսի վրա ունեցած հավատի շնորհիվ:

4:16. Այստեղ գրույցի թեման հանկարծ կտրուկ փոխվում է: Կինը դեռ նոր էր ջուր խնդրել, երբ Տեր Հիսուսն առաջարկում է նրան **ամուսնուն կանչել**: Ինչո՞ւ: Նախքան փրկություն ստանալը կինը պետք է ընդուներ իր մեղքը: Նա պետք է Քրիստոսի մոտ գար անկեղծ զղջմամբ ընդունելով իր հանցանքն ու ամոթը: Տեր Հիսուսն ամեն ինչ գիտեր նրա մեղավոր կյանքի մասին, և Նա որոշեց աստիճանաբար, քայլ առ քայլ նրան առաջնորդել մեղքի գիտակցությանը:

Միայն նրանք կարող են փրկվել, ովքեր գիտակցում են, որ կորած են: Բոլոր մարդիկ էլ կորած են, բայց ոչ բոլորն են ուզում ընդունել դա: Ցանկանալով մարդկանց շահել Քրիստոսի համար՝ մենք ոչ մի դեպքում չպետք է խույս տանք մեղքի վերաբերյալ հարցից: Մարդիկ պետք է դեմ առ դեմ կանգնեն այն փաստի առաջ, որ մեղքի ու

օրինազանցության մեջ մեռած են, որ իրենց Փրկիչ է պետք, որ իրենք իրենց չեն կարող փրկել, որ Հիսուսն է Փրկիչը, որ Նրա կարիքն ունեն, որ միայն Նա է փրկում, եթե զղջան իրենց մեղքերի համար և հավատան Նրան:

4:17. Սկզբում **կինը** փորձեց առանց ստելու գաղտնի պահել իր իրական վիճակը: Նա **պատասխանեց**. **«Ես ամուսին չունեմ»**: Հնարավոր է, որ իրավաբանական տեսանկյունից նրա հաստատումը հավաստի է: Բայց դա ասվեց, որպեսզի թաքցնի ոչ իր ամուսինը եղող մեկի հետ համատեղ, մեղավոր կյանքով ապրելու վանող փաստը:

«Նա գրուցում է կրոնից, աստվածաբանություն քննարկում, թեթևակի հեզնում, ձևացնում, որ ցնցված է: Ինչ-որ պետք է, անում է, միայն թե Հիսուսին չթույլատրի նայել իր խռովահույզ հոգու մեջ, որն ինքն էլ է փորձում իրենից թաքուն պահել»:

*Սուրբգրության միավորում
ամենօրյա նշումներ*

Տեր Հիսուսը՝ որպես Աստված, ամեն ինչ գիտեր նրա մասին: **Հիսուսը նրան ասաց**. **«Լավ ասացիր, թե ամուսին չունեմ»**: Կինը կարող էր մոլորության մեջ առաջնորդել իր մտերիմներից ցանկացածին, բայց ոչ այս Մարդուն. Նա կնոջ մասին ամեն ինչ գիտեր:

4:18. Տերը երբեք չի օգտագործել բոլորի մասին ամեն ինչ իմանալու իր ամբողջական գիտությունը մարդուն աննպատակ բացահայտելու և ամաչեցնելու համար: Այստեղ Նա անցնում է բացահայտման, որպեսզի մարդուն ազատի մեղքի բեռից: Ինչպես որ պետք է լիներ, կինն այլապվեց, երբ Հիսուսը նրան պատմեց նրա անցյալը: Նա **հինգ մարդ էր ունեցել**, և ում հետ ապրում էր հիմա, **իր ամուսինը չէր**:

Այս համարի մասին տարբեր կարծիքներ են արտահայտում: Ոմանք կարծում են, որ նախորդ հինգ ամուսինները կամ մահացել են, կամ էլ նրան թողել, և որ նրանց հետ կապված ոչ մի մեղանշական բան չկար: Դա այդպես էր, թե ոչ, մի բան հստակ է. այդ

կինը պոռնիկ էր: «**Եվ նա, որ հիմա ունես, քո ամուսինը չէ**»: Սա կարևոր նկատողություն է: Կինը մեղքի մեջ էր, և քանի դեռ այդ վիճակում էր, Տերը չկարողացավ նրան «կենդանի ջրով» օրհնել:

4:19. Երբ կյանքի ամբողջ պատկերը երեվաց կնոջը, նա հասկացավ որ իր գրուցակիցը սովորական Մարդ չէ: Սակայն դեռ չէր գիտակցել, որ Նա Աստված է: Ամենաբարձր գնահատականը, որ նա կարող էր Հիսուսին տալ, այն էր, որ նա **մարգարե** է, այսինքն՝ Աստծո մունետիկը:

4:20. Կինը, ամենայն հավանականությամբ, գիտակցեց իր մեղքը և փորձեց փոխել խոսակցության թեման՝ հարցնելով երկրպագության ճշմարիտ վայրի մասին: Հնարավոր է «**Մեր հայրերը այս լեռան վրա երկրպագություն արեցին**» խոսքերը ասելիս, նա մատնացույց էր անում մոտակայքում վեր խոյացող Գարիզիմ լեռը: Այնուհետև նա Տիրոջը հիշեցրեց, որ հրեաները **երկրպագության ճիշտ վայր** համարում են **Երուսաղեմը**:

4:21. Հիսուսը խույս չտվեց նրա մեկնաբանությունից, այլ այն օգտագործեց հոգեվոր հաջորդ ճշմարտությունը հաղորդելու համար: Նա կնոջն ասաց, որ **ժամանակը գալիս է, երբ կերկրպագեն ո՛չ Գարիզիմ լեռան վրա և ո՛չ էլ Երուսաղեմում**: ՀՀ-ում Երուսաղեմը Աստծո կողմից ընտրված քաղաքն էր, որտեղ պետք է Նրան երկրպագեին: Երուսաղեմի տանարն Աստծո բնակության վայրն էր և բարեպաշտ հրեաներն այնտեղ էին գալիս իրենց գոհաբերություններով ու նվիրատվություններով: Բնականաբար ՆԿ-ի շրջանում ամեն ինչ այլ է: Աստված երկրի վրա երկրպագության վայր չի սահմանել: Տերը դա ավելի մանրամասն քացատրեց հաջորդ համարներում:

4:22. «**Ղուք չգիտեք, թե ինչ եք պաշտում**» խոսքերով Տերը դատապարտեց սամարացիների երկրպագության ձևը: Սա ակնհայտ հակադրության մեջ է գտնվում ժամանակակից կրոնական գործիչների այն ուսմունքի հետ, ովքեր ասում են, թե բոլոր կրոններն էլ լավ են և, վերջիվերջո, բոլորն

էլ երկինք են տանում: Տեր Հիսուսն այս կնոջը հաղորդեց, որ սամարացիների պաշտամունքն Աստծո կողմից հեղինակավորված չէ, ոչ էլ ընդունված է Նրա կողմից: Այդ պաշտամունքը հորինված է մարդու կողմից և չի հաստատվում Աստծո Խոսքով: Հրեաները բոլորովին այլ ձևով էին պաշտում. Աստված նրանց առանձնացրել էր որպես Իր ընտրյալ երկրավոր ժողովուրդ և տվել էր պաշտամունքի ձևի հետ կապված բոլոր հրահանգները:

«**Փրկությունը հրեաներից է**» ասելով՝ Տերը սովորեցրեց, որ Աստված հրեաներին ընտրեց, որպեսզի լինեն Նրա պատգամավորները և միայն նրանց տվեց սուրբգրությունը: Հենց հրեաների միջոցով էլ ուղարկվեց Մեսիան: Նա ծնվեց հրեա մորից:

4:23. Այնուհետև Հիսուսը սամարացի կնոջը հաղորդեց, որ Իր գալուստով այլևս Աստծուն երկրպագելու համար որոշակի վայր չի լինելու: Սրանից հետո Տեր Հիսուսին հավատացողները կարող են Աստծուն երկրպագել ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում: Ճշմարիտ երկրպագություն նշանակում է, որ հավատացյալը հավատով մտնում է Աստծո ներկայության մեջ և *այնտեղ* փառաբանում ու պաշտամունք է մատուցում Նրան:

Մարդ կարող է աշխատասենյակում, բանտում կամ դաշտում լինել, բայց նրա հոգին հավատի միջոցով կարող է մոտ լինել Աստծո հետ երկնային բնակարաններում: Հիսուսը սամարացի կնոջը հաղորդեց, որ այդ պահից Հորը կերկրպագեն **հոգով ու ճշմարտությամբ**: Հրեաները երկրպագությունը նվագեցրել, դարձրել էին արտաքին ձևերի ու արարողակարգերի մի շարք: Նրանք կարծում էին, որ խստագույնս և պաշտոնապես կառչելով Օրենքի ստառից ու որոշակի ծեսեր կատարելով՝ երկրպագում են Հորը: Բայց դա հոգով երկրպագություն չէր: Այն արտաքին էր, ոչ թե ներքին: Նրանց մարմինները կարող էին խոնարհվել մինչև գետին, բայց նրանց սիրտը ճիշտ չէր Աստծո առջև: Նրանք շարունակում էին ճնշել աղքատներին կամ խարդախ գործարքներ կնքել առևտրի բնագավառում:

Սամարացիներն էլ իրենց երկրպագութեան ձևն էին մշակել, բայց դա էլ կեղծ էր: Այն սուրբգրային հենք չուներ: Նրանք ստեղծել էին իրենց սեփական կրոնը և պահում էին իրենց իսկ հնարած ծեսերը: Այսպիսով, երբ Տերն ասաց, որ պետք է երկրպագել **հոգով ու ճշմարտությամբ**, Նա հանդիմանեց և՛ իրեաներին, և՛ սամարացիներին: Ավելին, Նա նրանց հաղորդեց, որ Իր գալուստով մարդիկ Իր միջոցով կարող են մերձենալ Աստծուն ճշմարիտ ու անկեղծ երկրպագությամբ: Խորհե՛ք սրա մասին: **Որովհետև Հայրը այսպիսիներին է փնտրում՝ Իրեն պաշտելու:** Աստված ուզում է, որ մարդիկ Իրեն պաշտեն: Արդյոք Նա ստանո՞ւմ է դա ինձնից:

4:24. Աստված Հոգի է. սա է Աստծո սահմանումը: Նա մարդկային բոլոր սխալներին ու սահմանափակումներին ենթակա մարդ չէ: Նա սահմանափակված չէ ո՛չ ժամանակով, ո՛չ տարածությամբ: Նա միաժամանակ ամենուրեք եղող, ամենագետ, ամենակարող ու անտեսանելի Անձնավորություն է: Նա կատարյալ է ամեն բանում: Հետևաբար **Նրան պաշտողները պետք է հոգով ու ճշմարտությամբ պաշտեն:** Ձևականություն ու կեղծավորություն չպիտի լինի: Ծիսակատարություններն անարժեք են, եթե ներքին կյանքը փացած ու ապականված է, նույնիսկ եթե Աստված Ինքն է հաստատել այդ ծեսերը: Աստված պնդում է, որ մարդը պետք է Իրեն մերձենա կոտրված ու ապաշխարող սրտով: Այս գլխում ևս երկու անգամ օգտագործված է «պետք է» բառը, մեկը վերաբերում է հոգիներ Շահողին («պետք է» - 4:4), մյուսը՝ երկրպագողին (4:24):

4:25. Լսելով Տիրոջը՝ սամարացի կիներն աստիճանաբար եկավ **Մեսիայի** գալստյան մտքին: Աստծո Սուրբ Հոգին նրա մեջ **Մեսիայի** գալուստը տեսնելու ցանկություն առաջացրեց: Նա վստահ արտահայտվեց, որ երբ Մեսիան գա, **ամեն բան** կասի մարդկանց: Դա ասելով՝ նա ցույց տվեց Քրիստոսի գալու նպատակներից մեկի շատ հստակ ըմբռնումը:

«**Մեսիան, որ Քրիստոս է կոչվում**» արտահայտությունը պարզապես այն բանի բացատրությունն է, որ այս երկու բառերը միևնույն բանն են նշանակում: **Մեսիան** Աստծո Օծյալի երբայերեն անվանումն է, իսկ **Քրիստոսը՝** հունարեն համարժեքը:

4:26. **Հիսուսն ասում է նրան. «Ես, որ քեզ հետ խոսում եմ, Նա եմ»:** Տեր Հիսուսի խոսքերը խորհմաստ են: «**Ես**» բառը օգտագործելով՝ Նա իրեն վերագրեց Աստծո անուններից մեկը, որով Աստված Իրեն կոչում էր ՀԿ-ում: Նա ասաց. «ԵՄ ԵՄ, քեզ հետ խոսողը», կամ այլ խոսքով. «Եհովան, Ով խոսում է քեզ հետ»: Հիսուսը սամարացի կնոջը մի ցնցող ճշմարտություն հայտարարեց, որ նրա հետ խոսողը հենց այն Մեսիան է, ում նա փափագում էր տեսնել, և որ Նա նույնպես Աստված է: ՀԿ-ի Եհովան ՆԿ-ի Հիսուսն է:

4:27. Մյուսարից վերադառնալով՝ **աշակերտները** գտան Հիսուսին **սամարացի կնոջ հետ** խոսելիս: Նրանք զարմացան, որ Հիսուսը նրա հետ զրույցի էր բռնվել, քանի որ այդ կինը սամարացի էր: Հավանաբար նաև հասկացան, որ նա մեղավոր կին էր: **Բայց ոչ ոք** Տիրոջը չհարցրեց, թե Նրան ի՞նչ է պետք այդ կնոջից, կամ **Հիսուսը ինչո՞ւ էր խոսում նրա հետ:** Ինչ-որ մեկը լավ է ասել. «Աշակերտները զարմացան, որ Նա զրուցում էր կնոջ հետ, բայց ավելի զարմանք պիտի պատճառեր այն, որ Հիսուսը խոսել էր իրենց հետ»:

4:28. «**Կիներն էլ իր կուժը թողեց**»: Դա խորհրդանշում է կյանքի այն տարբեր բաները, որոնք նա օգտագործել էր իր թաքուն ցանկությունները բավարարելու համար: Դրանք բոլորը ձախողվեցին: Հիմա, երբ նա գտավ Տեր Հիսուսին, նախկինում իր կյանքում արժեք ունեցող բաներն իմաստագրվեցին:

Կոտրած տիկերին հուսալով
 Ծարավ էի տանջվում,
 Դրանց ջրերին խույս տալով
 Վշտերս էին ծաղրում:
 Հիսու՛ս, հիմա Դու ես միայն
 Իդձերս բավարարում,

Կա սեր ու կյանք և ցնծություն,
Տեր Հիսուս, Քն գրկում:

Բ. Ե.

Նա ոչ միայն **թողեց իր կուժը**, այլև **գնաց քաղաք**: Փրկություն ստանալով՝ մարդը միշտ այդ պահին սկսում է մտածել ուրիշների՝ կյանքի ջրի կարիք ունեցողների մասին:

Ջ. Հ. Թեյլորն ասել է. «Ոմանք խանդավառությամբ կցանկանալին լինել առաքյալների ժառանգորդները, իսկ ես կնախընտրեի լինել սամարացի կնոջ ժառանգորդը, ով հոգիներ շահելու համար մոռացավ իր կուժը, երբ աշակերտները գնացել էին ուտելիք գնելու»:

4:29-30. Սամարացի կնոջ վկայությունը հասարակ էր, բայց արդյունավետ: Նա հրավիրեց բոլոր համաքաղաքացիներին՝ **գալու և տեսնելու մի Մարդու, Ով իրեն ասաց ամեն ինչ, ինչ-որ նա կատարել էր**: Նա նաև նրանց սրտում դրեց այն միտքը, թե կարող է պատահել, որ այդ Մարդն իսկապես Մեսիան է: Նա ինքը չէր կասկածում դրանում, որովհետև Հիսուսն արդեն նրան հայտնել էր, որ Ինքը **Քրիստոսն է**: Բայց կինը նրանց մեջ հետաքրքրություն արթնացրեց, որ գնան Հիսուսին ու իրենք անձամբ բացահայտեն: Հստակ է, որ այս կինն իր ավանդում հայտնի էր իր մեղքով ու ամոթով: Մարդիկ հավանաբար ապշեցին՝ տեսնելով նրան բոլորի մեջ կանգնած և Տեր Հիսուս Քրիստոսի մասին վկայելիս: Կնոջ վկայությունն արդյունավետ էր: Համաքաղաքացիները, թողնելով տունն ու աշխատանքը, գնացին Հիսուսին փնտրելու:

Ի. Իր Հոր կամքը կատարող Որդու ուրախությունը (4:31-38)

4:31. Երբ **աշակերտներն** ուտելիքով վերադարձան, խնդրեցին Տիրոջը, որ **ուտի**: Ակնհայտ է՝ նրանք չէին գիտակցում կատարվող իրադարձությունների կարևորությունը: Այդ պատմական պահին, երբ սամարացիների քաղաքը կանգնեց փառքի Տիրոջ առջև, նրանց մտքերը զբաղված էին մարմինները հագեցնելով, ոչ թե ինչ-որ ավելի բարձր բաներով:

4:32. Տեր Հիսուսը գտավ **ուտելիք** և աշակցություն՝ Իր Հոր համար երկրպագողներ շահելով: Այս ուրախության հետ համեմատած՝ նյութական բավարարությունը Նրա համար շատ նշանակություն չուներ: Մենք կյանքում ստանում ենք այն, ինչի ետևից գնում ենք: Աշակերտներին ուտելիքն էր հետաքրքրում: Նրանք քաղաք էին գնացել՝ կերակուր գնելու և ուտելիքով վերադարձան: Տիրոջը հետաքրքրում էին հոգիները: Նա ցանկանում էր մեղքից փրկել տղամարդկանց ու կանանց և նրանց տալ կյանքի ջուրը: Նա էլ գտավ այն, ինչի ետևից գնում էր: Իսկ մեզ ի՞նչ է հետաքրքրում:

4:33. Իրերին աշխարհային հայացքով նայելն **աշակերտներին** խանգարեց ըմբռնել Տիրոջ խոսքերի նշանակությունը: Նրանք չհասկացան, որ «հոգևոր հաջողության ուրախությունն ու երջանկությունը կարող է շատ ավելի մեծ լինել մարմնի կարիքներից և այդ պահին հագեցնել մսի և խմիչքի պես»: Ուստի եզրակացրին, որ ինչ-որ մեկը եկել ու կերակուր է **բերել** Տեր Հիսուսին:

4:34. Կրկին Տեր Հիսուսը փորձեց նրանց ուշադրությունը նյութականից շրջել հոգեվորի վրա: Նրա **կերակուրը Իրեն ուղարկողի կամքն անելն ու Նրա գործը կատարելն էր**, այն, ինչ Աստված հանձնարարել էր Նրան: Սա չի նշանակում, որ Տեր Հիսուսը ձեռնպահ էր մնում սովորական կերակուր ուտելուց, այլ որ Նրա կյանքի բարձրագույն նպատակը ոչ թե մարմինը հանեցնելն էր, այլ Աստծո կամքը կատարելը:

4:35. Հնարավոր է, որ աշակերտները քննարկում էին մոտակա հունձքի մասին: Կամ էլ հրեաներն այսպիսի ասացվածք ունեին. «**Չորս ամիս է** ցանքի և **հնձի** միջև»: Ինչ էլ որ լինի, Տերը կրկին օգտագործում է ֆիզիկական երևույթները, հունձը, որպեսզի հոգևոր դաս սովորեցնի: Աշակերտները չպետք է մտածեն, որ հունձը կատարվում է միայն որոշակի ժամանակում: Նրանք իրենց պետք չէ թույլ տան կյանքը ծախսել կերակուր և հագուստ փնտրելու վրա՝ մտածելով, որ Աստծո գործը կարելի է հետո էլ կատարել: Նրանք պետք է հասկանան, որ

դաշտերն արդեն սպիտակել են ու պատրաստ են հնձի համար: Դաշտեր ասելով այստեղ, իհարկե, հասկացվում է աշխարհը: Այս խոսքերն ասելիս Տերը հնձի դաշտերի մոտն էր, որոնք լցված էին սամարացի տղամարդկանցով ու կանանցով: Նա աշակերտներին հաղորդեց, որ նրանց մեծ աշխատանք է սպասվում հունձը հավաքելու համար, և որ նրանք պետք է այն հավաքեն անհապաղ ու ջանասիրաբար:

Այսօր Աստված ասում է մեզ՝ բոլոր հավատացյալներին. **«Բարձրացրե՛ք ձեր աչքերը և դաշտերի՛ն նայեցե՛ք»:** Մինչ մենք ժամանակ ենք վատնում՝ խորհելով աշխարհի բազմաթիվ կարիքների մասին, Տերը բեռնավորում է մեր սրտերը մեր շուրջը կոչող հոգիներին փնտրելու հոգով: Մենք պետք է որոշենք Նրա անունով առաջ գնալ, որպեսզի փնտրենք ու խուրձ-խուրձ կապենք հավաքած հասկերը:

4:36. Այստեղ Տեր Հիսուսը բացատրում է աշակերտներին, թե նրանք ինչ բանի համար են կանչված: Նա ընտրեց նրանց հնձի համար: Նրանք **պարզևներ** կատանան ոչ միայն այս կյանքում, այլ նաև **պտուղ** կհավաքեն հավիտենական կյանքի համար: Քրիստոսին ծառայելը մեծ վարձատրություն է մեր կյանքում: Բայց գալիք օրերում հնձողները կատանան լրացուցիչ ուրախություն, երբ երկնքում տեսնեն իրենց հավատարմության արդյունքը հանդիսացող փրկված հոգիներին Ավետարանը հռչակելիս:

Այս 36 համարը սովորեցնում է, որ մարդը հավիտենական կյանքը չի վաստակում հնձի նկատմամբ ունեցած իր հավատարմությանը, այլ, ավելի շուտ, նրա աշխատանքի **պտուղը** տարածվում է հավիտենական կյանքում:

Երկնքում և՛ ցանողը, և՛ հնձողը **միասին ուրախանալու են:** Երկրավոր կյանքում դաշտը սկզբում պատրաստում են ցանքի համար, իսկ հետո ցանում են սերմը: Հետո էլ հավաքում են ցորենը: Նույնը կատարվում է հոգևոր կյանքում: Սկզբում պետք է քարոզվի պատգամը, հետո այն «ջրում են» աղոթքով: Իսկ երբ գալիս է հնձի ժամանակը,

բոլոր նրանք, ովքեր մասնակցել են այդ աշխատանքին, **միասին կուրախանան:**

4:37. Մրանում Տերը տեսնում էր այն ժամանակվա. **«Մեկը սերմում է, և ուրիշը՝ հնձում»** խոսքի իրականացումը: Որոշ քրիստոնյաներ կանչված են Ավետարանը քարոզելու երկար տարիներ և մեծ պտուղ չեն տեսնում իրենց աշխատանքից: Ուրիշներ հետևում են նրանց և բազմաթիվ հոգիներ են բերում Տիրոջը:

4:38. Հիսուսն Իր աշակերտներին այն վայրերն էր ուղարկում, որոնք արդեն պատրաստված էին ուրիշների կողմից: Հին Կտակարանի ամբողջ ժամանակաշրջանում մարգարեները կանխատեսել էին Ավետարանի ու Մեսիայի դարաշրջանն սկսելու մասին: Հետո, որպես Տիրոջ նախակարապետ, եկավ Հովհաննես Մկրտիչը՝ փրճաբերելով ու պատրաստելով մարդկանց սրտերը Հիսուսին ընդունելու համար: Տերն Անձամբ ցանեց սերմեր Սամարիայում և նախապատրաստեց հունձը հնձվորների համար: Հիմա աշակերտները պատրաստ էին դուրս գալ բերքի դաշտերը: Տերը ցանկանում էր, որ նրանք իմանային շատերի Քրիստոսին դառնալը տեսնելու ուրախությունը, թեև ուրիշներն էին աշխատել, իսկ իրենք մտել են նրանց **աշխատանքի** մեջ:

Շատ քչերն են փրկություն ստանում շնորհիվ մի մարդու ծառայության: Մարդկանց մեծամասնությունը մինչ Փրկչին ընդունելը Ավետարանը շատ անգամներ է լսել: Հետևաբար, նա, ով վերջինն է, որ մեկին առաջնորդել է Քրիստոսին, չպետք է իրեն բարձրացնի, կարծես թե ինքն էր Աստծո ձեռքում միակ գործիքը, որ օգտագործվեց այդ սքանչելի գործում:

I. Շատ սամարացիներ հավատացին Հիսուսին (4:39-42)

4:39. Սամարացի կնոջ պարզ ու անկեղծ վկայության շնորհիվ **շատ** մարդիկ **հավատացին** Տեր Հիսուսին: Այդ կինն ընդամենը մի քանի բառ ասաց. **«Նա ինձ ասաց ամեն բան, որ ես երբևէ արել եմ»**, բայց դա բավարար եղավ, որպեսզի նրանց Փրկչին առաջնորդի: Քրիստոսի մասին վկայելիս այս

խոսքերը պետք է մեզ պարզության, համարձակության, անմիջականության օրինակ ծառայեն:

4:40. Սամարացիների կողմից Տեր Հիսուսին ցույց տրված ընդունելությունը լիովին հակապատկերն էր հրեաների կողմից Նրան ցույց տրված ընդունելության: Հավանաբար, սամարացիներն արժանավայել կերպով գնահատեցին այս հիանալի Մարդուն և **Նրան աղաչեցին, որ իրենց մոտ մնա:** Ընդունելով հրավերը՝ Տերը **երկու օր մնաց այնտեղ:** Միայն պատկերացրե՛ք, թե ինչպիսի առանձնաշնորհումից էր օգտվում Սյուքար քաղաքը՝ առիթ ունենալով այդ ողջ ժամանակվա ընթացքում վայելել կյանքի ու փառքի Տիրոջ ներկայությունը:

4:41-42. Երկու միանման դարձ չի լինում: Ոմանք հավատացին սամարացի կնոջ վկայությամբ: Ավելի շատ մարդիկ **հավատացին** հենց Տեր Հիսուսի խոսքերի համաձայն: Աստված տարբեր միջոցներ է օգտագործում, որպեսզի մեղավորներին առաջնորդի դեպի Իրեն: Միայն մի բան է անհրաժեշտ. հավատալ Տեր Հիսուս Քրիստոսին: Հրաշալի է լսել, թե ինչպես էին այդ սամարացիները Փրկչի մասին այդպիսի հստակ վկայություն տալիս: Նրանք ոչ մի կասկած չունեին: Նրանք ստացել էին փրկության լիակատար վստահությունը՝ հիմնրված ոչ թե կնոջ խոսքերի, այլ հենց Տեր Հիսուս Քրիստոսի: Լսելով Հիսուսին ու հավատով ընդունելով Նրա խոսքերը՝ սամարացիներն **իմացան, որ իրոք Նա է Քրիստոսը**¹⁰ **աշխարհի Փրկիչը:** Միայն Սուրբ Հոգին կարող էր նրանց տալ այս հասկացողությունը: Հրեաները, ակնհայտ է, մտածում էին, որ Մեսիան կգա միայն իրենց համար: Բայց սամարացիները հասկացան, որ Քրիստոսի առաքելության արդյունքները տարածվելու են ողջ աշխարհով մեկ:

Խ. Երկրորդ հրաշքը՝ ազնվականի որդու բժշկությունը (4:43-54)

4:43-44. Սամարիայում անցկացրած երկու օրերից հետո Տերն Իր երեսը դեպի **Գալիլիա** դարձրեց: 44-րդ համարը հաս-

կանալու որոշ դժվարություն կա: Այնտեղ ասված է, որ Փրկչի՝ Սամարիայից Գալիլիա գնալու պատճառն այն էր, որ **մարգարեն իր գավառում պատիվ չունի:** Սակայն Նրա հայրենի երկիրը Գալիլիան էր, քանի որ Նազարեթ քաղաքը հենց այնտեղ էր գտնվում: Հնարավոր է, որ այս համարում նկատի ունի, որ Հիսուսը Գալիլիա գնաց, բայց ոչ Նազարեթ: Ամեն դեպքում, այն պնդումը, թե հարազատ քաղաքում մարդուն սովորաբար այնքան բարձր չեն գնահատում, որքան այլ տեղերում, անկասկած, ճշմարտություն է: Ազգականներն ու բարեկամները հիշում են Նրան որպես մի հասարակ տղա, որը ոչնչով չէր տարբերվում ուրիշներից: Իհարկե, Տեր Հիսուսի համաքաղաքացիները Նրան չէին գնահատում ըստ արժանվույն:

4:45. **Գալիլիա** վերադառնալով՝ Տերը բարենպաստ ընդունելություն գտավ, որովհետև մարդիկ **տեսել էին այն բոլոր հրաշքները, որ Նա արեց տոնի ժամանակ Երուսաղեմում:** Ակնհայտ է, որ այստեղ հիշատակված գալիլիացիները հրեաներ էին: Նրանք **Երուսաղեմ** էին գնացել երկրպագության: Այնտեղ նրանք տեսել էին Տիրոջը և դարձել Նրա գորավոր գործերի վկաները: Հիմա ցանկանում էին Հիսուսին իրենց մոտ՝ Գալիլիայում տեսնել, ոչ թե որովհետև ընդունում էին Նրա՝ Աստծո Որդի լինելը, այլ նրանց համար չափազանց հետաքրքիր էր տեսնել Մեկին, Ով ամենուրեք այդքան խոսակցությունների պատճառ էր դարձել:

4:46. Կրկին **Կանա** բնակավայրն արժանացավ Տիրոջ անձնական այցին: Նրա առաջին այցելության ժամանակ մարդիկ տեսան, թե Նա ինչպես ջուրը գինու վերածեց: Հիմա էլ նրանք պիտի դառնային մյուս հզորագույն հրաշքի վկաները, որի լուրը պիտի հասներ նույնիսկ մինչև **Կափառնայում:** **Այնտեղ մի ազնվական մարդ կար, որի որդին Կափառնայումի մեջ հիվանդ էր:** Ըստ երևույթին, այդ մարդը Հերովդես թագավորին ծառայող հրեա մեկն էր:

4:47. **Նա լսել էր, որ Հիսուսը Հրեաստանից եկել է Գալիլիա:** Ըստ երևույթին,

նա հավատում էր Քրիստոսի բժշկելու կարողությանը, քանի որ անմիջապես եկավ **Նրա մոտ և աղաչում էր, որ իջնի և իր որդուն բժշկի, քանի որ մահամերձ էր**: Այդ իմաստով, նա ավելի էր վստահում Տիրոջը, քան Նրա հայրենակիցների մեծամասնությունը:

4:48. Ոչ միայն ազնվականին, այլ բոլոր հրեաներին դիմելով՝¹¹ Տեր Հիսուսը հիշեցրեց նրանց իրենց «ազգային յուրահատկության» մասին. նրանք ցանկանում էին նախ հրաշքներ տեսնել, իսկ հետո **հավատալ**: Ընդհանրապես, մենք գտնում ենք, որ ոչ թե հրաշքների, այլ Իր խոսքի վրա խարսխված հավատն է, որ բավարարում է Տեր Հիսուսին: Նրան ավելի պատիվ ենք տալիս պարզապես Իր ասածին հավատալով, քան երբ Նա դա ապացուցում է տեսանելի կերպով: Մարդուն հատուկ է նախ տեսնել, հետո հավատալ, իսկ Տեր Հիսուսը մեզ սովորեցնում է սկզբում հավատալ, հետո տեսնել:

Նշաններն ու զարմանահրաշ գործերն առնչվում են **հրաշքին**: **Նշանները** խորիմաստ կամ նշանակություն ունեցող հրաշքներ են: **Հրաշքները** մարդկանց վրա գերբնականորեն ազդող անսովոր երևույթներն են:

4:49. **Ազնվականը** ճշմարիտ հավատի համառությամբ պնդում էր, որ Տեր Հիսուսը կարող է որդուն բժշկել և խիստ փափագում էր, որ Տերն այցելի իրեն: Բայց նրա հավատը լիարժեք չէր: Նա կարծում էր, որ Հիսուսը պետք է կանգնի տղայի մահնակալի մոտ, որպեսզի բժշկի նրան: Փրկիչը չհանդիմանեց նրան դրա համար, այլ վարձատրեց նրա ցուցաբերած հավատի չափի համար:

4:50. Այստեղ մեզ ցույց է տրված մարդու հավատի անելու ընթացքը: Նա արտահայտեց իր հավատը, և Տերն էլ նրան ավելիով տվեց: Հիսուսը նրան տուն ուղարկեց՝ խոստանալով՝ «**Քո որդին կենդանի է**»: Որդին բժշկվեց: Առանց որևէ հրաշքի կամ տեսանելի ապացույցի՝ **մարդը հավատաց այն խոսքին, որ Հիսուսը նրան ասաց**, և իր ճամփան գնաց: Սա գործող հավատ է:

4:51-52. Ճանապարհին ազնվականին դիմավորեցին նրա **ծառաները** բարի լուրով, թե նրա **որդին** առողջ է: Լուրը նրան չցրնցեց: Նա հավատացել էր Տեր Հիսուսի խոստումին և հիմա տեսավ իր իսկ հավատի ապացույցը: Հայրը **հարցրեց** ծառաներին ժամանակի մասին, թե երբ է որդին **ապաքինվել**: Նրանց պատասխանը հաստատեց, որ ապաքինումը ոչ թե աստիճանաբար է տեղի ունեցել, այլ ակնթարթորեն:

4:53. Այժմ մի փոքրիկ կասկած անգամ չմնաց այս հիանալի հրաշքում: Նախորդ օրվա յոթերորդ ժամին Կանայում **Հիսուսն ասաց** ազնվականին. «**Քո որդին ապրում է**»: **Ճիշտ այդ նույն ժամին** Կափառնայումի մեջ որդին բժշկվեց, և տենդը նրան թողեց: Մրանից ազնվականն իմացավ, որ Տեր Հիսուսը կարիք չունի աղոթքի պատասխանի կամ ֆիզիկապես ներկա գտնվելու, որպեսզի հրաշք կատարի: Սա պետք է բոլոր քրիստոնյաներին մղի աղոթքի: Մենք հզոր Աստված ունենք, Ով լսում է մեր խնդրանքները և կարող է կատարել Իր մտադրությունները աշխարհի ցանկացած կետում և ցանկացած ժամանակ:

Ազնվականն **ինքը հավատաց և իր անբողջ տունը**: ՆԿ-ի այս և սրան նման համարներից ակնհայտ է, որ Աստված սիրում է տեսնել ընտանիքներին Քրիստոսի մեջ միավորված: Նա չի ուզում երկնքում բաժանված ընտանիքներ տեսնել: Նա հոգ է տանում, որպեսզի **ընտանիքի բոլոր անդամները** հավատան Իր Որդուն, և նշում է այս փաստերը:

4:54. Ազնվականի որդու բժշկությունը Տիրոջ ծառայության ընթացքում մինչ այդ պահը կատարված երկրորդ հրաշքը չէր: Դա **երկրորդ հրաշքն էր**, որը **Հիսուսը** կատարեց **Հրեաստանից Գալիլիա վերադառնալիս**:

III. ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ (5-րդ գլ.)

Ա. Երրորդ հրաշքը՝ անդամալույծի բժշկումը (5:1-9)

5:1. Հրեական տոներից մեկի ժամանակ

Էր: Շատերը ենթադրում են, որ խոսքը հրեական Չատկի մասին է, բայց չենք կարող լիովին վստահ լինել: Ծննդով հրեա լինելով, հնազանդ հրեաներին տրված Աստծո օրենքներին՝ **Հիսուսը Երուսաղեմ ելավ** տոնակատարության: Որպես Եհովա՝ Տեր Հիսուսն Ինքն էր, Ով ՀԿ-ում հաստատեց հրեական Չատկը: Որպես Իր Հորը հնազանդ Մարդ՝ Նա հիմա հնազանդվում էր Իր կողմից հաստատված օրենքներին:

5:2. Եվ Երուսաղեմում մի **ավագան** կար, որ **Բեթեհեզդա**¹² էր կոչվում, որ նշանակում է «կարեկցության տուն» կամ «գթության տուն»: Այդ **ավագանը** գտնվում էր **Ոչխարների դարպասի** մոտ: Նրա գտնվելու ճիշտ վայրը հայտնի է պեղումներից՝ խաչակիրների միաբանությանը պատկանող Սբ. Աննայի եկեղեցու մոտ: Ավագանի շուրջը **հինգ սրահներ** կային, այսինքն՝ բացօթյա շինություններ, որոնք կարող էին մեծ քանակությամբ մարդիկ պարունակել: Աստվածաշնչյան որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ այդ հինգ սրահներն իրենցից ներկայացնում են Մովսեսի օրենքը, որը անկարող է օգնել մարդուն դուրս գալու իր դժվարությունների միջից:

5:3. Ակնհայտ է, որ Բեթեհեզդայի ավագանը հայտնի էր որպես մի վայր, որտեղ հրաշքով բժշկություններ էին կատարվում: Մենք չգիտենք, թե այդ հրաշքները տարվա ողջ ընթացքում էին կատարվում, թե՛ երբեմն՝ միայն տոն օրերին: Ավագանի շուրջ շատ մեծ բազմությամբ **անկարող մարդիկ** կային պառկած, ովքեր բժշկվելու հույսով էին եկել: Ոմանք **կույր** էին, ոմանք՝ **կաղ**, որոշները՝ անդամալույծ:

Այս տարատեսակ թուլությունները ներկայացնում են մեղավոր մարդուն՝ նրա անօգնականությունը, կուրությունը, կաղությունը և ոչ պիտանի լինելը: Այդ մարդիկ, որոնց մարմինները տառապում էին մեղքի պատճառով, **սպասում էին ջրի շարժվելուն**: Նրանց սրտերը լի էին հիվանդություններից ազատվելու հույսով, և սրտանց փափագում էին ապաքինվել: Ջ. Գ. Բելեթն ասում է.

«Նրանք նվաղում էին անորոշ, հուսախաբեցնող ջրի շուրջը, թեև այնտեղ էր Աստծո Որդին... Անկասկած, սա դաս է մեզ համար: Ավագանը լի էր մարդկանցով, իսկ Հիսուսն անցնում էր աննկատ: Այսպիսին են մարդկային կրոնի նշանները. կանոններ՝ իրենց բարդ մեխանիզմներով, հրամաններ, իսկ Աստծո շնորհը՝ անտեսված»:¹³

5:4. Այստեղ մեր հետաքրքրասիրության բավարարման համար շատ քիչ բան է ասված: Մեզ պարզապես հաղորդվում է, որ **մի հրեշտակ** ժամանակ առ ժամանակ **իջնում էր ավագանի մեջ և ջրերը խառնում**: Եվ ով **առաջինն** էր մտնում դրա մեջ ջրերի շարժումից հետո, նա բժշկվում էր: Կարելի է երևակայել, թե դա ինչ խըրճայի տեսարան էր. օգնության կարոտ մարդիկ պայքարում են ջուրը մտնելու համար, չնայած որ միայն մի մարդ կարող էր բժշկվել:

Աստվածաշնչի տարբեր թարգմանություններում 3-րդ համարի վերջին մասը («ջրի շարժվելուն էին սպասում»), խոսքերից) և ամբողջ 4-րդ համարը բացակայում են, բայց ձեռագրերի մեծ մասում դրանք կան: Առանց այս բացատրության դժվար է հասկանալ, թե ինչու էին այդ հիվանդներն այնտեղ գտնվում:

5:5-6. Ավագանում մի մարդ կար, ով **երեսունույթ** տարի անդամալույծ էր: Դա նշանակում էր, որ նա հիվանդացել էր դեռ Փրկչի ծննդից առաջ: Տեր Հիսուսն ամեն ինչի մասին գիտեր: Նա երբեք չէր հանդիպել այդ մարդուն, սակայն գիտեր, որ նա **երկար ժամանակ է**, ինչ հիվանդ էր:

Միով ու կարեկցանքով լցված Հիսուսն ասաց նրան. «**Կամենո՛ւմ ես առողջ լինել**»: Հիսուսը գիտեր, որ դա մարդկային սրտի ամենամկրակաճ երազանքն է: Բայց Նա ցանկանում էր հասնել այն բանին, որ մարդն ընդունի բուժման համար իր անօգնականությունն ու մեծ կարիքը: Սա նաև վերաբերում է փրկությանը: Տերը գիտի, որ մենք ուզում ենք փրկություն գտնել, բայց սպասում է, որ մեր շուրթերից լսի մեր խոստովանությունը, որ մենք Իր կարիքն ու-

ներք և ընդունում ենք Իրեն՝ որպես մեր Փրկչի: Մեր կամքը չէ, որ փրկում է մեզ, սակայն մարդկային կամքը պետք է ի հայտ գա, նախքան Աստված փրկում է անձին:

5:7. Հիվանդի պատասխանը շատ խղճուկ էր: Երկար տարիներ նա պառկած էր ավագանի մոտ և սպասում էր, որ երբ **ջուրը խառնվի**, ինչ-որ մեկն իրեն ավագանի մեջ իջեցնի, բայց նրան օգնող չկար: Ամեն անգամ, երբ փորձում էր ինքն իրեն ջրի մեջ իջնել, մեկ ուրիշն ավելի շուտ էր իջնում: Սա մեզ հիշեցնում է մեզ սպասվող հիասթափության մասին, երբ սպավինում ենք մարդկանց վրա՝ հուսալով, որ մեզ կազատեն մեղքից:

5:8. Այդ մարդու համար որպես անկողին էր ծառայում փափուկ դռակը կամ թեթև ներքնակը: Հիսուսը հրամայեց նրան **վեր կենալ**, վերցնել իր անկողինն ու **քայլել**: Մեզ համար դասն այն է, որ փրկություն ստանալով՝ պետք է ոչ միայն վեր կենանք՝ կանգնենք, այլ նաև քայլենք: Տեր Հիսուսը մեզ բժշկում է մեղքի բորոտությունից, իսկ հետո ակնկալում, որ մեր ընթացքն արժանի լինի Իրեն:

5:9. Փրկիչը երբեք չի պատվիրում ինչ-որ բան անել՝ առանց դրա համար գործություն տալու: Մինչ դեռ Նա խոսում էր, նոր կյանքն ու գործությունը հոսեցին հիվանդի մարմնի մեջ: Հիվանդն առողջացավ նույն պահին: Դա աստիճանաբար առողջանալ չէր: Վերջությոները, որոնք տարիներով չէին գործել ու տկար էին, հիմա ուժով լցվեցին: Անմիջապես հետևեց Տիրոջ խոսքին հնազանդվելը: Հիվանդն **իր անկողինը վերցրեց ու քայլեց**: Ինչպիսի՜ մեծ սենսացիա էր, երբ երեսունույթ տարվա հիվանդությունից հետո նա ոտքի կանգնեց:

Այդ հրաշքը կատարվեց **շաբաթ** օրը՝ շաբաթվա յոթերորդ օրը, որը համապատասխանում է մեր շաբաթին: Հրեաներին արգելված էր որևէ գործ անել շաբաթ օրով: Այդ մարդը հրեա էր, բայց Տեր Հիսուսի խոսքերից հետո, չնայած այդ օրվան վերաբերող հրեական սովորությանը, չվախեցավ վերցնել ու տանել իր ներքնակը:

Բ. Հրեաների ընդդիմությունը (5:10-18)

5:10. Երբ **հրեաները** տեսան **շաբաթ օրը** իր ներքնակը կրող մարդուն, սկսեցին հանդիմանել նրան: Այդ մարդիկ շատ մեծ խրատությամբ, նույնիսկ դաժանությամբ, պահանջում էին իրենց կրոնական սովորությունների կատարումը և հաստատորեն պահպանում էին Օրենքի տառը, բայց միևնույն ժամանակ հազվադեպ էին գթասարտություն ու կարեկցանք ցույց տալիս ուրիշներին:

5:11. Բժշկված մարդը շատ պարզ պատասխանեց: Նա ասաց, որ Բժշկողը իրեն պատվիրեց **անկողինը վերցնել ու քայլել**: Պետք է հնազանդել Նրան, Ով գործություն ունի երեսունույթ տարի հիվանդությամբ տառապող մարդուն բժշկել, նույնիսկ եթե Նա մարդուն ասում է անկողին կրել շաբաթ օրը: Այն ժամանակ բժշկվածն իսկապես չգիտեր, թե Ով է Հիսուսը: Նա Հիսուսի մասին խոսում էր սովորական ձևով, բայց անկեղծ երախտագիտությամբ:

5:12. Հրեաները շատ էին ցանկանում իմանալ, թե ով է այդ մարդուն թույլատրել խախտել շաբաթ օրվա ավանդույթը, և բժշկվածին խնդրեցին նկարագրել մեղադրվողին: Մովսեսի օրենքը պահանջում էր, որ շաբաթը խախտողը պետք է քարկոծվի: Հրեաների համար փոքր բան էր անդամալույծի բժշկվելը:

5:13. Բժշկված մարդը չգիտեր, թե ով է բժշկել իրեն: Նա այդ մասին չիմացավ, քանի որ **Հիսուսը** թաքնվել էր ավագանում գտնվող մարդկանցից:

Այս իրադարձությունը հանդիսանում է Տեր Հիսուս Թրիստոսի ընդհանուր ծառայության շրջադարձային պահերից մեկը: Նա հրաշք կատարեց շաբաթ օրը և դրանով գրգռեց հրեա առաջնորդների բարկությունն ու ատելությունը: Նրանք սկսեցին Հիսուսին հետապնդել և Նրան կյանքից զրկելու առիթ փնտրել:

5:14. Որոշ ժամանակ անց **Հիսուսը տաճարում հանդիպեց** բժշկված մարդուն, որը, անտարակույս, շնորհակալություն էր հայտնում Աստծուն իր կյանքում կատար-

ված զարմանալի հրաշքի համար: Տերը նրան հիշեցրեց, քանի որ նրան այդպիսի մեծ ողորմություն էր ցույց տրվել. նա այժմ պարտավորություն ունի: Առանձնաշնորհումը միշտ ուղեկցվում է պատասխանատվությամբ. «**Ահա՛ բժշկվեցիր, այլևս մեղք մի՛ գործիր, էլ ավելի վատ բան չպատահի քեզ**»: Սրանից կարող ենք եզրակացնել, որ այս մարդն ի սկզբանե հիվանդացել էր իր կյանքում ինչ-որ մեղքի հետևանքով: Բայց հիվանդության հիմքում պարտադիր չէ, որ մեղքն ընկած լինի: Մարդու կյանքում շատ հիվանդություններ անմիջական կապ չունեն մեղք գործելու հետ: Օրինակ՝ նորածինները կարող են հիվանդանալ նախքան գիտակցորեն մեղք գործելու աստիճան հասուն դառնալը:

«**Այլևս մեղք մի՛ գործիր**» ասելով՝ Հիսուսը սահմանեց Աստծո սրբության չափանիշը: Եթե Նա ասեր. «Որքան կարող ես քիչ մեղանչիր, քիչ մեղք գործիր», Նա Աստված չէր լինի: Աստված չի կարող անտեսել մեղքը, ինչ չափի էլ որ այն լինի: Հետո Հիսուսը կրկին զգուշացնում է. «... **էլ ավելի վատ բան չպատահի քեզ**»: Տերը չհայտնեց, թե Նա ինչ նկատի ունի «վատ բան» արտահայտության տակ: Բայց Նա, անկասկած, ցանկացավ մարդու գիտակցությանը հասցնել, որ մեղքը շատ ավելի սարսափելի հետևանքներ է ունենում, քան ֆիզիկական հիվանդությունը: Մեղքի մեջ մեռնողները դատապարտված են հավիտենական բարկության ու տանջանքների:

Ծնորհի դեմ մեղք գործելը շատ ավելի լուրջ է, քան Օրենքի դեմ: Հիսուսը զարմանալի սեր ու գթասրտություն ցույց տվեց այդ մարդուն: Երախտամոռություն կլիներ դուրս գնալ ու շարունակել նախկինում իրեն հիվանդության տանող մեղավոր կյանքը:

5:15. Սամարացի կնոջ նման այս մարդը ցանկացավ հրապարակայնորեն վկայել Իր Փրկչի մասին: Նա **հրեաներին ասաց, թե Հիսուսն է, որ իրեն բժշկեց**: Նա ցանկացավ Հիսուսին հարգանքի տուրք մատուցել, չնայած որ այդ տուրքը հրեաներին չէր

հետաքրքրում: Նրանց գլխավոր ցանկությունը Հիսուսին բռնել ու պատժելն էր:

5:16. Այստեղ ներկայացված է ահավոր ձևով ապականված մարդկային սիրտը: Փրկիչը բժշկության մի մեծ գործ կատարեց, և դա զայրացրեց **հրեաներին**: Նրանք չկռահեցին, որ **շաբաթ օրը** հրաշք կատարվեց: Նրանք կրոնական դոգմաների անտարբեր վերակացուներ էին, ովքեր ավելի հետաքրքրված էին ծիսակարգերի պահպանությամբ, քան իրենց ժողովրդի օրհնությամբ ու բարօրությամբ: Նրանք չէին հասկանում, որ իրենց առջև հենց Նա էր, Ով շաբաթ օրն առանձնացրեց մնացած օրերից և այժմ էլ այդ օրը գթասրտության ակտ կատարեց: Տեր Հիսուսը չխախտեց շաբաթը: Օրենքն արգելում էր ծանր աշխատանք կատարելը, բայց չէր արգելում օգնություն և կարեկցություն ցույց տալը:

5:17. Վեց օրում ավարտելով աշխարհի արարումը՝ Աստված 7-րդ օրը հանգստացավ: Դա շաբաթ օրն էր: Բայց երբ մեղքն աշխարհ մտավ, Աստծո հանգիստը խանգարվեց: Ուստի Նա ստիպված է անդադար աշխատել, որպեսզի տղամարդկանց ու կանանց վերադարձնի Իրեն հետ հաղորդակցության: Նա պետք է ապահովի փրկագրքնման հնարավորությունը: Նա պետք է Ավետարանի լուրը ուղարկի բոլոր սերունդներին: Այսպիսով, Ադամի անկումից մինչև հիմա Աստված **անդադար աշխատել է** և դեռ շարունակում է աշխատել: Սա նաև ճշմարիտ է Տեր Հիսուսի համար: Նա զբաղված էր Իր Հոր գործով, Նրա սերն ու ողորմածությունը չի կարելի սահմանափակել միայն շաբաթվա վեց օրերով:

5:18. Այս համարը շատ կարևոր է: Այն մեզ հաղորդում է, որ հրեաներն սկսեցին առիթներ փնտրել Տեր Հիսուսին **սպանելու** համար, որովհետև Նա **ոչ միայն շաբաթն էր կտրում, այլ նաև Իրեն հավասար էր դարձնում Աստծո հետ**: Իրենց սահմանափակ մտածելակերպով թվում էր, թե Տերը խախտել է շաբաթը, բայց դա ճիշտ չէր: Նրանք չէին հասկանում, որ Աստված երբեք չէր ցանկանում, որպեսզի

մարդը շաբաթ օրով որևէ դժվարություններ ունենա: Եթե մարդուն կարելի է բժշկել շաբաթ օրը, ապա Աստծուն հաճելի չէ, որ մարդը մեկ օր ևս տանջվի:

Երբ **Հիսուսն Աստծուն Իր Հայրն** անվանեց, հրեաները հասկացան, որ Նա հավակնում է **Աստծուն հավասար** լինել: Իրենց համար սա սարսափելի աստվածահայհոյություն էր: Իրականում դա պարզապես ճշմարտությունն էր:

Տեր Հիսուսն իսկապես հայտարարե՞ց, որ Ինքը հավասար է Աստծուն: Եթե մտադիր չէր դա անել, ապա Նա կբացատրեր դա հրեաներին: Դրա փոխարեն հետագա համարներում Նա ավելի կատեգորիկ կերպով հաստատում է, որ Ինքն իսկապես Աստծո հետ մեկ է:

Ձ. Միդլոու Բաքսթերն այսպես է գրում.

«Նա հավասարության է հավակնում բոլոր կետերով.

1. հավասարություն գործի մեջ. «Որովհետև, ինչ բաներ, որ Նա (Հայրը) է անում, այդ էլ Որդին է անում նույն ձևով» (հ. 19),
2. հավասարություն գիտության, իմացության մեջ. «Որովհետև Հայրը սիրում է Որդուն և ամեն բան, ինչ Ինքն անում է, ցույց է տալիս Նրան» (հ. 20),
3. հավասարություն մեռելներին հարություն տալիս. «Որովհետև ինչպես Հայրը մեռելներին հարուցանում է ու կենդանացնում, այնպես էլ Որդին կենդանացնում է՝ ում Ինքը կամենա» (հ. 21, տե՛ս նաև 28-29),
4. հավասարություն դատաստան անելու իրավունքի մեջ. «Որովհետև Հայրը ոչ մի մարդու չի դատում, այլ ամեն դատաստան Որդուն տվեց» (հ. 22, նաև 27),
5. հավասարություն պատվի մեջ. «Որ բոլոր մարդիկ պատվեն Որդուն, ինչպես Հորն են պատվում» (հ. 23),
6. հավասարություն հավիտենական կյանք տալու իրավունքի մեջ. «Ով լսում է Իմ խոսքը և հավատում Նրան, որ Ինձ ուղարկեց... մահից կյանքի է անցել» (հ. 24-25),

7. հավասարություն ինքնագոյության մեջ. «Որովհետև ինչպես Հայրն Ինքն Իր մեջ կյանք ունի, այնպես էլ Որդուն տվեց, որ Ինքն Իր մեջ կյանք ունենա» (հ. 26):¹⁴

Գ. Հիսուսը պաշտպանում է Աստծուն հավասար լինելու Իր պնդումը (5:19-29)

5:19. Փրկիչն այնքան կենսականորեն էր Աստծո հետ կապված, որ չէր կարող անկախ գործել: Սա չի նշանակում, որ Նա անգոր էր ինչ-որ բան ինքնուրույն անելու, այլ պարզապես Նա այնքան սերտորեն էր Աստծո հետ կապված, որ կարող էր միայն անել այն, ինչն Իր **Հայրն** էր անում: Չնայած Տերը հաստատեց, որ հավասար է Հորը, բայց անկախություն չպահանջեց: Նա ոչ թե անկախ էր, այլ բացարձակ հավասար էր Նրան:

Հստակ է, որ Տեր Հիսուսը մտադրված էր, որ հրեաներն Իր մասին մտածեն, թե Ինքն Աստծուն հավասար է: Հասարակ մարդու համար անհեթեթ կլիներ հայտարարել, որ ինքը հենց նույն բաներն է **անում**, ինչ Աստված է անում: Հիսուսը հայտարարում է, որ տեսնում է, թե Հայրն ինչ է անում: Այսպես խոսելու համար Նա պետք է շարունակ մուտք ունենար Հոր մոտ և ունենար երկնքում կատարվող բաների կատարյալ գիտություն: Ոչ միայն դա. Նա հայտարարում էր, որ անում է այն, ինչ **տեսնում է Հորն անելիս**: Սա անկասկած հաստատում է, որ Հիսուսը հավասար է Հոր հետ: Նա ամենակարող է:

5:20. Հոր՝ Իր Որդու հանդեպ ունեցած սիրո յուրահատուկ արտահայտությունն է, որ **ամեն բան ինչ Ինքն անում է, ցույց է տալիս Նրան**: Այդ «ամեն բանը» Հիսուսը ոչ միայն տեսել էր, այլև Ինքը գործություն ունեղ նույնն անելու: Այնուհետև Փրկիչն ասաց, որ Աստված **սրանից էլ ավելի մեծ գործեր է ցույց տալու Նրան**, այնպես որ բոլորը **զարմանան**: Հրեաներն արդեն տեսել էին, թե Տեր Հիսուսն ինչպես է հրաշքներ կատարում: Նրանք հենց նոր վկա եղան, թե Նա ինչպես բժշկեց 38 տարվա

հիվանդին: Բայց նրանք ավելի մեծ հրաշքներ են տեսնելու: Այդպիսի հրաշքներից առաջինը կլինի մեռելների հարությունը (հ. 21), երկրորդը՝ մարդկանց դատաստանը (հ. 22):

5:21. Մի այլ, հստակ ապացույց էլ կա, որ Որդին հավասար է Հորը: Հրեաները Հիսուսին մեղադրում էին Աստծո հետ հավասար լինելու հավակնության մեջ: Նա չէր հերքում մեղադրանքները, այլ ծանրակշիռ ապացույցներ էր բերում, որ Ինքը և Հայրը մեկ են: **Որովհետև ինչպես Հայրը մեռելներին հարուցանում է ու կենդանացնում, այնպես էլ Որդին կենդանացնում է ում Ինքը կամենա:** Նա կարող էր այսպիսի բան ասել, եթե հասարակ մարդ լիներ: Այս հարցը նաև պատասխան է:

5:22. ՆԿ-ը սովորեցնում է, որ Հայր Աստված ամեն դատաստան Որդուն տվեց: Դատավարությունն իրականացնելու համար Տեր Հիսուսը պետք է ունենա բացարձակ գիտություն և կատարյալ արդարություն: Նա պետք է կարողանա զանազանել մարդկանց մտքերն ու սրտի մտադրությունները: Որքան անսովոր է, որ Նա, Ով պետք է դատի ամբողջ երկիրը, պետք է կանգնի հրեաների առջև ու ապացույցներ բերի Իր իշխանության մասին, երբ նրանք, միևնույնն է, Նրան չեն ընդունում:

5:23. Այստեղ բացատրվում է, թե ինչու է Աստված Իր Որդուն իշխանություն տվել մեռելներին հարուցանելու և աշխարհին դատելու: Դատճառը սա է. **որ բոլոր մարդիկ պատվեն Որդուն, ինչպես Հորն են պատվում:** Սա ամենակարևոր հայտարարություններից մեկն է և Աստվածաշնչում Տեր Հիսուս Թրիստոսի աստվածությունը փաստող ամենահստակ ապացույցներից մեկը: Աստվածաշնչից գիտենք, որ պետք է միայն միակ Աստծուն երկրպագել: Տասնաբանյա պատվիրաններում մարդկանց արգելված էր բացի միակ, ճշմարիտ Աստծուց, այլ աստվածների երկրպագել: Հիմա տեղեկանում ենք, որ **բոլոր մարդիկ** պետք է **պատվեն Որդուն, ինչպես Հորն են պատվում:** Այս համարից կարող ենք միայն մի

հետևություն անել. Հիսուս Թրիստոսն Աստված է:

Շատ մարդիկ պնդում են, որ իրենք աստվածապաշտ են, բայց միաժամանակ մերժում են ընդունել, որ Հիսուս Թրիստոսն Աստված է: Նրանք ասում են, որ Նա մեծ մարդ էր կամ ավելի աստվածաման էր, քան մինչ օրս ապրողներից որևէ մեկը: Բայց այս համարը բացարձակ հավասարություն է դնում Հիսուսի և Աստծո միջև, նաև պահանջում է, որ մարդիկ *պատվեն* Հիսուսին *այնպես, ինչպես պատվում են Հայր Աստծուն*: **Նա, որ Որդուն չի պատվում,** ուրեմն **Հորը չի պատվում:** Անօգուտ է առ Աստված սիրո մասին խոսել, եթե նույն սերը չկա Տեր Հիսուսի հանդեպ: Եթե չեք հասկացել, թե Ով է Հիսուս Թրիստոսը, ապա լրջորեն խորհրդածե՛ք, քննե՛ք այս համարը: Մի՛ մոռացե՛ք, որ սա Աստծո Խոսքն է, և ընդունե՛ք այն փառահեղ ճշմարտությունը, որ Հիսուս Թրիստոսն Աստված է, Ով հայտնվեց մարմնով:

5:24. Նախորդ համարներից իմացանք, որ Տեր Հիսուսը գորություն ունի կենդանացնելու, և որ ամեն դատաստան Իրեն տրված է: Այս համարում իմանում ենք, թե ինչպես կարող ենք հոգևոր կյանք ստանալ Նրանից և խուսափել **դատապարտությունից**:

Այս համարը Բարի լուրը հռչակող հանրահայտ համարներից մեկն է Աստվածաշնչում: Շատ մարդիկ այս համարի միջոցով հավիտենական կյանք են ստացել: Անկասկած, սրա նկատմամբ մեծ սեր ունենալու պատճառն այն է, որ այն հստակ սահմանում է փրկության տանող ճանապարհը: Տեր Հիսուսը համարն սկսեց «**Ճշմարիտ, ճշմարիտ**» խոսքերով ուշադրություն գրավելով այն բանի կարևորության նկատմամբ, որի մասին պատրաստվում էր խոսելու: Այնուհետև Նա անձնապես Իր կողմից ավելացնում է. «**Ասում եմ ձեզ**»: Աստծո Որդին այստեղ անձնապես դիմում է մեզանից յուրաքանչյուրին:

«**Ով լսում է իմ խոսքը**»: Հիսուսի խոսքը լսել նշանակում է ոչ միայն լսել, այլև

ընդունել այն, հավատալ դրան ու հնազանդվել: Շատ մարդիկ լսում են քարոզվող Ավետարանը, բայց չեն հնազանդում: Այստեղ Տերն ասում է, որ մարդը պետք է Հիսուսի ուսմունքն ընդունի որպես Աստծո կողմից տրված վարդապետություն և հավատա, որ Նա աշխարհի ճշմարիտ Փրկիչն է:

«**Եվ հավատում Նրան, որ Ինձ ուղարկեց**»: Սա Աստծուն հավատալու հարց է: Բայց արդո՞ք տվյալ խոսքերը նշանակում են, որ մարդը փրկություն է ստանում պարզապես Աստծուն հավատալով: Շատերն են պնդում, թե Աստծուն հավատում են, սակայն նրանք երբեք դարձի չեն եկել: Միտքը հետևյալն է. մենք **պետք է** հավատանք Աստծուն, Ով Աշխարհ ուղարկեց Տեր Հիսուս Քրիստոսին: Ինչի՞ն պետք է հավատալ: Պետք է հավատալ, որ Աստված Տեր Հիսուսին **ուղարկեց՝** մեր Փրկիչը դառնալու: Պետք է հավատալ այն բանին, ինչ Աստված ասում է Տեր Հիսուսի մասին, այսինքն՝ որ Նա միակ Փրկիչն է, և մեղավորներն ազատագրում կարող են ստանալ միայն Գողգոթայում կատարած Նրա գոհաբերության միջոցով:

«**Հավիտենական կյանք ունի**»: Ուշադրություն դարձրեք՝ այստեղ ասված չէ, որ մարդը հավիտենական կյանք կունենա, այլ նա արդեն **ունի** այն: **Հավիտենական կյանքը՝** Տեր Հիսուս Քրիստոսի կյանքն է: Սա ոչ միայն հավիտյան շարունակվող կյանք է, այլ նաև բարձր որակի կյանք է: Սա Փրկչի կյանքն է, որը տրվում է Իրեն հավատացողին: Սա հոգևոր կյանք է, որը մարդն ստանում է վերստին ծննդյան ժամանակ՝ ի տարբերություն բնական կյանքի, որը նա ստացել է ֆիզիկական ծննդի ժամանակ:

«**Եվ դատապարտության պիտի չգա**»: Այստեղ միտքը հետևյալն է. նա ենթակա չէ դատապարտության հիմա և ապագայում էլ երբեք չի դատապարտվի: Նա, ով հավատում է Տեր Հիսուսին, ազատված է **դատապարտությունից**, որովհետև Քրիստոսը Գողգոթայում փրկագին վճարեց նրա մեղքերի համար: Աստված կրկնակի ան-

գամ մեղքերի փրկագնում չի պահանջում: Քրիստոսը վճարեց մեր մեղքերի փրկագինը, և դա բավարար է: Նա ավարտեց փրկագնման գործը, և դրան ոչինչ էլ պետք չէ ավելացնել: Քրիստոնյան երբեք չի պատրժվելու իր մեղքերի համար:¹⁵

«**Այլ մահից կյանքի է անցել**»: Նա, ով հավատում է Քրիստոսին, հոգևոր **մահվան** վիճակից **անցել է** հոգևոր **կյանքի**: Մինչև անցնելը նա մեռած էր հանցանքների և մեղքերի մեջ: Նա մեռած էր Տիրոջը սիրելու և Նրա հետ հաղորդակցվելու համար: Հիսուս Քրիստոսին հավատալով Աստծո Հոգով է լցվում և դառնում աստվածային կյանքի սեփականատեր:

5:25. Այս գլխում երրորդ անգամ և այս Ավետարանում յոթերորդ անգամ Տերն օգտագործեց «**Ճշմարիտ, ճշմարիտ**» արտահայտությունը: Ասելով, որ **Ժամանակը գալիս է և հիմա է**, Տերը նկատի ունեւր պատմության թատերաբեմ դուրս գալու Իր ժամանակը:

Ինչպիսի՞ մեռելների մասին է խոսվում այս համարում: Ովքե՞ր են նրանք, որ **Աստծո Որդու ձայնը պիտի լսեն, և նրանք որ կլսեն, պիտի ապրեն**: Իհարկե, դրանք այն մարդիկ են, որոնց Տերը մեռելներից հարություն տվեց Իր ծառայության օրերին: Բայց այս համարը ավելի լայն նշանակություն էլ ունի: Այստեղ հիշված մեռելները նրանք են, ովքեր մեռած են հանցանքների ու մեղքերի մեջ: Նրանք **Աստծո Որդու ձայնը պիտի լսեն**, երբ Ավետարանը քարոզվի: Ընդունելով Բարի Լուրը և զբոսնելով Փրկչին՝ նրանք մահից կանցնեն կյանքի:

Ի հաստատումն այն մտքի, որ 25-րդ համարում նկատի ունի հոգևորը, ոչ թե ֆիզիկականը, թվարկենք, թե այս համարը որտեղ է համապատասխանում կամ տարբերվում 28-29-րդ համարներից:

<p>Հ. 25 Մահից կյանքի</p>	<p>Հ. 28-29 Կյանք մահից հետո</p>
<p>«<i>Ժամանակը գալիս է և հիմա է</i>»</p>	<p>«<i>Ժամը գալիս է</i>»</p>

«մեռելները»	«բոլորը, որ գերեզմաններում են»
«ձայնը պիտի լսեն»	«Նրա ձայնը պիտի լսեն»
«և նրանք, որ կյանք պիտի ապրեն»:	«դուրս պիտի գան»:

5:26. Այս համարը բացատրում է, թե մարդն ինչպես Տեր Հիսուս Քրիստոսից կարող է կյանք ստանալ: **Ինչպես Հայրն է կյանքի աղբյուր և տվիչ հանդիսանում, այնպես էլ Նա Որդուն տվեց, որ Ինքն Իր մեջ կյանք** և կարողություն ունենա այն ուրիշներին տալու: Սա ևս մի հստակ հայտարարություն է Քրիստոսի աստվածության և Հոր հետ հավասար լինելու մասին: Ոչ մի մարդու մասին չի կարելի ասել, որ նա իր մեջ կյանք ունի: Մեզանից յուրաքանչյուրին կյանքը տրվել է, բայց այն երբեք չի տրվել Հորը կամ Տեր Հիսուսին: Նրանք իրենց մեջ բնակվող կյանք ունեն: Այդ կյանքը երբեք սկիզբ չի ունեցել: Այն երբեք էլ Նրանցից դուրս ակունք չի ունեցել:

5:27. Աստված ոչ միայն Որդուն տվեց, որ Ինքն Իր մեջ կյանք ունենա, այլ **Նրան** աշխարհին դատելու **իշխանություն տվեց:** Հիսուսին դատաստան անելու իշխանություն տրվեց, **որովհետև Նա Մարդու Որդի է:** Տերը կոչվեց և՛ Աստծո Որդի, և՛ **Մարդու Որդի:** *Աստծո Որդի* տիտղոսը մեզ հիշեցնում է, որ Տեր Հիսուսը սուրբ Երրորդության անդամներից մեկն է, աստվածության Անձերից մեկը: Որպես Աստծո Որդի՝ Նա հավասար է Հոր հետ և Սուրբ Հոգու հետ, իսկ որպես Աստծո Որդի՝ Նա կյանք է տալիս: Բայց Նա նաև **Մարդու Որդին է:** Նա եկավ այս աշխարհ որպես Մարդ, ապրեց մարդկանց մեջ և իսպի վրա մեռավ տղամարդկանց ու կանանց փոխարեն որպես Փոխանորդ: Որպես Մարդ աշխարհ գալով՝ Նա մերժվեց ու խոշտանգվեց: Բայց մի օր կրկին կգա, որպեսզի դատի Իր թշնամիներին և պատիվ ստանա այն աշխարհում, որտեղ Նրա հետ մի ժամանակ անգութ էին վարվել: Քանի որ Նա և՛ Աստված է, և՛ Մարդ, ուստի Նա կատարյալ Դատավոր է:

5:28. Անկասկած, հրեաներն ապշանքով էին լսում, թե ինչպես է Քրիստոսը պարզ ու համոզիչ հայտարարում Հայր Աստծո հետ Իր հավասարության մասին: Հիսուսը հասկանալով նրանց մտքերը՝ ասաց, որ **չգարմանան** դրանից: Հետո Նա շարունակեց նրանց առջև ավելի ցնցող ճշմարտություն բացահայտել: Գալիս է ժամանակը, երբ բոլոր նրանք, ում մարմինները **գերեզմաններում են, Նրա ձայնը պիտի լսեն:** Որևէ մեկի շուրթերից, ով Աստված չէ, որքան անհեթեթ է հնչում գերեզմաններում պառկած մարմինների մասին կանխատեսումը, որոնք մի գեղեցիկ օր լսելու են Նրա ձայնը: Միայն Աստված կարող է Իր ժամանակին հաստատել այդպիսի հայտարարությունը:

5:29. Բոլոր մեռելները մի օր հարություն կառնեն: Ոմանք գերեզմաններից դուրս կգան **կյանքի համար**, իսկ ուրիշներ՝ **դատապարտության:** Ինչպիսի կարևոր ճշմարտություն է. յուրաքանչյուր մարդ, ով երբևէ ապրել է կամ պիտի ապրի, պատկանում է այս երկու խմբերից մեկին:¹⁶

29-րդ համարը չի սովորեցնում, որ բարի կամքի տեր մարդիկ կփրկվեն իրենց կատարած բարի գործերի շնորհիվ, իսկ չարիք գործողները կդատապարտվեն իրենց չար կյանքի համար: Մարդը չի կարող փրկություն ձեռք բերել իր լավ արարքով, ավելի շուտ, նա լավ արարք է կատարում, որովհետև փրկություն է ստացել: Բարի գործերը հիմք չեն փրկության համար, այլ նրա պտուղն են: Դրանք (բարի գործերը) պատճառ չեն, այլ հետևանք: **«Չար են գործել»** արտահայտությունը վերաբերում է նրանց, ովքեր երբեք չեն հավատացել ու չեն վստահել Տեր Հիսուսին, հետևաբար նրանց կյանքը չար է եղել Աստծո աչքերում: Նրանք դուրս կգան, որպեսզի կանգնեն Աստծո առջև, ու դատապարտվեն հավիտենական կործանման:

Դ. Չորս վկայություններ, որոնք հաստատում են, որ Հիսուսը Աստծո Որդին է (5:30-47)

5:30. Առաջին հայացքից **«Ես Ինքս Ին-**

ճանից ոչինչ չեմ կարող անել» արտահայտությունն ասում է այն մասին, որ Տեր Հիսուսն անգոր է ինչ-որ բան Անձամբ անելու: Այստեղ միտքն այլ է՝ Հիսուսը Հայր Աստծո հետ այնքան սերտ է կապված, որ չի կարող մենակ գործել: Նա չի կարող որևէ բան Իր սեփական կամքով անել: Փրկչի մոտ ինքնակամության հետք անգամ չկար: Նա գործում էր ամենայն հնազանդությամբ Իր Հորը ենթարկվելով, Նրա կամքի համաձայն և Նրա հետ ներդաշնակ:

Կեղծ ուսուցիչները հաճախ են օգտագործում այս համարը՝ ապացուցելու համար, որ Հիսուս Քրիստոսն Աստված չէր: Նրանք ասում են. քանի որ Նա չէր կարող որևէ բան Անձամբ անել, ուրեմն Նա սովորական մարդ էր: Բայց համարը ճիշտ հակառակն է հաստատում: Մարդիկ կարող են անել այն, ինչ ուզում են՝ անկախ նրանից դա Աստծո կամքն է, թե՛ ոչ: Հենց այն պատճառով, թե Ով էր Նա, Տեր Հիսուսը չէր կարող այդպես գործել: Դա ոչ թե *ֆիզիկապես*, այլ *բարոյապես անհնար էր*: Նրա ֆիզիկական գորությունը բավարար էր ամեն բան անելու, բայց Նա չէր կարող անել մի բան, որը սխալ էր: Այն ամենը, ինչ Աստծո՝ Իր Հոր կամքով չէր, Նրա համար ճիշտ չէր: Այս հայտարարությունը Տեր Հիսուսին առանձնացնում է ողջ մարդկությունից:

Իր Հորը լսելով և ամեն օր Նրանից առաջնորդություն ստանալով՝ Տեր Հիսուսը մտածում, սովորում և գործում էր: Այստեղ **«դատում եմ»** բառը վերաբերում է ոչ թե իրավաբանական հարցերում որոշումներ կայացնելուն, այլ ավելի ճիշտ այն որոշմանը, թե Նա ինչպես պետք է վարվի կամ խոսի:

Քանի որ Փրկիչը չունի ոչ մի եսասիրական շարժառիթ, Նա հարցերը կարող էր արդարացիորեն ու անաչառությամբ լուծել: Նրա միակ փափագը Իր Հորը հանեցնելն ու Նրա կամքը կատարելն էր: Ոչինչ չէր կարող խոչընդոտել Նրան դրա ճանապարհին: Ահա թե ինչու իրերի մասին Նրա դատողությունները չազդեցին անձնական օգտի պատկերացումների վրա: Մեր կարծիքներն ու ուսմունքն ամբողջությամբ

կախված են նրանից, թե ինչպես ենք ուզում վարվել և ինչին ենք ուզում հավատալ: Բայց Աստծո Որդու մոտ ամեն բան այլ էր: Նրա կարծիքներն ու որոշումները չէին թեքվում Իր սեփական օգտի կողմը: Նա գուրկ էր կանխակալությունից:

5:31. Այս գլխի հաջորդող համարներում Տեր Հիսուս Քրիստոսը տարբեր վկայություններ է բերում, որոնք հաստատում են Իր աստվածությունը: Նրա մասին վկայեց Հովհաննես Մկրտիչը (հ. 32-35), վկայեցին Նրա գործերը (հ. 36), վկայեց Հայրը (հ. 37-38) և վկայեցին հինկտակարանյան Գրությունները (հ. 39-47):

Սկզբում Հիսուսը վկայությանը վերաբերող ընդհանուր հայտարարություն արեց: Նա ասաց. **«Եթե ես Ինձ համար վկայեմ, Իմ վկայությունը ճշմարիտ չէ»**: Սա երբեք էլ չի նշանակում, որ Տեր Հիսուսը կարող էր ասել այն, ինչը ճշմարիտ չէ: Հավանաբար Նա պարզապես հայտարարեց, որ դատավարության ժամանակ մի մարդու վկայությունը չի կարող դիտարկվել որպես բավարար օրինական ապացույց: Աստծո հրամանն ասում էր, որ դատական հիմնարար վարույթների համար պետք է ոչ պակաս երկու կամ երեք վկա: Ուստի Տեր Հիսուսը պատրաստվում էր Իր աստվածությունը հաստատող ոչ թե երկու, կամ երեք, այլ չորս վկայություն ներկայացնել:

5:32. Տարբեր կարծիքներ կան այն մասին, թե ում է վերաբերում այս համարը՝ Հովհաննես Մկրտիչին, Հայր Աստծո՞ն, թե՞ Սուրբ Հոգուն: Ոմանք ենթադրում են **«մեկը»** բառի տակ նկատի ունի Հովհաննես Մկրտչին, և որ այս համարը կապված է հաջորդող երեք համարներին: Մյուսները կարծում են, որ Տերն այստեղ խոսում է Սուրբ Հոգու Իր մասին տված **վկայության մասին**: Մեր կարծիքով, Նա նկատի ուներ Հոր **վկայությունը**: NKJV-ում «Նա» բառը մեծատառով գրելը ցույց է տալիս, որ թարգմանիչները կարծում են, թե խոսքն աստվածության մասին է:

5:33. Բոլոր վկաներից ամենամեծին՝ Իր Հորը ներկայացնելուց հետո Տերն անդրա-

դառնում է **Հովհաննեսի** վկայությանը: Նա չհավատացող հրեաներին հիշեցրեց, որ նրանք մարդիկ էին **ուղարկել Հովհաննեսի մոտ՝** լսելու նրա խոսքը, և Հովհաննեսի ամբողջ վկայությունը Տեր Հիսուս Քրիստոսի մասին էր: Մարդկանց առջև իրեն ցույց տալու փոխարեն նա նրանց մատնացույց արեց Փրկչին: Նա **վկայություն տվեց** Մեկի մասին, Ով **ճշմարտությունն է:**

5:34. Տեր Հիսուսն Իր ունկնդիրներին հիշեցրեց, որ Աստծո հետ հավասարության Նրա հայցը հիմնված չէ միայն մարդկանց **վկայության** վրա: Եթե դա միակ վկայությունը լիներ, ապա Նրա պնդումն իսկապես համոզիչ չէր լինի: Բայց Նա դիմեց Հովհաննես Մկրտչի վկայությանը, քանի որ նա էր Աստծո կողմից ուղարկված մարդը և վկայեց Տեր Հիսուսի մասին իբրև ճշմարիտ Մեսիայի և Աստծո Գառի, Ով կվերցնի աշխարհի մեղքը:

Հետո Նա ավելացրեց. «**Այլ այս բաներն ասում եմ, որ փրկվեք:**» Ինչո՞ւ էր Տեր Հիսուսը այսքան երկար գրույցի բռնվել հրեաների հետ: Արդյո՞ք փորձում էր նրանց ցույց տալ, որ Ինքը ճիշտ է, իսկ նրանք՝ ոչ: Ո՛չ, Նա նրանց առջև բացահայտում էր այս հիանալի ճշմարտությունները, որպեսզի կարողանան հասկանալ, թե Ով է Ինքը և Իրեն ընդունեն իբրև խոստացյալ Փրկչի: Այս համարը մեզ հստակ ցույց է տալիս Տեր Հիսուսի սիրող ու գթառատ սիրտը: Նա խոսում է Իրեն ստողների հետ, ովքեր շուտով ամեն ամիթ պիտի փնտրեին Նրան կյանքից զրկելու համար: Բայց Նրա սրտում ստեղծություն չկար նրանց հանդեպ: Նա կարող էր միայն սիրել նրանց:

5:35. Այստեղ Տերն արժանին է հատուցում Հովհաննես Մկրտչին՝ որպես **մի վառվող ու փայլող ճրագի:** Սրանով հասկացվում էր, որ Հովհաննեսը մեծ նախանձավորությամբ կատարեց իր ծառայությունը՝ լույսը բերելով ուրիշներին, և սպառեց իրեն՝ մարդկանց Հիսուսին մատնացույց անելով: Սկզբում հրեա ժողովուրդը հավաքվել էր Հովհաննեսի շուրջ: Նա մի անսովոր անհատականություն էր, որ մուտք գործեց իրենց

կյանքի մեջ, և նրանք գալիս էին նրա մոտ՝ լսելու նրան: **Որոշ ժամանակ** նրան կրոնական հայտնի ուսուցչի պես ընդունեցին:

Ինչո՞ւ Հովհաննեսին այդքան ջերմությամբ ընդունեցին, իսկ Նրան, Ում մասին քարոզում էր Հովհաննեսը, չընդունեցին: Նրանք կարճ ժամանակով ուրախացան, բայց սպաշխարություն չկար: Նրանք անհետևողական էին. ընդունեցին նախակարապետին, բայց չեն ընդունում Թագավորին: Հիսուսը Հովհաննեսին հարգանքի մեծ տուրք մատուցեց: Երբ Ինքը՝ Աստծո Որդին, Իր ծառաներից ինչ-որ մեկին **վառվող ու փայլող ճրագ** է անվանում, սա ճշմարիտ գովասանք է: Մեզնից ամեն մեկը, ով սիրում է Տեր Հիսուսին, թող ցանկանա բոցավառ կրակ լինել Նրա համար, որ վառվելով լուսավորում է այս աշխարհը:

5:36. **Հովհաննեսի** վկայությունը չի կարելի համարել Քրիստոսի աստվածության ամենամեծ ապացույցը: Հրաշքները, որոնք Հայրը Հիսուսին տվեց կատարելու, նույնպես վկայում են Նրա մասին, **թե Հայրը** իսկապես **ուղարկեց** Նրան: Սոսկ հրաշքները դեռ չեն հաստատում աստվածությունը: Աստվածաշնչում կարդում ենք մարդկանց մասին, որոնց հրաշքներ անելու գործություն էր տրված, նույնիսկ չար անձնավորությունների մասին, որոնք գերբնական բաներ անելու գործությամբ էին օժտված: Բայց Տեր Հիսուսի հրաշքները տարբերվում էին մյուսներից: Նախ՝ այդ հզոր գործերը կատարելու համար Նա *Ինքն Իր մեջ* ուժ, գործություն ուներ, իսկ ուրիշներին այդ գործությունը *տրված էր:* Ուրիշները հրաշքներ կատարում էին, բայց չէին կարողանում հրաշքներ կատարելու իրենց ուժը այլոց փոխանցել: Տեր Հիսուսը ոչ միայն Ինքն էր հրաշքներ կատարում, այլ իշխանություն էր տվել Իր աշակերտներին, որպեսզի նրանք էլ նույնն անեն: Երկրորդ՝ Փրկչի կողմից **բոլոր** կատարվածները ճշգրտությամբ համապատասխանում էին Մեսիայի մասին ՀԿ-ի մարգարեություններին: Եվ Երրորդ՝ Տեր Հիսուսի կատարած հրաշքները եզակի էին իրենց բնույթով, մասշտաբով ու քանակով:

5:37-38. Տերը նորից խոսում է Իր Հոր վկայության մասին: Հավանաբար այստեղ նկատի ունի այն ժամանակը, երբ Տեր Հիսուսը մկրտվեց: Այն ժամանակ Հայր Աստծո ձայնը երկնքից հայտնեց, որ Հիսուսը Իր սիրելի Որդին է և Նրանում է Հոր հաճությունը: Բայց նաև պետք է ավելացնել, որ Տեր Հիսուսի կյանքով, ծառայությամբ ու հրաշքներով Հայրը նույնպես վկայում էր այն մասին, որ Նա ճշմարտապես Աստծո Որդին է:

Չհավատացող հրեաները **ոչ մի ժամանակ ո՛չ Աստծո ձայնը լսեցին, ո՛չ Նրա կերպարանքը տեսան:** Այդպես եղավ, որովհետև նրանք իրենց մեջ չունեին **Նրա խոսքը:** Աստված մարդկանց հետ Իր Խոսքի՝ Աստվածաշնչի միջոցով է խոսում: Հրեաներն ունեին Հին Ուխտի գրությունները, բայց թույլ չէին տալիս Աստծուն, որ Նա իրենց հետ խոսի դրանց միջոցով: Նրանց սրտերը քարացած էին, նրանց ականջները փակ էին լսելու համար:

Նրանք երբեք չտեսան Աստծո երեսը, **որովհետև չհավատացին Նրան, Ում Աստված ուղարկեց:** Հայր Աստվածը մեր աչքերին տեսանելի ձև կամ կերպարանք չունի: Նա Հոգի է, հետևաբար և անտեսանելի: Բայց Աստված Իրեն մարդկությանը հայտնեց Մարդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի մեջ: Իրականում, Քրիստոսին հավատացողները տեսան Աստծո կերպարանքը: Անհավատները նայում էին Նրան՝ որպես իրենց պես մի սովորական մարդու:

5:39. Այս համարի առաջին մասը կարելի է երկու ձևով հասկանալ:¹⁷ Գուցե Տեր Հիսուսը պատվիրում էր հրեաներին **քննել Գրքերը** կամ պարզապես հայտարարում էր, որ նրանք **Գրքերը քննում էին** այն հույսով, որ սուրբգրությանը տիրապետելը նրանց **հավիտենական կյանք** կտա: Համարի ցանկացած մեկնաբանությունն էլ հնարավոր է: Հավանական է, որ Տեր Հիսուսը պարզապես հայտարարեց, որ հրեաները, Գրքերն ուսումնասիրելով, կարծում էին, թե **հավիտենական կյանք** կստանան: Նրանք չհասկացան, որ Հ-ը Մեսիայի գալու մասին խոսելիս Հիսուսի մասին էր խո-

սում: Մարսափելի է մտածել, որ Սուրբ Գրքերն իրենց ձեռքում ունեցող մարդիկ կարող են այդքան կույր լինել: Բայց ավելի աններելի էր այն, որ Տեր Հիսուսի հետ զրուցելուց հետո էլ նրանք հրաժարվեցին ընդունել Նրան: Ուշադրություն դարձրեք այս համարի վերջին մասի վրա. «... **Եվ դրանք են, որ Իմ մասին վկայում են**»: Մա նշանակում է, որ Հ-ի հիմնական թեման Քրիստոսի գալուստն է: Հ-ն ուսումնասիրելուց սա աչքից բաց թողնելով՝ մարդ բաց է թողնում դրա ամենակարևոր պատգամը:

5:40. Հրեաները **չէին ցանկանում Նրան գալ, որ կյանք ունենան:** Իրական պատճառը, թե ինչու մարդիկ չեն ընդունում Փրկչին, դա չէ, որ նրանք չեն կարողանում Ավետարանը հասկանալ կամ գտնում են, որ անհնար է Հիսուսին հավատալ: Տեր Հիսուսի մեջ չկա ոչ մի բան, որ Նրան հավատալն անհնարին դարձնի: Իսկական պատճառը թաքնված է մարդու մեջ: Նա իր մեղքերն ավելի շատ է սիրում, քան Փրկչին: Նա չի ուզում կտրվել իր չար գործերից:

5:41. Իրեն չընդունելու համար հրեաներին մեղադրելիս Տերը չէր ուզում, որ նրանք կարծեին, թե պատիվ ու **փառք** չտալով վիրավորում էին Իրեն: Նա աշխարհ չէր եկել, որպեսզի փառք փնտրեր այս աշխարհի **մարդկանցից:** Նա միայն Իր Հոր հաճությունն էր փնտրում: Եվ եթե մարդիկ մերժեցին Նրան, դա երբեք չպակասեցրեց Իր փառքը:

5:42. Կարելի է հետևել մարդկանց՝ Աստծո Որդուն չընդունելու պատճառին: Այս մարդիկ **Աստծո սերը չունեին իրենց մեջ:** Այսինքն՝ նրանք ավելի շատ իրենք իրենց էին սիրում, քան Աստծուն: Եթե Աստծուն սիրեին, կընդունեին Նրան, Ում Աստված ուղարկել էր: Տեր Հիսուսին չընդունելով՝ ցույց տվեցին Նրա Հոր նկատմամբ ունեցած սիրո բացակայությունը:

5:43. Տեր Հիսուսը եկավ **Հոր անունով**, այսինքն՝ Նա եկավ՝ կատարելու Իր Հոր կամքը, փառավորելու Իր Հորը և ամեն բանում հնազանդելու Իր Հորը: Եթե մարդիկ իսկապես սիրեին Աստծուն, կսիրեին և

Նրան, Ով փափագում էր հաճելի լինել Աստծուն ամեն բանում՝ խոսքով և գործով:

Հետո Հիսուսը մարգարեացավ, որ ուրիշը պիտի գա իր անունով, և հրեաները **նրան պիտի ընդունեն:** Հնարավոր է, որ «ուրիշը» բառի տակ Նա նկատի ուներ բազմաթիվ կեղծ ուսուցիչների, որոնք հայտնվելու էին Իրենից հետո և ուզելու էին հասնել ժողովրդական ընդունելության: Հնարավոր է՝ Նա նկատի ուներ կեղծ պաշտամունքների հիմնադիրներին, որոնք հայտնվեցին հարյուր տարի անց և պնդեցին, որ «Քրիստոսն են»: Բայց ամենահավանականն այն է, որ Նա այստեղ խոսեց նեռի (Հակաքրիստոսի) մասին: Կգա օրը, երբ ինքնակոչ կառավարիչը կհայտնվի հրեաներին և կպահանջի, որ իրեն երկրպագեն Աստծո պես (2 Թես. 2:8-10): Հրեաների մեծամասնությունը կընդունի այդ Նեռին իբրև իրենց կառավարչի և արդյունքում կկանգնի Աստծո ահեղ դատաստանի առաջ (1 Հովհ. 2:18):

5:44. Այստեղ Տեր Հիսուսը հիմնավորում է Իրեն չընդունելու պատճառներից ևս մեկը: Նրանց ավելի հետաքրքրում էր մարդկանց կողմից հավանություն ստանալը, քան թե Աստծո: Նրանք վախենում էին, որ իրենց բարեկամներն իրենց կմեղադրեն հուդայականությունից հեռանալու համար: Նրանք չէին ուզում կշտամբանք և տառապանք կրել, որ իրենց վրա կգար, եթե հետևեին Տեր Հիսուսին: Զանի դեռ մարդը վախենում է այն բանից, թե ուրիշներն իրեն ինչ կասեն կամ կանեն, նա փրկությունը չի կարող ստանալ: Տեր Հիսուսին հավատալու համար պետք է ավելի ցանկանալ Աստծո հավանությունը, քան թե մարդու: Մարդը պետք է **փնտրի այն փառքը, որ միայն Աստծուց է գալիս:**

5:45. Տիրոջը պետք չէր **Հոր մոտ մեղադրել** հրեաներին: Իհարկե, Նա կարող էր նրանց դեմ շատ մեղադրանքներ ներկայացնել: Բայց Նա դրա կարիքը չուներ, քանի որ նրանց մեղադրելու համար բավական կլինեն **Մովսեսի** Գրությունները: Հրեաները պարծենում էին ՀԿ-ով և հատկապես **Մովսեսի** Հնգամատյանով՝ Թորայով: Նրանք ինքնաբավարարություն էին զգում այն

բանից, որ այդ սուրբգրությունը տրվել է Իսրայելին: Բայց խնդիրն այն էր, որ նրանք չլսեցին Մովսեսի խոսքերը, որի մասին ասված է 46-րդ համարում:

5:46. Տեր Հիսուսը համարում էր, որ Մովսեսի գրությունները նույն հեղինակություն ունեն, ինչպես Իր խոսքերը: Հիշե՛ք, որ «Ամբողջ Գիրքը Աստծո շունչն է...» (2 Տիմ. 3:16): Թե՛ ՀԿ ենք կարդում, թե՛ ՆԿ, մենք հենց Աստծո Խոսքն ենք կարդում: Եթե հրեաները հավատալիս Մովսեսի խոսքերին, կհավատալին նաև Հիսուս Քրիստոսին, որովհետև Մովսեսը գրեց Քրիստոսի գալու մասին: Սրա օրինակը գտնում ենք Երկրորդ Օրինացում (18:15, 18):

«Ըո Տեր Աստվածը քո միջից, քո եղբայրներից ինձ նման մի Մարգարե դուրս կբերի քեզ համար. նրան լսեցե՛ք... քեզ մի մարգարե կտամ նրանց համար՝ իրենց եղբայրների միջից և Իմ խոսքերը նրա բերանը կդնեմ, և նա նրանց կասի, ինչ-որ պատվիրեմ»:

Այս համարներում Մովսեսը կանխատեսել է Քրիստոսի գալստյան մասին ու հրեաներին պատվիրել լսել Նրան և հնազանդվել, երբ Նա գա: Հիմա Տեր Հիսուսը եկել է, բայց հրեաները չէին ընդունում Նրան: Ահա թե ինչու Նա ասաց, որ Մովսեսը նրանց կմեղադրի Հոր մոտ. նրանք միայն ձևացրին, թե հավատում են Մովսեսին, բայց չկատարեցին այն, ինչ Մովսեսը պատվիրել էր: **«Նա Իմ մասին գրեց»** խոսքերը մեր Տիրոջ հստակ հաստատումն է այն մասին, որ հինկտակարանյան Գրությունները մարգարեություն են պարունակում Իր մասին: Օգոստինոսը հետևյալ կարճ ձևակերպումն է տվել. «Նոր Ուխտը թաքցված է Հնում. Հին Ուխտը բացահայտվում է Նորի մեջ»:

5:47. **Եթե** հրեաները **չհավատացին** Մովսեսի **գրածներին**, քիչ հավանական է, որ կհավատան Հիսուսի **խոսքերին**: Շատ սերտ կապ գոյություն ունի ՀԿ-ի և ՆԿ-ի միջև: Եթե մեկը կասկածում է ՀԿ-ի Աստծո կողմից ներշնչվածությանը, ապա քիչ հավանական է, որ նա կընդունի Տեր Հիսուսի խոսքերը՝ որպես Աստծո հայտնույթ

յուն: Եթե մարդիկ հարձակվում են Աստվածաշնչի որոշ մասերի վրա, ապա շատ ժամանակ չանցած՝ կսկսեն կասկածի ենթարկել Սուրբ Գրքի մնացած մասերը: Զինգր գրում է.

«Տերը, բնականաբար, նկատի ուներ Մովսեսի Հնգամատյանը, Աստվածաշնչի այն մասը, որը բոլոր մնացածներից ավելի շատ է բիրտ հարձակումների ենթարկվել, և բավական զարմանալի է այն, որ այս մասից, որքանով որ մեզ հասանելի են Գրվածները, Վարդապետն ավելի շատ է մեջբերումներ արել, քան մյուս բոլորից: Թվում է՝ հարձակումներն սկսելուց առաջ Նա դրանց համար տվեց Իր համաձայնությունը»:¹⁸

IV. ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ. ԳԱԼԻԼԻԱ (6-րդ գլ.)

Ա. Չորրորդ հրաշքը՝ հինգ հազարին կերակրելը (6:1-15)

6:1. «Սրանից հետո» արտահայտությունը նշանակում է, որ 5-րդ գլխում նկարագրված իրադարձություններից հետո որոշ ժամանակահատված էր անցել: Թե որքան, մենք չգիտենք: Միայն գիտենք, որ **Հիսուսը** Երուսաղեմի շրջակայքից ճամփորդում էր դեպի Գալիլիայի ծով: Երբ ասվում է, որ Նա ծովի մյուս կողմը գնաց, սա, ամենայն հավանականությամբ, նշանակում է, որ Նա հյուսիսարևմտյան ափից անցավ հյուսիսարևելյան ափ: **Գալիլիայի ծովը** հայտնի էր նաև որպես **Տիբերիայի ծով**, որովհետև Տիբերիոս քաղաքը գտնվում էր նրա արևմտյան ափին: Այս քաղաքը Գալիլիայի գավառի մայրաքաղաքն էր, որն ի պատիվ հռոմեական Տիբերիոս կայսրի՝ կոչված էր նրա անունով:

6:2-3. **Եվ մեծ բազմություն Նրա ետևից էր գնում**, ոչ թե որ բոլորը Նրան հավատացին որպես Աստծո Որդու, այլ, ավելի ճիշտ, **որովհետև նրանք հրաշքներ տեսան**, որոնք **Նա** կատարեց **հիվանդների վրա**: Հրաշքների վրա հիմնված հավատը երբեք Աստծուն այնքան հանելի չի եղել, որքան

միայն Իր Խոսքի վրա հիմնված հավատը: Աստծո խոսքը կարիք չունի հրաշքներով հաստատվելու: Աստծո բոլոր ասածներն էլ ճշմարիտ են: Այն ոչ մի դեպքում չի կարող կեղծ լինել: Այն պետք է բավական լինի ամեն մի մարդու համար: «**Հիսուսը լեռը բարձրացավ**»: Այստեղ լեռը կարող է պարզապես բլրոտ մի տեղ լինել ծովի շրջակայքում:

6:4. Այնքան էլ պարզ չէ, թե Հովհաննեսն ինչու է հիշատակել, որ **հրեաների Չատկի տոնը մոտ էր**: Ոմանք ենթադրում են, որ Տեր Հիսուսը նկատի ուներ հրեաների Չատիկը, երբ այս գլխում հռչակեց ճշմարիտ Կյանքի Հացի մասին հիանալի լուրը: Նա այդ Չատկին Երուսաղեմ չգնաց: Հովհաննեսը **Չատկի** մասին խոսում է որպես **հրեական տոնի**: Իսկապես այն հաստատված էր Աստծո կողմից ՀԿ-ում: Այն տրվեց հրեաներին, և այդ իմաստով այն **հրեական տոն** էր: Բայց «**հրեաների տոն**» արտահայտությունը կարող է նաև նշանակել, որ Աստված այլևս չէր ընդունում այդ տոնը որպես Իր տոն, որովհետև հրեաները, սրտով հետաքրքրված չլինելով, այն վերածել էին հասարակ ծիսակատարության: Այն կորցրել էր իր իսկական նշանակությունը և այլևս Եհովայի տոնը չէր:

6:5. **Հիսուսին** չանհանգստացրեց ժողովրդի **մեծ բազմությունը**. Նա չմտածեց, որ նրանք կխանգարեն Իր հանգիստը կամ կխանգարեն աշակերտների հետ ժամանակ անցկացնելը: Նրա առաջին միտքը եղավ մարդկանց **կերակրով** ապահովելը: Ուստի Նա դիմեց **Փիլիպպոսին** և խնդրեց, որտեղից կարելի էր **հաց** գնել, որպեսզի կերակրեին այդ մեծ բազմությանը: Այդ հարցը տալիս Հիսուսը պատասխան չէր ակնկալում. Նա ուզում էր մյուսներին սովորեցնել: Ինքը պատասխանը գիտեր, իսկ Փիլիպպոսը՝ ոչ:

6:6. Տերը պատրաստվում էր Փիլիպպոսին արժեքավոր դաս սովորեցնել և **փորձել** նրա հավատը: Հիսուսն **Ինքը գիտեր**, որ հրաշք է կատարելու ու կերակրելու է մեծ բազմությանը: Բայց արդյոք Փիլիպպոսը հասկացա՞վ, որ Հիսուսը կարող է հրաշք

կատարել: Փիլիպպոսի հավատը մե՞ծ էր, թե՞ փոքր:

6:7. Ակնհայտ է, որ Փիլիպպոսի հավատը բարձունքների չէր հասնում: Նա արագ հաշվարկեց ու որոշեց, որ նույնիսկ **երկու հարյուր դինարը բավական չի լինի հացի** համար, որպեսզի ներկաներից յուրաքանչյուրին գոնե մի քիչ հասնի: Մենք ճշգրիտ չգիտենք, թե քանի հաց կարելի էր ձեռք բերել այն ժամանակ **երկու հարյուր դինարով**, բայց դա պետք է որ մեծ քանակությամբ լիներ: Այն ժամանակ աշխատողի օրավարձը մեկ դինար էր:

6:8-9. **Անդրեսը Միմոն Պետրոսի եղբայրն էր:** Նրանք Գալիլիայի ծովափնյա Բեթսայիղայից հեռու չէին ապրում: Անդրեսը նույնպես չէր կասկածում, որ դժվար էր այդքան մարդկանց կերակրելը: Նա նկատեց **գարեհացի հինգ նկանակ և երկու ձուկ ունեցող** մի տղայի, բայց զգաց, որ դրանցով անօգուտ էր փորձել **այդքան մարդկանց** սովը հագեցնել: Այդ տղայի մոտ քիչ ուտելիք կար, բայց նա ցանկացավ այն հանձնել Տեր Հիսուսի տրամադրությանը: Նրա բարության հետևանքով այս պատմությունն արձանագրվեց բոլոր չորս Ավետարաններում: Նա մի փոքր բան արեց, բայց «այդ մի փոքրը մեծանում է, եթե Աստված ներկա է դրանում», և նրա մասին ողջ աշխարհն իմացավ:

6:10. Պատվիրելով մարդկանց նստել (տառացիորեն՝ «թիկնել»)՝ Տեր Հիսուսը հոգում էր, որ նրանց հարմարավետ լինի: Ուշադրություն դարձրեք՝ Նա մի տեղ էր ընտրել, որտեղ **շատ խոտ կար:** Այդքան հեշտ չէր այդպիսի շրջանում այդպիսի տեղ գտնելը, բայց Տերը հոգում էր, որ այդ մեծ բազմությունը մաքուր և հանելի վայրում գտնվեր:

Նշված է, որ հազարավոր **մարդիկ** (հունարենում՝ «տղամարդիկ») կային, այսինքն՝ այնտեղ կային նաև կանայք ու երեխաներ: **Հինգ հազար** քանակը հիշատակվում է նրա համար, որպեսզի ցույց տա, թե ինչպիսի չսված հրաշք տեղի պիտի ունենար:

6:11. **Հիսուսը նկանակներն առնելով՝ գոհություն հայտնեց** դրանց համար: Եթե Նա դա արեց կերակուրը բաժանելուց ա-

ռաջ, այդպես էլ մենք պետք է գոհություն հայտնենք Աստծուն ուտելուց առաջ: Հետո Նա կերակուրը **բաշխեց աշակերտներին:** Այստեղ մեզ համար որոշակի դաս կա: Տեր Հիսուսն ամեն ինչ Ինքը չէր անում: Նա մատակարարումը հանձնարարեց մյուսներին: Ինչ-որ մեկը լավ է ասել. «Դուք արեք այն, ինչ կարող եք անել, ես կանեմ այն, ինչ ես կարող եմ անել, իսկ Տերը կանի այն, ինչ մենք չենք կարող անել»:

Մինչ Հիսուսն **աշակերտներին բաշխեց** նկանակները, դրանք հրաշալի կերպով բազմացան: Ճիշտ պահը, թե երբ կատարվեց այդ հրաշքը, գրված չէ, բայց մենք գիտենք, որ այդ հինգ նկանակներն ու երկու ձկները զարմանալի կերպով Տիրոջ ձեռքերում հերիքեցին, որ կշտացնի մեծ բազմությանը: Աշակերտներն էլ **նկանակներն ու ձկները բաշխեցին նստածներին:** Ամեն ինչ բավական էր, քանի որ պարզ ասված է՝ նրանք բաշխեցին նստողներին նույնպես և ձկները, **որչափ որ կամեցան:**

Գրիֆիթ Թոմասը գրում է, որ այս պատմության մեջ գեղեցիկ կերպով պատկերված են՝

ա. կործանվող աշխարհը, բ. անօգնական աշակերտները, գ. կատարյալ Փրկիչը: Այս հրաշքն ինքնին հայտնում էր արաբագործության ճշմարիտ գործողությունը: Ոչ մի սովորական մարդ չէր կարող վերցնել գարեհացի հինգ նկանակ ու երկու ձուկ և բազմացնել այնքան, որ կըշտացնի այդպիսի մեծաքանակ ժողովրդի: Ինչ-որ մեկը լավ է ասել. «Գարնանային պահ էր, երբ Նա օրհնեց հացը, բայց հընձի ժամանակը եկավ, երբ Նա բեկանեց այն»: Ճշմարիտ է նաև այն, որ «Հացն առանց օրհնության, դա չբազմացված հաց է»:¹⁹

6:12. Այստեղ մենք տեսնում ենք զարմանահրաշ գգայնության դրսևորումը: Եթե Հիսուսը սովորական մարդ լիներ, երբեք չէր մտահոգվի **ավելացած կտորներով:** Մի՞թե մեկը, ով կարող է կերակրել հինգ հազար մարդու, կանհանգստանա ավելացած փշրանքների մասին: Բայց Հիսուսն Աստված է, և Աստված թույլ չի տալիս ոչ մի

կորուստ Իր ճոխությունից: Նա չի ուզում, որ մենք կորցնենք այն թանկագինը, որ Ինքն է տվել մեզ, դրա համար էլ մեզ մշտական հիշեցնում է այն մասին, որ ավելացած կտորտանքները պետք է հավաքել, **որ ոչ մի բան չկորչի:**

Շատ մարդիկ են փորձում բացատրություններ փնտրել այս հրաշքի համար: Նրանք ասում են, որ այնտեղ գտնվողներից շատերը տեսան տղային, որ իր հինգ նկանակներն ու երկու ձկները տվեց Հիսուսին: Դա ստիպեց նրանց հասկանալ, թե իրենք որքան եսասեր են, քանի որ չէին հանել իրենց կերակուրն ու դրանք կիսել ուրիշների հետ: Այս ձևով կարելի էր յուրաքանչյուրին ապահովել կերակուրով: Բայց նմանատիպ դատողություններից ոչ մեկը չի բացատրում հաջորդ համարում շարադրված փաստերը:

6:13. Երբ մարդիկ վերջացրին ուտելը, գարեհացի հինգ նկանակների ավելցուկներով **տասներկու կողով լցրին:** Բացահայտ անհնար կլիներ այդքան շատ հաց հավաքել, եթե յուրաքանչյուր մարդ իր կերակուրն ունենար: Մարդկային բացատրությունները ծիծաղելի են թվում: Միայն մի եզրակացություն կարելի է անել. չլաված հրաշք կատարվեց:

6:14. Մարդիկ իրենք ընդունեցին, որ դա հրաշք էր: Նրանք դա չէին ասի, եթե պարզապես կերած լինեին իրենց բերած կերակուրը: Նրանք իսկապես համոզված էին, որ դա հրաշք էր, և դա էլ հաստատում էր, որ Հիսուսը հենց **այն Մարգարեն է, որ աշխարհ պիտի գար:** ՀԿ-ից նրանք գիտեին մարգարեի գալու մասին և փնտրում էին նրան, ով նրանց կազատեր Հռոմեական կայսրության կեղեքումից: Նրանք սպասում էին երկրավոր միապետի: Բայց նրանց հավատը ճշմարիտ չէր: Նրանք չէին ուզում համաձայնել այն բանի հետ, որ Հիսուսն Աստծո Որդին է, որ պետք է Նրան խոստովանեն իրենց մեղքերն ու Նրան ընդունեն որպես Փրկչի:

6:15. Տեսնելով հրաշքը՝ մարդիկ ցանկացան **Հիսուսին թագավոր դարձնել:** Կըրկին եթե Հիսուսը սովորական մարդ լիներ,

Նա, իհարկե, կենթարկվեր նրանց ցանկությանը: Մարդիկ բավական մտահոգված են իրենց սեփական մեծությամբ և բարձր դիրքեր գրադեցնելու փափագով: Բայց Հիսուսը հեռու էր ինքնամեծարումից: Նա գիտեր, որ աշխարհ է եկել Իր քավչարար մահով մեղավորներին փրկագնելու համար: Նա այս նպատակին հակասող ոչինչ չարեց: Նա գահին չի բարձրանա, մինչև նախ բարձրանա զոհասեղանի վրա: Նախքան մեծարվելը Նա պետք է չարչարվեր, արյուն հեղեր և մեռներ:

Փ. Բ. Մեյերը գրում է.

«Ինչպես ասել է սուրբ Բեռնարը, Հիսուսը միշտ անհետանում էր, երբ Նրան ուզում էին թագավոր դարձնել, և հայտնվում էր, երբ Նրան ուզում էին խաչել: Միշտ սա հիշելով՝ եկե՛ք, առանց տարակուսելու, միանանք Գեթսեմի Եթթիի հիանալի խոսքերին.

«Կենդանի է Տերը, ու իմ թագավոր տերն էլ է կենդանի, որ իմ թագավոր տերը որտեղ էլ լինի՝ թե՛ մահվան մեջ, թե՛ կենդանության, քո ծառան էլ այնտեղ է լինելու» (2 Թագ. 15:21): Եվ Նա, անկասկած, կպատասխանի այնպես, ինչպես Դավիթը պատասխանեց փախչողին, ով եկել էր, որպեսզի նրա կողմն անցներ. «Իմ մոտ մնա՛ և մի՛ վախեցիր, քանի որ իմ հոգին հալածողը քո հոգին էլ է հալածելու, բայց դու իմ կողքին ապահով ես» (1 Թագ. 22:23):²⁰

Բ. Հինգերորդ հրաշքը՝ Հիսուսը քայլում է ջրի վրայով և փրկում Իր աշակերտներին (6:16-21)

6:16-17. Երեկո եղավ: Հիսուսը միայնակ հեռացավ լեռան վրա: Մարդիկ, ըստ երեվոյթին, վերադարձան տուն՝ աշակերտներին թողնելով առանձին: Աշակերտները որոշեցին **իջնել ծովեզերք** ու պատրաստվել իրենց ետադարձ ճանապարհորդությանը՝ նավարկելով Գալիլիայի ծովով:

Եվ նավ մտնելով՝ գնացին դեպի ծովի մյուս կողմը, դեպի Կափառնայում: Արդեն մթնել էր, և Հիսուսը չէր եկել նրանց մոտ: Որտե՞ղ էր Նա: Նա աղոթում էր լեռան վրա: Ինչպիսի՞ ճշգրիտ լուսաբանությ

յուն է Քրիստոսի ներկայիս հետևորդների համար: Նրանք գտնվում են կյանքի փոթորկոտ ծովում: **Մույժ է:** Տեր Հիսուսը ոչ մի տեղ չի երևում: Բայց դա չի նշանակում, որ Նա չգիտի կատարվածի մասին: Նա Երկնքում է և աղոթում է նրանց համար, ում սիրում է:

6:18. Գալիլիայի ծովը ենթարկվում էր հանկարծակի և ուժեղ փոթորիկների: Հորդանան գետի հարթավայրից եկող քամիները թռչում էին մեծ արագությամբ: Դրանք, հասնելով Գալիլիայի ծով, մեծ ալիքներ էին բարձրացնում: Փոքրիկ նավերի համար վտանգավոր էր այդպիսի ժամանակ **ծովում** գտնվելը:

6:19. Աշակերտները, **թիավարելով քսանհինգ կամ երեսուն ասպարեզի չափ, առաջ էին գնացել:** Մարդկային տեսանկյունով՝ նրանք մեծ վտանգի մեջ էին: Անհրաժեշտ պահին նրանք նայեցին ու **տեսան Հիսուսին ծովի վրա քայլելով գալիս, և նավին էր մոտենում:** Այստեղ ևս մի հետաքրքիր հրաշք է նկարագրված: Աստծո Որդին քայլում էր Գալիլիայի ծովի ջրերի վրայով: Աշակերտները **վախեցան**, որովհետև լրիվ չէին հասկացել, թե Ով էր այդ զարմանահրաշ Մարդը:

Ուշադրություն դարձրեք, թե ինչպիսի պարզությամբ է պատմվում այս պատմությունը: Հովհաննեսը շատ զարմանալի փաստեր է հաղորդում, բայց վերամբարձ բառեր չի օգտագործում, որ մեզ վրա տպավորություն թողնի կատարվածի մեծության մասին: Նա շատ զուսպ է փաստերի շարադրման մեջ:

6:20. Այնուհետև Տերը հանգստացնող հրաշալի խոսքեր ասաց. **«Ես եմ, մի՛ վախեցեք»:** Եթե Նա միայն մարդ լիներ, դա իրենց շատ կվախեցներ: Բայց Նա հզոր Արարիչն է և տիեզերքի Տիրակալը: Երբ Նա նրանց կողքին էր, նրանք վախենալու առիթ չունեին: Նա, Ով արարել էր Գալիլիայի ծովը, կարող էր նաև ջրերին կարգադրել, որ՝ հանդարտվեն, և երկրորդ՝ Նա կարող էր օգնել Իր վախեցած աշակերտներին ապահովությամբ հասնելու ափ: **«Ես եմ»** արտահայտությունը, որը թարգման-

վում է «Այդ Ես եմ», բառացիորեն նշանակում է «ԵՄ ԵՄ»: Արդեն երկրորդ անգամ Հովհաննեսի Ավետարանում Հիսուսն Իր համար կիրառում է Եհովայի անունը:

6:21. Հասկանալով, որ դա Տեր Հիսուսն է, աշակերտները ցանկացան **Նրան նավի մեջ ընդունել: Եվ անմիջապես նավը հասավ** այն ափը, **ուր գնում էին:** Այստեղ մի հրաշք ևս կատարվեց, որին բացատրություն չկա: Նրանք այլևս կարիք չունեցան թիավարելու. Տեր Հիսուսն ակնթարթորեն նրանց **ափ** հասցրեց: Ինչպիսի՞ զարմանահրաշ Անձնավորություն:

Գ. Մարդիկ նշան են փնտրում (6:22-34)

6:22. Այս համարներում նկարագրված է հինգ հազարին կերակրելու օրվանը հաջորդող **օրը: Ժողովուրդը** դեռ Գալիլիայի ծովի հյուսիսարևելյան ափին էր: Մարդիկ տեսել էին, որ նախօրեի երեկոյան աշակերտները մտել էին **նավի** մեջ, և գիտեին, որ **Հիսուսը** նրանց հետ չէր գնացել: Այն ժամանակ միայն մի նավակ կար ափին, և աշակերտները դրանից օգտվեցին:

6:23. Հաջորդ օրը **այն տեղի մոտ, որտեղ** Տեր Հիսուսը բազմաթիվ մարդկանց էր կերակրել, **Տիրեթիայից ուրիշ նավեր եկան:** Բայց Տերը չէր կարող դրանցից գոնե մեկով նավարկել, քանի որ հենց նոր էին ժամանել: Հնարավոր է՝ այդ նավերով մարդիկ հատեցին ծովը և նավարկեցին Կափառնայում, ինչպես գրված է հաջորդ համարներում:

6:24. Մարդիկ միշտ հետևում էին Հիսուսին: Նրանք գիտեին, որ Նա առանձնացել էր՝ աղոթելու լեռան վրա: Նրանք գիտեին, որ Նա լճով նավարկած աշակերտների հետ միասին նավի մեջ չէր մտել: Սակայն հաջորդ օրը Նրան ոչ մի տեղ չկարողացան գտնել: Նրանք որոշեցին կտրել անցնել ծովը և հասնել **Կափառնայում**, որտեղ հավանաբար կլինեին աշակերտները: Նրանք չէին կարծում, որ Հիսուսը կարող է այնտեղ լինել, բայց ամեն դեպքում որոշեցին փնտրել Նրան:

6:25-26. Ժամանելով Կափառնայում՝ **Նրան գտան** այնտեղ: Չկարողանալով

թաքցնել իրենց հետաքրքրությունը՝ նրանք հարցրին, թե երբ է Նա այդտեղ եկել:

Հիսուսը անուղղակիորեն **պատասխանեց** նրանց հարցին: Նա հասկացավ, որ նրանք փնտրում են Իրեն ոչ թե Իր Ով լինելու համար, այլ, ավելի շուտ, կերակուրի համար, որը Նա տվեց նրանց: Նրանք տեսան, որ այդ օրը Նա մեծ հրաշք կատարեց: Դա պետք է նրանց համոզեր, որ Նա իսկապես Արարիչն ու Մեսիան է: Բայց նրանք ուտելիքով էին միայն հետաքրքրված: Նրանք կերել էին հրաշքի **հացը**, և նրանց քաղցը հագեցվել էր:

6:27. Այդ իսկ պատճառով Հիսուսը նախ խորհուրդ տվեց նրանց **աշխատել ոչ թե կորստական կերակրի համար**: Տերը նկատի չուներ, որ նրանք չպետք է աշխատեին ու հայթայթեին իրենց հանապազօրյա հացը, այլ պարզապես զգուշացրեց, որ դա չպետք է լինի իրենց կյանքի հիմնական նպատակը: Կյանքում բնական կարիքների բավարարումը ամենակարևորը չէ: Մարդը կազմված է ոչ միայն մարմնից, այլ նաև հոգուց և շնչից: Մենք պետք է մտահոգվենք **այն կերակրի** համար, **որը կմնա հավիտենական կյանքի համար**: Մարդը չպետք է այնպես ապրի, կարծես թե իր ունեցածը միայն իր մարմնին է և վերջ: Նա չպետք է իր բոլոր ուժերն ու տաղանդները նվիրի մարմնի համար հոգալուն, որը մի քանի տարի անց որդերի բաժին պիտի դառնա: Նա ավելի շատ պետք է մտահոգվի իր անձի մասին՝ օրըստօրե այն սնելով Աստծո Խոսքով. «Ոչ միայն հացով կարող է ապրել մարդը, այլ Տիրոջ բերանից դուրս եկած ամեն մի խոսքով»: Մենք պետք է անխոնջ աշխատենք, որպեսզի ձեռք բերենք Աստծո Խոսքի լավագույն իմացությունը:

Երբ Տեր Հիսուսն ասաց. «**Որովհետև Հայր Աստվածը Նրա վրա Իր կնիքը դրեց**», Նա նկատի ուներ, որ **Աստված** էր ուղարկել Իրեն ու հավանություն տվել Իր ծառայությանը: Երբ փաստաթղթի վրա մեր կնիքն ենք դնում, մենք հաստատում ենք գրվածի ճշմարտացիությունը: Աստված

«կնքեց» Մարդու Որդուն այն իմաստով, որ հաստատեց Հիսուսի խոսքերի ճշմարտացիությունը:

6:28. Իրենց հերթին, մարդիկ հարցրին Տիրոջը, թե ի՞նչ անեն, **որ Աստծո գործերը գործեն**: Մարդը միշտ ուզում է, որ ինքը վաստակի Երկինք մտնելու թույլտվությունը: Նա սիրում է մտածել, որ կարող է մի բան անել փրկության արժանանալու համար: Եթե նա այս կամ այլ ձևով կարող է նպաստել իր անձի փրկությանը, ապա պարծենալու պատճառ կունենա, և դա շատ հաճելի է իրեն:

6:29. Հիսուսը տեսավ նրանց կեղծավորությունը: Նրանք ձևացնում էին, թե փափագում են Աստծո համար գործել, սակայն չէին ուզում ոչ մի գործ ունենալ Աստծո Որդու հետ: **Հիսուսը** նրանց ցույց տվեց, որ ամեն բանից առաջ նրանք պետք է հավատան Աստծո կողմից **Ուղարկվածին**: Այսօր էլ նույն իրավիճակն է: Շատերն են ցանկանում երկինք մտնելու իրավունք ստանալ բարի գործերի միջոցով: Բայց նախքան Աստծո համար բարի գործեր կատարելը, նրանք պետք է սկզբում **հավատան** Տեր Հիսուս Քրիստոսին: Բարի գործերը չեն նախորդում փրկությանը, այլ հաջորդում են դրան: Միակ բարի **գործը**, որ կարող է մեղավորը կատարել, իր մեղքերը խոստովանելն ու Քրիստոսին՝ որպես Տեր ու Փրկիչ ընդունելն է:

6:30. Այս համարը կրկին ապացուցում է մարդկային սրտի ամբարիշտությունը: Դեռ երեկ մարդիկ տեսան, ինչպես Տեր Հիսուսը կերակրեց հինգ հազար հոգու հինգ հացով և երկու ձկով: Իսկ այսօր էլ եկել էին Նրա մոտ և հարցնում էին, ինչպիսի **նշանով** Նա կարող է հաստատել Իր հայտարարությունն այն մասին, որ Ինքն է Աստծո Որդին: Ինչպես անհավատների մեծամասնությունը, նրանք ցանկանում էին սկզբում տեսնել, հետո հավատալ. «**Որ տեսնենք և հավատանք Քեզ**»: Բայց սա Աստծո դրած կարգի խախտում է: Աստված մեղավորներին ասում է. «Եթե դուք հավատաք, ապա կտեսնեք»: Նախ հավատ պետք է լինի:

6:31. Հղում կատարելով ՀԿ-ին՝ հրեաները Հիսուսին հիշեցրին երկնային մանանայի²¹ հրաշքի մասին, որը կատարվել էր անապատում: Հավանաբար նրանք ուզում էին ասել, որ Հիսուսը երբեք նմանատիպ հրաշք չի կատարել: Նրանք մեջբերում կատարեցին Սղմ. 78:24-25-ից, որտեղ գրված է. **«Երկնքի ցորենը տվել էր նրանց»:** Նրանք նկատի ունեին, որ Մովսեսը երկրնքից կերակուր իջեցրեց, և որ Տերն այնքան մեծ չէր, որքան Մովսեսը, որովհետև Հիսուսը միայն բազմացրեց *եղած* կերակուրը:

6:32. Տիրոջ պատասխանը գոնե երկու միտք է բովանդակում: Նախ՝ *ոչ թե* Մովսեսն էր նրանց հաց տվողը, այլ Աստված: Ավելին՝ մանանան չէր **Երկնքից** տրված ճշմարիտ հոգևոր **հացը**: Մանանան բնական ուտելիք էր՝ մարմինը հագեցնելու համար, բայց այս կյանքից հետո արժեք չուներ: Տեր Հիսուսն այստեղ խոսում է իսկական, ճշմարիտ հացի մասին, որ Աստված Երկնքից է տալիս: Այս հացը հոգու համար է, ոչ թե մարմնի: **«Իմ Հայրը»** արտահայտությունը Քրիստոսի հայտարարությունն է Իր աստվածության մասին:

6:33. Տեր Հիսուսն Իրեն հայտնեց որպես **Աստծո հացի**, որն **երկնքից է իջնում և կյանք է տալիս աշխարհին**: Նա ցույց տվեց Աստծո հացի գերազանցությունը անապատի մանանայից: Մանանան կյանք չէր տալիս, այլ միայն օժանդակում էր ֆիզիկական գոյությանը: Այն նախատեսված չէր ողջ աշխարհի համար, այլ միայն Իսրայելի: **Ճշմարիտ հացը երկնքից է իջնում և կյանք է տալիս** մարդկանց, և ոչ թե միայն մի ժողովրդի, այլ ամբողջ **աշխարհին**:

6:34. Հրեաները դեռ չէին հասկանում, որ Տեր Հիսուսն Իր մասին էր խոսում որպես ճշմարիտ Հացի, և խնդրեցին, որ միշտ այդպիսի **հաց** տա: Նրանք դեռ նկատի ունեին բնական հացը: Ցավոք սրտի, նրանց սրտում ճշմարիտ հավատ չկար:

Գ. Հիսուսն է Կյանքի հացը (6:35-65)

6:35. Հիսուսը պարզ ու հստակ շարադրեց

ճշմարտությունը: Նա է **Կյանքի հացը**: Նրան եկողները Նրա մեջ մեկընդմիշտ կգտնեն հոգևոր քաղցը բավարարող բոլոր բաները: Նրան հավատացողները երբեք չեն ծարավի: Ուշադրություն դարձրեք այս համարում «Ես եմ» արտահայտությանը և ընդունե՛ք, որ Տերը հայտարարում է Եհովայի հետ հավասար լինելու մասին: Անմրտություն կլինեք, եթե մեղավոր մարդն ասեք 35-րդ համարի այս խոսքերը: Ոչ մի սովորական մարդ չի կարող հագեցնել իր քաղցը կամ ծարավը, էլ ուր մնաց ամբողջ աշխարհի հոգևոր կարիքը հագեցնել:

6:36. 30-րդ համարում անհավատ հրեաները Տիրոջից պահանջեցին նշան, որը տեսնելով կկարողանային հավատալ: Այստեղ Հիսուսն ասում է, որ նրանք արդեն **տեսել են** Նրան՝ բոլոր նշաններից մեծագույնը, **սակայն չեն հավատում**: Եթե իրենց առջև կանգնած կատարյալ Աստծո Որդուն չընդունեցին, ապա գուր է ենթադրել, թե Նրա արած որևէ նշան կարող էր նրանց համոզել:

6:37. Հրեաների անհավատությունը չհիսաթափեցրեց Տերոջը: Նա գիտեր, որ Աստծո կողմից նախատեսված բոլոր բաները կատարվելու են: Նույնիսկ եթե Նրա հետ գրուցող հրեաները չընդունեցին Նրան, Նա գիտեր, որ Աստծո կողմից ընտրվածները կգան Իր մոտ: Փինքը հետևյալն է գրում. «Աստծո հավիտենական ծրագրերի անհաղթելիության գիտակցությունը տալիս է հանգստություն, քաջություն, հարատևություն, որ ուրիշ ոչ մի բան չի կարող տալ»:

Այս համարը շատ կարևոր է, քանի որ մի քանի բառերով բացահայտվում են Աստվածաշնչի ամենակարևոր երկու ուսմունքները. առաջին՝ Աստված որոշակի մարդիկ է Քրիստոսին պարզել, և **բոլորը**, ում Աստված տվել է Նրան, պիտի փրկվեն, երկրորդ՝ մարդու պատասխանատվության վարդապետությունը: Փրկություն ձեռք բերելու համար մարդ պետք է գա Տեր Հիսուսին և հավատով ընդունի Նրան: Աստված որոշակի մարդիկ է ընտրում փրկության համար, բայց Աստվածաշունչը ոչ մի

տեղ չի սովորեցնում, թե Նա որևէ մեկին ընտրում է կործանման համար: Եթե ինչ-որ մեկը փրկություն է ստանում, ապա դա Աստծո շնորհի պարգևն է: Բայց եթե մեկն ընդմիջտ կործանվում է, դա իր սեփական մեղավորության ու ամբարշտության հետևանքով է: Բոլոր մարդիկ դատապարտված են իրենց ամբարշտության ու մեղավորության համար: Եթե բոլոր մարդիկ հայտնվեն դժոխքում, կստանան այն, ինչ վաստակել են: Բայց Աստված Իր շնորհի համաձայն խոնարհվում է և ոմանց փրկում ամբողջ մարդկությունից: Նա այդ անելու իրավունքը ունի՞: Իհարկե ունի: Աստված կարող է ամեն բան անել, ինչ-որ անհրաժեշտ է համարում, և ոչ մեկը չի կարող վիճարկել. դա Նրա իրավունքն է:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված որոշակի մարդկանց է նախասահմանել փրկության համար, բայց ճիշտ այդպես էլ սովորեցնում է, որ մարդը պատասխանատու է Ավետարանն ընդունելու համար: Աստծո հրավերը բոլորին է ուղղված՝ առանց բացառության. եթե մարդը հավատա Տեր Հիսուս Քրիստոսին, կփրկվի: Աստված չի փրկում մարդկանց՝ հակառակ իրենց ցանկության: Մարդը պետք է Նրա առջև գա զղումով ու հավատով: Եվ այն ժամանակ Աստված փրկում է նրան: Քրիստոսի միջոցով Աստծուն եկողներից ոչ մեկը **դուրս չի հանվի:**

Մարդկային միտքը չի կարող հաշտեցնել այս երկու ուսմունքները: Սակայն մենք պետք է հավատանք դրանց, նույնիսկ եթե չենք կարողանում հասկանալ: Սրանք աստվածաշնչյան ուսմունքներ են, որոնք պարզորեն շարադրված են այստեղ:

6:38. 37-րդ համարում Տեր Հիսուսն ասաց, որ Աստծո բոլոր ծրագրերն Իրեն եկողների փրկության համար ի վերջո իրականանալու են: Քանի որ դա Հոր կամքն է, Տերն ամեն հնարավորը կանի դրա իրականացման համար, քանի որ Իր առաքելությունը Աստծո կամքը կատարելն է: Քրիստոսն ասաց. **«Ես երկնքից իջա»**. սրանով հստակ հասկացրեց, որ Նրա կյանքը սկիզբ չի առել բերթեհեմյան մսուրում: Նա

գոյություն ունեւ Հոր Աստծո հետ Երկրնքում ի հավիտենից: Նա Աստծո հնազանդ Որդին էր, որ աշխարհ եկավ: Նա կամավոր ընդունեց ծառայի կարգավիճակը, որպեսզի կատարի Իր Հոր **կամքը**: Սա չի նշանակում, թե Նա կամք չունեւ, ավելի շուտ, Նրա **սեփական կամքը** կատարյալ համաձայնության մեջ էր Հոր կամքի հետ:

6:39. **Հոր կամքն** այն է, որ ում Նա սովեց Քրիստոսին, փրկվի ու պահպանվի մինչև արդարների հարության օրը, երբ նա հարություն կառնի ու կընդունվի երկնային բնակարանում: **«Ոչինչ»** բառը վերաբերում է հավատացյալներին: Այստեղ Հիսուսը խոսեց ոչ թե առանձին հավատացյալների մասին, այլ Քրիստոսի ամբողջ Մարմնի, նրանց, ովքեր կփրկվեն շատ տարիների ընթացքում: Տեր Հիսուսը պատասխանատու է այն բանի համար, որ Իր Մարմնի ոչ մի անդամը չկորչի, այլ ամբողջ **Մարմինը հարություն առնի վերջին օրը**:

Ինչ վերաբերում է *քրիստոնյաներին*, ապա նրանց համար **վերջին օր** կլինի այն **օրը**, երբ Տեր Հիսուսն ամպերով հայտնվի: Այդ ժամանակ նախ հարություն կառնեն այն մեռելները, ովքեր իրենց կենդանության օրոք հավատացել են Քրիստոսին, իսկ հետո կփոխվեն ապրող հավատացյալները, և բոլորը միասին կհափշտակվեն, որպեսզի դիմավորեն Տիրոջն օդի մեջ, ու միշտ Նրա հետ լինեն: *Հրեաների* համար սա նշանակում էր Մեսիայի փառավոր գալուստ:

6:40. Այնուհետև Տերը շարունակում է բացատրել, թե ինչպես է մարդը դառնում ընտանիքի փրկված անդամ: **Աստծո կամքն է, որ ամեն ոք, ով տեսնի Որդուն և հավատա Նրան, հավիտենական կյանք ունենա:** Այստեղ Որդուն տեսնել նշանակում է Նրան տեսնել ոչ թե մարմնավոր աչքերով, այլ հավատի աչքերով: Պետք է տեսնել, այսինքն՝ ընդունել, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է և աշխարհի Փրկիչը, իսկ հետո հավատալ Նրան: Դա նշանակում է, որ նրա հավատը պետք է ի հայտ գա Տեր Հիսուսին անձնական Փրկիչ ընդունելով: Բոլոր հավատացյալներն արդեն այստեղ՝ երկրի վրա, **հավիտենական կյանք** ունեն,

ինչպես նաև վստահություն են ստանում, որ հարություն կառնեն **վերջին օրը**:

6:41. Ժողովուրդը լիովին պատրաստ չէր ընդունելու Տեր Հիսուսին և **տրտնջում էր Նրանից**: Հիսուսը հաստատեց, որ Նա **Երկրնքից իջած հացն է**: Մարդիկ հասկացան, որ դա բավական նշանակալից հավակնություն է: Ո՛չ հասարակ մարդը, ո՛չ էլ մեծ մարգարեն չէին կարող **Երկնքից** իջնել: Ուրեմն՝ **նրանք տրտնջում էին Նրանից**, որովհետև չէին ուզում հավատալ Նրա խոսքերին:

6:42. Նրանք գիտեին, որ **Հիսուսը Հովսեփի որդին է**: Իհարկե, այստեղ նրանք սխալվում էին: Հիսուսը կույս Մարիամից էր ծնվել: Հովսեփը Իր հայրը չէր: Մեր Տերը բեղմնավորվել էր Սուրբ Հոգու կողմից: Անարատ հղիությանը հավատալուց հրաժարվելը նրանց հանգեցրեց կուրության ու անհավատության: Նույն բանը նկատվում է այսօր: Նրանք, ովքեր հրաժարվում են ընդունել Տեր Հիսուսին՝ որպես Աստծո Որդի, Ով աշխարհ եկավ կույսի արգանդից ծնվելով, մերժում են Հիսուս Քրիստոսի Անձին ու գործերին վերաբերող բոլոր մեծ ճշմարտությունները:

6:43. Չնայած մարդիկ Նրան ուղղակիորեն դա չասացին, Հիսուսն ամեն բան գիտեր, թե նրանք ինչի մասին էին խոսում, և ի պատասխան՝ նրանց զգուշացրեց, որ **իրար մեջ չտրտնջան**: Հաջորդ համարները բացատրում են, թե ինչու նրանց տրտնջալն անօգուտ էր: Ինչքան շատ էին հրեաները մերժում Տեր Հիսուսի վկայությունը, այնքան ավելի բարդանում էր Նրա ուսուցումը: «Մերժված լույսը, դա ուրացված լույսն է»: Ինչքան շատ էին նրանք մերժում Բարի Լուրը, այնքան նրանց համար դժվար էր դառնում այն ընդունելը: Եթե նրանք չէին հավատում, երբ Տերը նրանց հասարակ բաների մասին էր խոսում, չէին հասկանա նաև, երբ ավելի բարդ բաներ ասեր:

6:44. Ինքն իրենով մարդը ծայրահեղ անհույս ու անօգնական է, նույնիսկ ի գորու չէ Հիսուսին գալու: Բանի դեռ Հայրը չի սկսել գործել նրա սրտում և կյանքում, նա

երբեք չի կարող հասկանալ իր հանցանքի ողջ ահավորությունն ու Փրկիչ ունենալու կարիքը: Շատերի համար այս համարը դժվար է թվում: Նրանք կարծում են, որ դա սովորեցնում է, թե անձը կարող է փրկություն ցանկալ, բայց հնարավորություն չունենա այն գտնելու: Բայց դա այդպես չէ: Իրականում, այս համարը շեշտում է, որ սկզբում Աստված է գործում մեր սրտերում ու մեզ փնտրում, որպեսզի Իրեն համար շահի: Մենք ընտրության առջև ենք. ընդունել Տեր Հիսուսին կամ մերժել Նրան: Բայց եթե Աստված մեր սրտերի հետ խոսած չլիներ, մենք երբեք Նրան փնտրելու ցանկություն չէինք ունենա: Տերը կրկին հաստատում է խոստումը, որ Նա **կհարուցանի** յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի **վերջին օրում**: Ինչպես արդեն տեսանք, դա վերաբերում է Իր սրբերի համար Քրիստոսի գալստյանը, երբ մեռելները հարություն կառնեն, իսկ ողջերը կկերպարանափոխվեն: Այն վերաբերում է միայն հավատացյալներին:

6:45. Հստակորեն հաստատելով, որ ոչ մեկը չի կարող Նրան գալ, մինչև Հայրը նրան չձգի, Տերը շարունակում է բացատրել, թե Հայրը ինչպես է քաշում, ձգում մարդկանց: Նախևառաջ Տերը մեջբերում է Ես. 54:13-ը. **«Եվ նրանք բոլորը Աստծուց պիտի ուսուցանվեն»**: Աստված պարզապես չի ընտրում առանձին մարդկանց. այդ նպատակով Նա նրանց մեջ ինչ-որ աշխատանք է կատարում: Նա խոսում է նրանց սրտերի հետ Իր թանկագին Խոսքի միջոցով:

Այնուհետև միանում է մարդու սեփական կամքը: Աստծո Խոսքի ուսմունքին արձագանքելով և **Հորից** սովորելով՝ կզան Քրիստոսին: Այստեղ կրկին տեսնում ենք, որ երկու մեծ ճշմարտությունները՝ Աստծո գերիշխանությունն ու մարդու ընտրություն կատարելու ազատությունը, Սուրբ Գրքում կողք կողքի են դրված: Դրանք մեզ ցույց են տալիս, որ փրկությունն ունի ինչպես աստվածային, այնպես էլ մարդկային կողմեր:

«Գրված է մարգարեների մեջ» ասելով՝ Հիսուսը, բնականաբար, նկատի ուներ մար-

գարեների գրքերը: Նա մասնավորապես նկատի ուներ Եսայի մարգարեի գիրքը, բայց Իր արտահայտած միտքը կարելի է գտնել բոլոր մարգարեների մոտ: Միայն Աստծո Խոսքի ուսմունքով և Աստծո Հոգու ներգործությամբ է, որ մարդիկ ձգվում են դեպի Աստծուն:

6:46. Այն փաստը, որ Աստված է սովորեցնում մարդկանց, **չի** նշանակում, որ նրանք **տեսել** են Նրան: Միայն Նա է **տեսել Հորը**, Ով Աստծուց է եկել, այսինքն՝ Տեր Հիսուսն Ինքը:

Բոլոր նրանք, ովքեր սովորել են Աստծուց, սովորել են Տեր Հիսուս Քրիստոսի մասին, որովհետև Աստծո ուսուցման գրիավոր թեման հենց Ինքը՝ Քրիստոսն է:

6:47. Ամբողջ Աստվածաշնչում այս համարը փրկության ճանապարհը շարադրող ամենապարզ և ամենակարճ համարն է: Տեր Հիսուսն այն այնպիսի բառերով ձևակերպեց, որ դրանք դժվար թե կարելի է սխալ մեկնաբանել. **«Ով հավատում է Ինձ, հավիտենական կյանք ունի»:** Ուշադրություն՝ նա դարձրեք. Նա այս կարևոր խոսքերը ներկայացրեց Իր վճռորոշ՝ **«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ»** խոսքերով: Սա ՆԿ-ի բազմաթիվ համարներից մեկն է, որ սովորեցնում է, որ փրկությունը տրվում է ո՛չ թե գործերով, ո՛չ թե Օրենքը կամ «ուկե կանոնը» պահելով, ո՛չ թե եկեղեցու պատկանելով, այլ պարզապես Տեր Հիսուս Քրիստոսին հավատալով:

6:48-49. Այստեղ Տեր Հիսուսը հայտարարում է, որ *Ինքն* է **Կենաց հացը**, որի մասին Նա խոսում էր: Բնական է **«Կենաց հացը»** նշանակում է **հաց**, որը **կյանք** է տալիս ուտողներին: Ավելի վաղ հրեաներն առաջ էին քաշել **անապատի մանանայի** թեման և Տեր Հիսուսին խնդրել, որ դրանման նշանակալից կերակուր ստեղծի: Այստեղ Տերը նրանց հիշեցրեց, որ նրանց **հայրերն անապատում մանանան կերան ու մեռան:** Այլ խոսքերով, մանանան միայն այս կյանքի համար էր նախատեսված: Այն անգոր էր հավիտենական կյանք տալու դա ուտողներին: **«Ձեր հայրերը»** արտահայտությամբ Տերն Իրեն առանձնացրեց կոր-

ծանվող մարդկությունից և նկատի ունեցավ Իր եզակի աստվածությունը:

6:50. Ի հակադրություն մանանայի՝ Տեր Հիսուսն Իր մասին խոսեց որպես **Երկրնքից իջած հացի:** Եթե որևէ մեկն այդ հացն ուտի, **չի մեռնի:** Դա չի նշանակում, որ ֆիզիկապես չէր մեռնի, այլ որ հավիտենական կյանք կունենա երկնքում: Նույնիսկ եթե նա ֆիզիկապես էլ մեռներ, ապա նրա մարմինը հարություն կառնի վերջին օրում և Տիրոջ հետ կլինի հավիտյան:

Այս և հաջորդ համարներում Տեր Հիսուսը բազմիցս խոսում է Իր *Մարմինն ուտող* մարդկանց մասին: Ի՞նչ էր Նա ուզում ասել դրանով: Արդյոք դա նշանակո՞ւմ է, որ մարդիկ պետք է ուտեն Նրա Մարմինը բառիս բուն իմաստով: Անկասկած, այս գաղափարը անհնարին է և վանող: Սակայն ոմանք կարծում են, որ Նա նկատի ուներ այն ուսմունքը, որի համաձայն մենք պետք է ուտենք Նրա Մարմինը հաղորդության (Տերունական ընթրիքի) ժամանակ, որի ընթացքում հացն ու գինին իբր հրաշալի կերպով փոխակերպվում են Քրիստոսի Մարմնի և Արյան, և որպեսզի փրկություն ունենանք, պետք է հաղորդվենք (ճաշակենք) այդ տեսանելի տարրերի հետ: Բայց Հիսուսն այսպիսի բան չասաց: Համատեքստից պարզ է, թե ինչն է Նրա Մարմինը. **Նրան հավատալը:** Երբ հավատում ենք Տեր Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր Փրկչի, մենք հավատով միանում ենք Նրան: Մենք առանձնաշնորհում ենք ունենում հաղորդակցվելու Իր Անձնավորության ու գործերի հետ: Օգոստինոսն ասել է. «Հավատացե՛ք ու կերած կլինեք»:

6:51. Հիսուսն է **կենդանի հացը:** Նա ոչ միայն Իր մեջ կյանք ունի, այլ նաև կյանք է տալիս: **Եթե մեկն այս հացից ուտի, նա հավիտյան պիտի ապրի:** Սա ինչպե՞ս կարող է լինել: Տերն ինչպե՞ս կարող է հավիտենական կյանք տալ մեղավոր մարդկանց: Պատասխանը տրվում է այս համարի վերջնամասում. **«... Եվ հացը, որ Ես պիտի տամ, Իմ մարմինն է, որը Ես պիտի տամ աշխարհի կյանքի համար»:** Այստեղ Տեր Հիսուսը կանխատեսեց Իր մահ-

վան՝ խաչելության մասին: Նա Իր **կյանքը** տալիս է մեղավորներին փրկագնելու համար: Նրա մարմինը պետք է խոցվի, և Նրա արյունը պետք է հեղվի որպես զոհ մեղքերի համար: Նա Իր վրա կվերցնի մեր մեղքերի հատուցումը: Ինչո՞ւ է Նա այդպես վարվում: Նա սա անում է **աշխարհի կյանքի համար**: Նա չի մեռնելու միայն հրեա ժողովրդի կամ ընտրյալների համար. Նրա մահը վճռական նշանակություն է ունենալու ողջ աշխարհի համար: Սա չի նշանակում, թե ամբողջ աշխարհը կփրկվի, այլ Գողգոթայում Տեր Հիսուսի կատարած գոհաբերությունը բավարար է, որպեսզի ամբողջ աշխարհը փրկվի, եթե բոլոր մարդիկ Հիսուսին գան:

6:52. Հրեաները դեռ շարունակում էին նյութական հացի և **մարմնի** մասին մտածել: Նրանց մտքերն ի գորու չէին երկրավորից վեր բարձրանալու: Նրանք չէին հասկանում, որ Տեր Հիսուսը նյութականն օգտագործեց, որ հոգևոր դասեր սովորեցնի: Այս դեպքում նրանք սկսեցին իրար հետ վիճել՝ ասելով. «**Ինչպե՞ս Նա կարող է Իր մարմինը ուրիշներին տալ՝ ուտելու**»: Պարաշյուտը բացվում է միայն ինքնաթիռից թռչելուց հետո: Հավատը նախորդում է տեսնելուն և պատրաստում է ձեր անձը հասկացողության համար, սիրտը՝ հավատի համար, կամքը՝ հնազանդելու համար: Ձեր բոլոր «ինչպե՞ս»-ների պատասխանը մեկն է. հնազանդվել Զրիստոսի իշխանությանը, ինչպես Պողոսը, ով կանչեց. «Տե՛ր, ի՞նչ ես կամենում, որ անեմ»:

6:53. Քանի որ Հիսուսն ամենագետ էր, Նա շատ լավ գիտեր հրեաների մտքերն ու խոսակցությունները: Նա լրջորեն նրանց զգուշացրեց. Եթե նրանք **չուտեն Նրա մարմինը և չիստեն Նրա արյունը, կյանք չեն ունենա** իրենց մեջ: Սա չի վերաբերում Տերունական Ընթրիքի ժամանակ օգտագործվող հացին ու գինուն: Այն գիշերը, երբ կատարվեց Տերունական ընթրիքն, ու Տերն էլ մատնվեց, Նրա մարմինը դեռ չէր անարգվել, ու արյունն էլ չէր հեղվել: Աշակերտները հաղորդվեցին հացի ու գինու հետ, բայց բառացիորեն Նրա մարմինը չկերան ու

Նրա արյունը չիստեցին: Այս խոսքերով Տեր Հիսուսն ընդամենը հաստատեց, որ քանի դեռ մենք հավատով չենք ընդունել մեզ համար Նրա մահվան նշանակությունը, փրկություն չենք ստանա: Մենք պետք է հավատանք Նրան, ընդունենք Նրան, վրաստահենք ու պատկանենք Նրան:

6:54. Երբ այս համարը համեմատում ենք 47-րդ համարի հետ, հստակ տեսնում ենք, որ Նրա մարմինն ուտել և Նրա արյունը խմել նշանակում է հավատալ Նրան: 47-րդ համարում կարդում ենք. «**Նա, ով հավատում է Ինձ, հավիտենական կյանք ունի**»: 54-րդ համարից խմանում ենք, որ Նրա **մարմինն ուտողը** և Նրա **արյունը խմողը հավիտենական կյանք ունի**: Հիմա բոլորը, որ հավասար են միևնույն բանին, ուրեմն հավասար են իրար: Նրա **մարմինն** ուտել և Նրա **արյունը** խմել նշանակում է հավատալ Նրան: Բոլոր Նրան հավատացողները հարություն կառնեն **վերջին օրում**: Անշուշտ, հարություն կառնեն այն մեռելների մարմինները, ովքեր հավատացել են Տեր Հիսուսին:

6:55. Տեր Հիսուսի **մարմինը ճշմարիտ կերակուր է, և Նրա արյունը ճշմարիտ խմելիք է**:²² Սա հակադրության մեջ է այս աշխարհի կերակուրին և խմելիքին, որը միայն ժամանակավոր արժեք ունի: Տեր Հիսուսի մահը մշտական նշանակություն ունի: Նա, ով հավատով հաղորդվում է Նրա հետ, հավիտենական կյանք է ստանում:

6:56. Իր և Իրեն հավատացողների միջև սերտ միություն կա: Նրա **մարմինն ուտողը** և Նրա **արյունը խմողը** Նրանում է **մնում**, և Նա էլ՝ այդ անձի մեջ: Սա ամենամոտ և սերտ միությունն է: Երբ սովորական կերակուր ենք ուտում, այն կուլ ենք տալիս, և այն դառնում է մեր մի մասը: Երբ ընդունում ենք Տեր Հիսուսին՝ որպես մեր Ազատարարի, Նա մուտք է գործում մեր կյանքի մեջ, որպեսզի մեր մեջ մնա, իսկ մենք էլ մնանք (մշտապես բնակվենք) Նրանում:

6:57. Այնուհետև Տերը ևս մի պատկերավոր բացատրություն է ներկայացնում Իր և

Իր ժողովրդի միջև եղող սերտ փոխկապակցության մասին: Օրինակ է ծառայում Նրա անձնական միությունը Հայր Աստծո հետ: **Կենդանի Հայրը** Տեր Հիսուսին **ուղարկեց** աշխարհ: («Կենդանի Հայր» արտահայտությունը նշանակում է «Հայրը կյանքի աղբյուրն է»): Չնայած որ Հիսուսը եկավ այս աշխարհ որպես Մարդ, Նա Հայր Աստծով ապրեց, այսինքն՝ շնորհիվ Հոր. Նա Հայր Աստծո հետ սերտ միության ու ներդաշնակության մեջ ապրեց: Աստված Նրա կյանքի կենտրոնն ու բովանդակությունն էր: Նրա նպատակը Հայր Աստծո կամքը կատարելն էր: Երկրի վրա Նա սովորական Մարդ էր, և աշխարհը չհասկացավ, որ Նա մարմնով հայտնված Աստվածն է: Նա չհասկացվեց աշխարհից, բայց միևնույնն է, Ինքն և Հայրը մեկ են: Նրանք ամենամտերմիկ միության մեջ էին ապրում: Եվ հենց այսպես էլ հավատացյալները միանում են Տեր Հիսուսի հետ: Նրանց այս աշխարհում չեն հասկանում, ասում են, հաճախ՝ հալածում: Բայց քանի որ հավատացին ու վստահեցին Տեր Հիսուսին, նրանք Նրանով են **ապրում**: Նրանց կյանքը սերտորեն կապված է, ձուլվել է Նրա կյանքի հետ, և այդ կյանքը պետք է հավիտյան շարունակվի:

6:58. Ըստ երևույթին, այս համարը նախորդ համարներում Տիրոջ կողմից ասվածի ամփոփումն է: Հիսուսն է **այն հացը, որ երկնքից իջավ**: Նա գերազանցում է **մանանային**, որը **հայրերը կերան** անպատում: Այդ հացը միայն ժամանակավոր նշանակություն ունի: Այն պետք էր միայն այս կյանքում: Բայց Զրիստոսն Աստծո Հացն է, ով հավիտենական կյանք է տալիս բոլորին, ովքեր ուտում են Նրան:

6:59. Գալիլիայի ծովի հյուսիսարևելյան ափից մինչև **Կափառնայում** ժողովուրդը հետևում էր Հիսուսին ու Նրա աշակերտներին, և հավանաբար շատերը Հիսուսին գտան **սինագոգայում**,²³ որտեղ Նա քարոզում էր նրանց կյանքի Հացի մասին:

6:60. Այդ ժամանակ Տեր Հիսուսին **շատ** ավելի **աշակերտներ** էին հետևում, քան

սկզբում Իր կողմից ընտրած տասներկու աշակերտները: Նրան հետևող ցանկացած մարդ, ով հաստատում էր, որ ընդունել է Նրա ուսմունքը, համարվում էր աշակերտ: Սակայն իրենց Նրա աշակերտն անվանողներից ոչ բոլորն էին ճշմարիտ հավատացյալներ: Այս համարում նկարագրված է, թե ինչպես նրանցից **շատերը**, ովքեր խոստովանում էին, թե **Նրա աշակերտներն են**, ասում էին. «**Մա ծանր խոսք է**»: Նրանք նկատի ունեին, որ Հիսուսի ուսմունքը վիրավորական է: Ոչ թե որ շատ բաներ չէին հասկանում, այլ որ նրանց հաճելի չէր այն ընդունելը: «**Ո՛վ կարող է դա տանել**» ասելով՝ նրանք նկատի ունեին հետևյալը. «Ո՛վ կարող է կանգնել և լսել այսպիսի վիրավորական ուսմունք»:

6:61. Կրկին տեսնում ենք Տիրոջ ամենագետ լինելու ապացույցը. **Հիսուսը գիտեր** ամեն ինչ, ինչի մասին որ խոսեցին աշակերտները: Նա գիտեր, որ նրանք տրտրնջում են՝ լսելով Նրա պնդումը, որ Ինքը երկնքից է իջել կամ ինչպես էր մարդկանց առաջարկում ուսել Իր մարմինն ու խմել Իր արյունը, որպեսզի հավիտենական կյանք ունենան: Ուստի Նա հարցրեց նրանց. «**Դա գայթակղեցնո՞ւմ է ձեզ**»:

6:62. Նրանց դուր չեկան Նրա այն խոսքերը, թե Նա Երկնքից է իջել: «Իսկ **ի՞նչ կմտածեն նրանք**, - հարցրեց Նա, - եթե **տեսնեն** Նրան նորից **վեր**՝ երկինք **բարձրանալիս**»: Նա գիտեր, որ դա տեղի է ունենալու Իր հարությունից հետո: Նրանց վիրավորել էր նաև Նրա այն հայտարարությունը, որ մարդիկ պետք է ուտեն Իր մարմինը: Իսկ **ի՞նչ կմտածեն**, երբ տեսնեն, թե ինչպես է Մարմինը **վեր բարձրանում այնտեղ, ուր առաջ էր**: Մարդիկ ինչպե՞ս կարող էին բառացիորեն Նրա մարմինն ուսել ու արյունը խմել դրանից հետո, երբ Նա վերադառնար Հոր մոտ:

6:63. Այս մարդիկ մտածում էին Զրիստոսի բառացի մարմնի մասին, իսկ Նա ասում էր, որ հավիտենական կյանքը կարելի է ստանալ ոչ թե մարմնի հագեցման միջոցով, այլ միայն Աստծո Սուրբ Հոգու գոր-

ծունեության միջոցով: Մարմինը չի կարող կյանք տալ, միայն **Հոգին** է կենդանացնում: Նրանք ընդունեցին Նրա խոսքերի բառացի իմաստը և չհասկացան, որ դրանք պետք է հոգևորապես հասկանալ: Տեր Հիսուսը նրանց բացատրեց, որ **խոսքերը, որոնք Ինքը ասում է, դրանք հոգի են, և դրանք կյանք են:** Երբ Նրա խոսքերը՝ «Իմ մարմինն ուտողը և Իմ արյունը խմողը», հոգևորապես ըմբռնեն, այսինքն՝ *հավատան* Նրան, այն ժամանակ նրանք, ովքեր պատգամն ընդունում են, հավիտենական կյանք կստանան:

6:64. Նույնիսկ այս բացատրությունից հետո Տերը գիտեր, որ Իր ունկնդիրներից ոմանք Իրեն չեն հասկանա, որովհետև չէին ուզում **հավատալ:** Խանգարող հանգամանքը ոչ այնքան նրանց անկարողությունն էր, որքան չկամենալը: Տեր Հիսուսը **սկզբից գիտեր**, որ Իր կարծեցյալ հետևորդներից ոմանք **չէին հավատում**, և Իր աշակերտներից մեկն էլ **կմատնի Իրեն:** Իհարկե, **Հիսուսն** այս բոլորը **գիտեր** դեռ հավիտենականությունից, բայց այստեղ, հնարավոր է, նկատի ունի, որ Ինքը դա գիտեր հենց Իր երկրավոր ծառայության սկզբից:

6:65. Տեր Հիսուսը բացատրեց, որ նրանց դժվարությունն իրենց անհավատության մեջ է, որի մասին Նա արդեն ասել էր, և որ **ոչ մեկը չի կարող Իր մոտ գալ, եթե դա Իր Հորից տրված չլինի իրեն:** Այսպիսի խոսքերը գրոհում են մարդկային հպարտության վրա, որ ենթադրում է, թե նա կարող է փրկությունը վաստակել կամ աշխատելով ձեռք բերել: Տեր Հիսուսն ասում է, որ նույնիսկ Իր **մոտ գալու** գորությունը միայն **Հայր Աստծուց** կարելի է ստանալ:

Ե. Տարբեր հակազդեցություններ Փրկչի խոսքերի հանդեպ (6:66-71)

6:66. Տեր Հիսուսի խոսքերը տհաճ էին Նրան հետևողներից **շատերին:** Նրանք թողեցին Հիսուսին և այլևս չցանկացան Նրա հետ հաղորդակցություն ունենալ: Այդ աշակերտները երբեք էլ չէին եղել ճշմարիտ հավատացյալներ: Նրանք Տիրոջը

հետևում էին տարբեր պատճառներով, բայց առանց Նրան ճշմարտապես սիրելու կամ հասկանալու, թե Ով է Նա:

6:67. Դրանից հետո Տեր Հիսուսը դիմեց **տասներկու** աշակերտներին և մարտահրավեր ավեց՝ հարցնելով, թե արդյոք իրենք էլ չե՞ն ուզում հեռանալ:

6:68. Պետրոսի պատասխանն արժանի է ուշադրության: Նրա խոսքերն այսպես կարելի է ընդլայնել. «Տե՛ր, ինչպե՛ս կարող ենք Քեզ թողնել: Դու մեզ հավիտենական կյանքի առաջնորդող բաներ ես սովորեցնում: Եթե հեռանանք Քեզանից, ուրիշ մեկը չկա, ում մոտ կարող ենք գնալ: Քեզ թողնել նշանակում է մեզ վրա կործանում բերել»:

6:69. Խոսելով տասներկուսի անունից՝ Պետրոսն ավելացրեց, որ նրանք **հավատացել են և գիտեն, թե** Տեր Հիսուսն է *Մեսիան՝ կենդանի Աստծո Որդին:*²⁴ Ուշադրություն դարձրեք խոսքերի հերթականությանը՝ **«հավատացինք և գիտենք»:** Նախ ամեն բանից առաջ նրանք հավատացին Տեր Հիսուս Քրիստոսին, իսկ հետո **իմացան**, որ Նա իսկապես Նա է, ինչ Իր մասին հռչակում է:

6:70. 68-69-րդ համարներում Պետրոսը «տասներկու աշակերտներ» բառերի փոխարեն օգտագործում է «մենք» բառը: 70-րդ համարում Տերն ուղղում է նրան: Նա չպետք է այդքան վստահ հայտարարեր, որ բոլոր տասներկուսն էլ ճշմարիտ հավատացյալներ են: Տերն իսկապես **տասներկու** աշակերտներ էր **ընտրել**, բայց նրանցից **մեկը սատանա էր:** Նրանց մեջ կար մեկը, որ չէր կիսում Տեր Հիսուս Քրիստոսի վերաբերյալ Պետրոսի հայացքները:

6:71. Տեր Հիսուսը գիտեր, որ **Հուդա Իսկարիովտացին** պատրաստվում է **մատնելու Իրեն:** Նա գիտեր, որ Հուդան երբեք իրեն չէր ընդունել որպես իրական Տեր ու Փրկիչ: Այստեղ նորից ենք տեսնում Տիրոջ կատարյալ գիտությունը: Նաև ունենք այն բանի ապացույցը, որ Պետրոսը սխալվեց, երբ խոսեց բոլոր աշակերտների անունից:

Կյանքի հացի մասին գրույցը Տերն սկսեց բավականին պարզ ուսմունքով: Բայց գրույցի ընթացքում պարզ դարձավ, որ հրեաները մերժում են Իր խոսքերը: Որքան ավելի էին նրանք փակում իրենց սրտերն ու մրտաքերը ճշմարտության հանդեպ, այնքան ավելի էր բարդանում այդ ուսմունքը: Հիսուսը խոսքը եզրափակեց՝ ասելով, որ պետք է Իր մարմինն ուտել և Իր արյունը խմել: Սա արդեն չափից ավելին էր: Նրանք ասացին. «Սա ծանր խոսք է, ո՞վ կարող է դա տանել», - և հեռացան Նրանից: Ճշմարտության մերժումը հանգեցնում է դատապարտող կուրության: Նրանք չէին *ցանկանում* տեսնել, այդ իսկ պատճառով հասան այնտեղ, որտեղ արդեն չէին *կարող* տեսնել:

V. ԱՍՏԾՈՒ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ. ԵՐՈՒՍԱԿՆԵՄ (7:1-10:39)

Ա. Հիսուսը հանդիմանում է Իր եղբայրներին (7:1-9)

7:1. 6-7-րդ գլուխների միջև մի քանի ամիսների տարբերություն կա: **Հիսուսը** մնաց **Գալիլիայում**: Նա **չէր ուզում Հրեաստանում շրջել**, որը **հրեաների** գլխավոր կենտրոնն էր, և **ուզում էին սպանել Նրան**: Համընդհանուր կարծիքն այն է, որ այս համարում **հրեաների**²⁵ տակ հասկացվում է կրոնական առաջնորդները կամ իշխանավորները: Նրանք սաստիկ ատում էին Տեր Հիսուսին ու **Նրան սպանելու** հնարավորություն էին փնտրում:

7:2. Տաղավարների տոնը կարևոր իրադարձություններից մեկն էր հրեական օրացույցում: Այն կատարվում էր հնձի ժամանակահատվածում և հիշեցնում էր այն ժամանակը, երբ հրեաները Եգիպտոսից դուրս գալուց հետո ապրել էին ժամանակավոր ծածկերի կամ վրանների տակ: Սա հանդիսավոր, ուրախ տոն էր, որ խորհրդանշում էր Մեսիայի գալստյան օրվան *սպասելը*, երբ Մեսիան կթագավորի և փրկված Իսրայել ժողովուրդը երկրի վրա կապրի խաղաղության ու բարգավաճման մեջ:

7:3. Այս համարում հիշատակված Տիրոջ

եղբայրները, ամենայն հավանականությամբ, Մարիամի որդիներն էին, Հիսուսից հետո ծնված: Ունանք համարում են, որ խոսքը գարմիկների կամ էլ հեռավոր ազգականների մասին է: Բայց անկախ Հիսուսի հետ ունեցած ազգակցական կապի աստիճանից՝ նրանք հեռու էին փրկությունից, չէին հավատում Տեր Հիսուսին: Նրանք Հիսուսին խորհուրդ տվեցին Տաղավարների տոնին Երուսաղեմ գնալ ու այնտեղ հայտնել Իր հրաշքները, **որպեսզի Իր աշակերտները տեսնեին** այն գործերը, որոնք Նա կատարում էր: Այստեղ խոսքը ոչ թե տասներկու աշակերտների մասին է, այլ նրանց, ովքեր Հրեաստանում խոստովանում էին, որ Տեր Հիսուսի հետևորդներն են:

Զնայած որ եղբայրները չէին հավատում Նրան, ցանկանում էին, որ Նա Իրեն հայտնի աշխարհին: Գուցե որպես հանրահայտ մարդու բարեկամներ՝ նրանք ուզում էին իրենց վրա ուշադրություն հրավիրել: Կամ էլ, որ ավելի հավանական է, նախանձում էին Հիսուսի ճանաչված լինելուն և պնդում էին, որ Հրեաստան գնալ՝ հուսալով, որ այնտեղ կսպանվի:

7:4. Հնարավոր է՝ այս խոսքերը հեգնանքով ասված լինեն: Նրա ազգականները, ավելի ճիշտ, ենթադրում էին, որ Տերը հանրաճանաչություն է փնտրում: Ի՞նչ իմաստ ունի այս բոլոր հրաշքները կատարել Գալիլիայում, եթե Նա չի ցանկանում ճանաչված լինել: Փաստորեն նրանք ասում էին. «Քեզ համար լայն հնարավորություններ են բացվում: Եթե Դու հանրաճանաչություն ես փնտրում, պետք է Երուսաղեմ գնաս: Այնտեղ հարյուրավոր մարդիկ են հավաքվում, և Դու կարող ես Քո հրաշքները նրանց ցուցադրել: Գալիլիան խաղաղ տեղ է, իրականում այստեղ հրաշքներդ գաղտնի ես անում: Ինչո՞ւ ես այսպես անում, երբ գիտենք, որ Քո ցանկությունը բոլորի կողմից ճանաչվելն է»: Այնուհետև նրանք ավելացրին. **«Եթե Դու այս բաներն անում ես, հայտնի՞ր Քեզ աշխարհին»**: Այսինքն ուզում էին ասել. «Եթե Դու իսկապես Մեսիան ես և Քո հրաշքները դրա ապացույցն են, ինչո՞ւ այդ ապացույցները չներկայացնես այն-

տեղ, որտեղ իսկապես նշանակություն կունենան, այսինքն՝ Հրեաստանում»:

7:5. Նրա **եղբայրները** անկեղծ ցանկություն չունեին Հիսուսին փառավորված տեսնելու: Իրականում նրանք չէին էլ հավատում, որ Նա Մեսիան է, ո՛չ էլ ուզում էին Նրան վստահել: Նրանց բոլոր խոսքերը հեզանքով լի էին: Նրանց սիրտը Տիրոջ առջև ուղիղ չէր: Եվ Տեր Հիսուսի համար հավանաբար շատ դառնագին էր, որ Իր սեփական եղբայրները կասկածում են Իր խոսքերին ու գործերին: Բայց դա շատ հաճախ է պատահում: Աստծուն հավատացողները ծայրահեղ դիմադրության են հանդիպում իրենց մտերիմների և ամենաթանկագին մարդկանց կողմից:

7:6. Տիրոջ կյանքը նախասահմանված էր սկզբից մինչև վերջ: Յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր քայլ իրականացվում էր նախապես պատրաստված ծրագրի համաձայն: Իրեն աշխարհին բացահայտորեն հայտնելու նախատեսված **ժամանակը դեռ չէր եկել**: Նա ճշգրտորեն գիտեր, թե ինչ էր Իրեն սպասվում, և դեռ Աստծո կամքով չէր, որ Երուսաղեմ գնա և հայտնի Իրեն: Բայց հիշեցրեց Իր եղբայրներին, որ նրանց **ժամը միշտ պատրաստ է**: Նրանք իրենց սեփական ցանկություններով էին ապրում և չէին հնազանդվում Աստծո կամքին, հետևաբար ցանկացած ժամանակ կարող էին գնալ: Նրանք կարող են իրենց սեփական ծրագրերը կազմել ու գնալ այնտեղ, որտեղ ուզում են, քանի որ կենտրոնացած են միայն իրենց սեփական կամքը կատարելու վրա:

7:7. **Աշխարհը չէր կարող ստել** Տիրոջ եղբայրներին, որովհետև նրանք աշխարհին էին պատկանում: Նրանք աշխարհի հետ նույն կողմում կանգնեցին՝ դեմ լինելով Հիսուսին: Նրանց կյանքը ամբողջությամբ ներդաշնակ էր աշխարհի հետ: **Աշխարհ** ասելով՝ այստեղ հասկացվում է մարդու կողմից ստեղծված համակարգը, որտեղ տեղ չկա Աստծո և Քրիստոսի համար. դա մշակույթի, արվեստի, կրթության կամ կրոնի աշխարհն է: Փաստորեն Հրեաստանում կրոնական աշխարհն էր, քանի որ

ամենից շատ հրեական իշխանավորներն էին ասում Քրիստոսին:

Աշխարհը ասում էր Քրիստոսին, **որովհետև** Նա այն բանի մասին էր վկայում, որ **նրա գործերը չար են**: Սա Մարդկային այլասերված բնության տխուր գնահատականն է. անմեղ, սուրբ Մարդն աշխարհ եկավ, իսկ աշխարհն ուզեց սպանել Նրան: Քրիստոսի անթերի կյանքը ցույց տվեց, թե որքան անկատար է այլ մարդկանց կյանքը: Չիզգագ գծի կողքը դրված ուղիղ գիծը ցույց է տալիս նրա ծոմովածությունը: Այնպես էլ Տիրոջ աշխարհ գալը ցույց տվեց մարդու ողջ մեղավորությունը: Այսպիսի մերկացումը վիրավորեց մարդուն: Եվ զղոջալու, Աստծո ողորմությունը հայցելու փոխարեն նա ցանկացավ վերացնել Նրան, Ով բացահայտեց իր մեղքը:

Ֆ. Բ. Մեյերը մեկնաբանում է.

«Օ՛, սա ամենասարսափելի հանդիմանություններից մեկն է, որ Մարմնավորված Մերը կարող է տալ ոչ միայն մարմնի մեջ գտնված օրերում, այլ նաև հիմա. «Աշխարհը չի կարող ձեզ ատել»: Երբ աշխարհը չի ասում, երբ դու սիրվում ու գուրգուրվում ես աշխարհի կողմից, երբ քեզ քծնում են, սա ամենասարսափելի վիճակներից մեկն է, որում կարող է հայտնվել քրիստոնյան: «Ի՞նչ վատ բան եմ արել, - հարցրեց հին իմաստունը, - որ նա այդքան լավ է խոսում իմ մասին»: Աշխարհի ատելության բացակայությունն ապացուցում է, որ մենք չենք վկայում այն մասին, որ նրա գործերը չար են: Աշխարհի սիրալիր վերաբերմունքը ապացուցում է, որ մենք նրա սեփականությունն ենք, նրան ենք պատկանում: Աշխարհի հետ բարեկամությունը՝ թշնամություն է Աստծո հետ: Ուստի, ով որ աշխարհի բարեկամն է՝ Աստծո թշնամին է (Հովհ. 7:7, 15:19, Հակ. 4:4)»:²⁶

7:8. Տերն Իր եղբայրներին ասաց, որ **գնան այդ տոնին**: Մի տխուր բան կա այստեղ: Նրանք իրենց հավատացյալ մարդիկ էին համարում, պատրաստվում էին նշել Տաղավարների տոնը: Ահա Աստծո Քրիստոսը կանգնած էր նրանց միջ, բայց նրանք Նրա հանդեպ անկեղծ սեր չունեին:

Մարդուն դուր է գալիս կրոնական ծեսերը, որովհետև դրանց կարելի է մասնակցել առանց որևէ ճշմարիտ սրտի մասնակցության: Բայց երբ դեմ առ դեմ գա Քրիստոսի հետ, իրեն անհարմար կզգա: Հիսուսն ասաց, որ Ինքը **դեռ²⁷ չի գնում այդ տոնին**, որովհետև Իր **ժամանակը դեռ չի լրացել**: Նա նկատի չունեմ, թե ընդհանրապես չի գնա տոնակատարության, որովհետև 10-րդ համարից գիտենք, որ հետո գնաց: Ավելի ճիշտ, Նա նկատի ուներ, որ չի գնա Իր եղբայրների հետ, քանի որ չէր ուզում հրապարակային ճանաչում: Դրա ժամանակը չէր: Երբ գնա, Նա կգնա առանց աղմուկի, առանց հրապարակելու:

7:9. Ուստի Տերը **մնաց Չալիլիայում**, իսկ նրա եղբայրներն ուղևորվեցին՝ մասնակցելու տոնակատարությանը՝ ետևում թողնելով Նրան, Ով միայն կարող էր նրանց տալ այն խինդն ու ուրախությունը, որի խորհրդապատկերն էր տոնը:

Բ. Հիսուսը սովորեցնում է տաճարում (7:10-31)

7:10. Երբ **Իր եղբայրները գնացին** Երուսաղեմ, Տեր Հիսուսն անաղմուկ ուղևորվեց այնտեղ: Որպես բարեպաշտ հրեա՝ Նա ուզում էր ներկա գտնվել տոնին: Բայց որպես Աստծո հնազանդ Որդի՝ Նա չէր կարող դա անել **հայտնի, այլ գաղտնաբար**:

7:11. Եվ **հրեաները տոնի ժամանակ որոնում էին Նրան**: Մրանք, անկասկած, իշխանավորներն էին, Նրան սպանել ձրգտողները: Հարցնելով՝ «**Որտե՞ղ է Նա**», նրանք ոչ թե պաշտել էին ուզում Նրան, այլ կործանել:

7:12. Պարզ է, որ Տիրոջ ներկայությունը փափսուքներ առաջացրեց **ժողովրդի մեջ**: Նրա կողմից կատարված հրաշքները մարդկանց ավելի ու ավելի էին ստիպում մտածելու, թե իրականում Ո՞վ է Նա: Տոնի ժամանակ գաղտնի գրույցներ էին պատվում այն մասին, թե Նա ճշմարիտ մարգարե է, թե՞ կեղծ: **Ոմանք ասում էին, թե Նա բարի մարդ է, ուրիշներն էլ ասում էին. «Ո՛չ, այլ ժողովրդին մոլորեցնում է»:**

7:13. Հրեա առաջնորդների դիմադրությունը Հիսուսի դեմ այնքան գորավոր էր, որ ոչ մեկը չէր համարձակվում բացեիքաց արտահայտվել **հոգուտ** Նրա: Անկասկած, հասարակ մարդկանցից շատերը հասկացան, որ Նա իսկապես Իսրայելի Մեսիանն է, բայց չէին համարձակվում դուրս գալ ու դավանել, որովհետև վախենում էին իշխանությունների հալածանքից:

7:14. Տաղավարների տոնը մի քանի օր էր տևում: Երբ արդեն տոնի կեսն անցել էր, **Հիսուսը տաճարը ելավ և սովորեցնում էր** (ներքին գավիթում, որտեղ թույլատրվում էր մարդկանց հավաքվել):

7:15. Փրկչին լսողները **զարմանում էին**: Լիովին հավանական է, որ ամենաշատը նրանց տպավորեց հենց Նրա ՀԿ-ի իմացությունը: Բայց նրանց ուշադրությունը գրավեց նաև Նրա ուսմունքի լայնությունն ու սովորեցնելու կարողությունը: Նրանք գիտեին, որ Հիսուսը այն ժամանակվա կրոնական հայտնի դպրոցներից ոչ մեկում չի եղել, և չէին կարողանում հասկանալ՝ որտեղից է Նա այդպիսի կրթություն ստացել: Աշխարհն այսօր էլ զարմանում է և հաճախ է բողոքում, երբ տեսնում է, որ հավատացյալներ, ովքեր կրոնական կրթություն չունեն, բայց ունակ են Աստծո Խոսքը քարոզելու և սովորեցնելու:

7:16. Նորից գեղեցիկ է տեսնել, թե ինչպես Տերը հրաժարվեց Իրեն տրվող պատվից, բայց պարզորեն այն վերագրեց Իր Հորը: **Հիսուսը պատասխանեց**, որ Իր ուսմունքն Իրենը չէ, **այլ բխում է Իրեն Ուղարկողից**: Տեր Հիսուսն ինչ էլ որ ասեր ու սովորեցներ, բոլորն Իր Հորից էր, Ով պատվիրեց Նրան խոսել ու սովորեցնել: Նա չէր գործում առանց Հոր կամքի:

7:17. Եթե հրեաներն իսկապես ցանկանային իմանալ՝ Նրա պատգամը ճշմարիտ է, թե ոչ, դյուրությամբ կարող էին դա հայտնաբերել: **Ով կամենա Աստծո կամքը կատարել**, Աստված ցույց կտա նրան, թե Քրիստոսի ուսմունքն աստվածային է, թե՞ Տերը պարզապես սովորեցնում է այն, ինչ Ինքն է կամենում սովորեցնել: Այստեղ

հիանալի խոստում է տրված յուրաքանչյուրին, ով անկեղծությամբ ձգտում է ճշմարտությունը փնտրել: Եթե մարդ անկեղծ է և իսկապես ուզում է ճշմարտությունն իմանալ, Աստված դա ցույց կտա նրան. «Հնազանդությունը հոգևոր գիտելիքի օրգանն է»:

7:18. Որևէ մեկը, որ **իր մասին է խոսում**, այսինքն՝ ըստ իր սեփական կամքի, **իր անձի փառքն է որոնում**: Բայց Տեր Հիսուսի մոտ այդպես չէր: Նա փնտրում էր Հոր՝ **Իրեն Ուղարկողի փառքը**: Քանի որ Նրա դրդապատճառները բացարձակ մաքուր էին, Նրա պատգամն էլ բացարձակ **ճշմարիտ** էր: **Ոչ մի անարդարություն չկար Նրա մեջ**:

Միմիայն Հիսուսի մասին կարելի է այսպիսի խոսքեր ասել: Ուրիշ որևէ ուսուցիչ իր ծառայությանը եսասիրական մի տարր կխառներ: Տիրոջ ամեն մի ծառա պետք է ձգտի փառավորել Աստծուն, ոչ թե իրեն:

7:19. Այնուհետև Տերն ուղղակի հանդիմանեց հրեաներին: Նա հիշեցրեց, որ **Մովսեսն է իրենց Օրենքը** տվել: Նրանք հպարտ էին, որ Օրենքն ունեին, բայց մոռացել էին, որ Օրենքի պարզ տիրապետումը ոչ մի օգուտ չէր կարող տալ: Օրենքը հնազանդություն էր պահանջում գրվածքների կամ պատվիրանների հանդեպ: Նրանք հպարտանում էին Օրենքով, սակայն նրանցից ոչ մեկը չէր կատարում այն, քանի որ դավադրություն էին կազմակերպում սպանել Տեր Հիսուսին: Օրենքն արգելում էր սպանությունը: Նրանք խախտում էին Օրենքը Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած մտադրություններով:

7:20. **Մարդիկ** զգացին Հիսուսի մեղադրանքի դիպուկությունը, բայց դրա ճշմարտացիությունն ընդունելու փոխարեն սկսեցին անարգել Նրան: Ասացին Նրա մեջ **դև** կա և ժխտեցին Նրա պնդումը, որ **ուզում են սպանել** Նրան:

7:21. Այստեղ **Հիսուսը** հիշեցնում է Բեթհեզդայի ավազանում անդամալուծի բժշկության դեպքի մասին: Այս հրաշքը Նրա վրա բերեց հրեա առաջնորդների ատելությունը, և հենց այդ պահից սկսած՝ նրանք

որոշեցին սպանել Նրան ու սկսեցին Նրա դեմ նենգ դավադրություն հյուսել: Տերը նրանց հիշեցրեց, որ Նա **մի գործ կատարեց**, և նրանք **բոլորն** էլ զարմացան: Նրանք ոչ այնքան զարմացած էին հրաշքի պատճառով, որքան ցնցված էին, որ դա շաբաթ օրն էր կատարվել:

7:22. **Մովսեսի** օրենքը պատվիրում էր, որ արական սեռի երեխաները պետք է ծննդից հետո ութերորդ օրը թվատվեն: Իրականության մեջ թվատությունը սկիզբ է առնում **ոչ թե Մովսեսից**, այլ **«հայրերից»**, այսինքն՝ Աբրահամից, Իսահակից, Հակոբից: Նույնիսկ եթե ութերորդ օրը համընկներ **շաբաթ** օրվա հետ, հրեաները դա արգելք չէին համարում **և թվատում էին** նորածին տղաներին: Նրանք զգում էին, որ դա անհրաժեշտ է. Տերը իրենց թույլատրում է կատարել այդ գործը:

7:23. Եթե երեխային **շաբաթ օրը** թվատում են, որպեսզի չխախտվի **Մովսեսի օրենքը**, ինչո՞ւ են վիճում Տեր Հիսուսի հետ նրա համար, որ Նա **մի ամբողջ մարդու բժշկեց շաբաթ օրը**: Եթե Օրենքը թույլ է տալիս աշխատել անհրաժեշտության դեպքում, ապա արդյո՞ք չի թույլատրում նույնպես գթասրտության գործեր կատարել:

Թվատությունը վիրաբուժական փոքր գործողություն է, որը կատարում են արական սեռի երեխայի համար: Տրամաբանական է, որ այն ցավ է պատճառում, իսկ նրա ֆիզիկական օգտակարությունն աննշան է: Ի տարբերություն սրա՝ Տեր Հիսուսն ամբողջությամբ բժշկեց մարդուն շաբաթ օրը: Եվ հրեաները մեղադրեցին Նրան:

7:24. Դժվարությունն այն էր, որ հրեաներն ամեն ինչի մասին **արտաքինից** էին դատում, ոչ թե ներքին էությունից: Նրանց դատաստանն արդար չէր: Նրանք ընդունում էին, որ իրենց գործողությունները բացարձակ օրինական են, իսկ եթե նույնը Տերն աներ, դա կհամարվեր լիովին սխալ: Իր բնությամբ մարդը միշտ հակված է ամեն ինչ տեսքից դատել, ոչ թե ճշմարիտ էությունից: Ոչ թե Տեր Հիսուսն էր խախտում Մովսեսի օրենքը, այլ հրեաները՝ Նրա

հանդեպ ունեցած իրենց անիմաստ ատելությամբ:

7:25. Այդ ժամանակ **Երուսաղեմում** արդեն հայտնի դարձավ, որ հրեաների առաջնորդները դավադրություն են կազմակերպում Փրկչի դեմ: Հասարակ ժողովրդից ոմանք հարցնում էին, արդյոք սա Նա չէ՞, Ում հետապնդում են առաջնորդները:

7:26. Նրանք չէին կարողանում հասկանալ, թե այդ դեպքում ինչո՞ւ են Տեր Հիսուսին թույլատրում խոսել այդպես բաց ու **համարձակ**: Եթե կառավարիչները այդքան ուժգին են ատում Նրան, այդ դեպքում ինչո՞ւ են թույլ տալիս, որ Նա սովորեցնի: Գուցե նրա՞նք էլ վերջապես հասկացան, որ Նա **ճշմարիտ** Մեսիան է, ինչպես որ հայտարարում է:

7:27. Նրանք, ովքեր չէին ուզում Հիսուսին Մեսիա ընդունել, կարծում էին՝ գիտեին, թե Նա որտեղից էր եկել: Նրանք հավատում էին, որ Նա Նազարեթից էր եկել, ճանաչում էին Նրա մորը՝ Մարիամին, և համարում էին, որ Հովսեփն է Նրա հայրը: Այն ժամանակվա հրեաները հավատում էին. երբ Մեսիան գա, Նա կհայտնվի հանկարծակի ու խորհրդավոր կերպով: Նրանց մտքով չէր անցնում, որ որպես Մանուկ կծնվի ու կմեծանա: ՀԿ-ից նրանք պետք է իմանային, որ Նա կծնվի Բեթղեհեմում, բայց պարզվեց, որ բոլորովին էլ տեղյակ չէին Մեսիայի գալստյան մանրամասներին: Այդ պատճառով էլ ասացին. **«Երբ Քրիստոսը գա, ոչ մեկը չի իմանա, թե որտեղից է»:**

7:28. Այս համարում **Հիսուսը աղաղակեց** հավաքված ու խոսակցությունն ունկընդորոշ մարդկանց: Նա ասաց, որ իրականում նրանք Իրեն **գիտեն** և գիտեն, թե **որտեղից է** Ինքը եկել: Այստեղ, իհարկե, Նա նկատի ուներ, որ Նրան գիտեին որպես մարդ: Նրանք գիտեին որպես Հիսուսը Նազովրեցի: Բայց չգիտեին, որ Նա նաև Աստված է: Եվ հենց սա է Նա բացատրում համարի երկրորդ մասում:

Որպես մարդ, Նա ապրում էր Նազարեթում: Բայց նրանք նաև պետք է հասկանա-

յին, որ Նա Ինքն Իրենից **չէր եկել**, այլ ուղարկվել էր Հայր Աստծո կողմից, Ում նրանք **չգիտեին**: Այս խոսքերով Տեր Հիսուսը բացեիրաց ներկայացրեց Աստծո հետ հավասարությունը: Նա Ինքը Իրենից **չէր եկել**, այսինքն՝ Իր սեփական իշխանությամբ, և Իր սեփական կամքը չէր կատարում: Նա աշխարհ էր ուղարկվել **ճշմարիտ** Աստծուց, և այդ Աստծուն հրեաները **չգիտեին**:

7:29. Բայց Հիսուսը Նրան գիտեր: Նա Աստծո հետ էր հավիտենությունից և ամեն բանով հավասար էր Հորը: Երբ Տերն ասաց, որ ուղարկված է Աստծուց, Նա ոչ թե պարզապես նկատի ուներ, որ ուղարկված է Աստծուց, այլ որ Նա միշտ ապրել է Աստծո հետ և հավասար է Նրան ամեն բանում: **«Նա ուղարկեց Ինձ»** խոսքերով Տերը շատ որոշակիորեն հայտարարեց, որ Նա Քրիստոս Աստվածն է, Օծյալը, Ում Աստված ուղարկեց աշխարհի փրկագնման գործը կատարելու համար:

7:30. Հրեաները հասկացան Տեր Հիսուսի խոսքերի նշանակությունը և Նրա հայտարարությունը, որ Նա Մեսիան է: Դա բացահայտ հայիոյություն համարելով նրանք փորձեցին ձերբակալել Նրան, **բայց ոչ ոք ձեռք չդրեց Նրա վրա, որովհետև Նրա ժամը դեռ չէր հասել**: Աստծո գործությունը պահպանեց Տեր Հիսուսին մարդկանց չար խորհուրդներից այնքան ժամանակ, մինչև եկավ Նրա քավչարար գոհաբերության ժամանակը:

7:31. Իրականում **ժողովրդից շատերը հավատացին** Տեր Հիսուսին: Հակված ենք մտածելու, թե նրանց հավատը ճշմարիտ էր: Նրանք այսպես էին դատում. Հիսուսը էլ ուրիշ ի՞նչ պիտի աներ, որպեսզի ապացուցեր, որ Ինքը Մեսիան է: Իսկ եթե Նա Մեսիան չէ, ապա երբ **Քրիստոսը** գա, մի՞թե **ավելի հրաշքներ պիտի անի**, քան Հիսուսն արեց: Նրանց հարցից ակնհայտ էր, որ նրանք հավատում էին, որ Տեր Հիսուսի հրաշքներն ապացուցում են, որ Նա իսկապես Մեսիան է:

Գ. Փարիսեցիների թշնամությունը (7:32-36)

7:32. Քանի որ **փարիսեցիները** մշտապես ժողովրդի մեջ էին, **յսեցին** այս գաղտնի գրույցները: **Ժողովուրդը շնջում էր** Փրկչի մասին, ոչ թե դատապարտելով Նրան, այլ գաղտնի Նրանով հիանալով: Փարիսեցիները վախենում էին, որ ժողովուրդը կարող է Հիսուսին ընդունել, և **սպասավորներ ուղարկեցին** ձերբակալելու Նրան:

7:33. Այս համարի խոսքերը, անկասկած, ասված են Նրան բռնելու եկած սպասավորներին, ինչպես նաև փարիսեցիներին ու բոլոր ժողովրդին:

Տեր Հիսուսը բոլորովին էլ չնվազեցրեց Իր նախորդ պահանջները: Ավելին, Նա ուժեղացրեց դրանք: Նա հրեաներին հիշեցրեց, որ **մի փոքր ժամանակ** Նա նրանց հետ կլինի, իսկ հետո կվերադառնա Իրեն **ուղարկող** Հայր Աստծուն: Իհարկե այս խոսքը ավելի գրգռեց փարիսեցիների ատելությունը:

7:34. Օրեր կգան, երբ փարիսեցիները **կփնտրեն** Նրան և **չեն գտնի**: Նրանց կյանքում կգա ժամանակ, երբ Փրկչի կարիք կունենան, բայց շատ ուշ կլինի: Նա կվերադառնա երկինք, բայց, իրենց անհավատության ու չարության պատճառով նրանք չեն կարող այնտեղ հանդիպել Նրա հետ: Այս համարի խոսքերը յուրահատուկ կարևորություն ունեն: Դրանք մեզ հիշեցնում են, որ այսպիսի մի հասկացողություն կա՝ բաց թողնված առիթ: Երբ մեկն այսօր բաց է թողնում իրեն ընձեռնված առիթը, գուցե վաղն այլևս ուրիշ առիթ չունենա:

7:35. **Հրեաները** չկարողացան հասկանալ Տիրոջ խոսքերի նշանակությունը: Նրանք չկարողացան պատկերացնել, որ Նա կվերադառնա Երկինք: Նրանք մտածում էին, որ, հնարավոր է, Նա կշարունակի քարոզել **հեթանոսների** մեջ ցրված հրեաներին կամ նույնիսկ՝ հենց հեթանոսներին:

7:36. Կրկին նրանք զարմացան Նրա խոսքերից: Նա **ի՞նչ** նկատի ուներ, ասելով, որ նրանք պետք է **փնտրեն** Իրեն և **չեն** կա-

րողանալու **գտնել**: Ո՛ր էր գնալու, որ իրենք չպիտի կարողանային հետևել Նրան: Այստեղ հրեաները ցուցադրեցին անհավատության կուրությունը: Ավելի խավար սիրտ չկա, քան այն սիրտը, որ հրաժարվում է ընդունել Տեր Հիսուսին: Ժամանակակից լեզվով ասած, չկա ավելի կույր, քան նա, ով չի ցանկանում տեսնել: Այստեղ ճիշտ այս դեպքն է: Նրանք չէին **ցանկանում** ընդունել Տեր Հիսուսին, այդ իսկ պատճառով էլ **չկարողացան**:

Գ. Սուրբ Հոգու խոստումը (7:37-39)

7:37. ՀԿ-ում հիշատակված չէ, որ Տաղավարների տոնի առաջին յոթ օրերը հրեաները կատարում էին հետևյալ ծեսը. ջուր էին հանում Սիլվամի ավազանից և այն լցնում գոհասեղանի մոտ դրված արծաթե անոթների մեջ: Ութերորդ օրն այս ծեսը չէր կատարվում, դրա համար էլ հավիտենական կյանքի ջուր տալու Քրիստոսի առաջարկն ավելի ցնցող էր: Հրեաները կատարում էին այդ կրոնական ավանդույթը, բայց այն իրենց սրտերին բավարարություն չէր բերում, քանի որ նրանք չէին հասկանում տոնի ճշմարիտ իմաստը: Ժողովուրդն արդեն պատրաստվում էր տուն մեկնելու, բայց **տոնի վերջին, մեծ օրը Հիսուսը կանգնեց և բացականչեց**. Նա նրանց հրավիրում էր Իր մոտ **գալ** հոգևոր բավարարվածություն ստանալու: Հատուկ ուշադրություն՝ դարձրեք Նրա խոսքերին: Հրավերը **բոլորին** էր վերաբերում: Նրա Բարի Լուրը համընդհանուր լուր էր: Չկա մեկը, ով չի կարող փրկություն ստանալ, եթե Քրիստոսին գա:

Բայց, ուշադրություն դարձրեք, որ այստեղ պայման կա: Սուրբ Գիրքն ասում է. **«Եթե մեկը ծարավ է»**: Ծարավն այստեղ մատնացույց է անում հոգևոր կարիքին: Եթե մարդ չընդունի, որ ինքը մեղավոր է, երբեք չի ցանկանա փրկվել: Եթե նա չհասկանա, որ կործանվում է, երբեք օգնության համար չի աղաղակի: Եթե մարդը իր կյանքի հոգևոր ծայրահեղ աղքատությունը չի տեսնում, նա իր կարիքների բավարարման համար Տիրոջը չի դիմի: Փրկիչը հրավիրում

էր ծարավ հոգուն Իր մոտ, ոչ թե՛ եկեղեցի, ոչ թե՛ քարոզչի մոտ, ոչ թե՛ ջրի մոտ մկրտության համար կամ Տերունական Ընթրիքին: Հիսուսն ասաց. **«Ինձ մոտ գա»**: Ուրիշ ոչ մեկը և ոչ մի բան չեն կարող ջուր տալ: **«Ինձ մոտ գա և խմի»**: **«Խմել»** նշանակում է ընդունել Հիսուսին անձնապես: Դա նշանակում է վստահել Նրան որպես Տիրոջ ու Փրկչի: Այսինքն՝ ընդունել Նրան մեր կյանքում այնպես, ինչպես բաժակով ջուրը լցնում ենք մեր մարմի մեջ:

7:38. Այս համարը հաստատում է, որ ընդունել Քրիստոսին և **խմել**, նույնն է, ինչ-որ Նրան **հավատալը**: Բոլոր Նրան հավատացողները, չեն ծարավի և կլցվեն հոգևոր օրհնության **գետից**, որը նրանցից **կհոսի** դեպի ուրիշները: Ամբողջ ՀԿ-ը սովորեցնում է, որ Մեսիային ընդունողները կհագենան ու իրենք կդառնան օրհնության աղբյուրներ ուրիշների համար (օրինակ՝ Ես. 55:1): **«Որովայնից կենդանի ջրի գետեր պիտի բխեն»** արտահայտությունը նշանակում է մարդու որովայնից, կամ ներքին կյանքից, օգնության հոսանքներ կհոսեն ուրիշներին: Մթոթը նշում է, որ մենք խմում ենք փոքրիկ կումերով կամ քաշելով, բայց խմվածը բազմապատկվում է, միաձուլվում հզոր հոսող հոսանքի: Թեմփլը զգուշացնում է. «Ոչ մեկ չի կարող Աստծո Հոգով լցված լինել ու այդ Հոգին իր մեջ պահել: Հոգին հորդում է այնտեղից, որտեղ Նա կա: Եթե Նա չի հորդում, ապա Նա այնտեղ չէ»:

7:39. Այստեղ հստակ նշված է, որ «կենդանի ջուր» խոսքերը վերաբերում են Սուրբ Հոգուն: 39-րդ համարը շատ կարևոր է, քանի որ սովորեցնում է, որ բոլոր նրանք, որ ընդունում են Տեր Հիսուս Քրիստոսին, նույնպես ստանում են Աստծո Հոգին: Այլ խոսքով, ոմանց հայտարարությունն այն մասին, որ Սուրբ Հոգին գալիս է մարդկանց մեջ բնակվելու նրանց դարձի գալուց որոշ ժամանակ հետո, ճիշտ չէ: Այս համարը հստակ և միանշանակ հաստատում է, որ բոլոր նրանք, ովքեր հավատում են Քրիստոսին ստանում են Հոգին: Երբ Տեր Հիսուսն ասում էր այս խոսքերը, **Սուրբ Հո-**

գին դեռ արված չէր: Միայն Տեր Հիսուսի Երկինք վերադառնալուց և Նրա փառավորվելուց հետո Սուրբ Հոգին իջավ Դենտեկոստեի օրը: Այդ պահից ամեն մի ճըշմարտապես Տեր Հիսուս Քրիստոսին հավատացողի մեջ, բնակվում է Սուրբ Հոգին:

Ե. Հիսուսի մասին կարծիքները բաժանվում են (7:40-53)

7:40-41. Լսողներից **շատերը** այժմ համոզվեցին, որ Տեր Հիսուսը հաստատ այն **Մարգարեն** է, ում մասին Մովսեսն ասել էր 2 Օր. 18:15, 18-ում: **Ուրիշներն** էլ պատրաստ էին ընդունել, որ Հիսուսը **Քրիստոսն է**, Մեսիան: Բայց ոմանք մտածում էին, որ սա անհնարին է: Նրանք իմանում էին, որ Հիսուսը եկել է Գալիլիայի Նազարեթից, իսկ հինկտակարանյան ոչ մի մարգարեություն չէր կանխատեսել, որ Քրիստոսը գալու է Գալիլիայից:

7:42. Այս հրեաները ճիշտ էին, հավատալով, որ Քրիստոսը գալու է **Բեթղեհեմ** քաղաքից և **Դավթի** սերնդից: Եթե նրանք մի փոքր փնտրեին, կհայտնաբերեին, որ Հիսուսը Բեթղեհեմում էր ծնվել և Դավթի *սև-միջակաս շառավիղը, հետնորդն էր՝* Մարիամի միջոցով:

7:43. Տարբեր կարծիքների և ընդհանուր անտեղյակության հետևանքով **ժողովրդի մեջ տարածայնություն եղավ Նրա պառնառով**: Հիմա էլ նույնն է կատարվում: Տղամարդիկ ու կանայք Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած իրենց հայացքների մեջ բաժանված են: Ոմանք ասում են, որ Նա ուրիշների նման, պարզապես Մարդ է: Ուրիշներն էլ պատրաստ են խոստովանել, որ Նա երբևէ երկրի վրա ապրած ամենամեծ Մարդն է: Բայց Աստծո Խոսքին հավատացողները գիտեն, որ «Քրիստոսը... բոլորի վրա է, հավիտյանս օրհնյալ Աստված» (Հռ. 9:5):

7:44. Կրկին փորձ արվեց Տեր Հիսուսին ձերբակալելու, բայց ոչ մեկին չհաջողվեց բռնել Նրան: Զանի դեռ մարդը հնազանդ է Աստծո կամքին, երկրի վրա չկա այնպիսի ուժ, որ կարողանա խանգարել նրան: «Մենք անմահ ենք, քանի դեռ չենք կատա-

րել մեր աշխատանքը»: Աստծո ժամանակը դեռ չէր եկել, դրա համար էլ մարդիկ ոչ մի կերպ չկարողացան վնասել Նրան:

7:45. Փարիսեցիներն ու գլխավոր քահանաները սպասավորներ էին ուղարկել Հիսուսին բռնելու համար: **Սպասավորները** վերադարձան, բայց Տերը նրանց հետ չէր: **Գլխավոր քահանաներն ու փարիսեցիները** դժգոհությամբ հարցրին սպասավորներին, թե **ինչո՞ւ չբերեցին Նրան:**

7:46. Սա այն դեպքերից մեկն էր, երբ մեղավոր մարդիկ ստիպված էին լավ արտահայտվել Փրկչի մասին, նույնիսկ երբ իրենք չէին ընդունում Նրան: Ահա նրանց անմոռանալի խոսքերը. «**Ոչ մի մարդ երբեք այնպես չի խոսել, ինչպես այս Մարդը**»: Հավանաբար այդ մարդիկ լսել էին այդ ժամանակաշրջանի հայտնի մարդկանցից շատերին, բայց երբեք չէին լսել, որ ինչ-որ մեկը խոսեր այդպիսի հեղինակությամբ, շնորհով ու իմաստությամբ:

7:47-48. Յանկանալով սպասավորներին վախեցնել, **փարիսեցիները** նրանց մեղադրեցին Հիսուսի կողմից **մոլորվելու** մեջ: Նրանք հիշեցրին նրանց, որ հրեա **առաջնորդներից** ոչ մեկը չի **հավատացել Նրան:** Ինչ սարսափելի փաստարկ: Ամոթ հրեա ժողովրդի կառավարիչներին, որ չկարողացան ճանաչել եկած Մեսիային:

Փարիսեցիները ոչ միայն իրենք չէին ուզում Տեր Հիսուսին հավատալ, այլ հստակ էր, չէին ուզում, որ ուրիշներն էլ հավատան: Նույնը մենք տեսնում ենք այսօր: Շատերը, որ չեն ուզում փրկվել, ամեն հնարավոր բան անում են, որպեսզի իրենց ազգականներն ու բարեկամներն էլ չփրկվեն:

7:49. Այստեղ փարիսեցիները հրեա ժողովրդին անվանեցին տգետ ու **անիծյալ:** Նրանց փաստարկը հետևյալն էր. հասարակ ժողովուրդը ինչ էլ որ չգիտեր սուրբգրությունից, գոնե պետք է այսքանն իմանար, որ Հիսուսը Մեսիան չէ: Փարիսեցիների մոլորությունից ավելի մեծ մոլորություն կա՞:

7:50. Այստեղ **նրանց** դիմեց Նիկողեմոսը:

Հենց **Նա էր եկել Հիսուսի մոտ գիշերով** և իմացել, որ պետք է վերստին ծնվի: Թվում է, թե Նիկողեմոսը իսկապես հավատացել էր Տեր Հիսուս Զրիստոսին և փրկություն ստացել: Այստեղ նա հանդես եկավ հրեա առաջնորդների առջև, որպեսզի մի խոսք ասի իր Տիրոջ համար:

7:51. Նիկողեմոսի առարկությունն այն էր, որ հրեաները Տեր Հիսուսին արդարանալու հնարավորություն չէին տալիս: Հրեական **օրենքը մարդուն** չէր **դատում**, եթե **նախապես** չէր լսում նրա արդարացուցիչ փաստարկները: Հրեա առաջնորդները խախտում էին Օրենքի այս կետը: Ի՞նչ է, վախենո՞ւմ էին փաստերից: Պատասխանն ակնհայտ է՝ նրանք վախենում էին:

7:52. Ի պատասխան առաջնորդները հարձակվեցին իրենց ծառայակիցներից մեկի՝ Նիկողեմոսի վրա: Նրանք նենգությամբ հարցրին նրան. միգուցե ի՞նքն էլ **գալիլիացի** Հիսուսի հետևորդներից է: Մի՞թե նա չգիտի, որ ՀԿ-ում **Գալիլիայից** եկող **մարգարե** չի սպասվում: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ իշխանավորները ցուցադրեցին իրենց տգիտությունը: Մի՞թե նրանք երբեք չէին կարդացել Հովան մարգարեի մասին: Նա ծննդով Գալիլիայից էր:

7:53. Տաղավարների տոնն արդեն ավարտվել էր: Մարդիկ վերադարձել էին իրենց տները: Ոմանք դեմ առ դեմ հանդիպեցին Փրկչի հետ ու հավատացին Նրան: Բայց մեծամասնությունը մերժեց Նրան, իսկ հրեա իշխանավորները մտադրվեցին Նրան վերացնել: Նրանք մտածում էին, որ Նա վտանգ է սպառնում իրենց կրոնին ու կյանքի դրվածքին:

Ե. Ծնության մեջ բռնված կինը (8:1-11)

8:1. Այս համարը սերտորեն կապված է 7-րդ գլխի վերջին համարի հետ: Կապը հեշտ է նկատել, եթե երկու համարները միասին դնենք. «Եվ ամեն մեկն իր տունը գնաց, **Հիսուսը գնաց Ձիթենյաց լեռը**»: Տերը ճիշտ էր ասել. «Աղվեսները որջեր ունեն, երկնքի թռչունները՝ բներ, իսկ Մարդու Որդին տեղ չունի գլուխը դնելու համար»:

8:2. Ձիթենյաց լեռը տաճարից շատ հեռու չէ: Վաղ **առավոտյան** Տեր Հիսուսն իջավ Ձիթենյաց լեռից, հատեց Կեդրոնի հարթավայրը, կրկին բարձրացավ լեռան վրա ու մտավ քաղաք, որտեղ **տաճարն էր: Եվ ամբողջ ժողովուրդը Նրա մոտ եկավ, և Նա նստեց և սովորեցնում էր նրանց:**

8:3. Այստեղ **դպիրները՝** սուրբգրություն արտագրող ու սովորեցնող մարդկանց խումբը, և **փարիսեցիները,** փորձում էին հրահրել Տեր Հիսուսին մի սխալ բան ասելու, որպեսզի կարողանան մեղադրել Նրան: **Նրանք մի կին բերին Նրա մոտ՝ շնուբյուրան մեջ բռնված,** և կանգնեցրին ամբոխի մեջտեղում, հավանաբար Հիսուսի առջև:

8:4. Նրանք մեղադրում էին **այդ կնոջը** շնուբյուրան մեջ, որ անկասկած ճիշտ էր: Ոչ մի պատճառ չկա կասկածի ենթարկելու այն, որ նա բռնվել էր այդ ահավոր մեղքն անելիս: Իսկ որտե՞ղ էր տղամարդը: Շատ հաճախ կյանքում պատժվել են կանայք, մինչ մեղավոր տղամարդիկ մնացել են անպատիժ:

8:5. Հիմա պարզ է դառնում նրանց ծուղակը: Նրանք ուզում էին, որ Տերը **Մովսեսի օրենքին** հակասող ինչ-որ բան ասի: Եթե նրանց մտադրությունը հաջողվեր, նրանք կարող էին հասարակ մարդկանց դրդել Հիսուսի դեմ: Նրանք հիշեցրին Տիրոջը մարդկանց **պատվիրված Մովսեսի օրենքի մասին,** ըստ որի շնուբյուրան մեջ բռնվածին պետք է **քարկոծել** մինչև որ մեռնի: Իրենց չար նպատակներն իրականացնելու համար փարիսեցիները հույս ունեին, որ Տերը դրա հետ չի համաձայնվի, դրա համար էլ նրանք հարցրին, թե Նա ինչ կասի այս առիթով: Նրանք կարծում էին, որ անհրաժեշտ էր այդ կնոջը դաս տալ արդարադատության ու Մովսեսի օրենքի համաձայն: Ինչպես ասում է Դարբին.

«Մարդու այլասերված սիրտը միսիթարվում ու հանգստանում է հենց որ իրենից վատ մեկին է գտնում: Նա կարծում է, որ մի ուրիշի մեծ մեղքն արդարացնում է իրենը: Մեղադրելով և կտրականապես դատապարտելով ուրիշին, նա մոռանում է իր սեփական չարությունը: Այսպես նա ուրա-

խանում է անիրավության մեջ»:²⁸

8:6. Փարիսեցիները Հիսուսի դեմ ճշմարիտ մեղադրանք չունեին և փորձում էին դրանք իրենք մի բան մեջտեղ բերել: Նրանք գիտեին. եթե Նա թույլ տար կնոջն անպատիժ հեռանալ, նշանակում է, Նա Մովսեսի օրենքի դեմ է, ու **կմեղադրեն** Նրան անօրինականության մեջ: Եթե մահվան դատապարտեր կնոջը, կարող էին դա օգտագործել՝ ցույց տալու համար, որ Նա հռոմեական իշխանության թշնամին է: Կարող էին նաև ասել, որ Նա ողորմած չէ: Բայց Տեր **Հիսուսը ցած նայելով, մատով գրում էր գետնի վրա:** Մենք չգիտենք, թե ինչ գրեց: Շատերը լիովին համոզված են, որ գիտեն, բայց պետք է ընդունենք այս պարզ փաստը՝ Աստվածաշունչը այս մասին մեզ բան չի հաղորդում:

8:7. Դրանով չբավարարվելով հրեաները շարունակում էին համատորեն պատասխան պահանջել: Հիսուսը պարզապես հայտարարեց, որ Օրենքը պետք է կատարվի, բայց այն ի գործ դնել կարող են միայն նրանք, ովքեր ոչ մի մեղք չեն գործել: Այս ձևով Հիսուսը սատարեց Մովսեսի օրենքին: Նա չասաց, թե կինը չպետք է կրի Օրենքով նախատեսված պատիժը: Բայց միևնույն ժամանակ Նա մեղքի մեջ մեղադրեց այդ բոլոր մարդկանց: Ուրիշներին դատել ցանկացողները պետք է հենց իրենք մաքուր լինեն: Այս համարը հաճախ են օգտագործում մեղքերի արդարացման համար, ասելով. «Մենք ազատված ենք պատասխանատվությունից, որովհետև բոլոր մարդիկ էլ ինչ-որ սխալ թույլ են տվել իրենց կյանքում»: Բայց այս համարը չի արդարացնում մեղքը: Ավելի շուտ, դատապարտում է մյուս մեղանշողներին նույնպես, եթե նույնիսկ նրանց մեղքը երբեք ի հայտ չի եկել:

8:8. Եվ դարձյալ Փրկիչը ցած նայելով գրում էր գետնի վրա: Մա միակ հիշատակումն է այն մասին, որ Տեր Հիսուսն ինչ-որ բան գրել է, բայց Նրա կողմից բոլոր գրվածները արդեն վաղուց ջնջվել են երկրի երեսից:

8:9. Կնոջը մեղադրողներին **հանդիմա-**

նեց խիղճը: Նրանք ասելիք չունեին և սկսեցին **մեկ-մեկ** հեռանալ: Նրանք բոլորն էլ, **մեծից** մինչև փոքրը, մեղապալի մարդիկ էին: **Եվ Հիսուսը միայնակ մնաց, և կինը՝ Նրա առջև կանգնած:**

8:10. Չարմանահրաշ բարությանը Տեր Հիսուսն ասաց այդ կնոջը, որ բոլոր նրան **մեղադրողները** անհետացան: Նրանք այլևս չէին երևում: Ամբոխի մեջ չգտնվեց մեկը, որ համարձակվեր կնոջը դատապարտել:

8:11. Այստեղ «Տեր» բառը, հավանաբար նշանակում է «Պարոն»: Երբ կինն ասաց. «**Ոչ մեկը, Տեր»,** Տերը հիասքանչ խոսքեր ասաց. «**Ո՛չ էլ Ես եմ քեզ դատապարտում, գնա՛ և այլևս մի՛ մեղանչիր:**» Տերը չէր պնդում, որ քաղաքացիական հարցեր լուծելու լիազորություններ ուներ: Այդ իրավունքը պատկանում էր հռոմեական կառավարությանը, և Նա դա չէր պահանջում: Նա ո՛չ դատապարտեց, ո՛չ էլ ներեց կնոջը: Տվյալ պահին դա Իր պարտականությունների մեջ չէր մտնում: Բայց Նա զգուշացրեց, որ կինը պետք է հեռու մնա մեղքից:

Հովհաննեսի Ավետարանի 1-ին գլխից իմացանք, որ «**շնորհն ու ճշմարտությունը Հիսուս Բրիստոսով եկան:**» Եվ ահա դրա օրինակը. «**Ո՛չ էլ Ես եմ քեզ դատապարտում**» խոսքերում արտացոլված է շնորհը, «**գնա՛ և այլևս մի՛ մեղանչիր**» խոսքերում արտացոլված է ճշմարտությունը: Տերը չասաց. «Գնա՛ և ինչքան հնարավոր է քիչ մեղանչիր»: Հիսուս Բրիստոսն Աստված է և Նրա չափանիշը բացարձակ կատարելությունն է: Նա չի կարող հավանություն տալ որևէ մեղքի: Դրա համար էլ Հիսուսը նրա առջև Աստծո իդեալական չափանիշն է հաստատում:²⁹

2. Հիսուսն է աշխարհի լույսը (8:12-20)

8:12. Այնուհետև իրադարձությունները տեղափոխվում են տանարի գանձատուն (տե՛ս հ. 20): Մարդկանց մի բազմություն, այնուամենայնիվ, դեռ հետևում էր Հիսուսին: Նա նրանց դիմեց Իր Մեսիականությանը վերաբերող մեծ հայտարարություններից մեկով: Նա ասաց. «**Ես եմ աշխարհի**

լույսը:» Այլ արտահայտությամբ, **աշխարհը** գտնվում է մեղքի ու տգիտության խավարում, այն չի տեսնում կյանքի ճշմարիտ իմաստը: **Աշխարհի լույսը** Տեր Հիսուսն է: Առանց Նրա չկա ազատագրում մեղքի խավարից: Առանց Նրա չկան կյանքի ճանապարհի ուղենիշխներ, չկա կյանքի իսկական իմաստի ու հավիտենականության հետ կապված հարցերի գիտություն: Հիսուսը խոստացել է, որ ով Իրեն **կհետևի, խավարի մեջ չպիտի քայլի, այլ կյանքի լույսը պիտի ունենա:**

Հիսուսին հետևել նշանակում է հավատալ Նրան: Ծառերը սխալմամբ ենթադրում են, որ առանց վերստին ծնունդի կարող են այնպես ապրել, ինչպես Հիսուսն ապրեց: Հիսուսին հետևել նշանակում է Նրան գալ զոջումով, ապաշխարությամբ, վատահել Նրան, որպես Տեր ու Փրկիչ, և ապա՝ ամբողջ կյանքը Նրան հանձնել: Նա, ով այսպես է վարվել, ունի առաջնորդություն այս կյանքում, և հստակ ու պայծառ հույս մահից հետո:

8:13. Այժմ **փարիսեցիներն** սկսեցին Հիսուսին մեղադրել Իր վկայության անօրինականության մեջ: Նրանք Հիսուսին հիշեցրին, որ Նա Ինքն Իր մասին է վկայում: Մարդու սեփական վկայությունը բավարար չէր համարվում, քանի որ սովորաբար նա ինքն իր նկատմամբ օբեկտիվ չէ: Փարիսեցիները հեռու չէին Հիսուսի խոսքերը կասկածի ենթարկելուց: Նրանք իսկապես տարակուսում էին Նրա խոսքերի **ճշմարտացիությանը:**

8:14. Տերն ընդունում էր, որ պետք է երկու կամ երեք վկաներ լինեն: Բայց այս դեպքում Նրա վկան բացարձակորեն **ճշմարիտ էր**, քանի որ դա Աստված էր: Նա գիտեր, որ երկնքից էր եկել և վերադառնում էր երկինք: Բայց նրանք **չգիտեին որտեղից է Նա գալիս և ուր էր գնում:** Նրանք կարծում էին, որ Նա ընդամենը իրենց պես մի մարդ է, և հրաժարվում էին հավատալ, որ Նա Հորը հավասար հավիտենական Որդին է:

8:15. Փարիսեցիները մարդկանց դատում

էին արտաքին նշանների ու մարդկային սովորական չափանիշներով: Նրանք Հիսուսին նայում էին իբրև նազովրեցի մի հյուսնի և չէին կարող թույլ տալ, որ Նա տարբերվում է ուրիշներից: Տեր Հիսուսն ասաց, որ Նա **ոչ մեկին** չի դատում: Սա կարող է նշանակել, որ Նա մարդկանց չի դատում փարիսեցիների աշխարհային չափանիշներով: Կամ, ավելի ճիշտ, դա նշանակում է, որ աշխարհ գալու Նրա նպատակը ոչ թե մարդկանց *դատասպարտելն* է, այլ՝ նրանց *փրկելը*:

8:16. **Եթե** Տերը **դատելու** լիներ, ապա Նրա դատաստանը արդարացի ու **ճշմարիտ** կլիներ: Նա Աստված է, և ամեն բան, որ Նա անում է, Իրեն **ուղարկող Հոր** կամքի համաձայն է անում: Ծատ անգամ էր Տեր Հիսուսը փարիսեցիներին ասել **Հայր** Աստծո հետ Իր մեկության մասին: Եվ հենց դա էր նրանց սրտերում Նրա նկատմամբ հակակրանք առաջացնում:

8:17-18. Տերը հաստատեց այն, ինչը համաձայն էր Մովսեսական **օրենքին**. **Երկու մարդու վկայությունը** ճշմարիտ է: Նրա խոսքերից ոչ մեկն այս փաստը ժխտելու միտում չուներ:

Եթե նրանք պնդում էին երկու վկաների անվկայությունը, Նրա համար դժվար չէր ներկայացնել նրանց: Նախ, Նա Ինքն էր կրում **վկայությունը** Իր անմեղ կյանքով ու շրթունքներից դուրս եկած խոսքերով: Երկրորդ՝ **Հայրն էր վկայում** Տեր Հիսուսի մասին երկնքից հնչող Իր բարձրաձայն խոսքերով և հրաշքներով, որոնք Նա տվեց Տիրոջը կատարելու: Քրիստոսը կատարեց Մեսիայի մասին Հ-ի մարգարեությունները, և դեռ այս ուժեղ ապացույցի դեպքում էլ հրեա իշխանավորները չէին կամենում հավատալ:

8:19. Փարիսեցիների հաջորդ հարցը, անկասկած, հնչեց անարգալից տոնով: Հնարավոր է, նրանք նայեցին ամբոխին, երբ հարցրին. «**Ո՛ր է Քո Հայրը**»: **Հիսուսը պատասխանեց** նրանց, որ նրանք չգիտեն ոչ Իրեն, այսինքն՝ թե իրականում Ով է Ինքը, **ոչ էլ** Իր **Հորը**: Բնական է, նրանք պետք է եռանդուն մերժեին այն, որ Աստծուն չգի-

տեն: Այնուամենայնիվ դա այդպես էր: Եթե ընդունեին Տեր Հիսուսին, նրանք **կիմանալին** նաև Իր **Հորը**: Բայց ոչ մեկը չի կարող ճանաչել Հայր Աստծուն առանց Հիսուս Քրիստոսի: Այս ձևով, Փրկչին մերժելով՝ նրանք չկարողացան ազնվորեն հաստատել, որ Աստծուն գիտեն և սիրում են:

8:20. Այստեղ իմանում ենք, որ նախորդ համարներում նկարագրված գրույցները տեղի են ունեցել **տաճարի գանձատանը**: Տերը նորից շրջապատված է աստվածային պաշտպանությամբ, և **ոչ մեկ** չի կարող **Նրան ձեռք տալ**՝ ձերբակալելու կամ սպանելու համար: Նրա ժամը դեռ չէր հասել: «Նրա ժամը» վերաբերում է այն ժամանակին, երբ Նա կխաչվի Գողգոթայում և կմեռնի աշխարհի մեղքերի համար:

Է. Հրեաների վեճը Հիսուսի հետ (8:21-59)

8:21. Կրկին **Հիսուսը** ցույց տվեց ապագայի մասին Իր կատարյալ գիտությունը: Նա Իրեն մեղադրողներին ասաց, որ **գնում է**, նկատի ունենալով ոչ միայն Իր մահն ու թաղումը, այլ Իր հարությունն ու երկինք համբարձվելը: Հրեաները պետք է **փնտրեն** Մեսիային, չհասկանալով, որ Նա արդեն եկել էր նրանց մոտ և մերժվել նրանց կողմից: Նրան մերժելով, նրանք **կմեռնեն մեղքերի մեջ** (բնագրում «մեղք» բառը եզակի է օգտագործված, նաև՝ NKJV-ում): Նա նկատի ուներ, որ նրանց համար ընդմիշտ կարգիլվի երկինք մտնելը, ուր գնալու է Տերը: Սա սուրբ ճշմարտություն է: Տեր Հիսուսին ընդունելուց հրաժարվողները Երկրնքի հույս չունեն: Ինչ ահավոր է մեղքերի մեջ մեռնելը, առանց Աստծո, առանց Քրիստոսի, առանց հավիտենականության հույսի:

8:22. Հրեաները չհասկացան, որ Տերը խոսում է երկինք վերադառնալու մասին: Ինչ էր Նա հասկանում «գնում եմ» խոսքերով: Արդյոք Իրեն սպանելու նրանց մտադրությունից կիսուսափի ինքնասպանություն գործելով: Տարօրինակ է, որ այդպիսի բան մտածեցին: Եթե Նա պատրաստվում է **Ինքն Իրեն** սպանել, ոչ մի բան չի խանգա-

րում նրանց նույնն անել և մահից հետո հետևել Նրան: Մա ևս անհավատության խավարի օրինակներից մեկն է: Անհավատալի է, թե նրանք որքան խավարամիտ ու տգետ էին Փրկչի բոլոր ասածների նկատմամբ:

8:23. Ինքնասպանության հնարավորության մասին նրանց անհեթեթ մտքերը Տիրոջը մղեցին ասելու, որ նրանք **ներքևից են**, այսինքն՝ իրերի նկատմամբ շատ սահմանափակ հայացք ունեն: Նրանք չեն կարողանում իրերի տառացի իմաստից վեր բարձրանալ: Նրանք զրկված են հոգևոր ամեն հասկացողությունից: Ի հակադրություն սրան, Քրիստոսը **վերևից է**: Նրա մտքերը, խոսքերն ու գործերը աստվածային են: Ամեն ինչ, որ գրավում է նրանց, այս աշխարհից է, մինչդեռ Հիսուսի ողջ կյանքն ասում է այն մասին, որ Նա ավելի մաքուր վայրից է եկել, քան այս աշխարհն է:

8:24. Ցանկանալով ինչ-որ բանի վրա ավելի ուշադրություն սևեռել, Հիսուսը հաճախ կրկնում էր Իր ասածը: Այստեղ Նա մեկ անգամ ևս խստորեն զգուշացրեց նրանց, որ նրանք կմեռնեն իրենց **մեղքերի մեջ**: Եթե նրանք համառորեն հրաժարվում են հավատալ Իրեն, ապա նրանց համար ոչ մի այլընտրանք չի մնում: Միայն Տեր Հիսուսի միջոցով կարելի է մեղքերի թողություն ստանալ, այդ իսկ պատճառով նա, ով **մեռնում է** առանց **մեղքերի** թողության, չի կարող Երկնքում լինել: «**Որովհետև եթե չհավատաք, որ Ես եմ, ձեր մեղքերի մեջ կմեռնեք**»: «**Որ Ես եմ**» խոսքերում տեսնում ենք ևս մի հայտարարություն Տեր Հիսուսի աստվածության մասին:

8:25. Հրեաները լիովին խճճվեցին Տեր Հիսուսի ուսմունքի մեջ: Նրանք ուղղակի հարցրին Նրան, **Ո՞վ է Նա**: Հնարավոր է, որ նրանք ծաղրանքով ասեցին, նկատի ունենալով. «Դու Ո՞վ ես, որ համարձակվում ես մեզ հետ այսպես խոսել»: Կամ, միգուցե, նրանք իսկապես ձգտում էին լսել, թե Նա ինչ կասի Իր մասին: Արժե Նրա պատասխանը մեջբերել. «**Այն նույնը, որ սկզբից ձեզ ասացի**»: Նա խոստացված Մեսիան

էր: Հրեաները հաճախ էին Նրանից այս խոսքերը լսել, բայց նրանց համառ սրտերը հրաժարվեցին ընդունել ճշմարտությունը: Նրա պատասխանը կարող է այլ նշանակություն էլ ունենալ. Տեր Հիսուսը իսկապես Նա էր, Ում մասին Նա քարոզում էր: Նրա խոսքերը չէին տարբերվում գործերից: Նա կենդանի մարմնացումն էր այն ամենի, ինչ սովորեցնում էր: Նրա կյանքը համապատասխանում էր Իր ուսմունքի հետ:

8:26. Այս համարի նշանակությունը պարզ չէ: Հավանաբար, Տերն այստեղ այն մասին է խոսում, որ Նա դեռ կարող է **շատ բաներ ասել և դատել** այդ անհավատ հրեաներին: Նա կարող էր երևան հանել նրանց սրտերի չար խորհուրդներն ու մղումները: Մակայն Նա հնազանդորեն ասում էր այն, ինչ Հայրն էր Նրան պատվիրել ասել: Եվ քանի որ Հայրը ճշմարիտ է, ապա Հիսուսն էլ է արժանի, որ հավատան ու հնազանդեն Նրան:

8:27. Այստեղ հրեաները **չհասկացան, որ Նա Հայր Աստծո մասին էր խոսում իրենց**: Թվում է, թե նրանց մտքերն ավելի էին մթազնում: Նախկինում, երբ Տեր Հիսուսը հայտարարում էր, որ Նա Աստծո Որդին է, նրանք հասկանում էին, որ Նա խոսում է Հայր Աստծո հետ հավասարության լինելու մասին: Այժմ նրանք այդպես չէին մտածում:

8:28. Կրկին **Հիսուսը** մարգարեանում էր, թե ինչ պիտի կատարվի: Նախ, հրեաները կբարձրացնեն **Մարդու Որդուն**: Մա վերաբերում է խաչին գամելու միջոցով Նրա մահվանը: Իտաչելուց հետո նրանք կիմանան, որ Նա Մեսիան է: Նրանք դա կիմանան երկրաշարժից ու խավարից, բայց ամենից շատ, երբ Նա մեռելներից մարմնով հարություն առնի: Հատուկ ուշադրություն դարձրեք Տիրոջ խոսքերին. «**Այն ժամանակ պիտի իմանաք, որ Ես եմ**»: Այստեղ նորից «Նա» բառը բնագրում չկա: Այս խոսքերի խորիմաստ նշանակությունը հետևյալն է. «**Այն ժամանակ կիմանաք, որ Ես եմ** Աստված»: Այն ժամանակ նրանք կհասկանան, որ Նա ոչինչ չարեց Իրենից,

այսինքն՝ Իր սեփական հեղինակությամբ: Ավելի ճիշտ, Նա աշխարհ եկավ որպես կամակատար՝ խոսելով միայն այն, ինչ **Հայրն էր սովորեցրել** Նրան:

8:29-30. Տիրոջ հարաբերությունները Հայր Աստծո հետ շատ սերտ էին: Այդ արտահայտություններից յուրաքանչյուրը հայտարարություն էր Աստծո հետ հավասարության մասին: Նրա երկրավոր ծառայության ժամանակ Հայրը միշտ Նրա **կողքին** էր: Երբեք Տեր Հիսուսը **մենակ** չմնաց: Նա միշտ արեց այն, ինչը հաճելի էր Աստծուն: Այդպիսի խոսքեր կարող էր ասել միայն մեղք չունեցող Անձնավորությունը: Երկրավոր ծնողներից ծնված ոչ մի մարդ չի կարող կատարյալ ճշմարտությամբ երբևէ այսպիսի խոսքեր արտաբերել. **«Ես միշտ անում եմ այն բաները, ինչ Նրան է հաճելի»**: Ծատ հաճախ մենք անում ենք այն, ինչ ձեռնառու է մեզ: Երբեմն մեզ շարժում է մարդկանց դուր գալու մղումը: Միայն Տեր Հիսուսն էր ամբողջությամբ տարված Աստծուն հաճելի բաներ անելու ցանկությամբ:

Երբ Նա այս հիանալի բաները խոսեց, տեսավ, որ **շատերը** բացահայտորեն **հավատացին** Իրեն: Անկասկած, ոմանք ճշմարտապես հավատացին: Ուրիշները, միգուցե, միայն խոսքերով հավատացին Նրան:

8:31. Ապա Հիսուսը տարբերակում կատարեց «աշակերտների» ու **ճշմարիտ աշակերտների** միջև: Աշակերտը նա է, ով հաստատում է իր աշակերտ լինելը, բայց **ճշմարիտ աշակերտը** նա է, ով ամբողջությամբ իրեն նվիրել է Տեր Հիսուս Քրիստոսին: Ծշմարիտ հավատացյալներին հետևյալ բնութագծերն են առանձնացնում. նրանք **հարատևում են** Նրա **խոսքի** մեջ: Սա նշանակում է, որ նրանք շարունակում են հարատևել Քրիստոսի ուսմունքի մեջ: Նրանք Նրանից չեն շեղվում: Ծշմարիտ հավատին միշտ էլ բնորոշ է կայունությունը: Նրանք փրկված են ոչ այն պատճառով, որ մնում են Նրա խոսքի մեջ, այլ հարատևում են Նրա խոսքի մեջ, քանի որ փրկված են:

8:32. Բոլոր ճշմարիտ աշակերտներին խոստում է տրված, որ նրանք **կիմանան**

ճշմարտությունը, և ճշմարտությունը նրանց **ազատ կդարձնի**: Հրեաները չգիտեին ճշմարտությունը և դրա համար էլ այդպիսի սարսափելի ստրկության մեջ էին: Նրանք տգիտության, սխալների, մեղքի, օրենքի ու սնահավատության ծառաներն էին: Նրանք, ովքեր իսկապես գիտեն Տեր Հիսուսին, ազատված են մեղքից, լույսի մեջ են քայլում և Աստծո Սուրբ Հոգով են առաջնորդվում:

8:33. Հիսուսի կողքը կանգնած հրեաներից ոմանք լսեցին Տիրոջ խոսքերն այն մասին, որ նրանք ազատ կդառնան: Դա իրենց շատ վիրավորեց: Նրանք հպարտանում էին դրանով, որ իրենք Աբրահամի սերունդ են և ասում էին, որ **երբեք ոչ ոքի կապանքի մեջ չեն եղել**: Բայց դա ճիշտ չէր: Իսրայելը եղել էր եզիպտական, ասորեստանցիների, բաբելոնյան, պարսկական, հունական և հիմա էլ հռոմեական ստրկության մեջ: Բայց դրանից ավելին, նույնիսկ երբ խոսում էին Տեր Հիսուսի հետ նրանք մեղքի ու սատանայի ստրկության մեջ էին:

8:34. Տերը բացահայտ խոսեց **մեղքի** ստրկության մասին: Նա իր հրեա ունկրնդիրներին հիշեցրեց, որ **ո՛վ մեղք է գործում՝ մեղքի ծառա է**: Հրեաները ձևացնում էին, որ շատ աստվածավախ են, բայց ճշմարտությունն այն էր, որ նրանք պատվազուրկ, անհարգալից էին և նույնիսկ պատրաստ էին սպանության, նույնիսկ հիմա էլ նրանք խորհում էին Աստծո Որդուն կյանքից զրկելու մասին:

8:35. Այնուհետև Հիսուսը համեմատում է **տան մեջ ծառայի ու որդու** մնալու պայմանները: **Ծառան** ոչ մի երաշխիք չունի, որ այնտեղ ընդմիշտ կապրի, մինչդեռ **որդու** համար տունը իր հարազատ տունն է: Անկախ այն բանից, թե ում է վերաբերում «որդի» բառը՝ Աստծո Որդուն կամ նրանց, ովքեր հավատալով Քրիստոսին կդառնան Աստծո որդիներ, հստակ է մի բան. Տեր Հիսուսը հրեաներին ասաց, որ նրանք որդիներ չեն, այլ՝ ծառաներ, որոնք կարող են ցանկացած ժամանակ հայտնվել տնից դուրս:

8:36. Անկասկած, այս համարում **«Որ-**

դին» բառը վերաբերում է հենց Քրիստոսին: Նրանք, ովքեր **ազատ են դարձել** Նրանով՝ **հիրավի ազատ են**: Այսինքն մարդը, ով Փրկչին է գալիս և Նրանից հավիտենական կյանք ստանում, ազատված է մեղքի ստրկությունից, Օրենքի տառի հանձնառությունից, սնտոխապաշտությունից և սատանայապաշտությունից:

8:37. Քանի որ այդ հրեաների ծագումնաբանությունը հայտնի էր, Տերն ընդունեց նրանց **Աբրահամի սերնդից** լինելու հանգամանքը: Բայց ակնհայտ է, որ նրանք Աբրահամի *հոգևոր* սերնդից չէին: Նրանք Աբրահամի պես աստվածավախ չէին: Նրանք ուզում էին **սպանել** Տեր Հիսուսին, որովհետև Նրա ուսմունքը **տեղ չուներ** իրենց մեջ: Դա նշանակում է, որ նրանք թույլ չէին տալիս, որ Քրիստոսի խոսքերն ազդեն իրենց կյանքի վրա: Նրանք դիմադրում էին Նրա վարդապետությանն ու չէին ընդունում Նրան:

8:38. Հիսուսը նրանց սովորեցնում էր այն ամենը, ինչ **Հայրը** լիազորել էր խոսել Նրան: Նա և Նրա Հայրը այնքան միաբան էին, որ Հիսուսի արտաբերած խոսքերը Հայր Աստծո խոսքերն էին: Տեր Հիսուսը կատարելապես ներկայացնում էր Իր Հորը, երբ այստեղ՝ երկրի վրա էր ապրում: Դրան հակառակ հրեաները անում էին այն, ինչ իմացել էին իրենց **հորից**: Տեր Հիսուսը նկատի ուներ ոչ թե նրանց երկրավոր հայրերին, այլ, ավելի ճիշտ, *աստուանային*:

8:39. Հրեաները կրկին հայտարարեցին **Աբրահամի** հետ իրենց ազգակցությունը: Նրանք պարծենում էին նրանով, որ **իրենց հայրը Աբրահամն է**: Սակայն Տեր Հիսուսը մատնանշեց, որ չնայած նրանք Աբրահամի սերունդն են (հ. 37), բայց նրա **որդիները** չեն: Սովորաբար երեխաները արտաքինով, քայլվածքով և խոսելաձևով նմանվում են իրենց ծնողներին: Բայց այս հրեաների մոտ ամեն ինչ այլ էր: Նրանց կյանքը ամբողջությամբ հակասում էր Աբրահամին: Թեև ըստ մարմնի Աբրահամի սերունդն էին, սակայն բարոյական առումով նրանք սատանայի որդիներ էին:

8:40. Տերը շարունակեց մատնանշել Աբ-

րահամի և նրանց միջև եղած հստակ տարբերությունները: Հիսուսն աշխարհ եկավ և միայն **ճշմարտությունն** ասաց: Բայց Նրա վարդապետությունը գայթակղեցրեց ու վիրավորեց նրանց, հետևաբար փորձում են **սպանել** Իրեն: **Աբրահամը սա չարեց**: Նա միշտ կանգնած էր ճշմարտության ու արդարամտության կողմում:

8:41. Լրիվ պարզ էր, թե ով էր նրանց հայրը, քանի որ նրանք ճիշտ Նրա պես էին վարվում: Նրանք իրենց հոր **գործերն** էին կատարում, այսինքն՝ սատանայի: Հրեաները, հնարավոր է, Տիրոջը մեղադրում էին նրանում, որ Նա **պոռնկությունից է ծընվել**: Բայց Աստվածաշնչի շատ ուսումնասիրողներ **«պոռնկություն»** բառի մեջ տեսնում են հղում կռապաշտությանը: Հրեաները հաստատում էին, որ երբեք հոգևոր պոռնկություն չեն արել: Նրանք միշտ հավատարիմ են եղել **Աստծուն**: Միայն Նրան են նրանք Հայր ընդունել:

8:42. Տերը ցույց տվեց նրանց առարկության սխալ լինելը, հիշեցնելով, որ եթե նրանք Աստծուն սիրեին, **կսիրեին** նաև Նրան, Ում Աստված **ուղարկեց**: Լիակատար անհեթեթություն է երդվել, որ սիրում են Աստծուն ու միևնույն ժամանակ ատել Տեր Հիսուս Քրիստոսին: Հիսուսն ասաց, որ Ինքն **Աստծուց է եկել**: Դա նշանակում է, որ Նա Աստծո հավիտենական միածին Որդին է: Աստծո Որդու ծննդյան կոնկրետ ժամանակ չկա, Որդու և Հոր այդ հարաբերությունները գոյություն ունեն ի հավիտենից: Ինչպես նաև, Նա հրեաներին հիշեցրեց, որ **Աստծուց ելավ եկավ**: Ակնհայտ է, Նա այստեղ հայտարարում է Իր նախագոյության մասին: Ծատ երկար ժամանակ Նա Հոր հետ բնակվում էր Երկնքում, մինչև որ այս երկիրն եկավ: Բայց Աստված Նրան **ուղարկեց** աշխարհին փրկելու համար, և Նա երկիր եկավ, որպես հնազանդ Որդի:

8:43. Այս համարում **խոսածի** և **խոսքի** միջև տարբերություն կա: Քրիստոսի **խոսքը** վերաբերում է Նրա ամբողջ վարդապետությանը՝ ուսմունքին: **«Խոսածը»** նկատի ունի այն խոսքերը, որոնցով հայտնում էր

Իր ճշմարտությունները: Նրանք նույնիսկ չկարողացան **հասկանալ** Նրա **խոսածը**: Երբ Նա հացի մասին էր խոսում, նրանք միայն տառացի հացի մասին էին մտածում: Երբ Նա ջրի մասին էր խոսում, նրանք երբեք դա չկապակցեցին հոգևոր ջրի հետ: Ինչո՞ւ նրանք չկարողացան հասկանալ Նրա խոսածը: Պատճառն այն էր, որ տանել չէին կարողանում Նրա ուսմունքը:

8:44. Այժմ Տեր Հիսուսը բացեփրաց ասաց նրանց, որ նրանց **հայրը՝ սատանան է**: Դա չէր նշանակում, թե նրանք ծնվել էին սատանայից այնպես, ինչպես հավատացյալներն են ծնված Աստծուց: Ավելի ճիշտ դա նշանակում էր, ինչպես ասում էր Օգոստինոսը, նրանք սատանայի զավակներն էին նրան *ընդօրինակելու* մեջ: Նրա պես ապրելով, նրանք ցուցադրեցին սատանայի հետ ունեցած իրենց կապը: **«Եվ ձեր հոր ցանկություններն եք կամենում կատարել»** խոսքերն արտահայտում են նրանց արտի մտադրությունները, կամ հակումները:

Սատանան **մարդասպան էր սկզբից**: Նա մահ բերեց Ադամին ու ողջ մարդկությանը: Նա ոչ միայն **մարդասպան է**, այլ նաև **ստախոս է**: Նա **ճշմարտության մեջ չմնաց, որովհետև ճշմարտություն չկա նրանում**: **Երբ նա սուտ է խոսում**, նա պարզապես **ինքն իրենից է խոսում**: Մուտը դարձել էր նրա էության մի մասը: **Նա ստախոս է, և ստության հայրը**: Հրեաներն այս երկու բաներում էլ ընդօրինակում էին սատանային: Նրանք մարդասպաններ էին, որովհետև նրանց արտի մտադրությունն Աստծո Որդուն սպանելն էր: Նրանք ստախոսներ էին, որովհետև ասում էին, որ Աստված իրենց Հայրն է: Նրանք իրենց Աստծո հոգևոր ժողովուրդն էին համարում, բայց իրենց կյանքը արատավոր էր:

8:45. Նրանք, ովքեր ստի իշխանության տակ են, թվում է, թե կորցնում են ճշմարտությունն ընկալելու ընդունակությունը: Այդ մարդկանց առջև Տեր Հիսուսն էր կանգնած, Ով միշտ ասում էր **ճշմարտությունը**: Եվ դեռ նրանք չէին հավատում Նրան: Սա

վկայում էր նրանց իսկական էության ապականվածության մասին: Լենսկին լավ է գրել.

«Երբ ապականված միտքը բախվում է ճշմարտության հետ, այն միայն մի բան է փնտրում՝ ինչպես առարկել. երբ այն բախվում է այդ ճշմարտությունից տարբերվող ինչ-որ բանի հետ, ապա այդ տարբերությունն ընդունելու պատճառ է փնտրում»:³⁰

8:46. Միայն Քրիստոսը՝ անմեղ Աստծո Որդին իրավունք ուներ այսպիսի խոսքեր ասել: Աշխարհում չկար մի մարդ, որ կարողանար Նրան մեղադրել գոնե մեկ մեղքի համար: Նրա բնույթի մեջ ոչ մի թերություն չկար: Նա կատարյալ էր ամեն բանում: Նա միայն ճշմարտությունն էր ասում, և այնուամենայնիվ, նրանք **չհավատացին** Նրան:

8:47. Աստծուն իսկապես սիրող մարդը լուծ է **Աստծո խոսքերն** ու հնազանդվում դրանց: Հրեաները մերժեցին Փրկչի լուրը և դրանով ցուցադրեցին, որ իրականում **Աստծուն** չեն պատկանում: Այս համարից պարզ է, որ Տեր Հիսուսը հռչակեց հենց Աստծո խոսքերը: Այս առումով ոչ մի թյուրըմբռնում չի կարող լինել:

8:48. Հրեաները կրկին անցան վիրավորական խոսքերին, քանի որ չէին կարողանում այլ կերպ պատասխանել Տեր Հիսուսին: Նրան **սամարացի** անվանելով, նրանք անիմաստ էթնիկական զրպարտիչ մեղադրանք առաջադրեցին: Դրանով ցանկանում էին ասել, որ Նա գտարյուն հրեա չէ, այլ Իսրայելի թշնամին է: Նրան նաև մեղադրեցին, թե **դև** ունի՝ անտարակույս, ակնարկելով, որ Նա խելագար է: Նրանց կարծիքով, միայն այն մարդը, ում զլխում ամեն ինչ չէ որ կարգին է, կարող է այդպիսի հայտարարություններ անել, ինչպիսին Հիսուսն էր անում:

8:49. Ուշադրություն դարձրեք, թե ինչպիսի ծանրակշիռ **պատասխան** տվեց **Հիսուսն** Իր թշնամիներին: Նրա վարդապետությունը՝ դիվահարի խոսքեր չէին, այլ Նրա խոսքերն էին, Ով ձգտում էր **պատ-**

վել Հայր Աստծուն: Եվ նրանք անպատվում էին Նրան, ոչ թե, որ Նա անմիտ էր, այլ որ լիովին տարված էր Իր Երկնավոր Հոր շահերով:

8:50. Նրանք պետք է իմանային, որ Նա երբեք **Իր փառքը չէր փնտրում:** Իր բոլոր գործերը մի նպատակ էին հետապնդում՝ փառավորել Իր Հորը: Նույնիսկ նրանց մեղադրելով Իրեն անպատվելու մեջ, Հիսուսն **Իր փառքը չէր փնտրում:** Այնուհետև Տերն ավելացրեց. «**Մեկը կա, որ որոնում է ու դատում:**» Այս խոսքերը, իհարկե, վերաբերում են Աստծուն: Հայր Աստված փնտրում է Իր սիրելի Որդու փառքը և կդատի բոլոր նրանց, ովքեր թերացան փառավորելու Նրան:

8:51. Այստեղ կրկին բերված է Տեր Հիսուսի մեծագույն արտահայտություններից մեկը, որը կարող է ասել միայն Նա, Ով Ինքը Աստված է: Ասվող խոսքերը ծանոթ ու վճռական են թվում. «**Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ:**» Հիսուսը խոստացավ, որ յուրաքանչյուրը, ով Իր **խոսքը պահի, նա հավիտյան մահ չի տեսնի:** Սա չի վերաբերում *ֆիզիկական մահին*, որովհետև ամեն օր Տեր Հիսուսին հավատացող շատ մարդիկ են մեռնում: Այստեղ ասված է *հոգևոր մահվան* մասին: Տերն ասաց, որ Նրան հավատացողներն ազատագրվել են հավիտենական **մահից** և երբեք չեն կրի դժոխքի սարսափելի տանջանքները:

8:52. Սա **հրեաներին** ավելի համոզեց նրանում, որ Հիսուսը «խելագար» է: Նրանք Հիսուսին հիշեցրին, որ **Աբրահամը մեռավ, և մարգարեներն էլ:** Նա ինչպե՞ս կարող է ասել, որ ով Իր **խոսքը պահի, նա երբեք մահ չի ճաշակի:** Սրանք ինչպե՞ս կարելի է համատեղել:

8:53. Նրանք հասկացան, որ ըստ էության Տերը հաստատում էր, որ Նա **մեծ է**, քան նրանց **հայր Աբրահամը և մարգարեները:** Աբրահամը երբեք ոչ մեկին մահից չի ազատել և չկարողացավ մահից ինքն իրեն ազատել: Նույնը չկարողացան նաև մարգարեները: Եվ ահա հայտնվել է Մեկը, Ով պնդում է, որ կարող է Իր հետևորդ-

ներին ազատել մահից: Ուրեմն Նա Իրեն ավելի մեծ է համարում, քան հայրերը:

8:54. Հրեաները մտածում էին, թե Հիսուսը ձգտում է Իր վրա ուշադրություն հրավիրել: **Հիսուսը** նրանց հիշեցրեց, որ այդպես չէ: Նրան փառավորում է **Հայրը՝ Աստված Ինքը**, Ում մասին նրանք ասում են, որ սիրում ու ծառայում են Նրան:

8:55. Հրեաներն ասում էին, որ Աստված է նրանց հայրը, բայց իրականում նրանք չէին ճանաչում Նրան: Հիմա նրանք խոսում են Նրա հետ, Ով գիտի Հայր Աստծուն, Նրա հետ, Ով հավասար է Նրան: Նրանք ցանկանում էին, որ Հիսուսը հրաժարվի Հոր հետ ունեցած Իր հավասարությունից, բայց Նա ասաց, որ եթե Ինքն այդպես վարվի, **ստախոս կլինի:** Նա ճանաչում էր Հայր Աստծուն և **պահում Նրա խոսքը:**

8:56. Քանի որ հրեաները շարունակում էին Աբրահամով վիճաբանել Իր հետ, Տերը հիշեցրեց նրանց, որ **Աբրահամը** ուրախ կլիներ տեսնելու Մեսիայի գալստյան **օրը**, նա իսկապես հավատով **տեսավ այն և ուրախացավ:** Տեր Հիսուսն ասաց, որ *Ինքը* Նա է, Ում սպասում էր Աբրահամը: Աբրահամի հավատը հիմնված էր Քրիստոսի գալստյան վրա:

Աբրահամը ե՞րբ տեսավ Քրիստոսի օրը: Հնարավոր է դա կատարվեց, երբ նա Իսահակին բերեց Մորեա լեռան վրա, որպեսզի նրան Աստծո համար ողջակեզ մատուցի: Այն ժամանակ ներկայացվեց Մեսիայի մահվան ու հարության ամբողջ դրաման, և, հնարավոր է, Աբրահամը դա տեսավ հավատի միջոցով: Այդ ձևով Տեր Հիսուսը հաստատեց, որ Մեսիայի մասին հինկտակարանյան բոլոր մարգարեությունները կատարված են:

8:57. **Հրեաները** կրկին աստվածային ճշմարտությունները հասկանալու անկարողություն են դրսևորում: Հիսուսն ասաց. «Աբրահամն ուրախացավ Իմ օրը տեսնելով», նրանք պատասխանեցին, որ Նա այնպես է խոսում, կարծես տեսել է Աբրահամին: Այստեղ մեծ տարբերություն կա: Տեր Հիսուսն հավակնում էր ավելի բարձր

դիրքի, քան Աբրահամն էր գրադեցնում: Նա Աբրահամի մտքերի ու հույսերի առարկան էր: Աբրահամը հավատով սպասում էր Քրիստոսի օրվան:

Հրեաները չէին կարողանում սա հասկանալ: Նրանք խորհում էին. Հիսուսը **դեռ հիսուն տարեկան չկա**: Իրականում այդ ժամանակ Նա ընդամենը 33 տարեկանի մոտ էր: Նա ինչպե՞ս կարող էր **Աբրահամին տեսնել**:

Այստեղ Տեր Հիսուսն Իր Աստված լինելու մասին ևս մի հստակ հայտարարություն է անում: Նա ասաց. «**Աբրահամի լինելուց առաջ ես եմ**»: Դա կարող էր նշանակել, որ Նա գոյություն ուներ մինչև Աբրահամը: Բայց Նա օգտագործեց Աստծո անունը՝ **ԵՍ ԵՄ-ը**: Տեր Հիսուսը բնակվում էր Հայր Աստծո հետ ի հավիտենից: Հնարավոր չէ խոսել Նրա առաջացման ժամանակի մասին, կամ այն մասին, որ ինչ-որ ժամանակ Նա գոյություն չի ունեցել: Դրա համար էլ Նա ասաց. «**Աբրահամի լինելուց առաջ ես եմ**»:

8:59. Այդ պահին հրեաները փորձեցին քարկոծել Հիսուսին, **բայց Նա ծածկվեց և դուրս ելավ տաճարից**: Հրեաները շատ լավ հասկացան, թե Հիսուսն ինչ նկատի ուներ. «Աբրահամի լինելուց առաջ ես եմ» ասելով: Նա հաստատեց, որ Ինքը Եհովան է: Հենց այդ պատճառով էլ նրանք քարեր վերցրին, որպեսզի նետեն Նրա վրա: Նրանց կարծիքով դա աստվածահայրություն էր: Նրանք չէին ուզում ընդունել, որ Մեսիան նրանց մեջ էր կանգնած: Նրանց պետք չէր Նա, Ով պետք է թագավորեր իրենց վրա:

Ը. Վեցերորդ հրաշքը՝ Ի ծնե կույրի թժկումը (9:1-12)

9:1. Հավանաբար, այս դեպքը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Հիսուսը լքեց տաճարի տարածքը, կամ էլ՝ 8-րդ գլխի նկարագրություններից որոշ ժամանակ անց: Այն հանգամանքը, որ հիշատակվում է այդ մարդու **ի ծնե կույր** լինելը, ցույց է տալիս նրա անհույս վիճակն ու հրաշքի մեծությունը, որը նրան տեսողություն տվեց:

9:2. Աշակերտները բավականին տարօ-

րինակ հարց տվեցին: Նրանք հարցրին, թե ինչո՞վ էր պայմանավորված այդ մարդու կուրությունը. իր սեփական՞ մեղքով, թե՞ նրա ծնողների մեղքով: Ինչպե՞ս կարող էր կուրության պատճառը նրա սեփական մեղքը լինել, եթե նա **կույր էր ծնվել**: Արդյոք նրանք վերամարմնավորմա՞ն էին հավատում, ըստ որի, մեռածների հոգիները նոր մարմիններով վերադառնում են երկիր: Միգուցե նրանք ենթադրում էին, որ նա կույր է ծնվել ի պատիժ այն մեղքերի, որ պիտի կատարեր իր ծնվելուց հետո, որոնք նախապես հայտնի էին Աստծուն: Մի բան պարզ է. նրանք ենթադրում էին, որ կուրությունն անմիջականորեն կապված էր ընտանիքում գոյություն ունեցող մեղքի հետ: Մենք գիտենք, որ դա պարտադիր չէ այդպես լինի: Չնայած վերջին հաշվով բոլոր հիվանդությունները, տառապանքները և մահը աշխարհ են մտել մեղքի հետևանքով, ճիշտ չէ, որ ամեն մի դեպքում մարդը տառապում է իր գործած մեղքերի համար:

9:3. Հիսուսը նկատի չունեց, որ ո՛չ մարդը, ո՛չ էլ նրա ծնողները չեն մեղանչել, այլ՝ որ կուրությունը իրենց կյանքում գործած մեղքի անմիջական հետևանքը չէ: Աստված մարդուն տեսողությունից զրկել էր դեռ ծնունդից, որպեսզի նրա վրա հայտնվեն **Աստծո** հզոր **գործերը**: Նախքան մարդու ծնվելը Տեր Հիսուսը գիտեր, որ տեսողություն է տալու այդ կույր աչքերին:

9:4. Փրկիչը գիտակցում էր, որ Իրեն ծառայության համար մոտ երեք տարի է հատկացված, որից հետո պետք է խաչվի: Այդ ժամանակահատվածի յուրաքանչյուր պահը պետք է օգտագործվեր Աստծո գործերի վրա: Նրա առջև ի ծնե կույր մարդն էր: Տեր Հիսուսը նրա վրա պետք է ցույց տար թժկության հրաշքը, թեկուզև շաբաթ օրը: Նրա ծառայության ժամանակը շուտով ավարտվելու էր, և Նա այլևս երկրի վրա չէր լինելու: Սա լուրջ զգուշացում է յուրաքանչյուր քրիստոնյայի համար, որի կյանքի ցերեկն անցնում է և **գիշերը գալիս է**, երբ ընդմիշտ կավարտվի մեր երկրավոր ծառայությունը: Այդ իսկ պատճառով մենք պետք է օգտագործենք մեզ հանձնված ժամանա-

կը Տիրոջն ընդունելի ծառայություն մատուցելու համար:

9:5. Երբ Հիսուսն **աշխարհում** էր որպես Մարդ, Նա շատ յուրահատուկ ու անմիջական ձևով էր **աշխարհի լույսը**: Նա հրաշքներ էր կատարում և սովորեցնում էր մարդկանց, դրա համար էլ նրանք իրենց աչքերով տեսան **աշխարհի լույսին**: Տեր Հիսուսը *հիմա էլ* է աշխարհի Լույսը. բոլոր Իրեն եկողներին խոստացված է, որ նրանք խավարում չեն քայլի: Մակայն հենց այս համարում Տերն Իր երկրավոր ծառայության մասին է խոսում:

9:6. Մեզ չի ասվում, թե ինչու Հիսուսը խառնեց **ցեխն** ու **թուրը** և քսեց **կույրի աչքերին**: Ոմանք ենթադրում են, որ այդ մարդն աչքի խնձորակներ չուներ, և Տեր Հիսուսը պարզապես դրանք ստեղծեց: Ուրիշներն էլ կարծում են, որ կույրին տեսողություն տալով Տեր Հիսուսը, ինչպես միշտ, աշխարհի կողմից արհամարհված մեթոդներ օգտագործեց: Իր նպատակների իրագործման համար Նա օգտագործում էր ոչ արդյունավետ ու անկարևոր իրեր: Նույնիսկ այսօր, հոգևորապես կույրերին տեսողություն տալու համար, Աստված օգտագործում է երկրի փոշուց արարված տղամարդկանց ու կանանց:

9:7. Կույրին ասելով. «**Գնա՛, լվացվիր Միլովամի ավազանի մեջ**», Տերը գործողության կոչեց նրա հավատը: Չնայած կուրությանը, նա, հավանաբար գիտեր որտեղ է գտնվում ավազանը, և այնպես արեց, ինչպես իրեն ասվեց: Սուրբ Գիրքը ուշադրություն է դարձնում «**Միլոամ**» բառին, որը նշանակում է «**ուղարկված**»: Հնարավոր է, որ այն խորհրդանշում է Մեսիային (Նրան, Ով «ուղարկված է»): Նա, Ով կատարեց այդ հրաշքը, աշխարհ էր ուղարկված Հայր Աստծո կողմից: Կույրը **գնաց ու լվացվեց** ավազանում և տեսողություն ձեռք բերեց: Մա ոչ թե տեսողությունը վերականգնվելու դեպք է, այլ մարդը, որ մինչ այդ չէր տեսնում, տեսողություն ստացավ: Հրաշքը ակնթարթորեն կատարվեց, մարդը անմիջապես սկսեց տեսնել իր աչքերով: Նրա համար ինչպիսի հիասքանչ

անակնկալ էր՝ առաջին անգամ նայել աշխարհին, որտեղ Նա էր ապրում:

9:8-9. Այդ մարդու **հարևանները** ցնցված էին: Նրանք դժվարանում էին հավատալու, որ սա նույն մարդն է, որ **նստած մուրում էր**: Այսպիսի ճանապարհ պետք է անցնի փրկություն ստացող մարդը: Մեր հարեվանները պետք է նշմարեն մեր մեջ տեղի ունեցած փոփոխությունը: **Ոմանք** անդում էին, որ սա հենց այդ նույն մարդն է: Իսկ **ոմանք** էլ այդքան վստահ չէին, բայց ընդունում էին, որ որոշ նմանություն կա: Բայց այդ մարդը ցրեց բոլոր կասկածները՝ հայտարարելով, որ ինքը նա է, ով ի ծնե կույր էր:

9:10. Ամեն անգամ, երբ Հիսուսը հրաշք էր կատարում, հարցեր էին ծագում մարդկանց սրտերում: Հաճախ այդ հարցերը հավատացողին հնարավորություն էին տալիս վկայելու Տիրոջ մասին: Այստեղ մարդիկ հարցրին նախկին կույրին, թե այդ բոլորն **ինչպես** կատարվեց:

9:11. Նրա վկայությունը պարզ էր, բայց համոզիչ: Նա պատմեց բժշկության մասին՝ արժանին տալով Նրան, Ով կատարեց հրաշքը: Այդ ժամանակ այդ մարդը դեռ չէր գիտակցել, թե Ով է Տեր Հիսուսը: Նա պարզապես հիշատակեց Նրան. «**Մի մարդ՝ Հիսուս անունով**»: Ավելի ուշ նրա հասկացողությունն աճեց, և նա ճանաչեց, թե ով է Հիսուսը:

9:12. Հիսուս Քրիստոսի մասին վկայելով, հաճախ, մենք նույնպես ուրիշների սրտերում ցանկություն ենք առաջացնում՝ գալու և ճանաչելու Հիսուսին:

Թ. Հրեաների աճող ընդդիմությունը (9:13-41)

9:13. Հավանական է, որ հրաշքից անկեղծ ոգևորված հրեաներից ոմանք **փարիսեցիների մոտ տարան նրան, որ մի ժամանակ կույր էր**: Հավանաբար, նրանք չէին հասկանում, թե կրոնական առաջնորդներին ինչքան կանհանգստացնի այդ մարդու բժշկվելը:

9:14. Այդ հրաշքը Հիսուսը կատարել էր **շաբաթ օրը**: Քննադատորեն տրամադրը-

ված փարիսեցիները չէին հասկանում, որ Աստված երբեք չի ցանկացել, որպեսզի շաբաթն արգելք հանդիսանա գթասարտություն կամ բարիք ցուցաբերելու ճանապարհին:

9:15. Բժշկվածին ևս մի հնարավորություն է տրվում վկայելու Տեր Հիսուսի մասին: Երբ փարիսեցիներն իրենց հերթին **հարցրին նրան, թե ինչպե՞ս տեսողություն ստացավ**, նրանք լսեցին նույն պարզ պատմությունը: Բայց այս անգամ մարդը չհիշեց Հիսուսի անունը, հավանաբար ոչ թե որ վախենում էր, այլ որ հասկացավ, թե բոլորը գիտեն, Ով կատարեց այդ հզորագույն գործը: Այդ ժամանակ Տեր Հիսուսը հայտնի էր Երուսաղեմում:

9:16. Կրկին **բաժանում** առաջացավ. փարիսեցիները միանման կարծիք չունեին Հիսուսի Ով լինելու մասին: **Փարիսեցիներից ոմանք** համարձակ հայտարարեցին, որ Հիսուսը չի կարող Աստծո Մարդը լինել, որովհետև խախտում է **շաբաթ** օրը: **Ուրիշներն** էլ ենթադրում էին, որ մեղավոր մարդը չի կարող այդպիսի գարմանալի հրաշքներ կատարել: Հիսուսը հաճախ էր տարակարծությունների պատճառ դառնում մարդկանց մեջ: Մարդիկ ստիպված էին ինչ-որ կողմ ընդունել. կամ Նրա հետ, կամ Նրան հակառակ:

9:17. Փարիսեցիները հարցրին նախկին **կույրին**, թե նա ինչ է մտածում Հիսուսի մասին: Նա դեռ չէր հասկանում, որ Հիսուսն Աստված է: Բայց նրա հավատը այն աստիճան անեց, որ նա Հիսուսին **Մարգարե** ընդունեց: Նա ենթադրեց, որ իրեն տեսողություն Տվողը Աստծուց է ուղարկված և աստվածային պատգամ ունի:

9:18-19. Շատ **հրեաներ** դեռ չէին ուզում **հավատալ** կատարված հրաշքին: Նրանք աչքերը բացվածի **ձնողներին կանչեցին**, որպեսզի լսեն, թե նրանք ինչ կասեն:

Ծնողներից ավելի լավ ո՞վ կիմանար, որ իրենց երեխան կույր էր ծնվել: Նրանց վկայությունը կլինե՞ր վերջնական եզրահանգում: Փարիսեցիները հարցրին, թե սա նրանց **որդի՞ն է**, և **ինչպե՞ս է** նա տես-

ողություն ստացել:

9:20-21. Ծնողների վկայությունը հաստատեց. **սա** նրանց **որդին** էր և նրանք այդ բոլոր տարիների ընթացքում տառապել են՝ իմանալով նրա **կուրության** մասին:

Բայց նրանք չէին ցանկանում ավելին ասել: Նրանք **չգիտեին**, թե իրենց որդու տեսողությունն ինչպես է վերականգնվել, **կամ ով է** այն Մարդը, որ բացել է նրա աչքերը: Նրանք փարիսեցիներին ետ՝ իրենց որդու մոտ ուղարկեցին, որպեսզի նրանից հարցնեն, քանի որ միայն նա կարող է **խոսել իր մասին**:

9:22-23. Համար 22-ը բացահայտում է **ձնողների** վախը: Նրանք լսել էին, որ Հիսուսին որպես Մեսիա ընդունողը **կվտարվի ժողովարանից**: Այդպիսի մեկուսացումը լուրջ դժվարություն էր ցանկացած հրեայի համար: Նրանք չէին ուզում այդպիսի գին վճարել: Հիսուսին ընդունել՝ նշանակում էր կորցնել գոյատևության միջոցները, ինչպես նաև զրկվել հրեական կրոնի արտոնություններից:

Հրեա առաջնորդների վախից **ձնողները** վկայության պատասխանատվությունը փոխադրեցին իրենց որդու վրա:

9:24. «**Աստծո՞ւն փառք տուր**» առաջարկությունը կարող է երկու նշանակություն ունենալ: Նախևառաջ, դա կարող էր երդման ձև լինել: Հնարավոր է, փարիսեցիներն ասացին. «Հիմա ճիշտն ասա: **Մենք գիտենք, որ այդ Մարդը մեղավոր է**»: Բայց այն նաև կարող է նշանակել, որ փարիսեցիները պահանջում էին այդ հրաշքի համար փառքն Աստծուն տալ, ոչ թե՛ Հիսուսին, քանի որ ենթադրում էին, որ Նա մեղավոր Մարդ է:

9:25. Անհաջողությունը հետապնդում էր փարիսեցիներին ամեն քայլափոխին: Ամեն անգամ, երբ փորձում էին պատվազուրկ անել Տեր Հիսուսին, ամեն բան վերջանում էր դրանով, որ Նրան ավելի մեծ փառք էր տրվում: Այստեղ աչքերը բացվածի վկայությունը հիանալի է: Նա Հիսուսի Անձնանավորության մասին շատ բան **չգիտեր**,

բայց մի բան **գիտեր**։ Որ Նա **կույր էր, իսկ հիմա** տեսնում է։ Այս ապացույցը ոչ որ չկարողացավ ժխտել։

Նույնը կատարվում է նրանց հետ, ովքեր վերստին ծնվել են։ Աշխարհը կարող է կասկածել, ծաղրել և հեզնել, բայց չի կարող ժխտել մեր վկայությունն այն մասին, որ նախկինում կործանվում էինք, իսկ հիմա Աստծո շնորհով փրկություն ենք ստացել։

9:26-27. Փարիսեցիները **դարձյալ** սկսեցին հարցաքննել, պահանջելով նախկին կույրին պարզաբանել կատարվածի բոլոր մանրամասները։ Այժմ տեսողություն ստացած մարդը հայտնապես նյարդայնացավ։ Նա հիշեցրեց նրանց, որ **արդեն** ամեն հարցի **պատասխանել է**, իսկ նրանք **չեն լսել**։ **Ինչո՞ւ էին ուզում նորից լսել**։ Միգուցե իրե՞նք էլ են **կամենում Նրա աշակերտները լինել**։ Ակնհայտ է, որ հեզնանքով հարցրեց սա։ Նա շատ լավ գիտեր, որ նրանք Հիսուսին ատում են և Նրան հետևելու ոչ մի ցանկություն չունեն։

9:28. Այսպիսի արտահայտություն կա. «Երբ ապացույցներ չկան, մեղադրում են հայցվորին»։ Նույնը մենք տեսնում ենք այստեղ։ Այդ մարդու վկայությունը խախտելու փարիսեցիների փորձերը լիովին ձախողվեցին. նրանք սկսեցին հանդիմանել նրան։ Նրանք բժշկվածին մեղադրեցին, որ Հիսուսի **աշակերտն է**, կարծես թե դա ամենավատ բանն է աշխարհում։ Հետո նրանք հայտարարեցին, որ իրենք **Մովսեսի աշակերտներն են**, կարծես թե սա էլ բոլոր հնարավորություններից ամենալավն է։

9:29. Փարիսեցիներն ասացին, որ **Աստված Մովսեսի հետ խոսեց**, իսկ Հիսուսի մասին արհամարհանքով էին արտահայտվում։ Եթե նրանք հավատալիին Մովսեսի գրքերին, ապա Հիսուսին կընդունեին որպես Տեր ու Փրկիչ։ Իսկ եթե գոնե մի փոքր մտածեին, կհասկանային, որ Մովսեսը երբեք տեսողություն չի տվել ի ծնե կույր մեկին։ Մովսեսից էլ մեծն էր նրանց մեջ, և նրանք չգիտակցեցին դա։

9:30. Բժշկվածի հեզնանքն ավելի խոցող էր։ Փարիսեցիները դրան չէին սպասում։ Մարդը նրանց պատասխանեց ու ասաց. «Դուք եք Իսրայելի առաջնորդները։ Դուք եք հրեա ուսուցիչները։ Եվ դեռ ձեր մեջ մի Մարդ կա, Ով այքերը բացելու իշխանություն ունի, իսկ **դուք չգիտեք, թե Նա որտեղից է**։ Ամո՞թ ձեզ»։

9:31. Հիմա տեսողություն ստացած մարդն ավելի համարձակ է դառնում իր վկայության մեջ։ Նրա հավատը անել էր։ Նա նրանց հիշեցրեց այն մասին, որ **Աստված մեղավորներին չի լսում** ինչպես կարգն է և նրանց միջոցով հրաշքներ չի անում։ Աստված չարություն անող մարդկանց հավանություն չի տալիս, ո՛չ էլ այդպիսի մարդկանց իշխանություն է տալիս մեծ գործեր անելու համար։ Բայց նա, ով պատվում է **Աստծուն**, ստանում է Աստծո հավանությունն ու վստահությունն այն բանում, որ Աստված նրան լսում է։

9:32-33. Այդ մարդը հասկացավ, որ պատմության ողջ ժամանակահատվածում նա ի ծնե **կույրերից** առաջինն էր, որ տեսողություն ստացավ։ Նա չկարողացավ հասկանալ, թե ինչո՞ւ են փարիսեցիները, որ դարձան այդպիսի հրաշքի վկաներ, մեղք փրկություն այդ հրաշքը կատարող Մարդու մեջ։

Եթե Տեր Հիսուսն Աստծուց չլիներ, երբեք **չէր կարողանա անել** այսպիսի գերբնական հրաշքներ։

9:34. Փարիսեցիները կրկին դարձան՝ հանդիմանելու մարդուն։ Նրանք անուղղակի կերպով ակնարկեցին, որ այս մարդու կուրությունը նրա մեղքերի անմիջական արդյունքն է։ Նա ի՞նչ իրավունք ունի նրանց **սովորեցնելու**։ Իրականում նա լիովին իրավունք ուներ նրանց սովորեցնելու, որովհետև ինչպես ասել է Ռայլը. «Մուրբ Հոգու աշակերտությունն ավելի հաճախ ցածր խավի մարդկանց մոտ է երևում, քան ունևոր ու կրթված մարդկանց մոտ»։ Երբ ասվում է, որ **նրան դուրս հանեցին**, հավանաբար դա նշանակում է, որ նրան ոչ միայն տաճարից դուրս հանեցին, այլև հրեական կրոնից։ Իսկ ի՞նչն էր հեռացման

պատճառը: Ի ծնե կույրին տեսողություն տրվեց շաբաթ օրը: Նա վտարվեց, քանի որ ոչ մի չար բան չսասաց հրաշքը Կատարողի մասին:

9:35. Այն ժամանակ Հիսուսը փնտրեց այդ մարդուն: Գուցե դրանով ասում էր. «Եթե նրանք քեզ մերժեցին, Ես կընդունեմ»: Նրան, ում հավածում են Հիսուսի պատճառով, ոչինչ չի կորցնում, այլ մեծ օրհնություն է ստանում, որովհետև Նա ընդունում է նրան և Իր բարեկամությունն առաջարկում: Տեսե՛ք, թե Տեր Հիսուսն ինչպես է բժշկվածին առաջնորդում անձնապես հավատալու Իրեն՝ որպես Աստծո Որդու: Նա պարզապես հարցրեց. «**Դու հավատո՞ւմ ես Աստծո Որդուն**»:՝³¹

9:36. Թեև մարդը տեսողություն էր ստացել, բայց դեռ կարիք ուներ հոգևոր տեսողության: Նա հարցրեց Տիրոջը, թե **ով է Աստծո Որդին**, որպեսզի **հավատար Նրան**: Այստեղ «Տեր» բառի տակ այդ մարդը պարզապես նկատի ուներ «պարոն»:

9:37. Հիմա **Հիսուսը** տեսողություն ստացած մարդուն ներկայացավ որպես Աստծո Որդի: Նա պարզապես տեսողություն տվող և նրա կյանքում անհնարինը կատարող Մարդը չէր, այլ Նա Աստծո Որդին էր, Ում նա տեսնում էր, և Ով նրա հետ **խոսում էր**:

9:38. Եվ այն ժամանակ այդ մարդը պարզությամբ և ուրախությամբ հավատաց Տեր Հիսուսին, ծնկի եկավ ու **երկրպագեց Նրան**: Այդ պահից նա դարձավ փրկված ու բժշկված մարդ: Ինչպիսի՛ մեծ օր եղավ այդ օրը նրա կյանքում: Նա ստացավ և՛ ֆիզիկական և՛ հոգևոր տեսողություն:

Նկատե՛ք. տեսողություն ստացած մարդը Տիրոջը չերկրպագեց, մինչև որ չիմացավ, որ Նա Աստծո Որդին է: Հրեական օրենքով վարժված լինելով՝ նա չէր կարող հասարակ մարդուն երկրպագել: Բայց հենց որ իմացավ, որ իրեն բժշկողն Աստծո Որդին է, **երկրպագեց Նրան** ոչ թե Նրա արածի համար, այլ թե Ով է Նա:

9:39. Առաջին հայացքից այս համարը կարծես թե հակասում է Հովհ. 3:17-ին.

«Որովհետև Աստված Իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ աշխարհը դատի», թեև իրականում ոչ մի հակասություն էլ այստեղ չկա: Զրիստոսի աշխարհ գալու նպատակն այն է, որ ոչ թե դատի, այլ փրկի: Սակայն բոլոր նրանք, ովքեր Նրան չեն ընդունել, չեն խուսափի դատաստանից:

Ավետարանի քարոզչությունը երկու արդյունք ունի: **Նա, ով** ընդունում է իր **կուրությունը**, տեսողություն է ստանում: Իսկ **նա, ով** պնդում է, թե կատարյալ **տեսողություն** ունի առանց Տեր Հիսուսի, ավելի կհաստատվի իր կուրության մեջ:

9:40. Փարիսեցիներից ոմանք հասկացան, որ Տեր Հիսուսն իրենց և իրենց կուրության մասին է ասում: Նրանք մոտեցան Նրան և ուղղակի հարցրին. «**Մի՞թե մենք էլ կույր ենք**»: Նրանց հարցը բացասական պատասխան էր ակնկալում:

9:41. Տիրոջ պատասխանը կարելի է այսպես ձևակերպել. «**Եթե** դուք ընդունում եք ձեր **կուրությունը**, ձեր մեղսունակ լինելը և Փրկիչ ունենալու կարիքը, ապա ձեր մեղքերը կարող են ներվել, և դուք կարող եք փրկություն ստանալ: Բայց դուք հայտարարում եք, որ ոչ մի բանի կարիք չունեք: Դուք հաստատում եք, թե արդար եք և մեղք չունեք: **Այդ իսկ պատճառով** մեղքը ձեր վրա է մնում և ձեզ ոչ մի թողություն, ներում չկա»: Երբ Հիսուսն ասաց. «... **Մեղք չէիք ունենա**», նկատի չունեք, որ նրանք բացարձակապես առանց մեղքի կլինեն, այլ հարաբերաբար խոսելով՝ անմեղ կլինեն: Եթե նրանք միայն ընդունեին իրենց կուրությունը Հիսուսին՝ որպես Մեսիա, ճանաչելու ձախողման մեջ, ապա նրանց մեղքը ոչինչ կլինեք համեմատած մեծ մեղքի՝ տեսնելու կարողության հավակնության և միաժամանակ Նրան՝ որպես Աստծո Որդի ընդունելու ցանկություն չունենալու հետ:

Ժ. Հիսուն է ոչխարների դուռը (10:1-10)

10:1. Այս համարները սերտորեն կապված են 9-րդ գլխի վերջին մասի հետ: Այնտեղ նկարագրված է Տեր Հիսուսի գրույցը փարիսեցիների հետ, ովքեր պնդում էին, թե իրենք են Իսրայել ժողովրդի օրինական

հովիվները: Հենց իրենց է դիմում Տեր Հիսուսն այստեղ: «**Ճճմարիտ, ճճմարիտ եմ ասում ձեզ**» արտահայտությունը ցույց է տալիս Տեր Հիսուսի ասածի լրջությունը:

Ոչխարների **փարախը** մի պարսպապատ տարածություն էր, որտեղ գիշերները պատսպարվում էին ոչխարները: Այդ տարածքը շրջապատված էր ցանկապատով, որը միայն մի բացվածք ուներ, որը որպես դուռ էր օգտագործվում: Այստեղ «**ոչխարների փարախը**» վերաբերում է հրեա ժողովրդին:

Շատերն են եկել հրեա ժողովրդի մոտ՝ իրենց համարելով նրանց հոգևոր առաջնորդներն ու ղեկավարները: Նրանք իրենց «մեսիաններ» են հռչակել: Բայց նրանք ինքնակոչ մեսիաններ էին: Նրանք չեն եկել այն ճանապարհով, որ Մեսիայի մասին կանխասվել էր ՀԿ-ում: Նրանք **մի ուրիշ ճանապարհով** վեր բարձրացան և իրենց ուզած կերպով ներկայացրին Իսրայելին: Այդ մարդիկ ճճմարիտ հովիվներ չէին, այլ գողեր ու ավազակներ: Գողը նա է, ով վերցնում է այն, ինչ իրեն չի պատկանում, իսկ ավազակը դա անելիս նաև բռնություն է գործադրում: Փարիսեցիները գողեր ու ավազակներ էին: Նրանք ձգտում էին Իսրայել ժողովրդին կառավարել և անում էին, ինչ հնարավոր է, որպեսզի խոչընդոտեն ճճմարիտ Մեսիայի ընդունումը: Նրանք հետապնդում էին Հիսուսի հետևորդներին և ի վերջո Հիսուսին մահվան դատապարտեցին:

10:2. Այս համարը ճիշտ Հիսուսի մասին է ասում: Նա եկավ Իսրայելի տան կորած ոչխարների համար: Նա է **ոչխարների** ճճմարիտ **հովիվը**: Նա դռնով մտավ, այսինքն՝ Նրա գալը ամեն ինչով համապատասխանում էր Մեսիայի մասին հինկտակարանյան մարգարեություններին: Նա ինքնակոչ Փրկիչ չէր, այլ եկավ Իր Հոր կամքին կատարելապես հնազանդելով: Նա կատարեց բոլոր պայմանները:

10:3. Այս համարում նշանակալից տարածայնություն կա **դռնապանի** ինքնության վերաբերյալ: Ոմանք կարծում են, որ այս

բառը վերաբերում է Քրիստոսի գալուստը կանխատեսող ՀԿ-ի մարգարեներին: Ուրիշներն էլ ենթադրում են, որ այստեղ խոսքը Հովհաննես Մկրտչի մասին է, քանի որ նա ճճմարիտ Հովիվ նախակարապետն էր: Ոմանք էլ պակաս վստահ չեն, որ այս համարում **դռնապանը** Սուրբ Հոգին է, Ով բացում է դուռը, որպեսզի թույլ տա Հիսուսին՝ գալու մեր սրտի ու կյանքի մեջ:

Ոչխարները լսում են հովիվի ձայնը: Նրանք ճանաչում են այն՝ որպես ճճմարիտ հովիվի ձայն: Ինչպես սովորական ոչխարը ճանաչում է իր հովիվի ձայնը, այնպես էլ հրեաների մեջ գտնվողներից ոմանք ճանաչեցին Մեսիային, երբ Նա հայտնվեց: Ավետարանում ամեն տեղ մենք լսում ենք Հովիվին, Ով **Իր ոչխարներին անունով է կանչում**: Նա մի քանի աշակերտներ կանչեց 1-ին գլխում, և նրանք բոլորն էլ լսեցին Նրա ձայնը և պատասխանեցին: Նա կանչեց կույրին 9-րդ գլխում: Տեր Հիսուսը դեռ կանչում է նրանց, ովքեր Նրան՝ իբրև Փրկչի, կրնդունեն, և այդ կոչն անձնական է ու անհատական:

«**Եվ նրանց դուրս է առաջնորդում**» արտահայտությունը կարող է նշանակել, որ Տեր Հիսուսն Իր ձայնը լսողներին դուրս հանեց Իսրայելի ոչխարների փարախից: Նրանք փակված էին ցանկապատով շրջապատված տեղում: Օրենքը նրանց ոչ մի ազատություն չէր տալիս: Տերն Իր ոչխարներին **առաջնորդում** է Իր շնորհով: Նախորդ գլխում հրեաները մարդուն վտարեցին սինագոգից: Այդ պարագայում, առանց իմանալու, նրանք օգտակար եղան Տիրոջ գործին:

10:4. Եվ երբ ճճմարիտ Հովիվը **Իր ոչխարներին դուրս է հանում**, նրանց սաստիկ չի քշում, այլ **նրանց առջևից է գնում**: Նա նրանց չի ուղարկում այնտեղ, ուր դեռ Ինքը ոտք չի դրել: Որպես նրանց Փրկիչ, Առաջնորդ և Օրինակ՝ Նա միշտ գնում է ոչխարների առջևից: Քրիստոսի ճճմարիտ **ոչխարները հետևում են Նրան**: Նրանք ոչխարներ են *դառնում* ոչ թե այն պատճառով, որ Նրա օրինակին են հետևում, այլ

շնորհիվ նոր, վերստին ծննդի: Փրկություն ստանալով՝ նրանք ցանկանում են գնալ այնտեղ, որտեղ Նա է առաջնորդում:

10:5. Այն նույն բնագրը, որն օգնում է ոչ խարներին ճանաչել ճշմարիտ հովվի ձայնը, նրանց հուշում է **փախչել օտարից:** Օտարները փարիսեցիներն ու հրեական մյուս առաջնորդներն են, որոնք անձնական շահերից ելնելով են հետաքրքրված ոչխարներով: Սրա տեսանելի օրինակը տեսողություն ստացած մարդն է: Նա ոչ միայն լսեց Տեր Հիսուսի ձայնը, այլև իմացավ, որ փարիսեցիներն օտար են: Դրա համար էլ հրաժարվեց նրանց հնազանդվելուց, չնայած որ դա հանգեցրեց նրա վտարմանը:

10:6. Այստեղ հստակ ընդգծված է, որ **այս առակը Հիսուսն ասաց** փարիսեցիներին, **բայց նրանք չհասկացան**, որովհետև ճշմարիտ ոչխարներ չէին: Եթե նրանք այդպիսիք լինեին, ապա կլսեին Նրա ձայնն ու կգնային Նրա հետևից:

10:7. Ապա Հիսուսը մի օրինակ ևս բերեց: Նա այլևս չիտեսց ոչխարների փարախի դռան մասին, ինչպես 2-րդ համարում: Այստեղ Նա Իրեն անվանեց **ոչխարների դուռ:** Այժմ հարցը Իսրայելի ոչխարների փարախի դռնից մտնելու մասին չէր, այլ Իսրայելի ընտրված ոչխարների հուղայականությունից դուրս ելնելու և Քրիստոսին՝ **Դռանը** գալու:

10:8. Բոլոր նրանք, ովքեր Քրիստոսից **առաջ** եկան, ձևացրին, թե հեղինակություն և բարձր դիրք ունեն: Բայց Իսրայելի ընտրյալ ոչխարները չլսեցին նրանց, որովհետև գիտեին, որ նրանք ցանկանում են օրենքով իրենց չպատկանող բաները:

10:9. Այս համարն այն սիրելի համարներից մեկն է, որը բավականաչափ պարզ է, որ կիրակնօրյա դպրոցի աշակերտը հասկանա, և այն դեռ հարատև խորհելու նյութ կտա շատ ուսյալ գիտնականների: Քրիստոսն է **դուռը:** Քրիստոնությունը վարդապետություն չէ կամ եկեղեցի: Այն անձնավորություն է, և այդ Անձնավորությունը Տեր Հիսուս Քրիստոսն է. «**Եթե մեկն Ինձանով ներս մտնի**»: Փրկություն կարելի է

ստանալ միայն Քրիստոսի միջոցով: Ո՛չ մկրտության միջոցով, ո՛չ էլ Տերունական ընթրիքի մասնակցության միջոցով: Մենք պետք է Հիսուս Քրիստոսով՝ այն ճանապարհով մտնենք, որը Նա է որոշել: Հրավիրվում են բոլորը: Քրիստոսը ինչպես հրեաների, այնպես էլ հեթանոսների Փրկիչն է: Բայց փրկվելու համար մարդը պետք է ներս մտնի: Նա պետք է ընդունի Քրիստոսին հավատով: Սա անձնական քայլ է և առանց սրա փրկություն չկա: Նա, ով կմտնի, **կփրկվի** պատժից, մեղքի իշխանությունից, ի վերջո՝ դրա ներկայությունից:

Փրկություն ստանալով՝ նրանք **և՛ ներս են մտնում, և՛ դուրս են գնում:** Հնարավոր է այստեղ հետևյալ միտքն է դրված, որ նրանք հավատով կմտնեն Աստծո ներկայության մեջ, որպեսզի Նրան երկրպագեն, իսկ հետո դուրս կգնան աշխարհի մեջ, որպեսզի վկայեն Տիրոջ մասին: Ամեն դեպքում, սա Տիրոջը ծառայելիս կատարյալ անվտանգության ու ազատության պատկերն է: Մտնողներն **արոտ կգտնեն:** Քրիստոսը ոչ միայն փրկում ու ազատություն է պարգևում, այլև պաշտպանում ու հագեցնում է: Նրա ոչխարները **արոտ են գտնում** Աստծո Խոսքի մեջ:

10:10. Գողի նպատակը **գողանալ, սպանել և կորստյան մատնելն է:** Նա գալիս է գուտ եսասիրական նկատառումներով: Նա իր անձնական ցանկությունների բավարարման համար նույնիսկ **սպանում է** ոչխարներին: Բայց Տեր Հիսուսը մարդկային սիրտ է գալիս ոչ եսասիրական դրդապատճառներով: Նա գալիս է, որպեսզի տա, ոչ թե վերցնի: Նա գալիս է, որպեսզի մարդիկ **կյանք ունենան և որ այն ավելի առատորեն ունենան:** Մենք կյանքն այն պահին ենք ստանում, երբ Նրան՝ որպես մեր Փրկիչն ենք ընդունում: Փրկություն ստանալով, այնուամենայնիվ, մենք հայտնաբերում ենք, որ կյանքը վայելելու տարբեր աստիճաններ կան: Ինչքան ավելի է Սուրբ Հոգին մեր մեջ գործում, այնքան ավելի շատ ենք մեզ տրված կյանքը վայե-

լում: Այդ դեպքում մենք ոչ միայն **կյանք** ենք ունենում, այլ **ավելի առատորեն**:

Ի. Հիսուսն է բարի Հովիվը (10:11-18)

10:11. Շատ հաճախ Տեր Հիսուսն օգտագործեց «**Ես եմ**» արտահայտությունը, որն աստվածության անուններից մեկն է: Ամեն անգամ Նա հայտնում էր Հայր Աստծո հետ Իր հավասարությունը: Այստեղ Նա Իրեն ներկայացրեց որպես **Իր կյանքը ոչխարների համար տվող բարի հովիվ**: Սովորաբար ոչխարներն են ստիպված իրենց կյանքը տալ հովիվների համար: Բայց Տեր Հիսուսը մեռավ հոտի համար:

Երբ պետք էր գոհի արյուն հեղվեր,
Այս Հովիվը գութով շարժվեց,
Կանգնելով մեր ու թշնամու միջև՝
Հոժար մեռավ մեր փոխարեն:

Թոմաս Քելի

10:12. Վարձկանը նա է, ով ծառայում է դրամի համար: Օրինակ՝ հովիվը կարող է ինչ-որ մեկին վճարել, որպեսզի նա էլ հոգ տանի ոչխարներին: Փարիսեցիները վարձկաններ էին: Մարդկանց հանդեպ նրանց հետաքրքրությունը պայմանավորված էր դրամով, որ ստանում էին դրա փոխարեն: **Վարձկանի** պարագայում **ոչխարներն իրենք չեն**: Երբ վտանգ է գալիս, նա փախչում է և թողնում ոչխարներին **գայլերի** ողորմածությանը:

10:13. Մեր արարքները պայմանավորված են մեր ինքնությամբ: Վարձկանը ծառայում է դրամ ստանալու համար: Նա **ոչխարների համար հոգ չի տանում**: Նրան ավելի հետաքրքրում է իր սեփական բարեկեցությունը, քան թե դրանց ապահովությունը: Այսօր Եկեղեցում Աստծո գառների հանդեպ ճշմարիտ սեր չունեցող շատ վարձկաններ կան, որոնք որպես հարմար գրավմունք ընտրում են ծառայությունը:

10:14. Նորից Տերը խոսում է Իր մասին՝ իբրև **բարի հովիվ**: Այս համարում **բարի** (հունարեն *kalos*) նշանակում է իղեպական, արժանի, լավագույն, անգերազանցելի: Նրա մեջ կան այս բոլոր հատկությունները: Այնուհետև Նա խոսում է Իր և Իր

ոչխարների միջև գոյություն ունեցող մտերմիկ հարաբերությունների մասին: Նա գիտի Իրեններին, և Իրենը եղողներն էլ ճանաչում են Իրեն: Սա զարմանալի ճշմարտություն է:

10:15. Այս համարը հանդիսանում է նախորդի շարունակությունը. «... Եվ Ես Իմ ոչխարներին ճանաչում եմ և ճանաչվում եմ Իմը եղողների կողմից. **Ինչպես Հայրը Ինձ գիտի, այնպես էլ Ես գիտեմ Հորը**»: Սա իսկապես ցնցող ճշմարտություն է: Ոչխարների հետ ունեցած Իր հարաբերությունները Տերը համեմատեց Իր և Իր Հոր միջև գոյություն ունեցող հարաբերությունների հետ: Հովիվի ու ոչխարների միջև գոյություն ունի նույն միությունը, հաղորդակցությունը, մտերմությունը և գիտելիքը, ինչ-որ Հոր և Որդու միջև է: «**Եվ Ես Իմ կյանքը դնում եմ ոչխարների համար**», - ավելացրեց Նա: Կրկին մեր առջև Տեր Հիսուսի այն բազմաթիվ հաստատումներից մեկն է. Նա մեղավորներին փրկագնելու համար սպասում էր խաչի մահվանը:

10:16. Այս համարն ամբողջ գլխի բանալին է: Տիրոջ կողմից այստեղ հիշատակված **ուրիշ ոչխարները** հեթանոսներն են: Նրա աշխարհ գալը նախ՝ Իսրայելի ոչխարների համար էր, ապա՝ նաև հեթանոսների փրկության: Հեթանոսները հուդայական **փարախին չէին** պատկանում: Բայց Տեր Հիսուսի մեծ սիրտը չարչարվեց նաև այս ոչխարների համար. Աստծո կամքով Նա պետք է նրանց **բերի** Իր մոտ: Նա գիտեր, որ նրանք ավելի պատրաստ են լինելու, քան հրեաները. նրանք **կլսեն** Իր **ձայնը**:

Համարի վերջնամասում կարևոր անցում է կատարվում հուդայական **փարախից** դեպի քրիստոնեական **հոտին**: Այս համարը մեզ թույլ է տալիս արագորեն հայացք նետել հրեաների ու հեթանոսների ապագային, որոնք միաբան են լինելու Քրիստոսի մեջ. այս ժողովուրդների միջև եղած նախկին տարբերությունները չքանալու են:

10:17. 17-18-րդ համարներում Տեր Հիսուսը բացատրեց, որ Նա նախաձեռնելու է, որպեսզի հրեաների ու հեթանոսների

ընտրյալներին Իր մոտ բերի: Նա պատրաստակամորեն էր սպասում Իր մահվանը, թաղմանը և մեռելներից հարություն առնելուն: Այս բառերը լիովին անտեղի կլինեին, եթե Տեր Հիսուսը հասարակ մարդ լիներ: Այդ մասին Նա ասաց, որ Իր սեփական կամքով Իր **կյանքն է դնում**, որպեսզի **դարձյալ առնի այն**: Միայն Նա կարող է այս անել, որովհետև Նա Աստված է: **Հայրը** սիրում էր Տեր Հիսուսին, **որովհետև** Նա պատրաստ էր մեռնելու և կրկին բարձրանալու, որպեսզի կորած ոչխարները կարողանային փրկություն ստանալ:

10:18. **Ոչ ոք** չէր կարող Տիրոջից **Իր** կյանքը վերցնել: Նա Աստված է, և ուրեմն՝ Նա վեր է կանգնած Իր արարածների բոլոր դավադիր սպանություններից: Նա Իր մեջ **իշխանություն** ուներ Իր կյանքը **վար դնելու**, ինչպես նաև **իշխանություն** ուներ **վերստին այն առնելու**: Բայց մի՞թե մարդիկ չէին Տեր Հիսուսին սպանողները: Այո՛, մարդիկ էին: Այդ մասին պարզ գրված է Գործք Առաքելոցում (2:23) և 1 Թեսաղոնիկեցիների թղթում (2:15): Տեր Հիսուսը նրանց թույլ տվեց դա անել: Սա հենց Իր կյանքը վար դնելու իշխանությունն ունենալու արտահայտությունն էր: Բացի դրանից՝ Նա «Հոգին ավանդեց» (Հովհ. 19:30). դա Իր անձնական գործության ու կամքի գործողությունն էր:

«**Այս պատվերը Իմ Հորից ստացա**»: Հայրը հանձնարարեց կամ պատվիրեց Տիրոջը Իր կյանքը տալ և դարձյալ հառնել մեռելներից: Նրա մահն ու հարությունն էական գործողություններ էին Հոր կամքը կատարելու համար: Դրա համար էլ Նա ենթարկվեց մահին և Սուրբ Գրքի համաձայն՝ հարություն առավ երրորդ օրը:

Լ. Բաժանում հրեաների մեջ (10:19-21)

10:19. Տեր Հիսուսի խոսքերը հերթական **բաժանման** առիթ հանդիսացան **հրեաների մեջ**: Քրիստոսի մուտքը երկիր, ընտանիքներ և մարդկային սիրտ ավելի շուտ սուր է բերում, ոչ թե խաղաղություն: Միայն Նրան՝ որպես Տիրոջ ու Փրկչի ըն-

դունելով է, որ մարդ ճանաչում է Աստծո խաղաղությունը:

10:20-21. Տեր Հիսուսը երբևէ ապրած միակ կատարյալ Մարդն էր: Նա երբեք սխալ բան չի ասել կամ որևէ չար արարք կատարել: Սակայն մարդու սրտի ապականությունն այնպիսին էր, որ երբ Նա եկավ սիրո և իմաստության խոսքերով, մարդիկ ասացին. «**Նա դև ունի ու խելագար է**, ու Նրա խոսքերն ուշադրության արժանի չեն»: Սա, իհարկե, մարդկային ցեղի պատմության խավար կետերից մեկն է: **Ուրիշներն** էլ այլ ձևով էին մտածում: Նրանք ընդունում էին, որ Տեր Հիսուսի **խոսքերն** ու գործերը այնպիսին են, որ միայն լավ Անձնավորությունը կարող է անել, ոչ թե **դևը**:

Խ. Իր գործերով Հիսուսն ապացուցեց, որ Ինքն է Քրիստոսը (10:22-39)

10:22. Այս կետում պատմությունն ընդհատվում է: Տեր Հիսուսն այլևս փարիսեցիների հետ չէր խոսում, այլ ընդհանուր առմամբ դիմում էր հրեաներին: Մենք չգիտենք, թե այս համարների միջև որքան է տևողությունը: Ի դեպ, այստեղ միակ նշումն է Աստվածաշնչում, որ հիշատակվում է **Նավակատիքի** տոնը, երբայերեն՝ Հանուքքահ: Համարվում է, որ այս տոնը հաստատվել է Հուդա Մակարայեցու կողմից, երբ կրկին կատարել են տաճարի նավակատիքը այն բանից հետո, երբ մ.թ.ա. 165թ.-ին այն պղծեց Անտիոքոս Էպիդաները: Դա ոչ թե Տիրոջ, այլ հրեաների կողմից հաստատված ամենամյա տոն էր: Եվ **ձմեռ էր** ոչ միայն օրացույցով, այլ նաև հոգևոր առումով:

10:23-24. Տիրոջ հրապարակային ծառայությունը գրեթե ավարտված էր, և Նա պատրաստվում էր ցույց տալու Հայր Աստծո հանդեպ ունեցած Իր ամբողջական նվիրվածությունը խաչի մահով: **Սողոմոնի սրահը** Հերովդեսի տաճարին հարակից փակ տարածք էր: Այնտեղ, որտեղ Տերը շրջում էր, շատ ազատ տարածություն կար, որը հրեաներին թույլ էր տալիս հավաքվել Նրա շուրջը:

«Հրեաներն էլ Նրան շրջապատեցին և ասացին Նրան. «Մինչև ե՞րբ մեզ տարակուսանքի մեջ պիտի պահես, եթե Դու Քրիստոսն ես, պարզորեն ասա մեզ»»:

10:25-26. Հիսուսը դարձյալ նրանց հիշեցրեց Իր խոսքերի ու գործերի մասին: Նա հաճախ էր նրանց ասել, որ Ինքն է Մեսիան, իսկ Նրա կատարած հրաշքներն էլ ապացուցում էին Իր հայտարարությունների ճշմարտացիությունը: Նա հրեաներին կրկին հիշեցրեց, որ հրաշքները Նա Իր Հոր իշխանությամբ և Նրա փառքի համար է կատարել: Այսպես անելով՝ Նա ցույց տվեց, որ Ինքն իսկապես Նա է, Ում Աստված ուղարկել է աշխարհ:

Մեսիային չընդունելու նրանց ցանկությունն ապացուցում էր, որ նրանք Իր ոչխարներից չեն: Եթե նրանք տրամադրված լինեին Նրան պատկանելու, պատրաստակամությամբ կհավատային Նրան:

10:27. Հաջորդ մի քանի համարներն ամենայն պարզությամբ սովորեցնում են, որ Քրիստոսի ոչ մի ճշմարիտ ոչխար չի կորչի: Հավատացյալի հավիտենական ապահովությունը մեծագույն փաստ է: Քրիստոսի ճշմարիտ ոչխարները լսում են Նրա ձայնը: Նրանք լսում են այն, երբ քարոզվում է Ավետարանը, և պատասխանում են՝ հավատով ընդունելով Նրան: Այնուհետև նրանք լսում են Նրա ձայնն ամեն օր ու հնազանդվում Նրա Խոսքին: Տեր Հիսուսը ճանաչում է Իր ոչխարներին: Նա յուրաքանչյուր ոչխարին իր անունով է ճանաչում: Ոչ մեկը չի մնում առանց Նրա ուշադրության: Ոչ մեկը չի կարող կորչել վրիպման կամ Իր կողմից անուշադրության պատճառով: Քրիստոսի ոչխարները հետևում են Նրան՝ սկզբում Նրա վրա ունեցած փրկարար հավատով, իսկ հետո՝ հնազանդությամբ:

10:28. Քրիստոսն Իր ոչխարներին հավիտենական կյանք է տալիս: Այդ կյանքը պետք է տևի հավերժ: Այդ կյանքը պայմանավորված չէ նրանց վարքով: Դա հավիտենական կյանք է, որին վերջ չկա: Բայց հավիտենական կյանքը նաև կյանքի որակ է: Դա հենց Իր՝ Տեր Հիսու-

սի կյանքն է: Այս կյանքն ի գորու է վայելել այն ամենը, ինչ Աստված տալիս է այստեղ՝ այս կյանքում, և այն հավասարապես համապատասխանում է մեր երկնային բնակարանին: Հատուկ ուշադրություն դարձրեք հետևյալ խոսքին. «... Եվ նրանք հավիտյան չեն կորչի»:³² Եթե Քրիստոսի որևիցե ոչխար կորչեր, ապա Տեր Հիսուսը մեղավոր կլիներ այն բանում, որ չի պահել խոստումը, իսկ դա հնարավոր չէ: Հիսուս Քրիստոսն Աստված է, և Նա չի կարող ձախողվել: Նա այս համարում խոստացել է, որ համաձայն Իր կամքի՝ ոչ մի ոչխար իր հավիտենականությունը դժոխքում չի անցկացնի:

Արդյոք սա նշանակո՞ւմ է, որ մարդը կարող է փրկություն ստանալ ու դրանից հետո ապրել այնպես, ինչպես իրեն է դուր գալիս: Կարո՞ղ է նա փրկություն ստանալ, իսկ հետո շարունակել տրվել այս աշխարհի մեղավոր վայելքներին: Ո՛չ, նա այլևս չի ցանկանա դրանք անել: Նա ցանկանում է հետևել Հովվին: Մենք քրիստոնեական կյանքով չենք ապրում, որպեսզի քրիստոնյաներ դառնանք կամ պահպանենք մեր փրկությունը: Քրիստոնեական կյանքով ենք ապրում, որովհետև մենք քրիստոնյաներ ենք: Մենք ուզում ենք սուրբ կյանքով ապրել ոչ թե նրա համար, որ գոուշանում ենք չկորցնել մեր փրկությունը, այլ ի երախտագիտություն Նրան, Ով մեռավ մեզ համար: Հավիտենական ապահովության վարդապետությունը չի խրախուսում թեթևամիտ կյանք, այլ ընդհակառակը՝ հզոր խթան է ծառայում սուրբ կյանքի համար: Ոչ ոք չի կարող հավատացյալին հափշտակել Քրիստոսի ձեռքից: Նրա ձեռքն ամենակարող է: Նրա ձեռքն արարեց աշխարհը և հիմա էլ պահում է այն: Չկա այնպիսի ուժ, որը կկարողանա հափշտակել ոչխարներին Նրա ձեռքից:

10:29. Հավատացյալը ոչ միայն Քրիստոսի ձեռքում է, այլ նաև գտնվում է Հոր ձեռքում: Սա կրկնակի ապահովության երաշխիքն է: Հայր Աստվածը բոլորից մեծ է, և ոչ մեկը չի կարող հավատացյալին Իմ Հոր ձեռքից հափշտակել:

10:30. Այժմ Տեր Հիսուսն Աստծուն հավասար լինելու ևս մեկ հայց է ավելացնում. «**Ես և Իմ Հայրը մեկ ենք**»: Հավանական է, որ այստեղ նկատի ունի, որ Քրիստոսն ու Հայրը հավասար գորություն ունեն: Հիսուսը քիչ առաջ խոսեց Քրիստոսի ոչխարներին պաշտպանելու իշխանության մասին: Դրա համար էլ Նա բացատրեց, որ Իր իշխանությունն այնպիսին է, ինչպիսին է Հայր Աստծո իշխանությունը: Իհարկե, նույնը ճշմարիտ է և վերաբերում է աստվածության բոլոր մյուս ստորադրյալներին: Տեր Հիսուս Քրիստոսն կատարյալ Աստված է և հավասար է Հորը ամեն բանում:

10:31. Հրեաների մոտ ոչ մի հարց չձագեց այն մասին, թե ինչ նկատի ունեն Փրկիչը: Նրանք հասկացան, որ Նա բացահայտորեն հռչակեց Իր աստվածությունը: Այդ պատճառով էլ նրանք **կրկին քարե վերցրին, որ Նրան քարկոծեն:**

10:32. Մինչ նրանք կկարողանային քարերը նետել, **Հիսուսը** նրանց հիշեցրեց **Հոր կողմից** Իր կատարած **շատ բարի գործերի** մասին: Իսկ հետո հարցրեց, թե Իր որ գործն էր նրանց գայրացրել, որ ուզում էին **քարկոծել** Իրեն:

10:33. Հրեաները ժխտեցին, թե ուզում են Նրան սպանել հրաշքների համար: Ավելի շուտ, նրանք ուզում էին Նրան քարկոծել՝ ենթադրելով, որ Նա Աստծուն **հայհոյում էր**, երբ հայտարարում էր Հայր **Աստծո** հետ Իր հավասարության մասին: Նրանք հրաժարվեցին ընդունել, որ Նա ավելին է, քան մարդը: Բայց Նրա հայտարարություններից նրանց համար լիովին ակնհայտ էր, որ Նա Իրեն **Աստված** է դարձնում: Այդպիսի բան նրանք չէին կարող թույլ տալ:

10:34. Այդ ժամանակ Տեր Հիսուսը հրեաների համար մեջբերում կատարեց Սաղմոս 82:6-ից: Նա այդ հատվածն անվանեց **Օրենքի** մի մասը: Այլ խոսքերով, այս համարը վերցված է ՀՎ-ից, որը նրանք ընդունում էին որպես Աստծո կողմից ներշնչված Խոսք: Համարը ամբողջությամբ այսպես է հնչում. «Ես ասացի. «Դուք աստ-

վածներ եք, ու դուք բոլորդ Բարձրյալի որդիներն եք»: Սաղմոսը հասցեագրված էր Իսրայելի դատավորներին: Նրանք **«աստվածներ»** էին անվանվում, ոչ թե որ իսկապես աստվածային էին, այլ որ Աստծուն էին ներկայացնում մարդկանց դատելիս: Երբայերեն լեզվում «աստվածներ» (*Elohim*) բառը տառացիորեն նշանակում է «հզորներ» և կարող է կիրառվել այնպիսի կարեվոր դեմքերի համար, ինչպիսին դատավորներն են: Սաղմոսի մնացած մասից պարզ է, որ նրանք ընդամենը մարդիկ են, ոչ թե աստվածություն, դրա համար էլ սխալ էին դատում և ի շահ նշանավոր անձերի՝ խեղաթյուրում էին արդարադատությունը:

10:35. Տերը Սաղմոսից այս համարը մեջբերեց՝ ցույց տալու, որ Աստված **աստվածներ** բառն օգտագործեց, որպեսզի նկարագրի այն մարդկանց, ում **Աստծո Խոսքն եկավ**: Ուրիշ խոսքով, այս մարդիկ Աստծո կողմից ուղարկվածներն էին: Նրանց միջոցով Աստված խոսում էր Իսրայել ժողովրդի հետ: «Նրանք ներկայացնում էին Աստծուն Իր իշխանության ու դատաստանի մեջ և օժտված էին Աստծո կողմից որոշված լիազորություններով»: «**Եվ Գիրքը չի եղծվի**», - ասաց Տերը՝ արտահայտելով Իր հավատը ՀՎ-ի ներշնչման վերաբերյալ: Նա ՀՎ-ի մասին խոսում է այնպես, ինչպես անթերի Գրությունների մասին, որոնք պետք է կատարվեն, և որոնց չի կարելի հերքել: Ոչ միայն մտքերը կամ գաղափարները, այլ նաև հենց Սուրբ Գրքի բառերը ներշնչված են: Նրա բոլոր ապացույցները հիմնված են այս մեկ՝ **«աստվածներ»** բառի վրա:

10:36. Տերը բերեց փաստարկներ «փոքրից մինչև մեծը»: Եթե ՀՎ-ում անարդար դատավորներն էին «աստվածներ» կոչվում, որքան ավելի իրավունք ունեն Նա ասելու, որ Ինքն Աստծո Որդին է: Աստծո Խոսքը (Բանը) նրանց *եկավ*. Նա էր և է Աստծո Խոսքը: Նրանք *կոչվեցին* աստվածներ, իսկ Նա էր և է Աստված: Նրանք երբեք իրենց մասին չեն ասել, որ **Հայրը սրբեց և աշխարհ առաքեց**: Նրանք ծնվել են ընկած Ադամի բոլոր մյուս որդիների պես: Բայց

Հիսուսը սրբացվել էր **Հայր Աստծուց** ի հավիտենից, որպեսզի դառնա աշխարհի Փրկիչը, և Նա **աշխարհ ուղարկվեց** երկրնքից, որտեղ բնակվում էր Իր Հոր հետ: Այսպես, Հիսուսը լիակատար իրավունք ուներ Աստծո հետ հավասարություն պնդելու: Հաստատելով, որ Ինքն **Աստծո Որդին** է, Հոր հետ հավասար է, Նա դրանով Աստծուն չէր հայհոյում: Հրեաներն իրենք էին օգտագործում «աստվածներ» եզրույթը՝ դիմելով ապականված մարդկանց, որոնք պարզապես Աստծո ներկայացուցիչներն ու դատավորներն էին: Որքան ավելի կարող է Նա հայտարարել այդ տիտղոսն ունենալու Իր իրավունքի մասին, եթե իրականում Նա էր և է Աստված: Լավ է ասել Սամուել Գրիմը.

«Հրեաները մեղադրում էին Նրան, որ Նա Իրեն Աստված էր անվանում: Նա չի հերքում, որ Իրեն Աստված է անվանում: Բայց հերքում էր, որ հայհոյել է այն հիմքի վրա, որը կարող էր ամբողջությամբ Նրան արդարացնել նույնիսկ աստվածային պատիվներ հայցելու մեջ, այսինքն՝ որ Նա Մեսիան է, Աստծո Որդին, Էմմանուելը: Այն որ հրեաները հույս չունեին, որ Նա կիրաժարվի Իր բարձր կոչումներից, ակնհայտ է Նրա հանդեպ ի հայտ եկող երկարատև թշնամությունից: Տե՛ս համար 39-ը»:³³

10:37. Իր աստվածային առաքելությունն ապացուցելու համար Փրկիչը կրկին դիմեց Իր կատարած հրաշքերին: Բայց ուշադրություն դարձրեք այս արտահայտությանը. «... **Իմ Հոր գործերը**»: Հրաշքներն ինքնին չեն հանդիսանում աստվածությունը հաստատող ապացույցներ: Աստվածաշնչում կարդում ենք ժամանակ առ ժամանակ հրաշքներ կատարելու իշխանություն ունեցող չար էակների մասին: Բայց Տիրոջ հրաշքները Նրա **Հոր գործերն էին**: Դրանք երկակի ապացույցներ էին այն բանի, որ Նա Մեսիան է: Առաջինը՝ ՀԿ-ը կանխատեսել էր, որ այդ հրաշքները պիտի կատարվեն Մեսիայի կողմից: Երկրորդ՝ դրանք զթասարության ու կարեկցության հրաշքներ էին, որոնք օգտակար էին մարդ-

կանց. ոչ մի չար մարդ դրանք չի կարող կատարել:

10:38. Ավելի լավ հասկանալու համար Ռեյլը 38-րդ համարն այսպես է վերաձևակերպել.

«Եթե Ես Իմ Հոր գործերն եմ կատարում, չնայած որ համոզված չես Իմ խոսքերին, ապա հավատա՛ Իմ գործերին: Եթե հակառակվում ես Իմ խոսքերի վկայությանը, համաձայնվի՛ր Իմ գործերի վկայությանը: Այս ձևով սովորի՛ր ճանաչել ու հավատալ, որ Ես և Իմ Հայրը մեկ ենք, որ Նա Իմ մեջ է և Ես՝ Նրա, և որ Իմ հայտարարության մեջ, որ Ես Նրա Որդին եմ, ոչ մի հայհոյություն չկա»:

10:39. Հրեաները հասկացան, որ Իր նախորդ պահանջներից հրաժարվելու փոխարեն Տեր Հիսուսն ավելի հաստատում էր դրանք: Դրա համար էլ նրանք ձեռնարկեցին Նրան ձերբակալելու հերթական փորձը, բայց Նա նորից խույս տվեց նրանցից: Ծատ չէր մնացել սպասելու, երբ Նա թույլ կտար նրանց բռնել Իրեն, բայց դեռ Նրա ժամը չէր հասել:

VI. ԱՏՏԾՈ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՏԱՐԻՆ. ԲԵՐԻԱ (10:40-11:57)

Ա. Հիսուսը հեռանում է Հորդանանի մյուս կողմը (10:40-42)

10:40. Տերը նորից գնաց Հորդանանի մյուս կողմը, այնտեղ, որտեղ սկզբում սկսել էր Իր հրապարակային ծառայությունը: Վերջին էին մոտենում երեք տարվա զարմանահրաշ խոսքերն ու գործերը: Նա դրանք վերջացնում էր այնտեղ, որտեղից սկսել էր՝ հաստատված հուդայական կարգերից դուրս, մերժման ու միայնակության վայրերում:

10:41. Նրա մոտ եկածներից շատերը, հնարավոր է, անկեղծ հավատացյալներ էին: Նրանք ուզում էին Նրա հետ կիսվել անպատվությունը, Նրա հետ դուրս գալ Իսրայելի ճամբարից: Այդ հավատացյալներն արժանին մատուցեցին **Հովհաննես Մկրտչին**: Նրանք հասկանում էին, որ Հով-

հաննեսի ծառայությունը տպավորիչ և սենսացիա չէր, այլ **ճշմարիտ էր**: Տեր Հիսուսի մասին նրա բոլոր ասածները կատարվեցին Փրկչի ծառայության ժամանակ: Սա պետք է քաջալերի յուրաքանչյուր քրիստոնյայի: Մենք չենք կարող մեծ հրաշքներ գործել կամ մեզ վրա հրավիրել հասարակության ուշադրությունը, բայց գոնե կարող ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի մասին ճշմարիտ վկայություն տալ: Սա Աստծո աչքին շատ գնահատելի է:

10:42. Հաճելի է նշել, որ թեև Իսրայել ժողովուրդը ամբողջությամբ չընդունեց Տեր Հիսուսին, այնուամենայնիվ, նրանց մեջ գտնվեցին համեստ ու բաց սրտեր: Մեզ հայտնի է, որ **շատերն այնտեղ հավատացին Նրան**: Նույնն է պատահում բոլոր դարերում. ժողովրդի մեջ մի մնացորդ կա, որ փափագում է Տեր Հիսուսի կողքին լինել: Թեև աշխարհը նրանց հալածում, ատում և արհամարհում է, նրանք վայելում են Աստծո Որդու հետ ունեցած քաղցր հաղորդակցությունը:

Բ. Ղազարոսի հիվանդությունը (11:1-4)

11:1. Այժմ մոտենում ենք Տեր Հիսուսի *հանրային* ծառայության վերջին մեծ հրաշքին՝ մեռելին հարություն տալուն: Որոշ իմաստով սա բոլոր հրաշքերից մեծագույնն է: **Ղազարոսը** ապրում էր **Բեթանիա** կոչված ոչ մեծ գյուղում, որը գտնվում է Երուսաղեմից դեպի արևելք՝ մոտավորապես երկու մղոն (3.2 կմ) հեռավորության վրա: Նաև հայտնի է, որ **Բեթանիայում** էին ապրում **Մարիամն ու նրա քույր Մարթան**: Փինքը մեջբերում է կատարում եպիսկոպոս Ռեյլից.

«Թո՛ւյլ տվեք նկատել, որ Աստծո ընտրյալ զավակների ներկայությունն այն է, որ Աստծո աչքին հայտնի է դարձնում քաղաքներն ու երկրները: Նոր Կտակարանում նշված է Մարթայի ու Մարիամի գյուղի մասին, մինչ Մեմփիսն ու Թեբեքը նշված չեն»:³⁴

11:2. Հովհաննեսը բացատրում է, որ **դա այն Մարիամն էր Բեթանիայից, որ Տիրոջը յուզով օժեց և Նրա ոտքերն իր մա-**

զերով սրբեց: Այս անձնուրաց սիրո բացառիկ արտահայտությունը հատուկ ընդգծված է Սուրբ Հոգու կողմից: Տերը գոհ է, երբ Իր հետևորդները պատրաստ են սպացուցելու Իր հանդեպ ունեցած նրանց սերը:

11:3. Երբ Ղազարոսը հիվանդացավ, ըստ երևույթին, Տեր Հիսուսը գտնվում էր Հորդանան գետի արևելյան ափին: **Նրա քույրերը լուր ուղարկեցին**, որ Ղազարոսը, **ու՛մ Նա սիրում է, հիվանդ է**: Մի հուզիչ բան կա դրանում, թե այս քույրերն ինչպես են պատահածը հայտնում Տիրոջը: Հօգուտ նրա՝ որպես հատուկ փաստարկ նրանք հիշեցնում են իրենց եղբոր նկատմամբ տածած Նրա սերը, որպեսզի գա և օգնի:

11:4. **Հիսուսն ասաց. «Այս հիվանդությունը մահվան համար չէ»**: Մրանով Նա նկատի ուներ ոչ թե այն, որ Ղազարոսը չէր կարող մեռնել, այլ այն, որ **մահը** չէր լինելու **այս հիվանդության** վերջնական արդյունքը: Ղազարոսը կմեռնի, բայց հարություն կառնի մեռելներից: Հիվանդության իրական նպատակն **Աստծո փառքն էր, որպեսզի Աստծո Որդին դրանով փառավորվի**: Աստված թույլ էր տվել, որ դա այդ ձևով Իրեն կրկին որպես ճշմարիտ Մեսիա ներկայացներ: Մարդիկ կփառավորեին **Աստծուն** այդ մեծ հրաշքի համար:

Մենք իրավունք չունենք ենթադրելու, որ Ղազարոսի հիվանդությունն իր կյանքում ինչ-որ մեղքի հետևանքն էր: Ավելի շուտ, նա միշտ հիշվում է որպես նվիրված աշակերտ, ում Փրկիչը յուրահատուկ ձևով էր սիրում:

Գ. Հիսուսի ճանապարհորդությունը դեպի Բեթանիա (11:5-16)

11:5. Երբ հիվանդությունը մտնում է մեր տուն, մենք չպետք է համարենք, որ Աստված բարկացել է մեզ վրա: Այստեղ հիվանդությունն ավելի շուտ կապված էր Նրա սիրո հետ, քան բարկության. «Տերը, ու՛մ որ սիրում է, նրան էլ խրատում է»:

11:6-7. Ըստ տրամաբանության՝ մենք այսպես պետք է խորհեինք. եթե Տերն իսկա-

պես սիրում է այս երեք հավատացյալներին, կթողնի ամեն ինչ և կշտապի նրանց տուն: Տերը հակառակն արեց, **երբ լսեց** այդ լուրը, **երկու օր էլ մնաց այնտեղ, որտեղ գտնվում էր:** Եթե Տերը հապաղում է, դա չի նշանակում, որ Նա մերժում է մեզ: Մեր խնդրանքներին շտապ չպատասխանելով՝ Նա, հնարավոր է, մեզ սովորեցնում է սպասել, և եթե մենք համբերությամբ սպասենք, ապա կհայտնաբերենք, որ Նա մեր խնդրանքներին պատասխանում է ավելի զարմանալի կերպով, քան կարող էինք ակնկալել: Նույնիսկ Մարթայի, Մարիամի և Ղազարոսի նկատմամբ ունեցած սերը չկարողացավ ստիպել Քրիստոսին գործել որոշյալ ժամանակից շուտ: Նրա բոլոր արարքները ենթարկվում էին Հայր Աստծո կամքին և համապատասխանում աստվածային ժամանակացույցին:

Կորած թվացող այդ երկու օրերն անցնելուց **հետո** Տեր Հիսուսն **Իր աշակերտներին** առաջարկեց **նորից գնալ** Հրեաստան:

11:8. Աշակերտները շատ լավ էին հիշում, որ **հրեաներն ուզում էին** քարկոծել Քրիստոսին այն բանից հետո, երբ Նա տեսողություն պարզեց կույրին: Նրանք զարմանքով առարկեցին, որ ի շահ սեփական անվտանգության Նա նույնիսկ չպետք է մտածեր Հրեաստան ճամփորդության մասին:

11:9. Հիսուսը նրանց հետևյալը **պատասխանեց**, որ որպես կանոն մարդիկ կարող են աշխատել **օրական տասներկու ժամ**, քանի դեռ լույս է: Այդ ժամանակահատվածում մարդը սայթաքելու կամ ընկնելու վտանգներին չի ենթարկվում, **որովհետև տեսնում է, թե** ուր է գնում և ինչ է անում: Այս աշխարհի լույսը կամ ցերեկվա լույսը նրան պաշտպանում է սայթաքելուց և պատահական մահից:

Տիրոջ խոսքերի հոգևոր նշանակությունը սա է. Տեր Հիսուսը մինչև վերջ հնազանդվում էր Աստծո կամքին: Դրա համար էլ պետք չէր վախենալ, որ Նրան կարող են կյանքից զրկել նշանակված ժամկետից առաջ: Նա պաշտպանված կլինի այնքան

ժամանակ, մինչև որ ավարտին հասնի Նրա գործը:

Ինչ-որ իմաստով սա ճշմարիտ է յուրաքանչյուր հավատացյալի համար: Եթե Տիրոջ հետ սերտ հաղորդակցության մեջ ենք ապրում ու Նրա կամքն ենք կատարում, ապա երկրի վրա չկա այնպիսի ուժ, որ կարողանա մեզ կյանքից զրկել Աստծո որոշած ժամանակից շուտ:

11:10. Նա, ով գիշերն է քայլում, Աստծուն հավատարիմ չէ, այլ ըստ իր սեփական կամքի է գործում: Այդպիսի մարդը հեշտությամբ է **սայթաքում, որովհետև** իր ճանապարհը լուսավորող աստվածային ղեկավարում չունի:

11:11. Տերը խոսեց Ղազարոսի մահվան մասին՝ ասելով, որ նա *քնած է*: Տեղին է նշել, որ ՆԿ-ում «քուն» բառը *կորեք* չի օգտագործվում հոգու վերաբերյալ, այլ միայն մարմնի: Սուրբ Գիրքը չի սովորեցնում, որ մեռած մարդու հոգին գտնվում է քնած վիճակում: Հավատացյալի հոգին գնում է, որպեսզի Քրիստոսի հետ լինի, որը անհամեմատ ավելի լավ է: Այստեղ Տեր Հիսուսը ցույց տվեց Իր ամենագիտությունը: Նա գիտեր, որ Ղազարոսն արդեն մեռել էր, չնայած Նրան հաղորդեցին, որ Ղազարոսը հիվանդ է: Նա գիտեր, որովհետև Նա Աստված է: Յուրաքանչյուր մարդ կարող է արթնացնել մյուսին ֆիզիկական քնից, բայց միայն Տերը կարող էր արթնացնել Ղազարոսին մահից: Այստեղ Հիսուսը արտահայտում է ճիշտ դա անելու Իր մտադրությունը:

11:12. Նրա աշակերտները չհասկացան քնի մասին Տիրոջ խոսքերը: Նրանք չէին պատկերացնում, որ Նա մահվան մասին է խոսում: Գուցե ենթադրում էին, որ քունը վկայում էր **առողջանալու մասին**, և եզրակացրին, որ եթե Ղազարոսը կարող է խորը քնել, ուրեմն ճգնաժամն անցել է, նա **կառողջանա**: Կարիք չկա նրան օգնելու համար Բեթանիա գնալ: Հավանաբար աշակերտները վախենում էին իրենց սպառնացող վտանգից և սա պատճառ բռնեցին, որպեսզի չգնան Մարիամի և Մարթայի տուն:

11:13-14. Այստեղ պարզ ասված է, որ քնի մասին **ասելով՝ Հիսուսը** նկատի ունեւր **մահը**, բայց Նրա աշակերտները դա չհասկացան: Չի կարող ոչ մի թյուրըմբռնում լինել: **Հիսուսը հայտնապես** հայտարարեց Իր աշակերտներին. «**Ղազարոսը մեռավ**»: Ինչպիսի՛ հանգստությամբ աշակերտներն ընդունեցին այդ լուրը: Նրանք չհարցրին Տիրոջը. «Դու որտեղի՞ց գիտես»: Նա լիակատար վստահությամբ ասաց, և նրանք կասկածի չենթարկեցին Նրա հայտնածը:

11:15. Տեր Հիսուսին չուրախացրեց այն, որ Ղազարոսը մեռավ. Նա **ուրախացավ**, որ այդ ժամանակ **այնտեղ՝** Բեթանիայում **չէր**: ՆԿ-ում ոչ մի տեղ չի նշված, որ Տիրոջ ներկայությամբ մարդ մահանար: Աշակերտները կարող էին ավելի մեծ հրաշք տեսնել, քան մահվան կանխարգելումը: Նրանք կտեսնեն, թե ինչպես է մարդը մեռելների մեջից հարություն առնում: Շնորհիվ դրա՝ նրանց հավատը կամրանա: Ահա թե ինչու Տեր Հիսուսն ասաց, որ **ուրախանում է** նրանց համար, որ Նա Բեթանիայում չէր:

Նա հավելեց. «... **Որ դուք հավատարք**»: Տերը նկատի չունեւր, թե աշակերտները չեն հավատում Իրեն: Իհարկե, նրանք հավատում էին: Բայց հրաշքը, որ նրանք պիտի տեսնեին Բեթանիայում, պիտի շատ գորացներ Նրա վրա ունեցած նրանց հավատը: Դրա համար էլ Նա քաջալերում էր նրանց Իր հետ գալ:

11:16. Թովմասը ենթադրում էր, որ եթե Տեր Հիսուսը գնա այդ տարածաշրջան, հրեաները կսպանեն Նրան: Նա վստահ էր, որ իրենք էլ կսպանվեին, եթե Հիսուսի հետ գնային: Հոռետեսությամբ նա աշակերտներին համոզեց ուղեկցել Հիսուսին: Նրա խոսքերը ոչ թե մեծ հավատ ու համարձակություն են արտահայտում, այլ հուսահատություն:

Գ. Հիսուսն է հարությունն ու կյանքը (11:17-27)

11:17-18. Ղազարոսի **չորս օր** գերեզմանում մնալը ապացուցում էր, որ նա իսկա-

պես մեռած էր: Նկատեցե՛ք, թե Սուրբ Հոգին ինչպես է ամեն բան նախատեսել, որպեսզի ցույց տա, որ Ղազարոսի կենդանանալն իրական հրաշք էր: Ղազարոսը պետք է մեռած լինեւր լրաբերների՝ Հիսուսին փնտրելու գնալուց հետո: Տեր Հիսուսը գտնվում էր Բեթաբարայում, որը Բեթանիայից մեկ օրվա ճանապարհ էր: Իմանալով Ղազարոսի հիվանդության մասին՝ Հիսուսը ևս երկու օր մնաց այնտեղ: Այնուհետև Բեթանիա ճանապարհորդությունը ևս մեկ օր իլեց: Ահա և այն չորս օրերի բացատրությունը, որոնք Ղազարոսն անցկացրեց գերեզմանում:

Ինչպես վերևում հիշվեց, **Բեթանիան** ընկած էր **Երուսաղեմից** դեպի արևելք՝ մոտավորապես **երկու մղոն** հեռավորության վրա (15 ասպարեգ, կամ 3.2 կմ):

11:19. Բեթանիայի՝ Երուսաղեմին մոտ գտնվելը **հրեաներից շատերին** հնարավորություն տվեց **գալու Մարթայի և Մարիամի մոտ, որպեսզի նրանց մխիթարեն իրենց եղբոր համար**: Նրանք նույնիսկ չէին ենթադրում, որ շուտով նրանց մխիթարության կարիքը լիովին չէր զգացվելու, քանի որ այդ սգո տունը պետք է վերածվեր մեծ ուրախության ու ցնծության բնակարանի:

11:20. Երբ Մարթան լսեց, թե Հիսուսը գալիս է, անմիջապես գնաց և դիմավորեց Նրան: Հանդիպումը կայացավ գյուղի սահմաններից դուրս: Ասված չէ, թե ինչու **Մարիամը** մնաց **տանը**: Գուցե նա չէր լսել Հիսուսի ժամանման մասին լուրը կամ կաթվածահար էր եղել վշտից: Միգուցե պարզապես աղոթքով ու հույսով սպասում էր: Արդյոք զգո՞ւմ էր, թե ինչ կկատարվի Տիրոջ հետ մտերմության շնորհիվ: Մենք չգիտենք:

11:21. Մարթայի հավատը, թե Հիսուսը կարող էր կանխել Ղազարոսի մահը, ճշմարիտ հավատ էր, բայց կատարյալ չէր: Մարթան կարծում էր, որ Հիսուսը կարող էր դա անել միայն այն դեպքում, եթե Ինքը նրա հետ լինեւր: Նա չէր հասկանում, որ Հիսուսը կարող էր մարդուն բուժել տարածության վրա՝ նրանից հեռու գտնվելով,

նրա մտքով իսկ չէր անցնում, որ Նա կարող է կենդանացնել մեռածին: Հաճախ վշտի պահերին մենք Մարթայի պես ենք վարվում: Կարծում ենք, եթե այս կամ այն պրեպարատը կամ դեղը հայտնաբերեն, ապա մեր սիրելի հարազատները չեն մեռնի: Բայց ամեն ինչ Աստծո ձեռքերում է գտնվում, և առանց Նրա թույլատրության՝ մեր հարազատների հետ ոչինչ չի պատահի:

11:22. Կրկին փայլեց այս նվիրյալ քրոջ հավատը: Նա չգիտեր, թե Տեր Հիսուսն *ինչպես* կօգնի, բայց հավատում էր, որ Նա կանի դա: Վստահ էր, որ **Աստված** Նրան կտա այն, ինչ Նա խնդրի, և այդ թվացյալ ողբերգությունն ինչ-որ լավ բանի կփոխի: Բայց նույնիսկ հիմա նա չհամարձակվեց ենթադրել, որ նրա եղբայրը մեռելներից հարություն կառնի: «Խնդրել» բառը, որն օգտագործում է Մարթան, սովորաբար կիրառում էին Արարչին թախանձողներին կամ Նրան աղոթողներին նկարագրելու համար: Սրանից հստակ է դառնում, որ Մարթան դեռ չէր ընդունել Տեր Հիսուսի աստվածությունը: Հասկացել էր, որ Նա մեծ ու ոչ սովորական Մարդ է, բայց հավանաբար ոչ ավելի մեծ, քան հին մարգարեները:

11:23. Որպեսզի նրա հավատն ավելի մեծ բարձունքների հասցնի, Տեր Հիսուսը մի ցնցող հայտարարություն արեց, որ Ղազարոսը նորից **հարություն** կառնի: Հիանալի է տեսնել, թե Տերն ինչպես է գրուցում այս վշտոտ կնոջ հետ՝ քայլ առ քայլ նրան ուղղորդելով հավատալու Իրեն՝ որպես Աստծո Որդու:

11:24. **Մարթան** հասկանում էր, որ մի օր Ղազարոսը **հարություն պիտի առնի** մեռելներից, բայց երբեք չէր կարծում, որ դա կարող է կատարվել հենց այդ օրը: Նա հավատում էր մեռելների հարությանը և հասկանում էր, որ դա կկատարվի այն օրը, որ նա անվանեց **«վերջին օրում»**:

11:25. Տիրոջ հաջորդ հայտարարությունը հավասարագոր է հետևյալ խոսքերին. «Մարթա՛, դու Ինձ չես հասկանում: Ես

նկատի չունեմ, որ Ղազարոսը հարություն կառնի վերջին օրը: Ես եմ Աստված, և Իմ իշխանության տակ են **հարությունն ու կյանքը**: Ես կարող եմ Ղազարոսին մեռելներից վեր հանել հենց հիմա և կանեմ դա»:

Այնուհետև Տերն անդրադարձավ այն ժամանակին, երբ բոլոր ճշմարիտ հավատացյալները հարություն կառնեն: Դա կկատարվի, երբ Տեր Հիսուսը երկրորդ անգամ գա, որպեսզի Իր ժողովրդին տանի տուն՝ Երկինք:

Այն ժամանակ հավատացյալների երկու խումբ է լինելու. նրանք, ովքեր հավատի մեջ են մահացել, և նրանք, ովքեր դեռ ողջ են Նրա վերադարձի պահին: Առաջինների համար Նա կգա որպես *Հարություն*, իսկ երկրորդների համար՝ որպես *Կյանք*: Առաջին խմբի մասին խոսվում է 25-րդ համարի վերջում. **«Ով հավատում է Ինձ, թեև մեռնի, պիտի՛ ապրի»**: Սա նշանակում է, որ այն հավատացյալները, ովքեր մահացել են մինչ Բրիստոսի գալուստը, հարություն են առնելու մեռելներից:

Բըրքիթը նկատում է.

«Օ՛հ, սե՛ր, դու գորեղ ես մահից: Գերեզմանը չի կարող բաժանել Բրիստոսին ու Նրա բարեկամներին: Մյուս բարեկամները մեզ ուղեկցում են մինչև գերեզման, իսկ հետո՝ լքում: Բայց ո՛չ կյանքը, ո՛չ մահը չեն կարող բաժանել մեզ Բրիստոսի սիրուց»:³⁵

Բենգելը մեկնաբանում է. «Սա հիանալիորեն ներդաշնակ է աստվածային կարգի հետ, ըստ որի՝ ոչ մեկը մեռած չի կարող համարվել, քանի դեռ Կյանքի Իշխանը ներկա է»:

11:26. Երկրորդ խմբի հավատացյալների մասին ասված է 26-րդ համարում: Նրանք, ովքեր ողջ կլինեն Փրկչի գալստյան ժամանակ և կհավատան Նրան, **երբեք չպիտի մեռնեն**: Նրանք մեկ ակնթարթում հանկարծակի կփոխվեն և տուն՝ Երկինք, կվերցվեն նրանց հետ, ովքեր հարություն են առել մեռելներից: Ինչպիսի՛ թանկարժեք ճշմարտություններ բացվեցին մեզ համար

Ղազարոսի մահվան հետևանքով: Աստված դառնությունը քաղցրության է փոխում և գեղեցկություն է տալիս մոխրի փոխարեն: Իսկ հետո Տերը, որպեսզի փորձի Մարթայի հավատը, նրան կարևոր հարց տվեց. «**Պու հավտո՞ւմ ես սրան»:**

11:27. Մարթայի հավատը բոցավառվեց կեսօրվա փայլով: Նա ընդունեց, որ Հիսուսը **Քրիստոսն է Աստծո Որդին**, Ով, ինչպես նախապես ասել էին մարգարեները, պետք է **աշխարհ գար:** Պետք է նշել, որ Մարթան այդ դավանությունը կատարեց *նախքան* Հիսուսը մեռելներից կհարուցաներ նրա եղբորը:

Ե. Հիսուսը արտասվում է Ղազարոսի գերեզմանի մոտ (11:28-37)

11:28-29. Այս դավանությունից անմիջապես հետո Մարթան սլացավ ետ՝ գյուղ, ու շնչակտուր հաղորդեց Մարիամին. «**Վարդապետը եկել է և կանչում է քեզ»:** Տիեզերքի Արարիչն ու աշխարհի Փրկիչը ժամանել էր Բեթանիա ու **կանչում էր** նրան: Ճիշտ նույնն է կատարվում այսօր: Այդ հիանալի Անձնավորությունը կանգնել ու մարդկանց կանչում է Ավետարանի խոսքերով: Յուրաքանչյուրի համար հնչում է իր սրտի դուռը բացելու և Փրկչին ներս թույլատրելու կոչը: Մարիամի պատասխանը անմիջական էր: Նա ժամանակ չվատնեց, այլ **շտապով վեր կացավ** և գնաց Հիսուսի մոտ:

11:30-31. **Հիսուսը** Մարիամին ու Մարթային հանդիպեց Բեթանիա գյուղի սահմաններից դուրս:

Հրեաները չգիտեին, որ Հիսուսը մոտակայքում է, քանի որ Մարթան ինչ-որ ասաց Մարիամին, միայն իրենց էր հայտնի: Բնական է՝ նրանք կարծում էին, թե Մարիամն ուղևորվեց **գերեզման, որ այնտեղ լա:**

11:32. Մարիամը Փրկչի **ոտքերն ընկավ:** Հնարավոր է, որ դա երկրպագության ակտ լիներ, կամ միգուցե նա պարզապես լի էր վշտով: Մարթայի նման նա ավստասնք հայտնեց, որ Հիսուսը Բեթանիայում չէր եղել, այլապես նրանց **եղբայրը չէր մեռնի:**

11:33. Տեսնելով Մարիամի և նրա բարեկամների վիշտը՝ Հիսուսն Ինքն էլ **Իր հոգում խիստ խռովվեց ու հուզվեց:** Անկասկած, Նա մտածում էր այն բոլոր տառապանքների, վշտերի և մահերի մասին, որոնք աշխարհի մտան մարդու մեղանչելու հետևանքով: Սա Նրան ներքին տառապանք պատճառեց:

11:34. Տերը, իհարկե, գիտեր՝ **ուր** էր թաղված Ղազարոսը, բայց հարցրեց, որպեսզի ակնկալիք արթնացնի, հավատը քաջալերի և մարդկանց կոչ անի հետագա համագործակցության: Անկասկած, լացողներն ամենայն լրջությամբ ու անկեղծ ցանկությամբ Տիրոջը տարան գերեզմանի մոտ:

11:35. Այս համարը ամենակարճն է անգլերեն Աստվածաշնչում:³⁶ Սա այն երեք տեղերից մեկն է ՆԿ-ում, որտեղ ասված է, որ Տերն **արտասվում է:** Նա լացեց՝ Երուսաղեմի համար սգալով, ինչպես նաև Գեթսեմանի պարտեզում: Այն, որ **Հիսուսն արտասվեց**, վկայում է Նրա մարդկային ճշմարիտ բնության մասին: Նա վշտի իրական արցունքներ թափեց՝ մարդկանց մեջ տեսնելով մեղքի ահավոր հետևանքը: Այն, որ **Հիսուսն արտասվեց** մահվան ներկայությամբ, խոսում է այն մասին, որ քրիստոնյաների համար բնական է լաց լինելը, երբ նրանց սիրելիները մահանում են: Սակայն քրիստոնյաները չեն սգում մյուսների՝ հույս չունեցողների պես:

11:36. **Հրեաների** համար Մարդու Որդու արցունքները Ղազարոսի հանդեպ ունեցած Նրա սիրո վկայություն էին: Իհարկե, հրեաները ճիշտ էին: Բայց Հիսուսը *նրանց* էլ էր անմահ ու մեծ սիրով սիրում, իսկ նրանցից շատերը չկարողացան դա հասկանալ:

11:37. Տեր Հիսուսի ներկայությունը կրկին հարցեր առաջացրեց մարդկանց մեջ: Նրանցից ոմանք ճանաչեցին Նրան, Ով բացել էր **կույրի** աչքերը: Նրանք զարմացան, ինչո՞ւ Նա **չէր կարող այնպես անել**, որ Ղազարոսն էլ **չմեռներ:** Իհարկե, Նա կարող էր այդպես անել, բայց դրա փոխարեն Նա պատրաստվում էր ավելի նշա-

նակալից հրաշք կատարելու, որը մեծ հույս կրերի հավատացյալ հոգիներին:

2. Յոթերորդ հրաշքը՝ Ղազարոսի հարությունը (11:38-44)

11:38. Հավանաբար Ղազարոսի **գերեզմանը** ստորգետնյա **քարանձավ էր**, ուր կարելի էր իջնել սանդուղքով կամ փորված աստիճաններով: Քարանձավի մուտքին քար էր դրված: Քարանձավը Տեր Հիսուսի գերեզմանից այն բանով էր տարբերվում, որ վերջինս ժայռափոր էր, և մարդը կարող էր հանգիստ ներս մտնել առանց վեր բարձրանալու կամ ներքև իջնելու:

11:39. Հիսուսը ներկաներին հրամայեց **քարը վերցնել** գերեզմանի մուտքից: Նա կարող էր հենց Ինքն էլ միայն խոսքով անել դա: Սակայն Աստված մարդկանց համար սովորաբար չի անում այն, ինչ նրանք կարող են իրենք անել:

Մարթան սարսռեց գերեզմանը բացելու մտքից: Նա գիտեր, որ իր եղբոր մարմինը **չորս օր է՝** այնտեղ է, և վախենում էր, որ արդեն քայքայվել էր սկսել: Հավանաբար Ղազարոսի մարմինը չէին փորձել անուշահոտություններով պատել: Նրան թաղել էին հենց մահվան օրը, որովհետև այդպես էր այդ ժամանակվա սովորությունը: Կարևոր է այն փաստը, որ Ղազարոսը գերեզմանում էր գտնվել **չորս օր**, որն ամբողջովին բացառում է քնած կամ ուշագնաց վիճակում լինելու հավանականությունը: Բոլոր հրեաներն էլ գիտեին, որ նա **մեռած** էր: Նրա հարությունը կարելի է բացատրել միայն հրաշքով:

11:40. Պարզ չէ, թե **Հիսուսը** երբ է ասել այս համարի խոսքերը: 23-րդ համարում Նա ասաց, որ Մարթայի եղբայրը հարություն կառնի: Բայց այստեղ ասված խոսքերը նրան նախկինում ասվածի բովանդակությունն էր: Ուշադրություն՝ դարձրեք այս համարում խոսքերի հաջորդականությանը. «... **Հավատաս... կտեսնես**»: Դա նման է, եթե Տեր Հիսուսն ասեր. «Եթե միայն հավատաք, ապա կտեսնեք, որ Ես հրաշք կանեմ, որը միայն Աստված է ի գորու կատարելու: Դուք **կտեսնեք** Իմ մեջ հայտ-

նրված **Աստծո փառքը**: Բայց սկզբում դուք պետք է **հավատաք**, իսկ հետո **կտեսնեք**»:

11:41. Ուրեմն **քարը** գերեզմանից վերցրին: Հրաշքը կատարելուց առաջ **Հիսուսը** շնորհակալություն հայտնեց Իր **Հորը** նրա համար, որ Նա **լսեց** Իր աղոթքը: Այս գրվածում հրաշքին նախորդող Տեր Հիսուսի որևիցե աղոթք չի հիշատակվում: Բայց Նա անվիճելիորեն խոսում էր Իր Հոր հետ այս ողջ ժամանակահատվածում և աղոթում, որ Ղազարոսի հարությամբ Աստծո անունը փառավորվի: Այստեղ Նա շնորհակալություն հայտնեց Հորը՝ սպասելով տեղի ունենալիք իրադարձությանը:

11:42. Հիսուսն աղոթեց պարզ, լսելի կերպով, որպեսզի **ժողովուրդը հավատա**, որ Հայրն **ուղարկեց** Իրեն, և ասաց Նրան, թե ինչ անի ու խոսի, և որ Նա միշտ գործում է բացարձակորեն հնազանդվելով Հայր Աստծուն: Այստեղ նորից ընդգծվում է Հայր Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի իրական միությունը:

11:43. Սա ՆԿ-ի այն քիչ դեպքերից է, որտեղ ասված է, որ Տեր Հիսուսը **մեծ ձայնով կանչեց**: Ոմանք ենթադրում են, որ եթե Նա **Ղազարոսին** իր անունով չկանչեր, ապա բոլոր մեռելները դուրս կգային գերեզմաններից:

11:44. Ղազարոսն ինչպե՞ս **դուրս** եկավ: Ոմանք կարծում են, որ նա գերեզմանից դուրս եկավ կաղալով, ուրիշները ենթադրում են, որ չորեքթաթ սողաց, ոմանք էլ մատնանշում են, որ նրա մարմինը՝ ձեռքերն ու ոտքերը, ամուր պատանված էին թաղման կտավներով, և նա չէր կարող ինքնուրույն դուրս գալ: Նրանք ենթադրում են, որ նրա մարմինը օդի միջով է եկել, և ոտքերը գետնին են կպել միայն Տեր Հիսուսի առջև: Այն, **որ նրա երեսը վարշամակով էր փաթաթված**, կրկին ապացուցում է, որ նա մեռած էր: Ոչ մեկը չէր կարող այդպիսի գործվածքով փաթաթված **դեմքով** չորս օր ապրել: Եվ նորից Տերը մարդկանց ներգրավում է մասնակցության՝ հրամայելով նրանց **արձակել** Ղազարոսին և նրան **գնալու** հնարավորություն տալ: Միայն Հի-

սուս Քրիստոսը կարող է մեռելներից հարուցանել, բայց Նա մեզ հանձնարարում է վերցնել գայթակղության քարը և արձակել նախապաշարումների ու սնահավատության թաղման անթափանց կտավները:

Է. Հավատացյալ և ոչ հավատացյալ հրեաները (11:45-57)

11:45-46. **Ճատ** ներկաների համար այս հրաշքն անժխտելի վկայություն դարձավ Տեր Հիսուս Քրիստոսի աստվածության մասին, և նրանք **հավատացին Նրան:** Ո՛վ, եթե ոչ Աստված, կարող էր մարմինը դուրս կանչել գերեզմանից այն դեպքում, երբ այն չորս օր մեռած պառկած էր այնտեղ:

Բայց մարդու կյանքի վրա հրաշքի ազդեցությունը կախված է նրա բարոյական վիճակից: Չար, ապստամբ և անհավատ սիրտը չի հավատա նույնիսկ այն ժամանակ, երբ տեսնի, թե ինչ-որ մեկը հարություն է առել մեռելներից: Այսպես էր նաև այստեղ: Հրաշքին վկա եղող հրեաներից ոմանք, չնայած այդպիսի անվիճելի ապացույցին, չցանկացան որպես իրենց Մեսիա ընդունել Տեր Հիսուսին: Նրանք **գնացին փարիսեցիներին** հաղորդելու Բեթանիայում կատարվածը: Միգուցե նրանք փարիսեցիներին հայտնեցին, որպեսզի նրանք էլ հավատան Հիսուսին: Հավանաբար նրանք այդպես վարվեցին, որպեսզի փարիսեցիներին ավելի շատ տրամադրեն Տիրոջ դեմ ու դրդեն Նրան սպանելու:

11:47. **Այն ժամանակ գլխավոր քահանաներն ու փարիսեցիները** պաշտոնական **ատյան գումարեցին**, որպեսզի քննարկեն ինչպիսի գործողություններ ձեռնարկել: «**Ի՞նչ անենք**» հարցը նշանակում է «Ինչպե՞ս ենք պատրաստվում դրան արձագանքելու»: Ինչո՞ւ ենք մենք այսպես դանդաղում գործողությունների մեջ: **Այդ Մարդը շատ հրաշքներ է անում, իսկ մենք Նրան կանգնեցնելու համար ոչինչ չենք անում**»: Այս խոսքերով հրեա առաջնորդներն իրենք իրենց էին դատապարտում: Նրանք ընդունում էին, որ Տեր Հիսուսը **շատ հրաշքներ է անում**: Այդ դեպքում ին-

չո՞ւ չհավատացին Նրան: Նրանք **չցանկացան** հավատալ, որովհետև Փրկչից առավել նախընտրեցին իրենց մեղքերը:

Ռեյլը լավ է ասում.

«Սա սքանչելի խոստովանություն է: Նույնիսկ Տիրոջ ամենակարկառուն թըռնամիներն ընդունում են, որ մեր Տերը հրաշքներ է արել, այն էլ շատ հրաշքներ: Արդյոք մենք կարո՞ղ ենք կասկածել, որ եթե կարողանային, կհերքեին Նրա հրաշքների ճշմարտացիությունը: Բայց նրանք կարծես չեն էլ փորձում դա անել: Նրանք բավական շատ, բավական մասսայական հրաշքների ուշադիր վկաներն էին, ուստի ինչպե՞ս կհամարձակվեին ուրանալ դրանք: Թող ժամանակակից անաստվածներն ու սկեպտիկներն աշխատեն բացատրել, թե այս փաստի առկայությամբ ինչպես կարող են մեր Տիրոջ հրաշքների մասին խոսել որպես խաբելու և խաբեության մասին: Եթե մեր Տիրոջը ժամանակակից փարիսեցիները, իրենց կաշվից դուրս գալով, չկարողացան կասեցնել Նրա առաջընթացը, եթե նրանք երբեք չհամարձակվեցին ժխտել, որ Նա հրաշքներ է կատարել, ապա անհեթեթ է Նրա հրաշքներն սկսել հերքել հիմա՝ երկար ու ձիգ տասնույթ դարեր անց»:³⁷

11:48. Առաջնորդներն զգացին, որ այլևս չեն կարող ոչինչ չանել: Եթե չմիջամտեն, ապա Հիսուսի հրաշքներով տարված՝ շատ մարդիկ Նրա կողմը կանցնեն: Եթե նրանք այդ ձևով հաստատեն, որ Հիսուսը իրենց թագավորն է, դա Հռոմին տհանություն կպատճառի: Հռոմեացիները կմտածեն, որ Հիսուսը հայտնվել է իրենց տերությունը տապալելու համար, և կգան ու կպատժեն հրեաներին: «... **Ու մեր տեղն էլ, մեր ազգն էլ պիտի առնեն**» արտահայտությունը նշանակում է, որ հռոմեացիները կոչնչացնեն տաճարն ու կցրեն հրեաներին: Ճիշտ դա պատահեց մ.թ. 70թ.-ին ոչ թե նրա համար, որ հրեաներն *ընդունեցին* Տիրոջը, այլ ավելի շուտ դրա համար, որ *մերժեցին* Նրան:

Այս առիթով լավ է ասել Ֆ. Բ. Մեյերը.

«Քրիստոնեությունը վտանգի է ենթարկում բիզնեսը, խարխուլում ձեռնառու, բայց վնասակար ճյուղերը, հաճախորդներ խլում սատանայի սրբավայրերից, հարձակվում է նրա օրինավոր շահերի տիրույթի վրա և աշխարհը տակնուվրա անում: Սա հոգնեցուցիչ, գայրացնող, շահույթը ոչնչացնող բան է»:³⁸

11:49-50. Կայափան քահանայապետ էր մ.թ. 26-36թթ.-ին: Նա Տիրոջը դատաստանի ենթարկող կրոնական աստանի նախագահն էր և ներկա եղավ, երբ Պետրոսն ու Հովհաննեսը կանգնեցին սինեդրիոնի առջև (Գործք 4:6): Չնայած այստեղ ասված խոսքերին՝ նա Տեր Հիսուսին չէր հավատում:

Կայափան համարում էր, որ գլխավոր քահանաներն ու փարիսեցիները սխալվում են՝ կարծելով, որ հրեաները կմեռնեն Հիսուսի պատճառով: Նա կանխատեսեց, որ Հիսուսը պիտի մեռնի հրեա ազգի համար: Նա ասաց, որ ավելի լավ է, որ Հիսուսը **մեռնի ժողովրդի համար**, քան թե **ամբողջ ազգը** դժվարություններ ունենա Հռոմի հետ: Գրեթե այնպես է հնչում, կարծես Կայափան իսկապես հասկանում էր Հիսուսի աշխարհի գալու պատճառը: Կարելի է կարծել, թե Կայափան Հիսուսին ընդունում էր որպես մեղավորներին Փրկագնդի, որը հանդիսանում է քրիստոնեության կենտրոնական վարդապետությունը: Բայց, ցավոք սրտի, դա այդպես չէր: Ամենը, ինչ նա ասաց, ճշմարիտ էր, բայց հենց ինքը չէր հավատում Հիսուսին՝ որպես իր հոգու Փրկչի:

11:51-52. Այստեղ բացատրվում է, թե ինչու Կայափան դա ասաց: **Բայց սա իրենից չասաց**, այսինքն՝ այդ որոշումն իրենից դուրս չեկավ: Նա դա ասաց ոչ ըստ իր սեփական կամքի: Հավանաբար նրա կողմից արտասանված խոսքերը նրան Աստծուց էին տրված և ավելի խոր իմաստ ունեին, քան նա էր գիտակցում: Դա աստվածային մարգարեություն էր այն մասին, որ **Հիսուսը պիտի մեռներ** Իսրայել **ազգի համար**: Այն Կայափային տրվեց, որովհե-

տև նա էր այն տարվա քահանայապետը: Աստված նրա միջոցով խոսեց նրա կրոնական դիրքերից, ոչ թե անձնական արդարության, քանի որ նա մեղավոր էր:

Ըստ Կայափայի մարգարեության՝ Տերը կմեռնի **ոչ միայն** Իսրայել ժողովրդի համար, **այլ որ ի մի հավաքի** Աստծո ցրված զավակներին: Ոմանք կարծում են, որ Կայափան նկատի ուներ աշխարհասփյուռ հրեաներին, բայց, ավելի հավանական է, որ նա նկատի ուներ Ավետարանի քարոզչության միջոցով Քրիստոսին հավատացող հեթանոսներին:

11:53-54. Բեթանիայի հրաշքը փարիսեցիներին չհամոզեց: Ընդհակառակը, նրանք ավելի չարացան Աստծո Որդու դեմ: **Այդ օրվանից** ավելի մեծ վճռականությամբ **խորհուրդ արեցին, որ Նրան սպանեն**:

Ուշադրություն դարձնելով հրեաների կողմից աճող թշնամությանը՝ Տեր Հիսուսը գնաց **Եփրայիմ կոչված քաղաքը**: Այսօր մենք չգիտենք, թե որտեղ է գտնվում Եփրայիմը. միայն կարելի է ենթադրել, որ այն գտնվում էր **անապատի մոտ** մի խաղաղ, մեկուսացված վայրում:

11:55. Հրեական Չատկի մոտենալու մասին հիշատակումը մեզ հիշեցնում է, որ ավարտին է մոտենում Տիրոջ ծառայությունը: **Հենց այս Չատկին** էլ Նա պետք է խաչվեր: Մարդկանց պատվիրված էր **Չատկից առաջ Երուսաղեմ ելնել, որ իրենց անձերը սրբեն**: Օրինակ՝ եթե հրեան դիպչում էր մեռած մարմնի, նրան անհրաժեշտ էր ծիսական անմաքրությունից սրբվելու համար մաքրման որոշակի ծես կատարել: Այդ սրբվելն ու մաքրվելը կատարվում էր տարբեր տեսակի լվացումներով ու զոհերով: Ամբողջ ողբերգությունը նրանում էր, որ այդ ձևով հրեաները ձգտում էին մաքրվել, բայց միևնույն ժամանակ ծրագրում էին սպանել գառկական Գառին: Մարդու սրտում չարի ինչպիսի՜ սարսափելի դրսևորում:

11:56-57. Երբ մարդիկ **տաճարում** էին հավաքվել, նրանք սկսեցին **Հիսուս** անունով Մարդու մասին խորհել, Ով իրենց

երկրում էր ապրում և հրաշքներ կատարում: Քննարկում սկսվեց. «Մի՞թե այս տոնին Նա չի գալու»: Ոմանք կարծում էին, որ չի գա՝ 57-րդ համարում մատնանշված պատճառի համաձայն:

Գլխավոր քահանաներից ու փարիսեցիներից Հիսուսին ձերբակալելու պաշտոնական հրաման էր տրվել: Ով որ իմանար Նրա գտնվելու վայրը, հրամայված էր տեղյակ պահել իշխանություններին, որ բռնեն Նրան և դատապարտեն մահվան:

VII. ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԻՆ (12-17 գլ.)

Ա. Հիսուսն օժվում է Բեթանիայում (12:1-8)

12:1. Բեթանիայում գտնվող տունը այն վայրն էր, ուր Հիսուսը սիրում էր գտնվել: Այնտեղ Նա վայելում էր **Ղազարոսի**, Մարիամի ու Մարթայի հետ ունեցած հաճելի հաղորդակցությունը: Այդ ժամանակ **Բեթանիա** գալով՝ մարդկային տեսանկյունով Նա Իրեն ուղղակի վտանգի էր ենթարկում, որովհետև մոտակա Երուսաղեմն Իր դեմ ուղղված բոլոր ուժերի կենտրոնն էր:

12:2. Չնայած շատերը թշնամաբար էին տրամադրված Հիսուսի հանդեպ, Նրան ճշմարտապես հավատացող սրտեր էլ կային: **Ղազարոսը** Տիրոջ **հետ սեղան նըստողներից մեկն էր, և Մարթան ծառայում էր** նրանց: Սուրբ Գիրքը ոչինչ չի ասում այն մասին, թե Ղազարոսն ինչ է տեսել կամ լսել իր մահվան պահից մինչև մեռելներից հարություն առնելը: Գուցե Աստված արգելել էր նրան որևէ նմանատիպ տեղեկություններ հրապարակել:

12:3. Ավետարաններում նշված մի քանի դեպքեր կան, երբ կինն օժում է Տեր Հիսուսին: Նրանցից ոչ մեկն ամբողջությամբ չի համընկնում մյուսի հետ, բայց այստեղ նկարագրված իրադարձությունը, ինչպես կարծում են, ընդհանուր առմամբ նման է Մարկոս 14:3-9 հատվածում նկարագրվածի հետ: Քրիստոսի նկատմամբ Մարիամի նվիրվածությունը նրան մղեց վերցնել այդ

մեկ լիտր նարդոսի ազնիվ յուղն ու օձել Նրա **նոսքերը**: Դրանով նա ասաց, որ դրանից ավելի թանկարժեք բան չունեի, որպեսզի տար Քրիստոսին: Նա արժանի է ամեն բանի, ինչ որ ունենք և ինչ որ ենք:

Ամեն անգամ, երբ հանդիպում ենք Մարիամին, Նա Տեր Հիսուսի նոսքերի մոտ է գտնվում: Տվյալ պահին նա սրբում է **Նրա նոսքերն իր մազերով**: Քանի որ մազերը կնոջ փառքն են, ապա նա բառացիորեն իր փառքը դրեց Նրա նոսքերի առջև: Ինքնըստինքյան հասկանալի է, որ Մարիամը ինքն էլ որոշ ժամանակ այդ անուշահոտությունը կկրեր: Այդպես էլ, երբ Հիսուս Քրիստոսը պաշտվում է, հավատացյալներն իրենց հետ այդ պահի անուշահոտությունն են տանում: Ոչ մի տուն լցված չէ այսպիսի հաճելի բուրմունքով, ինչպես այն տունը, որտեղ Հիսուսին հատկացված է Նրա օրինավոր տեղը:

12:4-5. Այստեղ երևում է, թե ինչպես է մարմնավորը ներխուժում ամենասուրբ դեպքի մեջ: **Նա**, ով պատրաստվում էր **մատնելու** իր Տիրոջը, չկարողացավ դիմանալ, որ թանկարժեք **յուղը** այդ ձևով են ծախսում:

Հուդան չէր կարծում, որ Հիսուսն արժանի է **երեք հարյուր դահեկանին**: Նա կարծում էր, որ յուղը պետք է դրամով **ծախվեր ու տրվեր աղքատներին**: Բայց դա բացահայտ կեղծավորություն էր: Նա աղքատներով ավելի շատ չէր մտահոգված, քան Տիրոջով: Նա պատրաստվում էր Նրան մատնելու ոչ թե **երեք հարյուր դահեկանով**, այլ այդ գումարի մեկ տասներորդ մասով: Ռայլը լավ է ասում.

«Այն, որ նա կարողացավ որպես աշակերտ հետևել Քրիստոսին երեք տարի, տեսնել Նրա բոլոր հրաշքները, լսել Նրա ուսմունքը, մշտական Նրա ձեռքերից բարիքներ ստանալ, առաքյալ համարվել և վերջում հայտնվել մինչև սրտի խորքը փտած վիճակում, այս բոլորն առաջին հայացքից անհավանական ու անհնարին է թվում: Մակայն Հուդայի հետ պատահածը ակնհայտորեն ցույց է տալիս, որ այդպիսի բան կարող է պատահել:

Թերևս ոչ մի բան այնքան քիչ չի բնկաված, որքան մարդու անկման խորությունը»:³⁹

12:6. Հովհաննեսը շտապում է ավելացնել, որ Հուդան **դա** ասաց ոչ թե նրա համար, որ մտահոգ էր **աղքատների համար, այլ որովհետև գող էր** և ազահ: Հուդան **գանձանակն ինքն էր կրում և մեջը դրվածն ինքն էր պահում:**

12:7. Տերն էլ պատասխանեց. «Նրան մի՛ խանգարեք: **Նա Իմ թաղման օրվա համար էր պահել սա:**»⁴⁰ Ի նշան մտերմության ու երկրպագության՝ նա ուզում է առատորեն օժել Ինձ: Թող անի դա»:

12:8. Այդպիսի ժամանակ երբեք չի լինի, որ **աղքատներ** չլինեն, որոնց նկատմամբ կարելի է շոյալել մեր բարությունը: Բայց երկրի վրա Տիրոջ ծառայությունն արագորեն մոտենում էր ավարտին: Մարիամը **միշտ չէր** ունենա այդ յուրը Հիսուսի համար օգտագործելու առիթը: Սա պետք է մեզ հիշեցնի, որ հոգևոր առիթներն անցողիկ են: Մենք երբեք չպետք է ձգձգենք՝ անելու այն, ինչ կարող ենք անել Փրկչի համար:

Բ. Դավադրություն Ղազարոսի դեմ (12:9-11)

12:9. Լուրերն արագորեն տարածվեցին, որ Հիսուսը հեռու չէ Երուսաղեմից: Անհնարին էր Նրա ներկայությունը գաղտնի պահել: **Հրեաներից շատերը** եկել էին Բեթանիա՝ տեսնելու Նրան, ոմանք եկել էին, որպեսզի **Ղազարոսին տեսնեն, ում Նա մեռելներից հարուցանեց:**

12:10-11. Այս համարում նորից պատկերված է մարդկային սրտի անմիտ ատելությունը: **Գլխավոր քահանաները խորհուրդ արեցին, որ Ղազարոսին էլ սպանեն:** Կարելի էր կարծել, թե նա դավանանել է ինչ-որ մեկին՝ մեռելներից հարություն առնելով: Նա ոչ մի հանցանք չուներ, այնուամենայնիվ, նրանք համարում էին, որ նա արժանի է մահվան:

Որովհետև Ղազարոսի պատճառով **հրեաներից շատերը հավատացին Հիսուսին:** Ահա թե ինչու էր Ղազարոսը թըշ-

նամի դարձել հրեական «հաստատությանը», և նրան պետք է հեռացնեին ճանապարհից: Նրանք, ովքեր ուրիշներին առաջնորդում են Տիրոջը, հաճախ հալածանքի և նույնիսկ մահվան են ենթարկվում:

Որոշ աստվածաբաններ կարծում են, որ քանի որ գլխավոր քահանաները հարությունը մերժող սադուկեցիներ էին, Ղազարոսին սպանելով՝ ուզում էին ազատվել վկայից:

Գ. Հաղթական մուտքը (12:12-19)

12:12-13. Այժմ կարդում ենք **դեպի Երուսաղեմ Հիսուսի** հաղթական մուտքի մասին: Կիրակի օր էր՝ Իր խաչելությունից առաջ:

Դժվար է ճշգրիտ իմանալ, թե այդ բազմությունն ի՞նչ էր մտածում Հիսուսի մասին: Նրանք իսկապես հասկանո՞ւմ էին, որ Նա Աստծո Որդին է և Իսրայելի Մեսիան, թե՞ պարզապես պատվում էին Նրան՝ իբրև Թագավորի, ով իրենց կազատագրի հռոմեական լծից: Միգուցե դա հույզերի վայրկենական պոռթկո՞ւմ էր: Անկասկած, այդ ամբոխի մեջ մի քանի ճշմարիտ հավատացյալներ կային, բայց ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ մարդկանց մեծամասնությունը ոչ մի անկեղծ, իսկական հետաքրքրություն չուներ Տիրոջ հանդեպ:

Արմավենու ճյուղերը տառապանքից հետո (Հայտ. 7:9) հանգստի ու խաղաղության խորհրդանիշ են: **«Ովսաննա»** բառը նշանակում է «փրկի՛ր հիմա, մենք աղոթում ենք Քեզ»: Կարող է թվալ, որ այս երկու հասկացությունները համատեղելով՝ մարդիկ կարծես թե ընդունում են Հիսուսին՝ որպես Նա, Ով Աստծո կողմից ուղարկվեց՝ իրենց փրկելու Հռոմի դաժանությունից, և Ով իրենց հանգիստ ու խաղաղություն կտա հեթանոսների երկարատև լծից:

12:14-15. Տեր Հիսուսը քաղաք մտավ **մի ավանակի** վրա նստած, որը սովորական փոխադրամիջոց էր: Սակայն կարևորն այն է, որ այդպես քաղաք մտնելով՝ Տերը կատարեց իրն մարգարեությունը:

Այս մեջբերումը վերցված է Չաք. 9:9-ից:

Այնտեղ մարգարեն կանխատեսում էր, որ **Թագավորը** Իսրայել կգա՝ **Էջի քուռակի վրա նստած**: «Սիոնի դուստր»-ը (Սիոնը բլուր է Երուսաղեմում) հրեաներին վերաբերող այլաբանական արտահայտություն է:

12:16. Աշակերտներն սկզբում չհասկացան, որ կատարվածը Չաքարիայի մարգարեության ճշգրիտ իրականացումն էր այն մասին, որ Հիսուսը՝ որպես Իսրայելի օրինական Թագավոր, մտնում է Երուսաղեմ: **Բայց** երբ Տերը երկինք վերադարձավ ու Հոր աջ կողմում նստելով՝ **փառավորվեց**, այն ժամանակ նրանք հիշեցին, որ ամեն բան Սուրբ Գրքի համաձայն կատարվեց:

12:17-18. Երուսաղեմ մտնող Հիսուսին դիտող ամբոխում մարդիկ կային, ովքեր տեսել էին, թե Նա ինչպես **Ղազարոսին գերեզմանից դուրս կանչեց ու մեռելներից հարուցանեց**: Նրանք իրենց մոտ կանգնած մարդկանց պատմում էին, որ ավանակին հեծածը նույն Ինքն է, Ով Ղազարոսին նորից կյանքի վերադարձրեց: Քանի որ այդ յուրահատուկ **հրաշքի** մասին լուրը արագորեն էր տարածվում, **ժողովրդի մի մեծ բազմություն** դուրս եկավ հանդիպելու Տեր Հիսուսին: Ցավոք սրտի, նրանց ավելի հետաքրքրասիրությունն էր դրդում, ոչ թե ճշմարիտ հավատը:

12:19. Փարիսեցիները իրենց հավասարակշռությունը կորցրին, քանի որ ամբոխը մեծանում էր ու Փրկչի հանդեպ հետաքրքրությունն աճում: Ոչ մի օգուտ չունեի այն, ինչ որ կարող էին ասել կամ անել: Մեծ կատաղությամբ նրանք գոչում էին, որ ամբողջ աշխարհը Հիսուսի **հեռնից է գնում**: Նրանք չէին հասկանում, որ ամբոխի հետաքրքրությունը անցողիկ է, ու նրանց, որ իսկապես ուզում են երկրպագել Հիսուսին՝ որպես Աստծո Որդի, կարելի է մատների վրա հաշվել:

Գ. Հույները ցանկանում են Հիսուսին տեսնել (12:20-26)

12:20. Տեր Հիսուսի մոտ եկած **հույները** հուղայականության դարձած հեթանոսներ էին: Այն, որ նրանք **եկել էին այդ տունին**

պաշտամունք մատուցելու, վկայում է, որ նրանք այլևս չէին պահպանում իրենց նախնիների կրոնական սովորությունները: Նրանք առիթն օգտագործեցին, որպեսզի Տեր Հիսուսի մոտ գան: Սա պատկերավոր ձևով նկարագրում է այն փաստը, թե ինչպես այն ժամանակ հրեաները մերժեցին Հիսուսին, իսկ հեթանոսները կլսեն Ավետարանը, ու նրանցից շատերը կհավատան:

12:21. Չի ասվում, թե ինչու **նրանք եկան Փիլիպպոսի մոտ**: Հավանաբար նրա հունական անունը և նրա Գալիլիայի Բեթսայիդայից լինելը դեպի իրեն ձգեց նորադարձ հեթանոսներին: Նրանց խնդրանքն իսկապես ազնիվ էր. «**Տեր, մենք ուզում ենք Հիսուսին տեսնել**»: Իր սրտում անկեղծ փափագ ունեցող ոչ մի մարդ առանց վարձատրության չի մնա:

12:22. Գուցե Փիլիպպոսը վստահ չէր, թե Տեր Հիսուսը կհանդիպի հույների հետ: Նախկինում Քրիստոսն աշակերտներին պատվիրել էր չգնալ հեթանոսներին Ավետարանով, դրա համար էլ **Փիլիպպոսը** գնաց **Անդրեասի** մոտ, և նրանք միասին **ասացին Հիսուսին**:

12:23. Ինչո՞ւ էին հույները ցանկանում տեսնել Հիսուսին: Տողատակերը կարդալով կարող ենք կռահել, որ նրանց գրավել էր Հիսուսի իմաստությունը, և ուզում էին որպես մեծագույն փիլիսոփայի մեծարել Նրան: Նրանք գիտեին, որ Նա հրեաների առաջնորդների հետ ընդհարումներ ունի, և, հնարավոր է, ուզում էին, որպեսզի Նա Իր կյանքը փրկի իրենց հետ Հունաստան մեկնելով: Նրանց փիլիսոփայությունն էր. «Խնայի՛ր քեզ», **Հիսուսն** էլ ասաց **նրանց**, որ այդ փիլիսոփայությունը հակադարձ համեմատական է հունձքի օրենքին: Նա **կփառավորվի** Իր գոհաբերական մահով, ոչ թե բարեհաջող կյանքով:

12:24. Մերմը չի ծլարձակի, եթե **ցորենի հատիկը հողի մեջ չընկնի և չմեռնի**: Այստեղ Տեր Հիսուսն Իր մասին խոսում է որպես **ցորենի հատիկի**: Եթե Նա չմեռնի, ապա կմնա **միայնակ**: Նա միայնակ կվաճելի երկնային գեղեցկությունը, այնտեղ չի

հայտնվի ոչ մի փրկված մեղավոր, որպեսզի բաժնեկցի Նրա փառքը: Բայց եթե Նա մեռնի, կապահովի փրկության ճանապարհը, որին հետևելով՝ շատերը կարող են փրկություն ձեռք բերել:

Նույնը վերաբերում է մեզ, ինչպես ասում է Թ. Գ. Ռագլանդը.

«Եթե հրաժարվում ենք հողի մեջ ընկնող ու մեռնող ցորենի հատիկներ լինելուց, եթե չգոհարերենք մեր ապագա ծրագրերը, ռիսկի չդնենք մեր վարկանիշը, սեփականությունը, առողջությունը, եթե մեզ կանչեն, իսկ մենք չթողնենք մեր տունը, Քրիստոսի համար չկտրենք ընտանեկան կապերը, *սպա մենք միացնակ կմնանք*: Բայց եթե ուզում ենք պտուղ տալ, պետք է հետևենք մեր օրինյալ Տիրոջը՝ դառնալ ցորենի հատիկ ու մեռնել. *այդ ժամանակ մենք շատ պտուղ կտանք*»:⁴¹

12:25. Շատ մարդիկ կարծում են, որ կյանքում կարևոր են ուտելիքը, հագուստը և հաճույքները, ու դրանց համար են ապրում: Բայց այդ ձևով իրենց կյանքը սիրողները չեն հասկանում, որ հոգին ավելի կարևոր է, քան մարմինը: Անտեսելով հոգու բարօրությունը՝ նրանք կորցնում են իրենց կյանքը: Մյուս կողմից ոմանք ամեն բանից վեր են դասում Քրիստոսին ծառայելը: Նրանք անտեսում են այն բաները, որոնք բարձր են գնահատվում մարդկանց կողմից: Դրանք այն մարդիկ են, ովքեր **պահում են** իրենց կյանքը **հավիտենական կյանքի համար**: Սեփական կյանքն ատել նշանակում է անձնական շահերից առավել Քրիստոսին սիրել:

12:26. Քրիստոսին ծառայելու համար պետք է **հետևել** Նրան: Նա ուզում է, որ Իր ծառաները հնազանդվեն Իր ուսմունքին և բարոյապես նմանվեն Իրեն: Նրա մահը պետք է Նրան նմանվելու օրինակ դառնա: Բոլոր ծառաներին խոստացված է իրենց Տիրոջ մշտական ներկայությունն ու պաշտպանությունը, և դա ոչ միայն այս ներկա կյանքին է վերաբերում, այլ նաև՝ հավիտենական: Այսօրվա ծառայությունն իր գնահատականը կատանա գալիք օրում: Ինչպիսի հալածանքի կամ արհամարհան-

քի էլ մեկը ենթարկվի այստեղ, դա շատ փոքր է գալիք փառքի հետ համեմատած, երբ բոլորի առջև կգնահատվի **Հայր Աստծո** կողմից երկնքում:

Ե. Հիսուսը կանգնած է անխուսափելի մահվան առջև (12:27-36)

12:27. Տիրոջ մտքերն ավելի ու ավելի էին ուղղվում մոտ ապագայում Իրեն սպասվող իրադարձությունների վրա: Նա խորհրդածում էր խաչի և այն ժամանակի մասին, երբ Իր վրա պիտի կրեր մեր մեղքերը, որոնց պատճառով Աստծո բարկությունը թափվելու էր Իր վրա: Նա մտածում էր Իր «սրտաբեկության ժամի» մասին (JBP), և Նրա **հոգին խռովված էր**: Նա ինչպե՞ս պետք է աղոթեր այդպիսի պահին: Դետք է խնդրե՞ր, որպեսզի **Հայրը փրկեր** Նրան այդ **ժամից**: Նա չէր կարող այդ մասին աղոթել, որովհետև Իր աշխարհ գալու նպատակը հենց դա էր՝ խաչին գնալը: Նա ծնվել էր մեռնելու համար:

12:28. Իսաչից ազատվելու խնդրանքի փոխարեն Տեր Հիսուսը խնդրեց, որպեսզի Իր Հոր **անունը** փառավորվի: Նա ավելի շատ հետաքրքրված էր Աստծո փառքով, քան Իր հանգստությամբ և անվտանգությամբ: Այդ խնդրանքին Աստված պատասխանեց երկնքից, թե **փառավորեց** Նրա անունը **և նորից կփառավորի**: Աստծո անունը փառավորվեց Տեր Հիսուսի երկրավոր ծառայությամբ: Նազարեթում լույսյան երեսուն տարիները, երեք տարվա հանրային ծառայությունը, Փրկչի հիանալի խոսքերն ու գործերը արժանիորեն փառավորեցին Հոր անունը: Բայց ավելի մեծ փառք պիտի տրվի Աստծուն Քրիստոսի մահվան, թաղման, հարության և համբարձման միջոցով:

12:29. Կանգնածներից ոմանք Աստծո ձայնը որպես որոտմունք ընդունեցին: Այդպիսի մարդիկ միշտ ձգտում են հոգևոր բաներին բնական բացատրություններ տալ: Հրաշքները ընդունել չցանկացող մարդիկ ջանում են իրենց ինչ-որ բնական օրենքներով կապել: Ուրիշները իմացան, որ դա որոտ չէ, բայց, համենայն դեպս, չընդունեցին, որ դա Աստծո ձայնն է: Հաս-

կանալով, որ դա պետք է ինչ-որ գերբնական մի բան լիներ, նրանք կարող էին միայն եզրակացնել, որ դա **հրեշտակի** ձայն էր: Աստծո ձայնը կարող են լսել ու հասկանալ միայն նրանք, ում օգնում է Սուրբ Հոգին: Մարդիկ կարող են բազմակի անգամ լսել Ավետարանը, և այն կշարունակի նրանց համար անհեթեթություն լինել, եթե Սուրբ Հոգին նրանց հետ չխոսի Ավետարանի միջոցով:

12:30. Տերը լսողներին բացատրեց, որ **այդ ձայնը ոչ թե Իր** համար հնչեց, այլ Իր մոտ կանգնածների: Այն լսելի էր Իր կողքը կանգնածների համար:

12:31. «**Հիմա է այս աշխարհի դատաստանը**», - ասաց Նա: Աշխարհը պատրաստվում էր խաչելու կյանքի ու փառքի Տիրոջը: Եվ դա անելով՝ աշխարհը դատապարտում էր ինքն իրեն: Քրիստոսին սարսափելի ձևով մերժելու համար նրա վրա դատապարտություն կգա: Փրկիչը ճիշտ սանկատի ուներ այստեղ: Շուտով մեղավոր մարդկության վրա դատապարտություն պիտի գար: **Այս աշխարհի իշխանը** սատանան է: Բառի ուղղակի իմաստով՝ սատանան ամբողջությամբ պարտվեց Գողգոթայում: Նա կարծում էր, որ հաջողվեց՝ մեկընդմիջտ ազատվելով Տեր Հիսուսից: Դրա փոխարեն Փրկիչը մարդկանց համար ապահովեց փրկության ճանապարհը և, միևնույն ժամանակ, հաղթեց սատանային ու նրա հորդաներին: Սատանայի նկատմամբ դատավճիռը դեռ չի գործադրվել, բայց նրա կործանումը կանխորոշված է: Նա շարունակում է իր չար գործը՝ փնտվում է աշխարհով մեկ, բայց դա ընդամենը ժամանակի հարց է, որովհետև նա պիտի **գցվի** կրակե լճի մեջ:

12:32. Այս համարի առաջին մասը վերաբերում է խաչի վրա Քրիստոսի մահվանը: Նա գամվեց խաչափայտին ու **երկրից բարձրացվեց**: Տերն ասաց. եթե Ինքն այդպես խաչվի, Նա **բոլորին դեպի Իրեն պիտի ձգի**: Սրան կարելի է մի քանի բացատրություններ տալ: Ոմանք կարծում են, որ Քրիստոսը բոլոր մարդկանց կձգի կամ փրկության, կամ դատապարտության: Ու-

րիշներն էլ կարծում են, որ եթե Քրիստոսը բարձրանա Ավետարանի քարոզչությամբ, ապա Բարի Լուրը մեծ իշխանությամբ կարող է հոգիներին ձգել դեպի Իրեն: Հավանաբար ճիշտ բացատրությունը սա է. Տեր Հիսուսի խաչելության հետևանքով **բոլոր տեսակի** մարդիկ պիտի Նրան ձգվեն: Ոչ թե բոլոր մարդիկ՝ առանց բացառության, այլ մարդիկ բոլոր ազգերից, ցեղերից ու լեզուներից:

12:33. Խոսելով երկրից վեր բարձրանալու մասին՝ Տեր Հիսուսը խորհելու առիթ տվեց, թե **ինչպիսի մահով պիտի մեռնի**, այսինքն՝ խաչի վրա գամվելով: Այստեղ նորից մեզ վկայվում է Տիրոջ ամենագիտության մասին: Նա նախապես գիտեր, որ անկողնու մեջ կամ պատահաբար չի մեռնելու, այլ պետք է գամվի խաչին:

12:34. **Ժողովուրդը** խնդրի առարկա դարձրեց **բարձրանալու մասին** Տիրոջ հայտարարությունը: Նրա խոսքերից մարդիկ գիտեին, որ Նա Մեսիան է, իսկ ՀԿ-ից նրանց հայտնի էր, որ Մեսիան հավիտյան է մնում (տե՛ս Ես. 9:7, Սղմ. 110:4, Դան. 7:14, Միք. 4:7): Նկատեցե՛ք, թե մարդիկ ինչպես են կրկնում Հիսուսի խոսքերը. «... **Պետք է, որ Մարդու Որդին բարձրացվի**»: Իրականում Նա ասել էր. «**Ես պետք է բարձրացվեմ երկրից**»: Իհարկե, Տեր Հիսուսը շատ անգամ հիշեցրել էր, որ Ինքը Մարդու Որդին է, և, հնարավոր է, նախկինում նույնիսկ ասել էր Մարդու Որդու երկրից բարձրանալու մասին, այնպես որ մարդկանց համար դժվար չէր այդ երկու մտքերը միացնել:

12:35. Երբ ժողովուրդը Հիսուսին հարցրեց, թե ով է այդ Մարդու Որդին, Նա դարձյալ Իր մասին ասաց որպես աշխարհի **լույսի**: Նա հիշեցրեց, որ **լույսը** նրանց հետ երկար չի լինի: Նրանք պետք է լույսի հետ լինեն և քայլեն լույսի մեջ, որպեսզի չլինի, որ **խավարը** նրանց **վրա հասնի**, որտեղ նրանք մշտական կայսթաքեն տգիտության մեջ:

Այստեղ Տերն Իրեն նմանեցրեց արևին ու ցերեկվա լույսին, որոնց բնորոշ են այս հատկանիշները: Արևը ծագում է առավոտ-

յան, հասնում է իր գագաթնակետին կեսօրին և մայր է մտնում հորիզոնից այն կողմ երեկոյան: Նա սահմանափակ ժամանակով է մեզ հետ: Մենք պետք է այն ժամանակից օգտվենք, քանի դեռ նա լուսավորում է, որովհետև երբ երեկոն գա, արևը մեզ օգուտ չի տա: Հոգևոր իմաստով՝ Տեր Հիսուսին հավատացողը լույսի մեջ է քայլում: Նա, ով մերժում է Նրան, **խավարի մեջ է քայլում և չգիտի, թե ուր է գնում:** Նա աստվածային առաջնորդություն չունի և ամբողջ կյանքում սայթաքում է:

12:36. Տեր Հիսուսն Իր ունկնդիրներին նորից գգուչացրեց **հավատալ** Իրեն, **քանի դեռ** առիթ կար: Դա անելով՝ նրանք կղառնան **լույսի որդիներ:** Նրանք վստահ կլինեն կյանքի առաջնորդության ու հավիտենականության մեջ: Այս խոսքերից հետո Տերը **բաժանվեց** մարդկանցից ու որոշ ժամանակ թաքնվեց նրանցից:

2. Հրեաների մեծամասնությունը չկարողացավ հավատալ (12:37-43)

12:37. Այստեղ Հովհաննեսը մի պահ կանգ է առնում իր ապշանքն արտահայտելու համար. Տեր Հիսուսը մարդկանց առջև **այնքան հրաշքներ էր արել, իսկ նրանք չհավատացին Իրեն:** Ինչպես արդեն հիշեցինք, նրանց անհավատությունը վկայությունների անբավարարության հետևանքով չէր: Տերը բոլորին էլ համոզիչ ապացույցներ տվեց Իր աստվածության մասին, բայց մարդիկ չուզեցին հավատալ: Նրանք ուզում էին իրենց ղեկավարող թագավոր ունենալ, բայց չէին ուզում ապաշխարել:

12:38. Հրեաների անհավատությունը համընկնում էր Եսայու մարգարեության հետ (Ես. 53:1): «**Տեր, ո՞վ հավատաց մեր լուրին, և Տիրոջ բազուկն ո՞ւմ հայտնըվեց**». այս հարցի պատասխանը հետևյալն է. «Ո՛չ շատերը»: Ինչպես բազուկը Սուրբ Գրքում խոսում է իշխանության կամ ուժի մասին, այնպես էլ «**Տիրոջ բազուկը**» խոսում է Աստծո հզոր իշխանության մասին: Աստծո գորությունը **հայտնըվում է** միայն նրանց, ովքեր հավատում են Տեր Հիսուս Թրիստոսի մասին լուրին:

Քանի որ ոչ շատերն էին ընդունել Մեսիայի մասին լուրը, ուստի Աստծո գորությունը հայտնվեց ոչ շատերին:

12:39. Երբ Տեր Հիսուսն Իրեն հայտնեց Իսրայել ժողովրդին, Իսրայելը մերժեց Նրան: Բազմաթիվ անգամ Տերը դիմեց մարդկանց՝ փրկություն առաջարկելով, բայց նրանք շարունակեցին Նրան «ոչ» ասել: Որքան երկար են մարդիկ շարունակում մերժել Ավետարանը, այնքան դժվարանում է նրանց համար փրկություն ստանալը: Երբ մարդիկ Լույսին են փակում իրենց աչքերը, Աստված դժվարացնում է Լույսը տեսնելու նրանց հնարավորությունը: Աստված նրանց հարվածներ է հասցնում, որոնք հայտնի են որպես «ճակատագրական կուրություն», այսինքն՝ կուրություն, որը նրանց վրա հանգչում է Աստծո դատաստանի հետևանքով, քանի որ հրաժարվեցին Իր Որդուց:

12:40. Այս մեջբերումը Ես. 6:9-10-ից է: Տերը **կուրացրեց** իսրայելացիների **աչքերը և նրանց սրտերը կարծրացրեց:** Բայց Նա դա արեց այն բանից հետո, երբ նրանք իրենք իրենց աչքերը փակեցին և կարծրացրին իրենց սրտերը: Մեսիային համառորեն ու գիտակցաբար մերժելու արդյունքում իսրայելացիները գրկվեցին տեսողությունից, ըմբռնումից, հավատալու կարողությունից և բժշկվելուց:

12:41. Ես. 6-րդ գլխում նկարագրված է, թե մարգարեն ինչպես տեսավ Աստծո **փառքը:** Այստեղ Հովհաննեսը բացատրում է, որ Եսային **տեսավ Քրիստոսի փառքը և խոսեց** Քրիստոսի մասին: Այս կերպով համարը ևս մի կարևոր օղակ է վկայությունների շղթայում, որն ապացուցում է, թե Հիսուս Քրիստոսն Աստված է:

12:42. Հրեա **իշխաններից շատերը** համոզվեցին, որ Հիսուսն է Մեսիան, սակայն իրենց համոզումները բաժնեկցել չհամարձակվեցին՝ վախենալով վտարվելուց: Ցանկալի է կարծել, որ այդ մարդիկ Տեր Հիսուսին ճշմարիտ հավատացողներ էին, բայց դա կասկածելի է: Այնտեղ, որտեղ ճշմարիտ հավատ կա, վաղ թե ուշ դավանում են Քրիստոսին: Քրիստոսին իսկապես որպես

Փրկիչ ընդունելով՝ ոչ մեկը չի տատանվում դրա մասին պատմելու վճռականության մեջ, անկախ դրա հետևանքներից:

12:43. Ակնհայտ է, որ այդ մարդիկ ավելի սիրեցին **մարդկանց փառքը, քան թե Աստծո փառքը:** Նրանք ավելի շատ մտածում էին հավանության արժանանալ մարդկանց կողմից, քան թե Աստծո: Արդյոք սրանց նման մարդիկ կարո՞ղ են ճշմարտապես հավատալ Քրիստոսին: (Պատասխանը տե՛ս 5:44-ում):

Է. Անհավատության վտանգը (12:44-50)

12:44. Եթե վերաճնակերպենք 44-րդ համարը, ապա կստանանք հետևյալը. «Նա, ով իսկապես **Ինձ հավատում է, հավատում է** ոչ միայն **Ինձ, այլ** նաև **Ինձ ուղարկող Իմ Հորը**»: Այստեղ նորից Տերը մատնացույց է անում Հայր Աստծո հետ Իր կատարյալ միությունը: Հնարավոր չէ հավատալ Մեկին ու չհավատալ Մյուսին: Քրիստոսին հավատալ նշանակում է հավատալ Հայր Աստծուն: Հնարավոր չէ հավատալ Հորը՝ առանց հավասար պատիվ տալու Որդուն:

12:45. Այստեղ նկատի ունի, որ ոչ մեկը չի կարող տեսնել Հայր Աստծուն: Նա հոգի է և դրա համար էլ անտեսանելի է: Բայց Տեր Հիսուսն աշխարհ եկավ, որպեսզի մենք իմանանք, թե ինչպիսին է Աստված: Դրանով հասկանում ենք, որ Նա մեզ հաղորդում է Աստծո ոչ թե ֆիզիկական էության, այլ Նրա բարոյական էության մասին: Նա մեզ հայտնեց Աստծո Անձնավորությունը: Այդ իսկ պատճառով, ով տեսել է Քրիստոսին, տեսել է Հայր Աստծուն:

12:46. Ըստ երևույթին, **լույսի** հետ կապված օրինակը մեր Տիրոջ սիրելի օրինակներից մեկն էր: Կրկին Նա Իրեն համեմատեց **աշխարհ** եկած **լույսի** հետ, որպեսզի ամեն Նրան հավատացող **խավարի մեջ ջմնա:** Առանց Քրիստոսի մարդիկ թանձր խավարի մեջ են: Նրանք գրկված են կյանքը, մահն ու հավիտենականությունը ճիշտ ըմբռնելուց: Բայց ովքեր հավատով գալիս են Քրիստոսի մոտ, այլևս ճշմարտություն չեն փնտրում, որովհետև այն գտան Հիսուսի մեջ:

12:47. Քրիստոսի առաջին գալստյան նպատակն **աշխարհը դատելը չէր, այլ փրկելը:** Նա չդատեց նրանց, ովքեր հրաժարվեցին Իր խոսքերը լսելուց Իրեն հավատալուց: Դա չի նշանակում, որ Նա չի դատելու անհավատներին գալիք օրը, բայց այդ դատաստանը Նրա առաջին գալստյան նպատակը չէր:

12:48. Տերը սպասում էր այն վերջին օրվան, երբ նրանք, ովքեր մերժեցին Իր **խոսքերը**, կկանգնեն Աստծո դատաստանի առջև: Այն ժամանակ Տեր Հիսուսի **խոսքերը** կամ ուսմունքը բավարար կլինի նրանց դատապարտելու համար:

12:49. Իր վարդապետությունը Հիսուսն Ինքը չի հնարել, ոչ էլ այն իմացել է մարդկային դպրոցներից: Որպես հնազանդ Ծառա և Որդի՝ Նա միայն ասում էր այն, ինչ Նրան Հայրն էր պատվիրել **ասել:** Այս փաստն է, որ մարդկանց կղատի վերջին օրը: Հիսուսի ասած խոսքն Աստծո խոսքն էր, և մարդիկ հրաժարվեցին այն լսելուց: Հայրը Նրան ոչ միայն ասաց **ինչ ասել**, այլ նաև **ինչ խոսել:** Այս երկու հասկացությունները տարբեր նշանակություն ունեն: «**Ինչ խոսել**» արտահայտությունը վերաբերում է հաղորդվածի էությանը, «**ինչ ասելը**» հենց այն բառերն են, որոնք Տերը պետք է օգտագործեր Աստծո ճշմարտությունը սովորեցնելու համար:

12:50. Հիսուսը գիտեր, որ Հայրն Իրեն պատվիրել է **հավիտենական կյանք** պարգևել նրանց, ովքեր հավատում են Իրեն: **Ուստի** Քրիստոսն այնպես էր խոսում, ինչպես **Հայրն** էր Նրան ասել:

Իսկ հիմա մենք մոտենում ենք հիշատակված պատմության շրջադարձային հստակ պահին: Մինչև այստեղ Տերն Իրեն հայտնեց Իսրայելին: Արձանագրված են յոթ նշաններ կամ հրաշքեր, որոնցից յուրաքանչյուրը պատկերում է, թե ինչ է սպասում մեղավորին, եթե նա հավատա Քրիստոսին: Այսպիսին են այս նշանները.

1. Ջուրը գինու վերածելը Գալիլիայի Կանայում հարսանիքի ժամանակ (2:1-12): Այն խորհրդանշում է մեղավորին,

ով օտար լինելով աստվածային ուրախության տոնին վերափոխվում է Հիսուս Արիստոսի իշխանությանը:

- 2. Ազնվականի որդու բժշկությունը (4:46-54): Այն խորհրդանշում է մեղավորին, ով հիվանդ է ու հոգևոր առողջության կարիք ունի:
- 3. Անդամալույծի բժշկությունը Բեթեզդայի ավազանում (5-րդ գլ.): Իսեղն մեղավորն անգոր է, անօգնական և անկարող ինչ-որ բան ձեռնարկելու իր բուժման համար: Հիսուսը բժշկում է նրան իր տկարությունից:
- 4. Հինգ հազարին կշտացնելը (6-րդ գլ.): Մեղավորը առանց կերակուրի է, քաղցած է և ուժ տվող բանի կարիք ունի: Տերը նրա հոգու համար կերակուր է տալիս, որպեսզի այլևս չսովածանա:
- 5. Գալիլիայի ծովի հանդարտեցումը (6:16-21): Մեղավորը վտանգավոր տեղում է գտնվում: Տերը նրան փրկում է փոթորկից:
- 6. Ի ծնե կույրի բժշկությունը (9-րդ գլ.): Այդ մարդը խորհրդանշում է մարդկային սրտի կուրությունը, որին դեռ չի հավել Բրիստոսի գորությունը: Մարդը չի կարող տեսնել ո՛չ իր սեփական մեղավորությունը, ո՛չ էլ Փրկչի գեղեցկությունը, քանի դեռ Սուրբ Հոգին չի լուսավորել նրան:
- 7. Ղազարոսին մեռելներից հարուցանելը (11-րդ գլ.): Այս հրաշքը, բնականաբար, մեզ հիշեցնում է, որ մեղավորը մեռած է իր մեղքերի ու հանցանքների մեջ և կյանքի կարիք ունի վերևից:

Այս բոլոր հրաշքները նախատեսված են ապացուցելու, որ Հիսուսը Բրիստոսն է՝ Աստծո Որդին:

Ը. Հիսուսը լվանում է Իր աշակերտների ոտքերը (13:1-11)

13-րդ գլխում սկսվում է Վերնատան քննախոսությունը: Հիսուսն այլևս չէր շըրջում թշնամաբար տրամադրված հրեաների մեջ: Նախքան խաչելությունը Նա Իր աշակերտների հետ հաղորդակցվելու հա-

մար առանձնացավ Երուսաղեմի վերնատանը: Հովհաննեսի Ավետարանի 13-17-րդ գլուխները ամբողջ ՆԿ-ում ամենասիրված տողերից են:

13:1. Խաչվելուց մի օր առաջ Տեր **Հիսուսն իմացավ, որ հասել է Իր մեռնելու**, հարություն առնելու և երկինք վերադառնալու ժամը: Նա **սիրեց Իրեններին, որոնք այս աշխարհում էին**, այսինքն՝ նրանց, ովքեր իսկապես հավատացին: **Նա մինչև Իր երկրավոր ծառայության վերջը սիրեց** նրանց ու պիտի սիրի հավիտյան: Բայց **Նա նաև սիրեց նրանց** անսահման սիրով, որը և պատրաստվում էր ապացուցելու:

13:2. Հովհաննեսը չի ասում, թե այստեղ ինչպիսի **ընթրիք** է հիշատակված՝ Չատկական, Տերունական կամ սովորական ընթրիքի սեղան: **Սատանան Հուդայի սըրտում** դրեց այն միտքը, որ եկել է **Հիսուսին մատնելու** ճիշտ պահը: Հուդան Տիրոջ դեմ չարությունն ավելի վաղ էր մտածել, բայց հիմա նրան տրվում էր այդ կեղտոտ ծրագրի իրականացման ազդանշանը:

13:3. Այս համարն ընդգծում է, թե *ու/* կատարեց ծառայի պարտականությունը. պարզապես ոչ թե ռաբբին կամ ուսուցիչը, այլ Իր աստվածությունը գիտակցող **Հիսուսը**: Նա գիտեր, թե ինչ գործ է Իրեն հանձնարարված, Նա գիտեր, **որ Ինքը Աստծուց եկավ ու Աստծո մոտ է գնում**:

13:4. Իր Ով լինելու, Իր առաքելության ու գործի գիտակցությունն էր, որ Նրան հնարավորություն տվեց խոնարհվելու ու լվալու աշակերտների ոտքերը: **Ընթրիքից** վեր կենալով Տերը **մի կողմ դրեց Իր** վրայի երկար **հանդերձը**: Այնուհետև վերցրեց **սրբիչը**, զոգնոցի պես կապեց ու ծառայի դիրք ընդունեց: Մենք կարող էինք ակնկալել, որ այս դեպքը նկարագրված լիներ Մարկոսի՝ Կատարյալ ծառայի Ավետարանում: Բայց այն, որ դա տեղադրված է Աստծո Որդու Ավետարանում, ավելի նշանակալից է դարձնում:

Այս խորհրդանշական գործողությունը մեզ հիշեցնում է, որ Տերը թողեց երկնային

փղոսկրյա պալատները, եկավ այս աշխարհի որպես Ծառա և ծառայեց նրանց, որոնց ստեղծել էր:

13:5. Արևելյան երկրներում բաց բոկոտիկներ (սանդալներ) են հագնում, որն էլ **նոսքերը լվալու** անհրաժեշտություն է առաջացնում: Ընդհանուրի կողմից ընդունված, հյուրասիրության ու բարության նշան էր համարվում, երբ տիրոջ ծառան լվանում էր իր հյուրերի նոսքերը: Այստեղ աստվածային Տերը ծառա դարձավ ու կատարեց այդ խոնարհ գործը: Հիսուսը մատնիչի առջև. ինչպիսի՜ պատկեր, ինչպիսի՜ դաս մեզ համար:

13:6. **Պետրոսը** ցնցված էր այն մտքից, որ Տեր Հիսուսը **լվանալու է իր**՝ Պետրոսի նոսքերը, և արտահայտեց իր դժգոհությունը. ինչպես այդքան մեծ Տերը կարող է իջնել այդքան անարժանի մոտ, ինչպիսին ինքն է: Աստծո տեսքը ծառայի դերում անհանգստություն է առաջացնում:

13:7. **Հիսուսը** Պետրոսին բացատրեց, որ Իր արարքը հոգևոր նշանակություն ունի: Ոսքերի լվանալն ինչ-որ հոգևոր լվացում էր խորհրդանշում: Պետրոսը գիտեր, որ Տերը ֆիզիկական մի բան էր անում, բայց **չէր ընկալում** դրա հոգևոր *նշանակությունը*: Սակայն նա շուտով կհասկանա, որովհետև Տերը բացատրելու էր դա: Եվ դա **կհասկանա** իր սեփական փորձից, երբ ավելի ուշ՝ իր ուրացումից հետո, վերադառնա Տիրոջը:

13:8. Պետրոսը մարդկային բնավորության ծայրահեղությունների կենդանի օրինակն է: Նա երդվեց, որ Տերը **երբեք չպիտի լվանա** իր **նոսքերը** (այստեղ «երբեք»-ը բառացիորեն նշանակում է «հավիտյանս ոչ»): Տերը Պետրոսին պատասխանեց, որ առանց այդ լվացման՝ Իր հետ ոչ մի հաղորդակցություն չի լինի: Ոսքերը լվանալու նշանակությունը բացահայտված է: Քանի որ քրիստոնյաներն այս աշխարհի մեջ են ապրում, նրանք հավում են կեղտոտության հետ: Նրանք աշխարհային խոսակցություններ են լսում, անշնորհք բաներ են տեսնում, անաստված մարդկանց հետ են աշխատում, և սա անխուսափելի կեղտով

է պատում յուրաքանչյուր հավատացյալի: Այն պետք է մշտապես լվացվի, մաքրվի:

Այդ մաքրումը իրականացնում է Խոսքի ջուրը: Երբ Աստվածաշունչ ենք կարդում և ուսումնասիրում, երբ լսում ենք, թե այն, ինչ է քարոզում և իրար հետ քննարկում ենք, հայտնաբերում ենք, որ դա մեզ մաքրում է արտաքին չար ազդեցություններից: Մյուս կողմից, որքան անտեսում ենք Աստծո Խոսքը, այնքան ավելի, առանց մեզ յուրահատուկ անհանգստություն պատճառելու, այդ չար ազդեցությունը կարող է մնալ մեր մտքերի ու կյանքի մեջ: Երբ Հիսուսն ասաց. **«Ինձ հետ բաժին չունես»**, Նա նկատի չունեի, որ Պետրոսը չէր կարող փրկվել, քանի դեռ Հիսուսը նրա նոսքերը չէր լվացել, այլ նկատի ուներ, որ Տիրոջ հետ հաղորդակցությունը կարող է շարունակվել միայն նրա կյանքում Մուրբ Գրքի անդադար մաքրագործող ներգործության միջոցով:

13:9-10. Հիմա էլ **Պետրոսն** ընկնում է ուրիշ ծայրահեղության մեջ: Մի բոլոր առաջնա ասաց. «Երբեք»: Հիմա նա ասում է. «Ինձ ամբողջությամբ լվա»:

Հասարակական բաղնիքից վերադարձող մարդու նոսքերը կրկին կեղտոտվում են: Բայց նրան պետք չէ նորից ամբողջությամբ լվացվել, նրան անհրաժեշտ է միայն նոսքերը լվանալ: **«Նա, որ լվացված է, պետք չունի բացի իր նոսքերը լվալուց, այլ ամբողջովին մաքուր է»**: Տարբերություն կա բաղնիքի լոգանքի և թասի ջրով լվացվելու միջև: *Լոգանքը* խորհրդանշում է փրկության պահին ստացած մաքրությունը: Քրիստոսի արյան միջոցով մեղքերի *պատժից* մաքրվելը մեկ անգամ է տեղի ունենում: *Լվացվելը* խորհրդանշում է մեղքի *կեղտից, ցեխից* մաքրվելը, որը պետք է տեղի ունենա Աստծո Խոսքի անդադար ներգործության միջոցով: Կա մեկ լոգանք՝ բաղնիք, բայց շատ լվացումներ նոսքերի համար: **«Դուք մաքուր եք, բայց՝ ոչ բոլորդ»**. սա նշանակում է, որ բացի Հուդայից՝ բոլոր աշակերտներն էլ անցել են հոգևոր վերածննդի լոգանքով: Հուդան այդպես էլ չընդունեց փրկությունը:

13:11. Ամեն բանի մասին լիակատար գիտություն ունենալով՝ Տերը **գիտեր**, որ Հուդան **մատնելու է Իրեն**, այդ իսկ պատճառով Նա առանձնացրեց նրանցից մեկին՝ որպես փրկության ավագանու՝ երբեք փրկագնման լուրջաբեր չանցած անձնավորության:

Թ. Հիսուսն Իր աշակերտներին սովորեցնում է Իր օրինակին հետևել (13:12-20)

13:12. Այստեղ ասված է, որ Քրիստոսը բոլոր աշակերտների **ոտքերը լվաց**: Հետո Նա հագավ **Իր հանդերձներն ու դարձյալ սեղան նստեց**, սկսեց բացատրել Իր արածի հոգևոր նշանակությունը: Նա գրույցը հարցով սկսեց: Հետաքրքիր է վերլուծել Փրկչի հարցերը: Դրանք ներկայացնում են Նրա ուսուցման ամենաարդյունավետ մեթոդներից մեկը:

13:13-14. Աշակերտները հաստատեցին, որ Հիսուսն իրենց **Վարդապետն ու Տերն է**, և ճիշտ էին: Բայց Նրա օրինակը ցույց տվեց, որ Թագավորության մեջ ամենաբարձր դիրքը ծառային է պատկանում:

Եթե Տերն ու Վարդապետն աշակերտների **ոտքերը լվաց**, ապա ինչով են նրանք արդարանալու, եթե չլվան **միմյանց ոտքերը**: Արդյո՞ք Տերը նկատի ուներ, որ նրանք պետք է, *բառացիորեն ասված*, ջրով լվանան միմյանց ոտքերը:⁴² Արդյոք Նա այստեղ եկեղեցական ծիսակա՞րգ հաստատեց: Ո՛չ, այս արարքը հոգևոր նշանակություն ուներ: Նա աշակերտներին ասաց, որ նրանք պետք է հոգ տանեն միմյանց մաքրության համար՝ մշտական հաղորդակցվելով Խոսքի մեջ: Եթե մեկը նկատի, որ իր եղբայրը սառել է կամ աշխարհիկ է դարձել, պետք է Սուրբ Գրքից սիրով հորդորի նրան:

13:15-16. Տերը նրանց **օրինակ տվեց**, առարկայական մի դաս, թե ինչ պետք է **անեն** միմյանց համար հոգևոր իմաստով:

Եթե հպարտությունը կամ անձնապես չարացած վիճակը մեզ խանգարում են խոնարհվել ու ծառայել մեր եղբայրներին, պետք է հիշենք, որ **մենք մեծ չենք, քան մեր Տերը**: Նա խոնարհեցրեց Իրեն՝ լվանա-

լու նրանց ոտքերը, ովքեր անարժան ու անշնորհակալ էին՝ իմանալով հանդերձ, որ նրանցից մեկը մատնելու է Իրեն: Դուք կկարողանալի՞ք խոնարհվել ու ծառայել մի մարդու՝ իմանալով, որ նա դրամի համար պատրաստվում է մատնելու ձեզ: **Ուղարկվածները** (աշակերտները) չպետք է իրենց ավելի բարձր համարեն այն գործերից, որոնք կատարեց նրանց **Ուղարկողը** (Տեր Հիսուսը):

13:17. Իմանալ այս ճշմարտությունները խոնարհության, անշահախնդրության և ծառայության մասին մի բան է, կատարելը՝ մի այլ: Կարելի է դրանք իմանալ և երբեք չկատարել: Իրական արժեքն ու օրինությունը **դրանց կատարման** մեջ է:

13:18. Ծառայության մասին բոլոր ճշմարտությունները, որոնք Տերը ճիշտ նոր էր սովորեցրել, Հուդային **չէին** վերաբերում: Նա նրանցից մեկը չէր, ում Տերը կուղարկեր ողջ աշխարհով մեկ Բարի լուրը քարոզելու: Հիսուսը գիտեր, որ Սուրբ Գրքում՝ մասնավորապես Սղմ. 41:9-ում, Իրեն դավաճանելու մասին ասվածը **կատարվելու է**: Հուդան էր, ով երեք տարի Տիրոջ հետ հաց կիսեց և, այնուամենայնիվ, **իր կրունկը** Տիրոջ **դեմ բարձրացրեց**. այս արտահայտությունն ակնարկում է, որ նա մատնեց, դավաճանեց Տիրոջը: Սաղմոս 41-ում մատնիչը Տիրոջ կողմից նկարագրված է որպես «իմ մոտիկ բարեկամը»:

13:19. Տերը հայտնեց աշակերտներին, որ պետք է մատնվի, որպեսզի երբ **դա կատարվի**, նրանք հավատան, որ Նա ճշմարիտ Աստված էր: «**Հավատաք, թե՛ ես եմ**»: ՆԿ-ում Տեր Հիսուսը ՀԿ-ի Եհովան է: Այս ձևով կատարված մարգարեությունը Քրիստոսի աստվածության մեծ ապացույցներից մեկն է, ինչպես նաև, այստեղ ավելացնենք, Սուրբ Գրքի ներշնչվածության ապացույցն է:

13:20. Մեր Տերը գիտեր, որ Իր մատնությունը կարող է սայթաքելու և կասկածի պատճառ դառնալ մյուս աշակերտների համար: Դրա համար էլ Նա քաջակերության ու հորդորանքի խոսքեր ավելացրեց: Նրանք

պետք է հիշեն, որ ուղարկված են աստվածային առաքելությամբ: Նրանք պետք է այնքան մոտիկից նույնանան Նրա հետ, որ *նրանց* ընդունելը նույնը լինի, ինչպես *Իրեն* ընդունելը: Եվ ովքեր կընդունեն Հիսուս Զրիստոսին, նաև կընդունեն Հայր Աստծուն: Այս ձևով՝ Որդի Աստծո և Հայր Աստծո հետ ունեցած սերտ կապը պետք է մխիթարություն լիներ նրանց համար:

Ժ. Հիսուսը կանխատեսում է, որ պետք է մատնվի (13:21-30)

13:21-22. Աշակերտներից մեկի մատնությունը մեծ **անհանգստություն** էր պատճառում Տիրոջը: Թվում է՝ այստեղ Հիսուսը մատնիչին մի վերջին հնարավորություն էր տալիս իր չար ծրագրից հրաժարվելու համար: Առանց բացեիքաց նրան հանդիմանելու՝ Տերը ցույց տվեց, որ գիտի տասներկուսից **մեկի** Իրեն **մատնելու** մտադրությունը: Նույնիսկ դա չփոխեց դավաճանի միտքը:

Մյուս աշակերտները չէին կասկածում Հուդային: Նրանք զարմացան, որ իրենցից մեկն այդպիսի բան կանի, և տարակուսանքի մեջ էին, թե ով կարող է դա լինել:

13:23. Այն օրերին մարդիկ ճաշի ժամանակ սեղանի շուրջը չէին նստում, այլ կիսապառկած թիկն էին տալիս: Այս Ավետարանի հեղինակ Հովհաննեսն այն աշակերտն էր, **որին Հիսուսը սիրում էր**: Նա չի հիշատակում իր անունը, սակայն չի վարանում նշելու, որ նա Փրկչի սրտում յուրահատուկ տեղ ուներ: Տերը սիրում էր բոլոր աշակերտներին, բայց Հովհաննեսը հատուկ մոտիկություն էր վայելում:

13:24-25. Նրան **Պետրոսն ակնարկ արեց**, բարձրաձայն խոսելու փոխարեն գուցե գլխով արեց, որ Հովհաննեսն իմանա մատնիչի անունը:

Հովհաննեսը, **Հիսուսի կրծքին հենված**, շուկով ճակատագրական հարցը տվեց, որին հավանաբար նույնպիսի ցածր ձայնով պատասխան հետևեց:

13:26. **Հիսուսը պատասխանեց**, որ նա, ում Ինքը **պատառը** գինու **մեջ թրջելով կտա**, Նա է մատնիչը: Ոմանք ասում են,

որ արևելքում տանտերը ճաշի ժամանակ հացը պատվավոր հյուրին է տալիս: Հուդային պատվավոր հյուր դարձնելով՝ Տերն Իր յուրահատուկ ողորմությունն ու սերն էր ցույց տալիս, այս ձևով ջանում էր նրան զղջման հրավիրել: Ուրիշներն էլ ենթադրում են, որ սովորաբար այդպես էին հացը մատուցում հրեական զատկական ընթրիքին: Եթե դա այդպես է, ապա Հուդան դուրս գնաց հրեական զատկական ընթրիքի ժամանակ՝ մինչ Տերունական ընթրիքի հաստատումը:

13:27. Սատանան արդեն Հուդայի սրտում դրել էր Տիրոջը մատնելու միտքը: Այժմ **սատանան նրա մեջ մտավ**: Սկզբում դա պարզապես առաջարկություն էր: Բայց Հուդան ընդունեց. դա նրան դուր եկավ, և նա համաձայնեց նրա հետ: Այժմ սատանան նրան իր վերահսկողության տակ վերցրեց: Հենց որ Տերը վերջնականապես ցույց տվեց, թե ով է մատնիչը, Նա Հուդային պատվիրեց, որ **շուտով անի**: Նա նրան չէր խրախուսում չարություն անելու, այլ պարզապես Իր վշտալի ընդունումն արտահայտեց:

13:28-29. Այս համարը հաստատում է, որ հացի մասին Հիսուսի և Հովհաննեսի միջև նախորդ զրույցը մյուս աշակերտները չեն լսել: Նրանք դեռ չգիտեին, որ Հուդան պատրաստվում է մատնելու իրենց Տիրոջը:

Ոմանք կարծեցին, թե Հիսուսը պարզապես Հուդային պատվիրեց գնալ ու արագորեն ինչ-որ բան **գնել տոնի** համար կամ նրան խնդրեց ինչ-որ բան տալ **աղքատներին**, քանի որ Հուդան զանձապահն էր:

13:30. Հուդան **ընդունեց** հացի **պատառը**՝ որպես հատուկ շնորհի խորհրդանիշ, իսկ հետո լքեց Տիրոջ և մյուս աշակերտների ընկերակցությունը: Սուրբ Գիրքն ավելացնում է **«և գիշեր էր»** նշանակալից խոսքերը: Հուդայի համար **գիշեր** էր ոչ միայն բառացի իմաստով, այլ նաև հոգևոր՝ խավարի և խղճի խայթի գիշեր, որը երբեք չի վերջանա: Փրկչից մեջքով շրջվողների համար միշտ գիշեր է:

Ի. Նոր պատվիրանը (13:31-35)

13:31. Հենց որ Հուդան գնաց, **Հիսուսի** գրույցն աշակերտների հետ ավելի ազատ ու մտերմիկ դարձավ: Լարվածությունն իջավ: Նա ասաց. «**Հիմա Մարդու Որդին փառավորվեց**»: Տերը փրկության գործի սպասման մեջ էր, որը պատրաստվում էր կատարելու: Նրա մահը միգուցե պարտություն է թվում, բայց դա էր կորած մեղավորներին փրկություն տալու միակ միջոցը: Դրան հաջորդեցին Նրա հարությունն ու համբարձումը, և Նա մեծապես փառավորվեց այս բոլոր բաներում: **Եվ Աստված փառավորվեց** Փրկչի գործերով: Նրա մահը նշանակում էր, որ Նա *սուրբ* Աստված է, Ով չկարողացավ համբերել մեր մեղքերին, բայց Նա նաև մեղավորների մահը չցանկացող, *սիրող* Աստված է: Մահը հայտարարեց, թե ինչպես Նա կարող է *արդար* Աստված լինել և դեռ կարողանալ *արդարացնել* մեղավորին: Աստվածության յուրաքանչյուր ստորոգելի իր գազաթնակետին հասավ Գողգոթայում:

13:32. «**Եթե Աստված Նրանում փառավորվեց**, - իսկ Նա փառավորվեց,⁴³ - **Աստված էլ Նրան կփառավորի Իր անձում**»: Աստված տեսնելու է, որ Իր սիրելի Որդուն արժանի պատիվ է տրվելու: «**Եվ շուտով կփառավորի Նրան**» առանց հապաղելու: Հայր Աստված, Հիսուսին մեռելներից հարուցանելով ու Երկնքում Իր աջ կողմում նստեցնելով, կատարեց Տեր Հիսուսի կանխատեսումը: Աստված չի սպասելու, թե երբ է վերականգնվելու Թագավորությունը: Նա անմիջապես **փառավորելու է Իր Որդուն**:

13:33. Առաջին անգամ Հիսուսն Իր աշակերտներին փաղաքշական խոսքերով է դիմում, ինչպես փոքրիկ երեխաների՝ **որդակներ**: Եվ Նա այսպես վարվեց միայն այն բանից հետո, երբ Հուդան գնաց: **Մի փոքր ժամանակ էր մնացել նրանց հետ լինելու**: Շուտով Նա կմեռնի խաչի վրա: Նրանք պիտի **փնտրեն** Նրան, բայց չեն կարող Նրա հետևից գնալ, քանի որ Նա վերադառնալու է երկինք: Տերը նույնն ասաց **հրեաներին**, բայց տարբեր իմաստ դրեց այդ բառերում: Աշակերտների համար Նրա

մեկնելը միայն ժամանակավոր է լինելու: Նա նորից վերադառնալու է նրանց մոտ (զվ. 14): Բայց Նրա մեկնելը **հրեաների** համար վերջնական ու անվերադարձ է: Նա վերադառնալու է Երկինք, և նրանք չեն կարողանա Նրա ետևից գնալ իրենց անհավատության պատճառով:

13:34. Նրա բացակայության ժամանակ աշակերտները պետք է ղեկավարվեն **սիրո պատվիրանով**: Այդ պատվիրանը նոր չէր ժամանակի առումով, որովհետև Տասը պատվիրանները սովորեցնում էին Աստծուն և դրացուն սիրելու մասին: Բայց այս **պատվիրանը նոր էր** այլ բանով: Այն **նոր է**, որովհետև Սուրբ Հոգին Իր գործությամբ կհանդիմանի հավատացյալներին, որպեսզի նրանք կարողանան հնազանդվել դրան: Նա **նոր է** դրանով, որ *գերազանցում է* հին պատվիրանին: Վերջինս պատվիրում էր. «Միրի՛ր *դասցուր*», իսկ նորը՝ «Միրեցե՛ք ձեր *թշնամիներին*»:

Լավ է ասված, որ ուրիշների նկատմամբ սիրո օրենքն այժմ նոր հստակություն ունի, այն մոլված է նոր դրդապատճառներով ու պատասխանատվությամբ, ցույց տրված նոր օրինակով և հնազանդված՝ նոր ճանապարհով:

Այն նոր էր նաև, ինչպես բացատրված է համարում, որովհետև ավելի բարձր աստիճանի սեր էր պահպանվում. «**Ինչպես Ես ձեզ սիրեցի, դուք էլ նույնպես միմյանց սիրեք**»:

13:35. Պարանոցից կախված խաչը, պիջակի դարձածալը կամ հատուկ հագուստը քրիստոնեական աշակերտություն չէ: Ամեն մարդ կարող է այդ ձևերով իրեն որպես աշակերտ ներկայացնել: Քրիստոնյայի ճշմարիտ նշանն իր քրիստոնյա եղբայրների նկատմամբ ունեցած **սերն է**: Այն աստվածային գործության կարիք ունի, և այդ գործությունը տրվում է միայն նրան, ում մեջ ներքնակվում է Հոգին:

Լ. Հիսուսը կանխատեսում է Պետրոսի ուրացումը (13:36-38)

13:36. Միմոն Պետրոսը չէր հասկանում, որ Հիսուսն Իր մահվան մասին է խոսում:

Նա կարծում էր, որ Տերը ճանապարհորդության է պատրաստվում այստեղ՝ երկրի վրա, և չէր հասկանում, թե ինչու ինքն էլ չի կարող Նրա հետ գնալ: Տերը բացատրեց, որ Պետրոսն Իր հետևից **կգնա** ավելի ուշ, այսինքն՝ երբ մեռնի, բայց չի կարող դա անել հիմա:

13:37. Իրեն հատուկ կրքոտությամբ ու նախաձեռնությամբ՝ **Պետրոսը** հայտարարեց Տիրոջ համար մեռնելու իր պատրաստակամությունը: Նա կարծում էր, որ իր սեփական ուժերը բավարար են, որպեսզի հավատի համար մարտիրոսվի: Հետագայում նա իսկապես նահատակվեց Տիրոջ համար, բայց դա տեղի ունեցավ, որովհետև Աստված նրան հատուկ գորություն և քաջություն էր տվել:

13:38. Հիսուսը ստուգում է նրա «առանց գիտության նախանձավորությունը»՝ Պետրոսին մի բան հաղորդելով, որի մասին նա չգիտեր. մինչ գիշերն անցնի, նա **երեք անգամ** կուրանա Տիրոջը: Այսպես Պետրոսն զգուշացվեց սեփական ուժերով նույնիսկ մի քանի ժամ Տիրոջը հետևելու նրա տկարության, վախկոտության ու անկարողության մասին:

Խ. Հիսուսն է ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը (14:1-14)

14:1. Ոմանք այս համարը կապում են 13-րդ գլխի վերջին համարի հետ՝ կարծելով, որ այստեղ ասվածը Պետրոսին է ուղղված: Թեև նա ուրանալու էր Տիրոջը, համենայն դեպս նրա համար մխիթարական խոսք կար: Բայց հունարենում հոգնակի թվի օգտագործումը վկայում է, որ Տերը խոսեց *բոլոր* աշակերտների հետ, հետևաբար 13-րդ գլխից հետո պետք է դադար լինի: Այստեղ կարող է միտքն այսպիսին լինել. «Ես հեռու եմ գնում, և դուք չեք կարող տեսնել Ինձ: Թող **ձեր սրտերը չխռովվեն. Աստծո՛ւն հավատացեք**, թեև դուք Նրան չեք տեսնում: Եվ առաջվա պես **Ի՛նձ հավատացեք**»: Սա ևս Աստծո հետ հավասար լինելու կարևոր հայտարարություն է:

14:2. **Հոր տանը** բառերի տակ հասկացվում է երկինքը, որտեղ շատ բնակարաններ կան: Այնտեղ տեղ կա բոլոր փրկագնվածների համար: Իսկ **երթե այդպես չիներ**, Տերը **կասեր** նրանց այդ մասին. Նա չէր ուզում, որ նրանք կեղծ հույսեր փայփայեին: **«Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու»** միտքը կարող է երկու նշանակություն ունենալ: Տերը Գողգոթա էր բարձրանալու, որպեսզի տեղ պատրաստի Իրենների համար: Եվ հենց Նրա քավչարար մահվան շնորհիվ հավատացյալների համար այնտեղ տեղ է ապահովված: Սակայն Տերը նույնպես երկինք վերադարձավ, որպեսզի տեղ պատրաստի: Մենք ճշգրիտ չգիտենք, թե դա ինչ տեղ է, բայց գիտենք, որ այնտեղ բոլոր պայմաններն ստեղծված են Աստծո բոլոր զավակների համար՝ «պատրաստված տեղ՝ պատրաստված մարդկանց համար»:

14:3. Այս համարը վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ Տերը **դարձյալ կգա** երկնքից, և հավատով ննջածները հարություն կառնեն, իսկ ողջերը կփոխվեն, և արյունով փրկագնված բոլոր ժողովուրդները կգան տուն՝ երկինք (1 Թեա. 4:13-18, 1 Կոր. 15:51-58): Սա Քրիստոսի անձնական, բառացի երկրորդ գալուստն է: Ճիշտ այնպես, ինչպես Նա գնաց, Նա **դարձյալ կգա**: Նա փափագում է, որ բոլորը, ովքեր Իրեն են պատկանում, Նրա հետ լինեն հավիտյան:

14:4-5. Նա պատրաստվում էր Երկինք գնալու, և նրանք էլ գիտեին Երկնքի **ճանապարհը**, քանզի Նա դրա մասին շատ անգամ էր ասել:

Հավանաբար **Թովմասը** չէր հասկացել Տիրոջ խոսքերը: Պետրոսի նման թերևս նա էլ մտածում էր երկրի վրա ինչ-որ տեղ ճանապարհորդելու մասին:

14:6. Այս սքանչելի համարը բացատրում է, որ Տեր Հիսուս Քրիստոսն Ինքն է Երկնքի **ճանապարհը**: Նա ոչ թե պարզապես ճանապարհն է ցույց տալիս. Նա է **ճանապարհը**: Փրկությունը Նրա Անձի մեջ է: Անձնապես ընդունե՛ք այդ Անձը, և դուք փրկություն ձեռք կբերեք: Քրիստոս-

նեությունը Քրիստոսն է: Տեր Հիսուսը շատ ճանապարհներից մեկը չէ: Նա **միակ** ճանապարհն է: **Ոչ մեկը Հորը չի գա, բացի Նրանով:** Դեպի Աստված ճանապարհը ոչ թե Տասը պատվիրաններն են, «Ոսկե կանոնը», ծեսերը, եկեղեցուն անդամակցելը, այլ Քրիստոսն է, մի՛միայն Քրիստոսը: Այսօր շատերն են ասում՝ եթե անկեղծ ես հավատում, ապա կարևոր չէ, թե ինչ բանի ես հավատում: Նրանք ասում են, որ բոլոր կրոններն էլ իրենց մեջ ինչ-որ լավ բաներ պարունակում են և ի վերջո Երկինք են առաջնորդում: Բայց Հիսուսն ասաց. **«Ոչ մեկը Հորը չի գա, բացի Ինձանով»:**

Տերը ճշմարտությունն է: Նա ոչ միայն Նա է, Ով ճշմարտություն է սովորեցնում. Նա է **ճշմարտությունը:** Նա ճշմարտության մարմնացումն է: Նա, ով Քրիստոսին ունի, ճշմարտությունն ունի: Ուրիշ ոչ մի տեղ այն չես գտնի:

Տեր Հիսուս Քրիստոսն է **կյանքը:** Նա է կյանքի աղբյուրը, ինչպես հոգևոր, այնպես էլ հավիտենական: Նա, ով ընդունում է Նրան, հավիտենական կյանք ունի, որովհետև Նա է Կյանքը:

14:7. Տերը նորից հիշեցնում է Իր և Հոր միջև գոյություն ունեցող խորհրդավոր միության մասին: Եթե աշակերտներն իմանային, թե իրականում Ով է Հիսուսը, ապա **Իր Հորն էլ պիտի գիտենային**, որովհետև Տերը հայտնեց մարդկանց Հորը: **Այսուհետև**, և հատկապես Քրիստոսի հարությունից հետո աշակերտները կհասկանան, որ Հիսուսն Աստծո Որդին է: Այն ժամանակ նրանք կգիտակցեն, որ Քրիստոսին գիտենալը նշանակում է Հորը գիտենալ, ու Տեր Հիսուսին տեսնելը նշանակում է Աստծուն տեսնել: Այս համարը չի սովորեցնում, որ Աստված ու Տեր Հիսուսը միևնույն Անձնավորությունն են: Աստվածության մեջ երեք տարբեր *Անձեր* կան, բայց գոյություն ունի *մեկ* Աստված:

14:8. **Փիլիպպոսը** ցանկացավ, որ **Տերը** մի հատուկ հայտնություն տա՝ **ցույց տա Հորը**, և դա նրա համար բավական կլինի: Նա չէր հասկանում, որ ամեն ինչ, ինչ որ

Տերն արեց ու խոսեց, և թե Ով էր Նա, այս բոլորը հայտնություն էր Հորից:

14:9. **Հիսուսը** համբերությամբ նրան շըտկեց. Փիլիպպոսը Տիրոջ հետ էր **երկար** ժամանակ: Նա առաջին կանչված աշակերտներից մեկն էր (Հովհ. 1:43): Այնուամենայնիվ, Քրիստոսի աստվածության և Նրա Հոր հետ միաբանության մասին ամբողջական ճշմարտությունը դեռ նրան չէր բացվել: Նա չգիտեր, որ Հիսուսին տեսնելով՝ տեսնում է Նրան, Ով կատարելապես հայտնվեց, ցույց տվեց **Հորը:**

14:10-11. **«Ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ Իմ մեջ»** խոսքերը նկարագրում են **Հոր** և Որդու միջև եղած սերտ միությունը: Նրանք առանձին Անձեր են, և դեռ մեկ են նրանում, ինչ վերաբերում է ստորոգելիներին ու կամքին: Չարժե հուսալքվել, եթե չկարողանանք դա հասկանալ: Ոչ մի մահկանացու միտք ի գորու չէ երբևիցե հասկանալ աստվածությունը: Մենք պետք է վստահենք Աստծուն՝ իմանալու այն, որը երբեք չենք կարող իմանալ: Եթե ամբողջությամբ հասկանայինք Նրան, մենք ևս մեծ կլինեինք այնպես, ինչպես Նա է: Հիսուսն իշխանություն ուներ խոսելու և հրաշքներ կատարելու, բայց Նա աշխարհ եկավ ու գործեց որպես Եհովայի ծառա՝ կատարելապես հնազանդվելով Հորը:

Աշակերտները պետք է **հավատային**, որ Նա մեկ է **Հոր** հետ՝ ըստ Նրա անձնական վկայության: Իսկ եթե չէին հավատում, ապա պետք է **հավատային** Նրա կատարած գործերին:

14:12. Տերը կանխատեսեց, որ Նրան հավատացողները Նրա կատարած հրաշքների նման և նույնիսկ **ավելի մեծ** հրաշքներ են կատարելու: Գործք Առաքելոց գրքում մենք կարդում ենք առաքյալների մասին, ովքեր Փրկչի նման բժշկելու իշխանություն ունեին: Բայց նաև կարդում ենք ավելի մեծ հրաշքների՝ Պենտեկոստի օրը երեք հազար հոգու դարձի գալու մասին: Այդքան շատ հոգիների փրկությունն ու Եկեղեցու ստեղծվելը, անկասկած, Ավետարանի հոչակման համաշխարհային հրաշք էր,

որի մասին Տերն ասել էր՝ օգտագործելով «**դրանցից ավելի մեծ գործեր պիտի անի**» արտահայտությունը: Հոգիներ փրկելն **ավելի մեծ է**, քան մարմին բուժելը: Երբ Տերը երկինք վերադարձավ, Նա փառավորվեց, և Սուրբ Հոգին ուղարկվեց երկիր: Ծնորհիվ Հոգու գործության՝ առաքյալները կարողացան կատարել այս մեծ հրաշքները:

14:13. Որքան մխիթարական էր աշակերտների համար իմանալ, որ էթե նույնիսկ Տերն իրենց թողնի, նրանք կարող են աղոթել Հորը Նրա անունով ու ստանալ այն, ինչ խնդրում են: Այս համարը նկատի չունի, որ հավատացյալը կարող է Աստծուց ստանալ ամեն ինչ, ինչ ցանկանում է: Խոստումը հասկանալու բանալին գտնվում է «**Իմ անունով**» ինչ որ **դուք խնդրեք Իմ անունով** բառերի մեջ: Հիսուսի անունով խնդրել չի նշանակում պարզապես աղոթքի վերջում հիշատակել Նրա անունը: Դա նշանակում է խնդրել Իր մտադրության ու կամքի համապատասխան: Դա նշանակում է խնդրել այն, ինչ փառավորում է Աստծուն, օրհնում մարդկությանը և օգտակարություն բերում մեր հոգուն:

Տեր Հիսուսի անունով խնդրելու համար պետք է Նրա հետ մտերիմ հաղորդակցության մեջ ապրենք: Հակառակ դեպքում մենք չենք կարող իմանալ մեր խնդրանքի նկատմամբ Նրա վերաբերմունքը: Որքան մոտ ենք Նրան, այնքան մեր փափագները կհամապատասխանեն Նրա կամքին: **Հայրը կփառավորվի Որդու մեջ**, որովհետև Որդին միայն այն է փափագում, ինչ հաճելի է Աստծուն: Այսպիսի աղոթքները խոսուն են և վեր են բարձրանում, իսկ դա նշանակում է, որ Աստծուն մեծ փառք ու պատիվ են բերում:

14:14. Խոստումը կրկնվում է, որպեսզի ընդգծի այն՝ որպես գորեղ քաջալերանք Աստծո գավակներին: Ապրե՛ք Նրա կամքի կենտրոնում, մնացե՛ք Տիրոջ հետ հաղորդակցության մեջ, **խնդրե՛ք այն բաները**, որ Տերն է փափագում, և ձեր աղոթքները կպատասխանվեն:

Ծ. Խոստում Ուրիշ Մխիթարիչ ուղարկելու մասին (14:15-26)

14:15. Տեր Հիսուսը շուտով թողնելու էր Իր աշակերտներին և գիտեր, որ նրանք վշտի պիտի մատնվեն: Նրանք ինչպե՞ս կարող են արտահայտել Նրա հանդեպ իրենց **սերը**. միայն Նրա պատվիրանները պահելով և ոչ թե արցունքներով, այլ հնազանդվելով: Տիրոջ **պատվիրաններն** այն հրահանգներն են, որոնք Նա մեզ տվեց Ավետարաններում, ինչպես նաև ՆԿ-ի մնացած մասերում:

14:16. Մեր Տիրոջ կողմից այստեղ օգտագործված բառը, որը թարգմանվել է որպես «**աղաչել**», հավասարապես նույն իմաստը չունի նրա հետ, որը նկարագրում է վերադասին ուղղված ստորադասի աղոթքը. այն պարզապես խոսում է հավասարին դիմելու մասին. Տերը **Հորը պիտի աղաչի** ուրիշ **Մխիթարիչ** ուղարկել: «**Մխիթարիչ**» բառը (*Paraclete*) նշանակում է մեկը, ով կոչված է օգնելու: Այս բառը նաև թարգմանվում է որպես Բարեխոս (1 Հովհ. 2:1): Տեր Հիսուսը մեր Բարեխոսն է և Մխիթարիչը, իսկ Սուրբ Հոգին **ուրիշ Մխիթարիչ է**, ուրիշ ոչ թե «առաջինից տարբերվող» իմաստով, այլ ևս մեկը նույն ստորոգելիներով: Սուրբ Հոգին **կմնա** հավատացյալների հետ **հավիտյան**: ՀԿ-ում Սուրբ Հոգին մարդկանց վրա ժամանակավոր էր իջնում և հաճախ թողնում էր նրանց: Հիմա Նա պիտի գա, որպեսզի **մեկընդմիշտ** մնա:

14:17. Սուրբ Հոգին կոչված է **ճշմարտության Հոգի**, որովհետև Նրա ուսմունքը ճշմարիտ է, և Նա փառավորում է Քրիստոսին, Ով Ճշմարտությունն է: **Աշխարհը չի կարող ընդունել** Սուրբ Հոգուն, որովհետև Նրան չի տեսնում: Անհավատները ցանկանում են սկզբում տեսնել, իսկ հետո հավատալ, չնայած առանց տեսնելու հավատում են քամուն և էլեկտրականությանը: Չփրկվածները չգիտեն և չեն հասկանում Սուրբ Հոգու էությունը: Նա հանդիմանում է նրանց մեղքի մեջ, իսկ նրանք այդպես էլ չեն հասկանում, որ դա Սուրբ Հոգին է: Աշակերտները գիտեին Սուրբ Հոգուն:

Նրանք գիտեին, որ Նա գործում է իրենց կյանքում, և Նրան տեսան Տեր Հիսուսի միջոցով գործելիս:

«Որովհետև Նա ձեզ հետ է բնակվում և ձեր մեջ պիտի լինի»: Մինչ Պենտեկոստեն Սուրբ Հոգին իջնում էր մարդկանց վրա ու նրանց հետ լինում: Բայց Պենտեկոստեից հետո Սուրբ Հոգին միշտ մնում է այն մարդու կյանքի մեջ, ով հավատում է Տեր Հիսուսին: Դավթի աղոթքը՝ «Ըն Սուրբ Հոգին ինձնից մի՛ վերցրու», այսօրվա համար տեղին չէ: Սուրբ Հոգին երբեք հավատացյալից չի վերցվում, սակայն կարող ենք Նրան վշտացնել, մարել կամ կաշկանդել:

14:18. Տերն Իր աշակերտներին **որք չի թողնի** և չի լքի: Նա կրկին **կգա** նրանց մոտ: Ինչ-որ առումով Նա նրանց մոտ եկավ Իր հարությունից հետո, բայց կասկածելի է, որ այստեղ միայն սա նկատի ունենա: Նա նրանց եկավ նաև Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգու Անձով: Այս հոգևոր գալուստը տվյալ համարի ճշմարիտ նշանակությունն է: «Պենտեկոստեում ինչ-որ բան կա, որը վկայում է Հիսուսի գալստյան մասին»: Երրորդ իմաստով՝ Նա դարձյալ կգա նրանց մոտ այս աշխարհի վերջում, երբ Իր ընտրյալներին վերցնի ու տանի երկնային տուն:

14:19. Անհավատներից ոչ մեկը Տեր Հիսուսին չի տեսել թաղումից հետո: Հարությունից հետո Նա հանդիպել է միայն նրանց, ովքեր Իրեն սիրում էին: Բայց նույնիսկ Նրա երկինք համբարձվելուց հետո աշակերտները շարունակում էին Նրան տեսնել հավատով: Դա ենթադրվում է հետևյալ խոսքերում. «... **Բայց դուք Ինձ կտեսնեք**»: Այն բանից հետո, երբ աշխարհն այլևս չի կարող տեսնել Հիսուսին, աշակերտները շարունակում են Նրան տեսնել. **«Որովհետև Ես ապրում եմ, դուք նույնպես պիտի ապրեք»:** Այստեղ Նա նկատի ունի հարությունից հետո Իր կյանքը: Այդ կյանքը պետք է լինի բոլոր Նրան հավատացողների կյանքի գրավականը: Նույնիսկ երբ նրանք մեռնեն, հարություն պիտի առնեն անմահության համար:

14:20. «Այն օրը» խոսքը հավանաբար

նորից վերաբերում է Սուրբ Հոգու Գալուստին: Նա կառաջնորդի հավատացյալներին ճշմարտության մեջ, որ Որդու և Հոր միջև կենսական կապ գոյություն ունի. կյանքի ու շահերի այդպիսի զարմանահրաշմիություն կլինի նաև Քրիստոսի և Նրա սրբերի միջև: Դժվար է բացատրել, թե ինչպես է Քրիստոսը հավատացյալի մեջ մնում, հավատացյալն էլ միաժամանակ՝ Քրիստոսի մեջ: Ահա մի սովորական օրինակ՝ կապված կրակի մեջ գտնվող կրակխառնիչի հետ: Ոչ միայն կրակխառնիչն է շփվում կրակի հետ, այլ կրակն էլ՝ կրակխառնիչի հետ:⁴⁴ Բայց այս օրինակն ամեն ինչ չի բացատրում: Քրիստոսը հավատացյալի մեջ մնում է այն իմաստով, որ Նրա կյանքը հաղորդվում է նրան: Նա փաստորեն հավատացյալի մեջ մնում է Սուրբ Հոգու միջոցով: Հավատացյալը մնում է Քրիստոսի մեջ այն իմաստով, որ Նա Աստծո առջև կանգնում է Քրիստոսի Անձնավորության ու գործերի բոլոր արժանիքներով:

14:21. Տիրոջ նկատմամբ սիրո իրական ապացույցը Նրա **պատվիրանների** պահպանումն է: Անօգուտ է սիրո մասին խոսել Նրա հետ, եթե չենք ուզում հնազանդվել Նրան: Կարելի է ասել, որ Հայրը սիրում է ողջ աշխարհը: Բայց յուրահատուկ սեր է տածում նրանց նկատմամբ, ովքեր սիրում են Իր Որդուն: Քրիստոսն էլ սիրում է նրանց և յուրահատուկ ձևով Իրեն հայտնում նրանց: Որքան շատ սիրենք Փրկչին, այնքան ավելի լավ կճանաչենք Նրան:

14:22. Այստեղ հիշատակված **Հուդան**, ի դժբախտություն իրեն, նույն անունն էր կրում, ինչ-որ մատնիչը: Բայց Սուրբ Հոգին սիրալիբ կերպով տարբերություն է դնում նրա ու **Իսկարիովտացու** միջև: Նա չէր հասկանում, թե Տերն ինչպես կարող է հայտնվել աշակերտներին, բայց **ոչ աշխարհին**: Անտարակույս, նա Փրկչի գալուստի մասին մտածում էր որպես հաղթական Թագավորի կամ ճանաչված հերոսի մուտք: Նա չէր հասկանում, որ Տերն Իրեն պետք է հոգևորապես **հայտնի**: Նրանք պիտի տեսնեին Նրան հավատով Աստծո Խոսքի միջոցով:

Այսօր Աստծո Հոգու ներգործության շնորհիվ մենք իսկապես կարող ենք Քրիստոսին ավելի լավ ճանաչել, քան Նրա աշակերտները, երբ Նա երկրի վրա էր ապրում: Երբ Նա այստեղ էր, ժողովրդի բազմության առջևում կանգնածները Նրան ավելի մոտ էին, քան ետևում կանգնածները: Բայց այսօր հավատի միջոցով մեզանից յուրաքանչյուրը կարող է վայելել ամենամտերիմ հաղորդակցությունը Նրա հետ: Հուդային տված Քրիստոսի պատասխանը ցույց է տալիս, որ առանձին հավատացյալներին հայտնվելու Նրա խոստումը կապված է Աստծո Խոսքի հետ: Խոսքին հնազանդվելու արդյունքում Հայրն ու Որդին գալիս ու բնակվում են մեր մեջ:

14:23. Եթե մեկը ճշմարտապես սիրում է Տիրոջը, նա կցանկանա ամբողջությամբ **պահել** Նրա ուսմունքը, ոչ թե միայն առանձին պատվիրաններ: **Հայրը** սիրում է առանց հարցադրումների ու առարկության Իր Որդուն հնազանդվել փափագողներին: Ե՛վ Հայրը, և՛ Որդին հատկապես մոտ են այդպիսի սիրող ու հնազանդ սրտերին:

14:24. Մյուս կողմից, Նրան **չսիրողները չեն պահում** Նրա խոսքը: Քրիստոսի խոսքերը մերժելով՝ նրանք նաև հրաժարվում են Հորից:

14:25. Աշակերտների **հետ** լինելով՝ Տերը չկարողացավ նրանց ամեն բան սովորեցնել: Նա չկարողացավ ավելի շատ ճշմարտություններ հայտնել, որովհետև նրանք պատրաստ չէին դրանք ընդունելու:

14:26. Բայց **Սուրբ Հոգին** նրանց ավելին կհայտնի: Նա ուղարկվելու է **Հորից** Քրիստոսի անունով Պենտեկոստեի օրը: Հոգին իջավ Քրիստոսի անունով այն իմաստով, որ Նա լիազորված է Քրիստոսի շահերը ներկայացնելու երկրի վրա: Նա չիջավ նրա համար, որպեսզի Իրեն փառավորի, այլ որպեսզի տղամարդկանց ու կանանց Փրկչի մոտ բերի, Տիրոջ Խոսքով՝ **«Ամեն բան սովորեցնի ձեզ»**: Նա դա կատարեց նախ առաքյալների բանավոր ծառայության միջոցով, իսկ հետո՝ Աստծո գրված Խոսքի միջոցով, որն այսօր մենք ունենք: Սուրբ

Հոգին **հիշեցնում է այն ամենը**, ինչ Փրկչին է սովորեցրել: Իրականում, ինչպես մեզ թվում է, Տեր Հիսուսն ամբողջ ուսմունքը ներկայացրեց սկզբնական ձևի մեջ, որը զարգացվեց Սուրբ Հոգու միջոցով ՆԿ-ի մյուս բաժիններում:

Կ. Հիսուսն Իր խաղաղությունն է թողնում աշակերտներին (14:27-31)

14:27. Մահից առաջ մարդը սովորաբար գրում է իր վերջին ցանկությունը՝ կտակը, ըստ որի՝ իր ունեցվածքը թողնում է իր սիրելիներին: Այստեղ Տեր Հիսուսը նույնն է անում: Մակայն Նա ոչ թե նյութական արժեքներ է կտակում, այլ այն, որը դրամով չի գնվում՝ **խաղաղություն**, խղճի ներքին **խաղաղություն**, որը սրտի վրա է հանգչում՝ մեղքերից ներված լինելու զգացողության և Աստծո հետ հաշտվելու հետևանքով: Քրիստոսը կարող է խաղաղություն տալ, որովհետև այն ձեռք է բերել Գողգոթայում հեղված Իր իսկ արյամբ: Նա **տալիս է մեզ**, բայց **ոչ ինչպես աշխարհն է տալիս**՝ խիստ խնայողաբար, եսասիրական դրդապատճառներից ելնելով և կարճաժամկետ: Նրա **խաղաղության** պարզևն ընդմիշտ է: Իսկ ինչո՞ւ է այդ դեպքում քրիստոնյան **խռովում ու վախենում**:

14:28. Հիսուսն արդեն նրանց ասել էր, թե ինչպես է նրանց թողնելու և հետո՝ ինչպես է վերադառնալու, որպեսզի նրանց Իր հետ վերցնի երկնային տուն: **Եթե** նրանք **սիրեին** Նրան, **ուրախ պիտի լինեին**: Իհարկե, ըստ իրենց՝ նրանք սիրում էին Նրան: Բայց դեռ մինչև վերջ չէին հասկացել, թե Ով է Նա, և դրա համար էլ նրանց սերն այդքան մեծ չէր, ինչպիսին պետք է լիներ:

«... Ուրախ պիտի լինեիք, որ ասացի, թե ես Հոր մոտ եմ գնում, որովհետև Իմ Հայրը մեծ է, քան ես»: Առաջին հայացքից այս համարը հակասում է այն ամենին, ինչ Հիսուսը սովորեցրել է Հայր Աստծո հետ Իր հավասարության վերաբերյալ: Բայց այստեղ ոչ մի հակասություն չկա, և հատվածը բացատրում է այս համարի

ինասար: Երբ Տեր Հիսուսը երկրի վրա էր գտնվում, Նրան ասեցին, հետապնդեցին, հալածեցին և ձերբակալեցին: Մարդիկ հայեցեցին Նրան, վիրավորեցին և թքեցին Նրա վրա: Նա ահավոր նվաստացումներ կրեց Իր իսկ արարածների կողմից:

Հայր Աստվածը երբեք այդպիսի վիրավորական վերաբերմունք չի կրել մարդկանց կողմից: Նա երկնքում է բնակվում՝ հեռու մեղավորների չարությունից: Վերադառնալով երկինք՝ Տեր Հիսուսը երբեք այդպիսի նվաստացման չի ենթարկվելու, որովհետև երկնքում այդպիսի բան չկա: Դրա համար էլ աշակերտները, ի պատասխան Հիսուսի խոսքերի, պետք է ուրախանային, որ Նա **Հոր մոտ է գնում**, որովհետև այս *ինաստով Հայրը* Նրանից **մեծ է**: Հայրն ավելի մեծ չէր *որպես Աստված*. Նա ավելի մեծ է, որովհետև երբեք չի եկել աշխարհ Մարդու կերպարանքով, որի հետ այդքան անգութ վերաբերվեին: Ինչ վերաբերում է աստվածային ստորոգելիներին, ապա Որդին ու Հայրը հավասար են: Բայց երբ խորհում ենք այն նվաստացուցիչ ու անհրապույր դերի մասին, որն Իր վրա վերցրեց Հիսուսը՝ որպես Մարդ: Այստեղ՝ երկրի վրա, մենք հասկանում ենք, որ այս *ինաստով Հայր* Աստված **մեծ է, քան** Նա: Նա ավելի մեծ է Իր *դիրքով*, ոչ թե *Անձնավորության* հատկություններով:

14:29. Անձնվիրաբար մտահոգված լինելով վախեցած աշակերտների վիճակով՝ Տերը հայտնեց ապագա իրադարձությունների մասին, որպեսզի նրանք չզայթակղվեն, չհուսալքվեն և չվախենան, այլ **հավատան**:

14:30. Տերը գիտեր, որ մոտենում է Իր մատնվելու ժամանակը, և որ քիչ ժամանակ էր մնացել աշակերտների հետ **խոսելու** համար: Արդեն այն ժամանակ սատանան Նրա շուրջն էր պտտվում, բայց Փրկիչը գիտեր, որ թշնամին Իր մեջ մեղքի ոչ մի հետք չի կարող գտնել: Քրիստոսի մեջ ոչինչ չկար, որ արձագանքեր սատանայի չար փորձություններին: Ծիծաղելի կլիներ, եթե որևիցե մեկը՝ բացի Հիսուսից, ասեր, որ սատանան իր մեջ **ոչինչ** չի գտնի:

14:31. Մենք կկարողանայինք այս համա-

րը հետևյալ ձևով վերաձևակերպել. «Մոտենում է ժամանակը, երբ Ինձ կմատնեն: Բայց Ես կամավոր եմ խաչ բարձրանում: Ինձ համար սա է Աստծո կամքը, որի կատարումով աշխարհը կիմանա, թե **Ես** ինչպես եմ Իմ **Հորը սիրում**: Եվ հենց դրա համար էլ Ես առանց դիմադրության մեռնելու եմ գնում»: Այս ասելով՝ Տերը աշակերտներին առաջարկեց **վեր կենալ ու գնալ** Իր հետ: Այս հատվածից պարզ չէ, թե վերնատնից նրանք ուր գնացին: Հնարավոր է՝ հետագա գրույցը ճանապարհին է տեղի ունեցել:

Հ. Հիսուսն է ճշմարիտ Որթը (15:1-11)

15:1. ՀԿ-ում Իսրայելի ժողովուրդը նմանեցվում է Եհովայի կողմից տնկված խաղողի որթին: Բայց ժողովուրդն անհավատարիմ ու անպտուղ գտնվեց, ուստի հիմա Տեր Հիսուսն *Իրեն* ներկայացնում է որպես **ճշմարիտ որթը**՝ բոլոր խորհրդապատկերների ու տիպերի կատարյալ իրականացումը: **Հայր** Աստվածը **Մշակն է**:

15:2. Թե ինչ է հասկացվում Նրա **մեջ գտնվող և պտուղ չբերող ճյուղի** տակ խոսքից, կարծիքները տարբեր են: Ոմանք խորհում են, որ դա կեղծ դավանողն է, որ քրիստոնյա է ձևանում, բայց իրականության մեջ երբեք Քրիստոսի հետ չի միացել: Ուրիշները կարծում են, որ դա պտուղ չտալու պատճառով փրկությունը կորցրած ճշմարիտ քրիստոնյան է: Սա բացահայտ սխալ կարծիք է, քանի որ հակասում է այն բազմաթիվ հաստատումներին, որոնք ասում են, որ հավատացյալը հավիտենական փրկություն ունի: Ոմանք ենթադրում են, որ այն ճշմարիտ քրիստոնյան է, ով հրաժարվում է իր համոզմունքներից: Նա հեռանում է Տիրոջից և դառնում այս աշխարհի արժեքների ստրուկը: Նա ի վիճակի չէ արտահայտելու Սուրբ Հոգու պտուղը՝ սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն:

Թե ինչ է Տերն անում անպտղաբեր ճյուղի հետ, կախված է նրանից, թե ինչպես է

թարգմանված հունարեն *airo* բայը: Այն կարող է նշանակել «վերցնել», ինչպես անգլերեն King James թարգմանության տարբերակում (նույն ձևով թարգմանված է Հովհ. 1:29-ը): Այնուհետև այն կարող է վերաբերել մահվան ելքով խրատին (1 Կոր. 11:30): Այնուամենայնիվ, այդ նույն բառը կարող է նշանակել «բարձրացնում է» (ինչպես Հովհ. 8:59-ը): Այս դեպքում այն նկարագրում է անպտղաբեր ճյուղի նկատմամբ կատարվող **դրական ծառայությունը**. նրան բարձրացնում են, որպեսզի ավելի շատ լույս և օդ ստանա այն հույսով, որ պտուղ տա:

Ճյուղը, որ պտուղ է բերում, այն քրիստոնյան է, ով աճում է ավելի ու ավելի Տեր Հիսուսի նմանությամբ: Նույնիսկ այդպիսի որթատունկերը պետք է էտել ու մաքրել: Ինչպես սովորական որթատունկը պետք է մաքրել միջատներից, բորբոսից և սնկից, այնպես էլ քրիստոնյան պետք է մաքրվի իրեն կպած աշխարհային բաներից:

15:3. Մաքրող նյութը Տիրոջ **Խոսքն է**: Սկզբում աշակերտները մաքրվեցին **Խոսքով** իրենց դարձի պահին: Իսկ երբ Փրկիչը խոսում էր նրանց հետ, Նրա խոսքերը նույնպես նրանց կյանքի վրա մաքրագործող ազդեցություն էր ունենում: Այսպիսով, այս համարը կարող է վերաբերել արդարացմանն *m* սրբացմանը:

15:4. **Մնալ** նշանակում է մնալ այնտեղ, որտեղ որ գտնվում էք: Քրիստոնյան Քրիստոսի մեջ է մնում. դա է իր տեղը: Ամենօրյա կյանքում նա պետք է մնա Տիրոջ հետ մտերմիկ հարաբերության մեջ: **Ճյուղը**, որթի վրա մնալով, նրանից կյանք ու սնունդ է ստանում: Այնպես որ մենք Քրիստոսում ենք մնում, երբ աղոթքի մեջ ենք ժամանակ անցկացնում, կարդում ու կատարում ենք Նրա խոսքը, հաղորդակցվում ենք Նրա ժողովրդի հետ և անդադար գիտակցում ենք մեր՝ Նրա հետ ունեցած միությունը: Քանի որ այս ձևով Նրա հետ մշտական կապ ենք պահպանում, մենք գիտակցում ենք, որ Նա մեր մեջ է մնում և հոգևոր գործություն է ուղարկում: **Ճյուղը** կարող է միայն այն ժամանակ **պտուղ տալ**, երբ **մնում է որթի վրա**: Հավատացյալների համար Քրիստոսի

տոսի նման պտուղ տալու միակ պայմանը, դա ամեն վայրկյան Քրիստոսի հետ հաղորդակցության մեջ ապրելն է:

15:5. Քրիստոսն **Ինքը որթն է**, հավատացյալները՝ **ճյուղերը**: Ինքնըստինքյան հասկանալի է, որ ոչ թե ճյուղն է ապրում որթի համար, այլ կյանքի հոսքը որթատունկից հոսում է ճյուղերի մեջ: Երբեմն խնդրում ենք. «Տե՛ր, օգնի՛ր ինձ՝ Քեզ համար ապրելու»: Լավ կլիներ խնդրե՛ինք. «Տե՛ր Հիսուս, Քո կյանքն իմ միջոցով ապրիր»: **Առանց Քրիստոսի՝ մենք ոչինչ չենք կարող անել**: Որթատունկի ճյուղը մի մեծ նպատակ ունի՝ պտուղ տալ: Նրանից կահույք չես կարող պատրաստել, տուն չես կառուցի: Դրանից նույնիսկ լավ վառելափայտ չի լինի: Բայց այն լավ է պտուղ տալու համար, քանի դեռ գտնվում է որթի վրա:

15:6. Այս համարը պատճառ է հանդիսացել շատ տարբեր կարծիքների համար: Ոմանք ենթադրում են, որ նկարագրված մարդը մեղքի մեջ ընկնող և դրա հետևանքով կործանվող հավատացյալն է: Այսպիսի մեկնաբանությունն ուղղակի հակասում է Սուրբ Գրքի համարներից շատերին, որոնք սովորեցնում են, որ Աստծո ճշմարիտ զավակներից ոչ մեկը չի կորչելու: Մյուսները կարծում են, որ այդ մարդն իրեն քրիստոնյա ձևացնողն է, ով վերըստին ծնունդ չի ունեցել: Հաճախ Հուդային՝ որպես այսպիսի մարդու օրինակ են ներկայացնում:

Մենք հավատում ենք, որ այդ մարդը ճշմարիտ հավատացյալ մեկն է, որովհետև ինչպես երևում է համարից, այս հատվածը ճշմարիտ քրիստոնյաներին է վերաբերում: Այստեղ էականը փրկությունը չէ, այլ որթի վրա մնալն ու *քերթատվությունը*: Անփութության ու առանց աղոթքի կյանքի պատճառով այսպիսի հավատացյալը կորցնում է Տիրոջ հետ հաղորդակցությունը: Արդյունքում նա մեղք է գործում, և նրա վկայությունը կործանվում է: Քրիստոսի մեջ մնալ չցանկանալու պատճառով նա **դուրս** կնետվի **որպես** մի **ճյուղ** ոչ թե Քրիստոսի, այլ ուրիշ մարդկանց կողմից: Ծյուղերը

հավաքում, **կրակի մեջ են գցում, ու նրանք կվառվեն:** Ոչ թե Աստված է դա անում, այլ մարդիկ: Սա ինչպե՞ս հասկանալ: Այդ ընկած քրիստոնյային մարդիկ ծաղրում են: Նրանք ցեխի մեջ կոխկոտում են նրա անունը, քրիստոնյայի նրա վկայությունը կրակի մեջ են նետում: Սա լավ է երևում Դավթի կյանքում: Նա ճշմարիտ հավատացյալ էր, բայց Տիրոջը չհնազանդեց ու շնության և սպանության մեղքերը գործեց: Տիրոջ թշնամիները նրան հայիոյեցին: Նույնիսկ այսօր անաստվածները ծիծաղում են Դավթի (և Դավթի Աստծո) վրա: Նրանք նետում են նրան այսպես ասած՝ կրակի մեջ:

15:7. Աղոթքի հաջող կյանք ունենալու գաղտնիքը մնալն է: Ինչքան մոտենում ենք Տիրոջը, այնքան ավելի շատ ենք սովորում Նրա մտքերով խորհել: Ինչքան շատ ենք Նրան Իր Խոսքի միջոցով ճանաչում, այնքան ավելի լավ ենք Նրա կամքը հասկանում: Որքան հաճախ են մեր ցանկությունները համընկնում Նրա կամքի հետ, այնքան ավելի վստահ կլինենք, որ Նա կպատասխանի մեր աղոթքներին:

15:8. Երբ Աստծո գավակներն աշխարհին ցույց են տալիս Քրիստոսի հետ իրենց նմանությունը, Հայրը **փառավորվում է:** Մարդիկ ստիպված են ընդունելու, թե Նա հզոր Աստված է, Ով կարող է այդքան չար մեղավորներին վերափոխել Աստծո սրբերի: Ուշադրություն դարձրեք այս գլխում գտնվող առաջընթացին՝ պտուղ (հ. 2), ավելի պտղաբեր (հ. 2), **շատ պտուղ** (հ. 8):

«Իմ աշակերտները կլինեք»: Սա նշանակում է, որ երբ մենք Նրա մեջ ենք մնում, *սպասուցում ենք*, որ Նրա **աշակերտներն ենք:** Եթե մենք մեր Տիրոջը նմանվենք, մարդիկ կտեսնեն, որ ճշմարիտ աշակերտներ ենք:

15:9. Մեր հանդեպ Փրկչի սերը այնպիսին է, ինչպիսին է Որդու հանդեպ **Հոր սերը:** Այսպիսի խոսքեր կարդալով՝ մեր սրբուհիները պաշտամունքով խոնարհվում են Նրա առջև: Դա նույն սերն է իր որակով ու մասշտաբով: Դա մեծ, անընդգրկելի, անսահման, խորը, ամեն մտքից վեր սերն է,

մեր հասկացողությունից շատ վեր. մարդ երբեք չի կարող լրիվ ըմբռնել այն: «Խորություն է, որի մեջ մեր բոլոր մտքերը կույ են գնում»:
«Հարասունք Իմ սիրո մեջ», - ասաց մեր Տերը: Սա նշանակում է, որ պետք է շարունակենք Նրա սիրո մեջ ու վայելենք այն մեր ողջ կյանքում:

15:10. Այս համարի առաջին մասը բացատրում է, թե ինչպես կարող ենք Նրա սիրո մեջ մնալ, պահել Նրա **պատվիրանները:** «Հիսուսի մեջ երջանիկ լինելու մի այլ ճանապարհ չկա՝ բացի Նրան վստահելուց ու հնազանդվելուց»: Համարի երկրորդ կեսը կատարյալ Օրինակ է մատուցում: Տեր Հիսուսը **պահեց Իր Հոր պատվիրանները:** Իր բոլոր գործերում Նա հնազանդվեց Աստծո կամքին: Նա միշտ ուրախություն էր վերապրում **Հոր** սիրուց: Ոչ մի բան չէր կարող խամրեցնել սիրելի հաղորդակցության քաղցր զգացումը:

15:11. Հիսուսը Իր խորը ուրախությունը Հոր հետ հաղորդակցվելու մեջ գտավ: Նա փափագում էր, որ Իր աշակերտներն էլ Իրեն վստահելուց բխող ուրախությունն ունենային: Նա ուզում էր, որպեսզի *Իր ուրախությունը* դառնա նրանց ուրախությունը: Ուրախության մասին մարդկանց պատկերացումն այն է, որ փորձեն երջանիկ լինել առանց Աստծո: Տերը սովորեցրեց, որ իսկական ուրախությունն այն ժամանակ է գալիս, երբ հնարավորինս ամբողջությամբ ենք Աստծուն մեր կյանքի մեջ ընդունում: **«Եվ որ ձեր ուրախությունը լրիվ լինի»** կամ «ամբողջացած»: Նրանց ուրախությունն ամբողջացած կլինի Քրիստոսի մեջ մնալու և Նրա պատվիրանները պահելու հետևանքով: Շատերը Հովհաննեսի Ավետարանի 15-րդ գլուխն օգտագործել են հավատացյալի ապահովության ուսմունքի դեմ կասկածներ հարուցելու համար: Նրանք նախորդ համարներն օգտագործել են՝ ցույց տալու, որ Քրիստոսի ոչխարներն էլ կարող են ի վերջո կորչել: Բայց Տիրոջ նպատակն այն չէր, «որ ձեր կասկածները լրիվ լինեն», այլ **«որ ձեր ուրախությունը լրիվ լինի»:**

2. Պատվեր՝ սիրել միմյանց (15:12-17)

15:12. Շուտով Տերը մեկնելու է Իր աշակերտներից: Նրանք մնալու են թշնամացած աշխարհում: Լարվածությունները կաճեն, աշակերտների միջև գուցե վեճեր ծագեն: Դրա համար էլ Տերը թողնում է այս անփոփոխ հրամանը. «**Միմյանց սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի**»:

15:13. Նրանք պետք է սիրեին՝ մինչև իսկ պատրաստ լինելով մեռնելու միմյանց համար: Այսպես վարվող մարդիկ միմյանց դեմ թշնամություն չեն ունենա: Մարդկային ինքնագոհության ամենամեծ օրինակն իր անձը իր **բարեկամների համար** դնելն է: Քրիստոսի աշակերտները կանչված են այսպիսի նվիրվածություն ցուցաբերելու համար: Ոմանք իրենց կյանքը դնում են բառացի իմաստով, ուրիշներն էլ իրենց կյանքն անցկացնում են անողով ծառայության մեջ՝ ծառայելով Աստծո գավակներին: Սրա օրինակը Տեր Հիսուսն է: Նա Իր կյանքը դրեց Իր բարեկամների համար: Իհարկե, երբ Նա մեռնում էր նրանց համար, նրանք դեռ թշնամիներ էին, բայց երբ փրկությունն ընդունեն, կդառնան Նրա բարեկամները: Ահա թե ինչու է «Նա մեռավ ինչպես Իր բարեկամների համար, այնպես էլ՝ թշնամիների» արտահայտությունը ճիշտ:

15:14. Կատարելով **այն, ինչ** Նա պատվիրեց մեզ, մենք ցույց ենք տալիս, որ Նրա **բարեկամներն ենք**: Այդ ձևով մենք չենք դառնում Նրա բարեկամները, այլ, ավելի շուտ, աշխարհին ցույց ենք տալիս, որ Նրա բարեկամներն ենք:

15:15. Այստեղ Տերը ընդգծեց **ծառայի ու բարեկամի** միջև տարբերությունը: **Ծառայից** միայն ակնկալվում է իրեն հանձնված առաջադրանքի կատարումը, իսկ **բարեկամները** վստահության են արժանանում: Բարեկամի համար մենք բացահայտում ենք մեր ապագայի ծրագրերը: Նրա հետ կիսում ենք մեր գաղտնիքները: Մի կողմից աշակերտները միշտ էլ Տիրոջ ծառաներն են, բայց նրանք ավելին են, քան ծառաները. նրանք դառնալու են բարեկամներ: Տերն արդեն նրանց համար բացահայտում էր

այն, ինչ **լսել էր** Իր **Հորից**: Նա պատմեց Իր գնալու մասին, Սուրբ Հոգու գալու մասին, Իր երկրորդ գալուստի մասին և ամեն ժամանակ Իր առջև նրանց պատասխանատվության մասին: Ինչ-որ մեկը նկատել է, որ որպես ճյուղեր՝ *մենք առանում ենք* (հ. 5), որպես աշակերտներ՝ *մենք հետևում ենք* (հ. 8) և որպես բարեկամներ՝ *հաղորդակցվում ենք* (հ. 15):

15:16. Որպեսզի հուսալքություն կամ ետ դառնալ չլինի, Հիսուսն աշակերտներին հիշեցրեց, որ Ինքն էր նրանց **ընտրողը**: Սա կարող է նշանակել, որ Նա ընտրեց նրանց հավիտենական փրկության, աշակերտության և պտուղ բերելու համար: Նա աշակերտներին մի գործի դրեց, որը նրանք պետք է անեն: Մենք պետք է **գնանք ու պտուղ բերենք**: **Պտուղը** կարող է նշանակել քրիստոնեական կյանքի շնորհը, օրինակ՝ սեր, ուրախություն, խաղաղություն և այլն: Կամ էլ պտուղ կարող է լինել Տեր Հիսուս Քրիստոսի մոտ բերված հոգին: Այս երկու տեսակ պտուղների միջև փոխադարձ կապ գոյություն ունի: Միայն այն դեպքում, երբ առաջին տեսակի պտղից արտադրենք, կկարողանանք երկրորդ տեսակի պտուղ տալու:

«**Եվ որ ձեր պտուղը մնա**» արտահայտությունն առաջնորդում է այն մտքին, որ պտղի տակ հասկացվում է հոգիների փրկությունը: Տերն աշակերտներ ընտրեց, որպեսզի նրանք գնային և *մնայուն պտուղ* բերեին: Նրան հետաքրքրում է ոչ թե հավատի պարզ դավանությունը, այլ փրկության իսկական գործերը: Լ. Ս. Չաֆերը ուշադրություն է դարձնում, որ այս գլխում խոսվում է աղոթքի արդյունավետության (հ. 7), կատարյալ ուրախության (հ. 11) և հավիտենական պտղի (հ. 16) մասին: «**Որպեսզի ինչ որ դուք... խնդրեք**»: Հաջող ծառայության գաղտնիքն աղոթքն է: Աշակերտներն ուղարկված էին առաջ գնալու, և նրանց խոստացված էր, որ **Հայրը** նրանց կտա այն **ամենը, ինչ** նրանք կխնդրեն Քրիստոսի **անունով**:

15:17. Տերը պատրաստվում էր աշա-

կերտներին զգուշացնելու աշխարհի թշնամական կեցվածքի մասին: Նա սկսեց ասելով, որ **միմյանց սիրեն**, միասին լինեն և մեկ հոգու պես դիմակայեն թշնամուն:

Ղ. Հիսուսը կանխատեսում է աշխարհի ատելությունը (15:18-16:4)

15:18-19. Աշակերտները չպետք է զարմանային կամ ընկճվեին, **եթե աշխարհը** նրանց **ատեր**: «**Եթե**» բառը ոչ մի կասկած չի արտահայտում այն մասին, որ դա պատահելու է, անկասկած, դա պիտի լինի: Աշխարհն **ատեց** Տիրոջը և պիտի ատի բոլոր նրանց, ովքեր Նրան են հետևում:

Աշխարհի մարդիկ սիրում են նրանց, ովքեր իրենց պես են ապրում. կեղտոտ հայհոյանքներ են օգտագործում, հագեցնում են մարմնի կրքերը կամ էլ սիրում են նրանց, ովքեր կիրթ մարդիկ են, բայց միայն իրենց համար են ապրում: Քրիստոնյաներն այդպիսիներին իրենց սուրբ կյանքով դատապարտում են, **դրա համար էլ** նրանց **ատում են**:

15:20. Այստեղ **ծառան** բառացիորեն նշանակում է «ստրուկ»: Աշակերտն աշխարհից ավելի լավ վերաբերմունք չպետք է սկսկալի, քան իր **Վարդապետը**: Նա նույնպես կհալածվի այնպես, ինչպես Հիսուս Քրիստոսը: Նրա խոսքերն էլ կմերժեն, ինչպես՝ Փրկչի խոսքերը:

15:21. Այդ ատելությունն ու հետապնդումը «**Իմ անվան համար** Է»: Այսինքն նրա համար, որ հավատացյալը միացած է Քրիստոսի հետ, Քրիստոսով կտրված է աշխարհից, կրում է Քրիստոսի անունը և նմանվում է Նրան: Աշխարհն Աստծուն չի ճանաչում: **Նրանք չեն ճանաչում** Նրան, Ով Տիրոջն ուղարկեց աշխարհ, որպեսզի Նա դառնա նրանց Փրկիչը: Բայց տգիտությունը ոչ մի դեպքում չի արդարացնում:

15:22. Տերն այստեղ չի սովորեցնում, որ եթե Նա չգար, ապա մարդիկ մեղավորներ չէին լինի: Ադամի ժամանակից սկսած՝ բոլոր մարդիկ մեղավոր են: Բայց նրանց մեղքը այնքան մեծ չէր, ինչպես հիմա: Այս մարդիկ տեսան Աստծո Որդուն և լսեցին Նրա զարմանալի խոսքերը: Նրանք դրանց մեջ

ոչ մի արատ չգտան: Այնուամենայնիվ, մերժեցին Նրան: Եվ հենց սա էր, որ նրանց մեղքը այդքան մեծ դարձրեց: Ամեն ինչ համեմատաբար է հասկացվում: Նրանց այլ մեղքերը, եթե համեմատենք նրանց սարսափելի մեղքի՝ փառաց Տիրոջն ուրանալու հետ, ոչինչ են: Այլևս նրանք ոչ մի **արդարացում չունեն իրենց մեղքի համար**: Նրանք մերժեցին «Աշխարհի Լույսին»:

15:23. Ատելով Քրիստոսին՝ նրանք ատեցին և Նրա **Հորը**: Հայրը և Որդին մեկ են: Նրանք չէին կարող ասել, որ Աստծուն սիրում են, քանի որ եթե Նրան սիրեին, կսիրեին նաև Նրան, Ում Նա ուղարկեց:

15:24. Նրանք պատասխանատու էին ոչ միայն նրա համար, որ լսեցին Քրիստոսի ուսմունքը, այլև տեսան Նրա հրաշքները: Մրա պատճառով էլ ավելի մեծ դատապարտության արժանացան: Նրանք **տեսան գործեր, որ ուրիշ ոչ մի մարդ** չէր կատարել: Այս վկայության առկայության դեպքում էլ Քրիստոսին մերժելն աններելի էր: Տերը մյուս բոլոր մեղքերը համեմատեց այս մեղքի հետ ու ասաց, որ նախորդները ոչինչ են վերջինիս նկատմամբ: Նրանք **ատեցին** Որդուն, իսկ դա նշանակում է, որ ատեցին նաև **Հորը**, դրա համար էլ նրանց համար հնչեց ահավոր դատավճիռը:

15:25. Տերը գիտեր, որ Իր նկատմամբ մարդկանց վերաբերմունքը ճշգրտորեն կանխատեսված էր մարգարեություններում: Սղմ. 69:4-ն ասում է, որ Քրիստոսին **առանց պատճառի պիտի ատեն**: Հիմա, երբ որ **սա եղավ**, Տերը նկատեց, որ նույնիսկ ՀԿ-ը, որն այդ մարդիկ բարձր էին գնահատում, կանխատեսեց Նրա հանդեպ նրանց անհիմն ատելությունը: Այսպիսի մարգարեության առկայությունը չէր նշանակում, որ այս մարդիկ *ստիպված էին* ատելու Քրիստոսին: Նրանք ասում էին Նրան իրենց *իսկ մտածված ընտրությամբ*, բայց Աստված կանխատեսել էր, որ դա կատարվելու է, և պատվիրեց Դավթին այդ մասին գրել Սաղմոս 69-ում:

15:26. Չնայած նրան, որ մարդիկ մերժեցին Քրիստոսին, Նրա մասին վկայությունը չընդհատվեց: Այն կշարունակի **Մխիթա-**

րիչը՝ Մուրբ Հոգին: Այստեղ Տերն ասաց, որ **Նա կուղարկի** Հոգուն, **Ով Հորից է:** Հովհաննեսի Ավետարանի 14:16-ում Հոգին *Հայրն է* ուղարկում: Մի՞թե սա ևս մի ապացույց չէ Ռոդո և Հոր հավասարության: Ո՛վ, եթե ոչ Աստված կարող է ուղարկել Նրան, Ով Աստված է. **Ճշմարտության Հոգին, որը ելնում է Հորից:** Սա նշանակում է, որ Աստված Նրան մշտական է ուղարկում, և Պենտեկոստի օրը Նրա գալուստը դրա յուրահատուկ օրինակն էր: Հոգին վկայում է Քրիստոսի մասին: Սա է Նրա մեծ առաքելությունը: Նա չի ձգտում մարդկանց ուշադրությունն Իր վրա կենտրոնացնել, թեև Նա Երրորդության անդամներից մեկն է: Բայց Նա թե՛ մեղավորի, և թե՛ սրբի ուշադրությունն ուղղորդում է փառքի Տիրոջը:

15:27. Հոգին պետք է վկայի անմիջականորեն աշակերտների միջոցով: Նրանք Տիրոջ հետ էին Նրա հրապարակային ծառայության **սկզբից**, Նրան ճանաչում էին, գիտեին և կարող էին ուրիշներին վկայել Նրա Անձնավորության ու գործերի մասին: Եթե մեկը կարողանար գոնե մի բիծ գտնել Տիրոջ մեջ, դա պետք է լիներ նա, ով բոլորից շատ էր Նրա հետ եղել: Բայց աշակերտները Նրանում ոչ մի մեղք չէին նշարել: Նրանք կարող էին վկայել, որ Հիսուսն Աստծո անմեղսունակ Ռոդին է և աշխարհի Փրկիչը:

16:1. Հավանաբար աշակերտներն էլ բոլոր հրեաների պես փայփայում էին այն հույսը, որ Մեսիան Իր Թագավորությունը կհաստատի Իսրայելի մեջ և կկործանի Հռոմեական իշխանությունը: Դրա փոխարեն Տերը նրանց ասաց, որ պետք է մեռնի, հարություն առնի և վերադառնա Երկինք: Երբ Մուրբ Հոգին իջնի, աշակերտները կդառնան Հիսուս Քրիստոսի վկաները: Նրանց ատելու և հալածելու են: Այս բոլորը Տերը նրանց նախապես ասաց, որ պետքի հետո չհիասթափվեն, **չգայթակղվեն**, չցնցվեն:

16:2-3. Հրեաներից շատերի համար **ժողովարաններից** դուրս վտարվելը վատագույն բանն էր, որ կարող էր պատահել մե-

կին: Եվ դեռ դա էր պատահելու Հիսուսի աշակերտը դարձող հրեաներին: Քրիստոնեական հավատն այնքան ատելի պիտի լինի, որ այն արմատախիլ անել ձգտողները պիտի **կարծեն**, թե **Աստծուն** են հանեցնում: Սա ցույց է տալիս, որ մարդ կարող է շատ անկեղծ լինել, շատ նախանձախնդիր և միևնույն ժամանակ՝ շատ *սխալ*:

Այս բոլորի հիմքում ընկած է Քրիստոսի աստվածության մերժումը: Հրեաները չեն ընդունում Նրան և դրանով իսկ չեն ընդունում **Հորը**:

16:4. Տերը կրկին նախապես զգուշացնում է աշակերտներին, որ չսարսափեն, երբ նրանց վրա գան այս դժվարությունները: Նրանք պետք է **հիշեն**, որ Տերը կանխատեսել էր հալածանքը, պետք է իմանան, որ այս բոլորը նրանց կյանքի համար ունեցած ծրագրի մի մասն է: Նախկինում Տերը նրանց շատ բան չէր ասում, որովհետև նրանց հետ էր: Ոչ մի անհրաժեշտություն չկար նրանց անհանգստացնելու կամ նրանց մտքերը շեղելու այն բաներից, ինչ Նա պետք է սովորեցներ նրանց: Բայց հիմա, երբ հեռանում էր նրանցից, Նա պետք է նրանց հաղորդեր, թե ինչ ճանապարհ է ընկած նրանց առջևում:

Ը. Ճշմարտության Հոգու գալուստը (1:5-15)

16:5. Այս համարը կարծես հիապոստոսություն է արտահայտում, որ աշակերտներն այնքան էլ հետաքրքրված չէին, թե առաջիկայում ինչ է սպասում Տիրոջը: Չնայած նրանք հարցրին Նրան, թե **ուր** է Նա **գնում**, սակայն չէր երևում, որ այդքան հետաքրքրված էին:

16:6. Նրանց ավելի շատ անհանգստացնում էր իրենց ապագան, ոչ թե Նրա: Հիսուսին սպասվում էին խաչ ու գերեզման, նրանց՝ հետապնդում Քրիստոսին ծառայելու համար: Նրանց **տրամությունն էր պատել** ոչ թե Քրիստոսի համար, այլ իրենց սպասվող նեղությունների:

16:7. **Սակայն** նրանք առանց օգնության ու մխիթարության չեն մնա: Քրիստոսն ուղարկելու է Մուրբ Հոգուն, Ով կլինի

նրանց **Մխիթարիչը**: **Մխիթարիչի** գալը աշակերտների **օգտին** է լինելու: Նա կատարի ու կխրախուսի, քաջություն կտա, կսովորեցնի նրանց և Քրիստոսին ավելի իրական կդարձնի նրանց համար, քան երբևէ նախկինում: Մխիթարիչը չի գա այնքան ժամանակ, քանի դեռ Տեր Հիսուսը Երկինք չի վերադարձել ու փառավորվել: Իհարկե, Սուրբ Հոգին աշխարհում էր և դրանից առաջ, բայց հիմա Նա գալու է մեկ այլ նպատակով, որպեսզի հանդիմանի աշխարհին և ծառայի փրկագնվածներին:

16:8. Սուրբ Հոգին **աշխարհին պիտի հանդիմանի մեղքի, արդարության և դատաստանի համար**: Ընդունված կարծիք է, որ Նա այս բաների մասին ներքին իրագեկություն է ստեղծում ամեն մի անհատի կյանքում: Թեև սա ճշմարտություն է, սակայն հաջորդ համարներում այդ մասին չէ, որ խոսվում է: Սուրբ Հոգին հանդիմանում է **աշխարհին** հենց երկրի վրա գտնվելու Իր ներկայության փաստով: Նա չպետք է այստեղ լիներ, որովհետև Տեր Հիսուսն Ինքը պետք է երկրի վրա լիներ ու ամբողջ աշխարհի վրա թագավորեր: Բայց աշխարհը մերժեց Նրան, և Նա վերադարձավ Երկինք: Սուրբ Հոգին այստեղ ուղարկվեց մերժված Քրիստոսի փոխարեն, և դա ցուցադրում է աշխարհի հանցանքը:

16:9. Սուրբ Հոգին աշխարհին մեղադրում է Քրիստոսին **չհավատալու մեղքի** համար: Տերն արժանի էր հավատի: Նրանում չկար այնպիսի բան, որի պատճառով մարդիկ չկարողանային հավատալ Նրան: Բայց նրանք մերժեցին: Եվ աշխարհում Սուրբ Հոգու ներկայությունը վկայում է նրանց հանցագործության մասին:

16:10. Փրկիչը հաստատեց, որ Իր մեջ է ճշմարտությունը, սակայն մարդիկ հայտարարեցին, որ Նրանում դև կա: Եզրափակիչ խոսքն ասաց Աստված: Նա պատասխանեց. «Իմ Որդին արդար է, և Ես սա կապացուցեմ Նրան մեռելներից հարուցանելով և Երկինք վերցնելով»: Սուրբ Հոգին վկան է այն փաստին, որ Քրիստոսը ճիշտ է, իսկ աշխարհը՝ սխալ:

16:11. Սուրբ Հոգու ներկայությունը նաև աշխարհին հանդիմանում է եկող **դատաստանի** համար: Այն, որ Նա այստեղ է, նշանակում է, որ սատանան արդեն դատապարտված է խաչի վրայից, և բոլոր Փրկչին մերժողները վերջին օրը՝ դատաստանի ժամանակ, պետք է նրա հետ կիսեն իրենց սարսափելի ճակատագիրը:

16:12. **Դեռևս շատ բաներ** ուներ Տերն ասելու աշակերտներին, բայց այդ ժամանակ նրանք չէին կարող այդ ամբողջն ընդգրկել: Սա ուսուցանելու կարևոր սկզբունք է: Քանի դեռ հաջողությամբ չի յուրացվել նախկինում սովորածը, չի կարելի ուսուցանել հաջորդող ճշմարտությունները: Տերը երբեք Իր աշակերտներին չձանաբեռնեց ուսմունքով: Նա վարվեց «Տող առ տող, պատվիրան առ պատվիրան» սկզբունքով:

16:13. Տիրոջ կողմից սկսած գործը **ճշմարտության Հոգին** է շարունակելու: **Նա ամեն ճշմարտության կառաջնորդի** նրանց: Մեկնաբանություն կա, որ ամբողջ ճշմարտությունը տրվել է առաքյալներին իրենց ողջ կյանքի ընթացքում: Նրանք էլ իրենց հերթին այն շարադրեցին թողի վրա, և այսօր մենք այն ունենք ՆԿ-ում: Այն միացվեց ՀԿ-ի հետ, և այս ձևով ավարտվում է մարդու համար տրված Աստծո գրավոր հայտնությունը: Միանգամայն ճշմարիտ է մնում այն, որ Հոգին Աստծո զավակներին առաջնորդում է ամեն ճշմարտության: Նա դա կատարում է Սուրբ Գրքի միջոցով: Նա պիտի **խոսի միայն այն**, ինչ Նրան տրված է խոսել Հորից և Որդուց: **«Եվ ձեզ պիտի ցույց տա գալիք բաները»**: Այս պայմանն իսկապես կատարված է ՆԿ-ում, հատկապես Հայտնության գրքում, որտեղ բացահայտված ու հռչակված է ասպազան:

16:14. Նրա հիմնական նպատակը Քրիստոսին **փառավորելն** է: Սա մեզ համար կարող է չափորոշիչ ծառայել ամեն մի ուսմունք և քարոզ գնահատելիս: Եթե ծառայության արդյունքում Փրկիչը մեծարվի, ուրեմն դա Սուրբ Հոգու գործն է: **«Իմից պիտի վերցնի և ձեզ պիտի հաղորդի»**.

սա նշանակում է, որ Նա Քրիստոսին վերաբերող մեծ ճշմարտություններ է ստանալու: Այդ ճշմարտությունները Նա հայտնելու է հավատացյալներին: Այս թեման երբեք չի կարող սպառվել:

16:15. Ամեն ինչ, որ **Հայրն** ունի, պատկանում է նաև Որդուն: Սա այն սրբությունն ու կատարելությունն է, որոնց մասին Քրիստոսն ասաց 14-րդ համարում: Հոգին առաքյալներին հայտնեց Տեր Հիսուսի փառավոր կատարելության, ծառայության, իշխանության, շնորհի և լիության մասին:

Մ. Վիշտը ուրախության կփոխվի (16:16-22)

16:16. Այս համարի ժամանակային ճշգրիտ սահմանները հաստատված չեն: Այն կարող է նշանակել, որ Տեր Հիսուսը երեք օր նրանցից հեռու կլինի, իսկ հետո նորից կհայտնվի նրանց Իր հարությունից հետո: Այն կարող է նշանակել, որ Հիսուսը վերադառնալու է Երկինք՝ Իր Հոր մոտ, և սպա **մի քիչ ժամանակ հետո** (ներկա դարում) ետ կգա նրանց մոտ (Նրա երկրորդ գալուստը): Կամ էլ այն կարող է նշանակել, որ **մի քիչ ժամանակ** նրանք **չեն տեսնի** Նրան ֆիզիկական աչքերով, բայց երբ Սուրբ Հոգին իջնի Պենտեկոստեի օրը, հավատով շատ ավելի մոտ կլինեն, կզգան Նրան, քան նախկինում:

16:17. Նրա աշակերտները շփոթվեցին: Ծփոթության պատճառն այն էր, որ 10-րդ համարում Փրկիչն ասաց. «Ես Իմ Հոր մոտ եմ գնում, և Ինձ այլևս դուք չեք տեսնի»: Հիմա էլ ասաց. «**Մի քիչ ժամանակ, և դուք Ինձ չեք տեսնի, դարձյալ մի քիչ՝ և կտեսնեք Ինձ**»: Նրանք չկարողացան համաձայնեցնել այս հաստատումները:

16:18. Նրանք իրար հարցնում էին, թե ինչ է նշանակում «**մի քիչ ժամանակ**» խոսքը: Չարմանալի է, որ հիմա էլ մենք ենք այս նույն դժվարության առջև կանգնած: Չզիտենք, թե դա վերաբերում է Նրա հարությանը նախորդած երեք օրերին, թե՞ Պենտեկոստեին նախորդող քառասուն օրերին, կամ Նրա երկրորդ գալստից առաջ ավելի քան 1900 տարիներին:

16:19-20. Որպես Աստված՝ Տեր Հիսուսը կարողում էր նրանց մտքերը: Իր հարցերով Նա ցույց տվեց, որ գիտի նրանց բոլոր տարակուսանքները:

Նա չպատասխանեց նրանց անմիջական դժվարությանը, բայց «մի քիչ ժամանակի» մասին հետագա տեղեկություն տվեց: Աշխարհը կուրախանա, որովհետև նրան կհաջողվի իսպել Տեր Հիսուսին, իսկ աշակերտները **պիտի լան ու պիտի ողբան**: Նրանց **տրտմությունն ուրախության պիտի փոխվի**: Այդպես էլ եղավ՝ սկզբում հարությունը, իսկ հետո՝ Հոգու էջքը: Իսկ այն ժամանակ, երբ Տեր Հիսուսը կրկին վերադառնա, բոլոր սերունդների բոլոր աշակերտների համար տրտմությունն ուրախության կփոխվի:

16:21. Ավելի հիանալի բան չկա, քան այն, որ երեխայի ծնվելուց հետո մայրն ինչքան շուտ է մոռանում **երկունքի** ցավերը: Այդպես կլինի նաև աշակերտների հետ: Տիրոջից բաժանվելուց առաջացած իրենց տրտմությունն արագ կմոռացվի, երբ նրանք կրկին տեսնեն Նրան:

16:22. Եվ մենք նորից պետք է խոստովանենք, որ չգիտենք, թե ինչպիսի ժամանակի համար են ակնարկում Տիրոջ խոսքերը՝ «... **Բայց նորից պիտի տեսնեն ձեզ**»: Արդյոք այս խոսքերը վերաբերում են Նրա հարությա՞նը, Պենտեկոստեի օրը Հոգու էջքին՞, թե՞ Նրա երկրորդ գալստյանը: Բոլոր երեք դեպքերում էլ արդյունքը մեկն է. նրանք ցնծալու են, և ոչ մեկը չի կարող նրանցից այդ **ուրախությունը** խվել:

Յ. Աղոթել Հորը Հիսուսի անունով (16:23-28)

16:23. Մինչև հիմա աշակերտներն իրենց բոլոր հարցերով ու խնդրանքներով Տիրոջն էին դիմում: Եվ **այն օրը** (Պենտեկոստեի օրը Հոգու իջմամբ ուղեկցվող փուլը) Նա այլևս ֆիզիկապես նրանց հետ չի լինելու, այնպես որ նրանք չեն կարողանալու Նրան հարցեր տալ: Արդյո՞ք այստեղ նկատի ունի այն, թե նրանք ոչ մեկին չեն կարող դիմել: Ո՛չ, **այն օրը** նրանք արտոնություն են ստանալու **խնդրելու Հորը**: Նա ամեն ինչ կտա

նրանց, ինչ որ խնդրեն Հիսուսի անունով: Նա մեզ ամեն բան կտա, ինչ էլ որ խընդրենք, ոչ թե որ արժանի ենք, այլ որովհետև արժանի է Տեր Հիսուսը:

16:24. Դրանից առաջ աշակերտները երբեք չէին աղոթել Հայր Աստծուն՝ Տիրոջ **անունով**: Հիմա կարող էին դա **անել**: Պատասխանած աղոթքի շնորհիվ նրանց **ուրախությունը** ամբողջական կլինի:

16:25. Տիրոջ ուսմունքում ամեն միտք չէր, որ ակնհայտ է առաջին հայացքից: Նա օգտագործեց առակներ ու **պատկերավոր լեզու**: Նույնիսկ այս գլխում միշտ չէ, որ կարող ենք վստահ լինել նշանակությունը ճիշտ հասկանալուն: Մուրբ Հոգու գալուստով **Հոր** մասին ուսմունքն ավելի հասկանալի դարձավ: Գործք Առաքելոց գրքում և թղթերում ճշմարտությունը բացահայտվում է արդեն ոչ թե առակների միջոցով, այլ ուղղակի հաղորդագրությունների միջոցով:

16:26. «Այն օրը». կրկին նկատի ունի Մուրբ Հոգու շրջանը, որում հիմա ապրում ենք: Մեր առանձնաշնորհումն այն է, որ կարող ենք Հորից խնդրել Տեր Հիսուսի **անունով**: «Եվ Ես չեմ ասում ձեզ, թե Ես ձեզ համար պիտի աղաչեմ Հորը», այսինքն՝ Հորը պետք չէ համոզել, որ մեր աղոթքներին պատասխանի: Տերը Նրան խնդրելու կարիք չի ունենալու: Այնուամենայնիվ, պետք է հիշենք, որ Տեր Հիսուսն է Աստծո և մարդկանց միջև Միջնորդը և Նա Իր ընտրյալների համար բարեխոսում է Աստծո գահի առջև:

16:27. Հայրը սիրում է աշակերտներին, քանի որ նրանք ընդունեցին Քրիստոսին, **սիրեցին** Նրան և **հավատացին** Նրա աստվածությանը: Հենց այս պատճառով էլ կարիք չկա, որ Տերը Հորից խնդրի մեզ համար ինչ-որ բան անել: Մուրբ Հոգու գալով՝ նրանք պիտի վայելեն Հոր հետ մտերմության նոր մակարդակ: Նրանք կարող են վստահաբար մոտենալ Նրան, որովհետև **սիրեցին** Նրա Որդուն:

16:28. Այստեղ Տերը նորից խոսեց Հայր Աստծո հետ հավասար լինելու մասին: Նա

չասաց. «Ես Աստծուց եկա», կարծես թե Նա ընդամենը Աստծո կողմից ուղարկված մարգարե է, այլ «**Հորից դուրս ելա**»: Սա նշանակում է, որ Նա հավիտենական Հոր հավիտենական Որդին է, և հավասար է Հայր Աստծուն: Նա **աշխարհ** եկավ որպես Նա, Ով ապրում էր մի ուրիշ վայրում մինչ Իր գալուստը: Համբարձումից հետո Նա թողեց աշխարհը և վերադարձավ **Հոր մոտ**: Մրանք փառքի Տիրոջ «կենսագրական» կարճ տեղեկություններն են:

Ն. Նեղություն և խաղաղություն (16:29-33)

16:29-30. Հիսուսի **աշակերտները** կարծեցին, որ հիմա՝ առաջին անգամ, ունակ են Նրան հասկանալու: Նա այլևս պատկերավոր լեզու չէր օգտագործում, ինչպես նրանք **ասացին**:

Նրանք ենթադրում էին, որ **հիմա** կհասկանան Նրա Անձնավորության գաղտնիքը: Հիմա նրանք **հավատում էին**, որ Նա կատարյալ գիտություն ունի և *Աստծուց էր դուրս եկել*: Բայց Նա ասաց, որ *Հորից է դուրս եկել*: Արդյոք նրանք հասկացա՞ն սրա նշանակությունը: Արդյոք հասկացա՞ն, որ Հիսուսն աստվածության Անձերից մեկն է:

16:31. Այս հարցադրումով **Հիսուսն** ուզեց նրանց հասկացնել, որ նրանց հավատը դեռ կատարյալ չէ: Նա գիտեր, որ Իրեն սիրում ու վստահում են, բայց նրանք իսկապես գիտեի՞ն, որ Նա մարմնով հայտնված Աստված է:

16:32. Շուտով Նրան կձերբակալեն, կտանջեն ու կխաչեն: Բոլոր աշակերտները Նրան կլքեն ու կցրվեն՝ յուրաքանչյուրն իր ուղղությամբ: Բայց Նա մենակ չի մնա, որովհետև **Հայրը** Իր **հետ** է: Իսկ նրանք հենց սա՝ Հայր Աստծո հետ ունեցած միությունը չէին ընկալում: Հենց այդ միությունն էր սատարելու Նրան, երբ աշակերտները փախչեին՝ իրենց կյանքը փրկելու համար:

16:33. Աշակերտների հետ այս գրույցի նպատակը հենց դա է, որ նրանք **խաղաղություն ունենան**: Երբ նրանց ատեն, հետապնդեն, հալածեն, զրպարտեն, նույնիսկ

չարչարեն, նրանք կարող են **խաղաղութուն** ունենալ *Նրանում*: Նա **աշխարհին** հաղթեց Գողգոթայի խաչով: Չնայած բոլոր չարչարանքներին՝ նրանք կարող են վստահ լինել, որ հաղթողի կողմն են:

Սուրբ Հոգու գալուստով՝ նրանք հակառակորդին դիմակայելու նոր գործություն ու քաջություն կունենան:

Ծ. Հիսուսն աղոթում է Իր ծառայության համար (17:1-5)

Հիմա մենք մի գլուխ ենք դիտարկում, որը հայտնի է որպես Տեր Հիսուսի քահանայապետական աղոթք: Այս աղոթքում Նա բարեխոսում էր հենց Իր համար: Մա մի պատկեր է Նրա ներկայիս երկնային ծառայության մասին, որտեղ Նա աղոթում է Իր ժողովրդի համար: Մարկոս Ռեյնսֆորդը լավ է ասել դրա մասին.

«Ամբողջ աղոթքը Աստծո աջ կողմում նստած մեր օրհնյալ Տիրոջ բարեխոսության հրաշալի պատկերն է: Ոչ մի հակառակ խոսք Իր ժողովրդի մասին, ոչ մի հիշատակում նրանց անկումների կամ թերությունների մասին...»

Ոչ, նրանց մասին Նա խոսում է որպես Հոր ուշադրության կենտրոնում եղողների, որպես Իր հետ առնչվողների, որ արժանի են լիիրավ ստանալու այն, ինչ Նա Երկնքից իջավ նրանց պարգևելու... Իր ընտրյալների համար Տիրոջ բոլոր հատուկ բարեխոսությունները վերաբերում են հոգևոր բաներին. դրանք վերաբերում են երկնային օրհնություններին: Տերը նրանց համար չի խնդրում հարստություն կամ պատիվ, աշխարհային իշխանություն կամ հաջող առաջխաղացում ծառայության մեջ, այլ ամենայն անկեղծությամբ խնդրում է պահպանել նրանց չարից, հեռու պահել աշխարհայինից, օգնել իրենց պարտքը կատարելու և բարեհաջող տուն՝ Երկինք գնալու: Հոգևոր հաջողությունն ամենալավ հաջողությունն է. դա ճշմարիտ բարեհաջողության ցուցիչն է»:⁴⁵

17:1. Ժամը հասել է: Թշնամիները մինչ այդ պահը չկարողացան Նրան բռնել, որովհետև Նրա ժամը *չէր* եկել: Բայց հիմա

եկել էր Տիրոջ մեռնելու ժամանակը: «**Փառավորի՛ր Քո Որդուն**», - աղոթում էր Փրկիչը: Նա կանխատեսում էր խաչի վրա Իր մահը: Եթե Նա գերեզմանում մնար, աշխարհը կիմանար, որ Նա մահկանացու մարդ էր: Բայց եթե Աստված, Նրան մեռելներից հարություն տալով, փառավորեր, կապացուցեր, որ Նա Աստծո Որդին է ու աշխարհի Փրկիչը: Աստված պատասխանեց այս խնդրանքին՝ Տեր Հիսուսին հարություն տալով երրորդ օրը, և հետո Նրան ետ՝ երկինք վերցնելով՝ Նրան պատկեց փառքով ու պատվով:

«**Որ Քո Որդին էլ Քեզ փառավորի**», - շարունակեց Տերը: Այս խոսքերի նշանակությունը բացատրվում է հաջորդ երկու համարներում: Հիսուսը փառավորում է Հորը՝ հավիտենական կյանք տալով Իրեն հավատացողներին: Աստված փառավորված է, երբ ամբարիշտ տղամարդիկ ու կանայք վերափոխվում են և դրսևորում Տեր Հիսուսի կյանքն այս երկրի վրա:⁴⁵

17:2. Որպես Նրա քավչարար զոհաբերության արդյունք՝ Աստված Իր Որդուն **իշխանություն տվեց ամեն մարմնի վրա:** Այս **իշխանությունը** Նրան իրավունք է տալիս **հավիտենական կյանք տալ** բոլոր նրանց, ում Հայրը **տվել է Նրան:** Այստեղ դարձյալ տեսնում ենք, որ աշխարհի արարումից առաջ Աստված ոմանց ընտրել է որպես Քրիստոսին պատկանողների: Սակայն հիշեցե՛ք, որ Աստված փրկություն է առաջարկում ամեն մի անհատի, ով կրնա ինչի Հիսուս Քրիստոսին: Չկա մեկը, ով չի կարող փրկվել, եթե վստահի Փրկչին:

17:3. Ահա պարզ բացատրությունը, թե ինչպե՛ս **հավիտենական կյանք** ստանալ. **ճանաչել Աստծուն և Հիսուս Քրիստոսին՝ միակ ճշմարիտ Աստծուն՝** ի տարբերություն կուռքերի, որոնք ճշմարիտ աստվածներ չեն: Այս համարը չի նշանակում, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված չէ: Այն, որ Նրա անունը հիշատակված է Հայր Աստծո հետ որպես հավիտենական կյանքի միակ աղբյուր, նշանակում է, որ Նրանք հավասար են: Այստեղ Տերն Ինքնիրեն անվանում է **Հիսուս Քրիստոս:** «**Քրիստոս**»

նշանակում է «Մեսիա»: Այս համարը հերքում է այն մեղադրանքը, թե Հիսուսը երբեք չի հաստատել, որ Ինքը Մեսիան է:

17:4. Երբ Տերն արտասանեց այս խոսքերը, Նա այնպես ասաց, կարծես թե արդեն մահացել, թաղվել ու հարություն էր առել: Նա Իր անմեղ կյանքով, հրաշքներով, չարչարանքներով, մահով ու հարությամբ Իր Հորը **փառավորեց**: Նա **կատարեց** փրկության **գործը**, որը Հայրն էր **տվել** իրեն: Ահա թե ինչպես է Ռայրը այդ մասին գրում.

«Խաչելությամբ փառավորվեց Հայրը: Այն փառավորեց Նրա իմաստությունը, հավատարմությունը, սրբությունն ու սերը: Այն բացահայտեց ծրագիրն իրականացնելու Նրա իմաստությունը, որի շնորհիվ Նա կարողացավ մնալ արդար ու միաժամանակ՝ մեղավորներին արդարացնող: Այն բացահայտեց Իր տված խոստումը պահելու Նրա հավատարմությունը, որ կնոջ սերունդը կջախջախի օձի գլուխը: Այն ցուցադրեց Նրա սրբությունը, որը պահանջեց կատարել Իր օրենքը մեր մեծ Փոխանորդի միջոցով: Իր սերը Նա հայտնեց՝ մեղավոր մարդուն այնպիսի Միջնորդ, այնպիսի Ազատարար և Բարեկամ ուղարկելով, ինչպիսին Նրա հավիտենական Որդին է:

Խաչելությամբ փառավորվեց Որդին: Այն փառավորեց Նրա կարեկցանքը, համբերությունն ու գորությունը: Այն ցույց տվեց Նրա խորիմաստ կարեկցությունը, որովհետև Նա մեր փոխարեն մահացավ՝ չարչարվելով մեր երկրի վրա: Նա ընդունեց մեր մեղքերն ու անեծքը՝ մեզ փրկագնելով Իր իսկ Արյան գնով: Այն բացահայտեց Նրա մեծ համբերությունը՝ մեռնելով շատ մարդկանց համար անսովոր մահով. Նա կամավոր համբերեց այնպիսի ցավի ու տանջանքի, որոնք ոչ ոք չի կարող պատկերացնել, այն էլ այն ժամանակ, երբ բավական էր Նրան մի բառ ասել, և իսկույն Աստծո հրեշտակները կգային: Նա արտահայտեց Իր մեծ գորությունը, որովհետև կրեց ամբողջ աշխարհի մեղքերի ծանրությունը, հաղթեց սատանային ու նրանից խլեց իր ավարը»:⁴⁶

17:5. Մինչ Իր աշխարհ գալը Քրիստոսը Աստծո հետ էր բնակվում Երկնքում: Երբ հրեշտակները տեսան Տիրոջը, տեսան Նրա աստվածային ողջ փառքը: Նրանց համար Նա անվիճելիորեն Աստված էր: Բայց երբ Նա իջավ մարդկանց մեջ, աստվածային փառքը ծածկված էր: Թեև Նա շարունակում էր Աստված լինել, սակայն դա ակնհայտ չէր մարդկանց մեծամասնության համար: Նրանք նայում էին Նրան՝ որպես հյուսնի Որդու: Այստեղ Փրկիչը խնդրում է, որ վերականգնվի Իր երկնային փառքի տեսանելի դրսևորումը: «... **Ո՛վ Հայր, Քեզնով փառավորի՛ր Ինձ՝ այն փառքով**» խոսքերը նշանակում են. «Փառավորի՛ր Ինձ Քո ներկայության մեջ Երկնքում: Թե՛ւյլ տուր վերականգնվի այն սկզբնական փառքը, որն Ես բաժնեկցում էի Քեզ հետ Երկնքում մինչ Իմ մարմին առնելը»: Սա հստակ ապացուցում է, որ Քրիստոսը գոյություն ուներ աշխարհի ավարումից առաջ:

Ո. Հիսուսն աղոթում է Իր աշակերտների համար (17:6-19)

17:6. Հիսուսն Աստծո **անունը հայտնեց** աշակերտներին: Սուրբ Գրքում «անունը» նշանակում է Անձնավորությունն իր ստորագելիներով ու բնավորությամբ: Քրիստոսը ամբողջությամբ հայտնեց Հոր ճշմարիտ բնությունը: Աշակերտները Որդուն էին **տրվել աշխարհից**: Նրանք առանձնացվել էին մարդկության անհավատ մեծամասնությունից և առանձին էին պահվում, որպեսզի պատկանեն Քրիստոսին: «Նրանք *ընտրված էին* Հորից աշխարհի արարումից առաջ, տրված էին Քրիստոսին որպես պարզև Հորից ու դարձան Նրանը՝ փրկագնող Արյան միջոցով», - գրել է Ջեյ Ջի Բեյլթը:

«**Եվ նրանք Քո խոսքը պահեցին**», - ասաց Տերը: Չնայած նրանց բոլոր անհաջողություններին ու թերություններին՝ Նա նրանց պատվում է՝ ասելով, որ նրանք հավատացել են Իրեն ու պահպանել Իր ուսմունքը: «Ոչ մի վատ խոսք Իր փրկագնածների մասին, - գրում է Ռեյխսֆորդը, - ոչ մի

ակնարկություն այն մասին, թե նրանք ինչ են արել կամ պատրաստվում անելու. քել Նրան»:

17:7-8. Փրկիչը կատարելապես հայտնեց Իր Հորը: Նա աշակերտներին բացատրեց, որ խոսել ու գործել էր ոչ Իր իշխանությամբ, այլ միայն Իր Հոր կամքով: Այնպես որ **նրանք իմացան, որ Հայրը ուղարկեց Որդուն:**

Ավելին՝ Քրիստոսը չէր Իր առաքելության *նախաձեռնողը*: Նա հնազանդվեց Հոր կամքին: Նա Եհովայի կատարյալ ծառան էր:

17:9. Նա աշակերտների համար աղոթեց որպես քահանայապետ. Նա **չաղոթեց** ամբողջ **աշխարհի համար**: Մա չի նշանակում, որ Քրիստոսը երբեք չի աղոթել աշխարհի համար: Խաչի վրա Նա խնդրեց. «Հայր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում»:

Բայց այստեղ աղոթեց որպես այն Մեկը, Ով հավատացյալներին ներկայացրեց Աստծո գահի առջև: Այստեղ Նրա աղոթքը միայն Իրենների համար էր:

17:10. Այս համարում ցույց է տրվում Հոր և Որդու կատարյալ միությունը: Ոչ մի սովորական մարդ չէր կարող ազնվորեն ասել այս խոսքերը: Մենք կարող ենք Աստծուն ասել. «**Եվ ինչ որ Իմն է, բոլորը Քոնն է**», բայց չենք կարող ասել. «**Եվ ինչ որ Քոնն է, Իմն է**»: Որդին հավասար է Հորը, դրա համար էլ կարող է այսպես ասել: 6-19 համարներում Հիսուսը ներկայացնում է Իր խեղճ ու վախկոտ հոտին և յուրաքանչյուր գառնուկին բազմազույն հանդերձանք հազցնելով՝ հայտարարում է. «**Եվ Ես փառավորված եմ Նրանց մեջ**»:

17:11. Տեր Հիսուսը սպասում էր Իր Երկինք վերադառնալուն: Նա այնպես էր աղոթում, կարծես արդեն գնացել էր այնտեղ: Ուշադրություն դարձրեք «**Մուրք Հայր**» անվանը: «**Մուրք**»-ը խոսում է Նրա մասին, Ով *անսասնան բարձր* է: «**Հայր**»-ը խոսում է Նրա մասին, Ով *անսասնան հարազատ* է:

Հիսուսի աղոթքը. «**Որ նրանք մեկ լինեն**» խոսքը վերաբերում է քրիստոնյանե-

րի միաբանությանը: Քանի որ Հայրն ու Որդին մեկ են բարոյական նմանությամբ, ապա հավատացյալներն էլ պետք է միավորվեն, որպեսզի նմանվեն Տեր Հիսուսին:

17:12. **Երբ** Փրկիչն աշակերտների **հետ էր**, Նա **պահեց նրանց Հոր անունով**, այսինքն՝ Իր գործությամբ ու իշխանությամբ պահպանեց, որ հավատարիմ լինեն Իրեն: «**Նրանցից ոչ մեկը կորած չէ**, - ասաց Տեր Հիսուսը, - **բացի կորստյան Որդուց**», այսինքն՝ Հուդայից: Բայց դա չի նշանակում, որ Հուդան նրանցից մեկն էր, ում Հայրը տվեց Որդուն, կամ որ նա երբևէ ճշմարիտ հավատացյալ է եղել: Նախադասությունը հետևյալն է նշանակում. «Նրանց, ում Դու տվեցիր Ինձ, Ես պահեցի, և նրանցից ոչ մեկը կորած չէ, բայց կորըստյան որդին կորած է, որպեսզի կատարվի սուրբգրությունը»: «**Կորստյան որդի**» անունը նշանակում է, որ Հուդան դատապարտված էր հավիտենական կորըստյան կամ անեծքի: Հուդային չատիպեցին մատնել Հիսուսին, որպեսզի մարգարեությունը կատարվի: Նա ինքը որոշեց մատնել Փրկչին, և այս ձևով **գրվածը կատարվեց**:

17:13. Տերը բացատրեց, թե ինչու էր աղոթում Իր աշակերտների ներկայությամբ: Նա կարծես ասում էր. «Մրանք նրանք են, որոնց համար ես երբեք չեմ դադարի Աստծո առջև Երկնքում բարեխոսելուց: Բայց հիմա Ես սա ասում եմ աշխարհում, և դուք լսում եք, որպեսզի ավելի լավ հասկանաք, թե Ես ինչպես եմ աղոթելու ձեզ և ձեր բարեհաջողության համար, որպեսզի դուք Ինձ հետ բաժնեկցեք **Իմ** կատարյալ **ուրախությունը**»:

17:14. Տերն Աստծո **Խոսքը** տվեց աշակերտներին, և նրանք ստացան այն: Արդյունքում՝ **աշխարհը** երես դարձրեց նրանցից ու **ատեց նրանց**: Նրանք Տեր Հիսուսի հետ շատ ընդհանուր բաներ ունեին, և դրա համար էլ **աշխարհը** արհամարհեց նրանց: Նրանք չէին համընկնում աշխարհային համակարգին:

17:15. Տերը **չէր աղոթում** Հորը, որ հավատացյալներին անմիջապես տուն՝ Երկինք

վերցնի: Նրանք պետք է մնային այստեղ, անեին շնորհի մեջ ու վկայեին Քրիստոսի մասին: Քրիստոսն աղոթեց, որպեսզի Աստված նրանց **չարից** պաշտպանի, ոչ թե վերցնի, այլ պահպանի:

17:16. Քրիստոնյաներն **աշխարհից չեն**, ինչպես Քրիստոսն **աշխարհից չէր:** Մենք սա պետք է հիշենք, երբ մեզ գայթակղում են մասնակցել աշխարհային զվարճությունների կամ մտնել աշխարհային ընկերակցությունների մեջ, որտեղ հաճելի չէ Հիսուսի անունը:

17:17. **Սրբացնել** նշանակում է առանձնացնել: Աստծո Խոսքը սրբացնող ազդեցություն ունի հավատացյալների վրա: Կարդալով ու պահպանելով այն՝ նրանք առանձնացվում են, դառնում Տիրոջ համար օգտագործելի անոթներ: Եվ ճիշտ սրա համար էր աղոթում Տեր Հիսուսն այստեղ: Նա ուզում էր, որ մարդիկ առանձնանան աշխարհից և պիտանի դառնան Տիրոջ կողմից օգտագործվելու համար: «**Քո խոսքը ճշմարտություն է**», - ասաց Հիսուսը: Նա այնպես չասաց, ինչպես շատերն են ասում այսօր. «Քո Խոսքը ճշմարտություն է *պարունակում*», այլ «Քո Խոսքը ճշմարտություն է»:

17:18. Հայրը Տեր Հիսուսին աշխարհ **ուղարկեց**, որպեսզի մարդկանց հայտնի Աստծո բնույթը: Տերը հասկանում էր, որ շուտով Երկինք է վերադառնալու: Բայց հաջորդ սերունդները նույնպես կարիք են ունենալու Աստծո մասին վկայության: Այդ աշխատանքը Սուրբ Հոգու գործությամբ պետք է կատարեն հավատացյալները: Իհարկե, քրիստոնյաները երբեք չեն կարող Աստծուն այնպիսի կատարելությամբ ներկայացնել, ինչպես Քրիստոսը, նույնպես և երբեք չեն կարող Աստծո հետ հավասար լինել: Բայց հավատացյալներն ամեն դեպքում պետք է Աստծուն ներկայացնեն աշխարհին: Եվ ճիշտ այս պատճառով Հիսուսը **նրանց աշխարհի ուղարկեց:**

17:19. *Մոբացնելը* պարտադիր չի նշանակում սուրբ դարձնել: Նա *սուրբ* է Իր Անձնական բնույթով: Այստեղ այն մասին է

ասված, որ Տերն *Իրեն առանձնացնում է* գործի համար՝ իր օգուտ որի Հայրն ուղարկեց Նրան, այսինքն՝ զոհաբերական մահվան համար: Նաև կարելի է հասկանալ, որ Նա առանձնացավ՝ զբաղեցնելով աշխարհից դուրս Իր տեղը և ընդունեց փառքը: «Նրա նվիրումը մեզ համար օրինակ ու հնարավորություն է», - ասում է Վայնը: Մենք պետք է մեկուսանանք աշխարհից ու գտնենք մեր բաժինը Նրանում:

2. Հիսուսն աղոթում է բոլոր հավատացյալների համար (17:20-26)

17:20. Այստեղ Քահանայապետը միայն աշակերտների համար չաղոթեց: Նա աղոթեց ապագա սերունդների համար: Փաստորեն այս համարը կարդացող յուրաքանչյուր հավատացյալ կարող է ասել. «Ավելի քան 1900 տարի առաջ Հիսուսը խնդրել է ինձ համար»:

17:21. Աղոթքում Նա խնդրեց հավատացյալների միաբանության մասին, բայց այս անգամ դա կապված էր մեղավորների փրկության մտքի հետ: Միաբանությունը, որի համար Քրիստոսն աղոթեց, նկատի չունեն եկեղեցիների արտաքին միությունը: Ավելի ճիշտ, դա ընդհանուր բարոյական նմանությունների վրա հիմնված միաբանություն էր: Նա խնդրեց, որ բոլոր հավատացյալները **մեկ լինեն**՝ ցուցադրելով Աստծո և Քրիստոսի էությունը: Եվ հենց սա է ստիպելու **աշխարհին հավատալու**, որ Աստված **ուղարկեց** Նրան: Այդ մեկությունը կստիպի աշխարհին ասելու. «Ինչպես Հայրն էր տեսանելի Քրիստոսում, այնպես էլ ես Քրիստոսին տեսնում եմ քրիստոնյաների մեջ»:

17:22. 11-րդ համարում Տերն աղոթեց հաղորդակցության մեջ մեկ լինելու համար: 21-րդ համարը վկայությունը հռչակելու միաբանության մասին է: Այստեղ **փառքի** մեջ մեկ լինելու մասին է: Նա սպասում էր այն ժամանակին, երբ սրբերը կստանան իրենց փառավոր մարմինները: «**Եվ այն փառքը, որ Դու Ինձ տվիր**» հարության ու համբարձման փառքն է:

Մենք դեռ չունենք այդ փառքը: Այն մեզ **տրված է** Աստծո նպատակներն իրականացնելու համար, բայց մենք այն չենք ստանա, քանի դեռ Փրկիչը չի վերադարձել, որպեսզի մեզ Երկինք վերցնի: Այն կհայտնվի աշխարհին, երբ Քրիստոսը վերադառնա երկրի վրա՝ հաստատելու Իր Թագավորությունը: Այն ժամանակ աշխարհը կհասկանա Հոր և Որդու, Որդու և Իր ժողովրդի կենսական մեկությունը և կխոստովանի (արդեն շատ ուշ), որ Հիսուսն Աստծուց էր ուղարկված:

17:23. Աշխարհը ոչ միայն գիտակցելու է, որ Հիսուսն Աստծո Որդին է, այլ նաև իմանալու է, որ Աստված հավատացյալներին սիրում է այնպես, ինչպես Քրիստոսին: Անհավատալի է թվում, որ մենք այդքան սիրված ենք, բայց դա այդպես է:

17:24. Որդին փափագում է, որ Իր ընտրյալներն Իր հետ փառքի մեջ լինեն: Ամեն անգամ, երբ հավատացյալը մահանում է, ինչ-որ իմաստով դա այս աղոթքի պատասխանն է: Եթե մենք սա հասկանանք, կմխիթարվենք մեր վշտի մեջ: Մեռնել նշանակում է մեկնել, որ Քրիստոսի հետ լինենք և Նրա փառքը **տեսնենք**: Այդ **փառքը** ոչ միայն աստվածային է, որ Նա ունի Աստծո մոտ աշխարհի արարումից առաջ, այլև դա այն փառքն է, որը Նա ձեռք բերեց որպես Փրկիչ ու Ազատագրիչ: Այդ փառքը այն բանի ապացույցն է, որ Աստված Քրիստոսին **սիրում էր աշխարհի հիմնումից առաջ**:

17:25. Աշխարհը չկարողացավ տեսնել Հիսուսով հայտնված Աստծուն: Բայց մի քանի աշակերտներ տեսան ու հավատացին, որ Հիսուսին Աստված է **ուղարկել**: Իր խաչելության նախօրեին ողջ աշխարհում ընդամենը Նրան հավատարիմ մի քանի սիրտ էր մնացել, ու նույնիսկ նրանք էլ էին պատրաստվում լքելու Նրան:

17:26. Տեր Հիսուսը Հոր անունը **հայտնեց** Իր աշակերտներին, երբ նրանց հետ էր: Դրանով նկատի ունի, որ Նա Հորը ցույց տվեց նրանց: Իր խոսքերն ու գործերը Հոր խոսքերն ու գործերն էին: Քրիստոս-

սի մեջ նրանք տեսան Հոր կատարյալ արտահայտությունը: Հիսուսը շարունակելու է **հայտնել** Հոր անունը Սուրբ Հոգու ծառայության միջոցով: Պենտեկոստեի օրից հետո Հոգին պետք է հավատացյալներին սովորեցնի Հայր Աստծո մասին: Նույնպես և մենք կարող ենք Աստծո Խոսքի միջոցով իմանալ, թե Ով է Աստված: Երբ մարդիկ ընդունում են Տեր Հիսուսով հայտնված Հորը, դառնում են Հայրական **սիրո** յուրահատուկ օբյեկտներ: Տեր Հիսուսը բնակվում է բոլոր հավատացյալների մեջ, հետևաբար Հայրը նրանց մեջ կարող է տեսնել Իր Որդուն և նրանց հետ վերաբերվել այնպես, ինչպես Իր միակ Որդու հետ: Ռեուսսը նկատում է.

«Աստծո սերը, որը մինչ ֆիզիկական աշխարհի հիմնումն ամբողջությամբ ուղղված էր Որդու Անձնավորության վրա (հ. 24), նոր հոգևոր աշխարհի արարումից հետո տարածվում է նրանց վրա, ովքեր Որդու հետ միացած են»:⁴⁷

Իսկ Գոդեթոն էլ հավելում է.

«Իր Որդուն երկիր ուղարկելով՝ Աստված ցանկացավ մարդկանցից Իր համար ընտանիք ստեղծել, որը բաղկացած է Իր նմանությունն ունեցող զավակներից»:

Եվ այդ իսկ պատճառով, Տեր Հիսուսը բնակվում է հավատացյալի մեջ: Աստված նրան սիրում է այնպես, ինչպես սիրում է Քրիստոսին:

«Թանկագին... Որքան թանկ եմ Աստծո համար,
Դրանից թանկ չեմ կարող լինել,
Այն սիրով, որ սիրում է Նա Իր Որդուն,
Նույն սիրով էլ սիրում է ինձ»:

Քեյթսթրի Փեյջեթ

Իր փրկագնաձևերի համար Քրիստոսի բարեխոսությունը, ինչպես նկատում է Ռեյնսֆորդը,

«Վերաբերում է հոգևոր բաներին, երկնային օրհնություններին: Նա չի խընդրում հարստության, պատվի կամ աշխարհային իշխանության, այլ չարից ազատագրվելու, աշխարհից առանձնանա-

լու, նվիրված ծառայության և անվտանգ
Երկինք փոխադրվելու մասին»:⁴⁸

VIII. ԱՍՏԾՈՒ ՈՐԴՈՒ ՉԱՐՉԱՐԱՆՔ- ՆԵՐՆ ՈՒ ՄԱՀԸ (18-19-րդ գլ.)

Ա. Հուդան մատնում է Հիսուսին (18:1-11)

18:1. 13-17 գլուխներում արձանագրված գրույցը տեղի է ունեցել Երուսաղեմում: Այժմ **Հիսուսը** թողեց քաղաքը և գնաց արևելյան ուղղությամբ՝ դեպի Ձիթենյաց լեռ: Այդ ընթացքում Նա հատեց **Կեդրոն հեղեղատն** ու մտավ Գեթսեման պարտեզը, որն ընկած էր Ձիթենյաց լեռան արևմրայան թեքության վրա:

18:2-3. **Հուդան** գիտեր, որ այդ պարտեզում Տերը շատ երկար ժամանակ է անցկացրել աղոթքի մեջ: Նա **գիտեր**, որ ամենահավանական **տեղը**, ուր կարելի է գտնել Տիրոջը, այնտեղ է, որտեղ Նա աղոթում է:

Ձինվորների գունդը հավանաբար հռոմեական զինվորներից էր կազմված, իսկ **քահանաների սպասավորներն ու փարիսեցիները** հրեա պաշտոնատար անձերն էին: Նրանք **եկել էին լապտերներով, ջահերով և զենքերով**: Նրանք եկել էին՝ Լույսը լապտերով փնտրելու:

18:4. Տերը նրանց **ընդառաջ գնաց**՝ չսպասելով, որ Իրեն փնտրեն: Դա վկայում է իսպախ վրա բարձրանալու Նրա պատրաստակամության մասին: Ձինվորները կարող էին իրենց զենքերը թողնել տանը. Փրկիչը չէր դիմադրելու: «**Ո՛ւմ եք դուք փնտրում**» հարցը տրվեց, որպեսզի իմանար նրանց առաքելության նպատակը:

18:5. Նրանք փնտրում էին **Հիսուս Նագովրեցուն**՝ գաղափար չունենալով, որ Նա իրենց Արարիչն է և Կյանք տվողը, իրենց լավագույն Բարեկամը: Հիսուսն ասաց. «**Ես եմ**»: Բնագրում «Ես» բառը չկա, բայց այն անհրաժեշտ է անգլերեն տեքստում: Նա նկատի ուներ, որ Ինքը ոչ միայն Հիսուս Նագովրեցին է, այլ նաև Եհովան: Ինչպես նախապես հիշված է, «Ես եմ»-ը ՀՎ-ում նշված Եհովայի անուններից մեկն է: Արդյոք սա ամբողջի մեջ մյուսների հետ **կանգ-**

նած Հուդային մեկ անգամ և՛ս ստիպեց խորհել:

18:6. Կարն ակնթարթում Տեր Հիսուսը նրանց հայտնվեց որպես ամենակարող Աստված: Դա այնպես ներգործեց նրանց վրա, որ **նրանք ետ-ետ գնացին և գետին ընկան**:

18:7. Տերը **նրանց դարձյալ հարցրեց**, թե **ու՞մ են փնտրում**: Եվ նորից, չնայած Քրիստոսի կողմից ասված երկու բառերի հակազդեցությանը, հետևեց նույն պատասխանը:

18:8-9. **Հիսուսը** նորից **պատասխանեց**, որ Ինքը Նա է, Ով Եհովա է անվանվում. «**Ձեզ ասացի, թե՛ Ես եմ**»: Նրանք Քրիստոսին էին փնտրում, դրա համար էլ Նա խնդրեց ազատ թողնել Իր աշակերտներին՝ **թողե՛ք, որ գնան**: Հիսուսի է տեսնել ուրիշների հանդեպ Նրա անշահախնդիր հոգատարությունն այնպիսի ժամանակ, երբ Իր սեփական կյանքը վտանգի մեջ էր: Այս ձևով իրականացան նաև Հովհ. 17:12-ի խոսքերը:

18:10. Միմոն **Պետրոսը** որոշեց, որ հասել է ուժ կիրառելու և իր Տիրոջը փրկելու ժամանակը: Տիրոջից դրա վերաբերյալ համաձայնություն չստանալով և սուր ունենալով **քաշեց այն և քահանայապետի ծառային զարկեց**: Անկասկած, նա մտադրվել էր սպանել ծառային, բայց Անտեսանելի Ձեռքն այնպես շեղեց սուրը, որ այն **նրա աջ ականջը կտրեց**:

18:11. **Հիսուսը** հանդիմանեց **Պետրոսին** անխոհեմ եռանդի համար: Չարչարանքի ու մահվան **բաժակը** Նրան **Հորից էր տրված**, և Նա պետք է **խմի** այն: Դուկաս բժիշկը գրել է, թե ինչպես Տերը դիպչելով բժշկեց Մադրոսի ականջը (22:51):

Բ. Հիսուսը ձերբակալվում և կապվում է (18:12-14)

18:12-14. Չար մարդիկ առաջին անգամ կարողացան բռնել ու կապել Նրան:

Աննան նախկին քահանայապետն էր: Հստակ չէ, թե ինչու Հիսուսին **սկզբում** բերեցին նրա մոտ և ոչ **Կայիափայի**, որը նրա փեսան էր և **այդ տարվա քահանայապետ-**

տը: Կարևոր է նշել, որ սկզբում Հիսուսը կանգնեց հրեաների դատարանի առջև, որը փորձում էր ապացուցել, որ Նա մեղավոր է աստվածահայիոյության ու հերձվածողության մեջ: Մենք կարող ենք դա անվանել դատարան *կրոնական* հայացքների համար: Իսկ հետո Նա հարցաքննվեց հռոմեական իշխանությունների կողմից: Այստեղ փորձ արվեց ապացուցելու, որ Նա կայսեր թշնամի է: Դա էլ *քաղաքացիական* դատարանն էր: Հրեաները Հռոմի տիրապետության տակ էին, հետևաբար պետք է հռոմեական դատարան դիմեին: Օրինակ՝ նրանք չէին կարող մահվան դատավճիռ կայացնել: Դրան պետք է հավանություն տար Պիղատոսը:

18:14. Հովհաննեսը բացատրեց, որ քահանայապետը հենց **այդ Կայիափան էր**, ով կանխատեսեց, **թե լավ է, որ մի մարդ մեռնի ժողովրդի համար** (տե՛ս Հովհ. 11:50): Հիմա նա մասնակցեց այդ մարգարեության կատարմանը: Ջեյմս Սոյուսարտը գրում է.

«Մա այն մարդն էր, ով լիազորված էր պահպանել ազգային ոգին: Նա ընտրված էր որպես գերագույն մեկնիչ և Բարձրյալի ներկայացուցիչ: Նրան լիովին յուրահատուկ արտոնություն էր տրված տարին մեկ անգամ մտնելու Սրբություն Սրբոց: Այնուամենայնիվ, սա այն մարդն էր, որը դատապարտեց Աստծո Որդուն: Պատմությունը մեզ ավելի ցնցող վկայություն չի թողել այն մասին, թե աշխարհում ամենաբարձր կրոնական դիրքը և ամենախոստումնալից կենսական հեռանկարները մարդկանց փրկություն չեն երաշխավորում և ոչ էլ հոգին են ավելի արժեքավոր դարձնում: «Այն ժամանակ ես համոզվեցի, - ասում է Ջոն Բանյանը՝ ավարտելով իր գիրքը, - որ դժոխք տանող ճանապարհ կա հենց Երկնային դարպասների մոտից»:⁴⁹

Գ. Պետրոսն ուրանում է իր Տիրոջը (18:15-18)

18:15. Աստվածաշնչագետներից շատերը ենթադրում են, որ այստեղ հիշված **մյուս աշակերտը** Հովհաննեսն էր, սակայն խո-

նարիությունից ելնելով իր անունը չի տվել, հատկապես Պետրոսի ահավոր ձախողումից հետո: Մենք չգիտենք, թե Հովհաննեսն ինչպես էր **քահանայապետին** այնքան **ծանոթ**, որ **քահանայապետի գավիթը մըտնելու** թույլատրություն էր ստացել:

18:16-17. Պետրոսը չկարողացավ ներս մտնել այնքան ժամանակ, մինչև որ Հովհաննեսը դուրս եկավ ու խնդրեց կին դռնապանին ներս թողնելու նրան: Հետագայում հայացք նետելով՝ ինքներս մեզ հարց ենք տալիս. արդյոք Հովհաննեսի կողմից բարի՞ք էր իր ազդեցությունն այս ձևով օգտագործելը: Էական է այն, որ Պետրոսն առաջին անգամ Տիրոջն ուրացավ ոչ թե ուժեղ և սարսափազդու տեսք ունեցող զինվորների առջև, այլ մի հասարակ **դռնապան աղջկա** առջև: Նա ուրացավ, որ Հիսուսի աշակերտն է եղել:

18:18. Պետրոսը խառնվեց Տիրոջ թշնամիների հետ և ջանում էր, որ իրեն չճանաչեն: Շատ ուրիշ աշակերտների նման նա **կանգնել** ու տաքանում էր այս **աշխարհի** կրակով:

Դ. Հիսուսը քահանայապետի առջև (18:19-24)

18:19. Պարզ չէ, թե ով է այս **քահանայապետը**՝ Աննան, թե՛ Կայիափան: Եթե դա Աննան է, որն ավելի հավանական է թվում, ապա նա քաղաքավարությունից ելնելով էր քահանայապետ կոչվում, քանի որ նախկինում էր քահանայապետ եղել: **Քահանայապետը հարց տվեց Հիսուսին Նրա աշակերտների և Նրա վարդապետության մասին**, կարծես թե դրանք սպառնում էին Մովսեսի օրենքին ու հռոմեական կառավարությանը: Հստակ էր, որ այս մարդիկ Տիրոջ դեմ ոչ մի ծանրակշիռ մեղադրանք չունեին, դրա համար էլ փորձում էին դա գտնել:

18:20. Հիսուսը պատասխանեց նրան, որ Իր ծառայությունը միշտ **հայտնապես է** եղել: Նա թաքցնելու բան չի ունեցել: Նա **սովորեցրել էր** հրեաների ներկայությամբ **ժողովարանում և տաճարի մեջ**: Եվ Իր ուսմունքում ոչ մի գաղտնիք չկա:

18:21. Սա մարտահրավեր էր. Հիսուսն առաջարկեց բերել Իրեն ունկնդրած ինչ-որ հրեայի: Թող մեղադրեն զոնե ինչ-որ բանում: Եթե Նա ինչ-որ բան այնպես չի արել կամ ասել, թող վկաներն ասեն այդ մասին:

18:22. Մարտահրավերը հայտնապես նյարդայնացրեց հրեաներին: Մեղադրանք լսելու հնարավորություններ էլ չէին մնացել: Այդ ժամանակ նրանք արագորեն անցան վիրավորանքների: **Պաշտոնյաներից մեկը Հիսուսին մի ապտակ տվեց քահանայապետին** այդպես պատասխանելու համար:

18:23. Ամենայն հավասարակշռվածությամբ և անվիճելի տրամաբանությամբ՝ Փրկիչը ցույց տվեց նրանց արարքի անարդարացիությունը: Նրանք չկարողացան Նրան մեղադրել վատ բան ասելու մեջ և Հիսուսին հարվածեցին այն բանի համար, որ Նա ճշմարտությունն էր ասում:

18:24. Նախորդող համարները նկարագրում էին Աննայի առջև հարցաքննությունը: Հովհաննեսը չի նկարագրել Կայիափայի մոտ կատարված դատավարությունը, որը կատարվել է 18:24 և 18:28 համարների միջև:

Ե. Պետրոսի երկրորդ և երրորդ ուրացումները (18:25-27)

18:25. Պատմությունը կրկին վերադառնում է **Միմոն Պետրոսին**: Վաղ առավոտվա ցուրտ ժամերին նա **տաքանում** էր կրակի մոտ: Անկասկած, նրա հագուստն ու խոսելաոճը մատնում էին, որ նա գալիլիացի ձկնորս է: Նրա կողքը կանգնածներից մեկը հարցրեց՝ արդյոք նա Հիսուսի աշակերտներից էր: Բայց նա կրկին **ուրացավ** Տիրոջը:

18:26. Այնուհետև Պետրոսի հետ Մաքքոսի **ազգականը** խոսեց: Նա տեսել էր, որ **Պետրոսը կտրել էր** իր ազգականի **ականջը**. «**Չէ՞ որ ես քեզ այն պարտեզում Հիսուսի հետ տեսա**»:

18:27. Պետրոսը երրորդ անգամն էր Տիրոջն **ուրանում**: **Եվ շուտով լսեց արքադադի** կանչը, որը հիշեցրեց Տիրոջ խոսքերը.

«Դեռ արքադադը չկանչած, Ինձ երեք անգամ կուրանաս»: Մյուս Ավետարաններից գիտենք, որ այդ պահին Պետրոսը դուրս գնաց և դառնապես լացեց:

2. Հիսուսը Պիղատոսի առջև (18:28-40)

18:28. Կրոնական դատավարությունը վերջացավ, քաղաքացիական դատավարությունն էր սկսվում: Իրադարձությունները տեղի էին ունենում դատարանի կամ կուսակալի պալատի դահլիճում: Հրեաները չէին ցանկանում հեթանոսի պալատ մտնել: Նրանք վախենում էին **պղծվել Հրեական գատիկն** ուտելուց առաջ: Թվում էր, թե նրանց չէր անհանգստացնում Աստծո Որդուն սպանելը: Հեթանոսի տուն մտնելը նրանց համար ողբերգություն էր թվում, իսկ մարդասպանությունը՝ թեթև մի բան: Օգոստինոսը նշում է.

«Օ, ապերջանիկ կուրություն: Իրոք, նրանք կպղծվեին օտար բնակարանում գտնվելով և չէին պղծվի իրենց ձեռքով կատարած հանցանքից: Նրանք վախենում էին պղծվել օտարերկրյա դատավորի տարածքում, բայց չէին վախենում պղծվել անմեղ եղբոր արյունից»:⁵⁰

Հորը մեկնաբանում է.

«Վայ ձեզ, քահանաներ, դպիրներ, ավագներ, կեղծավորներ: Ի՞նչը կարող է ավելի կեղտոտ լինել, քան ձեր սեփական անձը: Ոչ թե Պիղատոսի պատերը, այլ ձեր սեփական սրտերն են անմաքուր: Դուք մարդասպանություն եք խորհել և կա՞նգ եք առնում հեթանոսի անմաքուր բնակարանի առջև: Աստված կործանելու է ձեզ, դուք, ծեփվա՛ծ պատեր: Դուք ցանկանում եք կեղտոտվել Արյամբ, Աստծո Արյամբ և վախենում եք պղծվել Պիղատոսի խճանկարե հատակին հրավելո՛ւց: Ձեր կոկորդին այնքան փոքրիկ մժեղ է կանգ առել, մինչդեռ դուք ինչպես եք կուլ տալիս հրեշավոր չարության այդպիսի ուղտը: Հեռո՛ւ գնացեք Երուսաղեմից, դուք, կե՛ղծ հավատացյալներ, որովհետև դուք պղծված եք: Պիղատոսն ավելի շատ պատճառներ ունի վախենալու, որ նրա պատերը կպղծվեն այդպիսի անարդարության ցնցող հրեշներից»:⁵¹

Փուլը նկատում է. «Չկա ավելի սովորական բան, քան այն, որ մարդիկ չափից դուրս մոլեռանդ են ծեսերը կատարելիս և կատարյալ անտարբեր՝ բարոյականության հանդեպ»:⁵² **«Այլ կարողանան Չատիկն ուտել»** արտահայտությունը հավանաբար նկատի ունի հրեական Չատիկին *հաջորդող* տոնը: Հրեական Չատիկն ինքնին տեղի էր ունենում դրա նախորդ գիշերը:

18:29. Պիղատոսը՝ հռոմեական կառավարիչը, տեղի տալով հրեաների կրոնական համոզումներին, դուրս եկավ **նրանց մոտ**, որտեղ նրանք կանգնած էին: Նա սկսեց դատավարությունը՝ հարցնելով, թե ինչու են նրանք **մեղադրում** բանտարկյալին:

18:30. Նրանց պատասխանը համարձակ ու կոպիտ էր: Որպես պատասխան՝ նրանք ասացին, որ արդեն հարցաքննել են Նրան և հանցավոր ճանաչել: Նրանք միայն ուզում էին, որ Պիղատոսը հայտարարեր դատավճիռը:

18:31. Պիղատոսը փորձեց խույս տալ պատասխանատվությունից ու հրեաներին առաջարկեց, որ իրենք որոշում ընդունեն: Եթե արդեն հարցաքննել են Հիսուսին և Նրան հանցավոր ճանաչել, ապա ինչո՞ւ իրենք իրենց **օրենքի համաձայն չեն դատում Նրան**: Հրեաների պատասխանը շատ նշանակալից էր: Նրանք երկարաշունչ պատասխանեցին. «Մենք կախյալ ժողովուրդ ենք: Մենք հռոմեական իշխանությանն ենք ենթարկվում: Մենք զրկված ենք քաղաքացիական իրավունքներից և այլևս իշխանություն չունենք ինչ-որ մեկին **մահապատժի ենթարկելու**»: Նրանց պատասխանը վկայում էր հեթանոսական իշխանությանը ենթարկվելու, կապանքի մեջ լինելու մասին: Բացի դրանից՝ նրանք ուզում էին Քրիստոսի մահվան պատասխանատվությունը դնել Պիղատոսի վրա:

18:32. Այս համարը կարող է երկու տարբեր նշանակություն ունենալ. 1. Մատթ. 20:19-ում Հիսուսը կանխատեսեց, որ Ինքը պետք է տարվի հեթանոսների մոտ, որպեսզի նրանք **մահվան դատապարտեն Իրեն**. հրեաները այդպես էլ վարվեցին Նրա հետ: 2. Շատ տեղերում Տերն ասաց, որ պիտի

«բարձրացվի» (Հովհ. 3:14, 8:28, 12:32, 34)՝ նկատի ունենալով խաչի վրա գամվելով մահանալը: Առավելագույն պատժի իրականացման համար հրեաները օգտագործում էին քարկոծելը, իսկ խաչափայտին գամելը հռոմեական սովորություն էր: Այսպիսով, հրեաները մահապատիժն իրականացնելուց հրաժարվելով՝ անգիտակցաբար կատարում էին Մեսիայի մասին այս երկու մարգարեությունները (տե՛ս նաև Սաղմոս 22:16-ը):

18:33. Այժմ **Պիղատոսը** Հիսուսին հրավիրեց **դատարանի սրահ** առանձին գրույցի համար և Նրան անմիջականորեն հարցրեց. **«Դու հրեաների թագավորն ես»:**

18:34. **Հիսուսը նրան պատասխանեց.** «Դու՝ որպես կուսակալ, երբևէ լսե՞լ ես, թե Ես փորձել եմ տապալել Հռոմի իշխանությունը: Քեզ երբևիցե հաղորդե՞լ են, որ Ես Ինձ Թագավոր եմ հռչակել, Ով կխարխլի Կեսարի իշխանությունը: Դու Ինձ մեղադրանք ես առաջադրում՝ հիմնվելով քեզ հայտնի փաստերի վրա՞, թե՞ հրեաներից լսածներիդ»:

18:35. Պիղատոսի հարցման մեջ իրական արհամարհանք կար. **«Մի՞թե ես հրեա եմ»:** Նա ականարկեց, որ բավական բարձր դիրք ուներ և վրդովվելու կարիք չուներ տեղական հրեական դժվարության պատճառով: Բայց նաև իր պատասխանով ընդունեց, որ Հիսուսի դեմ ոչ մի իրական մեղադրանք չունի: Նա միայն գիտեր այն, ինչ ասել էին հրեա առաջնորդները:

18:36. Այն ժամանակ Տերը խոստովանեց, որ Ինքը Թագավոր է: Բայց ոչ հրեաների մեղադրած Թագավորը, ո՛չ էլ Հռոմին սպառնացող: Քրիստոսի **Թագավորությունը** մարդկային զենքով չի նվաճվում: Հակառակ դեպքում Նրա աշակերտները **կկռվեին**, որպեսզի հրեաներին թույլ չտային բռնել Նրան: Քրիստոսի **Թագավորությունն այս տեղից չէ**, այսինքն՝ այս աշխարհից չէ. նրա նպատակներն ու ձգտումները մարմնավոր չեն:

18:37. Երբ Պիղատոսը հարցրեց. **«Ուրեմն Դու թագավորն ես», Հիսուսը պատասխանեց. «Դու ասում ես, թե Ես թագա-**

վոր են»: Բայց Նրա Թագավորությունը հետաքրքրված է **ճշմարտությամբ**, ոչ թե թերեղով ու վահաններով: **Այս պատճառով էր Նա աշխարհ եկել**, որպեսզի **վկայի ճշմարտության մասին**: Այստեղ «ճշմարտությունը» նշանակում է ճշմարտություն Աստծո, Քրիստոսի, Սուրբ Հոգու, մարդու, մեղքի, փրկության և քրիստոնեական հիմնական վարդապետությունների մասին: **Ամեն մեկը, որ ճշմարտությունից է, լսում է Հիսուսի ձայնը**, և ճիշտ այդպես էլ ընդարձակվում է Նրա Թագավորությունը:

18:38. Դժվար է ասել, թե ինչ նկատի ունեն **Պիղատոսը**, երբ **Նրան ասաց**. «**Ի՞նչ է ճշմարտությունը**»: Ի՞նչ է հնչում այս հարցի մեջ. հետաքրքրվածություն, տարակուսանք, թե՛ արհամարհանք: Մենք միայն գիտենք, որ նրանց առջև կանգնած էր Ճշմարտության մարմնացումը, իսկ նրանք չընդունեցին Նրան: Պիղատոսը նորից է դուրս գալիս հրեաներին ասելու, որ **ոչ մի հանցանք չի գտել** Հիսուսի մեջ:

18:39. Հրեաների մոտ **սովորություն** կար հրեական **Չատկին** հռոմեական բանտում եղող մի հրեա կալանավորի համար ազատություն խնդրել: Պիղատոսը կառչեց այս սովորությունից, որպեսզի միաժամանակ հանեցնի հրեաներին ու ազատ **արձակի** Հիսուսին:

18:40. Ծրագիրը ձախողվեց: Հրեաները չցանկացան ազատ արձակել Հիսուսին. նրանք ցանկացան **Քարաքային: Քարաքան մի ավազակ էր**: Մարդու չար սիրտն Արարչից առավել գերադասեց հանցագործին:

Է. Պիղատոսի դատավճիռը. հանցավոր չէ, բայց դատապարտված է (19:1-16)

19:1. **Պիղատոսը** չափազանց անարդարացի վարվեց՝ պատվիրելով մտրակել ամենեղ Մարդուն: Թերևս նա հույս ուներ, որ այդ պատիժը կբավարարի հրեաներին, և նրանք կհրաժարվեն Հիսուսի *մահը* պահանջելուց: Գանակոծելը կամ մտրակելը հռոմեական պատժատեսակներից էր: Բանտարկյալին հարվածում էին մտրակով

կամ գավազանով, մտրակի ծայրին մետաղական մասեր կամ ոսկորներ էին ամրացնում, որոնք մարմնի վրա խոր վերքեր էին առաջացնում:

19:2-3. **Չինվորները** ծաղրում էին Հիսուսին՝ Նրան Թագավոր կոչելով: Պասկ Թագավորի համար: Բայց դա **փշե պսակ** էր, որ ահավոր ցավ էր պատճառում, քանի որ սեղմվում էր Նրա ճակատին: Փշերն անեծքի խորհրդանիշներն են, անեծք, որ մարդկության մեջ մտավ մեղքի պատճառով: Այստեղ տեսնում ենք մեր մեղքերի անեծքը կրող Տեր Հիսուսին, որպեսզի մենք էլ ձեռք բերենք փառքի պսակը: **Ծիրանի հանդերձն** էլ օգտագործվեց Նրա վրա ծիծաղելու համար: **Ծիրանի** գույնը թագավորական իշխանություն խորհրդանշող գույն էր: Եվ այն կրկին մեզ հիշեցնում է Հիսուսի վրա դրված մեր մեղքերի մասին, որպեսզի մենք հագնենք Աստծո արդարության հանդերձը:

Որքան լուրջ է խորհել հավիտենական Աստծո Որդու մասին, Ում ապտակեցին Իր իսկ արարածների **ձեռքերը**: Նրա կողմից արարված շրթունքներն այժմ ծաղրում էին Նրան:

19:4. **Ապա Պիղատոսը դարձյալ դուրս գնաց** ամբոխի մոտ և հայտարարեց, որ նրանց մոտ է դուրս բերում Հիսուսին, բայց Նրա մեջ ոչ մի հանցանք չի գտնում: Այսպիսով, Պիղատոսն իր իսկ խոսքերով ինքն իրեն դատապարտեց: Նա ոչ մի հանցանք չգտավ Քրիստոսի մեջ, բայց Նրան չարձակեց:

19:5. **Եվ Հիսուսը դուրս եկավ փշեղեն պսակով և ծիրանի հանդերձ հագած**, Պիղատոսը ներկայացրեց Նրան. «**Ահա՛ Մարդը**»: Դժվար է որոշել, թե ինչ զգացումներով նա ասաց՝ ծաղրանքով, կարեկցանքով թե առանց որևէ զգացումի:

19:6. **Գլխավոր քահանաները**, Պիղատոսի տատանվելը տեսնելով, չարամտությամբ գոչեցին, որ Հիսուսը պետք է խաչվի: Հենց *կրոնական* առաջնորդներն էին Փրկչի մահվան նախաձեռնողները: Եվ հաճախ հաջորդող դարերում հենց եկեղեցու

պաշտոնական ներկայացուցիչներն են նախանձախնդրորեն հետապնդել ճշմարիտ հավատացյալներին: Թվում էր, թե **Պիղատոսը** զգացել էր Տեր Հիսուսի նկատմամբ նրանց անհիմն ասելությունը: Նա կարծես թե ասում էր նրանց. «Եթե այդպես եք կարծում, ապա **դուք վերցրե՛ք Նրան ու ինքներդ խաչեցե՛ք**: Որքան որ ես եմ հասկանում, Նա հանցավոր չէ»: Իհարկե, Պիղատոսը գիտեր, որ հրեաները չէին կարող Նրան մահվան դատապարտել, որովհետև այն ժամանակ դատավճիռ կայացնելու իրավունքը միայն հռոմեացիներն ունեին:

19:7. Տեսնելով, որ չեն կարողանում ապացուցել Հիսուսի կողմից կայսրի իշխանությանն ուղղված սպառնալիքը, նրանք նորից Նրա դեմ կրոնական մեղադրանք առաջադրեցին. իբր Քրիստոսը հավակնում էր Աստծուն հավասար լինել և ասում էր, որ Ինքն **Աստծո Որդին էր**: Հրեաների համար սա Աստծուն հայիոյել էր նշանակում, որը մահվան արժանի արարք էր:

19:8-9. **Պիղատոսն** անհանգստացավ մտածելով, որ գուցե Հիսուսն Աստծո Որդին է: Նա արդեն անհանգստացած էր այդ խառնաշփոթից, հիմա **էլ ավելի վախեցավ**:

Պիղատոսը Հիսուսին դարձյալ **դատաստանի սրահ** կամ դատարանի դահլիճ տարավ ու հարցրեց, թե Նա **որտեղից** է եկել: Այս պատմության մեջ Պիղատոսն ավելի ողբերգական կերպար է: Նա ընդունեց, որ Հիսուսը ոչ մի վատ բան չի արել, այնուամենայնիվ, բարոյական քաջություն չունեցավ Նրան ազատ արձակել, որովհետև վախենում էր հրեաներից: Ինչո՞ւ **Հիսուսը նրան ոչ մի** պատասխան չտվեց: Հավանաբար Նա գիտեր, որ Պիղատոսը չէր ուզում իր ունեցած լույսով շարժվել: Պիղատոսն այդ օրը մեղանչեց՝ ատիթը կորցնելով: Նա այլևս լույս չի ստանա, որովհետև չարձագանքեց իր մեջ եղող լույսին:

19:10. **Պիղատոսը** Տիրոջն սպառնալով փորձեց ստիպել, որ Նա պատասխանի: Նա

Հիսուսին հիշեցրեց, որ որպես հռոմեական կուսակալ՝ **իշխանություն** և լիազորություն ունի Նրան **խաչը հանելու** կամ **ազատ արձակելու**:

19:11. Տեր Հիսուսի ինքնատիրապետումը զարմանալի է: Նա ավելի հանգիստ էր, քան Պիղատոսը: Նա հանդարտությամբ պատասխանեց, որ ինչպիսի իշխանություն էլ որ Պիղատոսն ունենար, այն Աստծուց էր **տրված** նրան: Բոլոր կառավարությունները Աստծուց են հաստատված, և ամեն իշխանություն՝ քաղաքացիական թե՛ հոգևոր, Աստծուց են:

«**Նա, ով Ինձ քո ձեռքը մատնեց**» արտահայտությունը կարող է վերաբերել. 1. *Կայիափա* քահանայապետին, 2. *Հուդա* մատնիչին կամ 3. ընդհանրապես *հրեաներին*: Միտքն այն է, որ հրեաները բավարար ճանաչողություն ունեին: Նրանք ունեին Մեսիայի գալուստը կանխատեսող սուրբգրությունը: Նրանք պետք է, որ ճանաչեին Նրան, երբ Նա գար: Բայց նրանք մերժեցին և նույնիսկ պահանջեցին, որ կյանքից զրկեն Նրան: Այս համարը սովորեցնում է մեզ, որ հանցանքի տարբեր աստիճաններ կան: Պիղատոսը մեղավոր էր, բայց Կայիափան, Հուդան և բոլոր չար հրեաներն *ավելի* հանցավոր էին:

19:12. **Պիղատոսը** տրամադրված էր Հիսուսին **ազատ արձակելու**, բայց հրեաները օգտագործեցին հենց Պիղատոսին էլ դատապարտող վերջին և ամենաձանրակշիռ փաստարկը. «**Եթե այդ մարդուն թողնես, որ գնա, դու կայսրի բարեկամը չես**»: Հռոմեական կայսրի մասին է խոսքը, որը կրում էր Կեսար տիտղոսը: Թվում է, թե կայսրի մասին էին մտածում: Նրանք ատում էին կայսրին: Նրանք ցանկանում էին նրան ոչնչացնել և ազատագրվել նրա լծից: Ինչ որ է, նրանք այստեղ ձևացնում էին, թե կայսրի իշխանությունն էին պաշտպանում Հիսուսից, Ով պնդում էր, թե Ինքը Թագավոր է: Նրանք հնձելու են իրենց պատիժը հենց այս ահավոր կեղծավորության համար, երբ հռոմեացիները մ.թ. 70թ. ներխուժեն Երուսաղեմ ու սրախողխող

անելով բնակիչներին՝ հիմնահատակ կործանեն քաղաքը:

19:13. Պիղատոսը չէր կարող թույլ տալ հրեաներին կասկածելու, որ ինքը անհավատարիմ է կայսրին, այդ իսկ պատճառով թեն դժկամությամբ, բայց ենթարկվեց ամբոխին: Նա **Հիսուսին դուրս բերեց** մի հասարակական վայր, որը **Քարահատակ էր կոչվում**, որտեղ հաճախ այդպիսի հարցեր էին որոշում:

19:14. Իրականում հրեական Չատկի տոնը նախորդող երեկոյան էր սկսվում: Հրեական **Չատկի** օրվան պատրաստվել նշանակում է պատրաստվել տոնին, որը հաջորդում էր երեկոյին: «**Մոտ վեցերորդ ժամը**», սա հավանական է, որ առավոտյան ժամը վեցն էր, բայց Ավետարաններում ժամանակը հաշվելու նկատմամբ չուծված դժվարություններ կան: «**Ահա ձեր թագավորը**». շատ հավանական է, որ Պիղատոսն այսպես ասաց, որպեսզի գրգռի ու գայրացնի հրեաներին: Անկասկած, նա նրանց մեղադրեց այն բանի համար, որ ընկավ նրանց ծուղակն ու ստիպված եղավ Հիսուսին դատապարտել:

19:15. Հրեաները պահանջեցին խաչել Հիսուսին: Պիղատոսը խայթող հարց տվեց. «Ուզում եք **ձեր թագավորին խաչե՞մ**»: Այդ ժամանակ հրեաներն ավելի ստորացան՝ ասելով. «**Մենք թագավոր չունենք՝ Կեսարից բացի**»: Անհավատ ազգ: Մերժել քո Աստծուն մի չար հեթանոս միապետի պատճառով:

19:16. Պիղատոսն ուզում էր հրեաներին հանձնել և Հիսուսին հանձնեց զինվորներին, որ **խաչը հանեն**: Նա մարդկային փառքն ավելի սիրեց, քան Աստծո փառքը:

Ը. Հիսուսի խաչելությունը (19:17-24)

19:17. Բառը, որը թարգմանված է որպես «խաչ», կարող է վերաբերել առանձին մի գերանի կամ, հնարավոր է, խաչաձև ամրացրած երկու գերանների: Ամեն դեպքում այնպիսի չափ ուներ, որ մարդը կարողանար կրել այն: Հիսուսն **Իր խաչը** կրեց ճանապարհի մի հատվածում: Ըստ մյուս Ավետարանների՝ հետո այն վերցնում է Սի-

մոն Կյուրենացին: **Գանգ ասված տեղը**, հնարավոր է, այս անունը ստացել է երկու պատճառներով՝ 1. ինքնին այդ բարձունքը գանգի էր նման, հատկապես, եթե այդ բլրի կողքերին քարանձավներ էին փորված (այժմ Իսրայելում այդ վայրը կոչվում է «Գորդոնի Գողգոթա»): 2. Այդ վայրում հանցագործներին էին մահապատժի ենթարկում, գուցե այդ շրջանում գանգեր և ոսկորներ էին գտնում, չնայած ըստ Մովսեսական հուղարկավորության օրենքի՝ սա քիչ հավանական է:

19:18. Տեր Հիսուսի ձեռքերն ու ոտքերը գամեցին խաչին: Հետո խաչը բարձրացրին ու ամրացրին հողի մեջ փորված խորության մեջ: Ահա՛ թե ինչ հնարքի արժանացավ Իրեններից մեր մոլորակի վրա երբևէ ապրած միակ կատարյալ Մարդը: Եթե նախկինում երբեք չէք հավատացել Նրան՝ որպես ձեր Տիրոջ ու Փրկչի, մի՞թե չէք հավատա հիմա՝ կարդալով այս պարզ պատմությունն այն մասին, թե Նա ինչպես է մահացել ձեզ համար: Նրա հետ երկու ավագակների խաչեցին **Նրա երկու կողմերում**: Այսպիսով իրականացավ Եսայու մարգարեությունը (53:12). «... և հանցավորների հետ հաշվվեց»:

19:19. Սովորություն կար մահապատժի ենթարկվողի գլխավերևում նրա հանցանքը մատնանշող **տախտակե գրություն** փակցրնել: Պիղատոսը հրամայեց գրել. «**ՀԻՍՈՍ ՆԱԶՈՎՐԵՑԻՒ ՀՐԵՍՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ**», և ամրացնել խաչին:

19:20. Ալեքսանդրը շատ արտահայտչականորեն է նկարագրում այդ փաստը.

«Եբրայերենը նահապետների ու մարգարեների սուրբ լեզուն է: Հունարենը զգացական ընկալումն ու մարմինը գովերգող երգեցիկ ու ազնվազարմ լեզու է, ինչպես նաև փիլիսոփայական վերացականությունների լեզու է: Լատիներենն ի սկզբանե մարդկանց որոյններից ուժեղագույնների լեզուն է: Երեք լեզուները ներկայացնում են երեք ռասաներն ու նրանց հայացքները՝ հայտնությունը, արվեստը, գրականությունը, առաջընթացը, պատերազմը և իրավագիտությունը:

Ամենուր, որտեղ գոյություն ունեն մարդկային այս երեք ձգտումները, ամենուր, որտեղ հնչում է մարդկային խոսքը, ամենուր, որտեղ սիրտ կա մեղքի համար, լեզու՝ խոսքի համար, աչքեր՝ կարդալու, Խաչը պատգամ ունի»:⁵³

Տեղը... քաղաքին մոտ էր: Տեր Հիսուսը խաչվեց քաղաքից դուրս: Ծշգրիտ տեղը հավաստիորեն հայտնի չէ:

19:21. Գլխավոր քահանաներին գրությունը դուր չեկավ: Նրանք ցանկանում էին, որ գրությունն անդրադարձներ Հիսուսի պահանջը, բայց ոչ ինքնին *փաստը* որ այդպես էր:

19:22. Պիղատոսը հրաժարվեց գրությունը փոխելուց: Հրեաներն արդեն բարկացնում էին նրան, և նա պատրաստ չէր այլևս որևէ զիջողություն անելու նրանց համար: Բայց նա պետք է ավելի վճռական լիներ դրանից առաջ:

19:23. Մահապատիժն իրականացնելիս **գինվորներին** թույլատրվում էր վերցնել մահացածի անձնական իրերը: Այստեղ կարդում ենք, թե նրանք ինչպես են իրար մեջ բաժանում Քրիստոսի **հանդերձները**: Ակնհայտ է, որ հանդերձը հինգ մասի բաժանեցին: Հանդերձի մի մասը չորս մասի բաժանեցին, իսկ հինգերորդին պատմունճանը բաժին ընկավ, որն **առանց կարի էր**, և եթե պատռեին, կարծեգրվեր:

19:24. Նրանք պատմունճանի վրա **վիճակ գցեցին**, և այն բաժին ընկավ անանուն հաղթողին: Նրանք ոչ էլ կասկածեցին, թե դրանով կատարեցին հազար տարի առաջ գրված զարմանալի՝ մարգարեությունը (Մով. 22:18): Այս կատարված մարգարեությունները մեզ կրկին հիշեցնում են, որ այս Գիրքն Աստծո ներշնչյալ Խոսքն է, և Հիսուս Քրիստոսն իսկապես խոստացյալ Մեսիան է:

Թ. Հիսուսն Իր մորը հանձնում է Հովհաննեսին (19:25-27)

19:25. Աստվածաշնչյան շատ հետազոտողներ կարծում են, որ այս համարում նկարագրված են չորս կանայք՝ 1. Հիսուսի **մայրը**՝ Մարիամը, 2. Մարիամի **քույրը**

Սաղոմեն՝ Հովհաննեսի մայրը, 3. **Կղեուպասի կինը**՝ Մարիամը, 4. **Մարիամ Մագդաղենացին**:

19:26. Չնայած Իր չարչարանքներին՝ Տերը շարունակեց հոգ տանել ուրիշների մասին: Տեսնելով **Իր մորն** ու Հովհաննեսին՝ **աշակերտին**, Նա Իր մորը ներկայացրեց Հովհաննեսին որպես մեկի, ով հետագայում նրա համար որդու փոխարեն էր լինելու: Մորը **«Ո՛վ կին»** կանչելով՝ Տերը անհարգալից վերաբերմունք չցուցադրեց նրա նկատմամբ: Սակայն ուշագրավ է, որ Նա նրան «մայր» չանվանեց: Արդյոք սա դաս չէ՞ նրանց համար, ովքեր ուզում էին Մարիամին պաշտելու աստիճան մեծարել: Հիսուսը Հովհաննեսին խնդրեց հոգ տանել Մարիամին, ինչպես սեփական **մորը**: Հովհաննեսը հնազանդվեց ու Մարիամին վերցրեց **իր մոտ**:

Ժ. Քրիստոսը կատարեց Իրեն հանձնարարվածը (19:28-30)

19:28. Ըստ երևույթին, 27-28-րդ համարների միջև երեք ժամվա խավարում եղավ կեսօրից մինչև կեսօրվա ժամը երեքը: Այդ ժամանակ Հիսուսը լքվեց Աստծուց, քանի որ կրեց մեր մեղքերի պատիժը: Նրա գոցունը՝ **«Ծարավ եմ»**, վկայում է իրական ֆիզիկական ծարավի մասին, որն ուժեղանում էր խաչելությունից: Բայց այն նաև մեզ հիշեցնում է, որ Նրա հոգիներին փրկելու հոգևոր ծարավը գերազանցում էր ֆիզիկական ծարավին:

19:29. Չինվորները **քացախ** տվեցին Նրան, որ խմի: Հավանաբար նրանք **սպունգը** կապեցին նիզակի ծայրին **զոպայի** հետ և մոտեցրին Նրա շուրթերին: Չոպան բույս է, որը նույնպես օգտագործվում է հրեական Չատկի ժամանակ (Ել. 12:22): Այն չպետք է շփոթել լեղիով խառնված քացախի հետ, որը Նրան ավելի վաղ էին առաջարկել (Մատթ. 27:34): Հիսուսը հրաժարվել էր այդ խառնուրդից, որովհետև այն որպես ցավագրկող էր ծառայում: Նա պետք է մեր հանցանքները կրեր ամբողջական գիտակցությամբ:

19:30. **«Կատարվեց»...** Հոր կողմից

Նրան հանձնարարված գործը կատարվեց: Նա գոհաբերվեց մեր մեղքերի համար: Փրկվազնաման ու քավության գործը կատարվեց: Ճշմարիտ է այն, որ Նա դեռ չէր մահացել, բայց Նրա մահը, թաղումն ու համբարձումը այնպես էին կանխատեսված, որ կարծես թե կատարված էր: Տեր Հիսուսը հայտարարեց, որ մեղավորներին փրկության տանող ճանապարհը բացված է: Գոհանանք Աստծուց Գողգոթայի խաչի վրա Տեր Հիսուսի կատարածի համար:

Որոշ աստվածաշնչագետներ պնդում են, թե **գլուխը խոնարհելը** կարող է նշանակել գլուխը ետ թեքել: Վայնը գրում է. «Նա ոչ թե մահից հետո անօգնականորեն խոնարհեց գլուխը, այլ մտածված կերպով այն թեքեց հանգստի վիճակում»:

Այն, որ Նա **հոգին ավանդեց**, ընդգծում է Նրա կամավոր մահը: Իր մահվան ժամն Ինքը որոշեց: Ամբողջությամբ կառավարեց Իր կարողությունները. Նա **հոգին արձակեց**, թույլ տվեց, որ գնա, ինչը ոչ մի սովորական մարդ չի կարող անել:

Ի. Նիզակով խոցում են Փրկչի կողը (19:31-37)

19:31. Դարձյալ տեսնում ենք, թե **հրեա** կրոնականները որքան բծախնդիր էին սառնասիրտ սպանությունն իրականացնելու մանրամասների մեջ: Նրանք «փորձում էին մժեղից ազատվել, սակայն ուղտն էին կուլ տալիս»: Նրանք հասկանում էին, որ մարմինները չպետք է **խաչի վրա մնային շաբաթ օրը**: Չէ՞ որ քաղաքում կրոնական տոն էին նշում: Եվ խնդրեցին Պիղատոսին **կտորել** մահապատժի ենթարկված երեք մարդկանց **սրունքները**, որպեսզի արագացնեն նրանց մահը:

19:32. Սուրբգրությունը չի նկարագրում, թե ինչպես են սրունքները կտորել: Ըստ երևույթին, դրանք մի քանի տեղից էին կտորում, քանի որ եթե մեկ անգամ կտորեին, մահը վրա չէր հասնի:

19:33. Այդ զինվորները մեծ փորձ ունեին: Նրանք գիտեին, որ **Հիսուսն արդեն մահացած** էր: Թուլության կամ ուշագնացության հավանականությունն ամբողջա-

պես բացառվում էր: Նրանք **Նրա սրունքները չկտորեցին**:

19:34. Մեզ չի հաղորդվում, թե ինչու **զինվորներից մեկը նիզակով Նրա կողը խոցեց**: Գուցե դա Չարի սրտի եզրափակիչ պոռթկումն էր: «Դա մարտից հետո պարտված հակառակորդի չարամիտ կրակոցն էր, որը վկայում էր Աստծո և Քրիստոսի նկատմամբ մարդու սրտում արմատացած ատելությունը»: **Արյան ու ջրի** նշանակության մասին տարբեր կարծիքներ կան: Ոմանք կարծում են, որ դա սրտի կաթվածի հետևանքով առաջացած մահվան նշան է, բայց մենք արդեն կարդացինք, որ Հիսուսը կամավոր ձևով ընդունեց մահը: Ուրիշները դրանում տեսնում են մկրտության ու Տերունական Ընթրիքի խորհրդանիշը, սակայն դա քիչ հավանական է թվում: **Արյունը** վկայում է մեղքի հանցանքից մաքրվելը, իսկ **ջուրը** խորհրդանշում է Խոսքի միջոցով մեղքի պղծությունից մաքրվելը: Դա արտահայտված է հետևյալ բանաստեղծությունում.

Ջուրն ու արյունը,
Որ Քո խոցված կողից հոսեց,
Կրկնակի թող բուժի մեղքից,
Նրա մեղադրանքից ու գորությունից ինձ ազատի:

Օգաստոս Թոփկեյի

19:35. Այս համարը կարող է նշանակել, որ Հիսուսի ոտքերը չեն կտորվել, որ Նրա կողը նիզակով են խոցել, որ Նրան իսկապես խաչել են խաչափայտին: **Նա, որ այս տեսավ**, այս բառերը անկասկած վերաբերում են «Ավետարան ըստ Հովհաննեսի»-ի հեղինակին՝ Հովհաննեսին:

19:36. Այս համարը հղում կատարելով մարգարեությանը՝ «Եվ դրա ոչ մի ոսկորը չկտորե՛ք» (Ել. 12:46), հաստատում է 33-րդ համարում ասվածը: Այս խոսքերը վերաբերում էին հրեական գատկական գառնուկին: Աստծո Ուխտը պահանջում էր, որ նրա ոսկորներն ամբողջական մնային: Քրիստոսն է գատկական ճշմարիտ Գառը, Ում մեջ բացարձակ ճշգրտությամբ կատարվեց մարգարեությունը:

19:37. Այս համարը կապված է 34-րդ համարի հետ: Չինվորը չգիտակցեց, որ իր արարքը համապատասխանում էր **սուրբ-գրային** և ս մեկ այլ ցնցող մարգարեության (Չաք. 12:10): «Մարդն արտահայտում է իր չարությունը, իսկ Աստված կատարում է Իր ծրագրերը»: Չաքարիայի մարգարեությունը վերաբերում է գալիք օրերին, երբ հրեա հավատացյալները կտեսնեն երկիր վերադարձող Տիրոջը. «Եվ նրանք ինձ պիտի նայեն, ում խոցեցին, սուգ պիտի անեն Նրա վրա միամորի սուգի պես»:

L. Հիսուսը թաղվում է Հովսեփի գերեզմանում (19:38-42)

19:38. Այստեղ նկարագրվում է Հիսուսի թաղումը: Մինչև հիմա **Հովսեփ Արիմաթիացին** գաղտնի աշակերտ էր: **Հրեաների վախի պատճառով** նա Քրիստոսին բացահայտորեն չէր դավանում: Հիմա նա առաջ տանող համարձակ քայլ արեց և թույլատվություն խնդրեց Հիսուսի մարմինը վերցնելու և թաղելու: Այդ անելով՝ նա իրեն ենթարկում էր վտարման, ատելության ու հետապնդման վտանգին: Ցավալի է միայն այն, որ նա չպաշտպանեց մերժված Տիրոջը, երբ Հիսուսը դեռ քարոզում էր ժողովրդին:

19:39-40. Հովհաննեսի Ավետարանն ընթերցողներն արդեն ծանոթ են **Նիկողեմոսի** հետ, ով մի անգամ Հիսուսի մոտ էր եկել գիշերով (3-րդ գլ.), իսկ հետո, երբ Հիսուսի գործը քննվում էր առյանում, պնդեց, որ Հիսուսին Իր արդարացման մասին արտահայտելու առիթ տան (Հովհ. 7:50-51): Նա միացավ Հովսեփին **և գմուռսի ու հավվեի խառնուրդ բերեց՝ մոտ հարյուր լիտրի չափ:** Դրանք հավանաբար փոշիացված էին, որ ցանում էին մարմնի վրա: Հետո **մարմինը փաթաթեցին կտավների մեջ:**

19:41. Այս համարի գրեթե յուրաքանչյուր մասնիկն իր հաստատումն է գտնում մարգարեությունների մեջ: Եսային կանխատեսեց, որ Մեսիային ցանկանալու են չարագործների հետ թաղել, բայց Նա հարուստի հետ է թաղվելու (Ես. 53:9): **Պար-**

տեզում նոր գերեզմանը, ակնհայտ է, որ պատկանում էր հարուստ մարդու: Մատթեոսից մենք իմանում ենք, որ այն պատկանում էր Հովսեփ Արիմաթիացուն:

19:42. **Հիսուսի** մարմինը դրեցին գերեզմանում: Արևամուտին սկսվող իրենց սոսնի կապակցությամբ, հրեաներն ուզում էին աչքից շուտ հեռացնել Նրա մարմինը: Աստծո մտահղացման համաձայն՝ մարմինը պետք է երեք օր ու երեք գիշեր մնար երկրում: Այդ առիթով պետք է նշել, որ հրեաները քսանչորսամյա օրվա յուրաքանչյուր մասը որպես օր էին հաշվում: Այնպես որ Տերը գերեզմանում մնաց երեք **ոչ լրիվ** օր, որը համապատասխանում է Նրա կանխատեսմանը (Մատթ. 12:40):

IX. ԱՍՏԾՈՒ ՈՐԴՈՒ ՀԱՂԹԱՆԿԵԼ (20-րդ գլ.)

Ա. Դատարկ գերեզմանը (20:1-10)

20:1. **Ճաբաթվա առաջին օրը** կիրակի օրն էր: **Մարիամ Մագդաղենացին** առավոտյան վաղ **գնաց գերեզման:** Հավանական է՝ գերեզմանը բլրի կամ ժայռի մեջ փորված մի փոքրիկ գետնադամբան էր: **Քարը** մետաղադրամի նման շրջանաձև ու հարթ էր: Այն գորել էին մուտքի մոտ, որը ամուր տեղադրվում էր ակոսի մեջ ու փակում գերեզմանի մուտքը: Մարիամը եկավ գերեզմանի մոտ ու զարմացավ, որ **քարը վերցված է:** Սա, ի դեպ, կատարվել է Քրիստոսի հարությունից հետո, ինչպես իմանում ենք Մատթեոս 28-ից:

20:2. Մարիամը շտապ **վազում է Պետրոսի** և Հովհաննեսի մոտ ու շնչասպառ հայտարարում, որ ինչ-որ մեկը Տիրոջ մարմինը վերցրել է **գերեզմանից:** Նա չսասց, թե ով է դա արել, միայն ասաց՝ **«նրանք»**՝ շեշտելով, որ ինքը միայն այդքանը գիտի: Արժանահիշատակ է կանանց հավատարմությունն ու նվիրվածությունը. նրանք Տիրոջ կողքին էին, երբ Նա մահացավ խաչի վրա և երբ հարություն առավ: Աշակերտները Տիրոջը թողեցին ու փախան: Կանայք մնացին առանց ուշադրություն դարձնելու անձնական անվտանգությանն սպառ-

նացող վտանգին: Այս փաստը չի կարելի անուշադրության մատնել:

20:3-4. Դժվար է երևակայել, թե ինչ էին մտածում **Պետրոսն** ու Հովհաննեսը, երբ քաղաքից շտապում էին դեպի Գողգոթայի մոտ գտնվող պարտեզը: Հովհաննեսը հավանաբար Պետրոսից երիտասարդ էր և **առաջինը գերեզման հասավ:**

20:5. Հավանաբար գերեզմանում ցածր կամար կար, ու այնտեղ մտնելու կամ ներսը դիտելու համար պետք է խոնարհվեին: Հովհաննեսը **տեսավ, որ կտավներն այնտեղ էին:** Արդյոք դրանք ծավալած էին, թե՛ պահպանում էին մարմնի ձևը, որոնցով պատել էին այն: Մենք կարծում ենք, որ վերջինն է հավաստի: **Սակայն** Հովհաննեսը գերեզմանի մեջ **չմտավ:**

20:6-7. Այդ ժամանակ **Պետրոսը** հասավ և առանց երկմտելու մտավ գերեզման: Նրան որոշակի իմպուլսիվություն է հատուկ, որը նրան մեզ նման է դարձնում: Նա նաև տեսավ **այնտեղ դրված կտավները**, բայց առանց Փրկչի մարմնի:

Վարչամակի մասին մանրակրկիտությունն ավելացված է, որպեսզի ցույց տրվի, որ Տիրոջ մեկնումը հանգիստ և անշտապ է եղել: Եթե որևէ մեկը մարմինը գողացած լիներ, նա կտավները յուրահատուկ ձևով չէր ծալի:

20:8. Հովհաննեսը մտավ գերեզման ու **տեսավ** կոկիկ դրված կտավներն ու վարչամակը: Բայց **«նա տեսավ և հավատաց»**, որ խոսքերն ավելի շատ բան են նշանակում, քան ֆիզիկապես տեսնելը: Դրանց տակ հասկացվում է, որ Նա ընկալեց: Նրա առջև Քրիստոսի հարության վկայությունն էր, որը նրա համար բացահայտեց կատարվածը, **և նա հավատաց:**

20:9. Մինչ այդ պահը աշակերտներն իսկապես չէին հասկանում հինկտակարանյան **Գրքերը**, որտեղ հաստատվում էր, որ Մեսիան **պետք է մեռելներից հարություն առնի:** Տերը նույնպես բազմաթիվ անգամ նրանց ասել էր այդ մասին, բայց նրանք չէին ընկալել Նրա խոսքերը: Առաջինը Հովհաննեսը դա հասկացավ:

20:10. **Այս աշակերտները նորից** վերադարձան **տուն**, հավանաբար Երուսաղեմ: Նրանք որոշեցին, որ անօգուտ է գերեզմանի մոտ մնալը: Ավելի լավ է գնալ ու կատարվածի մասին հաղորդել մյուս աշակերտներին:

Բ. Մարիամ Մագդաղենացուն հայտնվելը (20:11-18)

20:11. Առաջին երկու բառերը ապշեցուցիչ են. **«Բայց Մարիամը...»:** Մյուս երկու աշակերտները տուն գնացին, իսկ Մարիամը... Այստեղ մենք կրկին տեսնում ենք կանանց սերն ու նվիրվածությունը: Նրան շատ բան էր ներված, դրա համար էլ նրա սերը շատ էր: Նա գերեզմանի շուրջ անհատական հերթապահություն էր իրականացնում և լացում էր՝ կարծելով, որ մարմինը գողացվել է Տիրոջ թշնամիների կողմից:

20:12. Այս անգամ գերեզմանի մեջ նայելուց նա **տեսավ երկու հրեշտակ՝** նստած այնտեղ, **որտեղ որ Հիսուսի մարմինն էր դրված:** Հիանալի է, թե ինչպիսի հանդարտությամբ, առանց յուրահատուկ հույզերի են հաղորդվում այս ցնցող փաստերը:

20:13. Մարիամը կարծես թե ո՛չ վախեցավ, ո՛չ էլ զարմացավ: Նա պատասխանեց նրանց հարցերին, կարծես նրանց հայտնվելը սովորական, հերթական մի բան լիներ: Նրա պատասխանից պարզվում է, որ նա դեռ ամբողջությամբ չէր հասկացել, որ Հիսուսը հարություն է առել և դարձյալ ողջ է:

20:14. Այդ պահին ինչ-որ բան նրան ստիպեց ետ նայել: Նրա առջև կանգնած էր հենց Ինքը՝ **Հիսուսը**, բայց նա Նրան չճանաչեց: Վաղ առավոտ էր, և դեռ ամբողջությամբ չէր լուսավորվել: Նա անդադար լաց էր լինում, և, բնական է, նրա հայացքը մթազնամ էր: Նաև հնարավոր է, որ Աստված չթույլատրեց նրան ճանաչել Տիրոջը մինչև պատշաճ ժամանակը:

20:15. Տերը գիտեր այդ հարցերի պատասխանները. բայց Նա ուզում էր դրանք լսել Մարիամի սեփական շուրթերից: **Նա** ենթադրեց, **թե պարտիզպանն էր:** Աշխարհի Փրկիչը կարող է շատ մոտ լինել

մարդկանց և դեռ չճանաչվել: Նա միշտ հեզ տեսք ունի, ոչ թե ինչպես այս աշխարհի մեծավորները: Պատասխանելիս Մարիամը Տիրոջ անունը չտվեց: Երեք անգամ նա Հիսուսին հիշատակեց որպես **«Նրան»**:

Նա միայն մի Մարդու մասին էր մտահոգված, և նրան թվում էր, թե բոլորովին կարիք չկա Նրա ինքնությունը նշել:

20:16. Այժմ Մարիամը ծանոթ ձայն լսեց, որ նրան իր անունով էր դիմում: Չէր կարող դա սխալ լինել. փաստն այն էր, որ դա **Հիսուսն** էր: Մարիամը Նրան **«Ռաբբունի»** անվանեց, որը նշանակում է **«Ուսուցիչ»**: Փաստորեն Մարիամը դեռ շարունակում էր Նրա մասին մտածել որպես Ուսուցչի, Ում նա գիտեր: Նա չէր անդրադառնում, որ Հիսուսն ավելին էր, քան իր Ուսուցիչը. Հիսուսը նրա Տերն ու Փրկիչն էր: Ուստի Տերը պատրաստվեց նրան բացատրելու այն ավելի նոր և ավելի կատարյալ ճանապարհի մասին, որով նա այսուհետ կճանաչեր Հիսուսին:

20:17. Մարիամն անձամբ գիտեր Հիսուսին՝ որպես Մարդու: Նա տեսել էր Հիսուսի կատարած հրաշքները, երբ Նա մարդկային մարմնի մեջ էր: Դրա համար էլ նա եզրակացրեց. եթե Հիսուսը տեսանելի ձևով իր կողքին չլինի, ապա նա օրհնության հույս չի ունենա: Տերը պետք է շտկեր նրա մտքերի ընթացքը: Նա ասաց. **«Մի՛ դիպչիր Ինձ, պարզապես մի Մարդու, Ով մարմնի մեջ է գտնվում, որովհետև դեռ չեմ բարձրացել Իմ Հոր մոտ:** Այն բանից հետո, երբ Ես Երկինք վերադառնամ, Մուրբ Հոգին երկիր կուղարկվի: Երբ Նա գա, Նա Ինձ կհայտնի քո սրտին այնպես, ինչպես դու երբեք նախկինում չես ճանաչել: Ես քեզ ավելի մոտ ու թանկագին կլինեմ, քան դա հնարավոր էր Իմ երկրավոր կյանքում այստեղ»:

Այնուհետև Նա Մարիամին պատվիրեց **գնալ Իր եղբայրների մոտ** և նրանց հաղորդել Իր նոր պատվիրանի մասին: Առաջին անգամ Հիսուսն աշակերտներին **«Իմ եղբայրներ»** է անվանում: Նրանք պետք է իմանային, որ Իր Հայրը իրենց Հայրն է, և Իր Աստվածը՝ նրանցը: Միայն հիմա

հավատացյալները դարձան «որդիներ» և «Աստծո ժառանգներ»:

Տեր Հիսուսը չասաց. «Մեր Հայրը», այլ **«Իմ Հայրը և ձեր Հայրը»**: Պատճառն այն է, որ Աստված Իր Հայրն է ոչ այն իմաստով, ինչ իմաստով որ Աստված մեր Հայրն է: Աստված Տեր Հիսուսի **Հայրն** է ի հավիտենից: Քրիստոսը Հավիտենական Որդին է: Որդին հավասար է Հորը: Մենք Աստծո որդեգիր զավակներն ենք: Այս հարաբերություններն սկսում են այն ժամանակ, երբ փրկվում ենք, և դրանք երբեք էլ չեն վերջանում: Որպես Աստծո որդիներ՝ մենք հավասար չենք Աստծուն և երբեք էլ հավասար չենք լինելու:

20:18. **Մարիամ Մագդաղենացին** հնագանդվեց իր առաքելությանը և դարձավ, ինչպես որ մեկն անվանել է նրան՝ «առաքյալ առաքյալների համար»: Կարո՞ղ ենք մենք կասկածել, որ այդ մեծ արտոնությունը նրան տրվեց որպես պարգևատրություն Քրիստոսին նվիրված լինելու համար:

Գ. Հիսուսը երևում է աշակերտներին (20:19-23)

20:19. Հարության **երեկոն** էր: **Աշակերտները** միասին էին **հավաքվել**, հավանաբար այն վերնատանը, որտեղ հանդիպել էին երեք գիշեր առաջ: **Դռները** փակված էին **հրեաների վախից**: Հանկարծ նրանք տեսան Հիսուսին իրենց մեջտեղում կանգնած և լսեցին Նրա ձայնը. **«Խաղաղություն ձեզ»**: Հստակ է, որ Տերը սենյակ մտավ առանց դուռը բացելու: Հրաշք կատարվեց: Պետք է հիշել, որ հարությունից հետո Նրա մարմինը մսից ու ոսկորներից բաղկացած իրական մարմին էր: Այնուամենայնիվ, Նա իշխանություն ուներ անցնելու արգելքների միջով և գործելու բնական օրենքներից անկախ: **«Խաղաղություն ձեզ»** խոսքերը հիմա նոր նշանակություն ստացան, որովհետև խաչի վրա Քրիստոսն Իր արյունով ապահովեց խաղաղությունը: Հավատով արդարացածները Աստծո հետ խաղաղություն ունեն:

20:20. Խաղաղության հայտարարումից հետո Նա **նրանց ցույց տվեց** Իր չարչա-

րանքների հետքերը, որոնց միջոցով ստացել էր խաղաղությունը: Նրանք տեսան մեխերից առաջացած վերքերը և նիզակից առաջացած կողի վերքը: Ուրախությունը լցրեց իրենց սիրտը, երբ հասկացան, որ դա իսկապես **Տերն է**: Նա այնպես արեց, ինչպես ասել էր: Նա հարություն առավ մեռելներից: Հարուցյալ Տերը քրիստոնյայի համար ուրախության աղբյուր է:

20:21. Սա շատ գեղեցիկ համար է: Հավատացյալները չպետք է եսասիրարար վայելեն Նրա խաղաղությունը: Նրանք պետք է այն կիսեն ուրիշների հետ: Հիսուսը նրանց ուղարկում է աշխարհ այնպես, **ինչպես Հայրն ուղարկեց** Իրեն:

Քրիստոսն աշխարհ եկավ

Որպես աղքատ Մարդ:

Նա որպես ծառա եկավ:

Նա Իրեն ամբողջությամբ տվեց:

Նա ուրախությամբ կատարեց Աստծո կամքը:

Նա մարդու կերպարանք ընդունեց:

Նա միայն բարիք արեց:

Նա ամեն բան կատարեց Սուրբ Հոգու գործությամբ:

Նրա նպատակը խաչն էր:

Հիմա Նա աշակերտներին ասաց. **«Այդպես էլ ես ձեզ եմ ուղարկում»**:

20:22. Սա ամբողջ Ավետարանի դժվար համարներից մեկն է: Մենք կարդում ենք, որ **Հիսուսը փչեց** աշակերտների վրա և ասաց. **«Առե՛ք Սուրբ Հոգին»**: Դժվարությունն այն է, որ Սուրբ Հոգին տրված չէր Հոգեգալստից առաջ: Տերն ինչպե՛ս կարող էր ասել այս խոսքերը նախքան այս դեպքերի լինելը:

Մի քանի բացատրություններ կան. 1. Ոմանք ենթադրում են, որ Տերը պարզապես խոստացավ, որ Հոգեգալստյան օրը նրանք կստանան Սուրբ Հոգին: Սա դժվար թե անհրաժեշտ բացատրություն է: 2. Ուրիշներն էլ մատնանշում են, որ իրականում Փրկիչն այստեղ ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին», ոչ թե «Առե՛ք Սուրբ Հոգին»: Մրանից նրանք եզրակացնում են, որ այդ պահին աշակերտները Սուրբ Հոգին ստացան, բայց

ոչ Իր ողջ լիությամբ, այլ Հոգու միայն մասնակի ծառայությունը, ինչպես օրինակ ճշմարտության մասին ավելի գիտություն ունենալը կամ նրանց առաքելության համար իշխանությունն ու առաջնորդությունը: Նրանք ասում են, որ աշակերտներն ստացան Սուրբ Հոգու երաշխիքը կամ կանխավայելումը: 3. Ոմանք էլ հայտարարում են, որ այդ ժամանակ Սուրբ Հոգին ամբողջությամբ հեղվեց աշակերտների վրա: Սա քիչ հավանական է թվում այն էլ այնպիսի պնդումների շարքում, ինչպիսիք են Դուկասի (24:49) և Գործք Առաքելոցի (1:4, 5, 8) հաստատումները, որտեղ Սուրբ Հոգու գալու մասին դեռ խոսվում է որպես գալիք իրադարձության մասին: 7:39-ից հստակ է, որ Հոգին չէր կարող Իր ամբողջ լիությամբ հանգչել այնքան ժամանակ, քանի դեռ Հիսուսը չէր փառավորվել, այսինքն՝ քանի դեռ Նա Երկինք չէր վերադարձել:

20:23. Սա ևս մի բարդ համար է, որը շատ հակասություններ է առաջ բերում: 1. Առաջին տեսանկյունը այսպիսին է. փաստորեն Տեր Հիսուսն Իր աշակերտներին և նրանց ենթադրյալ հետնորդներին մեղքեր ներելու կամ թողություն տալու **գործություն** տվեց: Այսպիսի կարծիքն ամբողջությամբ հակասում է Աստվածաշնչին, որը սովորեցնում է, որ միայն Աստված կարող է մեղքերը ներել (Դուկ. 5:21): 2. Գաբելիները երկրորդ տեսանկյունն է ներկայացնում. «Խոստացված գործությունն ու հեղինակությունը տրվում են Ավետարանի պատգամի համաձայն: Աշակերտները միայն հայտարարում են, թե ինչպիսի պայմաններում կարելի է մեղքերի թողություն ստանալ, և եթե այդ պայմանները չկիրառվեն, ապա մեղքերը կպահպանվեն»: 3. Երրորդ տեսակետը (նման երկրորդին), որը մենք առանձնացնում ենք, այսպիսին է. աշակերտներին իրավունք է տրված **հայտարարելու** մեղքերի թողության մասին:

Թ՛ո՛ւյլ տվեք պատկերավոր կերպով բացատրել երրորդ տեսակետը: Աշակերտները քարոզում են Ավետարանը: Որոշ մարդիկ զոջում են իրենց գործած մեղքերի համար և ընդունում են Տեր Հիսուսին: Աշակերտ-

ները լիագործված են նրանց հաղորդելու, որ իրենց մեղքերը ներված են: Ուրիշները հրաժարվում են ապաշխարելուց ու չեն հավատում Քրիստոսին: Աշակերտներն իրավունք ունեն այդպիսիներին ասելու, որ նրանք դեռ մեղքերի մեջ են և երբ մեռնեն, հավիտյան կկորչեն:

Ի հավելումն այս բացատրության՝ մենք պետք է նաև ուշադրություն դարձնենք այն բանի վրա, որ Տերն աշակերտներին յուրահատուկ իշխանություն տվեց գործ ունենալ որոշակի մեղքերի հետ: Օրինակ՝ Գործք 5:1-11-ում Պետրոսն օգտագործում է այս իշխանությունը, որը հանգեցնում է Անանիայի ու Սափիրայի մահվան: Պողոսը 1 Կոր. 5:3-5, 12-13 համարներում չի ներում այլասերված մեկին, բայց ներում է 2 Կոր. 2:4-8-ում: Այս դեպքերում մեղքերի հետևանքով պատժից ներումը, ազատումը այս կյանքում է լինում:

Դ. Տարակուսանքը փոխվում է հավատի (20:24-29)

20:24. Պետք չէ հապճեպ հետևություն անել, թե **Թովմասը** ինչ-որ բանում հանցավոր էր, քանի որ աշակերտների հետ չէր: Մենք չգիտենք նրա բացակայության պատճառը:

20:25. Թովմասին **պետք է** մեղադրել անհավատության համար: Նա ցանկանում էր Տիրոջ հարության վերաբերյալ տեսանելի, նյութական ապացույց ունենալ, հակառակ դեպքում նա **չէր հավատա**: Եվ այսօր շատերն են այսպես մտածում, բայց դա իմաստուն մտածելակերպ չէ: Նույնիսկ գիտնականներն են շատ բաների հավատում, որոնց չեն տեսնում և չեն կարող «շոշափել»:

20:26. Մի շաբաթ անց Տերը դարձյալ Իր աշակերտների առջև կանգնեց: Այս անգամ **Թովմասը նրանց հետ էր**: Տերը նորից անսովոր կերպով մտավ սենյակ ու նրանց ողջունեց «**Լաղաղությունն ձեզ**» խոսքերով:

20:27. Տերը շատ բարեկամաբար ու համբերատարությամբ գրուցում էր Իր անհավատ հետևորդների հետ: Նա Թովմասին առաջարկեց ձեռքը դնել կողի մեջ՝ նիզակի

առաջացրած վերքի վրա, որպեսզի նա համոզվի Նրա իրական հարությանը:

20:28. **Թովմասը** համոզվեց: Մենք չգիտենք՝ արդյոք նա շոշափեց Տիրոջ կողի վերքը: Բայց նա վերջապես իմացավ, որ Հիսուսը հարություն է առել, և Նա **Տեր** և **Աստված է**:

Չոն Բոյզը սիրուն ձևով է արտահայտվել այդ մասին. «Նա ընդունեց անտեսանելի աստվածությունը տեսանելի վերքերի միջոցով»:

20:29. Կարևոր է նշել, որ **Հիսուսը՝** որպես Աստված, ընդունում էր երկրպագությունը: Եթե Նա միայն մարդ լիներ, նա կարգելեր Իրեն երկրպագել: Բայց Թովմասի հավատն այնպիսին չէր, որ շատ հաճելի է Տիրոջը: Որովհետև այդ հավատը հիմնվում էր տեսանելիի վրա: Ավելի **երանելի են նրանք, որ չեն տեսել, բայց հավատում են**:

Հավաստի վկայությունն Աստծո Խոսքն է: Եթե մենք հավատում ենք Աստծո ասածներին, ապա դրանով Նրան պատվում ենք, և հակառակը՝ Նրա նկատմամբ հարգանք չենք արտահայտում, եթե լրացուցիչ վկայություններ ենք պահանջում: Մենք պետք է պարզապես հավատանք, քանի որ դա Նրա Խոսքն է. Նա է ասել, իսկ Նա չի խաբում և չի սխալվում:

Ե. Հովհաննեսի Ավետարանի նպատակը (20:30-31)

Հիսուսի կողմից կատարված ոչ բոլոր հրաշքներն են արձանագրված Հովհաննեսի Ավետարանում: Սուրբ Հոգին ընտրել է նրանցից այն նշանները, որոնք լավագույնս են ծառայում Նրա նպատակներին:

Ճիշտ այդպիսին է Հովհաննեսի կողմից գրված գիրքը: Այն գրված է, որպեսզի ընթերցողները **հավատան, որ Հիսուսը** ճշմարիտ Մեսիան է և **Աստծո Որդին**: **Հավատալով** նրանք հավիտենական **կյանք կունենան Նրա անունով**:

Դուք հավատացե՛լ էք:

X. ՎԵՐՉԱԲԱՆ. ՀԱՐՈՒՑՅԱԼ ՈՐԳԻՆ ԻՐ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ (21-րդ գլ.)

Ա. Զրիստոսը հայտնվում է Իր աշակերտներին Գալիլիայում (21:1-4)

21:1. Այժմ իրադարձությունները կատարվում են Տիբերիական ծովի մոտ՝ Գալիլիայում: Աշակերտները գնացին հյուսիս՝ դեպի Գալիլիա, որտեղ իրենց տներն էին: Տեր Հիսուսը նրանց հանդիպեց այնտեղ: **«Իրեն հայտնեց Իր աշակերտներին»** արտահայտությունը նշանակում է, որ Հովհաննեսը պատրաստվում է նկարագրելու, թե Զրիստոսն ինչպես իրենց հայտնվեց:

21:2. Այդ ժամանակ յոթ աշակերտներով միասին էին՝ **Պետրոսը, Թովմասը, Նաթանայելը**, Հակոբոսն ու Հովհաննեսը (**Չեբեղեռոսի որդիները**) **և ուրիշ երկուսը**, որոնց անունները մենք չգիտենք:

21:3. Միմյուս **Պետրոսը** որոշեց գնալ **ծուկ որսալու** լճում, և մյուսներն էլ համաձայնվեցին նրա հետ գնալ: Սա լիովին բնական որոշում էր երևում, չնայած որ Աստվածաշունչ ուսումնասիրողները ենթադրում են, որ ծուկ բռնելը հակառակ էր Աստծո կամքին, և նրանք գնացել էին նախապես չադրթելով: **Եվ այդ գիշեր ոչինչ չբռնեցին:** Նրանք առաջին ձկնորսները չէին, որոնք գիշերն անց էին կացնում առանց մի ծուկ անգամ բռնելու: Սա առանց Աստծո օգնության մարդկային ջանքերի անօգտակարության օրինակ է, հատկապես հոգիներ շահելու հարցում:

21:4. **Առավոտյան**, երբ նրանք թիավարում էին դեպի ծովեզր, **Հիսուսը** նրանց էր սպասում: Բայց նրանք **չճանաչեցին** Նրան: Գուցե դեռ մուլթ էր, կամ էլ Աստված Իր իշխանությամբ չթույլատրեց աշակերտներին Նրան ճանաչել:

21:5. Դա նույնն էր, եթե Տերը հարցներ. «Երիտասարդներ, ձեզ մոտ ուտելու ինչ-որ բան կա՞»: Հիասթափված՝ **նրանք պատասխանեցին Նրան. «Ո՛չ»:**

21:6. Նրանց թվաց, որ դա ծովեզրով քայլող մի անձանոթ է: Այնուամենայնիվ, ի

պատասխան Նրա տված խորհրդին՝ նրանք **ուռկանը նավի աջ կողմը գցեցին**, և... Օ՛, հրաշք: **Ձկների** բազմություն: Այնքան շատ էր, որ նրանք չէին կարողանում ուռկանը դուրս քաշել: Սա այն մասին է խոսում, որ Տեր Հիսուսն ամենագետ է, դրա համար էլ գիտեր, թե լճում ձկները որտեղ են գտնվում: Սա մեզ համար էլ դաս է. երբ Տերը ղեկավարի մեր ծառայությունները, սպա դատարկ ուռկաններ այլևս չեն լինի: Նա գիտի, որտեղ են գտնվում փրկությունն ընդունելու պատրաստ հոգիները, և ուզում է մեզ դեպի նրանց ուղղորդել, եթե մենք Նրան թույլ տանք:

21:7. Հովհաննեսն առաջինը ճանաչեց **Տիրոջը** և այդ մասին **Պետրոսին** ասաց: Վերջինս **իր ձկնորսական հագուստը վրան փաթաթեց**, որովհետև մերկ էր, և իրեն ծովը նետեց ու դեպի ափ լողաց: Մեզ չի հաղորդվում. նա լողաց, թե ջրի միջով քայլեց կամ ջրի վրայով քայլեց, ինչպես ոմանք ենթադրում են:

21:8. **Մյուս աշակերտները** ձկնորսական մեծ նավից տեղափոխվեցին **նավակի** մեջ և քաշեցին **ուռկանը**, հանեցին ափ, որ մոտ հարյուր մետր հեռավորության վրա էր:

21:9. Փրկիչն արդեն նրանց համար ճաշ էր պատրաստել՝ խորոված **ծուկ և հաց:** Մենք չգիտենք, արդյոք Տերը որսացել էր այդ ծուկը, կամ հրաշքով էր դուրս բերել: Բայց ճշգրտորեն գիտենք, որ Նա կախված չէ մեր թույլ ջանքերից: Անկասկած, մենք Երկնքում կիմանանք, որ մինչ շատ մարդիկ փրկվել են քարոզչության ու անհատական վկայության միջոցով, շատերն էլ փրկվել են հենց Տիրոջ միջոցով՝ առանց մարդկային օգնության:

21:10. Այժմ Նա խնդրեց նրանց բերել ուռկանի **ձկներից** ոչ թե եփելու, այլ հաշվելու համար: Սա մեկ անգամ ևս նրանց հիշեցնում է, որ հաջողության գաղտնիքն այն է, որ աշխատեն Նրա ղեկավարությամբ և գործեն բացարձակորեն Նրա Խոսքին հնազանդելով:

21:11. Աստվածաշունչը տալիս է որսված

ձկների ճշգրիտ թիվը՝ **հարյուր հիսուններեք**: Շատ հետաքրքիր բացատրություններ կան այս թվի հետ կապված: 1. Այդ ժամանակ աշխարհում եղած լեզուների քանակը: 2. Այն ռասաների ու ցեղերի քանակն է, որոնց պետք է հասնի Ավետարանի ուռնականը: 3. Գալիլիայի ծովի կամ աշխարհի ձկների տեսականու թիվն է: Առանց կասկածի՝ այն կարող է վկայել Ավետարանի քարոզչության միջոցով փրկվածների բազմազանության մասին՝ տարբեր մարդիկ՝ յուրաքանչյուր ցեղից ու ազգից: Ձրկնորսներն ուրախացան՝ հրաշք համարելով այն, որ **ուռնականը չպատռվեց**: Սա ևս մի ապացույց է, որ Աստծո կամքով Նրա գործը կատարող մարդը երբեք Աստծո միջոցների անբավարարություն չի ունենա:

21:12. Լսելով **կերակուր** ուտելու հրավերը՝ աշակերտները հավաքվում են կրակի շուրջ և կիսում Տիրոջ առաջարկած համեղ սնունդը: Ածխի վառ կտորները տեսնելով՝ Պետրոսը պետք է որ ինչ-որ բան հիշեր: Միգուցե նա հիշեց այն կրակը, որի շուրջ տաքանալուց ուրացավ Հիսուսին: Տիրոջ ներկայության ժամանակ աշակերտներին համակեց վախի ու տագնապի անսովոր զգացում: Նա նրանց առջև էր կանգնել Իր հարուցյալ մարմնով: Ցանկանում էին բազմաթիվ հարցեր տալ Նրան, բայց չէին համարձակվում: Նրանք գիտեին, որ Տերն է, միաժամանակ զգում էին Նրա Անձը պարուրող խորհրդավորությունը:

21:13. Այժմ **Հիսուսը** նրանց կերակուր մատուցեց: Հավանաբար այն հիշեցրեց մի նմանատիպ իրադարձություն, երբ Նա կշտացրեց հինգ հազար մարդու մի քանի հացով ու ձկով:

21:14. Սա **երրորդ անգամն էր**, - նշում է Հովհաննեսը, - **որ Հիսուսն Իր աշակերտներին երևաց**: Այն, որ Նա ավելի վաղ էր նրանց երևացել, հստակ է մյուս Ավետարաններից: Այս Ավետարանում Նա աշակերտներին երևացել էր հարության օրվա երեկոյան, իսկ հետո մի շաբաթ անց և հիմա էլ՝ Գալիլիայի կապուտակ լճի ափին:

Բ. Պետրոսի վերականգնումը (21:15-17)

21:15. Տերն սկզբում հոգաց աշակերտների ֆիզիկական կարիքները: Իսկ երբ նրանք տաքացան ու կշտացան, Նա **Պետրոսին** դիմեց հոգևոր հարցերով: Պետրոսը երեք անգամ հրապարակավ ուրացել էր Տիրոջը: Հետո զոջացել ու վերականգնել էր Տիրոջ հետ հաղորդակցությունը: Այս համարներում Տերը հրապարակայնորեն հաստատում է Պետրոսի վերականգնումը:

Հաճախ մատնանշում են, որ **սիրո** նշանակության համար այս համարներում երկու տարբեր բառեր են օգտագործում: Մենք կարող ենք 15-րդ համարը հետևյալ ձևով վերաձևակերպել. «**Միմո՛ն, Հովնանի՛ որդի, դու Ինձ սիրո՛ւմ ես** մյուս աշակերտներից **ավելի**»:⁵⁴ Պետրոսն **ասաց Նրան. «Այո՛, Տեր, Դու գիտես, որ ես սիրում եմ քեզ**»:

Պետրոսն այլևս չի պարծենում, որ երբեք Տիրոջը չի լքի, նույնիսկ եթե բոլոր մյուս աշակերտներն այդպես վարվեն: Նա սովորել էր այդ դասը:

Հիսուսն ասաց. «**Արածեցրո՛ւ Իմ գառներին**»:

Քրիստոսի նկատմամբ սերն ապացուցելու լավագույն միջոցը՝ արածեցնել Նրա երիտասարդ հոտը: Հետաքրքիր է ուշադրություն դարձնել այն բանին, որ գրույցը ձկնորսությունից անցավ հովվությամբ: Ձկնորսությունն ավետարանչությունն է խորհրդանշում, իսկ երկրորդը ենթադրում է ուսուցում և հովվական հոգատարություն:

21:16. **Երբ** Տերը **դարձյալ** հարցրեց Պետրոսին, թե նա սիրում է Իրեն, Պետրոսը պատասխանեց: Երկրորդ անգամ Պետրոսի պատասխանում իր նկատմամբ անվստահության տոն կար. «**Դու գիտես, որ ես սիրում եմ քեզ**»:

Այս անգամ **Նա ասաց նրան. «Արածեցրո՛ւ, Իմ ոչխարներին**»:

Քրիստոսի հոտի մեջ և՛ գառներ, և՛ ոչխարներ կան, որոնք հոգատարության կարիք ունեն նրանից, ով սիրում է Հովվին:

21:17. Պետրոսը երեք անգամ ուրացավ Տիրոջը, դրա համար էլ նրան երեք անգամ Հիսուսին դավանելու հնարավորություն տրվեց:

Այս անգամ Պետրոսը բողոքարկեց, որովհետև Հիսուսն Աստված է ու **ամեն** բան գիտի: Նա **երրորդ անգամ** ասաց. «**Պուզիտես, որ ես սիրում եմ քեզ**»: Ու վերջին անգամ նրան առաջարկվեց դա ապացուցել Քրիստոսի **ոչխարներին** արածեցնելով: Այս համարներում հիմնական դասն այն է, որ Քրիստոսին ծառայելու միակ ընդունելի պատճառը պետք է հանդիսանա Նրա հանդեպ ունեցած սերը:

Գ. Հիսուսը կանխատեսում է Պետրոսի մահը (21:18-23)

21:18. Երբ Պետրոսը **երիտասարդ էր**, նա կարող էր ազատ տեղաշարժվել: Գնում էր, **ուր ուզե՞նար**: Բայց այստեղ Տերը կանխատեսեց նրա մասին, որ կյանքի վերջում նա պիտի ձերբակալվի, կապվի ու մահապատժի ենթարկվի:

21:19. Այստեղ բացատրվում է 18-րդ համարը: Պետրոսը **փառավորելու է Աստծուն** մարտիրոսական մահով: Նրան, ով ուրացավ Տիրոջը, քաջություն է տրվելու իր կյանքը Նրա համար դնելու: Այս համարը մեզ հիշեցնում է այն մասին, որ մենք կարող ենք Աստծուն փառավորել ինչպես կյանքով, այնպես էլ մահով: Այնուհետև Հիսուսն ասաց. «**Ի՛նձ հետևիր**»: Այս ասելով պետք է որ Նա գնալու պատրաստվեր:

21:20. Պետրոսը հետևեց Տիրոջը, բայց հետո **եռ դառնալով տեսավ իր ետևից եկող Հովհաննեսին**: Այստեղ Հովհաննեսն ինքն իրեն անունով չի կոչում, բայց իր մասին հիշեցնում է իբրև մեկի, ով զատկական **ընթրիքի ժամանակ** Տեր Հիսուսի **կրծքովն էր ընկել** և հարցրել մատնիչի անունը:

21:21. Պետրոսը տեսավ Հովհաննեսին և հավանաբար նրա գլխում մի միտք ծագեց. «**Իսկ Հովհաննես՞նք**: Նա նույնպե՞ս մարտիրոսավելու է, թե՞ ապրելու է մինչև Տիրոջ վերադարձը»: Նա Տիրոջը հարցրեց Հովհաննեսի ապագայի մասին:

21:22. Տերը պատասխանեց, որ Պետրոսին չպետք է հետաքրքրեն Հովհաննեսի վերջին օրերը: Նույնիսկ եթե նա ողջ մնա մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը, դա

չպետք է Պետրոսի համար նշանակություն ունենա: Քրիստոնեական ծառայությունում շատ անհաջողություններ կապված են նրա հետ, որ աշակերտներին ավելի հետաքրքրում են միմյանց գործերը, քան թե Տերն Ինքը:

21:23. Տիրոջ խոսքերը ճշգրտորեն չէին մեջբերվել: Նա **չասաց**, թե Հովհաննեսը մինչև Իր վերադառնալը կապրի: Այլ միայն ասաց, որ եթե այդպես էլ լինի, դա չպետք է ազդի Պետրոսի վրա: Ծատերն այս խոսքերի մեջ տեսնում են հետևյալ նշանակությունը, որ Հիսուսն այստեղ Հովհաննեսին կապակցում է Իր երկրորդ գալուստյան հետ այնքանով, որ նրան արտոնություն տրվեց գրել վերջին ժամանակների մանրամասնություններին վերաբերող Հիսուս Քրիստոսի Հայտնությունը:

Դ. Հիսուսի Մասին Հովհաննեսի եզրափակիչ վկայությունը (21:24-25)

21:24. Հովհաննեսն ավելացրեց, որ անձնապես է վկայում իր կողմից գրվածի ճշգրտության մասին: Ոմանք կարծում են, որ Հովհաննեսի Ավետարանի այս խոսքերը Եփեսոսի եկեղեցու երեցների կողմից կատարված վավերացում է:

21:25. Մենք չենք վախենում բառացի ընդունել այս համարը: Հիսուսն Աստված է, ուստի և անվերջ է: Ո՛չ Նրա խոսքերի նշանակությանը և ո՛չ էլ Նրա գործերի քանակին սահման չկա: Երկրի վրա գտնվելով, միևնույնն է, Նա արևի, լուսնի ու աստղերի Պահողն ու Կարգադրիչն էր: Ո՞վ կարող է երբևէ նկարագրել այն ամենը, ինչը շարժման մեջ է դնում տիեզերքը: Նույնիսկ Նրա՝ երկրի վրա կատարած հրաշքներն են մակերեսորեն նկարագրված: Խորհե՛ք նյարդերի, մկանների, արյան և մարմնի մյուս մասերի մասին, որոնց Նա ղեկավարում էր բուժման ընցաթքում: Խորհե՛ք մանրեների, ձկների, կենդանական աշխարհի վրա ունեցած Նրա իշխանության մասին: Մտածեցե՛ք այն մասին, որ Նա ուղղորդում է մարդկանց գործերը: Պատկերացրե՛ք, թե Նա ինչպես է տիեզերքում կառավարում նյութի յուրաքանչյուր

մասնիկի ատոմային կառուցվածքը: Եթե այս բոլորը մանրակրկիտ ձևով նկարագրվի, արդյոք **աշխարհը կարո՞ղ է պարունակել այն գրքերը:** Պատասխանը միանշանակ ոչ է:

Այսպիսով, մենք ավարտում ենք Հովհաննեսի Ավետարանի մեր մեկնաբանությունները: Թերևս այն մեզ մի քիչ օգնեց՝ ավելի լավ հասկանալու, թե ինչու է այս Ավետարանը դարձել Աստվածաշնչի սիրված մասերից մեկը: Եթե այն մտածելով ու լրջությամբ կարդանք, ապա հնարավոր չէ նորից չսիրել այն օրհնյալ Անձնավորությանը, Ում նա ներկայացնում է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

¹NU և NKJV Աստվածաշունչների տեքստերում (1:18) համարը կարդում ենք. «Միածին Աստված»: «Միածին Որդի» ավանդական արտահայտությունը համապատասխանում է ձեռագրերի մեծամասնությանը, ինչպես նաև 3:16-ին:

²(1:29) J. Cyddylan Jones, *Stadies in the Gosples According to St. John*, էջ 103:

³(1:45) James S. Stewart, *The Life and Teaching of Jesus Christ*, էջեր 66-67:

⁴Միայն Հովհաննեսն է (1:51) համարում գրում. «Ճշմարիտ, ճշմարիտ»: Մյուս ավետարանիչները հավանաբար *կրճատել են* մեր Տիրոջ արտահայտությունը, և մենք նրանց մոտ կարդում ենք. «Ճշմարիտ»:

⁵(2:4) George Williams, *The Student's Commentary on the Holy Scriptures*, էջ 194:

⁶(2:11) Jones, *Stadies*, էջ 148:

⁷(3:1)-ում հունարեն *de* կապը կարող է նշանակել *և՛ հիմս, և՛ բայց* և այլն: Ժամանակակից անգլերեն Աստվածաշունչները դա հաճախ բաց թողնելու հակվածություն ունեն: Սա այն քիչ տեղերից է, որտեղ այն բացակայում է KJV տարբերակում, իսկ NKJV տարբերակն էլ հետևում է նրա օրինակին:

⁸(3:5) Եվս մեկ ծանրակշիռ բացատրություն, որը համապատասխանում է հոգևոր ու ֆիզիկական ծնունդների հակադրությ-

յան համատեքստին. ջուրը վերաբերում է ֆիզիկական ծննդին, իսկ Հոգին վերաբերում է Սուրբ Հոգուն: Ռաբբիները «ջուր» բառը օգտագործում էին՝ ակնարկելով արական սերմին: Ջուրը կարող է նաև նշանակել այն հեղուկ ջրերի պարկը, որը պայթում է երեխայի ծնվելու ժամանակ:

⁹(3:16) F. W. Boreham. ավելի ամբողջական տվյալներ չկան:

¹⁰Քննադատական NU տեքստը դուրս է թողել *Քրիստոսը*:

¹¹(4:48) Հունարենում տարբեր դիմելաձևեր կան մի մարդու համար (դու) և շատերին դիմելու համար (դուք): Այստեղ հոգնակին է օգտագործված:

¹²(5:2) Քննադատական NU տեքստում Bethzatha, բայց հնագիտությունը հաստատում է հիմնական ձեռագրերում և KJV-ում եղող ավանդական անունը:

¹³(5:3) James Gifford Bellett, *The Evangelists*, էջ 50:

¹⁴(5:18) J. Sidlow Baxter, *Explore the Book*, V:309:

¹⁵(5:24) Ուրիշ համարներ էլ կան, որոնք սովորեցնում են, որ մի օր հավատացյալը պետք է կանգնի Քրիստոսի Ատյանի առջև (Հռ. 14:10, 2 Կոր. 5:10): Սակայն այդ պահին նա չի պատժվելու մեղքի համար, որովհետև պատիժը արդեն կայացել է Գողգոթայում: Քրիստոսի Ատյանում կրճնվեն հավատացյալի կյանքն ու ծառայությունը, և նա կա՛մ կպարգևատրվի, կա՛մ էլ պատիժ կկրի: Այն ժամանակ խոսքը ոչ թե նրա հոգու փրկության մասին է լինելու, այլ իր կյանքի պտղաբերության:

¹⁶(5:29) Եթե Աստվածաշնչում հարության մասին սա միակ համարը լիներ, ապա կարելի էր եզրակացնել, որ մեռածները միաժամանակ են հարություն առնելու: Սակայն Սուրբ Գրքի այլ մասերից, հատկապես Հայտնության գրքից (20-րդ գլ.) մենք գիտենք, որ երկու հարությունների միջև մի ժամանակահատված է անցնելու, ամենաքիչը մի հազարամյակ: Առաջին հարության ժամանակ հարություն են առնելու Քրիստոսին հավատացող փրկվածները:

Երկրորդ հարությունը ներառում է բոլոր նրանց, ովքեր անհավատ են մահացել:

¹⁷(5:39) «Քննել» բայի ձևը հունարենում միանշանակ չէ: Այն կարող է հրամայական ձևով լինել:

¹⁸(«Քննեցե՛ք», KJV) կամ հատկանշական (մատնացույց անելով՝ «դուք քննեցե՛ք» NKJV): Համատեքստը համապատասխանում է NKJV թարգմանությանը:

¹⁹(5:47) Guy King, *To My Son*, էջ 104:

²⁰(6:11) W. H. Griffith Thomas, *The Apostle John: His Life and Writings*, էջեր 173, 174:

²¹(6:15) Frederik Brotherton Meyer, *Tried By Fire*, էջ 152:

²²(6:31) Մանանան փոքրիկ, սպիտակ ուտելիք էր, որն Աստված հրաշքով ուղարկեց անապատում դեգերող իսրայելացիներին: Նրանք ամեն առավոտ՝ բացի շաբաթ օրերից, պետք է գետնի վրայից հավաքեին տեղացող մանանան:

²³(6:55) Քննադատական NU տեքստում կարդում ենք. «... Ծճմարիտ կերակուրը..., ճճմարիտ ըմպելիքը», բայց, ըստ էության, դրանց նշանակությունները նույնն են:

²⁴(6:59) Սինագոգան կրոնասեր հրեաների հավաքույթի տեղն էր, բայց այն նույնը չէր, ինչ որ Երուսաղեմի տաճարը, որտեղ միայն կարելի էր գոհաբերություններ կատարել:

²⁵(6:69) Քննադատական NU տեքստում կարդում ենք. «Ինչ՞ Աստծո սուրբը»:

²⁶(7:1) Օգտակար է իմանալ, որ հունարենում «հրեա» բառը (*Ioudaios*) կարող է նշանակել. 1. *hplaw* (գալիլիացու հակառակը), 2. որևէ հրեա, ներառյալ նրանք, ովքեր ընդունում են Քրիստոսին, 3. քրիստոնյայի հակառակորդ, հատկապես կրոնական առաջնորդ: Հովհաննեսը «հրեա» բառն օգտագործում է մասնավորապես այս վերջին իմաստով, չնայած որ ինքը հրեա քրիստոնյա էր:

²⁷(7:7) Meyer, *Tried*, էջ 129:

²⁸(7:8) Քննադատական NU տեքստում «դեռ»-ի բացակայությունը ճիշտ չէ: Թվում է՝ մեր Տիրոջը խաբեություն է վերագրվում:

²⁹(8:5) J. N. Darby, ավելի ամբողջական տվյալներ չկան:

³⁰(8:11) 7:53-8:11 համարները Հովհաննեսի հին ձեռագրերում չկան, բայց կան ավելի քան 900 հունարեն ձեռագրերում (ճնշող մեծամասնությունը): Հարց է առաջացել, թե այս համարներն արդյոք պատկանո՞ւմ են սկզբնական տեքստին: Մենք հավատում ենք, որ դրանք կարելի է ընդունել որպես Աստծո ներշնչումն ունեցող տեքստի մի մասը: Այն ամենը, ինչ այս համարները սովորեցնում են, ներդաշնակության մեջ են գտնվում Աստվածաշնչի մնացած մասերի հետ: Օգոստինոսը գրում է, որ ինչ-որ մեկը բացառել է այս հատվածը՝ վախենալով, որ այն կնպաստի բարոյականության մասին ազատ պատկերացումների զարգացմանը:

³¹(8:45) R. C. H. Lenski. *The Interpretation of Colossians, Thessalonians, Timothy, Titus, Philemon*, էջեր 701, 702:

³²(9:35) Քննադատական NU տեքստում այստեղ կարդում ենք՝ «Մարդու Որդի», որը չի համապատասխանում համատեքստին և ձեռագրերի մեծամասնությանը:

³³(10:28) Հունարենում այստեղ կրկնակի բացասական է՝ ավելի շեշտելու նպատակով:

³⁴(10:36) Samuel Green, «*Scripture Testimony to the Deity of Christ*», էջ 7:

³⁵(11:1) Arthur W. Pink, *Exposition of the Gospel of John*, III:12:

³⁶(11:25) Burkitt, ավելի ամբողջական տվյալներ չկան:

³⁷(11:35) Հունարեն ՆԿ-ի ամենակարճ համարը գտնվում է հուգական սպեկտրի հակադիր կողմում՝ «Մի՛շտ ուրախացե՛ք» (*Pantote chairete*, 1 Թես. 5:16):

³⁸(11:47) J. C. Ryle, *Expository Thoughts on the Gospel, St. John*, II:295:

³⁹(11:48) Meyer, *Tried*, էջ 112:

⁴⁰(12:5) Ryle, *John*, II:309, 10:

⁴¹(12:7) Քննադատական NU տեքստում «Նա Իմ թաղման օրվա համար է պահում սա» փոխանակ «Նա Իմ թաղման օրվա համար էր պահել սա» ճիշտ չէ, հակասում է և՛ այս համատեքստին, և՛ Չատկի առա-

վոյան Մարիամի բացակայությանը գերեզմանում:

⁴²(12:24) T. G. Ragland, ավելի ամբողջական տվյալներ չկան:

⁴³(13:13-14) Արևելյան երկրներում, բառացիորեն ասված, ոտքերը լվանալու սովորույթ կա, բայց դա խոնարի ծառայության օրինակներից մեկն է:

⁴⁴(13:32) Հունարեն քերականությունը (առաջին սեռի պայմանները առավել *ei* հատկանշական (մատնացույց անելով) խոնարհման մեջ) ենթադրում է, որ դա նշմարիտ է:

⁴⁵(14:20) Հայտնի են այլ օրինակներ՝ թըռչունը՝ օդում, և օդը՝ թռչունի մեջ, ձուկը՝ ջրում, ջուրը՝ ձկում:

⁴⁶(17:1) Marcus Rainsford, *Our Lord Prays for His Own*, էջ 173:

⁴⁷(17:4) Ryle, *John*, III:40, 41:

⁴⁸(17:26) F. L. Godet, *Commentary on the Gospel of John*, II:345:

⁴⁹(17:26) Rainsford, *Our Lord Prays*, էջ 173:

⁵⁰(18:14) Stewart, *Life and Teaching*, էջ 157:

⁵¹(18:28) Augustine, մեջբերումն ըստ Ryle, *John*, III:248:

⁵²(18:28) Bishop Hall, *Ibid*:

⁵³(18:28) Pool, *Ibid*:

⁵⁴(19:20) Alexander, ավելի ամբողջական տվյալներ չկան:

⁵⁵(21:15) Քննադատական NU տեքստում Պետրոսի հայրը անվանվում է Հովհաննես՝ Հովնանի փոխարեն (նույնպես 16-17 համարներում):

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Godet, F. L. *Commentary on the Gospel of John*. Grand Rapids: Zondervan Publishing House, 1969թ. (Reprint of 1893թ. ed., 2 vols. in one):

Hole, F. B. *The Gospel of John Briefly Expounded*. London: The Central Bible Truth Depot, n. d.

Ironside, H. A. *Addresses on the Gospel of John*. New York: Loizeaux Bros., 1956թ.:

Jones, J. Cyddylan. *Studies in the Gospel according to St. John*. Toronto: William Briggs, 1885թ.:

Kelly, William. *An Exposition of the Gospel of John*. London: C. A. Hammond Trust Bible Depot, 1966թ.:

Lenski, R. C. H. *The Interpretation of St. John's Gospel*. Minneapolis: Augsburg Publishing House, 1942թ.:

Macaulay, J. C. *Obedience Unto Death: Devotional Studies in John's Gospel*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Co., 1942թ.:

Pink, Arthur W. *Exposition of the Gospel of John*. Vol. 3. Swengel, Pennsylvania: Bible Truth, Depot, 1945թ.:

Rainsford, Marcus. *Our Lord Prays for His Own*. Chicago: Moody Press, 1955թ.:

Ryle, J. C. *Expository Thoughts on the Gospels*: St. John. London: James Clarke and Co., Ltd., 1957թ.:

Tasker, R. V. G. *The Gospel According to St. John*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1968թ.:

Tenney, Merrill C. *John: The Gospel of Belief*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1948թ.:

Thomas, W. H. Griffith. *The Apostle John: Studies in His Life and Writings*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1968թ.:

Van Ryn, A. *Meditations in John*. Chicago: Moody Press, 1949թ.:

Vine, W. E. *John, His Record of Christ*. London: Oliphants, 1957թ.:

Westcott, B. F. *The Gospel According to St. John*. Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Co., 1954թ.:

